ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 1900-1922 թթ.

2

Հատորը հրատարակվում է Հայագիտական ուսումնասիրությունները
ֆինանսավորող համահայկական հիմնադրամի եւ ՀՀ սփյուռքի
նախարարության ֆինանսական աջակցությամբ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ИСТОРИИ

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ 1900–1922

Том 2

ЕРЕВАН 2017

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF HISTORY

THE HISTORY OF THE ARMENIAN PERIODICAL PRESS 1900–1922

Vol. II

YEREVAN 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1900–1922

Հատոր 2

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ 100

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES 100

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2017

H 109454

ՀՏԴ 941(479.25):070
ԳՄԴ 63.3(2Հ)+76.12
Հ 243

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիրներ՝ Ա. Խառատյան, Լ. Գևորգյան

Հ 243 Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922 թթ. – Եր.:
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2017. – 787 էջ:

Հայ պարբերական մամուլի սույն՝ 2-րդ հատորն ընդգրկում է 1900-1922 թթ. ժամանակահատվածում հրատարակված հայերեն թերթերի և ամսագրերի պատմությունը: Հատորը ստեղծված է հիմնականում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցների և մասամբ այլ հաստատություններում աշխատող մասնագետների գործակցությամբ:

Բովանդակային առումով հատորը բացահայտում է նշված մամուլի մտավոր, մշակութային և, առհասարակ, հոգևոր ուղղվածությունը: Թերթերի և ամսագրերի պատմությունն ու բովանդակությունը ներկայացվում է մեծ մասամբ առաջին անգամ: Ըստ խմբերի առանձնացված են արևելահայ, արևմտահայ և գաղթօջախների (սփյուռքի) թերթերն ու ամսագրերը, ինչպես նաև, հասարակական ու քաղաքական ընդհանրությունից ելնելով, կուսակցական հրատարակությունները: Այս աշխատությամբ ամբողջանում է «Հայ պարբերական մամուլի պատմություն» երկհատորյակը՝ 1794–1922 թթ. կտրվածքով:

Գիրքը նախատեսված է հասարակայնության լայն շրջանների, այդ թվում և ուսանողական լսարանի համար:

ՀՏԴ 941(479.25):070
ԳՄԴ 63.3(2Հ)+76.12

ISBN 978-99941-73-85-3 © ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2017

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժինը XX դարի 80-ական թվականների վերջերից ձեռնամուխ եղավ «Հայ պարբերական մամուլի պատմություն» երկհատորյակի ստեղծման աշխատանքներին՝ ընդառաջ գնալով հայ պարբերական մամուլի պատմության նկատմամբ գիտական մտքի և հայ հասարակության ցուցաբերած հետաքրքրությանն ու պահանջմունքին: Առաջանում էր հեռավոր Հնդկաստանում «Ազդարարով» սկզբնավորված հայ մամուլի 200-ամյա (1794–1994) հոբելյանը: Առաջին հատորը նախատեսված էր լույս ընծայել 1994 թվականին: Սակայն վերահաս դժվար տարիների չնախատեսված պարտադրանքով հատորի հրատարակությունը ձգձգվեց մինչև 2006 թվականը. գիրքը լույս տեսավ Կահիրեում, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հովանավորությամբ: Երկրորդ հատորի հասունացումն էլ դժվարի ու երկարատև եղավ. այդ ընթացքում հեղինակներից ոմանք կնքեցին իրենց մահկանացուն՝ անժամանակ մահով խաթարելով խմբագիր-հեղինակ համատեղ աշխատանքը՝ հատկապես որոշ հնացած կարծրատիպեր և անվերապահ գնահատականներ վերանայելու առումով:

Առաջին հատորն ընդգրկում է մեր ժողովրդի ճակատագրի բեկումով աշխարհասփյուռ հայ մամուլը XVIII–XIX դարերում, իսկ երկրորդ հատորը՝ XX դարի առաջին քառասնամյակում: Ժամանակագրական այս ընդգրկումը փոքր է, սակայն պարբերականների առատությամբ՝ աննախադեպ հարուստ: Եթե առաջին հատորում պարբերականները խմբավորված են ըստ զարգացման օջախների և հասարակական-քաղաքական մտքի հոսանքների տարբերակման, ապա երկրորդ հատորում՝ նաև ըստ կուսակցական պատկանելության, քանի որ նոր դարասկզբում բուռն զարգացում ապրեցին կուսակցությունները՝ իրենց բազմաթիվ պարբերական հրատարակություններով: Կուսակցական մամուլի սկզբնավորման շրջանը առանձին գլխով ներկայացված է առաջին հատորում, քանի որ կուսակցութ-

յունների ձևավորումը մեզանում XIX դարի 80-ական թվականների վերջի և 90-ական թվականների իրողություն է:

Ձեռնամուխ լինելով հայ մամուլի պատմության պատմաբանասիրական քննությանն ու արժևորմանը, երեք հատվածների՝ արևելահայ, արևմտահայ և սփյուռքահայ, նպատակահարմար է դիտվել պարբերականները ներկայացնել ինչպես առանձին-առանձին՝ վերնագիր ունենալով պարբերականի անունը և հրատարակության տարեթվերը, այնպես էլ խմբավորված բաժիններով՝ որպես ընդհանուր բնութագիր և գիտամշակութային, երգիծական, մանկապատանեկան ու այլ բնույթի հրատարակություններ: Գաղթօջախների մամուլի տարեգրությունը մեզ ստիպեց փոքր-ինչ հետ դառնալ դեպի XIX դարը: Նման «խախտումներ» թույլ են տրված նաև առանձին պարբերականների նկատմամբ, որոնք սկիզբ են առել XIX դարի վերջերում, բայց հիմնական գործունեությունը ծավալել XX դարում: Հատորը եզրափակում է «Հայաստանի առաջին հանրապետության մամուլը» բաժինը:

Ավելի քան երեք հազար անուն պարունակող «Հայ պարբերական մամուլը» մատենագիտական համահավաք ցուցակը (կազմ.՝ Մ. Ա. Բաբլոյան, Ե., 1986) հայ մամուլի պատմության բազմաթիվ նոր հատորների հայտ է ներկայացնում, սակայն այդ անսպառ գանձարանի հարստության գիտական արժևորումը պահանջում է մամուլագետների ոչ մեկ սերնդի անձնվեր ջանքեր: Հայ պարբերականները միշտ չէ, որ մեր «ձեռքի տակ» են եղել՝ հանգրվան ունենալով աշխարհասփյուռ գրադարանները: Հուսանք, որ կգան նոր ժամանակներ՝ տեխնիկական հզոր հնարավորություններով, մամուլի պատմությունը, որպես հայ ժողովրդի հոգևոր մշակույթի մի անբաժանելի մասի, իր ամբողջ ծավալով և արժանի նշանակությամբ ներկայացնելու համար:

*
*   *

1900–1922 թթ. ըստ Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլի լիակատար ցուցակի», հրատարակվել են 838 նոր պարբերականներ (թերթեր և ամսագրեր), իսկ հայ մամուլի վերջին մատենագիտության՝ Մ. Բաբլոյանի մատենագիտական համահավաք ցուցա-

կով՝ 1017[1]: Եթե սրանց ավելացնենք նաև դեռևս 1900 թ. առաջ և հետո շարունակվող թերթերն ու հանդեսները, ապա 1900–1922 թթ. տպագրված պարբերականների թիվը կավելանա ևս տասնյակներով: Բնականաբար, սույն հատորում ընդգրկվել են հիմնականում ամենակարևոր պարբերականները, որոնք լույս են տեսել արևելահայ և արևմտահայ մշակույթի կենտրոններում, ինչպես և գաղթօջախներում սփյուռքում: Կարճակյաց հրատարակությունները, որոնք, թվում է, տևական հասարակական նշանակություն չէին կարող ունենալ, բնութագրվում են տվյալ միջավայրի հայ ընթերցողի մտավոր պահանջմունքների մասին ըստ հնարավորին ընդարձակ պատկերացում տալու նպատակով: Ընդսմին, հեղինակներն այստեղ ևս փորձել են կարելին եղածի չափով լայն ներկայացնել հայ մամուլի աշխարհագրությունը: Հատորում ընդգրկված պարբերականների մեծագույն մասն ուսումնասիրվում է առաջին անգամ:

Հատորում խնդրո առարկա պարբերական հրատարակությունները, ինչպես ասվեց վերը, խմբավորվել են ըստ բաժինների, ապա հրատարակության տեղի, բովանդակության և ժամանակագրական կարգով: Թերթերի և հանդեսների անունները, ինչպես և մեջբերումները տրվում են բնագրի ուղղագրությամբ: Նույն թերթին և հանդեսին արված հղումները տողատակում, կրկնությունից խուսափելու համար նշվում են բուն տեքստում, փակագծերի մեջ, իսկ այլ գրականության հղումները՝ տողատակերում: Հեղինակներն ըստ մեծի մասին հետևել են միևնույն սկզբունքին՝ փակագծերում նշելով հանդեսների հրատարակության տարին, համարը, էջը, թերթերի դեպքում՝ տարին և ամիս-ամսաթիվը (ամիսները՝ հասկանալի հապավումներով):

Ա. Խառատյան
Լ. Գևորգյան

[1] Տե՛ս Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794–1934), կազմ. Գ. Լևոնյան, Ե., 1934, էջ 37–122: Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ 1794–1980, կազմ. Մ. Բաբլոյան, Ե., 1986, էջ 54–149:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

«ՄՇԱԿ» (1892–1921)

1892 թ. դեկտեմբերի 19-ին վախճանվեց Գր. Արծրունին՝ «Մշակի» հիմնադիրն ու անփոփոխ խմբագիրը: Դրան հետևեց լրագրի գործունեության դադարեցումը համարյա 10 ամսով, որի ընթացքում վճռվում էին նոր խմբագրի հաստատման ու թերթի գաղափարական ուղղվածության հարցերը և նախորոշվում գլխավոր աշխատակիցների հետագա գործունեությունը: Գր. Արծրունու այրին՝ Մարիամ Մելիք-Աղամալյանը, ամուսնու մահից անմիջապես հետո դիմում է Գրաքննական կոմիտե՝ Համբարձում Առաքելյանին թերթի խմբագրի պաշտոնում հաստատելու խնդրանքով: Արծրունու այրին և թերթի աշխատակիցները ցանկանում էին օր առաջ ստեղծել խմբագրության նոր կազմ, քանի որ ընթերցողների բողոքներից զատ, ընդհատումը վնաս էր բերում արդեն բոլորովին սնանկացած Արծրունու ընտանիքին: Սակայն Մամուլի գործերի գլխավոր վարչությունը մերժում է այդ թեկնածությունը, քանի որ Հ. Առաքելյանը չուներ բարձրագույն կրթություն և նրա հրապարակախոսական գործունեությունը քաղաքական վստահություն չէր ներշնչում. 1882 թ. նա գործուն աշխատակցություն էր ունեցել Ս. Հախումյանի՝ Շուշիում հրատարակվող «Գործ» ամսագրին, որի առաջին համարը բռնագրավվել էր գրաքննության կողմից: Այդ համարում էր զետեղված նաև Հ. Առաքելյանի «Հողատիրության և կալվածատիրական խնդիրը Անդրկովկասում» հոդվածը, որը նույնպես, ի թիվս այլ նյութերի, որակվել էր որպես «սոցիալիստական և վտանգավոր քաղաքական ուղղություն» կրող: Նշվում էր նաև, որ Արծրունու կենդանության օրոք նրան չէր հաջողվել իր գաղափարներն անցկացնել մամուլում, որովհետև Արծրունին հետևողականորեն դիմադրում էր 1880-ական թվա-

կանների հայ նարոդնիկ գործիչների ելույթների տպագրությանը «Մշակի» էջերում, այնինչ նրա մահից անմիջապես հետո գրաքննության բռնագրաված հոդվածները, որոնք պատկանում էին նաև Հ. Առաքելյանի գրչին, ունեին արմատական ուղղություն: Իբրև բարեգործական ընկերության քարտուղար ևս Առաքելյանն արժանացել էր Գրաքննական կոմիտեի անբարյացակամությանը:

«Մշակի» խմբագիր դարձավ Ալ. Քալանթարը, որի չափավոր հայացքները հրաշխիք էին տալիս, որ նրա խմբագրած թերթը կմնա բարեհուսության շրջանակներում, որովհետև նրա հայացքներին խորթ էին այսպես կոչված «Երիտասարդ Հայաստանի» արմատական միտումները: «Մշակը» Ալ. Քալանթարի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել 1893 թ. հոկտեմբերի 14-ից: Առաջին համարում արդեն հայտնվում էր ընթերցողներին, որ թերթը ապագայում ևս կհրապարակվի նախկին ծրագրով և ուղղությամբ, առանց շեղվելու այն շավղից, որ գծել էր Արծրունին:

Ալ. Քալանթարը ծնվել է 1855 թ. Վերին Ագուլիսում: Ընտանիքով տեղափոխվել է Բաքու, որտեղ ռեալական գիմնազիան ոսկե մեդալով ավարտել է 1875 թ.: 1875–1879 թթ. ուսանել է Մոսկվայի Պետրովսկու անվան գեղարվեստի ակադեմիայում՝ ստանալով գյուղատնտեսության թեկնածուի աստիճան: 1879–1888 թթ. Քալանթարը Եդիմոնովի կաթնատնտեսական դպրոցի կառավարիչն էր: Այնուհետև Պետական կալվածքների նախարարության կողմից ուղարկվում է արտասահման՝ Գերմանիա, Անգլիա, Դանիա, Շվեդիա, Ֆրանսիա, Շվեյցարիա՝ ուսումնասիրելու կաթնատնտեսության կազմակերպման գործն այդ երկրներում: 1883-ին վերադառնալով՝ նշանակվում է մի հանձնաժողովի անդամ, որը հետազոտում էր Ռուսաստանի անասնապահության դրությունը: Այս առաքելությամբ էլ Քալանթարը 1883–1888 թթ. ճանապարհորդել է Ռուսաստանի տասնհինգ նահանգներում, ապա աշխատանքի ուղարկվել Կովկաս՝ ուսումնասիրելու պետական արոտատեղիները և անասնապահական պայմանները: Հետազոտության արդյունքը եղավ նրա կազմած «Անասնապահական վիճակը Կովկասում» լուրջ և մեծահատոր աշխատությունը, որը հրատարակվեց 1890 թ.: Սա հնարավորություն տվեց նաև, որ Քալանթարը ոտքի տակ տար ամբողջ Կովկասը, ճանաչեր այդ երկրամասը: Քալանթարը գյուղատնտեսական թեմանե-

րով շուրջ 140 աշխատությունների հեղինակ էր և մեծ համբավ էր վայելում, որպես դասախոս:

«Մշակի» 1893 թ. թիվ 1-ում նա գրում է. «Հաւատ դէպի գաղափարականը, հաւատ դէպի մարդը և մարդկայինը, հաւատ դէպի ազնիւ գործունէութեան յաղթական արդիւնքը, ահա այդ հաւատը պէտք է համակի մեզ նուիրուելու անխոնջ աշխատանքին և տանելու ամեն տեսակ նեղութիւններ, յարձակումներ, բամբասանքներ և զրկանքներ»: Ազգանվեր գործիչն իր դավանանքին հավատարիմ, անտարբեր չէր մնում ժողովրդի կյանքի տագնապալի իրադարձություններին: 1894 թ. Սասունի դեպքերին Քալանթարը «Մշակի» էջերում անդրադարձել է մանրամասնորեն: Հետագայում այդ հոդվածները հրատարակվեցին առանձին գրքույկով՝ «Սասունը» վերնագրով: Քալանթար հրապարակախոսը վերլուծության էր ենթարկում թուրքահպատակ այդ շրջանի դրությունը: Թուրքիայի հայահալած գործունեությանը, մեծ տերությունների քաղաքականությանը նա անդրադարձել է բազմաթիվ հոդվածներում: 1900 թ., լինելով երկրաշարժից տուժած Ախալքալաքի շրջանում, Քալանթարը գրեց «Աղէտի շրջանում» հոդվածաշարը:

Հետաքրքրական է Քալանթարի վարած «Մանրանկար» բաժինը, որը տարիներ շարունակ մնայուն տեղ ուներ «Մշակի» էջերում: Քալանթար-հրապարակախոսն այստեղ արծարծում էր հասարակությանը հուզող ամենահրատապ խնդիրները: Ուղեգրության ձևով գրված այս հոդվածներում նա անդրադառնում է դպրոցական, ժողովրդական ընթերցանության, ընտանեկան դաստիարակության և բազմաթիվ այլ հարցերի՝ ցուցաբերելով մտքի սրություն, փաստերը վերլուծելու մեծ շնորհք: Նոր դպրոցի, լուսավորության ու կրթության խնդիրներ շոշափել են նաև թերթի մյուս աշխատակիցները, մասնավորապես բժշկապետ Վահան Արծրունին: Քալանթարն ու նրա գործընկերները կարծում էին, որ լուսավորությունն իր նպատակին կծառայի, երբ թափանցի գյուղական ու քաղաքային ժողովրդի մեջ, երբ մատաղ սերունդը հնարավորություն կունենա ստանալու պարտադիր տարրական կրթություն և մանկավարժական նորագույն պահանջներին համապատասխան՝ մտավոր, բարոյական և ֆիզիկական դաստիարակություն:

Քալանթարի օրոք թերթի աշխատակիցների կազմում նոր փոփոխություններ չեղան: Հ. Առաքելյանը մնաց որպես գլխավոր աշխատակիցներից մեկը, Տիգրան Հովհաննիսյանը վարում էր գրաքննադատության, Ստ. Մալխասյանցը՝ մատենագրության բաժինը: Ընդարձակ հոդվածներով հանդես էր գալիս Լեոն, որը 1895 թ. դարձավ թերթի հիմնական աշխատակիցներից մեկը՝ գլխավորելով «Կիրակնօրեայ զրոյց» և «Մամուլ» բաժինները: Նա աշխատակցեց «Մշակին» մինչև 1906 թ., ապա թողեց թերթը՝ գաղափարական տարաձայնություններ ունենալով ինչպես Քալանթարի, այնպես էլ մյուս աշխատակիցների հետ: Հետագայում նա նորից «Մշակ» վերադարձավ, որպես խմբագիր և թերթը խմբագրեց մինչև փակման օրը: Վահան Նալբանդյանին վստահված էր «Եւրոպական մտքից և գրականութիւնից», Խ. Մալումյանին (Ակնունի)՝ «Օրեցօր» բաժինը: Քր. Կարա-Մուրզան, ապա նրա աշակերտ Հ. Սաղաթելյանը վարում էին արվեստի բաժինը:

Գլխավոր աշխատակիցներից բացի, թերթի էջերը հաճախակի էին տպագրվում Ալ. Ծատուրյանի, Գր. Չալխուշյանի, Ա. Չոպանյանի, Պողոս Մարգարյանի (Սերմնացան), Տիգրան Բերբերովի (Տիգրան), Աշոտ Զիլինգարյանի (Ego), Ս. Միրզոյանի (Ուսանող), Ներսես Շաղզամյանի (Հանդիսատես), Վրթ. Փափազյանի (Ալրո), Հովհ. Տեր-Մարտիրոսյանի (Ա-Դո), Աշոտ Աթանասյանի (Ստորակետ և Սալման), Ղևոնդ Խաչատրյանի (Շիրվանի) և ուրիշների:

Անդրկովկասում արդյունաբերության զարգացման և բանվորության թեմային դեռ Գր. Արծրունին է անդրադարձել՝ որոնելով այնպիսի միջոցներ, որոնք կարող էին կանխել հակամարտությունները: Քալանթարի շրջանում էլ բանվորների շահագործումը ցույց տալով հանդերձ՝ թերթը հասարակության բարեկեցումը կապում էր կապիտալիզմի քաղաքակիրթ զարգացման հետ: Թերթի գործիչները այն կարծիքին էին, թե անխախտ է կապիտալիզմի «շարժման օրենքը»: Հետևելով եվրոպական ազատամիտ գաղափարախոսությանը՝ նրանք անհրաժեշտ էին համարում արդյունաբերող և աշխատող ընկերությունների հիմնումը: Հարցը չափազանց արդիական էր, քանի որ արդեն կազմավորվել էր հայ արդյունաբերական բուրժուազիան: Արդյունաբերական խոշոր կենտրոններ էին դարձել Բաքուն, Թիֆլիսը, Բաթումը, որտեղ հայ բուրժուազիան ազդեցության մեծ ոլորտ

ուններ, և հայերը մեծ բաժնետերեր էին դարձել ինչպես նավթարդյունաբերության ու մետաղագործության, այնպես էլ թելանյութերի արտադրության բնագավառներում: Խոշոր առաջընթաց էր նկատվում նաև Հայաստանում. մասնավորապես Ղափանում և Ալավերդում զարգանում էր պղնձարդյունաբերությունը: Ամենուրեք զարգացող բանվոր դասակարգի մեջ մեծ տոկոս էին կազմում հայերը:

Արծրունու հետնորդները տեսնում էին, որ զարգացող կապիտալիզմը աղետալի դրության մեջ է գցել բանվորներին և նկարագրում էին նրանց թշվառ վիճակը: «Մշակը» հայ բանվորության կյանքի ճշմարտացի վավերագրողն էր: Նրա էջերը լեցուն են այդ դասակարգի ճնշված վիճակի պատկերներով:

Բաքվի հարուստների հասցեին խիստ խոսքեր է ասում թղթակից Արշ. Հարությունյանը: Այստեղ չկա ընդհանուր բարօրության ձգտում, այլ կա միայն անհոգ հարստանալու տենչանք, անբարոյականություն: Այս ճանապարհը թղթակիցն անվանում է «դէպի անխուսափելի հասարակական մահ» տանող երթ (1899, թիվ 81): Այս պատճառով էր, որ 1903–1904 թթ. ապստամբեցին Ալավերդու պղնձահանքերի բանվորները, որոնք պահանջում էին աշխատավարձի բարձրացում, կենցաղային պայմանների բարելավում, աշխատաժամի կրճատում: 1904-ին գործադուլի դուրս եկան Ալեքսանդրապոլի Ձիթողցոնց գործարանի բանվորները: Նրանք վերոհիշյալից բացի, դնում էին բժշկական ձրի օգնության, արձակուրդի ժամանակ աշխատավարձի պահպանման և այլ հարցեր:

Քալանթարի «Մշակը» այս շրջանի գործադուլային շարժումների մասին միայն պաշտոնական հաղորդագրություններ էր տպագրում՝ զգուշանալով գրաքննությունից:

«Քննութեան պահանջ» առաջնորդողում (1908, թիվ 25) Քալանթարը գրում է, թե մարդիկ վստահություն չունեն վաղվա օրվա նկատմամբ, արդյունաբերական ձեռնարկությունները քայքայվում են, բանվորը փչացնում, ջարդում է մեքենաները, կազմալուծում աշխատանքը: Բայց չէ՞ որ, ըստ Քալանթարի, նա նաև զրկվում է աշխատանքի միջոցներից: Այդ ձեռնարկությունները շուտով ձեռք կգցեն արտասահմանցիները, և մեր երկրի ողջ հումքը կօգտագործեն իրենց օգուտների համար:

Գործունեության առաջին շրջանից սկսած Քալանթարի համար լուծման կարոտ հարցերից խոշորագույնը «մշակ դասի դրութեան» բարելավումն էր: Նա գրում էր, թե «Գաւառն այժմ այնպիսի անմխիթար վիճակում է, որ միայն հիմնական գիտութեամբ զինուած և բարեխիղճ անձինք կարող են դուրս բերել նրան տգիտութեան և տնտեսական քայքայման ողորմելի վիճակից. գաւառին հարկավոր է բանիմաց և եռանդուն բժիշկ, որը հոգ տանէ ժողովրդի առողջութեան վրայ, նուազեցնէ մեռնողների տոկոսը, հարկաւոր է տնտեսագէտ, որ ծանօթացնէ ժողովրդին երկրագործութեան և արդիւնաբերութեան նոր ձևերի, գործիքների հետ, հարկավոր է իրավագէտ, որ հասցնէ գիւղացուն օրէնքների իմաստը և պաշտպանէ նրա դատը» (1899, թիվ 61):

«Մշակը» ճշմարտացիորեն ներկայացնում է այն քայքայված դրությունը, որին հասել էր հայկական գյուղը, քննադատում է հարկահավաքման ձևը, երբ պարտքի դիմաց աճուրդի են հանում գյուղացու ունեցվածքը՝ հետևից թողնելով արտասուք, քայքայված տնտեսություն, ընդհանուր հուսաբեկություն: Թերթն առիթը բաց չի թողնում քննադատելու աղաներին, մելիքներին ու վաշխառուներին:

Քալանթարի «Մշակն», ուրեմն, գյուղի կապիտալիստական զարգացման կողմնակից է և ժողովրդի բարեկեցության համար առաջ է քաշում նրան «ժողովրդական կրեդիտով» ապահովելու խնդիրը: Քալանթարի համոզմամբ՝ չպետք է վախենալ փող և գույք չունեցողին վարկով փող տալուց, որովհետև նա ամուր բազուկներ ունի, աշխատելու ցանկություն և ունակություն:

Չնայած ցարական գրաքննության կապանքներին, Քալանթարի թերթը ընդարձակ տեղ էր հատկացնում արևմտահայության հարցին՝ անդրադառնալով սուլթան Համիդի՝ 1894–1896 թթ. կազմակերպած արևմտահայության զանգվածային կոտորածին, 1904 թ. Սասունի ապստամբությանը, 1909 թ. Ադանայի դեպքերին: Այս շրջանում արդեն «Մշակը» գրում էր Շվեյցարիայում երիտթուրքերի կազմակերպությունների ազգայնական քաղաքականության մասին և հանգում այն եզրակացության, որ երիտթուրքերը վատթար են սուլթան Համիդից, քանի որ նրանք իրենց մարդատյաց գաղափարախոսությունը «շղարշում» են եվրոպական լույսով, մինչդեռ,

իրականում ձգտում են թուրքերի մեջ տարրալուծել հպատակ ժողովուրդներին, այդ թվում և հայերին:

Քալանթարի «Ինքնավարական հարցեր» առաջնորդողում (1906, թիվ 8) դրվում է Արևմտյան Հայաստանում ինքնավարության անհրաժեշտության խնդիրը: Ըստ նրա՝ հայերը նվաճողական ու ազգայնամոլական նպատակներ չունեն, բայց մի հիմնական պահանջ ունեն, որն է՝ քաղաքացիական ազատ զարգացումը:

Թերթը տպագրել է ռուս լրագրող Ա. Գարոնի «Հայաստանն առանց հայերի» հոդվածը, որում նա գրում է, թե ծաղկազարդ Հայաստանի դաշտերը նորից են ոռոգվում հայի արյունով ... դահիճների դերն այս անգամ ստանձնել են ոչ թե համիդիեների խմբերը, այլ սուլթանից ներում ստացած ավազակները: Ռուս հեղինակը դիմում է Ռուսաստանի կառավարությանը՝ նշելով, որ չարաբաստիկ Արևելյան հարցի քննարկման ժամանակ (նկատի ունի 1878 թ. Բեռլինի վեհաժողովը) նրա գործած սխալը պետք է ուղղվի: Ժամանակն է կանգնեցնելու նաև անմեղ արյան հեղեղը (1908, թիվ 75):

Հայ մտավորականների մեջ թերահավատություն էին առաջացնում երիտթուրքերի հռչակած Սահմանադրությունը (1908), իբր, խորհրդարանական կարգերը: «Մշակի» Լոնդոնի թղթակից Մինաս Ցոլակն այս կատակերգությունը միակը չի համարում, այնինչ Անգլիայի մայրաքաղաքի բոլոր թերթերն իրենց առաջին էջերը տրամադրել են այդ հարցին: «Մեծաշուինդ որոտումները ամենէն կարճատեւը կըլլան առհասարակ, և արժէ, որ չխաբուինք»,- եզրակացնում է հեղինակը (1908, թիվ 161):

Քալանթարը շուտով հաղորդում է Ադանայի՝ 1909 թ. դեպքերի մասին՝ նշելով, որ մոլեռանդ խուժանը, դարեր շարունակ արյուն հեղելով, դեռ չի կշտացել դժոխային վայելքների հաճույքից: Նա գրում է. «Կրկնակի սոսկալի է լսել հայկական ջարդերի մասին այն օրերում, երբ այն երկիրը, ուր նրանք ապրում են, անուանում է իրեն սահմանադրական: Ջարդեր, կոտորածներ, ֆանատիկոսական դիւախաղեր, բարբարոսական արարքներ և միևնոյն ժամանակ սահմանադրութիւն և պառլամէնտ: Դա մի այնպիսի դժոխային ծաղր է, դա մի այնպիսի լեղի է, որ, կարծես թէ, վերապահուած էր անողոք ճակատագրի կողմից վերջնականապէս անարգելու և ոտնատակ տալու հայ ժողովրդին» (1909, թիվ 73):

Որ ցարիզմը ևս հայահալած քաղաքականություն էր վարում Անդրկովկասում, պարզ էր «Մշակի» գործիչներին, և նրանք, զգուշանալով ռեակցիայի ակտիվությունից, մշակում էին նոր գրելաձևեր, նոր ոճ: Եզոպոսյան լեզուն թերթում դառնում է հիմնական արտահայտչամիջոցներից մեկը: «Մշակի» բազմաթիվ հոդվածներ ցարական գրաքննության կողմից արգելվել են: Երբ սկսվում են 1905 թ. հայ-ադրբեջանական ընդհարումները, թերթի փետրվարի 9-ի համարում տպագրվում է Քալանթարի «Դժբաղդ թիւրիմացութիւն» առաջնորդողը, որտեղ դատապարտվում են այն քստմնելի, վայրագ դեպքերը, որ տեղի են ունեցել Բաքվում: Ինչ վերաբերում է 1905–1907 թթ. հայ-թաթարական ընդհարումներին, ապա թերթի գործիչները հիանալի հասկանում էին, որ ազգամիջյան խառնակությունների հրահրումը ցարական իշխանություննե-րի խաղն է, որպեսզի ժողովրդի ուշադրությունը շեղվի ռուս-ճապոնական անհեռանկար պատերազմից, սոցիալական սուր հակասություններից:

Գրականության հարցերն իրենց կայուն տեղն ունեին «Մշակում»: Քալանթարն իր թերթի էջերը հյուրընկալորեն տրամադրում էր ինչպես հայ, այնպես էլ ռուս ու եվրոպական գրողների գործերին, բազմաբնույթ հոդվածներ տպագրում նրանց գործունեության վերաբերյալ: Վերլուծվում էին Շեքսպիրի, Հյուգոյի, Զոլայի, Բայրոնի, Խայամի, Բալզակի, Գորկու, Չեխովի, Տոլստոյի, Գոգոլի, Բելինսկու, Պուշկինի, Լերմոնտովի, Չերնիշևսկու և այլոց գործերը: Թերթը գնահատել է Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջները», ցույց տվել նրա՝ որպես սկսնակի շնորհները և կանխագուշակել մեծ ապագա: Թերթի հեղինակները գրախոսել են Ավ. Իսահակյանի, Ալ. Շիրվանզադեի, Հովհ. Հովհաննիսյանի, Ալ. Ծատուրյանի, Ավ. Ահարոնյանի և մյուսների գործերը, արել ուշագրավ դիտողություններ:

Քալանթարի շրջանում «Մշակը» հուզել է նաև կրթության ու դաստիարակության հարցեր, գրել լուսավորության և մանկավարժության այլևայլ խնդիրների մասին, առանձնապես լուրջ ուշադրություն դարձրել ուսման ու կրթության նոր մեթոդներին, եղանակներին, դրանք հայկական դպրոցներում արդյունավետորեն կիրառելու խնդիրներին:

Ալ. Քալանթարը կաթվածահար եղավ 1913 թ. հոկտեմբերի 20-ին, Րաֆֆու գերեզմանի վրա, նրա մահվան 25-ամյակի օրը: Ստ. Մալխասյանցը գնահատելով խմբագրի գործունեությունը՝ գրում է. «Մի անզուգական գործիչ էր նա, որին հաւասարապէս քննադատում և հաւասարապէս յարգում էին բոլորը, առանց կուսակցական խտրականութեան... Նա կարող էր ունենալ հակառակորդներ, բայց չունէր թշնամիներ, արհամարհողներ: Եվ սրա հետ միասին նա անհողդողդ էր իր սկզբունքներում, անշեղ՝ իր ընտրած գործունեութեան շաւղում» (1913, 21 հոկտեմբերի):

Քալանթարի մահից անմիջապես հետո Համբարձում Առաքելյանը դարձավ թերթի խմբագիր և աշխատեց մինչև իր ողբերգական մահը: Այլևս Գրաքննական կոմիտեն առարկություններ չարեց, քանի որ 1908-ից արդեն Հ. Առաքելյանը դարձել էր «Մշակի» հրատարակիչներից մեկը, իսկ 1910-ից նրան թույլատրվել էր խմբագրել «Արոր» շաբաթաթերթը: Ճիշտ է, նա «Արորի» 1910 թ. թիվ 3-ում տպագրված «Գյուղական մրմունջներ» ոտանավորի համար Թիֆլիսի դատաստանական պալատի կողմից ենթարկվել էր տույժի՝ դասակարգային թշնամություն սերմանելու մեղադրանքով, սակայն դա չխանգարեց, որ Հ. Առաքելյանը «Մշակի» խմբագիր դառնա:

Համբարձում Առաքելյանը ծնվել է 1855 թ. Շուշի քաղաքում: 1865 թ. ծնողների հետ տեղափոխվում է Թավրիզ, որտեղ էլ սովորում է պարսկերենին, գերմաներենին, ֆրանսերենին: Տասնիննամյա հասակում վերադառնում է Շուշի, ապա ընդունվում Բաքվի ռեալական ուսումնարան: 1879-ից սկսում է ուսանել Մոսկվայի Պետրովսկու անվան երկրագործական ակադեմիայում, բայց կրթությունը կիսատ է թողնում: 1881-ին վերադառնում է Շուշի, ուր տեղի թեմական և օրիորդաց դպրոցներում աշխատում է որպես ուսուցիչ: Մեկուկես տարի հետո մեկնում է Պարսկաստան, որտեղ էլ 1885-ի կաթողիկոսական ընտրությունների ժամանակ ընտրվում է պարսկա-հնդկական թեմից աշխարհիկ պատգամավոր: Նա նույն թեմի պատգամավորն էր նաև Մ. Խրիմյանի ընտրության ժամանակ: 1892-ին Առաքելյանը վերջնականապես տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նա Հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ էր, Դրամատիկական ընկերության փոխնախագահ, Գայանյան օրիորդաց դպրոցի հոգաբարձության նախագահ: Այս

շրջանում ունենալով ազատամիտ հայացքներ՝ Հ. Առաքելյանը 1905-ից հարեց Սահմանադիր-ռամկավար կուսակցությանը և դարձավ նրա գաղափարների ջերմ պաշտպանն արևելահայ իրականության մեջ: 1906 թ. «Մշակի» առաջին համարներում թերթի գործիչներն իրենց հրապարակությունը հայտարարեցին սահմանադիր-ռամկավարական՝ միաժամանակ տպագրելով ու տարածելով այս կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը: Նրանք պահանջում էին ժողովների ու միտինգների ազատություն, անկախ ընկերությունների և միությունների ստեղծման հնարավորություն, տեղական ինքնավարության ապահովում, հողահատկացման ու հողաչափության գործի վերակազմում, գյուղացիների հողաբաժնի ավելացում, գործադուլի իրավունք, ութժամյա աշխատանքային օր, կանանց և երեխաների աշխատանքի իրավունք, հիվանդության և այլ դեպքերում պետական ապահովություն, տարրական դպրոցներում ընդհանուր և ձրի կրթություն, բարձրագույն դպրոցներում դասավանդման լիակատար ինքնավարություն և ազատություն, սահմանադրական կարգով ուսանողական ու բանվորական ազատ կազմակերպությունների ստեղծման հնարավորություն: Սակայն Ռուսական կադետական կուսակցության համակիր լինելով հանդերձ՝ «Մշակի» գործիչներն իրենց գործունեությունը ծավալում էին գլխավորապես հայ ազգային խնդիրների շրջանակներում՝ ըստ էության, տեղայնացնելով այդ կուսակցության դրույթները:

Արևմտահայաստանը ծայրահեղ ծանր դրության մեջ էր: Արդեն 1907-ին թուրքական կառավարությունն արտաքսում էր բնիկ հայ ժողովրդին Մուշի ու Բիթլիսի նահանգներից: Զղջմանալով ազգային ճնշումներին՝ հայերը փախչում էին Էրզրումից ու Դիարբեքիրից: Առաքելյանն անդրադառնում է այս հարցին, մեջբերում անգլիական թերթերից քաղվածքներ և ահազանգ հնչեցնում թշվառ հայ ժողովրդին վերջնական կորստից փրկելու համար: «Հայաստանը մոռացուած» առաջնորդողում նա գրում է, թե տասնյակ տարիներ ի վեր Հայկական հարցը շոշափվում է ամենատարբեր ատյաններում, սակայն այժմ էլ, երբ Ռուսաստանը և Անգլիան նոր դաշնագիր են կնքում, նորից խնդիրը չի շարժվում մեռյալ կետից՝ մնալով քաղաքական խաղերի առարկա (1907, թիվ 145):

Մշակականները զավեշտով ընդունեցին երիտթուրքական սահմանադրությունը, իսկ խմբագիրը «Մտքեր և փաստեր» բաժնում քննադատեց երիտթուրքերին, հենց սկզբից չհավատալով նրանց որևէ խոստման: Իսկ հեռագրերը նորանոր սարսափազդու լուրեր էին բերում ամբողջ Թուրքիայի հայաշատ վայրերից: Թերթի տպագրած լուրերը ցույց են տալիս, որ իթթիհատը նախապատրաստում է հայերի զանգվածային ոչնչացումը, ուստի, «Մշակի» գործիչների կարծիքով՝ հայերը պիտի պատրաստ լինեն ինքնապաշտպանության, այս ուղղությամբ ձեռք առնելով բոլոր հնարավոր միջոցները: Նրանք ապստամբելու կամ նախահարձակ լինելու կոչ չէին անում, բայց ցանկանում էին հասկացնել ժողովրդին, որ օրհասական պահին, իսկ դա հեռու չէր, նրանք գոնե պաշտպանվել կարողանային:

Առաջին համաշխարհային պատերազմի լուրը խորին տագնապով ընդունեցին «Մշակի» գործիչները: «Ներկայ պատերազմը և հայ ժողովուրդը» առաջնորդողում (1914, թիվ 160) Հ. Առաքելյանը հորդորում էր հայերին հավատարմորեն կռվել հանուն Ռուսաստանի, քանի որ միակ քրիստոնյա երկիրն է, որ հոգացել է նրանց ցավերը: Նա հորդորում է Ատրպատականի հայերին չգաղթել, որը, ըստ նրա, մեծ հարված է հայ դատին, Ռուսաստանի տարբեր անկյուններ գաղթած հայերին կոչ է անում վերադառնալ իրենց հայրենիքը և ռուս զորքի հետ պաշտպանել իրենց երկիրն ու օջախը թուրքերի ու քրդերի հարձակումից:

Մշակականները չէին ընդունում հեղափոխական շարժումներն ու սոցիալիզմը: Նրանց կարծիքով՝ բուրժուական հասարակարգը կարող էր կարգավորել առաջացած հակասությունները, իսկ սոցիալական ցնցումներն ու բախումները կարող էին միայն ավելի խորացնել այդ հակասությունները: Թեև մշակականները դեմ էին միապետական վարչակարգին, մերժում էին 1905–1907 թթ. հեղափոխությունը Ռուսաստանում, որովհետև կարծում էին, որ ցանվոր դասակարգը դեռ այն ուժը չունի, որ կարողանա կործանել Ռոմանովների 300-ամյա տահմը: Նրանք համակրանքով ընդունեցին 1917 թ. բուրժուա-դեմոկրատական փետրվարյան հեղափոխությունը, քանի որ իշխանության գլուխ էին անցել կադետական կուսակցության շատ պարագլուխներ, որոնց հարում էին հայ սահմանադիր-ռամկավարները:

Շարունակվող առաջին համաշխարհային պատերազմը, որ միլիոնավոր կյանքեր էր խլել, ըստ ժամանակավոր կառավարության, պետք էր հասցնել հաղթական վախճանի, իսկ սա նշանակում էր, որ ռուսական զորքն իր հաղթական արշավը շարունակելու էր Արևմտյան Հայաստանում, և վերջապես իրականանալու էր հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ թուրքական յաթաղանից փրկված տեսնել Արևմտահայաստանը: Այս պարագայում բնական է, որ նոր հեղափոխության կոչերը սվիններով էին ընդունվում մշակականների կողմից, քանի որ բոլշևիկները պահանջում էին հաշտության շուտափույթ կնքում, պատերազմից դուրս գալու ծրագրի իրականացում, իսկ դա նշանակում էր Արևմտահայաստանի վերջնական կործանում: Հ. Առաքելյանի գործուն մասնակցությամբ 1918 թվականին ստեղծված Հայ ժողովրդական կուսակցությունը արտահայտում էր նույն գաղափարները: Թերթը որպես աղետ գնահատեց Էրզրումի անկումը և հեռատեսորեն գուշակեց, որ դրան հետևելու են Կարսը, Սարիղամիշը: «Մշակն» անհեռանկար որակեց նաև Արևելքի մոլեռանդ ցեղերին զինելու և համաշխարհային հեղափոխություն կատարելու բոլշևիկյան գաղափարը՝ պնդելով, որ դա կարող է հանգեցնել ոչ միայն Արևմտահայաստանի, այլև ողջ հայության կործանմանը:

A 102454

«Մշակն» անարգանքի սյունին էր գամում այն հայ քարոզիչներին, որոնք դասալքության թույնը տարածում էին նաև Զանգեզուրի նժդեհական պաշտպանների շրջանում՝ աշխատավորությանը կոչ անելով վայր դնել զենքը և հավատալ արդեն «հեղափոխական» դարձած ռուսության խուժանին: Թերթը դա որակում էր հանցավոր արարք ողջ հայության դեմ: Առհասարակ, «Մշակը» ցուցադրում էր իր հակակրանքը բոլշևիզմի և մասնավորապես Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության նկատմամբ:

Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը «Մշակն» խրախուսորեն ընդունեց: Թերթի գործիչները դեմ չէին Հանրապետության հռչակմանը, սակայն և ձեռնպահ էին մնում դրա ղրվատումից, որովհետև կառավարության համարյա ամբողջ կազմը բաղկացած էր դաշնակցության անդամներից: Հայ ժողովրդական կուսակցության անդամագրված մշակականները պահանջում էին Հայոց նորընտիր խորհրդարանում կենսագործել բազմակուսակցականության սկզբուն-

քը: Հետագայում «Մշակը», այնուամենայնիվ, կոչ էր անում բոլոր հայերին սատար կանգնել նորաստեղծ կառավարությանը, բոլոր ճանաչված մասնագետներին և մտավորականներին խնդրում վերադառնալ հայրենիք և իրենց փորձն ու գիտելիքները տրամադրել նորաստեղծ Հայաստանի Հանրապետության բարգավաճման նպատակին:

Թերթի վերջին հույսը՝ ազատագրված տեսնել Արևմտահայաստանը, ի դերև ելավ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով: Հակապատերազմական բոլշևիկյան կոչը դասալիք դարձրեց ամբողջ ռուսական զորքը, որը դեն նետելով կամ թուրքերին վաճառելով զենքն ու զինամթերքը, շտապում էր տուն՝ թուրքերին հնարավորություն տալով իրականացնել վաղեմի երազանքը՝ կոտորելու հայությանը նաև արևելյան հատվածում:

Հ. Առաքելյանի «Մշակը» հանդես էր գալիս որպես գաղափարական գրականության ջերմ պաշտպան: Առաքելյանի խմբագրության տարիներին թերթն իր շուրջն էր հավաքել գրական և գրաքննադատական այնպիսի հզոր ուժերի, ինչպիսիք էին Հ. Սուրխաթյանը, Ա. Շիրվանզադեն, Վ. Տերյանը, Ստ. Զորյանը, Պ. Մակինցյանը, Դ. Անանունը, Լեոն, Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Աշ. Հովհաննիսյանը և այլք: «Մշակի» այն հայտարարությունը, թե տեղ է տալու բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների հոդվածներին անխտիր, եթե նույնիսկ չբաժանի նրանց կարծիքը, իրականացված փաստ էր: Ժամանակակից հայ գրողներից բացի, թերթն իր էջերը տրամադրել է նաև համաշխարհային գրականության ականավոր ներկայացուցիչներին, վերլուծել Տոլստոյի, Գորկու, Բլոկի, Բալմոնտի, Արցիբաշևի, Կոլցովի, Բրյուսովի և այլոց երկերը: «Մշակը» մեծ տեղ էր հատկացնում թարգմանական գրականության հարցերին, նկատի ունենալով, որ այն ամեն մի ժողովրդի կյանքում կատարելիք մեծ դեր ունի: Թերթում իրենց պատշաճ տեղն ունեին թատերական գրախոսները, արվեստի բոլոր բնագավառներին վերաբերող նյութերը, Կոմիտասին, Հովհ. Այվազովսկուն, Վ. Մախոխյանին, Վ. Փափազյանին, Արմ. Շահմուրադյանին, Հովհ. Աբելյանին նվիրված հոդվածաշարերը: «Մշակն» ընդարձակ հոդվածներ է տպագրել նաև արևմտահայ գործիչների մասին՝ ընթերցողներին հրամցնելով Գր. Զոհրապի, Սիամանթոյի, Ռ. Սևակի, Դ. Վարուժանի, Վ. Թեքեյանի նորատիպ գործերը: Զնայած գաղափարական ինչ-ինչ հակամար-

տուքյուններին «Մշակն» ըստ արժանվույն է գնահատել մասնավորապես Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Զարենցի, Ավ. Ահարոնյանի, Դ. Դեմիրճյանի, Վ. Տերյանի և մյուսների ստեղծագործությունները: Ստ. Մալխասյանցը, Ալ. Քալանթարը, Հ. Առաքելյանը բարեկամական կապեր ունեին Ն. Մառի, Թ. Թորամանյանի, Գ. Բաշինջաղյանի, Ալ. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի հետ, որոնք ստեղծագործելուց բացի, նաև «Մշակի» թղթակիցներն էին, և ընթերցողներին հնարավորություն էր ընձեռվում ստանալու մասնագիտական ամենանուրբ ու հրատապ տեղեկություններ: Այս շրջանում էլ «Մշակը» պաշտպանեց գրականության մեջ կյանքի ճշմարիտ արտացոլման հարցը՝ մերժելով ռոմանտիկ ու զգացական մոտեցումները:

Թերթի հեղինակները հասարակական կյանքի բոլոր օղակներն օգտագործում էին ազգի լուսավորության համար, միայն այս ուղիով առաջադիմություն հասնելու նպատակով: Եվ բնական է, որ Արծրունու նման, նրանք էլ պահանջում էին մարդու, կնոջ, ընտանիքի, համայնքի, ամբողջ հասարակության զարգացումը, հիմնական վերանորոգումներ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության համակարգում: Այս իմաստով թերթն ուշադրություն էր դարձնում ուսուցման արդյունավետությանը, երկու սեռերի փոխհարաբերության հարցերին, հայրերի և որդիների հիմնահարցին: Թերթը դնում էր նաև անհատի ազատության պահանջը՝ հիմնված ընտանիքի անդամների հավասարության վրա՝ պահանջելով պատշաճ տեղ հատկացնել նոր սերնդին:

«Մշակը» պահանջում էր նոր, եվրոպական դպրոցի մեթոդների և ձևերի կիրառում նաև հայկական դպրոցներում, խրախուսում այն գործիչներին (Գ. Լևոնյան, Տ. Նազարյան, Շիրվանզադե), որոնք մեծատուններից պահանջում էին ոչ մի միջոց չխնայել մատաղ սերնդի կրթության և դաստիարակության համար, որովհետև միայն այդ միջոցով էր հնարավոր ազգի առաջընթացը: «Մշակը» հոդվածաշարեր է տպագրել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի, Լազարյան ճեմարանի, Վանի, Պարսկաստանի, Կ. Պոլսի հայկական դպրոցների վերաբերյալ: Բժշկապետ Վ. Արծրունին և նրա գործընկերները շարունակում էին առաջ քաշել նաև մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտության հարցը՝ դպրոցների հովանա-

վորներին, հոգաբարձուներին և այլ ատյանների հորդորելով միջոցներ տրամադրել նաև այս նպատակով:

1905–1921 թթ. «Մշակը», ինչպես Արծրունու շրջանում, տարաձայնություններ ունեցավ հայ հոգևոր գործիչների հետ: Բնավ չժխտելով ազգային եկեղեցու դերը՝ թերթը ցանկանում էր այն ավելի արդիականացած տեսնել:

Ո՛չ Թիֆլիսի հայոց ազգային բյուրոն, ո՛չ քաղաքացիական այլ հաստատություններ ու բարեգործական ընկերություններ ի վիճակի չէին լուծելու հայ ազգի համար վճռորոշ հարցերը: Ահա թե ինչու «Մշակը» կամենում էր հայոց կաթողիկոսի, Կ. Պոլսի պատրիարքի պաշտոններում տեսնել Մատթեոս Իզմիրլյանի, Մ. Օրմանյանի, Ե. Դուրյանի, Զավեն արքեպիսկոպոսի նման հոգևորականների, որոնք ցուցաբերեցին ազգային հիմնախնդիրների լուծմանը սատարելու վճռականություն և կամք: Թերթը վերոհիշյալ գործիչների ընտրությունների ընթացքում կոչ էր անում ժողովրդին զոհ չգնալ կուսակցական այս կամ այն սկզբունքին, այլ, իր իսկ շահերից ելնելով՝ ձայն տալ արժանավորին: «Մշակը», ինչպես նաև կուսակցությունները, պայքարեցին եկեղեցապատկան հողերը հետ վերադարձնելու համար՝ փախստականների տեղավորման, խնամակալության և ֆինանսական օգնության հարցերը վերապահելով կաթողիկոսին: Այս չէր նշանակում, սակայն, որ չէին քննադատվելու հոգևոր դասի մեջ սպրդած կաշառակերները, անգրագետ և ժողովրդի արյուն-քրտինքը ծծող գործիչները: Թերթն անաչառ էր այդպիսիների նկատմամբ, և այս տարիների բազմաթիվ համարներ լեցուն են այդօրինակ վարքը մերկացնող նյութերով:

Հ. Առաքելյանի խմբագրության ժամանակ ևս բանավիճային պայքարում «Մշակը» ցուցաբերում էր մտքի սրություն, իրերն իրենց անունով կոչելու կարողություն, հասարակական իրադարձությունների ընթացքը կանխագուշակելու հմտություն, արիություն: «Յումանիտե»-ի 1905–1906 թթ. հայ-ադրբեջանական ընդհարումներին վերաբերող անիրավացի ելույթների քննադատությունից զատ, թերթի գործիչները, որոնց մեծամասնությունը տիրապետում էր մի քանի լեզուների, իրենց ձեռքի տակ ունեին շատ երկրների լրատվական գործակալությունների, թղթակիցների ճշմարտացի հաղորդագրություններն այդ երկրներում կատարվող նշանակալից

երևույթների և անցքերի մասին, կարողանում էին հերքել ստահոդ լուրերը, հայ ժողովրդի հասցեին արտահայտված անհիմն կարծիքները, միաժամանակ, ըստ արժանվույն գնահատել բոլոր այն հրապարակումները, որոնք պարունակում էին իրական փաստեր: «Մշակը» պատասխանել է եվրոպական շատ երկրների մամուլի ստահոդ երևույթներին, ձաղկել դրանց էջերում հրապարակված անհիմն հոդվածները, պայքարել հայատյաց բովանդակությամբ օտարազգի այն հրապարակումների դեմ, որոնք միայն ազգային թշնամանք էին սերմանում հարևան ժողովուրդների նկատմամբ: Թերթն ընդարձակ տեղ է հատկացրել նաև մեր քաղաքական կուսակցությունների գաղափարախոսական պայքարին, բանավիճել մասնավորապես դաշնակցական մամուլի և նրանց գաղափարախոսների հետ, որ բնութագրվում է մշակականների հայտնի չափավորությամբ և սահմանադրական ռամկավարական հայտարարություններով:

«Մշակի» և հայ բոլշևիկների միջև պայքարը չէր խանգարում, որ թերթը անաչառ գնահատի նրա պարագլուխներից մեկի՝ Ստ. Շահումյանի գործունեությունը: Ավելին՝ թերթը Հ. Առաքելյանի խմբագրի եղած տարիներին տեղ էր տալիս ոչ կուսակից գործիչների հոդվածներին ու ելույթներին: Առաքելյանը «Մշակը» խմբագրեց մինչև 1918 թ. հուլիսի 9-ը, երբ անհայտ չարագործների ձեռքով սպանվեց իր բնակարանում: Ստ. Մալխասյանցը այս առիթով գրում է. «Մարմինը կարող եք սպանել, բայց միտքը երբեք» հոդվածը, որտեղ Առաքելյանի սպանությունը որակվում է որպես չարամիտ ոճիր (1918, թիվ 13): «Հայ ժողովրդին» կոչում մշակականները նրա մահվան մեջ որոնում են քաղաքական դրդապատճառներ: Կյանքից անժամանակ հեռացած խմբագրին թերթը բնութագրում է իբրև սկզբունքային և ուղղամիտ մի մտավորականի, որ մինչև վերջ պայքարել է իր համոզմունքի և գաղափարների համար, նպաստել հայ հասարակական ու քաղաքական մտքի զարգացմանը:

Առաքելյանի մահից հետո խմբագրության կազմում փոփոխություններ չեղան: Շիրվանզադեն, որ 1914-ից թերթի գլխավոր աշխատակիցն էր, սկսեց հանդես գալ առաջնորդողներով, որոնք էլ բնութագրում էին «Մշակի» ուղղությունը: Թերթն իր թիվ 248-ում հայտնում է, որ «Մշակի» նոր խմբագիր-հրատարակիչներն են դարձել նրա նախկին խմբագիրների որդիներ Լևոն Քալանթարը և Սու-

րեն Առաքելյանը: Սակայն շուտով Առաքելյանը թողնում է «Մշակը» ինչ-որ անախորժությունների պատճառով, և երկրորդ հրատարակիչ է դառնում Հ. Մելիք-Բախտամյանը: Թղթի պակասը և տպարանի բանվորների պահանջներն ստիպում են հրատարակիչներին թերթի բաժնեգինը բարձրացնել, տպագրել երկու էջանոց համարներ: Շուտով թերթից հեռանում է նաև Հակոբ Մելիք-Բախտամյանը, և «Մշակը» դադարում է մի քանի օրով: Այն վերահրատարակվում է միայն 1920 թ. փետրվարի 10-ին: ««Մշակի» վերանորոգումը» հոդվածում ընթերցողներին տեղյակ է պահվում, որ ստեղծվել է բաժնետիրական ընկերություն՝ լրագրի կանոնավոր հրատարակության համար, իսկ մինչ կազմակերպական հարցերի լրիվ լուծումը, թերթը հրատարակվելու է որպես շաբաթաթերթ: Ստորագրում էր խմբագրական մարմինը, իսկ բաժանորդագրություն չլինելու պատճառով վաճառվելու էր հատավաճառ: Շուտով, սակայն, «Մշակն» օրաթերթ դարձավ, և խմբագրի պաշտոնը մինչև թերթի փակումը ստանձնեց Լեոն:

1918-ի դժնդակ օրերին, երբ թուրքերը գրավել էին Ալեքսանդրապոլը և շարժվում էին առաջ, թերթը հաղորդում է, թե թուրքերն արդեն արշավում են Ղարաքիլիսայի վրա, գրավել են Ջալալօղլին, ուրեմն մեկ մարդու նման պետք է կանգնել նրանց դեմ: Թերթն այս օրերին հատուկ բաժին է բացում՝ «Հայ-թուրքական զօրաճակատ», որում մանրամասնությամբ նկարագրում է Բաշ-Ապարանի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի մարտերը՝ ամեն կերպ աջակից լինելով ճակատամարտի հայ հերոսներին: «Ուզում ես խաղաղութիւն, պատրաստ եղիր կռուի» - այս էր «Մշակի» նշանաբանը: Գաղթականների հոծ բազմությանը թերթը հորդորում է շտապ վերադառնալ և զենքը ձեռքին պաշտպանել հայրենի հողը: Թերթը մանրամասնորեն գրում է զորահրամանատարներ Մ. Սիլիկյանի, Թ. Նազարբեկյանի, Պ.-Բ. Փիրումյանի և այլոց քաջագործությունների մասին, նկարագրում Ղարաքիլիսայի պաշտպանությունը: Ականատեսը գրում է, թե հայ լեռնական, երկրագործ ու հովիվ մարդիկ դուրս էին եկել իրենց պատիվը, տունը, ընտանիքը պաշտպանելու և մեռնելու պարզ գիտակցությամբ:

Թերթն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանի բողոքին՝ Ադրբեջանի կա-

ռավարության այն հայտարարության առթիվ, թե Ղարաբաղը թուրքական հող է, և այնտեղ գեներալ նահանգապետություն պետք է հաստատի Ադրբեջանը: «Մշակը» դա անհեթեթություն է անվանում, բայց և խաղաղություն քարոզում, քանի որ Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը ո՛չ քաղաքական, ո՛չ նյութական, ո՛չ էլ ֆիզիկական ուժ ուներ կռվելու համար: Մշակականներն սպասում էին Փարիզի կոնֆերանսի արդյունքներին: Ըստ Հայաստանի պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանի հետ ֆրանսիական «Թան» լրագրի հարցազրույցի՝ պահանջվում էր հայ անկախ պետություն՝ 60 հազ. քառ. կմ տարածքով, դեպի ծով ելք ունենալու պայմանով: Թերթն ախտանք էր հայտնում նաև Վրաստանի կառավարության վարած հայահալած քաղաքականության կապակցությամբ:

Իրադրությունն ավելի ծանր էր Բաքվում, որտեղ Կոմունայի անկումից հետո հայ բանվորներն ու գինվորները ծանր զրկանքներ էին կրում: Թերթն իր դժգոհությունն էր հայտնում, որ հայերը կողմնորոշվեցին դեպի Ռուսաստանը՝ փրկություն սպասելով բոլշևիկներից:

Մեծ ուշադրությամբ է թերթն անդրադառնում Բաքվի 26 կոմիսարների ողբերգական վախճանին, քանի որ արժանահավատ աղբյուրներից լուրեր չուներ: Սպանված կոմիսարների մեջ էր նաև «Բակինսկի ռաբոչի» թերթի նախկին խմբագիր ու «Մշակի» երբեմնի աշխատակից Ա. Ամիրյանը: Արժանահավատ աղբյուրներից արդեն թերթը հայտնում է ընթերցողներին, որ նրանց սպանությունը կատարվել է անգլիացիների գլխությամբ ու մասնակցությամբ: Այս առիթով արժեքավոր է թերթի աշխատակից Դ. Անանունի հոդվածը՝ նվիրված Ստ. Շահումյանին: Անանունը որակում է նրան որպես շիտակ ու ազնիվ մարդու, որը, սակայն, ազգային հարցում հետևել է Լենինի և Ստալինի սխալ դրույթներին և սխալվել ինքը ևս:

«Մշակը» Հայաստանի համար բոլշևիզմը վտանգավոր էր համարում ոչ միայն տնտեսապես, այլև քաղաքականապես՝ կարծելով, որ քաղաքացիական պատերազմը երկիրը կհասցնի լիակատար քայքայման: Թերթը դեմ է հայ բոլշևիկների ծրագրերին և հորդորում է չհավատալ նրանց քարոզչությանը: Ադրբեջանի խորհրդայնացումը նա պատմական երևույթ է համարում բոլշևիկյան Ռուսաստանի համար՝ Բաքվի գրավումը դիտելով որպես նրա նավթային պաշարներին տիրելու բաղձանքների իրականացում:

1921 թ. առաջին համարներից արդեն «Մշակի» նկատմամբ վրացական կառավարությունը խիստ հսկողություն էր սահմանել: Վրաստանի ներքին գործերի նախարարը զգուշացրել էր «Մշակ» և «Սլովո» թերթերին, որ նրանք պարբերաբար տպագրում են «պրովոկացիոն տեղեկություններ», որոնք երկպառակություններ են սերմանում հարևան ժողովուրդների միջև: Կրկնվելու դեպքում նախարարը սպառնում էր փակել այդ թերթերը և խմբագիրներին վտարել Վրաստանի սահմաններից: Իսկ վրաց բոլշևիկների համար թերթն առավել անհանդուրժելի պետք է դառնար: Եվ իրոք, 1921 թ. փետրվարի 25-ին, Վրաստանի խորհրդայնացման օրը լույս տեսավ հիսնամյա «Մշակի» վերջին համարը:

«ՄՈՒՐՃ» (1901–1907)

«Մուրճ» ամսագիրն ունեցել է երկու շրջան՝ հին և նոր: Եթե հին շրջանը Ավ. Արասխանյանի խմբագրությամբ ընդգրկեց XIX դարի վերջին երկու տասնամյակը՝ հատկանշված ազատագրական պայքարի վերելքի, հասարակական հոսանքների հախուռն բանավեճի, ազգային նոր գրականության և մշակույթի զարգացման, գիտության ճյուղերի տարանջատման իրողություններով, ապա XX դարով հայ ժողովուրդը մտավ զարգացման էլ ավելի բարդ ժամանակաշրջան, երբ քաղաքական կյանքի տնօրինությունն անցավ կուսակցությունների ձեռք՝ իրենց խոսափերան բազմանուն պարբերականներով, ազգային ազատագրական շարժումը ուժեղացավ՝ ի տրիտուր օսմանյան և ռուսական կայսրապետությունների կողմից ճնշման ու բռնության սաստկացման:

1901 թ. հունվարին «Մուրճի» բաժանորդներն ստացան ամսագրի նորտարյա համարը, որը նոր շապիկ ուներ, նոր համարակալում, ավելի ստվար էր և հավակնում էր Կ. Կրասիլնիկյանի ստորագրությամբ նոր պարբերականի իրավունքի: Սակայն հին «Մուրճի» ավանդական ուժը չափից ավելի մեծ էր, որպեսզի նոր «Մուրճը» կարողանար «ազատագրվել» դրանից, մանավանդ ամսագրին աշխատակցող հեղինակային կազմը համարյա անփոփոխ մնաց՝ ամ-

սագրի դիմագծի հիմնական գույնը անխաթար պահպանելով: «Մուրճը» վերստին դեմոկրատական գրականության կենտրոն էր:

Ամսագրի քաղաքական ուղղությանը որոշ փոփոխություն հաղորդեց ամսագրի գլխավոր աշխատակից և ապա խմբագիր (1905 թ. թիվ 5-ից սկսած) Լեոն Սարգսյանը, որը հեռացավ դաշնակցությունից (քաղաքական տարաձայնությունների պատճառով) և իր ամսագիրը դարձրեց ՀՅԴ գործելակերպն ու գաղափարախոսությունը քննադատող ամբիոն:

Լ. Սարգսյանը ծնվել է 1862 թ. Ագուլիսի շրջանի Ցղնա գյուղում: Սովորել է Լազարյան ճեմարանում և ավարտել Մոսկվայի համալսարանի բնագիտական բաժինը: Ապա մանկավարժական գործունեություն է ծավալել Թիֆլիսի Ներսիսյան, Գայանյան և այլ դպրոցներում՝ տեղական մամուլում ճանապարհ հարթելով իր հրապարակախոսական անուրանալի շնորհքի դրսևորման համար: «Մուրճի» վերահրատարակումը նրա համար մի իսկական գյուտ էր, որին նա նվիրվեց անմնացորդ՝ իր անունը կապելով հայ լրագրողների հին սերնդի երախտավոր բույլին: Հետագայում նա եղել է Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ, Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Պարսկաստանում: Կյանքի վերջում գիտական գործունեությամբ է զբաղվել, 1927 թ. կնքել իր մահկանացուն:

Հին «Մուրճի» նման նոր «Մուրճը» ևս իր ընթերցողներին կողմնորոշում էր դեպի եվրոպական կենսաձևերը՝ խաղաղ բարենորոգչական ճանապարհով, «անարյուն հեղափոխությամբ»: «Մուրճի» այս դիմագիծն ավելի է ճշգրտվում ռուսական առաջին հեղափոխության տարիներին՝ ստանալով որոշ ընդդիմադիր շեշտադրություն: Դրան նպաստում են հայ-ադրբեջանական ընդհարումները, որոնց իսկական հեղինակին «Մուրճը» ուղղակիորեն մատնացույց է անում՝ օգտվելով խոսքի ազատության, հեղափոխությամբ նվաճված նվազագույն ազատությունից: «Արյունահեղ անցքերի գլխավոր պատճառը,- ասել է Լ. Սարգսյանը,- իմ խոր համոզմամբ կառավարչական պաշտոնեաների բռնած դիրքն է, նրա թույլատրությունը...» (1906, թիվ 2):

1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստը ևս «Մուրճ» ամսագիրը գնահատում է սթափ հաշվեկշռով և ուշադրավ զուգահեռով ճորտատիրական ռեֆորմի հետ. եթե Ղրիմի պատերազմը ցուցադրեց

Ռուսաստանի ոստիկանական բյուրոկրատական վարչակարգի ամբողջ փտածությունը և հրամայական դարձրեց ռեֆորմը, ապա ռուս-ճապոնական պատերազմը հասունացրեց հոկտեմբերյան մանիֆեստը: Նոր գինին չի կարելի լցնել հին, նեխած տկի մեջ, եզրակացնում է խմբագիրը՝ հորդորելով արմատական ռեֆորմների անցկացումը և սահմանադրական կարգերի հաստատումը Ռուսաստանում: Ցարական կառավարության վերակառուցման խաղերը ի դեմս բուլիգինյան դումայի գնահատելով որպես «պառլամենտարիզմի բիւրօկրատական վիժմունք»՝ «Մուրճը» մանիֆեստը համարում է հեղափոխության առաջին լուրջ հաղթանակ, որին պետք է հաջորդի երկրորդը՝ Սահմանադիր ժողովը: Պատահական չպետք է համարել, որ իր քաղաքական դավանանքը պաշտպանելու համար Լ. Սարգսյանը դիմում է Պլեխանովի օգնությանը, նրա խոսքերով և փաստարկներով մերժում բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու բոլշևիկյան տեսակետը: «Մուրճը» կանգնած է զինված ապստամբության հակառակորդների բանակում և իր տեսակետը դարձյալ ամրապնդում է Պլեխանովի հեղինակավոր խոսքերով, թե զինված ապստամբության կոչը տակտիկական խենթություն է, ուղղակի հանցանք հեղափոխության առջև: Այս իսկ պատճառով Մոսկվայի զինված ապստամբությունը Լ. Սարգսյանը համարում է ի սկզբանե պարտության դատապարտված և հայտարարում. «Զինուած ապստամբութիւնը և քաղաքական գործադուլների փորձերը ցոյց տուեցին այդ միջոցների դրականութեան ամբողջ ուտօպիզմը»: Այս կամ այն խմբի, դասակարգի եզակի ջանքերով մղած հեղափոխությունները, նրա նկատումով, միշտ անհաջող վախճան են ունենում: Խմբագրի քաղաքական մանիֆեստն է՝ «պրօգրեսիւ բոլոր ուժերի դաշնակցութիւն՝ սահմանադրական կարգերը Ռուսաստանում հաստատելու նպատակով» (1906, թիվ 1):

Հատկանշական է, որ «Մուրճի» խմբագիրն իրեն հայտարարում է անկախ բեռնշտայնական և գերմանական մամուլից արտատպում էր. Բեռնշտայնի «Ընդհանուր քաղաքական գործադուլը և յեղափոխական ռոմանտիզմ» հոդվածը (1906, թիվ 1), որտեղ գերմանական սոցիալ-դեմոկրատը ռուսական հեղափոխության փորձը այլ երկրների համար հայտարարում է անընդունելի: Նրա տեսակետը՝ թե պառլամենտարիզմը ամենաուղիղ միջոցն է առանց արյունահե-

ղության հեղաշրջում առաջացնելու, միանգամայն համերաշխ է Լ. Սարգսյանի հայացքներին: Իր վարած գիծը ամրապնդելու համար «Մուրճի» խմբագիրը վկայակոչում է եվրոպական աչքի ընկնող սոցիալիստների կարծիքը, որոնք նույնպես մերժում են ռուսական հեղափոխության միջազգային նշանակությունը:

«Մուրճի» 1907 թ. թիվ 1-ը իր ճակատին կրում է Դարվինի և Մարքսի նկարները՝ Էնգելսի այն նշանավոր խոսքերով հիմնավորված, թե, ինչպես որ Դարվինը գտել է օրգանական կյանքի զարգացման օրենքը, այնպես էլ Մարքսը գտել է մարդկային կյանքի զարգացման օրենքը: Այդ օրենքը, ըստ Սարգսյանի, երկու դեպքում էլ կրում է էվոլյուցիա անունը: Մարքսիզմի տեսությանը ընթերցողներին ծանոթացնելու խնդիրը ամսագրի 12 համարներում իր ուսերին է առնում սպեցիֆիկ Բախշի Իշխանյանը, որի ելույթները խստագույնս քննադատվում են բոլշևիկյան մամուլում՝ մարքսիզմի ռևիզիոնիստական և մակերեսային մեկնաբանման մեղադրանքով: Անկախ ուղղության և օբյեկտիվիզմի հակված «Մուրճի» խմբագիրը ամբիոն է տրամադրում նաև Ստ. Շահումյանին՝ տպագրելով նրա «Դասակարգերը ժամանակակից եւրոպական հասարակութեան մէջ» հոդվածը (1905, թիվ 6), որի հարցադրումները փաստորեն հակադրված են ամսագրի նախընտրելի քաղաքական ուղեգծին՝ փարված դասակարգային համերաշխության իդեալին:

Նոր «Մուրճի» քաղաքական դիմագիծը բնութագրելու համար ուշագրավ են նրա էջերում դաշնակցության սուր քննադատության փաստերը: «Մօտիկ անցեալից» վերնագրված և «Անկախ» ստորագրված հոդվածում խմբագիրը փորձում է հիմնավորել իր հեռացումը նորաստեղծ կուսակցությունից և քաղաքական անկախությունը նախընտրելու հիմնավորում գտնել: Ընկնելով ծայրահեղության մեջ և մոտիկ անցյալի նշանավոր գործիչներ Րաֆֆուն, Պատկանյանին, Գր. Արծրունուն, Խրիմյան Հայրիկին դիտելով իբրև դաշնակցության գաղափարական և հոգևոր սնունդ՝ Լ. Սարգսյանը նրանց մեղադրում է ժողովրդին ի զեն կոչելու և «մասսայական գոնկխտութեան» մղելու համար, երբ սերմանված քամիներից կաբերի էր միայն ոչնչացնող մրրիկներ հնձել... Քննադատելով իրօրյա անպտուղ «ռոմանտիզմի» կրողներին՝ դաշնակցականներին, «Մուրճի» խմբագիրը կարծում է, որ հարկավոր էր շարունակել 60-ական

թվականներին սկսած վերածնության դանդաղ, սակայն հաստատ ճանապարհը, որը տնտեսական բարգավաճում և մտավոր հաղթանակ կբերեր հային խաղաղ ճանապարհով և ոչ թե գրկել «արկածալի, արիւնոտ անհայտը, հմայուած նրա շլացնող, խաբուսիկ մոտիկութիւնից» (1906, թիվ 1): Այսպիսով՝ Լ. Սարգսյանը դաշնակցությանը քննադատում է իր դավանանքի՝ ռեֆորմիզմի մեկնարկից: «Ազգային կառավարութիւն» հոդվածաշարում ներկայացված է դաշնակցական կոմիտեների գործունեությունը տեղերում, որոնք հավակնում էին ազգային կառավարության: Այլևայլ թերթերից՝ «Մշակ», «Հովիւ», «Կեանք», «Աշխատանք», «Նոր խօսք», «Կայծ», Լ. Սարգսյանը արտատպություններ է կատարում դաշնակցության հասցեին քննադատական ելույթներով, որոնցից յուրաքանչյուրը թեև իր բառապաշարն ուներ, բայց նույն նպատակին էր հետամուտ՝ դաշնակցությանը հարվածելուն:

Լ. Սարգսյանը ինքնադիմանկարային մի առանձին հոդվածով (1906, թիվ 8) բացատրում է դաշնակցությունից իր կապերը խզելու պատճառները, որից երևում է, որ հենց սկզբից կուսակցության ներսում ձևավորվում է երկու մոտեցում. մեկը՝ Լ. Սարգսյանի գլխավորությամբ, ելնում էր Արևմտյան Հայաստանի առանձնահատկությունները խորապես ուսումնասիրելու և ըստ այդմ նրա ապագան որոշելու անհրաժեշտությունից, իսկ մյուսը բալկանյան ժողովուրդների ազատագրության նույնատիպ շաբլոնով ոգևորված՝ նախընտրում էր հայդուկային և ահաբեկող պայքարի ուղին: 1892 թ. առաջին ընդհանուր ժողովում հաղթում է երկրորդ թևը: Լ. Սարգսյանը հեռանում է՝ դեմ լինելով նաև կուսակցության ապակենտրոնացմանը և «սոցիալիզմ» եզրույթի ներմուծմանը ծրագրի մեջ, որը, նրա կարծիքով, թուրքական վարչակարգի դեմ քաղաքական կռվում տեղ չպետք է ունենար:

«Մուրճի» հին և նոր շրջանների սահմանագիծը, ասես, ջնջվում է, երբ ամսագիրն ընթերցում ես իբրև գրական հանդես: Նույն հեղինակային կորիզը դեմոկրատական շեշտված բնութագիր է բերում պարբերականին իր գոյության ողջ ընթացքում: Առնականանալով հին «Մուրճի» էջերում՝ Հովհ. Թումանյանն արդեն նվաճել էր գրական պատնեշը, և նրա ստորագրությունն էլ փառք ու պատիվ էր նրա երկերը հրապարակող ամսագրի համար: «Անիծած հարսը»,

«Փարվանա», «Սասունցի Դավիթ», «Դեպի անհունը», «Թմկաբերդի առումը» և այլ ստեղծագործություններ նոր «Մուրճը» զարդարող էջերն են:

Ամսագրի գրական վաստակի պատկառելի բաժինն են կազմում պոետական մյուս հսկայի՝ Ավ. Իսահակյանի մոտ ութ տասնյակի հասնող բանաստեղծությունները: «Մուրճի» էջերից առաջին անգամ հնչեցին և անմիջապես մեծ ժողովրդականություն ստացան «Է՜յ, կանաչ ախպեր», «Սիրեցի, յարս տարան», «Ես որ մեռնիմ», «Դարդը սրտիս, աղքատ ու խեղճ», «Արագի ափին բոստանս լինի», «Օտար, ամայի ճամփեքի վրա» և այլ երգեր:

Ալ. Ծատուրյանի գրիչը պայքարի կոչ է դառնում նոր դարասկզբին և հնչում «Մուրճի» էջերից՝ իր նախասիրած պարբերականի դեմոկրատական բնութագրին նոր շեշտեր ավելացնելով: Լ. Մանվելյանը հանդես է գալիս բանաստեղծություններով և դրամատիկական ստեղծագործություններով:

«Մուրճի» գրական բաժինը պոետական նոր խոսքով հարստացրին Հովհ. Հովհաննիսյանը և Վ. Տերյանը: Վ. Միրաքյանը հանդես եկավ «Լալվարի որսը» բարձրարժեք պոեմով:

«Մուրճի» արձակի բաժինն ավելի ցայտուն է արտահայտում դարասկզբի գրական տարամետ հոսանքների ներթափանցումը, երբ քննադատական ռեալիզմի առաջատար ուղղության հետ հարևանություն էին անում ուշացած ռոմանտիզմն ու սիմվոլիզմը: Ամսագրին աշխատակցող նոր հեղինակներն արձակի բաժնում ավելի շատ են: Այդպիսիք են Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքը, Լ. Շանթի «Ուրիշի համար» դրաման, Վրթ. Փափազյանի «Պատկերներ գյուղից» շարքը:

«Մուրճում» նոր անուն էին արևմտահայ նորավեպի աչքի ընկնող վարպետներից Լ. Բաշալյանը և Առանձարը, որոնց աշխատակցությունը վկայում է նաև հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների հոգևոր կապերն ամրապնդելու խմբագրության ջանքերի մասին: Թլկատինցին հանդես եկավ «Ջալըմ տղան» դրամայով:

«Մուրճի» գրական կապիտալի պատկառելի բաժինն է կազմում Ավ. Ահարոնյանի ստեղծագործությունը՝ «Մրրկի սուրբը», «Լռություն» վեպերը, բազմաթիվ պատմվածքներ և գրաքննադատական

հոդվածներ: Խմբագրի հետ կուսակցական հողի վրա բախման հետևանքով Ահարոնյանի աշխատակցությունը, սակայն, ընդհատվեց կես ճանապարհին:

Հայ մշակույթին մատուցած նոր «Մուրճի» աչքի ընկնող ծառայություններից մեկն էլ հայ թարգմանական գրականությանը բերած մեծ նպաստն է: Այստեղ պատկառելի բաժին են կազմում ռուս հեղինակների գործերը: Հարկ է նշել, որ ամսագրի էջերում ցարական ինքնակալական կարգերի սուր քննադատություն ծավալելով հանդերձ՝ նոր «Մուրճը» հնի նման, ուներ ռուսական ցայտուն կողմնորոշում, գիտակցում էր Ռուսաստանի բախտորոշ դերը հայ ժողովրդի ճակատագրի համար, որով ապահովված էր տեսնում Անդրկովկասի ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային անշեղ զարգացումը մեծ ժողովրդի պարզած հովանու տակ: Վրաստանը Ռուսաստանին միանալու 100-ամյակի առթիվ «Մուրճը» գրում էր, որ այդ ակտով բացվեց «այն ճանապարհը, որով մեր երկիրը պիտի մտնենր քաղաքակիրթ աշխարհին, մասնակից լիներ նրա բարիքներին, որոնց հասել էր առաջադէմ մարդկութիւնը Եւրոպայում» (1901, թիվ 2):

Ռուս գրականության գոհարներին հայ ընթերցողին ծանոթացնելու գործում մեծ երախտիք ունի հատկապես Ալ. Ծատուրյանը: Մ. Լերմոնտովի, Ն. Նեկրասովի, Պլեշչեևի, Նիկիտինի բանաստեղծությունների նրա թարգմանությունները աչքի են ընկնում գեղարվեստական բարձր մակարդակով:

«Մուրճի» միջոցով հայ ընթերցողը ծանոթացավ Գորկու պատմվածքներին, Չեխովի «Թշնամիներ», «Գեղեցկուհիները», «Ծաշորդներ» ստեղծագործություններին: «Մուրճի» հավելվածային հրատարակությունը ամփոփեցին Ալ. Յուժին-Սումբատովի «Դավաճանություն» դրաման, Լ. Տոլստոյի «Հարություն» և Ի. Տուրգենևի «Օրամուտին» վեպերը: Որպես կանոն՝ թարգմանությունները զուգորդվում են ռուս դասական գրողներին մեծարող հոդվածներով՝ միշտ ապես խնդիր ունենալով մեծ գրականության օրինակով գծել հայ գրականության զարգացման նախընտրելի ուղին՝ ռեալիզմի լայն ու համապարփակ հունով:

Արևմտյան դասական գրականությունն ամսագրում ներկայացված է Ջ. Բայրոնի բանաստեղծություններով (տաղանդավոր

թարգմանիչ Հովհ. Մասեհյանի թարգմանությամբ), Չ. Դիկկենսի, Ջ. Մոլիերի, Ալ. Դոդեի, Հ. Բորդոյի, Վոլտերի, Մոպասանի, Ա. Ֆրանսի, Հ. Իբսենի, Մ. Մետերլինկի, Գ. Հաուպտմանի և այլ հեղինակների երկերով, ընդհանուր առմամբ մոտ 50 հեղինակի 70-ից ավելի ստեղծագործություններով:

Հայ գրականության զարգացմանը «Մուրճի» բերած նպաստը պայմանավորված է նաև ամսագրի էջերում հայ գրական քննադատության լայն ծավալումով, որը իբրև գիտության ճյուղ, իր ձևավորման շրջանն էր ապրում: Այստեղ առաջինը պետք է նշել վաղամեռիկ տաղանդավոր քննադատ Վ. Նալբանդյանի անունը, որի հոդվածաշարը՝ նվիրված նորվեգական հանճարեղ գրող Հ. Իբսենին, ոչ միայն մենագրական ընդգրկումով ներկայացնում է անարդար կարգերի դեմ ընդվզող գրողի ստեղծագործական բերքը, այլև վառում է այն հողը, որի վրա պիտի աճեր ու պտղաբերեր հայ նոր գրականությունը:

Չի կարելի չնշել նաև արևմտահայ գրողներին նվիրված «Մուրճի» հրապարակած հոդվածաշարը, որի միջոցով արևելահայ ընթերցողը ծանոթացավ Մ. Մամուրյանի, Ստ. Ոսկանյանի, Ս. Տյուսաբի, Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի, Հ. Պարոնյանի և այլոց կյանքին ու գրական վաստակին: Այդ հոդվածները չի կարելի կարդալ առանց ակնածանքի՝ իբրև արևելահայերի առաջին գնահատանքի խոսք արևմտահայ գրական երախտավորների մասին՝ թելադրված մի ազգ, մի միասնական մշակույթ հավատամքով (դրանց մի մասի հեղինակը Լեոն է):

Հիշատակության արժանի են Կ. Կուսիկյանի հոդվածները՝ նվիրված Ստ. Նազարյանին և Մ. Նալբանդյանին, որոնց ջանքերով քննադատը կենդանացած է տեսնում 50–60-ական թվականների հայ կյանքը: «Հոգևոր գարնան առաջին գուշակների» պայքարի էստաֆետը նա ուզում է տեսնել նոր սերունդների ձեռքին, որպեսզի ամբողջանա ազգային շինության նրանց սկսած շինարարությունը: Ուշագրավ է, որ Ստ. Նազարյանին նվիրված հոդվածը վերնագրված է «Ռուսահայ հրապարակախոսության նահապետը» (1902, թիվ 1), իսկ Մ. Նալբանդյանին նվիրվածը՝ «Մարտնչող հրապարակախոսը» (1906, թիվ 1): «Հյուսիսափայլով» միավորված նրանց բեղմնավոր ջանքերը քննադատի գրչի տակ ստանում են արժանի գնահատա-

կան, մեկը՝ որպես «մեր առաջադիմութեան աւագ դրօշակակիր, ռուսահայերի հրապարակախօսութեան նահապետ», իսկ մյուսը՝ որպես «ժողովրդական տրիբուն»: Կ. Կուսիկյանի բնութագրումը Նալբանդյանի «մեծագործության» մասին կարող է առանց սրբագրման կրկնվել այսօր. «Թէ՛ գրականութեան և թէ՛ կեանքի մէջ նա մի ժողովրդավար է, անվեհեր դրօշակակիր լուսագոյն իդէալների, ազատ մտքի և նորոգութեան քաջամարտիկ ախոյեան: Նա մի խնկելի մշակ է, որ նուիրեց իր ձիրքերը, իր բորբոքուն հոգին, իր եռուն կեանքը ազգային առաջադիմութեան վեհ գործին»:

«Մուրճը» ունէր «Գեղարուեստի աշխարհից» խորագրով բաժինը, որը մեծապես նպաստեց հայ ընթերցողների մեջ գեղարվեստական ճաշակ դաստիարակելու գործին, խթանեց հայոց թատրոնի զարգացմանը, սատար եղավ Կարա-Մուրզայի և Կոմիտասի ջանքերին, որոնք իրենց նվիրել էին հայ ժողովրդական երգի փրկության առաքելությանը, ուշադրություն հրավիրեց Թ. Թորամանյանի՝ հայ ճարտարապետության զարգացման նորօրյա ուղին մատնանշող արժեքավոր նախագծումներին և այլն:

Ամսագիրը հարստացնում էր «Գիտական աշխարհից» բաժինը՝ ժողովրդականացնելով գիտության նվաճումները: Նորություն էր «Պարբերական հրատարակութիւններ» բաժինը, որտեղ ի մի էին բերվում օտար և հայրենական մամուլում սփռված հետաքրքիր նորություններն ու տեղեկությունները, համառոտ տեսություններ նվիրվում այս կամ այն պարբերականին, լուր տալիս պարբերական նոր հրատարակությունների վերաբերյալ:

Նոր «Մուրճին» էլ բաժին ընկավ հին «Մուրճի» տխուր վախճանը. նյութական սղության պատճառով այն դադարեց 1907 թ. թիվ 4-ից:

«ԱՇԽԱՏԱՆՔ» (1906–1907) ԵՎ «ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ» (1907)

Մասնագիտությամբ գյուղատնտես, ականավոր հրապարակախոս Աշոտ Աթանասյանը 1906 թ. հունվարից մինչև 1907 թ. փետրվար Թիֆլիսում հրատարակել է «Աշխատանք» երկշաբաթաթերթը, իսկ 1907 թ. փետրվարի 10-ից վերահրատարակել է այն «Նոր աշխա-

տանք» վերնագրով: «Նոր աշխատանքը» ստորագրել է կինը՝ Վերգինե Աթանասյանը, սակայն թերթի փաստական խմբագիրը եղել է Աշոտ Աթանասյանը:

«Աշխատանք» թերթի համար որպես բնաբան ընտրված են «Հող», «Ազատություն», «Իրավունք», «Դպրոց» բառերը, որոնք զետեղված են շապկանկարի վրա պատկերված դրոշի չորս անկյուններում: Իսկ «Նոր աշխատանքի» շապկանկարում դրոշի փոխարեն պատկերված են գութաններ:

Աշոտ Աթանասյանը[1] *ծնվել է 1870 թվականին Երևանում՝ հասարակական գործիչ, ուսուցիչ Նահապետ Աթանասյանի ընտանիքում: Սովորել է Երևանի թեմական դպրոցում, ապա ռուսական գիմնազիայում: Բարձրագույն կրթությունն ստացել է Գերմանիայում: 1894 թ. Լայպցիգի համալսարանին կից գյուղատնտեսական ինստիտուտն ավարտելուց հետո նա 1895 թ. վերադարձել է Անդրկովկաս և պաշտոնավարել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:*

1907 թ. Աշոտ Աթանասյանը Թիֆլիսում հիմնադրել և խմբագրել է հայերեն առաջին մասնագիտական «Գյուղատնտես» երկշաբաթաթերթը: Նա միաժամանակ վարել է հասարակական լայն գործունեություն: Եղել է «Կովկասի հայ գյուղատնտեսական ընկերության» պատասխանատու քարտուղարը: Նրա անմիջական մասնակցությամբ և օժանդակությամբ Աստվածատուր Երիցյանը 1906 թ. Թիֆլիսում հրատարակել է «Խաթաբալա» հայտնի երգիծական թերթը: Այստեղ աչքի են ընկել Աթանասյանի սոցիալական ու քաղաքական թեմաներով գրված ֆելիետոնները: Ժամանակակիցները բարձր են գնահատել նրա տաղանդը: Նա համարվել է ռուսահայ դեմոկրատական երգիծական ժուռնալիստիկայի ամենաականավոր ներկայացուցիչներից մեկը:

1914–1915 թթ. լույս է տեսել 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից հայ գեներալների կենսագրականներին նվիրված նրա հատորների շարքը: Ուշագրավ են հայ գեներալների, հրապարակախոսների, մտավորականների մասին նրա տպագիր և անտիպ հուշերը, «Հայոց թատրոնի պատմությունը» ուսումնասիրությունը: Աշոտ Աթանասյանը գրել է նաև երկու պիես («Ջրվեժ» և «Մելիքի աղան»):

---

[1] Աշոտ Աթանասյանի կենսագրական տվյալներ վերցված են Ս. Թ. Իշխանյանի «Հայ դեմոկրատական մամուլի պատմությունից» գրքից (Ե., 1962, էջ 16–49):

Խորհրդային իշխանության տարիներին նա աշխատել է Հայաստանի հողժողկոմատում և հրատարակել մասնագիտական բազմաթիվ գրքեր, իսկ կյանքի վերջին տարիներին գրել է ինքնակենսագրական նոթեր, որոնք այսօր էլ կարող են օգտակար լինել պատմաբաններին ու բանասերներին:

Աշոտ Աթանասյանը մահացել է 1941 թվականին, Երևանում:

Աթանասյանի «Աշխատանք» և «Նոր աշխատանք» պարբերականներին աշխատակցել են ժամանակի գրեթե բոլոր լուսամիտ գործիչները (Մ. Բագրատունի, Խ. Սամվելյան, Գ. Տեր-Գրիգորյան, Ղ. Տեր-Գրիգորյան, Հ. Պիչիկյան, Գ. Սինանյանց, Ա. Բուղուղյան, Ատրպետ, Վրթ. Փափազյան, Հ. Հակոբյան, Ղ. Աղայան, Աթ. Խնկոյան, Սիմակ, Ա. Գուլոյան և ուրիշներ):

Թերթերի շապկանկարները պատրաստել և ձևավորման աշխատանքները կատարել է հայտնի նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը:

«Աշխատանք» թերթի նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. «Գիւղատնտեսութիւն», «Գաւառ», «Դպրոց», «Առողջապահութիւն», «Գիր և Գիրք», «Մամուլի շուրջը», «Ներքին լուրեր», «Հայտարարութիւններ», «Հարց և պատասխան» և այլն:

«Աշխատանք» և «Նոր աշխատանք» երկշաբաթաթերթերը լայն տարածում են գտել հատկապես գավառներում: «Աշխատանք» թերթը մուտք է գործել շուրջ 416 գյուղ և գավառական քաղաքներ: Բաժանորդների ընդհանուր թիվը հասել է 686-ի: Խմբագրությունն իր բաժանորդներին ձրիաբար ուղարկել է գյուղատնտեսական դիտամատչելի գրքույկներ («Ամենալավ վարը», «Թանկագին բույսերի թշնամիները և նրանց դեմ կռվելու միջոցները» և այլն):

Աթանասյանի պարբերականներում քննարկվել են համառուսական հեղափոխական շարժումներին, հողի համայնական սեփականությանը, Պետական դումային, ազգամիջյան կռիվներին, գյուղատնտեսությանը, մշակութային կյանքին վերաբերող հարցեր:

Ռուսաստանի քաղաքներում բռնկված հեղափոխական շարժումները, ինչպես և դեկտեմբերյան զինված ապստամբությունը մանրամասն լուսաբանվել են Աթանասյանի պարբերականներում:

«Աշխատանքը» դիմելով հայ երիտասարդությանը, հորդորել է նրան՝ չհապաղել, չկորցնել պատեհ առիթը, ռուս գյուղացու և բանվորի հետ միասին մասնակցել հեղափոխական շարժումներին:

Աթանասյանի թերթերը լավատեսական տրամադրություններով են համակել ընթերցողներին՝ հավատացնելով նրանց, որ հեղափոխությունը ավարտվելու է հաղթանակով, քանի որ շարժումներին մասնակցում է նաև զորքը: «Եւ միապետութիւնը... ժամ առ ժամ,- գրում է թերթը,- մօտենում է այն անդունդին, որից փրկութիւն չկա» (1906, թիվ 21):

«Սոցիալիզմը և հողային հարցը», «Ազատութիւն և հող», «Ազատութեան գաղափարը», «Զինդհատուող յեղափոխութիւն» և այլ հոդվածներում զարգացվել է այն միտքը, թե մարդկության երջանիկ ապագան կերտվելու է սոցիալիստական հասարակարգում, այնտեղ իրականացվելու են համայնական աշխատանք և համայնական վայելում:

«Գաւառ» խորագրի տակ տպագրված նյութերը պատմում են գյուղական վաշխառուների անիրավությունների մասին: Դրանցում կոչ է արվում գյուղացիներին՝ «արթնանալ մորփէոսյան քնից», ձեռքերն առնել օրենքն ու իրավունքը և ասպարեզից դուրս քշել բոլոր տեսակի հարստահարողներին:

Աթանասյանի թերթերում ուշադրության են արժանացել հողային հարաբերություններին վերաբերող հարցերը:

«Աշխատանք» թերթի առաջին տարվա առաջին համարում տպագրված են «Համառուսական գյուղացիական միության» 2-րդ համագումարի որոշումները, որոնցով պահանջվում են հողը դարձնել ամբողջ ժողովրդի սեփականությունը, թույլ տալ հողից օգտվելու նրանց, ովքեր աշխատում են հողի վրա և այլն: Տպագրվել է միության հայտարարությունը, որտեղ ասված է, որ եթե գյուղացիության պահանջը չկատարվի, ապա կհայտարարվի ընդհանուր գործադուլ, որին կմասնակցի նաև բանվոր դասակարգը:

«Միության» որոշումների տպագրության և հատկապես «Հողը պէտք է պատկանի նրան, ով այն մշակում է» կոչի համար խմբագիրը հետապնդվել է կառավարության կողմից և որոշ ժամանակով բանտարկվել Մետեխի բանտում:

«Աշխատանքը» առաջնորդ ընդունելով «Հող և ազատութիւն» նշանաբանը, պայքարել է «Ողջ ժողովրդին, ողջ ազատութեան հետ անբաժան» գաղափարի իրականացման համար:

Աշոտ Աթանասյանի «Նոր աշխատանք» թերթում ավելի սուր են առաջադրվել քաղաքական պայքարի և քաղաքական ազատությունների հարցերը: Այստեղ «Հող և ազատություն» նշանաբանը ստանում է «Նախ ազատություն և ապա՝ հող» ձևակերպումը: Այն տեսակետն է արտահայտվել, թե հողային հարցը կլուծվի և տնտեսական հարաբերությունները կբարելավվեն այն ժամանակ, երբ «Կփոխվեն հասարակական ժամանակակից կարգերը՝ վերից դէպի վար, երբ ողջ պետութեան մէջ կթագաւորեն համայնակեցութեան, սոցիալիզմի արդար օրէնքները» (1907, թիվ 6):

«Աշխատանք» և «Նոր աշխատանք» թերթերում պաշտպանվել է գյուղական համայնքի միջոցով սոցիալիզմին անցնելու գաղափարը: «Հողային հարցը Ռուսաստանում», «Ճորտութեան վերացումը», «Համայնական հողատիրութիւն» և այլ հոդվածներում զարգացվել է այն միտքը, թե մասնավոր հողատիրության վերացումից հետո պետք է ստեղծվի համայնական հողատիրություն: Աշոտ Աթանասյանի թերթերը արտահայտելով այն կարծիքը, թե «Գյուղացիական համայնքի հիման վրայ պետք է կառուցուի համայնական հողատիրութիւնը», կոչ են արել գյուղացիությանը՝ «չթողնե՛նք, որ քայքայուի համայնքը, աւելի զարգացնե՛նք և արդար հիմքերի վրայ դնե՛նք այն» (1906, թիվ 41):

«Աշխատանք» և «Նոր աշխատանք» թերթերում բազմաթիվ էջեր հատկացվել են երկրում առաջին անգամ կազմակերպվող ներկայացուցչական օրգանի՝ Պետական դումայի ընտրությունների լուսաբանմանը: Թերթերը ոչ մի լավ բան չէին սպասում Դումայից, բայց և չէին էլ պաշտպանում Դուման բոյկոտի ենթարկելու տեսակետը:

Քննադատաբար անդրադառնալով Դումայի գործունեությանը՝ Աշոտ Աթանասյանի թերթերը նկատում են, որ այն ոչինչ չտվեց ժողովրդին, բացի անհաբեկելուց: Թերթի եզրակացությունը մեկն է. «Եթէ կառավարութիւնը հրաժարվում է կամովին ժողովրդին տալ նրա ուզածը, ապա դրա համար կա մի այլ ուղի՝ ժողովրդի բռնի ուժը...» (1906, թիվ 17):

«Նոր աշխատանքը» մանրամասն լուսաբանել է սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից ընտրված պատգամավորների քաղաքական հայացքները, համակրանքով խոսել նրանց նախընտրած նպատակների ու խնդիրների մասին:

«Աշխատանք» և «Նոր աշխատանք» թերթերը լինելով քաղաքական պարբերականներ՝ արձագանքել են ժամանակի գրեթե բոլոր քաղաքական իրադարձություններին, այդ թվում և Անդրկովկասում բռնկված ազգամիջյան կռիվներին: Թերթի մի շարք հրապարակախոսական հոդվածներում քննադատվել է ցարիզմի ազգային քաղաքականությունը: Այն տեսակետն է պաշտպանվել, թե ցարական կառավարությունն ազգամիջյան կռիվները հրահրում է ժողովրդի ուշադրությունը հեղափոխական շարժումներից շեղելու համար:

Ա. Աթանասյանի թերթերի էջերը հարուստ են դրական-գեղարվեստական ստեղծագործություններով: Արձակ և չափածո գործերում իրենց արտահայտությունն են գտել աշխատավոր գյուղացու առօրյա հոգսերը, սոցիալական, քաղաքական անազատ կյանքը, ժողովրդի մեջ, հատկապես գյուղական վայրերում իշխող տգիտությունն ու նրա վնասաբեր հետևանքները: Թերթերում տպագրվել են Ատրպետը, Ղ. Աղայանը, Սեյրին (Ա. Գուլոյան), Ջավախեցին (Ղ. Տեր-Գրիգորյան), Սիմակը (Սիմակ Սահակյան), Հ. Հակոբյանը (Պրոլետար), Մ. Բաղրատունին, Վ. Սարգսյանը (Վարոս), Ա. Ջանյանը և ուրիշներ: Այստեղ է տպագրվել Վ. Փափազյանի «Հողի աշխատավորը» պատմվածքը (1906, թիվ 1–4), որում իրական գույներով ներկայացված են գյուղական կյանքի ճշվառ պատկերները: Պատմվածքի հերոս գյուղացի Թևոսը պարզ գիտակցում էր, որ հողը պատկանում է նրան, ով մշակում է, ով նրա վրա աշխատում է, քրտինք է թափում: Սակայն իրականում, ինչպես նա է ասում՝ «Հողի տերը նա է, ով ույժ ունի, ունի նաև զարնող ձեռք» (1906, թիվ 4):

Գյուղի զորբաների, գյուղական տանուտերերի՝ ավազակ-սրիկաների անիրավ, խարդախ գործերի մասին են պատմում Մ. Բաղրատունու ստեղծագործությունները: Նրա «Գլավնի» վիպակը, որ շարունակաբար տպագրվել է «Աշխատանք» թերթի 1906 թիվ 13–17 համարներում, քննադատական խոսք է՝ ուղղված գյուղերում գլխավոր ընտրելու կարգի դեմ:

Ս. Սահակյանի («Հնձուորին»), Ջավախեցու («Պապս» և այլն) և ուրիշների պատմվածքները սրտաճմլիկ պատմություններ են տգիտության զոհ դարձած անմեղ դեռահասների, գյուղի աշխատավորության չարքաշ կյանքի մասին:

Ուշագրավ են չափածո ստեղծագործությունները, որոնք համակված են հեղափոխական տրամադրություններով: «Պրոլետար» ստորագրությամբ տպագրված Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունները առաջին անգամ տպագրվել են «Աշխատանք» թերթում: Հակոբ Հակոբյանը գնահատվել է որպես հայ պրոլետարական գրականության հիմնադիր:

Գյուղացու չարքաշ կյանքի երգն են երգում բանաստեղծներ Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյանը, Սեյրին, Ս. Սաֆարյանը և ուրիշներ:

Ուշադրության են արժանի Աշ. Աթանասյանի (Սալ-Ման և այլ ծածկանուններով) տպագրված ֆելիետոնները: Օգտագործելով երգիծանքը՝ խմբագիրը կարողանում է համարձակ քննադատական խոսք ասել իշխանավորների ու կառավարության հասցեին:

Թերթերում օգտագործված է երգիծանքի նոր ձև՝ «Բառարան» վերնագրով, որը հնարավորություն է տվել բնութագրելու յուրաքանչյուր դասակարգի բուն էությունը: Այսպես. «Գյուղացի-գյուղում ապրող մի կենդանի, որին ամէն բանից զրկել են, սխալմամբ թողնելով միայն եղջիւրները», կամ «Բանուոր-խստիւ արգելւած դեռանուն մի գոյականի, որին վճռւած է կախաղան բարձրացնել Պետական դումայում»:

Ա. Աթանասյանի «Աշխատանք» և «Նոր աշխատանք» պարբերականները պայքարի դրոշ են բարձրացրել կալվածատիրական սեփականության, ինքնակալական կարգերի, ցարական բյուրոկրատիայի դեմ:

Պարզ է՝ նման պարբերականները երկար կյանք չէին կարող ունենալ: «Աշխատանքը» գոյատևել է ընդամենը մեկ տարի, «Նոր աշխատանքը»՝ կես տարի: Երկու պարբերականներն էլ արգելվել են գրաքննության կողմից քաղաքական համարձակ ելույթների համար: Սակայն կառավարության նման հետապնդումները Աշոտ Աթանասյանին չեն ահաբեկել, նա ցած չի դրել իր գրիչը և անվարան շարունակել է իր գործը: 1907–1908 թվականներին նա հրատարակել է «Անկախ մամուլ» ժողովրդական, հասարակական, քաղաքական և գրական օրաթերթը:

«ԸՆԿԵՐ» (1906–1914)

«Ընկեր» հասարակական, գրական շաբաթաթերթը լույս է տեսել 1906–1914 թվականներին, Թիֆլիսում, Սեդրակ Թառայանի խմբագրությամբ:

Գրող, դրամատուրգ, գրականագետ, հասարակական գործիչ Սեդրակ Թառայանը ծնվել է 1826 թ., Շամախիում: Ավարտել է ծննդավայրի գերմանական միսիոներական դպրոցը, ապա փոխադրվել Գերմանիա, սովորել Լայպցիգի համալսարանում: Փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան ստանալուց հետո հաստատվել է Թիֆլիսում: Այստեղ նա աշխատակցել է «Մուրճ», «Մշակ», «Տարազ», «Աղբյուր» և այլ պարբերականների: Առանձին գրքերով լույս է ընծայել՝ «Երկու վեպիկներ և մի քանի ոտանավորներ» (1887), «Ընտանիքի կյանքը» (1889), «Թաքնված կայծեր» (1903) գործերը: 1903 թ. Պետերբուրգում լույս է տեսել նրա «Բանաստեղծ իդեալիստ Շիլլեր» երկհատոր պատկերազարդ աշխատությունը: Գրել է դրամաներ («Արշալույս», «Ապրայիլ», «Սոկրատ» և այլն), հրատարակել է «Ընտանիք» գրքույկը[1]:

Սեդրակ Թառայանի թերթի պատգամն էր՝ «Ըմբռնիր, սիրիր, ստեղծագործիր»: «Ըմբռնում, սէր, ստեղծագործում,- գրված է այնտեղ,- որն կազմում է «Ընկերի» և ամբողջ ընկերական մարդկութեան միակ անփոխարինելի նշանաբանը, որից դուրս փրկութիւն չկա մարդկային ցեղի համար» (1910, թիվ 1): Որքան էլ Ս. Թառայանը գիտակցում է, որ կապիտալիզմի զարգացման հետևանքով ավելի են սրվում ներհակ դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև եղած հակասությունները, որ կապիտալի աշխարհում պրոլետարիատը «ծախում է իր ձեռքերը գործարանատէրերին», իսկ կապիտալիստն «ունի նուրբ ձեռնոցներ չան կաշուց», դարձյալ շարունակում է մարդկության բարօրության ելքը գտնել բարոյական կատարելագործման մեջ: «Մարդկային կեանքի երջանկութեան միակ ճանա-

---

[1] Ս. Թառայանի «Ընտանիք» գրքույկը լույս է տեսել 1912 թ., Թիֆլիսում, «Ընտանեկան գրադարան» մատենաշարով: Գ. Լևոնյանի, Հ. Պետրոսյանի, Ա. Կիրակոսյանի, Մ. Բարրյանի մամուլի մատենագիտական ցանկերում գրքույկը սխալմամբ նշված է որպես պարբերական, որը լույս է տեսել մեկ համար: Մինչդեռ, այն գիրք է, պահպանվում է ՀՀ Ազգային գրադարանի գրքային ֆոնդում:

պարզը զուտ բարոյական վերածնությունը պետք է լինի, որից պիտի բխեն և՛ տնտեսական բարուոք դրությունը, և՛ իսկական ազատությունը, և՛ հավասար եղբայրակցությունը» (1911, թիվ 1):

Թերթում մերկացվում է կապիտալիզմի շահագործողական էությունը. «Կապիտալիզմը դավանանք չունի, պատմական սկզբունքներ չունի, սուտ են այդ բոլորը. նա միայն մի բան ունի, չունենալ ոչ մի օրենք, ոչ մի սրբություն. տրորել անցնել. կանգ չառնել ոչ մի խոչընդոտի առաջ: Նա միայն ոսկի է պահանջում, բայց թե դա ինչ միջոցներով, ինչ ճանապարհով ձեռք կբերի՝ դա նրա համար միևնույն է, միայն թե ամբարուի հսկայական չափերով» (1911, թիվ 15): Մյուս կողմից կապիտալիզմի արատավոր կողմերը համարելով մարդկային չար ու վատաբարո հատկանիշների արդյունք, դարձյալ պնդում է. «Մարդիկ պէտք է զինուեն մտաւոր և բարոյական առաքինութիւններով և աշխատեն մեղմացնել արհեստականօրէն ստեղծուած կեանքի դաժան պայմանները» (1911, թիվ 3):

Հասարակության բարոյական դաստիարակության գործում կարևոր դերը տրվում է դպրոցին: Ըստ թերթի՝ բարոյագիտությունը «պէտք է պատուաստել մարդ-անհատի մէջ դպրոցական հասակից»:

«Ընկեր» թերթում այն տեսակետն է զարգացվում, թե տնտեսական, քաղաքական և հասարակական պայմանները պետք է վերափոխեն իրենք՝ մարդիկ հետևելով մշտնջենավոր, հաստատուն բարոյական սկզբունքներին: Մարդը լցված բարությամբ իր նմանի հանդեպ, չպետք է ցանկանա նրան այն, ինչ չէր ցանկանա իրեն և վանելով իր միջից չար որոմը՝ անընդհատ պիտի կատարելագործվի ինքնադաստիարակությամբ: Թերթի քարոզած այս գաղափարները համընկնում են Քրիստոսի պատգամներին, թերթը ձգտում է հասարակության մշակութա-պատմական առաջընթացը համատեղել աստվածաբանությանը:

«Ընկեր» թերթի խմբագիրը և աշխատակիցները հետևել են «ծանիր զքեզ» փիլիսոփայական դարձվածքին: Նրանք ցավ են հայտնել, որ դարերի խորքից եկող այս խոսքերի իմաստը մարդիկ չեն ըմբռնել և չեն փորձել նյութական գանձերի փոխարեն հոգևոր գանձեր կուտակել:

Ըստ թերթի՝ անհատը հետևելով եվրոպական քաղաքակրթությանը՝ փոխվում է միայն արտաքինով, և ոչ էությամբ: Նա պճնվում

է նորաձև հագուստներով, բայց ներքինով մնում է տգեղ, անկիրթ, սառը, ննջ: Նրա հոգին չի գեղեցկանում և թվացող արտաքինը դեռ ոչինչ չի խոստանում հասարակությանը: Թերթում արտահայտված մտորումները պտտվում են այն հարցի շուրջ, որ մարդկությունը լուսավորությամբ, գիտությամբ, բարոյական դաստիարակությամբ կարող է ստեղծել անդասակարգ, ընկերվարական հասարակարգ: Թերթը գոյության կռվի օրենքները հատուկ է համարում միայն կենդանական աշխարհին և չի ընդունում դրանց առկայությունը մարդկային հասարակության մեջ: Ըստ թերթի՝ մարդը հաղթող կարող է լինել ոչ թե արհեստականորեն ստեղծած զենքով, այլ իր սիրալիր սրտով և վեհ հոգով: Նա պետի գիտակցի, որ «ինքը ստեղծագործող է և ունի աստուածային պատկեր»: Այս ոգով է ներծծված թերթի հայեցությունը: Ինչպես հաստատում են փաստերը, ընթերցողները հաճույքով են կարդացել թերթը: Այսպես, Բաքվից Ս. Ցրանգուլյանը գրել է. «Հարգելի խմբագի՛ր, «Ընկեր» թերթից առաջին համարը ինձ այն աստիճան համակեց, հիացրեց, որ անհամբեր սպասում էի երկրորդ, և այն համարներին, որոնք նոյնպէս առանց նեղանալու և մազաչափ ձանձրոյթի մինչև վերջին խօսքը կարդալով, սիրտս անհուն ոգևորութեամբ լցուեց: Վերջապէս լոյս տեսավ այն բարոյագիտական ազդակը, որի կարիքը վաղուց էր զգացւում մեր այլանդակուած միջավայրում, որտեղ մարդիկ մամոնայի պաշտամունքից կուրացած, իրենց չուեթեան բոլոր ոյժերով ամէն ինչ սրբապղծելով, մեկ մեկու չափում, կոխկրտում են իրենց մարմնի վայրէնի, անզուսպ հակումներին յագուրդ տալու համար» (1911, թիվ 6):

Ս. Թառայանի «Ընկեր» թերթը ռուսական առաջին հեղափոխության և հաջորդ տարիներին իր ընդհանուր մարդասիրական քարոզներով, բարոյական պատգամներով անշուշտ նպաստել է հայ ժողովրդի հոգևոր կյանքի բարեփոխման գործին:

«ՀՈՎԻՎ» (1906–1909), «ՀՈՎԻՏ» (1910–1917)

Ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության տարիներին (1905–1907) քաղաքական կուսակցությունների (ս-

ցիալ-դեմոկրատական, սոցիալիստ-հեղափոխական և այլն) կողմից քամահրանքի է տրվել եկեղեցու կատարած գործը, հոգևորականությունը որակվել է որպես «ճրիակեր տարր», ոտնահարվել են նրա իրավունքներն ու հեղինակությունը:

Հայ եկեղեցու նկատմամբ նման հալածական վերաբերմունքը, բնականաբար, առաջ է բերել հոգևոր դասի վրդովմունքը: Հոգևոր դասի դերն ու նշանակությունը վերականգնելու, քրիստոնեական բարոյախոսության քարոզները հասարակության լայն շրջաններում տարածելու նպատակով Թիֆլիսում Գրիգորիս քահանա Երզնկյանը լույս է ընծայել «Հովիւ» (1906–1909), ապա «Հովիտ» (1910–1917) հոգևոր-բարոյական, պատմական, հասարակական և մանկավարժական շաբաթաթերթը:

Գրիգորիս Երզնկյանը[1] ծնվել է 1852 թ. Թվականին, ապրիլի 15-ին, Լոռվա գավառի Հաղպատ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի վանական դպրոցում: 1872 թ. նա ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, իսկ 1881 թ.՝ Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտը, որտեղ աշակերտել է հայտնի մանկավարժ, պատմաբան Հ. Գուրևիչին:

Գր. Երզնկյանն իր մանկավարժական գործունեությունն սկսել է Կարսում, որտեղ 1881–1885 թթ. եղել է Լուսավորչյան և Շուշանյան ուսումնարանների ուսուցիչը և տեսուչը: Այնուհետև նա հրավիրվել է Ալեքսանդրապոլ և աշխատել Վիճակային տղայոց և Արղության օրիորդաց դպրոցներում: Ապա տեղափոխվել է Թիֆլիս և կրոն ու երգեցողություն դասավանդել Ներսիսյան դպրոցում (18 տարի) և Գայանյան օրիորդաց դպրոցում (25 տարի): Գր. Երզնկյանը 33 տարի քահանայագործել է Թիֆլիսի վանքի ավագ եկեղեցում: Նա որոշ ժամանակ եղել է նաև Էջմիածնի վանքի կոնսիստորիայի անդամ:

Գր. Երզնկյանի գրչին են պատկանում բազմաթիվ ձեռագիր և տպագիր աշխատություններ («Կրոնների պատմությունը», «Դասագիրք կրոնի», «Հայ քրիստոնեական դավանագիտության դասա-

[1] Գ-ր. Երզնկյանի կյանքի և գործունեության համառոտ ակնարգիծը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Նրա կենսագրական տվյալները քաղված են «Հովիւ» շաբաթաթերթի էջերից (1906, թիվ 26, 1907, թիվ 32) և նրա ազգականների մոտ պահպանված փաստաթղթերից:

գիրք», «Կառուցումն և օծումն Հայոց եկեղեցու», «Քրիստոնեական բարոյագիտություն», «Պատմություն մանկավարժության» և այլն):

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հոգևորական գործիչը հալածվել է կառավարության կողմից: Նա իր մահկանացուն կնքել է Թիֆլիսում, 1928 թվականին: Գր. Երզնկյանի պարբերականները արևելահայ իրականությունում իրենց տեսակի մեջ երկրորդն են «Արարատ» (Վաղարշապատ, 1868–1919 թթ.) ամսագրից հետո: «Արարատը» եղել է Հայրապետական աթոռի ս. Էջմիածնի պաշտոնական օրգանը և տպագրել է բանասիրական, պատմագիտական, ազգագրական, ինչպես նաև կրոնական ավանդույթներին և ծեսերին նվիրված աշխատություններ և հոդվածներ: Ի տարբերություն «Արարատի», «Հովիւ» և «Հովիտ» թերթերը եղել են ժողովրդի առօրյա հոգսերի, պահանջների խոսափողներ և քրիստոնեության բարոյական պատգամների տարածողներ: «Հովիւը,– գրված է այնտեղ,– որպես եկեղեցական թերթ, ասիթ կունենա ժամանակակից շատ խնդիրներ զարթեցնելու, բացատրելու և ամենայն սառնութեամբ քննադատութիւն կատարելու մինչև նրանք բավարար լուծումն ստանան: Նա կլինի անկողմնապահ, անաչառ, միշտ կխօսի ճշմարտութիւնը և կպահէ արդար կողմը: Նա ամէնքի համար կլինի, կպատկանի ամէնքին և կաշխատի հետաքրքրել և գրավեցնել նրանց ուշադրութիւնը, որոնց սրտին մօտ են եկեղեցու շահերը և եկեղեցականութեան բարեփոխման գործը ներկայ պահանջների համաձայն» (1906, թիվ 1, էջ 4):

Գր. Երզնկյանի պարբերականների շուրջ համախմբվել են գրական, մանկավարժական, հասարակական գործունեությամբ աչքի ընկած գործիչներ (Հարություն Ճուղուրյան, Իսահակ Հարությունյան, Պետրոս Սիմեոնյանց, Սեդրակ Մանդինյան, Գարեգին Ենգիբարյան, Բենիկ վարդապետ, Սամսոն Ջերքեզյան, Խաչատուր (Քուչուկ) Հովհաննիսյան, Մուշեղ Բագրատունի, Միսակ Արամյանց և ուրիշներ):

Նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. «Եկեղեցական», «Պատմական», «Մանկավարժական», «Հասարակական», «Մամուլ», «Մատենախոսութիւն», «Գեղարուեստ», «Դատաստանական», «Մամուլի տեսութիւն», «Վարչական», «Օրուայ խնդիրներ», և այլն:

Գր. Երզնկյանի թերթերում մշակվել են եկեղեցու վերափոխման վերաբերյալ ծրագրեր: Առաջին հերթին պահանջվել է վերանայել «Պոլոժենիեն» (Հայ Առաքելական եկեղեցու՝ 1836 թ. կանոնադրութ-

յունը) և բարձրացնել եկեղեցու իրավունքների ու կանոնների բարեփոխման հարցը: Գր. Երզնկյանի «Պոլոժենիէն» պէտք է փոխուի» հոդվածաշարում (1906, թիվ 23–29) առաջադրվել է՝ վերականգնել Հայ Առաքելական եկեղեցու ժողովրդավարական սկզբունքը, փոխել եկեղեցու վարչական հնացած ձևը, սահմանել հոգևոր ղեկավար մարմինների ընտրական նոր համակարգ՝ փակ և գաղտնի քվեարկությամբ, հոգևոր գործերի ղեկը հանձնել համապատասխան կրթություն ստացած հոգևորական և աշխարհական անձանց ձեռքը, վերանորոգել եկեղեցին ժամանակի պահանջների համաձայն, ամրապնդել եկեղեցու և ժողովրդի միջև եղած կապը:

Գր. Երզնկյանի համոզմամբ ազգի և հայրենիքի բարօրության երաշխիքը պետք է փնտրել Աստծու սիրով միացած սեփական ազգի բոլոր խավերի եղբայրական միության մեջ: Պետրոս Սիմեոնյանցի «Միութիւնն է ոյժ, իրաւունք և փրկութիւն» առաջնորդող հոդվածաշարում (1906, թիվ 28–30) վտանգավոր են համարվել այն քաղաքական կուսակցությունները, որոնք ռուսական առաջին հեղափոխության օրերին մոռանալով ազգայինը՝ համազգային շահի անունից ելույթներ էին ունենում՝ քարոզելով «անհայրենիք անհատի նիւթական բարեկեցութիւնը»: Նման գաղափարախոսությունը, ինչպես հեղինակն է գրել՝ «կոսմոպոլիտութիւնը», նա որակել է որպես «հիւծող ախտ, առաջնորդող դեպի վերջնական մահ... » (1906, թիվ 28):

Պետրոս Սիմեոնյանցը, որը ժամանակին եղել է ազգային-պահպանողական հոսանքի տեսաբաններից և սերտ կապեր է ունեցել Գր. Երզնկյանի հետ (ապրել է նրա տանը և եղել է նրա ընտանիքի սիրված անդամներից մեկը), իր դավանած հայացքներով որոշակի ներգործություն է ունեցել Գր. Երզնկյանի թերթերի գաղափարական ուղղության վրա: Թերթում տպագրված Ղազարոս Աղայանի «Մի ամէնակարևոր պահանջ» հոդվածաշարում (1906, թիվ 17–18) դարձյալ պաշտպանվել է եղբայրական միության ստեղծման գաղափարը: Աղայանը նույնպես ազգի բախտավորությունը, բարօրությունը տեսնել է հասարակության բոլոր անդամների սերտ միության մեջ: «Զուգութիւնն է մայր բարեաց,- գրել է նա,- անզուգութիւն՝ ծնող չարեաց»: Նրա կարծիքով ճշմարիտ աստվածասիրության ոգով համակված հասարակության մեջ քրիստոնեական բարոյախոսության հիմնական սկզբունքի կատարումը յուրաքանչյուրի համար պետք է լի-

նի ունակություն, արյուն և մարմին դարձած, ժառանգաբար որդոցորդի անցնող մի ազգային սուրբ սովորություն:

Գր. Երզնկյանի թերթերում քննադատական խոսք է ասվել եկեղեցու և հոգևորականության հասցեին: Քննադատվել են հոգևորականներն իրենց առաքելությունը չկատարելու, ժողովրդի, հատկապես արևմտահայության նկատմամբ անտարբեր վերաբերմունք ցուցաբերելու համար: «Ի՞նչ է անում մեր Ս. Էջմիածինը» առաջնորդող հոդվածում գրված է. «...Տաճկահայոց ազգային եկեղեցինները թատերական բեմի են փոխւում, վանքերը կողոպտւում և անարգանքի են ենթարկւում թեթևամիտ, անկրօն ջահելների ձեռքով, բարքերն ընկած, վարքերն աղավաղ: Եվ այս բոլոր քաղաքական, կրօնական, բարոյական մտաւոր սխալանքներին աչքը տնկած սպասում է ոսոխը, որ մի հարվածով ջնջէ տաճկահայոց ազգային արտօնութիւնները, մի գետով հոսեցնէ հայ ժողովրդի մէջ մնացած արիւնը» (1909, թիվ 44):

«Եկեղեցական խրատաբանութիւն» խորագրի տակ տպագրված հոդվածներում բարձրացվել են կրոնականների իրավունքների վերաբերյալ որոշ պահանջներ:

Գր. Երզնկյանի թերթերն ընթերցողներին ծանոթացրել են Էջմիածնի Հոգևոր Սինոդի ժողովների արձանագրություններին, կաթողիկոսական կոնդակների հրահանգներին, հայ եկեղեցու անցյալի պատմությանը:

Սոցիալական հարցերին անդրադառնալիս Գր. Երզնկյանի թերթերում այն միտքն է շեշտվում, թե քանի դեռ գյուղացին հողի տերը չէ, «միշտ ու հանապազ կլինի հարուստ նա, ով տէրն է հողի»:

Թերթերը սոցիալական հարցի լուծման ճանապարհը որոնել են մարդ-անհատի բարոյական կերպարի կատարելագործման, հասարակության հոգևոր ու մտավոր կյանքի զարգացման, ազգային-մշակութային գործունեության ծավալման մեջ: Իր այս տեսակետները հաստատելու համար էլ խմբագիրը դիմել է ռուս մեծ գրող Տոլստոյին՝ տպագրելով նրա «Քաղաքական գործիչներին», «Միակ միջոցը», «Ռուսական յեղափոխութեան նշանակութեան մասին» և այլ գործեր, որոնցում զարգացվել է այն միտքը, թե երբ իշխանությունը ամն մարդկանց բռնությունն է մյուսների վրա, ուրեմն այն պետք է անպայման ոչնչանա և կոչնչանա ինքնիրեն, երբ «մարդիկ բոլորը կգիտակցեն իշխանութեան անօգտակար և վնասակար լինելը» և կդեկա-

վարվեն ընդհանուր բարիքի և արդարության գիտակցությամբ: Այս թերթը նկատում է, որ հումանիստ գրողը պարտադիր է համարել աստվածային օրենքների կիրառումը կյանքում:

Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, Գր. Երզնկյանը իր ժողովրդի ազատությունը ակնկալեց Ռուսաստանի հաղթանակից: Նա հայության սրբազան պարտքն է համարել՝ ամեն ինչով օժանդակել Ռուսաստանին, որի «Թնդանոթն է որոտում հայի արեան գետերով ողողուած դաշտերում», և որն էլ եղել է միշտ «Հայութեան պատմական հովանաւորողը»:

«Հովիւ» և «Հովիտ» շաբաթաթերթերը միաժամանակ լինելով մանկավարժական պարբերականներ՝ իրենց էջերում մեծ տեղ են հատկացրել հայ դպրոցի պատմության, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության հարցերին: Առանձին հոդվածներով հանդես են եկել Գր. Երզնկյանը, Ս. Մանդինյանը, Իս. Հարությունյանը, Հ. Տեր-Միրաքյանը, բժիշկ Ս. Շահնազարյանը և ուրիշներ:

Գր. Երզնկյանը «Ուղեցոյց պատմութեան» հոդվածաշարում քննարկել է պատմություն առարկայի դասավանդման մեթոդները: Նրա համոզմամբ՝ այդ առարկայի ուսուցումը ոչ միայն պետք է հարստացնի աշակերտի գիտելիքները, այլև պետք է նպաստի նրա բարոյական կերպարի ձևավորմանը: Իսկ «Դպրոցական կարգապահութիւն» հոդվածաշարում կարևորվում է կարգապահության դերը ինչպես ուսուցման, այնպես էլ դաստիարակության բնագավառներում: «Կարգապահութիւնը,- գրել է նա,- հարկավոր է ոչ միայն այն բանի համար, որ ուսուցիչը աւելի կանոնաւոր դասն աւանդէ, այլ, որ երեխաների կամքը զարգացնե, և նոցա իրենց կրքերը հպատակեցնել, այսինքն՝ որոշյալ սահմաններում պահպանել սովորեցնէ» (1907, թիվ 35): Գր. Երզնկյանը պահանջել է ուսուցիչներից չօգտագործել պատժի դաժան միջոցներ (ծեծ, վախ, ֆիզիկական ներգործություն և այլն): «Հովիւ» թերթում տպագրվել են նրա «Մանկավարժութիւն» ստվարածավալ աշխատությունից հատվածներ, որոնցում զարգացվել են տեսական դրույթներ մայրենի լեզվի, ինչպես և ռուսաց ու օտար լեզուների դասավանդման մեթոդների մասին: Գր. Երզնկյանը պաշտպանել է. «առանց դաստիարակութեան ուսուցումը բացասական և աւերիչ ոյժ է» խորիմաստ դրույթը:

Գր. Երզնկյանի համոզմամբ՝ դպրոցը պետք է պատրաստեր կամքի տեր, ինքնուրույն գործելու ունակ, ազնիվ, շիտակ, հայրենասեր սերունդներ: Իսկ դրա համար դպրոցը, նրա կարծիքով, պետք է ազատ լիներ ամեն տեսակի, հատկապես՝ կուսակցական կաշկանդումներից:

Կարևոր է հատկապես այն հանգամանքը, որ հոգևորական գործիչն իր թերթերում բարձրացրել է դպրոցներում աշխարհաբար լեզվի դասաժամերի ավելացման հարցը՝ աշխարհաբարը համարելով ուսուցման պարտադիր լեզու: Նա անդրադարձել է նաև արևմտահայ դպրոցներում՝ արևելահայ լեզվի, իսկ արևելահայ դպրոցներում՝ արևմտահայ լեզվի դասավանդման անհրաժեշտությանը: Նրա նպատակն է եղել դրանով նպաստած լինել մեր լեզվի «երկու ճյուղերի մերձեցմանն ու հարստացմանը»:

Ինչպես ժամանակի մի շարք թերթերում, այնպես էլ «Հովիւ» և «Հովիտ» պարբերականներում քննարկվել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի վերակառուցման խնդիրը: Ժամանակի հրամայական պահանջն է համարվել Էջմիածնում հիմնել երեքամյա դասընթացներով գիտական ակադեմիա:

Երզնկյանի պարբերականներում չափազանց արժեքավոր են հայ դպրոցների պատմությանը նվիրված հոդվածները («Թիֆլիսի Յովնանեան-Մարիամեան օրիորդաց ուսումնարանի պատմութիւնից», «Յիշողութիւններ Գայեանեան օրիորդաց ուսումնարանի մասին» և այլն): Այդ հոդվածներում լուսաբանվում է անցյալի հայ դպրոցների հիմնադրման և գործունեության պատմությունը:

Գր. Երզնկյանի թերթերում կարևոր տեղ է տրվել նաև գեղարվեստական գրականությանը: Սոցիալական աղաղակող հակասությունների, աշխատավորի աղքատ կյանքի տխուր պատկերներն են ներկայացված Գևորգ քահանա Մկրտումյանի («Խաչի տաշ», «Կալանաւորի պատիկը», «Մշակ վարժապետը», «Դարձեալ գարուն», «Դարդիմանդ բժիշկ», «Արծուիկ» և այլն), Հակոբ Ղազարյանի («Քիրուայ Մոսօն» և այլն), Ընծայացու («Հերիք չէ, եղբայրք», «Ես չեմ զարմանում» և այլն), Միքայել Ենգիբարյանի («Երկու զգացում», «Նշանուածը» և այլն) և մյուսների ստեղծագործություններում:

Ուշագրավ են թերթերում տպագրված գրախոսականները, որոնցում բարձր են գնահատված Հովհ. Հովհաննիսյանը, Ս. Շահազիզը,

Ղ. Աղայանը, Մուրացանը, Ա. Արփիարյանը, Լ. Շանթը և ուրիշներ: «Հովհաննես Հովհաննիսյան» գրախոսականում (1912, թիվ 17–20) արժեքավորվել է բանաստեղծի արվեստը, բացահայտվել նրա տաղանդի յուրահատկությունները:

Բանաստեղծ Սմբատ Շահազիզի մահվան առթիվ հիշատակի խոսք է տպագրել Կ. Թեյմուրազյանը: Նա բանաստեղծին համարել է Ստ. Նազարյանի հավատարիմ գաղափարակիցն ու լավագույն ընկերը: Իսկ բժիշկ Ա. Շահնազարյանցն իր «Բանաստեղծ-քաղաքացին դպրոցական նուիրական ուխտի ասպարեզում» (1908, թիվ 1) հոդվածում բարձր է գնահատել բանաստեղծ Ս. Շահազիզի մանկավարժական գործունեությունը:

Շահազիզի հայրենանվեր գործունեության մասին են պատմում Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանին 1898 թվականին հասցեագրված նամակները (1909, թիվ 34–50): 1895 թ. թուրքական յաթաղանից մազապուրծ հայ որբերի խնամքի և դաստիարակության օգտին բանաստեղծը Մոսկվայում կազմակերպել է հանգանակություն և գումարներն ուղարկել Մ. Օրմանյանին՝ մանկատների, որբանոցների բացման համար: Ընդհանրապես պատմական փաստերով հարուստ այդ նամակները այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը: Դրանցում, ինչպես գրված է թերթերում՝ «...օր-օրի արձանագրուած են հայութեան կրած արհաւիրքները, բերուած են ապացոյցներ, յաճախ կոնկրետ թուերով, թե որքան մեծ է եղել կրած հարուածը» (1909, թիվ 34):

Գր. Երզնկյանի թերթերում տպագրվել են արժեքավոր գրախոսականներ: Այսպես, «Ունայնութեան քարոզը» գրախոսականում (հեղինակ Pessimist) Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման գնահատվել է որպես գեղեցիկ ու նոր երևույթ: Ըստ գրախոսի՝ այնտեղ արտահայտված են հեղինակի՝ ռուսական հեղափոխությունից հետո ապրած հուսալքման տրամադրությունները, հերոսներից յուրաքանչյուրը յուրովի է ձգտում մոռանալ երկրայինը և սփոփանք է գտնում պատրանքների աշխարհում:

Մեկ այլ գրախոսականում (հեղինակ՝ Բոն-Ամի) «Հին Աստվածներ» դրաման համարվել է մի կատարյալ գործ՝ գրված գեղեցիկ լեզվով, բարձր ոճով: «Պէտք է ասել,– գրված է այնտեղ,– որ գրուածքը խիստ գեղարուեստական է, խոր հոգեբանական, մշակուած տիպերի

երկ է. մի այդպիսի երկ պատիւ է բերում մի ազգի, այդ դէռ քիչ է, մի այդպիսի երկ մի ազգի վերածնութեան ազդակ է, իսկ Լ. Շանթի ոսկեծղի լեզուի մասին ես կարծում եմ, որ պէտք է լոէ ամէն մի քննադատութիւն» (1913, թիվ 5):

Գր. Երզնկյանի թերթերում բարձր գնահատականի են արժանացել մի շարք հայ խմբագիրներ, հրապարակախոսներ, թատերական գործիչներ: Ստ. Նազարյանցը համարվել է «ռուսահայ հրապարակախօսութեան հայրը», որը «անցյալ դարի 60-ական թուականների մեր հասարակական կեանքի ղեկավարող ոյժն է եղել և իր շուրջ է համախմբել այնպէս, թէ այնպէս, ժամանակի առաջադէմ տարրերին և գործել է ազնիւ, անկաշառ կերպով» (1913, թիվ 21):

Վերը շարադրվածից պետք է եզրակացնել, որ Գր. Երզնկյանի թերթերը ամենևին էլ չեն եղել կղերա-պահպանողական պարբերականներ, որպիսի կարծիք արտահայտվել է գրականության մեջ: Ընդհակառակը, դրանք պայքարել են կղերամոլության դեմ և մի ամբողջ տասնամյակ հոգևոր բավարար սնունդ են մատուցել հայ ընթերցող հասարակությանը, նպաստել նրա բարոյա-կրթական կյանքի հարստացմանն ու զարգացմանը:

«ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ» (1906–1908)

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին հայ մամուլի անդաստանում առանձնանում է «Երկրի ձայնը» շաբաթաթերթը: Այն լույս տեսնելով Թիֆլիսում, ամբողջովին նվիրված է արևմտահայ կյանքի լուսաբանմանը:

«Երկրի ձայնը» տորագրում էր Մ. Վարդանյանը, սակայն իրականում թերթի խմբագիրն ու գաղափարական ուղղությունը տվողը Տիգրան Զավենն էր (Տիգրան Զուգասզյան):

Տիգրան Զավենը ծնվել է 1874 թ. Արևմտյան Հայաստանի Սեբաստիա քաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում, որն ավարտելուց հետո, 1895 թ. մեկնել է Եվրոպա, որտեղ ուսումնասիրել է ֆրանսերեն լեզուն: Մինչև 1903 թ. Թեհրանի դպրոցներում դասավանդել է ֆրանսերեն: 1903 թ. հաստատվել է Թիֆլիսում և աշխատակցել «Մուրճ» ամսագրին: 1908 թ. Օսմանյան

սաՀմանադրության Հռչակումից Հետո վերադարձել է Կ. Պոլիս: Այստեղ նա Հիմնել և խմբագրել է «Ժողովուրդ» օրաթերթը (1918–1919 թթ.):

1920 թ. Տիգրան Զավենը մեկնել է Փարիզ և աշխատել է Գեորգի Դիմիտրովի խմբագրությամբ լույս տեսնող «Բալկանյան ֆեդերացիա» ֆրանսերեն պարբերականի խմբագրությունում: Այդ տարիներին նա ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը: Բուլղարիայի Ֆիլիպե (Պլովդիվ) քաղաքում նա Հրատարակել է «Նոր աշխարՀ» երկշաբաթաթերթը (1922–1923): 1933 թ. Տիգրան Զավենը եկել է ԽորՀրդային Հայաստան և մեծ ոգևորությամբ մասնակցել Հայ մշակութային կյանքին, միաժամանակ աշխատակցել Մոսկվայում լույս տեսնող «Moscow Dayli News» պարբերականին: Սակայն 1938 թ. Տիգրան Զավենը դառնում է անՀատի պաշտամունքի անմեղ զոՀը:

«Երկրի ձայնը» թերթը մինչև 1908 թ. մարտ ամիսը լույս է տեսել շաբաթը մեկ անգամ, իսկ նույն թվականի ապրիլից նյութական սուղ միջոցները ստիպել են խմբագրին թերթը Հրատարակել երկու շաբաթը մեկ:

Թերթին աշխատակցել են Աշ. Աթանասյանը, Բ. Իշխանյանը (Ռիխարդ), Ղ. Աղայանը, Ա. Նազարեթյանը, Երուխանը, Տ. Քնյեկյանը, Մ. Զալյանը և ուրիշներ:

Նյութերը զետեղված են Հետևյալ բաժիններում. «ԹուրքաՀայ կեանք», «Երիտասարդ Թուրքերի կեանքից», «Բոսֆորի ափերէն», «Մամուլի շուրջ», «Կուսակցութիւնների շուրջ», «Գաղութներում», «Արտաքին լուրեր», «Մատենախօսութիւն», «ԹուրքաՀայ գրականութիւն», «Բանասիրական», «Թատրոն, գեղարուեստ և գրականութիւն», «Ռուսական խաբրիկներ», «Թղթակցութիւններ» և այլն:

«Երկրի ձայնը» թերթի Հիմնական նպատակն է եղել քարոզել սուլթանական բռնապետության լծի տակ տառապող բոլոր ժողովուրդների (Հայ, Թուրք, Հրեա, Հույն, քուրդ, եզդի և այլն) ՀամընդՀանուր Հեղափոխության գաղափարը: «Մենք,- գրված է այնտեղ,- Համերաշխ գործակցութեան մոլեռանդ պաշտպաններ, եղբայրութեան, սոցիալական արդարութեան անընկճելի առաքեալներ, պիտի ձգտենք միութեան կամուրջը նետել Հայ և Թուրք տառապող և ՀարստաՀարուող մասսաների միջև, ժղելու Համար գիւցազնական

պայքարը բռնակալութիւնների ամենաճիւաղայինի դէմ: Ահա թէ ինչու համար հրապարակ է իջել «Երկրի ձայնը» (1906, թիվ 1)»:

Բռնապետությունը տապալելու համար հեղափոխական պայքարի կոչելով՝ թերթը միաժամանակ բարձրացնում էր սոցիալիստական անդասակարգ հասարակարգի ստեղծման գաղափարը:

Թերթը իրեն դասել է «անկախ և անկուսակցական» պարբերականների շարքը: Այդ մասին խմբագրությունը հայտարարել է նաև "Кавказская жизнь" թերթին հղած պատասխան խոսքում (1906, թիվ 2):

«Երկրի ձայնն» իր ուղղությամբ ու դավանած հայացքներով նորություն էր և թշնամական ընդունելություն գտավ ազգային կուսակցությունների (Դաշնակցություն, Հնչակյան) կողմից: Դաշնակցական և Հնչակյան թերթերը հանդես եկան կշտամբական ելույթներով, խմբագրին մեղադրեցին հայ ժողովրդին բարբարոսաբար ոչնչացնող ժողովրդի հետ բարեկամության քարոզներ տարածելու մեջ:

«Երկրի ձայնն» այն համոզմունքն է ունեցել, թե ինչպես Ռուսաստանում և Պարսկաստանում հայը չի անջատում իր ազատագրության հարցը բախտակից մյուս ազգերից, «նույնպես և Թուրքահայը չպիտի բաժանէր ազատագրութեան դատը այն ժողովուրդների դատից, որոնց հետ անքակտելիօրէն կապված կրում է միևնոյն բռնակալութեան հրէշաւոր լուծը» (1906, թիվ 11):

Հայկական հարցի լուծման շուրջ արտահայտված տարբեր տեսակետները քննության ենթարկելու նպատակով թերթը դիմել է իր ընթերցողներին հետևյալ հարցերով.

1. պահանջե՞լ արդյոք հայկական վեց նահանգների համար Բեռլինի 61-րդ հոդվածի կամ մայիսյան ծրագրի գործադրությունը ազգային հեղափոխության ճանապարհով և դիվանագիտական միջամտությամբ, թե՞ աշխատել տապալելու թուրքական ռեժիմը և ձեռք բերելու ամբողջ Թուրքիայի բարենորոգումը ընդհանուր հեղափոխության ճանապարհով, Թուրքիայի բոլոր ճնշված ժողովուրդների համերաշխ գործակցությամբ և միահամուռ կռվով:

2. Հնարավոր և նպատակահարմա՞ր եք գտնում միացնել մի կուսակցության ձեռքում թուրքահայ ժողովրդի քաղաքական ազատության դատի և ռուսահայ աշխատավոր մասսաների տնտեսական

ու սոցիալական ազատագրության կռվի ղեկավարությունը (1906, թիվ 2):

Գրեթե բոլոր պատասխան-հոդվածներում այն տեսակետն է պաշտպանվել, թե չպետք է հույսեր կապել եվրոպական դիվանագիտության հետ և Հայկական հարցը պետք է լուծել ընդհանուր հեղափոխության ճանապարհով: Եվրոպան, գրում էր թերթը, որի միջամտության քավարանի վրա ողջակեզ ենք բերել մեր լավագույն հույսերն ու լավագույն զավակներին, Եվրոպան, որի պատճառով վիհ է բացվել մեր և միևնույն հողը իր արյան քրտինքով արգասավորող ժողովրդի միջև, ոչ թե իրավունքի և ազատության մի ապաստան է, «այլ մի վիթխարի Շեյլոկ, որ երկրպագում է միմիայն շահին ու տոկոսին, որ ծառայում է ամէնից աւելի վճարողին» (1906, թիվ 1): Ծրագրային նշանակություն ունեցող այս նույն խմբագրականում հայտարարվում է, որ թերթը ընդունում և փառաբանում է միմիայն մի դատ՝ Թուրքիայում ընդհանուր հեղափոխության դատը:

«Թող պատմական փաստերը խոսեն» հոդվածաշարում (1907, թիվ 26–29) այն տեսակետն է պաշտպանվում, թե Հայկական հարցի վերաբերյալ միջազգային դաշնագրերը կազմվել են ոչ թե հօգուտ թուրքահայերի, այլ հօգուտ հենց նույն պետությունների, որոնք թուրքահայի տառապանքը օգտագործել են որպես մի զենք՝ միջամտելու և յուրացնելու իրենց մենաշնորհն այս կամ այն երկրում, տվյալ դեպքում Թուրքիայում: Մեկ այլ՝ «Ո՞ւմ համար են ստեղծուել դաշնագրերը» հոդվածաշարում (1906, թիվ 3–10) թերթն անդրադառնում է Անգլիայի վարած քաղաքականությանը: Անգլիան խոստացել էր Թուրքիային վերադարձնել Կիպրոսը այն դեպքում, երբ թուրքական կառավարությունը Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի համաձայն, կիրականացներ բարենորոգումները հայկական նահանգներում: Սակայն, ինչպես թերթն է կարծում, Անգլիան երբեք չէր վերադարձնի Կիպրոսը, ուստի և չէր հետևի բարենորոգումների իրականացմանը, քանի որ «Այդ առևտուրը մի կաշառք էր՝ թաղելու Հայկական հարցը» (1906, թիվ 4):

Ընդհանրապես Հայկական հարցին նվիրված բոլոր հոդվածներում զարգացվում է այն միտքը, որ հայ ժողովուրդը ազատության և անկախության կարող է հասնել ոչ թե մուրալով, այլ սեփական ուժերով, համախմբված պայքարով:

Թերթում քննարկվել են նաև հեղափոխական պայքարի բնույթին վերաբերող հարցերը: Տ. Զավենը, Ա. Նազարբեկյանը և մյուսները իրենց հոդվածներում վերլուծելով Թուրքիայի սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքը՝ հանգել են այն եզրակացության, որ Թուրքիայում հող կա սոցիալիստական հեղափոխության համար: Եվ որ հեղափոխությունը կարող է իրականացվել այնտեղ բնակվող բոլոր ճնշված ազգերի համընդհանուր ուժերով՝ համախմբված ոչ թե ազգային, այլ միջազգային սոցիալիստական կուսակցության դրոշի ներքո:

«Երկրի ձայնը» հակադրվելով ազգային կուսակցություններին՝ պնդել է իր այն տեսակետը, թե Թուրքիայում առանձին ազգային հեղափոխություն ձեռնարկելը անմտություն է, թե հայ դատը չպետք է բաժանել այն ժողովուրդների դատից, որոնց հետ հայ ժողովուրդը անքակտելիորեն կապված կրում է միևնույն բռնակալության հրեշավոր լուծը:

Թերթը միաժամանակ հայ ընթերցողին ծանոթացրել է Հայկական հարցի շուրջ թուրք մտավորականության և թուրքական մամուլի կարծիքներին: Տպագրվել են նաև թուրքական կայսրության ընդդիմադիր կուսակցությունների ժողովների, կոնգրեսների ընդունած որոշումները: Այսպես, տպագրվել է 1907 թ. դեկտեմբերի 27–29-ը Եվրոպայում տեղի ունեցած թուրքական ընդդիմադիր կուսակցությունների կոնգրեսի հայտարարությունը, որտեղ պահանջվում է գահընկեց անել Աբդուլ Համիդին, հրավիրել պառլամենտ: Իսկ որպես պայքարի միջոցներ առաջադրվում են զինված դիմադրությունը, քաղաքական և տնտեսական գործադուլը, ընդհանուր ապստամբությունը (1908, թիվ 1):

Իսկ «Աբդուլ Համիդի ներքին կյանքը» (1907, թիվ 19), «Բոսֆորի ափերին» (1906, թիվ 3–6) և այլ խորագրերով տպագրված հոդվածներում դատապարտվում են մեծ մարդասպանի ու նրա նախարարների ոճրագործությունները:

«Երկրի ձայնը» իր գաղափարների տարածման համար օգտագործել է նաև գեղարվեստական խոսքը: Տպագրվել են Շ. Կուրղինյանի, Սիամանթոյի, Զ. Եսայանի, Ս. Համալյանի, Երուխանի և մյուսների գործերը: Արփենիկ ստորագրությամբ տպագրված Շ. Կուրղինյանի բանաստեղծություններում, գրված 1905–1907 թթ.

ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ, կոչ է արվում արևմտահայությանը՝ կռվի ելնել բռնապետության լուծը տապալելու համար: Նույն միտքը արտահայտված է թերթում տպագրված նրա այլ բանաստեղծություններում:

Ազատաշունչ ոգով են համակված նաև Արսէն ստորագրությամբ Վանի բարբառով տպագրված գործերը («Զուլումի դէմ մարտնչողներին», «Վասպուրականի երգը» և այլն):

«Թուրքահայ բանաստեղծութիւն» խորագրի տակ տպագրվել են Սիամանթոյի «Դարերու վրէժը», «Արցունքները», «Մահուան տեսիլք» և այլն, Զաբել Եսայանի «Կմախքը», «Ձեռքերը» բանաստեղծությունները: Թերթը տպագրել է նաև Վահան Տերյանի «Կուչ-մարը» բանաստեղծությունը (1907, թիվ 23): «Երկրի ձայնը» հանդես է եկել բանաստեղծներին տրված իր գնահատականներով: Սիամանթոյի Փարիզում 1907 թ. տպագրված «Հոգեւարքի և յոյսի ջահեր» ժողովածուի մասին գրված գրախոսականում (հեղինակ՝ Տիգրան Զավեն) մեծ բանաստեղծը համարվել է «հայ տառապանքի վճռական երգիչը»: «Ատոմ Եարճանեանը,- գրված է այնտեղ,- մեր մեծ բանաստեղծների հոգեղբայրն է, այն տարբերութեամբ սակայն, որ ունի նրանց բոլոր առաւելութիւնները, առանց ունենալու և ոչ մէկը նրանց թերութիւններից» (1907, թիվ 9):

Թերթում բարձր է գնահատված Զաբել Եսայանը. «Նա թուրքահայ կանացի գրականութեան մէջ,- գրված է այնտեղ,- մտցրեց ցաւագին գգայնութեան այնպիսի մի շեշտ, որ պիտի կազմէր իր տաղանդի մեծագոյն հրապոյրը» (1907, թիվ 12):

Տիգրան Զավենի թերթը, ի տարբերություն հայ մյուս պարբերականների, կարևորություն է տվել թուրք մշակութային կյանքի լուսաբանմանը՝ հիմք ընդունելով այն ճշմարտությունը, թե «թշնամուն ճանաչելու համար պէտք է լաւ իմանալ նրան» (1907, թիվ 13):

«Թուրք բանաստեղծութիւն» խորագրի տակ տպագրվել են թուրք պոետներ Քեմալ Բեյի, Եփրեմ Բեյի, Ճենաթը Շեհաբյուդդի և մյուսների գործերը:

Այսպիսով՝ «Երկրի ձայնը» թերթը իր բարձրացրած հարցերով որոշակի հետաքրքրություն է ներկայացրել և իր հետապնդած նպատակներով նորություն է եղել հայ մամուլի անդաստանում:

«ԱՆԿԱԽ ՄԱՄՈՒԼ» (1907–1908)

1907 թ. դեկտեմբերի 1-ին լույս է տեսնում **«Անկախ մամուլ»** օրաթերթը, սկզբում Աշոտ Աթանասյանի կնոջ՝ Վերգինե Աթանասյանի, ապա բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանի ստորագրությամբ: Ենթավերնագրի տակ գրված են «Ներկայ կուսակցութիւններից դուրս» բառերը: Թերթի փաստական խմբագիրը եղել է Աշոտ Աթանասյանը: Նրա գրչին են պատկանում խմբագրական և հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներ՝ Ստրա-կետ, Մէ-Բիս, Սալ-Ման, Դոն-Պեդրո, Ա. Ա. ծածկանուններով:

Աշխատակցել են թերթին Լեռ, Տիգրան Զավենը, Խաչիկ Սամվելյանը, Վահան Տերյանը, բժիշկ Արտաշես Բուզուզյանը, Վահան Տոտոմյանցը և ուրիշներ:

Նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. «Գյուղացիների մէջ», «Բանուորների մէջ», «Քաղաքներում», «Թուրքական կեանք», «Թատրոն և երաժշտութիւն», «Լրագիրների լրատու» և այլն:

Թերթի նպատակն է եղել «Թարգման հանդիսանալ ժողովրդական՝ ընդհանրացրած տրամադրութեան» և լույս է տեսել այն «անկախ մնալու, անվախ մտածելու որոշումով» (1907, թիվ 1):

«Անկախ մամուլը» իր որդեգրած գաղափարական ուղղության մասին գրել է. ««Անկախ մամուլը» պէտք է պաշտպանի աշխատաւոր դասակարգի շահերը և պէտք է քարոզի սոցիալիստական գաղափարներ դրա համար էլ նա սոցիալիստական թերթ է: Սոցիալիզմը «Անկախ մամուլի» դրօշակն է» (1907, թիվ 7):

Թերթում մեծ թիվ են կազմում գործարաններում բանվորների աշխատանքային առօրյան պատկերող թղթակցությունները: Բազում նամակներում առաջադրվել են բանվորների պահանջները, քննադատվել գործարանատերերը՝ բանվորների նկատմամբ անմարդկային վերաբերմունք ցուցաբերելու համար:

«Անկախ մամուլում» այն տեսակետն է պաշտպանվել, թե սոցիալական չարիքի արմատը սեփականատիրական իրավունքի մեջ է, և որ «աշխարհի բոլոր բարիքները» ստեղծված են ոչ թե մի բուռ հարուստների, այլ բոլոր մարդկանց համար: Եվ թերթը համոզված, որ սոցիալիստական կարգերի օրոք միայն շահագործվող ու տառապող մեծամասնության համար կստեղծվեն տնտեսական կյանքի բա-

վարար պայմաններ, փորձել է հիմնավորել դրամատիրական հասարակարգի տապալման և իրավահավասար կարգերի ստեղծման անհրաժեշտությունը:

Թերթը փորձեր է արել առաջադրելու գործնական միջոցներ հասարակական ու քաղաքական կարգերի վերափոխման ուղղությամբ: Այսպես, Խ. Սամվելյանի («Աշխատանքի իրաւունքը», «Տնայնագործութեան ջատագովները» և այլն), Վահան Տոտոմյանցի («Ամէնից առաջ օգուտը», «Մարդը մենակ և նոյն մարդը ընկերակցութեան մէջ», «Առանց վաճառականների ու գործարանատէրերի» և այլն), Աշոտ Աթանասյանի («Հեռացեք կուսակցութիւններից», «Մեր գիւղը», «Ի՞նչ տուեց ազատագրական շարժումը բանուորութեանը» և այլն) և մյուսների հոդվածներում լավագույն ապագային հասնելու միջոցներից մեկը համարվել է համաշխատակցության (կոոպերացիա) սկզբունքի կիրառումը: Վ. Տոտոմյանցի համոզմամբ՝ «Աշխատանքն աւելի արդիւնաւէտ է դառնում միայն մարդու իրար հետ ընկերանալու, կոոպերացիայի շնորհիւ» (1907, թիվ 13): Ըստ նրա, սպառողական ընկերության հաջողությունը «մի քայլ է, որ արուած է այդ ուղղութեամբ, մի քար է, որ պոկվում է ժամանակակից հասարակական կազմի հիմքից և դրւում է ապագայ կազմի հիմքում» (1907, թիվ 25): Իսկ Խ. Սամվելյանն իր «Տնայնագործութեան ջատագովները» հոդվածաշարում բնակչության բարեկեցությունը տեսնում է ոչ թե տնայնագործության զարգացման, այլ հողը գյուղացուն հանձնելու մեջ: «Գյուղական ազգաբնակչութեան բարեկեցութիւնը տեղի կունենայ ոչ թէ տնայնագործական մի քանի իրերի արտադրութեամբ,- գրված է այնտեղ,- այլ մի ուրիշ բանով, երբ գիւղացու աշխատանքը այնպէս կոպիտ կերպով չի հարստահարւի, երբ նա կունենայ հող, որի վրայ կթափի իր աշխատանքը և կուտի նրա պտուղը» (1907, թիվ 8):

Ինչպես «Աշխատանք», «Նոր աշխատանք» պարբերականներում, այնպես էլ «Անկախ մամուլում» զարգացվել է այն թեզը, թե հողը պատկանում է նրան, ով մշակում է այն, աշխատում է նրա վրա: «Անկախ մամուլի» շուրջ համախմբված մտավորականները նույնպես առաջնորդվել են ռուս «տրուդովիկների» «Հող և ազատություն» նշանաբանով: Նրանք այն կարծիքին էին, որ եթե գյուղացիությունը խաղաղ ճանապարհներով չկարողանա հասնել իր

նպատակներին, ապա ուժով, կազմակերպված պայքարով կխլի հողը կալվածատերերից: Պետական դումայից հուսախաբված այդ գործիչները թերթի էջերում տարփողում էին քաղաքական պայքարի գաղափարը: Ուստի և ամենևին պատահական չէր ֆրանսիացի գրող Օկտավ Միրբոյի «Ժան Ռուլ» պիեսի մասին Տիգրան Զավենի հոդվածի տպագրությունը: Վերլուծելով վեպը հոդվածագիրը եզրակացնում է. «...Մինչև մարդկությունը չի կառուցի սոցիալական, տնտեսական արդարության և հավասարության ներդաշնակ պալատը, երկու հակամարտ բանակի ներկայացուցիչները կապիտալիստն ու բանվորը կմնան ճակատագրական թշնամիներ, անհաշտ ու անողոք...» (1907, թիվ 2):

Քաղաքական համարձակ ելույթների համար թերթի համարները երբեմն բռնագրավվել են գրաքննության վարչության որոշումների համաձայն, խմբագիրը նկատողության ու տուգանքի է ենթարկվել: Այնուհանդերձ, նա հավատարիմ է մնացել իր դավանած գաղափարներին, հայտարարելով, որ «Անկախ մամուլը» անկեղծորեն. գիտակցում է իր առաքելությունը մտնելով ժողովրդական լայն խավերի մեջ: Այն միշտ գիտելու և քննելու է կյանքն աշխատավորի շահերի տեսակետից, առանց կանխամտածված ու նախապաշված վճիռների, անկախորեն, բարձր պահելով իր դրոշակը ամեն բան գիտակցող ժողովրդի միջոցով, գիտակից ժողովրդի համար (1908, թիվ 26):

«Անկախ մամուլ» թերթի գաղափարների տարածմանն են ծառայել արձակ և չափածո գործերը, որոնք տպագրված են «Գեղարուեստ» բաժնում: Առանձնապես աչքի են ընկնում Շ. Կուրղինյանի սոցիալական թեմաներով գրված բանաստեղծությունները, Զավախեցու պատմվածքները և այլ գործեր:

Թերթում բարձր են գնահատվել գրողներ Պ. Պռոշյանը, Վ. Փափազյանը, Նար-Դոսը և ուրիշներ: Նրանց ստեղծագործությունների մասին ծավալուն հոդվածով հանդես է եկել Լեոն: Նա Պռոշյանին համարել է ոչ միայն Խ. Աբովյանի աշակերտն ու գրական ժառանգորդը, այլև «Սոս և Վարդիթեր» վեպի մասին գրել է. «Այն դարձավ մի տեսակ ակցեպտ, որով գրվում էին գյուղական ազգագրական վեպիկներ և նույնիսկ վեպեր: Այսպիսով, Պռոշյանը հանդիսացավ նույնիսկ մի ամբողջ դպրոցի հիմնադիր» (1907, թիվ 1):

Աշոտ Աթանասյանի «Անկախ մամուլ» թերթը նույնպես հետապնդվել է կառավարության ու գրաքննության վարչության կողմից: Մի քանի անգամ խուզարկվել է խմբագրատունը: Թերթը կարողացել է իր գոյությունը պահպանել ընդամենը երկու տարի:

«ԱԽՈՒՐԵԱՆ» (1907–1914)

*Մշակութային աչքի ընկած գործիչ, հրապարակախոս, խմբագիր Կարապետ Ափինյանը 1907 թվականին, Ալեքսանդրապոլում լույս է ընծայում **«Ախուրեան»** հասարակական, գրական եռօրյա թերթը՝ Ալեքսանդրապոլի առաջին պարբերականը: Խմբագրի խոստովանությամբ «ժողովրդին, բնագաւառի սրտին մօտիկ կանդնած լինելու այդ բնական պահանջն էր, որ ծնունդ տուեց «Ախուրեանին»- մեր օրերի առաջին գաւառական թերթին» (1910, թիվ 81):*

Կարապետ Ափինյանը ծնվել է 1870 թվականին, Ալեքսանդրապոլում: 1894 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1899–1921 թթ. հրատարակել է «Շիրակ» գրպանի և պատի օրացույցները: 1903–1906 թթ. լույս է ընծայել "Александропольские объявления" ռուսերեն թերթը: Նրա գրչին են պատկանում հրապարակախոսական և գրական-գեղարվեստական մի շարք գործեր: 1902 թ. նա լույս է ընծայել «Ս. Էջմիածնի 1600-ամյակը» աշխատությունը:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Կ. Ափինյանը մանկավարժական գործունեություն է ծավալել Լենինականում և ապա Երևանում: Նա մահացել է 1944 թ., Երևանում:

«Ախուրյան» թերթը լույս է տեսել շաբաթը երկու անգամ, երեքշաբթի և ուրբաթ օրերը: Թերթին աշխատակցել են Ատրպետը, Գեղամ Արմենը (Գեղամ Նալբանդյան), Ե. Տեր-Մինասյանը, Ա. Տիգրանյանը, Հովհ. Տեր-Մարտիրոսյանը (Հ. Տերենց) և ուրիշներ:

«Ախուրյան» թերթը չէր պատկանում և չէր հարում որևէ քաղաքական կուսակցության: Այնուհանդերձ, լինելով հասարակական, քաղաքական օրգան՝ չէր կարող չարձագանքել պատմական այնպիսի կարևոր իրադարձությունների, ինչպիսին էին Անդրկովկասով մեկ տարածում գտած հեղափոխական շարժումները: Մանրամասն տեղեկություններ հաղորդելով Ալեքսանդրապոլ քաղա-

քում և շրջակա գյուղերում ծագած բանվոր-ծառայողների գործադուլային շարժումների մասին՝ թերթը նկատում է, որ հաջողության հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ազատվել «թայֆայական, անձնական, անհատական ձգտումներից և միավորվել»: Եվ նախընտրելով պայքարի խաղաղ ճանապարհը՝ հանդես է եկել իր ծրագրերի առաջադրմամբ: Թերթի համոզմամբ՝ լավագույն ապագային հասնելու հիմնական միջոցներից են՝ հասարակության բարոյական վերափոխումը, երկրում կարգ ու կանոնի հաստատումը, գիտության ու լուսավորության տարածումը: Տնտեսության կազմակերպման գործում կարևորությունը տրվում էր արհեստակցական միություններին, մանր վարկի ընկերությանը, կոոպերատիվ հիմունքներով ստեղծված կազմակերպություններին:

Գյուղացուն հողին կապելու, գյուղից քաղաք հարկադրական տեղաշարժը կանխարգելելու նպատակներով թերթը առաջ էր քաշում տեղերում, գյուղական վայրերում գյուղատնտեսական, անասնապահական դպրոցների ստեղծման անհրաժեշտությունը: Պարբերականի կարծիքով՝ ուսումնական նման հաստատությունները կոչված էին «հողը մշակող, անասուն խնամող, ապրանք արտադրող բանվորներ» պատրաստելու համար: Այդ դպրոցները միաժամանակ գյուղացուն կծանոթացնեին «գիտական աշխարհի ցուցադրած միջոցներին», կսովորեցնեին երկրագործական աշխատանքների առաջավոր ու նոր ձևերն ու եղանակները:

«Ախուրյան» թերթի հիմնական ու գլխավոր աշխատակիցներից է եղել Արփիար: Հոդվածների մեծ մասը պատկանում է նրա գրչին: Ուշագրավ է հատկապես 1910 թ. 23–27 համարներում տպագրված նրա «Մարդու ձգտումը» հրապարակախոսական հոդվածաշարը, որտեղ մեղադրական սուր խոսք է ասված կյանքի տերերի՝ իշխանավորների ու մեծատունների հասցեին:

Արփիարը, որ նախկինում եղել էր Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության անդամներից մեկը, թերթում հանդես է եկել երիտթուրքերի կառավարության քննադատությամբ: «Ճշմարիտ է,- գրում է նա,- այսօր օսմանեան երկիրը կառավարւում է մէբուսան մէջլիսով՝ պատգամաւորական ժողովով, բայց այդ ժողովը ոչ թէ ժողովրդի, ազգաբնակչութեան ներկայացուցչութիւնն է, այլ նա «Միութեան և առաջադիմութեան» ներկայացուց-

չութիւնն է, որի վերջին երեք տարուայ վարչութիւնը ոչ թէ ազատական, եղբայրական հաւասարութեան վրայ է հիմնուած, այլ բռնութեան, որով այսօր նա... է՛լ աւելի, քան նախկին բռնակալ թիւրքութիւնն է» (1912, թիվ 15):

Ատրպետն իր հրապարակախոսական հոդվածներում արևմտահայության փրկության երաշխիքը տեսնում է Ռուսաստանի օգնության և նրա հետ ունեցած դաշինքի մեջ:

Եվ ընդհանրապես «Ախուրեան» թերթը հայ ժողովրդի թե՛ տնտեսական, և թե՛ հասարակական ու մշակութային կյանքի բարեփոխման միակ կռվանը փնտրել է ռուս ժողովրդի ու Ռուսաստանի հետ ունեցած համագործակցության մեջ: Թերթի համոզմամբ՝ Ռուսաստանում յուրաքանչյուր ժողովուրդ հնարավորություն կունենար զարգացնելու իր ազգային ինքնուրույն մշակույթը, և յուրաքանչյուր ազգային մշակույթի առանձնահատկությունները բազմազանություն ու շքեղություն կհաղորդեին Ռուսաստանի համընդհանուր մշակույթին: Թերթը նպատակահարմար է գտնում տպագրելու այս հարցի շուրջ գրված Գ. Ս. Պետրովի Ալեքսանդրապոլում կարդացած «Կյանքի արժեքը» թեմայով դասախոսության համառոտ շարադրանքը: Հեղինակը Ռուսաստանը նմանեցնում է բազմերանգ ծաղիկներից բաղկացած մի մեծ փնջի, որի ամեն մի ծաղիկ ունի իր առանձին տեղը, իր առանձին հմայքը:

«Ախուրեան» թերթում քննարկվել են նաև արվեստի և գրականության հարցեր: Ճարտարապետ Թ. Թորամանյանը, որը սերտ կապերի մեջ է եղել խմբագրության հետ, իր «Մեր անցեալ կուլտուրան» հոդվածում (1909, թիվ 61) բարձրացրել է հայ անցյալի մշակույթի արժեքների պահպանման հարցը: Նա նպատակահարմար է գտել հայ բանիմաց մասնագետներից ստեղծել արշավախմբեր՝ պատմական անցյալի հուշարձանների խնամքի և պահպանման գործը կազմակերպելու համար:

Թերթում բարձր են գնահատվել հայ և ռուս դասական գրողները: Այսպես, Ն. Գոգոլը համարվել է ռուս առաջին գրողներից, որը ճշմարիտ գույներով նկարագրել է իր ապրած այն «փչացած» միջավայրը, ուր մարդիկ ապրում էին իրենց նեղ ու գծուծ հաշիվներով, ուր իշխում էր բամբասանքը, խաբեությունը, կեղծիքը, փառասիրությունը, հարստանալու տենչանքը (1909, թիվ 61):

Ալեքսանդրապոլի առաջին պարբերականը՝ «Ախուրեան» թերթը, շարունակելով հայ մամուլի առաջավոր ավանդները, կարողացավ ծառայել իր բարձր կոչմանն ու արժանի տեղ գրավեց հայ մամուլի ու հասարակական մտքի պատմության մեջ:

«ՀՐԱԶԴԱՆ» (1908–1909)

«Հրազդան» գրական, հասարակական, եռօրյա թերթի հրատարակության նախաձեռնողը եղել է մասնագիտությամբ գյուղատնտես Պողոս Կանդուրալյանը: Նա ավարտել էր Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիան, որի շրջանավարտներից շատերը դարձել էին կոոպերատիվ շարժման նախաձեռնողներ: Պ. Կանդուրալյանը նույնպես հրապուրված կոոպերատիվիզմի գաղափարներով վերադառնում է հայրենիք: Սկզբում աշխատում է որպես գյուղատնտես՝ Երևանի նահանգային ուսումնարաններին կից գյուղատնտեսական բաժանմունքում, ապա 1908 թ. ձեռնարկում է «Հրազդան» թերթի հրատարակմանը: Նա խմբագրել է թերթի երկու համարները, իսկ մյուս համարները՝ Ա. Տեր-Հակոբյանը: Եվ առաջին, և երկրորդ խմբագիրների նպատակն է եղել՝ թերթի միջոցով ծառայել ժողովրդական լայն զանգվածների, հատկապես գյուղացիության սոցիալ-տնտեսական կյանքի բարեփոխման գործին:

«Հրազդան» թերթի նյութերի մեծ մասը նվիրված է հողային հարաբերություններին, գյուղացու առօրյա հոգսերին: Այդ իսկ պատճառով թերթի լույս ընծայումը մեծ ոգևորությամբ է ընդունվել ընթերցողների կողմից: Նոր-Բայազետից Աֆրիկյանն իր ողջույնի խոսքում հույս է հայտնում, որ թերթը անողոքաբար կքննադատի գյուղացու «արյունը քամող», նրա «կենսական վերջին հյութը ծծող», «դաւթարը ձեռքին» վաշխառուին, «աշխատաւորի արտասուքի գնով ապահովութեան ձեռք գցող» կաշառակերներին:

«Կեանքը գաւառներում», «Ի՞նչ է հարկաւոր անել», «Ջօրպաները» և այլ խորագրերով հոդվածներում ներկայացված են խեղճ ու անօգնական գյուղացու չարքաշ կյանքի քստմնելի պատկերները: Թերթը միաժամանակ նկատում է, որ աշխատավոր գյուղացիությունը որոշ չափով համարձակ է դարձել, որ ռուսական առաջին հեղա-

փոխության դասերը նրան սովորեցրել են կռվել, որ երեկվա խաղաղ գյուղացին հանգամանքների բերումով «խոփի, արորի-գութանի հետ միասին, գործածել սովորեց և զենք» (1908, թիվ 5): Ապա եզրակացնում է, որ «զուլումների» դեմ կռվելու համար նախ անհրաժեշտ է համախմբվել, միավորվել: Եվ նկատելով, որ գյուղաշխարհում էլ արդեն դասակարգային պայքարն իր արտահայտությունն է գտնում, որ գյուղի աշխատավորը նույնպես հասնում է դասակարգային ինքնագիտակցության, թերթն իր հրամայական խնդիրն է համարում օժանդակել հայ գյուղացիության քաղաքական ուժերի համախմբման ու կազմակերպման գործին: Եվ դրա լավագույն միջոցը համարվում է աշխատակցական սկզբունքի, համայնական աշխատանքի գործադրությունը գյուղերում: «Ի՞նչ է մնում անել,- գրում է թերթը,- մնում է միայն առաջ մղել համայնական աշխատանքի սկզբունքը, կեանքի մէջ կիրառութեան մտցնել և այդպիսով հասած կլինենք մեր համայնականութեան սահմանին, որից յետոյ մնում է մի փոքրիկ քայլ միայն, որը սպասում է ընդհանուր հասարակարգի վերջնական փոփոխուելուն» (1909, թիվ 11): Թերթում համայնական աշխատանքի կազմակերպման ձևերից մեկն է համարվում կոոպերացիան:

«Հրազդան» շաբաթաթերթը հետևել է Օսմանյան Թուրքիայում կատարված քաղաքական դեպքերին, երիտթուրքերի հեղափոխական շարժումներին և դրանք լուսաբանել իր էջերում: «Տաճկաստանի յեղափոխութիւնը» հոդվածաշարում (1909, թիվ 4, 5) մերկացվում է սուլթան Համիդի վարած ազգահալած քաղաքականությունը հայերի և այլ ազգերի նկատմամբ:

1908 թ. հեղաշրջում իրականացնելով՝ «Երիտասարդ թուրքերի» կուսակցությունը Թուրքիայում իր ձեռքը վերցրեց իշխանությունը՝ հաստատելով սահմանադրական կարգեր: Երիտթուրքերի հաղթանակի առաջին օրերին թերթը գրեց. «Բռնութեան աւերակների վրայ կանգնեց ազատութեան դրօշակը և ամէնքը ոգևորուած նրա հաղթանակով, շունչ առան, նոր կեանք ստեղծեցին» (1908, թիվ 14): Սակայն որոշ ժամանակ անց, երբ լուրեր տարածվեցին հայկական գյուղերում թուրքերի կատարած վայրագությունների մասին, թերթը հուսախաբ գրեց, որ սահմանադրությունը կիրառություն չի գտնում թուրքական գավառում, որ օսմանյան խորհրդարանի կազ-

մը վստահութիւն չի ներշնչում և չի արդարացնում իրեն, և որ երիտթուրքերը, դավաճանելով իրենց խոստումներին, վարում են հետադեմ քաղաքականություն:

Թերթը լուրեր է տպագրել 1909 թ. ապրիլին երիտթուրքերի՝ Ադանայում կազմակերպած հայկական նոր ջարդերի մասին և դատապարտել սպանդի կազմակերպիչներին, ի դեմս որոնց, տեսնում էր Աբդուլ Համիդի քաղաքականության շարունակողներին:

«Հրազդանը» անդրադարձել է ժամանակի հուզող գրեթե բոլոր հարցերին: «Հոգաբարձուներ և ուսուցիչներ» ընդարձակ հոդվածաշարում (1909, թիվ 14, 15) քննադատվում են այն ուսուցիչները, որոնք իրենց ստանձնած գործի հանդեպ անպատասխանատու վերաբերմունք են դրսևորում: Իսկ հոգաբարձուների մասին գրված է. «Սրանց մէջ են յաճախ կամ համարեայ բոլոր աղաները, գիւղի կուլակները, զանազան տեսակի «պատուելիներն» ու տուզերն ընդհանրապէս, որոնց սրտին մօտ չէ ժողովրդի կրթութեան գործը...» (1909, թիվ 14): «Պրոֆէսիոնալ ուսուցչութիւնը» հոդվածում առաջ է քաշվում դպրոցները մասնագիտական կրթություն ստացած ուսուցիչներով համալրելու հարցը:

Մանկավարժական թեմաներով թերթում հոդվածներ են գրել Առ. Բահաթրյանը, Իս. Հարությունյանը, Հ. Տեր-Միրաքյանը և ուրիշներ:

«Հրազդանը» ուշադրություն է դարձրել նաև արվեստի և գրականության հարցերին: Բարձր են գնահատվել Խ. Աբովյանը, Ռ. Պատկանյանը և ուրիշներ: «Կարմիր թելը մեր նորագոյն գրականութեան մէջ» հոդվածում Խ. Աբովյանը համարվել է հայ առաջին գրողը, որ «...հզօր, անկեղծ ձայնով կանչել է ամբողջ հայութեանը՝ թափ տվեք ձեզնից ստրկութեան ոգին, ստեղծեցեք ձեզ համար մի պատուաւոր վիճակ» (1908, թիվ 11):

«Հրազդան» թերթը իր կարճատև գոյության ընթացքում կարողացել է այս կամ այն չափով նպաստել հայ գյուղացիության քաղաքական մտահորիզոնի հարստացմանը: Միաժամանակ կարևորելով գյուղացիության դերը հասարակական կյանքում, հայ մտավորականության ուշադրությունը հրավիրել է գյուղի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի բարեփոխման խնդիրների վրա:

«ԳԱՒԱՌ» (1909–1910)

Լիբերալ-նարոդնիկական հայացքներով համակված հայ գործիչներից շատերն իրենց ժողովրդասիրական ձեռնարկումներով հայտնվում են նաև հայկական ծայրագավառներում: Նրանցից Սիմեոն Տեր-Մինասյանը գյուղական իրականության թշվառության դեմ պայքարելու գիտակցությամբ Գորիսում լույս է ընծայում «Գաւառ» քաղաքական, հասարակական, տնտեսական և գրական շաբաթաթերթը[1]:

Ս. Տեր-Մինասյանը ավարտել է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանը և հիմնականում զբաղվել մանկավարժական գործունեությամբ: Նա սկզբում որպես ուսուցիչ աշխատել է Գորիսի ծխական դպրոցում, ապա 1910 թվականին նրան հանձնարարվել է ամբողջ Զանգեզուրի գավառի ծխական դպրոցների վերահսկողության գործի ղեկավարումը: Նույն թվականին, «Գաւառ» թերթը փակվելուց հետո նա տեղափոխվել է Ղարաբաղ և որոշ ժամանակ կատարել «Ղարաբաղ» թերթի խմբագրի պարտականությունները:

Ս. Տեր-Մինասյանին կարելի է դասել այն լուսավորյալ մտավորականների շարքը, որոնք իրենց ամբողջ կյանքում ծառայել են գյուղաշխարհի բնակչության բարօրության գործին:

«Գաւառին» աշխատակցել են Տ. Սազանդարյանը, Ս. Ֆրանգուլյանը, Հ. Գրիգորյանը, Մ. Բագրատունին, Ա. Զանյանը, Գ. Քալաշյանը և ուրիշներ:

Թերթի մշտական բաժիններն էին. Զանգեզուր, Ռուսաստան, Գրախօսական, Թղթակցութիւն, Ֆէլիետոն և այլն:

Թերթի լույս ընծայման առթիվ ողջույնի խոսքեր են հղել խմբագրությանը Էջմիածնից Գ. Քալաշյանը, Աշխաբադից Ա. Բաբայանը և ուրիշներ:

Խմբագիրը խոստանում է իր ընթերցողներին՝ թերթը դարձնել Զանգեզուրի գավառի բնակչության խոսափողը, աչքաթող չանել նաև համայն հայության հուզող խնդիրները: «Այսօր մեր գաւա-

---

[1] Մատենագիտական բոլոր ցուցակներում «Գաւառ» թերթի լույս ընծայման տարեթիվը նշված է 1910 թվականը: Մինչդեռ այն հրատարակվել է 1909 թվականից: ՀՀ Ազգային գրադարանում պահպանվում են թերթի 1909 թ. համարները:

ռը,- գրված է այնտեղ,- մի բարիք է ծնում՝ «Գաւառ» անունով շաբաթաթերթը, որը ամէն կերպ պէտք է ճիգ ու ջանք թափէ տարածելու գիտութիւն, ճշմարտութիւն և հասարակական գիտակցուած կեանք» (1909, թիվ 1):

Թերթը սոցիալական չարիքի արմատը գտնում է գյուղի բնակչության հասարակական գիտակցության պակասի, ընդհանրապես հոգևոր կյանքի բացակայության մեջ: Թերթի կարծիքով՝ գյուղի աշխատավորը պարփակված խավարամտության մեջ, դատապարտված է «գաքարչական պապանձման», իսկ գյուղի տերերը «... զորեղ դիրքեր գրաւած շահագործում են խեղճ ու կրակ գիւղացուն բոլոր խնդիրներում» (1910, թիվ 27):

«Գաւառ» թերթը դատապարտում է գյուղական ցեցերի՝ տանուտերերի, վաշխառուների, դատավորների ստոր ու անազնիվ արարքները: «Կաշառակերութիւն, խնամիական վերաբերմունք,- գրված է այնտեղ,- անձնական թշնամանք, իրենց կատարելութիւնն են ստացել տանուտէրերի մէջ»: (1910, թիվ 14): Այս ամենին վերջ տալու հիմնական միջոցներից են համարվում գյուղացիների կողմից իրենց արժանապատվության ու իրավունքների ճանաչումը: Ուստի և թերթը գրում է. «Ժամանակն է վերջապէս, որ մեր գիւղացիութիւնը դէն շպրտի իրենից ստրկական շողոքորթութիւնն ու գիւղական բախտախնդիրների առաջ վիզ խոնարհելը և իր շահերի կատարեալ գիտակցութեամբ հրապարակ գա իր կեանքը տնօրինելու» (1910, թիվ 13):

Ինչպես նախորդ պարբերականներում, այստեղ ևս գյուղի բարեփոխման համար որպես լավագույն միջոց առաջադրվում է մանր վարկի, փոխատու ընկերությունների, կոոպերացիաների ստեղծումը: Այս գործում նախաձեռնությունն ու տնօրինությունը տրվում էր գյուղացուն: Գյուղացին ինքը պիտի կազմակերպի նման ընկերությունները:

«Գաւառը» չէր սահմանափակվում միայն գյուղաշխարհի խնդիրների քննարկմամբ: Բազմաթիվ էջեր նվիրված են քաղաքի գործարաններում մրի ու ծխի, սովի ու հալածանքների մեջ տառապող բանվորների կյանքին: «Նաւթաշխարհի իրականութիւնից» խորագրով տպագրված հոդվածներում (1910, թիվ 8, 13) նկարագր-

ված է Բաքվի նավթախորշերում աշխատող բանվորների տանջալից առօրյան:

Խմբագիրը գործելով գյուղը փրկելու հետևողական ու աննահանջ գիտակցությամբ՝ թերթում հանդես է եկել ժողովրդասիրական մի շարք ձեռնարկումների առաջադրմամբ: Ըմբռնելով կապիտալիստական աշխարհում սոցիալական տարբեր խավերի ու դասակարգերի շերտավորման ընթացքն ու սոցիալական հակասությունների խորացումը՝ թերթը «գայլային օրենքներից» գյուղացուն փրկելու ուղին շարունակել է տեսնել լուսավորության տարածման մեջ: Եվ այդ ուղղությամբ ծավալել է և՛ քարոզչական, և՛ կազմակերպչական աշխատանքներ: Այսպես, բարձրացնելով Գորիսում գյուղատնտեսական դպրոցի անհրաժեշտության հարցը, առաջարկել է Զանգեզուրի բոլոր շրջաններում հանգանակել գումարներ և կառուցել դպրոցը:

Ս. Տեր-Մինասյանի անմիջական նախաձեռնությամբ հրավիրված հատուկ խորհրդակցությունում ընտրվել է հանձնաժողով՝ Գորիսում կենտրոնական միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները ղեկավարելու համար: Եվ որոշ ժամանակ անց, հայտարարվում է այդ դպրոցի կառուցման մասին:

Մի շարք հոդվածներում քննարկվել են Զանգեզուրի գավառի բոլոր գյուղերում մասնագիտական, հատկապես գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների ստեղծման հարցերը: «Գաւառական հայ գեղջուկը,- գրում է թերթը,- վաղուց է սպասում մի այնպիսի հաստատութեան, որը հեռու քշեր նրանից իր նահապետականութեան ժառանգութեան անօգտակար աշխատանքի ամէն մի ձևը, տար նրան ժամանակակից գիտութեան պահանջներին համապատասխան մշակութեան ձև ու միջոց, մեր հարուստ գաւառից օգտուելու որևէ ուղղութիւն» (1910, թիվ 19):

Շաբաթաթերթում բարձրացվել է նաև գյուղերում գրադարան-ընթերցարանների բացման հարցը: Թերթի կարծիքով՝ այդ գրադարանները միաժամանակ կլինեին աշխատավոր գյուղացիների համար մի վայր, ուր իրենց հանգիստը կանցկացնեին օրվա աշխատանքից հոգնած գյուղացիները, կհաղորդակցվեին միմյանց հետ, կծանոթանային կյանքի նորություններին:

Շաբաթաթերթը որոշակի աշխատանք է կատարել դարերի ընթացքում ժողովրդի ստեղծած պատմական հուշարձանները պահպանելու ուղղությամբ: Ցավով է նշել այն մասին, թե ինչպես են ավերվել Տաթևի վանքի՝ Սյունիքի հոգևոր պարծանքը ներկայացնող եկեղեցում եղած ձեռագրերը, սրբապատկերները, թե ինչպես Ստեփանոս Օրբելյանի աշխատության ձեռագրի ամեն մի էջի վրա ինչ-որ մակագրություններ են արվել և այլն:

Շաբաթաթերթն ուներ նաև գրական-գեղարվեստական հարուստ բաժին: Տպագրվել են ինքնուրույն և թարգմանական արձակ և չափածո գործեր: Ճիշտ է, դրանք ականավոր գրողների ստեղծագործություններ չեն, սակայն ժամանակին կարևոր դեր են խաղացել Զանգեզուրի գավառի բնակչության հոգևոր կյանքում: Դրանք տարածել են մարդասիրության, եղբայրասիրության, սիրո, համերաշխության գաղափարները:

Ռուս և արևմտաեվրոպական գրողներից նույնպես ընտրված են այն գործերը, որոնցում անհատի բարոյական կատարելագործման քարոզն է հնչում: Այսպես, 1910 թ. թիվ 7-ում Օլ. Հանսոնի գեղարվեստական փոքրածավալ պատկերում (թարգմ. Ավ. Իսահակյան) արտահայտված է հետևյալ բարոյախրատական իմաստը. «Մի թողնիր, որ քո օրերը դառնան թունավոր բույսեր՝ աճելով հոգուդ մեջ: Այլ դարձրու քո օրերը շողշողուն և սպիտակ, պարուրիր դրանք մետաքսի ու ոսկու մեջ և թող դրանք մշտապես փայփայեն հոգիդ գովությամբ և թող Արէգակի ամէն մի վերջալույսի հետ դրանց բանակը բազմանա…» (1910, թիվ 7):

«Գուսանում» տպագրվել է նաև Մ. Գորկու «Կեանքի հանդէս» պատմվածքը (1910, թիվ 29, թարգմ. Արաքս):

«Գուսանը» շաբաթաթերթը հանդես է եկել նաև գրախոսական հոդվածներով: Դրանցում բարձր են գնահատված Վրթ. Փափազյանի, Ալ. Ծատուրյանի և մյուսների ստեղծագործությունները: Ալ. Ծատուրյանի գրական գործունեության 25-ամյակի առթիվ տպագրված ծավալուն հոդվածում բանաստեղծը ներկայացված է որպես աշխատավոր ժողովրդի կենսական շահերի, հետաքրքրությունների արտահայտիչ, որպես բազմահազար չարքաշների երգիչ (1910, թիվ 13):

1910 թվականին Թիֆլիսի Ամո Խարազյանի անվան թատերախումբը Գորիսում հանդես է եկել հյուրախաղերով: Առաջին անգամ

Գորիսի բնակչության համար տրվել են թատերական ներկայացումներ: Թերթը, համարելով այն մի նոր ու կարևոր երևույթ գորիսեցիների համար, իր ողջույնի խոսքն է հղել խմբի անդամներին՝ նրանց միացնելով թերթի բարի ցանկությունը՝ գնահատել ժողովրդին, ապրել այդ նույն ժողովրդի համար, որովհետև նա այն արգավանդ հողըն է, որի մեջ ձգելու են իրենց սերմերը գիտությունն ու գեղարվեստը (1910, թիվ 28):

«Գաւառը» իր նախընտրած ծրագրով ու քննադատական հոդվածներով դուր չի եկել տեղական ղեկավարությանը, հատկապես իշխանավոր անձանց: Նրանք թշնամաբար են տրամադրվել խմբագրի և աշխատակիցների նկատմամբ: Այդ կապակցությամբ թերթի առաջնորդողներից մեկում գրված է. «Երբ թերթը իր երկրորդ կիսամեակը թեւակոխեց, ահա խխունջների նման սկսեցին դուրս սողալ վախկոտ ու երկիւղած գլուխները և ինչեր ասես չարին գոյութիւնից զրկելու մի այլօրինակ նոր կեանք, որը Զանգեզուրի վերածնութեան ամենաառաջին ազդակը համարուելու, նախապատիւ անունը կրելու բախտ ունէր միայն» (1910, թիվ 34): Եվ նման պայմաններում, բարոյական ու նյութական զրկանքների գնով խմբագիրը կարողացավ թերթի գոյությունը պահպանել ընդամենը երկու տարի:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» (1909–1912)

XX-րդ դարի սկզբին ժողովրդական շարժման ներկայացուցիչների մի մասը տնտեսության զարգացման կարևոր գործոններից մեկը համարելով առևտուրն ու արդյունաբերությունը՝ հրատարակում են պարբերականներ, որոնք ամբողջովին նվիրված են այդ բնագավառների լուսաբանմանը:

«Խաթաբալա» երգիծական հայտնի հանդեսի խմբագիր Աստվածատուր Երիցյանը 1909 թ. Թիֆլիսում լույս է ընծայում «Սուրհանդակ» հասարակական, քաղաքական և առևտրա-արդյունաբերական թերթը, ինչպես այնտեղ է գրված՝ «անկուսակցական օրաթերթը», իսկ 16-րդ համարից՝ «անկախ լրագիրը»:

Պարզելով թերթի նպատակները՝ առաջին տարվա առաջին համարում խմբագիրը հայտարարում է, որ թերթը հեռու է լինելու «կուսակցական կռիւներից և անձնական հաշիւներից»:

«Սուրհանդակի» բաժիններն էին. «Ներքին տեսութիւն», «Գաւառային կեանք», «Թղթակցութիւններ», «Առևտրա-արդիւնաբերական», «Արտաքին տեսութիւն» և այլն: Նախորդ հասարակական-քաղաքական պարբերականներից և ոչ մեկը չի ունեցել «Առևտրա-արդիւնաբերական» բաժինը: Այդ մասին թերթը գրում է. «Սուրհանդակի» մէջ մենք տալիս ենք և մի առանձին բաժին, որը ահագին կարևորութիւն ունի ազգերի տնտեսական վիճակում. դա առևտրա-արդիւնաբերական բաժինն է, որի վրայ առանձնապէս դարձնելու ենք մեր ուշադրութիւնը, և որը մատնել չէինք կամով մոռացութեան, երբեմն և աններելի արհամարհանքի, իսկ վերջերս նոյնիսկ թշնամանքի» (1909, թիվ 1):

Ավ. Արասխանյանը, ողջունելով «Սուրհանդակի» լույս ընծայումը, գրել է. «Եթէ «Սուրհանդակը» արդարացնի իր ծրագրի այդ կէտը, նա մի նոր զարգացում տուած կլինի նաև հայկական մամուլին առհասարակ, որովհետև արդյունաբերութեանը և առևտրին իրական օգնութիւն տալու համար՝ պէտք կլինի անընդհատ հետամտութիւն երկրի տնտեսական կեանքին, մի խնդիր, որ այդ ծավալով մեզանում չի դրած եղել և ոչ մի թերթ» (1909, թիվ 5):

«Սուրհանդակին» աշխատակցել են Ա. Արասխանյանը, Ղ. Աղայանը, Ջ. Բալուղյանը, Գր. Երզնկյանը, Գ. Լևոնյանը, Հ. Համբարձումյանը, Ս. Մանդինյանը, Մ. Մելյանը, Նար-Դոսը, Խ. Սամվելյանը, Հ. Սոլովյանը, Խ. Տեր-Ենոքյանը, Մ. Բագրատունին (Խ. Նարիմյան) և ուրիշներ:

Տնտեսական կյանքի զարգացման գործում կարևորելով վաճառականների ու արդյունաբերական ձեռնարկությունների դերն ու նշանակությունը՝ թերթը գրում է. «Այժմ մենք պէտք է ստեղծենք և զարգացնենք վաճառականներ և արդիւնաբերողներ: Դրանով միայն մենք նպաստած կլինենք մեր երկրի առաջադիմութեանը, մեր քանդուած տնտեսութեան վերակենդանացմանը, մեր ընչազուրկ ժողովրդի բարօրութեանը» (1910, թիվ 161):

«Ու՞ր ենք գնում, առաջ, թէ ետ» հոդվածաշարում (1910, թիվ 98–100) զարգացվում է այն միտքը, թե կապիտալիստական հասա-

րակարգում մարդ անհատը աշխատում է գիտություն ձեռք բերել ոչ թե ընդհանրության, այլ իր անձնական շահերին գոհացում տալու համար: Մինչդեռ, գիտությունն ու կուլտուրան ստեղծված են ծառայելու ոչ թե մարդ անհատի, այլ ընդհանրության, ժողովրդի անմիջական շահերին: Եվ եզրակացվում է, որ գիտության ու մշակույթի նպատակը պետք է լինի՝ ստեղծել մի հասարակարգ, որտեղ «ամէնքը ապրեն մէկի համար, իսկ մէկը՝ բոլորի» (1910, թիվ 98): Թերթը սոցիալական չարիքի արմատը տեսնելով գիտության անբավարար տարածման մեջ, իր քննադատական խոսքն է ասում հայ մտավորականներին, մեղադրելով նրանց այն բանում, որ տարվելով հասարակական գիտություններով, աչքաթող են արել բնական գիտությունները, բնական հարստությունների օգտագործման, արդյունաբերության զարգացման խնդիրները:

Թերթում բարձրացվել է սեփական հումքի օգտագործմամբ տեղական արդյունաբերության զարգացման խնդիրը: Միաժամանակ պահանջվել է հետևել աշխատանքի կազմակերպման այն ձևերին, որոնք վաղուց կիրառվում են քաղաքակիրթ երկրներում: Խրախուսվել է նաև կոոպերատիվ և արհեստակցական ընկերությունների, փոխատու-խնայողական բանկերի գործունեությունը: Առաջնորդողներից մեկում խմբագիրն այն կարծիքն է հայտնել, թե վաճառականական վարկի բացումը մեծ չափով կնպաստի երկրի տնտեսական ու մշակութային կյանքի առաջադիմությանը:

Թերթում գյուղական բանկի մասին հակառակ կարծիքն է հայտնել Մ. Բագրատունին: «Գիւղական բանկերը» հոդվածում (1910, թիվ 98) նա այն տեսակետն է զարգացրել, թե այդ բանկերը այն կարապետներն են, որ գալիս են երկրում հաստատելու կապիտալիստական կարգերը, ավելի ևս խորացնելու սեփականազրկվող և հարստացող դասակարգերի մեջ կատարվող բաժանումը: Ինչպես բացատրում է Բագրատունին, այդ բանկերում ներգրվում են ոչ թե աղքատ գյուղացու, այլ հարուստ վերնախավի փողերը, նրանք էլ դառնում են բանկերի տերերը, կուտակում գումարներ և ավելի ուժեղացնում թույլ ու անտեսապես աղքատ դասակարգերի կեղեքումը: Ապա նա եզրակացնում է. «Ուրեմն իզուր է մեր գաղափարական և իդէալիստ կուլտուրտրեգերների ոգևորութիւնը գիւղական բանկերի մասին, որոնք, բացի ինքնախաբէութիւն լինելուց,

դէտ նոյնիսկ մեծ չափերով վնասակար են տնտեսական հաւասարակշռութեան նժարի համար մասսաների մէջ» (1910, թիվ 92):

Թերթը համամիտ չլինելով Մ. Բագրատունու կարծիքին՝ բանավեճ է բացել, գրելով, որ ցանկալի է մեր գյուղական շրջաններում և տեղական մանր վարկի շուրջ գործող կամ աշխատող մարդիկ եւս իրենց կարծիքներն արտահայտեն այս կարևոր հարցի մասին (1910, թիվ 98): Հարցի շուրջ տպագրված հոդվածների մեծ մասում այն տեսակետն է պաշտպանվել, թե սոցիալական չարիքի վերափոխման գործում առաջնությունը պետք է տալ տնտեսական աստիճանական բարեփոխումներին: Եվ այն տարիներին, երբ հեղափոխական ելույթներն ու գործադուլային շարժումները տարածում էին գտնում Անդրկովկասում, թերթը սահմանափակվում էր դրանց մասին միայն պաշտոնական հաղորդագրություններ տպագրելով: Իսկ մի շարք հոդվածներում էլ հորդորվում էր բանվորներին՝ հետևել եվրոպական երկրների գործադուլավորներին, հարցի լուծումը ավարտել գործարանատերերի հետ փոխադարձ համաձայնության գալով: Այսպես, «Շուեդական գործադուլի շուրջը» հոդվածում, (1909, թիվ 20) խրախուսվել է գործադուլների շվեդական ձևը, երբ պայքարողները շվեդական բանվորի և կապիտալիստի նման հարգելով միմյանց, գիտակցելով փոխադարձ շահերի պահպանման անհրաժեշտությունը՝ պայքար են մղում, գործադուլ անում, և սակայն ո՛չ արյուն են թափում, ո՛չ բանտերը լցնում, ո՛չ գործարաններ այրում ու փակում:

Սոցիալական չարիքի վերացման հարցում թերթի տեսակետը մեկն էր՝ մարդկության երջանիկ ապագային հասնելու համար դիմել խաղաղ տնտեսական բարեփոխումների՝ դասակարգերի միջև փոխադարձ համաձայնությամբ:

«Սուրհանդակի» բազմաթիվ հոդվածներ նվիրված են ժողովուրդների բարեկամության գաղափարների ջատագովմանը, հատկապես հայ ժողովրդի կյանքում ռուս ժողովրդի ունեցած նշանակության գնահատմանը:

Այսպիսով, Ա. Երիցյանի «Սուրհանդակ» թերթը ժամանակին մասնակցել է քաղաքական կարևոր հարցերի քննարկմանը, առաջադրել տնտեսական բարեփոխումների խնդիրներ, և իր «Առևտրաարդյունաբերական» բաժնով նորություն է եղել հայ պարբերականների շարքում:

«ՆՈՐ ՁԱՅՆ» (1911–1912)

1911 թ. սեպտեմբերի 19-ին Երևանում լույս է տեսնում «Նոր ձայն» շաբաթաթերթը: Թերթի խմբագիր-հրատարակիչն էր Վահան Տեր-Աբրահամյանը: Աշխատակցում էին թերթին Արշավիր Մելիքյանը, Մուշեղ Բագրատունին, բանաստեղծ Հակոբ Հակոբյանը և ուրիշներ:

«Նոր ձայնը» կոչված էր ծառայելու, ինչպես թերթում է գրված, գավառական կյանքի ծով կարիքներին բավարարություն տալու գործին:

Հայտնի է, որ կապիտալիստական արտադրահարաբերությունների մուտքը Կովկաս որոշ բարեփոխություններ մտցրեց նաև Երևանի նահանգի արդյունաբերության բնագավառում: Այստեղ ստեղծվեցին արտադրական-փայատիրական ընկերություններ («Գինեգործական ընկերությունը», «Կաթնարդյունաբերական ընկերությունը» և այլն): Արդյունաբերական զարգացման համար կարևոր խթան հանդիսացավ երկաթուղու կառուցումը: Երկաթուղու շնորհիվ լայն հնարավորություններ ստեղծվեցին քաղաքի տնտեսական կյանքում ռուսական կապիտալի ներթափանցման և գինեգործական արտադրանքների վաճառահանման համար: Նման պայմաններում թերթը բարձրացնում է սեփական հումքի օգտագործման հիման վրա տեղական արդյունաբերության զարգացման պահանջը: «Երևանի նահանգի բնական հարստությունները» (1911, թիվ 6) հոդվածում թերթը անդրադառնում է օտարերկրյա կապիտալի ներմուծման բացասական հետևանքներին: «Եթէ մի քիչ մօտենանք այդ գործին,- գրում է թերթը,- կտեսնենք, թէ ինչպէս ճարպիկ արտասահմանցին ինքը կամ իր «մակլէրը» շահագործել են և շահագործում են մեր տհասութիւնը, մեր անգիտութիւնը ու այսօրվա մեր երկրից միլիոններ արժեցող հարստութիւնը խլում են մեր այսօրվա քաղցած գիւղացուց...» (1911, թիվ 6):

Ինչպես նախորդ թերթերը, այնպես էլ «Նոր ձայնը» անդրադարձել է գրականության և արվեստի հարցերին: Հատկապես աչքի են ընկնում Արշավիր Մելիքյանի գրախոսական հոդվածները: Իր հոդվածներից մեկում նա բարձր է գնահատել Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունները: Դրանք համարել է իշխող դասակարգի բռնությունների ու եսականության դեմ պայքարի ելած աշխատավորութ-

յան շահերի, գյուղացիական հեղափոխության առանձնահատկությունների փայլուն արտահայտություններ (1911, թիվ 7):

«Նոր ձայնը» ազգի բարօրության երաշխիքը տեսնելով դաստիարակության մեջ՝ բազմաթիվ էջեր նվիրել է դպրոցական գործի կազմակերպման, մատաղ սերնդի ուսուցմանն ու դաստիարակությանը վերաբերող հարցերի լուսաբանմանը: Առաջադրելով դպրոցների ժողովրդականացման և բոլոր գյուղերում ժողովրդական դպրոցներ բանալու պահանջը, թերթը գրում է. «Բուն ժողովուրդը դեռ անթափանց խաւարի ու ստրկութեան ճիրաններում է և ցնցոտիների մէջ՝ իր հայացքը դէպի այդ երջանիկ կենտրոնները հառած՝ «դպրոց» է աղաղակում: Եվ այդ այն կուսական բարեբեր հողն է, որ պիտի մշակեր մեր երիտասարդութիւնը ու մինչև օրս չէ մշակել բաւականաչափ» (1911, թիվ 1):

Դպրոցական ցանցի ընդլայնման և գյուղի բոլոր երեխաների կրթության գործն ապահովելու նպատակներով թերթը բարձրացնում է յուրաքանչյուր համայնքում դպրոցական տուրք սահմանելու և աշակերտական առանձին կազմակերպությունների ստեղծման խնդիրը:

«Նոր ձայն» թերթը նույնպես երկար չի գոյատևում: Համարձակ ելույթների համար 1912 թ. փակվում է:

«ԿՌԱՆ» (1911–1912)

1911 թ. Երևանում լույս է տեսնում «Կռան» հասարակական-տնտեսական և գրական-գեղարվեստական շաբաթաթերթը: Այն խմբագրում էր գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Մուշեղ Բագրատունին:

Մ. Բագրատունին ծնվել է 1870 թ., Աշտարակի շրջանի Կարբի գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է Շամախի քաղաքի քառամյա դպրոցում: Հոր մահից հետո նրանց բազմանդամ ընտանիքը տեղափոխվել է Երևան: Այստեղ Բագրատունին մասնակցել է սոցիալ-դեմոկրատների կազմակերպած ժողովներին, միտինգներին: 1904 թ. արգելված գրականություն տարածելու համար բանտարկվել է: Բանտից ազատվելուց հետո, 1905 թ. Բագրատունին ընդունվել է

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության շարքերը: Նա 1905–1906 թթ. հեղափոխության օրերին թղթակցել է Թիֆլիսում և Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան և սոցիալ-դեմոկրատական թերթերին: «Կայծ» և «Նոր խոսք» բոլշևիկյան թերթերում նրա հոդվածները տպագրված են Խ. Նարիմյան, Խաննո, Խ.-Նար, Սարխոշ, Մէ-Բունի և այլ ծածկանուններով:

Մ. Բագրատունին երգիծանքի սուր գրչով «Խաթաբալա», և այլ թերթերում քննադատական խոսք է ասել կյանքի տերերի հասցեին:

1915 թ. Մ. Բագրատունին աշխատակցել է Թիֆլիսում հրատարակվող «Պայքար» թերթին, որտեղ տպագրել է դաշնակցության դեմ ուղղված իր հոդվածները: 1920 թ. դաշնակցական կառավարությունը նրան աքսորել է Բաշ-Գյառնի գյուղը, այնտեղից էլ արտաքսել Պարսկաստան՝ բռնագրավելով նրա ունեցվածքը:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, Մ. Բագրատունին վերադարձել է Երևան և ամբողջ եռանդով լծվել երկրի տնտեսական ու մշակութային կյանքի շինարարության գործին: 1921 թ. նա նշանակվել է Բաշ-Գյառնիի գյուղհեղկոմի նախագահ: Որոշ ժամանակ անց նա անցել է մանկավարժական աշխատանքի և աշխատակցել է թերթերին՝ ծավալելով հրապարակախոսական լայն գործունեություն: Նա թղթակցել է «Մաճկալ», «Խորհրդային Հայաստան», «Անաստված» թերթերին: Մ. Բագրատունին գրել է «Կրոնի թույնը» գիրքը, «Շնագայլեր» երգիծական վեպը, «Շոր և Շորշոր» կինոսցենարը:

Մուշեղ Բագրատունին մահացել է 1945 թվականին:

«Կռան» շաբաթաթերթին աշխատակցել են Արշավիր Մելիքյանը, գրականագետ Արսեն Տերտերյանը, Երևանի թեմական դպրոցի ուսուցիչ Մակար Տեր-Սարգսյանը (Փառնակես), բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանը և ուրիշներ:

Թերթի կոչման մասին խմբագիրը գրել է. «Դուրս գալ հրապարակ և պայքար հայտարարել մի այնպիսի դասակարգի ու տարրի դէմ, որն այսօր հասարակական կեանքի փաստական տէր ու տնօրէնն է, որի խօսքը շատ յաճախ օրենք է ոգէտ ու անգիտակից մասսայի համար, որին իր «հասարակական գործունէութեան» համար մեր միջավայրի ասիական կուլտուրական հասարակութիւնը փառաց ի փառս է բարձրացրել, որի գործունէութիւնը իր «ազգօգուտ

ծառայութեամբ» իր մէջ է պարփակել մեր հասարակական կեանքի բոլոր էջերը (1912, թիվ 49/56):

«Գիւղացու ցաւերից», «Գիւղական նամակներ», «Գիւղացու տնտեսութիւնը» խորագրերով հոդվածներում քննադատության են ենթարկվում գյուղի տերերը: Թերթի համոզմամբ՝ վաշխառուն ընդունակ չէր հասկանալու այն նորօրյա պահանջները, որ առաջադրվում էին գյուղի զարգացման համար: Գյուղի տերերը՝ դաշտապահը, ջրբաշխը, քյոխվան, բոլորն էլ կաշառակերներ էին և պատրաստ ժողովրդի շահը զոհաբերելու անձնական, անհատական շահերին: Աշտարակից գյուղացին իր բողոք-նամակում գրում է. «Եվ վայ այն գիւղի հասարակութեանը, որ մհալ չի դնի և չի «շահի» միրաբի սիրտը: Նրա արտն ու անդաստանը ամառվա շոգերին կդատապարտվեն ծարաւի և ոչնչացման» (1911, թիվ 1):

Գյուղում տիրող անիրավ բարքերի, սոցիալական աղաղակող հակասությունների վերացման գործում կարևոր դեր է վերագրվում մտավորականությանը: Թերթի համոզմամբ՝ ժողովրդի իսկական բարեկամը պետք է բռնի դեպի գյուղ տանող ճանապարհը:

Շաբաթաթերթում մեծ տեղ է տրվել նաև արևմտահայ կյանքի լուսաբանմանը: «Թուրքահայ խնդիրը», «Տաճկաստանի դրութիւնը», «Հայերի վիճակը Տաճկաստանում» և այլ հոդվածներում ներկայացված է հայության թշվառ իրավիճակը սահմանադրական Թուրքիայում: «... Բայց Տաճկաստանի կառավարութեան արտաքին ձևի փոխուելու հետ,- գրում է թերթը,- ներքին կառավարութեան եղանակը մնացել է նոյնը՝ Աբդուլ Համիդին հաջորդած Երիտասարդ Թուրքերը իրոք նույնպիսի մի-մի Աբդուլ Համիդներ էին, լոկ այն տարբերութեամբ, որ առաջինը իր անելիքը բացարձակ էր անում, իսկ վերջինները աղուէսային խորամանկութեամբ» (1912, թիվ 37/44):

Թերթում քննադատական խոսք է ասվում արևմտաեվրոպական երկրների՝ Հայկական հարցի նկատմամբ ունեցած քաղաքականության հասցեին:

«Կռան» թերթը Հայկական հարցի լուծումը կապել է ռուս ժողովրդի հետ:

«Կռանը» հատուկ ուշադրության է դարձրել մտավոր և բարոյական դաստիարակության հարցերին: Հնացած և անօգտակար է համարվել դպրոցների կառավարման հոգաբարձական ձևը, որով

դպրոցը ենթարկվում էր ինքնագլուխ բարերարների կամքին ու նրանց տգետ հոգաբարձուներին:

Բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանը «Երեխաների ընտանեկան կրթութեան ձևը» հոդվածում (1911, թիվ 2) կարևորում է ֆիզիկական դաստիարակության դերը երեխայի ինչպես առողջության պահպանման, այնպես էլ մտավոր զարգացման գործում:

«Կռանը» միաժամանակ լինելով գրական-գեղարվեստական շաբաթաթերթ՝ անդրադարձել է նաև գրական աշխարհի նորություններին, գեղարվեստի հարցերին: Թերթի էջերում բարձր են գնահատվել հայ, ռուս և այլազգի գրողները, արվեստագետները: Գ. Սունդուկյանը համարվել է հայ նոր դրամատուրգիայի հիմնադիրը, որը ստեղծեց «ուրույն մի դպրոց, որին հետևում են մի շարք գրական դեմքեր, աշխատելով հայ բեմի վրա դնելու մեր ժողովրդի ռեալ կեանքը իր բոլոր լաւ ու վատ, չար ու բարի կողմերով»:

Մ. Բագրատունու «Կռան» շաբաթաթերթն իր նախորդների նման նույնպես երկար կյանք չունեցավ: Նյութական անբավարար միջոցներն ստիպեցին խմբագրին 1912 թ. վերջում փակել թերթը:

Սակայն հասարակական պարտքի զգացումը հանգիստ չտվեց Մուշեղ Բագրատունուն: Նա 1913 թ. հունվարից վերահրատարակեց թերթը «Նոր մամուլ» անունով:

«ԵՌԱՆԴ» (1912)

«Եռանդ» գրական, հասարակական, տնտեսական, քաղաքական շաբաթաթերթը լույս է տեսել 1912 թ., Բաքվում: Իր գաղափարախոսությամբ մոտ է եղել սոցիալիստ-հեղափոխականներին: Թերթը խմբագրել է Վաղարշակ Ղազարյանը: Աշխատակցել են Ս. Սմբատյանը, Ի. Մարկոսյանը և ուրիշներ: Նյութերը տեղավորված են հետևյալ բաժիններում. Սոցիալ-տնտեսական տեսություն, Պետական դումա, Աշխատաւորական քրոնիկ, Ռուսաստան, Արտասահման, Նաւթաշխարհ, Գործադուլային շարժում և այլն:

«Եռանդ» թերթում լայնորեն լուսաբանվել են Անդրկովկասում և Ռուսաստանում տարածում գտած գործադուլային շարժումները: Մանրամասնությամբ նկարագրված են Դուքսի հեծանվային գոր-

ծարանի բանվորների բողոք-միտինգները՝ ուղղված հեղափոխական թռուցիկներ տարածելու մեջ մեղադրված «Ցոհան Զլատաուստ» գրահակրի նավաստիների դատավճռի դեմ: Թերթը այն համոզմունքն է արտահայտել, թե գործադուլային շարժումների մեծ թափը կարող է վտանգ սպառնալ կառավարությանը:

Թերթում տպագրված բողոք-նամակներում բանվորները գրում էին իրենց կարիքների և սոցիալական անտանելի թշվառությունների մասին: Անդրադառնալով պայքարի խորհրդարանական ձևին՝ թերթը կարծում է, որ այն ըմբռնել է տալու բանվոր դասակարգին, որ «այդ պառլամենտը, որտեղ մասնակցում է, իր համար միջոց է և որ նա այնտեղ պիտի կռվի այն հասարակարգի դեմ, որի ներկայացուցիչն է այդ պառլամենտը» (1912, թիվ 2):

Թերթը համարձակորեն հանդես է եկել 1907 թ. հունիսերեքյան ընտրական օրենքի դեմ, որով սահմանափակվում էին բանվորների և գյուղացիների իրավունքները: Անբավարար էր համարվում սահմանված ընտրական համակարգը, որով անտեսվում էին դեմոկրատական սկզբունքները: Թերթը նկատում է, որ այդ համակարգը հնարավորություն էր ընձեռում կառավարությանը ճնշում գործադրելու առաջադրված թեկնածուների վրա և անցկացնելու կառավարության համար ցանկալի ներկայացուցիչների թեկնածությունները: Ուրեմն, եզրակացնում է թերթը, ռուսական պառլամենտը ծառայում է միայն իբրև գործիք ռուս բյուրոկրատիայի ձեռքին՝ շահագործելու աշխատավոր ժողովրդին և ծառայեցնելու իր բյուրոկրատական շահերին (1912, թիվ 2): Այնուհետև այն միտքն է զարգացվում, թե աշխատավորությունը ոչ մի դեպքում չի կարող բավարարություն ստանալ տիրող կարգերից և նրա նպատակն է՝ մասնակցելով այդ պառլամենտին, «աշխատել որքան կարելի է կարճատև դարձնել այդ ձևի պառլամենտի գոյությունը» (1912, թիվ 2):

«Նռանը» թերթում քննադատական խոսք է ասվել կապիտալիզմի, կապիտալիստական երկրների արտաքին քաղաքականության հասցեին:

Հայտնի է, որ Բալկանյան առաջին պատերազմը (1912–1913 թթ.) ավարտվեց Թուրքիայի պարտությամբ: Այս պատերազմը, ինչպես նկատում է թերթը, մղվում էր Բալկանյան երկրների միապետների և ազգայնական բուրժուազիայի շահերի պաշտպանության դիրքերից,

շահեր, որոնք էլ իրենց հերթին բխում էին իմպերիալիստական պետությունների (Գերմանիա, Ավստրիա, Հունգարիա, Ռուսաստան) ռազմաքաղաքական ձգտումներից: Իմպերիալիստական երկրներն իրավազուրկ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ձգտում էին ծառայեցնել իրենց զավթողական քաղաքականությանը: Ահա այս միտքն էլ ընդգծում էր թերթը (1912, թիվ 2):

Հայտնի է, որ Բալկանյան պատերազմի օրերին հայ մտավորականության մեջ միտք հղացավ դիմելու եվրոպական երկրներին և ռուսական կառավարությանը՝ Ալբանիայի և Մակեդոնիայի հարցերի հետ միասին լուծելու նաև արևմտահայ նահանգներում ծրագրված բարենորոգումների իրականացման հարցը: Անդրադառնալով այս հարցին՝ թերթը գտնում է, որ նման խնդրանքը զուր կանցներ, քանի որ հանգամանքներին ընթացք են հաղորդում այն երկրները, որոնք «կամ պողպատէ բռունցքներ ունեն, կամ ոսկիով լի քսակներ, իսկ ժողովուրդը զուրկ է թե՛ մէկից, թե՛ միւսից»: Թերթի կարծիքով բարենորոգումների հարցը պետք է դուրս բերել «հայ պոլիտիկոս հոգևորականների և ազգային դատի մոնոպոլիստների մութ և յեղձուկ առանձնասենեակներից և աշխատաւորութեան լայն խաւերի խոր և բազմակողմանի քննութեան ենթարկել» (1912, թիվ 2): Եվ զգուշացնելով ժողովրդին, որ մեծ տերությունների միջամտությունը Բալկանյան պատերազմին կարող է հանգեցնել համաշխարհային պատերազմի՝ թերթը կոչ է արել՝ դուրս գալ միտինգների և ցույցերի՝ պատերազմի վտանգը կանխելու համար:

«Եռանդ» թերթը թեև լույս է տեսել ընդամենը մեկ տարի, սակայն իր բարձրացրած հարցերով և առաջադրած տեսակետներով արժանի է ուսումնասիրության:

«ԱՐԱԳԱԾ» (1912)

«Արագած» թերթը, որ խմբագրել է Պետրոս Այվազյանը, լույս է տեսել Ալեքսանդրապոլում, 1912 թվականին, շաբաթը երկու անգամ:

«Արագած» եռօրյա թերթն իր բարձրացրած հարցերով, նորաշունչ ոգով գրված հոդվածներով ուրույն տեղ է գրավում Անդրկովկասի հայ պարբերականների շարքում:

Թերթը լույս էր տեսնում աշխատավորության համար: Նրա էջերում անխնա քննադատվել են կապիտալիստական աշխարհի մեծահարուստ տերերը, ազգային կեղծ բարերարները, կրոնամոլները, հասարակական այլ ցեցերը: Թերթը ձգտել է իր ընթերցողներին հասկացնել, որ «արտոնեալ դասակարգերը չեն, որ սատար պիտի լինեն ժողովրդի առաջադիմութեանը»:

Հայ գավառի կյանքը թերթում լուսաբանվել է Անդրկովկասի և Ռուսաստանի հասարակական, քաղաքական կյանքի հետ շաղկապված: «Գաւառի տպրուկները», «Գիւղն այսօր» և այլ հոդվածներում մերկացվում են աշխատավոր ժողովրդին շահագործողները, որոնց դեմ պայքարի միջոց է դիտվում լուսավորության ու գիտության տարածումը. «Հիմնի՛ր, որքան կարող ես, լուսոյ տաճարներ և դու կտեսնես, թե ինչպէս մէկը միւսի յետևից կչքանան ցեցերն ու տպրուկներն և նրանց աւերակների վրայ կը կանգնեն համայնական բարօրութեան կենսատու փարոսները» (1912, թիվ 16):

«Արագածը» նույնպես սոցիալական-տնտեսական կյանքի բարեփոխման հետ կապված իր նախագծումները փորձում է իրականացած տեսնել արհեստակցական միությունների, հողագործական կոոպերացիաների միջոցով: Ուստի և հորդորում է ժողովրդին՝ համարձակորեն մասնակցել այդ միությունների կազմակերպման աշխատանքներին, քանի որ «...այդ միացած ույժերով հնարաւորութիւն կունենանք հիմնելու շտեմարան, փոխատու խնայողական բանկ, որի կարիքն այնքան մեծ է, այնքան աղաղակող մեր ժողովրդի համար» (1912, թիվ 40): «Արագած» թերթի խմբագիրը՝ Պ. Այվազյանը, անտեսելով գրաքննության հետապնդումները, անդրադառնում է Լենայի ոսկեհանքերում բանվորների դեմ կատարած ոճրագործությանը: «Աղէտը Լէնայի ոսկէհանքերում» հոդվածում (1912, թիվ 30) նկարագրված են գործադուլի սկիզբը, ընթացքը և հետևանքները: «Վրդովուած հասարակական խիղճը» հոդվածում (1912, թիվ 31) Լենայի ոսկեհանքերի բանվորների գնդակոծությունը համարվել է մեծ եղեռնագործություն, որը վրդովեց հասարակական խիղճը: Եվ սարսափելին այն է համարվել, որ դեպքից հետո ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել, իսկ Պետական դուման բավարարվել է 220 նոր փորված գերեզմանների առջև ճառ արտասանելով:

Ցարական կառավարության կատարած այս ոճրագործության դեմ գրված հոդվածների համար խմբագիրը նահանգապետի կողմից ենթարկվել է մեկ ամսվա բանտարկության: Բանտից ազատվելուց հետո նա ոչ թե հուսալքվել, այլ ընդհակառակը, թերթի էջերում բացել է առանձին բաժին «Բանվորական շարժումները» վերնագրով և տեղեկություններ հաղորդել Ռուսաստանի տարբեր քաղաքներում բռնկված բանվորական հեղափոխական շարժումների մասին: Հոդվածներից մեկում մանրամասն նկարագրված է Պետերբուրգի բանվորների 1912 թ. մայիսմեկյան ցույցը: Կարևորն այստեղ այնքան ցույցի նկարագրությունը չէ, որքան թերթի արտահայտած այն կարծիքը, թե ժողովրդի մեջ կոտրվել է լռության սառույցը, նա ձայն է բարձրացնում իր իրավունքները ոտնահարողների դեմ (1912, թիվ 43): Այս նույն հոդվածում մերկացնող քննադատության է ենթարկվում Պետական դումայի հակաժողովրդական քաղաքականությունը:

Հեղափոխական տրամադրություններով են համակված նաև թերթի գրական-գեղարվեստական գործերը: Այստեղ տեղ է տրվել նաև այն բանաստեղծներին, որոնք նոր էին մտել գրական ասպարեզ: Արմենուհի Տիգրանյանը, Լեյլին (Փառանձեմ Սահակյան) և ուրիշներ նոր անուններ էի հայ քնարերգության մեջ:

«Արագած» թերթը գոյատևել է ընդամենը մեկ տարի: Նյութական սուղ միջոցները, նահանգապետի ու գրաքննության հետապնդումները ստիպել են խմբագրին փակել թերթը:

«ՆՈՐ ՄԱՄՈՒԼ» (1913–1915)

Մուշեղ Բագրատունու «Նոր մամուլ» թերթը շարունակել է «Կռանի» դեմոկրատական ավանդույթները: Թերթին աշխատակցել են Արշ. Մելիքյանը, Ա. Կոծինյանը, Գ. Մկրտումյանը և ուրիշներ:

Թերթի առաջին համարում պարզելով իր նպատակները՝ խմբագիրը գրել է. ««Նոր մամուլը» գաւառական այս տարտամ, անորոշ, անկազմակերպ և ինքնըստինքեան դասակարգային ոչ մի ձևակերպումն չունեցող միջավայրում պիտի դէռ հարթէ իր ճանապարհը դէպի ցանկալի նպատակը: Այդ վսեմ նպատակի իրագործումը

ծնունդ պիտի առնի հասարակութեան ինքնագիտակցութիւնից, գաւառի մութ, խաւար մասսաների ինքնաճանաչութեան և որ գլխաւորն է, մեր երկրի տնտեսական արդիւնաբերութեան, վաճառականական և գործարանային կեանքի հեղաշրջմամբ և մասսաների մտաւոր զարգացման առաջադիմութեան գործից» (1913, թիվ 4):

Ա. Կածինյանի «Նամակներ գաւառից», Դիլիջանից ուղարկված հոդվածում (1913, թիվ 18) պարզորոշ ներկայացված է կապիտալիստական արտադրահարաբերությունների հետևանքով գյուղում առաջացած դասակարգային շերտավորման պատկերը: Հեղինակը նկատում է, որ մրցության հարվածների տակ գյուղացին դառնում է հողազուրկ, աղքատանում է: Մրցությանը դիմակայելու համար թերթն առաջարկում է գյուղացիությանը՝ ընդգրկվել աշխատակցական սկզբունքով կազմակերպված ընկերությունների, այլ խոսքով, կոոպերացիաների մեջ: Նա ողջունում է Դիլիջանի 150 արհեստավորներին, որոնք միջնորդություն էին հարուցել կոոպերատիվ ընկերություն ստեղծելու համար:

Թերթը մեծ ոգևորությամբ գրում է Երևանում, Ղամարլուում (Արտաշատ) կոոպերատիվ սպառողական ընկերությունների գործունեության մասին: Տեսականորեն հիմնավորում է սպառողական ընկերությունների դերը գյուղացու տնտեսական կյանքի բարելավման, նրա քաղաքական ինքնագիտակցության բարձրացման գործում:

«Նոր մամուլը» կոոպերացիան համարելով գյուղը կապիտալիզմի կործանարար հետևանքներից փրկելու լավագույն միջոցներից մեկը՝ գրում է. «Վաղ, թե ուշ գաւառն էլ կենթարկուի ամենակարող կապիտալիզմի հոշոտմանը, երբ ֆաբրիկաների ու գաւոդների ցանցերը կփռուեն մեր երկրի բոլոր անկիւններում, և այլես աշխատաւոր դասակարգը հնար չի ունենայ ազատուելու ընչազուրկի ցնցոտիներից ու մեծատունի փշրանքներից, կեանքի անապահովութիւնից: Աշխատենք օր առաջ խուսափել նրանից, գյուղացիական, արհեստակցական կոոպերատիվ խմբակցութիւններ կազմակերպելով» (1913, թիվ18):

Հայտնի է, որ այդ տարիներին Երևանի նահանգում աշխուժացել էին հեղափոխական շարժումները: Գործադուլ էին անում Ուլուխանլու կայարանի բանվորները, Երևանի գործակատարները, Ալավերդու հանքախորշերում, Կողբի աղահանքերում աշխատող բանվոր-ծառա-

յողները: Գ. Մկրտումյանը, Իս. Տեր-Իսահակյանը և ուրիշներ իրենց հոդվածներում անդրադառնալով այդ ելույթներին՝ համարում էին դրանք «ռուսական առաջին յեղափոխութեան ալիքների ցնցող ազդեցութեան հետևանքներ»:

Թերթի քննարկած կարևոր հարցերից մեկն էլ Հայկական հարցն էր: Բալկանյան պատերազմի ավարտից հետո թուրք ջարդարարներն ուժեղացրել էին հալածանքները հայկական գավառներում: Թերթի 1913 թ. համարները լեցուն են հայ ժողովրդին ազատագրական պայքարի ոգեկոչող ելույթներով: «Նոր դավեր» վերնագրով հոդվածում այն միտքն է հայտնվում, թե հայ ժողովրդի ու նրա զավակների նշանաբանը պետք է լինի պայքարի խրոխտ քայլերգը:

Մեկ այլ հոդվածում թերթը տարփողում է ժամանակի հրամայական պահանջը, որն էր. «Ույժի դեմ ույժ, յարձակման դէմ դիմադրութիւն» (1913, թիվ 18):

Ջենքի ուժով օտարի լծից ազատվելու կոչը հնչում է Փալանդուզ Մկոյի (Մուշեղ Բագրատունի) ֆելիետոններում: Դրանցից մեկում գրված է. «Տարիէ ի վեր շարունակ պոռացինք, սակայն խուք մը չը կրցանք լսելի ընել եւրոպական դիպլոմատներուն: Եւրքէն միայն համոզուեցանք, որ ատոնց գլուխները պողպատէ եղած են ու մեզի ըսին, որ պոռալով անոնց բան մը հասկցնել երբէք չենք յաջողիր, այլ թնդանօթ մը ունենալու է, ու չիփ չիտակ տրամաբանելու է անոնց ուղեղին և իհարկէ բոմփ մը արձակելու» (1915, թիվ 1):

«Նոր մամուլ» թերթը անդրադարձել է նաև առաջին համաշխարհային պատերազմի իրադարձություններին:

Հայտնի է, որ 1914 թ. վերջերին թուրքական զորքերը հարձակվում են խաղաղ հայ բնակչության վրա, ավերում տները՝ նախապատրաստելով մի նոր ջարդ: Թերթը կանխանշում է հայերի մոտալուտ կոտորածը: Եվ իրոք, 1915 թ. ապրիլ ամիսը հայության համար եղավ Մեծ եղեռնի ամիս: Աննախադեպ կոտորածներին հաջորդեց արտագաղթը: Թերթը էջեր է նվիրել գաղթի նկարագրությանը: «Գաղթ Բայազէտից», «Հայ փախստական գաղթականները մեզ մօտ» և այլ թղթակցություններ ծանոթացնում են թուրք բռնակալների ոճրագործություններին:

Թերթում դրվատանքի են արժանացել ռուս և օտարերկրացի քաղաքական այն գործիչները, որոնք ժամանակին հրապարակայնորեն

հանդես են եկել հայկական դատի պաշտպանությամբ: Այսպես, բարձր է գնահատվել ֆրանսիացի հայտնի հրապարակախոս Պ. Քիյարը:

«Նոր մամուլ» շաբաթաթերթը իր էջերում տեղ է տվել նաև գրականության և արվեստի հարցերին, պաշտպանել ռեալիստական արվեստի սկզբունքները, արժեքավորել գրականության դերը: Թերթում ռեալիստական արվեստի փայլուն օրինակ է համարվում է Գ. Սունդուկյանի «Պեպո» դրաման, որը ներկայացնում է կեղեքող դասակարգի դեմ ուղղված մի բողոք, հայ նորագույն բեմի ամենագեղեցիկ զարդ: «Եւ քանի դեռ կեանքում գոյութիւն ունի գոյութեան կռուի պայքարը, դասակարգային կռիւը, թոյլի և ուժեղի մրցութիւնը, «Պէպօն» էլ կմնայ որպէս կենդանի ու թարմ սկզբունք-պրոբլէմ կեանքի այդ պայքարի (1913, թիվ 38):

Թերթում առանձին հոդվածներ նվիրված են դպրոցներում մայրենի լեզվի և գրականության ուսուցման հարցերին: Մայրենի լեզուն համարվել է այն հիմնաքարը, որի վրա հենված է ազգի կյանքը, ամբողջ կառուցվածքը, նրա մտավոր կարողությունների արգասիքը (1915, թիվ 4): Մայրենի լեզվի և գրականության տարածման համար առաջարկվել է. 1. Ստեղծել հարուստ մանկական գրադարան, 2. Հրատարակել ընտիր հայերենով գրված գեղարվեստական գրքեր, 3. Հիմնել հրատարակչական ընկերություն և 4. Ուշադրություն դարձնել ռուսաց և հայոց դպրոցներում լեզվի ուսուցիչների պատրաստման գործի վրա: Թերթում բարձրացվում է ռուսաց լեզվին տիրապետելու պահանջը:

Մուշեղ Բագրատունու «Կռան» և «Նոր մամուլ» պարբերականները հասարակական զարգացման արմատական հարցերը քննարկելիս հանգել են այն մտքին, որ հայ ժողովրդի փրկությունը կապված է ռուսական ազատագրական շարժման հետ:

«ԳԱՒԱՌԻ ՁԱՅՆ» (1913–1916)

«Գաւառի ձայն» գրական, հասարակական, գյուղատնտեսական ու կոոպերատիվ, ժողովրդական շաբաթաթերթի խմբագիրն էր Հովսեփ Միրզոյանը: Նա իր թերթի նպատակն է համարել պաշտպան լինել գավառի ամենահալածված դասին՝ հասարակ ժողովրդին:

«Գաւառի ձայն» թերթի նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. Կոոպերացիա, Հաւատ, Հայկական հարց, Մամուլ, Գեղարուեստ, Տեղական լուրեր և այլն: Թերթում քննարկվել են գյուղի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարեփոխման հետ կապված հարցերը, առաջադրվել են գյուղացիներին գյուղի «զոռբաների» հալածանքներից ազատագրելու միջոցներ: Պաշտպանելով այն տեսակետը, թե քաղաքի աշխատավորության կյանքի բարելավման համար անհրաժեշտ է գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերի «արմատական հեղաշրջում»՝ թերթը, հրապուրված կոոպերատիվ շարժման գաղափարներով, առաջին հերթին կոոպերացիան է համարում այն լավագույն միջոցը, որը կարող էր ազատել աշխատանքը դրամատերերի ճանկերից և աշխատավորին բոլորովին անկախ դարձնել տերերից (1913, թիվ 1): «Կոոպերացիա, բանկ, թէ ընկերութիւն» հոդվածում բացատրվում է կոոպերացիայի դերն ու նշանակությունը, ցույց է տրվում, որ այն կամավոր ընկերակցություն է, որը հասցնելու է ցանկալի հասարակական կարգերի (1914, թիվ 33):

Թերթում բազմաթիվ հոդվածներ են տպագրված նաև կոոպերատիվ շարժման պատմությանը վերաբերյալ, ծանոթություններ են տրված կոոպերատիվ շարժման նախահայրեր Ֆուրիեի և Օուենի մասին, ինչպես և բարձր են գնահատվել եվրոպական երկրներում ժողովրդի կյանքում կոոպերացիաների կատարած դերն ու հասարակական արժեքը:

Կոոպերատիվ շարժման հարցերին նվիրված մի շարք հոդվածներով թերթում հանդես է եկել Աշոտ Աթանասյանը (Սալ-Ման): Նա իր «Ապագայի հիմքը» (1914, թիվ 55) հոդվածում կոոպերացիան համարում է խաղաղ պայքարի լավագույն ձև՝ ապագա իրավահավասար, ընկերվարական կարգերի ստեղծման համար: Նրա համոզմամբ՝ կոոպերացիան զարգանալով, կդառնա ակտիվ ուժ և աշխատավորությանը կառավարության դեմ պայքարի համախմբող քաղաքական ուժեղ կազմակերպություն:

«Գաւառի ձայն» թերթի խմբագիրը և թերթի շուրջ համախմբված աշխատակիցները կրել են ռուս նարոդնիկների հայացքների ազդեցությունը: Թերթը բարձր գնահատելով նարոդնիկ, կոոպերատոր, հասարակական գործիչ Եվդոկիմովի և իշխան Շախովսկու

կողմից Մոսկվայում լույս ընծայված «Պաշտպան» թերթը՝ հորդորել է իր ընթերցողներին բաժանորդագրվել թերթին և տարածել այն Անդրկովկասում:

Հայտնի է, որ Նիկոլայ 2-րդը 1905 թ. հոկտեմբերի 17-ին հրապարակում է մանիֆեստ, որով հռչակում է անձի անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների և միությունների ազատություն: Միամտորեն հավատալով ցարի «բարեհոգությանը»՝ մի շարք ժողովրդասեր մտավորականներ, ինչպես և պարբերականներ, ոգևորությամբ ընդունեցին այդ մանիֆեստը: «Գաւառի ձայն» թերթը նույնպես ձայնակցեց նրանց: Թերթի վերոհիշյալ՝ «Կոոպերացիա, բանկ, թե ընկերութիւն» հոդվածում դրվատանքի է արժանանում մանիֆեստը, դրա հետ կապում կոոպերատիվ շարժման զարգացումն ու հասարակական կարգերի վերափոխումը:

Թերթը մեծ հույսեր էր կապում կառավարության շնորհած բարեփոխումների հետ՝ պաշտպանելով հասարակության բարեփոխման ազատամիտ գաղափարները և սահմանազատվելով հեղափոխական ծայրահեղություններից:

«ՋԱՎԱԽՔ» (1913–1916)

1913 թվականին Ախալքալաքում լույս է տեսնում «Ջաւախք» շաբաթաթերթը (ապա երկշաբաթաթերթ)՝ գավառի առաջին պարբերականը:

Թերթի խմբագիրն ու հրատարակիչն էր կանոնավոր կրթություն ստացած, հրապարակախոս, հասարակական գործիչ Վարդան Շահպարոնյանը:

Վ. Շահպարոնյանը ծնվել է 1872 թ. դեկտեմբերի 22-ին, Ախալքալաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում, ապա ուսումը շարունակել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Որպես ուսուցիչ աշխատել է Ախալքալաքի ծխական դպրոցում, եղել է նույն դպրոցի հոգաբարձուն: Տեղական իշխանությունների դեմ ուղղված իր ըմբոստ ելույթների համար նա հետապնդվել է կառավարության կողմից և 1904 թ. աքսորվել Ռուսաստանի Կալուգայի մարզի Ժիզդրա քաղաքը: Երկու տարի աքսո-

րավայրում մնալուց հետո նա վերադարձել է Ախալքալաք: Այստեղ նա ծավալել է հասարակական և հրապարակախոսական լայն գործունեություն: 1912 թ. նրա նախաձեռնությամբ կառուցվել է Ախալքալաքի առաջին հիդրոէլեկտրակայանը: Ապա նրա ղեկավարությամբ շարք են մտել ծխական երկսեռ դպրոցի, մսի կոմբինատի, ալրաղացի, ձեթ-օճառի, կաշվի, փայտամշակման գործարանների շենքերը: 1915 թ. նա Ախալքալաքում հիմնել է առաջին մանկատունը և կազմակերպել Մեծ եղեռնից մազապուրծ որբերի խնամքի և դաստիարակության գործը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, Վ. Շահպարոնյանը շարունակել է աշխատել: 1922 թ. նա ստանձնել է Ախալքալաքի կոմունալ բաժնի վարիչի պաշտոնը, ամենայն բարեխղճությամբ հետևել քաղաքի սանիտարական վիճակի, ճանապարհների բարեկարգման, բնակչության կենցաղսպասարկման աշխատանքներին: 1926 թ. Վ. Շահպարոնյանը ընտանիքով տեղափոխվել է Երևան, որտեղ մինչև 1937 թ. վարել է ՀՕԿ-ի շինարարական բաժնի վարիչի պաշտոնը: 1937-ից մինչև իր կյանքի վերջը (1941) նա աշխատել է Երևանի Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում որպես հաշվապահ: Երախտավոր գործիչը միաժամանակ ծավալել է գրական-հրապարակախոսական գործունեություն: «Աթօս», «Էլի էն», «Շահ-Պարոն», «Վ.Շ.» ծածկանուններով ֆելիետոններ, պատմվածքներ, հրապարակախոսական հոդվածներ է տպագրել «Ջավախք», «Մշակ», «Տարազ» և այլ պարբերականներում: Վ. Շահպարոնյանը գրել է նաև բանաստեղծություններ, կենցաղային ու պատմական թեմաներով թատերախաղեր, որոնք բեմադրվել են Ախալքալաքում, Երևանում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում: Առանձին գրքույկներով լույս են տեսել նրա «Արմէն և Ֆաթիմա» (Ալեքսանդրապոլ, 1909), «Արցունքի ծով» (Ալեքսանդրապոլ, 1912) պատմական դրամաները:

Ախալքալաքի տնտեսական, սոցիալական, հոգևոր կյանքի բարեփոխման գործին ծառայելու նպատակներով Վ. Շահպարոնյանը ձեռնամուխ է լինում «Ջավախք» գրական, հասարակական շաբաթաթերթի, ապա երկշաբաթաթերթի հրատարակմանը: Թերթը բաղկացած էր ութ էջից: Խմբագիրը իր թերթի նախընտրած նպատակների մասին անդրանիկ համարում գրել է. «Ոչ դատարկ սնափառու-

թիւնը և ոչ թեթևամիտ նմանութիւնը ուրիշներին ստիպեցին մեզ սկսել այսպիսի մի ծանր և պատասխանատու գործ: Ինքը՝ բարդացած կեանքը ստեղծում է մի պարբերական օրգանի անհրաժեշտութիւնը, որը մի կողմից ճիշտ կերպով պիտի պարզի մեր գաւառի տնտեսական ու կուլտուրական դրութիւնը, միւս կողմից ցոյց տայ այդ դրութիւնը բարելաւելու միջոցները»:

«Ջաւախքին» աշխատակցել են Վ. Այվազյանը (Վ. Վազյան, Վ. Այվազ), Ա. քահ. Բլրցյանը, Հ. Խաչատրյանը, Ա. Բուդաղյանը և ուրիշներ:

Լինելով գավառական դեմոկրատ մտավորականության ներկայացուցիչը՝ Վ. Շահպարոնյանը գրում է. «Թերթը մի ուղղութիւն ունի. այն է՝ ծառայել ժողովրդի շահերին և կռուել զանազան գոյնի թէ՛ նիւթականը, թէ՛ ֆիզիկականը, և թէ՛ բարոյականը շահագործող մարդկանց դէմ» («Ջաւախք», 1913, թիվ 26): Եվ գյուղաշխարհի տնտեսական ու բարոյական հետամնացության վերացման համար նա կոչ էր անում ժողովրդին կռվել կրթության զենքով: «Ջաւախքը» գավառի հասարակության միտքը շարժող, հոգին կրթող հրապարակային մի ամբիոն էր, որն ինքնին նոր ու պայծառ երևույթ էր Ախալքալաքի մշակութային կյանքում:

Ոգևորված «Ջաւախքի» լույս ընծայմամբ՝ հայ մտավորականության ներկայացուցիչները շտապում են խրախուսանքի խոսք ասել թերթի խմբագրին ու աշխատակիցներին: Արշ. Մելիքյանն իր «Խօսք» թերթում գրում է. «Մեր գաւառական լրագրերն իրենց պատասխանատու կոչումով մեծ դեր կարող են կատարել մեր գաւառական հայ հասարակութեան մտաւոր ու քաղաքական առաջադիմութեան գործում:... Սակայն որքան ծանր է, փշալից լրագրի դերը, մանաւանդ գաւառում, ուր ժողովուրդը դեռևս խարխափելով մթին խաւարում, խորշում է լոյսից, որի ճաճանչները սլաքների պէս ծակում են նրա տեսողութիւնը, այնուամենայնիւ, նոյնքան հաճելի է, նոյնքան գնահատելի այդ դերը (1914, թիվ 2):

«Ջավախքը» եղել է գլխավորապես «գյուղացիական թերթ», այն լույս էր տեսնում հարուստ և բազմաբովանդակ ծրագրով: Նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում՝ Գավառ, Տեղական կեանք, Բալկանեան պատերազմ, Բանասիրական:

«Գաւառ» խորագրի ներքո տպագրված հոդվածներում հիմնականում քննարկվում են գյուղի սոցիալական ու տնտեսական իրավիճակին, բնակչության բարոյակրթական կյանքին, առողջապահական պայմաններին վերաբերող հարցեր: Հայտնի է, որ 1900 թ. հունիսի 12-ին ցարի կողմից Անդրկովկասի համար հաստատված հարկային ռեֆորմի նոր նախագծի համաձայն՝ հարկերի ամբողջ ծանրությունը ընկնում էր աշխատավոր գյուղացիության վրա: Գյուղացիները բացի պետական տուրքեր վճարելուց, պարտավոր էին իրենց հաշվին պահել գյուղապետերին, գրագիրներին, հարկահավաքներին, հանդապահներին, մասնակցել ճանապարհների շինարարական աշխատանքներին: «Գիւղական վաշխառուներ» և այլ հոդվածներում ցույց է տրվում, թե ինչպես տանուտերը, վաշխառուն տարվա վերջում յուրացնում էին գյուղացու աշխատանքը, ճնշում նրան:

Մի շարք հոդվածներում էլ առաջարկվում է նախ համակողմանիորեն ուսումնասիրել գյուղը և ապա նոր միջոցներ մշակել դրա տնտեսական ու մշակութային վերափոխման համար:

«Միութիւնը ոյժ է» հոդվածաշարն (1913, թիվ 15, 16) ընթերցողներին ծանոթացնում է Շվեյցարիայում և Դանիայում գործող գյուղատնտեսական ընկերությունների աշխատանքներին: «Այդ միութիւնների շնորհիւ է,- գրում է թերթը,- որ դանիացին այնքան ոյժ ու կորով է ցոյց տալիս բնութեան դէմ կռուելու մէջ: Դրանց շնորհիւ է, որ դանիացին չորացրել է ճահիճները, լճերը, նոյնիսկ ծովի մակերեսը, դրանց շնորհիւ է, որ ավազոտ վայրերը դարձել են գեղեցիկ մարգագետիններ ու դաշտեր, դրանց շնորհիւ է, որ դանիացին այնքան լավ է պարապում գիւղատնտեսութեամբ, որ այլեւս բոլորովին մոռացել է կարիքն ու սովը, այլեւս գաղափար չունի դրանց մասին» (1913, թիվ 16):

Թերթը «Գիւղական բանկեր» առաջնորդող հոդվածում (1913, թիվ 4) առաջարկում է գյուղերում բացել փոխատու բանկեր, որոնք կազատեին գյուղացուն վաշխառուի ճանկերից: Իսկ «Մանր վարկի նշանակութիւնը և նպատակը» հոդվածում (1913, թիվ 8) այն կարծիքն է հայտնվում, թե վարկի պահանջը չափազանց խիստ է զգացվում գյուղատնտեսության մեջ, ուստի «միակ փրկութիւնը հասարակական ինքնօգնութիւնն է ի դէմս մանր վարկային ընկերութիւնների»:

Լույս տեսնելով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ թերթը բնականաբար չէր կարող չարձագանքել պատերազմական իրադարձություններին: Այսպես, «Եւրոպան հրդեհի մէջ է», «Ամբարտաւանը վերջ ի վերջոյ կընկնի» և այլ հոդվածներում այն համոզմունքն էր արտահայտվում, թե պատերազմը իմպերիալիստական երկրների զավթողական քաղաքականության հետևանք է: Այդ տարիներին թերթը հոդվածներ էր տպագրում հայ և վրաց ու այլ ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, հորդորում պահպանել այն (1914, թիվ 3):

Թերթում մեծ թիվ են կազմում հայկական կոտորածներին, հայ ժողովրդի դառն ճակատագրին վերաբերող հոդվածները, անարգանքի սյունին գամվում թուրքական ոճրագործ կառավարությունը, կոտորածների ղեկավարներն ու կազմակերպիչները: «Նահատակների պատգամ» վերնագրով հոդվածում (1915, թիվ 2) հայ երիտասարդներից պահանջվում է օրհասական այդ օրերին հիշել հայ անցյալի հերոսներին՝ քաջ Վարդանին ու մյուս նահատակներին և նրանց նման կռվել հանուն փրկության: Դեռ 1913 թ. սկսած թերթում Հայկական հարցի վերաբերյալ հոդվածներով հանդես է եկել հասարակական գործիչ, խմբագիր, հրապարակախոս Մ. Բագրատունին: Նա իր հոդվածներում հաստատում է այն միտքը, թե հայ ժողովուրդը իր ազատագրության հարցը ինքն իր ուժերով պիտի լուծի: Նա պիտի բռնի այն ուղին, որով ազատագրվել են աշխարհի մյուս բոլոր ժողովուրդները:

«Ջաւախքը» հայրենասիրության դասեր է տվել իր ընթերցողներին՝ տպագրելով պատմական դեմքերին, իրադարձություններին նվիրված հոդվածներ: Թերթում առանձին բաժին է հատկացված հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակների տոնակատարության արարողությունների նկարագրությանը: Վ. Շահպարոնյանի «Լույսի տոնը» վերնագրով հոդվածում ցույց է տրվում գրերի գյուտի կարևոր դերը հայ ժողովրդի գոյատևման, հոգևոր կյանքի զարգացման գործում (1913, թիվ 34):

«Ջաւախքում» տպագրվել են նաև հայ ժողովրդի անցյալի արվեստի լավագույն նմուշներ, ինչպես և ժամանակի հայ գրողների ու բանաստեղծների գործեր: Թերթն իր կարծիքն է արտահայտել

նաև ժամանակի հայ գրողների՝ Հովհաննես Հովհաննիսյանի, Րաֆֆու և մյուսների մասին:

«Ջաւախքում» մեծ տեղ են գրավում աճող սերնդի կրթության և դաստիարակության հարցերին նվիրված հոդվածները: Ուսուցիչներից պահանջվում է առանձին ուշադրություն դարձնել մայրենի լեզվի ուսուցման, երեխաների մտավոր ու հոգևոր աշխարհի ձևավորման խնդիրներին: Մերժվում են պատիժները՝ ծեծը և աշակերտներին դպրոցից հեռացնելը:

«Ջաւախքը» ուներ և հավելված, որը լույս էր տեսնում տարին մեկ անգամ՝ առանձին գրքույկով: Այդպիսի հավելվածներից է Հովհաննես Մալխասյանի «Ջաւախքի երազը» գրական-գեղարվեստական պատկերը (1913, թիվ 27):

Այսպիսով, «Ջաւախք» շաբաթաթերթը ժամանակին ձգտել է արթնացնել գյուղաշխարհի բնակչության միտքը, ուշաբերել նրան, հանձնարարել՝ բռնել բարեկրթվելու, հոգով բարձրանալու, տնտեսապես հզորանալու ճանապարհը:

1916 թ., երբ առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով իրար հետևից փակվում են հայ ամսագրերն ու թերթերը, դադարում է լույս տեսնելուց նաև «Ջաւախքը»:

«ՀԱՄԲԱՒԱԲԵՐ» (1915–1917)

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–1918) հայ ժողովրդի զավակները ոգևորված մայր հայրենիքը ռուսական զորքերի օգնությամբ ազատագրելու հույսերով՝ ակտիվ մասնակցություն են ցուցաբերում մարտական գործողություններին: Նրանց խրախուսելու, կուսակցական տարաձայնություններից վեր պահելու, ժողովրդի մեջ միաբանություն, համերաշխություն հաստատելու միտումներով Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը[1] 1915 թ. դեկտեմբերի 20-ին լույս է ընծայում իր առան-

---

[1] Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը լուսավորական-մշակութային կազմակերպություն էր: Այն հիմնվել է 1881 թ. Թիֆլիսում, բժիշկ Բագրատ Նավասարդյանի անմիջական նախաձեռնությամբ և Գ. Սունդուկյանի ու Գ-ր. Արծրունու մասնակցությամբ: Ընկերությունը գործել է իր կանոնադրության համաձայն, սան-

ծին օրգանը՝ «Համբաւաբեր» հասարակական, գրական շաբաթաթերթը: Այն խմբագրել է ընկերության նախագահ, հասարակական գործիչ Սամսոն Հարությունյանը:

Ս. Հարությունյանը ծնվել է 1869 թ., Ղազախի գավառի Վերին Աղդան գյուղում: 1914–1915 թթ. մասնակցել է հայ կամավորական ջոկատների կազմակերպմանը: 1917 թ. անցել է Հայ ժողովրդական կուսակցության շարքերը: 1919 թ. ընտրվել է այդ կուսակցության կենտրոնական կոմիտեի փոխնախագահ: Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նա վտարվել է և մահացել 1941 թ.:

«Համբաւաբեր» շաբաթաթերթի աշխատակիցների կազմում ընդգրկված են եղել հասարակական, քաղաքական տարբեր հայացքների տեր մտավորականներ (Մ. Աբեղյան, Լեո, Հ. Թումանյան, Շիրվանզադե, Նար-Դոս, Վ. Տերյան, Դ. Դեմիրճյան, Զ. Եսայան, Իս. Հարությունյան, Դ. Տեր-Դանիելյան (Դ. Անանուն) և ուրիշներ):

«Համբաւաբերի» բովանդակությունը բազմաբնույթ է: Նյութերը տեղադրված են հետևյալ բաժիններում. Խմբագրական, Արտաքին տեսութիւն, Ներքին տեսութիւն, Պետական կեանք, Համաշխարհային պատերազմ, Գեղարուեստ, Մատենախոսութիւն, Քրոնիկօն, Քաղաքական լուրեր, Գիտական, Առողջապահութիւն և այլն:

Առաջին տարվա առաջին խմբագրականում թերթը պարզելով իր նպատակները՝ գրում է. «Մենք չպիտի թոյլ տանք, որ ժողովրդական եռանդի մի կաթիլ անգամ զուր վատնուի, կորչի աննպատակ: Զէնքի կանչենք համայնական ամբողջ կարողութիւնը, որպէսզի հնարաւորութիւն գտնենք որքան կարելի է քիչ զոհեր տալու մեր դաժան ժամանակին՝ որպէսզի ապրենք մինչև այն ժամը, երբ համաշխարհային պատերազմը վերջ կստանա ազգերի ազատութեան սկզբունքի հաղթանակով»: Թերթի համոզմամբ՝ հայ ժողովուրդը, որ իր ճակատագիրը «վերջնական ու անդառնալի կերպով կապել է Ռուսաստանի հետ», պետք է իր ազգի բոլոր ուժերով և՛

ցել է մասնաճյուղեր բոլոր հայաշատ վայրերում: Ընկերությունը նյութապես օժանդակել է հայ մշակութային գործիչներին, հիմնել է կրթական օջախներ, սատար կանգնել որբ ու անապաստան երեխաներին:
Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընկերությունը ստեղծել է հատուկ կոմիտե, որը զբաղվել է ցեղասպանությունից փրկված հայ գաղթականների օգնության հարցերով:

ռազմաճակատում, և՛ թիկունքում գործի միասնաբար, համախմբված, համերաշխությամբ: Իսկ «Համերաշխութեան անհրաժեշտութիւնը» (1916, թիվ 11) խմբագրականում թերթը հորդորում է ազգային կուսակցություններին մոռանալ ներքին խմբակցական, կուսակցական, մինչև իսկ անհատական հակակրությունները և ծավալել համերաշխ, ներդաշնակ գործունեություն: Իր խոսքը տեղ հասցնելու նպատակով թերթը նույն համարում տպագրում է հասարակական, քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշայի նամակը, որում դատապարտվում են ազգային գործիչները՝ միմյանց հետ ունեցած վեճերի համար: Հեղինակը դիմում է հայությանը՝ կոչ անելով. «Կենտրոնացնել բոլոր ույժերը միակ մէկ նպատակի, այն է՝ Հայրենիքի փրկութեան համար»: Թերթը հետևելով նման պատգամին՝ գրեթե յուրաքանչյուր համարում տարփողում է այդ միտքը ու գործուն աշխատանք ծավալում դրա իրականացման ուղղությամբ:

«Համբաւաբերը» համարվել է ժողովրդական հանրամատչելի թերթ, որի գաղափարական ուղղության մասին խմբագիրը գրել է. «Լինել առաջադիմական, անկախ և անկուսակցական օրգան, ահա «Համբաւաբերի» նշանաբանը, դաւանանքը» (1916, թիվ 49):

Խմբագրական և հրապարակախոսական այլ հոդվածներում քննարկվել են առաջին համաշխարհային պատերազմի բնույթին ու պատճառներին, արևմտահայ ժողովրդի ողբերգությանը, արտագաղթին, կամավորական շարժումներին, բարեգործությանը, թիկունքի անելիքներին վերաբերող հարցեր:

Պատերազմի բուն պատճառները թերթում համարվել են իմպերիալիստական երկրների ռազմամոլությունն ու աշխարհը վերաբաժանելու և կապիտալի ներդրման նոր աղբյուրներ ձեռք բերելու նրանց ձգտումները: Թերթի համոզմամբ՝ պատերազմը պետք է շարունակվեր այնքան ժամանակ մինչև, որ ջախջախվեր «միլիտարիստական հիդրայի գլուխը» (1916, թիվ 30):

Թերթի կարծիքով՝ պատերազմը, որ մղվում էր երկու սկզբունքների՝ գազանային ուժի և մարդկայնության միջև, կարող էր համամարդկային կարևոր նշանակություն ունենալ, եթե ավարտվեր «մարդկայնության համար մղվող կողմի» (Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան, Իտալիա) հաղթանակով: Ըստ թերթի՝ խաղաղության կնքման դեպքում դաշնագրի կարևոր կետերից մեկն էր լինելու

փոքր ազգերի, այդ թվում՝ արևմտահայերի ազատագրման հարցը: Եվ այդ հարցի լուծումը թերթն անվերապահորեն կապում էր Ռուսաստանի հետ:

Թերթը մեծ ոգևորությամբ է գրում ռազմաճակատներում ռուսական բանակի հաջողությունների, հայ կամավորների սխրագործությունների մասին: Փառաբանության տողեր են նվիրված հատկապես Էրզրումի գրավմանը:

Թերթում ծավալուն հոդված է տպագրվել Մուսա լեռան հերոսամարտի մասին: Ընդգծված է հատկապես այն հանգամանքը, որ մուսալեռցիների հաջողությունը նրանց միասնական պայքարի մեջ էր, ուր «չկային վարանում և պառակտում, չկային գժտուած, հակամարտ կուսակցութիւններ»: Դաշնակցականները, հին ու նոր վերակազմյալ հնչակյանները կռվեցին, նահատակվեցին և ազատվեցին թև-թևի տված: Այդպես էր և Վանում, որտեղ պատմական մենամարտի օրերին չկային դաշնակցական ու սահմանադիր-ռամկավար, կային միայն հայ ռազմիկներ, հայրենիքի պաշտպաններ (1916, թիվ 21):

«Համբաւաբերի» մի շարք էջեր դատարկ են թողնված: Տպագրված են միայն վերնագրերը, այսպես, օրինակ, «Ի՞նչ են պահանջում հայերը» (1916, թիվ 40) և այլն: Գրաքննության կողմից արգելվել են որոշ նյութեր, հավանաբար դրանցում կառավարության դեմ արտահայտված բողոքների, համարձակ ելույթների համար:

Գրեթե յուրաքանչյուր համարում տեղեկություններ են հաղորդվում թուրքերի ոճրագործությունների, գաղթականների թվաքանակի և իրավիճակի մասին:

Հայկական հարցը, որ շարժեց քաղաքակիրթ աշխարհի հետաքրքրությունը, իր վրա սևեռեց ռուս և արևմտաեվրոպական առաջադեմ մտավորականության ուշադրությունը: Սկսվեցին հայանպաստ շարժումներ Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում և այլուր: «Ֆրանսիայի և օտարազգիների բարեկամության» ընկերության նախաձեռնությամբ կազմվեց «Ֆրանս-Արմենի» հանձնաժողովը, որի անդամներն էին Ֆրանսիայի նախկին վարչապետ Ժ. Կլեմանսոն, գրող Ա. Ֆրանսը և ուրիշներ: Հանձնաժողովի նպատակն էր՝ պաշտպանել հայերի ազգային շահերը Արևելքում: Թերթն անդրադարձել է հանձնաժողովի, ինչպես և Լոնդոնում կազմակերպված հայ փախս-

տականներին նպաստող կոմիտեի աշխատանքներին, գրել է հայ և այլազգի մեծահարուստների՝ գաղթականներին ցուցաբերած նյութական ու բարոյական աջակցության մասին:

Պատերազմի օրերին թերթի տեսադաշտում են եղել նաև սոցիալ-տնտեսական հարցերը: Այդ թեմաներով հանդես են եկել Վ. Տոտոմյանցը («Թանկութեան և գերընակչութեան հարցի առթիւ», 1916, թիվ 6–9), Գ. Թումանյանը («Մեզանում գեմստվո մտցնելու նախօրեակին», 1916, թիվ 5) և ուրիշներ: Դրանցում միջոցներ են առաջադրվում մթերքների՝ օր-օրի աճող գների բարձրացումը կանխելու վերաբերյալ: Տոտոմյանցը տնտեսական կյանքի բարեփոխման լավագույն միջոց է համարում կոոպերացիան: Թերթը հանդես է եկել նաև Անդրկովկասում գեմստվո մտցնելու առաջարկով՝ կարծելով, որ գեմստվոն միավորելով տարբեր ազգերի շահերը՝ միաժամանակ կծառայի և սոցիալ-տնտեսական կյանքի բարգավաճմանը:

«Համբաւաբերում» քննարկվել են նաև հոգևոր-բարոյական դաստիարակության հարցերը: Դպրոցը համարվում է լուսավորության և գիտության այն աղբյուրը, որը մի անխուսափելի անհրաժեշտություն է թե՛ անհատի, և թե՛ ամբողջ հասարակության համար: Պահանջվել է Ռուսաստանի և արտասահմանի հայության հետ մեկտեղ Ամենայն Հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ Էջմիածնում ստեղծել դպրոցական հաստատուն հիմնադրամ՝ հայոց դպրոցը ծանր իրավիճակից դուրս բերելու, հատկապես գաղթած որբ երեխաների կրթության գործը կազմակերպելու համար: Հարց է բարձրացվել նաև Կովկասում բարձրագույն դպրոց հիմնելու մասին, դպրոց, որտեղ կսովորեին բոլոր ուսումնածարավ երեխաները՝ անկախ սոցիալական և ազգային պատկանելությունից:

Մանկավարժական թեմաներով թերթում հանդես են եկել ճանաչված մանկավարժներ Գ. Էդիլյանը, Ստ. Մալխասյանը, Հ. Տեր-Միրաքյանը, Իս. Հարությունյանը և ուրիշներ:

Հարուստ են թերթի և գրական էջերը: Գեղարվեստական ստեղծագործությունների (արձակ և չափածո) հիմնական թեման հայ ժողովրդի ողբերգությունն էր: Զապել Եսայանի, Լեռ Կամսարի, Ա. Վշտունու, Ս. Քամալյանի և մյուսների գործերը լի են հայկական ջարդերը, գաղթը նկարագրող սահմռկեցուցիչ պատկերներով:

Պատեհ պահ համարելով Մ. Նալբանդյանի ազատասիրական գաղափարների տարածումը, թերթը դրվատում է նրա կյանքն ու հայրենանվեր գործունեությունը: Մինաս Բերբերյանն իր «Ազատութեան զինուորը» (1916, թիվ 15) ընդարձակ հոդվածում բարձր գնահատելով Մ. Նալբանդյանի դերը գրում է, որ նա ռուսահայերին վերածնության վաղ արշալույսին նպաստող անհատականություն էր:

«Համբաւաբեր» պարբերականն իր գոյության երեք տարիների ընթացքում քննարկելով ժամանակի ամենակարևոր և ամենահրատապ հարցերը՝ փորձել է առաջադրել նաև դրանց լուծման տարբերակները: Հնարավորության սահմաններում կարողացել է գործել ի նպաստ իր ժողովրդի քաղաքական, տնտեսական, հոգևոր-բարոյական կյանքի ներդաշնակ զարգացման:

«ՀԱՅԱՍՏԱՆ» (1917–1918)

Առաջին համաշխարհային պատերազմը դեռ չավարտված՝ Ռուսաստանում շարունակվող հեղափոխական շարժումներն ահաբեկում են ցարական կառավարությանը: 1917 թվականին փետրվարյան զինված ապստամբությամբ տապալվում է ինքնակալությունը, և իշխանությունն անցնում է Պետրոգրադում կազմված ժամանակավոր կառավարության ձեռքը: Քաղաքական նոր պայմաններում առաջնահերթ է դառնում առանձին ազգերի, այդ թվում և հայերի ճակատագրի հարցը: Հայ մտավորականությանն առանձնապես մտահոգում է Ռուսաստանում և այլուր ապաստան գտած գաղթականության իրավիճակը: Տառապած ժողովրդին հուսադրելու, ոգևորելու, նրա կարող ուժերն ազգի կարիքների ու հոգսերի շուրջ համախմբելու նպատակով ազգային հերոս Անդրանիկ Օզանյանը ձեռնամուխ է լինում «Հայաստան» հայրենասիրական թերթի հրատարակմանը:

1917 թվականի ապրիլի 16-ին, Թիֆլիսում լույս է տեսնում «Հայաստան» օրաթերթը: Թերթը առաջին համարից (1917 թ. ապրիլի 16) մինչև 11-րդ համարը (1917 թ. ապրիլի 30) տպագրվում է «Խմբագրական մարմին» ստորագրությամբ: Այնուհետև խմբագրում են Վահան Թոթովենցը (1917 թ. թիվ 12–110), (1917 թ., թիվ 133–1918 թ., թիվ

25), ապա՝ Լևոն Թութունջյանը, Հովսեփ Պարսամյանը (1917 թ., թիվ 111–132): Արտոնատերերն են եղել Հակոբ Տեր-Հարությունյանը, ապա Գարեգին Լևոնյանը: Խմբագրական կազմի անդամներն էին Լ. Թութունջյանը, Գ. Լևոնյանը, Վ. Թոթովենցը, Եզնիկ և Եղիշե Քաջունի եղբայրները, Ա. Դարբինյանը, Ս. Խաչատրյանը, Կ. Մանուկյանը, Հ. Պարսամյանը, Ս. Մելիքյանը: Թերթում տպագրվել են Զ. Եսայանը, Ա. Չոպանյանը, Ատրպետը, Խ. Պոյաճյանը (Թաթուլ), Մ. Քրաջյանը (Արծիվյան), Հ. Աճեմյանը, Ա. Սաֆրաստյանը և ուրիշներ:

Նյութերի գրեթե մեծ մասը պատկանում է Վահան Թոթովենցի գրչին: Գրող, խմբագիր Վ. Թոթովենցը ծնվել է 1889 թ. Արևմտյան Հայաստանի Խարբերդի վիլայեթի Մեզիրե քաղաքում: Սկզբնական կրթությունը նա ստանում է ծննդավայրում, ապա 1909 թ. մեկնում է Ամերիկա և ընդունվում Վիսքանսըն համալսարանի պատմագրական ֆակուլտետ: Ուսումնառության երկրորդ տարեշրջանում՝ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես ամերիկյան կամավորական խմբերի հետ մեկնում է Կովկասյան ռազմաճակատ:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Թոթովենցը հարազատ ժողովրդին ծառայելու նպատակով 1922 թ. հաստատվում է հայրենիքում: 1923 թ. նա արտասահմանյան գրականություն է դասավանդում Երևանի պետական համալսարանում: Եռանդուն մասնակցություն է ունենում ժամանակի գրական, հասարակական կյանքին: Գրում է հրապարակախոսական հոդվածներ, պատմվածքներ, վեպեր:

1936 թ. Վ. Թոթովենցը անհիմն բռնադատվում է և 1938 թ. հուլիսի 18-ին գնդակահարվում: 1954 թ. նա հետմահու արդարացվում է:

«Հայաստան» օրաթերթը իր ուշադրության կենտրոնում է պահում արևմտահայությանը հուզող բոլոր կարևոր հարցերը (գաղթականության իրավիճակ, հայրենիքի վերաշինում, պատերազմ, միջկուսակցական տարաձայնություններ և այլն):

Առաջին իսկ համարում տպագրվել է զորավար Անդրանիկի ողերբիչ խոսքը՝ ուղղված իր հայրենակիցներին: Նա կոչ է անում նրանց վերադառնալ հայրենիք, վերաշինել ավերված գյուղերն ու քաղաքները: «Վերաշինութեան ծանօթութեան տակ է,- գրում է նա,- որ մենք բոլորս ալ հաւաքականօրէն պէտք է մեր ուսերը տանք և որուն մէջ ոչ ոք պէտք է ինքզինքը դուրս հաշուէ» (1917, թիվ 1):

«Հայաստան» օրաթերթի նյութերը տեղաբաշխված են հետևյալ խորագրերի տակ. Խմբագրական, Ազգային, Հայկական մամուլ, Հայրենի նամականի, Ռազմաճակատներում, Միջազգային կյանք, Գաղթականություն, Հեռագիրներ, Մեծ եղեռնի պատմությունը և այլն:

«Հայաստան» թերթը չի եղել որևէ կուսակցության կամ հոսանքի օրգանը: Այն ժխտում էր համընդհանուր գործում մեկ կուսակցության գերիշխող կամ ղեկավար դերը: Թերթը հորդորում էր երիտասարդությանը մոռանալ կուսակցական թշնամանքը, երկպառակությունը և գործել միացյալ ջանքերով հանուն հայրենիքի ազատության:

«Հայաստանի» գրեթե բոլոր համարներում բարձրացվում է ազգային միասնության գաղափարը: Թերթը, ինչպես այնտեղ է գրված, ձգտում է դառնալ այն հանգրվանը, որտեղ իրար ձեռք կսեղմեին քաղաքական դավանանք մոռացած, ազգային ազատության համար պայքարի ելած և՛ արևմտահայը, և՛ արևելահայը:

Թերթն իր առաջադրած գաղափարների իրականացման գործում մեծ հույսեր է կապում 1917 թ. մայիսի 2-ին Երևանի քաղաքային ակումբի սրահում բացված արևմտահայերի առաջին համագումարի աշխատանքների հետ: Ժամանակի և ոչ մի թերթ այնպես մանրամասն չի լուսաբանում համագումարի նիստերի ընթացքը, ինչպես «Հայաստան» թերթը: Բացման խոսքով հանդես է գալիս զորավար Անդրանիկը:

Նա այն համոզմունքն է հայտնում, թե համագումարը կոչված է ավերված հայրենիքի վերաշինման ուղղությամբ գործնական միջոցներ մշակելուն: «... Կը հաւատամ,- ասում է նա,- որ մենք պիտի կրնանք մեր ցեղին բեկորները պահել ու պաշտպանել, մեր օջախները վերականգնել և մեր ապագայի վրայ յոյս դնել միայն այն ատեն, երբ գիրար հասկնանք ու համերաշխինք» (1917, թիվ 18): Նույն միտքն է զարգացվում նաև Զապել Եսայանի ելույթում (նույն տեղում): Նա անչափ սուրբ ու նվիրական է համարում հայրենիքի վերաշինման գործը, որը կարող է իրականացվել միայն համերաշխորեն, խաղաղաբար, «առանց քէնի և ոխի»:

Թերթը հայրենիքի ազատագրման և վերաշինման հարցերում կարևորությունը տալիս էր սեփական ուժին, սակայն չէր անտեսում ռուս ժողովրդի օգնությունը: Ռուսաստանի ազատագրման, նրա

հաղթանակի հետ էր կապում հայրենիքի ազատագրումը: Մայկոպում լույս տեսած ռուսական թերթից արտատպվում է զորավար Անդրանիկի արտասանած ճառը, որտեղ ասված է. «Մենք ինքներս պէտք է շինենք մեր ապագան, մեր երջանկութիւնը՝ ռուս ժողովուրդի հետ ձեռք-ձեռքի և կողք-կողքի» (1917, թիվ 148):

«Հայաստան» թերթը հանդես է գալիս ազգերի համերաշխության, եղբայրության ջատագովի դերում: Տպագրելով «Հայ-վրացի գինուորութիւնը» հոդվածը (հեղինակ Լ. Լանիձե)՝ թերթը հայ և վրաց ժողովուրդների հարաբերությունների վատացման պատճառը դրսի ուժերի մեջ է տեսնում, «որովհետև երկու ազգերի մերձեցումը վտանգաւոր կլինէր և՛ ցարին և՛ սուլթանին: Ուստի, նրանք թշնամացրին փոքր ազգերին և ծիծաղեցին նրանց ողբերգութեան վերայ» (1917, թիվ 147):

Ազգամիջյան խժդժությունների, միջկուսակցական տարաձայնությունների պայմաններում թերթը ճիշտ տեղին և ժամանակին է համարում Հայոց Ազգային համախորհրդակցության հրավիրումը: 1917 թ. սեպտեմբերի 29-ին Թիֆլիսի Արտիստական թատրոնում բացված խորհրդակցության առթիվ թերթը տպագրում է Ն. Աղբալու (Ներսես Դշխոյան) հոդվածը, որում ասված է. «Հաղթութիւնը՝ պողպատեայ ոյժին և անսասան կամքին մէջ կը կայանայ: Ոյժ մը բարոյական և ֆիզիկական և հաւաքական կամք մը՝ որ անպայման յաջողութեան երաշխիքներ են» (1917, թիվ 121): Այս միտքը պաշտպանվում է գրեթե բոլոր հոդվածներում: Արշակ Ջոպանյանի «Հայկական շարժումները» (1917, թիվ 141), «Տրամադրութիւններ հայկական հարցի մասին» (1917, թիվ 2) և այլ հոդվածներում հույս է հայտնվում, թե հայ ժողովուրդը կարող է «իբր ազատ ու ինքնուրույն ազգ վերակենդանանալ»:

«Հայաստանը» գրում է թուրք և քուրդ հրոսակախմբերի բռնությունների ու կեղեքումների մասին («Բայազէդը և քիւրդ ավազակները», 1917, թիվ 96, «Զարդերը և փախստականները», 1917, թիվ 107, «Մանազկերտի կոտորածը», 1917, թիվ 113 և այլն):

Հայ ժողովրդի մահու և կենաց օրերին թերթը հնչեցրել է զորավար Անդրանիկի ազդեցիկ խոսքը: Նա զորահավաքի է հրավիրել հայ երիտասարդներին՝ որտեղ էլ նրանք լինեին: Կարճ ժամանակում հայրենասեր երիտասարդները հոծ խմբերով ռազմաճակատ մեկնելու

պատրաստակամությամբ համալրում են հայկական զորագնդերի շարքերը:

«Հայաստանում» է տպագրվում հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի նամակը (1917, թիվ 194) ուղղված Անդրանիկին: Նա հայտնում է հերոսին, թե հայրենիքի փրկությանն է նվիրաբերում իր չորս տղաներին և աղջիկներին: Բացի այդ նա պատրաստվում է ամեն ամիս հարյուր ռուբլի մուծել ռազմաճակատի օգնության ընդհանուր դանձարանը:

«Հայաստան» թերթի էջերն ընթերցողին միաժամանակ ծանոթացնում են հայ ժողովրդի հերոսական անցյալին («Հայերը անցեալին մէջ», 1917, թիվ 17, «Մանազկերտ գաւառը» 1917, թիվ 97 և այլն), օտարերկրյա հայասեր գործիչների կողմից հայերին տված բարձր գնահատականներին («Ինչու՞ կը սիրեմ Հայաստանը», 1917 թ., 100, 101, «Հայաստանի համար», 1917, թիվ 101 և այլն):

«Հայաստանը» ուներ նաև «Թերթոն» առանձին բաժինը, ուր տպագրվում էին գեղարվեստական գործեր, գրախոսականներ, բանասիրական ուսումնասիրություններ: Տպագրվել են Վ. Թոթովենցի բանաստեղծությունները, «Տոնոն» վեպը (1917, թիվ 127–165), Ե. Օտյանի «Մեր երեսփոխանները» (1917, թիվ 95–100), Լեռ Կամսարի «Վտանգաւոր խաղ» (1917, թիվ 145) երգիծական գործերը, Դ. Վարուժանի «Ճանապարհ խաչի» (1917, թիվ 105), Մ. Մեծարենցի «Եկուր», (1917, թիվ 115) բանաստեղծությունները:

Բանասիրական բաժնում տպագրվել են Հ. Աճեմյանի «Ն. Մառը և Անիի պեղումներն ու թանգարանները» աշխատությունը (1917, թիվ 108–119), Մ. Քրաչյանի գրախոսականը Ա.-Դօ-ի «Մեծ դեպքերը Վասպուրականում (1914–1915)» աշխատության մասին (1917, թիվ 136, 137, 142) և այլ գործեր:

«Հայաստան» թերթը ժամանակին, պատմական բարդ իրադարձությունների պայմաններում արձագանքելով հայ ժողովրդին հուզող գրեթե բոլոր խնդիրներին, կատարել է հայրենասիրական իր պարտքը, միաժամանակ ձգտել մատնանշել ազատագրման հասնելու ճիշտ միջոցներն ու ուղիները:

«ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ» (1903–1904)

«Բանբեր գրականութեան և արուեստի» հանդեսը տպագրվել է Պետերբուրգում, երկու հատորով՝ 1903 և 1904 թվականներին: Այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն իբրև մամուլի բացառիկ արժեքավոր օրգան, այլ նաև այն պատճառով, որ խմբագրվել է խոշոր պատմաբան և բանասեր Նիկողայոս Ադոնցի կողմից: Մինչ այդ խմբագրական աշխատանքը, Ադոնցն ավարտել էր Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և պատմաբանասիրական ֆակուլտետները, իսկ 1899–1900 թվականներին բյուզանդագիտության մեջ խորացել Մյունխենի, Փարիզի, Վենետիկի ու Լոնդոնի գիտական և ուսումնական հաստատություններում: Թվում է՝ նեղ մասնագիտության մեջ խորասուզված երիտասարդ գիտնականը չպետք է ժամանակ ունենար զբաղվելու նաև լրագրության հոգսաշատ գործերով: Բայց բյուզանդագետ լինելու հետ մեկտեղ Ադոնցը ճշմարիտ քաղաքացի էր և խորաթափանց հրապարակախոս: Արտասահմանից վերադառնալուց հետո նա միաժամանակ մասնագիտության բերումով աշխատում է Թիֆլիսում և Էջմիածնում, ապա, հաստատվելով Պետերբուրգում՝ ձեռնարկում գիտական-արվեստագիտական և գրական հանդեսի հրատարակության գործը:

Մինչ «Բանբեր գրականութեան և արուեստի» հանդեսի երևան գալը, հայ իրականության մեջ տպագրվել էին մի շարք գրական-գեղարվեստական պարբերականներ, բայց «Բանբերը» տարբերվում էր դրանցից իր որոշակի ծրագրով և պատմական ժամանակաշրջանի հարուցած հրատապ հարցերի ինքնատիպ լուծումներով: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդել էին Արևմտյան Հայաստանում ծավալված արյունալի կոտորածները, տեղի էին ունեցել Հայկական հարցի թատերախաղեր հիշեցնող բազմապիսի քննարկումներ, սակայն XX դ. սկիզբը ոչինչ չէր խոստանում արևմտահայերին: Սուլթան Աբդուլ Համիդն անվարան և անպատիժ շարունակում էր բնաջնջման իր քաղաքականությունը, և հայ մարդիկ, լքե-

լով հայրենի հողը, պանդխտության ճանապարհներով անցնում էին Ռուսաստան, Ամերիկա, Եվրոպա և այլուր:

Ն. Ադոնցի քաղաքական ծրագրի հիմքում ընկած էր մի հստակ գաղափար. ընթերցողին դաստիարակել ինքնակրթության, մտավոր զարգացման ճանապարհով, նրանից պատրաստել ժամանակի քաղաքակրթությանը գիտակ քաղաքացի:

«Բանբերի» երկու գրքերում տպագրվել են խմբագրի բազմաբնույթ հոդվածները, որոնցով Ադոնցը ընթերցողներին էր ներկայանում և՛ իբրև հրապարակախոս, և՛ գրականության տեսաբան, և՛ լեզվաբան, և՛ արվեստաբան, բոլոր այդ բնագավառներում դրսևորելով իր խոր գիտելիքներն ու բարձր ճաշակը: Այսպես, եթե մուտքի խոսքում նա ներկայացնում է հանդեսի նպատակը՝ արվեստի վերաբերյալ ընթերցողներին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելու մասին, գրականապես ընթերցողներին ծանոթացնում է ժամանակին Եվրոպայում ստեղծված գրական նոր ուղղություններին, ապա միանգամայն նոր խոսք է ասում լեզվական հարցերի վիճահարույց խնդիրների ոլորտներում, ինչպես և փայլում է իբրև ազգային հարցի տեսաբան-հրապարակախոս: Այս առումով առանձնապես հետաքրքիր է և առ այսօր պահպանում է իր գիտական անանց նշանակությունն Ադոնցի «Հայոց եկեղեցու 1600-ամյակի նախօրեին» ծրագրային հոդվածը: Այն աչքի է ընկնում ոչ միայն պատմագիտական նյութի խոր վերլուծությամբ, այլև կրոնի՝ որպես ազգության պատմական քաղաքակրթական ինքնահատկության բացառիկ դերի քննությամբ:

Հաշվի առնելով այն իրավիճակը, որ նոր ժամանակներում կրոնի ազդեցությունը թուլացած է հասարակության մեջ և շատերը նրա դերն անգամ անցած են համարում, Ադոնցը փորձում է վերլուծել այդ երևույթի պատմական պատճառները և հիմնավորել իր այն կարևոր թեզը, թե «ազգութիւնները և իրենց դաւանած կրօնները այնպիսի սերտութեամբ են կապուած, որ դժուար է միմեանցից զատել, դրեթէ ձուլուած են միասին և կազմում են մի անքակ միութիւն, մի գաղափար» (գիրք Ա, 1903, էջ 215): Սակայն Ադոնցը միաժամանակ այն հետևությանն է հանգում, որ յուրաքանչյուր ազգ զարգացման իր ուրույն ճանապարհն ունենալով հանդերձ, եթե ցանկանում է գոյատևել, պետք է քաղաքակրթության պատ-

մության մեջ գրի իր էջը: Այսինքն՝ ամեն մի ազգություն պետք է կարողանա բացահայտել միայն իրեն հատուկ ընդունակությունները և «ազգային անհատականութիւն» մշակել: Ազգային անհատականությունն արտահայտվում է այլևայլ միջոցներով, շարունակում է հրապարակախոսը. «Մեզանում, մեր անհատականութեան և ինքնուրոյնութեան պատկերը հանդիսանում է նշանակօրէն՝ sensu simbolico, մեր եկեղեցին: Բախտն այսպէս է սահմանել» (նույն տեղում, էջ 222):

Այնքանով, որքանով եկեղեցին իր նշանակությունը պահպանում է բոլոր քաղաքացիների համար հավասարապես, առանց հաշվի առնելու նրանց նյութական դրությունը և կրթական մակարդակը, եկեղեցուց խորթանալու ոչ մի հիմք չկա: Այս առումով՝ մեծ նշանակություն է ստանում նաև կրոնական խղճի հարցը, որը պայմանավորված է եկեղեցական արարողությունների և սովորությունների պահպանումով: Ահա թե ինչու դավանափոխությունը կրոնական խիղճ ունեցող մարդու համար հավասարազոր է համոզմունքը փոխելուն և դավաճանության:

Երկրորդ հոդվածը, որ դարավերջի հայ հրապարակախոսական մտքի լավագույն արտահայտություններից կարելի է համարել, պատկանում է Զմյուռնիայի հոգևոր վիճակի առաջնորդ Մելքիսեդեկ եպ. Մուրատյանի գրչին: Այն թեև գրված էր մեկևկես տասնամյակ առաջ, նամակի ձևով, բայց բանավիճային մարտական հոդվածի կչիռ ուներ և պատկանում էր այն վավերագրերի թվին, որոնց թարմությունը չի խամրում ժամանակի հարվածներից: Աղոնցին, հարկավ, կաշառել էին նամակագրի նվիրվածությունը Հայոց Առաքելական եկեղեցու ավանդույթներին, նրա մտքի տրամաբանական ճկունությունը և բարձրաստիճան հայ հոգևորականի բարեկիրթ ոճն ու արժանապատիվ պահվածքը:

Ն. Ադոնցի և Մ. Մուրատյանի հրապարակախոսական հոդվածները, անեք, շարունակություն էին դարեր ի վեր հայոց մեծերի մղած պայքարի՝ հանուն հայոց եկեղեցու դավանության անաղարտության և ինքնուրույնության պահպանման: Հրապարակախոսական այդ հուշարձաններն այսօր իսկ պահպանում են իրենց թարմությունը և հարցադրման հրատապությունը:

Նպատակային ծրագրով է կազմված «Բանբերի» գեղարվեստական գրականության բաժինը: Այստեղ թեև զետեղվել են արևելահայ և արևմտահայ հատվածների արձակը և պոեզիան, բայց, այնուամենայնիվ, չի կարելի չնկատել խմբագրի առանձնահատուկ ուշադրությունն արևմտահայ գրականության հանդեպ: Մոտ անցյալի արհավիրքների թելադրանքով խմբագրությունը, ասես, ի մի է բերում հոգևոր այն արժեքների հանրագումարը, որը ստեղծվել էր արևմտահայ իրականության մեջ: Դա և՛ հարգանքի տուրք էր, տրված եղբայրակից արվեստագետների վաստակին, և՛ միաժամանակ այդ վաստակն արժանի ճանաչման հասցնելու ազնիվ նախաձեռնություն: Երիտասարդ խմբագրի նրբատեսությունն աներկբայորեն վկայում է նաև նրա քաղաքացիական արիության մասին:

Արևմտահայ գրականությունից «Բանբերի» էջերում տպագրվել են Վ. Թեքեյանի «Հնչեակներ» շարքի 8 բանաստեղծությունները, Ա. Յարճանյանի (Սիամանթո) «Հոգեւարքին ջահերը» շարքի 7 բանաստեղծությունները (հետագայում վերանվանված «Հոգեւարքի և յույսի ջահեր»), Միք. Կյուրճյանի «Վայրկեաններ ու վանկեր» շարքի 7 բանաստեղծությունները, Վ. Մալեզյանի և Վ. Տիրանյանի մեկական բանաստեղծություն: Արևմտահայ արձակագիրներից տպագրվել են Լ. Շանթի «Եսի մարդը» պիեսը, Առանձարի «Տասը տարի ետքը», Ե. Օտյանի «Համբարձում աղան», Ռ. Զարդարյանի «Սև հաւը կանչեց» պատմվածքները և Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակն ու նրա «Արեւմտեան հայոց արդի գրականութիւնը» գրականագիտական ուսումնասիրությունը:

Արևելահայ պոեզիան ներկայացնում են Հովհ. Թումանյանը («Պանդուխտ եմ, քույրիկ»), Ս. Բաբիյանցը («Մայիսեան գիշերին»), Լ. Աթաբեկյանը (XXX), Ա. Ն.-ը («Հալածուած ուրուականներ»), Ավ. Իսահակյանը («Ինչ ես գազազում», «Մենակ մանկութեան օրերն են անույշ»), Հովհ. Հովհաննիսյանը («Լուսաւորչի կանթեղը», «Դարեր անցուցինք») և այլ գրողներ:

Արևելահայ արձակից «Բանբերի» երկու գրքերում լույս են տեսել միայն Վրթ. Փափազյանի «Դատավոր» և «Արդար, թէ մեղաւոր», Ավ. Ահարոնյանի «Մահը» պատմվածքները: Թարգմանական մի քանի պատկերները, որ չնչին տեղ են գրավում հանդեսի էջերում, բավականաչափ համեստ են իրենց արժանիքների առումով:

Այսպես, հայ գրականությունը «Բանբերի» էջերում հիմնականում ներկայացնում են արևմտահայ գրողները: Այդ շարքի գործերից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լ. Շանթի «Եսի մարդը» դրաման, գրված 1901 թ.:

«Բանբերի» առաջին գրքի արձակի բաժնում Ադոնցն առաջինը զետեղել է Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակը: Հայտնի է, որ 1890 թ. Գում-Գափուի ցույցից հետո ծայր են առնում ձերբակալությունները, մտավորականության հետապնդումը, խստանում են նախնական գրաքննության կանոնները: Այս ամենի հենքի վրա «Կարմիր ժամուցը» երևում է իբրև հայության առաջավոր խավերին կյանքի կոչելու, գործելու և պայքարելու ազդանշան: Քանի որ 1900-ական թվականներին նույնպես իրադրությունը Թուրքիայում մնում էր աղետալի, Ադոնցի ուշադրությունն այդ պատմվածքի նկատմամբ պետք է դիտել իբրև ժամանակի հրամայական պահանջին պատասխանելու հրապարակախոսական ելույթ:

Հանդեսի նույն համարում զետեղելով Ռ. Զարդարյանի «Սև հավը կանչեց» պատմվածքը՝ Ադոնցը դարձյալ վերհանում է արևմտահայ ժողովրդի գյուղական հատվածի տնտեսական ողբերգական կացության խնդիրը:

Առանձարի «Տասը տարի ետքը» պատմվածքը նվիրված է հրապարակախոս Լ. Սարգսյանին: Պատմվածքում քննարկվում է հայ խմբագրի և գրողի, հայ մտավորականների ճակատագրի խնդիրը: Առանց նյութական հատուցման, առանց կայուն աշխատավարձի ստեղծագործելու անհնարինությունը կործանում էր տաղանդավոր գործիչներին:

Ե. Օտյանի «Համբարձում աղան» նովելը հայ երգիծական գրականության լավագույն օրինակներից էր, որը մեծ թարմություն է մտցնում հանդեսի գրական բաժնում:

Վրթ. Փափազյանի «Դատաւոր» պատմվածքը մարդկային առաքինությունների, բարոյական նկարագրի և ազնվության կորստի մասին է:

«Մահը» պատմվածքի հեղինակ Ավ. Ահարոնյանը նկարագրում է տաղանդավոր մի երիտասարդի մահը՝ համաճարակի օրերին: Սրտաճմլիկ պատկերներով Ահարոնյանը նկարագրում է հիվանդի ծեր ու միայնակ ծնողների ծանր տագնապներն ու անփարատելի վիշտը:

Ինչպե՞ս էր կարողացել Ադոնցը ընտրել արևմտահայ գրականության բաժնի հեղինակներին: Ադոնցը Պետերբուրգից հատուկ նամակով անձամբ խնդրել է Ա. Արփիարյանին՝ օգնել իր հանդեսի հրատարակությանը թե՛ անձնապես և թե՛ այլ գրողների մասնակցությամբ: Արփիարյանը, որն այդ օրերին ապրում և լրագրական գործունեությամբ էր զբաղված Փարիզում, մեծ սիրով ընդառաջում է Ադոնցի խնդրանքին: Նա ուղարկում է իր բարեկամ Օտյանի «Համբարձում աղան» սքանչելի պատմվածքը, իր «Կարմիր ժամուց» վիպակը և «Արևմտյան հայոց արդի գրականությունը» ուսումնասիրությունը: Պետք է ենթադրել, որ դարձյալ Արփիարյանի շնորհիվ են Ադոնցին ուղարկվել մի շարք գրողների ստեղծագործությունները, այդ թվում նաև Սիամանթոյի բանաստեղծությունները: Կարծում ենք Ա. Արփիարյանի համբավն այնքան էր տարածված, որ «Բանբերի» խմբագիրը ձեռք է մեկնել նրան՝ իբրև հուսալի օգնականի:

Ն. Ադոնցը «Բանբերի» առաջին գրքի արձակի բաժնում զետեղում է Արփիարյանի «Կարմիր ժամուց» պատմվածքը, իսկ առաջին և երկրորդ գրքերում, շարունակաբար՝ «Արևմտեան հայոց արդի գրականութիւնը» ուսումնասիրությունը: Բացառիկ կարևորություն ունեցող այդ աշխատությունը ներկայացնում է արևմտահայ գրականության վերընթաց շարժումը 1879–1895 թթ. և 1896-ից հետո ընկած պատմական ժամանակահատվածում: Ինչո՞վ էր պայմանավորված այդ բաժանումը: Հեղինակը ելակետ է ընդունում այն իրողությունը, որ ռուս-թուրքական պատերազմը մեծապես փոխում է հայության «համընթաց կյանքը»: Եթե մինչ այդ արևմտահայերի իդեալական ապագան պատկերվում էր մշուշապատ հեռուներում, պատերազմը փոխում է իրերի ընթացքը, հայերի մտավոր կյանքը մտնում է մի նոր շրջան, որի երկու փուլերի համար էլ հեղինակը բնութագրական է համարում այն, որ «գրականութիւնը ցեղին վերածնունդի երկունքին սատարեց, միտքերու և սիրտերու վրայ՝ գերազդեցիկ իշխողութեամբ»:

Գրականությունը, սակայն, 1880-ին մտցված նախնական գրաքննության հարուցած դժվարությունների պատճառով հիմնականում ճանապարհ է հարթում մամուլի միջոցով: Արփիարյանը հանգամանորեն ներկայացնում է արևմտահայ մամուլի դերը գրա-

կանության և արևմտահայ մշակույթի բազմազան ճյուղերի զարգացման և ազգայնության ոգին պահպանելու գործում:

Արփիարյանի հոդվածն ավարտվում է պատմական նոր փուլի, վերահաս ռեակցիայի սկզբնավորման հիշատակությամբ: Այն աչքի է ընկնում հեղինակային իրազեկությամբ և ժամանակի գրական գործիչների վաստակի մեկնաբանության ճշմարտացիությամբ:

Արևմտահայ պոեզիային նվիրված բաժնում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Սիամանթոյի «Հոգեվարքին ջահերը» բանաստեղծությունների շարքը, որն առանձին գրքով հրատարակվել է միայն 1907 թ.: Այդ շարքի բանաստեղծությունների տպագրությունն առանձնահատուկ արժեք է հաղորդում Ադոնցի հանդեսին: Բանաստեղծությունները գրված էին արևմտահայ ժողովրդի մոտ անցյալում ապրած ողբերգության թարմ տպավորությունների ներքո: Սիամանթոյի բանաստեղծությունները ցնցում են ազգային վիշտը խորապես վերապրած բանաստեղծի հոգեկան տագնապների ուժգնությամբ: Դրանք ոչ միայն արտացոլում են սրահար ու բնավեր ժողովրդի կրած անլուր տառապանքները, այլև գերընական կանխատեսությամբ մատնանշում մռայլ գալիքի հեռանկարը:

Ժամանակի գրականագիտական մտքի նվաճումներից էր Ն. Աղբալյանի «Երգ ու վերքից յետոյ» հոդվածը՝ նվիրված Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների գրքի 1903 թ. նոր հրատարակությանը: Հոդվածագիրը, մեկ առ մեկ ներկայացնելով գրքում զետեղված նոր բանաստեղծությունները, արձանագրում է, որ Իսահակյանը հասունացել, դուրս է եկել իր երգ ու վերքերի վշտերից դեպի մի նոր ու լուսաշող կյանք:

Ադոնցը մեծ ուշադրություն է նվիրել նաև հայ գրողների գրական ժառանգության ձեռքբերման և դրանց հրատարակման հարցին: Այսպես, Կ. Եզյանից ստանալով Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի 1857–1876 թթ. 29 նամակները «Բանբերի» Ա գրքում տպագրել է կյանքի վերջին շրջանում, 1868-ից հետո Նազարյանի գրած նամակները, որոնք, ըստ Ադոնցի՝ նոր լույս են սփռում Ս. Նազարյանի վերջին տարիների կյանքի և գործունեության վրա:

Ադոնցը հայ գրականության պատմությունը հարստացրել է եւս մեկ ձեռագիր հուշարձանի տպագրությամբ: Բ գրքում նա հրատա-

րակել է Գ. Պատկանյանի «Կայսակ» ստեղծագործությունը, որը ժամանակին վերագրվել է Մ. Նալբանդյանին:

«Բանբեր գրականութեան և արուեստի» հանդեսը բացվում է Ն. Ադոնցի հակիրճ զրույցով՝ նվիրված արվեստի դերին և նշանակությանը: Նկարը նա համարում է ոգեշունչ ստեղծագործություն, որը համազոր գործոն է կենդանի խոսքի և «մշտաբարբառ գրի» գրականության (գիրք Ա, էջ VII):

Իր հանդեսի երկու գրքերում Ադոնցը զետեղել է արվեստի աշխարհի մի շարք հայտնի նկարիչների և քանդակագործների աշխատանքների վերատպությունները: Նրանցից են՝ Է. Կարիերը, Գ. Ռոսետտին, Օ. Ռոդենը, Ֆ. Շտուկը, Լ. Բաքստը, Ա. Ագաշը, Պ. Ռիլթը, Լ. Բալեստրիերին և այլք: Հայ նկարիչներից ներկայացվել են Է. Շահինի, Է. Մահտեսյանի, Փ. Թերլեմեզյանի, Ա. Շապանյանի, Վ. Սուրենյանցի, Ե. Թադևոսյանի, Հ. Կոջոյանի, Մ. Ալաջալյանի, Ա. Բաբայանի նկարների վերատպությունները:

«ՏԱՐԱԶ» (1890–1919)

Ժամանակի լուսամիտ գործիչ, «Աղբիւր» արևելահայ մանկապատանեկան առաջին ամսագրի խմբագիր Տիգրան Նազարյանը Պետերբուրգի մամուլի գործերի գլխավոր վարչությունից 1889 թ. մայիսի 18-ի գրությամբ, իր դիմումի համաձայն, իրավունք է ստացել «Աղբիւրին» կից հրատարակելու «Տարազ» հավելվածը[1]: Մինչև 1900 թ. պարբերականի ճակատին գրված են եղել «Աղբիւրի յաւելուած» բառերը: Սակայն իրականում «Տարազը» հրատարակվել է որպես առանձին պարբերական՝ ունենալով «գեղարուեստական, գրական, գիտական,հասարակական պատկերազարդ շաբաթաթերթ» ենթավերնագիրը: «Տարազին» կից տարին մեկ անգամ (12-րդ համարի հետ) լույս են տեսել նաև «Մոծակ», «Պարիզի մոդաներ», «Իլյուստրասիոն», «Հիգիենա», «Առողջապահ», «Գեղափնջիկ», «Թատրոն և երաժշտութիւն» հավելվածները:

[1] Տե՛ս Российский государственный исторический архив (Санкт-Петербург), ф. 776, оп. 12 д. 78, էջ 2–3.

Երեսուն տարի շարունակ (1890–1919) պարբերականի խմբագիր-հրատարակիչն է եղել Տ. Նազարյանը[1]: Նա հանդես է եկել հրապարակախոսական հոդվածներով, ճանապարհորդական նոթերով, կարճ պատմվածքներով՝ Ռադամես, Արցախեցի, Tigo ծածկանուններով:

«Տարազին» աշխատակցել են ժամանակի հայ առաջադեմ գրողներ, մանկավարժներ, լեզվաբաններ, հնագետներ, թատերագետներ, երաժշտագետներ, նկարիչներ ու ճարտարապետներ, որոնք մեծ դեր են խաղացել ազգային մշակույթի զարգացման գործում: «Տարազը» թղթակիցներ է ունեցել և օտար ափերում: Հոդվածներով հանդես են եկել Փարիզից՝ ֆրանսիական թերթի թղթակից Մարի Սվաճյանը, Լոնդոնից՝ ինժեներ Ալֆը, Ժնևից՝ Ս. Մ.-ն, Թուրքիայից՝ բժիշկ Ե. Մ.-ն և ուրիշներ:

Պարբերականը լույս է տեսել հարուստ և բազմաբովանդակ ծրագրով, ընդգրկելով Գեղարուեստ և գիտութիւն, Պատմական և ժամանակակից վէպեր, Բանաստեղծութիւն, Քննադատութիւն և կենսագրութիւն, Կար ու ձև, Ճանապարհ և կենսագրութիւն, Երաժշտութիւն և թատրոն, Ժամանակագրական լուրեր և տեղեկութիւններ, Ֆելիետոն, Ծաղր, առակ և կատակ, Խորհուրդներ, Այլ և այլք և այլ բաժինները:

«Տարազը» եղել է համաժողովրդական, ազատասիրական պարբերական, պաշտպանել է այն, ինչը նոր ու օգտակար էր գիտության, գրականության և արվեստի բնագավառներում, ընդհանրապես՝ մշակութային կյանքում:

Թերթի նպատակներից էր հայ ժողովրդին հաղորդակից դարձնել սեփական և այլ ժողովուրդների մշակութային կյանքին, ծանոթացնել համաշխարհային գրականության և արվեստի նորություններին, նրան կրթել ու դաստիարակել բարության, առաքինության, արժանապատվության, մարդասիրության, հայրենասիրության զգացումներով՝ նրա միջից «արմատախիլ անելով տգեղ ու չար որոմը» (1890, թիվ 10):

Պարզելով «Տարազի» նպատակը և ուղղությունը՝ խմբագիրը շեշտում է, որ «միայն անխոնջ, տոկուն աշխատասիրութիւնը, ճշմա-

---

[1] Խմբագրի բացակայության ժամանակ պարբերականը խմբագրել են Գ. Տեր-Գրիգորյանը (1890, № 11–12), Գ. Միրզայանը, Ստ. Լիսիցյանը (1892, № 41–45), Դ. Լիսիցյանը (1892, № 46) և Ավ. Արասխանյանը (1898, № 34–37):

լիտ զարգացումն ու ինքնաճանաչութիւնն են, որ մարդուս, ընտանիքին, ժողովրդին և ազգին կբերեն անդորրութիւն ու բարիք» (1898, թիվ 1):

Տիգրան Նազարյանն իր պարբերականի էջերում մեծ տեղ է տվել ռեալիզմի գեղագիտական սկզբունքների (ժողովրդայնություն, ձևի և բովանդակության միասնություն, կյանքի ճշմարտացի պատկերում, ազգային ոգու պահպանում, հասարակական բարձր ու վեհ գաղափարների ջատագովում և այլն) լուսաբանմանը: Շատերն են իրենց գրական մկրտությունն ստացել «Տարազի» էջերում: Նազարյանն է առաջին անգամ տպագրել Հովհ. Թումանյանի («Արև և Լուսին»), Հ. Հովհաննիսյանի («Ջինջ երկնքից ոսկի արև...»), Ավ. Իսահակյանի («Ծաղիկ էի նորաբողբոջ») և մյուսների գրական թոթովանքները: Հովհ. Թումանյանը 1919 թ. շնորհակալությամբ նշել է. «Դեռ Մոսկվայի իմ առաջին ժողովածուն դուրս չեկած՝ առաջին անգամ իմ բանաստեղծութիւնները տպուել են «Աղբիւրում», երբ ես դեռ անհայտ մի պատանի էի, պ. Տիգրան Նազարյանը որոնում էր ինձ և ինձպեսներին և մեր երկերը տպագրելով «Աղբիւրում», խրախուսում էր մեզ» (1919, թիվ 12):

«Տարազում» տպագրվել են Րաֆֆին, Շիրվանզադեն, Մուրացանը, Նար-Դոսը, Վրթ. Փափազյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Ծ. Կուրղինյանը, Ատրպետը, Լ. Շանթը, Ավ. Ահարոնյանը, Լ. Մանվելյանը և շատ ուրիշներ: Այսինքն, տպագրվել են այն գրողները, որոնց ստեղծագործությունները կազմել են հայ դասական գրականության արժեքները և որոնցից բարոյական դասեր է քաղել և այսօր էլ շարունակում է քաղել հայ ժողովուրդը:

«Տարազի» գրական էջերը աշխատավոր մարդու, հայ գաղթականի ծանր, թշվառ դժվարին կյանքի, հակասություններով լի աշխարհի, սոցիալական ու բարոյական ախտերի գեղարվեստական ամբողջական նկարագրություններ են: Դրանցում բռնության ու անարդարության դեմ արտահայտված ըմբոստ տրամադրությունները չեն վրիպել գրաքննության աչքից: Կովկասի գրաքննական կոմիտեն բռնագրավել ու արգելել է «Տարազում» տպագրվելիք՝ Րաֆֆու, Ղ. Աղայանի, Հ. Հովհաննիսյանի, Ալ. Ծատուրյանի, Ավ. Իսահակյանի, Շիրվանզադեի, Վրթ. Փափազյանի, Հ. Հակոբյանի, Ք. Թադևոսյանի և ուրիշների գործերը: Իսկ «Մռավյան» ստորագրութ-

յամբ «Կույր արծուի կոչը» (տպագրված 1904 թ. № 19-ում) այլաբանական պատկերի համար խմբագիրը ենթարկվել է վարչական տույժի, և «Տարազը» դադարեցվել է չորս ամսով[1]: Գրաքննության հետապնդումների մասին Տ. Նազարյանը գրել է. «Թերթել պէտք է Թիֆլիսի գրաքննական ատեանի և Պետերբուրգի մամուլի գլխավոր վարչութեան արխիւները, որպէսզի ռելիեֆ լինեն տասնեակ տարիներ մեր քաշած դաժան, համառ պայքարն ու վիշտը»[2]:

«Տարազը» մեծ հետաքրքրություն է հանդես բերել նաև գրականության և արվեստի տեսական հարցերի նկատմամբ: Բազմաթիվ էջեր նվիրվել են ռեալիզմի գեղագիտական չափանիշների լուսաբանմանը: Ինքը՝ Տ. Նազարյանը (Ռադամես) իր հոդվածների շարքում փորձել է անդրադառնալ ռեալիզմի սկզբունքներին: Ըստ նրա՝ գեղագետ կարող է լինել նա, «ով կեանքից սոսկ պատճէններ չէ վերցնում և ֆոտոգրաֆիական ճշտութեամբ արտահայտում, այլ նա, ով այդ պատճէններին տալիս է կեանք, ներշնչում է հոգի և լուսաբանում է» (1901, թիվ 47): Տ. Նազարյանի համոզմամբ՝ արվեստը պետք է ծառայի կյանքում գեղեցիկի և ճշմարտության հաստատմանը:

Գեղագիտական հարցերի քննությամբ շաբաթաթերթում հանդես են եկել Շիրվանզադեն, Ստ. Լիսիցյանը, Զ. Տեր-Գրիգորյանը, Ս. Թառայանը և ուրիշներ: Շիրվանզադեն «Գրականական ակնարկներ» հոդվածում անդրադառնալով գրողի և հասարակության փոխադարձ ազդեցությունների հարցին՝ ընթերցողի ուշադրությունը հրավիրել է գրականության գեղագիտական կողմի վրա: Ա. Ջոպանյանի «Անահիտ» ամսագրի մասին Շիրվանզադեի գրախոսականում նշվում է, որ Ա. Ջոպանյանը զերծ է կուսակցական կուրությունից, ունի գրական լայնախոհություն և դավանում է ռեալիստական ուղղությանը (1889, թիվ 4):

«Տարազը» գրականության և արվեստի հարցերը քննարկելիս հաճախ դիմել է գեղագիտական մտքի ռուս առաջադեմ ներկայացուցիչներ Բելինսկու, Չերնիշևսկու և մյուսների հայացքներին: Ա. Զուրաբյանի «Բելինսկու աշխարհայեցողութիւնը» ծավալուն հոդվածաշարում (1901, թիվ 18, թիվ 19, թիվ 24) բարձր են գնահատվել

---

[1] Տե՛ս Վրաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. 938:
[2] Տե՛ս Տ. Նազարյան, Խոսք և գործ, Թիֆլիս, 1914, էջ 5:

Բելինսկու փիլիսոփայական ու գեղագիտական հայացքները, արժեքավորվել է նրա մեծ դերը ռեալիստական արվեստի և գրականության տեսական հարցերի մշակման գործում:

«Տարազի» դերը կարևոր է եղել նաև ռուս և համաշխարհային գրականության պրոպագանդման գործում: Պարբերականի գրական էջերը հարստացրել են ռուս ազգային գրականության ներկայացուցիչներ Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը, Տուրգենևը, Տոլստոյը, Սալտիկով-Շչեդրինը, Գորկին և ուրիշներ: Ռուս գրողների ստեղծագործությունների մասին գրախոսականներով հանդես են եկել հայ առաջադեմ մտածողներ Խ. Սամվելյանը, Մ. Բերբերյանը, Ա. Խումարյանը: «Տարազի» 1909 թ. 9-րդ համարը ամբողջովին նվիրվել է Լև Տոլստոյի հոբելյանին:

«Տարազում» տպագրվել են Շեքսպիրի, Շիլլերի, Զուդերմանի, Հայնեի, Զոլայի, Մոպասանի, Բոդլերի, Տվենի, Սենկևիչի և մյուսների ստեղծագործությունները: Վրաց գրականությունից տպագրվել են Ճավճավաձեի, Նինոշվիլու, Ծերեթելու, Բարաթաշվիլու և ուրիշների գործերը: «Վրաց կյանքից» խորագիրը կրող բաժնում մանրամասն տեղեկություններ են հաղորդվել վրաց թատերական և երաժշտական կյանքի նորություններից:

«Տարազը» ընդհանրապես թե՛ թարգմանական, թե՛ ինքնուրույն ստեղծագործություններով ոճի և բովանդակության թարմություն է մտցրել հայ գրական աշխարհում:

Գեղագիտական այն պահանջները, որ պարբերականը ներկայացրել է գրականությանը, առաջադրել է նաև թատրոնին, երաժշտությանը, նկարչությանը, կերպարվեստին, քանդակագործությանը:

«Տարազը» մեծ հետաքրքրություն է ցուցաբերել նաև հայ մամուլի և հրապարակախոսության հանդեպ, բարձր է գնահատել «Հյուսիսափայլ», «Մշակ», «Մուրճ», «Անահիտ» և այլ պարբերականները: Գր. Արծրունու գործունեության 25-ամյակի առթիվ տպագրված խմբագրականում ասված է. ««Մշակը» հայ ռամիկ դասակարգի և զարգացած լուսամիտ երիտասարդութեան փափագած և սիրած օրգանն է» (1890, թիվ 5): Հայ մտքի մեծ մշակ Ավ. Արասխանյանին Ատրպետը համարել է «Այն մարդը, որն իր «Մուրճով» հայ մամուլը եւրոպականի աստիճանին հասցրեց» (1890, թիվ 12):

«Տարազի» ուշադրությունից չեն վրիպել նաև կրթության և դաստիարակության հարցերը: «Դպրոց և կրթութիւն» խորագրի տակ տպագրվել են ժամանակի անվանի մանկավարժներ Հ. Տեր-Միրաքյանի, Իս. Հարությունյանի, Ս. Բեկնազարյանի, Ստ. Լիսիցյանի, Ղ. Աղայանի և մյուսների մանկավարժության հարցերին նվիրված հոդվածները: Քննարկվել են ժողովրդական դպրոցների կազմակերպման, ֆիզիկական ու առողջապահական դաստիարակության, կրթության առաջադեմ մեթոդների ներդրման և այլ խնդիրներ: Դաստիարակությունը համարելով գիտություն՝ Ս. Բեկնազարյանը իր «Մանկավարժական խորհրդածութիւնք» խորագրի տակ տպագրած հոդվածներում փորձել է մեկնաբանել այդ գիտության հիմքերն ու բաղկացուցիչ մասերը:

«Տարազը» անդրադարձել է նաև կնոջ դերին և իրավական դրությանը:

Պարբերականում լուսաբանվել են նաև հայ գաղթօջախներում տեղի ունեցած իրադարձությունները:

«Տարազի» կարևոր ծառայություններից մեկն էլ այն է, որ լինելով պատկերազարդ՝ առաջինն է հայ ընթերցողին ծանոթացրել ազգային ու համաշխարհային նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների ստեղծած արվեստի նմուշներին: Այս տեսակետից հայ պարբերականների շարքում «Տարազը» անգերազանցելի է: Իսկ օգտագործած տառատեսակներով, զարդանախշերով, ծաղկատառերով, գլխատառերով ու տպավորիչ ձևավորումով անցյալի հայ պարբերականների շարքում կարելի է ասել՝ իր մրցակիցը չի ունեցել:

«ԹԱՏՐՈՆ» (1893–1905)

Հայ անցյալի պարբերականներում թեև սակավ թվով, բայց տպագրվել են թատերական փոքրածավալ գործեր, ինչպես նաև թատերական արվեստին նվիրված տեսական հոդվածներ: Սակայն դրանք չեն բավարարել այն պահանջները, որոնք 15-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին դրված են եղել թատրոնի և ընդհանրապես դրամատիկական ստեղծագործությունների առջև: Հայ ժողովրդի ապրած քաղաքական, հասարակական կյանքը մտավորականնե-

րից պահանջել է լուրջ մոտեցում թատերական արվեստի հարցերին: Հասարակության մեջ թատրոնի նկատմամբ սեր արթնացնելու, թատերական կյանքն աշխուժացնելու, ազգային բեմարվեստը զարգացնելու համար զգացվել է մասնագիտական պարբերականի կարիքը: Նման պարբերականի ստեղծման գործին առաջինը ձեռնամուխ է եղել թատերագետ, թարգմանիչ Ալեքսանդր Թարխանյանը: Նա 1893 թ. Թիֆլիսում լույս է ընծայել «Թատրոն» գրական և թատերական պատկերազարդ հանդեսը: Այն նախատեսված է եղել լույս ընծայել ամիսը մեկ անգամ, սակայն նյութական սուղ միջոցները ստիպել են խմբագրին պարբերականը հրատարակել տարին մեկ անգամ՝ այն էլ ընդմիջումներով (1893–1905 թթ. լույս է տեսել ընդամենը տասը համար):

Հայ թատերական մասնագիտական առաջին ամսագրին աշխատակցել են Գ. Սունդուկյանը, Շիրվանզադեն, Մուրացանը, Պ. Պռոշյանը, Գ. Ջմշկյանը, Ս. Հախումյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Բարխուդարյանը և ուրիշներ:

«Թատրոնի» հիմնական խնդիրներն էին՝ թատերական արվեստը ծառայեցնել աշխատավոր ժողովրդի հոգևոր պահանջներին, տարածել հայ և այլ ժողովուրդների դասական գրողների դրամատիկական ստեղծագործությունները, տեղ տալ սոցիալ-կենցաղային թեմաներով գրված պիեսներին, հարստացնել ազգային թատրոնի խաղացանկը, նպաստել հայ դրամատուրգիայի զարգացմանը, հայ հասարակության մեջ սեր և հետաքրքրություն արթնացնել թատրոնի նկատմամբ:

Ամսագրի առաջին մասը զբաղեցրել են ինքնուրույն և թարգմանական պիեսները, ինչպես նաև թատերական արվեստին ու թատրոնի պատմությանը վերաբերող տեսական հոդվածները: «Թատրոնական տեսութիւն» խորագիրը կրող բաժնում զետեղվել են գրախոսություններ, «Ռեժիսորական» բաժնում՝ դերասանական խաղի, դիմախաղի, դիմազարդի վերաբերյալ նյութեր: «Թատրոնական քրոնիկոն» բաժնում պարբերաբար տեղեկություններ են հաղորդվել Անդրկովկասում, Ռուսաստանում և արևմտաեվրոպական երկրներում բեմադրված պիեսների մասին: Յուրաքանչյուր համարին կից տպագրվել է տվյալ թատերաշրջանում հայ բեմում ներկայացված դրամաների լրիվ ցանկը:

«Թատրոնում» տպագրված ինքնուրույն՝ ոչ թարգմանական պիեսները մեծ թիվ չեն կազմում: Տեղ են տրվել Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Մուրացանի, Շիրվանզադեի դրամատիկական ստեղծագործություններին: Ուշագրավն այն է, որ միաժամանակ նշվել է տվյալ հեղինակի պարբերականում տպագրված պիեսի առաջին բեմադրության տեղը, տարեթիվը ու ամսաթիվը: Ինքնուրույն պիեսների սակավությունը բացատրվել է ազգային դրամատուրգիայի աղքատությամբ: Այսպես, ամսագիրը գրում է. «Հայ թատրոնի ներկայ վիճակը մխիթարական չէ: Թատրոնական հայ հասարակութիւն չկայ, դրամատիկական հարուստ գրականութիւն սուող կրիտիկան քնած է» (1893 թիվ 1): Այս տողերի հեղինակ Ս. Հախումյանը, կարևորելով քննադատության դերը հայ ազգային թատրոնի և դրամատուրգիայի զարգացման գործում, անդրադարձել է նաև այն խնդիրներին, որոնց իրականացմանը կոչված էին գրականությունն ու թատրոնը: Ըստ նրա՝ գրականությունն ու թատրոնը պետք է ներկայացնեն կյանքն ու իրականությունը այնպես, ինչպես որ կան:

«Թատրոնի» էջերում բարձրացվել են հայ թատերական արվեստի ռեալիստական ուղղության, հայ դրամատուրգիայի վերակառուցման հարցերը: Հետևելով քննադատական դիտողություններին՝ պարբերականն իր հերթին ձգտել է օգտակար լինել հայ ռեալիստական արվեստի զարգացմանը: Այդ խսկ նպատակով ոգևորել և խրախուսել է այն հեղինակներին, որոնք փորձել են հայ ժողովրդի կյանքը, կենցաղը, առօրյա հոգսերն ու հետաքրքրությունները ճշմարտացիորեն ներկայացնող պիեսներ գրել հայ բեմի համար: «Թատրոնը» բազմիցս անդրադարձել է Է. Տեր-Գրիգորյանի ստեղծագործությանը: Նա Սունդուկյանից հետո առաջիններից մեկն էր, որ հանդես եկել կենցաղային պիեսներով: Նրա դրամատիկական գործերը բարձր են գնահատվել, և առաջարկվել է դրանք ներկայացնել հանդիսականների ավելի լայն շրջանակներում: Նրա «Բարեգործի դիմակի տակ» պիեսը, որտեղ «հանդես են բերված խեղճերի հուսահատ աղաղակն ու կռիվը հասարակական ցեցերի դէմ», առաջարկվել է ներկայացնել Թիֆլիսի նման մեծ քաղաքների թատրոններում:

«Թատրոնի» էջերում պիեսների պակասը լրացվել է արևմտահայկական դրամատուրգների ստեղծագործություններով: Ընտր-

վել և թարգմանվել են Մոլիերի, Շեքսպիրի, Շիլլերի, Զուդերմանի, Իբսենի և մյուսների դրամաները:

«Թատրոնում» արժեքավոր են և ուսանելի համաշխարհային ճանաչում գտած դրամատուրգների ու աշխարհի լավագույն թատրոնների մասին տպագրված տեսական հոդվածները: Շեքսպիրի դրամաների բարձր արվեստին հայ ընթերցողին ծանոթացնելու նպատակով տպագրվել է անգլիացի տեսաբան Ռիչարդ Գրանդ Ուայդի ուսումնասիրությունը (1899, թիվ 1) գրված «Մակբեթ» դրամայի մասին (թարգմանիչ Հովհ. Մասեհյան):

Արևմտաեվրոպական դրամատուրգների ստեղծագործություններր թարգմանվել են բնագրերից: Թարգմանությունները կատարել են Գ. Բարխուդարյանը, Ս. Հախումյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Բաբայանը:

«Թատրոնը» հայ ընթերցողին ծանոթացրել է վերածնության շրջանի հեղինակներին ու նրանց ստեղծագործություններին: Մ. Բերբերյանի «Մի էջ վերածնութեան շրջանից» գրական ծավալուն ակնարկում տրված են Դանթեի, Պետրարկայի, Բոկաչչոյի կյանքի և գործունեության նկարագրերը: Հեղինակը արժեքավորել է Բոկաչչոյի «Դեկամերոնը»՝ որպես ռեալիստական արձակի առաջին գործ: Հայ ընթերցողի համար ուսանելի համարելով այդ գործը՝ առաջարկվել է այն թարգմանել հայերեն:

«Թատրոնի» էջերը զբաղեցրել են նաև հայ թատրոնի պատմությանը նվիրված հոդվածները (Պ. Պռոշյան, «Հայոց թատերական խումբը Բաքւում» և այլն): Պարբերականը անդրադարձել է նաև վրաց թատրոնի պատմությանը (Վ. Գունիա, «Վրաց թատրոնի մասին», Գ. Միրաղյան, «Վրաց թատրոնը» և այլն): Իսկ «Թատրոնական քրոնիկոն» խորագիրը կրող բաժնում տեղեկություններ են հաղորդվել վրաց թատերախմբերի հյուրախաղերի մասին:

«Թատրոն» մասնագիտական հանդեսում մեծ թիվ են կազմում բեմարվեստի հարցերին նվիրված հոդվածները (Գյոթե «Կանոններ դերասանների համար», Շիլլեր «Թատրոնն իբրև բարոյական հիմնարկութիւն» և այլն): Դրանցում ցուցումներ են տրվել բեմարվեստի կանոնների, խոսքի արտասանության, բառի շեշտադրության և այլնի վերաբերյալ:

Ալ. Թարխանյանի «Թատրոն» առաջին թատերական մասնագիտական պարբերականը կարողացել է ծառայել իր կոչմանը՝ նպաստել հայ թատրոնի ու թատերական արվեստի զարգացմանը:

«ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ» (1896–1916)

20-րդ դարի սկզբում մեծանում է հետաքրքրությունը նաև բանագիտության նկատմամբ: Բանագետ, ազգագրագետ, բանահավաք, հայ ազգագրության հիմնադիր Երվանդ Լալայանը 1896 թ. լույս է ընծայել իր տեսակի մեջ առաջին մասնագիտական պարբերականը՝ «Ազգագրական հանդէս»-ը: Առաջին համարը հրատարակվել է Շուշիում, իսկ հաջորդ համարները՝ Թիֆլիսում: Եռամսյա պատկերազարդ հանդեսին կից հրատարակվել են նաև «Հայ գեղջուկի ալբոմ» և «Ծրագիր հայոց ազգագրական թանգարանի համար նիւթեր հաւաքելու» խորագրերը կրող հավելվածները:

Պարբերականին աշխատակցել են Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ստ. Լիսիցյանը, Թ. Թորամանյանը, Գ. Հովսեփյանը, Իս. Հարությունյանը, Ս. Հայկունին և ուրիշներ: Քննարկվել են ազգագրության, հնագիտության, ճարտարապետության, լեզվաբանության, արհեստագիտության, ժողովրդական երաժշտության և վիմագրության վերաբերյալ հարցեր:

«Ազգագրական հանդէսը» իր սրբազան պարտքն է համարել՝ տարածել ժողովրդական ստեղծագործության լավագույն նմուշները, լուսաբանել ազգի նիստն ու կացը, սովորույթները, ավանդույթները, բանավոր երգն ու երաժշտությունը: «Երբ ժողովուրդը,- գրված է այնտեղ,- սիրով կքանայ իր սիրտն ազգագրի առաջ, երբ վերջինս կլուսանկարէ նրան իր բոլոր ճշտութեամբ, երբ կանխակալ ու կուսակցական գաղափարները չեն պղտորիլ ո՛չ ժողովրդի, և ո՛չ հետազոտողների միտքը, մեր հանդէսը կդառնայ ժողովրդական կեանքի մի ճշմարիտ հայելի» (1896, գիրք Ա, էջ 6):

Ե. Լալայանի հանդեսում տպագրված ազգագրական, հնագիտական, պատմագիտական հոդվածները («Համառօտ տեսութիւն հայ ազգագրութեան», «Վարանդա», «Գանձակի գաւառ», «Բորչալուի գաւառ», «Նոր Բայազէտի գաւառ» և այլն) նվիրված են հայ

պատմական տեղավայրերի կազմավորման, բնակիչների զբաղմունքի, ժողովրդական ավանդությունների գիտական մեկնաբանություններին: Ե. Լալայանի, ինչպես և Ստ. Լիսիցյանի, Ստ. Մալխասյանի, Խ. Սամվելյանի, Ս. Հայկունու և մյուսների պատմական տեղեկությունները հարուստ նյութ են պարունակում գիտական ուսումնասիրությունների համար: Այդ հոդվածները միաժամանակ հետապնդում են մի կարևոր նպատակ՝ ցույց տալ համայն աշխարհին, որ հայ ժողովուրդը հնագույն մշակույթ ունեցող քաղաքակիրթ ազգ է, որ նա ունեցել է և պահպանում է իր ազգային մշակույթը, ազգային արժանապատվությունը և հայրենասիրական ոգին:

«Ազգագրական հանդէսում» տպագրվել են մեր թվարկությունից առաջ և հետո հյուսված բանավոր ստեղծագործությունները՝ Գողթան երգերից սկսած մինչև աշուղական արվեստի փայլուն նմուշները: Ուշագրավ են Ալաշկերտի, Շիրազի, Գանձակի, Բորչալուի և այլ գավառների ժողովրդական երգերը, մանկական խաղերը, որոնք զբաղեցնում են հանդեսի բազմաթիվ էջերը:

Հանդեսը պրոպագանդել է նաև հայ ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումները («Թլուատ-Դավիթ», «Սասնա ծռեր»): Նկատելով, որ «ժողովրդական պատմվածքի, առանձնապես վեպի վերաբերյալ ոչ մի բան անուշադիր չպետք է թողնել», խմբագիրն անդրադարձել է էպոսի մասին գրված տեսական աշխատություններին: Այս տեսակետից ուշադրության է արժանի Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական վէպը» հոդվածը (1906, գիրք 13, էջ 5–36), որտեղ տեղեկություններ են հաղորդվում էպոսի վերաբերյալ գրված բոլոր աշխատությունների մասին: Հետաքրքիր է և գիտական մեծ արժեք ունի Գ. Լևոնյանի «Աշուղների մասին պատմա-քննական հայեացք» աշխատությունը (1903, գիրք 10, 1904 գիրք 11, 1905 գիրք 12), որտեղ բարձր են գնահատվել աշխարհի տարբեր ծայրերում ստեղծագործած երաժիշտները: Բանագետն անդրադարձել է աշուղական արվեստի ծագման ու զարգացման պատմությանը, ներկայացրել հայ Գողթան երգիչներին, գնահատել նրանց տաղանդը, ցույց տվել աշուղական երգերի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, հայոց լեզվի զարգացման ու հարստացման գործում: «Աշուղը,- գրել է նա,- հասարակութեան աչքն ու ականջը բաց է արել, որ նա տեսնի ու լսէ, զգայ ու

հասկանայ ամէն բան, ինքնուրոյնութեան և ինքնագիտակցութեան հասնի, անկախ ճանաչէ իր մարդկային իրաւունքները՝ որպէս հայ և որպէս անհատ» (1904, գիրք 11, էջ 195): Գ. Լևոնյանը Սայաթ-Նովային համարել է մի երգիչ, որը «մեր նոր աշըղութեան հիմքը դրեց, ստեղծեց մի շարք նոր անուններ, իր ետևից քաշ տալով հայ հասարակական բանաստեղծ-երգիչների մի մեծ խումբ» (1903, գիրք 10, էջ 93):

Հանդեսում տեղ են գտել նաև այլ ժողովուրդների (հույների, վրացիների, քրդերի, ասորիների, պարսիկների, բոշաների և այլն) բանահյուսական նմուշները:

Առանձին ուշադրության են արժանի հայ հին իրավունքի պատմության հարցերին նվիրված հոդվածները: Հայ ժողովուրդը դեռ անցած հին դարերում ունեցել իր ազգային իրավունքը, ազգային օրենքները, զբաղվել է իրավագիտությամբ: Այդ մասին պատմում է Ա. Ղլտչյանի «Հին հայ իրաւունքը» աշխատությունը (1912–1913, գիրք 22–24), որտեղ հեղինակը գիտականորեն հիմնավորել է այն փաստը, որ հայ ժողովրդի իրավական համակարգերը ցեղակից են արիական ազգերի նորմերին և բխել են միևնույն աղբյուրից: Ուշագրավ են Խ. Սամվելյանի «Հին հայոց իրաւունքը և նրա հետազօտութեան մեթօդը» և այլ հոդվածներ:

«Մարդաբանություն» բաժնում տպագրված հոդվածները հայ ընթերցողին ծանոթացրել են մարդաբանության նորագույն տեսություններին, հասարակության ծագման և զարգացման պատմությանը:

Մեծ թիվ են կազմում ճարտարապետությանը նվիրված նյութերը, որոնք տպագրվել են «Նշանաւոր վանքեր» խորագրի տակ:

«Ազգագրական հանդէսը» իր ընթերցողներին ծանոթացրել է նաև հայոց հնագույն և եկեղեցական երգերին, ազգային երաժշտության ու նրա առանձնահատկություններին, ինչպես նաև ազգային երաժշտական գործիքներին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ե. Լալայանը ընկել է նյութական ծանր կացության մեջ և 1916 թվականի վերջին, 26-րդ գիրքը լույս ընծայելուց հետո, ստիպված է եղել դադարեցնել իր պարբերականի հրատարակությունը:

Ե. Լալայանի «Ազգագրական հանդես» պարբերականը հայ ժողովրդի շատ հոգևոր գանձեր փրկել է կորստից և վերադարձրել իրեն՝ ժողովրդին:

«ԾՈՒՇԱՐԱՐ» (1907–1913)

Ալեքսանդր Թարխանյանի «Թատրոն» արևելահայ առաջին թատերական մասնագիտական պարբերականի դադարելուց (1905) հետո, նման պարբերականի տեղը դատարկ է մնում: Երկու տարի անց՝ 1907 թվականին նրան փոխարինում է Արամ Վրույրի «Ծուշարար» թատերական, գրական-գեղարվեստական պատկերազարդ երկշաբաթաթերթը:

Դերասան, թատերագետ, լուսանկարիչ Արամ Վրույրը[1] (Արամ Մինասի Մաքասչյանը) ծնվել է Կ. Պոլսում 1863 թվականին: Սկզբնական կրթությունը նա ստացել է տեղի Սկյուտարի Ինճատիե թաղամասի վարժարանում: 12 տարեկան հասակում տեղափոխվել է Աֆիոն Գարահիսար քաղաքի գիշերօթիկ դպրոց, ապա՝ Սկյուտարի ճեմարանը: Այդ տարիներին Կ. Պոլսում մեծ համբավ էր վայելում Հակոբ Վարդովյանի թատրոնը (1867–1878): Արամ Վրույրը հաճախ այցելում է այդ թատրոն և պատանի հասակից նրա մեջ արթնանում է սերը դեպի բեմարվեստը: 1878 թվականին ընտանիքով տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ նա նույնպես հաճախում է թատրոն: Մի հարմար առիթով Վահրամ Փափազյանը Վրույրին ընդգրկում է դերասանական խմբի մեջ: Վրույրը առաջին անգամ խաղում է Է. Տեր-Գրիգորյանի «Մոդա» պիեսում Գրիգոր աղայի դերը:

1888 թ. Վրույրը մեկնում է Կ. Պոլիս՝ հայկական ներկայացումներ կազմակերպելու նպատակով: Այստեղ Պ. Ադամյանի հետ մասնակցում է մի շարք ներկայացումների՝ խաղալով մի շարք դերեր: Ամենից նշանավորը Պեպոյի դերի կատարումն էր իր իսկ՝ արևմտահայ բարբառով փոխադրած Գ. Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությունում:

---

[1] Ա. Վրույրի կենսագրական տվյալները քաղված են Ռ. Ա. Փաշայանի «Արամ Վրույր» մենագրությունից (Ե., 1963):

1891 թվականին Արամ Վրույրը նորից տեղափոխվում է Թիֆլիս: Ընդգրկվելով Գ. Ավետյանի նորակազմ խմբում՝ նա մասնակցում է խմբի Բաթումում, Եկատերինոդարում, Նոր-Նախիջևանում, Ռոստովում, Արմավիրում տրված ներկայացումներին:

1897 թ. Վրույրն ընդգրկվում է Բաքվում կազմակերպված թատերախմբի մեջ և հանդես գալիս բազմաթիվ դերերով: 1901 թ. Բաքվի դերասանական խումբը բեմադրում է «Դոն Քիշոտ» պիեսը: Նա խաղում է Դոն Քիշոտի դերը:

1905 թվականին Բաքվում սկսված ազգամիջյան կռիվները ընդհատում են դերասանական խմբի ներկայացումները: Վրույրը մեկնում է Սիմֆերոպոլ: 1908–1909 թթ. Վրույրը նորից Բաքվում է՝ Սիրանույշի թատերախմբում: Ապա նա հաստատվում է Թիֆլիսում:

Արամ Վրույրը զբաղվել է նաև թարգմանությամբ: Նա թարգմանել է մոտ 50 պիես, գրել առանձին ուսումնասիրություն Դավիթ Թրյանի կյանքի և գործունեության մասին: «Մուրճ» ամսագրում տպագրել է հայ թատրոնի պատմության մասին հոդվածներ Հ. Սևյան ծածկանունով:

Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նա նշանակվել է «Կարմիր աքլոր» շաբաթաթերթի պատասխանատու քարտուղարի պաշտոնում:

Վրույրը հայտնի է եղել նաև որպես հնագետ-լուսանկարիչ: Նա երկար տարիներ մասնակցել է Անիում Ն. Մառի կատարած հնագիտական պեղումներին:

1924 թվականի մարտի 5-ին Արամ Վրույրը կնքում է իր մահկանացուն:

1907 թվականին, Թիֆլիսում Արամ Վրույրը լույս է ընծայում «Յուշարար» երկշաբաթաթերթը: Նյութական աննպաստ պայմանները և շրջագայությունները ստիպում են խմբագրին ընդմիջումներով հրատարակել թերթը: Հրատարակության առաջին տարին համարվում է 1907 թ. փետրվարից մինչև 1908 թ. փետրվարը, երկրորդ տարին՝ 1908 թ. փետրվարից մինչև 1909 թ. փետրվարը: Այս երկու տարում յուրաքանչյուր համար լույս է տեսել 16 էջ ծավալով: Իսկ ընդմիջումից հետո, 1912 թվականից «Յուշարարը» բաղկացած է եղել 46 էջից: 1913 թվականին Արամ Վրույրի բացակայության ժամանակ պարբերականի չորրորդ և հինգերորդ գրքերը հրատարակում է

արևմտահայ բանաստեղծ, հրապարակախոս Գ. Իփեկյանը: Պարբերականին աշխատակցել են Շիրվանզադեն, Ալ. Ծատուրյանը, Լեոն, Վ. Տերյանը, Լ. Մանվելյանը, Հ. Հակոբյանը, Ա. Աթանասյանը, Օն. Անտոնյանը, Ա. Արմենյանը, Գ. Բաշինջաղյանը, Թ. Թորամանյանը և ուրիշներ: Երկշաբաթաթերթին կից «Ցուցարարի» մատենադարան» խորագրով լույս են տեսնում հավելվածներ:

Պարբերականի փաստական խմբագիրն էր Մարիամ Մեհրաբյանը, սակայն իրականում այն խմբագրում էր Արամ Վրույրը:

Առաջին տարվա առաջին համարի առաջնորդող հոդվածը խմբագրի խնդրանքով գրել է Լեոն, որն ընդծում է արվեստը ժողովրդին ծառայեցնելու միտքը:

Իր նախընտրած նպատակների իրականացման համար Վրույրը պարբերականում տպագրում է պիեսներ, որոնք կարող էին լինել ժողովրդի օգտակար խորհրդատուները և մտերիմ բարեկամները:

«Հայոց թատրոնի վերակազմությունը» վերտառությամբ տպագրված հոդվածում (հեղինակ Վ. Տ.) բացատրվում է, թե ինչ բովանդակություն պետք ունենան և ինչի մասին պետք է գրված լինեն ժամանակակից պիեսները: Անցած է համարվում այն ժամանակաշրջանը, երբ պիեսներ էին գրվում աստվածների, տիրակալների, պաշտոնյաների, ատրճանավորների մասին: Ըստ հեղինակի՝ կյանքն այլ բան է թելադրում, այն պահանջում է գրել ժողովրդի առօրյա հոգսերի, նրա հետաքրքրությունների ու նրան հուզող բոլոր հարցերի մասին: Ուստի և առաջարկվում է հիմնովին վերափոխել թատրոնի խաղացանկը, ներկայացնել սոցիալ-կենցաղային թեմաներով գրված պիեսներ:

«Ցուցարարում» տպագրվել են հոդվածներ՝ նվիրված հայ թատրոնի պատմությանը, պիեսների բովանդակությանն ու հետապնդած նպատակներին: Աչքի են ընկել Պաղտիկ ծածկանունով տպագրված Արամ Վրույրի «Պաղտասար աղբար» նամակները: Հայ թատրոնի պատմության և անհատների մասին հոդվածներ են տպագրել նաև Է. Տեր-Գրիգորյանը («Երևանի հայ թատրոնի սկզբնավորությունը» և այլն), Գ. Ջմշկյանը («Վրաց թատրոնի սկզբնավորումը») և ուրիշներ:

1907 թվականի երկրորդ համարը ամբողջովին նվիրված է դերասան Գ. Պետրոսյանի բեմական գործունեության 25-ամյակին: Բարձր են գնահատված նրա ծառայությունները Թիֆլիսում և

Բաքվում թատերական խմբերի կազմակերպման, ռուսական թատրոնի ռեալիստական ավանդույթները հայ բեմարվեստում ներդնելու ուղղությամբ:

1912 թվականից «Ցուցարարը» վերսկսում է իր գործունեությունը և լույս է տեսնում որպես ամսագիր, երկու ամիսը մեկ անգամ: Այս հրատարակությունը կրում է ալմանախ-ժողովածուի բնույթ: Յուրաքանչյուր համար ուներ իր հավելվածը, որը ներկայացնում էր գրական որևէ ստեղծագործություն (պիես, վեպ, բանաստեղծություն և այլն) և ձրի ուղարկվում բաժանորդներին:

Երկրորդ շրջանում «Ցուցարարը» ունեցել է ավելի հարուստ բովանդակություն՝ նպատակակետ ունենալով դարձյալ իր «Ամէն ինչ ժողովրդի համար» սկզբունքը: 1912 թվականի համարներում պարբերաբար տպագրված «Դէպի ժողովուրդ» հոդվածաշարում քննարկվում են այն միջոցները, որոնք կարող էին օգտագործվել հասարակության լայն խավերի մեջ թատրոնի հանդեպ սեր առաջացնելու, մարդկային հոգու դաստիարակության միջոց դարձնելու գործում:

Ամսագիրը քննադատաբար է անդրադարձել Թիֆլիսի հայ դրամատիկական ընկերության գործունեությանը: «Ցուցարարը» կարծում էր, որ այդ ընկերությունը հաջողության կհասնի միայն այն ժամանակ, երբ կկազմակերպի ժողովրդի հոգուն, սրտին, մտքին մոտ պիեսների բեմադրության գործը:

Պիեսների հաջող ընտրությունը համարվել է թատրոնի ամենակարևոր խնդիրը: Ուստի և պահանջվել է խաղացանկում ընդգրկել այն պիեսները, որոնք կբավարարեն ժողովրդական լայն զանգվածների պահանջներն ու հետաքրքրությունները: Այդ խակ սկզբունքին հետևելով՝ խմբագիրը ամսագրի յուրաքանչյուր համարում տպագրել է պիեսներ («Կովկասի գիշերները», «Փրկարար հրէշտակը» և այլն), որոնց հերոսները ժողովրդի ծոցից ելած մարդիկ էին, ժողովրդի հոգսերով, նրա ցավերով տառապող գործիչներ:

«Ցուցարարում» տպագրվել են նաև թարգմանական պիեսներ:

«Ցուցարարի» էջերում բարձրացվել է սեփական թատերական բեմ ունենալու պահանջը: Մտահոգված հայկական մշտական թատրոն կազմակերպելու հարցերով, Արամ Վրույրը տպագրում է թատրոնի շուրջ Ավետիք Արասխանյանի հետ ունեցած իր զրույցը:

Արասխանյանն այն կարծիքին էր, որ թատերական գործի զարգացման համար անհրաժեշտ էր նաև թատերական շենքեր կառուցել Անդրկովկասի բոլոր հայաշատ վայրերում՝ Բաքվում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Թիֆլիսում, Շուշիում, Գանձակում, Ախալքալաքում, Ախալցխայում և այլուր: Գործի հաջողության համար առաջարկվում է ստեղծել թատերական շենքերի կառուցման առանձին ֆոնդ, մի բան, որը, ըստ Արասխանյանի, պետք է կազմակերպվեր Թիֆլիսում, այնտեղ համախմբված մեծահարուստների կողմից:

Կարևորվում է ամսագրի դերը նաև այնտեղ տպագրված հուշագրություններով: Ա. Մանդինյանի «Իմ յիշատակարանը», «Հայ դրամատիկական ընկերութեան հիմնադրումը» և այլ հուշագրություններ հարուստ տեղեկություններ են հաղորդում անցյալի թատերական կյանքի ու հայ դերասանների մասին:

1912 թվականի վերջին նյութական սուղ միջոցները ստիպում են Արամ Վրույրին դադարեցնել «Յուշարարի» հրատարակությունը:

«ԳԵՂԱՐՈՒԵՍՏ»
(1908–1909, 1911, 1913, 1917, 1921)

«ՆՈՐ ԴՊՐՈՑ» (1908–1913)

1905 թ. օգոստոսին հայկական դպրոցների վերաբացումից հետո զգալի աշխուժություն է նկատվում հայ մանկավարժության բնագավառում: Թիֆլիսում գործող ուսումնարանական հանձնաժողովը մշակում է դպրոցական նոր ծրագրեր, կազմակերպում նոր մեթոդներով գրված դասագրքերի հրատարակման ու տարածման գործը: Այդ տարիներին ավելանում է հայոց դպրոցների թիվը, մամուլի և տպագիր խոսքի այլ միջոցների շնորհիվ պրոպագանդվում են ռուսական և արևմտաեվրոպական երկրներում մասնագիտական կրթություն ստացած մանկավարժներ Առ. Բահաթրյանի, Իս. Հարությունյանի, Հովհ. Տեր-Միրաքյանի, Տ. Ռաշմաճյանի և մյուսների մանկավարժական առաջադեմ դրույթներն ու սկզբունքները: Նրանք հանդես են գալիս աճող սերնդի համակողմանի դաստիարա-

կության, դպրոցի դեմոկրատացման, հասարակության համար պիտանի, առողջ, ազնիվ սերունդ պատրաստելու պահանջներով:

Նոր դպրոցի ձևավորման ու զարգացման համար մղված պայքարում իր կարևոր դերն ու նշանակությունն է ունեցել մանկավարժական մամուլը: 1908 թ. ապրիլից որպես «Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների ու վարժուհիների միության» կենտրոնական վարչության օրգան, Թիֆլիսում լույս է տեսնում «Նոր դպրոց» մանկավարժական պարբերականը: Այն մինչև 1911 թ. խմբագրում էր Իս. Հարությունյանը, իսկ 1911 թ. հետո՝ Հովհ. Տեր-Միրաքյանը:

«Նոր դպրոց» ամսագրի խմբագիր Իսահակ Հարությունյանը ծնվել է 1863 թ. Թիֆլիսում: Տարրական և միջնակարգ կրթությունն ստացել է իր ծննդավայրում: Ապա մեկնել է Գերմանիա և Լայպցիգի ու Ենայի համալսարաններում ուսումնասիրել փիլիսոփայություն, մանկավարժական, պատմական գիտություններ: Եվրոպայից վերադառնալուց հետո նա ուսուցչական աշխատանքի է անցել Թիֆլիսի Գայանյան և Հովնանյան օրիորդաց դպրոցներում՝ ավանդելով մանկավարժություն, հայոց լեզու, գերմաներեն:

Իս. Հարությունյանը ծավալել է նաև հրապարակախոսական գործունեություն: Դեռ ուսանողական տարիներից նա թղթակցել է «Արձագանք», «Արևելյան մամուլ» և այլ պարբերականների՝ «Լորդ», «Բրիչ», «Ուսուցիչ» ծածկանուններով: Նա առանձին գրքով լույս է ընծայել մանկավարժական, պատմա-մանկավարժական աշխատություններ: Ուշագրավ է նրա «Հայոց գիրը» (400 էջ) պատմաքննական հետազոտությունը հայոց տառերի ծագման պատմության մասին: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում «Սանահին», «Գոշավանք», «Ստ. Պալասանյան», «Գևորգ Բարխուդարյան», «Լեոպոլդ ֆոն Ռանքե և հայոց պատմությունը» և այլ ուսումնասիրություններ: Չափազանց արժեքավոր են հատկապես նրա մանկավարժական աշխատությունները («Ֆիզիոլոգիական հոգեբանություն», «Դպրոցական ճանապարհորդությունների թեորիան և պրակտիկան», «Գերմանական մանկավարժական բարձրագույն հաստատությունների գործունեությունը», «Ծաղկոց», «Աշակերտի հուշատետրը» և այլն):

Իս. Հարությունյանի «Նոր դպրոցը», որպես առանձին մանկավարժական պարբերական, չի ուսումնասիրվել իր ամբողջության մեջ: Հայ մանկավարժության պատմությունն ուսումնասիրողները անդրադարձել են ամսագրում տպագրված Իս. Հարությունյանի հոդվածների քննարկմանը միայն: Մինչդեռ, պակաս կարևոր չէ ցույց տալ ամսագրի դերը մանկավարժական նորագույն մեթոդների տարածման գործում և ներկայացնել պարբերականի ամբողջական գործունեությունը հայ մամուլի պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

Մանկավարժական նոր պարբերականը լույս էր տեսնում հետևյալ ծրագրով. Մանկավարժութիւն, Հոգեբանութիւն, Բարոյագիտութիւն, Գեղագիտութիւն, Դպրոցական կեանք, Դպրոցական առողջապահութիւն և վիճակագրութիւն, Քննադատութիւն և գրախօսութիւն:

1911 թվականից խմբագրությունն ընդլայնում է քննարկվող խնդիրների շրջանակները: Ընդարձակ էջեր են հատկացվում դպրոցական և ուսուցչական առօրյա կյանքի հարցերի լուսաբանմանը, համարձակ պայքար է ծավալվում հայ ուսուցիչների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Անդրադառնալով ամսագրի նպատակներին, խմբագիրը գրում է. «Մանկավարժական առողջ, առաջադէմ սկզբունքներ, հայ ուսուցչութեան իրաւական ու տնտեսական դրութեան բարւոքում, ժողովրդական տեսակէտ դպրոցական գործի ղեկավարութեան մէջ: Այս տեսակէտներն ունի «Նոր դպրոցը»» (1911, թիվ 1—2):

«Նոր դպրոցի» խնդիրն էր՝ հայ մանուկներից ու պատանիներից ձևավորել «բարոյական անձերի, որոնք պէտք է ոգևորվեն հասարակական նպատակներով և ուրիշների բախտաւորութեան մէջ կարողանան տեսնել իրենց բախտաւորութիւնը» (1912, թիվ 1—2):

«Նոր դպրոցում» մեծ տեղ է տրվում մանկավարժության վերաբերյալ տեսական հոդվածներին, որոնցում քարոզվում են կրթության ու դաստիարակության նոր սկզբունքները և ցույց են տրվում դրանց առավելությունները մանկավարժական հին համակարգի հա-

մեմատ: Այսպես, Հովհ. Տեր-Միրաքյանի «Մանկավարժական հին և նոր հոսանքները» գրախոսականում (1909, թիվ 12)՝ գրված Գ. Էդիլյանի «Քննադատութիւն Ցիլլերի ձևական աստիճանների» աշխատության մասին, նոր և առաջադիմական են համարվում փորձարարական մանկավարժության սկզբունքները, քանի որ դրանք մերժում էին անցյալի դոգմաները և փորձում գտնել երեխայի ուսումնասիրելու նոր մեթոդներ՝ փորձի միջոցով: Սակայն «Նոր դպրոցում» փորձարարական մանկավարժության սկզբունքները քարոզվում էին որոշակի վերապահումներով, հատկապես այն բանի համար, որ այդ տեսության կողմնակիցները երեխայի դաստիարակությունը դիտում էին հասարակական պայմաններից դուրս:

Պարբերականում բարձրացվում են ազգային նոր դպրոցի զարգացման հետ կապված կարևոր խնդիրներ: Քննարկվում են մասնագետ կադրերի պատրաստման, մանկավարժական դասընթացների կազմակերպման, մանկավարժական գրականության հրատարակման, դասագրքերի և այլ հարցեր:

«Նոր դպրոցում» ուշադրության են արժանանում նաև երեխաների հոգեբանության հետ կապված խնդիրները: Ըստ պարբերականի՝ առանց մանուկների հոգեբանության ուսումնասիրության, չի կարող լինել կրթական համակարգ, չի կարող գոյություն ունենալ բառիս իսկական իմաստով մանկավարժություն: Հոգեբանության հարցերին նվիրված հոդվածներով պարբերականում գլխավորապես հանդես է եկել մանկավարժ Տ. Ռաշմաճյանը: Նա այն միտքն է զարգացրել, թե մանկավարժության մեջ պետք է ընդունել երեխաների հոգեբանությունը և դրա համապատասխան էլ կազմել կրթական համակարգը: Ըստ նրա՝ ուսուցման ընթացքում մանկավարժը, կիրառելով զննության սկզբունքը, պետք է օգտագործի երեխայի հարազատ միջավայրից վերցված դիդակտիկ նյութեր: Նա պետք է այնպես դասավանդի առարկան, որ սովորելը բավականություն պատճառի երեխային: Տ. Ռաշմաճյանը հայ իրականությունում առաջիններից մեկն էր, որ բարձրացրել է մանկագիտության (պեդոլոգիայի) կարևորությունը կրթական համակարգում և մշակել է տեսական դրույթներ գիտության այդ ճյուղի վերաբերյալ:

«Նոր դպրոցում» զարգացվել է այն դրույթը, թե յուրաքանչյուր ժողովուրդ ինքը պետք է մշակի իր դպրոցական օրենքները, կանոնադրությունները, քանի որ կառավարության ընդունած օրենքները շատ անգամ կրթական գործն ազգային դպրոցներում դնում են միանգամայն սխալ ու վնասակար հիմքերի վրա: Ժողովրդական կրթության ճիշտ կազմակերպումը համարվում է քաղաքական կարևոր գործ, որն իր հերթին ներազդում է հասարակական շարժման առաջընթացի վրա: Ուստի և պարբերականը ակտիվ պայքարի մեջ է մտնում հին դպրոցի պաշտպանների հետ՝ իր քննադատական խոսքն ուղղելով հին դպրոցին:

«Նոր դպրոցում» դրվատանքի են արժանանում ինչպես հայ, այնպես էլ ռուս և արևմտաեվրոպական առաջադեմ մանկավարժներն ու գրողները, հրապարակախոսները, մտավորականության այլ ներկայացուցիչներ: «Միքայէլ Նալբանդեանը կրթական խնդիրների մասին» հոդվածաշարում (1912, թիվ 29–32) հայ մեծ հրապարակախոսը գնահատվում է որպես արմատական հայացքների տեր, ռեալիստորեն մտածող քննադատ: Նա դասվում է այն ազատախոհ գործիչների շարքը, որոնք ազգային դպրոցի զարգացման գործը կապում են սոցիալական, քաղաքական ազատ պայմանների հետ:

«Լ. Ն. Տոլստոյը իբրև մանկավարժ» հոդվածում (1908, թիվ 4) բարձր են գնահատվում գրողի ժողովրդական ոգով և մատչելի լեզվով գրված դասագրքերը:

Քննարկելով անցյալի նշանավոր մանկավարժներ Կոմենսկու, Ֆրեոբելի, Պեստալոցցիի և մյուսների աշխատությունները՝ պարբերականը բարձր էր գնահատում այդ գործիչների մանկավարժական հայացքները:

Մանկավարժության տեսության և պատմության հարցերի քննարկման հետ մեկտեղ՝ պարբերականը նպաստում է ուսուցման նոր մեթոդների ու բարոյական դաստիարակության նոր միջոցների տարածմանը: Առանձին քննարկման են ենթարկվում մայրենի լեզվի ուսուցման մեթոդները: Ղ. Աղայանի և այլոց հոդվածներում պահանջվում է տարրական ու միջնակարգ դպրոցներում որպես գլխավոր ու պարտադիր առարկա դասավանդել մայրենի լեզուն: Նշվում է, որ մայրենի լեզուն աշխարհի բոլոր երկրների ժողովրդական դպրոցներում ամենապատվավոր տեղն է գրավում, և որ մայրենի

լեզվի ուսուցումը պահանջում է ամենամեծ ուշադրություն և հոգածություն: Մայրենի լեզվի լավ ուսուցումը բարերար ազդեցություն է ունենում նաև մտավոր դաստիարակության վրա: Լեզու սովորել նշանակում է նաև մտածել սովորել, կարողանալ ճիշտ գրի առնել թե իր, թե մյուսների մտքերը: Պաշտպանվում է այն տեսակետը, թե երեխան որքան լավ իմանա մայրենի լեզուն, լավ յուրացնի մայրենի լեզվի քերականական կանոնները, որքան լավ տիրապետի ազգային լեզվին, այնքան շուտ կսովորի և օտար լեզուները:

«Նոր դպրոցում» առանձին բաժին է հատկացված բարոյական դաստիարակության հարցերին: «Ներկայ քաղաքակրթութեան դարում,- գրված է այնտեղ,- մանուկն ամենից առաջ պէտք է մարդ լինի, բառիս ընդարձակ մտքով, այսինքն, նա պէտք է հասարակական կեանքի դժուար և օգտակար խնդիրների համար կռուող լինի» (1910, թիվ 4): Ամսագիրն ուշադրության կենտրոնում էր պահում նաև մանուկների ու պատանիների գեղագիտական և աշխատանքային դաստիարակության հարցերը: «Նոր դպրոցի» շուրջ էին համախմբված հայ անվանի երաժշտագետներ Սպ. Մելիքյանը, Ռ. Մելիքյանը, Նիկ. Տիգրանյանը և ուրիշներ: «Երաժշտութեան զարգացման խնդիրները», «Դպրոցական երգեցողութեան օգտակարութեան մասին» և այլ հոդվածներում զարգացվում էր այն միտքը, թե երգն ու երաժշտությունը իբրև դասավանդման պարտադիր առարկա պետք է մտցնել դպրոցներում:

Աշխատանքային դաստիարակության հարցերի շուրջ գրված հոդվածներում ընդգծվում է ձեռքի աշխատանքի կարևորությունը լավ մասնագետներ, հասարակությանը պիտանի քաղաքացիներ պատրաստելու գործում: «Նոր դպրոցում» հարց է բարձրացվել նաև Անդրկովկասում գյուղատնտեսական դպրոցներ հիմնելու մասին, դպրոց, ուր երեխաները մանուկ հասակից կվարժվեին գյուղատնտեսական աշխատանքներին և ապագայում կդառնային հմուտ գյուղատնտեսներ:

Առողջապահության հարցերը նույնպես չեն վրիպել ամսագրի ուշադրությունից: «Դպրոցական առողջապահութիւն և վիճակագրութիւն» խորագրի տակ բժիշկներ Ե. Մինասյանի, Վ. Արծրունու և

մյուսների հոդվածներում քննարկվում են դպրոցականների առողջության պահպանման և ֆիզիկական դաստիարակության հարցերը:

Մանկավարժական նման օգտակար պարբերականի գոյությունը կարճ է տևել: Նյութական սուղ միջոցները, գրաքննության հետապնդումները ստիպել են խմբագրին 1913 թվականին դադարեցնել «Նոր դպրոցի» հրատարակությունը:

«ԹԱՏՐՈՆ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» (1910–1917)

20-րդ դարի առաջին տասնամյակին արևելահայ իրականությունում գրական, գեղարվեստական, թատերական պարբերականների կողքին ծնունդ է առնում և երաժշտական մամուլը: 1910 թ. երգահան Անտոն Մայիլյանի անմիջական նախաձեռնությամբ Բաքվում լույս է տեսնում «Թատրոն և երաժշտութիւն» ամսագիրը:

«Թատրոն և երաժշտութիւն» պարբերականը լույս էր տեսնում ամիսը մեկ անգամ: Խմբագիրն ամսագրի հրատարակության համար անհրաժեշտ ծախսերի մեծ մասը ծածկում էր իր ուսուցչական աշխատավարձով:

Ամսագրի խմբագիր Ա. Մայիլյանը ծնվել է 1880 թվականին Թիֆլիսում: Սովորել է Թիֆլիսի քաղաքային դպրոցում և միաժամանակ հաճախել նույն դպրոցի նվագախմբի պարապմունքներին: Ապա ընդունվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որտեղ նրա երաժշտության դասատուն և երգչախմբի ղեկավարն է եղել Մակար Եկմալյանը: Դպրոցական Մայիլյանը երգել է դպրոցական համերգներում և դարձել երգչախմբի ակտիվ անդամներից մեկը:

1900 թ. Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո Մայիլյանը ընդունվել է Թիֆլիսի երաժշտական ուսումնարանը: 1911 թվականին նա ավարտել է Խերսոնի երաժշտական-մանկավարժական ինստիտուտը և ստացել երաժիշտ մասնագետի դիպլոմ:

Հաստատվելով Բաքվում՝ նա ծավալել է մանկավարժական գործունեություն, միաժամանակ գրել բազմաթիվ մանկական երգեր, մանկական առաջին օպերան՝ «Գյուլնազ տատի հեքիաթը»:

Անտոն Մայիլյանը Բաքվում կատարել է հասարակական-կազմակերպական մեծ աշխատանք: Երաժշտական ընդունակություններ

ունեցող բանվորներից կազմակերպել է նվագախմբեր, երգչախմբեր: Նրա ղեկավարած խմբերը համերգներով հանդես են եկել բանվորական շրջաններում, գործարաններում, գյուղական վայրերում: 1920 թ. Ա. Մայիլյանը Բաքվում կազմակերպել է առաջին արևելյան թատերաերաժշտական ստուդիան՝ հայկական, ռուսական, ադրբեջանական բաժիններով:

Անտոն Մայիլյանը եղել է Ադրբեջանի երաժշտական հրատարակչական ընկերության հիմնադիրներից մեկը: 1927 թվականին նա կազմել է 35 երգերից բաղկացած ժողովածու նախադպրոցական երեխաների համար: Ընդհանրապես մեծ են Մայիլյանի ծառայությունները մանկական երգի ստեղծման, մանկական երգչախմբերի կազմակերպման գործում: Ականավոր այդ երգահանը գրել է ժամանակի ոգուն հարազատ ստեղծագործություններ («Սաֆա» օպերան, «Նոր գյուղը» սիմֆոնիան և այլն): 1940 թվականին Դաղստանի կառավարության առաջարկով Անտոն Մայիլյանը գրել է «Պոեմ Դաղստանի մասին» կանտատան: Նրա վերջին ստեղծագործությունը եղել է «Հնդկական գեղեցկուհի» բալետը՝ գրված Նիզամիի ստեղծագործությունների թեմաներով: Անտոն Մայիլյանը մահացել է 1942 թ., Բաքվում:

«Թատրոն և երաժշտութիւն» ամսագրին աշխատակցում էին ժամանակի գրականության, թատրոնի, երաժշտության և արվեստի մյուս բնագավառների լավագույն ուժերը (Գ. Չմշկյան, Կոմիտաս, Դ. Ղազարյան, Ա. Մանուկյան, Հովհ. Կոստանյան, Ռ. Մելիքյան և ուրիշներ):

Ա. Մայիլյանի ամսագրի հետապնդած հիմնական նպատակն էր՝ նպաստել ժողովրդական երաժշտության զարգացմանը: Դիմելով իր ընթերցողներին՝ Մայիլյանը գրել է, որ պարեր շարունակ ժողովրդի կողմից ստեղծված երգն ու երաժշտությունը պիտի պահպանվեն ու փայփայվեն: Եվ հիմնավորելով «Թատրոն և երաժշտութիւն» պարբերականի լույս ընծայման կարևորությունը՝ գրել է. «Ժողովրդական և ազգային երգերը ժողովրդի առաջադիմութեան, նրա մտքի ու զգացմունքների արտայայտութիւն լինելով, չունեն մի հայ մասնագիտական օրգան, որի մէջ լուսաբանուէր գեղարուեստի այդ սիրուն ճիւղը: Բնականօրէն չէր կարող լոյս չտեսնել մեր

օրգանը, որի գոյութիւնը միանգամայն անհրաժեշտութիւն պիտի համարել» (1910, թիվ 1–2):

Ամսագրում կարևորություն է տրվել երգ և երաժշտության ուսուցմանը նաև ընտանիքներում:

Մտահոգված ազգային երաժշտության զարգացմամբ՝ Մայիլյանը դիմում է հայ երաժիշտներին՝ ժողովրդական երգեր մշակելու առաջարկով: Պահանջում է հիմք ընդունելով ժողովրդական երգը՝ ստեղծել ազգային, խոր փիլիսոփայություն պարունակող երաժշտություն: «Հայ ժողովրդական երգը» խորագիրը կրող հոդվածաշարում (հեղինակ Վ. Խաչատրյան) լուսաբանվում են ժողովրդական երգերի մշակման տարբեր ձևերը: Ապագա կիրթ հասարակության երաշխիքը ամսագիրը տեսնում էր նոր սերնդի կանոնավոր և ճիշտ դաստիարակության մեջ: Ամսագրի համոզմամբ՝ երաժշտությունը անգամ բուժում է մարդուն, առողջացնում նրա ֆիզիկական ունակությունը, կազդուրում նրան և՛ ֆիզիկապես, և՛ մտավորապես, գեղեցկացնում արտաքին տեսքը, կրթում հոգին:

Ամսագրում հրապարակային քննարկման է դրվում դպրոցներում հայկական ժողովրդական երգերի ուսուցման հարցը: Խմբագիրը դիմում է բոլոր բանիմաց անհատներին, մասնագետներին՝ հարցի շուրջ առաջարկություններով հանդես գալ ամսագրում:

«Թատրոն և երաժշտութիւն» ամսագրի խմբագրությունը նկատի ունենալով, որ դպրոցներում ու ընտանիքներում խիստ զգացվում է մանկական երգի կարիքը, պարբերականի յուրաքանչյուր համարում տպագրում է մեկական երգ նոտաներով: Այստեղ են տպագրվել «Լուսնեակ» (խոսք՝ Ս. Սարիբեկյանի, երաժշտություն՝ Միք. Միրզոյանի), «Մանկական երգ» (խոսք՝ Հ. Աղաբաբի, երաժշտություն՝ Ա. Մայիլյանի), «Հեքիաթ» (խոսք՝ Աթ. Խնկոյանի, երաժշտություն՝ Ա. Մայիլյանի) և այլ մանկական երգեր:

Ամսագրում տպագրվել են նաև խմբերգեր: 1916 թ. պարբերականի թիվ 12-ում զետեղվել է քառաձայն խմբի համար գրված «Վանեցոց գիներգը»՝ նվիրված հայ կամավորներին: Բանաստեղծության հեղինակն էր Ռ. Պատկանյանը, երաժշտությունը հորինել էր Հովհ. Պոպովը:

Երաժշտական արվեստի համաչափ զարգացման և ժողովրդականացման համար անխուսափելիորեն զգացվել է կենտրոնացված

երաժշտական կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտությունը: Եվ ամսագիրը կոչ է արել հայ երաժիշտներին՝ պատշաճ ուշադրություն դարձնել Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության գործունեությանը և բոլոր ուժերը կենտրոնացնել այդ ընկերության շուրջ: Եվ, իրոք, նման կոչն ունեցավ իր դրական ներգործությունը: Կարճ ժամանակում ընկերության շուրջ համախմբվեց երաժշտագետների, երաժիշտ-կատարողների, երաժիշտ-դասատուների, երգիչների մի ստվար խումբ: Կազմակերպվեցին կամերային, սիմֆոնիկ նվագախմբեր, բացվեցին երաժշտական դասընթացներ, հավաքվեցին ժողովրդական երգեր: Հարց բարձրացվեց Թիֆլիսում երաժշտական մասնագիտական դպրոցներ և անգամ կոնսերվատորիա հիմնելու մասին:

Ամսագրում ուշադրության է արժանի մանկավարժ Գ. Էդիլյանի «Թատրոն և դպրոց» վերնագրով տպագրված հոդվածաշարը, որտեղ քննարկվում են դպրոցականների դաստիարակության հարցերը: Ելնելով նորագույն մանկավարժության պահանջներից՝ հեղինակը հանդես է գալիս իսկական անհատներ պատրաստելու սկզբունքի պաշտպանությամբ, նպատակահարմար է գտնում աշակերտական թատերական խմբերի կազմակերպումը դպրոցներում: Թատերական ներկայացումներին մասնակցելը, նրա համոզմամբ, կհարստացներ աշակերտի լեզուն, մտապաշարը, կկրթեր հոգին, կդաստիարակեր զգացմունքները, մի խոսքով, մեծ ազդեցություն կունենար նրա բարոյական կերպարի ձևավորման վրա:

Ամսագիրը նշանավոր դերասան-դերասանուհիների տարելիցների առիթներով տպագրել է ծավալուն հոդվածներ: Տեղ են գտել Գր. Ավետյանին, Ս. Ադամյանին, Գ. Ջմշկյանին, Մ. Ամրիկյանին, Վ. Կոմիսարժևսկայային և մյուսներին նվիրված հոդվածները:

«Գրական բաժնում» բարձր են գնահատվել հայ գրողներն ու երգահանները:

Լինելով մանկավարժ, Ա. Մայիլյանը երգն ու երաժշտությունը ծառայեցրեց մատաղ սերնդի դաստիարակության գործին:

«Թատրոն և երաժշտութիւն» ամսագիրը ժամանակին կատարեց մի դեր, որը անչափ կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հոգևոր կյանքի հարստացման ու զարգացման գործում:

«ԱՐՕՐ» (1910–1912)

Հայ գիտամշակութային մամուլի պատմության մեջ իր առանձին տեղն է գրավում գրող, հրապարակախոս, խմբագիր, հասարակական գործիչ Համբարձում Առաքելյանի «Արօր»՝ միամսյա հանդեսը:

1910 թվականին Թիֆլիսում ձեռնարկելով «Արօր» պատմագիտական հանդեսի հրատարակության գործը, Համբարձում Առաքելյանը հետապնդել է մի գլխավոր նպատակ՝ հայ մտավորականության ուշադրությունը դարձնել գիտության ու մշակույթի այն ճյուղերի ուսումնասիրության վրա, որոնք անհրաժեշտ են քաղաքակրթված ժողովրդի մտավոր ու հոգևոր ուժերի զարգացման և խաղաղասիրական ձգտումների համար:

Հ. Առաքելյանը ծնվել է 1855 թ. Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա՝ ուսումը շարունակել Թավրիզում: 1879 թ. ավարտել է Բաքվի ռեալական ուսումնարանը: Այնուհետև սովորել է Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայում: 1881 թ. Շուշիում հիմնադրել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության առաջին մասնաճյուղը:

Հ. Առաքելյանի հրապարակախոսական գործունեությունն սկսվել է 1872 թ.՝ որպես «Մշակի» թղթակից: 1908 թ. նա եղել է թերթի խմբագիրներից մեկը, իսկ 1913 թ. մինչև իր կյանքի վերջը՝ հրատարակիչն ու խմբագիրը: 1904 թ. Հ. Առաքելյանը մասնակցել է Հաագայի խաղաղության միջազգային կոնգրեսին՝ Հայկական հարցը դիվանագիտական շրջանակների ուշադրությանը ներկայացնելու առաքելությամբ: 1906 թ. նա եղել է Առաջին, իսկ 1907 թ.՝ Երկրորդ պետական դումաների ընտրող՝ կադետական կուսակցությունից: Նա սկզբում ներգրավված է եղել ազգային նարոդնիկական խմբակի մեջ, ապա՝ անցել է սահմանադրական-դեմոկրատական կուսակցության շարքերը:

Համբարձում Առաքելյանը 1915 թ. կազմել և գլխավորել է հայ գաղթականներին օգնող հանձնաժողովը: 1917 թ. նա հիմնադրել է «Հայ ազգաբնակչության մեջ գրագիտություն տարածելու ընկերությունը»: 1917 թ. նրա գլխավորությամբ կազմակերպվել է հայ ժողովրդական կուսակցությունը:

Հ. Առաքելյանը գրել է նաև գրական-գեղարվեստական գործեր Շահրիար ծածկանունով: Կատարել է նաև թարգմանություններ: 1892 թ. Թիֆլիսում հրատարակել է Լամարթինի «Վիլհելմ Թելը», 1897-ին՝ Մոպասանի «Քսան վէպիկներ և զրույցներ» ժողովածուն, 1908 թ.՝ Ֆլամարիոնի «Ուրանիա» վեպը և այլ գործեր:

Նա կազմել է նաև բառարաններ: 1915 թ. լույս է տեսել նրա «Հանրագիտական բառարանը», որտեղ ընդգրկված են օտարազգի նշանավոր մարդկանց կենսագրականներն ու Հայաստանի տեղագրության, պատմության կարևոր հարցերի վերաբերյալ տեղեկություններ: Հ. Առաքելյանը միաժամանակ եղել է ռուսական և միջազգային գիտական ընկերությունների անդամ:

Ժողկոմսովետի 1917 թ. նոյեմբերի 28-ի հայտնի դեկրետով կադետները համարվել են ժողովրդի թշնամիներ, իսկ մեկ տարի անց, 1918 թ., չարանենգի գնդակով զոհվեց Հ. Առաքելյանը:

Անդրադառնալով «Արօր» ամսագրի նպատակներին՝ խմբագիրը գրել է. ««Արօրը» աշխատելու է իր կողմից եւս նպաստել հայ մտաւոր աշխարհի մեծ շենքի կառուցմանը, գործի դնելով այլ աշխատողների հետ և իր համեստ ոյժերը, տալով հայ հասարակութեանը ընթերցանութեան առողջ սնունդ, նպաստելով նրա մտաւոր հորիզոնի ընդլայնմանը, հայ գրականութեան և բանասիրութեան մշակմանը» (1910, թիվ 1): Միաժամանակ նա հայտարարել է, որ հետևելու է համաշխարհային խաղաղասիրական շարժմանը, որի «նպատակն է համամարդկային եղբայրակցութիւնը ժողովուրդների մէջ և փոքր ազգութիւնների խաղաղ, կուլտուրական, ինքնուրոյն զարգացման ապահովումը, մի շարժում, որը յայտնի է խաղաղասիրութիւն (պացիֆիզմ) անունով և որին այսօր հարել են եւրոպական մտքի և գիտութեան առաջնակարգ ոյժերը» (1910, թիվ 1):

«Արօր» ամսագրի մյուս կարևոր խնդիրն է դիտվել շարունակել իր նախորդների, հատկապես «Փորձ», «Մուրճ» և այլ ամսագրերի լավագույն ավանդույթները, ասպարեզ տալ և խրախուսել գիտության և գրականության բնագավառներում աչքի ընկած շնորհալի երիտասարդներին:

Պատմագիտական նոր ամսագրի շուրջ էին համախմբվել գրականության, գիտության, արվեստի լուսամիտ գործիչներ Ստ. Մալխասյանը, Իս. Հարությունյանը, Խ. Սամվելյանը, Աշ. Աթանասյանը,

Ա. Սարուխանյանը (Սարուխան), Գ. Բաշինջաղյանը, Հ. Սուրխաթյանը, Ռ. Խանազատյանը (Խան-Ազատ) և ուրիշներ:

Ամսագրում աչքի են ընկնում Հ. Առաքելյանի, Մ. Բեջանյանի, Ա. Արփիարյանի, Մ. Զերազի, Գ. Բաշինջաղյանի, Լ. Աթաբեկյանի, Հ. Սուլովյանի, Լ. Մանվելյանի և մյուսների արձակ ու չափածո գործերը: Հ. Առաքելյանի «Բուղդան բէկը», «Տանջուածը» և այլ պատմվածքներ միաժամանակ ունեն հրապարակախոսական բնույթ և վերաբերում են հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական անազատ կյանքին, ազգային-ազատագրական պայքարին: «Տանջուածը» պատմվածքների շարքում, որը գրված է երկխոսության ձևով, հայ ժողովրդի ազատագրական պայքարի կետ նպատակը համարվում է Թուրքահայաստանի ազատագրումը և ապա նոր սոցիալիստական գաղափարների իրագործման համար պայքարի կազմակերպումը:

Ամսագրի գրական-գեղարվեստական գործերի հիմնական թեման արևմտահայ ժողովրդի կյանքն է: Գողտրիկ պատմվածքներն ու վեպերը գեղարվեստական խոսքի միջոցով ընթերցողին ծանոթացրել են հայ գաղթականների ծանր առօրյային, օտար և ազգային հարստահարիչների անմարդկային արարքներին («Մտատանջութիւնը», «Փաստաբանի մօտ» և այլն):

Անհրաժեշտ է նշել, որ ամսագրի շնորհիվ կորստից փրկվել են հայ բանաստեղծներից մի քանիսի գործերը (ձեռագրերը): Առաջին անգամ այստեղ են տպագրվել Գ. Դոդոխյանի բանաստեղծությունների ձեռագրերը («Նուշիկին» և այլն), Պ. Ադամյանի գողտրիկ ոտանավորները («Առ օր. Սիրանույշին», «Առ սրտակից բարեկամն իմ» և այլն):

Հարուստ են ամսագրի գեղարվեստական գրականության թարգմանական էջերը: Ռուս գրողներից ամսագրում տպագրվել են Պուշկինի («Իմ տապանագիրը», «Զզուելի է ու գարշելի ամէն բան» և այլն), Լերմոնտովի («Փախստական»), Մ. Գորկու («Վալախական լէգենդ»), Լև Տոլստոյի («Խոստովանութիւն», «Կանաչ ձողիկ»), Ա. Չեխովի («Առանց վերնագրի»), Վլ. Նեմիրովիչ-Դանչենկոյի («Մեծ սիրտը») և մյուսների գործերը:

Գրաքննադատներ Հ. Սուրխաթյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ հանդես են եկել ռուս գրողներին տրված իրենց գնահատական-

ներով: Հ. Սուրխաթյանը հոդվածներ է տպագրել Գերցենի և Տոլստոյի մասին: Ռուս գրող Տոլստոյը մեծ է համարվել իր «սոցիալական արդարութեան ջերմագին քարոզով, մեծ՝ ճշմարտութեան անընդհատ որոնումով, մաքուր ու անկեղծ եղբայրասիրութեան, հաւասարութեան դաւանանքներով, համամարդկային խղճմտանքի մարմնացման իր վեհ պատկերով» (1911, թիվ 1):

Ամսագրի 1910 թ. թիվ 11-ը գրեթե ամբողջովին նվիրված է Տոլստոյի հիշատակին: Տպագրվել են նաև Տոլստոյի հասցեին ասված Ա. Ֆրանսի, Հ. Հաուպտմանի, Ֆ. Նանսենի և մյուսների դրվատանքի խոսքերը:

Ամսագրում ուշադրավ տեղ է հատկացվել նաև արևմտաեվրոպական գրողների ստեղծագործություններին: Թարգմանաբար տպագրվել են հանրաճանաչ գրողներ Էմիլ Զոլայի («Արիւն»), Մոպասանի («Ննջեցեալը»), Մարկ Տվենի («Երգիծական գրոյցներ»), Օ. Ուայլդի («Վարդն ու սոխակը»), Հայնեի («Հրաժեշտի ժամանակ», «Երազիս մէջ լալիս էի»...), Շ. Բոդլերի («Ո՛վ ազատ մարդ...») և մյուսների արձակ ու չափածո գործերը: Դրանցում գովերգվել են ազատության, հավերժական սիրո, ժողովրդասիրության, մարդասիրության գաղափարները:

Մեծ է հատկապես ամսագրի պատմագիտական արժեքը: Այստեղ տպագրվել են բազմակողմանի տեղեկություններով հարուստ նյութեր ռուսահայ գաղթօջախների, ռուս և արևմտաեվրոպական հասարակական-քաղաքական գործիչների, խմբագիրների, գիտնականների, ինչպես և պատմական կարևոր իրադարձությունների, հնագիտական, կովկասագիտական հետազոտությունների արդյունքների և այլնի մասին ծավալուն հոդվածներ: Ամսագրում պարբերաբար տեղեկություններ են հաղորդվել պրոֆեսոր Մառի՝ Անի քաղաքում կատարած պեղումների մասին: Պատմագիտական արժեքավոր աղբյուր է ներկայացնում պատմաբան, հասարակական գործիչ Ա. Սարուխանյանի (Սարուխան) «Օսմանյան հայերի սահմանադրութիւնը» աշխատությունը, որը շարունակաբար տպագրվել է ամսագրի 1910 թվականի համարներում: Այն պարունակում է հարուստ նյութ հայ ժողովրդի արևմտյան հատվածի կենցաղի, սոցիալտնտեսական իրավիճակի, Հայկական հարցի և այլնի վերաբերյալ:

Ա. Սարուխանյանը, ինչպես և Հ. Առաքելյանը, լինելով սահմանադրական շարժման ջերմ պաշտպաններ, հանդես են եկել սահմանադրական կարգերի պաշտպանությամբ: Հ. Առաքելյանը միաժամանակ քննադատաբար է անդրադարձել ռուսական սահմանադրությանը, համարելով այն լոկ դիմակ, որը կորցրել էր իր ուժը բյուրոկրատական գերիշխանության հետևանքով:

Ամսագրում առանձին ուշադրության են արժանացել ինչպես արևմտահայ, այնպես էլ հայկական դատի պաշտպան հայ, ռուս և արևմտաեվրոպական գրողները, հրապարակախոսները: Առանձնապես բարձր է գնահատվել բանաստեղծ, խմբագիր, հասարակական գործիչ Պիեռ Քիյարը: Նրա մահվան առթիվ տպագրված հոդվածում (հեղինակ Հ. Առաքելյան) ընդգծված է այն հանգամանքը, թե մեծ գործիչը, Սասունի ջարդերի ժամանակ լինելով Կ. Պոլսում, անարգանքի խոսքեր է հնչեցրել սուլթան Աբդուլ Համիդի հասցեին և ֆրանսիական թերթերում դատապարտել է արյունկզակ ջարդարարին:

Հ. Առաքելյանը, լինելով խաղաղասիրական շարժման ակտիվ գործիչներից մեկը, իր ամսագրում էջեր է տրամադրել շարժման հարցերի լուսաբանմանը: Ուշագրավ է նրա «Խաղաղասիրական շարժումն երկրագնդի վրայ» հոդվածաշարը (1910, թիվ 2, 8–10): Այստեղ ներկայացված է արևմտաեվրոպական զարգացած երկրներում կազմակերպված խաղաղասիրական ընկերությունների մեծ դերը պատերազմների կանխման գործում: Ամսագրում շարունակաբար տպագրվել են 1889 թ. հունիսի 23-ին Փարիզում կայացած խաղաղության առաջին և հաջորդ կոնգրեսների որոշումները, վճիռները, օրենսդրական ակտերը, ինչպես նաև հայկական կոտորածներից և Կրետեի ապստամբությունից հետո Բուդապեշտում տեղի ունեցած խաղաղության միջազգային կոնգրեսի նյութերը: Միաժամանակ տպագրվել են այդ կոնգրեսի միջազգային իրավունքի ծրագրի բոլոր հոդվածները:

«Արօրը» ոչ միայն քարոզել է խաղաղասիրական շարժման գաղափարները, այլ նաև գործնական միջոցներ է մշակել խաղաղասիրական շարժումը հայ իրականությունում կազմակերպելու, խաղաղասիրական ընկերություններ ստեղծելու ուղղությամբ: Խմբագիրը Թեհրանում կազմակերպել է «Պարսկահայերի խաղաղության և իրավաբանության ընկերությունը», որը առաջին խաղաղասիրական

հայկական ընկերությունն է: Որպես խաղաղասիրական շարժման ակտիվ գործչի՝ Համբարձում Առաքելյանին ճանաչել են արևմտաեվրոպական քաղաքակիրթ երկրներում: Հռոմի համալսարանում բացված խաղաղասիրական առաջին ցուցահանդեսի Հայաստանին նվիրված բաժնում ցուցադրվել է Հ. Առաքելյանի լուսանկարը մակագրությամբ. «Իմ ազգը, հայոց ազգը ունեցել է միշտ խաղաղասէր ոգի: Եվ նա խաղաղասէր ոգուն է պարտական իր երեք հազարամեայ պատմական գոյութեամբ» (1911, թիվ 10–11):

«Արօրը» անտարբեր չի մնացել ժամանակի ազգային քաղաքական կուսակցությունների գործունեության հանդեպ: «Հայկական կեանք» խորագրի տակ տպագրված հոդվածների հիմնական թեման կուսակցական պայքարն էր: Ցույց են տրված ազգային տարբեր կուսակցությունների (դաշնակցություն, հին և վերակազմյալ հնչակյաններ, Թիֆլիսում, Երևանում գործող հասարակական կազմակերպություններ և այլն) միջև եղած պայքարի վնասաբեր հետևանքները, որոնք ավելի էին ծանրացնում առանց այն էլ հոգսերով լի ժողովրդի կյանքը:

«Հայկական կեանք», «Ռուսահայ կեանք», «Թուրքահայ կեանք» խորագրերի տակ տպագրվել են հոդվածներ կաթողիկոսական ընտրությունների, եկեղեցու դերի, եկեղեցական-ծխական ուսումնարանների ծրագրերի, կանոնադրությունների, կաթողիկոսական դիվանի, Սինոդի, կոնսիստորիաների վերականգման և այլնի մասին:

Ամսագրում քննարկվել են նաև հայ ժողովրդի հին, միջին և նոր դարերի պատմության ու իրավագիտության հարցերը: Նման հարցերի շուրջ հոդվածներ են տպագրել Խ. Սամվելյանը («Հայ եկեղեցական պետական հարաբերութիւնները Հին Հայաստանում»), Հ. Առաքելյանը («Յավելուած պատմութիւն հայոց կամ Հայաստան») և ուրիշներ: Այս աշխատություններում պատմական դեպքերի վերլուծման հետ մեկտեղ անցկացվել է այն միտքը, թե V դարից սկսած հայերը ենթարկվել են ասպատակությունների, կոտորածների և միայն մի քիչ շունչ են քաշել «երբ ռուսները տիրապետել են Հայաստանի մի մասին» (1912, թիվ 3–4):

«Արօրում» բաց չեն թողնվել նաև լեզվաբանության հարցերը: Ստ. Մալխասյանի «Մի հնչիւն, մի գիր» (1910, թիվ 1), Ա. Նազարեթյանի «Ի՞նչ է ուղղագրութիւնը» (1910, թիվ 5) և այլ հոդվածնե-

րում պաշտպանվել է այդ տարիներին գործածության մեջ մտած վ-ի ուղղագրությունը, ընդունվել է մի հնչյուն, մի գիր սկզբունքը:

«Արօր» հետևել է նաև բնական գիտությունների բնագավառում ձեռք բերված նվաճումներին: Գյուղի բարեփոխման հույսերը կապվել են հողի մշակման եղանակների կատարելագործման, գյուղատնտեսության զարգացման հետ: Քննարկվել են գյուղում տնտեսության կազմակերպման համար նոր ընկերությունների ստեղծման հարցերը: Կարևոր դեր և նշանակություն է տրվել հատկապես զեմստվոներին: Այս և նման հարցերի շուրջ հոդվածներով հանդես է եկել մասնագիտությամբ գյուղատնտես, խմբագիր, հրապարակախոս Աշոտ Աթանասյանը: «Զեմստվոների գիւղատնտեսական գործունէութիւնը» հոդվածում նա բարձր է գնահատել Ռուսաստանում գործող զեմստվոների դերը, գրելով «...շնորհիւ դրանց գրէթէ ամէն նահանգում բացվել են գյուղատնտեսական ընկերութիւններ, որոնք ստանալով զեմստվոներից նիւթական նպաստներ, լայն կերպով օգնում են տարածելու ժողովրդի մէջ գիւղատնտեսական կատարելագործութիւնները նրա ամեն մի ճիւղում» (1910, թիվ 1):

Ամսագրում հոդվածներ են տպագրվել նաև կենդանական աշխարհի ծագման, առողջապահության, ժողովրդական բժշկության, Դարվինի տեսության, օդագնացության, տեխնիկայի բնագավառում նորությունների և այլնի մասին: Միաժամանակ նշվել է նորագույն գյուտերի կարևորությունը գիտության և տեխնիկայի զարգացման գործում: Ամսագիրը հանդել է այն եզրակացության, որ տարիների ընթացքում համաչափ չեն զարգացել տեխնիկան ու մարդկային հոգեբանությունը: Մարդկային էության մեջ բուն դրած «չար հակումների» հետևանքով տեխնիկան հաճախ չի ծառայել իր նպատակին: Իսկ եթե մարդը նույնպես զարգանար, կատարելագործվեր ինչպես տեխնիկան, ապա հասարակությունը կապրեր դրախտանման կյանքով:

Ամսագիրը բարոյախրատական նպատակներով տարածել է Աստծո պատվիրանները, աշխարհի իմաստուն մարդկանց խորիմաստ մտքերը: Կոնֆուցիուսի կյանքն ու ուսմունքը մեկնաբանող հոդվածը (1910, թիվ 11) հայ ընթերցողին ծանոթացրել է չին մեծ իմաստունի բարոյախրատական քարոզներին, որոնց համաձայն մարդը, որ ապրում է սիրով, կարող է շտկել մարդկային փոխհարա-

բերումները, կարող է հաստատել բարոյականության ու աշխարհաշինության ճշմարիտ օրենքներ:

«Արօրը» ժամանակին կատարել է կարևոր դեր հայ մշակույթի տարբեր ճյուղերի ժողովրդականացման գործում:

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ» (1909–1917)

Գյուղի և գյուղատնտեսության զարգացման հետ կապված հարցերը այս կամ այն չափով լուսաբանվել են ժամանակի գրեթե բոլոր պարբերականներում: Սակայն այդ հարցերի գիտական ու բազմակողմանի մեկնաբանման համար զգացվում էր մասնագիտական պարբերականի անհրաժեշտությունը: Ուստի և մասնագիտությամբ գյուղատնտես, հայ դեմոկրատական մտքի աչքի ընկած ներկայացուցիչ Աշոտ Աթանասյանը 1909 թ. Թիֆլիսում ձեռնամուխ է լինում «Գիւղատնտես» հայերեն մասնագիտացված պարբերականի հրատարակման գործին: Այն լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: 1914 թվականից թերթը դառնում է Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության օրգանը: 1915 թվականից, մեկ ամբողջ տարի թերթը լույս չի տեսնում: 1916 թ. հունիսի 15-ից վերսկսում է հրատարակվել, իսկ 1917 թ. մարտից դադարում է լույս տեսնելուց:

«Գիւղատնտես» երկշաբաթաթերթի ուշադրության կենտրոնում են գտնվել գյուղի և գյուղատնտեսության առջև դրված խնդիրները:

«Գիւղատնտեսին» աշխատակցել են մասնագիտությամբ գյուղատնտեսներ Գ. Գրձելյանը (ագրոնոմ-այգեգործ), Ա. Բոնդարևը (ագրոնոմ), Ս. Խարազյանը (շերամապահ), Գ. Խաչատրյանը (գինեգործ), Ս. Համալյանը (անասնաբույժ), Ս. Ղազարյանը (մեղվաբույծ), Հ. Լազարյանը (կոոպերացիայի մասնագետ) և ուրիշներ: 1915 թվականից երկշաբաթաթերթին աշխատակցել են Վ. Տոտոմյանցը, բժիշկներ Ա. Բուդուղյանը և Բ. Աղասարյանը և ուրիշներ: Թերթի հիմնական նպատակն է եղել օգտակար խորհուրդներով աջակցել երկրագործությամբ պարապող հայ ժողովրդին:

«Գյուղատնտեսը» համարձակորեն գրում է գյուղում տիրող սոցիալական աղաղակող հակասությունների մասին, ներկայացնում վաշխառուների խավի անօրինականությունները: Հայտնի է, որ այդ տարիներին հայ մտավորականության մեծ մասը վաշխառուի շահատակություններից գյուղացիությանը փրկելու լավագույն միջոց ընդունում էր կոոպերացիան: Ա. Աթանասյանը «Ժողովրդական բանկ» հոդվածում (1911, թիվ 1) պարզաբանում էր կոոպերատիվ հիմունքներով ստեղծված ընկերությունների դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման գործում:

Թերթում պարբերաբար տպագրվում էին հոդվածներ Ռուսաստանի, Անդրկովկասի քաղաքներում և գյուղերում բացված կոոպերատիվ ընկերությունների գործունեության մասին: Թերթը հայ ընթերցողին ծանոթացրել է Պետերբուրգում կայացած փոքր վարկի և գյուղատնտեսական կոոպերացիայի առաջին համագումարի աշխատանքներին, տպագրել համագումարում Տուգան-Բարանովսկու, Վ. Տոտոմյանցի և Իզնատևի ներկայացրած առաջարկը, որտեղ ասված է. «Կոոպերացիան, ինչպէս մի կուլտուրական գործ, միացնելով կուլտուրական տարրերը և կենդանի պահելով դեմոկրատիկական գաղափարները, ժամանակակից հասարակութեան մէջ ունի մի այլ նշանակութիւն» (1911, թիվ 12): Կոոպերատիվների բանիմաց մասնագետ-ղեկավարներ պատրաստելու համար առաջարկվել է Անդրկովկասում բացել բարձրագույն դպրոց, կամ համալսարան՝ հատուկ մասնագիտական ֆակուլտետներով:

Շաբաթաթերթը, կոոպերատիվ կազմակերպությանը վերագրելով հասարակական ակտիվ դեր, պահանջում է այդ ընկերություններում ընդգրկել աշխատավոր խավերի ներկայացուցիչներին: Թերթի համոզմամբ՝ աշխատավորները համախմբվելով մեկ ընդհանուր ընկերության շուրջ, կսովորեն կոլեկտիվ ուժերով վարել տնտեսությունը, կմտնեն փոխադարձ ընկերական կապերի մեջ ու համերաշխ կհասնեն իրենց ձգտումների ու նպատակների իրականացմանը: Այսպես՝ անդրադառնալով Թիֆլիսի հավլաբար թաղամասում բացված կոոպերատիվ սպառողական խանութի գործունեությանը՝ թերթը գրում է այն մասին, որ այդ խանութը բնակչությանը մատչելի գներով մթերք մատակարարելուց բացի, աշխատավորության լայն մասսաներին «կպատէ մէկը ընդհանուր գործունէութեան գիտակ-

ցութիւն, առաջ կբերի նրանց մէջ ընդհանուր գործունէութեան ջիղ» (1913, թիվ 8):

«Գիւղատնտեսը», մասնակցելով Թիֆլիսում բացվելիք բարձրագույն դպրոցի շուրջ ծագած վեճին, իր կարծիքն արտահայտում է այսպես. «Կովկասին առաջին հերթին հարկավոր է ոչ թէ համալսարան իր վերացական բաժանմունքներով, այլ այնպիսի բարձրագոյն դպրոց, ուր ավանդուէն գործնական գիտութիւններ, այսինքն գիւղատնտեսութիւն և լեռնային արդյունագործութիւն» (1911, թիվ 7):

Անդրկովկասում գյուղատնտեսական գիտելիքների տարածման գործում իր կարևոր դերն է կատարում «Գիւղատնտեսը»: Ամսագրի գրեթե յուրաքանչյուր համարում պարբերաբար տպագրվում էին հողերի մշակման, թռչնաբուծության, մեղվաբուծության, այգեգործության վերաբերյալ մեթոդական նյութեր: Շաբաթաթերթը միաժամանակ կազմակերպում էր գյուղատնտեսության վերաբերյալ գրված աշխատությունների տպագրության և տարածման գործը: Ըստ խմբագրի՝ հայ մասնագետների «գլխավորագոյն պարտականութիւններից մէկն է՝ տալ մեր գիւղական ինտէլիգենտ գործիչների ձեռքը հանրամատչելի և տարրական տեղեկութիւններ գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերից: Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով, ես ծրագրել եմ մի շարք հանրամատչելի և տարրական աշխատութիւններ անասնապահութեան և անասնաբուծութեան մասին: Այդ աշխատութիւններն պարբերաբար կզետեղվեն «Գիւղատնտեսի» էջերում, իսկ մի քանիսը լոյս կտեսնեն առանձին գրքոյկներով» (1913, թիվ 6):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Գիւղատնտեսը» հանդես է եկել հայրենասիրական կոչերով, իր հոդվածներով ոգևորել թիկունքի աշխատավորությանը: «Գիւղատնտեսի» խմբագրությունը կարևոր տեղ է հատկացրել տաճկահայերի ավերված տնտեսության վերականգնման հարցերին: Եվ հորդորել է բոլոր հայ գյուղատնտեսներին՝ համախմբվել «Գիւղատնտեսի» և Հայոց գյուղատնտեսական ընկերության շուրջն ու միացյալ ուժերով առաջ մղել «ժողովրդական տնտեսութեան շինարարական մեծ գործը»: Պարբերականում լուսաբանվել են հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեի՝ թուրքական կոտորածներից մազապուրծ հայերի վերաբնակեցման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքնե-

րը: Խրախուսանքի են արժանացել նրանք, ովքեր ինքնակամ համախմբվում էին և գործուղվում Պարսկաստան և այլ վայրեր՝ դաղձականության համար լծկան անասուններ, գյուղատնտեսական գործիքներ հայթայթելու համար: «Պատերազմն ու կոոպերացիան» 1916 թ. առաջին երեք համարներում տպագրված հոդվածաշարում (հեղինակ Ստ. Նազարյան) պրոպագանդվում են գյուղատնտեսական աշխատանքների այն ձևերը, որոնք կիրառվում էին արևմտաեվրոպական զարգացած երկրներում և Ռուսաստանում: Հոդվածաշարում առաջարկվում է Անդրկովկասում կազմակերպել կոոպերատիվ հիմունքներով գործող սերմազտիչ և այլ գործիքների վարձակետեր, որոնց միջոցով համապատասխան օգնություն ցույց կտրվեր ռազմաճակատ մեկնածների ընտանիքներին:

«Հայ գյուղի կարիքները», «Գյուղն ու գյուղացին» և այլ հոդվածներում բարձրացվել են տեղերում գյուղատնտեսական ընկերության մասնաճյուղերի ստեղծման և դրանց գործունեության ընդլայնման հարցերը:

«Գյուղատնտեսն» ունեցել է նաև հավելվածներ, որոնք ձրի ուղարկվել են բաժանորդներին: Դրանք սովորեցրել են հողի մշակման, այգիների խնամքի ու պահպանման նորագույն ձևերն ու եղանակները, ինչպես նաև հաղորդել են գիտելիքներ անասնապահության, մեղվաբուծության, շերամապահության և գյուղատնտեսական այլ ճյուղերի տարածման ու զարգացման վերաբերյալ:

«Գյուղատնտես» երկշաբաթաթերթը, ժամանակին մասնագիտական գրականության բացակայության պայմաններում այն հանրամատչելի մասնագիտական պարբերականն էր, որից օգտակար գիտելիքներ են քաղել գյուղացիները՝ հողային աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար:

«Գյուղատնտեսը» արժանացել է ժամանակի հայ մամուլի և մտավորականության բարձր գնահատականին:

«ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ» (1903–1905)

Բժշկության և առողջապահության հարցերին նվիրված առաջին պարբերականի՝ «Առողջապահական թերթ» ամսագրի (1881–

1884, Երևան) դադարումից հետո մոտ 20 տարի անց՝ 1903 թվականին արևելահայ իրականությունում լույս է տեսնում իր տեսակի մեջ երկրորդ բժշկական պարբերականը՝ «Առողջապահիկ թերթ» հանդեսը: Հանդեսի խմբագիրն էր բժիշկ Վահան Արծրունին:

Վ. Արծրունին ծնվել է 1857 թվականին Նոր-Բայազետում: Սովորել է Թիֆլիսի կլասիկական գիմնազիայում, ապա ուսումը շարունակել Ֆրանսիայում: 1885 թվականին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը, խորացել քիթ-կոկորդ-ականջի հիվանդությունների բուժման մեջ: Այնտեղ նա ընտրվել է քիթ-կոկորդ-ականջաբանների ընկերության թղթակից անդամ: 1889 թվականից աշխատել է Թիֆլիսում, որպես սանիտարական, ապա՝ դպրոցական բժիշկ:

Վահան Արծրունին միաժամանակ ծավալել է հրապարակախոսական լայն գործունեություն, մամուլի էջերում հանդես է եկել և՛ առողջապահության, և՛ հասարակական կյանքի հարցերին նվիրված հոդվածներով: Նա գրել է մի շարք աշխատություններ, որոնք լույս են տեսել առանձին գրքերով: Նա հրատարակել է նաև գեղարվեստական գործեր՝ Վահունի ծածկանունով: Որպես բժիշկ՝ Վ. Արծրունին ամենօրյա ձրի ընդունելություններ է կազմակերպել հիվանդների համար: Նրա գրական-գեղարվեստական, ինչպես և գրաքննադատական աշխատությունները տպագրվել են «Մուրճ» և այլ պարբերականներում:

1920 թ. Վ. Արծրունին տեղափոխվել է Երևան և մի խումբ հայ բժիշկների հետ Երևանի պետական համալսարանում հիմնադրել բժշկական ֆակուլտետը և ղեկավարել նորմալ անատոմիայի ամբիոնը: Իսկ երբ բժշկական ֆակուլտետը կազմավորվել է որպես առանձին ինստիտուտ, նա դարձել է այդ ինստիտուտի առաջին դասախոսներից մեկը:

Վ. Արծրունին Երևանում ծավալել է գիտական բեղուն գործունեություն: Կազմել և հրատարակել է բժշկական ձեռնարկներ հայերեն լեզվով, լույս է ընծայել մարդու անատոմիայի առաջին հայերեն դասագիրքը: 1924 թ. հրատարակել է ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկական գիտական տերմինների առաջին բառարանը, որով և մեծ ծառայություններ է մատուցել բժշկագիտությանը:

Գիտահետազոտական աշխատանքներում և գործնական բժշկության մեջ մեծ վաստակ ունեցող գործիչը մահացել է 1947 թ., Երևանում:

Վահան Արծրունու կյանքի և գործունեության ուսումնասիրությանն առանձին բաժին է հատկացրել բժշկական գիտությունների դոկտոր Ռ. Ս. Փարսադանյանը «Հայ բժշկության պատմությունից» աշխատության մեջ (Երևան, 1958):

Հարուստ է «Առողջապահիկ թերթ» ամսագրի ծրագիրն ու բովանդակությունը: Բժիշկ խմբագրին ու միաժամանակ հասարակական գործչին անհանգստացրել են 1903–1905 թվականներին հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրները՝ հոգևոր կյանքի հետամնացությունը, սովը, համաճարակը, առողջապահական կանոններին անտեղյակությունը, սնոտիապաշտությունը, հեքիմներին հավատալը, երեխաների խնամքի բացակայությունը, բժշկի դերի թերագնահատումը և այլն:

«Առողջապահիկ թերթ» հանդեսին աշխատակցել են ինչպես բժիշկներ, այնպես էլ տարբեր մասնագիտության գործիչներ: Ամսագրի շուրջ համախմբված են եղել բժիշկներ Ա. Աղասարյանը, Ա. Խատիսյանը, Ն. Ումիկյանը, Ա. Բուդաղյանը (Պետերբուրգ), Մ. Զալյանը, Գ. Սարգսյանը, Հ. Գարասեֆիլյանը (Վիեննա), Վ. Թորգոմյանը, Ն. Տաղավարյանը (Կ. Պոլիս), Բ. Նավասարդյանը, Լ. Տիգրանյանը, Փաշայան-խանը (Եգիպտոս), Ա. Բաբայանը (Փարիզ) և ուրիշներ: Ամսագիրը ունեցել է աշխատակիցներից կազմված խմբագրական խորհուրդ:

Հանդեսին աշխատակցել են նաև անասնաբույժներ Ռ. Կոստանյանը (Ռուսաստան), Ն. Կաճկանյանը, Շիրինյանը և ուրիշներ:

«Առողջապահիկ թերթը» հրատարակվել է ամիսը երկու անգամ, յուրաքանչյուր համարը մեկուկես տպագրական մամուլ ծավալով:

Բժշկական նախորդ ամսագրի նման «Առողջապահիկ թերթ» կիսամսյա հանդեսը լայն տարածում է գտել այն բոլոր վայրերում, որտեղ հայություն հոծ զանգվածներ են ապրել: Այն հատկապես մեծ ընդունելություն է գտել գավառներում:

Ամսագրի նպատակը եղել է մեկը՝ հայ ժողովրդի մեջ լայնորեն տարածել առողջապահական կանոնները, բժշկական գիտելիքները:

Առողջապահական կանոններին հետևելը և դրանց պահպանությունը Վահան Արծրունին համարել է ոչ միայն անհատական, այլև հասարակական կարևոր գործ: Նրա համոզմամբ՝ առողջ մարդկանցից է կազմվում առողջ հասարակությունը, որը ընդունակ է արդյունավետ աշխատանքի, իսկ արդյունավետ աշխատանքն էլ ստեղծում է նյութական ու հոգևոր հարստություն, որն անվանում են «ընդհանուր առմամբ առաջադիմություն»:

«Առողջապահիկ թերթ» հանդեսի լույս ընծայումը ոգևորությամբ են ընդունել մամուլն ու հայ մտավորականության ներկայացուցիչները: Առաջինն իր ողջույնի խոսքն է տպագրել «Մշակը»՝ գրելով. «Մեր գաւառական և մանավանդ գիւղական գործիչների վրա պարտականութիւն կա տարածելու այդ ժողովրդական թերթը հասարակ ժողովրդի բոլոր խաւերի մեջ: Ահա կուլտուրական համեստ, բայց շատ օգտակար մի գործ, որի անհրաժեշտութիւնը վաղուց էր զգացւում մեր մէջ» (1903, թիվ 3):

Հանդեսը բարձր են գնահատել արևմտահայ մամուլի օրգանները: Այսպես, «Արեւելեան մամուլը» գրել է. «Հանրային և անհատական առողջապահութեան նվիրեալ թերթը շատ թանկագին ծառայութիւններ է մատուցելու, կոչուած է հայ համայնքի ամէն դասակարգերուն և կարծես որ պէտք եղած քաջալերութիւնը գտնէ այն եւ տարածուի ժողովրդական ամեն խաւերուն մէջ» (1903, թիվ 4):

«Առողջապահիկ թերթ» հանդեսը լույս է տեսել երկու տարեշրջան: Առաջին շրջանը սկսվել է 1903 թ. հոկտեմբերի 1-ին և ավարտվել 1904 թ. սեպտեմբերի 15-ին: Երկրորդ շրջանը սկսվել է 1904 թ. հոկտեմբերի 1-ից և ավարտվել 1905 թ. հոկտեմբերի 1-ին: Յուրաքանչյուր շրջանի համար բաժանորդներին ուղարկվել են ձրի հավելվածներ վեց գրքույկներով: Դրանք նվիրված են եղել տարբեր հիվանդությունների բուժմանը, երեխաների խնամքին, կնոջ առողջապահությանը:

Պարբերականի պահանջը այնքան մեծ է եղել, որ առաջին շրջանում տպաքանակը հասել է 3000-ի:

Հանդեսի խմբագիրը ձգտել է իր պարբերականով օգնել հայ ժողովրդին յուրացնելու բժշկության տարրական հիմունքները, առողջապահության հիմնական կանոնները: «Մեր իղձն է,- գրել է նա,-

որ ժողովուրդը մեր թերթը կարդալուց յետոյ մի գործնական օգուտ դուրս բերի, մի բան պահի մտքումը» (1904, թիվ 7):

Գիտահանրամատչելի հոդվածներով ամսագրում հանդես են եկել Վ. Արծրունին, Ավ. Բաբայանը, Լ. Տիգրանյանը և ուրիշներ: Համարից-համար շարունակաբար տպագրվել է Վ. Արծրունու «Ինչպէս է կազմուած մարդու մարմինը» հոդվածաշարը, որը պատկերազարդ է և մատչելի լեզվով տեղեկություններ է հաղորդել մարդու կազմվածքի, տարբեր օրգանների ունեցած դերի մասին:

«Տգիտութեան աշխարհից» ընդհանուր վերնագրի տակ տպագրված «Հակաառողջապահական սնոտիապաշտութիւններ», «Դեռահասների պսակը» և այլ հոդվածներում գիտականորեն ապացուցվում էին սնոտիապաշտության վնասաբեր հետևանքները մարդու առողջության համար:

Հանդեսի խմբագրությունը հաճախ առանձին հոդվածներով դիմել է իր ընթերցողներին՝ խնդրելով տեղեկություններ հաղորդել ժողովրդի մեջ տարածում գտած հակաառողջական և վնասաբեր սովորությունների մասին: Հաճախ էլ առանձին բժիշկներ հանդես են եկել մատչելի լեզվով գրված հոդվածներով և բացահայտել հեքիմների, գրբացների գործադրած միջոցների վնասակարությունը, սակայն դա չէր նշանակում, թե ամսագիրը չէր ընդունում ժողովրդական բժշկությունը: Հանդեսում խրախուսվում են այն մասնագետները, որոնք դեղաբույսերից պատրաստած դեղանյութերով կարողանում էին բուժել այս կամ այն հիվանդությունը: Այսպես՝ պարբերաբար տպագրվել է Կ. Մելիք-Շահնազարյանի «Տնային բժշկութիւնը Ղարաբաղում» հոդվածների շարքը, որտեղ օգտակար խորհուրդներ են տրվել վերքերի, ուռուցքների բուժման համար: Ամսագրում քննարկվել են նաև ժողովրդի առողջապահության պահպանմանը խանգարող հանգամանքներն ու պատճառները: Մեծ թիվ են կազմում հարբեցողության, գինեմոլության հետևանքներին նվիրված հոդվածները («Գինեմոլութեան զոհեր», «Ալկոհոլիզմը և թութախոտը», «Կռիւ հարբեցողութեան դէմ» և այլն): Ամսագիրը իր խոսքը ավելի ներգործուն դարձնելու համար տպագրում է Ռուսաստանում գործող «Ալեքսանդր Նևսկի» հակաալկոհոլական ընկերության ջանքերով հրատարակված ժողովածուից ընտրված պատմվածքները: Օգտագործելով այդ փորձը՝ ամսագիրը հարց է բարձ-

րացնում Թիֆլիսում ևս հակաալկոհոլական նման ընկերություն կազմակերպելու մասին:

Այդ տարիներին (1903–1905) ժողովրդի մեջ լայնորեն տարածված էին համաճարակային հիվանդությունները: 1903 թվականի խոլերան լուրջ վնասներ հասցրեց բնակչությանը: Վահան Արծրունին, որ նախորդ տարիներին զբաղվել էր համաճարակային հիվանդությունների կանխման հարցերով, ժողովրդի կենցաղային վատ պայմանների բարեփոխման հետ էր կապում վարակիչ հիվանդությունների տարածման պատճառը: Նրա կարծիքով ժողովրդի տնտեսական պայմանները կբարեփոխվեն այն ժամանակ, երբ կփոխվեն երկրի վարչական կարգերը, երբ լայնորեն կտարածվի երկրի մեջ լուսավորությունը, երբ խոսքի, մտքի, հավաքույթների, հասարակական ու համայնական կազմակերպությունների ազատություն կտրվի:

Վ. Արծրունին «Առողջապահիկ թերթի» հետ լույս էր ընծայում նաև խոլերայի կանխման վերաբերյալ գրքույկներ և ձրի տարածում բնակչության մեջ:

Ամսագրում պակաս տեղ չեն գրավել նաև գործարաններում աշխատող բանվորների առողջապահական վիճակը ներկայացնող հոդվածները: Անդրադառնալով գործարանում տիրող հակասանիտարական պայմաններին՝ հանդեսը քննադատական խոսք է ասում գործարանատերերի հասցեին՝ գրելով. «Կապիտալիստները չեն հոգում բանուորի ապագայի մասին» (1904, թիվ 6): Ամսագրում բանվորների և ընդհանրապես ժողովրդի առողջության պահպանման գործը քննարկվում է սոցիալ-տնտեսական կյանքի բարեփոխման հարցերի հետ սերտորեն շաղկապված: Պահանջվում է գործարաններում ստեղծել նորմալ պայմաններ, կրճատել աշխատաժամերը, ուժեղացնել սանիտարա-հիգիենիկ հսկողությունը, կազմակերպել սննդի ու հանգստի գործը, լուծել բանվորների քաղաքացիական իրավունքներն ու պահանջները: Առաջ է քաշվում հայ իրականությունում ևս զեմստվային բժշկականություն ստեղծելու խնդիրը: Դրանով ամսագիրը հետապնդում է մի նպատակ՝ քաղաքային և գյուղական զեմստվոների միջոցով ստեղծել հիվանդանոցներ և բժշկական բոլոր տեսակի ծառայությունները կազմակերպող հիմնարկ-ձեռնարկություններ: «Զեմստվօն և բժշկական օգնութիւնը գյուղերում» հոդվածում (1905, թիվ 17) կարևորվում է ժողովրդի նախա-

ձեռնությամբ կազմակերպված կառավարչական այդ ձևի մեծ դերն ու նշանակությունը: «Ժողովրդի ձեռներեցութիւն,- գրում է ամսագիրը,- ժողովրդի կոպեկներով, ահա մի կուլտուրական ազգի առաջադիմութեան խթանները: Կոպեկ-կոպեկ հավաքուած գումարներով է, որ բարուոքվում է հասարակական կեանքը: Եւ զեմստվօն կարելիութիւն է տալիս ամեն անհատի իր լուման հասարակութեան շահերին ծառայեցնելու» (1905, թիվ 17):

Հանդեսում ժողովրդի կյանքի բարելավման միջոցներից են համարվել ապահովագրական ընկերությունները, «որոնցով պատուած է Եվրոպայի բանուորական աշխարհը եւ որոնց մասնակցող բանւորը ապահովուած է թէ ինքը, եւ թէ իր ընտանիքը» (1905, թիվ 2):

«Առողջապահիկ թերթը» հետևողականորեն պայքար է մղել մաքուր սերնդի, հատկապես դպրոցական երեխաների առողջական վիճակի և առողջապահական պայմանների բարեփոխման համար: Վահան Արծրունին մասնագիտության բերումով երկար տարիներ աշխատել է դպրոցներում: Այդ իսկ պատճառով մոտիկից ուսումնասիրել է դպրոցական առողջապահության հարցերը, դպրոցականների տարիքային առանձնահատկությունները: Հետևելով արտասահմանյան և ռուսական բժշկա-սանիտարական վերահսկողության սկզբունքներին, Արծրունին փորձել է հայկական դպրոցներում ևս նման սկզբունքներով կազմակերպել առողջապահության գործը: Դեռ 1895 թ. իր «Դպրոցական առողջապահութիւն» կարևոր աշխատության մեջ շարադրված սկզբունքները Արծրունին պրոպագանդել է իր «Առողջապահիկ թերթ» ամսագրում: Հանդեսում տպագրված նրա «Դպրոցական առողջապահութեան մասին», «Աշակերտի գիրքը», «Ֆիզիկական կրթութիւն» և այլ հոդվածներում քննարկվել են դպրոցական հիգիենայի, դասասենյակների լուսավորության, աշակերտների ֆիզիկական դաստիարակության հարցերը:

«Առողջապահիկ թերթ» ամսագրում բարձրացվել է նաև ուսումնական ծրագրերի վերանայման հարցը: «Առողջաբանութեան դասավանդման մասին» հոդվածում (1905, թիվ 22) պահանջվել է ստեղծել բժիշկներից ու մանկավարժներից կազմված մասնաժողով, որին և հանձնարարել ուսումնական ծրագրերի մշակման գործը: Իսկ «Առողջաբանութեան և հիւանդախնամութեան ուսուցման մա-

սին» հոդվածում (1905, թիվ 23) բացատրվում են բժշկական գիտելիքների դասավանդման եղանակներն ու մեթոդները:

Ամսագրում հատուկ ուշադրության են արժանացել նախադպրոցական հասակի երեխաների ու նորածին մանուկների խնամքի և առողջապահության հարցերը («Մայրը եւ հիւանդ երեխան», «Մանուկների առողջապահութիւնը» և այլն):

«Մանր խորհուրդներ» խորագրով տպագրված հոդվածները նույնպես պարունակում են երեխաների խնամքի վերաբերյալ օգտակար խորհուրդներ: Ուշագրավ է հատկապես Ա. Բուդուղյանի «Երեխայական աշխարհ ցուցահանդէսը» հոդվածը, որտեղ ընտեղված են Պետերբուրգում մայրերին օգնելու համար կազմակերպված ցուցահանդեսի նյութերը: Հոդվածում առաջարկվում է նման ցուցահանդես կազմակերպել նաև հայկական գյուղերում ու քաղաքներում:

1905 թ., երբ Բաքվում և Նոր-Նախիջևանում տեղի ունեցած հայկական կոտորածների լուրը հասնում է Թիֆլիս, ամսագիրը տպագրում է Ա. Բուդուղյանի՝ Պետերբուրգից ուղարկած հոդվածը, որտեղ ասված է. «Բաքուի փետրուարեան դէպքերը ցոյց տուեցին, որ մարդկանց մէջ դեռեւս շատ գազաններ կան, նրանք ապացոյց են, որ ամենաթոյլ ընդդիմադրութիւնը եւ ամենաչնչին արիութիւնն անգամ կարող են դադարեցնել արեան հոսումը երկու կողմից էլ» (1905, թիվ 13):

«Առողջապահիկ թերթը» դիմելով իր ընթերցողներին՝ խնդրում է օգնության ձեռք մեկնել Բաքվում և Նախիջևանում վնասվածների ընտանիքներին: Կոչ է անում հայ հարուստներին՝ ստեղծել «գթութեան համայնքներ», որոնց դերը անչափ մեծ է պատերազմական ժամանակներում: Կանխատեսելով կոտորածների հետևանքները՝ սով, համաճարակ, հոգեկան խանգարում, ամսագիրն առանձին կոչով դիմում է ամբողջ հասարակությանը՝ «Ահն ու սարսափը եւ դրանցից առաջացած ժողովրդի յուզումը մեղմացնելու համար անհրաժեշտ է նոյնպէս, որ բժշկական խմբերին միանային նաեւ ժողովրդի ազդեցիկ մարդկանցից բաղկացած խմբեր, որոնք թէ իրենց բարոյական ազդեցութեամբ, և թէ՛ նիւթական օգնութեամբ, շրջելով վնասուած գիւղերը, մխիթարութիւն և կտոր հաց մատակարարէին» (1905, թիվ 18):

Ամսագիրը բժշկի պարտականություններից մեկն էլ համարել է բարոյական ներգործությունը: Վ. Արծրունու «Բժիշկը եւ հասարակութիւնը» հոդվածաշարում (1905, թիվ 15–18) կարևորություն է տրվում բժշկական ծառայության հոգեբանական կողմին, հատկապես ներշնչանքին և բժշկի սրտացավ ու հոգատար վերաբերմունքին:

Ինչպես նկատվում է, պարբերականը սոսկ բժշկական գիտելիքների տարածման համար չի պայքարել, այլ հետապնդել է նաև հասարակական ու քաղաքական նպատակներ: Քաղաքական բնույթի հոդվածների համար խմբագիրը քանիցս հալածվել է կառավարության կողմից, խուզարկվել է նրա բնակարանը, բռնագրավվել են ամսագրի համարները: Սակայն այդ ամենը չի ընկճել խմբագրին: Նա հրատարակել է իր պարբերականը՝ քաջ գիտակցելով իր կատարած աշխատանքի կարևորությունը հայ ժողովրդի կյանքում:

«ՆՈՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ» (1912–1914)

Հաջորդ բժշկական պարբերականը Երվանդ Մինասյանի հրատարակած «Նոր առողջապահիկ» երկշաբաթաթերթն է: Այն լույս է տեսել Թիֆլիսում, 1912–1914 թթ.: Հիմնական աշխատակիցներն էին բժիշկներ՝ Բ. Աղասարյանը, Ա. Բուդուղյանը, Ա. Ղազարյանը, Պ. Մկրտումյանը և ուրիշներ: Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտական ցուցակում գրված է, որ պարբերականը լույս է տեսել որպես «Գիւղատնտեսի» հավելված[1]: Սակայն ոչ «Գիւղատնտեսի», և ո՛չ էլ «Նոր առողջապահիկի» համարներում այդ մասին ոչինչ չի նշված:

Երկշաբաթաթերթում տպագրված բժշկական զրույցները վերաբերում են առողջապահական կանոնների պահպանմանը, վարակիչ հիվանդություններից բնակչությանը զերծ պահելու միջոցներին: Մասնագիտական հոդվածների հետ տպագրվել են նաև բնակչության առողջապահական պայմանների բարելավման վերաբերյալ նյութեր: Դրանցում հիմնականում քննարկվել են տեղի, շրջապատի, բնակարանային պայմանների, կենցաղի և սովորությունների հետ կապված հարցերը: Խմբագիրը կովկասյան հակատուբերկուլյո-

[1] Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Ե., 1934, էջ 74:

գային ընկերության առջև խնդիր էր դրել առավել ուշադրություն դարձնել գավառական բնակչության կենցաղային պայմանների բարելավման հարցերին: Մի շարք հոդվածներում մանրամասն ծանոթություն է տրվում նորածին մանկան խնամքի մասին: Նշվում են այն պայմանները, որոնք անհրաժեշտ են ֆիզիկապես առողջ երեխա աճեցնելու համար:

Երկշաբաթաթերթը հատուկ կոչով դիմել է Թիֆլիսում հայ մտավորականությանը՝ օգնության ձեռք մեկնել հայկական գյուղերին և տեղերում գյուղական բնակչության համար կազմակերպել առաջին անհրաժեշտ բժշկական օգնությունը:

Խմբագիր Ե. Մինասյանն առաջարկել է Թիֆլիսում հիմնել ժողովրդական առողջապահական ընկերություն, որի գլխավոր նպատակը պետք է լիներ շրջիկ բժշկական խմբեր կազմելը և մատչելի գներով գյուղացիներին դեղանյութեր հասցնելը: «Էժան բնակարանների նորակազմ ընկերութիւնը» հոդվածում ողջույնի խոսք է ասվել Թիֆլիսում բացված նորակազմ ընկերության հասցեին և հույս հայտնվել, որ ընկերությունը կծառայի առողջապահության գործի կազմակերպմանը: «Ահա մի ասպարէզ,- գրված է այնտեղ,- որ նորից միայն համագործ կոոպերացիան կարող է իսկապէս գործ տեսնել: Եւ նոր ընկերութիւնը, որը հիմնուած է կոոպերացիայի սկզբունքների վրա, պէտք է հասարակական կեանքի այդ պակասը լրացնի: Նոր ընկերությունը պետք է հնար տայ ամենահամեստ ընտանիքի համար նոյն վճարով, եթէ ոչ պակաս, պատրաստել մաքուր, փոքրիկ բնակարաններ պարտէզներով, ամեն հարմարութիւններով՝ առողջապահութեան բոլոր համապատասխան պահանջներով» (1912, թիվ 16): Այս հոդվածում շոշափվում են նաև սոցիալական հարցեր: «Քաղաքի աշխատաւոր տարրերին,- գրում է Ե. Մինասյանը,- անկուշտ տանուտէրերի ճանկերից եւ բնակարան կոչուած նկուղներից ազատելը փոքր ծառայութիւն չէ մեր հասարակական կեանքում» (1912, թիվ 16):

Այսպիսով, «Նոր առողջապահիկ» թերթն իր նախորդ առողջապահական պարբերականների նման տարածելով բժշկասանիտարական գիտելիքներ քաղաքի և գյուղի ազգաբնակչության մեջ՝ միաժամանակ փորձել է նպաստել նրա սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը:

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1905–1907 թթ. ռուսական բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխության տարիներին հասարակական, քաղաքական իրադարձությունների շրջապտույտում, մշակույթի այլևայլ ձևերի հետ աննախադեպ զարգացում է ապրում հայ մամուլը, որի անդաստանում երևան են գալիս երգիծական պարբերականներ:

Արևելահայ երգիծական մամուլն իր ազդեցության շառավիղներով թափանցում է սոցիալական, տնտեսական, քաղաքական հասարակական կյանքի ոլորտները՝ դառնալով դրանցում տեղ գտած հակասությունների ու անարդարությունների մերկացման, խարազանման սուր և ազդու միջոցներից մեկը: Երգիծական մամուլի ներգործուն դերի մասին ժամանակին նշանավոր հրապարակախոս, երգիծաբան Հարություն Սվաճյանը գրել է. «...քաղաքակիրթ ազգերը հատկապէս ժողովրդեան եւ տէրութեան վարմանց պակասութիւնները ծաղրելու համար լրագիրներ ունէին եւ այն ազգերը անանկ համոզուած են եւ իրաւամբ, թէ այն լրագրերու մէկ թերթը բարոյական դասատու փիլիսոփայի մը մէկ հատոր գիրքէն աւելի ազդեցութիւն եւ արդիւնք ունի»[1]*:*

1905 թ. սկսած արևելահայ իրականությունում հրապարակախոսության ասպարեզ դուրս եկած առաջադեմ մտավորականները (գրողներ, դրամատուրգներ, նկարիչներ և ուրիշներ), գործի դնելով երգիծելու իրենց շնորհքն ու տաղանդը, մեկը մյուսի հետևից լույս աշխարհ են հանել երգիծական պատկերազարդ պարբերականներ («Մոծակ», «Զուռնա», «Խաթաբալա», «Հայելի», «Աննամուս», «Սափրիչ», «Մախլաս», «Կաղ դեւ» և այլն): Ցավոք դրանք, բացառությամբ «Խաթաբալայի», լրիվ համարներով չեն պահպանվել: Այսպես՝ Թիֆլիսում լույս տեսած «Մոծակ» երգիծազավեշտական շաբաթաթերթի միայն մեկ համարն է (1907, թիվ 1) մեզ հաջողվել գտնել: Մինչդեռ շաբաթաթերթը 1907 թ. թևակոխել է իր հրատարակման 25-րդ տարին, ինչպես վկայում են ենթավերնագրի տակ տպագրված հետևյալ տողերը. «25-րդ - տարեշրջան»: Ելնելով սրանից կարելի է ենթադրել, որ «Մոծակը» լույս է տեսել 1882 թվականից:

---

[1] «Մեղու», 1857, թիվ 13, էջ 293:

«Մոծակ» երգիծական շաբաթաթերթը լույս է տեսել երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, վրացերեն): Խմբագիր-հրատարակիչներն են եղել Վ. Դավիդյանցը (փաստորեն՝ Գ. Երիցյանը), ապա՝ Հ. Խոջամիրը: Պարբերականի հիմնական նպատակը եղել է՝ երգիծանքի բազմազան միջոցներով ներազդել ժողովրդական լայն զանգվածների վրա, համախմբել նրանց ուժերը երկրի դեմոկրատացման համար ծավալված համաժողովրդական պայքարի շուրջ: Շաբաթաթերթի 1907 թ. առաջին համարում տպագրված հեռագրերից մեկում գրված է. «Հանաքչի երիտասարդների խմբագրութեամբ լոյս տեսավ ռուսերէն, հայերէն և վրացերէն տզզող և կծող «Մոծակի» առաջին համարը, ուր երեք լեզուներով հայտարարվում է, թե «ազատութիւնը Ռուսիայում անձեռնմխելի է, այսինքն, ոյժի ազատութեան ձեռք տալ չի կարելի, իսկ ուրիշի ունեցածը գողանալ, յափշտակել-փախչել, մինչև իսկ սպանել կարելի է»:

Շաբաթաթերթի բաժիններն ունեն յուրօրինակ վերնագրեր՝ Մասլահաթաբանութիւն, Հարստանալու գեղարուեստը, Բարեգործական դիմակի տակ, Լաց և կոծ, Փոստ և բաց նամակներ, Մտքեր և այլն: Նյութերը ստորագրված են երգիծաթերթի անվանը հարող ծածկանուններով (Մժեղ, Մոծակ, Սարդ, Բոռ, Կարիճ, Մեղրաճանճ և այլն):

«Մոծակ» երգիծական պարբերականի երգիծանքը ունի և՛ քաղաքական, և՛ սոցիալական ուղղվածություն: Այստեղ ծաղրուծանակի են ենթարկվում քաղաքական, հասարակական կարգերը, իշխանավորները, կաշառակեր դատավորները, աշխատավոր գյուղացուն ու բանվորին թալանողներն ու վիրավորողները:

Ռուսական բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխության տարիներին սոցիալական երգիծանքով և քաղաքական սարկազմով աչքի է ընկել «Հայելի» շաբաթաթերթը: Գեղարվեստական-երգիծական այս պարբերականը լույս է տեսել Թիֆլիսում, 1906–1907 թթ.: Անվանական խմբագիրը եղել է Վ. Պետրոսյանը, հրատարակիչը՝ Բ. Ճեպեյանը: Այն փաստորեն խմբագրել է դրամատուրգ Փառնակեսը (Մակար Տեր-Սարգսյան): Մ. Տեր-Սարգսյանը ծնվել է 1855 թ. Նախիջևանի Աստապատ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Գրել է մոտ 20 վոդևիլ և կատակերգություն: Շաբաթաթերթին աշխատակցել են Ս. Սաֆարյանը (Լիլիպուտ), Հ. Պետրոսյանը, Շ. Կուրղինյանը, Ե. Թոլայանը, Ա. Պայազա-

տը և ուրիշներ: Գունավոր պատկերների հեղինակներն են նկարիչներ Շամշինյանը, Զոմմերը, Ճեպեյանը և ուրիշներ:

Երգիծական շաբաթաթերթը բաղկացած է ութ էջից, վերջին էջերում զետեղված են ծաղրանկարները: Հիմնական բաժիններն են. Ֆելիետոն, Քրոնիկոն, Գեղարուեստական, Հեքիմարան, Հեռագրեր, Այլ և այլք: Ինչպես նախորդ երգիծական պարբերականում, այնպես էլ այստեղ հոդվածները ստորագրված են ծածկանուններով (Մոծակ, Բոյաճի, Ղազազենց Պեպան, Մացառ, Գայլ Վահան և այլն):

«Հայելի» անունն ինքնին հուշում է, որ շաբաթաթերթը իրերը, երևույթները, մարդկանց ներկայացնելու է այնպես, ինչպես որ կան: 1906 թ. թիվ 2-ի առաջնորդողում նշվում է, որ թերթի խնդիրն է լինելու ասել ճշմարտությունը, ցույց տալ հանցավոր պաշտոնյային, պատվավոր թվացող՝ գաղափարի քարոզչին և մեղապարտ մյուս իշխանավորին՝ իրենց «անճոռնի հոգով և կեղտոտ սրտով, զազիր, քստմնելի գործերով»:

Համակրալից վերաբերմունք ցուցաբերելով ժողովրդական ըմբոստ ելույթների, հեղափոխական շարժումների նկատմամբ՝ շաբաթաթերթը գրում է, որ ազգային կուսակցությունները, շատ ու շատ դեպքերում իրար միջև տարաձայնություններ ունենալով, խանգարում են շարժման տարածմանն ու առաջընթաց զարգացմանը: Դրա համար կոչ է անում նրանց՝ միաբանել:

Շաբաթաթերթի երգիծանքին առավել սրություն է հաղորդել լեզուն: Օգտագործված են հիմնականում Թիֆլիսի, ինչպես նաև Ղարսի, Նոր Նախիջևանի, Լոռու բարբառները և արևմտահայերենը: Առանձնակի ուշադրության են արժանի քաղաքական թեմաներով գրված նյութերը և վարպետ վրձնով կատարված ծաղրանկարները: Շաբաթաթերթն իր էջերում շարունակ այն միտքն է հայտնել, որ վաղ թե ուշ տապալվելու է ինքնակալությունը և ճանապարհ է բացվելու աշխատավոր մարդու լուսավոր ապագայի համար: Ծաղրանկարներից մեկում պատկերված է Արեգակը, որը իմաստավորում է մարդկության ապագան, իսկ նրա տակ ներկայացված է մի անդունդ, ուր նետվում են իշխանավորները: Ծաղրանկարը մակագրված է. «Խաբարդա. ...բիւրօկրատիան կործանվում է. ...խաբարդա» (1907, թիվ 13): Մեկ այլ՝ «Տուր-տուր» վերնագրով հոդվածում (1907, թիվ 7) խիստ քննադատված են հարկահանները: Նրանցից

ամեն մեկն իր ձևով է հարկը հավաքում. ոստիկանը՝ հրամայելով, դատարանի ներկայացուցիչը՝ «արջի պես գոռալով», ազգասերը՝ ատրճանակն ու դաշնակը ձեռքին:

Երգիծաթերթի և՛ նյութերը, և՛ ծաղրանկարները արտահայտում են լավատեսական տրամադրություններ: Այսպես՝ «Երկու պատկեր, երկու աշխարհ» (1907, թիվ 16) ծաղրանկարը ընդգծում է անխուսափելին՝ աշխատավորը կվայելի իր աշխատանքի ամբողջ վաստակը:

Պետական դումայի փակման ու բացման, ինչպես և հեղափոխական շարժումների հաջողությունների ու պարտությունների հետ կապված՝ փոփոխվել են շաբաթաթերթի վերնագրերը: Երկրորդ պետական դումայի բացման օրվանից «Հայելին» անվանվում է «Խաբարդա» (1907, թիվ 12), իսկ հեղափոխության անկումից հետո պարբերականը կոչվում է «Սատանա» (1907, թիվ 19), ապա «Հօպ-հօպ» (1907, թիվ 22):

«Հայելի» շաբաթաթերթում տպագրված՝ Շ. Կուրղինյանի, Ս. Սաֆարյանի, Հ. Պետրոսյանի, Գայլ Վահանի և մյուսների չափածո գործերում համարձակորեն քննադատվել, ծաղրուծանակի են ենթարկվել կյանքի տերերը: Ինչպես վկայում են փաստերը, գրաքննությունը ուշի-ուշով հետևել է նյութերի բովանդակությանը, անգամ մի քանի համար բռնագրավել: Մի շարք համարներ էլ լույս են տեսել ջնջված ծաղրանկարներով: Այսպես 1907 թ. թիվ 7-ի խորագրերը սև շրջագծերով ջնջված են, իսկ թիվ 22-ի խորագրերի վրա սև գույնի մատիտով խաչ է քաշված և տակը գրված է. «Մեր «Հօպ-հօպի» բախտը չբերեց: Առաջին երեսի նկարը ցենզուրան մկրտեց: Ընթերցողները մնացին առանց տօնական նկարի»:

1907 թ. թիվ 23-ը լույս տեսնելուց հետո «Հայելի» երգիծական շաբաթաթերթն ընդմիշտ փակվել է:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին իր կոչմանն է ծառայել 1906–1907 թթ. Պետերբուրգում լույս տեսած «Սափրիչ» զավեշտական ամսագիրը, որը խմբագրել ու հրատարակել է նկարիչ, հրապարակախոս Դավիթ Օքրոյանը: Նա ծնվել է 1873 թ., 1893 թ. ավարտել է ծննդավայրի՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1909 թ.՝ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիային կից բարձրագույն գեղարվեստական ուսումնարանը: Դ. Օքրոյանը պատկերազարդել է Թիֆլիսում, Պետերբուրգում և այլուր լույս տեսած հայերեն, ռուսե-

րեն, վրացերեն մի շարք պարբերականներ: 1918–1921 թթ. նա աշխատել է Պետերբուրգի հեղափոխության թանգարանում: 1921 թ. եղել է Օդեսայի քաղլուսատան գեղարվեստական պլակատային արվեստանոցի վարիչը, կազմակերպել է «Գեղարուեստից ակադեմիա», եղել է ռեկտորն ու գեղանկարչության պրոֆեսորը: Դ. Օքրոյանը մահացել է 1943 թ., Պետերբուրգում:

«Սափրիչ» գրական, հումոր-սատիրական ամսագրին աշխատակցել են երաժշտագետ Ն. Բաղդասարյանը, բանաստեղծներ Հար. Թումանյանը, Ս. Սափարյանը, Գ. Բարխուդարյանը և ուրիշներ: Հոդվածների մեծ մասը ստորագրված է ծածկանուններով (Լիլիպուտի, Եզոպոս, Էմիլ, Փարոս, Ճիպոտ և այլն):

Ամսագրի հիմնական նպատակն եղել է երգիծանքի կրակի տակ առնել ու դատապարտել իշխանության ներկայացուցիչների ստոր ու ամարդի արարքները, այն գործերը, «որոնց մարդկային առողջ լոգիկան կգտնէ վնասակար, անարդարացի եւ կդատապարտէ իր խիստ ու անաչառ քննադատութեամբ (1906, թիվ 1): Ապա, դիմելով իր ընթերցողներին, նրանց հաղորդում է «աշխատել սափրել այն տեսակ ցեցերին, որոնք իսկապես ամօթ, նախատինք են բերում մի ամբողջ հասարակութեան, որոնք տզրուկի պէս ծծում, քամում են խեղճ ժողովրդին» (1906, թիվ 2):

«Սափրիչը» հույսեր էր կապում 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստով շնորհված «ազատությունների» հետ, ենթադրելով, թե հայ ազգը վերջապես կփրկվի նախկին բյուրոկրատական վարչակազմի վարած «ռուսացման» քաղաքականությունից, սակայն որոշ ժամանակ անց հուսախաբություն ապրած ամսագիրը ծաղրում է ցարի տված խոստումները: Ծաղրանկարներից մեկում «ազատությունը» պատկերված է բռնակալի տեսքով, որը մի ձեռքում, գոտու վրա, կոշիկների մեջ զենք է կրում (1906, թիվ 5):

Ամսագիրն անդրադարձել է նաև հայ-ադրբեջանական կռիվներին, դատապարտել երկու հարևան ազգերի միջև թշնամանք սերմանողներին: Ծաղրել է կեղծ ազգասերներին, փառասեր կուսակցական գործիչներին և ուրիշների:

Տիրող անարդարությունների և ընդհանրապես բյուրոկրատ իշխանավորների դեմ ուղղված պայքարի կոչն առավել համարձակ ու խիստ է հնչում արձակ և չափածո գործերում (Հար. Թումանյանի

«Ազատութեան զինուորներ», «Արեան երգերից», Հր. Անուշյանի «Հառաչ», «Խեղճ էր ամբոխը» և այլն): Հար. Թումանյանի չափածո գործում այդ կոչը հնչում է ոչ թե այլաբանորեն, այլ սովորական, պարզ խոսքերով.

Բաւական է, ինչ կրեցինք
Անարգ լուծը դարաւոր,
Եկեք կռվենք, ջնջենք խսպառ
Նենգ հրէշին բռնաւոր... (1906, թիվ 6):

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում և ուշադրության են արժանի ծաղրանկարները, որոնց մեծ մասի հեղինակը Դ. Օքրոյանն է: Ծաղրանկարների թեման բազմաբնույթ է: 1906 թ. թիվ 8-ում «Դումայի մինիստրական լոժայում» վերնագրով ծաղրանկարները պատկերում են Դումայի անդամներ Կոկովցևին, Կուրոպատկինին և այլոց: Ակիմովի կերպարի տակ մակագրված է. «Օպոզիցիայի դէմ ես պարզ միջոց գիտէի-յախիցը բռնիր, բանտ քարշ տուր»: Մեկ այլ ծաղրանկար, որ պատկերում է ոստիկանին գյուղացու գլուխը ճզմելիս, մակագրված է. «Քաղցած գիւղացին առանց ձայն հանելու պարտաւոր է հնազանդուելու ոստիկանութեան բոլոր հրամաններին» (1907, թիվ 9–10):

«Սափրիչի» երգիծանքը աչքի է ընկել արտահայտչական միջոցների բազմազանությամբ, թեմաների հարստությամբ, սարկազմով: Ամսագիրը համարձակ ելույթների համար հաճախ հետապնդվել է կառավարության կողմից: Խմբագիրը շատ անգամ ստիպված է եղել հոդվածներն ու նկարները բոլորովին փոխել:

«Սափրիչը»՝ Պետերբուրգի առաջին հայերեն երգիծական պարբերականը, ժամանակին կարևոր դեր է խաղացել Պետերբուրգի հայ ազգաբնակչության հոգևոր կյանքում:

Ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխության ավարտից հինգ-վեց տարի հետո դարձյալ երևան են գալիս նորանոր երգիծական պարբերականներ: 1913 թ. Սաթենիկ Լաչքարյանը Թիֆլիսում լույս է ընծայում և խմբագրում «Մախլաս» երգիծական շաբաթաթերթը: «Մախլասի» հիմնական խնդիրն է եղել գրչով և վրձնով, ինչպես 1913 թ. առաջնորդողում է գրված, «...աչալուրջ հետևել իրականութեան մէջ տեղի ունեցող այն դէպքերին ու դէմքերին, որոնք ազգի ճակատին խայտառակութեան կնիք են դրոշ-

մում»: Շաբաթաթերթին աշխատակցել են Գ. Սկանդար-Նովան, Գ. Բաբուրյանը, Վ. Թումանյանը և ուրիշներ:

Շաբաթաթերթը նկատում է, որ շատ-շատերը կյանքում տեղ գտած ազնիվ ու հոռի երևույթների կողքով «է՛հ մախլաս» ասելով, անտարբեր հեռանում են: Ուստի իր գործն է համարում պայքարել «է՛հ մախլասի» արժանացող անբարոյական երևույթների դեմ, կրճատել այդ անթիվ «մախլասների» թիվը:

Ի տարբերություն նախորդ հայ երգիծական պարբերականների՝ այս շաբաթաթերթի լեզուն ոչ թե Թիֆլիսի բարբառն է, այլ գրական հայերենը:

Նյութերի մեծ մասը վերաբերում է կենցաղային թեմաներին: 1915 համարները պատմում են հայ ժողովրդի ողբերգության մասին: 1915 թ. ապրիլի 5-ի ծաղրանկարում պատկերված է Արեգակը, որի վրա իրենց նետերն են ուղղել թուրք զինվորները: Արեգակի տակ նկարված են ավերված տներ, խեղճացած հայեր, գանգերի կույտեր: Նկարը մակագրված է. «Արևի խավարումը Թուրքիայում: Մի՞թե խեկապէս բոլորովին խավարելու է մեր արևը»: Նկարներից մեկում ղատապարտվում է Գերմանիայի Վիլհելմ II կայզրը՝ թուրքական կառավարության ոճրագործությունները խրախուսելու համար (1915, թիվ 12):

Դաստիարակչական և ճանաչողական նշանակություն ունեն «Մտքեր և աֆորիզմներ» խորագրի տակ զետեղված, նշանավոր մարդկանց ասույթներից ննջբերված նմուշները:

«Մախլասը», լինելով նաև գրական շաբաթաթերթ, մեծ տեղ է հատկացրել գրական-գեղարվեստական գործերին (ինքնուրույն և թարգմանական): Այստեղ տպագրվել են Մոպասանի («Քորոցներ», «Թաթախման գիշեր», «Աքդանշան»), Անատոլ Ֆրանսի («Սպիտակ հովհարով կինը»), Լեսինգի («Կապիկն ու աղվեսը», «Առյուծն ու Նապաստակը»). Ջերոմի («Դատաստանական դէպք») և այլոց գործերը:

«Մախլասը» նույնպես երկար կյանք չունեցավ: Պատերազմական իրադարձությունները ստիպեցին ընդհատել շաբաթաթերթի լույս ընծայումը:

Դարասկզբի արևելահայ երգիծական պարբերականների շարքում իր դեմոկրատական հստակ ուղղվածությամբ, սոցիալական երգիծանքի ու քաղաքական սատիրայի բազմազան արտահայտչա-

միջոցներով, խարանող սուր ծաղրանկարներով, ինչպես և երկարակեցությամբ առանձնանում է «Խաթաբալա» երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթը[1], որը լույս է տեսել Թիֆլիսում, 1906–1916, 1922, 1925, 1926 թթ.: Շաբաթաթերթի խմբագիրն ու նախաձեռնողն է եղել երգիծաբան, հրապարակախոս Աստվածատուր Երիցյանը: Նա ծագումով ծղնեթցի էր, ծնվել է 1872 թ.: Սկզբնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա սովորել է Պետերբուրգի կոնսերվատորիայում, սակայն ուսումը անավարտ է թողել և վերադարձել Թիֆլիս: Այստեղ հրապարակախոս, նշանավոր դեմոկրատ երգիծաբան Աշոտ Աթանասյանի ընկերակցությամբ 1906 թ. հիմնել է «Խաթաբալա» երգիծական պարբերականը: 1909–1912 թթ. Աստվածատուր Երիցյանը միաժամանակ խմբագրել և հրատարակել է «Սուրհանդակ» գրական, քաղաքական առևտրաարդյունաբերական օրաթերթը:

Ա. Երիցյանը «Խաթաբալայում» հանդես է եկել Գասպար Կալատուզյանց, Քաղքի վուրթի Գասպար Կալատուզով, Գ. Կ., Բիո-Գրաֆ և այլ ծածկանուններով: Նրա գրչին է պատկանում առաջնորդողների մեծ մասը՝ գրված թիֆլիսահայ բարբառով: Յուրաքանչյուր առաջնորդող սրամիտ ֆելիետոն է և կարևոր արժեք է ներկայացնում հայ երգիծաբանության բնագավառում:

«Խաթաբալայի» խմբագրման գործում մեծ ներդրում ունի նաև Ա. Աթանասյանը: Նա եղել է երգիծական պարբերականին գաղափարական ուղղություն տվողը, նրա շունչն ու ոգին: Հեղափոխական դեմոկրատիզմի դիրքերից գրված նրա բազմաթիվ ֆելիետոններում, երգիծական ակնարկներում, հրապարակախոսական հոդվածներում, մանր կատակներում, էպիգրամներում՝ տպագրված Սալ-Ման, Եղչեմ, Ստորա-կետ, Ժուռնալիստ և այլ ծածկանուններով, պախարակվում են ցարական ինքնակալական կարգերը, բարձրաստիճան պաշտոնյաները, Պետական դումայի անդամները և այլն:

«Խաթաբալային» աշխատակցել են Մ. Արազին, (Դիոնիս, Ալի-Բաբա), Մ. Բագրատունին (Փալանդուզ Մկո), Գ. Բաշինջաղյանը (Գ. Բ., Նաղըշքար Գիգոլ, Գ. Բաշին), Մ. Դարբինյանը (Զընդանյան, Նեռ, Լևոն), Գ. Տեր-Ղևոնդյանը (Գեո-Ղեղո), Կ. Մելիք-Շահնազարյանը

---

[1] «Խաթաբալա» երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի ամբողջական պատմության ուսումնասիրությանն է նվիրված Ս. Թ. Իշխանյանի «20-րդ դարի սկզբի հայ քաղաքական երգիծանքը» գիրքը (Ե., 1972 թ.):

(Տմբլաչի Խաչան), Ս. Տեր-Մելքիսեդեկյանը (Ղալայչի Մարգար) և ուրիշներ:

Երգիծական շաբաթաթերթի ծաղրանկարները, գրաֆիկական գործերը պատրաստել են ժամանակին հայտնի նկարիչներ Գ. Երիցյանը, Օ. Շմերլինգը, Գ. Ռոտտերը, Գ. Գրինևսկին և ուրիշներ:

«Խաթաբալան» առաջին իսկ համարից գրավել է ընթերցողի ուշադրությունը: Այն հրապուրիչ է և իր լեզվով: Այնտեղ օգտագործված են թիֆլիսահայ բարբառը, արևմտահայերենը, Ղարաբաղի, Լոռու, Արարատյան դաշտավայրի, Նախիջևանի, Երևանի բարբառները: Շաբաթաթերթի հանդեպ հետաքրքրությունն այնքան մեծ է եղել, որ առաջին համարը (երկու հազար օրինակ) արագ սպառվելուց հետո ընթերցողների պահանջով տպագրվել է երկրորդ անգամ: Երկրորդ համարից սկսած՝ շաբաթաթերթը լույս է տեսել չորս, ապա՝ հինգ հազար օրինակով: Իսկ 1907 թ. հետո այն հրատարակվել է տասը հազար օրինակով:

«Խաթաբալան» 1906–1916 թթ. լույս է տեսել անընդմեջ: Համաշխարհային առաջին պատերազմի հետևանքով ստեղծված աննպաստ պայմանները խմբագրին ստիպել են 1916 թ. սկզբին թիվ 25-ից հետո դադարեցնել պարբերականի հրատարակությունը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո 1922 թ. պարբերականը վերահրատարակվել է: Այն խմբագրել է Սարգիս Խանոյանը, աշխատակցել են Աս. Երիցյանը, Գ. Բաշինջաղյանը, Հ. Աղաբաբը և ուրիշներ: Պետք է նշել, որ այս անգամ շաբաթաթերթը լույս է տեսել անկանոն, ընդմիջումներով: 1922 թ. հրատարակվել է ընդամենը մեկ համար, 1925 թ.՝ հինգ, 1926 թ.՝ երկու, ապա ընդմիշտ դադարել է:

«Խաթաբալայի» ծրագրային դիրքորոշումն էր՝ այլաբանական խոսքի միջոցով աշխատավորությանը ճանաչել տալ իր իրավունքները, ուստի անդրադարձել է աշխատավորության հուզող գրեթե բոլոր խնդիրներին: Ժամանակի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի կարևոր իրադարձությունների հանդեպ իր վերաբերմունքն արտահայտելու համար օգտագործել է երգիծական բազմազան միջոցներ (ֆելիետոն, երգիծական ակնարկ, երկխոսություն, երգիծական անեկդոտ, պարոդիա-բանաստեղծություն, կատակ-բանաստեղծություն, թվաբանական խնդիրներ, հեգնանք և

ծաղր պարունակող հայտարարություններ, ծաղրանկար, հանելուկ-ծաղրանկար, գրաֆիկական գործեր և այլն):

Սոցիալական թեմաներով երգիծական նյութերն ու ծաղրանկարներն ամբողջովին ուղղված են ցարական ինքնակալական կարգերի դեմ: Սոցիալական չարիքի հիմնական արմատներից մեկը պարբերականը տեսնում է գյուղացիության հողազրկության մեջ և այն համարում Ռուսաստանով մեկ բռնված համաժողովրդական շարժման կարևոր դրդապատճառներից մեկը: 1905 թ. հեղափոխության թեժ օրերին ցարի շնորհած կարծեցյալ քաղաքական ազատությունների (Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը և այլն) մասին երգիծական երկխոսություններից մեկում հեգնախառն ոճով գրված է.

- Ախ մի կտոր հող տային ինձ...

- Լաց մի լինի, պապի, հող էլ կստանաս:

- Իսկ ե՞րբ:

- Երբ որ մեռնես» (1906, թիվ 27):

Ազդեցության ուժով առավել զորեղ են ծաղրանկարները, գրաֆիկական գործերը: Տարվա ընթացքում գյուղացին ոգևորված աշխատում է, սակայն բերքահավաքի ժամանակ նրան շրջապատում են գյուղի տերերը՝ վաշխառուները, կուլակ-հողատերը, այլ պաշտոնյաներ և խլում նրա ամբողջ վաստակը: Այս մասին է պատմում Գ. Ռոտտերի «Ով է աշխատում և ով է ուտում» հաջողված նկարը (1906, թիվ 15): Հարստահարիչներից կողոպտված խեղճ գյուղացին, ձեռքը ճակատին, մտորում է: Նրա դեմքը արտահայտում է ոչ թե հուսալքվածի տրամադրություն, այլ բողոք կեղեքիչների դեմ:

Սոցիալական թեմաների շուրջ արված ծաղրանկարների ամբողջ շարքում հնչեղություն ունեն Օ. Շմերլինգի «Հայ գյուղացին սրբերի տակ», «Սով արքան», «Ամենուրեք», «Հարկահանութիւնը Ղարաբաղում», Գ. Ռոտտերի «Աշունը գիւղում», Գ. Գրինևսկու «Հայ գիւղացու արդի դրութիւնը» և այլ ծաղրանկարներ, որոնցում ժողովրդին կոչ է արվում չվհատվել, այլ զինվել համբերությամբ և պատրաստվել մեծ պայքարի:

Պակաս ազդեցիկ չեն նաև ցարական բարձրաստիճան պաշտոնյաների, Պետական դումայի պատգամավորների, ազգային բախտախնդիր գործիչների և այլոց կերպարները ներկայացնող ծաղրանկարները: Քաղաքական սրությամբ հատկապես աչքի են ընկնում

ծայրահեղ հետադիմական, Սինոդի ավագ դատախազ Պոբեդոնոսցևին, միապետական Վիտտեին, գեներալ Տրեպովին և այլոց պատկերող ծաղրանկարները: Հեղափոխության պարտությունից հետո ստեղծված սեհարյուրակային տեռորի ու դաժան հալածանքների պայմաններում շաբաթաթերթը համարձակվել է ծաղրել, մերկացնել, դատապարտել ջարդարարների գործունեությունը: «Աստղի-պալատ» պատմաճանաչողական նշանակություն ունեցող մեծադիր ծաղրանկարում (1906, թիվ 3) պատկերված է ցարի՝ Նիկոլայ II-ի աստղազարդ պալատը, ուր սեղանի շուրջ նստած են բարձրաստիճան չինովնիկները, սեղանի տակ մարդկային գանգերի մի կույտ է, սեղանին կանգնած ճառ է արտասանում Տրեպովը: Նրա գլխավերևում Պոբեդոնոսցևի չղջիկաձև կերպարանքն է: Տրեպովն իր գործակալներից պահանջում է պատժել համաժողովրդական շարժման մասնակիցներին: Առանձնապես հետաքրքիր են Պետական դումայի գործունեությունը քննադատող ծաղրանկարներն ու ֆելիետոնները: Աշոտ Աթանասյանը Սարա-կետ ծածկանունով տպագրած ֆելիետոններից մեկում գրում է. «Պետական դուման ցարական բռնակալութեան, բիւրոկրատիայի հրամանատարութեամբ նրա արբանեակների՝ պատրիոտների, խուլիգանների, պօգրոմների, պրօվոկացիաների խաղն է» (1906, թիվ 4): Պետական դուման քաղաքական մի անզոր և թույլ մարմին է, որը ընդունակ չէ լուծելու ժողովրդին հուզող և ոչ մի խնդիր, այն «կրկեսային և կատարեալ զաւեշտ է»:

Երգիծական շաբաթաթերթը անդրադարձել է հեղափոխական տարիների հետ կապված բոլոր հասարակական, քաղաքական իրադարձությունների (ազգամիջյան կռիվներ, ներկուսակցական պայքար, գործադուլներ, հեղափոխական ելույթներ և այլն):

«Խաթաբալան» քննարկման նյութ է դարձրել նաև գրողների, հրապարակախոսների, հասարակական գործիչների գործունեությունը: Բարձր է գնահատել Գ. Արծրունուն և նրա «Մշակը», քննադատական խոսք է ասել այն հրապարակախոսների հասցեին, որոնք հաճախակի փոխել են իրենց գաղափարական սկզբունքները, կարծիքները:

Ուշադրավ են հատկապես ընկերական շարժերը՝ նվիրված գրողներին, ընդհանրապես մշակույթի գործիչներին:

Շաբաթաթերթն այն եզակի պարբերականներից էր, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին շարունակեց լույս տես-

նել և քաղաքական անաչառ դիրքերից համարձակ խարազանել արևմտաեվրոպական երկրների, հատկապես Գերմանիայի դիվանագիտական խաղերը՝ ի վնաս հայ ժողովրդի: 1915 թ. համարները լի են երիտթուրքերի կառավարության ոճրագործությունները պատկերող նկարներով:

Շաբաթաթերթը մեծ հարգանքով ու հավատով է խոսում ռուս ժողովրդի ու նրա հերոս զավակների մասին, որոնք ճակատագրական օրերին օգնության ձեռք են մեկնում բնավեր դարձած հայ ժողովրդին ու նրա որբուկներին:

Բարձր գնահատելով ժողովրդական բանահյուսության գանձերի դաստիարակչական դերն ու նշանակությունը՝ շաբաթաթերթը պատերազմի թեժ օրերին իր էջերում մեծ տեղ է հատկացնում ժողովրդական երգերին, հատկապես հայրենասիրական ու ազատաշունչ ոգով գրված գործերին:

Երգիծական շաբաթաթերթի էջերը զարդարում են ինչպես ռուս, այնպես էլ հայ բանաստեղծների ստեղծագործությունները՝ տպագրված ռուսերեն (Վ. Բրյուսովի «Հայերին», Րաֆֆու «Զայն տուր, ով ծովակ», Ալ. Ծատուրյանի «Երգը», Հ. Հովհաննիսյանի «Արազն եկաւ» և այլ բանաստեղծություններ):

«Խաթաբալան» մոտ երկու տասնամյակ եղել է Անդրկովկասի, հատկապես Թիֆլիսի հայ ազգաբնակչության բոլոր խավերի ամենամատչելի և ամենասիրելի հրատարակությունը: Այն կարդացել են բանվորն ու գյուղացին, ծառայողն ու ուսանողը, աշակերտն ու ուսուցիչը, արհեստավորն ու գործատերը:

«Խաթաբալան» և 20-րդ դարի սկզբին լույս տեսած հայ առաջադեմ երգիծական պարբերականները զարգացման որոշակի աստիճանի վրա դրեցին երգիծական հրապարակախոսությունն ու գրականությունը: Որպես ազնիվ ու համարձակ խոսքի քարոզիչներ, այդ պարբերականները երգիծանքին հաղորդեցին հասարակական, քաղաքական առաջադեմ ուղղվածություն՝ դառնալով արևելահայ երգիծական դեմոկրատական մամուլի սկզբնավորողներն ու փայլուն ներկայացուցիչները:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1900 թվականից սկսած արևելահայ և արևմտահայ հասարակական, քաղաքական կյանքում տեղի ունեցած առաջընթաց շարժումները որոշակի աշխուժություն են մտցնում մանկապատանեկան մամուլի ասպարեզում: Ուշադրության կենտրոնում են դրվում աճող սերնդի հասարակական, քաղաքական, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության հարցերը: Հասունանում է դպրոցական նոր ծրագիր ստեղծելու պահանջը: Ուշադրության են արժանանում մանկական ընթերցանության հարցերը: Լույս են տեսնում Նիկ. Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու», Հովհ. Թումանյանի, Ստ. Լիսիցյանի, Լ. Շանթի «Լուսաբեր», Տ. Ռաշմաճանի, Ա. Ջիլինգարյանի և Ավ. Իսահակյանի «Դասընկեր» և այլ դասագրքերը: Հայկական դպրոցներում ստեղծվում են մանկական երգեցիկ խմբեր, փորձեր են արվում ստեղծելու մանկական օպերաներ:

Հայ մանկավարժներն աճող սերնդի բարոյական և գեղագիտական դաստիարակության լավագույն միջոցներից մեկը համարելով մամուլը՝ նախաձեռնում են մանկապատանեկան նորանուն պարբերականների ստեղծման գործը: Ստ. Լիսիցյանը Թիֆլիսում հրատարակում է «Հասկեր» ամսագիրը (1905), Գարեգին Երիցյանը՝ «Փնջիկ» շաբաթաթերթը (1907), Միսաք Էփրիկյանը, Նշան Մկրտչյանը՝ «Պատանի» գրական-գեղարվեստական ալմանախը (1910–1915):

Նույն տարիներին (1900–1914) Կ. Պոլսում և գավառներում հիմնադրվում են մանկապատանեկան առանձին պարբերականներ՝ նվիրված մատաղ սերնդի գրական-գեղարվեստական («Հայկունի», «Բողբոջ», «Տաճար մանկանց» և այլն), ֆիզիկական («Մարմնամարզ») դաստիարակության հարցերին:

Աշխարհի տարբեր անկյուններում ստեղծված հայկական օջախներում կազմակերպվում են հայ երիտասարդական կազմակերպություններ: Անգլիայում պատանիների ու երիտասարդության շրջաններում մեծ հեղինակություն է վայելում Լոնդոնի «Վերնահարկ» կոչված տանը կազմակերպված «Երիտասարդաց քրիստոնեական ընկերությունը», որի հիմնական նպատակն էր՝ երիտասարդության ուժերը մղել բարի, օգտակար, ազգօգուտ և հայրենասիրական գործերի: Ոգևորված ընկերության քարոզած գաղափարներով՝

լոնդոնաբնակ մի խումբ հայ պատանիներ ազգին, հարազատ ժողովրդին օգտակար ծառայություն մատուցելու նպատակով կազմակերպում են «Պատանեկան միություն»:

Լոնդոնի «Հայ պատանիների միության» մի խումբ անդամներ ձեռնամուխ են լինում ազգային լեզվով պարբերական հրատարակելու գործին: Նրանց նպատակն է եղել՝ ստեղծել մի ամսագիր, որը տարածվեր ոչ միայն Լոնդոնի, այլև աշխարհի բոլոր վայրերում ցրված հայ պատանիների ու երիտասարդության մեջ, դաստիարակեր նրանց դարի նորաշունչ ոգով, պատրաստեր նրանցից իր ժողովրդի համար պիտանի քաղաքացիներ: Նրանք իրենց ձեռքի տակ ունենալով փոքրիկ տպարան՝ հայերեն ու անգլերեն տառերով, տպագրական մամուլով և կազմարանով, 1902 թ. Լոնդոնում լույս են ընծայում «Պատանի» ամսագիրը:

«ՊԱՏԱՆԻ» (1902–1907)

Լոնդոնում հրատարակվող «Պատանի» ամսագրի խմբագիր-հրատարակիչները իրենք էին շարում նյութերը և տպագրում համարները: Նրանք պարբերականի տարածմանը նպաստելու միտումներով հայտարարում էին, թե ամսագրի նախընտրած նպատակներից «քաղաքական եւ կրօնական կամ դաւանական խնդիրները բոլորովին դուրս են» (1902, թիվ 1): Ամսագրի հիմնական նպատակներից մեկն էր՝ դաստիարակել հայրենիքի ազատության համար պայքարող սերունդներ:

Ամսագրի էջերը նվիրված են նաև գյուղի և քաղաքի աշխատավորությանը հուզող խնդիրների լուսաբանմանը: Ամսագիրը չի խուսափել կյանքի և՛ լուսավոր, և՛ ստվերոտ կողմերը պատանի ընթերցողներին ներկայացնելուց:

«Պատանի» ամսագրի խմբագիր-հրատարակիչները այն համոզմունքին էին, թե «կրթութիւնն ու հանգամանքները կը կրթեն, կը դաստիարակեն, բայց իրարու հաւասարեցնելու անմիտ փորձեր չեն ըներ» (1907, թիվ 11): Նրանց կարծիքով՝ հասարակության բարեխումը կախված է մարդ-անհատի ինքնակատարելագործումից: «...Ինքզինքը ճանչնալ, իր իրաւունքներէն անդին չանցնիլ, իր

պարտքերն առ այլն սիրով կատարել, ուրիշները սիրել եւ հարգանքով վարուել անոնց հետ: Ասոնք պատուաստուելու են բնական մարդուն վրայ մանկութեան ժամանակ, ինչպէս խնձորը կը պատուաստեն վայրի խնձորի կոճին վրա» (1907, թիվ 6): Մի շարք ակնարկներում ցույց էր տրվում, որ աշխատավորության մեջ են պահպանվել հոգևոր կյանքի թանկագին գանձերը, և որ աշխատավոր ժողովուրդն է ամենամեծ ուսուցիչն ու դաստիարակը:

Ամսագրում մեծ տեղ էր տրվում անցյալի հայ նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության նկարագրություններին (Գր. Նարեկացի, Շ. Շահամիրյան, Հ. Ջուղայեցի, Ղ. Ալիշան և ուրիշներ):

Ամսագրի գրական-գեղարվեստական նյութերը հայ պատանի ընթերցողների ուշադրությունը հրավիրում էին պանդուխտ որբերի խեղճ ու աղքատ կյանքի վրա («Հայ որբը», «Միտքէս չի ելլեր» և այլն):

Ամսագրում քիչ տեղ չեն գրավել նաև ուսուցմանն ու դաստիարակությանը, ինչպես և հայ դպրոցի անցյալի պատմությանը նվիրված նյութերը:

«Պատանին», լինելով լոնդոնաբնակ հայ պատանիներին հասցեագրված առաջին պարբերականը, մեծ դեր է կատարել հայ մանուկների ու պատանիների դաստիարակության գործում: Այդ իսկ պատճառով ամսագիրը ժամանակին բարձր է գնահատվել հայ մտավորականների և մամուլի կողմից:

1907 թվականին նյութերի և թղթակիցների պակասը ստիպում է խմբագիրներին դադարեցնել ամսագրի հրատարակությունը:

«ՀԱՍԿԵՐ» (1905–1917, 1922)

Հայ անվանի մանկավարժներ Կատարինե և Ստեփան Լիսիցյանները 1905 թվականին, Թիֆլիսում լույս են ընծայում «Հասկեր» մանկապատանեկան ամսագիրը:

«Հասկերին» կից գոյություն ուներ «Նուեր մանուկներին» հրատարակչական ընկերությունը (Նախագահ՝ Ստ. Լիսիցյան): Ամ-

սագրի շուրջ համախմբված էին ժամանակի հասարակական-մանկավարժական մտքի լուսամիտ ներկայացուցիչներ Հ. Տեր-Միրաքյանը, Տ. Ռաշմաճանը, Իս. Հարությունյանը, Ալ. Շիրվանզադեն, Վրթ. Փափազյանը, Ղ. Աղայանը, Ալ. Ծատուրյանը, Աթ. Խնկոյանը, Հ. Հայրապետյանը և ուրիշներ:

Երախտավոր գործիչ Ստ. Լիսիցյանը ծնվել է 1865 թ., Թիֆլիսում: Սովորել է տեղի գիմնազիայում, ապա ավարտել է Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Վերադառնալով ծննդավայր, նա երկու տարի, ուսուցիչ է աշխատել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1891 թ. ազատվել է աշխատանքից և 1894–1915 թթ. պաշտոնավարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Միաժամանակ 1905–1917, 1922 թթ. խմբագրել ու հրատարակել է «Հասկեր» մանկապատանեկան ամսագիրը:

1911 թ. Ստ. Լիսիցյանը մասնակցել է իր կնոջ՝ Կ. Լիսիցյանի Թիֆլիսում հիմնադրած գիմնազիայի աշխատանքներին: Իր դասընթացների ժամանակ նա օգտագործել է արևմտաեվրոպական մանկավարժների փորձը, որին ծանոթացել էր Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Գերմանիայում: Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Թիֆլիսի գիմնազիան վերածվել է տեխնիկումի, որի վարիչն է դարձել Ստ. Լիսիցյանը:

Ստ. Լիսիցյանը 10 տարի շարունակ (1893–1903) եղել է Թիֆլիսի «Հայկական հրատարակչական ընկերության» խմբագրական հանձնաժողովի քարտուղար-անդամը: Նա հրատարակել է ծավալուն վեպեր («Մի գյուղացու պատմությունը», «Գյուղացի Բրուտյանը» և այլն): Նրա խմբագրությամբ լույս է տեսել Ստ. Շահումյանի թարգմանած «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունը: Ստ. Լիսիցյանը լեհերենից թարգմանել է Հ. Սենկևիչի «Յո՞ երթաս» վեպը, Տիմիրյազևի «Դարվինը և նրա ուսմունքը» և այլ գրքեր: Նրա խմբագրած և հրատարակած գրքերի թիվը հասնում է 200-ի:

1924 թ. հայտնի մանկագիրն ու մանկավարժը տեղափոխվել է Երևան: Այստեղ ընտրվել է Հայաստանի լուսժողկոմատի մեթոդբյուրոյի անդամ և դարձել Երևանի պետական համալսարանի առաջին դասախոսներից մեկը: Նա ունի մի շարք գիտական աշխատություններ, որոնք նվիրված են գլխավորապես ազգագրությանը:

Անվանի ազգագրագետը եղել է «Հայաստանի աշխարհագրական ընկերության» կազմակերպիչներից մեկը, երկու տարուց ավելի կատարել է այդ ընկերության նախագահի պարտականությունները:

1928 թ. Ստ. Լիսիցյանը ղեկավարել է Հայաստանի պետական թանգարանի ազգագրության բաժինը: Նա լույս է ընծայել «ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրությունը», «Ազգագրական հարցարան» և այլ ձեռնարկներ: 1969 թ. լույս տեսավ նրա «Զանգեզուրի հայերը» ուսումնասիրությունը:

Գիտական և մանկավարժական երկարամյա բեղմնավոր գործունեության համար Ստ. Լիսիցյանը 1941 թ. ստացել է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Ստ. Լիսիցյանը մահացել է Երևանում, 1947 թ.:

«Հասկեր» ամսագրի առաջին համարում կարևորվում է դաստիարակության նշանակությունը. «Դաստիարակութիւնը, լայն մտքով առած, պէտք է թեթեւացնի մեր հասարակութեան մէջ կատարւող յեղափոխութիւնը եւ օգնի նոր սերունդներին ըստ կարելւոյն չնչին խախտումներով անցնելու հին՝ նահապետական շրջանից նոր եկող շրջանին»: Ամսագիրը դիմելով ծնողներին, պահանջում էր նրանցից՝ երեխաների միջից արմատախիլ անել «անբան հպատակութեան սաղմերը», այսինքն, դաստիարակել բանական, կյանքի անարդարությունների դեմ պայքարող, ազնիվ, քաջ, պատվասեր սերունդ: «Ամսագրի նպատակն է,- գրված է այնտեղ,- ա. ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ ձգտումներ, արծարծելով նրանց մեջ սէր դէպի մայրը, հայրենի միջավայրը, բ. տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ. զարգացնել նրանց ճաշակը, դ. ուրախութիւն եւ աշխույժ մտցնել մանկական կեանքի մէջ» (1905, թիվ 1):

«Հասկեր» ամսագրի էջերում մեծ տեղ է տրվել ժողովրդական հեքիաթներին: Ամսագրի համար ժողովրդական հեքիաթներ էին մշակում Հովհ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Աթ. Խնկոյանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ: Ամսագրի անդրանիկ համարը բացվում է Հովհ. Թումանյանի «Գառնիկ ախպեր» հեքիաթով: Հովհ. Թումանյանի հեքիաթներում իշխողը զվարթ ու պայծառ ոգին է, կենսախինդ տրամադրությունը («Անբան Հուռին», «Քաջ Կիկիլը» և այլն): Հովհ. Թումանյանի թարգմանությամբ «Հասկերում» տպագրվում են ռուսական («Գեղեցկուհի Վասիլիսան» և այլն), իտալական («Որոտ Թա-

գաւորը»), իդյանդական («Կախարդի քսակը») և այլ հեքիաթներ: Հովհ. Թումանյանի պատմվածքների, զրույցների, հեքիաթների և մանկական բանաստեղծությունների մեծ մասը առաջին անգամ տպագրվել է «Հասկերում»:

«Հասկերում» տպագրվել են Աթ. Խնկոյանի գրեթե բոլոր բանաստեղծությունները, առակները, հեքիաթները, ավանդությունները, լեգենդները և այլն: Նա լավ գիտեր մանուկների հոգեբանությունը, գիտեր, թե ինչը կարող էր ամենից ավելի հետաքրքրել երեխաներին: Աթ. Խնկոյանի մի շարք ոտանավորներ նմանվում էին շուտասելուկների և խկույն անգիր էին արվում մանուկների կողմից:

Ուսուցողական և բարոյախրատական բնույթ ունեն Հակոբ Աղաբաբի և Հայրապետ Հայրապետյանի մանկական ստեղծագործությունները, որոնք վերածվել են երգերի և լայն տարածում գտել հայ մանուկների ու պատանիների շրջանում:

«Հասկեր» ամսագրում աչքի են ընկել նաև նախադպրոցական հասակ ունեցող երեխաների համար գրված արձակ և չափածո ստեղծագործությունները: Առանձնապես հետաքրքրական են Ստ. և Կ. Լիսիցյանների, Սիմակի, Վ. Փափազյանի, Գևորգ Բաշինջաղյանի և ուրիշների գործերը: Ստ. Լիսիցյանի պատմվածքները («Ինչո՞ւ ես էլ գողություն չարի», «Սաւառնակը» և այլն) օգտակար էին նաև ծնողների համար: Ստ. Լիսիցյանի լավագույն գործերից է «Աբու Հասանի մաշիկները» հեքիաթ-զրույցը, որտեղ խարազանվում է մարդկային բնավորության արատավոր կողմերից մեկը՝ ժլատությունը:

Ամսագրի էջերը հետաքրքրական են դարձնում նաև Սիմակի ստեղծագործությունները: Նրա մանկական գործերում շեշտը դրվում է մանկան հոգեբանության նկարագրության վրա: Սիմակի պատմվածքներում ջատագովվում են մանկական ջերմ ու անկեղծ մտերմությունը («Մանուշակի խաչփնջերը»), երեխաների միամտությունն ու պարզությունը («Խաչօն եւ կրակը»):

Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների ուշադրությունը գրավել են հատկապես «Մարիամ տատիկի հեքիաթները» և «Մարիամ տատիկի տոպրակից» խորագրերով տպագրված հեքիաթները, զրույցները, առակները: Այդ նյութերը գրում էին աշակերտները, մշակում և խմբագրում էր Մարիամ Թումանյանը: Մ. Թումանյանը միաժամանակ օգտակար խորհուրդներ էր տալիս երե-

խաներին, սովորեցնում նրանց, թե ինչպես և ինչի մասին պետք է գրել: Նա «Հասկեր» ամսագրի խմբագիր-հրատարակչի ամենամտերմավոր բարեկամը և խորհրդատուն էր:

Ապրելու, գործելու, աշխատելու ուժ ու կամք էին հաղորդում մանուկ ընթերցողներին ամսագրում տպագրված Ավ. Իսահակյանի ստեղծագործությունները («Ամենապէտքական բանը աշխարհում», «Արևի մոտ» և այլն):

Մանկական այս ամսագրում տպագրվել են Խ. Աբովյանի Աշտարակ կատարած այցելության մասին գրված Պ. Պռոշյանի «Յուշիկներից» մի հատված, Շիրվանզադեի «Իմ կեանքից» հուշագրությունը և այլ գործեր: Շիրվանզադեն իր խոսքն ուղղելով մանուկներին, գրել է. «Սիրելի մանուկներ, ես ուզում եմ Ձեզ մի քանի բաներ պատմել: Կարծում եք դևերի, չար ոգիների մասին: Ո՛չ, իմ տեսածների, լսածների եւ իմ մասին»:

Պատանի ընթերցողներին հարազատ ժողովրդի հերոսական անցյալով ոգևորելու նպատակներով ամսագրում մեծ տեղ է տրվել հայրենի առասպելներին, ժողովրդական վեպերին («Արամ», «Շամիրամ եւ Արա Գեղեցիկ», «Տիգրան» և այլն): Այդ նյութերը, որ պատկանում էին Ստ. Լիսիցյանի գրչին, տպագրվել են քարտեզներով և պատմական հարուստ տեղեկություններ էին պարունակում:

«Հասկերի» մանկական պատմվածքներում յուրովի արտացոլում են գտել նաև ժամանակի հասարակական և քաղաքական կարևոր իրադարձությունները: Խաղաղասիրության, եղբայրասիրության, բարեկամության գաղափարներով են հագեցած հատկապես ամսագրի 1914 թ. համարները: Դրանցում այն միտքն է շեշտվում, որ թեպետ համաշխարհային պատերազմը շարունակվում է, այնուհանդերձ, թե՛ ավստրիացի, թե՛ ֆրանսիացի, թե՛ այլ երկրների հասարակ զինվորներն իրար հանդեպ համակված չեն ատելության զգացումներով:

«Հասկերի» էջերում մեծ տեղ են գրավել ռուս և արևմտաեվրոպական գրողները, մշակութային գործիչները: Այստեղ տպագրվել են Նեմիրովիչ-Դանչենկոյի («Մահմէդի զաւակները»), եւ Տոլստոյի («Յանկարծ», «Երկու վաճառական», «Պառաւ ձին», «Երեխաների համար»,), Չեխովի («Օձանը»), Կոխլովի, Պլեշչեևի և ուրիշների ստեղծագործությունները: Ուշագրավ է այն, որ առանձին բաժին է

նվիրված Ուկրաինայի ազատաշունչ բանաստեղծ Տարաս Շևչենկոյի 100-ամյակին (1914, թիվ 5): Պարզ լեզվով գրված նյութերը հայ ընթերցողին ծանոթացրել են մեծ երգչի՝ «անմոռանալի Տարասի» մանկության ու պատանեկության:

Ամսագրի էջերը զարդարել են նաև արևմտաեվրոպական գրողների (Վ. Հյուգո, Անդերսեն և ուրիշներ) ստեղծագործությունները:

Ուշագրավ են «Հասկերի» էջերում բնության երևույթներին, կենդանական աշխարհին վերաբերող հանրամատչելի ակնարկներն ու զրույցները, որոնց մեծ մասը պատկանում է գրող-բնագետ Ռ. Գաբրիելյանի գրչին:

«Հասկերը» ուներ նաև «Զուարճալիք», «Այլ և այլք», «Ջչսից դէնից» բաժինները: Նյութերի մեծ մասը պատրաստում էին Հ. Աղաբաբը, Համլիկ Թումանյանը, ինչպես և աշակերտները՝ Մ. Թումանյանի օգնությամբ:

Հայ մանուկների համար նորություն էր «Իմ Հասկերը» ձեռագիր հանդեսը, որը խմբագրում էր նկարիչ Գ. Բաշինջաղյանը: Նյութերը պատրաստում էին պատանի ընթերցողները:

«Հասկեր» ամսագիրն ուներ նաև մանկավարժական բաժին: Առաջին երկու տարում այն լույս էր տեսնում յուրաքանչյուր համարին կից, իսկ հաջորդ տարիներին՝ որպես առանձին հավելված: Այս բաժնում էին տպագրվում Ստ. Լիսիցյանի և ժամանակի մանկավարժների ու գրողների հասարակական, քաղաքական, մանկավարժական թեմաներով գրված հոդվածները: Առաջին իսկ համարին կից մանկավարժական բաժնում տպագրված Ստ. Լիսիցյանի «Կեանքն ու դպրոցը» հոդվածը ներկայացնում է կյանքի առաջընթաց զարգացմամբ թելադրված նոր պահանջներն ու նոր խնդիրները, որ դրվում էին ազգի, յուրաքանչյուր ընտանիքի և դպրոցի առջև: Ազգության ամբողջությունը պահպանելու համար Ստ. Լիսիցյանը գտնում էր, որ «Պէտք է աւելի իրական, աւելի ազդու միջոցներ գտնել, քան թե լոկ լեզուն է ու կրօնը»:

«Հասկերի» էջերում մեծ նշանակություն էր տրվում նաև մանկան գեղագիտական դաստիարակությանը: «Նկարչութիւնը ընտանիքում», «Մանկապարտէզն ընտանիքում» և այլ հոդվածներում բարձր էր գնահատվում նկարչության ուսուցման դերը երեխաների իմացական և բարոյական զարգացման գործում: Գ. Լևոնյանը, որի

գրչին էին պատկանում գեղագիտական դաստիարակության հարցերին նվիրված ամսագրում տպագրված շատ հոդվածներ, նշում էր, որ նկարչությունը, երգը, երաժշտությունը քնքշացնում են երեխայի զգացմունքները, ազնվացնում նրա հոգին, կրթում ճաշակը:

«Հասկերի» էջերում մեծ տեղ է տրվում նաև ֆիզիկական դաստիարակության հարցերին: Մանկավարժ Գ. Էդիլյանը իր «Ուսումնարան եւ մարմնամարզութիւն» հոդվածում (1905, թիվ 2) պահանջում է հիմնել մարզարաններ, ուսումնարաններում պարտադիր դարձնել մարմնամարզություն առարկայի դասավանդումը: «Ֆիզիկական կրթութեան սիստէմը Ճապոնում» հոդվածում (1905, թիվ 3—4) հոդվածագիրը հարցի կարևորությունը կապում է քաղաքական իրադարձությունների հետ: Նրա կարծիքով 1905 թ. ռուսական հեղափոխության ժամանակ հայ երիտասարդների ստվար մեծամասնությունը չի ունեցել հոգեկան այն տոկունությունը, որը անհրաժեշտ էր «արիւնալի փորձութիւնից դուրս գալու եւ կեանքը նոր սկզբունքներով վերանորոգելու համար»: Նա քննադատում է հայկական դպրոցներում տիրող կրթական համակարգը, որը «պատրաստում էր թուլակազմ, շուտ ընկճւող և յուսահատւող սերունդ»:

«Հասկերի» խմբագրությունը, որպես ամսագրի հավելված, «Մանկավարժական գրադարան» ընդհանուր խորագրի տակ հրատարակում էր մանկան հոգեբանությանը և ընտանեկան դաստիարակությանը նվիրված գրքեր (Հ. Վերնիցի «Երեխայի կրթութիւնը մինչեւ վեց տարեկան հասակը», Կ. Ենիցկու «Սովորութիւններ և նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը» և այլն):

1915 թ. պատերազմական իրադարձությունները խմբագրին կանգնեցնում են տպագրական դժվարությունների առջև: Այդ առթիվ նա գրել է. «Չնայած մեր հայրենիքի տագնապներին եւ պատերազմից առաջացած տպագրական դժւարութիւններին, վարչութիւնս կարողացաւ լոյս ընծայել բոլոր խոստացած համարները» (1915, թիվ 6): 1915 թվականին լույս է տեսել «Հասկերի» վեց համար, յուրաքանչյուրը երկու ամիսը մեկ անգամ: Հաջորդ տարում լույս է տեսել ընդամենը երեք համար: 1922 թվականին վերահրատարակվել է «Հասկերը», սակայն լույս է ընծայվել միայն մեկ համար:

«Հասկերը» իր գոյության ամբողջ ընթացքում (1905–1917, 1922) ստեղծել է մանկական ընթերցանության հարուստ շտեմարան՝ հագեցված ժողովրդավարության, մարդասիրության գաղափարներով:

«ՀԱՅԿՈՒՆԻ» (1910–1912)

1910 թ. Մարզվանում լույս է տեսնում «Հայկունի» գրական-գեղարվեստական ամսագիրը: Հանդեսի հիմնական նպատակն է եղել՝ մշակել գրական ճաշակ հայ պատանիների մեջ և պատրաստել հասարակությանը պիտանի քաղաքացիների: Ամսագրի համար բնաբան են ծառայել Գյոթեի «Լույս, աւելի լույս» խոսքերը: Ամսագիրը խմբագրել է ժամանակի առաջադեմ և բազմակողմանի կրթություն ստացած մտավորականներից մեկը՝ Գագիկ Օզանյանը: Նա ծնվել է 1882 թվականին Շապին-Գարահիսարում: Սկզբում սովորել է տեղի Ս. Փրկչյան դպրոցում, ապա ավարտել է Մարզվանի Անաթոլիա կոլեջը: Զբաղվել է առևտրական գործերով: Հնչակյան այդ գործիչը ձերբակալվել է և մեկուկես տարի անցկացրել Տրապիզոնի բանտում:

1903–1906 թվականներին Գ. Օզանյանը ուսուցիչ է աշխատել ծննդավայրի դպրոցում: Ապա նշանակվել է Շապին-Գարահիսարի Ս. Սահակյան վարժարանի տնօրեն, որտեղ էլ միաժամանակ դասավանդել է հայոց լեզու, քաղաքատնտեսություն, առևտրական գործ առարկաները:

Գագիկ Օզանյանի գրչին են պատկանում բանաստեղծական, պատմագիտական մի շարք աշխատություններ («Հայապատում», 1912, Մարզվան և այլն): Սպանվել է 1915 թվականի ապրիլին, Սվազում:

«Հայկունի» ամսագիրը հիմնական նպատակ ընդունելով մանուկների և պատանիների ճշմարիտ դաստիարակության կազմակերպումը՝ գրել է. ««Հայկունին» կուսակցական ոչ մէկ յանդգամանք ունի: Անոր համար ոչ կուսակցական խտիր կայ, և ոչ ալ խնդիր: Անիկա կը պատկանի մէկ կուսակցութեան միայն՝ «Նորահաս երիտասարդներու եւ պատանիներու կուսակցութեան»» (1910, թիվ 1):

Ամսագրի խմբագրական կազմի մեջ մտնում էին Պ. Շատմերճյանը, Մ. Վարժապետյանը, Ա. Գնունին, Ն. Ենիճեյանը, Թ. Ժամկոչյանը, Ա. Գազանճյանը և ուրիշներ:

Նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. Գիտական, Պատմական, Կենսագրական, Հայապատում, Քաղաքացիական, Գեղարուեստական և այլն:

Ամսագիրը կարծում է, որ մարդն իր անձնական ու հասարակական կյանքով պետք է ծառայի ընդհանուրի, ժողովրդի երջանկությանը. «Աշխարհի մեջ գոյութիւն ունեցող ամէն բան, թէ բնական արտադրութիւններ, թէ մարդուն հանճարէն ծնունդ առնող արուեստական կամ գեղարուեստական արտադրութիւններ, եւ թէ մարդկային զանազան կազմակերպութիւններ, պէտք է անպայման ճգտին առաջ բերելու երջանկութիւն» (1910, թիվ 3): Եվ քանի որ հասարակական կյանքի նպատակը երջանկության հասնելն է, ուրեմն աշխարհի բոլոր հասարակությունները իրենց հավաքական ուժերով ու ծրագրած միջոցներով պետք է ձգտեն դրան՝ «իրենց կոչումին ծառայած ըլլալու համար»: Խմբագրության կարծիքով անցել էին այն ժամանակները, երբ «Համիդ սպանել կուտար հայը, կողոպտել կուտար հայուն տունը, կը բանտարկէր, կը խոշտանգէր եւ հայուհիներու պատիւը կը բռնադատէր...» (1911, թիվ 16–18): Նրանք միամտորեն հավատացել էին երիտթուրքերի սահմանադրության մեջ գրված խոսքերին, նրանց կեղծ խոստումներին: Ամսագիրը հորդորում էր նաև սովորել թուրքերեն լեզուն՝ կառավարական շրջաններում պաշտոններ գրավելու նպատակով: Ըստ ամսագրի, նախկինում նորահասը ատեց այդ լեզուն, որովհետև այդ լեզվով «բռնապետը հայհոյեց իր սրբութիւնները», որովհետև «դրանով գրուեցան բիւրավոր անմեղներու չարաչար կոտորման պիղծ հրամանները»: Հանդեսի խմբագիր-հրատարակիչները նոր հույսեր էին փայփայում. «Վերածնող հայրենիքը կը սպասէ իր նորահաս ուժերէն, որ նոր զաղթականութեամբ մը, նոր ուսանողական արշաւանքով մը դէպի նոր Աթէնքը, Նոր-Բիւզանդիոնը լեցուին եւ տարիներ յետոյ, ծանօթութիւններով զարգացած՝ վերադառնան, որոնց այնքան պէտք ունի, այնքան կարօտը կը քաշէ» (1911, թիվ 6):

Ամսագրի նպատակներից էր պարբերաբար հայ պատանիներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը: Այստեղ տպագրվել է

Գ. Օզանյանի «Հայուն պատմական դերը» աշխատությունը, որը լույս է տեսել նաև առանձին գրքով: Այն պատմական փաստերի լոկ շարադրանք չէ, այլ հայ ազատամարտիկների պայքարի ջատագովում՝ ընդդեմ թուրքական բռնապետության:

Ամսագիրը էջեր է նվիրել և այն գործիչների կյանքի ու գործունեության լուսաբանմանը, որոնք պաշտպանել են հայկական դատը և «հայոց տառապանքներու պատկերն ուրուագծել են քաղաքակիրթ աշխարհին առջեւ»:

«Հայկունին» իր ժամանակի մանկապատանեկան պարբերականների շարքում առաջիններից էր, որ հայ պատանիներին ծանոթացրեց համիդյան դաժան ռեժիմին և դրա դեմ հայ ըմբոստների մղած հերոսական պայքարին: Դրանով իսկ «Հայկունին» որոշակի գործ կատարեց հայ պատանիների քաղաքական-գաղափարական դաստիարակության ուղղությամբ:

Ամսագրում զգալի տեղ է հատկացվել իգական սեռի դաստիարակության հարցերին: «Հայկունիին բաժինը» խորագրի տակ տպագրված հոդվածներում բարձրացվում է այն միտքը, թե «կին մը կրթել՝ սերունդներ պատրաստել է»: Առաջ է քաշվում կնոջ ազատ, անկաշկանդ դաստիարակության պահանջը:

Ամսագրում քննարկվել են նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակության հարցերը: Ամսագիրը մանկան երկրորդ օրորոցն է համարում մանկանոցը, ուր արմատավորվում են ապագա քաղաքացու «առողջ նկարագրի հիմունքները»:

«Հայկունին» դեռահասներին ծանոթացրել է հայ գրողների ու հասարակական գործիչների կյանքին ու գործունեությանը, հանդես եկել նրանց գնահատմամբ:

Անչափ բարձր են գնահատված Մ. Նալբանդյանի ստեղծագործությունները: Նալբանդյանը համարվել է «Հայ ժողովրդի դարաւոր ստրկութեան դէմ պայքարող եւ անոր խոցան սրտերուն մէջ առաջին անգամ ազատութեան սերմերը ցանողներէն մին բանաստեղծ» (1912, թիվ 13):

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարներն են հնչում մի շարք բանաստեղծություններում: Ամսագիրը գոյատևել է ընդամենը երկու տարի:

«ԲՈՂԲՈՋ» (1911–1914)

1911 թվականին Մարզվանում լույս է տեսնում մանկապատանեկան մեկ այլ պարբերական «Բողբոջ» անունով: Խմբագիրն էր Մամիկոն Վարժապետյանը: Ամսագիրը տարածվում էր Թուրքիայի հայաբնակ գավառներում:

Խմբագիրը մեծ հույսեր էր կապում Թուրքիայում հաստատված սահմանադրական կարգերի հետ: Նրա կարծիքով ստեղծվել էր Հայկական հարցի լուծման պատեհ առիթը և այն պետք էր օգտագործել:

Ամսագրի հիմնական նպատակն էր՝ հոգևոր և մտավոր բավարար սնունդ տալ գավառի պատանիներին և երիտասարդությանը, թափանցել աշխատավոր, ընչազուրկ ժողովրդի զավակների շրջանները, արթնացնել նրանց մեջ սեր՝ գրի ու գրականության հանդեպ: «Անցեալին մէջ,– գրված է այնտեղ,– մենք՝ գաւառացիքս, ամէն կերպ կաշկանդուած, չէինք կրնար որևէ գիտակցական լուրջ շարժում մը ստեղծել ու մեր ընդհանուր ռահվիրան էր անկենդան ու փտած կեդրոնը: Ու այսօր քանիսը մասնաւոր չափով կրնանք ազատ շարժիլ, քաջալերենք գաւառի պզտիկները, որոնք վաղը հայ գրականութեան փառքը պիտի կազմէն» (1911, թիվ 4):

Ամսագրի գրեթե բոլոր համարներում տպագրվել են սկսնակ գրողների ստեղծագործությունների մասին հոդվածներ: Խրախուսանքի լավագույն միջոցներից էին համարվում սկսնակների գրական գործերին մամուլի էջերում տեղ տալը, կամ դրանք առանձին գրքով հրատարակելը: Այդ առիթով խմբագիրը պատմում է իր սեփական փորձի մասին: Նա 16 տարեկան հասակում իր առաջին բանաստեղծությունը ներկայացրել էր «Մասիսի» խմբագիր Ա. Արփիարյանին: Վերջինս ոգևորել էր նրան և առաջարկել՝ գրել արձակ և չափածո գործեր «Մասիսում» տպագրելու համար: Մ. Վարժապետյանի ստեղծագործությունների մեծ մասը տպագրվել է «Մասիսում»:

«Բողբոջ» ամսագիրն առաջին հերթին օժանդակել է նրանց, ովքեր ստեղծագործելու շնորհք են ունեցել, բայց տպագրվելու հնարավորություններից զուրկ: Գիտակցելով ամսագրի կարևոր դերն ու նշանակությունը, իրենք՝ պատանիները գրում են. «Այսօր «Բողբոջը» մեր՝ հայ արհեստաւոր պատանի դասակարգին առջեւ կը բանայ ասպարէզ մը, ուր մենք պարտինք մտնել, որպէսզի հայ գրականու-

թեան մէջ զարգացած երիտասարդներ ըլլանք, իսկ եթէ անտարբեր, պաղ վերաբերում մը ունենանք, դարձեալ պիտի մնանք առաջուայ թերուս արհեստաւոր դասակարգը» (1911, թիվ 1):

«Բողբոջ» ամսագրի հետ մեծ հույսեր էր կապում Մարզվանում այդ նույն տարիներին լույս տեսնող «Հայկունին»:

Ամսագրի խմբագիրը համոզված էր, որ միայն լուսավոր գաղափարների տարածումը բավական չէր կյանքը վերափոխելու համար, որ ժամանակը պահանջում էր արցունքի փոխարեն «ժպիտի երգը թրթռացնել», քանի որ այդ էր «կեանքի հրամայական պահանջը»: Սկսնակ բանաստեղծին խմբագիրը պատասխանել է հետևյալ քառյակով.

«Թէ ես ըլլայի երիտասարդ քեզ նման,
Փոխան լացի, կը գոռայի՝ Մայր երգէ՛
Հայ քաջ տղուն ռազմի երգը աննման,
Ես չեմ վախնար մարտէ, մահէ ու վերքէ» (1911, թիվ 8):

Ամսագրի էջերում գովերգվել է Սասունի ազատագրական պայքարը («Սասուն», «Ազատորդի ուսանողական միութեան» քայլերգը, «Հայուհիին աղօթքը»), և տպագրվել են ազատաշունչ ոգով գրված այլ բանաստեղծություններ:

«Բողբոջ» ամսագիրն անդրադարձել է նաև դրամատիկական աշխարհի արատավոր երևույթներին, ցույց տվել մարդկային փոխհարաբերություններում տեղ գտած եսասիրության, փառամոլության վնասաբեր հետևանքները:

Սկսնակ գրողներին մեծ տեղ տալու համար ամսագիրը երբեմն էլ քննադատվել է մի շարք մտավորականների կողմից: «Յառաջի» 1911 թ. թիվ 3-ում Մկրտիչ Պարսամյանի տպագրած քննադատական հոդվածին Մ. Վարժապետյանը պատասխանել է Վ. Հյուգոյի հետևյալ խոսքերով. «Նուիրական է ինձի համար ամէն նոր սկսնակ բանաստեղծ, որչափ ալ փոքր ըլլայ իր տեղը մատենագրութեան մէջ, միշտ մեկուսի պիտի քաշուիմ ճանբայ տալու նորեկ բանաստեղծի մը» (1912, թիվ 3):

«Բողբոջը», որ գոյատևեց ընդամենը երեք տարի, կարողացավ իր շուրջը համախմբել շնորհալի պատանիների, որոնք հետագայում դարձան վիպասաններ, բանաստեղծներ հասարակական գործիչներ և իրենց տեղը գրավեցին գրականության և կյանքի այլ բնագավառներում:

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» (1911–1914)

Անցյալի հայ մանկապատանեկան մամուլի էջերում առանձին բաժիններ հատկացվել են մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության հարցերին: Սակայն դրանք այն նշանակությունն ու ազդեցությունը չեն ունեցել, ինչ ֆիզիկական դաստիարակությանը նվիրված առանձին մասնագիտական պարբերականները:

Սուլթան Աբդուլ Համիդի անկումից հետո, սահմանադրական կարգերում, ըիրավ ազատություն վայելելու ակնկալություններով հայ մտավորականները մեծ ոգևորությամբ կրկին ձեռնամուխ եղան ինչպես հոգևոր ու մտավոր, այնպես էլ ֆիզիկական դաստիարակության կազմակերպման գործին: Նրանցից մասնագիտական կրթություն ստացած Շավարշ Քրիսյանը 1911 թվականին, Կ. Պոլսում լույս ընծայեց ամսագիրը:

Շավարշ Քրիսյանը ծնվել է 1886 թ., Կ. Պոլսում: Սովորել է տեղի Մաքրուհյան, Ամերիկյան, Տերտերյան վարժարաններում, ավարտել Ռոբերտ քոլեջը: 1906 թ. տեղափոխվել է Փարիզ և հաճախել մարմնամարզական վարժարանը (Լիսե Ժանսոն): Այնուհետև երկուսուկես տարի սովորել է Լոնդոնի Սանտովի մարմնամարզական վարժարանում: Մարմնամարզի ուսուցչի վկայականով նա վերադարձել է Կոստանդնուպոլիս: Այստեղ նա մարմնամարզություն է դասավանդել զանազան դպրոցներում, կազմակերպել է մասնավոր ուսումնարաններ, մարմնամարզական ակումբներ, ինչպես կենտրոնում, այնպես էլ արվարձաններում:

Շ. Քրիսյանը մանկավարժ Հ. Հինդլյանի հետ միասին հրատարակել է «Պոյ սկաուտը և իր կյանքին նպատակը» գրքույկը:

Ընտրելով հրապարակախոսությունը՝ նա, ինչպես ինքն է խոստովանել, հետապնդել է հետևյալ նպատակը. «իր ազգակիցներուն ու հայրենակիցներուն տալու առողջութիւն, ույժ եւ այդ երկուքին միացումէն բխող երջանկութիւնը»: Պարբերականը առաջին համարում գրում է. «Մեր նպատակը պիտի ըլլայ մարդ պատրաստել, եւ մարդեր են, որ մեզի կը պակսին» (1914, թիվ 1):

1912 թվականից ամսագիրը դառնում է շաբաթաթերթ և ավելացվում են Մանկավարժական, Առողջապահական-բնախոսական, Կանանց, Հայ պոյ-սկաուտներ բաժինները: Մատաղ սերնդի դաս-

տիարակության շուրջ հոդվածներով հանդես է եկել Հ. Հինդլյանը: Նա իր մի շարք հոդվածներում քննարկել է հոգու և մարմնի ներդաշնակության հարցերը:

Ամսագրում առաջարկվում է լուրջ բարեփոխություններ մտցնել ուսումնական ծրագրերում, «զայն պատշաճեցնել ներկայ կեանքի պահանջքներուն եւ իրականութեան, ինչպէս նաեւ զայն ազդակ մը ընել ազգային վերածնութեան, գիտնալով, որ ամէն բան նախապէս կախուած է կրթական վերածնունդէ մը»: Առաջարկվում է նաև ազգային դպրոցների ծրագրերում մտցնել «Երկրագործութիւն» առարկան, քանի որ այն «հիանալի մարզանք է» աշակերտության համար: Որպես լավագույն օրինակ, վկայաբերվում է արևմտաեվրոպական զարգացած երկրներում կիրառվող փորձը: «Ֆիզիքական կրթութիւնը հունգարական վարժարաններուն մէջ» հոդվածը ծանոթացնում է գիմնազիաներում և գյուղական երկրորդական վարժարաններում մարմնամարզության դասավանդման նոր մեթոդին, զենքի գործածության ձևերին: Այդ տարիներին թուրքահայ երիտասարդության համար զինվորագրության կարգը, որ ընդունված էր սահմանադրությամբ, խրախուսվում էր ամսագրի կողմից և առաջարկվում էր դպրոցական ծրագրերում պարտադիր դարձնել «զինուորական տարրական շարժուձեւերուն վարժութիւնները»: Ահա թե ինչու ամսագիրը տպագրում է օսմանյան կառավարության պատերազմական նախարարի կոչը՝ միաժամանակ ցույց տալով այն վարժությունների կատարման ձևերը, որ պետք է սովորեին աշակերտները մինչև զորակոչվելը: «Ազատամարտից» արտատպվել է այն խմբագրականը, որտեղ առաջարկվում է կազմել առանձին ծրագիր և այդ ծրագրով հայկական բոլոր վարժարաններում մտցնել սպորտի դասընթացը՝ ապագա հայ սերունդը «աւելի կայտառ, աւելի դիմացկուն եւ աւելի նախաձեռնող սերունդի մը վերածելու համար»: Ամսագրի էջերում կոչ էր արվում բոլոր թաղերի, գավառների, քաղաքների երիտասարդությանը՝ խմբվել ու հիմնել մարմնամարզական ակումբներ և մրցումների ու սպորտային խաղերի միջոցով պատրաստել առողջ սերունդ, ցույց տալ մարդկությանը, որ «թէ հայ ծնած դնդերն ու արիւնը տոկուն ու ազնիւ տեսակէ են, իսկ իր մինչեւ հիմայ միջազգային ու տեղական մրցումներու չմասնակցելուն պատճառն ալ՝ ոչ թէ իր մկաններուն ու իր արիւնին այլասե-

րած ըլլալն էր, այլ այդ տեսակ մրցումներու գոյութեան անգիտանալն ու անոնց պատրաստուած չըլլալը» (1911, թիվ 1):

Ինչպես քաղաքի, այնպես էլ գավառի երիտասարդությանը մարմնամարզական ակումբների շուրջ համախմբելու մասին առաջին լուրջ հոդվածը պատկանում է Ռոբերտ Քոլեջի սան Վահրամ Փափազյանի գրչին: Խանդավառ պատանին հայտնում է, թե սիրում է սպորտը, նրա մեջ տեսնում ավելի հեռահար նպատակներ՝ ազգի գոյության ու պահպանման երաշխիքը, երիտասարդության ուժերը ազգօգուտ գործերի շուրջ կենտրոնացնելու լավագույն միջոցներից մեկը: Մարզական ակումբները կանջատեին երիտասարդներին այն միջավայրից, ուր նրանք «ժամանակնին կսպաննէին թուղթ կամ նարտ խաղալով ու գիշերը երթալիք տեղերնին որոշելով կամ առջի գիշեր գացած տեղերնին նկարագրելով» (1911, թիվ 2): Այս հոդվածը կարճ ժամանակում իր արձագանքն է գտնում Կ. Պոլսի հայության մեջ: Առաջինը գործի են անցնում Գուրու-Չեշմեի հայ երիտասարդները, որոնք կազմում են մարմնամարզական ակումբ: Նրանց հետևում են գավառների երիտասարդները և կազմում առանձին մարմնամարզական խմբակներ: Կ. Պոլսում սկսում են գործել «Արշալույս», «Կոնտոր», «Որբանոց», «Սասուն», «Արտավազդ», «Վարազ», «Տորք» ակումբները, ստեղծվում է հայկական ֆուտբոլի խումբը:

«Մարմնամարզի» անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվում են հայկական առաջին օլիմպիական խաղերը: Օլիմպիականը բոլորովին նոր ու արտակարգ իրողություն էր հայ երիտասարդության համար: Եվ ցավալի էր, որ նման նշանակալից երևույթն արձագանք չէր գտնում ժամանակի պարբերական մամուլի էջերում: Այս առթիվ «Մարմնամարզի» հանդիմանանքը տեղին է. «...դրամի՞ մը կը սպասեք քաջալերելու, շոյելու, շողոմելու համար այս գործը: Իսկ եթէ ատոր չէք սպասէր, հապա ի՞նչ է ձեր լռութիւնը, ձեր պապանձումը: Երբ ազգին բոլոր ցաւերուն վրայ կոկորդիլոսի արցունք կը թափէք, երբ նոյնիսկ հեռաւոր Եւրոպայի էն հոտին եղելութիւններուն վրայ էջեր կը լեցնէք, երբ օրուան զզուելի ոճիր մը ձեր թերթերուն մէջ իր սիւնակները կունենա, ինչո՞ւ կը զլանէք տեղ տալու այս շարժումին, հայ մարմնակրթարանի շարժումին: Այս շարժումը, կուսակցութեան մը չի պատկանիր, մի վախնաք, դուք որ ամէն տեղ, ամէն բանէ, կուսակցութեանց ուրուականովը կը հալա-

ծուլիք. այս շարժումը համազգային է՝ աղային, էֆենտիին, արհեստաւորին ու լրագրատէրին տղուն համար է հաւասարապէս» (1912, թիվ 12): Կ. Պոլսում հայկական օլիմպիական խաղերը դարձան ժողովրդական, կազմակերպվեցին երկրորդ, երրորդ և չորրորդ օլիմպիականները:

Հայկական օլիմպիական խաղերի նկատմամբ իր համակրանքն է արտահայտել նաև մեծ երգահան Կոմիտասը: Ներկա լինելով օլիմպիական երրորդ մրցախաղին՝ նա հանդես է եկել «Ազգային գոյութեան պայքարին մէջ երիտասարդութեան կատարելիք դերի մասին» ճառով, ապա մարմնամարզիկներից յուրաքանչյուրին հանձնել մրցանակներ (1913, թիվ 12):

Օլիմպիական խաղերը «արտաքին ոտնձգութիւններից, սնափառական յետապնդումներից» զերծ պահելու համար 1911 թ. ամսաթերթի խմբագիր Շ. Քրիսյանի նախաձեռնությամբ և նրա գաղափարներին համակիր անձերի օժանդակությամբ կազմակերպվում է Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը: Միության նպատակների մասին հրապարակված շրջաբերականում գրված է. «Պիտի ըլլայ հաւաքում մը՝ ուր հայ մարմինին եւ հայ միտքին աշխատաւորները ձեռք ձեռքի տուած՝ պիտի ճշդէն բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են մեր ներկայ թմրած ու թուլամորթ սերունդին տեղ՝ վաղուան առողջ ու կայտառ սերունդը ստեղծելու համար» (1912, թիվ 12): Այդ նույն թվականին ստեղծվում է նաև Հայ սկաուտների կազմակերպությունը:

Հայ սկաուտների շարքերը ընդունվում էին 12 տարեկանից բարձր տարիք ունեցող դպրոցական պատանիները, իսկ Հայ մարմնամարզական ընդհանուր միությանը կարող էին անդամագրվել ավելի մեծերը: Հայ սկաուտները համարվում էին Հայ մարմնամարզական ընդհանուր միության ապագա անդամներ:

Այդ տարիներին Կ. Պոլսում գոյություն չունեին առանձին վարժարաններ, որոնք գործնական դասաժամերով կարողանային օժանդակել սաների ֆիզիկական դաստիարակության գործին: «Մարմնամարզ» իր էջերում ստեղծում է «Մարմնամարզական դասընթացներ» բաժինը, որը բաղկացած էր և՛ տեսական, և՛ գործնական մասերից: Տեսական մասում մեկնաբանվում էին ֆիզկուլտուրայի և սպորտի գիտական սկզբունքները, իսկ գործնական մասում ցույց էին տրվում

մարմնամարզական վարժությունների կատարման ձևերը՝ տղաների և աղջիկների համար: Պարտավորեցնելով աղջիկների՝ պատկերված (նկարներով) բոլոր վարժությունները, ամսագիրը գրում է. «Պէտի ունենանք առողջ, գեղեցիկ, պարտաճանաչ հայ կիներ, որոնք հակառակ անցեալին մէջ իբր անարգանք նկատուած հայու կնիկի անունով որոշուելուն, չպիտի կարմրին, այլ հպարտ ժպիտով մը ուրախանան, որովհետեւ նոյն բառին հին իմաստովը չպիտի նկատուին ու բնորոշուին» (1911, թիվ 2):

Հատկանշական է, որ ամսագրում ֆիզիկական դաստիարակության հարցերը քննարկվում են բարոյական դաստիարակության խնդիրների հետ շաղկապված: Վարժարանները, մանկավարժական ակումբները, ըստ ամսագրի, կոչված էին պատրաստելու մի սերունդ, որը «խանդավառությամբ կարողանար միշտ անհատականը զոհել հանրայինին, անձը զոհել սկզբունքին»: «Եղբայրակցիլ,- գրված է ամսագրում,- այս պէտք է ըլլայ նոր հայ սերունդին կարգախօսը, ու այդ գիտակցումին տարածման համար կը տրամադրենք մեր թերթի սիւնակները և ամէն տեսակ օժանդակութիւն» (1914, թիվ 1):

Խոսքը ուղղելով ծնողներին՝ ամսագիրը հորդորում է նրանց՝ հեռու մնալ ոգելից խմիչքներից, թողնել բոլոր մոլի հատկությունները, ձգտել գեղի լավը, բարձրը, գեղեցիկը, սիրել սպորտը, դաշտային խաղերը, զվարճությունները: «Մենք համոզուած ենք,- գրված է ամսագրում,- որ ֆիզիքական լաւ, մէթոդիկ ու յարատեւ դաստիարակութեան մը շնորհիւ, այլասերուած ամբողջ ազգ մը կրնայ վերածնիլ, վերստեղծուիլ եւ դառնալ ուժեղ ու կորովի» (1914, թիվ 1):

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

«ՆՈՐ ԿՅԱՆՔ» (1906–1907)

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ազդարարվել է հայ մամուլի ծնունդը ռուսական այնպիսի հայաշատ քաղաքում, որպիսին էր Նոր-Նախիջևանը:

Այստեղ մեկը մյուսի հետևից լույս են տեսել «Նոր կյանք» (1906–1907), «Մեր ձայնը» (1907–1909), «Լույս» (1910–1914), «Գրիչ» (1912–1914), «Գաղութ» (1914–1916) և այլ պարբերականներ:

Աշխատավորության բարվոք կյանքի ստեղծման հեռանկարներ ակնկալելով հեղափոխական շարժումներից՝ Նոր-Նախիջևանում համախմբված լուսամիտ երիտասարդներ Գրիգոր Անոփյանը, Հակոբ Տեր-Մանվելյանը, Հովհաննես Ղարագյոզյանը, Գրիգոր Բեդելյանը 1906 թ. ձեռնամուխ են եղել «Նոր կեանք» շաբաթաթերթի հրատարակմանը: Հասարակական և քաղաքական այդ շաբաթաթերթի պատասխանատու խմբագիրներն էին Գրիգոր Անոփյանը, Հակոբ Տեր-Մանվելյանը, Հովհաննես Ղարագյոզյանը, հրատարակիչն էր Գր. Բեդելյանը:

Առաջին տարվա առաջին իսկ համարում հայտարարված է. ««Նոր կեանքը» ունի առաջադէմ ուղղութիւն և որևէ կուսակցութեան չի պատկանում»:

Թերթը լույս է տեսել շաբաթը մեկ անգամ՝ կիրակի օրերը: Աշխատակցել են Մ. Բերբերյանը, Օ. Անոփյանը, Ս. Բաբիյանը, Գ. Զուբարը և ուրիշներ: Թերթին թղթակցել է նաև Ալ. Մյասնիկյանը:

Նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. Առաջնորդող, Ժամանակակից հարցեր, Տեղական կեանք, Գրական բաժին, Արտասահմանեան կեանք, Քրոնիկոն, Մամուլ, Թատրոն և գեղարուեստ, Շաբաթուայ լուրեր, Գրախօսական և այլն:

«Նոր կեանքն» անդրադարձել է երկրի ծայրամասերում բռնկված հեղափոխական շարժումներին, դրանց դրդապատճառներին: Թերթի կարծիքով՝ հեղափոխական այդ ելույթները՝ ուղղված «կեանքի վնասակար արտայայտութիւնների դէմ», հանդիսանում են տնտեսական և հասարակական կյանքի ռամկավարացման գործընթաց, որը ճանապարհ է հարթելու կապիտալի դեմ ուղղված կռվի վերջնական հաղթանակի համար: Թերթը նշում է միաժամանակ, որ 1905 թ. մանիֆեստով և Պետական դումայի հրավիրումով դրությունն ամենևին էլ չի փոխվել, և որ անհրաժեշտ է շարունակել պայքարը, հասցնելով այն վերջնական հաղթանակի:

«Նոր կեանք» թերթում ռուսական բուրժուա-դեմոկրատական առաջին հեղափոխությունը համարվել է նշանավոր իրադարձություն ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև այլ երկրների ժողովուրդների համար: Ըստ թերթի, ռուսական առաջին հեղափոխությունն Արևելքում դեմոկրատական շարժումների ծավալման խթան է հանդիսացել: Հեղափոխական պայքարի արդյունքներից մեկը համարելով

Պետական դուման՝ ժողովրդական ներկայացուցչական օրգանը, թերթը գրել է. «այդ ակտով ժողովրդապետութեան շէնքի հիմքը դրուեց, և վաղ, թէ ուշ, մենք ականատես պիտի լինենք ռամկավարական կարգերի իրականացմանը» (1906, թիվ 18):

Հեղափոխության օրերին ըմբոստ տրամադրությունները համակել էին նաև Նոր-Նախիջևանի դպրոցականներին: Հայտնի են թեմական դպրոցի աշակերտների ելույթները, որոնց արձագանքել է թերթը: Աշակերտ Գ. Պողոսյանը դպրոցականներից մեկի մահվան կապակցությամբ արտասանած իր ճառում քննադատական խոսք է ասել դպրոցում տիրող ոստիկանական կարգ ու կանոնի հասցեին, որի համար էլ հեռացվել է դպրոցից: Այդ հեռացումը առիթ է հանդիսացել դպրոցում տիրող կամայականությունների դեմ ուղղված աշակերտական բողոք-ցույցերի: Դպրոցի ղեկավարությունը ցույցերի կազմակերպիչների նկատմամբ կիրառել է պատժի խիստ միջոցներ, վտարել է բոլորին դպրոցից: Նման դաժան վերաբերմունքը առաջացրել է թերթի գայրույթը:

Թերթում բողոքի իր ձայնն է բարձրացրել Ալ. Մյասնիկյանը՝ «Վերջապէս խօսեցին» առաջնորդող հոդվածում (1906, թիվ 26): Նա ընդհանրացնելով եղելությունը, այն կապելով համաժողովրդական շարժմանը գրել է. «Այն շարժումը, որ այսօր տեղի է ունենում մեր աչքերի առաջ, ամէն մի քար ու փայտ փշրելով առաջ կընթանայ»:

Նրա համոզմամբ՝ այդ շարժումն էր, որ «պատռելու էր խաւարը», «լուսաւորելու և ջերմացնելու էր» ժողովուրդներին:

Ցարական ինքնակալական կարգերի քննադատությամբ հանդես է եկել Մ. Բերբերյանը «Յիշատակարան» հոդվածաշարով (1906, թիվ 5–10), որը նվիրել է հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի հիշատակին, այն մարդու, ինչպես հեղինակն է գրել. «որի անունը պիտի մտաբերի ամէն մի ընթերցող «Յիշատակարան» խօսքը կարդալիս» (1906, թիվ 5): Այս հոդվածաշարում հեղափոխությանը նախապատրաստվելու կոչն է արվում: Բարձր է գնահատվել Մ. Նալբանդյանը՝ հեղինակի արտահայտությամբ, հայ առաջին սոցիալիստը:

Հոդվածաշարում Մ. Բերբերյանն անդրադարձել է նաև թուրքահայ կյանքին, հայկական կոտորածներին, կոչ անելով հայ երիտասարդությանը՝ նյութական և բարոյական օգնություն ցույց տալ եղբայրներին:

Թերթում մեծ տեղ են տրվել նաև հայ-ադրբեջանական կոտորածներին, ազգամիջյան կռիվներին նվիրված հոդվածներին: «Վտանգավոր խաղ» առաջնորդողում (1906, թիվ 5) և այլ նյութերում թերթը մեղադրել է ցարական կառավարությանը՝ ազգամիջյան կռիվների հրահրման մեջ և նշել, որ «նա կռվեցնում է հային և թուրքին, հուսալով ազատարար շարժման առաջն առնել Կովկասում: Սակայն շարժումն օրեցօր ավելի է ծավալվում» (1906, թիվ 5): Թերթի կարծիքով, այդ խռովությունները կովկասահայերին կամա, թե ակամա ստիպել են դիմելու պաշտպանության և ինքնապաշտպանության՝ զենքի ուժով: Հարուստ է «Նոր կեանքի» գրական բաժինը: Տպագրվել են Շ. Կուրղինյանի, Վ. Տերյանի, Օ. Անոփյանի, Հ. Մալխասյանի, Ս. Բաբիյանի և ուրիշների գործերը:

Թերթում ուշադրության են արժանի Շիլլերի, Նադսոնի, Գլեբովի ստեղծագործություններից արված թարգմանությունները:

Կարելի է եզրակացնել, որ «Նոր կեանք» շաբաթաթերթը իր գործունեության ամբողջ ընթացքում լուսաբանել է ժամանակի քաղաքական, հասարակական կյանքի կարևոր իրադարձություններն արմատական դեմոկրատիզմի դիրքերից:

«ՄԵՐ ՁԱՅՆԸ» (1907–1909)

«Մեր ձայնը» հասարակական, գրական և քաղաքական օրաթերթը լույս է տեսել 1907–1909 թթ. Նոր-Նախիջևանում: Այն չի հարել քաղաքական որևէ կուսակցության այլ, ինչպես թերթում է գրված՝ ելնելով ազգային առաջադեմ դեմոկրատական ուղղության սկզբունքներից, նպատակ է ունեցել ծառայել իր ազգի՝ Ռուսաստանում բնակություն հաստատած հատվածի սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրթական, կուլտուրական, իրավական կյանքի բարեփոխման գործին:

Թերթի խմբագիրն ու հրատարակիչն է եղել գրող, բանասեր, հրապարակախոս, հասարակական գործիչ Հովհաննես Մալխասյանը: Նա ծնվել է Ախալքալաքի շրջանի Սուլդա գյուղում, 1866 թ.: 1885 թ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո, ուսուցիչ է աշխատել Ախալքալաքի, Ախալցխայի, Թիֆլիսի հայկական

դպրոցներում: Միաժամանակ ունենալով գրական հակումներ, պատմվածքներով հանդես է եկել «Մշակում», «Նոր-դարում» և այլ պարբերականներում: Առանձին գրքերով լույս է ընծայել «Եթում» վիպակը (1895), «Հորոտ-մորոտ» ժողովածուի Ա (1898), Բ (1901) հատորները, «Հայ գեղջուկի ալբոմը» (երկու պրակ): Նա գրել է նաև դրամաներ:

Նար-Դոսի հետ կազմել ու հրատարակել է «Գիր և կեանք» դասագիրքը (Թիֆլիս, 1911): Նրա գրչին են պատկանում «Յովհաննէս Յովհաննիսեան», «Հայ թատրոնի պատմութիւնը», «Թուական տաղաչափութիւն» ձեռագիր աշխատությունները:

Հ. Մալխասյանը մահացել է 1931 թվականին:

Յուրովի ըմբռնելով ռուսական բուրժուա-դեմոկրատական առաջին հեղափոխության ընթացքն ու վախճանը՝ ժողովրդի սոցիալական, քաղաքական կյանքի ազատության իրականացումը խմբագիրը տեսել է տնտեսական-մշակութային կյանքի խաղաղ զարգացման մեջ: Նույն ճանապարհն առաջադրվել է և արևմտահայերի համար: Նրա կարծիքով՝ Թուրքիայում սուլթանական կարգերի տապալումը, քրիստոնյա, թե մահմեդական ժողովուրդների ազատագրումը կարող է իրականացվել «... միմիայն կուլտուրական խաղաղ գործունէութեամբ, ժողովրդի զարգացմամբ» (1908, թիվ 41):

«Մեր ձայնը» լույս է տեսել շաբաթը երեք անգամ: Պարբերականի շուրջ համախմբված են եղել Մ. Բերբերյանը, Գ. Ենգիբարյանը, Խ. Կանայանը, Էմ. քահ. Նազարյանցը, Ս. Մանդինյանը, Մ. Աբեղյանը, Գ. Զուբարը, Վ. Զուբարյանը, Ե. Շահազիզը, Գ. Չոլոքյանը, Ջավախեցին (Ղ. Տեր-Գրիգորյանը) և ուրիշներ:

Նյութերը գետեղված են հետևյալ բաժիններում Հայոց կեանք, Ռուսաց կեանք, Օտար կեանք, Կովկաս, Մամուլ, Մեր թղթակիցները, Թատրոն և գեղարուեստ և այլն:

«Մեր ձայնն» անդրադարձել է հայ ժողովրդի անցյալի պատմությանը, եվրոպական մեծ տերությունների և Ռուսաստանի դիվանագիտության հարցերին:

Թերթի հոդվածների զգալի մասը նվիրվել է արևմտահայ կյանքին: Թերթի տեսաբաններից Գ. Ենգիբարյանը «Ո՞ր պէտք է լինի հայ ազգի քաղաքականութիւնը» հոդվածում (1908, թիվ 95) զարգացրել է այն միտքը, թե հայը, որ դարեր շարունակ պայքարել ու

չի կարողացել հասնել պետական անկախության, պետք է սահմանադրական Թուրքիայում բռնի խաղաղ, կուլտուրական կյանքի առաջընթացի ճանապարհը: Մ. Բերբերյանը «Ազգային քաղաքականութիւն» հոդվածում (1908, թիվ 96), պաշտպանելով գրեթե նույն տեսակետը, հանգել է այն եզրակացության, թե խաղաղ առաջադիմության հետ միաժամանակ հայը օրինական ճանապարհով պետք է կարողանա ձեռք բերել քաղաքական ավելի լայն իրավունքներ, «առանց որևէ անջատական միտումներ ունենալու և քաղաքական կատարեալ անկախ (սուվէրէն) պետութիւն կազմելու երազներով տարուելու»: Ինչպես հոդվածագիրները, այնպես էլ թերթը, ելնելով ժամանակի քաղաքական խառնակ իրադարձություններից, հայ ազգի քաղաքական ծրագրի իրագործման համար պահանջել են գործել զգուշորեն և հանդես գալ չափավոր պահանջներով: Իհարկե, նրանք ամենևին էլ հույսեր չեն կապել օսմանյան սահմանադրության հետ: Ընդհակառակը, այն համարել են հերթական խաղ՝ գրելով. «Ինչպէս հաւատալ, թէ դա այն կայծը չէ, որից առաջ պիտի գա մի սարսափելի հրդեհ, որի դժոխային հեռանկարը ամենեւին չի հեռանում մեր աչքից» (1908, թիվ 127):

Թերթի համոզմամբ՝ հաջողության հասնելու համար հայ ժողովուրդը պետք է համախմբվի ոչ թե առանձին կուսակցական կազմակերպությունների կամ խմբակցական միությունների, այլ համազգային միության շուրջ:

«Մեր ձայնի» համոզմամբ՝ վաղ, թե ուշ Թուրքիայում բռնապետական կարգերը, որ հավիտենական չէին, կարող էին տեղի տալ ժամանակի պահանջներին և կործանվել բնականոն ճանապարհով, այլ ոչ թե հեղափոխական պայքարով:

Ըստ թերթի՝ «Կուլտուրական, դանդաղ, բայց հաստատուն ուղին է միայն, որ ազատութեան կարող է հասցնել» (1908, թիվ 43): Եվ այդ ուղին հաղթահարելու համար ազգը պետք է առաջնորդվի որոշակի քաղաքականությամբ թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ կուլտուր-կրթական հարցերում:

Տնտեսական կյանքում հարցերի հարցը համարելով հողային հարցը՝ թերթը բազմաթիվ հոդվածներում քննարկել է տարբեր կուսակցությունների տեսակետները, կոչ արել անցնել հողի համայնատիրական սեփականության տարբեր ձևերի (արտելներ, ընկերակ-

ցությունններ, կոոպերացիաներ և այլն) կազմակերպմանը: Թերթը ժամանակի դեմոկրատ մտածողներ Ա. Աթանասյանի և մյուսների նման պաշտպանել է ռուս տրուդովիկների ազգային ծրագիրը, որի համաձայն, հողը պետք է տրվեր գյուղացիական համայնքներին և գյուղացիներին՝ հողօգտագործման հավասար իրավունքներով:

«Մեր ձայնն» անդրադարձել է նաև կրթության և դաստիարակության հարցերին: Բարձրացրել է դպրոցական ծրագրերի բարեփոխման, հայոց լեզվի դասավանդման, ուսուցիչների և դպրոցների ղեկավարների վերապատրաստման, օրիորդաց վարժարանների հիմնադրման, թատրոնի, դերասանական խմբերի կազմակերպման, մասնագիտական համալսարանների հիմնադրման վերաբերյալ հարցեր:

Մանկավարժական հոդվածներով հանդես են եկել Ս. Մանդինյանը, Ջավադբեգ-Բալուղյանը, Մ. Բարխուդարյանը, Ջավախեցին, Հ. Թումանյանը և ուրիշներ: Բարձրացվել են դպրոցը տեղի հայ հասարակության զարգացման պահանջների համեմատ վերակառուցելու խնդիրներ: «Վարժուհիներ պատրաստելու համար օրիորդաց միջնակարգ դպրոց» հոդվածում (1908, թիվ 52) առաջարկվել է Նոր-Նախիջևանի օրիորդաց վարժարանը դարձնել հինգդասյա, ավելացնելով մեկ մասնագիտական դասարան՝ հայերենի ուսուցչուհիներ պատրաստելու համար:

Առանձնահատուկ տեղ է տրվել հայեցի դաստիարակության խնդրին: Նման դաստիարակության գործում կարևորությունը տրվել է մայրերին:

Թերթը հանդես է եկել Նոր-Նախիջևանի բարբառի պահպանման պահանջով: «Հայ ենք՝ պիտի հայերէն խօսենք: Ինչու՞ չխօսենք Նախիջեւանի լեզուով, դա էլ հայերէն է, Ռ. Պատկանեանը գրել է այդ բարբառով» (1908, թիվ 19):

Հարուստ է «Նոր ձայնի» գրական բաժինը: Շ. Կուրղինյանի «Վայ ձեզ, վախկոտներ» (1907, թիվ 12), «Հոգ չէ մեռնեմ» (1907, թիվ 8) և այլ բանաստեղծություններ ազատասիրական տրամադրություններով են համակել ընթերցողին, ոգեկոչել նրան հեղափոխական պայքարի:

«Մեր ձայնը» իր ընթերցողներին ծանոթացրել է հայ գրողների (Արփ. Արփիարյան, Հովհ. Հովհաննիսյան, Պ. Պռոշյան, Ս. Շահազիզ և ուրիշներ) կյանքին և գործունեությանը: Թարգմանաբար՝ թերթը

թարգմանել է Լ. Տոլստոյի, Մ. Գորկու, Գ. Մոպասանի և մյուսների ստեղծագործությունները:

Նոր-Նախիջևանում լույս տեսած «Մեր ձայնը» թերթը ժամանակին կատարել է կարևոր դեր հայ գաղթօջախի լուսավորական կյանքի զարգացման գործում: Այն երկար չի գոյատևել: Նյութական սուղ միջոցները խմբագրին ստիպել են 1909 թ. ընդմիշտ փակել թերթը:

Նոր-Նախիջևանում լույս տեսած պարբերականների թվին են պատկանում նաև «Լույս» (1910–1914), «Գրիչ» (1912–1914) շաբաթաթերթերը, որոնք ունեցել են հիմնականում գրական-հասարակական ուղղություն:

«ԼՐԱԲԵՐ» (1908–1909)

Ռուսաստանի հայաշատ Աստրախան քաղաքում արևելահայ առաջին պարբերականի՝ «Արեւելեան ծանուցմունք» շաբաթաթերթի հիմնադրումից (1816) մոտ մեկ դար անց՝ լույս է տեսել «Լրաբեր» քաղաքական, հասարակական ու տնտեսական շաբաթաթերթը:

«Լրաբերը» խմբագրել և հրատարակել է Կարապետ Խաչատրյանը: Խմբագրական աշխատանքների գործուն մասնակիցը և թերթի գաղափարական ուղղությունը տվողը եղել է դեմոկրատական հայացքների տեր մտավորական, գրող, հասարակական գործիչ Գևորգ քահ. Մկրտումյանը (1863, Ղզլար – 1915, Ալեքսանդրապոլ):

«Լրաբերի» հիմնական նպատակն է եղել ժամանակի հասարակական, քաղաքական կյանքի պահանջներից ելնելով՝ քննարկել Աստրախանի հայության հուզող կենսական խնդիրները: ««Լրաբերի» նպատակն է,- գրված է թերթում,- միշտ թարմ պահել հայ հասարակութիւնը, առաջնորդել նրան դեպի մտաւոր աշխատանք եւ թոյլ չտալ, որ մասսայի շահերը կուլ գնան փոքրամասնութեան կամայականութիւններին» (1908, թիվ 1):

Թերթին աշխատակցել են հեղափոխական գործիչներ Ա. Խումարյանը (Զանգահար), Հ. Բժշկյանը (Բանվոր Հայկ), Հ. Սոլովյանը (Վորքման), Մ. Բագրատունին և ուրիշներ:

Տեղական կյանքի հարցերը քննարկվել են «Մեր հիմնարկությունների շուրջ» ընդհանուր խորագրի տակ զետեղված հոդվածներում: Բարձրացվել են հայկական ուսումնարանների բարեկարգման, աշխատանոցների և կանանց բարեգործական ընկերությունների ու ազգօգուտ այլ կազմակերպությունների ստեղծման հարցերը: Քննադատվել է Կովկասի փոխարքայի դիվանին կից գործող մասնաժողովի ընդունած հայ լուսավորչական եկեղեցական-ծխական ուսումնարանների կանոնադրությունը, ըստ որի, սահմանափակումներ էին մտցվում հայկական դպրոցների ուսումնա-դաստիարակչական ծրագրերում:

Թերթը բարձր է գնահատել Աստրախանի հայոց Աղաբաբյան ուսումնարանի դերը աստրախանահայության մշակութային կյանքում և հանդես է եկել ուսումնարանը պրոգիմնազիայի վերափոխելու պահանջով:

«Լրաբերի» քաղաքական թեմաներով գրված հրապարակախոսական հոդվածներում հասարակական կյանքը առաջ մղող ուժը համարվել է բանվոր դասակարգը: «Արտաքին տեսություն» բաժնի նյութերը լուրեր են հաղորդել այլ երկրներում տիրող հասարակական, քաղաքական իրավիճակի մասին: Թերթը քննադատաբար է անդրադարձել երիտթուրքերի վարած քաղաքականությանը՝ գրելով. «... նրանք արեցին եւ անում են այն, ինչ որ պահանջում էին իրենց դասակարգի և ազգայնական շահերը...» (1908, թիվ 26):

Թերթում գրաքննադատական հոդվածներով հանդես է եկել Գ. քահ. Մկրտումյանը: Նա Տ. Նազարյանի «Աղբյուր» մանկապատանեկան ամսագրի հոբելյանի առթիվ տպագրած իր ողջույնի խոսքում նշել է. «Սխալուած չենք լինի, եթէ չեշտենք, որ Տ. Նազարեանն էր մէկը այն ռահվիրաներից, որ մեր մանկական գրականութեան հիմքը դրեց եւ զարգացրեց» (1908, թիվ 34):

Թերթը Լ. Տոլստոյին համարել է «Ռուսաց երկրի մեծ գրող»:

«Լրաբերի» էջերում մեծ տեղ են գրավել գրական-գեղարվեստական ստեղծագործությունները: Այստեղ են տպագրվել Վ. Տերյանի («Աշուն», «Գիշեր», «Սուսաննային», «Մոլորում», «Սեւ ծաղիկ», «Սարսափի գիշերներից» և այլն), Ա. Ծատուրյանի («Գրչի հանաքներ», «Տարեմուտի երգերից», «Խրիմի ալբոմից» և այլն) և մյուսների բանաստեղծական քերթվածները:

«Լրաբերն» աստրախանահայ ընթերցողին ծանոթացրել է հունգարացի բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ Շ. Պետեֆիի գործերին: Ալ. Ծատուրյանի թարգմանությամբ տպագրվել են նրա «Իմ հարազատներին», «Արհեստակիցներին», «Կուշտ շների երգը», «Երգ», «Դու ասում ես» և այլ ոտանավորները:

«Լրաբեր» շաբաթաթերթն արժեքավոր գործ է կատարել ինչպես ժամանակի հասարակական, քաղաքական կյանքը արտացոլելու, այնպես էլ հայ բանաստեղծներին ասպարեզ հանելու, նրանց ստեղծագործությունները տարածելու ուղղությամբ:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ» (1910–1912)

«Մեր կեանքը» թերթի առաջին համարը լույս է տեսել 1910 թ. հոկտեմբերի 24-ին, Աստրախանում: Խմբագիր-հրատարակիչն Աբել Ապրեսյանն էր՝ Կովկասյան հայ մամուլի ակտիվ գործիչներից մեկը՝ Րաֆֆու աշակերտն ու գաղափարական հետևորդը: Իբրև ժուռնալիստ-հրապարակախոս, հայ իրականության մեջ նա հայտնի էր իր ազատաբաղձ գաղափարներով: Թերթի շուրջ համախմբված էին գաղթօջախի նշանավոր մտավորականներ, Կովկասից Աստրախան արտաքսված հեղափոխական գործիչներ: Թերթի առաջին փորձնական համարի «Գաւառը եւ մամուլը» առաջնորդողում և «Մեր կեանքը» խորագրով խմբագրականում բացահայտված են նրա հավատամքը և առաջադիր խնդիրները: «Մեր կեանքը» նպատակադրվել էր արտացոլել հայկական կյանքը, անդրադառնալ հայ-ռուսական հարաբերություններին: Ուշագրավ է «Թովմաս» ստորագրությամբ (հավանական է՝ Աբել Ապրեսյանն է) թերթի 1910 թ. թիվ 17–21-ում տպագրված «Իսրայէլ Օրի» հոդվածաշարը: Հեղինակը հիմք ունենալով Կ. Եզյանի «Պետրոս մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» ստվարածավալ աշխատությունը (ռուս.) Լեոյի «Հայկական տպագրութիւն» գիրքը և պատմական հարուստ վավերագրերը, օգտագործելով Օրու ծննդյան 200-ամյակի լրողությունը՝ ներկայացրել է հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության ռահվիրայի կենսապատման նշանավոր էջերը, 1678 թ. Էջմիածնի գաղտնի ժողովի որոշումները և պատմական այլ դրվագներ:

«Մեր կյանքը» իր գործունեությունը շարունակեց մինչև 1912 թ. մայիսի 20-ը: Թերթը լուսաբանել է հայ մշակույթի ու գրականության հարցերը, անդրադարձել է Ղ. Աղայանի, Ստ. Նազարյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Գ. Սունդուկյանի և այլոց ստեղծագործությունների գնահատմանը:

Թերթի 1912 թ. մարտի 11-ի համարում լույս են տեսել Ա. Խումարյանի «Անցեալի հիշատակը» (Ղ. Աղայանի մասին), «Գաբրիէլ Սունդուկեան» (մահախոսական), «Գաբրիէլ Սունդուկեանի կտակը», «Ստեփանոս Նազարեանի ծննդեան 100-ամեակը» հոդվածները: Հովհ. Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակին է նվիրված Ս. Մենավորի (Ա. Խումարյանի) «Սիրոյ եւ անձնական մտքերի երգիչը» հոդվածը: Տպագրվել են «Հերցենի յիշատակին, ծննդեան 100-ամեակը» կենսապատումը, իսկ «Եփրեմ: Խորհրդաւոր մարդը» խորագրով հոդվածում (արտատպություն "Русское слово" թերթից) խոսվում է Արցախ աշխարհի քաջարի զավակներից մեկի՝ Եփրեմ խանի կյանքի և գործունեության մասին:

Թերթն անդրադարձել է դաշնակցության նշանավոր դատավարությանը, որի ընթացքում ցարական իշխանավորները դատում էին գրեթե ամբողջ հայ մտավորականությանը:

Անդրադարձել է նաև Պետական դումայի ընտրություններին, գաղթօջախի գյուղացիական և լուսավորական կյանքին, Աստրախանի հայ հասարակական գործերին, խոսքի ազատության հարցերին:

«Մեր կյանքը» եղել է Աստրախանի հայկական համայնքի դեմոկրատական ուժերի ձայնափողը:

«ՄԱՐՏ» (1911–1916)

XX դ. առաջին երկու տասնամյակներին Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում (Մոսկվա, Նոր-Նախիջևան, Աստրախան և այլն) լույս են տեսել նորանոր հայ պարբերականներ: 1911 թ. Մոսկվայում հրատարակվել է «Մարտ» երկշաբաթաթերթը: Թերթը խմբագրել է Արշակ Կայծունին:

Արշակ Թումանյան Կայծունին ծնվել է 1870 թ.: 1898 թ. նա ապրել է Բաքվում, որտեղ ծավալել է մանկավարժական գործունեություն:

Թերթի առաջնորդող հոդվածներից մեկում խմբագիրը հայտարարել է. ««Մարտը» նվիրվելու է ճնշվածներին, մոռացվածներին և զրկանքի ենթարկվածներին, խստիվ հետևելու է դասակարգերի, ազգերի և կրոնների հավասարության գաղափարին (1911, թիվ 2):

Անհրաժեշտ է նշել, որ թերթը թեև գաղափարական բովանդակությամբ ու քաղաքական հարցադրումների սրությամբ աչքի չի ընկել, այնուհանդերձ, հայերեն լույս տեսած պարբերականը մոսկվաբնակ հայության հոգևոր կյանքում եղել է կարևոր երևույթ:

«Մարտ» թերթի բաժիններն էին. Քաղաքական աշխարհում, Եւրոպական կեանք, Հայաբնակ վայրեր եւ գաղութներ, Քրոնիկոն և այլն: Այստեղ մեկ առ մեկ նշված են այն բնագավառները որոնց պիտի անդրադառնար թերթը: Դրանք էին. 1. հոդվածներ նվիրված գրական, քաղաքական և հասարակական խնդիրներին, 2. վեպեր, վիպակներ, մատենախոսություն, 3. ընթացիկ դեպքեր և օտար երկրներում, 4. գիտական, մանկավարժական և եկեղեցու խնդիրների շուրջ, 5. բանվորական կյանքը մեզ մոտ և արտասահմանում, 6. կրթական գործը գյուղերում և քաղաքներում, 7. պատկերներ, նկարներ, երգեցողություն:

Թերթը թեև ոչ հաճախ, այդուհանդերձ, անդրադարձել է ժամանակի հասարակական-քաղաքական իրադարձություններին, հատկապես Ռուսաստանով մեկ տարածում գտած բանվորական ու գյուղացիական շարժումներին: Ուշագրավ է Լենայի ոսկու հանքերի բանվորների գնդակոծության մասին պատմող հոդվածը (1912, թիվ 9): Դատապարտելով և ոճրագործություն համարելով Լենայի հանքերի գործադուլավորներին գնդակոծելը, թերթն անդրադարձել է ընդհանրապես գործադուլային շարժման դրդապատճառներին և հետևանքներին: Բացատրել է, որ արդարացի են եղել գործադուլավորների պահանջները, և որ Լենայի դեպքերը դաս կարող են հանդիսանալ գործարանատերերի համար:

Սոցիալական հարցի լուծումը թերթը գտնում է փոխզիջումների, օրենքների բարեփոխման մեջ:

Թերթում քննադատվել են կղերամիտ հոգևորականները՝ իրենց ագիտության և անբարո արարքների համար: Նրա էջերում պահանջվել է կրթական գործի ղեկը հանձնել դեմոկրատական ոգով համակված հայ մտավորականությանը: Ըստ թերթի, հոգևորականը

չի գտնվում իր կոչման բարձրության վրա և ընդունակ չէ կազմակերպելու և առաջ մղելու դպրոցական գործը: Իհարկե, թերթը ցավով է նշում հոգևորականների կյանքում տեղ գտած թերությունները, ցանկանում է վերագտնված տեսնել եկեղեցու նախկին հեղինակությունը, ինչպես և ամրապնդել ժողովրդի ու եկեղեցու միջև եղած փոխադարձ կապը:

1914 թվականից թերթում բացվել է «Պատերազմ» խորագիրը, իսկ 1914 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների համարները ամբողջովին նվիրվել են պատերազմական իրադարձությունների լուսաբանմանը:

Թերթը մեծ հույսեր է կապել ռուսական զորքի հաղթանակի հետ, առանձին հոդվածներով հորդորել է հայորդիներին՝ ամեն գնով աջակցել ռուս զինվորներին:

Թերթը դատապարտել է գերմանական կառավարության հանցավոր քաղաքականությունը: Տպագրել է խաղաղության կոչերով ժողովուրդներին ուղղված անվանի մարդկանց հոդվածները: Այսպես, թերթում տեղ են գտել բելգիացի նշանավոր բանաստեղծ Մ. Մետերլինկի, ֆրանսիացի հայտնի գրողներ Ռ. Ռոլանի, Ա. Ֆրանսի և մյուսների այս ոգով նամակները:

«Մարտը» միաժամանակ լինելով գրական պարբերական, անդրադարձել է նաև գրականության և արվեստի հարցերին: Հետաքրքրական են Հ. Հովհաննիսյանի, Գ. Սունդուկյանի, Մ. Շահինյանի և մյուսների մասին տպագրված գրախոսականները:

Թերթում տպագրվել են Ա. Կայծունու բանաստեղծությունները («Մենավոր ուղին», «Իմ հայրենիքին» և այլն):

«Մարտը» մոտ վեց տարի մայրենի լեզվով հոգևոր սնունդ է տվել Մոսկվայում բնակվող հայությանը:

«ԳԱՐՈՒՆ» (1910–1912)

1910 թ. Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանողներ Վահան Տերյանը, Պողոս Մակինցյանը և արձակագիր, Ենայի համալսարանի շրջանավարտ Կարեն Միքայելյանը հիմնադրում են «Գարուն» գրական-գեղարվեստական հանդեսը:

Նրանց ծրագրի իրականացմանը մեծապես նպաստում են Լազարյան ճեմարանի դասախոս Կ. Կուսիկյանը և բանաստեղծ Ալ. Ծատուրյանը, որոնք և կազմում են հանդեսի հրատարակության՝ «Կոչ» անունը կրող ծանուցումը, որը 1909 թ. վերջերին հրապարակվում է լրագրերում: Այն ազդարարում էր, որ «Մոսկվայում կազմված մի գրական խմբակի նախաձեռնությամբ 1910 թ. կհրատարակվեն մի շարք գրական-գեղարվեստական ալմանախներ՝ «Գարուն» վերնագրով: «Ալմանախը պիտի հնարավորութիւն տայ մեր բոլոր ռուսահայ և տաճկահայ հեղինակների հաւաքական արտայայտութեան և խրախուսողը հանդիսանայ երիտասարդ ու սկսնակ գրողներին»[1]:

Այս խնդիրը նրանց համար մեծ կարևորություն էր ստանում նաև քաղաքական նկատառումներով: Հայկական հարցի ճակատագիրը, որը, Տերյանի արտահայտությամբ, հայության համար դարձել էր «կյանքի ու մահու խնդիր», շարունակում էր մնալ չլուծված: Հայերը, չնայած ապրել էին դարավերջի կոտորածների մղձավանջային ժամանակները և հուսախաբվել եվրոպական դիվանագիտության սին խոստումներից, շարունակում էին փայփայել Հայաստանի ազատագրության գաղափարը: Տերյանը թե՛ ուսանողական տարիների իր հայրենասիրական մտորումներում, թե՛ ընկերների հետ կազմած գործնական ծրագրերում և թե՛ ավելի ուշ՝ 1914 թ. տպագրած «Հոգևոր Հայաստան» հոդվածում ու նույն թվականին Թիֆլիսում կարդացած հրապարակային զեկուցման մեջ հանգամանորեն քննարկում էր այդ հարցը: Անկախ այն բանից, որ նա հայությանը մշտապես հուշող այդ երազանքի իրականացումը բաղձալի էր համարում, այդուհանդերձ սթափ հայացքով վերլուծելով Հայաստանի քաղաքական իրավիճակը՝ թերահավատություն էր հայտնում առ այն, թե մի զարկով, նույնիսկ հերոսական ճիգով հնարավոր է ազատագրել Հայաստանը. «Պէտք է տենչալ սրտի բոլոր զօրութեամբ և մեր բոլոր կարողութեամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծուի այդ արիւնլուիկ հարցը:

Սակայն դրանով չի վերջանում մեր անելիքը. դա միայն նախադուռն է մեր ապագա հայրենաշէն, ազգակառոյց գործի»[2],- գրում է նա:

---

[1] Վ. Տերյան, Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ), հ. 3, Ե., 1975, էջ 397:
[2] Նույն տեղում, էջ 105:

1908 թ., երբ վճռվում է հրատարակել «Գարուն» ալմանախը, Տերյանը դեռևս Մոսկվայի համալսարանի ուսանող էր, զուրկ նյութական միջոցներից և, բնականաբար, առաջադրված խնդիրը կարող էր կատարել գործակիցների օժանդակությամբ: Այդ հարցում մեծ սիրով և նվիրվածությամբ նրան օգնության ձեռք են պարզում Պ. Մակինցյանը, Կ. Միքայելյանը, կարճ ժամանակից՝ նաև Ց. Խանզադյանը:

Լազարյան ճեմարանի վաստակաշատ դասախոս Կ. Կուսիկյանը և բանաստեղծ Ալ. Ծատուրյանը հանձն են առնում «Գարունի» հիմնադրման կազմակերպական գործերը և նվիրատուների օգնությամբ կարգավորում են դրամական հոգսերը: Կազմվում է խմբագրական մարմին՝ Կ. Կուսիկյանի, Ալ. Ծատուրյանի, Պ. Մակինցյանի, Կ. Միքայելյանի և Վ. Տերյանի անդամակցությամբ:

Արդեն 1908 թ. «Գարունի» հիմնադրումը վճռված էր: Երբ 1908 թ. գարնանը Տերյանը մեկնում է Թիֆլիս՝ զբաղվելու «Մթնշաղի անուրջների» հրատարակության հարցով, նա տեղի հայ գրողներին ծանոթացնում է առաջիկայում հրատարակվելիք ժողովածուի բովանդակությանն ու խնդիրներին:

1910 թ. ապրիլին պատրաստվում է «Գարունի» շապիկի՝ Մարտիրոս Սարյանի կատարած ձևավորումը, որի առթիվ Տերյանը գրում է նամակներից մեկում. «Մենք բոլորս հավանեցինք նրա նկարը»[1]:

Ալմանախի առաջին հատորը լույս է ընծայվում 1910 թ. մայիսի 2-ին՝ Ալ. Ծատուրյանի գրական գործունեության 25-ամյակին նվիրված հոբելյանի օրը: Ոգևորված այդ երկու առիթներով՝ Տերյանը, Կուսիկյանը և Կ. Միքայելյանը ողջույնի նամակ են հղում նրան, որից մեջբերում ենք մի հատված.

«Թանկագին յոբելեար,

Սիրելի աշխատակից

Մի երջանիկ զուգադիպութեամբ այսօր, այս գրական մեծ տօնին լոյս ենք ընծայում առաջին գիրքը «Գարուն» գրական-գեղարուեստական ալմանախի, որի խմբագրութեան անդամներից մէկն էք և Դուք:

---

[1] Նույն տեղում, ԵԺ, հ. 4, էջ 321:

Մենք գիտենք, տատասկոտ ու փշոտ է հայ բանաստեղծի ճանապարհը. եթէ ուրիշ ազգերի մէջ բանաստեղծ լինելու համար հարկաւոր է միայն աստուածային կայծ ունենալ, մեր իրականութեան մէջ բանաստեղծը պէտք է նաեւ հերոս լինի…

Այսօր, Ձեր 25-ամյա յոբելեանի օրը, «Գարուն»-ի խմբագրութիւնը ամենաջերմ սիրով ողջունում է Ձեզ, թանկագին յոբելեար, և խոնարհւում է Ձեր երկարամեայ տանջալից կեանքի և ազնիւ աշխատանքի առաջ»[1]:

Տերյանը մեծագույն սիրով էր կապված նաև խմբագրության մյուս անդամների հետ, որոնց հղած նրա նամակներն աչքի են ընկնում անօրինակ անկեղծությամբ ու ջերմությամբ, ասես մանկական անմիջականությամբ և միաժամանակ իմաստունի բարի երգիծանքով: Առանձնապես մտերմական էին նրա և Կ. Միքայելյանի փոխհարաբերությունները, որին 1913 թ. դեկտեմբերի 12-ի թվակիր նամակում անվանում է հանդեսի «և՛ լիազոր, և՛ քարտուղար, և՛ էքսպէդիտոր, և՛ գանձապահ անթուելի ու անհաշուելի գումարներին «Գարնան»[2]:

Ահա ընկերական այսպիսի սրտաբուխ փոխհարաբերությունների մթնոլորտում է ծնունդ առնում և հայ պարբերական մամուլի անդաստան մուտք գործում երիտասարդ հայ լրագրողների տաղանդի գեղեցիկ արգասիքը՝ «Գարուն» ալմանախը:

«Գարունի» առաջին գրքի հրատարակությունից հետո Տերյանն իրերի բերումով մեկնում է հայրենիք: Այդ օրերի նրա նամակները վկայում են, որ երիտասարդ բանաստեղծին գրական ստեղծագործություններից ոչ պակաս զբաղեցնում էին և լրագրային-հրապարակախոսական գործերը: 1910 թ. հունիսին Միքայելյանին հղած նամակներում նա հաղորդում էր, որ «Գարունն» արժանացել է Թիֆլիսի գրողների հավանությանը, չնայած այն բանին, որ վերջիններիս կարծիքով՝ ալմանախում տեղ էին գտել նաև թույլ գործեր: Նա տեղեկացնում էր նաև, որ Վ. Փափազյանը հավանել է նրա «Էրֆուրտի ծրագիրը» գործը, իսկ Հ. Թումանյանը խոստացել է նյութեր տրամադրել երկրորդ գրքի համար[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 322:
[2] Վ. Տերյան, ԵԺ, հ. 4, Ե., 1979, էջ 128:
[3] Նույն տեղում, էջ 335, հ. 4, էջ 29, 54–55:

Տերյանը 1910–1911 թթ. մեծ եռանդով զբաղվում է երկրորդ գրքի հրատարակության հետ կապված հարցերով: Իր նամակներում նա Հ. Թումանյանին «ջերմագին խնդրում է» մի գրվածք ուղարկել «Գարունի» համար, իսկ Ա. Չոպանյանին առաջարկում երրորդ գրքի համար հոդված գրել՝ նվիրված արևմտահայ գրականությանը. «Խմբագրությունը ամենացանկալին համարեց տեսնել Ձեր անունը իր այդ գրքի ցանկի մեջ»: 1912 թ. նա Ց. Խանզադյանին հանձնարարում է հոդված պատրաստել չորրորդ գրքի համար[1]:

1913 թ. Տերյանը մեկնում է Պետերբուրգ և հանձնարարական նամակով ներկայանում Ն. Մառին, որը նրան խորհուրդ է տալիս անպայման ընդունվել համալսարան և լսել իր դասախոսությունները: «Ադոնցը նույնն ասաց, և երկուսն էլ խրախուսեցին ինձ»,- հայտնում էր նա՝ Խանզադյանին հղած հոկտեմբերի 17-ի թվակիր նամակում[2]: Ընդունվելով Պետերբուրգի համալսարանի արևելագիտական ֆակուլտետ, որը հետագայում նրանից անսահման շատ ժամանակ էր կլանում, Տերյանը լրջորեն խորհում էր նաև մի լիարժեք պարբերաթերթ հրատարակելու մասին: Նույն նամակում իր ուրախությունը հայտնելով մամուլում տպագրվող Խանզադյանի հոդվածների առթիվ, նա, սակայն, ավելացնում է, որ առավելապես ուրախանում է «վաղուայ, գալիքի համար, երբ կմիանանք մի ամսագրում (կամ՝ թէեւ դա շատ դժվար է նիւթականի տեսակէտից՝ լրագրում, իսկական, մեծ լրագրում), ամուր ու հաստատուն մի գործ կհիմնենք և այն ժամանակ ցոյց կտանք «մերոնց», թէ ի՞նչ է իսկական ժուռնալը, ի՞նչ է իսկական խօսքը և իսկական գրականութիւնը»[3]:

Պետերբուրգում մշակվում է «Գարունի» չորրորդ գրքի ծրագիրը: Այն բավականաչափ զանազանվում էր առաջին երեք գրքերից: Այսպես, չորրորդ գրքին աշխատակցելու էին հրավիրվում Ն. Մառը, Հ. Օրբելին և Ն. Ադոնցը, ընդ որում, նրանց ընտրած թեմաները զուտ պատմագիտական, բանասիրական և լեզվաբանական բնույթ ունեին: Ծրագրված էր գիտական հողի վրա դնել նաև գրականքննադատական բաժինը: Այստեղ նպատակահարմար էր գտնվում առանձին գրողների ստեղծագործությունների փոխարեն քննարկել

---

[1] Նույն տեղում, էջ 335, հ. 4, էջ 29. 54–55:

[2] Նույն տեղում, հ. 4, էջ 109:

[3] Նույն տեղում, էջ 110:

տեսական հարցեր, մշակել գիտական սկզբունքներ ու առաջարկներ՝ կապված գրականագիտության ընթացիկ և ապագա գործընթացների հետ: Տերյանը ծրագրում էր գրել մի հոդված՝ «Լեզուն մեր նոր պոեզիայի մեջ» կամ «Լեզուն, ոճը և ձևերը մեր նոր պոեզիայում» թեմայով:

1916 թ. մարտին, երբ Պետերբուրգում տպագրական և ֆինանսական բավարար պայմաններ են ստեղծվում, «Գարունի» երիտասարդացված խմբագրությունն իսկույն ձեռնարկում է ժողովածուի հրատարակության գործը: Ապրիլին տեղի ունեցած «պլենար ժողովը» որոշում է կայացնում «Մշակ» և «Հորիզոն» թերթերին հայտարարություն ուղարկելու մասին, որով ծանուցվեր նույն թվականի աշնանը «Գարունի» չորրորդ գրքի տպագրությունը: Խմբագիր-հրատարակիչներն էին Տերյանը, Մակինցյանը, Միքայելյանը: Ի դեպ, թեև Մակինցյանը թերահավատ էր հաջողության նկատմամբ, բայց Տերյանը համոզմունք էր հայտնում, որ Պետերբուրգում կան և՛ տպագրական հարմարություններ, և՛ դրամ հայթայթելու հեռանկարներ:

Չորրորդ գրքի տպագրության նախապատրաստական աշխատանքներն ընթանում էին այնպես, ինչպես նախատեսված էին, բայց երբ ամեն ինչ որոշակի էր ու ճշգրտված, իրերի դրությունն ամբողջությամբ փոխվում է: Պարզվում է, որ Կ. Կրասիլնիկյանի խմբագրությամբ Բաքվում ծրագրված «Գործ» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիրն արդեն պատրաստ է հրատարակության:

Տերյանի խմբագրությունն այս պարագաներում աննպատակահարմար է գտնում սկսել «Գարունի» հրատարակությունը: «Հորիզոն» թերթի 1917 թ. հինգերորդ համարում տպագրվում է Տերյանի, Մակինցյանի, Միքայելյանի նամակը խմբագրությանը, որով ծանուցվում էր, որ «Գարուն» ալմանախը չի հրատարակվի, «ի նկատի ունենալով «Գործ» ամսագրի երևան գալը»[1]:

«Գարունի» հիմնական՝ գրական բաժինն աչքի է ընկնում իր թարմությամբ և բազմազանությամբ: Այստեղ ներկայացված են ժամանակին ճանաչում գտած արևելահայ և արևմտահայ արձակա-

[1] Նույն տեղում, էջ 430:

գրողներից ու բանաստեղծներից շատերը։ Առաջին և երկրորդ գրքերում զետեղվել են Ավ. Ահարոնյանի, Լ. Շանթի, Վ. Փափազյանի, Ալ. Շիրվանզադեի, Դ. Դեմիրճյանի, Կ. Միքայելյանի, Օ. Զիֆթե-Սարաֆի, Մ. Պարսամյանի, Հ. Քյուֆեճյանի, Մ. Մանվելյանի, Մ. Պետրոսյանի և Սուրենի պատմվածքները, վիպակները, դրամատիկական գործերը։ Հարուստ է նաև պոեզիայի բաժինը։ Ի թիվս արդեն հայտնի անունների, այստեղ տպագրվել են նաև ժամանակի ընթերցող հասարակությանը դեռևս անծանոթ երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունները։

«Գարունի» արձակի բաժնից ուշադրության են դրավում ժամանակի համար իրադարձային նշանակություն ունեցող՝ Վ. Փափազյանի «Ծովափին» վիպակը, Շիրվանզադեի «Արմենուհի» և Շանթի «Ճամբուն վրա» դրամատիկական ստեղծագործությունները, Կ. Միքայելյանի մի քանի պատմվածքները։ Այդ գործերում քննարկված են պատմական ժամանակաշրջանի կարևորագույն մի շարք հիմնահարցեր՝ ազգային-ազատագրական պայքարի բովում հայ երիտասարդության վճռական դերի պարզաբանումը, 1905–1907 թթ. հախուռն շարժումներին հաջորդած ռեակցիայի կործանարար հետևանքները հասարակության բարոյական նկարագրի ոլորտում, կանանց իրավահավասարության ձեռքբերման անհրաժեշտության խնդիրը և այլն։

Դ. Դեմիրճյանը, որը գրական աշխարհում ճանաչված էր իբրև բանաստեղծ, «Գարունի» էջերում տպագրած «Ջութակ և սրինգ» պատմվածքով անմիջապես գրավում է ընթերցողների ուշադրությունը։ Այն հայտնություն էր թե՛ հեղինակի գրական տաղանդի նոր կողմերի դրսևորման առումով, թե՛ դարասկզբի հայ գրականության մեջ առհասարակ։

Ժանրային ինքնատիպ հորինվածքով հայ արձակը զարդարում էին Ավ. Իսահակյանի «Օմար Խայամի վեճը աստծու հետ» և «Անհաղթ խալիֆան» խոհական-փիլիսոփայական զրույցները։

Եթե հետաքրքրությամբ են ընթերցվում և հասուն գրչի արգասիք են Կ. Միքայելյանի «Էրփուրտի ծրագիրը» և «Վարդանանց պատերազմը» հոգեբանական էտյուդները, ապա անհամեմատ թույլ են նույն հեղինակի «Նահանջ» և «Առաջին վիշտ» պատմվածքները։

Սոցիալական անարդարությունների տրամաբանական վախճանն է արտացոլված Մ. Պարսամյանի «Ոսկիին ծարաւը» պատմվածքում։

Գեղեցիկ է արևմտահայ երիտասարդ արձակագիր Հ. Գյուֆճեճյանի «Իչնիկի լիճը» հեքիաթը: Այն «Արև աղջկա»՝ գեղեցկության անհարիր ղաժանության մի պատմություն է, որն, սակայն հաստատում է անմարդկային բռնության ոչնչացման անխուսափելիությունը: Նույն հեղինակի «Աղունակ քարը» հեքիաթը սիրո հավերժության փառաբանումն է, չարի և բռնության կործանման անարդարացիության վերաբերյալ ժողովրդի իմաստության դրվատումը:

«Գարունի» արձակը հիմնականում ներկայացնում է 1910-ական թվականների հայ գրականության նոր ձեռքբերումները, արտացոլում պատմական ժամանակաշրջանի կենդանի ոգին և ուժեղ անհատների ընդվզումները հասարակության բարոյալքման մթնոլորտի և նրա արատավոր հետևանքների դեմ:

«Գարունի» պոեզիայի բաժինը, որը ևս մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ընդգրկում է հայ ժողովրդի երկու թևերի թե՛ արդեն ճանաչում գտած, թե՛ երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունները: Բավական է հիշել, որ ալմանախի երկու գրքերում տպագրվել են Ավ. Իսահակյանի, Ալ. Ծատուրյանի և Վ. Տերյանի բանաստեղծությունները, որպեսզի պարզ դառնա այս բաժնի կշիռը: Ընթերցողներին արդեն քաջածանոթ վերոհիշյալ բանաստեղծների հետ մեկտեղ լավ տպավորություն են թողնում նաև երիտասարդները: Այսպես, հետաքրքրությամբ են ընթերցվում, Հր. Նազարյանի «Սև երգեր» շարքի սիրակարոտ երգերը, Ռ. Սևակի (Ռ. Չիլինկիրյան) և Ա. Երկաթի քնարական տողերը, Ս. Բաբիյանի և Բ. Սիմեոնի խոհական-փիլիսոփայական բանաստեղծությունները և այլն: Անշուշտ, «Գարուն» գրական ժողովածուի պոեզիայի պսակն են կազմում Տերյանի բանաստեղծությունները, որոնք բարձր գնահատականի են արժանացել «Հորիզոն» թերթում:

«Գարունն» իր վրա է հրավիրել ընթերցող հասարակության ուշադրությունը տարբեր առումներով. նախ՝ իրենց նոր ստեղծագործություններն այստեղ լույս ընծայելու առիթ են ունեցել ժամանակի ճանաչված գրողները: Բացի դրանից, դրա շնորհիվ է, որ հայ գրականության անդաստանում ի հայտ են եկել բազմաթիվ նոր անուններ (ընդ որում, միմյանց հարևանությամբ տպագրվել են և՛ արևելահայ, և՛ արևմտահայ արձակագիրներն ու բանաստեղծները):

Տպագրելով ընթերցողներին դեռևս անծանոթ բանաստեղծների և արձակագիրների ստեղծագործությունները, խմբագրությունը դրանով իսկ ճանաչում է ստեղծել նրանց համար, թեև ոչ ամբողջությամբ, բայց ընդհանուր գծերով ներկայացրել 1910-ական թվականների հայ գրականության պատկերը:

«Գարունի» գրականագիտական-գրաքննադատական ուղղվածությամբ ստեղծված երրորդ գիրքը հիմնականում ներկայացնում է Մոսկվայի համալսարանի շրջանավարտների առաջին հոդվածները: Այն սկզբնապես որոշված էր նվիրել քննադատական հոդվածների, ուստի խմբագրությունը նպատակահարմար է գտնում գրքի խմբագրական կազմում ընդգրկել նաև քննադատի անուրանալի ձիրք ունեցող Ալեքսանդր Մյասնիկյանին (Մարտունի): Մյասնիկյանը սիրով հանձն է առնում ոչ միայն գրքի խմբագրման գործը, այլև գրում է մի հոդված՝ նվիրված Հովհ. Հովհաննիսյանի և Ալ. Ծատուրյանի բանաստեղծությունների հասարակական արժեքի պարզաբանմանը:

«Գարունի» երրորդ գրքի հեղինակներից ոմանք նույնպես աչքի էին ընկնում պատմական ժամանակաշրջանին բնորոշ «մարտական» կեցվածքով, այսպես կոչված՝ հին բարքերի և արժեքների հախուռն քննադատությամբ: Դրանցից էր Ալ. Ռուբենին, որի գրչին է պատկանում «Սմբատ Շահազիզ» քննադատական հոդվածը: 1865 թ. հրատարակած «Լևոնի վիշտը» և զանազան բանաստեղծություններ» գիրքը նա անվանում է սոսկ դիդակտիկ գրվածք, իսկ «Լևոնի վիշտն» իբրև գեղարվեստական գործ՝ թյուրիմացություն:

Երրորդ գրքի հետաքրքրական հոդվածներից է Ց. Խանզադյանի «Ավետիս Ահարոնեան (քննական բնորոշման փորձ)» ուսումնասիրությունը: Հեղինակն Ահարոնյանի գրական գործերը քննարկում է թե՛ դրանց գեղարվեստական առանձնահատկության, թե՛ գաղափարական ուղղվածության առումներով, միաժամանակ ներկայացնելով կուսակցական իր համոզմունքներից բխող եզրակացությունները: Ելնելով գեղագիտական ընդունված չափանիշներից՝ Խանզադյանը քննադատում է Ահարոնյանի գրելաձևը, այն է՝ արհեստական տպավորություններ ստեղծելու միտումով նրա ողբերգված պաթետիկ ոճը, պատմվածքների մուտքից մինչև ավարտը շարունակվող ցցայացունց ճիչ ու հառաչանքը և այլն: Գրաքննադատն Ահարոնյանի ստեղծագործության թերություններից է համարում և

այն, որ նրա պատմվածքներում բացակայում է Արևմտյան Հայաստանի կենդանի իրականության պատկերը, չկա գյուղական կենցաղի հավաստի նկարագրությունը: Այս ամենով հանդերձ, հետաքրքրական է, որ հոդվածագիրն օբյեկտիվորեն է գնահատում Ահարոնյանի գրվածքների մարդասիրական ոգին:

«Գարունի» երրորդ գիրքը բացվում է Խ. Աբովյանին նվիրված Կ. Կուսիկյանի «Հանճարեղ սիրտ» հոդվածով: Հոդվածագիրը վերհանել է մեծ լուսավորչի կյանքի և գործունեության հիմնական ուղղությունները, որոնք համարում է «մի միաձոյլ պոէմ, շքեղ գեղանկար»: Հոդվածում վերլուծված է «Վերք Հայաստանի» վեպը և տրված է Աբովյանի գործունեության պատմական նշանակության գնահատականը: Այսպես՝ առանձին քննության առարկա են դարձել Աբովյանի մանկավարժական գործունեությունը և նրա մանկավարժական հայացքները: Մեծ տեղ է նվիրվել նրա ժողովրդայնությանը, գյուղական կյանքի և ժողովրդի մտածողության ու հուզաշխարհի «ընտիր գոհարները» վերհանելու նրա վարպետությանը: Աբովյանը գնահատվում է իբրև աշխարհիկ լեզվի և վիպասանության հիմնադիր, հայ ժողովրդի ազատագրական ձգտումների առաջին երգիչ: Կուսիկյանը նրան համարում է հայ ոգու մարմնացում, որի գրչով խոսել է «հայութեան տառապած հոգին, մեր շղթայած միտքն ու սիրտը»:

«Հանճարեղ սիրտ» հոդվածը «Գարուն» հանդեսի լավագույն նմուշներից է, որը գրված է «Վերք Հայաստանի» վեպին արժանի շքեղ գունագեղությամբ և խոր ու անկեղծ հուզականությամբ: Դարասկզբին հայ գրականագիտությունը, կարծես, հատուցում է իր ժողովրդի մեծ զավակի նախորդ դարում կրած տառապանքների ծանր գինը:

«Գարունի» երրորդ գրքում զետեղված քննադատական ակնարկներից երկուսը նվիրված են Հովհ. Թումանյանին: Եթե Դավիթ Անանունի «Անցեալի մեծարանքը» հոդվածում Թումանյանի պոեզիան գնահատված է իբրև նահապետական գյուղի և գյուղացու հոգեբանության գեղարվեստական արտացոլում, իսկ Թումանյանը՝ «գերազանցապէս հայ գիւղական ժողովրդի բանաստեղծ» («Գարուն», գիրք երրորդ, էջ 100), ապա Պ. Մակինցյանի «Դիմադծեր» ակնարկի առաջին մասում, որը նվիրված է Թումանյանին, բացա-

հայտվում են հայ մեծ բանաստեղծի «տաղանդի բազմակողմանի յատկութիւնները» (նույն տեղում, էջ 248): Գրաքննադատը բացահայտում է Թումանյան-մանկագրի ինքնատիպությունը, ազգային վշտի պատկերման խորությունը նրա գործերում, Թումանյանի պոեմների արժանիքներն իբրև ազգային պոեմներ, որոնց մեջ ցոլանում և բյուրեղանում է հայ իրականությունը: Ի վերջո, Մակինցյանը հանգամանորեն բնութագրում է Թումանյանի ոճի էպիկական առանձնահատկությունները: «Սասունցի Դավիթ» պոեմը նա անվանում է իսկական և անզուգական գեղարվեստական գործ, իսկ «Գիքորը» համարում «մեր բելլետրիստիկայում մի այնպիսի գոհար, որի նմանը ոչ ինքը՝ Հովհ. Թումանյանն է արտադրել, ոչ էլ մի ուրիշ հեղինակ» (նույն տեղում, էջ 310): Այս ամենի հիման վրա է, որ քննադատը պարտադրում է հայ գրականագետներին՝ իրենց առաջնահերթ ուսումնասիրության նյութ դարձնել Թումանյանի պոեզիայի մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Նույնքան հետաքրքրական է Մակինցյանի «Դիմագծերի»՝ Ավ. Իսահակյանին նվիրված երկրորդ մասը, որտեղ վերլուծված են բանաստեղծի բնության երգերը, սիրո քնարը, մայրական սիրուն նվիրված բացառիկ գեղեցիկ բանաստեղծությունները, խոհական-փիլիսոփայական գործերը: Առանձին ուշադրության է արժանացել «Աբու-Լալա Մահարի» պոեմը, որը քննական լուրջ ուսումնասիրություն է՝ նվիրված արաբ բանաստեղծին և նրա գրական կերպարին:

Նպատակային և արգասավոր է եղել «Գարուն» ալմանախի կյանքը: Այն հայ ընթերցողին ներկայացրել է ոչ միայն XX դ. առաջին տասնամյակի արևմտահայ և արևելահայ գրողների նոր ստեղծագործությունները, այլև ժամանակի հայ գրականագետների հետաքրքրական ուսումնասիրությունները հայ գրողների վաստակի մասին:

Որքան էլ Մարտունին, Ռուբենին կամ Խանզադյանը պատմական ժամանակաշրջանի նոր հովերի ոգով տոգորված՝ անզիջում կրքով և ո՛չ միշտ անկողմնակալ դիրքերից քննադատական կրակի ներքո են վերցրել հայ գրողներից ոմանց ստեղծագործությունները, նրանց հոդվածները, սակայն, անվերապահորեն բազմազանություն են մտցրել և փորձել նոր ուղղություն ստեղծել հայ գրական աշխարհում: Ինչ վերաբերում է Կուսիկյանի, Մակինցյանի և Խան-

զաղյանի ակնարկներին, ապա դրանց շնորհիվ հայ գրաքննադատական միտքն իբրև գիտություն առավել ձևավորվելով հասել է մի նոր, բարձր աստիճանի:

Նոր հոսանքը, որով Տերյանը և նրա գործընկերները ձգտում էին թարմություն հաղորդել հայ գրականությանը և կենսական գաղափարներով նոր ոգի ներարկել դրան, ինչ-որ չափով կատարել է իր դերը: Այն ոչ միայն պատմական ժամանակաշրջանում նպաստել է հայ գրականագիտական մտքի զարգացմանը, այլև քաղաքական գրականության մեջ հաստատել Հոգևոր Հայաստանի գաղափարի իմաստը, որը հանգամանորեն հիմնավորել է Տերյանը՝ իր նշանավոր «Հոգևոր Հայաստան» հոդվածում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Արցախը հայտնի է իր տպագրությամբ: XIX դարի 20-ական թվականների վերջից սկսած այստեղ տպագրվել են հարյուրավոր անուն գրքեր, տասնյակ պարբերականներ:

Արցախի մամուլի պատմությունը սկիզբ է առել XIX դարի 70-ական թվականներից: 1874 թվականին Շուշիում տպագրվում են «Հայկական աշխարհ», որը 1864 թվականից Թիֆլիսում լույս տեսնող «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի շարունակությունն էր գրական, մանկավարժական և կրոնական ամսագրի մի քանի համարներ: «Հայկական աշխարհը» խմբագրում էր Խ. Ստեփանեն (Խորեն եպ. Ստեփանե): Հանդեսը այնուհետև տպագրվել է Գանձակում, ապա՝ Թիֆլիսում, իսկ 1877–1879 թթ.՝ Բաքվում: Խ. Ստեփանեն մեծ ջանքեր է գործադրում աշխուժացնելու Արցախի հայոց թեմական հոգևոր դպրոցի տպարանի գործունեությունը և այն հագեցնում է անհրաժեշտ սարքավորումներով: Շուշիում տպագրված հանդեսի մի քանի համարներում նյութեր են զետեղվում առանձին ժողովուրդների նիստուկացի, սովորությունների, պատմական անցքերի ու կարևոր իրադարձությունների, նախնիների հերոսական գործերի, թատրոնի, գեղարվեստի նորությունների և այլնի մասին, քննարկվում դպրոցի, ուսուցման ձևերի ու մեթոդների, ուսուցիչների վիճակի վերաբերյալ հարցեր: Ամսագիրը հանդես է գալիս դպրոց-

նրում ֆիզիկական կուլտուրայի զարգացման, տեսության ու գործնականի խելացի զուգորդման նախաձեռնությամբ: «Հայկական աշխարհը» դաստիարակության կարևոր գործոն է համարում նաև հասարակական միջավայրը, մշակութալուսավորական օջախները: Կարևորելով ընտանիքի դերը նոր սերնդի դաստիարակության գործում հանդեսը պահանջում է փոխել վերաբերմունքը աղջիկների դաստիարակության նկատմամբ, այլև նրանց տալ բազմակողմանի կրթություն: Առաջ է քաշվում գիտության նվաճումները ժողովրդի սեփականությունը դարձնելու հարցը: Հրատարակիչ-խմբագիր Խ. Ստեփաննեից բացի, ամսագրի էջերում հետաքրքիր հոդվածներով հանդես են եկել Գր. Արծրունին, Հ. Առաքելյանը, Հովհ. Քուչուբեգյանը, Գր. Իգմիրյանը և ուրիշներ:

Ամսագիրը տպագրվում էր դժվարին պայմաններում: Ցարական գրաքննական մեքենան աղճատում էր հանդեսի էջերը, որտեղ մեծ տեղ էին գրավում եկեղեցական, կրոնական նյութերը, քարոզները, Աստվածաշնչից հատվածներ: Պահպանողական ամսագիրը ճորտատիրական կարգերից, հետամնացությունից և խավարից մարդկանց դուրս բերելու ուղին տեսնում էր միայն մշակութալուսավորական լայն ցանց ստեղծելու մեջ:

Արցախում տպագրությունը նոր աշխուժություն է ապրում XIX դարի վերջին քսանամյակում: 1880–1881 թվականներին Արցախի թեմական դպրոցի հոգաբարձությունը Մոսկվայից բերել է տալիս տպագրական նոր մեքենաներ և տառատեսակներ, վերանորոգում տպարանը: 1881 թվականին Շուշիում բացվում է Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանը, որը գոյատևել է մոտ քառորդ դար (հրո ճարակ է դարձել 1905 թ.): Այդ տարիներին տպագրվել են բազմաթիվ գեղարվեստական և պատմագիտական գրքեր, դպրոցական ձեռնարկներ, դասագրքեր, թերթեր ու ամսագրեր: Այդ գործում կարևոր դեր է խաղացել Տիգրան Նազարյանի՝ Շուշիում հիմնած հրատարակչական գրասենյակը:

1874–1920 թվականներին Շուշիում լույս է տեսել 21 անուն թերթ և ամսագիր, որոնցից երկուսը ռուսերեն լեզվով[1]*: Հայրենասի-*

[1] «Հայոց աշխարհ» (1874), «Քնար խանակ» (1881), «Գործ» (1882–1884), «Ազգագրական հանդէս» (1896–1916), «Ղարաբաղ» (1911–1912), "Шушинский листок" (1911–1912), "Шушинская жизнь" (1913), «Փայլակ» (1915–1917), «Ծիծաղ» (1916),

րական դեմք ունեցող հրատարակությունները ապրելու և մաքառելու հույս էին ներշնչում արցախցիներին, նրանց մեջ հավատ և վստահություն ծնում ապագայի նկատմամբ: 1881 թ. Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում տպագրվում է Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» գրական պարբերական ժողովածուն: Սակայն, այն ունեցավ միայն մեկ համար, որում տեղ են գտել ոչ միայն ինքնուրույն ստեղծագործություններ, այլև թարգմանություններ Պուշկինից, Լերմոնտովից, Հայնեից, Գյոթեից, Շիլլերից, Բայրոնից և այլ հեղինակներից: Ինքը՝ Ն. Տեր-Ավետիքյանը, լինելով բազմաթիվ գրքերի հեղինակ, կրթված մարդ, ամենից առաջ ուշադրություն էր դարձնում ընտրած նյութերի բովանդակությանն ու քաղաքական իմաստին: Նրա համար հայրենասիրությունը, հայ աշխատավորի շահերի պաշտպանությունը, կյանքում տեղ գտած չարի ու վատի մերկացումը առաջադիր խնդիր էր, որի իրականացումը նարոդնիկ գործիչը կապում էր մտավորականության հայրենանվեր գործունեությանը:

1882–1884 թվականներին նախ Շուշիում, ապա՝ Թիֆլիսում տպագրվում է գրական, քաղաքական և ազգային «Գործ» հանդեսը, որի խմբագիրն էր Սիմեոն Հախումյանը: Հանդեսին թղթակցել են Հ. Առաքելյանը, Ալ. Քալանթարը, Հ. Խոջամիրյանը, Մ. Առուստամյանը, Ն. Տեր-Ավետիքյանը, Օ. Տեր-Մովսիսյանը և ուրիշներ: Չնայած ֆինանսական ծանր դրությանը և ցարական գրաքննության ճնշումներին, այնուամենայնիվ, ձգձգումներով լույս տեսած ընդամենը երեք ոչ ստվար համարները վկայում են շնորհալի հրապարակախոս-հրատարակչի գործի մասին: Հանդեսը սկսվում է Ս. Հախումյանի «Երկու խոսքով», որում շեշտվում է, թե ով ձգտում է օգուտ տալ ժողովրդին, պետք է լինի նրա հետ, որ «ժողովրդի իդեալական հայրենիքի հիմքը նրա իրական հայրենիքի շոշափելի հողը պէտք է լինի, իսկ ժողովրդասէրի իդէալական հայրենիքը այդ ժողովրդի իրական կեանքը պէտք է լինի»: Երիտասարդ հրապարակախոսն իր հանդեսի էջերում անկեղծ խոսք է ասում աշխատավորների ծանր վիճակի մասին և խիստ քննադատում բուրժուազիային, որը «բարոյականապէս ապականուած լինելով, չի կարող զգալ ժողովրդի ցաւը»: Հանդեսը խնդիր է դնում քննադատական մոտեցում ցուցաբերել եվրոպական

«Պայքար» (1916), «Ապառաժ» (1917), «Նեցուկ» (1917), «Ղարաբաղի սարնանդակ» (1919), «Նոր կեանք» (1919) և այլն:

քաղաքակրթության նկատմամբ, հրապարակել այնպիսի գեղարվեստական գործեր, որոնք հետապնդում են բարձր նպատակներ, տպագրել հասարակությանը հետաքրքրող նյութեր, ժողովրդին ճիշտ բացատրել հողային հարցը, ծանոթացնել համայնական հողօգտագործմանը և այլն: Հանդեսը անհրաժեշտ է համարում հայրենիքի նյութական և հոգևոր միջոցների խոր ուսումնասիրությունը: Այն ընթերցողներին խորհուրդ է տալիս քննադատական մոտեցում ունենալ հասարակական-պատմական երևույթների նկատմամբ, պաշտպանել կանանց քաղաքացիական իրավունքների, նրանց կրթական մակարդակի բարձրացման գաղափարը: Հանդեսը հետևողականորեն արծարծում է մանկավարժական առաջադեմ գաղափարներ, պայքարում բարելավելու դպրոցական գործը, խնդիր դնում երկրամասում ընդլայնել դպրոցական ցանցը և ունենալ օրինորդաց դպրոցներ:

1896 թ. Շուշիում լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» առաջին համարը, որի խմբագիր-հրատարակիչն էր Երվանդ Լալայանը: Այնուհետև մինչև 1911 թ. Արցախում որևէ պարբերական չի տպագրվել: Այդ տարվա նոյեմբերի 17-ին լույս է տեսնում գրական-հասարակական եռօրյա «Ղարաբաղ» թերթի առաջին համարը (տպագրվել է 1910 թ. Շուշիում հիմնադրված Մելքոն Բաբաջանյանի տպարանում): Թերթի տպագրման համար մեծ ջանքեր են գործադրել Ղարաբաղի թեմի առաջնորդ Զավեն Մահտեսի-Բաբայանը և բժիշկ Նիկոլայ Յարամիշյանը: Թերթը խմբագրել են Ն. Յարամիշյանը, գլոց Վ. Փափազյանը, ապա՝ Ս. Տեր-Մինասյանը: Թերթին աշխատակցել են Տմբլաչի Խաչանը (Կոստանդին Մելիք-Շահնազարյան), Գր. Ներսիսյանը, Ա. Առաքելյանը, Խ. Լորենցը (Բորյան), Լ. Աթաբեկյանը և ուրիշներ: Մ. Տեր-Սարգսյանը (Միտսար) թերթում հրապարակ էր հանում արձակ գործեր, բազմաբնույթ հոդվածներ և թղթակցություններ, որոնցում խնդիր էր դնում երկրամասում ստեղծել մշակութալուսավորական օջախներ: Թերթի էջերում հանդես են գալիս նաև Շուշիի դպրոցների ուսուցիչներ:

«Ղարաբաղ» թերթը չեզոք դիրք է գրավում երկրամասում գործող քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Չնայած հաճախակի է անդրադառնում գավառական տխուր կյանքին, սակայն դժվարանում է այդ վիճակից դուրս գալու որևէ ուղի նշել: Գնահատելի են թերթի էջերում զետեղված երկրամասի դպրոցական,

մշակութային կյանքին, գրական-գեղարվեստական հարցերին, մամուլին նվիրված նյութերը:

1911–1914 թվականներին Շուշիում լույս է տեսնում հասարակական-քաղաքական "Шушинский листок" շաբաթաթերթը, որի խմբագիր-հրատարակիչն էր Շամիլ Մելիք-Ղարագյոզովը: Լույս է տեսել 37 համար: Այդ տարիներին լույս է տեսել նաև հասարակական-քաղաքական "Шушинская жизнь" թերթը, որի խմբագիրն էր Ստեփան Մանդինյանը, ունեցել է 54 համար: Այդ ռուսերեն թերթերը գրում էին գավառի մշակութային ձեռնարկումների, Ղարաբաղի բնակավայրերի, աշխարհագրական դիրքի, բնակչության կազմի, հրաշմունքների, երկրամասի պատմական անցյալի, քաղաքական կարևոր իրադարձությունների, սկսված առաջին աշխարհամարտի, ուսումնական օջախների, արդյունաբերական ձեռնարկությունների, Շուշի քաղաքի առօրյայի և այլ հարցերի մասին: Թերթի էջերում թղթակցություններով հանդես էին գալիս հայեր, թաթարներ, ռուսներ և այլ ազգությունների մտավորականներ:

1912–1917 թվականներին Շուշիում ծնվում են աշակերտական կազմակերպություններ և նրանց անլեգալ օրգանները: Թերևս հիշատակության արժանի են «Միութիւն» և «Միրաժ» աշակերտական կազմակերպություններն իրենց նույնանուն պարբերականներով: «Միրաժը» խմորատիպ անլեգալ ամսագիր էր, ուներ բոլշևիկյան ուղղվածություն, խմբագիրն էր Գրիգոր Մեհրաբյանը, տպագրվել է հազիվ մի քանի համար: «Միութիւնը» նույնպես աշակերտական խմորատիպ ամսագիր էր, հակված էր ՀՅԴ կողմը, տպագրվել է մի քանի համար: Կան տվյալներ, որ այդ ժամանակ Շուշիում տպագրվել են նաև «Սրինգ» և «Աշակերտ» անուններով խմորատիպ թերթեր, ինչպես և «Նռանդ» աշակերտական թերթը:

Արցախի գավառական կյանքի արտահայտիչն էր «Փայլակ» քաղաքական-հասարակական թերթը, որի խմբագիր-հրատարակիչն էր Լևոն Վարդապետյանը, այն ուներ սոցիալ-ժողովրդավարական ուղղվածություն: Թերթին ակտիվորեն աշխատակցել են Խ. Սամվելյանը, Լ. Աթաբեկյանը, Լեոն, Դ. Անանունը, Բ. Իշխանյանը, Գր. Ներսիսյանը, Գ. Ղազարյանը, Ս. Դանիելյանը, Լ. Վարդունին, Ա. Առաքելյանը, Ա. Քամալյանը, Հ. Հովակիմյանը, Ս. Դանիելյանը (Սուր, Դան), Մ. Եսայանը, Գր. Տեր-Ավետիքյանը և ուրիշներ: Թերթի առաջին համարը

լույս է տեսել 1915 թվականի մարտի 8-ին, ունեցել է 191 համար: Թերթը խնդիր ուներ ընդհանուր և քաղաքական նպատակների հետ միասին ծանրանալ նաև տեղական բնույթի հարցերի վրա: Երկրամասի աշխատավորների կյանքի վրա առանձնապես ծանր հետևանքներ էր թողել առաջին աշխարհամարտը. գյուղատնտեսությունը արագորեն անկում էր ապրում, Արցախի տղամարդկանց մեծամասնությունը զորակոչվել էր բանակ, չափազանց ծանր էր աշխատավոր բնակչության վիճակը: Հենց այս բոլոր հարցերն էլ գրավում են թերթի ուշադրությունը: Թերթի 1917 թվականի մարտի 9-ի, 16-ի և 23-ի համարներում տպագրված Լեոյի «Ղարաբաղ և ղարաբաղցիներ», Դ. Անանունի «Հողի շուրջը» (1915, № 18–20), Բ. Իշխանյանի «Գերմանիայի գաղութային քաղաքականութիւնը Ասիայում եւ Հայաստանում» (1915, № 23–24) և այլ հոդվածներ բարձրացնում են նրա հեղինակությունը: Հեղինակներն իրենց հոդվածներում դրվատում են հեղափոխության մարտիկներին, նրանց ներկայացնում որպես նոր կյանքի հերոսներ: Թերթում լայն տեղ են գրավում ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական ստեղծագործությունները: «Փայլակը» քննադատում է այն պարագլուխներին, որոնք քաղաքական հարցերում, իր կարծիքով, ճիշտ չեն կողմնորոշում բնակչությանը: Դրվատվում են այնպիսի ժողովրդավարական կարգերը, որոնք ապահովեին ազատ ու խաղաղ կյանք: Պաշտպանվում է այն տեսակետը, որ հայ ժողովուրդը կարող է լուսավոր ու ազատ ուղի դուրս գալ միայն Ռուսաստանի հզորությանն կապավինած:

1916 թ. Շուշիում լույս է տեսել «Մխածան» գրական-գեղարվեստական ամսագիրը, որի խմբագիր-հրատարակիչն էր Միսաք Պետրոսյանը: Լույս է տեսել միայն մեկ համար, որում տեղ են գտել Ա. Վշտունու, Խ. Լորենցի, Գ. Ղազարյանի, Գր. Ներսիսյանի, Լ. Վարդունու և ուրիշների ստեղծագործությունները: Նույն թվականին տպագրվել է նաև աշակերտական խմորատիպ երգիծական «Մխածան» ամսագրի մի քանի համար:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը նոր ազդակ հաղորդեց կյանքի բոլոր ոլորտներին: Ցարիզմի տապալումից հետո սկսվեց նոր ժամանակաշրջան: Քաղաքական աշխատանքը նոր թափ է առնում, աշխուժացնում նաև գավառական կյանքը: 1917 թ. ամռանը Արցախում տեղի են ունենում հուզումներ: Քաղաքական վերելքի շրջա-

նում հրատարակվում է բոլշևիկյան «Նեցուկ» թերթը, որի առաջին համարը լույս է տեսնում 1917 թ. օգոստոսի 18-ին, խմբագիրն էր Աշոտ Հովհաննիսյանը (Ներհակ), լույս է տեսել ութ համար: Թերթին աշխատակցել են Հ. Հովհաննիսյանը, Ալ. Ծատուրյանը (Ռուբենի), Հակոբ Կամարին, Ս. Դանիելյանը և ուրիշներ: «Նեցուկի» հիմնական խնդիրն էր գավառում տարածել բոլշևիկյան գաղափարները, բարձրացնել երկրամասի բնակչության հեղափոխական ոգին և մարտունակությունը: Թերթը նաև խնդիր է դնում անհաշտ պայքար մղել հակահեղափոխական ուժերի դեմ, Ղարաբաղում վերացնել նախկին կարգերը, պաշտոններից հեռացնել նախկին ցարական պաշտոնյաներին, երկրամասում ստեղծել այնպիսի իշխանություն, որի ղեկավարությունը պատկաներ բանվորներին և գյուղացիներին:

1917 թ. մայիսից Շուշիում տպագրվում է «Ապառաժ» թերթը, որը դաշնակցության օրգանն էր: Թերթի խմբագիրն էր Ղուկասյան դպրոցի տեսուչ Հայրապետ Մուսայելյանը: Լույս է տեսել 34 համար: «Ապառաժի» և «Փայլակի» միջև անհաշտ պայքար էր մղվում:

1918–1920 թթ. Շուշիում լույս են տեսնում մի շարք թերթեր, որոնք երկար կյանք չեն ունենում: Հասարակական-քաղաքական «Ղարաբաղի սուրհանդակ» թերթն ունեցել է միայն մեկ համար և հանդիսացել է այն ժամանակ Ղարաբաղում գործող կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծված կառավարության օրգանը: 1919 թ. Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը ստեղծում է «Արցախ» անունով հասարակական, քաղաքական և գրական շաբաթաթերթ, լույս է տեսել ընդամենը յոթ համար: Նույն թվականին հրապարակվում է նաև Շուշիի սոցիալ-ժողովրդական խմբի օրգան «Նոր կեանք» հասարակական-քաղաքական թերթը, որն ունեցել է հինգ համար:

1920 թվականի գարունը ողբերգական էր արցախահայության համար: Թուրք-ազերիները գաղանաբար հրդեհեցին Արցախի, ինչպես և Անդրկովկասի երբեմնի նշանավոր քաղաքներից մեկը՝ հայկական Շուշին: Ամեն ինչ ավերվեց, բարբարոսաբար թալանվեց, արդյունաբերական ձեռնարկությունները, հիմնարկները, արհեստանոցները, տպարանները, մշակույթի օջախները, հազարավոր տներ մոխրի վերածվեցին: Արցախը լիովին զրկվեց թե՛ տպագրական միջոցներից և թե՛ մամուլից:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ (1900–1914)

Գրեթե քառորդ դար ընդգրկող արևմտահայ մամուլի պատմության այս ժամանակահատվածը կարելի է բաժանել չորս փուլի. 1. դարասկզբից մինչև երիտթուրքական հեղաշրջումը (1900–1908), 2. երիտթուրքական իշխանության հաստատումից մինչև արևմտահայության ցեղասպանության ժամանակը (1908–1914), Առաջին համաշխարհային պատերազմի տարիներ և ցեղասպանության ծավալումը (1914–1918) և 4. արևմտահայ մամուլը զինադադարից հետո, մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը (1918–1923): Ըստ որում, թերթերի մի մասը, ինչպես «Մասիսը», «Սուրհանդակը», «Ծաղիկը» (կանանց շաբաթաթերթ), «Երկրի ձայնը», «Հանրագիտակը» և «Լույսը», որոնք հեղինակավոր հրատարակություններ էին Կ. Պոլսում, ինչպես և Զմյուռնիայի «Արշալույսն» ու «Արձագանքը» 1908 թ. հետո չեն հրատարակվել: Փոխարենը, 1908 թ. և դրան հաջորդած մի քանի տարիներին լույս տեսան նոր թերթեր՝ «Ժամանակը», «Ծաղիկը», «Կավռոշ», «Կառափնատ» և «Կիկօ» ծաղրաթերթերը, վերակազմյալ հնչակյանների «Առաւօտը», «Կոհակը», «Դաշինքը» (նախկին «Արեւելեան մամուլը»), «Աշխատանքը», մարզական հանդես «Մարմնամարզը», գրական հանդեսներ «Շանթը», «Հայ գրականութիւնը», «Ոստանը», «Մեհեանը» և այլն: Ակներև է պարբերականների թվի ավելացումը հատկապես 1908 թ. հետո: Եթե դարասկզբին, մինչև Աբդուլ Համիդի բռնապետության վախճանը, Կ.Պոլսում և Զմյուռնիայում հրատարակվում էին շուրջ երկու տասնյակի չափ պարբերականներ, ապա 1908 թ. մինչև 1914 թ.՝ ավելի քան 120 թերթեր և ամսագրեր: Պատճառը, կարելի է կարծել, երիտթուրքերի երևութական լիբերալիզմն էր, ինչպես և հայ հանրության՝ բռնակալությունից հետո վերազարթնած հասարակական-քաղաքական մտքի ու կրթական-մշակութային կյանքի աշխուժացումը:

1908 թ. հետո նկատելի է նաև բուն Արևմտահայաստանում ու Կիլիկիայում հրատարակվող պարբերականների թվաքանակի չնչին աճ: Մինչ այդ, այստեղ լույս տեսնող շուրջ մեկ տասնյակի հա-

նող պարբերականների դիմաց (Վանում՝ 5-ը, Սեբաստիայում՝ 1-ը, Շատախում՝ 3-ը) 1908–1914 թթ. հրատարակվել են երեք տասնյակի չափ պարբերականներ (Վանում՝ 18-ը, Սեբաստիայում՝ 6-ը, Կարինում՝ 5-ը, Մարզվանում՝ 3-ը, Մուշում՝ 2-ը և այլն)[1]: Հայ հասարակական-քաղաքական մտքի և հասարակական կարծիքի զարգացման իրողությունը խթանում էր նաև ազգային ինքնագիտակցության վերելքը՝ հայատառ թուրքերեն մամուլի օրինակով: 20-րդ դարի սկզբից մինչև ցեղասպանությունը Թուրքիայի մայրաքաղաքում կտրուկ նվազեց հայատառ թուրքերեն պարբերականների քանակը: Հակառակ դրան, գավառում (մասնավորապես Կեսարիայում և Կիլիկիայում) նկատվում է դրանց զգալի աճը:

1900–1908 թթ., մինչև Համիդյան վարչակարգի վախճանը, հայ մամուլն ու հրապարակախոսությունը խիստ ճնշումների ներքո զրկվել էին ազգային ու հասարակական թեմաներից: Հրապարակախոսությունից չքացել էր քննադատական լիցքը, քաղաքական հարցեր շոշափելու հնարավորությունը, հասարակական կարծիքը հուզող մի շարք հիմնահարցերի վերլուծությունը: «Արևելքում», «Մանզումեի էֆքեարում», «Բիւզանդիոնում» և «Մասիսում» վերակենդանացավ բարոյախոսական հրապարակախոսության ժանրը, որ արևմտահայ մամուլը հաղթահարել էր դեռևս 1870-ական թթ.: Փոխարենը նկատելի զարգացում ունեցան գավառին վերաբերող հրապարակումները, որոնք լուսաբանում էին ժողովրդի կենցաղը, սովորույթները, կրթական ու տնտեսական իրողությունները: Տարածված թեմա դարձավ իր հոգևոր պարտականություններն անտեսող հոգևորականության քննադատությունը: 1900–1908 թթ. արևմտահայ մամուլը, որքան էլ տարուբերվեր վերացականի և որոշակիի սահմաններում, զգալիորեն մոտենում էր իրականությանն ու ժողովրդի կյանքին, հիմնականում ընդառաջում մտավոր նոր պահանջներին: Մամուլի և հրապարակախոսության մեջ կարևոր ներդրում արեցին այնպիսի դեմքեր, որպիսիք էին Հովհ. Գազանճյանը, Ա. Անտոնյանը, Տ. Արփիարյանը, Հ. Մամուրյանը, Մ. Գոչունյանը, Օ. Զիֆթե-Սարաֆը, Հ. Ալփիարը, Ռ. Զարդարյանը, Արտ. Հարությունյանը, Բ. Քեչյանը, Մ. Շամտանճյանը և ուրիշներ:

---

[1] Տե՛ս Հայոց պարբերական մամուլը. Լիակատար ցուցակ (1794–1934), կազմ. Լևոնյան Գ., Ե., 1934, էջ 193:

Արևմտահայ մամուլի նախընթաց և խնդրո առարկա փուլերի ուշագրավ կողմն են ներկայացնում նաև կրոնական պարբերաթերթերն ու հանդեսները: 1900–1915 թթ. հրատարակվում էին Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դավանանքը քարոզող «Լույսը» (1905–1907), «Աստղ Բեթլեհեմին» (1911–1912), ինչպես և բողոքականների «Ավետաբերը», կաթոլիկների «Կաթողիկէ արձագանգը» (1911–1915) և այլ պարբերականներ: Դրանցում, ի տարբերություն նախորդ դարում հրատարակվող կրոնաթերթերի, թուլանում է դավանական անտագոնիզմը, շատ հրապարակումներ կրում են քրիստոնեական լայնախոհության ու հանդուրժողականության կնիքը:

1900–1908 թթ. արևմտահայ մամուլի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությունների.

Մամուլի էջերում զգալիորեն սահմանափակվեց արևմտահայության սոցիալ-տնտեսական կյանքի լուսաբանումը, որի պատճառը գրաքննական արգելքներն էին: Հայկական հարցի արծարծումների, արևմտահայության ազգային և քաղաքական բռնադատված վիճակին վերաբերող տեղեկատվությունն ամբողջովին դուրս մղվեց մամուլի էջերից՝ նույն՝ վերոհիշյալ պատճառով:

Թուլացավ և իր գաղափարական սրությունը կորցրեց լրատվությունը նաև արտաքին քաղաքական իրողությունների մասին: Փոխարենը թերթերի էջերը լցնող պարտադրանքի պես հայտնվեց ընթերցողին առանձնապես չհուզող՝ պատերազմների, եվրոպական ու ասիական տերությունների հարաբերությունների և այլնի մասին չեզոք, բայց և չափազանց առատ լրատվությունը: Դանդաղեց հրապարակախոսական ժանրի զարգացումը, մամուլը չնչահեղձ էր լինում մանրաթեմայնությունից և շրջանառում էր ոչ կարևոր, նեղ հարցադրումների սահմաններում: Առաջատար տեղ գրավեց, սակայն, ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականությունը, որը, որպես կանոն, զետեղվում էր լրագրերի «Թերթոն» բաժիններում: Ծանր գրաքննության ենթակա գիրքը, գեղարվեստական գրականությունը, կարծեք, ապաստան գտան մամուլի էջերում, որտեղ, խառնվելով մյուս նյութերին՝ չէին արժանանում գրաքննիչների բացառիկ ուշադրությանը: Համիդյան գրաքննությունն այդպիսի բացառիկ ուշադրությունը մամուլում սևեռվում էր

նրա հրապարակախոսական ու լրատվական հրապարակումներին՝ ելնելով պարբերականների քաղաքական բարեհուսության կարևորությունից: Համենայն դեպս, դարասկզբի հայ մամուլը կարողանում էր այս կամ այն կերպ նպաստել հասարակական կարծիքի ուղղորդմանը, տեղեկություններ տալ գավառական իրականության մասին, շոշափել դպրոցի, մշակույթի հետ կապված կարևոր խնդիրներ: Կարևոր էր նաև թեկուզ և ոչ հարուստ, այսուհանդերձ լրատվությունն արևելահայ իրականության վերաբերյալ, արտատպություններն արևելահայ մամուլից և այլն, որ հասցնում էր համազգային խնդիրների քննարկմանը, հոգևոր ու մշակութային կապերի ամրապնդմանն արևելահայության հետ:

Երկու հայկական հատվածների վերոհիշյալ կապերն ու հարաբերությունները հաջողությամբ զարգանում էին գրականության և գրաքննադատության ասպարեզում: 1900-ական թթ., թեև ոչ այնքան հաճախակի, արևմտահայ մամուլն անդրադառնում և գնահատական էր տալիս արևելահայ գրական երևույթներին:

1908–1914 թթ. ազգային ու հասարակական բովանդակության նոր թերթերի հետ միասին հատկապես ծաղկում է ապրում երգիծական մամուլը: Միայն Կ. Պոլսում հրատարակվեցին երկու տասնյակի չափ պարբերականներ, Զմյուռնիայում՝ երեքը («Զիկ-զակ», «Ծաղիկ», «Կավռօշ», «Ֆրու-ֆրու», «Լիլա», «Խարազան», «Կառափնատ», «Զուռնա», «Կատակ», «Մոծակ» և այլն): Այս փուլի սկզբում մամուլն ապրում է հասարակական ակտիվացման շրջան՝ համիդյան վարչակարգի պատճառած երկարատև ընդարմացումից հետո: Երկրում սահմանադրության վերահաստատումը և երիտթուրքական կառավարողների շռայլ ու խաբուսիկ խոստումները ընդհանրական հայրենիքի, Թուրքիայի բոլոր ազգությունների ազատության ու իրավահավասարության մասին, նախապես լավատեսություն էին ներշնչում մտավորականությանը: Մամուլն ապրում էր քիչ առաջ հրաժեշտ տված՝ համիդյան անցյալից բաժանվելու մի ճնշող գործընթաց. թերթերի էջերում մեծ քանակ են կազմում «զուլումի» տարիների վերապրումները, տպագրվում են մեծ քանակությամբ հուշեր, անդրադարձներ, էսսեի բնույթի ակնարկներ՝ թարմ անցյալի դեպքերի իրապատում վերարտադրությամբ: Նկատելի է նաև անհատի անձնաքննության, ազգի թերություններին խորամուխ լինելու

ճգնաժամը, այն դեպքում, երբ երկրորդական նշանակություն էր տրվում օրավուր ընդգծվող տնտեսական ու քաղաքական բռնություններին (գավառի դրության վատթարացում, օսմանյան խորհրդարանի ընտրություններում փոքրամասնությունների ընտրական իրավունքների կազմակերպված ոտնահարումներ և այլն): Արևմտահայ մամուլն այս ծմրությունից դուրս բերեցին Ադանայի դեպքերը (1909): Նախապես լրագրողները դյուրությամբ կուլ տվեցին երիտթուրքական սպառնալիքների ռազմական դաշինքը ֆ ռուսական կայսրության ուժ, այն մասին, թե իբր Կիլիկիայում սանձազերծված նախճիրը Համիդյան հին հետադիմական վարչակարգի գործն է: Ջարդի բուն կազմակերպիչների՝ նոր իշխանությունների դիմակը պետք է պատռվեր այն բանից հետո, երբ նրանք, ճիշտ Համիդյան ոգով, սպանդի ամբողջ մեղքն սկսեցին բարդել հայերի վրա՝ մեղադրելով նրանց զինված կոմիտեներ ստեղծելու, անկախ թագավորության երազանքներ փայփայելու և Օսմանյան Թուրքիան անդամահատելու «դավաճանական» ձգտումների մեջ: Դրանից հետո սկսվեցին «Արևելյան մամուլի», «Մանզումէի էֆքեարի», «Բիւզանդիոնի», «Ժամանակի» և այլ թերթերի էջերում միրկացնող նյութերի հրապարակումները, ականատեսների ելույթները և նույնիսկ դիվանագիտական փաստաթղթերի տպագրությունը, որով անվիճելիորեն պարզ էր դառնում, որ ջարդերը կազմակերպված և հրահանգված են եղել երիտթուրքական կուսակցական ու կառավարական կենտրոններից, և որ դրանց իր մասնակցությունն է բերել նաև թուրքական կանոնավոր զորքը:

1912–1914 թթ. Հայկական հարցի վերարծարծման ժամանակ մամուլն իր ուշադրությունը կենտրոնացնում է գավառի աղետալի կացության վրա: Ժամանակի գրեթե բոլոր հայկական թերթերը՝ «Բիւզանդիոնը», «Դաշինքը», «Աշխատանքը», «Ժամանակը» և մյուսները մի քանի խորագրերի տակ պարբերաբար և բազմակողմանիորեն լուսաբանում էին Արևմտահայաստանի վիճակը, բռնությունների, թալանի և սպանությունների առօրյան, իշխանություններ անտարբեր կամ հրահրիչ կեցվածքը դրանց նկատմամբ: Առանց կասկածի պետք է ասել, որ այս տարիների մամուլն ու հրապարակախոսությունն արևմտահայության մեջ նախապատրաստել կամ հասցրել էին ձևավորել հասարակական կարծիք՝ սպասվելիք ընդհանրական կոտորածների վերաբերյալ: Գրեթե բոլոր հայաբնակ

գավառների մեջ կատարվող աղետալի անցքերի մասին վկայող մեծաքանակ փաստերն ընթերցողին արդեն հուշում էին այն միտքը, որ դրանք պատահական չեն, այլ շարունակաբար կրկնվող բնույթ ունեն, և որ հայ ժողովուրդն իբրև խորթ ու թշնամական տարր է դիտվում իշխանությունների աչքին: Չեզոք, ուրեմն և օբյեկտիվ այս մամուլի լրատվական ուղղվածությունը, սակայն, ի զորու չեղավ նպաստելու ազգային կուսակցությունների՝ եղեռնին ընդհուպ նախորդող շրջանի իրադարձությունների առավել սթափ գնահատականին և մասնավորապես, երիտթուրքերի քաղաքականության հանդեպ ցուցաբերած վերաբերմունքին:

20-րդ դարի 2-րդ տասնամյակի մամուլը, այս ամենով հանդերձ, ձեռք էր բերել ազգային-քաղաքական այնպիսի բովանդակություն, որ կարելի է բնութագրել մի քանի կարևոր ուղղություններով: Ամենից առաջ ընդլայնվել էր մամուլի հասարակական նշանակությունը: Հրապարակախոսությունն անմիջականորեն անդրադառնում էր արևմտահայ գավառի կյանքին և լուսաբանում նրա իրական վիճակը: Արժեքավոր էին հատկապես Թուրքիայի քաղաքական կարգերի քննադատությունը, երիտթուրքական սահմանադրության զուտ ձևական բնույթի բացահայտումները՝ հատկապես Արևմտահայաստանի հայ բնակչության համատարած իրավազրկության ցուցադրումներով: Ըստ էության, այս բացահայտումները ոչ այլ ինչ էին, եթե ոչ երիտթուրքական վարչակարգի քողարկված կամ բացահայտ քննադատություն: 1910-ական թթ. տևական թեմա է դառնում արևմտահայերի հողազրկման գործընթացի լուսաբանումը, քրդական աշիրեթների և թուրք հողատեր վերնախավի, ինչպես և գաղթական մահմեդական տարրերի կողմից հայերի հողերը բռնագրավելու փաստերի արտացոլումը: Կարևոր էր հայ առևտրական բուրժուազիային բռնի կերպով ներքին շուկայից դուրս մղելու վերաբերյալ լրատվությունը: Այս տեսակետից հատկանշական են մամուլի այն անդրադարձները, որոնք վերաբերում են 1913–1914 թթ. Հունաստանի հետ ռազմաքաղաքական կոնֆլիկտի պատճառով ներքին գործերի նախարար Թալեաթի՝ հույն առևտրականների դեմ կազմակերպած ու հռչակած բոյկոտին: Այս առևտրական բոյկոտը սահուն կերպով շրջվեց հայերի դեմ՝ նրանց խանութների վրա կազմակերպված հարձակումների, նրանց հետ առևտուր անելու արգելքի և այս

ամենը խրախուսող իշխանությունների կողմից, նոր ապօրենի մաքսեր և տուրքեր ստեղծելու ձևով:

Ուշագրավ են Թուրքական բանակ զորակոչված հայ զինվորականների իրավազուրկ դրության բացահայտումները: Մամուլը բավականաչափ նյութեր է տպագրել՝ ցույց տալու զորանոցներում հայ զինվորների հանդեպ գործադրված բռնությունները թուրք սպայության ու զինվորների կողմից, բանակում հայ զինվորությանը իբրև թշնամական տարր դիտելու իրողության բացահայտումները, այն վերաբերմունքի, որով նախապատրաստվում էր 1914–1915 թթ. հայ զինծառայողներին հատուկ աշխատանքային գումարտակներում առանձնացնելու և զանգվածաբար բնաջնջելու ծրագիրը:

Հատուկ ուշադրություն էր դարձվում Արևմտահայաստանում բարենորոգումների վերաբերյալ միջազգային քննարկումներին: Մամուլում այս խնդրի բարեհաջող լուծման հարցում մի հայտնի չափով թերահավատությունը, սակայն, տեղի էր տալիս շատ ավելի բազմաթիվ այն հրապարակումներին, որոնցում որակ են կազմում ակնկալիքները եվրոպական տերություններից, 1913–1914 թթ.՝ հատկապես Ռուսաստանից, Ֆրանսիայից և Գերմանիայից: Ոչ կուսակցական մամուլը, ինչպես և կուսակցական մամուլի մի մասը (ռամկավար սահմանադրականներ) բարենորոգումների հարցը առնչում էր Նուբար փաշայի գործունեության հետ: Բոլոր դեպքերում, մամուլում արտացոլվել է նաև քննադատական կարծիքը վերը նշված իրողությունների վերաբերյալ: Հետևաբար, 1908–1914 թթ. մամուլը կատարել է ոչ միայն լրատվական և մշակութային, այլև ազգային-քաղաքական դեր՝ իր գոյության ամենադրամատիկ շրջանում, ցեղասպանությանը ընդհուպ նախորդող տարիներին:

«ԲԻՒԶԱՆԴԻՈՆ» (1896–1914)

1894–1896 թթ. արևմտահայ գավառներում, ինչպես և Կ. Պոլսում սանձազերծված՝ հայերի կոտորածներից հետո Օսմանյան Թուրքիայում մամուլն ընկավ ավելի խիստ հսկողության տակ: Հատկանշական է, որ կոտորածների վերջին տարում միջազգային հանրության կարծիքը և տերությունների ուշադրությունը հայկա-

կան ստանդից հեռացնելու նպատակով, մամուլի հանդեպ միշտ կասկածամիտ Աբդուլ Համիդը 1896 թ. միանգամից թույլ տվեց վեց հայկական պարբերականների (1893–1895-ին՝ Կ. Պոլսում և Զմյուռնիայում մեկական դիմաց) հրատարակությունը: Դրանց մեջ էր Բ. Քեչյանի արտոնատիրությամբ և խմբագրապետությամբ լույս տեսնող «Բիւզանդիոն» օրաթերթը: Խմբագիրներն էին Բյուզանդ և Պարույր Քեչյանները, ապա Արշակ Ալպոյաճյանը: Ուներ ազգային, գրական և գիտական բովանդակություն, այսինքն, այն ծրագիրը, որ պարունակում էր նրա հասարակական ու մշակութային ուղղվածությունը:

1890-ականի վերջերին թերթը հիմնական խնդիր է համարում Արևմտահայաստանի և Կ.Պոլսի հայ դպրոցների, ազգային հաստատությունների բնականոն գործունեության վերականգնումը, որպես «վերջին ողբալի անկարգութիւններուն եւ վշտալի պատահարներուն ամէնէն կսկծալի հետեւանքներ» (1896, 12 նոյ.): Մասնավորապես, Մ. Օրմանյանի պատրիարք ընտրվելու պահից ի վեր (1896, նոյ.) «Բիւզանդիոնը» պաշտպանում էր նրա անաղմուկ և զուսպ ջանքերը՝ աջակցելու ազգային կյանքում անտերունչ և անլույծ մնացած կրթական խնդիրները կարգավորելու, հասարակական կյանքն աշխուժացնելու ասպարեզում: Թերթը Մ. Օրմանյանի ուղեգիծը հիմնավորում էր նրանով, որ այդ եկեղեցականը հավասարապես ընդունելի է և՛ ազգի, և՛ Բ. Դռան համար, և որ տվյալ պահին հայ հանրությանը հարկավոր է այդպիսի շրջահայաց և լայնախոհ հոգևորական: «Բիւզանդիոնի» ընթացքը լիովին համապատասխանում էր պատրիարքի խոհեմ կեցվածքին:

Հայտնի է, որ 1890-ականի կոտորածներից հետո Կ. Պոլսից և Արևմտահայաստանից ծայր էր առել գաղթականների հոսքը դեպի Եվրոպա, Ռուսաստան, և մասնավորապես՝ Եգիպտոս, Բուլղարիա, Ֆրանսիա, Ռումինիա և ԱՄՆ: Արևմտահայաստանը մաշդամթափ անող այս երևույթի չափերն ընդլայնվում էին օսմանյան իշխանությունների խտրական բիրտ քաղաքականությամբ, կրոնական ու ազգային մշտական հալածանքների պատճառով: Ինչ-որ չափով դրա դեմն առնելու քարոզչության մեջ «Բիւզանդիոնը» առաջ է անցնում իրականությունից կտրվելու չափ և մասամբ գունազարդելով այդ իրականությունը:

Միաժամանակ, 1896–1897 թթ. թերթը բազմաթիվ նյութեր է տպագրել փախստական հայերի վերաբերյալ: 1896 թ. թերթը Արև-

մտահայաստանից և Թուրքիայի այլ վայրերից Կ. Պոլիս փախած հայերի թիվը հաշվում է 20–30 հազար մարդ (1896, 28 նոյ., 1897, 25 հնվ.): Սրանց մի ստվար մասը գաղթել էր Շումլա, Ռուսչուկ, Բուրգաս, Աթենք, Մարսել և Ալեքսանդրիա: Թերթը հորդորում էր նրանց վերադառնալ Թուրքիա՝ տեղեկացնելով նաև, որ օսմանյան իշխանությունները կարճ ժամկետ են տվել վերադառնալու համար, որը հաշվի չառնելուց հետո նրանց սպառնելու է սեփականությունից և կայքից զրկվելու ծանր վիճակը: Հայ գաղթականների կյանքը պատկերող հոդվածները և թղթակցությունները ներկայացնում են նրանց դժվարին կացությունը օտար միջավայրում: Ուշագրավ է, որ վերադարձած որոշ հայերի համար արդեն կատարված փաստ էր իրենց սեփականազրկվելը իշխանությունների կողմից: Այս վերադարձած հայերին իրավական օգնություն ցուցաբերելու նպատակով «Բիւզանդիոնը» բաց էր արել «Իրաւաբանական» բաժինը՝ տպագրելով օրենքների մեկնաբանություններ, առանձին հոդվածների պարզաբանումներ և այլն (1896, 23 դկտ., 1897, 17 ապր.):

Բ. Քեչյանը հատուկ ուշադրություն է դարձնում գավառներում հայերի տնտեսական վիճակի, արհեստագործության և առևտրի անկման դեմն առնելու հարցերին: Վանից, Խարբերդից, Արաբկիրից, Պրուսայից և այլ վայրերից ստացված թղթակցությունները թերթն ամրապնդում է ուշագրավ հոդվածներով («Տնտեսական հարցեր» խորագրով)՝ նվիրված առևտրատնտեսական նոր մեթոդների յուրացմանը, երկրագործության և վաճառականության արդյունավետ եղանակներին, այս ասպարեզներում ավանդական թերությունները վերացնելուն: Ուշագրավ է հայ արհեստավորության գործունեության լուսաբանումը նրանց նոր բնակավայրերում: «Բիւզանդիոնի» մի հրապարակումից երևում է, որ գաղթական ոսկերիչները, փորագրիչները, ասեղնագործողները գործ են գտել Եգիպտոսում, դերձակները, խոհարարները՝ Վառնայում, կոշկակարները՝ Բուխարեստում, դարբինները և երկաթագործները՝ Ֆիլիպեում (Պլովդիվ), գորգագործները՝ Ամերիկայում (1900, 4 հնվ.):

Հայերի տնտեսական վիճակի վերլուծության, ինչպես նաև առհասարակ Օսմանյան Թուրքիայի տնտեսական խնդիրների գնահատման հարցում առանձնահատուկ նշանակություն ունեն Բ. Քեչյանի տնտեսագիտական հմտալի հոդվածներն ու հրապարակումները: Նրա «Ինքնօգնութիւն, թէ փոխադարձ օգնութիւն» հոդվածում առաջադրվում է ազատ մրցակցության պայմաններում կապիտալի

և շուկայական հարաբերությունների զարգացման հիմնահարցը: Արդյունաբերության զարգացումը, ըստ Բ. Քեչյանի, ուղեկցվում է արհեստագործության քայքայման և հարստության բևեռացման իրողություններով: Հասարակության լայն խավերն այս պայմաններում իրենց սոցիալական գործառույթը կարող են իրականացնել խոշոր կապիտալից անկախ՝ փոխօգնության տարբեր և արդյունավետ ձևերի (խնայողական, ընտանեկան գանձարկղներ, փոխատվական ընկերություններ և այլն) կիրառմամբ: Ուշագրավ է, որ հեղինակն ընդունելի է համարում հանրային կյանքի սոցիալիստական կազմակերպման որոշ սկզբունքներ, ինչպես հանգստի իրավունքի, կենսաթոշակի, ձրի կրթության և առողջապահության վերաբերյալ օրենքների անհրաժեշտությունը: Հեղինակը կարևորում է փոխօգնության ձևերի կիրառումը Կ. Պոլսում և Արևմտահայաստանում, խրախուսում ազատ մրցակցությունը (1902, 29 նոյ.):

«Բիւզանդիոնում» առանձին խումբ են կազմում բանկերին, բանկային գործառնություններին, արժեթղթերին, դրանց գներին անդրադարձող՝ մասնագիտական փայլով գրված ինքնուրույն և թարգմանական հոդվածները: Եթե սրանց ավելացնենք Ռեժիի ծխախոտի ընկերության, Օսմանյան բանկի, Իզմիր-Գասաբա և հարակից երկաթուղագծերի տնտեսական կարևորությանը նվիրված տնտեսագիտական վերլուծությունները, ապա կարելի է ասել, որ Թուրքիայի տնտեսության գիտական արժեքավորման ասպարեզում «Բիւզանդիոնը», անկասկած, առաջատար հրատարակություն էր: Բ. Քեչյանն ընթերցողին ծանոթացնում էր ժամանակակից տնտեսագիտական մտքի արժեքներին: Նրա թարգմանությամբ թերթը տպագրել է տնտեսագետ Դ. Կարնեգիի «Ինչպէս հարստանալ» և «Հարստութիւնը եւ իր գործածումը» հոդվածները (1903, 22–23 դկտ.): Հասարակական բևեռացման, կապիտալի և աշխատանքի հակասությունները մեղմելու տեսակետից, որ, ի դեպ, պաշտպանում էր նաև Բ. Քեչյանը, այդ տնտեսագետը կարևորում էր հարստության, եկամուտների բաժանման սկզբունքը սեփականատերերի հոծ խմբերի մեջ կամ ազգային հարստության բաշխումը նրա անդամների միջև այն դեպքում, երբ պակասում է կապիտալի բերած հավելյալ արժեքը, բայց մեծանում է աշխատանքի վարձատրությունը: Բ. Քեչյանը ևս սրա մեջ է տեսնում աշխատուժի անզուսպ շահագործման հետևանքով սրված դասակարգային հակամարտությունները մեղմելու կարևոր միջոցը:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո «Բիւզանդիոնը», ինչպես և առհասարակ հայկական մյուս լրատվամիջոցները, լավատեսությամբ լեցուն նյութեր են տպագրել Օսմանյան Թուրքիայում բռնակալության վախճանի, ազգերի իրավահավասարության ու համերաշխության, Արևմտահայաստանում բարենորոգումների և այլնի վերաբերյալ: Թերթն առավելապես ուշադրություն է հրավիրում գավառի տնտեսական և ուսումնակրթական վիճակի վրա, հիմնավորում վարչական առաջիկա բարենորոգումների անհրաժեշտությունը: Բ. Քեչյանին հատկապես հետաքրքրում է քրդական հարստահարությունների վերջ տալու հարցը: Այս դեպքում խմբագրապետին, ինչպես և Ա. Ալպոյաճյանին նպատակահարմար է թվում քրդերին լուսավորելու, նրանց մշակութային կյանքի մեջ ներգրավելու և քաղաքակրթելու ծրագրերի իրականացումը: Այս առթիվ Ա. Ալպոյաճյանը հիշում է հայ-քրդական միություն ստեղծելուն ուղղված ոչ վաղ անցյալում ձեռնարկված փորձերը հայերի կողմից: Նա արժեքավորում է հատկապես Մ. վարդ. Տիգրանյանի՝ «հրաշագործ» հորջորջված այդ հոգևորականի գործունեությունը 1840–1860-ական թթ., Կ. Պոլսում նրա հիմնած «Բարեկարգութիւն Արևելեան» ընկերությունը (1860), որի ատենապետն էր Մ. Մոմճյանը, անդամակիցները՝ Հ. Մյուհենտիսյանը, Տ. Յուսուֆյանը և Հ. Սվաճյանը[1]:

Հայ-քրդական հարաբերությունների թեման, որ աշխուժորեն քննարկվում էր «Բիւզանդիոնի» էջերում, պետք է չքանար 1909 թ. Ադանայի ապրիլյան դեպքերի հորձանքի տակ: Թերթն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է այդ ողբերգության, նույնիսկ դրա մանրամասների վերլուծության վրա, տպագրում հոդվածներ, նամակներ, թղթակցություններ և այլն, բաց անում հատուկ խորագիր՝ «Կիլիկիոյ դէպքերը» վերտառությամբ: Հիասթափությունների և ուշաբերման դրաման էր ապրում հայ մտավորականության մի ստվար մասը, այդ թվում և «Բիւզանդիոնի» այն գործիչները, որոնց աչքերի առաջ հանկարծակի բացվեց երիտթուրքական կառավա-

---

[1] Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ Մյուհենտիսյան տպարանում Մ. Տիգրանյանն ընթերցարան է տպագրել քրդերի համար (1860 թ.)՝ «Լապտեր լուսատու յօրինեալ ի տէր Մկրտիչ վարդապետէ Տիգրանեան յառաջնորդէ Քուրդիստանի ի լոյս ընծայեցաւ. «Չըրայէ րոնի հախ չէ գրին, Ժէ Մկրտիչ Տիգրանէ մըթրան մարախասէ Քիւրտիստանէ սրանա պու» վերնագրով («Բիւզանդիոն», 1909, 29 հլս.): Նույն ժամանակներում Աստվածաշնչի ընկերությունը տպագրել էր Մ. Գրքի հայատառ քրդերեն թարգմանությունը (նույն տեղում):

րության ջարդարարական ծրագիրը՝ գործողության մեջ: Թերթն անդրադարձել է ջարդարարների գործելակերպին, խաղաղ բնակչության հանդեպ նրանց վայրագություններին, ընդսմին, վերհանելով հայերի պաշտպանական կռիվները և դիմադրական ոգին: Հասանբեկ հայկական գյուղի երկօրյա դիմադրության առթիվ «Բիւզանդիոնը» տպագրել է մի բնակչի նամակն իր եղբորը, որտեղ նկարագրվում է գյուղացիների դիմադրությունը ջարդարարների բազմապատիկ գերակշիռ ուժերին (1909, 8 մյս.): Նույն խորագրով ներկայացվում են Զոք Մարզվանի պաշտպանական կռիվները, հայերի հերոսական ընդդիմությունը և այնուհետև, Ադանայի ջարդը վերապրողների ծայր աստիճանի թշվառությունները (1909, 10 մյս.):

Թուրքական մամուլը միահամուռ, սոսկ երանգային տարբերություններով էր ներկայացնում իրականության ձախուծուռ պատկերը: Նախապես իթթիհատական մամուլը հասարակական կարծիքի ուշադրությունը շեղելու տենչով բռնված՝ Ադանայի դեպքերի ամբողջ մեղքը գցում էր հին վարչակարգի՝ Աբդուլ Համիդի և նրա կողմնակիցների վրա: Նույնն էին պնդում Սալոնիկի երիտթուրքական հրատարակությունները: Էբյուզիա Թեվֆիկի՝ այդ թրծված և բազմափորձ իթթիհատականի «Թասվիր-ի էֆքյար» թերթը պնդում էր, որ Ադանայի դեպքերի համար «երկու կողմերն ալ հաւասարապէս յանցաւոր էին» և ինչպես իրավացիորեն Բ. Քեչյանն էր գրում՝ «վարպետորդի ոճով» (1909, 6 հլս.):

1909 թ. հունիսին թերթը բացահայտորեն հերքում էր երիտթուրքերի ապալրատվությունն այն մասին, որ Ադանայի աղետի պատասխանատուները Համիդի կողմնակիցներն են:

Ադանայի դեպքերը «Բիւզանդիոնին» մղում էին քննադատաբար գնահատելու նաև ազգային իրականության հանդեպ հայկական քաղաքական ուժերի պատկերացումները: Նրա էջերում կրշտամբանքի և քննադատության խոսքեր են հնչում՝ ուղղված ազգային կուսակցություններին, որոնք ի սկզբանե չէին կռահել երիտթուրքական գործիչների նպատակները, հույսեր էին կապել նրանց, իբր, առաջադիմական առաքելության հետ և հավատացել միամտորեն: Ակներևաբար, թերթը սատարում էր ռամկավար սահմանադրականներին (Մ. Պարթևյան, Վ. Թեքեյան և ուրիշներ), որոնք դաշնակցությանը հակադրվում էին նախ Ադանայի դեպքերի, իսկ այնուհետև ազգային սահմանադրական մարմինների հանդեպ ունեցած գործելակերպի առթիվ:

Դաշնակցության քննադատության հարցում «Բիւզանդիոնն» անվերապահորեն անցավ ռամկավար սահմանադրականների կողմն այն բանից հետո, երբ այդ կուսակցությունն իր հերթին, «ազգի դավաճան» հռչակեց Մ. Օրմանյան պատրիարքին՝ մեղադրելով նրան Լա Հեյի վեհաժողովին Համիդի բռնապետության վերաբերյալ գոհունակություն հայտնելու հարցում (հեռագրով): Ինքը՝ Բ. Քեչյանը, կարծում էր, որ այդ հեռագիրն անհրաժեշտ էր սուլթանի վրեժխնդրությունը հայերից հեռացնելու համար: Սակայն, նույն կերպ, Դաշնակցությունը կարող էր հիմնավորել իր մերձեցումն իթթիհատին նրանով, որ ընտրել է համիդյան բռնակալության դեմ մղվող պայքարում չմեկուսանալու, իսկ հետագայում՝ կառավարող ուժ դարձած այդ կուսակցության վրա ազգային խնդիրների հարցում դրականապես ազդելու նկատառումներով: Հիրավի, Բ. Քեչյանը Դաշնակցության այդպիսի առարկությունը նկատի ուներ, երբ 1912 թ., հիմնավորելով կուսակցության այդ կեցվածքը, անշուշտ, բայց ոչ ծայրահեղ ձևակերպումներով և ոչ էլ ծայրահեղ մտասևեռումով, որ կնշանակեր տուրք տալ կուսակցականությանը, որ և այդ պահին անում էր ՀՅԴ-ն, գրում էր, որ այդ կուսակցությունը շարունակում է հին հայերի ավանդական քաղաքականությունը՝ հօգուտ ազգի չընդվզել տիրող տարրի դեմ, և որ նա խուսափում է առճակատումից՝ ավելի մեծ չարիքներից, նպաստավոր պայմանների ակնկալությամբ (1912, 10 փետ.): Անտարակույս, Բ. Քեչյանը յուրովի էր տեղադրում մասը ամբողջի մեջ՝ հօգուտ մասի:

Թուրքիայի քաղաքական իրադարձությունների նկատմամբ «Բիւզանդիոնի» գործուն դիրքորոշումը ցույց է տալիս, որ այս թերթը, արտահայտելով հայ բնակչության մի ստվար մասի տրամադրություններն ու խոհերը, ցանկանում է ստեղծել որոշակի հասարակական կարծիք՝ նույն այդ տրամադրությունների վրա ներազդելու համար: Այս իմաստով հետաքրքիր է նրա դիրքորոշումը 1911 թ., իթթիհատի և իթիլյաֆի հայտնի հակադրության նկատմամբ: Առավել ազատամիտ կեցվածք որդեգրած և իթթիհատին հակադրվող իթիլյաֆը՝ որպես կուսակցություն, հենց այս հակադրության շնորհիվ գրավել էր հիմնականում իթթիհատից դժգոհ թուրքական ազատամիտ որոշ վերնախավային շերտերի, ինչպես և հայ ազատամիտների մի հայտնի մասի համակրանքը: 1911–1912 թթ. սկզբներին օսմանյան խորհրդարանի ընտրությունների շրջանում քաղաքական կյանքի մակերես ելած իթիլյաֆը՝ կազմված իթթիհատի բազմաշերտ և բա-

ցահայտորեն ազգայնամոլ սոցիալական խմբերին հակադիր օսմանյան ազնվապետական (էշրաֆ) և ազատամիտ փոքրամասնությունից, սոցիալական որևէ հենարան չուներ գավառում, ուստի և խորհրդարանական ուժի վերածվելու իր ակնկալիքները կենտրոնացրել էր գլխավորապես Կ. Պոլսում: Գավառներում իր ակնհայտ թուլությունը, մի կողմից, նրանից վանում էր դաշնակցությանը (որ համագործակցում էր իթթիհատին), բայց և մյուս կողմից, տեղերին ինքնավարություն ապահովելու նրա ապակենտրոն խոստումները՝ հակառակ իթթիհատի կենտրոնաձիգ ու շովինիստական հայացքների, գրավում էին բարենորոգումների հույսերով օրորվող և դաշնակցության դեմ թող որ ոչ կտրուկ, բայց և պատրաստի առարկություններ ունեցող հայ մտավորականության մի մասին՝ Բ. Քեչյանին, Օ. Զիֆթե-Սարաֆին, Ն. Տաղավարյանին, Ս. Սպարթալյանին և այլոց: Վերջին երկուսը, ի դեպ, հարել էին իթիլյաֆին՝ սրա գոյության և գործունության մեջ տեսնելով իթթիհատի ազգայնամոլ, կայսրության այլահավատ ազգերի ինքնուրույնությանը բացահայտորեն սպառնացող քաղաքականության ընդդիմադիր ուժի (1911, 25 նոյ.):

1910-ական սկզբներին, երբ Հայկական Հարցը դարձյալ սկսեց արծարծվել միջազգային դիվանագիտության մեջ, ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտը, «Բիւզանդիոնը» ուշադրությամբ հետևում էր դրա զարգացումներին: Այս հիմնահարցին թերթի մոտեցմանը գրեթե նույնանման հայացքներ էր արտահայտում պրոֆ. Կ. Թումայանը, որը «Բիւզանդիոնի» գործուն աշխատակիցներից էր: Կ. Թումայանը համոզիչ փաստերից եզրակացնում է, որ հայի, իբրև օսմանցի թուրքի թշնամու, տերությունների օգնությամբ անկախանալու ձգտող քայքայիչ տարրի կերպարը թուրքական քարոզչությունն սկսել էր թխել դեռևս 19-րդ դ. վերջին քառորդին՝ Բեռլինի վեհաժողովից հետո:

1912 թ. «Բիւզանդիոնը» Հայկական Հարցը հանգեցնում է Արևմտահայաստանում բարենորոգումների իրականացմանը և թերթում հայտնվում է «Բարենորոգմանց խնդիրը» խորագիրը՝ ամենատարբեր բնույթի նյութերով և լրատվությամբ, որոնց միավորում է թեմայի ընդհանրությունը: Հայկական Հարցի վերարծարծման մեջ «Բիւզանդիոնը» տեսնում է ոչ թե ինքնավարություն, այլ Բեռլինի վեհաժողովի և 1895 թ. բարենորոգումների ծրագրով (մայիսյան ծրագիր) Արևմտահայաստանում բարենորոգումներ անցկացնելու նպատակը:

Արևմտահայաստանի բարենորոգումների հարցում «Բիւզադիոնն» ունէր հույժ չափավոր մոտեցում՝ պաշտպանելով Կ. Թումայանի տեսակետը. դրանց իրականացման համար պետք է դիմել ոչ թե օտար տերություններին, որ կգրգռեր թուրքերին և փորձանք կդառնար ազգի գլխին, այլ ակնկալել Թուրքիայի «սահմանադրական կառավարութեան» արդարացի վերաբերմունքն ու գործունեությունը (1913, 12 դկտ.): Սակայն քաղաքական իրադարձությունները այլ ընթացք ունեին, և «Բիւզանդիոնը» բավական ծավալուն տեղ էր տալիս բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական բանակցություններին՝ դարձյալ զուսպ առաջադրումներով հայտնելով իր մոտեցումները:

Առաջին աշխարհամարտի նախօրեին և մանավանդ 1914 թ. առաջին կեսին և մինչև Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը, արևմտահայությունը հայտնվեց թշնամական կրքերով շիկացած մթնոլորտում: «Բիւզանդիոնի» նյութերը բազմակողմանի լրատվություն են պարունակում այս ժամանակաշրջանի հայ գավառի իրական կացության մասին: Թերթը տագնապով է ներկայացնում ամբողջ երկրով մեկ ծավալված երիտթուրքական ազգայնամոլ քարոզչության ազդեցությունը գավառների և մայրաքաղաքի թուրք պանդխտածների վրա: Արևմտահայաստանում և այլ շրջաններում ամբողջ թափով ընթանում էր հայերի հողազրկման, առևտրի ու տնտեսական ոլորտից նրանց մեկուսացնելու քաղաքականությունը: Իշխանությունները առերևույթ դատապարտում, բայց իրականում խրախուսում էին ամբողջ երկրով մեկ 1914 թ. իսլամ բնակչության կողմից հայերի և հույների առևտուրը բոյկոտի ենթարկելու գործողությունները, որոնք սկիզբ էին առել Սալոնիկում և ապա տարածվել երկրի ասիական մասերում: Չնայած իր զգուշավորությանը, «Բիւզանդիոնը» գրում էր, որ հայ և հույն առևտրականներին հալածելու, նրանց առջև շուկան բռնի փակելուն ուղղված այդ «շարժումին նշանը Պոլիսէն տրուած էր եւ իր ետին մանրամասնութեանց մէջ Պոլիսէն էր, որ կը ղեկավարուէր այդ շարժումը» (1914, 6 հլս.):

Երիտթուրքական մամուլը գրգռում էր ամբոխի կրքերը և ջարդերի սպառնալիք ուղղում «հայրենիքին խորթ տարրերի»՝ հայերի դեմ: Այդ մամուլը, նկատում էր «Բիւզանդիոնը», հասարակական ամեն մի իրողություն մեկնաբանում է կրոնների հակամարտության տեսակետից՝ ելնելով շովինիստական մոլուցքից: Օսմանյան ընդհանուր զորակոչից հետո թերթը ներկայացնում է հայ զինվորի իրա-

վաշտերի վիճակը բանակում, զորանոցային ծանր պայմանները և բռնությունները նրա նկատմամբ (1914, 16 հնվ.): Ոչ միայն «Բյուզանդիոնի», այլև առհասարակ 1912–1914 թթ. հայ մամուլի նյութերը բացահայտում են կոտորածներ նախապատրաստող սպառնալի մթնոլորտը, որ ստեղծել էին երիտթուրքերն ամբողջ երկրում՝ անմիջականորեն գործի դնելու ցեղասպան գործողությունները: Թերթում կարելի է ծանոթանալ հայ զինվորներին ոչնչացնելու ծրագրի իթթիհատական արարքի անմիջական նախապատմությանը:

1909–1914 թթ. ընթացքում «Բյուզանդիոնն» իրականացրել է գրական-մշակութային հրատարակության իր խնդիրները: Նրան աշխատակցել էին ժամանակի հայ գրական և մտավորական լավագույն ուժերը՝ Վ. Թեքեյանը, Օ. Զիֆթե-Սարաֆը, Բ. Կյուլեսերյանը, Ս. Պարթևյանը, Լ. Մկրտիչյանը, Լ. Քիրիշճյանը, Անայիսը, Կ. Թումայանը, Հ. Ալփիարը և այլք: Այս ուժերի շնորհիվ է, որ «Բյուզանդիոնը» գրական ու գրաքննադատական բարձր մակարդակով առաջ է մղել և զարգացրել արևմտահայ գրականությունը: Ընթացիկ գրական գործընթացներից մինչև ժամանակակից հայ գրական կյանքն ու գործիչները, եվրոպական գրականության պատմությունից մինչև նրա արդիական ուղղություններն ու միտումները՝ այսպիսին են գեղարվեստական գրականությանը և գրաքննադատությանը վերաբերող՝ «Բյուզանդիոնի» հրապարակումները: Թերթը հարուստ նյութեր է տպագրել ազգային թատրոնի և երաժշտության, ընդհանրապես արվեստի մասին՝ հանդես գալով իբրև հայ ընթերցողի գեղագիտական ճաշակն ու միտքը կրթող հայկական ազդեցիկ հրատարակություն:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» (1899–1908)

Հրատարակվում էր Կ. Պոլսում, տեր և տնօրենն էր Տիգրան Ճիվելեկյանը: Նախապես շաբաթաթերթ էր, ապա օրաթերթ ազգային, քաղաքական և տնտեսական: Տ. Ճիվելեկյանը ճանաչված գործիչ էր մամուլի և հրապարակախոսության ասպարեզում: 1870–1880-ական թթ. նա խմբագրում էր հայատառ թուրքերեն և բավական աղմկահարույց «Թէրճէմանը էֆքեար» թերթը, որից հետո, դարձյալ հայատառ թուրքերեն «Ճէրիտէի շարգիյէ» (1885–1918) թերթը, որ հայա-

նի է թուրքական հետադիմական մամուլի հետ իր բանավեճերով: «Հայրենիքի» և «Արևելքի» հետ «Ճէրիտէի շարգիյէն» ըստ հնարավորին ընդդիմանում էր համիդյան գրաքննության կամայականություններին՝ շահելով ընթերցողի համակրանքը: Հավանաբար, 1882 թ. թուրքական մամուլի հետ «Թէրճէմանը էֆքեարի» ընդհարումները սրել էին ոստիկանության ուշադրությունը Տ. Ճիվելեկյանի նկատմամբ, համենայն դեպս, նրա «Սուրհանդակի» կենսագործությունը սկսվում էր անախորժ միջադեպով: 1898 թ. ոստիկանությանը տեղեկացրել էին, թե, իբր, «Սուրհանդակի» հրատարակությունն ունի գրգռիչ նպատակներ, որ արտացոլվել է նրա վերնագրի մեջ (սուր հան, դակ՝ «սուրը հանե, ծաքմիչ ըրե»՝ այսինքն, սուրը հանիր և ծակիր)[1]: Զրպարտության այսպիսի էժանագին տեսակը՝ շատ տարածված համիդյան գրաքննության սնուցիչ պայմաններում, այնքան անմիտ էր, որ Տ. Ճիվելեկյանից, հավանաբար, բացառիկ ջանքեր չէին պահանջվել այն հերքելու համար: Անվանի հրապարակախոսների և գրողների աշխատակցությունը «Սուրհանդակին»՝ նույնպես իր նշանակությունն ունեցավ թերթի հաջողության մեջ: Թերթին աշխատակցում էին Ռ. Զարդարյանը, Օ. Ջիֆթե-Սարաֆը, Հ. Ալփիարը, Ազ. Փանոսյանը, Ե. Թոլայանը, Ա. Ալպոյաճյանը, Մ. Ուզունյանը և այլք, որոնց աշխատակցությունն առհասարակ փայլ էր տալիս նաև պոլսահայ մյուս թերթերին:

«Սուրհանդակի» առաջատար թեմաներն են արևմտահայ հասարակական կյանքի լուսաբանումը՝ նրա տնտեսական կողմերի շեշտադրությամբ, գավառական իրականությունը, Կ. Պոլսի հայ հանրության կրթական-մշակութային ու գրական իրողությունները: Դրա հետ մեկտեղ, «Սուրհանդակն» ի հայտ էր բերում երկրի տնտեսությունը լրջմտորեն դիտարկելու, նրա կացությունը ընթերցողին լուսաբանելու կարողություններ, հատկապես բացահայտում երևույթի ստվերոտ կողմերը: Միայն Զմյուռնիայի առևտրատնտեսական կյանքին, նրա գյուղատնտեսական արտադրությանը և միջազգային առևտրում ունեցած մասնակցությանը վերաբերող «Սուրհանդակի» հրապարակումները, փաստական ու վիճակագրական բազմաթիվ նյութերը բավական են բավարար պատկերացում կազմելու այդ քա-

[1] Տե՛ս «Մշակ», 1898, 27 հոկտեմբերի:

ղաքի և նրա շրջակայքի, հատկապես հայ գործարարների տնտեսական նշանակալիության մասին: Այս կարգի հրապարակումներում ցույց են տրվում տեղական գործի արտադրությունը կաշկանդող պատճառները, խաղողի արտահանման չափերը նվազեցնող գործոնները, որոնց մեջ կարևորվում է օսմանյան մաքսային քաղաքականության աննպաստ ուղղվածությունը՝ ի վնաս տեղական արտադրողների: «Սուրհանդակը» հատկապես հետաքրքրություն է հանդես բերում երկրում գորգագործության զարգացման հնարավորությունների նկատմամբ: «Օսմանյան գորգերու ճարտարարուեստն ու առուտուրը» հոդվածում (1900, 19 հլս.) ցույց է տրվում այդ զարգացումը խոչընդոտող էական թերությունը՝ հնավանդ և ցածր արտադրողականության պայմաններում գործառելը և այս պատճառով տեղական արտադրողի մշտական կախումը օտար պատվիրատուներից:

Թուրքիայի տնտեսության զարգացումը կասեցնող մյուս լուրջ գործոնը «Սուրհանդակը» համարում է պետության անհեռանկար մաքսային քաղաքականությունը, որի պատճառով տեղական հումքը դուրս է տարվում անարգել և չի մշակվում տեղում: Այնթապի մանուսայագործության և Կյուրինի շալագործության բնագավառներում առկա զգալի կորուստները «Սուրհանդակը» բացատրում է հենց այս իրողությամբ: Այս թեմայով ուշագրավ է Ա. Ալպոյաճյանի «Կյուրինի շալագործները» հոդվածը, որտեղ հայ արհեստավորների տնտեսական անհաջողությունների պատճառը համարվում է եվրոպական թանկ հումքի (մանածի) օգտագործումը, իսկ հիմնականում՝ եվրոպական շատ ավելի էժան և որակյալ ապրանքների «զօրաւոր» մրցակցությունը շուկայում: Ա. Ալպոյաճյանը իրավացիորեն նկատում է կյուրինցիների մեկ այլ թերությունը՝ ոչ ճկուն առաջարկը (ապրանքատեսակը) պահանջարկի նկատմամբ (1900, 23 օգ.): Նույն թեման է շոշափում մեկ այլ հեղինակ, որը Կյուրինի շալագործների արտադրանքի էժանությունը հիմնավորված չի համարում նրա բարձր որակի համեմատությամբ, պնդելով, որ այն գերազանցում է եվրոպականին: Թեև այս հեղինակը շփոթում է տնտեսական իրողություններն ու դրանց միջև եղած կապերը, սակայն նրա հոդվածը հետաքրքիր մանրամասներ է պարունակում հայ արհեստավորների տնտեսական գործառույթների և պայմանների մասին

(1900, 9 օգ.), որ այսօր կարող է հետաքրքրել հայ տնտեսագետին և արհեստագործության պատմաբանին:

«Մուրհանդակն» ուներ «Տնտեսական կեանքը գաւառներու մէջ» խորագիրը, որի տակ, բացի Արևմտահայաստանի տարբեր շրջանների տնտեսական կացությունը լուսաբանող հոդվածներից, տպագրում էր փաստականորեն հագեցած նյութեր, տնտեսագիտական ուշագրավ վերլուծություններ: Գյուղատնտեսական արտադրության ու եկամտաբերության պատճառները քննարկող մի հրապարակման մեջ թերթն անում է հետաքրքիր եզրակացություններ առհասարակ ամբողջ երկրի մակարդակով: Այդպիսիք են համարվում տարեկան ծախսերի աճը՝ կենցաղային պահանջմունքների աճի պայմաններում, բացասական սալդոն՝ արտահանման և ներմուծման հաշվեկշռի հարաճուն հակադրությունը ի վնաս արտահանման և որպես դրա արդյունք՝ փողի գնողունակության նվազումը: Ուշադրության է գրավում մանր ու միջակ առևտրականության տնտեսական զարգացումն արգելակող այնպիսի գործոնների մատնանշումը, ինչպես մրցակցական պայքարում չհիմնավորված ցածր գների սահմանումը, ապառիկ վաճառքի սովորությունը, կեղծ սնանկությունը և այլն (1908, 19 հնս.): Թերթը զգուշացնում է Թուրքիայում լայն տարածում գտած ապահովագրական խաբեբա ընկերությունների գործունեությունից, ողջունում է այդ ընկերությունները պետական վերահսկողության տակ առնելու իրողությունը:

Եվրոպական առևտրի և արտադրության ընդօրինակելի սկզբունքները «Մուրհանդակի» հեղինակները համարում էին անգլիականը: Մանչեստրից Մ. Քեշիշյանի ուղարկած տնտեսագիտական բնույթի հոդվածներում քննարկվում են անգլիական տնտեսավարման մեթոդներն ու մեխանիզմները, աշխատավարձի ձևերը, օրվա կարգուկանոնը և այլն (1903, 4 մրտ.): Հոդվածների մի այլ խումբ թերթը նվիրել է տնտեսագիտության պատմության ու տեսության հարցերին: Տ. Մուրադյանի «Տնտեսագիտութեան հայրը. Ադամ Սմիթի վարդապետութիւնը» ուսումնասիրության մեջ ուրվագծվում են Սմիթի տնտեսագիտական ուսմունքի կարևոր կողմերը, որ բնութագրում են նրան որպես տնտեսագիտության մեջ նոր ուղղության հիմնադիրի: Փոխանակային արժեքի, դրամի և գնի փոխհարաբերության մեջ հեղինակը կարևորում է հարստության ակունքները՝

հողը և նրանում ներդրված աշխատանքը (1906, 15 մրտ.): Նույն հեղինակն իր «ԺԸ դարու տնտեսագէտները» հոդվածում ի հայտ է բերում բավական սթափ քննադատական կեցվածք՝ արդի տնտեսագիտության եվրոպական նախահայրերի հայացքների նկատմամբ (1906, 18 օգ.): «Սուրհանդակի» խոհերն ու հանձնարարականներն առաջին հերթին ուղղված են «միջին դասակարգին»՝ առևտրի ու արտադրության մեջ, ինչպես և արհեստագործներին, որոնց տնտեսական անմխիթար վիճակը բարելավելու կարևոր միջոցներից մեկը թերթը համարում էր երկրագործության զարգացումը: Այս խնդիրները հաջողությամբ լուծելու համար «Սուրհանդակն» առաջարկում էր Արևմտահայաստանում և երկրի հայաբնակ այլ շրջաններում արմատավորել բանկային գործը: Երկրագործական բանկերը այն համադարմանն էին, նրա կարծիքով, որ պետք է փրկեին գյուղացուն վաշխառուի հարստահարումներից, վարկ տրամադրեին նրան՝ մեքենայական հողագործության անցնելու համար: Ադրիանուպոլսի տնտեսական կյանքին նվիրված մի հոդվածում թերթը մատը դնում է ցավոտ և գրեթե ընդհանրական դարձած մի խնդրի վրա՝ հայ առևտրականները ասպարեզները զիջում են նաև տեղական հույն վաճառականներին ու կենտրոնանում են միայն «մանիֆաթուրայի» ավանդական ասպարեզում: Թերթն առաջարկում է դիմել կաշվի, բրդի և խոզակի արտահանմանը, շուկայից չերկնչել և մրցակցել այլազգիների հետ: Այդրնի վիլայեթում ևս հայ վաճառականները չեն զբաղվում բամբակի արտածությամբ, մինչդեռ Սալիհլիի, Թիրեի և Մանիսայի բամբակագործական շրջաններում լայն գործունեություն ծավալած հույն վաճառականները մեծ շահույթ են ապահովում բարձրորակ բամբակի շնորհիվ: Այդընում հիմնվում են բամբակագործական նոր գործարաններ, որից հեռու են մնում հայերը (1905, 30 սպտ., 23 դկտ.): Ստեղծված պայմաններում, եզրակացնում է թերթը, անհրաժեշտ է դառնում հայ առևտրականների դրամագլուխների միավորումը՝ մրցակցությանը դիմանալու համար:

Զնայած գավառական իրականության վերաբերյալ լրատվության որոշ միօրինակությանը (տնտեսության հետ կապվող հարցեր), «Սուրհանդակը», այսուհանդերձ, առաջադրում էր ընթերցողին հետաքրքիր հարցադրումներ, փորձում ի հայտ բերել այդ իրականության ստվերոտ կողմերը: Ռ. Զարդարյանն իր «Գավառի կեան-

քէն» հոդվածում առաջադրում է գավառական իրական կյանքի պատկերի ցուցադրման խնդիրը:

Ժամանակի ընթացքում «Սուրհանդակի» հոդվածները գավառական կյանքի մասին դառնում են առավել իրատեսական, գավառը ցուցադրվում է ոչ միայն իբրև անտարբերության, այլև սեփական կենցաղի արդյունք, թերություններն ու արատները հանդուրժող հետամնացության դուռ: Մ. Սպարթալյանը քննադատում է Արմաշի բարեկեցիկ այն հայերին, որոնք շատ ժլատ են բարեգործության մեջ, բայց շռայլ՝ սեփական պերճանքի և զվարճության համար: Խղճալի վիճակում է կրթական գործը: Քննադատվում է Արմաշի վանքի ուսումնական հնարավորությունները անտեսող ժողովուրդը (1905, 7 փետ.):

Արժեքավոր են գավառական կյանքի, նրա ժողովրդի բարոյականության, կենցաղի ու սովորույթների ծալքերին հետամուտ «Սուրհանդակի» ազգագրական բնույթի հոդվածները: Թերթը տպագրել է Արևմտահայաստանի տարբեր շրջանների հայության (Սեբաստիա, Վան, Էրզրում և այլն) ավանդույթներին, տարազին, արարողություններին նվիրված հետաքրքիր նյութեր: Մտահոգ գաղթօջախներում ազգապահպանության խնդիրներով «Սուրհանդակը» երբեմն անդրադարձել է Ռումինիայի, Ավստրիայի, Ամերիկայի հայության կյանքին: Հատկապես ուշադրություն է դարձրել Ամերիկա գաղթած հայերի տնտեսական, մտավոր ու կրթական իրողություններին, դավանմունքին, բարքերին և այլն: Ուշագրավ են ամերիկաբնակ հայերի կենցաղային թերությունների բացահայտումները՝ Խարբերդից, Սեբաստիայից, Դիարբեքիրից, Էրզրումից և Բաղեշից գաղթած հայերի մեջ: Թերթը նկարագծում է նոր մեկնած գաղթականների կյանքի ծանր ու դժվարին պայմանները անհարմարավետ կացարաններում՝ այսպես կոչված «դայնինգրում»-երում, որտեղ մի կերպ խցկված ապրում էին նախատեսվածից բազմապատիկ թվով ավելի մարդիկ: Այս պայմանների ցուցադրումը ինքնանպատակ չէր, այլ արտահայտում էր թերթի ծայր աստիճանի բացասական վերաբերմունքը գաղթի նկատմամբ: Գաղթականությունը համարելով չարիք և գավառի ու քաղաքի տնտեսապես անապահով բնակչությանը՝ միշտ հակամետ գաղթելու, «Սուրհանդակի» հեղինակները, որպես հակամիջոց, առաջարկում են այդ անապահովության մեղմումը կրթության միջոցով:

Դպրոցական արդիական ծրագրերը, ուսուցման գործնական ուղղվածությունը, նրանց կարծիքով, հնարավորություն կտար ժողովրդական խավերին՝ արհեստների ու մասնագիտական կարողությունների շնորհիվ հաղթահարել կյանքի դժվարությունները:

Կանանց կրթության և դաստիարակության բնագավառում «Սուրհանդակը» հանդես է բերել որոշակի պահպանողականություն. կնոջ գործունեության հիմնական ասպարեզն է համարվում ընտանիքը, և վկայակոչվում է ֆրանսիական պահպանողական մամուլը, որը կնոջ խոհարարական հմտություններից, տնային ծախսերը կարգավորողի դերից և մանկան դաստիարակության առնչվող սահմաններից այն կողմ չէր անցնում: Վերադառնալով հայ իրականությանը, թերթն իրավացիորեն նկատում է, որ գավառներում աղջիկները շատ հաճախ զուրկ են մնում անգամ տարրական կրթությունից: Կողմնակից լինելով կնոջ չափավոր, նաև՝ գործնական կրթությանը, թերթի աշխատակիցները ամերիկյանից նախընտրում էին եվրոպական զուսպ, ավանդական սկզբունքներն այս բնագավառում:

Ոչ գործնական ուսուցման դառը պտուղները «Սուրհանդակը» տեսնում էր բուն պոլսահայ իրականության մեջ: Հայ երիտասարդները մնում են անգործ՝ տեղ չգտնելով առևտրական հրապարակներում, գրասենյակներում և առհասարակ, վարչատնտեսական ծառայության մեջ: Ա. Քիթապճյանը հանդիմանում էր հայ վաճառականներին, որոնք չնչին ամսականով շահագործում են ուսումնավարտ երիտասարդներին, չեն սովորեցնում նրանց առևտրի կանոնները, երկյուղելով հնարավոր մրցակցությունից (1900, 14 մրտ.): Մ. Ուղուրլյանը անգործության պատճառներից մեկն էր համարում հարմար աշխատանք չգտնելը (1900, 3 հկտ.): Իրականում «հարմար աշխատանքի» պակասը ոչ թե պատճառ էր,այլ հետևանք, խոսքն այստեղ վերաբերում էր ավելի շուտ նպատակահարմար կրթությանը:

Օսմանյան կայսրությունում մանրապրանքային արտադրության քայքայման գործընթացը խորանում էր օտար կապիտալի ներխուժումով, գյուղատնտեսական արտադրության վաղեմի հիմքերի փլուզումով և քաղաքային արտադրության հումքային ճգնաժամով: Եթե դրան ավելացնենք հայ գավառի հողազրկման, գյուղացիության և ազգային հաստատությունների սեփականազրկման

երեւույթը, որն օրինականացվում էր քրդական բեյերի և թուրքական իշխանությունների օգտին, ապա ուրվագծելի կդառնա այն, որ օսմանյան պետությունը (անկախ երիտթուրքերի իշխանության գալուց), 1900-ական թթ. սկզբներին նախապատրաստում էր հայերի ցեղասպանությունը՝ բնաշխարհում նրանց զանգվածային սեփականազրկման միջոցով: Հայ գավառը և քաղաքային մանրումիջակ արտադրողներին սնանկացնելու այս վայրենի խրախճանքին մասնակցում էին հայազգի տարբեր տրամաչափերի վաշխառուները, բախտախնդիրներն ու ապազգայնացած անձինք՝ ծախելով ամեն ինչ և գնելով այն ամենը, որ հնարավոր էր՝ լցված խառնակ ժամանակներից որևէ օգուտ քաղելու մոլուցքով: Կ. Պոլսում հայտնվեց նորելուկ հարուստների՝ «հայ լայֆ»-ին (բարձրաշխարհիկ հասարակությանը) պատկանող հայերի մի ամբողջ շերտ, իր խորին արհամարհանքով դեպի ազգն ու նրա կարիքները և դրան համարժեք թրքամոլ կեցվածքով: Շարունակելով այս նորահայտ խավի քննադատությունը, որին, ի դեպ, հաճախ էին դիմում ժամանակի պոլսահայ գրողներն ու հրապարակախոսները, Ա. Անտոնյանը գրում է. «Սա կեղծ, շարաւոտ, զաւեշտական հայ լայֆը... որ երեկուայ ապխտավաճառներէն, երեկուայ խուրտաւաթճիներէն կազմուած է» և որոնք «հարստացած եւ ջոջի կարգ անցած են ազգապատկան կալուածներ ու դրամներ իւրացնելով, որբերու և այրիներու իրավունքը կուլ տալով, մանած կամ քէրխանէ (փայտ — Ա. Խ.) ծախելով, խաղի մէջ գողնալով վաշխառութեամբ եւ կամ խարդախ սնանկութիւններ սարքելով» (1906, 28 ապր.):

«Սուրհանդակի» գեղարվեստական գրականությունը զարգացնում էին ժամանակի գրական հրապարակում հայտնի դեմքեր՝ Լ. Շանթյանը, Մ. Պարսամյանը, Է. Գոլանճյանը, Ա. Անտոնյանը և ուրիշներ: Նրանք հիմնականում ստեղծագործում էին արձակի՝ նովելային ժանրի ասպարեզում՝ կրելով ժամանակի ֆրանսիական գրական ազդեցությունը: Նովելները սիրո հենքի վրա արված բարոյահոգեբանական վերլուծություններ են, հաճախ՝ սենտիմենտալ և վերացական տրամադրություններով, որ քիչ են առնչվում հայ մարդու իրական նկարագրին ու կացությանը:

«Սուրհանդակում» տպագրվել են Թլկատինցու «Քաղքցիի նամակներ» խորագրով ակնարկները, Մերսեդեսի (Ա. Անտոնյան) «Հին

մարդիկ, հին բարքեր» վիպակը՝ հայ կյանքն ու իրականությունը ցուցադրող պատկերներով:

Բավական հետաքրքիր է «Սուրհանդակի» երգիծական գրականությունը: Երգիծաթերթ չլինելով հանդերձ՝ «Սուրհանդակը» անվիճելի ներդրում ունի 20-րդ դ. առաջին տասնամյակների հայ երգիծական գրականության զարգացման մեջ: Ուշագրավ են թերթի անդրադարձները Հ. Պարոնյանին, որը «Սուրհանդակի» արդարացի գնահատմամբ, մնում է հայ երգիծանքի խոշորագույն դեմքն ու ուսուցիչը: Հ. Պարոնյանի մահվան տարելիցի առթիվ թերթը տպագրեց «Հակոբ Պարոնյան (երգիծաբան-գրագէտ)» հոդվածը Զ. ստորագրությամբ. կենսագրական համառոտ պատումում հայտնվում է, որ Պարոնյանը աշխատակցել է «Մանզումէի էֆքեար» և «Ճէրիտէի շարգիյէ» հայատառ թուրքերեն թերթերին (1900, 27 մյս.): Այս թերթերում մեծ երգիծաբանի գործերն ի հայտ բերելով, կարծում ենք, ինչ-որ չափով կլրացվեին նրա ստեղծագործության պակասող էջերը: Ինքը՝ «Սուրհանդակը», տալիս է Հ. Պարոնյանի՝ հանրությանը քիչ ծանոթ կամ ոչ ծանոթ գործերը տպագրելու օրինակները՝ ընթերցողին հրամցնելով նրա «Այգիներու հարցաքննութիւնը» (գրված 1886 թ.) ֆելիետոնը (1900, 30 մյս.), իսկ դրանից քիչ առաջ՝ «Ուսումնական խորհրդէ յանձնարարուած դասագրքեր» (գրված 1884 թ.) ֆելիետոնը(1900, 27 մյս.) : Այստեղ Պարոնյանը ծաղրում է ազգային ուսումնական խորհուրդը, որն առանց որևէ սկզբունքի կամ պատկերացման, դպրոցական միօրինակ դասագրքեր հաստատելու փոխարեն, կանաչ ճանապարհ էր տվել մեկ տասնյակի չափ դասագրքերի՝ քաոս ստեղծելով կարգուկանոնի փոխարեն: Ոչ մի հեղինակ մերժում չի ստանում, «Աստուծոյ համար Ուսումնական խորհուրդնիս աղեկ է, ամէնն ալ բարեսիրտ մարդիկ են, մեկու գէշութիւն չեն ըներ» (1900, 27 մյս.),- հեգնում է Հ. Պարոնյանը:

Նույն՝ «Մոռցուած էջեր» խորագրի տակ տպագրված «Այգիներու հարցաքննութիւնը» ֆելիետոնին կցած համառոտ ծանոթագրության մեջ խմբագիրը նշում է, որ Պարոնյանի այս «մոռցուած էջ ալ ունի բացարձակ այժմէութիւն» (1900, 30 մյս.): Այստեղ ևս Պարոնյանը ծաղրում է դպրոցների բարձիթողի վիճակը, դրանցում տիրող սնամեջ ուսումնական մեթոդներն ու անդիտությունը:

«Սուրհանդակը» տպագրել է Կավռոշի (Ե. Թոլայան) երգիծապատումներն ու ֆելիետոնները: Հաղթահարելով ժամանակի երգիծանքի մի ընդհանուր թերությունը՝ անեկդոտայնությունը (որը մինչ և ամեն տեղ իրենով է լցնում մեծ երգիծանքի պարապ մնացած տեղը), և թեև սրամիտ, բայց ինքնաբավ, կարճ օրվա համար ստեղծված հումորը, Կավռոշը կարողացել է ստեղծել ընդհանրացումների երգիծանք: Հաջողված են նրա «Խօսքը մէջերնիս», «Երկու երկու ալ հինգ», և այլ երգիծապատումները, իբրև պոլսահայ բարքերի, մտավորականության, կենցաղի ծիծաղելի կողմերի երգիծական բացահայտումներ (1903, 5 ապր., 1904, 10 հնվ.):

Թարգմանական գրականության բնագավառում «Սուրհանդակն» առավելապես կողմնորոշվում է դեպի ժամանակի ֆրանսիական արձակը: Թերթն ուներ «Փարիզյան քրոնիկ» բաժինը, որտեղ թարմ լրատվություն էր տալիս ֆրանսիական արվեստի ու գրականության նորույթների վերաբերյալ: «Սուրհանդակը» տպագրել է ֆրանսիական ակադեմիայի անդամ Գ. Բառնիի, Լ. Նորվենսի, Հ. Ցարժեի, Բ. Դոլանեի, Ք. Մոկլեի, Հ. դը Ռենյեի և այլոց արձակ ու չափածո ստեղծագործությունները: Անգլիագիր գրականությունից նա ընթերցողին ծանոթացրել է Ռ. Ստիվենսոնի, Հ. Ուելսի, Մարկ Տվենի, Ա. Կոնան Դոյլի, Օ. Շրայների և այլ հեղինակների պատմվածքներին ու վեպերին՝ առավելապես հակվելով դեպի լուրջ, գեղարվեստական ու հասարակական արժեք ունեցող գրականությունը: «Սուրհանդակը» մերժում էր դեկադանսը և նորօրյա ծայրահեղություններն ու ավանգարդը: «Սուրհանդակը» աշխուժորեն մասնակցել է ժամանակի գրական կյանքին, հարստացրել այդ կյանքը իր կարող և տաղանդավոր գրիչների շնորհիվ, այլև վերլուծաբար գնահատել այն: «Սուրհանդակը» պաշտպանում էր իրապաշտական ուղղությունը գրականության մեջ:

«Սուրհանդակը» արդիական հոգեբանության, միջավայրի ու մտածողության ցուցադրումը անհրաժեշտություն է համարում գրական ընթացիկ կյանքում: Տ. Մխաքյանը այս տեսակետից էլ պաշտպանում էր Հ. Ալփիարին, նրա ստեղծագործությունը մեծահարուստ Թավշանճյանի հարձակումներից: Նա պաշտպանում է ոչ միայն «Իզմիրյան քրոնիկագրին», այլև Զոլայի, Զոհրապի, Միրբոյի գրականությունը՝ ելնելով իր ժամանակի սահմանումներից, որով-

հետև «անոնք կնոջ վրա խօսած են, «բաց» գրած են, կյանքը նկատած են այնպէս, ինչպէս որ է՝ առանց ապուշ քողարկումներու, առանց ցաւագար վերապահումներու» (1906, 15 մյս.):

Իրապաշտական գրական ուղեգիծը «Սուրհանդակը» զուգակցում էր գրական ընթացիկ առօրյան լուսաբանող հրապարակումներով:

1900-ական թթ. «Սուրհանդակում», առաջիններից մեկը արևմտահայ մամուլում՝ հայտնվում է նորույթ՝ հետաքրքրությունը թուրքական ժամանակակից գրականության հանդեպ: Եթե 19-րդ դ. Թուրքիայում հրատարակվող հայ մամուլը ամբողջովին կամ գրեթե ամբողջովին անտարբեր էր թուրքական գրականության նկատմամբ՝ սրա արխայիկ, հիմնականում կրոնական ու ավանդական բովանդակության պատճառով, ապա 20-րդ դարի սկզբին այս պատկերը փոխվում է: Թվում է, 1890-ականին հայերի կոտորածները, Աբդուլ Համիդի սանձազերծած կոտորածների ու հալածանքների շարունակական քաղաքականությունը ոչ մահմեդական ժողովուրդների, այդ թվում հայերի հանդեպ, թուրքական շովինիզմի անընդհատ պոռթկումները հպատակ ժողովուրդների ինքնության դեմ, այս ամենը էլ ավելի պետք է խորացնեին սեպը արևմտահայ և օսմանյան մշակութային շփումների ու կողմնորոշումների միջև: Իրականում, գոնե հայ մամուլի վերաբերմամբ, տեղի է ունենում հակառակ երևույթը, կարծում ենք, հետևյալ պատճառներով: Նախ, 1890-ականի վերջերից հայ մամուլի նպատակների ու բովանդակության մեջ կատարվող լուրջ տեղաշարժերը՝ ինքնաքննության, շրջապատը մոտից ճանաչելու, Արևմտահայաստանի ու նրա բնակչության կյանքն ուսումնասիրելու, նրա իրական կացության խնդիրները լուսաբանելու հետամտող ուղղությունը հայ մտավորականության մեջ: Միջավայրի ճանաչողության պահանջը, մասնավորապես, ենթադրում է այդ միջավայրը կազմող մի այնպիսի բնութագրական գործոնի ճանաչողությունը, ինչպիսին էր թուրքական մշակույթի և հասարակական մտքի դիտարկումը: Եթե հարյուրամյակներ շարունակ հայ միտքը և ստեղծագործական ոգին նպաստել էր օսմանյան մշակույթի զարգացմանը (գրատպություն, թատրոն, ճարտարապետություն և այլն)՝ առանց հետաքննելու ընդունող մշակույթի բովանդակությունը կամ արժեքները, ապա 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբներին ինքնաճանաչողության ձգտումը տանում-հասցնում

էր սեփական շրջանակներից դուրս գալու, օսմանյան իրականությունը բազմակողմանիորեն հետազոտելու՝ հայ մամուլի և լրագրության նոր ուղղությանը:

Կար նաև մյուս, առաջինից բխող երկրորդ պատճառը, որ հետաքրքրում էր հայ մտավորականությանը, մասնավորապես, իրապաշտական ուղղության հետևորդներին, որը անտարբեր չէր կարող լինել թուրք գրականության մեջ այդ ուղղության առկայծումներին, որոնք ի հայտ էին գալիս դարձյալ վերը նշված ժամանակաշրջանում: Նկատի ունենք «Սերվեթ-ի ֆյունուն» ամսագիրը Թեվֆիք Ֆիքրեթի խմբագրության տարիներին, որը քննադատական դիրք էր բռնել օսմանյան հետամնաց հասարակության և թունդ կղերամտության դեմ՝ նպաստելով թուրքական գրականության արդիականացման միտումներին[1]: «Սուրհանդակի» խմբագիրներից Զարմայրը ըր ուշադրություն էր հրավիրում վերոհիշյալ ամսագրի շուրջ խմբված թուրք գրողների՝ Խալիդ Զիյայի, Հյուսեին Ռահմիի, Ահմեդ Ռեսիմի և այլոց ստեղծագործական նոր ուղղությանը (1903, 30 հնվ.): Ս. Թապադյանը իր «Թիւրք գրականութենէն» հոդվածում ուշադրավ փորձ է անում բացահայտելու արաբական և պարսկական պոեզիայի՝ թուրքական պոեզիայի վրա թողած ազդեցությունները (1903, 25 մրտ.): Սակայն այսպիսի շփումները եզրագծերից այն կողմ չանցան, համենայն դեպս, թուրք գրականությունը երկար ժամանակ չէր կարող մնալ հայ մամուլի հետաքրքրությունների ոլորտներում: Թուրք գրողների մեծամասնությունը հպատակ ժողովուրդներից և նրանց մշակույթից բաժանված էր պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսական խորխորատներով, սեփական ցեղի, կրոնի և նույնիսկ մշակույթի գերազանցության վաղեմի ընկալումների կաղապարներով: Այդ կաղապարները, մինչդեռ, ամբողջովին անընդունելի էին իրավազրկության և խտրականության կարգախոսները մերժող ոչ միայն հայ, այլև կայսրության մյուս ոչ մահմեդական հպատակների համար:

«Սուրհանդակի» հեղինակները բավական հոգածությամբ շարունակել են հայ մամուլի նախասիրած թեմաներից մեկը՝ հայ թատրոնի թեման: Արդի ընթերցողին կարող են հետաքրքրել նրանց տե-

---

[1] Желтяков А. Д., Печать в общественно политической и культурной жизни Турции, М., 1972, с. 230.

սակետները թատրոնի, որպես արվեստի լուսավորական և բարոյակրթիչ բնագավառի մասին, սակայն, թերևս, առավել կարևոր են հայ թատրոնի պատմությանը վերաբերող հրապարակումները: Այդպիսին են հայ թատերական գործիչների՝ Մ. Մնակյանի, Ս. Թղլյանի, Ս. Հեքիմյանի և մյուսների կենսագրական դրվագները ներկայացնող նյութերը: Հպանցիկ, բայց տպավորիչ գծերով են պատկերվում Պ. Մաղաքյանը, Պ. Ադամյանը, Սիրանույշը, Հրաչյան, Պեննեմեճյանը և նրանց ժամանակակից դերասաններն ու թատերական գործիչները (1900, 10 օգ., 1903, 28 փետ.): Ուշագրավ են Ենովք Արմենի «Սիրանույշ» և Գր. Զոհրապի «Սիրանույշ և Կոթէկ» հոդվածները (1906, 29 մյս. 5 հնս.): Գր. Զոհրապը, մասնավորապես, ընդգծում էր դերասանուհու տաղանդը՝ «կյանքի ու սրտի զարտուղությունները» մեկնաբանելու ասպարեզում, այդ համարելով թատրոնի բուն կոչումը:

Արվեստի և արվեստի գործչի հանդեպ հասարակության անշնորհակալ վերաբերմունքը «Սուրհանդակը» դատապարտում էր նաև դերասան Զափրաստի (Զափրաստճյան) նյութական ծանր վիճակի բացահայտումներով: Ա. Անտոնյանի «Կեանք և միտք» հոդվածում, դրա հետ միասին, բարձր է գնահատվում այդ դերասանի արվեստը (1906, 1 սպտ.):

«Սուրհանդակը» դադարեց 1908 թ.՝ հայ հրապարակախոսության ու լրագրության զարգացման լուրջ ազդակներ տալով հենց համիդյան բռնապետության ծանր տարիներին:

«ՄԱՍԻՍ» (1900–1908)

«Մասիսը» 1900 թ. սկզբներին հանդես եկավ որպես գրական հրատարակություն՝ կրելով «շաբաթաթերթ, ազգային, քաղաքական, գրական» ենթավերնագիրը: Արտոնատերը դեռևս 1852 թ. այդ թերթը հիմնած Կարապետ Ություճյանն էր, տնօրեն-խմբագիրը՝ Տիգրան Արփիարյանը (Արփիար Արփիարյանի կրտսեր եղբայրը): Վերջինս ոչ միայն կարողացավ ըմբռնել դարասկզբի գրական ու գեղագիտական նոր պահանջները արևմտահայ հասարակության մեջ, այլև իր շուրջ համախմբեց գրական նոր բարձրացող սերնդի

փայլուն ներկայացուցիչներին՝ Ա. Հարությունյանին, Ա. Անտոնյանին, Օ. Զիֆթե-Սարաֆին, Ռ. Սևակին, Տ. Չյոկյուրյանին, Ռ. Զարդարյանին, Հ. Գազանճյանին, Մ. Պարսամյանին, Զ. Եսայանին և այլոց: Աշխատակցում էին նաև անվանի ու համբավի տեր գրողներ՝ Գր. Զոհրապը, Ռ. Պերպերյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Հ. Ալփիարը, Ալփաալանը, Գ. Պոլային, Ա. Ալպոյաճյանը, Զ. Եսայանը, Ենովք Արմենը, Մ. Մեծարենցը, Ռ. Սևակը և ուրիշներ: Նորացված «Մասիսը» հրապարակ էր իջնում որոշակի ծրագրով ու նախասիրություններով՝ ըստ ամենայնի նպաստել հայ գրականության զարգացմանը, ընթերցողին շարունակաբար ծանոթացնել ոչ միայն ազգային գրական արժեքներին, այլև նրա ուշադրությունն ուղղել դեպի արտասահմանի գրական ու գեղագիտական ուղղությունները, սկսած նախընթաց դարաշրջաններից և վերջացրած ժամանակակից գրականությամբ ու գրական դեմքերով: Առաջին անգամ «Մասիսն» էր, որ Կ. Պոլսի մամուլում այդօրինակ աննախընթաց ծավալով և աշխատակիցների ստվար խմբով ձեռնարկեց գրական ու գեղագիտական, գրաքննադատական գործերի, ինչպես և թարգմանական գեղարվեստական ստեղծագործությունների ու գրաքննադատական բնույթի նյութերի տպագրությանը: Ութ տարի շարունակ, մինչև 1908 թ., «Մասիսը» երբեք չշեղվեց այս ուղուց՝ միշտ մնալով գրական առաջատար հրատարակություն ժամանակի արևմտահայ մամուլի ասպարեզում:

«Մասիսի» համար առաջնայինը մնում էր գեղարվեստական գրականությունը՝ իր զարգացման ժամանակակից ընթացքով և միտումներով: Դրան համապատասխան, շաբաթաթերթը դգալիորեն խթանեց հատկապես գրաքննադատական հոդվածների ու գրախոսականի զարգացումը՝ սկսած ինքնուրույն գրականության վերաբերյալ գնահատանքի խոսքից և վերջացրած եվրոպական, ռուսական ու ամերիկյան գրականությունների թարմ և նորովի բնութագրումներով: Պակաս կարևոր չէր նաև, որ «Մասիսը» միագիծ մոտեցում չէր ցուցաբերել գրականության, դրա ձևի ու բովանդակության, իրականության հետ գրական երկի փոխհարաբերությունների և դրանց առնչվող այլ հարցերի նկատմամբ: Շաբաթաթերթը, հատկապես Տ. Արփիարյանի խմբագրության տարիներին (1900–1906), և առհասարակ...

Ենովք Արմենը (1907–1908), ձգտել է գրական լայնախոհությունից բխող կարծիքների բազմազանության՝ արտացոլելով ժամանակի գրական-գեղագիտական ըմբռնումների ընդհանուր պատկերը:

Այս ամենի հետ միասին, «Մասիսն» իր խոհեմ մոտեցումներով հասարակական կարծիք էր ստեղծում ազգային գրականության նկարագրի մասին: Այս վերջինը հնարավոր չէր բացատրել սոսկ ժամանակակից հայ գրողների երկերի և դրանց վերաբերյալ գրաքննադատական նյութերի հրապարակումներով: «Մասիսը» առավել ուշադրություն էր դարձնում իր ժամանակին անմիջապես նախորդող ավագ սերնդի, ասել կուզի՝ XIX դ. 2-րդ կեսի հայ գրողների ու մտավորականների դիմանկարային վերարտադրությանը՝ փորձելով ցույց տալ դրանց նշանակությունը իր օրերի գրականության ընթացքի համար: Նկատելի է նաև շաբաթաթերթի զգույշ մոտեցումը գրական նորաձևություններին, արևմտյան, հատկապես ֆրանսիական գրական դեկադանսի հայ հետևորդների ծայրահեղություններին (Տ. Արփիարյանի խմբագրության տարիներին): Սրանց հանդեպ «Մասիսը» շատ ավելի լայնախոհ վերաբերմունք ուներ Տ. Արփիարյանի խմբագրության շրջանում, թեև, ըստ հարկին, մերժում էր առհասարակ ծայրահեղությունները:

Գրականության մեջ ձևի կարևորությունը, այսուհանդերձ, և դարձյալ ֆրանսիական գեղագիտական պատկերացումների ուժեղ ազդեցությամբ, շարունակում էր իրեն զգացնել տալ 1900-ական թթ. պոլսահայ բանաստեղծության մեջ, որ սկիզբ էր առնում դեռևս XIX դ. 2-րդ կեսից, անգամ 1880-ական թթ. ռեալիստական շարժման պայմաններում, երբ, թվում է, ռոմանտիզմի դեմ երիտասարդ ռեալիստների («իրապաշտների») առարկությունները ամենից առաջ ուղղվում էին Հյուգոյի և ֆրանսիական ռոմանտիզմի այլ սյուների դեմ: «Մասիսում» արտացոլվել է նաև ձևին նախապատվություն տվող տեսակետը:

Արևմտահայ գրական ու հասարակական կարծիքը, թերևս, 1900-ական թթ. ներկայացնում էր կենսունակ պահպանողականության և միաժամանակ, գրական նորագույն, եվրոպական ըմբռնումների մի զարմանալի համադրում, որ բխում էր նույն իսկ պոլսահայ կյանքի հասարակական նկարագրի հակասականությունից: Հին և պարկեշտ գրական ավանդույթների մեծարումը՝ հանուն ազգային

բարոյական հիմքերի պահպանության, տեղական պայմանների ու միջավայրի ինքնաբավությունը և մյուս կողմից, գրական նորագույն ըմբռնումների ներթափանցումներն այդ իրականության մեջ, հատկապես կրթված երիտասարդության շրջաններում: Կարելի է կարծել, որ նշված հակասականությունն էր թելադրում, որ 1900-ական «Մասիսի» էջերում շարունակվի դեռևս 1880-ական «Մասիսի» մեջ ծայր առած անհաշտ բանակռիվը բարոյական և անբարոյական գրականության վերաբերյալ:

«Մասիսի» ծրագրի մի ընդարձակ մասն է կազմում ընթերցողին ոչ վաղ անցյալի և ժամանակակից հայ գրողների կացությանը, հասարակության մեջ նրանց տեղի և ստեղծագործությունների արժեքին ծանոթացնելը: Հատկապես գրողների և լրագրողների նյութական ու հասարակական վիճակի բացահայտման այսպիսի նպատակադրված՝ բազմակողմանի ցուցադրումը հայ մամուլում իրականացվում էր առաջին անգամ: «Մասիսը» բարձրացնում էր մտավորականության նյութական սուղ վիճակը ինչ-որ չափով մեղմելու խնդիրը՝ թեկուզ և հասարակության աչքին կասկածելի դարձնելով լրագրողներին ու գրողներին անվճար աշխատեցնելու ժամանակավրեպ դարձած սովորույթը արևմտահայ իրականության մեջ:

«Մասիսի»՝ գրականության և լրագրության զարգացման մտահոգությունների մեջ առանձնանում է նախորդ և ժամանակակից գրական սերունդների միջև բնականոն հաջորդայնության խնդիրը: Որոշակիորեն այս մտահոգությունը խորացնում էին նորօրյա եվրոպական ազդեցությունների ներթափանցումները մամուլ և գրականություն, էլ ավելի որոշակի՝ սիմվոլիզմի և առհասարակ դեկադանսի ազդեցությունը ստեղծագործող երիտասարդ սերնդի վրա: Հակազդեցության միջոցներից մեկը «Մասիսը» դիտում էր ոչ վաղ անցյալի կամ ավագ սերնդի գրողների ժողովրդականացումը, նրանց կյանքի և ստեղծագործության ուսանելի օրինակի քարոզչությունը: Շաբաթաթերթի գրական և գրական-դիմանկարային անդրադարձներն այս իմաստով ձեռք էին բերում ոչ միայն ճանաչողական նպատակադրվածություն, այլև անմիջական կապ էին ստեղծում, այսպիսով, տարբեր սերունդների գրողների միջև, որ XX դարասկզբին կարող էր ընդհատվել արևմտյան ազդեցությունների չզգաստ հոսքով: Ասենք, որ այդ սոսկ Տ. Արփիարյանի «Մասիսի» բերած նորույթը չէր․ շաբա-

թաթերթը նրա խմբագրության տարիներին վերստին շրջանառության մեջ էր դնում 1880-ական թթ. առաջատար պոլսահայ հրատարակությունների՝ «Արեւելքի» և «Մասիսի» ուղեգիծը, այն է՝ վերհանել ավագ սերնդի հայ գրողների ու այլ մտավորականների կենսագրությունն ու գործունեությունը, դուրս բերել նրանց մոռացության մշուշից և առնչել ներկայի պահանջմունքներին: «Մասիսն» այս նպատակն էր հետապնդում ամենատարբեր ժանրերի՝ հուշերի, նամականու, մահախոսականի և այլնի օգտագործումով: Այս կերպ նրա էջերում տպագրվեցին իր՝ «Մասիսի» հիմնադիր և բազմամյա խմբագիր Կ. Ություճյանի հուշերի մի դրվագը՝ «Մեծ պահքի յիշատակներ» վերնագրով (1900, թիվ 13, էջ 204–205)՝ պոլսահայ քարոզիչների և ժամանակի պոլսահայ բարքերի մասին, Պ. Դուրյանի, Հ. Այվազովսկու, Հ. Պարոնյանի, Մ. Մամուրյանի, Ս. Ոսկանյանի, Հակոբ Ոսկանի և բազմաթիվ այլ գործիչների մասին հոդվածներ, տարբեր հրապարակումներ և այլն: «Մասիսով» սկսվեց հատկապես Պ. Դուրյանի ստեղծագործության եթե ոչ գիտական, ապա նպատակադրված ուսումնասիրությունը:

Շաբաթաթերթը ազգային գրականության զարգացման կարևոր նախադրյալներից մեկն էր համարում գրողների նոր սերնդի դաստիարակությունը, նրանց հանդեպ հասարակական ուշադրության պատվաստումը: Քաղաքացիական վերաբերմունքի սերմանումն այս բնագավառում «Մասիսը» պատկերացնում էր ավագ սերնդի փորձի և հմտությունների փոխանցման միջոցով, որ ըստ էության, արևմտահայ գրական աշխարհում ի սկզբանե ունեցել էր պատահական բնույթ: Այս մտահոգությամբ «Մասիսը» կազմակերպում էր «նոր գրիչների» բանաստեղծությունների մրցանակաբաշխություն: 1903 թ. փետրվարին քնարական պոեզիայի մրցանակաբաշխության համար շաբաթաթերթն առաջադրեց որոշակի թեմա՝ «Բաժնուած սիրտեր» խորագրով: Մրցույթի հանձնաժողովի անդամներն («քննիչներ») էին Մ. Աճեմյանը, Թ. Թերզյանը և Աղ. Փանոսյանը (1903, թիվ 8, էջ 113–114): Հաղթողի համար սահմանվել էր մրցանակ՝ «ոսկի գրիչ մը»: Մրցանակաբաշխության մասնակիցներից խրախուսվեցին 40 երիտասարդ ստեղծագործողներ, որոնց մեջ էին Գ. Խանճյանը (Ուրֆայից), Հայկանուշ Մառքը (Կ. Պոլսից), Մ. Պարսամյանը և Մ. Մեծատուրյանը (Մ. Մեծարենց) և ուրիշներ: Դրա-

նից առաջ, 1901 թ., «Մասիսը» մրցանակաբաշխություն էր հայտարարել լավագույն նորավեպի համար (1901, թիվ 49, էջ 777): Ի պատիվ «Մասիսի», պետք է ասել, որ այն հետագայում ևս շարունակաբար տպագրեց Մ. Մեծարենցին՝ ժողովրդականացնելով նրա ստեղծագործությունները: Երիտասարդ հեղինակների համար «Մասիսը» 1904 թ. բաց արեց հատուկ էջ՝ «Նորերի բաժին» խորագրով, որտեղ տպագրվում էին շնորհալի երիտասարդ ստեղծագործողներ:

«Մասիսի» գրաքննադատական հոդվածներում, գրախոսականներում և այլ հրապարակումներում շրջանառվում են ժամանակի արևմտահայ ճանաչված գրողների՝ Գր. Զոհրապի, Զիֆթե-Սարաֆի, Զ. Եսայանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Մ. Գոչունյանի, Ինտրայի (Տ. Չրաքյան) և այլոց ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքները, դրանք հիմնավորող վերլուծությունները ու ընդհանրացումները: Ընդ որում, «Մասիսը» գործող գրական սերնդին գնահատում է ոչ թե իբրև սոսկ ներկա գրականության պատկերը ներկայացնող միավոր, այլ անցյալի հայ գրականության, ինչպես և ժամանակակից եվրոպական գրականության հետ իր կապերի ու կրած ազդեցությունների ընթացքի մեջ: «Մասիսը» հայտաբերում էր ժամանակային առումով ամենատարբեր ուղղություններ՝ սկսած ռոմանտիզմից, ռեալիզմից ու նատուրալիզմից և վերջացրած սիմվոլիզմով ու դեկադանսի այլևայլ դրսևորումներով: Ե՛վ ուղղությունների, և՛ ժանրային տեսակետներից պարբերականի գրաքննադատությունն արտացոլում էր դարասկզբի արևմտահայ գրականության պատկերը՝ փորձելով վերհանել դրա և՛ բովանդակային, և՛ մատուցման ձևի առանձնահատկությունները: Ինչպիսին այդ գրականությունն էր, այնպիսին էլ, հիրավի, «Մասիսի» գրաքննադատությունն էր՝ տարամիտող, գրականության նշանակությունն ու գործառույթները հակասական անկյուններից ընկալող և բազմաշերտ, որտեղ եթե տիրապետող մի բան կա, այդ էլ բազմակարծությունն է: Այդ, միաժամանակ, հայ գրաքննադատական մտքի ամենանշանակալի ձեռքբերումներից մեկն էր XX դարի սկզբին, և հենց սրանով է պայմանավորված բանավեճերի շռայլ առկայությունը «Մասիսի» էջերում, որ վերաբերում էր և՛ ազգային, և՛ եվրոպական գրականություններին, գրական ուղղություններին, առանձին գրողների ստեղծագործություններին և այլն:

«Մասիսում» առհասարակ բարձր են գնահատվում ռեալիստական արձակ ստեղծագործությունները: Օ. Զիֆֆե-Սարաֆը, Թլկատինցին, Տ. Արփիարյանը, Զ. Եսայանը և մյուս հեղինակները անդրադառնում են XIX դարավերջի ռեալիստ հեղինակներին, հատկապես Զոհրապին, Տ. Կամսարականին և այլոց՝ իբրև լուրջ գրական ուղղություն ստեղծողների, տարբեր կողմերից ցուցադրում նրանց արվեստի նրբությունն ու ինքնատիպությունը: Պոեզիայում զգացմունքների խորությունն ու անկեղծությունը բարձր է գնահատվում «Մասիսի» գրաքննադատների կողմից: «Շ. Միածան» ստորագրությամբ հանդես եկած Մեծարենցը Զոհրապի բանաստեղծությունների վերլուծության մեջ վերհանում էր նրա խորունկ զգացումները՝ կիրքը, տխրությունը, անհատի հոգեկան տվայտանքները: Միաժամանակ, նա նկատում է Զոհրապի ոճի «անխնամությունը», որ «մեծ բան մը չի պակսեցներ իր խիստ տաղանդալից արտադրութեանց արժանիքէն» (1905, թիվ 12, էջ 190): «Մասիսի» երիտասարդ գրաքննադատները բանաստեղծությունից ակնկալում են հարուստ ներաշխարհի և հոգու տեր անհատին ներդաշնակող արվեստ:

«Մասիսի» գրաքննադատության համար, այսուհանդերձ, ձևի ու բովանդակության փոխհարաբերության հիմնահարցը առավել կարևոր նշանակություն ստացավ սիմվոլիզմի շուրջ մղվող տևական բանավեճերում: Գոնկուրների վեպի («Դեռահաս միջակորեարը», միջակորեար՝ բուրժուա) առթիվ, որ թարգմանել էր Գր. Մալխասը, «Մասիսում» և «Մանզումէի էֆքեարում» ծայր առավ բանավեճ՝ Մալխասի և Ռ. Պերպերյանի միջև: Բանավեճը սկսվեց «Մանզումէի էֆքեար»-ում Ե. Անդրեասյանի՝ գրական ուղղությունները բնութագրող մի հոդվածով, որտեղ, ինչպես Գր. Մալխասն էր նշում, Ե. Անդրեասյանը «կատարեալ մոռացութեան մէջ կը թողուր դաղղիական իրապաշտ կամ բնապաշտ դպրոցը եւ խզելով գրական արուեստի շրջափոխութեան շղթային մէկ կարեւոր օղակը՝ մէկ ոստումով կը ցատկէր decadent-ներուն՝ սկսելով դասական եւ վիպական գրականութենէ» (1906, թիվ 144, էջ 60): Այստեղ նկատենք, որ բանավեճում արժեքավոր էր Մալխասի կողմից ռոմանտիկական ու ռեալիստական ուղղությունների տարբերակման ուշադրավ ձևակերպումը:

Գրական ուղղությունների շուրջ ընթացող բանավեճին զուգահեռ, «Մասիսը» քննարկել է նաև ժամանակի դեկադենտական գրա-

կանության գնահատման հարցը՝ ցուցադրելով իր լայնախոհ մոտեցումները առկա տարաձայնություններին: Շաբաթաթերթի գրաքննադատները՝ լավատեղյակ եվրոպական գրական ուղղություններին, հատկապես ֆրանսիական գրականության մեջ տարածված նորաձույն դեկադենտական պոեզիային, խնդիրը դիտարկում են ոչ թե այդ ուղղությունների մերժման կամ հաստատման, այլ արևմտահայ գրականության մեջ դրանց թողած ազդեցության շրջանակներում: Այս բնույթն ունի Արտ. Հարությունյանի «Երկունք» ժողովածուի Տ. Զյոկյուրյանի գրախոսականը, որտեղ քննադատական շեշտը դրված է բանաստեղծական զգացումների դրսևորման ձևի վրա:

Այն, որ Տ. Զյոկյուրյանը ոչ պակաս չափով առարկումներ ուներ ռահվիրակ դեկադանսի դեմ, ակնհայտորեն երևան է գալիս Մ. Մեծարենցի «Ծիածանի» մասին գրած իր գրախոսականում: Բարձր գնահատելով Մեծարենցի բանաստեղծական «ճշմարիտ եւ արժէքաւոր յատկանիշները», նրա «փափուկ» և ինքնատիպ պատկերները, Զյոկյուրյանը նկատի ուներ նաև նրա կրած սիմվոլիստական բնույթի ազդեցությունները Մ. Պարսամյանից, Վ. Մալեզյանից, Ինտրայից և Արտ. Հարությունյանից: Ավելին, Տ. Զյոկյուրյանը առարկում էր սիմվոլիստական գունային համակարգի պատկերավորման հավակնություններին, նաև՝ բուն իսկ բանաստեղծական պատկերներին՝ Մեծարենցի գործերում դրանց առկայությունը համարելով «անիմաստ ոճնալօլիամի մը նմանողութիւն» (1907, թիվ 28–29, էջ 581–582):

Սիմվոլիզմի և դրա հայ հետևորդների դեմ կտրուկ քննադատությամբ հանդես եկավ «Մասիսի» վերջին խմբագիր Ենովք Արմենը: «Գրականութեան տիպարներ» (1907, թիվ 3, էջ 53–61) հոդվածով: Նա սիմվոլիզմի մեջ տեսնում է միայն գրական նախընթաց ուղղությունների բացասումը՝ հանուն արտառոցի և բացառիկի: Թեև նա այս ուղղության հետևորդների թիվը հինգ-վեցից ավելի չի հաշվում, բայց ակնհայտ է, որ նրան անհանգստացնում է սիմվոլիզմի ավելի քան լայն տարածման երևույթը:

«Մասիսում», սակայն, լսելի էր նաև սիմվոլիզմի պաշտպանների ձայնը, որ ուշադրություն էր հրավիրում եվրոպական չափանիշների շրջանառումներով ու մեկնաբանություններով: Արտ. Հարությունյանը հանդես էր գալիս ֆրանսիական սիմվոլիզմի տեսական հիմքերի ու դրույթների վկայակոչումով և այս իմաստով ճանաչո-

ղական նշանակություն ունի նրա «Ֆռանսական գրականութեան դէմքեր. Ռէմի տը Կուռմոն» հոդվածը (1907, թիվ 16, էջ 306--311): Սիմվոլիզմը, որպես ուղղություն, նա հակադրում է, մի կողմից, բնապաշտությանը (ռեալիզմ), իսկ մյուս կողմից՝ արդիական դեկադանսին, մասամբ նաև հետ գնալով պառնասականությանը: Սիմվոլիզմի ռահվիրաներին՝ Լ. դը Լիլ, Վեռլեն, Մալարմե, Մորեաս, Մ. Մետերլինկ և ուրիշներ, նա համարում է նոր գրական ուղղության շրջադարձը պայմանավորող դեմքեր, որոնք հրապարակ են իջել մտքի և զգացողությունների նոր պահանջներով:

Տեսական խնդիրների արծարծման հետ միասին և շատ ավելի հաճախակի, «Մասիսը» քննարկել է ժամանակի գրական կյանքի ընթացիկ խնդիրները: Գավառական գրականություն հասկացությունը ևս, որ շրջանառվել էր դեռևս 1880-ական թթ. «Արևելքի» և «Մասիսի» էջերում, ենթադրում էր նախ, որպես գրական երկի առարկա ընտրել Արևմտյան Հայաստանը, նրա բուն ժողովրդի առօրյան, կենցաղը և իրավական վիճակը, հոգեբանությունը, բարոյական ըմբռնումները և այլն: Եվ երկրորդ, գեղարվեստական պատկերման խնդիրը, այդ իրական միջավայրն ու մարդը պետք է դառնային ռեալիստական գրականության առանցք: Մի հայտնի չափով այս մտայնությունը կապվում էր հայ իրականության մեջ ազգային ինքնորոշման տրամադրությունների, որոնց սնուցման ու ծավալման համար էական նշանակություն ուներ հայրենիքի և հայ գավառացու ճանաչողության խնդիրը: Գավառական գրականությունը ենթադրում էր նաև բուն գավառացի գրողների ստեղծած գրականությունը՝ այն պոլսահայ գրողներին հակադրելու իմաստով, որչափով գավառացի գրողներից էր ակնկալվում իրենց լավ ճանաչած միջավայրի իրական պատկերումը: Այս նպատակով «Մասիսը» առանձնացրեց «Գաւառական գրականութիւն» խորագիրը, որի ներքո տպագրում էր հույներ ներշնչող ստեղծագործողներին: Ենովք Արմենը փորձում էր ամեն կերպ հիմնավորել գավառական գրականության անհրաժեշտությունը ազգային գրականության զարգացման համար և թափանցիկ ակնարկներ էր ուղղում պոլսահայ, առավել ևս նորագույն գրական ուղղությունների հետևորդներին: Գավառական գրականությունը, կարծում է նա, իր հիմքում ունի գավառի կյանքի ու մարդու գեղարվեստական քննության անհերա-

ղանչելի հեռանկարներ: Այստեղից արդեն պարզ է դառնում Ենովք Արմենի ծայր աստիճանի բացասական վերաբերմունքը դեկադանսի նորօրյա դրսևորումների, սիմվոլիզմի ազդեցությունների, անգամ Մ. Մեծարենցի «Նոր տաղերի» և Մ. Պարսամյանի բանաստեղծությունների նկատմամբ:

«Մասիսի» բերած գրաքննադատական նորույթներից էր կին գրողների («կնոջական գրականութեան») ստեղծած գրականության հիմնահարցի առաջադրումը, որ եվրոպական գրաքննադատության ազդեցության ամրապնդումն էր ժամանակի հայ իրականության մեջ կին գրողների հայտնությամբ: «Մասիսն» իր ընթերցողին ծանոթացնում էր Զ. Եսայանի, Մառի Արապյանի, Արշակուհի Թեոդիկի, Սաթենիկ Հարությունյանի (Թլկատինցու դուստրը), Իսկուհի Մինասյանի և Մարիանե Տամատի (երկուսն էլ ֆրանսագիր) ստեղծագործություններին, տալիս նրանց գրական վաստակի գնահատականը՝ միշտ խրախուսանքով, բայց առանց հաճոյախոսության: Ամենից հաճախ շաբաթաթերթը գնահատման օբյեկտ է դարձրել Զ. Եսայանի ստեղծագործությունը: Գրաքննադատ Գամերից հետո, որը բարձր էր գնահատել Զ. Եսայանի գրելաձևը և առհասարակ, ստեղծագործական խառնվածքը (1903, թիվ 14, էջ 217), գրողի երկերին անդրադարձան նաև Տ. Արփիարյանը, Ռ. Սամիկյանը, Ենովք Արմենը և ուրիշներ:

Իբրև գրական հրատարակություն, «Մասիսը» նոր ուղիներ էր հարթում հայ գրականության ընթացքի մեջ և ամենից առաջ՝ իր գրական լայն ընդգրկումների շնորհիվ: Նրա ծրագիրը, որ ավելի կամ պակաս չափերով հաջողվեց իրագործել 1900–1908 թթ., այսօր էլ զարմացնում է իր պատկառելի չափերով, ոչ միայն ազգային գրողների ստեղծագործությունների, այլև համաշխարհային գեղարվեստական գրականության, նորագույն գրական ուղղություններին պատկանող երկերի թարգմանություններով՝ հայ գրական միտքն ու ճաշակը արդիականացնելու մտահոգությամբ: Ավելին, «Մասիսը» այդպիսի արդիականացումը չէր ենթադրում այլ կերպ, քան ազգային գրականության ավանդույթների պահպանության և քարոզչության միջոցով:

«Մասիսին» ժամանակի հայ դասական պոեզիայի հետ էր առնչում նաև Ռ. Սևակը (Չիլինկիրյան): Նա այստեղ տպագրել է մեկու-

կես տասնյակից ավելի բանաստեղծություններ, ընդ որում, մեկը թարգմանություն է Լըկոնտ դը Լիլից՝ «Ցուլը» վերնագրով (1907, թիվ 14, էջ 273): Իր՝ Ռ. Սևակի բանաստեղծությունները տպագրվել են «Մասիսի» վերջին շրջանում՝ 1907–1908 թթ.:

Ռ. Սևակի ստեղծագործության մեջ ևս զգացվում է սիմվոլիստական պոետիկայի և պատկերավորության ազդեցությունը: Նրա բանաստեղծական աշխարհին հատուկ են ներքին լարվածությունն ու դրամատիզմը՝ անընդհատ շարժման մեջ պատկերավոր արտահայտություններով: «Հոգիս», «Գինով սէր», «Կարապները» և այլ բանաստեղծություններում ակնհայտ է մեծ կրքերի և դրանց բնականոն պատկերման ձևի ներդաշնակության խորությունը:

Ավագ սերնդի բանաստեղծների մեջ «Մասիսն» ակնածանք ունի հատկապես Ե. Տեմիրճիպաշյանի նկատմամբ, որի ստեղծագործությունը հայ բանաստեղծության զարգացման դարավերջի ընթացքը ներկայացնելուց բացի, կարծես, կամուրջ էր ստեղծում, իր միստիկական բեկված պատկերների հուշարկումներով արևմտյան դեկադանսին առնչվելու համար: 1907–1908 թթ. «Մասիսը» տպագրեց Ե. Տեմիրճիպաշյանի մի քանի բանաստեղծությունները («Թաշկինակն», «Վարդաչէք», «Եղջերուին երգը» և այլն) և մեկ ակնարկը («Մեր Պոսֆորը»), որ ուշագրավ է բանաստեղծական խոր ապրումներով (1907, թիվ 3, էջ 57–58): Միաժամանակ, կարծես սահմանազատվելով Ե. Տեմիրճիպաշյանի միստիկական ծայրահեղություններից, բայց և հաշվի առնելով տաղանդավոր գրողի գրչի արժանիքները, «Մասիսը» տպագրեց Գր. Զոհրապի «Եղիա Տեմիրճիպաշեան» հոդվածը (1907, թիվ 38, էջ 759–762), որտեղ ընդհանրացված ներկայացվում է հակասական գրողը, նրա լեզվական նուրբ զգացողությունը, որի դարձվածների ու նորակերտ բառերի մեջ Զոհրապը նկատում է և այն, որ «իրենց յանդգնութեան մէջ յաճախ այլանդակութեան կը յանգին» (նույն տեղում, 759):

Հ. Ալփիարը «Մասիսում» ևս շարունակում է ստեղծագործել նույն թեմաների շրջագծում՝ կենցաղ, բարոյական հարաբերություններ սեռերի միջև՝ մնալով միշտ նույն զվարթ, սրամիտ, դիպուկ, երբեմն՝ դառնահումորություններում շրջանառող իր երգիծանքով: Ալփիարի երգիծանքում զգալի է ֆրանսիական գրական ազդեցությունը՝ թեթևամիտ, հպանցիկ ու նրբաճաշակ, բայց հենց այս հատկանիշնե-

րի շնորհիվ էլ որքան էլ տաղանդավոր երգիծաբան՝ Ալփիարը կորցնում է իր ժողովրդայնությունը կամ դեմոկրատիզմը՝ ոչ քիչ դեպքերում հասու չլինելով ամենաբազմամարդ՝ միջին խավի ընթերցողներին: Ալփիարը կրթված, մտավորական նոր շերտերի երգիծաբանն է, որը չհասկացվեց պահպանողական շրջանների կողմից, որոնք չհապաղեցին նրան հռչակելու «անբարոյական, վրան-բաց» երգիծանքի ներկայացուցիչ:

«Մասիսում» Քրիզանթեմ-Ալփիարը երբեմն իր քրոնիկները տպագրել է «Շոգմոգ մտածումներ» խորագրով: Դրանք կամ երգիծական նորավեպեր են, կամ իրապատում սյուժեներ՝ մշակութային երևույթների, մտավորականների, պատրիարքարանի և այլնի քննադատական խայթոցներ, բարքերի երգիծական գնահատումներ և այլն: 1907 թ. վերսկսելով «Մասիսին» իր աշխատակցությունը, Ալփիարը հանդես էր գալիս «Ալփիարաբանութիւն» խորագրի ներքո, որտեղ, նրա երգիծանքը շարունակում էր պահպանել առօրեականության հանդեպ իր հակվածությունը, զվարթ ու սրամիտ ծաղրն ու հումորը՝ հաճախ անսպասելի և տպավորիչ ավարտով: Կինը և նրա բարոյական կերպարը, ընտանիքում և հասարակության մեջ նրա դիրքն ու պահվածքը այս շրջանում ևս մնում են երգիծաբանի ուշադրության կենտրոնում: Քաղքենի հայ ընտանիքը, ապա միջավայրը կնոջ միջոցով բացահայտելու եղանակը Ալփիարի նախասիրած ձևերից է, որ ի դեպ, նա ժառանգել է հայ դասական երգիծանքից (Հ. Սվաճյան, Հ. Պարոնյան)՝ ներշնչումներ գտնելով նաև ֆրանսիական ժամանակակից գրականությունից: Կանանց թերությունների ընդգծումը և առհասարակ, ընտանիքի և կնոջ բարքերի երգիծական ձևախեղումների սեփական համակարգը Ալփիարին հասցնում են դրանից բխող այն եզրակացությանը, որ ֆեմինիզմը հայ հասարակության մեջ իրականանալու ոչ մի հիմք և հեռանկար չունի: Կնոջ հավասարությունը տղամարդուն, առաջինի հասարակական գործունեությունը նա ընկալում է ֆիզիկական բնությունից տրված՝ սեռերի տարբերության տեսակետից: Կնոջ հասարակական գործունեությունը Ալփիարը համարում է «խոլ վազք մը դէպի անկարելին, անտեղի մարմաջ մը եւ սխալ գաղափար մը, զոր առաջին անգամ տանը մնացած օրիորդ մը հղացած ըլլալու է» (1902, թիվ 46, էջ 729):

Նույն կարծիքն ունի ֆեմինիզմի և կնոջ հանրային գործունեության վերաբերյալ Գր. Զոհրապը: Նույն այս «Մասիսում» հիշատակելով Տյուսաքի «Մայտա» վեպի առթիվ իր երբեմնի բանավեճը Ռ. Պերպերյանի հետ, Զոհրապը նշում էր. «Ես՝ իմ արեւելքցիի համառութեամբս այդ դատին (ֆեմինիզմի – Ա. Խ.) դէմ կը մաքառէի եւ դեռ կը մաքառիմ՝ համոզուած, որ ատով կինը կը կորսնցնէ, քան թէ կը շահի իր շնորհին մէջ» (1901, թիվ 43, էջ 676):

Անկյալ հասարակական բարքերի և դրա հետ միասին բարոյական արժեքների կորուստը աղետալի մի բան էր թվում ռեալիստ Զոհրապին, որը կնոջ մեջ, նրա միջոցով ընտանիքի և հասարակության պահպանության վերջին հանգրվանն էր տեսնում: Փչացած բարքերի ու բարոյականության անկման այնպիսի վիհը՝ հասարակական կյանքը, որի մեջ կարող էր նետվել կինը ֆեմինիստների ենթադրած տղամարդու և կնոջ իրավահավասարության պատրանքային պայմաններում, Զոհրապին պատկերանում էր որպես կնոջ բարոյական ու հոգևոր գեղեցկության, ուրեմն և անհատի ու հասարակության առավել խաթարմանն ուղղված սպառնալիք: Նրա հերոսուհիները, որքան ստոր միջավայրում էլ գործեն, մեծապես բարձր են կանգնած այդ միջավայրից և անկախ դրամատիկ կամ ողբերգական ճակատագրից, կարծես, մնում են գեղեցկության և հուսո այն վերջին խարիսխը, որն անվտանգ ծովածոցում մնալու վերջին հնարավորությունն է տալիս ազգի հողմակոծ նավին, այն վարող տղամարդուն: Կարծում ենք, սրանում է թաքնված Զոհրապի առարկությունը ֆեմինիզմին և բանավեճը դրա հետ, որ մեծ գրողը, Ռ. Պերպերյանի հետ բանավիճային անմիջականությունից զատ, վարեց իր ամբողջ ստեղծագործության մեջ: Ավելացնենք, որ կնոջ նկատմամբ Զոհրապի այս հայեցվածքը նրա նորավեպերում առարկայանում է նույն այդ միջավայրում իր հերոսուհիների և հերոսների հույժ կենդանի, իրական հարաբերությունների ցուցադրմամբ: Այստեղ առկա է, իրոք, ռեալիստ Զոհրապը, բայց դրանից բխող նրա գնահատականը, կնոջ և տղամարդու փոխհարաբերության նրա գնահատականը, ասել կուզի՝ ընտանիքում և հասարակության մեջ կնոջ տեղի զոհրապյան պատկերացումը ի հայտ է բերում նրա ռոմանտիզմը, որ պատրանքային է, ինչպես գրականության մեջ կյան-

քի իրողությունների մասին ամեն մի կամային ու անհատական պատկերացում:

Հ. Ալփիարը, կարելի է ասել, գրեթե նույն մտայնությանն է հանգում, ինչպես վերը տեսանք, իր սեփական, երգիծանքի ժանրային առանձնահատկությունների բերումով: Ալփիարը չունի Զոհրապի տրամաբանական և գեղագիտական մտադրույթների ներդաշնակ կառույցը և ֆեմինիզմը հերքում է արդեն իսկ ընտանիքում և հանրության մեջ կնոջ վերին աստիճանի բացասական ներգործության մտավախությամբ, նրանով, որ կինը, լինելով բարոյազուրկ հանրության արդյունքը, տղամարդու հետ իրավահավասարության պայմաններում ավելի կարագացնի և՛ իր, և՛ տղամարդու, այսինքն, ամբողջ հասարակության կործանումը: Ավելին, ֆեմինիստական սկզբունքները Ալփիարը համարում է անիրականանալի, բանդագուշանքի պես մի բան, որի դեմ էլ նա ուղղում է իր երգիծական սլաքները: Ի դեպ, նկատենք, որ «Մասիսը» տպագրել է Մ. Նորդաուի «Կինը հոգեբանական եւ բնախօսական տեսակէտով» հոդվածի թարգմանությունը (1901, թիվ 48, էջ 762–764), որտեղ ընդգծվում է կնոջ՝ ժառանգականությունը պահպանող նախատիպի, կնոջ ֆիզիոլոգիայում ժառանգականության օրենքի գերակայության նշանակությունը: Այդ օրենքից ամեն մի շեղում Նորդաուն համարում էր հիվանդագին, ախտածին երևույթ կնոջ, հետևաբար և հասարակության համար: Այս մոտեցումը, թվում է, կարող էր տեսական հիմք դառնալ խնդրո առարկա ժամանակաշրջանի՝ ֆեմինիստական շարժման հակառակորդների համար:

«Մասիսում» իր ստեղծագործական մնայուն հետքն է թողել Օ. Զիֆթե-Սարաֆը (Հովհ. Աբիսողոմյան) իր նորավեպերով, ակնարկներով, գրաքննադատական նյութերով և խմբագրական հոդվածներով: Շաբաթաթերթում նա հանդես է եկել իր հանրածանոթ անվամբ, այլև Օ. Զ. Ս. և «Համշիրակ» ստորագրություններով: Զիֆթե-Սարաֆի նորավեպերը հագեցած են ճշմարտացի պատկերներով, կենցաղի ու բարքերի վերարտադրության մեջ նա հակում ունի դեպի մարդկային դրաման: Դրամատիկ լարվածությունն ու անկեղծ ապրումները, որոնք կարող են հասնել ողբերգական վախճանի, նա պահպանում է նաև իր ակնարկներում, («Ճերմակներով», 1901, թիվ 44, էջ 693–696, «Բարիզեան տրամներ», 1903, թիվ 24, էջ 373–

377)։ Հայրենաբաղձության զգացումներով է շնչում նրա «Արմանտօ Երամ» ակնարկը՝ Ֆլորենցիայում բնակվող մի կույր հայ փաստաբանի մասին (1902, թիվ 48, էջ 757–763)։ Ջիֆթե-Սարաֆը ևս գավառական գրականության նախանձախնդիրներից է։ «Շահարիկ» ստորագրությամբ նա «Մասիսում» տպագրել է «Գաւառացի կինը» հոդվածը և «Հարիւր ոսկիի համար» նորավեպը (1903, թիվ 26, էջ 413–415, 1904, թիվ 32, էջ 508–511)։ Նա անդրադառնում է գավառում հայ կնոջ իրավազուրկ վիճակին և առհասարակ հետամնաց բարքերին, որպիսիք պատկերում է կենսական իրողությունների հիմքի վրա։

Գավառական գրականության զարգացումը ազգային ակունքներին վերադառնալու միջոցով էր պատկերացնում «Մասիսի» հեղինակավոր գրողներից մեկը՝ Թլկատինցին (Հ. Հարությունյան)։ «Գեղի նամակներ» ակնարկում նա առանց գունազարդման, բայց և առողջ կենսազգացողությամբ արժանին է հատուցում գյուղացու բարոյական մաքրությանն ու աշխատանքին (1905, թիվ 21, էջ 201–203)։ Գավառական գրականության դրվագներ է վերարտադրում նաև նրա «Ուր փնտռել առաքինութիւնը» ակնարկը՝ «Մասիսի» 1906 թ. հուլիսի համարներում։ Թլկատինցին այս նույն՝ գավառական գրականության ազգային ավանդույթների տարածումը նկատի ուներ, երբ «Մասիսում» սկսեց տպագրել Նաղաշ Հովնաթանի տաղերը («Գաւառական բանաստեղծութիւն» խորագրով, շաբաթաթերթի 1908 թ. համարներում)։

«Մասիսում» իր տաղանդին արժանի նորավեպերով, գրաքննադատական ու հրապարակախոսական հոդվածներով հանդես եկավ Զապել Եսայանը։

Զ. Եսայանի նորավեպերը շնչում են զգացմունքների թափով, անգամ անսովոր չափերի ու ցնցող դրվագներով («Ախտաւոր հոգիներ», 1903, թիվ 3, էջ 36–38), կանացի նուրբ զգայնությամբ («Մոլորումը», 1907, թիվ 28–29, էջ 557–561, թիվ 32, էջ 633–636)։ Գրողը դիմում է նաև սուր հակադրությունների՝ միայնակ հոգիների դրաման մոտ տարածության վրա ցուցադրելու նպատակով, որ առավել հասկանալի է դառնում նրա մարդասիրական զգացումների դրսևորումներով («Ապուշը», 1903, թիվ 7, էջ 104–106), անհասի ու միջավայրի տարընթաց շարժման ու ընկալումների շեշտադրումնե-

րով և այլն: Վերջին թեմաները Զ. Եսայանը շոշափում է նաև իր այլ նորավեպերում, ինչպես և «Էջ մը Պալգաքի կեանքէն» հոդվածում (1905, թիվ 12, էջ 180–184):

«Մասիսը» թարգմանական ուրույն քաղաքականություն է վարել՝ իրականացնելով հայ ընթերցողին օտար գրականություններին հաղորդակցելու իր ծրագիրը: Ամենից շատ «Մասիսը» տպագրել է ֆրանսիացի հեղինակներին, հետևելով արևմտահայ գրողների ու գրաքննադատների ավանդական կողմնորոշմանը: Միայն ֆրանսիական գրականությունից տպագրել է կամ գրական գնահատականներ տվել շուրջ չորս տասնյակի չափ հեղինակների, որոնք ճնշող մեծամասնությամբ ժամանակակից գրողներ են: Տպագրվել են Մոլիերի, Ռիշբենի, Պ. Բուրժեի, Ֆ. Կոբեի, Ա. Թեորիեի, Ժ. Նորմանի, Ժ. Ռամոյի, Պ. Լոթիի, Լ. Թենսոյի և այլոց արձակ ու չափածո գործերը: Անգլիական գրականությունից թարգմանվել են Բայրոնի, Ուայլդի, Ջոսերի, Շելլիի և ուրիշների, գերմանական գրականությունից՝ Ուլանդի, Շմաբի, Հայզեի, Ռոզեգրի, Լեսինգի, ռուս գրականությունից՝ Մ. Լերմոնտովի, Մ. Գորկու, Ա. Չեխովի, Լ. Անդրեևի, Մամին-Սիբիրյակի և այլ հեղինակների գործերը: Օտար գրական երկերի թարգմանություններով ամենից շատ հանդես է եկել Զիֆթե-Սարաֆը, որին հետևում են Տ. Ելքենճյանը, Ենովք Արմենը, Ռ. Սամիկյանը, Հ. Նազարյանը, Ռ. Պերպերյանը, Մ. Մեծարենցը, Մ. Պարսամյանը, Ե. Գուլանճյանը և ուրիշներ: Ֆրանսերենից արված թարգմանությունների թվական գերակշռությունը հանդեսում վկայում է, որ նրա հեղինակները ամենից շատ հետաքրքրվում են ֆրանսիական անցյալի և ժամանակակից գրական երկերով ու առհասարակ գրականության զարգացման ընթացքով: Վերը խոսվեց ֆրանսիական սիմվոլիզմի և դեկադանսի հանդեպ «Մասիսի» ցուցաբերած հետաքրքրության մասին, որին հարկ է ավելացնել այն, որ ֆրանսիական գրական դեմքերը «Մասիսում» ներկայացվում են ոչ միայն թարգմանաբար, այլև վերլուծական հոդվածներով ու այլ հրապարակումներով: «Մասիսի» հեղինակները քննարկում են Գոնկուր եղբայրների, Բալզակի, Ա. Ֆրանսի, Շ. Վագների, Մ. Ռոլինայի, Ս. Պրյուդոմի, Օ. Միրբոյի, Ժ. Վեռնի, Պրևոյի և շատ ուրիշների գործերը: Ընդամին, «Մասիսի» գրաքննադատները նախապատվություն չեն տալիս այս կամ այն գրական ուղղությանը, այլ փորձում

են բացահայտել տվյալ ուղղության և իրականության միջև առկա փոխհարաբերությունները՝ որոշ դեպքերում դիտարկման առաջնային առարկա դարձնելով գրական երկի բարոյական արժեքը: Մյուս դեպքերում՝ այդ արժեքի գեղագիտական մատուցման կողմը, հատկապես ձևը կամ արվեստը:

Արևմտահայ գրաքննադատության հասունացման կամ բարձր մակարդակի արգասիքներից էին Տ. Զյոկյուրյանի հոդվածները ֆրանսիական գրականության և նրա տեսաբանների վերաբերյալ: Նա հատկապես ինքնուրույն և քննադատական մոտեցում է հանդես բերում Ի. Թենի գեղագիտական հայացքների գնահատման հարցում: Նա ամենայն իրավամբ, Թենին դասում է Սենտ-Բյովի և Ռընանի շարքը, նկատում, որ առաջինը գրաքննադատությունը ենթարկել է գիտական որոշակի կանոնների, որոնք բխում են արվեստի գործերի գնահատման երեք մեկնակետից՝ ցեղը, պահը և միջավայրը: Միաժամանակ, Զյոկյուրյանը նկատում է Թենի այս եռակողմ սխեմայի սահմանափակությունը:

Գրողի կենսագրության և ստեղծագործության՝ վերոհիշյալ ներքին կապերից ելնելով, «Մասիսը» գրեթե միշտ թարգմանական գործերը ներկայացնում էր հեղինակի կենսագրության հետ միասին: Ենովք Արմենը եւ ամերիկյան դասական Է. Պոյի «Ծովափին աղջիկը» բանաստեղծությանը (1901, թիվ 51, էջ 803) կցել է նրա կենսագրությունը: Ավելին, շաբաթաթերթի կարծիքով, եթե կենսագրական հիմքն անհրաժեշտ է հեղինակին առավելագույնս ընկալելու համար, ապա այն կարող է դառնալ նաև ուսումնառության դպրոց: Ուշագրավ է, որ Տ. Ելքենճյանը ամերիկյան մեկ այլ դասականի՝ Լոնգֆելլոյի ստեղծագործությունը հայ գրողների համար գործոն էր համարում, հաղթահարելու ֆրանսիական պոեզիայի համատարած ազդեցության միակողմանիությունը՝ տեղի տալու, որ «ուրիշ ազդումներու եւ թարգմանիչներու աչքերն ուղղուէին քիչ մ՚ալ ուրիշ կողմեր» (1905, թիվ 23, էջ 358): Այլ հրապարակումներում «Մասիսը» ծանոթություններ է տվել գերմանական, իտալական, լեհական, ռուսական, նորվեգական և այլ ազգերի գրականությունների մասին, միշտ նկատի առնելով գրական ու գրականագիտական տեղեկատվության նշանակությունը հայ գրականության մեջ արդիական արժեքներ ստեղծելու ճանապարհին:

«Մասիսի» լրատվական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը, հատկապես Տ. Արփիարյանի խմբագրության տարիներին, մնում էր ոչ վաղ անցյալի ազգային մշակույթի, մամուլի և գրականության գործիչների վաստակի վերհանումը, մտավոր ու մշակութային շարունակական կապերի ապահովումը ժամանակի իրականության և այդ գործիչների միջև: «Մասիսը» քանիցս անդրադարձել է Հ. Այվազովսկու, Հ. Պարոնյանի, Մ. Մամուրյանի, Ստ. Ոսկանյանի, Կ. Փանոսյանի, Հ. Ջամուռճյանի, Ղ. Պալըգաշարյանի, Հ. Հաճյանի, Կ. Ութուճյանի և շատ այլ երևելի անձանց կենսագրական ու ստեղծագործական գործունեության այս կամ այն կողմին՝ միանգամայն ուրվագծելով նրանց միջավայրն ու ձևավորման ակունքները: Հաճախ «Մասիսը» զուգահեռներ է անցկացնում տասնամյակներ առաջ հայ հանրության ու նրա գործիչների առջև ծառացած խնդիրների և իր ժամանակի իրականության միջև, կանգ է առնում կենցաղի, բարքերի ու մտածելակերպի տարբերությունների վրա՝ ի նպաստ արդիականության առավելագույն ճանաչողության: Այդ նպատակն էին հետամտում նաև «Մասիսի» հարցարանները ուղղված ճանաչված մտավորականներին:

«Մասիսը», փաստորեն առաջին անգամ մեզանում, սկիզբ էր դնում արդեն դասական դարձած հայ գրողների ու գործիչների վերհանման ու նրանց վաստակի ուսումնասիրության գործին: Դեռևս 1900 թ. շաբաթաթերթը ծանուցում էր ընթերցողներին, որ Պադուայի համալսարանի ուսանող Պասմաճյանը «Բազմավէպում» ձեռնարկել է Հ. Պարոնյանի ստեղծագործության ուսումնասիրությանը, և որ նույնն է անում Հրանտ Ասատուրը՝ կարևորելով հանճարեղ երգիծաբանի մասին նոր սերնդին «ճաշակ ու գաղափար» տալու խնդիրը (1900, թիվ 19, էջ 200): Ընդ որում, «Մասիսը» հետևում է այս ուղղությամբ տարվող աշխատանքներին: Երկու տարի անց, Տ. Արփիարյանը ոչ առանց հիասթափության, նշում է որ Պարոնյանի երկար սպասված կենսագրականները դեռևս չկան: Շարունակելով այս թեման, «Մասիսի» խմբագիրը հայտնում է, որ 1902 թ. կարելի է արձանագրել որոշ հաջողություններ՝ «Լույս»-ում Ա. Ալպոյաճյանը տպագրել է Ա. Հայկունու կենսագրականը, իսկ Վ. Թորգոմյանը հայ բժիշկների կենսագրությունները հասցրել է մինչև Ն. Ռուսինյան: Ինքը՝ Տ. Արփիարյանը, դրվագներ է հիշում Ա. Հայկունու

խմբագրական կյանքից՝ վկայակոչելով նրան ժամանակակից «գրչի» մի մարդու (1903, թիվ 2, էջ 17–19):

«Մասիսի» էջերում մամուլի գործիչների մասին հետաքրքրական հրապարակումներով հանդես է եկել Ա. Ալպոյաճյանը: «Էջ մը մեր հին լրագրութենէն» հոդվածում, որ նա գրել է Զմյուռնիայի «Արշալոյս Արարատեան» թերթի (1840–1884) առաջին խմբագիր Ղ. Պալդազարյանի հիշատակին, նա վերջինիս գնահատում է իբրև Թուրքիայում հայ մամուլի սկզբնավորողներից մեկի և աշխարհաբար գրական լեզուն ու դպրոցը ժողովրդականացնողի:

Ստ. Ոսկանյանի, Մ. Մամուրյանի, Ղ. Պալդազարյանի և այլոց ազգային նշանակությունը բացահայտելով, «Մասիսն» ընդգծում էր Զմյուռնիայի հայ գաղթօջախի մշակութային խոշոր արժեքը ազգային հոգևոր կյանքում: Ինքը՝ Ա. Ալպոյաճյանը, հայ մամուլի պատմության համար արժանահավատ և ուշագրավ տեղեկություններ է տալիս նաև ի դեմս արևմտահայ մի շարք այլ գործիչների: Այսպես, առ այսօր շատ քիչ տեղեկություններ ունենք պոլսահայ երգիծական հրապարակախոսության հիմնադիրներից մեկի՝ Հակոբ Հաճյանի մասին և այդ քչի համար իսկ պարտական ենք Ա. Ալպոյաճյանին: Հ. Հաճյանը՝ Հ. Սվաճյանի և Հ. Պարոնյանի ժամանակակիցը (վախճանվել է 1903 թ.), 1870-ական թթ. խմբագրել է «Միմոս» գավեշտաթերթը: Ա. Ալպոյաճյանը հայտնում է, որ նա գրել է «Բեռայի գիշերները» և «Հեղինէն» վեպերը, որոնք «բաւական հաւնըւած են՝ իրական կեանքի պատկերներ ցուցադրելուն համար» (1903, թիվ 16, էջ 246):

«Անհետացող դէմքեր» խորագրի տակ «Տիգրան Ճիվէլէկեան» հոդվածում Ալպոյաճյանը բավական տարողունակ տվյալներ է հայտնում հայատառ թուրքերեն հայ մամուլի գործիչ Տ. Ճիվելեկյանի և նրա հետ միասին նույն բնույթի մամուլի մի այլ գործչի՝ Հովսեփ Վարդան փաշայի (Հովսեփ Վարդանյանի՝ «Մէճմուայը հաւատիս» թերթի խմբագրի, «Թէրճէմանը էֆքեար» թերթի աշխատակցի, «Ագապի» վեպի հեղինակի) մասին: Մեզանում, ինչպես հարկն է, հայատառ թուրքերեն հայ մամուլն ուսումնասիրված է միայն մասնակիորեն, ուստի, այս առումով լրատվական արժեք ունեն Ալպոյաճյանի ոչ միայն այս, այլև մյուս տեղեկությունները XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների առաջատար

հայատառ թուրքերեն թերթի՝ «Ճերիտէի շարգիյէ»-ի վերաբերյալ: Հայատառ թուրքերեն հայ մամուլի մի այլ խոշոր գործչի՝ Կ. Փանոսյանին է նվիրված Տ. Արփիարյանի «Հինէն ու նորէն» հոդվածը (1905, թիվ 6, էջ 91–93): Տ. Արփիարյանը բարձր է գնահատում նրա խմբագրական շիտակությունը, համարձակությունն ու առաքինությունը:

Հայ մամուլի գործիչների դիմանկարային շարքը լրացնում են Ա. Անտոնյանի ուրվագծերը Հովհ. Ջամուռճյանի (1907, թիվ 14, էջ 265–272) և Ա. Ալպոյաճյանի հրապարակումը Հ. Ալաճաճյանի («Փունջի» խմբագրի) մասին: Դրանցում սկզբնաղբյուրի արժեք ունեցող տեղեկություններ կան 1850–1860-ական թթ. հայ մամուլի և լրագրության վերաբերյալ:

Բուն իսկ «Մասիսի» շուրջ հիսնամյա պատմության (1850–1900), պարբերականության և կրած փոփոխությունների մասին մատենագիտական արժեք ունի Ա. Ալպոյաճյանի «Յիսնամեակ մը» հոդվածը (1901, թիվ 5, էջ 65–69): Այստեղ սեղմ և ճշմարտացի բնութագրվում են պոլսահայ մամուլի զարգացման առանձին շրջանները, ժամանակը, միջավայրը և հրապարակախոսները:

Հայ մամուլի և նրա խմբագիրների, հրատարակիչների և առհասարակ լրագրության վերաբերյալ «Մասիսի» այլ լրջմիտ հրապարակումները նկատի առնելով, առանց վերապահության կարելի է ասել, որ դրանք հող նախապատրաստեցին XX դարի հայագիտության այս բնագավառի հետագա ուսումնասիրությունների համար: Նույնը կարելի է ասել նաև ազգային մշակույթի այլ ճյուղերի՝ երաժշտության, թատրոնի, դպրոցի, թարգմանական արվեստի վերաբերյալ, որտեղ նույնպես պատկառելի երախտիք ունի XX դարի սկզբներին հրատարակված այս գրական շաբաթաթերթը:

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ» (1900–1909)

Մ. Մամուրյանի մահվանից հետո «Արեւելեան մամուլի» խմբագրությունը ստանձնեց որդին՝ Հրանտ Մամուրյանը: Նրա խմբագրության ժամանակ «Արեւելեան մամուլը» կարողացավ պահպանել իր գրական և հասարակական լուրջ նշանակությունը XX դարի առա-

ջին տասնամյակի պարբերական հրատարակությունների մեջ: 1903–1909 թթ. պարբերականը վերածվեց շաբաթական հանդեսի:

«Արեւելեան մամուլին» աշխատակցել են ժամանակի լավագույն գրական ու հրապարակախոսական ուժերը՝ Ռ. Զարդարյանը, Թլկատինցին, Արտ. Հարությունյանը, Հ. Գազանճյանը, Զ. Եսայանը, Հ. Ալփիարը, Օ. Զիֆթե-Սարաֆը, Ռ. Որբերյանը և ուրիշներ: Նրանց շնորհիվ հանդեսը պահպանեց իր հեղինակությունը ամենից առաջ գրական ու գրաքննադատական անդաստանում և հրապարակախոսության մեջ՝ բազմակողմանիորեն ներկայացնելով Զմյուռնիայի, Կ. Պոլսի և Արևմտահայաստանի ազգային իրականությունը:

«Արեւելեան մամուլի» էջերում լուսաբանվել են Զմյուռնիայի հայերի գավառական վարչության և ազգային այլևայլ հաստատությունների գործունեությունը: Հանդեսն առավելապես ուշադրություն է դարձրել ս. Լուսավորչյան հիվանդանոցին, որին վերաբերող նյութերը զուրկ չեն նաև քննադատական ուղղվածությունից՝ ի շահ այդ հաստատության բարեկարգման: Հանդեսը ուշադրություն է դարձնում աղքատախնամ ձեռնարկումների կարևորությանը, նկատի առնելով նաև, որ ս. Լուսավորչյան հիվանդանոցում առավելապես պատսպարվում էին համայնքի չքավոր խավերին պատկանող մարդիկ: Գ. Պուպլին իր «Ճշմարիտ ողորմութիւնը» հոդվածում (1900, թիվ 23, էջ 918–920) հատկապես մատնացույց է անում Զմյուռնիայի «մորթաքիայի» (աղքատների համար կառուցված կացարան) «անկման վիճակին» և հասարակությանն առաջարկում է ընդօրինակել հրեա բարեգործներին, որոնք երկարաժամկետ և մատչելի վարկով ազգակից աղքատներին բնակարան են հատկացնում և նրանց դարձնում սեփականատերեր: Պուպլին առաջարկում էր այդ նպատակով կազմել բարեգործական ընկերություն, որը տնակներ կպատրաստեր կարիքավորների համար: Այդպիսի ընկերություն ստեղծելու կոչը մնաց անարձագանք, ավելին, տեղական հայ հարուստների աղքատախնամ ջերմությունը շարունակում էր սառչել՝ դատելով հանդեսի նյութերից:

Հանդեսի էջերում կարելի է հանդիպել ուշագրավ լրատվության՝ Զմյուռնիայի ընկերությունների, մանկապարտեզի և այլ հաստատությունների մասին, ընդսմին, այդ հրապարակումների մեծ մասը հագեցած է քննադատական լիցքով: «Անյարատեւութիւն» խմբագրականում ցույց է տրվում գործելու եռանդի պակասը զմյուռնահայերի մեջ (1901, թիվ 21, էջ 857–861), անկյալ վիճակում

էր 1886 թ. հիմնված «Արեւելեան ակումբը», նույն վիճակում էր մարզական «Թենիս» ակումբը, որ այդ միայն «օտարներու ժամադրավայր մը եղած է»: Համայնքում ամեն մի ձեռնարկում կիսատ է մնում, եզրակացնում է «Արեւելեան մամուլը», որովհետեւ չկա հետեւողականություն: Սակայն հանդեսի որոշ նյութեր տալիս են նաեւ դրա հակառակ օրինակները: Ծրախուսվում է կանանց «Կրթասէր» ընկերությունը, որի ջանքերով 1890 թ. Զմյուռնիայում հիմնվել էր մանկապարտեզ: Գ. Պուլլին՝ զմյուռնահայ այդ հեղինակավոր հրապարակախոսը, կոչ էր անում նյութապես սատարել «Կրթասէր» ընկերությանը՝ նրա ազգօգուտ գործունեության համար (1905, թիվ 6, էջ 189):

«Արեւելեան մամուլը» խրախուսում էր հանրությանը օգտակար ամեն մի երեւույթ. նրա դրվատանքին էր արժանացել բժիշկ Սալփրթային, որն իր գործընկեր Ա. Ջելեպյանի օժանդակությամբ Զմյուռնիայի Հայոց թաղում հիմնել էր կլինիկա՝ դարմանատուն, նորագույն բժշկական սարքավորումներով (1902, թիվ 23, էջ 995):

Այսուհանդերձ, համայնքի ազգային կյանքում «Արեւելեան մամուլն» ամենից շատ ուշադրություն էր դարձնում վարժարաններին, այդ թվում եւ շրջակայքի ուսումնակրթական կացությանը:

Հանդեսի Նուրհան ստորագրող հեղինակը (Հ. Մամուրյան) իր մի հոդվածում քննադատում էր զմյուռնահայ դպրոցների վիճակը, ուսումնական հնացած ծրագրերը: Նա լուսաբանում էր նաեւ խնդրի սոցիալական կողմը՝ դպրոցները նյութական միջոցներ չունեն, իսկ ուսուցիչներն իրավազուրկ են եւ արհամարհված: Նուրհանը արդարացի եւ լուրջ դիտողություններ էր անում ապազգայնացնող՝ Քարափի (Զմյուռնիայի հայ հարուստների նոր թաղամասը՝ ավանդական Հայնոց թաղից հեռու) մեծահարուստներին, որոնք արհամարհանքով էին վերաբերվում չքավոր հայրենակիցներին (1904, թիվ 7, էջ 169–172): Իր մեկ այլ հոդվածում Նուրհանը զմյուռնահայ դպրոցների նյութական պակասը կապակցում էր օտարամոլության հետ: Ժողովրդի ստորին խավերի երեխաներին կրթության տալու մտահոգությամբ՝ նա առաջարկում էր զմյուռնահայ երկսեռ վարժարանները վերածել նախակրթարանի, որով եւ տարրական կրթություն կստանային ոչ ունեւոր խավերի զավակները (1900, թիվ 22, էջ 887–892):

1900-ական թթ. այս թեմայով «Արեւելեան մամուլի» տպագրած նյութերը հետամտում են ազգային դպրոցի զարգացումը, հատկապես մեծահարուստների օտարամոլության բացահայտումը եւ

աչքի են ընկնում աշխատավորական խավերի կրթության ու դաստիարակության համար իրենց պարունակած գործնական առաջարկներով:

Մի հայտնի չափով «Արեւելեան մամուլի» էջերում արտացոլվել է գմյուռնահայ համայնքի հասարակական կյանքը՝ գավառական ժողովի գործունեությունը, մարդկանց վերաբերմունքը տեղական ազգային կառույցների հանդեպ և այլն: Տեղական գավառական ժողովը իր ազդեցիկ և հարուստ ազգայինների կազմով, միօրինակ գործելակերպով ու շրջակա թեմերի հանդեպ անտարբեր կեցվածքով, տեղի էր տալիս «Արեւելեան մամուլի» արդարացի քննադատությանը: Այսուհանդերձ, պարբերականը համեմատաբար քիչ է անդրադարձել գմյուռնահայ հասարակական իրականությանը և թերևս, սա պետք է համարել նրա բովանդակության թերի կողմերից մեկը: Տեղական լրատվությունից և նյութից առավել «Արեւելեան մամուլը» նախապատվությունը տալիս էր գմյուռնահայ բարքերի բարոյախոսական քննադատությանը: Զուտ բարոյախոսությամբ են ներծծված Նուրհանի «Ճերմակ ու սեւ» խորագրով ակնարկները, որոնք, ըստ էության ժամանակի մարդկանց դիմաստվերներն են, զուրկ, սակայն, որոշակիությունից: Այս ակնարկներում ընդհանրապես քննադատվում են քաղքենիական բարքերը, ընտանիքի, առօրյա հարաբերությունների սովերոտ կողմերը և այլն: Երբեմն Նուրհանն իր ակնարկաշարում անդրադառնում է կոնկրետ անձանց, գմյուռնահայ կրթական ու բարեգործական հիմնարկներին, սակայն նրա շարադրանքում գրեթե միշտ գերիշխում է բարոյախոսական պաթոսը: Խնդրի բազմակողմանի քննարկմանը նպաստեց Սիպիլն իր «Հարցում մը» առաջադրումով (1903, թիվ 15, էջ 341–344), որտեղ հարցում էր արվում և՛ կնոջը, և՛ տղամարդուն՝ որոշելու նրանց գնահատած հատկանիշները հակառակ սեռի մեջ: Սիպիլը հետևում էր ֆրանսիական «Լա ֆամի» պարբերականին, որը նույն հարցադրումով էր հանդես եկել դրանից մեկ տարի առաջ: Զմյուռնահայ ընտանիքների հոռի բարքերն էր երգիծում հանդեսի աշխատակից Հ. Ալփիարը՝ իր սրամիտ ֆելիետոններում:

«Արեւելեան մամուլը» ժամանակակից բարքերի անկմանը հակադրում էր գմյուռնահայ ոչ վաղ անցյալի նշանավոր դեմքերին, ընթերցողին ծանոթացնում նրանց կենսագրությանն ու գործունեությանը: Այս կարգի նյութերն ունեն ճանաչողական որոշակի նշանակություն և այսօր էլ կարող են նպաստել գաղթօջախի ու նրա մշա-

կույթի պատմության ուսումնասիրությանը: Այդպիսի հրապարակումներից է Արտ. Հարությունյանի գրական դիմաստվերը՝ նվիրված Գալուստ Կոստանդյանին: Զմյուռնացի փիլիսոփայի գործունեության բնութագիրը լրացնում է Մ. Նուպարյանը իր «Գալուստ Կոստանդեան (անձնական յիշատակներ)» հոդվածով (թիվ 9, էջ 401–411): Նա գրում է, որ Գ. Կոստանդյանն իր գրադարանը՝ 1540 կտոր գիրք, նվիրել է Զմյուռնիայի հունական ընթերցատանը, որովհետև, նվիրատուի կարծիքով, տեղի հույն համայնքը հայերից ավելի շատ էր գնահատում ուսումն ու առաջադիմությունը:

Նույնպիսի հրապարակումներ է նվիրել «Արեւելեան մամուլը» Մ. Մամուրյանին, Գ. Շահինյանին և զմյուռնահայ այլ գործիչների: 1850–1860-ական թթ. զմյուռնահայ գործիչների դիմաստվերների մեջ հաջողված է հատկապես Տիգրան Հարություն Տետեյանի մասին Մ. Նուպարյանի հոդվածը, որտեղ հեղինակը, նրա ժամանակակիցն ու բարեկամը, վերհանում է նրա տպագրական ու թարգմանչական գործունեության համազգային նշանակությունը (1901, թիվ 3, էջ 97–104, թիվ 5, էջ 190–194):

«Արեւելեան մամուլը» մշտապես հարուստ և բազմակողմանի լրատվություն է տվել գրական ու մշակութային իրողությունների, ինչպես և մտավորականության մասին: Այս թեմայով հանդեսին կանոնավորապես թղթակցում էին «Շահնուրի բարեկամը» և «Վագինակ» ստորագրողները, ինչպես նաև «Սէթը» և «Փարհատ Նորիսը»: «Շահնուրի բարեկամը» քննադատական առողջ դիտողություններ էր անում Կ. Պոլսի ազգային հաստատությունների, Կ. Պոլսի պատրիարքության և Երուսաղեմի միաբանության փոխհարաբերությունների, այս վերջինի ինքնագլուխ կեցվածքի և դրանից բխող անվերահսկելի ծախսերի և այլնի վերաբերյալ: Ե՛վ «Շահնուրի բարեկամը», և՛ Վագինակը խորհրդածում են պոլսահայ մամուլի մասին, ցույց տալիս ժամանակի արևմտահայ լրագրությանը հատուկ մի քանի ընդհանուր թերություններ, ինչպիսիք էին թեմաների միօրինակությունը, կարևոր հիմնահարցերի պակասը գավառական թղթակցություններում, կասկածելի տվյալներն ու կողմնակալությունը հրապարակումներում և այլն (1903, թիվ 25, էջ 591–595, 1904, թիվ 7, էջ 181–185):

Հայ մամուլի պատմության ուսումնասիրության հաջողված փորձ է Ա. Ալպոյաճյանի «Կրօնական թերթերը մեր մէջ» ընդարձակ հոդվածը (1905, թիվ 13, էջ 351–353, թիվ 14, էջ 374–378, թիվ 15,

էջ 399–403): Հեղինակը հետաքրքիր բնութագրեր է տալիս Հ. Տերյենցի «Երեւակին», «Ցոյս» և «Սիոն» թերթերին և այլն: Կարելի է չհամաձայնել Ա. Ալպոյաճյանին՝ ազգային եկեղեցու կրոնաթերթերի սկզբնավորման պատճառների հարցում, երբ նա ակնհայտորեն գերագնահատում է բողոքական մամուլի դեմ հայ եկեղեցու մղած պայքարը, սակայն և անվիճելի է, որ կրոնական մամուլի պատմության այս հետազոտությունը մեզանում մնում է իբրև եզակի օրինակ՝ առ այսօր:

Հայ մամուլի հանդեպ տրամագծորեն այլ, գրեթե ամբողջովին բացասական վերաբերմունք ունի «Արեւելեան մամուլի» վաղեմի աշխատակից Կ. Ստեփանյանը: Մասնագիտությամբ իրավաբան այդ հեղինակի հաճախադեպ և ծայր աստիճանի չարությամբ լեցուն հրապարակումները գրամոլությունից և լուտանքներից այն կողմ չեն անցնում: Հայ մամուլը նա համարում է ընդամենը անշնորհք ընդօրինակություն՝ զուրկ սեփական որևէ արժեքից: Նույն նիհիլիստական տեսակետն ունի զմյուռնացի այս տարօրինակ գրագետը հայ գրականության և գրաքննադատության, թատրոնի, երաժշտության, դպրոցի և այլնի մասին (1905, թիվ 28, էջ 705–710, թիվ 30, էջ 753–758):

«Արեւելեան մամուլին» աշխատակցել են մի շարք գրողներ՝ Ռ. Զարդարյանը, Թլկատինցին, Զ. Եսայանը, Ռ. Որբերյանը, Զիֆթե-Սարաֆը, Հ. Ալփիարը և ուրիշներ: Դրա շնորհիվ հանդեսը ստացավ գրական ու գրաքննադատական բովանդակություն, որ Մամուրյան-Հոր հանդեսի արժեքավոր ավանդույթների շարունակությունն էր նշանակելու: Ռ. Զարդարյանը նախապատվությունը տալիս է գավառական կյանքի գեղարվեստական պատկերմանը: Նրա «Պուտ մը ջուր», «Տէրտէրին հարսը», «Մրտենց տղաքը» և այլ պատմվածքներում հանդես են գալիս ռոմանտիկ շնչով, բայց և դրամատիկական լարվածությամբ հատկանշվող իրական հերոսներ:

Արևմտահայաստանի բնության, միջավայրի և հայ մարդու ներքին ներդաշնակության, գյուղական կյանքի դրվագներով է ուրվագծվում նաև Թլկատինցու պատկերած աշխարհը: «Տունդարձը», «Ճամփորդն ու ճամփեցնողները», «Ամառին արմաղանը» և այլ պատմվածքներում Թլկատինցին բացահայտում է հայ գավառական կյանքի ծալքերը, դրանց խորքերում դժվարին իրականության դեմ հանդիման կանգնածների ներաշխարհի հակասությունները: Իր գեղարվեստական և հրապարակախոսական գործերում Թլկատինցին

անդրադարձել է պանդխտության չարիքին, հատկապես Ամերիկա գաղթող խարբերդցիների ճակատագրին: Ռ. Զարդարյանի և Թլկատինցու ստեղծագործությունները «Արևելյան մամուլի» գրականությանը տալիս են արդիական նկարագիր և, մյուս կողմից, ցուցադրում այսպես կոչված «գավառական գրականության» կայացումը՝ իրապաշտական բովանդակության և ձևի տեսակետից:

«Արևելյան մամուլի» էջերում շարունակվում էր հյուրընկալվել Ռ. Որբերյանն իր արձակ գործերով ու բանաստեղծություններով: Նրա պատմվածքներում առկա են ռոմանտիկական սյուժեներն ու զգացումները, բայց դրանցում հաճախ ներխուժում են իրական, գավառական կյանքի պատկերները: Նրա արձակ գործերում կան և՛ անհույս սիրո («Նորէն նարկիլէն»), և՛ իրականի ու միստիկականի, պանդխտության ու ճակատագրական չարիքի («Օձու սէրը») մոտիվները (1900, թիվ 23, էջ 901–903, թիվ 24, էջ 940–943): Ռ. Որբերյանի բանաստեղծությունները հաջողված խոհական գործեր են, նաև՝ քնարական, որոնք վկայում են դարասկզբի հայ չափածոյի մեջ նրա ինքնատիպ և մնայուն ներդրման մասին:

Շաբաթաթերթին շարունակում էր աշխատակցել Հ. Ալփիարը՝ 1894-ից ի վեր դեռևս Մ. Մամուրյանի ժամանակներից դառնալով հանդեսի գործուն հեղինակներից մեկը: Ալփիարի երգիծանքը հատկանշվում է իր կենցաղային ուղղվածությամբ, սրամիտ ու անակնկալ շրջադարձերով և ավարտով, որ, այսուհանդերձ, հենվում է իրական ճշմարտությունների վրա: Ալփիարը գրում է թեթև ոճով, անշուշտ, ֆրանսիական երգիծանքի նկատելի ազդեցությամբ ու նրբությամբ: Նրա արտաքուստ գրքային ու անեկդոտային բնույթի հումորը թելադրում է իր կենսականությամբ կաշառող զգացում, որովհետև հեղինակը հիանալի է ճանաչում իր շրջապատը, նրա հերոսներին ու հոգեբանությունը: Ալփիարը բավական հաջողությամբ վերարտադրել է պոլսահայ կյանքի մի քանի կողմերը երգիծական թեթև շեշտադրումներով՝ ծաղրելով երիտասարդության թեթևամտությունը, հասարակության որոշ մասի սնափառությունը, տեղական բարքերը և այլն (1904, թիվ 3, էջ 91–95, 1904, թիվ 8, էջ 209–211): Ճանաչողական լիցք են պարունակում Ալփիարի այն գործերը, որոնք վերաբերում են տեղի մտավորականությանը, նրա լրագրական և ստեղծագործական գործունեությանը:

Ալփիարը հաջողությամբ ծաղրել է պոլսահայ անտաղանդ երգիծաբաններին, որոնք «ամէնէն անհամ խեղկատակութիւնը ստեղ-

ծեցին Պարոնեանի դպրոցը շարունակելու պատրանքին տակ» (1904, թիվ 15, էջ 357): Նույն կերպ նրա գրչի թիրախն են դարձել միմյանց հար և նման քրոնիկագիրները, գավառական լրագրողներն իրենց անձուկ տեսադաշտով ու միապաղաղ թղթակցություններով, նմանակելու ճիգերով և այլն: «Արեւելեան մամուլին» Ալփիարն աշխատակցել է իր հայտնի «Քրիզանթէմ» ծածկանունով:

1903–1908 թթ. «Արեւելեան մամուլում» իր ստեղծագործությունններն է տպագրել Զ. Եսայանը: Նրա ծավալուն արձակ գործերից այստեղ տպագրվել են «Կեղծ հանճարները», «Սկիւտարի վերջալոյսները», ինչպես և մի շարք նովելներ՝ «Սատարօֆ», «Աչքերը», «Հանելուկը», «Փոթորկի օր մը» և այլն: Հայ նորավիպագրությունը Եսայանը հարստացնում է իրապաշտական նոր գծերով և հատկապես հոգեբանական նոր շերտեր հայտնաբերելով միջավայրի ու անհատի փոխհարաբերություններում: Ժամանակի հայ գրաքննադատական մտքի խորացմանը տաղանդավոր գրագիտուհին նպաստեց 1905 թ. հանդեսում տպագրած «Գրական նոր ձգտումներ Ֆրանսայի մէջ», «Խորհրդապաշտները եւ Ռընե Կիլ» գրաքննադատական հոդվածներում, որտեղ արժեքավորում էր ֆրանսիական գրական նորագույն ուղղությունները՝ հատկապես անդրադառնալով դեկադանսի ու սիմվոլիզմի դրսևորումներին:

Արևմտյան դեկադանսի և սիմվոլիզմի գեղագիտական արժեքի մասին «Արեւելեան մամուլում» հանդես է եկել Արտ. Հարությունյանը: «Ֆրանսական գրականութիւն» հոդվածում (1903, 15 փետրվարի, էջ 148–151) նա դեկադանսը համարում է «հիվանդագին ու նրբին զարգացման արտայայտութիւն, բարեշրջման ուշագրաւ փուլ մը» գրականության մեջ: Նկատի առնելով դեկադանսի հանդեպ հայ գրողների տեսական ու գործնական հետաքրքրասիրությունը, Արտ. Հարությունյանը նրանց ուշադրությունն ուղղում էր դեպի այդ ուղղության տեսական հիմքերը: Այս բացը մասամբ լրացրել է ինքը՝ Արտ. Հարությունյանը, թարգմանելով ֆրանսիական գրող և դեկադենտ Ռ. դը Գուրմոնի «Դիմակներու գիրքը»՝ խոստանալով «Արեւելեան մամուլի» էջերում թարգմանաբար ներկայացնել հատվածներ այդ գործից (1903, ապրիլի, հունիսի և հոկտեմբերի համարներում): Դեկադանսի արվեստի անհատապաշտությունը ևս Արտ. Հարությունյանը ի վերջո ծառայեցնում է ազգային գրականության նկարագրին, «ցեղայնութեան եւ ինքուրոյնութեան առողջ ու կենսունակ գաղափարին» (1902, թիվ 17, էջ 731): Այստեղից՝ գավառի

գրականության, «վաղուան գրականութեան» զարգացման լայն հեռանկարների համակողմանի պաշտպանությունը Արտ. Հարությունյանի քննադատության մեջ:

Գրականության մեջ ռեալիստական սկզբունքների պաշտպանությունն էր շարունակում Ա. Նավարյանը, որն անգնահատելի նրախտիք ունի Շեքսպիրի ստեղծագործությունը հայ իրականության մեջ ժողովրդականացնելու ասպարեզում: 1900-ական թթ. «Արեւելեան մամուլում» Ա. Նավարյանն արդեն հանդես է եկել առավելապես ֆրանսիական գրականության (հատկապես ժամանակակից գրականության) հմուտ գիտակի ու նրա ռեալիստական դպրոցի մեկնաբանության դիրքերից: Ֆրանսիական ռեալիզմը Նավարյանը գնահատում է Բալզակի, Ա. Ֆրանսի, Օ. Միրբոյի, Վ. Սարդուի, Մոպասանի և այլ գրողների ստեղծագործությունների նուրբ և հմտալի վերլուծությամբ: «Բնապաշտական դպրոց» հոդվածում Ա. Նավարյանը բացահայտում է Մոպասանի հզոր տաղանդի առանձնահատկությունները (1903, թիվ 14, էջ 320–322): Նավարյանը բնապաշտությունը դիտարկում է առհասարակ իբրև ռեալիստական ուղղություն և բնապաշտ է համարում բոլոր ռեալիստներին, ինչը ընդունված էր ժամանակի եվրոպական գրաքննադատության մեջ:

Հայ թատրոնի զարգացման մտահոգությամբ՝ Ա. Նավարյանը խորաթափանց գրախոսականներ է տպագրել ֆրանսիական թատրոնի, Սառա Բեռնարի, Մյունե Սյուլլիի և այլոց դերասանական արվեստի վերաբերյալ: Նա նրախտիք ունի ռուս գրականությունը արևմտահայերին մատչելի դարձնելու գործում, և ուշագրավ մեկնաբանություններով է բացահայտել Լ. Տոլստոյի ստեղծագործության մի քանի կողմերը, հիմնավորել այդ գրողի հանդեպ Եվրոպայում ստեղծված մեծ հետաքրքրությունը, վերլուծել Մ. Գորկու «Վանյա» պիեսը և այլն:

Ֆրանսիական ռեալիզմի և հատկապես Զոլայի ստեղծագործության հանդեպ «Արեւելեան մամուլը» Մամուրյան-Հոր ժամանակներից ունեցած իր խիստ բացասական կարծիքը պետք է փոխեր՝ սկսելով Հ. Գազանճյանի ոչ հետևողական, դեռևս տատանվող մոտեցումով: Ըստ այս հեղինակի, Զոլան ոչ թե դրվատում (ինչպես կարծում էր Մ. Մամուրյանը), այլ դատապարտում է իր ցուցադրած կյանքի հոռի կողմերը, բայց ընթերցողը յուրացնում է ոչ թե դրանից բխող ճիշտ եզրակացությունը, այլ հենց այդ հոռի կողմերը (1902, թիվ 24, էջ

1005–1010): Այս մոտեցմամբ, ինչպես տեսնում ենք, փրկվում է Զոլայի, որպես գրողի մեծությունը, բայց ոչ ամենևին՝ նրա ստեղծագործության մեծությունը: Հակառակ Հ. Գազանճյանի, հանդեսի մի այլ հեղինակ՝ Ֆարհատ Նորիսը քննադատում է Բ. Քեչյանի բացասական դիրքորոշումը Զոլայի «անբարոյիկ» գրականության և հայ ռեալիստական գրականության հանդեպ (1902, թիվ 12, էջ 542–547): Փաստորեն մերժելով Զոլային մեղսագրված անբարոյությունը, Ա. Նավարյանը նրա ստեղծագործությունը բնութագրում էր մարդասիրության, տառապյալի «ցավն ամոքելու, անոր ճակատագիրը բարուոքելու» տեսակետից (1903, թիվ 5, էջ 101):

1908 թ. սովորական շաբաթական թվահամարների հետ միասին «Արեւելեան մամուլը» տպագրել է երեք եռամսյա բացառիկ թվեր, որոնք գլխավորապես ունեն գրական և գրաքննադատական բովանդակություն: Դրանցում տպագրվել են նույն հեղինակները՝ Ա. Նավարյանը, Հ. Գազանճյանը, Սիպիլը, Մ. Պարսամյանը, Հ. Ալփիարը, Մ. Մեծարենցը, Հ. Մառքը, և ուրիշներ: Այդ եռամսյանները փաստորեն հանդեսի գրական հավելվածներն էին, որոնք կոչված էին լրացնելու նրա գրական դիմագիծը և հաստատելու նրա տեղը հայ գրականության անդաստանում: Նույն՝ 1908 թ., երիտթուրքական հեղաշրջումից հետո «Արեւելեան մամուլը» դարձել է ռամկավար սահմանադրական կուսակցության համակիր հրատարակություն և ընդդիմացել երիտթուրքական ջարդարար քաղաքականությանը Արևմտահայաստանում, և հատկապես Ադանայի կոտորածների ժամանակ և դրանից հետո՝ 1909 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին: «Արեւելեան մամուլի» հանկարծակի դադարը, թերևս, կապվում է տնօրեն-խմբագիր Հ. Մամուրյանի լրագրական նախասիրությունների հետ: Հավանաբար նույն 1909 թ. նա ձեռնարկեց «Դաշինք» թերթի հրատարակությունը:

«ՄԱՆԶՈՒՄԷԻ ԷՖՔԵԱՐ» (1901–1909)

«Մանզումէի էֆքեարը» Կ. Պոլսում Կարապետ Փանոսյանի հանրահայտ թերթը, դարասկզբին էլ պահպանում էր իր ազատամիտ ուղղությունը: 1901 թ. այն հրատարակվում էր իբրև «օրաթերթ

տավորյան»: Թերթի տեր և տնօրենն էր Հովհաննես Գայսերյանը: Հրատարակվում էր հայերեն և հայատառ թուրքերեն (1902 թվականից՝ հայատառ թուրքերեն նյութեր քիչ են հանդիպում): 1904 թ. և թերևս դրանից էլ առաջ, թերթի խմբագրապետն էր Միսաք Գոչունյանը (Քասիմ): Ե՛վ Հովհ. Գայսերյանը, և՛ Մ. Գոչունյանը նոր մարդիկ չէին հայ մամուլի ասպարեզում: 1870-ական թթ. կեսերից առաջինը հայտնի էր իբրև տպարանապետ, հրատարակիչ և գրավաճառ, իսկ երկրորդը հանրահայտ լրագրող և գրող էր: Դարասկզբից մինչև իր հրատարակության ավարտը թերթը տպագրվել է հայերեն:

«Մանզումէի էֆքեար»-ն աչքի էր ընկնում լրատվական հարուստ բովանդակությամբ և քննարկած հարցերի լայն շառավղով՝ Կ. Պոլսի և Արևմտահայաստանի ազգային կյանք, տնտեսություն, եկեղեցի, դպրոց, գրականություն, արվեստ և այլն: Թերթին աշխատակցում էին ճանաչված հրապարակախոսներ և գրողներ Ա. Անտոնյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Թեոդիկը, Հրանտ Ասատուրը, Ե. Անդրեասյանը, Հ. Գապամաճյանը, Ե. Թոլայանը (Կավռոշ) և ուրիշներ: Այն առանձնանում էր քննադատական որոշ նպատակաուղղվածությամբ, միջին խավերի տնտեսական ու մտավոր բարոյական դրության հանդեպ իր հետաքրքրություններով ու մտահոգությամբ:

Աբդուլ Համիդի գրաքննության պայմաններում թերթը չէր կարող քննության առարկա դարձնել Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության որևէ խնդիր, սակայն վերոհիշյալ սկզբունքները կիրառում էր հայ հասարակական շերտերի բարոյախոսական քննադատության ձևով, ինչը բավական տարածված երևույթ էր ժամանակի արևմտահայ մամուլում: Նրա քննարկումները հիմնականում պտտվում են դպրոցների, թաղական խորհուրդների, քահանաների ու պատրիարքարանի գործունեության շրջանակներում: Կան նաև ավելի լայն մոտեցման դրսևորումներ՝ թերթը մատնացույց էր անում հայ վաճառականության դիզելու տենչը, մեկուսանալը ազգային պահանջմունքներից, ինչպես և բարեգործական ձեռնարկումներից: «Մանզումէի էֆքեար»-ի քննադատությանը միս և արյուն են տալիս նրա գավառական թղթակցությունները: «Պրուսայի առաջնորդը» հոդվածում «Թղթակից» ստորագրողը դատապարտում է և՛ առաջնորդի, և՛ թաղական խորհրդի վերաբերմունքը տեղի հայության եկեղեցական ու դպրոցական գործերի

հանդեպ, որ անշարժության է մատնել Պրուսայի գրեթե մեկ տասնյակի չափ թեմերը (1901, 4 փետ.): Արևմտահայաստանի տնտեսական անմխիթար վիճակը շտկելու համար թերթն ակնկալում էր ոչ միայն վաճառականության ազգասիրությունը, այլև գործնական քայլեր՝ գավառներում ստեղծելու «ապահովագրական սնտուկներ», որ նյութապես կսատարեր հողագործի աշխատանքը:

Իր մի շարք այլ հրապարակումներում «Մանզումէի էֆքեար»-ը կշտամբում էր ազգային դրամատերերին հենց այն պատճառով, որ նրանք անտեսում են գյուղատնտեսական արտադրության համար գերազանց բնակլիմայական պայմանները, իսկ եթե փորձում են գործել, ապա հետամնաց արտադրության գործիքներով ու մեթոդներով: Թերթը վկայակոչում էր օտարների գործունեությունը Թուրքիայում, որոնք «ծխախոտի մշակութեան մենաշնորհը մեր ձեռքէն խլելով»՝ մեծ հաջողությունների են հասել (1906, 26 սպտ.):

Արտադրությունից ոչ պակաս չափով «Մանկումէի էֆքեար»-ին մտահոգում էր Արևմտահայաստանում և Թուրքիայի խոշոր քաղաքներում հայ արհեստավորների տնտեսական վիճակի հիմնահարցը: Արհեստագործությունը նույնպես ոչ եկամտաբեր է դարձել իր հետամնացության և ցածր արտադրողականության պատճառով, որ հաստատում է Հ. Ինկիլիզյանը իր մի հրապարակման մեջ (1901, 26 մյս.): Ելնելով հողագործության, արհեստների և վաճառականության տնտեսական փոխկապվածությունից, այս հեղինակը սրանց զարգացումը հիմքից իսկ սկսելու նպատակով առաջարկում է համապատասխան գիտելիքների ուսուցումը դպրոցներում:

Թերթի հեղինակներից մեկը հայ արհեստավորների ոչ եկամտաբեր աշխատանքի պատճառներից մեկն է համարում առհասարակ Թուրքիայի տնտեսության հետամնացությունը: «Կոշկակարութիւնը և կաշեգործութիւնը» խմբագրականում արժանին է հատուցվում հայ կոշկակարի հմտություններին, որոնց շնորհիվ նա կարող է մրցակցել օտարների հետ, սակայն ամբողջ երկրում չկան արտադրական կարողություններ՝ ո՛չ կաշեգործարաններ, ո՛չ էլ կոշիկի գործարաններ: Այս հեղինակը ևս կոշկագործության զարգացման հնարավորությունները կապում է գյուղատնտեսական արտադրության նորացման հետ (1907, 6 մրտ.):

«Մանզումէի էֆքեար»-ը համեմատաբար քիչ է լուսաբանել Արևմտահայաստանի սոցիալական իրականությունը: Գավառների վերաբերյալ նյութերը հիմնականում տեղագրական, մասամբ ազգագրական բնույթ ունեն և առհասարակ, հետամտում են ճանաչողական նպատակներ: Առանձին հրապարակումներ նվիրված են կրթական և եկեղեցական խնդիրներին: Վերջին դեպքում թերթը ուշադրություն է դարձնում մասնավորապես առաջնորդների գործունեությանը, որից ակնկալում էր ժողովրդի կյանքի բարելավմանը ուղղված քայլեր: Ճանաչողական ընդհանուր նշանակություն ունի Գ. Աշըգյանի «Թօգատ. հնագիտական, տեղագրական, հանքային և ընդհանուր արտադրութեան տեսակէտով» հոդվածը (1906, 10 ապր.): Այստեղ թերթն ընթերցողին է ներկայացնում տեղի բնական հարստությունները՝ ածուխ, երկաթ, պղինձ, ծծումբ, դրանց արդյունահանումը, ելնելով այն տեսանկյունից, որ ընդերքի շահագործմանը պետք է ձեռնամուխ լինեն իրենք՝ հայ դրամատերերը, եթե ձգտում կունենան բարելավելու և՛ իրենց, և՛ ազգակիցների տնտեսական դրությունը: «Մանզումէի էֆքեար»-ը ևս արձագանքել է Արևմտահայաստանի հայ բնակչության բարքերի, բարոյականության, կենցաղի ու հոգեբանության լուսաբանման այն երևույթին, որ տարածված մտայնություն էր ժամանակի արևմտահայ մամուլում: Այս դեպքում ևս, բարքերի առողջացման, ազգային խախտված ավանդույթներին վերադառնալու և գավառական կյանքում քաղաքակիրթ արժեքներ ներմուծելու հարցում թերթը հույս էր դնում հարուստ ազգայինների նյութական օգնության վրա, սակայն ոչ սակավ դեպքերում չէր թաքցնում իր հիասթափությունը նրանց անտարբերությունից:

Հասարակական համապատասխան կարծիք ստեղծելու նույն ձգտումով թերթն իր էջերում տեղ է տվել ընտանիքում և հասարակության մեջ հայ կնոջ տեղի և նրա գործունեության շրջանակներին առնչվող՝ կնոջ ազատագրության խնդիրներին: Վերջին հարցում ծայրահեղությունների դեմ հանդես եկավ Ի. Էքսերճյանը «Աս չէ ֆէմինիզմը» հոդվածով (1906, 20 փետ.): Ֆեմինիզմը ոչ թե կնոջ անսահման ազատություն է ենթադրում, գրում է նա, այլ նրա մտավոր ու բարոյական խելամիտ դաստիարակությունը՝ կնոջ ազնիվ ձիրքերն ընտանիքում զարգացնելու, տղամարդուն հավասար

իրավունքներով ու պարտականություններով օժտելու իմաստով: Այս հեղինակը նկատի ունի նաև կնոջ հասարակական գործունեությունը, երբ առաջ է քաշում նրան ազգայինի հետ եվրոպական դաստիարակություն տալու մտայնությունը: Նույն գաղափարն է պաշտպանում նաև Զապել Ասատուրը իր «Անկեղծ ֆէմինիզմը» տրամախոսության մեջ, նշելով, որ հայ կնոջն անհարիր են ֆեմինիզմի ծայրահեղությունները. մինչդեռ, կինը պետք է ազատվի հնամենի կաշկանդումներից, ընտանիքում օգտվի փոխադարձ վստահության և սիրո հնարավորություններից (1906, 3 ապր.):

Հայ աղջիկների, ինչպես և տղաների կրթության գործում «Մանզումէի էֆքեար»-ը կարևորում է գործնական ուսուցման հիմնահարցը: Այս տեսակետից ուշագրավ է հոդվածների այն շարքը, որ տպագրեց թերթը Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի կրթական համակարգի վերաբերյալ: 1900-ականի սկզբներից թերթը բացահայտում էր այդ վարժարանի ծրագրի թերությունները, դրա ոչ գործնական ու ժամանակավրեպ բնույթը:

Սանասարյան վարժարանը ևս քննադատական լուսաբանումներ է գտել թերթի նյութերում: Ե. Անդրեասյանը իր «Օրուան խնդիրները» խմբագրականում նկատում է, որ նրա տեսուչները շեղվել են բարերարի մանկավարժական ու հասարակական նպատակներից և վատնում են վարժարանի միջոցները (1906, 18 մյս.):

Մի շարք հեղինակներ արժեքավորում են դպրոցներում ոչ միայն գործնական, այլև բարոյական դաստիարակության նշանակությունը: Ուշադրություն է գրավում Ա. Անտոնյանի «Նկարագրի դաստիարակ մը» հոդվածը: Արևմտահայ դպրոցի խոշոր թերությունը նա համարում է անհատի բարոյական նկարագրի ձևավորման անտեսումը (1902, 14 նոյ.):

Ազգային դպրոցների ուսումնակրթական վիճակի բարելավման նույն մտահոգությունն է առկա թերթի այն հրապարակումներում, որտեղ լուսաբանվում է Զմյուռնիայի Ս. Մեսրոպյան և Ս. Հռիփսիմյան վարժարանների կացությունը: Երբեմնի կրթական փայլուն ոստաններով և համազգային նշանակությամբ աչքի ընկնող այս վարժարանները տասնամյակներ շարունակ հետ են մնում հույներից, զիջում են նրանց նախակրթարաններին և «էվանգելիքի» բարձրագույն դպրոցին: Թերթը ցույց էր տալիս, որ Զմյուռնիայի

հայ դպրոցների հետամնացության պատճառը նյութական միջոցների պակասն է: Եթե երեսուն տարի առաջ դրանց վրա ծախսվում էր 1300 ոսկի, ապա այժմ՝ 800 (զույգ վարժարանները միասին ունեին 394 աշակերտ՝ 12 ուսուցչով): Նա առաջարկում է դպրոցներին տրամադրել տարեկան ևս 3–4 հարյուր ոսկի և վերածել գործնական թեքումով ուսումնարանների (1902, 29 օգ.):

1901 թ. ապրիլից հրատարակվելով «գրական և գիտական» ենթավերնագրերով, «Մանզումէի էֆքեար»-ը գգալիորեն նպաստել է արևմտահայ գրական ու գրաքննադատական մտքի նոր հետաքրքրությունների: Քասիմի (Մ. Գուշունյան), Ա. Անտոնյանի, Թեոդիկի, Ռ. Պերպերյանի, Լ. Շաթրյանի, Հ. Գազանճյանի և այլոց աշխատակցությունը թերթին ընթերցողների շրջանում տալիս էր մտավոր բարձր մակարդակ և հեղինակություն: Նրա գրաքննադատների մի մասը պաշտպանում է իրապաշտ գրականության ավանդույթները, դրանց շարունակության մեջ տեսնում միջավայրի և մարդու ճշմարիտ պատկերման հնարավորությունները: Թերթում տպագրվում են նաև ռոմանտիզմի պաշտպանները: Ուշագրավ է Ռ. Պերպերյանի «Ժամանակակից վէպն ի Ֆրանսա» հոդվածը, որտեղ նա ֆրանսիական իրապաշտական վեպի (Բալզակ, Ֆլոբեր, Զոլա) ճշմարտացիության ձգտումը գնահատելով հանդերձ, խոնարհվում էր ռոմանտիկների երազային աշխարհի առջև: Նա ինչ-որ տեղ բանավեճ է մղում իրապաշտության ջատագովների դեմ՝ նկատելով, որ ռոմանտիկ հեղինակը իր ընթերցողին «խլելով իր սովորական միջավայրէն ու գլւթական աշխարհի մը մէջ» փոխադրելով՝ ամենևին էլ չի ոչնչացնում իրականի զգացումը: Իրապաշտական վեպի սկզբունքներով է գնահատում Ե. Անդրեասյանը Մ. Գուշունյանի ստեղծագործությունը՝ «Քասիմ և իր վէպը» հոդվածում (1904, 1 փետ.): Վիպական ճկուն կառույցի միջոցով, նկատում է նա, գրողը ստեղծել է կենդանի միջավայրի պատկերը՝ ձգտելով բարվոքել հայ ընտանիքի բարոյական պատկերը: Թերթի հաջորդ թվերից մեկում ևս Տ. Ա. ստորագրողը (հավանաբար, Տիգրան Արփիարյանը) արժեքավորում է միջավայրի գունեղ նկարագիրը, այլև դրա պարզ ու մատչելի մատուցումն ընթերցողին (1904, 8 փետ.): Հետաքրքիր է Մ. Նալպանտյանի բանավեճը «Մասիս»-ի հետ՝ նորավեպի լուրջ բովանդակության, հանրության կրթելու հնարավորությունների շուրջ: Մ. Նալ-

պանտյանը հարձակվում էր մասնավորապես Քրիզանթեմի (Հ. Ալփիար) երգիծական նորավեպերի վրա և գույներ չխնայելով ընդգծում էր մամուլի անբարոյացնող ազդեցությունը ընթերցողի ներաշխարհում (1904, 8 հնս.): Պաշտպանողական այս հեղինակի դեմ հանդես եկան երկու օրիորդներ՝ Շուշանը («Սխալ ըմբռնումներ») և Շիրազը («Բարոյականը ուր փնտրելու է») (1904, 13, 27 հնս.): Նրանք թեև հանիրավի համահարթեցնում են Զոհրապի և Ալփիարի գործերը, սակայն համոզիչ են, երբ ցույց են տալիս Ալփիարի ստեղծագործության բարոյական արժեքը: «Մանզումէի էֆքեար»-ը և նրա խմբագիրները պաշտպանում էին իրապաշտ գրական ուղղությունը: Արձագանքելով գավառի և պոլսական գրականության շուրջ մղվող բանավեճին, թերթն արժանին էր հատուցում Գր. Զոհրապի, Օ. Ջիֆթե-Սարաֆի և այլոց ստեղծագործություններին: Ալփիարին և նրա հետևորդներին «Մանզումէի էֆքեար»-ը հակադրում է երգիծանքի մեծ վարպետի՝ Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Դրա հետ մեկտեղ, ճանաչողական արժեք ունի նրա հրապարակումը՝ «Հակոբ Պարոնեան. քանի մը էջեր իր կյանքէն» վերնագրով (անստորագիր): Հեղինակը արժեքավոր դիտողություններ է անում Հ. Պարոնյանի և նրա գաղափարական ու գրական նախորդի՝ Հ. Սվաճյանի ստեղծագործական առնչությունները բացահայտելու ուղղությամբ. «Ուրեմն, Պարոնեանը միակը եղաւ,- գրում է նա,- որ Սվաճեանի բացած դպրոցը շարունակեց և իր նիւթերը առնելով ուղղակի ժողովուրդի կյանքէն» (1904, 11 հնս.):

Հետաքրքիր են նաև այս հեղինակի դիտարկումները, որ նա անում է համեմատելով Հ. Պարոնյանի՝ տաղանդով անհամեմատ «ստորին» երգիծաբան ժամանակակիցների և նրա միջև: Զուգահեռ հրատարակվող «Մամուլը» ձեռքից ձեռք էին հափշտակվում, իսկ Պարոնյանի «Թատրոնը» դժվարությամբ էր իրացվում «շատ քիչեր կը զգային անոր գրչին բարձրութիւնը»: Հեղինակը նկատում է, որ դրա պատճառը Պարոնյանի անկախ դիրքն էր, նրա սկզբունքայնությունը և ուղղամտությունը:

Հրապարակման մեջ կան Պարոնյանի կենսագրական հետաքրքիր և գրեթե անհայտ բացահայտումներ, ինչպես այն, որ նա աշխատակցել է «Մանզումէի էֆքեար»-ին և «Ճէրիտէի շարգիյէ»-ին

տպագրելով իր երգիծական ստեղծագործությունները (1901, 24 հնս.):

Թերթի գրական քաղաքականության մեջ արժեքավոր պետք է համարել նրա բացասական դիրքորոշումը դեկադանսի ծայրահեղությունների հանդեպ: Պոլսահայ նորելուկ գրողների մի մասը հրապուրված էր իրականությունից կտրված, դեկադանսի խորհրդավոր ու տարապայման աշխարհի գայթակղություններով՝ ամենից առաջ տուրք տալով եվրոպական նորաձևությանը, քան գաղափարական ու ստեղծագործական անկեղծ մղումներին: Բռնազբոսիկ այդ գրականության քննադատության մեջ թերթն արձանագրում էր դասական, ազգային գրականության անգիտացումը, մեկուսացումն այդ գրականության ավանդույթներից:

Դասական գրականության ավանդույթների շարունակականությունը թերթը տեսնում էր Դուրյան-Մեծարենց հաջորդականության մեջ՝ վերհանելով ուշագրավ զուգահեռներ և սրանց միջոցով՝ այս բանաստեղծների նմանություններն ու տարբերությունները (1908, 9 հլս.): Ազգային գրականության նոր ուղիներ է հայտնաբերում Ռ. Զարդարյանը Սիամանթոյի պոեզիայում՝ այն համարելով «յայտնութեան մարգարէութիւն, որ կը բարձրանայ կոտորածներու, նախճիրներու ծոցէն և ոսկի կը հանէ գետնամած տկարութիւնները՝ տարփողելով ուժին փառքը...» (1908, 1 օգ.):

Ազգային ճշմարիտ արժեքների ժողովրդականացման ուղեգիծը «Մանզումէի էֆքեար»-ը շարունակում էր նաև հայ արվեստին տված իր գնահատումներում: Հ. Տեր-Հակոբյանը բացահայտում էր հայ ճարտարապետների, քանդակագործների, երաժիշտների ձիրքը՝ նկատելով նաև նրանց մեկուսացածությունը ազգայինից, սրված հակումները դեպի համաշխարհային ուղղությունները: Այս հեղինակը իրավացիորեն նկատում է, որ սրա պատճառներից մեկը հայկական միջավայրի անտարբերությունն է ազգային արվեստի ու արվեստագետների հանդեպ: Շրջապատի նույնպիսի անտարբերությունն է վերհանում Թեոդիկը՝ Սիրանույշի մեծ տաղանդը գնահատելիս (1906, 9 հնս.): Հասարակական անտարբերությունն է պատճառը, կարծում է թերթը, որ թշվառության մեջ են ընկել թատերական գործիչ Ռ. Սեթեֆճյանը, հայտնի դերասան Մ. Զափրաստը: Ի դեպ, Զափրաստի մահից հետո «Մանզումէի էֆքեար»-ը տպագրեց

նրա «Իմ կեանքս. թէ ով եմ ես» ընդարձակ կենսագրականը, որը հարուստ տեղեկություններ է պարունակում ժամանակի հայ թատրոնի ու նրա գործիչների՝ Մ. Մնակյանի, Պ. Մաղաքյանի, Ստ. Էքշյանի, Թ. Ֆասուլյաճյանի, Պենլյանի, Սիրանույշի, Դ. Թրյանցի և այլոց մասին (1907, 19 փետ.): Թերթն ընթերցողին ծանոթացնում էր նաև հայ տաղանդավոր այլ արվեստագետների, որպիսին էր ճարտարապետ Հովսեփ Էմինը: Նրան նվիրված մահախոսականում նշվում է, որ կատարելագործվել է իտալական ճարտարապետական բարձրագույն վարժարաններում, նրա նախագծերով են կառուցվել Ռեժիի (ծխախոտի ընկերություն Թուրքիայում) շենքերը Ռումելիում, Սալոնիկում, Սամսոնում, Տրապիզոնում և այլուր, եգիպտական խտիվի մոտ՝ Պեպեքի ծովեզերյա ապարանքը, Հալքիի խտիվական ապարանքը, Ֆեների բուլղարական եկեղեցին, Սկյուպի (Թաղամաս Կ.Պոլսում, Սկոպլե քաղաքի թուրքական անվանումը) օսմանյան բանկի շենքը (1908, 13 հնս.):

Թերթի ինքնուրույն գրականության մեջ կարելի է առանձնացնել նրա երգիծանքը: Այս ժանրով գրում էին Ե. Թոլայանը («Կավռոշ» ծածկանունով), Գր. Թորոսյանը և Վարազը: Ե. Թոլայանի թեմատիկ հակումների մեջ զգալի է Հ. Պարոնյանի ազդեցությունը, թեև նա երգիծական արվեստով ու սրամտությամբ զիջում է մեծ երգիծաբանին: Ե. Թոլայանը հիմնականում ծաղրում է քաղաքի միջակ խավերի՝ արհեստավորների, գրագիրների, խմբագիրների, քահանաների, ուսուցիչների հոգեբանության ու գործելակերպի սովորույթ կողմերը: Նրա երգիծական ակնարկները, զրույցներն ու քրոնիկները, այսուհանդերձ, աչքի են ընկնում այս խավերի հանդեպ սոցիալական համակրանքով: Անշուշտ, համիդյան գրաքննությունը արմատախիլ էր արել քաղաքական երգիծանքը Թուրքիայում հրատարակվող մամուլում: «Բերացի պարոնի մը օրագիրը», «Ըսի ըսաւ» և «Համմէ» (վերջին երկուսը՝ «Կավռոշ» ստորագրությամբ) խորագրերով իր նյութերում (1904–1908 թթ.) Ե. Թոլայանը ծաղրում է հաշվենկատ ամուսնությունը, ընտանեկան հոռի բարքերը, որոնց մեջ նվաստանում են բարոյական բարձր զգացումներն ու մարդկանց արժանապատվությունը: Երգիծաբանի գրչի տակ, այնուամենայնիվ, ի հայտ են գալիս ձևախեղվող հասարակական հա-

բարբրությունները, դրանց արտացոլումը մարդկանց վարքագծի ու հոգեբանության մեջ:

1906 թ. թերթում հայտնվում է «Մանզումէ»-ի թերթիկը» երգիծական էջը, որի խմբագիրը Գր. Թորոսյանն էր: Նրա գրչի թիրախ են դառնում գրական-լրագրական առօրյա խրողությունները, պոլսահայ մտավորական աշխարհը, մանր ու միջակ առևտրականությունը և այլն:

Բավական տպավորիչ է «Մանզումէի էֆքեար»-ի գեղարվեստական գրականությունը: Թերթի էջերում տեղ են գտել Քասիմի արձակ երկերը (այդ թվում և Նարեկացու պոեմի թարգմանությունը գրական աշխարհաբարով), Ա. Անտոնյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Լ. Շանթյանի, Հ. Աճեմյանի, Ս. Բյուրատի, Ավ. Ահարոնյանի արձակ երկերը, Սիամանթոյի չափածո գործերը և այլն: Սրանց միավորում է թերթի որդեգրած գրական ուղեգիծը՝ ըստ հնարավորին գեղարվեստական պատկերման նյութ դարձնել ազգային իրականությունն ու միջավայրը: Թարգմանական էջերը՝ հիմնականում արձակ, մատուցվում են ժամանակակից ֆրանսիական գրականությունից՝ Զոլայի, Մոպասանի, Հ. Մոնեի, Մ. Մարիոյի, Ռիշբուրի, Ժ. Վեռնի, Ռ. Ցաոի, Լ. Սադիի և այլոց վեպերն ու պատմվածքները, որոնք տեղ էին գտնում թերթոնի բաժնում: Չպետք է մոռանալ լրատվական ու գեղարվեստական բաժինների հայատառ թուրքերեն նյութերը:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, հուլիսի 29-ից, «Մանզումէի էֆքեար»-ը փոխում է իր ենթավերնագիրը՝ վերածվելով «Ազատական անկախ օրկանի»: Թերթի խմբագրության վարչությունը ստանձնեցին Ե. Տեր-Անդրեասյանը, Ա. Անտոնյանը և Հ. Տեր-Հակոբյանը: 1908–1912 թթ. «Մանզումէի էֆքեարի» նյութերը ցույց են տալիս, որ այն գրեթե անվերապահորեն հետևում է Հայ Հեղափոխական Դաշնակցության ուղեգծին՝ փաստորեն դառնալով նրա ոչ պաշտոնական օրգանը: Թերթը տպագրել է այդ կուսակցության հայտարարությունները, քարոզչական աշխատանք կատարել իրականության զարգացումների նկատմամբ նրա վերաբերմունքն արտահայտելու և պարզաբանումների ուղղությամբ, հաճախակի արտատպումներ արել ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակից» և այլն: Օսմանյան հեղափոխական կազմակերպությունների մեջ «Մանզումէի էֆքեար»-ն առանձնացնում է իշխան Սաբահէդդինի

առավել ազատամիտ «Անհատական նախաձեռնության, ապակենտրոնացման և սահմանադրության Օսմանյան միասնությունը», որը պաշտպանում էր կայսրության մեջ տեղական ինքնավարության սկզբունքը: Ակներև է, որ «Մանզումէի էֆքեար»-ը դաշնակցության ընդհանուր գաղափարական ուղեգիծը համակրելով հանդերձ, ձգտում է ձերբազատվել Իթթիհատի հետ վերջինիս համագործակցության ռազմավարությունից՝ հակվելով դեպի ավելի ազատամիտ օսմանյան քաղաքական կազմակերպությունները:

Նշված ժամանակաշրջանում «Մանզումէի էֆքեար»-ը, ինչպես և արևմտահայ մյուս թերթերը, մասնավոր ուշադրություն է դարձնում Համիդի երբեմնի պաշտոնյաների չարագործությունների, հայերի հանդեպ դաժանությունների և այլ ոճրագործությունների մերկացմանը: Այս թեմայով արտատպումներ են արված նաև եվրոպական մամուլից, որտեղ բացահայտվում են սուլթանի դրածոների և ֆավորիտների չարաշահումները, նրանց՝ կողոպուտի և կաշառքի միջոցով վիթխարի հարստություններ կուտակելը:

Հեղաշրջման առաջին շաբաթների էյֆորիան, որ համակել էր այս, ինչպես և արևմտահայ գրեթե բոլոր թերթերը, տակավ առ տակավ, սակայն, տեղի պետք է տար իրականությունից սնվող կասկածներին: Նախ, տարակուսանք էր հարուցում երիտթուրքական իշխանությունների կատարյալ անտարբերությունը Կ. Պոլսում օրավուր կուտակվող՝ վերադարձած հայ փախստականների հանդեպ: Մինչդեռ, վերադարձած թուրքերը շրջապատվում էին ուշադրությամբ, նրանց անգամ նպաստ էր տրվում իշխանությունների կողմից: «Հայ գաղթականներուն կացութիւնը» հոդվածում թերթը բողոքում էր նման խտրական վերաբերմունքի դեմ (1908, 4 սպտ.):

Միաժամանակ, թերթն արդեն պետք է նկատեր, որ հատկապես գավառներում իրենց պաշտոնին են մնում տապալված վարչակարգի դրածոները՝ շարունակելով օգտվել նոր իշխանությունների բարեհաճությունից: Թերթը գրում է, որ Վանի կուսակալ, արյունարբու Ալի Ռիզան «Վանա կուսակալութեան ժողովուրդները վայրագօրէն կը վրկէ սահմանադրութեան բարիքներէն... եւ տակաւին կը մնայ իր պաշտօնին վրայ» (1908, 13 օգ.): Իր պաշտոնն էր շարունակում Երզնկայում Դ զորաբանակի հրամանատար, հանցագործ Զեքի փաշան հայտնի՝ հայերի դեմ գործադրած իր բռնություններով, և

թերթը իր զարմանքն է հայտնում վարչապետ Քյամիլ փաշային՝ նրանց պաշտոնավարությունը հանդուրժելու համար (1908, 13 օգ.):

«Մանզումեյի էֆքեար»-ում սկսում են հաճախակի հայտնվել քրդական հարստահարությունները վկայող փաստեր: «ՀՅ Դաշնակցության նամակներ և քաղվածներ» խորագրի ներքո գավառներում արված որոշ բարելավումների հետ միասին նշվում է, որ Բաղեշում շեյխ Հասանը չի դադարեցրել իր բռնությունները հայերի հանդեպ, ինչպես նախկինում: Մուշում չեն մարում քրդական խժդժությունները, ընդսմին, հայկական դիմադրական ոգին ընկճելու նպատակով Մուշի թուրք զորահրամանատարը «ազատության և եղբայրության» պաշտոնական հայտարարությունից հետո պահանջել էր հայերից, որ զենքերը հանձնեն: ՀՅԴ ներկայացուցիչները առարկել էին դրան, նկատելով, թե քանի դեռ մահմեդականները, հատկապես քրդական համիդիեն, զինաթափված չեն, իրենք չեն կարող զենքը հանձնել (1908, 23 սպտ.):

Ինչ-որ տեղ թերթը չտեսնելու է տալիս այն իրողությունը, որ թուրք մամուլը հայերին և քրդերին միմյանց դեմ գրգռելու նպատակով անդրադառնում է գավառներում քրդական վայրագություններին: Այդ բնույթն ուներ թուրքական «Ֆեյզը հյուրրիյեթ» թերթից արտատպված մի հոդվածը, որտեղ դատապարտվում են քրդերի վայրագությունները և, միաժամանակ, շոյվում հայերի ազգային զգացումները (1908, 31 հկս.): Դրան հակառակ, ներկայացվում են թուրք մամուլի սադրիչ փորձերը՝ միմյանց դեմ հանելու հայերին ու հույներին և խորացնելու բանավիճային կրքերը նրանց պարբերականներում:

«Մանզումեյի էֆքեար»-ը ՀՅԴ դիրքորոշումները պաշտպանել է նաև նախկին պատրիարք Մ. Օրմանյանի նկատմամբ վերաբերմունքի հարցում: Հիրավի, այսօր այդպիսի վերաբերմունքը թվում է ծայրահեղ և միակողմանի, որչափով Օրմանյանը (և ով էլ որ լիներ նրա պաշտոնում) անզոր էր կասեցնելու ջարդարար սուլթանի գործողությունները: Թերթը «Դրոշակից» արտատպել է «Օրմանեան» հոդվածը, որտեղ նախկին պատրիարքը մեղադրվում էր գավառահայերի հանդեպ անտարբերության, սովն ու գաղթականությունը չկանխելու, ինչպես և փախստական հայերի և ազգապատկան կալվածքների բռնագրավման դեմ չբողոքելու համար (1908, 31 հկս.):

Պետք է կարծել, այսուհանդերձ, որ Օրմանյանին ուղղված անձնական կարգի մեղադրանքները, անկախ դրանց վիճելի կամ ճշմարտացի լինելուց, ունեին քաղաքական բնույթ և դրանց առաջ քաշման գործում «Մանզումէի էֆքեար»-ը հեռու էր ինքնուրույն մոտեցումից՝ կրկնելով սոսկ ՀՅԴ տեսակետն այդ հարցում:

Թերթի հրապարակումների մեջ իր հագեցվածությամբ առանձնանում է Գր. Զոհրապի ընդարձակ ելույթը՝ «Օսմանեան սահմանադրութեան վերաքննութիւնը. փոփոխելի և ջնջելի կէտերը» վերտառությամբ (1908, 2 սպտ.): Այստեղ Զոհրապը, ելնելով եվրոպական առաջավոր երկրների սահմանադրական նորմերից, հիմնավորում է օսմանյան սահմանադրության վերաքննության և դրա իրականացման ձևերի վերաբերյալ իր տեսակետները: Նկատի առնելով 1876 թ. օսմանյան սահմանադրության անփառունակ վախճանը (սուլթանի բացառիկ իրավունքը՝ կախակայելու սահմանադրությունը, որից և օգտվել էր Աբդուլ Համիդը), առաջարկում էր գործող սահմանադրության մեջ հոդված մտցնել, որը կբացառեր «պետական նոր հարվածով սահմանադրական կառավարության դադարումը» (1908, 2 սպտ.):

Առաջադիմական արժեք ունեն Զոհրապի այն առաջարկությունները, որոնք վերաբերում են Թուրքիայում ընտրական իրավունքի ժողովրդավարացմանը, կանանց ընտրական իրավունքին, օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերություններին: Զոհրապը հատուկ ուշադրություն է դարձնում ազգերի տեղական ինքնավարության խնդրին, հանդես գալիս լայն ինքնավարության օգտին՝ փաստորեն իրավական ձևակերպումներ տալով արևմտահայության ինքնավարության վերաբերյալ ՀՅԴ քաղաքական ուղեգծին:

Հայտնի է, որ Ադանայի ջարդը կազմակերպելով, երիտթուրքերը ամբողջ հանցանքը բարդում էին հին՝ համիդյան վարչախմբի վրա: Մայիսին (1909) գոնե ամբողջ հայ մամուլին հայտնի էր դարձել, թե ովքեր են դրա իսկական կազմակերպիչները: «Մանզումէի էֆքեար»-ը ևս նշում էր, որ երիտթուրքերի հայտարարությունները հակասում են այն փաստին, որ Ադանայում իշխանությունները սկսել են հետապնդել հայերին: Երիտթուրքերի հայտարարությունը, թե այդ ամենը համիդյան վարչախմբի ձեռքի գործն է, հնարավոր

չէ «հաշտեցնել հայոց ներկայ ձերբակալութեան հետ» (1909, 27 մյս.): Իշխանությունների փաստարկը, թե դրա պատճառը հայերի զինված լինելն է, թերթը հիմնավոր չի համարում, իսկ մինչև թուրքերը զինված չեն եղել, տարակուսում է թերթը, հայերն են կորուստներ տվել, կորցրել հարազատներին, սեփականություն, տուն և «տակաւին կիմանանք, որ ձերբակալուածները կէս առ կէս հայ կըլլան»: Թերթն ըստ հնարավորին շրջանցում էր երիտթուրքական գրաքննությունը՝ իրերի իսկական դրության մասին արտատպումներ անելով եվրոպական մամուլից: Ե. Տեր-Անդրեասյանը այս օրերին բողոքում էր մամուլի վրա իշխանության բռնացումներից, որ օրինականացվում էր օսմանյան խորհրդարանում: Մասնավորապես, մամուլին հրահանգվում էր քննադատական դիտողություններ չանել օսմանյան խորհրդարանի գործունեության մասին, չգրել օտար երկրների քաղաքականության դեմ և այլն: Զավեշտականն այն էր, որ Հյուսեին Հիլմի փաշան հայտարարել էր, թե օսմանյան մամուլի օրենքն ավելի ազատ է, քան անգլիական և ֆրանսիական համապատասխան օրենքները, քանի որ «հոն տուգանքներն աւելի խիստ են»: Դրան Ե. Տեր-Անդրեասյանը իրավացիորեն առարկում է, որ այդ երկրներում մամուլի մեղանչումները հանձնվում են դատարան, մինչդեռ Թուրքիայում մեղանչող պարբերականը դառնում է իշխանությունների վարչական դատաստանի զոհ (1909, 1 հնս.): Դրանից առաջ՝ 1909 թ. մարտի 31-ին, թերթի արտոնատերը կանչվել էր ոստիկանություն՝ հարցաքննության: Պատճառը, ըստ քննիչի, թերթի Բաբերդի թղթակցի «ընդհանուր վրդովում պատճառող հրապարակումներն էին այն մասին, թէ այնտեղ ջարդերի երկիւղներ կան» (1909, 1 ապր.):

«Մանզումէի էֆքեար»-ի 1912 թ. մեզ մատչելի սակավաթիվ համարներում ուշագրավ փաստեր կան Արևմտահայաստանում հետզհետե անտանելի դարձող իրադրության մասին: Թերթը վերհանում էր հատկապես պաշտոնյաների և իշխանությունների թշնամական վերաբերմունքը հայերի հանդեպ և քրդական հարստահարությունների անպատիժ ծավալումը:

«ԴԱՇԻՆՔ» (1909–1910-ական թթ.)

1909 թ. Հ. Մամուրյանի արտոնատիրությամբ Զմյուռնիայում սկզբնավորվեց «Դաշինք» օրաթերթի հրատարակությունը: Այն փոխարինեց «Արեւելեան մամուլ» շաբաթաթերթին: Եվ ինչպես «Արեւելեան մամուլը», «Դաշինքն» արտահայտում էր Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության գաղափարները՝ հանդիսանալով ոչ պաշտոնական, համակիր հրատարակություն:

«Դաշինքն» ազդեցիկ թերթ էր, այն շարունակում էր զմյուռնահայ մամուլի ավանդական դարձած՝ համազգային բնույթի հիմնահարցերի վերաբերյալ լրատվությունն ու դրանց գնահատականը: «Դաշինքին» աշխատակցում էին «Արեւելեան մամուլի» վերջին երկու տարվա (1908–1909) գրեթե բոլոր աշխատակիցները՝ Հ. Մամուրյանը, Ս. Պարթեւյանը, Լ. Մկրտիչյանը, Կ. Նավասարդը, Մ. Նուպարյանը և ուրիշներ: Խմբագիրներն էին նախ Ս. Պարթեւյանը (սկզբից մինչև 1911 թ. օգոստոս), ապա Ա. Պեյլերյանը (Ավո, մինչև 1913 թ.), իսկ 1913-ից՝ տնօրեն խմբագիր Հ. Մամուրյան:

Հայ սահմանադրական ռամկավարները ազատամիտ կուսակցություն էին: Նրանց քաղաքական ու հասարակական հայեցության հիմքում ընկած էին նրա բաղադրիչները կազմող սոցիալական խմբերը կամ դասակարգերն ու դասերը, որոնց միավորելու էր ազգային համերաշխության ու միասնության նպատակը: Հանուն այդ նպատակի, նրանք քննադատում էին ազգի սոցիալական տարբեր խավերի մեկուսացածությունն ու ինքնաբավությունը, սեփական շահերի առանձնացումն ու դասային նախասիրությունները: Սրանով պետք է բացատրել «Դաշինքի» գործիչների՝ Ս. Պարթեւյանի, Ավոյի, Լ. Մկրտիչյանի և այլոց հարձակումները «հայ պուրժուանեբու»՝ «անհատական կեանքի սահմաններում» ամփոփվելու, հայ հանրության ներքին պառակտումների և այլնի դեմ: Որպես համոզված ազատամիտներ, սահմանադրական ռամկավարները անհատի ազատությունից էին ակնկալում ամբողջ ազգի ազատությունն ու իրավական հավասարությունը, իսկ բազմազգ պետություններում, որպիսին նաև Օսմանյան կայսրությունն էր, ազգերի ազատությունն ու իրավահավասարությունը: Սակայն իրականությունը այդ նույն կայսրության մեջ և՛ անցյալ պատմությամբ, և՛ ներկա զար-

գացումներով, հպատակ ազգերի ճնշումների ու բռնադատումների մշտական առօրյայով, նրանց հարկադրում էր ուշադրությունը բևեռել ազգի բուն իսկ գոյության հիմնահարցի վրա: Այս վերջին հանգամանքն էր, որ «Դաշինքին» մղում էր վերանայումներ մտցնելու իր հայեցության մեջ: Երիտթուրքերի ազգայնական գաղափարախոսությունն ու քաղաքականությունը իրենց որոշակի դրսևորումներով կազմում էին օրաթերթի լրատվական ուղղվածության առանցքն ու վերաբերմունքի առարկան: Ժողովրդի գերիշխանության ընդհանուր ծրագրային դրույթը ռամկավար սահմանադրականների համար պետք է վերածվեր ազգի գոյապահպանության խնդրի, որը լրջորեն սասանելու էր օսմանյան պետության մեջ ազգերի միասնականության, նրանց համագործակցության, խղճի ազատության և այլնի վերաբերյալ սահմանադրական ռամկավարների մեկնակետերը: Ադանայի ողբերգական դեպքերը (1909) «Դաշինքի» գործիչների մեջ առաջացրեցին «օսմանյան համերաշխության» վերաբերյալ երիտթուրքական տեսակետները հերքելու անհրաժեշտությունը: Օսմանյան իրականության նորովի գնահատականի խնդիրը «Դաշինքի» և սահմանադրական ռամկավարների առջև ծառանում էր նաև անհատի իրավունքների, խղճի ազատության զանգվածային ոտնահարումները արձանագրելու դեպքում ևս: Մնացյալ դեպքերում «Դաշինքը» շարունակում էր պահպանել, ընդհուպ մինչև ցեղասպանությունը, ընտրական ու խորհրդարանական խաղաղ պայքարի սկզբունքն ու հեղափոխական-ազատագրական գործելակերպի մերժումը, որ բխում էր ազգային անկախության գաղափարը բացառելուց:

Հայ հանրության զարգացումը սահմանադրական ռամկավարները պատկերացնում էին միայն խաղաղ, բարենորոգչական միջոցներով, հանրության շահերի պաշտպանությամբ, պետության կողմից մասնավոր արտադրության զարգացման իրավական հուսալի ապահովմամբ: Այս ամենը ի սպաս էր դրվելու ազգի խաղաղ զարգացմանը օսմանյան պետության ներսում:

Այսուհանդերձ, «Դաշինքի» նյութերում աստիճանաբար ձևավորվում է նրա ընդդիմադիր դիրքորոշումը երիտթուրքերի կառավարման ծայրահեղ շովինիստական եղանակների ու գործելակերպի նկատմամբ: Հատկապես 1909 թ. Ադանայի դեպքերից հետո, երբ ակնհայտորեն պարզ դարձավ, որ երիտթուրքերը շարունակում են

Աբդուլ Համիդի կիսատ թողած գործը՝ հատկապես հպատակ ազգերին ճնշելու գործում: Թերթի քաղաքական հայացքները մի հայտնի չափով արտահայտվեցին 1910 թ. օգոստոսի վերջերին, երբ Զմյուռնիա էր այցելել օսմանյան խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզան: Նա ազդեցիկ երիտթուրքական գործիչներից մեկն էր, Աբդուլ Համիդի դեմ պայքար էր սկսել դեռևս 1890-ական կեսերին՝ տարագրվելով Փարիզ և իր համախոհների հետ հրատարակելով «Մեշվերեթ» երիտթուրքական պաշտոնաթերթը: Բաժանելով Օ. Կոնտի պոզիտիվիստական հայացքները դասակարգային հակասությունները մեղմացնելու և դրա միջոցով հասարակական հավասարակշռության հասնելու վերաբերյալ, Ահմեդ Ռիզան այս մտայնությունը մեխանիկորեն տարածում էր օսմանյան կայսրության ազգերի փոխհարաբերությունների վրա: Բայց այստեղ ենթադրվող համագործակցությունը նա չէր պատկերացնում այլ կերպ, քան տիրող թուրքերի գերակայության և ի վերջո, հպատակ փոքրամասնությունների նրանց մեջ լուծելու ուղիով: Նա կտրականապես դեմ էր կայսրության մեջ որևէ ազգության միայն տրվող, և առաջին հերթին, առանձին հայկական բարենորոգումներին, որ համարում էր երկրի ամբողջականության դեմ ուղղված սպառնալիք՝ նրա քայքայմանը հետամուտ տերությունների կողմից: Ահմեդ Ռիզան մի կողմից կտրուկ առարկում էր 1894–1896 թթ. հայերի կոտորածներին, իսկ մյուս կողմից, պաշտպանում «ընդհանուր հայրենիքի», «օսմանցիության» վաղեմի ուղեգիծը[1]: Նա հավանաբար, առաջին հեղինակներից մեկն էր, որ Աբդուլ Համիդին անվանել էր «կարմիր սուլթան»՝ հայերի կոտորածների պատճառով և որը որպես «մականուն մտավ պատմության մեջ»[2]:

Իր «Ռիզա պէյ» խմբագրականում Ս. Պարթևյանը հայտնում էր, որ Փարիզում տարիներ առաջ «Մեշվերեթի» խմբագիրը Զերագին, Զոպանյանին և իրեն ու «Հնչակեանութեան կողմէ» Փարիզ եկած Ա. Արփիարյանի հետ բանակցելիս (հավանաբար, 1907 թ. կողմերը) ձգտել է համոզել նրանց՝ «վազ անցնիլ առանձին դատի մը հետապնդումէն եւ միանալ օսմանեան ազատագրական ընդհանուր

---

[1] Желтяков А. Д., նշվ. աշխ., էջ 249–254:
[2] Նույն տեղում, էջ 255:

շարժումին, որ մեզի համար անտեսանելի, մտացածին ու ցնորական բան մը կը թուէր այն ատենները» (1902, 26 օգ.):

Երիտթուրքական կառավարության մեծապետական բնույթը «Դաշինքի» էջերում ցուցադրվում է օսմանիզմի դոկտրինաների սնանկության բացահայտման հենքի վրա, որով սահմանադրական ռամկավարները հետամտում էին բացահայտել նրանց գաղափարական երեսպաշտությունը: 1911 թ. մայիսին նրանց «Ժեոն Թյուրք» պաշտոնաթերթը ամբաստանական հարձակումներ էր գործել հույն և հայ պատրիարքների վրա, որոնք կառավարությանն էին դիմել այսպես կոչված եկեղեցական առանձնաշնորհումների խնդրով (այսինքն, կրոնապետների հոգևոր և աշխարհիկ որոշ գործառույթների, որ նրանց էին վերապահվել դեռևս XV դարի 2-րդ կեսից): Երիտթուրքական թերթը պնդում էր, որ դրանով պատրիարքները «պետութեան մէջ պետութեան հաւակնութիւնը կիրականացնեն» (1911, 4 մյս.): Այս առթիվ Ս. Պարթևյանը գրում էր, որ կառավարությունը երեք տարի ի վեր թշնամական դիրք է բռնել ոչ իսլամների հանդեպ և օրինակ է բերում Վասպուրականի հայերի կեղեքումները, որի պատճառը սահմանադրական իշխանությունների ապիկարությունն է (նույն տեղում): Ի դեպ, առանձնաշնորհումների առթիվ կրոնի գործերով նախարարը հայտարարել էր, որ հայերը հատուկ համաձայնություն են կնքել հույների պատրիարքի և բուլղարների էկզարխության հետ և այդ այն դեպքում, երբ կառավարությունն իր առջև նպատակ է դրել խափանելու այդպիսի «երդուեալ համերաշխութիւնները» (1911, 31 հլս.):

Հայտնի է, որ իր ծայրահեղ կենտրոնացված քաղաքականությամբ, տեղերում ոչ մահմեդականների իրավազրկությունը սահմանադրական դարձվածներով քողարկելու՝ կառավարության գործելակերպը սպառնալի չափեր էր ստանում, երբ հայերը և հպատակ մյուս ազգերը դիմում էին ինքնապաշտպանական միջոցների: Ս. Պարթևյանը գրում էր , որ Տարոնում և Վասպուրականում հայերի «անարգել ու անպատիժ» սպանությունների դեմն առնելու համար հայկական կուսակցություններն առաջարկել են ինքնապաշտպանական զինված խմբեր կազմակերպել: Կառավարությունը, որ խրախուսում էր քրդերի վայրագությունները, ի պատասխան այդ առաջարկին, սպառնացել էր, որ ինքը «Հայոց պատրիարքարանը պա-

տասխանատու պիտի բռնէ քօմիթէներու վերագրուած այդ կարգի գործունէութեան (ինքնապաշտպանական – Ա. Խ.) մը հետեւանքներուն» (1911, 28 հնս.): Միաժամանակ, «Դաշինքը» ուշադրություն էր դարձնում իշխանությունից հեռացած երիտթուրքերի ներքին, հանցավոր խմորումներին:

Հայտնի է, որ 1913 թ. սկզբին իթթիհատը վերստին անցավ իշխանության գլուխ, այն բանից հետո, երբ հունվարի 24-ին Էնվերի և Թեթհի պեյի գլխավորությամբ կայացած ցույցից հետո վարչապետ Քյամիլ փաշան սուլթանին էր ներկայացրել իր կառավարության հրաժարականը: Նոր իթթիհատական կառավարությունը գլխավորեց Մահմուդ Շեվքեթ փաշան, արտգործնախարար նշանակվեց Հյուսեին Հիլմի փաշան, ներքին գործոց նախարար՝ Թալեաթը: Իթթիհատականների հեղաշրջումն ավարտվել էր հաջողությամբ: «Դաշինքը» չէր թաքցնում իր քաղաքական հակակրանքները իթիհատի վերադարձի առթիվ: Ավոն՝ թերթի խմբագիրը, սահմանադրական-ռամկավարների այսպիսի վերաբերմունքին էր միացնում իթթիհատի վտանգավոր պատրաստակամությունը՝ շարունակելու պատերազմը Բալկաններում: Ցուցարարները, որոնք հանդես էին եկել իթթիհատի զորակցությամբ, չեն արտահայտել բոլոր հպատակների, հատկապես ոչ իսլամների կամքը (1913, 28 հնվ.): Երիտթուրքական կառավարողների նոր, արդեն ընդգծված թշնամական դիրքորոշումը վերջիններիս հանդեպ թերթը նկատում էր և՛ ոչ իսլամների զինվորագրության վերացման (1913 թ. վերջերին), և՛ հույների դեմ ուղղված տնտեսական բոյկոտը հայերի վրա տարածելու, և՛ շովինիստական քարոզչության մեջ: Ուշագրավ է, որ վերստին իշխանության անցնելուց հետո երիտթուրքերը խոստացել էին երեսփոխանական ժողովում հայերին հատկացնել 18–20 տեղ, որին չէր հավատում «Դաշինքը» և որն իրականում չկատարվեց:

1913–1914 թթ. «Դաշինքի» էջերում զգացվում է տագնապոն առհասարակ հայության ճակատագրի հանդեպ, որ սակայն, մեղմանում էր Հայկական հարցի վերարծարծման միջազգային իրողություններով: Դրա հետ էր կապում թերթը ազգի ճակատագիրը, ուստի նշված ժամանակաշրջանում այդ հարցի դրական լուծումը նրան պատկերանում էր իբրև փրկության միակ երաշխիք: 1910-ական թթ. առաջին կեսին տպագրած իր նյութերով «Դաշինքը» ուրվագծում

էր այն ճշմարտությունը, որ հայերն ապրում են օսմանյան թշնամական միջավայրի ու քաղաքականության պայմաններում: Արևմտահայաստանի մռայլ կացությունից հուսաբեկ, «Դաշինքը» ապավինում էր միայն արտաքին ուժերին:

«Դաշինքի» հրապարակումներում առաջատար հիմնահարցը մնում էր Արևմտահայաստանի վիճակը: Թերթը փորձում էր արտացոլել դրա քիչ թե շատ ամբողջական պատկերը, սոցիալական խնդիրները, բնակչության զբաղմունքը, բռնությունների դրսևորումները և այլն: Գավառական իրականության պատկերը տրվում է իրական գծերով, հաճախ՝ գրված միջավայրն ու ժողովրդին լավ ճանաչող թղթակիցների գրչով: Այդպիսի շատ թղթակցություններ են տպագրվել Կեսարիայից, Կիլիկիայից, Մուշից, Վանից և այլ վայրերից, որոնց «Դաշինքը» միացնում էր արտատպությունները հայ և թուրք մամուլից: Թղթակիցներն ուշադրություն են դարձնում նաև հայ համայնքների ներսում առկա երկպառակություններին, միջկուսակցական տարաձայնություններին ու հակադրություններին, գավառական ժողովներում սրանց բորբոքած անիմաստ ու անոտի գզվռտոցներին և այլն:

1913 թ., երբ բարենորոգումների խնդրին միջամուխ էին եղել Ռուսաստանը և Գերմանիան, երիտթուրքերը վերստին գործի դրեցին քրդական հակազդող գործոնը, մի կողմից ընկճելու հայերի ըմբոստ տրամադրությունները, մյուս կողմից՝ տերություններին ցույց տալու, որ բարենորոգումները պետք է տարածվեն ոչ միայն Արևմտահայաստանի, այլև կայսրության ողջ արևելյան գավառների վրա: 1913 թ. բարենորոգումների պաշտպանության իր կեղծ հավաստիացումներով, բայց իրականում դրանք վիժեցնելու նպատակով օսմանյան կառավարությունը քրդերին գրգռում էր հայերի դեմ և խրախուսում նրանց ոճրագործությունները՝ «ավազակների դեմ պայքարի» երեսպաշտական կարգախոսներով: Ավազակների դեմ ուղարկված ջոկատները, գրում է թերթը, «Զբօսապտոյտ մը կատարելու եկեր էին՝ դիւրացնելով տեղ տեղ աւազակի փախուստն ու աւելի ազատ գործունէութիւնը և օգներ էին անոր, որ աւելին ալ ընէ» (1913, 29 մյս.):

«Դաշինքը» հաճախ է անդրադառնում Կիլիկիայի իրականությանը, որ, ի դեպ, ընդհանուր երևույթ էր ժամանակի հայ պարբերա-

կանների համար: Պատճառը, նախ, Ադանայի 1909 թ. կոտորածների մորմոքուն վերքն էր, որի ապխացմանը խանգարում էին ոչ միայն դեռևս թարմ հիշողությունները, այլև երիտթուրքերի շարունակվող ճնշումները տեղի հայ բնակչության նկատմամբ, որի նպատակն էր վերջնականապես քայքայել հայ տարրը և դուրս մղել նրան այդ տարածքներից: Ընդ որում, իշխանությունները սկզբից իսկ հանդես էին գալիս խնամքով մտածված գործելակերպով, որ, իբր, ուղղված էր կոտորածների հետևանքները վերացնելու նպատակին: «Դաշինքը» գրում էր, որ կառավարությունը ներման է արժանացնում և՛ զոհերին, և՛ այն իրականացնողներին, և իբրև օրինակ, նշում է Տրդատ եպիսկոպոսին և մի ոմն Աբդուլ Կադիրին, որոնք երկուսն էլ ազատվել էին բանտից:

1911 թ. սկզբին թերթն արդեն արձանագրում էր, որ Ադանայում թուրք ազգաբնակչությունը բացահայտորեն զինվում է, նրան շարունակ հրահրում են մոլլաները՝ անգամ դիշերային ազանով, իսկ հայերի տները մատնանշում են կարմիր գծերով՝ մոտալուտ ջարդի մտադրությամբ: Իշխանություններին «Դաշինքը» կոչ էր անում զորք մտցնել Ադանա՝ կանխելու նոր արյունահեղությունները (1911, 3 հնվ.): Ս. Պարթևյանը տպագրեց «Նորէն Ատանա» խմբագրականը՝ նշելով, որ կառավարությունը խրախուսում է ամբոխի ստոր կրքերը՝ սնուցանելով նրա «արիւնախանձ հոգեբանութիւնը» (1911, 4 հնվ.): Տպագրվեց նաև Ավոյի «Ատանա» տագնապալի հոդվածը, որտեղ նա հստակ հարցադրումներով դիմում է Թալեաթին՝ նոր արհավիրքի դեմն առնելու կոչով:

Կիլիկիայում դրությունն առավել սրվեց 1913 թ. գարնանը: «Կիլիկիոյ վիճակը» խմբագրականում բացահայտվում է այն լարված վիճակը, որ ստեղծվել էր Հասան Բեյլիում, Պախչեում, Հաճընում, Մարաշում, Զեյթունում, Ադանայում և այլուր: Ընդհանուր հուզումը և կոտորածի սարսափը տարածվել են ամեն տեղ, պատգործում են ավազակախմբերը, մինչդեռ ձերբակալվում են անմեղ հայերը խռովություն հարուցելու մեղադրանքով: Խուճապահար հայ ազգաբնակչությունն այս վայրերից փախչում է Մերսին, Կիպրոս և այլ տեղեր, իսկ մի մասն էլ հարկադրված խլամանում (1913, 1 ապր.): Իրականությունը մղում էր թերթին՝ ձեռնթափ լինել երիտթուրքերի բարյացակամության ամեն մի պատկերացումից: Ավելին,

այդ իրատեսական մոտեցումը նրան հասցնում էր այն հետևության, որ կառավարությունը ինքն է կազմակերպում նմանը չտեսնված և սպասվող ջարդերը: 1912–1913 թթ. «Դաշինքը» բռնում է սթափ և գործնական դիրք՝ ստեղծված անտանելի պայմաններում ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրը համարելով կարևոր գործ: Թերթն առաջադրում էր սպասվող արհավիրքներին ազգովին նախապատրաստվելու հարցը: Եվ այստեղ է, որ թերթը տեսնում է բազմաթիվ խոչընդոտներ, որոնք բխում են ազգի, նրա ներկայացուցիչների տարընթացությունից, ներհակ շահերը բացարձակացնելուց և առհասարակ, անմիաբանությունից:

Այսուհանդերձ, երիտթուրքերի շովինիստական գաղափարներն ու քաղաքականությունը առավել կտրուկ և հիմնովին դատապարտեց Ս. Պարթևյանը: «Դաշինքի» այս խմբագիրը ամենից առաջ ցուցադրում էր երիտթուրքերի խոսքի և գործի հակասությունը, նրանց երեսպաշտությունը: Հպատակ ազգերի կեղծ համերաշխության ձևակերպումներով քողարկված՝ նրանք ամենուրեք հալածանք ու բռնություններ են կիրառում հայերի և մյուս հպատակ ժողովուրդների նկատմամբ (1910, 9 ապր.): 1910 թ. մարտին Ս. Պարթևյանը գրեց «Բանտուածները» խմբագրականը, որտեղ Ադանայի դեպքերը համարում էր երիտթուրքերի իսկական դեմքը մերկացնող իրադարձությունները: Զմյուռնիայի թուրքական իշխանությունները չկարողացան հանդուրժել հեղինակի այս կարգի մերկացումները: Դեռևս պահպանելով «սահմանադրականի» դիմակը, նրանք դատի տվեցին հրապարակախոսին (1910 թ. մայիսին): Մեղադրականի հիմք էին դարձել վերոհիշյալ խմբագրականի հետևյալ տողերը. «Սահմանադրութիւնը, սակայն, այդ պատրանքն ալ (արդարության – Ա. Խ.) չի ձգեց մեզի: Կիլիկեան գարհուրելի կոտորածներէն ետքը օսմանեան արդարութիւնը բանտերը հայերով լեցուց» (1910, 17 մյս.):

«Դաշինքի» փաստաբան Սերովբե Դավթյանը հմտությամբ պաշտպանեց Ս. Պարթևյանին՝ շեշտը դնելով երիտթուրքական հեղաշրջումից հետո իրենց ակնկալիքները չբավարարած օսմանյան հպատակների քաղաքական ու հասարակական հուսախաբությունների վրա: Ադանայի դեպքերը ես փաստաբանը ներկայացնում էր իբրև հին խաթիրդաթի (համիդյան բռնակալության) և էշրաֆի (ազդեցիկ վերնախավի) հրահրած գործ, սակայն, իրականում նրանց վե-

ըագրելով այնպիսի գործողություններ, ինչպես օրինակ, կանոնավոր զորքերը հայերի դեմ հանելը, որպիսիք կարող էին կատարել միայն երիտթուրքական ղեկավարները (1910, 18 մյս.): Դատավարության ամբողջ ընթացքում (1910 մայիս–հունիս) Ս. Պարթևյանը շարունակել է խմբագրել «Դաշինքը», իսկ դատարանը փաստորեն արդարացրեց Ս. Պարթևյանին՝ բավարարվելով ընդամենը դրամական տուգանքով:

Համախմբված և միևնույն նպատակին հետամուտ ազգի գաղափարն էր պաշտպանում Ս. Պարթևյանը «Ազգաշինություն» հոդվածում, որտեղ, որպես չարիք առանձնացնում է կուսակցությունների երկպառակությունները և միջկուսակցական չդադարող պայքարը: Կուսակցությունները, ըստ նրա, ձգտում են կառավարել ժողովրդին և ոչ թե առաջնորդել նրան (1910, 8 օգ.):

Ինքը՝ Ս. Պարթևյանը և նրա հետ «Դաշինքն» ու իր համախոհները միջկուսակցական հակասությունները չկոծկելու ու հակառակորդների դեմ պայքարի ակտիվ մասնակիցներից էին: Հայտնի են նրանց ընդհարումները Դաշնակցության հետ, թեև վերջինս էլ, իր հերթին, մտադիր չէր դադարեցնելու իր հարձակումները սահմանադրական ռամկավարների և հնչակների դեմ՝ ազգային քաղաքական ու գործնական հարաբերությունների դրեթե բոլոր ոլորտներում՝ սկսած ազգային կառույցներում գերակշիռ դիրքեր հաստատելուց մինչև օսմանյան խորհրդարանական ներկայացուցչությունը և երիտթուրքական իշխանությունների հետ վերաբերմունքի ու գործելակերպի հիմնահարցերը: Գծվել էր կանխորոշված մի շրջան, որից որևէ կերպ ի զորու չեղան դուրս գալու ազգային կուսակցությունները. ազգային համերաշխությունը իդեալ դարձրած կուսակցությունները հատկապես գործնական հարաբերություններում քիչ ջանքեր չէին թափում այդ նույն համերաշխությունը ընդամենը քամու տակ պարող դրոշ դարձնելու համար: Այդ էր պատճառներից մեկը, որ արևմտահայությունը 1912–1914 թթ. շատ ավելի առարկայական դարձած ցեղասպանության նախանշանների ու սպառնալիքի առջև շատ ավելի անպատրաստ գտնվեց, քան կարելի է ենթադրել: Բոլոր դեպքերում «Դաշինքի» համար այդպիսի համա-

գործակցությունը մնում էր երազականի հեռավոր սահմաններում և սա այն գառը եղբակցությունն էր, որ հաճախ էր շրջանառվում Զմյուռնիայի այս հրատարակության էջերում:

Շատ ավելի արժեք ունեն «Դաշինքի» այն հրապարակումները, հատկապես բանավիճային և մերկացնող այն նյութերը, որոնք ուղղված են թուրքական մամուլի դեմ և նպաստում են ընկալելու այն իրողությունը, որ այդ մամուլն իր լրատվությամբ, քաղաքական ու գաղափարական ուղղվածությամբ նախապատրաստում էր թուրքական հասարակական կարծիքը հայերին կայսրության ու մահմեդականության թշնամի պատկերելու գործում: Թուրքական մամուլի հակահայկական հարձակումները նոր թափ ստացան Ադանայից և հատկապես միջազգային դիվանագիտության մեջ Հայկական հարցի վերարծարծումից հետո, 1912–1913 թթ.: Թերթն արձագանքում էր Զմյուռնիայի թուրքական մամուլի՝ «Քյոյլու» և «Անատոլու» թերթերի այն հրապարակումներին, որոնցում հայերը մեղադրվում են տերության հանդեպ անհավատարիմ ընթացքի, ապստամբական մտադրությունների և այլնի մեջ:

Թուրքական ազդեցիկ «Սերբեստ» թերթը, օրինակ, ճգնում էր ապացուցել, որ հայերը առանձին ազգ չեն, այլ սերում են քրդերից (1913, հմ. 6): Այսպիսի հարձակումները հայերի դեմ անդադար ու անսանձ են դարձել 1913 թ. գարնանից, երբ այլևս, դարձյալ կապված Հայկական հարցի միջազգային զարգացումների հետ, Կ. Պոլսի թուրքական թերթերը՝ «Թանինը», «Թասվիր-ի էֆքյարը», «Թերճեմանը հաղըգաթը» և մյուսները ուղղակի սպառնալիքներ էին տեղում հայերի վրա՝ ամեն կերպ ձգտելով խուժանին հրահրել նրանց դեմ: 1914 թ. «Դաշինքը» տագնապով արձանագրում էր, որ թուրքական մամուլի գրգռիչ հրապարակումներն ավելի ազդեցիկ են գավառներում և որ այնտեղ կացությունը հետզհետե անկառավարելի է դառնում (1914, հմ. 1): «Դաշինքը» վկայակոչում էր «Ռուսսկոյե սլովո» թերթը, ըստ որի, երիտթուրքական կոմիտեն մեծ ջարդ է կազմակերպում և այս նպատակով հատուկ խմբեր է ուղարկում գավառներ. «Խնդիրը այնտեղ է հասեր,- գրում էր այդ թերթը,- որ երիտասարդ թուրքերու պատուիրակները կը շրջին Հայաստան և խորհուրդ կուտան բոլոր մահմեդականներուն՝ ձեռք բերել ճերմակ փաթթոց և ճերմակ ֆէսեր, որպէսզի անոնցմով մյուսուլմանները

տարբերին ուրիշ կրոնի պատկանողներէն: Զարդարարի գործուն դերը պիտի ստանձնեն քիւրտերը, որոնք վերջերս մեծաքանակ զէնք են ստացել» (1914, հնվ. 16):

Թուրքական թերթերը սպառնալիքների հետ միասին գործի էին դնում նաև հորդորական ոճը, բարենորոգումների հարցում հայերին ապակողմնորոշելու և գիջողամտություն ներշնչելու նպատակով: Բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական համաձայնագրի նախօրեին երիտթուրքերը փորձեցին Ռուսաստանի և մյուս տերությունների ուշադրությունը շեղել՝ հայերի հանդեպ իրենց կեղծ բարյացակամության ցույցերով. ներքին գործերի նախարար Թալեաթն ընդունել էր պատրիարքին և խոստացել, որ օսմանյան խորհրդարանում հայերին 20 տեղ կհատկացվի: Ինչ-որ չափով այս ամենը լավատեսական տրամադրություններ էր հաղորդում «Դաշինքին»: «Ազգային հորիզոնը կը պայծառանայ» խմբագրականում (1914, փետ. 14) Ավոն հայտնում էր, որ հաջողությամբ են ավարտվել հայաբնակ վիլայեթների շուրջ բանակցությունները: Թերթը տպագրեց դրան համապատասխան՝ ռուս-թուրքական համաձայնագրի տեքստը, որ ստորագրել էին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և ռուս դիվանագետ Գուլկևիչը՝ 1914 թ. փետրվարի 8-ին[1]:

«Դաշինքը» բավական հարուստ նյութեր է պարունակում գմյուռնահայ իրականության, կրթական-մշակութային ու հասարակական կյանքի վերաբերյալ: Դրանցում ուշագրավ տեղեկություններ կան ժամանակի զմյուռնահայ գավառական վարչության, առաջնորդի ու նրա գործունեության, կուսակցությունների ու դրանց փոխհարաբերությունների, կրթական ու բարեսիրական ընկերությունների և ազգային հաստատությունների մասին: «Ազգային անցուդարձ», «Տեղական լուրեր» և այլ խորագրերի ներքո թերթը ավելի կամ պակաս ծավալներով հաղեցնում էր իր ընթերցողի հետաքրքրությունները: Տպագրվել են նաև առանձին վերլուծական հոդվածներ ազգային կառույցների մասին՝ քննադատական ուղղվածությամբ: Թերթն առաջնորդվում էր այն ընդհանուր մտայնությամբ, որ այդ կառույցները կոչված են նպաստելու զմյուռնահայերի սոցիալական ու մտավոր կյանքի զարգացմանը՝ նրանց միջև

[1] Պողոսյան Ս., Պողոս Նուբար փաշա: Ազգային գործիչը. Ե., 2004, էջ 77:

նյած հակասությունները մեղմացնելու կամ կանխելու միջոցով, ազգային համախմբվածության հիման վրա: Թերթը կործանարար էր համարում կուսակցական կրքերի տեղափոխումը դպրոց, տեսուչների կամ ուսուցիչների աշխատանքի գնահատումը՝ ըստ կուսակցական նախասիրությունների: Այս հանգամանքը, իրոք, մտահոգիչ էր 1910-ական թթ. զմյուռնահայ իրականության համար: Իր՝ «Դաշինքի» և Դաշնակցության միջև ընթացող գաղափարական տարաձայնությունները որոնք սրվում էին իշխանությունների հանդեպ վերաբերմունքի տարբերություններից, ինչպես և Կ. Պոլսի պատրիարքարանի գործունեության, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հանդեպ տարբեր մոտեցումներից (Սահմանադրական ռամկավարները լիովին պաշտպանում էին այդ ընկերության ծրագիրն ու գործունեությունը), տարիների ընթացքում չէին դադարում: Զմյուռնիայի Ազգային ժողովում ևս սուր պայքար էր ընթանում այս կուսակցությունների միջև՝ ընտրություններում հաղթելու համար: Սահմանադիր-ռամկավարները շատ ավելի ակտիվ դաշնակցականների հետ անախորժ միջադեպերը կանխելու, իսկ խրախանում՝ իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով կազմակերպեցին «ժողովրդական միության ակումբը», որն իրեն անվանեց «Սահմանադրական-ռամկավար կուսակցության Իզմիրի մասնաճյուղ» (1910, հնս. 2):

Կուսակցությունների համագործակցության հեռանկարը, այսուհանդերձ, շարունակում էր մտահոգել «Դաշինքի» գլխավորներին, հատկապես՝ կապված ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրների հետ:

«Դաշինքը» մշտապես հետևում էր զմյուռնահայ ընկերությունների գործունեությանը, հարկ եղած դեպքերում սատարում դրանց և միջամտում նպատակավոր հրապարակումներով: 1900-ական թթ. Զմյուռնիայում շարունակում էր գործել «Կրթասէր» ընկերությունը, որ հիմնել էին կանայք, բնականաբար, ունևոր ընտանիքներից (Ի. Գասպարյան, Մ. Ամիրյան, Խ. Վեմյան): Ընկերությունն իր գործունեության նյութական կողմն ապահովում էր բարեգործական հանդեսներ, համերգներ և նման այլ միջոցառումներ կազմակերպելու շնորհիվ: 1911 թ. այս ընկերությունը Քարափում (զմյուռնահայ հարուստների թաղամաս) բաց էր արել մանկապար-

տեղ՝ հոգալով չքավոր երեխաների օթևանի և դաստիարակության գործը (1911, սպտ. 24): Չքավորների խնամքով էր զբաղված «Աղքատախնամ» ընկերությունը ևս, իր հոգածության ոլորտն ընդգրկելով նաև Ազգային հիվանդանոցը: «Աղքատախնամը» «աղքատ հիւանդներու դեղ, սնունդ կը մատակարարէ, աղքատ ընտանիքներու օրապահիկը կը հայթայթէ եւ պանդուխտներ իրենց հայրենիքը կամ այլուր կը ղրկէ»,- գրում է թերթը (1911, հնս. 1): «Դաշինքը» քանիցս հանդես է եկել ի նպաստ այս ընկերության նյութական միջոցների և ընդգծել նրա ազգանվեր ջանքերի կարևորությունը: Շատ ավելի փոքր ծավալներով գործում էր «Հռիփսիմեան ընկերասիրաց միութիւնը»՝ ըստ հնարավորին օգնելով աղքատներին: Զմյուռնահայ կանանց բարեսիրական եռանդի մասին էին վկայում նաև «Տիկնանց խնամակալութիւն» ընկերությունը, որի անդամներն էին զմյուռնահայ վերնախավի կանայք՝ Թ. Սպարթալըն, Կ. Արապյանը, Մ. Ագնավուրյանը և ուրիշներ: Այս ընկերությունը ևս ուներ իր մանկապարտեզը, որի վարիչը 1911 թ. տիկ. Տետեյանն էր՝ մտավորական հանրաճանաչ ընտանիքից: Ընկերությունը ստանձնել էր նաև ազգային երկսեռ վարժարանների, ինչպես և Ազգային հիվանդանոցի խնամակալությունը (1911, ապր. 10, հնս. 30): Զմյուռնացի կանայք գործակցում էին Կ.Պոլսի իրենց հայրենակցուհիների հետ: 1911 թ. Զմյուռնիայում կազմվեց Կ.Պոլսի «Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան» մասնաճյուղը, որը նպաստում էր աղջիկների կրթությանը (1911, փետ. 12, 1913, մյս. 23): Գործում էր «Հայ բարեգործական ընդհանուր միութեան» Զմյուռնիայի մասնաճյուղը՝ արժանանալով «Դաշինքի» խրախուսանքին և նպաստավոր հոդվածներին: Առհասարակ թերթը հաճախ էր շոշափում ՀԲԸՄ համազգային նշանակության խնդիրները. տպագրել է այդ միության վարչության անդամ Ե. Աղաթոնի և ատենադպիր Վ. Մալեզյանի ելույթները, որտեղ պարզաբանվում են նրա նպատակները, գործելակերպը, դրամական միջոցներն ընդարձակելու հնարավորությունները և այլն: «Դաշինքը» լուսաբանել է նաև Զմյուռնիայի շրջակայքի հայաբնակ վայրերի ազգային ու հասարակական կյանքը: Դրա շնորհիվ այսօրվա պատմաբանը բավական լայն տեղեկություններ կարող է ստանալ Այդընի, Մանիսայի, Մենեմենի, Նազիլլիի, Էյդեմիշի և այլ վայրերի հայ ոչ մեծ համայնքների տնտեսական,

մտավոր ու ազգային իրականության վերաբերյալ: Արժեքավոր են հատկապես Համպեր ստորագրությամբ «Տեղագրական» հոդվածները, որոնք բացահայտում են այդ միջավայրի հայերի կյանքի ու կենցաղի վերջին տասնամյակի պատմությունը: Մեջբերվում են վիճակագրական տվյալներ, օրինակ, 1910 թ. Մանիսայի 35 հազարանոց ընդհանուր բնակչության մեջ հայերը կազմում են թվով 500-ից ավելի ընտանիք (մոտ 2500-ից 3000 մարդ, 1910, 27 օգ.): Մանիսայի հայերը բնակվում էին, ինչպես և XVII դարում՝ երկու թաղերում՝ Վերին և Ներքին Մանիսաներում (1910, հլս. 17): Ուրվագծվում է նաև Մանիսայի հայության անցքացող կյանքի պատկերը: Երբեմնի մանուսայագործությունը, որ տնտեսական գործոն էր տեղի հայերի համար, զրկվել էր արտադրանքի հին ծավալներից՝ օտար մրցակցության հետևանքով: Մանիսացիներին աշխատանքի հեռանկարով հրապուրում էր շուրջ 6,5 տասնյակ կմ հեռավորության վրա գտնվող Զմյուռնիան, որ և իր հերթին խարխլում էր Զմյուռնիայի արհեստագործության հիմքերը: Նույն Համպերի «Այտընի նահանգը» հրապարակումը տեղեկացնում է, որ վիլայեթի հայերը զբաղված են գյուղատնտեսական արտադրությամբ, մշակում են խաղող, թուզ, ափիոն, մասամբ՝ նաև առևտրով (1910, հուլ. 21–22): Վիլայեթի կազաներում, սակայն, երիտթուրքական իշխանությունները այդպես էլ չկարողացան վերջ տալ հարյուրամյակների պատմություն ունեցող ավազակախմբերի գործունեությանը, որը քայքայում էր տեղի տնտեսական կյանքը: 1910-ական թթ. բանն այնտեղ էր հասել, որ ավազակների դեմ զինված ջոկատներ էին կազմում իրենք՝ գյուղացիները, մանավանդ այն բանից հետո, երբ օսմանյան ոստիկանական ուժերն այս հարցում ցույց էին տվել իրենց անկարողությունը:

«Դաշինքը» անդրադարձել է նաև Զմյուռնիայի շրջանակի այլ հայաբնակ գյուղերի և ավանների (Բայանդըր, Կուշադա, Կարաթաշ, Սյոքե, Մենեմեն, Քըրքաղաճ և այլն) կյանքին, որ բավական հիմքեր է տալիս նրանց դրության մասին եզրակացությունների հանգելու համար: Փաստերը ցույց են տալիս, որ XX դարասկզբին հայերը հատուկենտ բնակավայրերում էին կարողացել պահպանել իրենց տնտեսական ու ազգային կայունությունը: Արհեստագործական արտադրության, անմրցունակ առևտրի, և որպես այս վերջինի ան-

խուսափելի հետևանք՝ հողագործության ծավալների կրճատման իրողությունը հարկադրում էր այս բնակավայրերի հայերին՝ գաղթել Զմյուռնիա կամ այլ բարենպաստ վայրեր: Բալկանյան պատերազմները թշնամական բնույթ տվեցին բնակչության երկու էթնիկական տարրերի՝ թուրքերի և հույների փոխհարաբերություններին: Սկսվեց վիլայեթի առևտրի և տնտեսության մեջ տեսակարար լուրջ կշիռ ունեցող հույներին այս ոլորտներից դուրս մղելու երիտթուրքական քաղաքականության գործընթացը, որ տարածվելու էր նաև հայերի վրա: Հատկապես այն բանից հետո, երբ միջազգային դիվանագիտության մեջ վերստին սկսվեց արծարծվել հայկական բարենորոգումների հարցը: Թուրքական և քրդական տարրին զինելով հույների և հայերի դեմ, թուրք մամուլի հարձակողական հրապարակումների և կրոնավորների հրահրումների ուղեկցությամբ, իշխանությունները առաջին աշխարհամարտին էին դիմում Զմյուռնիայի և շրջակայքի էթնիկական խմբերի մեջ թշնամանք ու ատելություն կուտակելով, որ թուրք ազգաբնակչության կողմից կարող էր պոռթկալ որևէ պահի:

«ԺԱՄԱՆԱԿ» (1908–1914)

Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումից հետո արևմտահայ իրականության մեջ, կապված Թուրքիայի քաղաքական կյանքի փոփոխությունների հետ, կատարվեցին որոշակի տեղաշարժեր: Իշխանության գլուխ անցած երիտթուրքերից հայ հասարակական ու քաղաքական մտքի ակնկալիքները երկրի ներքին քաղաքական կյանքի ազատականացման, հպատակ ժողովուրդների վրա ծանրացած լծի թեթևացման և դրանից բխող հետևանքների վերաբերյալ, այս ամենը նպաստում էին ազատական գաղափարների տարածմանը: Միայն 1908–1909 թթ. Կ. Պոլսում լույս տեսան շուրջ չորս տասնյակ հայերեն թերթեր ու հանդեսներ, որ վերը նշված իրողությունների արդյունքն էր, լրատվության ու հասարակական կարծիքի մերձեցման հայտանիշը:

Ազատական գաղափարներն իրենց դրսևորումները գտան Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում: Թերթի հիմնադիրներն էին Միսաք Գոչունյանը և Սարգիս Գոչունյանը (առաջինը արտոնատերն էր, երկրորդը՝ տնօրենը): Հատկապես Մ. Գոչունյանը հանրահայտ անձնավորություն էր լրագրության ասպարեզում, իբրև գրող, հրապարակախոս, խմբագիր և Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի առաջին աշխարհաբար թարգմանության հեղինակ: Մինչ այդ, Մ. Գոչունյանն աշխատակցել էր Կ. Պոլսի «Հայրենիք», «Նոր դար» և այլ պարբերականների, 1880–1890-ական թթ.՝ Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» հանդեսին (Քասիմ և Քասիմզուխտ ծածկանուններով), իսկ 1890-ական թթ. խմբագրել էր Կ. Փանոսյանի «Մանզումեի էֆքյարը»:

Իր հրատարակությունը «Ժամանակը» սկսում էր, ինչպես Թուրքիայում հրատարակվող ամբողջ մամուլն այդ օրերին, համիդյան վարչակարգի խիստ քննադատությամբ: Անփառունակ անցյալից և բռնակալության լծից ձերբազատվելու պատրանքը սնում էր առհասարակ հպատակ ժողովուրդների ազգային հույսերը:

Մինչև 1910 թ. մարտ-ապրիլ ամիսները «Ժամանակն» իր ազատամիտ հայկության հետ միասին ի հայտ էր բերում գաղափարական համակրանք՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության նկատմամբ: Ինքը՝ դաշնակցությունը, այն ժամանակաշրջանում փորձում էր արևմտահայության ազգային ինքնորոշման գաղափարն առնչել ակնկալվող բարենորոգումներին, երկրի եվրոպականացման ընթացքից հուսալով նաև Արևմտահայաստանում դրական տեղաշարժերի հնարավորները: Ի դեպ, սա միայն դաշնակցության կողմնորոշումը չէր, այլ բոլոր ազգային կուսակցություններինը ևս, որոնց ազգային ինքնորոշման ձգտումները եզրափակվում էին տեղական ինքնավարության սահմաններով: Այսպիսի ուղեգիծը մի հայտնի չափով կորցնում էր իր հակադրության սուր եզրերը օսմանիզմի՝ դեռևս նախորդ դարավերջից առաջ քաշած ընդհանուր բարեկարգումների կարգախոսի նկատմամբ և Արևմտահայաստանում անցկացվելիք բարեփոխումները դիտարկում էր ամբողջ Թուրքիայի վերակառուցման համատեքստում:

«Ժամանակին» իր գործուն աշխատակցությունն էր բերում Ռ. Զարդարյանն իր հրապարակախոսական հոդվածներով: Նա հետև-

ղականորեն պաշտպանում էր տեղական ինքնավարության սկզբունքը, որը, ի դեպ, երիտթուրքական հեղաշրջման առաջին ամիսներից ի վեր հերքելու էին ձգտում թուրքական մամուլն ու քարոզչությունը: «Տիրապետութեան ոգին» և «Կեդրոնական կառավարութիւն» խմբագրականներում Ռ. Զարդարյանն օսմանյան կայսրության աղետների մի կարևոր պատճառն էր համարում հպատակ ժողովուրդների իրավազրկության սրբագործումը, «կեդրոնացման» անզիջում սկզբունքը (1908, 14 և 19 նոյ.): «Իրաւունքի պայքար» հոդվածում (1908, 26 նոյ.) նա հիմնավորապես քննադատում է օսմանյան խորհրդարանի ընտրությունների եղանակը, իբրև ժողովուրդների անիրավահավասարության դրսևորում: Հպատակ ազգերը, այդ թվում և հայերը, իբրև փոքրամասնություն, ցրված են թուրքական տարրերի մեջ և զրկված են արդարացի ներկայացուցչությունից: Զարդարյանն առաջարկում էր բարեփոխել ընտրության երկաստիճան համակարգը և խառն քվեարկության սկզբունքները: «Դատարանների վերակազմութիւնը» հոդվածում (1908, 18 դկտ.) նա դարձյալ ուշադրություն էր դարձնում համիդյան վարչակարգի վերապրուկների վերացմանը՝ դրա կարևոր լծակներից մեկը համարելով օսմանյան դատական համակարգը: Սահմանադրական իրավունքը, ըստ նրա, պետք է որ հենվի այդ համակարգի վրա, մինչդեռ, հատկապես գավառներում, իրենց տեղերում հաստատուն նստած են հին վարչակարգի բազմաթիվ դատական պաշտոնյաներ, իրենց համբավված բոլոր արատներով հանդերձ:

Հարկ է նշել համիսլամության դեմ ուղղված թերթի առարկությունները, որոնք հիմնավորում էին հպատակ փոքրամասնությունների ազգային ու կրոնական իրավունքները: Մի հոդվածում Զարդարյանը քննադատում էր օսմանյան խորհրդարանի նախագահ Ահմեդ Րիզա բեյին՝ կրոնական ու սահմանադրական սկզբունքները նույնացնելու (որ դեռևս 1860-ական թթ. ձևակերպել էին «նոր օսմանները»), իսլամ և քրիստոնյա ժողովուրդներին հակադրելու անխոհեմ գործելակերպի համար (1909, 11 հնվ.):

«Ժամանակում» տպագրած իր վերջին հոդվածներից մեկում Զարդարյանը հերքում է Թուրքիայում հայկական անջատականության վերաբերյալ ռուսական հետադեմ մամուլի նյութերի համակրական արձագանքները թուրքական թերթերում, քննադատում հյու-

սեին Հիլմի փաշայի կառավարության ծրագրի վերացականությունը երկիրը կառավարելու գործում և այլն (1909, 25 հնվ.): Այս և այլ հրապարակումներում նա հանդես է գալիս կտրուկ հարցադրումներով, իշխանությունների և երիտթուրքական կոմիտեի հանդեպ սրացող ընդդիմությամբ: Այսպիսի կեցվածքն արդեն չէր համապատասխանում «Ժամանակի» զուսպ մտայնությանը, թերթի այն ուղղությանը, որ ենթադրում էին Գոչունյանները: 1910 թ. մարտից հետո, համենայն դեպս, Ռ. Զարդարյանը դադարել է թերթին աշխատակցելուց: Նկատենք նաև, որ «Ժամանակը» դաշնակցությանը հակադրվում է Կիլիկիայի հայերի կոտորածի առթիվ օսմանյան խորհրդարանում հետևողական ուղեգիծ չվարելու, ինչպես և եկեղեցու հանդեպ այդ կուսակցության քննադատական կեցվածքի համար: «Ժամանակի» աշխատակիցներից Ե. Տեր-Անդրեասյանը՝ իր չափավոր հայացքներով հայտնի մի հրապարակախոս, քննադատում էր Զոհրապին՝ ընկերվարության գաղափարները համակրելու համար («Զօհրապ և Դաշնակցութիւնը») (1910, 23 փետ.) և առհասարակ, խնամքով պատվարվում է այդ ուսմունքից: Այդ վարդապետությունը, նշում է «Ժամանակը», պառակտում կմտցնի բուն հայ ժողովրդի մեջ՝ նրան կոտորակելով ըստ դասակարգային հատկանիշների, և ապա հայերի և դրացի ազգերի միջև, որոնք «հակառակ են այդ վարդապետութեանց» (1910, 11 փետ.): Ընկերվարությանը թերթը հակադրում էր ազատականությունը՝ իբրև հասարակական հարաբերությունների ու պետական կառուցվածքի հիմք, որը կոչված է ոչ թե սրելու, այլ հաղթահարելու դասակարգերի հակադրությունը՝ նրանց շահերը համատեղելու միջոցով: Միաժամանակ, թերթը միասնության կոչ էր անում ազգային կուսակցություններին՝ ժողովրդի դրությունը թեթևացնելու գործում այդ համարելով անհրաժեշտություն: Այստեղից՝ ընդհանուր առմամբ նրա ոչ կտրուկ դիրքորոշումը այդ կուսակցությունների նկատմամբ, անգամ այն դեպքերում, երբ դրանցից որևէ մեկի գործելակերպը հակասում էր իր տեսակետին:

Համամիտ լինելով արևմտահայ անկախ մամուլի այն կարծիքին, որ Ադանայում հայերի ջարդը կազմակերպել են հին վարչակարգի կողմնակիցները, «Ժամանակը» ևս դիմում էր կառավարությանը՝ դեպքերին արդարացի գնահատական տալու համար, պաշտ-

պանում էր Կիլիկիայի հայերի իրավունքները և պահանջում կանխելու նման դեպքերի կրկնության փորձերը: Կիլիկիայի հայերին անկարգությունների մեջ մեղադրող իշխանություններին «Ժամանակն» առարկում էր ոչ միայն փաստականորեն հագեցած տարաբնույթ հրապարակումներով, այլև հենց թուրքական մամուլի նյութերով: «Ժամանակը» տպագրեց «Թանին» թերթի Կիլիկիայի թղթակից Ահմեդ Շերիֆ բեյի հոդվածը, ուր ցույց էր տրվում, որ արյունալի իրադարձությունների ժամանակ հայերը դիմել են ինքնապաշտպանության՝ ջարդերից փրկվելու նպատակով:

Մինչև Ադանայի դեպքերը և դեռ դրանից հետո էլ «Ժամանակը» հավատում էր Օսմանյան Թուրքիայի բարեփոխման, դրա հետ միասին՝ հայերի իրավական կացության ապահովման, առաջիկայում այդ երկրի բոլոր բնակիչների իրավահավասարության հնարավորությանը: Միաժամանակ, թերթի բազմաթիվ նյութերում լուսաբանվում են արևմտահայության հողազրկման, պաշտոնյաների չարաշահումների, վաշխառուների քայքայիչ գործողությունների և այլ ողբերգական իրողություններ: Թերթն առանձնապես ընդգծում էր հողազրկման երևույթը, որ սպառնում էր հայերին արմատախիլ անել հայրենի հողից: Տպավորիչ են այս թեմայով գրված թղթակցությունները Բալուից, Մուշից, Ջարսանճագից և այլ վայրերից: Բալուի 40 գյուղերում, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում, հողերի մեծագույն մասը զավթել էին քրդական բեյերը, որոնք, իբրև հողի սեփականատերեր, ներկայացնում էին այդ հաստատող թափուի (սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ) կեղծ վկայականներ (1908, 18 նոյ.): Ջարսանճագում 60 գյուղերի 25 հազարանոց բնակչությունը նույն կարգի բռնավորների ձեռքով զրկվել էր հողերից դեռևս 50–60 տարի առաջ: Շուրա-ի դևլեթը (Պետական խորհուրդ), ինչպես նշում էր «Ժամանակը», վճռել էր, որ այդ հողերի սեփականատիրական իրավունքը պատկանում է քուրդ աղաներին (1910, 12 հլս.):

Որոշակի իրողությունները «Ժամանակը» վերլուծում և ընդհանրացնում էր տեսական հոդվածներով: Հետաքրքիր է Ա. Գալփակճյանի «Տեսութիւն մը Թիւրքիոյ կալուածական օրէնքներուն վրայ» հոդվածը (1910, 21 հլս.): Այստեղ հեղինակն առաջ է քաշում կալվածային ու անշարժ գույքերի վերաբերյալ օրենքների խճճվա-

ծության խնդիրը, որ հնարավորություն էր տալիս օրինականացնել ապօրինի խլված հողերը: Անպտուղ պետք է մնային «Ժամանակի» հույսերը՝ կապված գավառներում գործող հանձնաժողովների գործունեության հետ: Մի որոշ ժամանակ անց, դրանում համոզվելով, «Ժամանակն» առաջարկում էր պաշտոն չունեցող անկախ քննիչների ընդգրկումը նման հանձնաժողովներում, որոնց անդամակցելու էին Ազգային ժողովի կողմից ընտրված առնվազն երկու հայեր (1908, 7 դկտ.): Սակայն ինքը՝ կառավարությունը, անընդհատ ձգձգում էր հանձնաժողովներ կազմելու գործը: Այս առթիվ ևս թերթը նշում էր, որ հանձնաժողովներում նշանակվում են այնպիսի մարդիկ, որոնք հայտնի են հայերի հանդեպ իրենց թշնամական վերաբերմունքով: Փաստորեն երիտթուրքերը քողարկում էին գավառներում կատարվող հարստահարությունները՝ կիրառելով նույն քաղաքականությունը, ինչ դրանից առաջ Յլդըզը:

Համաձայն մնալով Թուրքիայի բարեկարգման, հպատակների հանդեպ երիտթուրքերի անհեռանկար քաղաքականության մասին իր ճիշտ պատկերացումներին, «Ժամանակը», մյուս կողմից, կառավարության ձախող գործելակերպով էր բացատրում Բալկանյան I պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը: Մակեդոնիայում, նկատում էր թերթը, այդ ոչ խելամիտ քաղաքականությունը (բուլղարացիների, սերբերի և հույների հողազրկումը՝ հօգուտ Բոսնիայից բերված իսլամ գաղթականների) հասցրեց տնտեսական ու քաղաքական հակամարտության՝ առիթ տալով բալկանյան երեք տերությունների վճռականությանը ընդդեմ Թուրքիայի: Թերթը կարծում էր, որ Թուրքիայի՝ չբարեփոխվելու համառությունն է պատճառը, որ նրանից երես են թեքել բոլոր տերությունները՝ բացի Գերմանիայից: Մյուս կողմից, թերթը բաժանում էր այն տեսակետը, որ բոլոր տերություններն իրենց քաղաքական շահերի համար գործիք են դարձրել Հայկական հարցը՝ այն օգտագործելով իրենց արտաքին քաղաքականության մեջ: 1910-ական թթ. «Ժամանակի» հայեցակետը բնութագրելու հարցում հատկանշական է Վ. Թեքեյանի ազատական-ռամկավարական ոգով համակված «Ով պիտի դարբնէ և ինչպէս պիտի դարբնուի հայ ազգի ճակատագիրը» հոդվածը (1912, 7 փետ.): Վ. Թեքեյանը պաշտպանում է «Ժամանակի» ուղեգիծը՝ չափավոր և կշռադատված մոտեցում ցուցաբերելով ազգային

խնդիրներին: Այս մոտեցումը հանգեցնում էր «ոչ ըմբոստություն, ոչ հուսալքություն» կարգախոսին՝ «Հայ ըմբոստական շարժումը,- գրում է նա,- այն հզօր պատճառն է, որ սխալ ու գէշ վարուած էր բացարձակ սնանկութեան մը յանգելով, յառաջ բերաւ ազգին բարոյալքուած վիճակը՝ օսմանեան սահմանադրութենէ առաջ եւ թէ անկէ վերջ» (նույն տեղում): Առարկությունը վերաբերում էր դաշնակցությանը, որը, Թեքեյանի կարծիքով, մի ժամանակ վարում էր «ըմբոստական շարժումը», իսկ այժմ որդեգրել է համակերպվելու քաղաքականություն: Թեքեյանն առաջարկում էր հայ ազատամտության ավանդական և միաժամանակ, վերացական սկզբունքները, ազգի ներքին կարողությունների կենտրոնացումը՝ նյութապես ու բարոյապես «ուժեղանալու» համար: Այս ուղին նրան պատկերանում էր կուսակցական տարաձայնությունների հաղթահարման և ազգի նյութական ու բարոյական արժեքները տնօրինող «բարձր» դասակարգի ուժերով ազգային լուրջ ծրագիր ստեղծելու ձևով: Իր միջակա դիրքերից թերթը հակադրվում էր նաև օսմանյան ծայրահեղությանը՝ իթթիհատին, դատապարտելով նրա չափազանց ազգայնամոլությունը: «Ժամանակը» նախընտրում էր հավասարակշռությունը կայսրության տիրապետող ազգի և հպատակ փոքրամասնությունների միջև: Օսմանյան քաղաքական գործիչներից շատ քչերն են, որոնք կրոնը զուտ խղճի խնդիր են համարում, նկատում էր թերթը: Նա վկայակոչում էր նաև հայտնի սահմանադրական էբյուզիա Թեվֆիկին, որն օսմանյան տարածքների կորստյան պատճառն էր համարել թուրքական հոռի վարչությունը և խտրականության քաղաքականությունը: Ավելացնենք նաև, որ Թուրքիային պատահած բոլոր նորագույն աղետները՝ պարտությունները Բալկանյան առաջին պատերազմում, ներքին ցնցումները և առհասարակ հեղհեղուկ կացությունը, թերթը համարում էր երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության հետևանք, որ կառավարությունից վանում էր Թուրքիայից Եվրոպային և փոքրամասնություն կազմող հպատակներին: 1913 թ. փետրվարին «Ժամանակը» սուր քննադատության ենթարկեց երիտթուրքական նոր կառավարությանը՝ երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, ի նպաստ պատերազմի՝ ժողովրդի մեջ հանգանակություններ անցկացնելու և հայրենասիրական հարայհրոցի մեջ սեփական քաղաքական նպատակները քողարկելու համար:

Թերթը պնդում էր, որ հանուն հայրենիքի հանդանակության կամ նվիրատվության կոչը չի կարող արձագանք գտնել հայության մեջ, որը զրկված է իր ազգային ու քաղաքական իրավունքներից և մտահոգված է «կեանքի, պատուի եւ ինչքի ապահովութեան» խնդիրներով (1913, 4 փետ.):

Հոդվածի տպագրությունից երկու օր անց, փետրվարի 6-ին, օսմանյան մամուլի վերատեսչությունը հայտնում էր, որ «Ժամանակը» խափանվում է Ա. զորաբանակի հրամանատարության որոշմամբ, «միտքերը գրգռող» և ժողովրդի մեջ «անհամաձայնութիւն և թշնամութիւն» առաջ բերող մտքերի պատճառով (1913, 6 փետ.): Գործող գրաքննական կանոններով, թերթն այլևս չէր կարող նույն անվամբ հրատարակվել, ուստի այն վերահրատարակվել է «Հեռաձայն» անվամբ՝ 1913 թ. փետրվարի 8-ից մինչև 28-ը, որից հետո վերստացել նախկին «Ժամանակ» անունը (պատժաչափի ժամկետը լրանալուց հետո): Արդեն սկսվել էր ռազմական հիստերիայի բորբոքումը՝ իշխանությունը լծվին վերահսկող իթթիհատի կողմից: Ակտիվացել էին հատկապես մուֆտիները, որոնք կրոնական մոլուցքով լցված թուրքերին գրգռում էին հայերի դեմ: «Հեռաձայնի» նյութերից պարզվում է, որ խրախուսվում է հայկական ազգային գույքի բռնագրավումը էվգաֆի (վակֆների) մյութեվելլիների (կառավարիչների) կողմից: Այս կերպ, 1913 թ. սկզբին բռնագրավվել էին Եդիկուլեի ագարակը՝ 60 հազար ոսկի արժեքով, Ղալաթիայի նամակատան շենքը, որը Ս. Փրկչյան հիվանդանոցի սեփականությունն էր և այլն: Այս առիթով թերթն առաջարկում էր դիմել ոչ թե ոչ արդյունավետ՝ թագրիրներ (խնդրագրեր) գրելու ավանդական եղանակին, այլ շերիի դատարանին, որը, նրա կարծիքով, կարող էր արդարացի վճիռ կայացնել («Հեռաձայն», 1913, 17 փետ.):

1913–1914 թթ. «Ժամանակը» հիմնականում իրատեսորեն է ներկայացնում հասարակական ու քաղաքական լարված մթնոլորտը, որ տիրում էր երկրում: 1913 թ. ապրիլի 29-ին պատրիարքը հայտնում էր վարչապետ Մահմուդ Շեվքեթ փաշային, որ «համատարած կատարածի մը ընդհանուր սարսափը կը տիրէ» հայաբնակ նահանգներում, և պահանջում էր «ամենաազդու միջոցներ ձեռք առնուլին հետացնելու համար այդ վտանգը և պաշտօնական յայտարարութեամբ մը ճշդուի Հայոց մասին թիւր գաղափարները» (1913,

13 մյս.)։ Վարչապետը խոստացել էր իր աջակցությունը՝ դարձյալ վկայակոչելով այնքան չարչրկված բարենորոգումների ծրագիրը։ Այդ ծրագիրը թերթը չարունակելու էր քննարկել, բայց առանց որևէ էնտուզիազմի, ամբողջ 1913 թ. ընթացքում, իր ընթերցողներին կոչ անելով միաբանվել և թողնել ներքին երկպառակությունները՝ վերահաս աղետներին դիմակայելու համար։ 1913 թ. կեսերից «Ժամանակն» ավելի հեռևողական է դարձնում իր այս դիրքորոշումը։ Մահմուդ Շեվքեթին ասպարեզից հեռացնելուց հետո երկրում արդեն հաստատվել էր երիտթուրքական եռապետությունը[1]։

Ուշագրավ են Թուրքիայի տնտեսական դրության լուսաբանումները «Ժամանակի» էջերում։ Երկրի տնտեսական կացությունը հիմնականում առնչելով նրա ներքաղաքական դրության, հպատակ ժողովուրդների դեմոկրատական ազատությունների հետ, «Ժամանակը» հանդես է եկել իբրև երկրի ինքնուրույն տնտեսական զարգացման ուղեգծի պաշտպան։ Եվրոպական երկրների տնտեսական կախվածությունից Թուրքիայի ազատվելու գործում թերթը կարևորում էր արդյունաբերական արտադրության ստեղծումը, առևտրից արդյունաբերության անցնելու խնդիրը։ «Ժամանակի» թղթակիցներն ուշադրություն են դարձնում Թուրքիայի դարավոր հետամնացությանը՝ հումք արտահանելու և արդյունաբերական արտադրանք ներմուծելու հանգամանքին, որպես տնտեսության թերզարգացածության չափանիշի։ Նրանք առաջարկում են կիրառել մաքսային ճկուն և հիմնավորված քաղաքականություն, այն ամրապնդելով խրախուսող օրենքներով՝ հօգուտ տեղական արտադրության զարգացման, ընդգծում են եվրոպական ներդրումների կարևորությունը թեթև արդյունաբերության զարգացման բնագավառում։

Արևմտահայաստանի տնտեսությունը բարվոքելու նպատակով թերթն անհրաժեշտ էր համարում նրան տնտեսական ազատություններ տրամադրելը, բանկերի և ընկերությունների միջոցով վաշխառուներին մեկուսացնելը գյուղացիական տնտեսությունից, մատչելի տոկոսադրույքներով գյուղացուն վարկ տրամադրելը։ Երկրի տնտեսական զարգացման, դրա հեռանկարների հանդեպ ունեցած

[1] Կիրակոսյան Ջ. Ս., Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, Ե., 1982, էջ 196։

իր մտայնությամբ «Ժամանակը» հանդես էր գալիս իբրև առաջադիմական լուրջ հրատարակություն:

Օսմանյան Թուրքիայում հայերի՝ իբրև ազգության իրավունքների պաշտպանությունը «Ժամանակը» հիմնավորում էր այդ երկրի տնտեսության, վարչության ու մշակույթին նրանց մատուցած խոշոր ծառայությունների վկայակոչումներով: Ա. Անտոնյանի «Պալյանները և իրենց շինությունները» հոդվածում (1910, 1, 2, 8 դեկտ.) բավական հետաքրքիր մանրամասներով բացահայտվում է Պալյան ամիրաների կարևոր դերը Թուրքիայի ճարտարապետության պատմության մեջ՝ սկսած 17-րդ դ. երկրորդ կեսից մինչև 19-րդ դ. երկրորդ կեսը: Անդրադառնալով Պալյանների կառուցած Չրաղանի պալատի աղետալի հրկիզմանը, թերթը նկատում էր, որ այրվել են նաև արվեստի մեծ արժեքներ, այդ թվում և Այվազովսկու երեք ծովանկարները: Նույն նախասիրություններից ելնելով, թերթը տեղեկացնում է Ֆրանսիայում հայազգի Հովհաննես Ալթընի գործունեության մասին, որ ժամանակին նա է արմատավորել այդ երկրում տորոնի արտադրությունը, և որ այդ հաշվի առնելով՝ ֆրանսիացիները Ավինյոնում կանգնեցրել էին նրա արձանը (1910, 19 ապր.): «Ժամանակն» անդրադառնում էր նաև ավելի հեռավոր անցյալին: Տպագրել է սուլթան Մուրադ Դ-ի (1623–1640)՝ հայերին տված ֆերմանի տեքստը, որի ուժով Զեյթունի հայերն ազատվում էին գլխահարկից և նրանց շնորհվում էր ինքնավար կարգավիճակ՝ կառավարվելու առանց արտաքին միջամտության (1910, 28 մրտ.):

Մինչև 1910-ական թթ. կեսը «Ժամանակին» աշխատակցել են անվանի հրապարակախոսներ, գրողներ ու լրագրողներ, որոնց թվում՝ Գր. Զոհրապը, Ա. Անտոնյանը, Վ. Թեքեյանը, Ռ. Զարդարյանը, Ե. Օտյանը, Հ. Ասիլիարը, Տ. Արփիարյանը, Արշ. Թեոդիկը, Զ. Եսայանը, Ար. Փանոսյանը և ուրիշներ: Նրանց գրական հմտությունները, արծարծած հրատապ հարցերը և գրչի դասական փայլը ապահովեցին ընթերցողի չթուլացող ուշադրությունը, որ վկայում է «Ժամանակի» հաստատուն տեղը հայ մամուլի պատմության մեջ:

«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» (1911–1914)

«Հայ գրականութիւնը» Զմյուռնիայում լույս տեսած երրորդ գրական պարբերականն է՝ «Արփի Արարատեանից» և «Արեւելեան մամուլից» (1901–1909) հետո: Ամսագիրը խմբագրում էր Զարեհ Գազազյանը, որն արևմտահայ ընթերցողին հայտնի էր նաև նույն ժամանակներում Զմյուռնիայի «Դաշինք» օրաթերթում տպագրած իր գրական և հրապարակախոսական գործերով:

Ամսագիրն հիմնականում ընդգրկում էր գրական երեք ուղղություններ՝ ժամանակի հայ և եվրոպական գրողների երկեր, դրանք իմաստավորող գրաքննադատական հոդվածներ ու գրախոսականներ, ինչպես նաև գրական գեղագիտական բնույթի ինքնուրույն և թարգմանական ուսումնասիրություններ: Պարբերականին աշխատակցում էին արևմտահայ գրական ու հրապարակախոսական լավագույն ուժերը՝ Մ. Նուպարյանը, Օ. Զիֆթե-Սարաֆը, Ռ. Սևակը, Արտ. Հարությունյանը, Զ. Եսայանը, Ս. Պարթևյանը, Հ. Մառքը, Հ. Նազարյանցը և ուրիշներ:

Ամսագրի գրաքննադատական նյութերը հագեցած են գրականության ազգային նկարագրի, այն բացահայտելու և ազգի կացության հետ փոխհարաբերվելու, քաղաքակրթության հախուռն ընթացքի մեջ հայ հանրության արժեքների պահպանության խորին մտահոգությամբ: Երիտթուրքական հույսեր չներշնչող կառավարումը, 1909 թ. Ադանայի կոտորածը և հայ հանրության հեղհեղուկ վիճակն ու դրանից ծնվող դրաման ամսագրի հեղինակներին մղում է գրականության քաղաքացիական նշանակության նորովի գնահատմանը: 1900-ականի համիդյան բռնապետության բեռը թոթափած օսմանյան իրականությունը գրական այս սերնդի առջև պարզվում էր անկանխատեսելի բռնություններով հղի հեռանկարներով ու պոռթկումներով, և այստեղից՝ ամսագրի հեղինակների ներքին խոր տագնապը հայ անհատի ու ժողովրդի հավաքականության մոտալուտ ապագայի, իրականությանը համարժեք հոգևոր որակներով դիմակայելու խնդիրը:

Ամսագրում, սակայն, գրականության ազգային նշանակությունը միատեսակ չի գնահատվում և այստեղ է, որ իրար են հակադրվում ռեալիստական ու արդիական՝ դեկադենտական ըմբռ-

նումները նրա էջերում: Առաջին ուղղության մոտեցումն էր արտահայտում Արտ. Հարությունյանը, երբ գրականությունը համարում էր իմացական գործունեության բարձրագույն դրսևորում, որ հնարավորություն էր տալիս ազգին՝ դիմակայելով ապրել օսմանյան հեղձուցիչ և այլասերված միջավայրում (1911, թիվ 3, էջ 26): Այսպիսի մոտեցումը ենթադրում է իրականությունը վերարտադրելու, այլև դրա վրա ներգործելու ռեալիստական սկզբունքը, միաժամանակ, կարևորելով գրականության բնութագիրը պայմանավորող ազգային կյանքը: Արևմտահայ գրականության համար նա այդպիսի գործոն է համարում Օսմանյան Թուրքիայի ոչ բարենպաստ քաղաքական նկարագիրը, որն իր կնիքն է դնում ժամանակակից գրականության ընթացքի վրա (1912, թիվ 8, էջ 23–26): Գրեթե նույն մոտեցումն է ուրվագծվում Ս. Պարթևյանի «Հայ գրականութիւն» հոդվածում (1911, թիվ 1, էջ 1–3): Զգացվում է նրա խորին հիասթափությունը երիտթուրքական կառավարումից, որ հաացրեց Ադանայի սպանդին և որի հետևանքների հաղթահարումը նա ակնկալում է նաև գրականության «ապրեցնող» բարոյական արժեքներից: Քաղաքական ավյալ պայմաններում գրականության գործառույթի հնարավորությունների խնդիրը քննարկվում է նաև Զ. Գաղաղյանի «Ցեղային բարգաւաճում» հոդվածում (1911, թիվ 1, էջ 21–23, թիվ 2, էջ 1–4): Նա գրականության զարգացման քաղաքական, տնտեսական ու բարոյական առավել բարենպաստ պայմաններ է տեսնում արևելահայ հատվածում («Բարոյական սկզբունք և մտաւորական ույժ» հոդվածը) (1913, թիվ 12, էջ 1–3): Շոշափելով հասարակության և գրականության փոխհարաբերության խնդիրը, Զ. Գաղաղյանը առաջադրում է վերջինիս հասարակական նշանակալիության գաղափարը: Այս տեսակետից է նա առանձնացնում արևելահայ գրականության բարոյական ու մտավոր սկզբունքայնությունը՝ այդպիսիք համարելով «չինիչ հոսանք»:

«Հայ գրականութեան» գրաքննադատների լուրջ մտահոգություններից մեկը գրական անկյալ բարքերի վերանորոգման խնդիրն էր, հայ գրականությունը իր բարոյական բարձր չափանիշներին հասցնելը: Զմյուռնիայի «Դաշինք» թերթում Զ. Գաղաղյանը գրում էր, հանրագումարի բերելով իր ամսագրի երեքուկես տարվա գործունեությունը, որ վերջինիս նպատակն էր «գրական եւ գեղարո-

ւեստական որոշ հոսանք մը ստեղծել՝ մտաւորական ընդհանուր գործունէութիւն եւ կենդանութիւն մը ապահովելու համար» («Դաշինք», 1914, 20 փետ.), և որ գրականությունը հարկ է ազատել քաղաքական անհարկի ազդեցություններից:

«Հայ գրականութիւնը» այս շրջանի բնութագիրը տալիս էր ոչ միայն ռեալիստական գրաքննադատության չափանիշներով, այլև դեկադանսի գրականագիտական գնահատումներով: Վերջին մոտեցումը առավել քան ակնհայտ է Հ. Քյուֆեճյանի հոդվածներում, որոնք վերաբերում են և՛ արևմտահայ, և՛ արևելահայ գրականությանը և նրա դեմքերին: Ելնելով «մաքուր արվեստի» գեղագիտական ընկալումներից, այս հեղինակը պնդում է, որ գրական նորագույն սերունդը «կը յաւակնի ամէն յարաբերականութենէ, ամէն կապերէ ազատել արուեստի հասկացողութիւնը: Ընդհանուր մշուշի մը մէջ հոգիները կը փնտռեն բարձունքները փայլակող գերագոյն լոյսը» (1912, թիվ 5, էջ 11):

Քյուֆեճյանը հակասական կարծիք ունի արևելահայ բանաստեղծության մասին, որը բխում է գրականության և իրականության փոխհարաբերության հանդեպ զուտ արվեստը արվեստի համար նրա ելակետից: Նա պնդում է, որ արվեստը, պոեզիան հուզական սահմաններից այն կողմ չպետք է անցնեն: Արվեստը պետք է հեռու մնա հասարակական ճշմարտություններից, դրանք, ինչպես և քաղաքականությունը արժեզրկում են գեղեցիկը, և ներխուժելով այս վերջինի մեջ, այն իջեցնում են միջակության աստիճանի: Այս քննադատը կարծում է, որ նման նպատակադրումը չի կարող դրսևորվել այլ կերպ, քան «բարոյախոսի ծանր ծիրանիով», որը հենց ինքը՝ ձևի անկատարությունն է: Այս մեկնակետից է գնահատում Քյուֆեճյանը Ավ. Իսահակյանի պոեզիան, միաժամանակ, արժանին հատուցելով նրա՝ ժողովրդական երգի ռիթմին, մեղեդայնությանն ու մաքուր զգացումներին, և մյուս կողմից, դիտողություններ անելով Իսահակյանի արվեստի, բանաստեղծական տեխնիկայի, կառուցվածքային և այլ թերությունների (տաղաչափություն, հանգեր և այլն) մասին (1912, թիվ 11, էջ 32–33): Քյուֆեճյանը, որքան էլ բարձր գնահատի Իսահակյանի պոեզիայի «ժողովրդական թրթռումները, վառ անուշութիւնը», այնուամենայնիվ մնում է իր գեղագիտական ընկալումների պատանդը, երբ դասական կամ սալոնական

նորագեղություն է ակնկալում բանաստեղծի այդ նույն ժողովրդական ոճից: Նույն ոգով և միակողմանիությամբ նա գնահատում է «Գարուն» ալմանախի (Մոսկվա, 1912) մյուս հեղինակներին և գրաքննադատներին՝ հատկապես մերժելով վերջիններիս մոտեցումները պոեզիայում իրականության անհրաժեշտ անդրադարձի վերաբերյալ:

Քյուֆքեճյանը գեղագիտական նույն չափանիշներով է մոտենում Դ. Վարուժանի պոեզիային՝ դարձյալ քամահրելով դրանում առկա գաղափարական «ուսուցիկ ոլորտները»՝ հասարակություն բարելավելու երազները («Մեքենաները», «Մայիս 1»): Վարուժանի բանաստեղծական պատկերները, դժգոհում է քննադատը, «այդ ուսուցիկութեան մէջ կը կորսուին, կը փոքրանան» տեղի տալով ռամբերգի թափին ու աղաղակին (1913, թիվ 4, էջ 16–17): Միաժամանակ, Քյուֆքեճյանը Վարուժանի «Ցեղին սիրտը» և «Հեթանոս երգերը» համարում է հայ պոեզիայի զարգացման նոր ուղիներ, որ ներառում են ազգի բանաստեղծության նախընթաց շրջանների հարստությունը. «Ան դասական է, ռոմանթիկ է, իրապաշտ է»,- գրում է նա (1914, թիվ 5, էջ 31):

Վարուժանի ստեղծագործության հիմնավոր գնահատականին նպաստեց նաև ամսագրում հաճախակի հանդես եկող Զ. Գուշագյանը: Իր «Գրական վերլուծումներում» բանավիճելով «Շանթի» գրաքննադատի հետ, նա հատկապես կարևորում էր Վարուժանի ինքնատիպությունը, ուժի, գեղեցկության և կենսասիրության խորունկ զգացումների նրա արվեստը:

«Հայ գրականութեան» գրաքննադատների հիմնական թեմաներից է 19-րդ դ. 2-րդ կեսի ազգային գրականության արժեքավորումը: Այս կարգի հոդվածներում ավելի կամ պակաս չափով փորձեր են արվում բնութագրելու Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Պարոնյանի, Ե. Տեմիրճիպաշյանի և այլոց ստեղծագործությունները, որոշելու նրանց տեղն ու նշանակությունը գրականության մեջ: Հակառակ դեկադենտ գրաքննադատների, ամսագրի հեղինակներից Հրանդը բարձր է գնահատում գրականության մեջ քաղաքացիական ուղղվածությունը՝ հանձինս Մ. Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» առաջավոր հեղինակների:

«Հայ գրականութեան» 1911–1912 թթ. թվահամարներում չարունակաբար տպագրված՝ Հրանդի այս հոդվածաշարը, թերևս, Ե. Տեմիրճիպաշյանի ստեղծագործությանն ու հրապարակախոսությանը նվիրված՝ ժամանակի լավագույն ուսումնասիրություններից մեկն է:

Հ. Պարոնյանի երգիծանքի ճշմարիտ գնահատականն է տրված Ռ. Սամիկյանի մի հոդվածում: Ուշագրավ է Հ. Պարոնյանի և Հ. Ալփիարի (Քրիզանթէմ) համադրումը, մեծ դասականի և ժամանակակցի ուրվագծային, բայց և տպավորիչ ծաղրի միջև անցկացված զուգահեռները: Պարոնյանը, գրում է Սամիկյանը, «երգիծական թիպեր ստեղծած է, իր ժամանակին նշանաւոր դէմքերը հարուածած է՝ անոնց հոգին մերկացնելով ու մտքի կարողութեան վրայ ծիծաղելով, մինչդեռ Ալփիար ... հետեւած է ... պաճուճազարդ ու խաբուսիկ գրականութեան, որ սիկառէթի մը լայն ծուխին պէս կը ցնդի: Բայց այս ծուխը մինչեւ որ անհետանայ, մեր աչքին առջեւ կը պարզէ ցնորական, ծաղրական և այլանդակ մարդապատկերներուն ուրուագիծը» (1911, թիվ 4, էջ 25):

Հայ գրականության «ցեղային ոգին» ամրապնդելու որոնումները ամսագրում դրսևորվել են նաև «գավառական գրականության» կենսունակ շիթերը պահպանելու և զորացնելու մտահոգությամբ, որ սկիզբ էր առել դեռևս Ա. Արփիարյանի, նրա «Մասիս» շաբաթաթերթի (1887–1889 թթ.) ժամանակներից և առավել իմաստավորվել «Հայրենիքում» (1990-ական թթ.), XX դարասկզբի գրական «Մասիսում» և այլ պարբերականներում: Գրականության՝ դեպի գավառ դիմաշրջվելու տասնամյակներ ի վեր հասունացած խնդիրը ոչ այլ ինչ էր, բայց եթե գրականության ժողովրդայնացման, ի վերջո, նորօրյա ռեալիզմի դեմոկրատացման պահանջ:

Ջիֆթե-Սարաֆի՝ ամսագրում տպագրած գործերը ունեն միևնույն «Գյուղական տեսարաններ» ընդհանուր խորագիրը: Այս հեղինակը հատկապես ծանրանում է գյուղական միջավայրի, բնության գեղեցկությունների նկարագրության վրա, նրա գործերը ավելի շուտ մոտենում են գեղարվեստական ակնարկի ժանրին և սա ոչ թե ինքնանպատակ է, այլ հետամտում է բացահայտել հենց բնական միջավայրում ապրող և նրա մասնիկը կազմող մարդուն (թեև բնապատկերների հերթագայության մեջ գլխավորապես դրսևորվում են հեղինակա-

յին պատումները՝ «Փոթորիկը», «Ծովափը», «Դիւթական լճակը» և այլն) (1911, թիվ 1, էջ 19, թիվ 2, էջ 20–22, թիվ 3, էջ 44–47): Չիֆթե-Սարաֆը գյուղական պատկերներն ամբողջացնում է մարդկանց և բնության նույնականությունը ցուցադրող նուրբ անցումներով՝ իր տեսարաններից մեկում նկարագծելով «Հեռաւոր ու անշուք այն գիւղը, ուր ձկնորսներ, ձկնաֆներ և իրենց եղովը տապկուող պարզ ու բարի Հայեր կը բնակուին» (1912, թիվ 9, էջ 15):

Ավելացնենք, որ Չիֆթե-Սարաֆը միջավայրի նկարագիրը կարևորում է ոչ միայն գավառական, այլև մեծ քաղաքի մարդկանց ճանաչելու իմաստով. «Պոլսական տեսարաններ» խորագրով ակնարկներում նա վերակենդանացնում է Կ. Պոլսի մեծ շուկան՝ բեդեստենը, երբեմն անցնում ուղղակի նկարագրությունների՝ մատնելով իր ռոմանտիկական տրամադրությունները (1912, թիվ 4, էջ 6–11, 1914, թիվ 5, էջ 12–14):

Եթե ամսագիրը գրականությունը կենսական ճշմարտություններով հարստացնելու միջոցներից մեկը որոնում էր գավառահայ իրականության գեղարվեստական պատկերման մեջ, ապա արևելահայ գրողների երկերում տեսնում էր դրա իրականացման օրինակները: Այս հարցում համամիտ են ամսագրի գրեթե բոլոր գրաքննադատները:

Անկասկած, Նալբանդյանի, Նազարյանցի, Թումանյանի, Իսահակյանի, Ահարոնյանի և արևելահայ գրական այլ դեմքերի վերհանումով «Հայ գրականութիւնը» հաջողությամբ փորձում էր ոչ միայն կենսական նոր հուն տալու արևմտահայ արձակին, այլև շարունակում էր ազգի երկու խոշոր հատվածների գրական ու մշակութային մերձեցման համազգային նշանակության գործը: Հետևելով այս ուղեգծին, «Հայ գրականութիւնը» ուշագրավ գնահատումներ է տալիս նաև Ղ. Աղայանի, Գ. Սունդուկյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Գր. Արծրունու և այլոց գործերի մասին, տպագրել Վ. Փափազյանի, Ավ. Իսահակյանի, Շ. Կուրղինյանի և արևելահայ այլ գրողների երկերից: Ամսագիրը հետևում էր ժամանակի ռուս գրականության զարգացումներին և գրական իրականությունը, դարձյալ նկատի առնելով, որ արևելահայ գրականությունը որոշակի բարերար ազդեցություն է կրում ռուս գրականությունից:

«Հայ գրականութեան» էջերում տպագրվել են ժամանակի արևմտահայ գրականության գրեթե բոլոր ճանաչված արձակագիրներն ու բանաստեղծները՝ Մ. Նուպարյանը, Դ. Վարուժանը, Զ. Եսայանը, Սիամանթոն, Վ. Թեքեյանը, Ռ. Սևակը, Հ. Ալփիարը, Հ. Մառքը և ուրիշներ: Նրանց աշխատակցությունը պատիվ կբերեր հայկական (և ոչ միայն հայկական) ամեն մի հեղինակավոր հրատարակության: Ամսագրի գրական նյութերն առանձնանում են ոչ միայն ձևի, այլև գաղափարական պատկերացումների բազմազանությամբ, եվրոպական բանաստեղծական նորագույն ուղղություններին հետևող, բայց և 1880–1890-ական թթ. գրական ռեալիստական ավանդույթները զգալիորեն նախընտրող մտայնությամբ: Գեղարվեստական արձակը՝ նորավեպը, պատմվածքը, էսսեն, ուղեգրական և դիմանկարային ակնարկը, արձակ և չափածո բանաստեղծական գործերը կրում էին իրենց տաղանդավոր հեղինակների անհատականության կնիքը՝ բոլոր դեպքերում արտահայտելով օսմանյան դժվարին իրականության մեջ հայ գրականության առկա կացությունը, նրա որոնումները հայրենասիրության, մարդասիրության բարոյական բարձր արժեքների սեփական պատկերային ու մտավոր համակարգը ստեղծելու ճանապարհին: Դ. Վարուժանը համարձակ շեշտեր էր մտցնում հայ ավանդական ուղեգրության մեջ՝ հատկապես ընդգծելով բռնությանը դիմակայող ուժի գեղեցկությունը: Կորֆու կղզում, գրում է նա, «Իսլամը ... մզկիթ չէ կառուցած բնաւ, կորֆուցիին հոգին խրոխտ է եւ ստրկացում չի ճանչնար» («Դրուագ մը ճամբորդի հին յուշերէս») (1911, թիվ 2, էջ 11–13):

Ամսագիրը տպագրեց Դ. Վարուժանի «Կղէոպատրա», «Սպասում» և «Դարձ» բանաստեղծությունները՝ գրված նրան հատուկ էպիկական թափով և այն հարստացնող մեղմ քնարականությամբ (1912, թիվ 8, էջ 12, 1913, թիվ 12, էջ 5): Սիամանթոն այստեղ տպագրել է իր «Թաղման առավոտ մը» բանաստեղծությունը՝ կոտորածների դժնի պատկերներով և «անիրավված Արարատի» վիթխարի չափերին համապատասխան ուրվագծելով հոգևոր մնայուն արժեքներ ստեղծած ժողովրդի խորունկ ողբերգությունը (1912, թիվ 8, էջ 22): Ռ. Սևակի բանաստեղծությունները հագեցած են քնարականությամբ սիրո դրամայից ծնվող նուրբ և ինքնատիպ ապրումներով, երբեմն՝ կարոտի էլեգիական վերհուշումներով («Մեներգ ինձ

համար», «Կարապի երգը», «Ցնծուն մահը» և այլն) (1911, թիվ 2, էջ 7, թիվ 3, էջ 37, 1912, թիվ 8, էջ 38, 1913, թիվ 2, էջ 5): Ռոմանտիկական զգացումներով են շնչում ամսագրում տպագրված Զ. Եսայանի արձակ գործերը («Յասմիկները», «Աստուածային ժպիտը») (1911, թիվ 1, էջ 20–21, թիվ 4, էջ 1–4, թիվ 2, էջ 14–19, 1912, թիվ 11, էջ 21–25), որոնք իրենց նուրբ և թրթռուն տրամադրություններով սպիտակ բանաստեղծություն են հիշեցնում, մինչդեռ նորավեպերում («Իտէալը», «Վարժապետը» և այլն) հեղինակը նախապատվությունը տալիս է իրական կյանքի պատկերներին:

Ինչպես միշտ, իր երգիծական գործերով ամսագրում հաճախակի հանդես է եկել երգիծաբան Հ. Ալփիարը: Ալփիարը գրում է երգիծական քրոնիկ հիշեցնող ժանրով, որոնք կարելի է նաև ֆելիետոն համարել, երգիծական պատմվածքներ, երգիծական մեծ ու փոքր պատումներ և այլն: Նրա գրիչը, սակայն, հավասար ուժգնությամբ չի տիրապետում երգիծական արվեստին, հաջող և դիպուկ ծաղրով պատկերված նրա հերոսների ու իրադրությունների կողքին ոչ քիչ դեպքերում կարելի է հանդիպել ինքնանպատակ և գրեթե ոչ ընկալելի հումորի, որի գործողության շառավիղները դուրս չեն գալիս մտավորական խավերի նեղլիկ շրջանակներից: Իր չափի զգացումը հաղթահարող անհարկիորեն առատ ֆրանսաբանությունները (դարձվածներ, բառերի քմահաճ կիրառություններ և այլն), կարծես, հայտնում են, որ երգիծաբանը գրում է զուտ «գրական մարդոց» համար, որոնց միայն կարող է հասկանալի լինել չափազանց նրբացած և, այդ պատճառով էլ, գրեթե աներևույթ դարձած հումորը: Այնուհանդերձ, Ալփիարը կարողանում է խոցել միջավայրի և բարքերի ճղճիմությունը, երևույթի ձևախեղումը վերագրել հենց մարդու ներաշխարհի ձևախեղմանը, որ փաստորեն ի հայտ է բերում ժամանակակից մարդու արատներն ու թերությունները:

Իր գրաքննադատական հմտալի հոդվածներից բացի, «Հայ գրականութեան» մեջ գեղարվեստական գործեր է տպագրել նրա խմբագիր Զ. Գաղազյանը: Գաղազյանի առաջին նորավեպերում առկա է նրա հակումը դեպի սենտիմենտալիզմը, այնուհետև դեկադանսը և միստիկական պատկերներից ծնվող բարոյախոսությունը («Աղբրող աչքը», «Ոսկերնակ բլուրը» և այլն) (1912, թիվ 3, էջ 30–35, թիվ 12, էջ 16–20): Սակայն իր հետագա գործերում Գաղազյանը

կանգնում է իրական և հաստատուն գետնի վրա, ստեղծում միջավայրի և անհատի ուշագրավ պատկերներ, որոնք շարժման մեջ են դրվում հետաքրքիր սյուժետային զարգացումների միջոցով («Թիթեռնիկը», «Ներումէն յետոյ», «Հասան չաւուշ», «Ջաղացպանը» և այլն) (1913, թիվ 4, էջ 28–32, թիվ 7, էջ 17–27, թիվ 9, էջ 11–18, 1913, թիվ 11–12, էջ 44–51):

Ամսագիրը տպագրել է բազմաթիվ թարգմանական երկեր՝ հիմնականում ֆրանսիական և իտալական գրականությունից: Հարկ եղած դեպքում թարգմանիչները կամ այլ հեղինակներ հակիրճ տեղեկություններ են տալիս այս կամ այն եվրոպական գրողի մասին և բնութագրում նրա ստեղծագործությունը: Այս կերպ Զ. Գազազյանը ֆրանսիական բանաստեղծ Պ. Քիյարի մահվան առթիվ գրած հոդվածում վերհանել է նրա նուրբ արվեստը և գրական առողջ կեցվածքը՝ հատկապես առանձնացնելով "Pro Armenia"-յի հիմնադրի հայասիրությունն ու մարդասիրությունը (1912, թիվ 9, էջ 1-3): Իր «Թերթօն» բաժնում ամսագիրը տպագրեց Հ. Սերաոյի «Հռոմի հաղթանակը» վեպը, Վոլտերի, Լըկոնտ դը Լիլի, Միլվուայի, Ս. Պրյուդոմի, Գ. դ՚Անունցիոյի, Կ. Համսունի և այլոց գործերի թարգմանությունները: Իր թարգմանական գրականության հարուստ ցանկով Զ. Գազազյանը վարում էր գրական որոշակի ուղեգիծ՝ հետամտելով ընդլայնելու ազգային գրականության շփումները եվրոպական հին ու նոր գրական արժեքների հետ:

Իր գրական ուղղվածության քերումով «Հայ գրականութիւնը» քիչ է անդրադարձել Զմյուռնիայի հայ հանրության մշակութային կյանքի իրողություններին: Սակայն «Հայ գրականութիւնը», որպես գրական ամսագիր, վկայում էր, որ զմյուռնահայ գրական միտքը իր գոյության վերջին տասնամյակին իսկ հանդես էր գալիս իբրև առաջավոր ուժերից մեկը հայ գրական անդաստանում:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ (1918–1922)

Արևմտահայության ցեղասպանության տարիներին, հատկապես 1915–1917 թթ., Կ. Պոլսում հայ մամուլի մասին շատ քիչ բան է հայտնի, գոնե այնքան, որ դեռևս հրատարակվում էին մի քանի

պարբերականներ: 1915 թ. ապրիլին Կ. Պոլսում ձերբակալված և աքսորված հայ մտավորականների մի զգալի մասը խմբագիրներ, հրապարակախոսներ և լրագրողներ էին, որ մահացու հարված հասցրեց հայ մամուլին[1]: Հայ հանրությունը փաստորեն հայտարարված էր օրենքից դուրս, ինչը կործանարար հետևանքներ պետք է թողներ նրա մշակութային հաստատությունների, այդ թվում և մամուլի վրա:

Նոր պարբերականներ Կ. Պոլսում հայտնվեցին 1918 թ. աշնանը, Մուդրոսի զինադադարից՝ առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտության արձանագրումից հետո: Առաջիններից մեկը, որքան հայտնի է, իր օրաթերթը վերահրատարակեց Հայ Հեղափոխական Դաշնակցությունը («Արդարամարտ», ապա «Արիամարտ» և «Ճակատամարտ»), որին հետևեցին մի քանի նոր թերթեր («Ժողովուրդ», «Խելօք Դավիթ» և այլն): Կարճ ժամանակ անց հայտնվեցին այլ պարբերականներ. եթե 1918 թ. Կ. Պոլսում լույս են տեսել յոթ նոր պարբերականներ, ապա 1919 թ. Կ. Պոլսում և Զմյուռնիայում դրանց թիվն արդեն անցնում էր երկու տասնյակից:

1918 թ. Կ. Պոլսում հրատարակված թերթերը, սակավ բացառություններով, կարճ կյանք են ունեցել և փակվել են մի քանի թվահամարից հետո: Պատերազմից հետո ստեղծված քաղաքական ու տնտեսական անորոշությունը, անկայունությունն ու սպառողական լարված իրավիճակը մայրաքաղաքում մամուլի (ինչպես և որևէ մշակութային հիմնարկի) հարատևման պայմաններ չէին կարող ապահովել: Այդ քչերից, որոնց հաջողվեց համեմատաբար երկար ժամանակ, նաև 1919 թ. հրատարակվել, «Խելօք Դաւիթ» երգիծական շաբաթաթերթն էր, որի արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր Հ. Ագնավուրը: Դրան աշխատակցել են Հ. Ամիրենցը, Գր. Հ. Գալուստյանը, Լ. Շաթրյանը, Զ. Մոյրյանը, Ալփաալանը (Աղ. Փանոսյան) և ուրիշներ:

---

[1] 1910-ականի առաջին կեսին Կ. Պոլսում հրատարակվող երկու և կես տասնյակի չափ հայկական թերթերից պատերազմի տարիներին իրենց գոյությունը, այն էլ զուտ անփառունակ կարողացան պահպանել չորսը՝ «Բյուզանդիոն», «Ժամանակը», «Վերջին լուրը» ու «Ծիլիխոլի շարժիչը» (տես Թէոդիկ, Ամենուն տարեցոյց, Կ. Պոլիս, 1916–1920, էջ 271): Կրճատվել էր թերթի ծավալը. այսպես, 1916 թ. «Ժամանակը» լույս էր տեսնում երկու էջով (տես Ազատյան Թ. «Ժամանակ», քառասնամյայ յիշատակարան, 1908–1948, Կ. Պոլիս, 1948, էջ 177):

Շաբաթաթերթը հաճախ է անդրադարձել երիտթուրքերին դատելու խնդրին և այս առիթով փաստերով ցույց տվել, որ թուրքական նոր կառավարությունն ամեն կերպ ջանում է օգնել իթթիհատականներին՝ թաքնվելու առաջիկա դատավարությունից, որ դաշնակիցների ճնշումներով իրականացվելու էր Կ. Պոլսում (1919, թիվ 13): Ուշագրավ են այս թեմայով Ս. Դավիթյանի թուրքերեն երգիծական բանաստեղծությունները՝ ուղղված ֆրանսիացի թրքամոլ Պ. Լոթիին, որն ըստ ամենայնի ճգնում էր սատարել երիտթուրքական գործիչներին՝ մեղմացնելով կամ արդարացնելով նրանց կատարած վայրագությունները հայերի նկատմամբ:

«Խելօք Դաւիթը» տպագրել է ցեղասպանությունը վերապրածների վերհուշները, միշտապես աչքի առաջ պահելով համազգային դեռևս թարմ աղետի մղձավանջները: Այլ հրապարակումներում բացահայտվում են երիտթուրքական կառավարման մեթոդների խայտառակ դրսևորումները, ջարդարարական գրաքննության գործելակերպը հայ մամուլի հանդեպ (1919, թիվ 12): Իր շոշափած խնդիրների վերաբերյալ շաբաթաթերթը տպագրել է արտահայտիչ ծաղրանկարներ, անեկդոտներ, երգիծական կարճ բնութագրեր և այլն: Նկատելի է «Խելօք Դաւթի» համակրական վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ (1919, թիվ 14): Պատերազմում հաղթանակած Համաձայնության պետություններից շաբաթաթերթն ակնկալել է երիտթուրքերի հետևողական դատապարտումն ու արդար դատաստանը նրանց նկատմամբ, ինչպես և Հայաստանի քաղաքական կացության կարգավորումը:

Պոլսահայ հետպատերազմյան շրջանի երգիծանքը շատ ավելի բարձր արվեստի և խորության հասավ Ե. Օտյանի խմբագրած «Իգնատ աղա» (1919–1920) երգիծական շաբաթաթերթում: Ժամանակի հայ իրականության, պոլսահայ կյանքի և Օսմանյան Թուրքիայի քաղաքական իրավիճակի երգիծական գնահատականը Ե. Օտյանը տվել է այս ժանրի լավագույն ավանդույթների ոգով և խոշոր արվեստագետին հատուկ նուրբ դիտողականությամբ: «Խելօք Դաւթի» նյութերը ընդհանուր երգիծական շառավղի և միևնույն հունի մեջ է ուղղորդում Իգնատ աղան՝ Ե. Օտյանի ստեղծած պերսոնաժը: Իգնատ աղան և՛ հեղինակի ամենատես և սրամիտ զրուցակիցն է, և՛ մյուս կողմից, իրադարձությունների ու անձանց հանդեպ նրա

մաքրի ու վերաբերմունքի արտահայտիչը: «Իգնատ աղան» սատիրական սուր ծաղրով բացահայտում է թուրքական կառավարության՝ երկրի վերածնության վերաբերյալ երազանքները, այն է՝ վերադարձնել կայսրության երբեմնի հողերը, Մերձավոր Արևելքը, Սիրիան ու Միջագետքը: Ն. Օտյանը խորաթափանցորեն նկատում էր թուրքական կառավարության և միլլի (ազգայնական) շարժման փոխադարձ համակրանքները, ապա և դրա հետևում թաքնված համագործակցությունը (1919, թիվ 3, էջ 21, թիվ 5, էջ 76–77): Օտյանը հատկապես ծանակել է քեմալական շարժման ծայրահեղ ազգայնականությունը, կայսրության փլատակների մեջ փոքր ազգերին ճզմելու և ոչնչացնելու գնով նոր Թուրքիա ստեղծելու նրա ջանքերը: Օտյանը բացահայտում է առհասարակ իթթիհատական և այլ ազգայնական տարրերի համախմբումը ոչ միայն Քեմալի շուրջ, այլև խորհրդարանում՝ հակառակ Թուրքիայի պարտության: Երգիծաբանը ծաղրում է թուրքական խորհրդարանի ընտրությունները՝ խաբեությամբ ու խայտառակությամբ լեցուն մի գործընթաց, որի արդյունքում այն լցվել է երբեմնի մարդասպաններով: Այս միջավայրում, ըստ նրա, հայտնի չէ, թե ինչ է անելու Կոնիայից երեսփոխան ընտրված կին գրող Հալիդե Էդիպը (1919, թիվ 9, էջ 72–73, թիվ 4, էջ 28):

Թուրքիայի տագնապ ներշնչող իրադարձությունները Օտյանին մղում էին վերհանելու եվրոպական տերությունների՝ Հայկական Հարցի հանդեպ շահադիտական վերաբերմունքի դրսևորումները: Շաբաթաթերթում երգիծվում է ամերիկյան գնդապետ Հասգը, որը Հայկական Հարցում իր աջակցությունն է խոստացել Պողոս Նուպարին, բայց գործնականում ոչինչ չի անում (1919, թիվ 7, էջ 55): «Զարքատանիների մէջ» այլաբանական սյուժեում ցույց է տրվում, որ ոչխարներին ոչ ոք չի պաշտպանում գայլերից և սրանք անարգել ոչնչացնում են իրենց զոհերին: Հեռվից միայն շներն են հաչում, որպես օգնության հեռավոր և անօգուտ հիշեցում, բայց գայլերն այլևս չեն վախենում և կատարում են իրենց նախճիրը (1919, թիվ 2, էջ 12–13): Այսպես է պատկերացնում «Իգնատ աղան» Հայկական Հարցի լուծումը եվրոպական քաղաքականության մեջ, որի ճշմարտացիությունը, հիրավի, այսօր էլ հնարավոր չէ մերժել:

Առհասարակ Ե. Օտյանը հարում է այն մտավորականներին, որոնք կասկածով էին համակված Հայաստանի Հանրապետության՝ համազգային հայրենիք դառնալու հնարավորությունների հանդեպ: «Երևանի Հանրապետութեան» նկատմամբ Օտյանի այս դիրքորոշումը բացասական ուղղվածություն էր ստանում Հայ Հեղափոխական Դաշնակցության դեմ նրա վաղեմի քննադատական կեցվածքով, իսկ այդ կուսակցությունը ազդեցիկ ուժ էր ներկայացնում Հանրապետության կառավարության մեջ: Ի դեպ, Օտյանն ընդհանրապես քննադատական կտրուկ վերաբերմունք ունի նաև քաղաքական մյուս կուսակցությունների՝ հնչակների, ռամկավարների և մյուսների հանդեպ: Օտյանը ծաղրուծանակի թիրախ է դարձրել նաև ժամանակի պոլսահայ միջավայրի, ինչպես և մարդկանց փոխհարաբերությունների ստվերոտ կողմերը՝ հատկապես «Նոր ազգային ջոջեր» խորագրով դիմանկարներում: Այստեղ միմյանց հերթ չեն տալիս շաղակրատները, անսկզբունք երեսփոխանները, նշանավոր և կենդանի ազգային գործիչների մահախոսականները նախապես պատրաստած ճարպիկ լրագրողը և այլք (1919, թիվ 1, էջ 8, թիվ 3, էջ 22, թիվ 6, էջ 44–45):

1920 թ. փետրվարին «Իգնատ աղա» շաբաթաթերթը միացել է Ե. Օտյանի խմբագրած մյուս՝ «Ծաւիղ» երգիծաթերթին և լույս է տեսել «Ծաւիղ-Իգնատ աղա» անվամբ[1]:

Նույն՝ 1919–1920 թթ. Կ. Պոլսում հրատարակվում էր Ազգային ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Արազած» շաբաթաթերթը՝ Վ. Շահրիմանի խմբագրությամբ: Աշխատակցում էին Գր. Հ. Գալուստյանը, Հ. Պոնճուքյանը, Հ. Տեր-Սահակյանը, Բարոնակ Ոսկյին և ուրիշներ: «Մեր ազգայնականութիւնը» հոդվածում Վ. Շահրիմանը հայտնում էր, որ շաբաթաթերթի նպատակը «ազգին ինքնապահպանութիւնն ու վերաշինումն է», որին հասնելու համար պահանջվում է ազգային միասնություն (1919, թիվ 5, էջ 6–7):

Փարիզի հաշտության վեհաժողովից առաջ և հետո Վ. Շահրիմանը եվրոպական տերություններից և ԱՄՆ-ից էր ակնկալում հայության անվտանգության նախադրյալները: Միաժամանակ նա կարծում էր, որ իրենցից՝ հայերից է կախված «վտանգաւոր դրաց-

---

[1] Տե՛ս Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ, Ե., 1934, էջ 103, 110:

նութիւններու» միջավայրում գոյատևելու հնարավորությունը (1919, թիվ 8, էջ 114–115): Նրա շաբաթաթերթը պաշտպանում էր հայերի «ճշմարիտ անկախութեան», իրենց հայրենիքում անկախ պետականություն ստեղծելու գաղափարը: «Արագածը» ազգի առաջնահերթ խնդիրներից էր համարում նրա մտավորականության համագործակցությունը, փորձում նրան սթափեցնել ցեղասպանության «կարմիր մղձաւանջից»: Շատ ուշագրավ մեկնաբանություններ էր տալիս Վ. Շահրիմանը Հայ Հեղափոխական Դաշնակցության երիտթուրքեր հարաբերություններին՝ նկատի ունենալով 1908 թ. սահմանադրությունից անմիջապես առաջ և հետո ընկած ժամանակաշրջանը: Նրա կարծիքով, «անքաղաքագէտ եւ անխոհեմ» կլիներ, եթե հայերը մերժեին երիտթուրքական սահմանադրությունը, բայց և չպետք էր հավատալ երիտթուրքերի անկեղծությանը: Ազգի լայնախոհ ընթացքին, նրա կարծիքով, խանգարեցին քաղաքական մշակույթի պակասը, կուսակցական նեղմտությունն ու «հատուածական փոքրոգութիւնները» (1919, թիվ 14, էջ 20): Վ. Շահրիմանը շատ ավելի որոշակի է տեսնում 1914 թ. իթթիհատին զսպելու գործում թույլ տրված ճակատագրական սխալները, երբ կարելի էր, ըստ հնարավորին, ինչ-որ չափով կանխել մոտալուտ արհավիրքները:

Հետաքրքիր է շաբաթաթերթի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Մի տևական ժամանակ պարբերականը լռություն էր պահպանում՝ շրջանցելով այս թեման: Պատճառը, կարելի էր կարծել, նախ, Պողոս Նուբար փաշայի և արևմտահայության մի ստվար մասի ակնկալիքներն էին Փարիզի հաշտության վեհաժողովից՝ Արևմտահայաստանում անկախ հայկական պետության ստեղծելու հույսով: Արևելյան Հայաստանի տարածքում Հայաստանի Հանրապետության գոյությունը, մինչդեռ, այդ ակնկալիքներն ունեցողների կարծիքով, թուլացնում էին բնաշխարհի ընդարձակ տարածքներում ենթադրվող հայկական պետության ստեղծելու հնարավորություններն ու կամքը[1]: Այնուհետև, «Արագածը» սկզբունքային տարբերություններ ուներ ընկերվարների գաղափարախոսությանը, հակադրվելով հատկապես հայ ընկերվարներին, այդ թվում և դաշնակցությանը:

---

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Ե., 2006, էջ 503–517:

Առհասարակ Ե. Օտյանը հարում է այն մտավորականներին, որոնք կասկածով էին համակված Հայաստանի Հանրապետության՝ համազգային հայրենիք դառնալու հնարավորությունների հանդեպ: «Երևանի Հանրապետութեան» նկատմամբ Օտյանի այս դիրքորոշումը բացասական ուղղվածություն էր ստանում Հայ Հեղափոխական Դաշնակցության դեմ նրա վաղեմի քննադատական կեցվածքով, իսկ այդ կուսակցությունը ազդեցիկ ուժ էր ներկայացնում Հանրապետության կառավարության մեջ: Ի դեպ, Օտյանն ընդհանրապես քննադատական կտրուկ վերաբերմունք ունի նաև քաղաքական մյուս կուսակցությունների՝ հնչակների, ռամկավարների և մյուսների հանդեպ: Օտյանը ծաղրուծանակի թիրախ է դարձրել նաև ժամանակի պոլսահայ միջավայրի, ինչպես և մարդկանց փոխհարաբերությունների ստվերոտ կողմերը՝ հատկապես «Նոր ազգային ջոջեր» խորագրով դիմանկարներում: Այստեղ միմյանց հերթ չեն տալիս շաղակրատները, անսկզբունք երեսփոխանները, նշանավոր և կենդանի ազգային գործիչների մահախոսականները նախապես պատրաստած ճարպիկ լրագրողը և այլք (1919, թիվ 1, էջ 8, թիվ 3, էջ 22, թիվ 6, էջ 44–45):

1920 թ. փետրվարին «Իգնատ աղա» շաբաթաթերթը միացել է Ե. Օտյանի խմբագրած մյուս՝ «Շաւիղ» երգիծաթերթին և լույս է տեսել «Շաւիղ-Իգնատ աղա» անվամբ[1]:

Նույն՝ 1919–1920 թթ. Կ. Պոլսում հրատարակվում էր Ազգային ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Արագած» շաբաթաթերթը՝ Վ. Շահրիմանի խմբագրությամբ: Աշխատակցում էին Գր. Հ. Գալուստյանը, Հ. Պոնճուքյանը, Հ. Տեր-Սահակյանը, Բարունակ Ոսկին և ուրիշներ: «Մեր ազգայնականութիւնը» հոդվածում Վ. Շահրիմանը հայտնում էր, որ շաբաթաթերթի նպատակը «ազգին ինքնապահպանութիւնն ու վերաշինումն է», որին հասնելու համար պահանջվում է ազգային միասնություն (1919, թիվ 5, էջ 6–7):

Փարիզի հաշտության վեհաժողովից առաջ և հետո Վ. Շահրիմանը եվրոպական տերություններից և ԱՄՆ-ից էր ակնկալում հայության անվտանգության նախադրյալները: Միաժամանակ նա կարծում էր, որ իրենցից՝ հայերից է կախված «վտանգաւոր դրսե-

---

[1] Տե՛ս Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ, Ե., 1934, էջ 103, 110:

նութիւններու» միջավայրում գոյատևելու հնարավորությունը (1919, թիվ 8, էջ 114–115): Նրա շաբաթաթերթը պաշտպանում էր Հայերի «ճշմարիտ անկախութեան», իրենց հայրենիքում անկախ պետականություն ստեղծելու գաղափարը: «Արագածը» ազգի առաջնահերթ խնդիրներից էր համարում նրա մտավորականության համագործակցությունը, փորձում նրան սթափեցնել ցեղասպանության «կարմիր մղձաւանջից»: Շատ ուշագրավ մեկնաբանություններ էր տալիս Վ. Շահրիմանը Հայ Հեղափոխական Դաշնակցություն երիտթուրքեր հարաբերություններին՝ նկատի ունենալով 1908 թ. սահմանադրությունից անմիջապես առաջ և հետո ընկած ժամանակաշրջանը: Նրա կարծիքով, «անքաղաքագէտ եւ անխոհեմ» կլինէր, եթե հայերը մերժեին երիտթուրքական սահմանադրությունը, բայց և չպետք էր հավատալ երիտթուրքերի անկեղծությանը: Ազգի լայնախոհ ընթացքին, նրա կարծիքով, խանգարեցին քաղաքական մշակույթի պակասը, կուսակցական նեղմտությունն ու «հատուածական փոքրոգութիւնները» (1919, թիվ 14, էջ 20): Վ. Շահրիմանը շատ ցավալի որոշակի է տեսնում 1914 թ. իթթիհատին զսպելու գործում թույլ տրված ճակատագրական սխալները, երբ կարելի էր, ըստ հնարավորին, ինչ-որ չափով կանխել մոտալուտ արհավիրքները:

Հետաքրքիր է շաբաթաթերթի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Մի տևական ժամանակ պարբերականը լռություն էր պահպանում՝ շրջանցելով այս թեման: Պատճառը, կարելի էր կարծել, նախ, Պողոս Նուբար փաշայի և արևմտահայության մի ստվար մասի ակնկալիքներն էին Փարիզի հաշտության վեհաժողովից՝ Արևմտահայաստանում անկախ հայկական պետություն ստեղծելու հույսով: Արևելյան Հայաստանի տարածքում Հայաստանի Հանրապետության գոյությունը, մինչդեռ, այդ ակնկալիքներն ունեցողների կարծիքով, թուլացնում էին բնաշխարհի ընդարձակ տարածքներում ենթադրվող հայկական պետություն ստեղծելու հնարավորություններն ու կռվանները[1]: Այնուհետև, «Արագածը» սկզբունքային տարբերություններ ուներ ընկերվարների գաղափարախոսությանը, հակադրվելով հատկապես հայ ընկերվարներին, այդ թվում և դաշնակցությանը:

---

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Ե., 2006, էջ 503–517:

Հենց այս իմաստով էր բանավիճում «Արագածը» ՀՅԴ օրգան «Ծակատամարտի» 1919 թ. հուլիս 5-ի թվահամարում տպագրված «Դրամագլուխ և աշխատանք» հոդվածի դեմ, որտեղ դուրս էր ցայտել ընկերվարական վաղեմի համակրանքը հայ աշխատավորության՝ «գիւղացի մշակին և բանուորին» հանդեպ:

Ապագա (և ոչ ներկա) Հայաստանի վերաբերյալ «Արագածի» հույսերն ամրապնդվում էին անգլիացի հայտնի գործիչ Ջ. Բրայսի՝ Փարիզի վեհաժողովի նախաշեմին հուսադրող ելույթներով: Իրականում Ջ. Բրայսն առավել մտահոգված էր հայության ցեղասպանության ողջ մեղքը ոչ միայն Թուրքերի, այլև Անտանտի երեկվա թշնամի Գերմանիայի վրա բարդելու խնդրով: Նա նույնպես պաշտպանում էր Հայաստանի խնամատարությունը (մանդատը) ԱՄՆ-ին հանձնելու՝ հայ գործիչների ջանքերը (1919. թիվ 23, էջ 303–305):

Արևմտահայաստանի տարածքում անկախ ազգային պետություն ստեղծելու գաղափարը «Արագածը» հիմնավորում էր ազգային ազատագրական պայքարի, որպես ժողովրդի պատմական կամքի արտահայտության իրողությամբ և այս դիտանկյունով էս արժեքավորում ազգային հերոսներին: Հատկապես այս, ինչպես և ՀՅԴ ու Հայաստանի Հանրապետությանն ուղղված իր առարկությունների տեսակետից ուշագրավ է Անդրանիկին տրված՝ «Արագածի» բացառիկ բարձր գնահատականը: Անդրանիկը ազատագրական շարժման րաֆֆիական սերնդի շարունակողն է, ասվում է «Րաֆֆի եւ Անդրանիկ» հոդվածում, «գրական եւ յեղափոխական պատմութեան մէջ Րաֆֆին ու Անդրանիկը իրարու արժանի հայր ու որդի են ներկայանում» (1919, թիվ 25, էջ 328):

Անդրանիկի կյանքի հերոսական դրվագներն են ցուցադրված Գ. Պետյանի «Հայ կամաւորական բանակը Կովկասի և Պարսկաստանի ճակատներուն վրայ» հուշերում, որ շարունակաբար տպագրեց «Արագածը» 1919 թ.: Նույն կերպ, Վ. Շահրիմանը դրվատում էր Անդրանիկի «Հայաստան» օրաթերթը՝ այն համարելով ազգային նպատակների ու գործողության քարոզիչ, «հաւաքական համերաշխութեան մը, գործողութեան միաւորականութիւն մը» կազմակերպող գաղափարական ամբիոն: Շաբաթաթերթը մեջբերել է Անդրանիկի ազդը՝ «Հայաստանի» ուղղության մասին, որտեղ նշված է, որ

օրաթերթը «բացառաբար նուիրուած է արեւմտահայ գաղթականական կարիքներուն» (1919, թիվ 4, էջ 50):

Թաքցնելով իր սրտնեղությունը Երևանի կառավարության կողմից Միացյալ Հայաստանի հռչակման առթիվ, «Արագածը» կարծում էր, որ առավել նպատակահարմար կլիներ կազմել Միացյալ Հայաստանի ժամանակավոր կառավարություն՝ ընտրված Երևանի և Փարիզի հայկական պատվիրակության (Պողոս Նուբարի) կողմից: Այն պետք է գործեր՝ մինչև կորոշվեին Միացյալ Հայաստանի սահմանները, տարագրյալների վերադարձը, որին կհետևեր ազգի բնականոն կյանքի ընթացքը, ինչպես պատկերացնում էր «Արագածը»:

«Արագածը» դժկամությամբ էր ընդունել Հայաստանի Հանրապետության կողմից 1919 թ. մայիսի 28-ին հռչակած Միացյալ Հայաստանի անկախությունը, որով Հանրապետության խորհրդարանը հայտարարվում էր ողջ Հայաստանի բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանություն: «Երևանի խորհրդարանի այս անակնկալ քայլը,- գրում էր շաբաթաթերթը,- կարելի է հարուած մը նկատել՝ ուղղուած Բարիզի՝ Հայկ. պատուիրակութեան, որ ցարդ կը գործեր յանուն ամբողջ հայութեան եւ յանուն Միացեալ Հայաստանի» (1919, թիվ 23, էջ 308):

Արևմտահայության հայրենիքի տարածքը «Արագածը» համարում էր Արևմտահայաստանն ու Կիլիկիան, առանց որի «միացյալ Հայաստանի» գաղափարը զրկվում էր իրական հողից և ստեղծում այդպիսի Հայաստանի երևութական պատկերը:

Թուրքիայում ազգայնականության զորացումը «Արագածին» տագնապով էր համակում հատկապես Հայաստանի անկախության վերաբերյալ պատկերացումներում: Շաբաթաթերթն ընթերցողին հայտնում էր Քեմալի տենդագին պատրաստվածության, կողմնակիցների թիվը համալրելու և նրանց զինելու մասին: Հույժ կասկածելի էր, մասնավորապես Թուրքական կառավարության ցուցադրական ու շինծու ճիգը՝ Քեմալի դեմ պայքարելու հարցում: Կառավարությունը, նկատում էր «Արագածը», հրաման է արձակել ձերբակալելու Քեմալին և նախկին ծովային նախարար Ռաուֆ բեյին, սակայն արդեն ամբողջ Ամասիայի շրջանը լեփ-լեցուն է Քեմալի չեթեական կազմակերպություններով, որոնց ցանցը տարածված է ամ-

բողջ արևելյան նահանգներում, մինչև Կարին՝ առանց որևէ պաշտոնական արգելքի: Իթթիհատական ջարդարարները վերստին պաշտոնի են կոչվում, ինչպես Ֆերիդին օղլու Թոփալ Օսմանը, որը կարգվել է Կիրասոնի քաղաքապետ (1919, թիվ 28, էջ 367): Շաբաթաթերթը ճշմարտացի, փաստերի վրա հիմնված վերլուծում էր քաղաքական խառնակ իրավիճակը և տալիս իրատեսական գնահատականներ:

Պարբերականն արձագանքեց Պողոս Նուպարի և Ավ. Ահարոնյանի կոչին՝ ուղղված ամերիկահայերին՝ վերջ տալու ներքին (կուսակցական) երկպառակություններին և պահպանելու ազգային միասնականությունը: Բայց, ինչպես նկատում է «Արագածը», պատկերը նույնն է նաև Կ. Պոլսում, որտեղ «ողբալի մտայնութիւններով մէկզմէկ կը ջլատենք մենք հոս, մինչ անդին, Ամասիայէն մինչեւ Էրզրում, տաճիկ բռնութիւնը կը շարժի, կը զինուի ու կը գինէ մոլեգնօրէն՝ խոյանալու համար մնացորդ հայերուն վրայ» (1919, թիվ 28, էջ 357):

«Արագածն» իր «Արձագանք» բաժնում զետեղել է հրատապ կամ կարևոր նորույթներ ազգային և արտասահմանի քաղաքական իրականության վերաբերյալ: Այստեղ հետաքրքիր տեղեկություններ կան 1919 թ. Կիլիկիայում ստեղծված իրադրության, Ադանայում կուտակված հայ գաղթականության, վերջիններիս խնամելու համար տեղի Ազգային միության գործադրած ջանքերի մասին: Շաբաթաթերթի նյութերի մի մասը տեղեկություններ է տալիս դատարանին հանձնված կամ դատի տրված իթթիհատականների եղեռնագործ անցյալի մասին: Մերկացնող և դատաստանի համար բացահայտող նշանակություն ունի շաբաթաթերթի այն տեղեկությունը, որ Յոզղատի ջարդարարներից ոմն Քեմալ խելագար է ձևացել՝ կախաղանից խուսափելու նպատակով (1919, թիվ 11, էջ 163–164): «Արձագանքի» մեկ այլ լրատվության համաձայն, Զանղըրի իթթիհատի պատասխանատու քարտուղար Ջեմալ Ուղուզը, որ գլխավոր դերակատարն էր «Վարուժանի, տոքթ. Սեւակի եւ անոնց ընկերներուն չարչարալից սպանումին», ձերբակալված է և պետք է դատվի մոտ ժամանակներում: Այդ հրեշը, որ մինչ իր պաշտոն ստանձնելը գրեթե չքավոր էր, սպանված հայերի կարողությունը պատմելով,

տիրացել է անհավատալիորեն վիթխարի դրամագլխի և ձեռնարկել առևտրական մեծ գործերի (1919, թիվ 16, էջ 224):

«Արագածը» միաժամանակ մերկացնում էր դահիճներին որևէ կերպ արդարացնելուն ուղղված թուրքական գործող կառավարության ջանքերը, ակնհայտ միտումը՝ հիմնավորելու նաև հայերի մեղսակցության առասպելը: Թուրքական իշխանությունները ձերբակալում են այն հայ զինվորներին, որոնք Կիլիկիայում կռվել էին թուրքերի դեմ: «Արագածն» այդ համարում է կամայականություն՝ նշելով, որ նրանք գործել են իրենց ազգի բնաջնջման դեմ և հաղթական տերությունների կամքով (1919, թիվ 16, էջ 224): Վերոհիշյալ առասպելը հատկապես ծավալվում էր թուրքական «Իքդամ» և «Թասվիր-ի էֆքյար» թերթերում: «Իքդամ»-ը բանը հասցնում էր այնտեղ, որ առաջարկում էր հանձնաժողով կազմել, իբր, հայերի «թրքասպան խժդժությունները» բացահայտելու նպատակով, որ լպիրշ և սուտ կեղծիք էր համարում «Արագածը» (1919, թիվ 1, էջ 16): Հայերի ձեռքով թուրքերին կոտորելու հրեշավոր զրպարտությունը, որը մեր օրերում անգամ հաճախ պտտվում է հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանը զուգահեռ, հետևաբար, նոր բան չէ և ձևավորվել է իթթիհատական Թուրքիայի փլատակների տակ ծվարած թուրքական անցումային կառավարության շրջանում՝ զուտ քաղաքական ապակողմնորոշման նկատառումներով:

Փաստական տվյալներով են հագեցած «Արագածի» այն նյութերը, որոնք վերաբերում են Կ. Պոլսի հայ իրականությանը, վերադարձած տարագրյալների խնամքի և ապաստանի հարցերով զբաղված պատրիարքարանի և Խնամատարության խորհրդի գործունեությանը, սրանց տարաձայնություններին և այլն: Շաբաթաթերթը մասնավոր ուշադրություն է դարձրել հատկապես լքված գույքերի խնդրին և պաշտպանել հայերի անհատական ու ազգային իրավունքները:

Ազգային կորուստների մեջ «Արագածն» առանձնացնում էր մշակույթին հասցված ահռելի հարվածը՝ հայ մտավորականության գլխատումը իթթիհատի ձեռքով: Շաբաթաթերթն այս թեմայով տպագրեց Ս. Եղբայրյանի հոդվածաշարը՝ նվիրված Դ. Վարուժանի,

Ռ. Սևակի, Գր. Զոհրապի, Սիամանթոյի, Տ. Չելեկյանի և այլոց կյանքին ու ստեղծագործությանը:

«Արագածի» գեղարվեստական գրականության մեջ առաջատարը չափածոն է: Բանաստեղծություններում ակնհայտորեն զգացնել է տալիս թեմայի միօրինակությունը, և դա հասկանալի է. կրած մեծագույն կորստի բանաստեղծական հանրագումարը շարունակում էր իր ձևավորման գործընթացը՝ երբեմն երբեմն հագենալով վերապրումի լավատեսական տրամադրություններով: Այս թեմայով «Արագածը» տպագրեց Ե. Գոլանճյանի, Լ. Խաճանյանի, Հ. Պողոսյանի, Ն. Պեշիկթաշլյանի, Վահե-Հայկի, Կիլիկեցու և այլոց բանաստեղծությունները: Տրամադրությունների այս նույնականությունը «Արագածը» կարողացավ խախտել երգիծական, հումորային բնույթի հետաքրքիր ու սրամիտ գործերով, որոնք տպագրվում էին «Զուարթ սիւնակ» խորագրով: Այստեղ են տպագրվել Գր. Հ. Գալուստյանի, Գր. Ջվարթախոհի զավեշտական բանաստեղծությունները, թարգմանական երգիծական չափածոն:

Շաբաթաթերթի արձակը ևս ներծծված է պահի ազգային-քաղաքական տրամադրություններով, սակայն, ի տարբերություն չափածոյի, այստեղ գերիշխում են պայքարի, ապրելու կամքի և ազգի վերածնության մոտիվները: Արձակ էջերը հիմնականում պատկանում են պատմվածքի կամ նովելի ժանրին, որի հեղինակներն են Վ. Շահրիմանը, Մ. Երվանդը, Մինաս Ջերազը, Հ. Դարբինյանը և այլք:

Կ. Պոլսում կազմակերպված հայ երիտասարդ իրավաբանների ակումբը 1919–1920 թթ. հրատարակում էր «Իրաւունք» շաբաթաթերթը՝ Ա. Զարքյանի պատասխանատու տնօրինությամբ: Շաբաթաթերթը պետք է իրականացներ ակումբի առջև դրված խնդիրները, մշակեր տեսական իրավագիտական հիմնահարցեր, նպաստեր դրանց ժողովրդականացմանը, ինչպես նաև տեղայնացներ վերոհիշյալ հիմնահարցերը: «Իրավունքը» կազմակերպելու էր իրավունքի վերաբերյալ դասախոսություններ, բանավեճեր, օգներ՝ ստեղծելու իրավաբանական եզրույթների հայերեն համարժեքներ, իրավագիտական մասնագիտական գրադարան և այլն: Արծարծում էր ընտրական իրավունքին, կրոնի և պետության փոխհարաբերություններին, փաստաբանական գործունեության, օրենքների մեկնաբանությունների վերաբերյալ խնդիրներ: Աշխատակցում էին ակումբի ան-

գամներ Ա. Զարբլյանը, Ս. Ռշտունին, Վ. Զեյթունյանը, Գր. Հ. Գալուստյանը, Ստ. Գարայանը և ուրիշներ:

1919–1922 թթ. Կ. Պոլսում բավական աշխուժացում ապրեցին պատանեկան և մարզական հրատարակությունները: Առաջինը «Հայ սկաուտ» հանդեսն էր (1919–1920)՝ Հայ մարզական ընդհանուր միության հրատարակությունը:

Զմյուռնիայում համանման հրատարակություն էր տեղի սկաուտների «Պատրաստ» կիսամսյա պարբերականը՝ 1921–1922 թթ.: Արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր Բ. Գույումճյանը, խմբագիրը՝ Զ. Հարեթյանը: Կիսամսյա այս հանդեսը հետամտում էր պատրաստել հայրենիքին ու եկեղեցուն հավատարիմ ու օգտակար հայ քաղաքացիներ, նրանց մեջ զարգացնել հատկապես հայրենասիրական զգացումներ: «Պատրաստը» տեղեկացնում է, որ Զմյուռնիայում կազմակերպվել է «Հայ պոյսքաուտներու միությունը» (ՀՊՍՄ), որը մաս է կազմում «Կ. Պոլսի և Իզմիրի հայ պոյսքաուտներու եղբայրության և միության» կազմակերպությանը: Ավելի սերտ դարձնելով իր գործակցությունը Կ. Պոլսի հայկական կազմակերպությունների հետ, ՀՊՍՄ-ը կազմակերպորեն միավորվեց «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» (ՀՄԸՄ) հետ:

«Պատրաստին» աշխատակցում էին Թ. Մեծատուրյանը, Ա. Պերպերյանը, Պ. Պյուրեքճյանը, Ե. Ություճյանը և ուրիշներ: Ուշադրավ են Զմյուռնիայի պատանիների մարզական կյանքին, տեղացի հույների և եվրոպացիների հետ նրանց ֆուտբոլային և այլ մարզաձևերից մրցումների վերաբերյալ հրապարակումները: «Պատրաստը» հայ պատանու մեջ փորձում էր զարգացնել հոգեբանական արժեքավոր որակներ՝ մեծահոգություն մրցակցի հանդեպ, պարտությունը կրելիս պահպանել արժանապատվություն և արիություն՝ նյութն ամբողջացնելով լուսանկարներով, մարզական կյանքի պատմությունից վերցված դրվագներով և այլն (1922, թիվ 11, էջ 46): Հատկապես ուշադրության առարկա էր կիսամսյայի էջերում աղջիկ սկաուտների մարզական կյանքի լուսաբանումը Թուրքիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում:

«Պատրաստի» վերջին թիվը (կամ վերջին թվերից մեկը) լույս է տեսել 1922 թ. օգոստոսի 6-ին, Զմյուռնիայի աղետից մոտ մեկ ամիս

առաջ, երբ թուրքական մոտալուտ հարձակման վտանգը կանխվածհար էր արել մշակութային հիմնարկների գործունեությունը:

Սկաուտական շարժման հետևորդն էր Կ. Պոլսում 1920–1922 թթ. հրատարակվող «Հայ պատանի» պատկերազարդ շաբաթաթերթը, սակայն, առավելապես գրական և մշակութային բովանդակությամբ: Այն 1919–1920 թթ. հրատարակված «Առաւօտ նորահարսնբրու» շաբաթաթերթի շարունակությունն էր[1]: Արտոնատեր խմբագիրն էր Ֆ. Ու. Մեքքալմը, տնօրեն-խմբագիրը՝ Գր. Հ. Գալուստյանը: «Հայ պատանին» ուներ ուսումնադաստիարակչական ուղղվածություն և սրանից բխող՝ բազմաժանր բնույթ: Տպագրում էր հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, բարոյախրատական նյութեր, թարգմանական գործեր: Շաբաթաթերթում սկաուտական քարոզչությունը հիմնականում իրականացնում էր Ֆ. Մեքալըմը: Ֆիզիկական պատրաստականությունը ներքին համոզմունք դարձնելու հարցում նա առաջարկում էր լուրջ ուշադրություն դարձնել բնագիտական առարկաներին՝ այս ամենը կապակցելով բարոյական առաքինությունների ձևավորմանը: Ֆ. Մեքքալմի հեղինակած անգլիական պետական ու ռազմական նշանավոր գործիչների կենսագրականներին շաբաթաթերթը զուգակցել է և շատ ավելի հաճախակի՝ ազգային բնույթի հրապարակումներ, հայրենիքի հանդեպ հետաքրքրություն և սեր արծարծող այլևայլ նյութեր: Ուշագրավ են և ճաշակով են ընտրված «Հայ ժողովրդական հեքիաթներ» խորագրի նյութերը՝ Շահենի և Սոս Վանիի մշակումներով (1921, թիվ 2, էջ 26, թիվ 3, էջ 39–41, թիվ 8, էջ 120–122, թիվ 5, էջ 72–75): Հատկապես աչքի են ընկնում Գր. Հ. Գալուստյանի պարզ և պատկերավոր բանաստեղծությունները, խրատական քառյակներն ու առակները՝ մանկան մեջ բարոյական ճիշտ կողմնորոշումներ սկզբնավորելու և խորացնելու ակնհայտորեն ուշադրություն հրավիրող հնարանքներով: Այս հեղինակը թարգմանել է Անդերսենի հեքիաթները: «Հայ պատանու» էջերում իբրև թերթոն տպագրվեց «Շեքսպիրեան պատմուածքներ» շարքը՝ անգլիացի դրամատուրգի պիեսների սյուժեների մատչելի շարադրանքը պատանիների համար, որ դարձյալ

---

[1] Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, (կազմ. Ա. Կիրակոսյան), Ե., 1970, էջ 205:

թարգմանել է Գր. Հ. Գալուստյանը և որի աշխատակցությունը բավական զգալի է այս շաբաթաթերթում:

«Հայ պատանուն» աշխատակցում են Հ. Հինդլյանը, Կիլիկեցին, Գ. Մալաթյանը և ուրիշներ:

Հետպատերազմյան շրջանի արևմտահայ պարբերականներից քաղաքական ու հասարակական ընդգծված ուղղություն ուներ ազգային ու գրական «Հայ միտք» շաբաթաթերթը: Այն հրատարակվում էր Կ. Պոլսում 1919 թ., Հովհաննես Ասպետի (Օ. Չիֆթե-Սարաֆ) խմբագրությամբ: Աշխատակցում էին Ե. Օտյանը, Ա. Ալպոյաճյանը, Վ. Թեքեյանը, Վ. Հարությունյանը և այլք: Շաբաթաթերթը արտացոլել է Կ. Պոլսի հայության ազգային ու հասարակական կացությունը, մշակութային ծիլեր արձակող երևույթները, ոչ վաղ անցյալի՝ ցեղասպանության իրադարձությունները: Ուներ ազատամիտ, ռամկավար ուղղություն: Շաբաթաթերթի խմբագրությունը հավատում էր Հայաստանի արևմտյան մասում ազգային պետականության վերականգնման մոտալուտ հեռանկարին՝ ակնկալելով նախ Անգլիայի, այնուհետև ԱՄՆ-ի էական օգնությունն այս խնդրում: Հետևել է Պողոս Նուպարի գործունեությանը Փարիզում գումարվող հաշտության կոնֆերանսի կապակցությամբ: «Լուսանցքին վրայ» խորագրով տպագրել է Ե. Օտյանի երգիծական անդրադարձները Կ. Պոլսի հայ հանրության՝ թուրքերի հետ ունեցած հարաբերությունների, թատերական կյանքի, հայ արվեստագետների, գրողների ու գրականության վիճակի վերաբերյալ: «Հայ միտքը» տպագրել է Զ. Եսայանի, Ա. Չոպանյանի, Հ. Մնձուրու, Հ. Պողոսյանի և մյուսների չափածո և արձակ ստեղծագործությունները, թարգմանություններ ֆրանսիական գրականությունից:

Կանանց համար նախատեսված հրատարակություն էր «Հայ կին» կիսամսյա հանդեսը, որ լույս էր տեսնում Կ. Պոլսում, 1919–1933 թթ.՝ Հայկանուշ Մառքի խմբագրությամբ: Հանդեսի ծրագիրն ընդգրկում էր հայ կնոջ բարոյական ու հասարակական կացության, ընտանիքում և հասարակության մեջ նրա տեղի, նշանակության լուսաբանումը, տոհմիկ բարքերի ու ավանդույթների ու արդիականության զուգադրումը, կրթական, մշակութային կյանքում հայ կնոջ գործունեությունն ու դրանց առնչվող խնդիրները: Տպագրել է կանանց կենցաղային, առողջապահիկ հարցերին, արհեստագոր-

ծուլթյան ասպարեզում հայ կնոջ ներդրումներին, հայ և օտար նշանավոր կանանց վերաբերող ամենատարբեր նյութեր: «Կանանց աշխարհէն», «Նորաձեւութեան բաժին», «Տոհմիկ էջեր» և այլ խորագրերով հրապարակումներում շոշափել է հայ կնոջ հետաքրքրություններին ընդառաջող մտածված և հարուստ լրատվություն պարունակող հիմնահարցեր, որոշակի հակումներ ցուցաբերել ֆեմինիստական խնդիրների նկատմամբ: Աշխատակցել են Մ. Պերպերյանը, Անայիսը, Արշ. Թեոդիկը, Հռ. Արապյանը, Զ. Գալեմքյարյանը, Վ. Թորգոմյանը, Կ. Բասմաջյանը և ուրիշներ: Հոդվածների մի խումբ «Հայ կինը» նվիրել է սփյուռքահայ արվեստագետ կանանց և նրանց գործունեությանը՝ ամերիկահայ երգչուհի Զապել Փանոսյանին, դաշնակահարուհիներ Արփինե Ինայեթյանին, Էժենի Մելիքյանին (Ֆրանսիա) և այլոց, լուսաբանել ժամանակակից մշակույթի և գրականության մեջ կանանց արժեքավոր նվաճումները: Վ. Թորգոմյանը պատմական անդրադարձներ է արել հայ կնոջ հայրենասիրական և ազգօգուտ գործունեությանը:

«Հայ կինը» տպագրել է Հայկանուշ Մառքի, Դ. Վարուժանի, Վ. Թեքեյանի, Է. Գոլանճյանի, Ե. Դուրյանի, Անայիսի և այլոց արձակ ու չափածո գործերը, թարգմանական էջեր եվրոպական գրականությունից:

Զմյուռնիայում նկատելի էր հասարակական կյանքի և մամուլի աշխուժացումը՝ կապված առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտության և իթթիհատականների՝ իշխանությունից հեռանալու հետ: 1919 թ. այստեղ «Արեւելեան մամուլ» թերթի հետ հրատարակվում էր «Ատրուշան» գրական, գիտական և գեղարվեստական կիսամսյա հանդեսը, որի տնօրեն-խմբագիրն էր Մ. Բարթիկյանը: Հանդեսը տպագրվել է ընդամենը յոթ թիվ, սակայն իր կարճակեցության մեջ իսկ ուշագրավ երևույթ էր Զմյուռնիայի մշակութային կյանքում: Անդրադարձել է հետեղեռնի շրջանի հայ գրականության խնդիրներին, հատկապես նշել օսմանյան միջավայրի կաշկանդող, այնուհետև կործանարար նշանակությունը հայ գրականության համար: «Ատրուշանը» նորերի գրական վարանումներին հանդիպադրել է եղեռնին զոհ գնացած գրական մեծությունների ստեղծած արժեքները: Գր. Զոհրապին հատկապես մեծարել է Ս. Դավիթյանը, որն ուրվագծել է մեծ արվեստագետի, փաստաբանի և հա-

տարակական գործչի կերպարը (1919, թիվ 2, էջ 18–27): Այստեղ ուշագրավ են Զոհրապի դատախազական և իրավաբանական գործունեության քիչ ծանոթ, բայց և բնութագրական կողմերի լուսաբանումները: Նույնքան հետաքրքիր են այս հեղինակի դիտողությունները Զոհրապի՝ օսմանյան խորհրդարանում ունեցած գործունեության, բարբարոսական վարչակարգի պայմաններում մտածողի և հայրենասերի ապրած խոր դրամայի և ողբերգական վախճանի մասին:

«Արտուշանին» իր կյանքի վերջին ամիսներին աշխատակցել է զմյուռնացի հանրահայտ երգիծաբան Հ. Ալփիարը: Նրա մահից հետո հանդեսը տպագրեց Մ. Բարթիկյանի հոդվածը՝ նվիրված երգիծաբանի կենսագրությանն ու գրական գործունեությանը:

Իբրև ազգի և նրա մշակույթի հարատևման վկայություն, հանդեսն առաջարկում էր զմյուռնահայ համայնքում և առհասարակ հայության մեջ նշել նաև վաստակաշատ Մ. Նուպարյանի հոբելյանը, վեր բարձրացնել ազգային արժեքներն այդ դժվարին ժամանակներում: Այս լավատեսական տրամադրությունների հետ միասին, սակայն, «Արտուշանի» պոեզիան համակված է ցեղասպանության ողբերգությունից ծնված մռայլ և թախծոտ զգացումներով ու պատկերներով: Հանդեսը տպագրել է Կ. Զարյանի, Ե. Գոլանճյանի, Ա. Վաստրանցու, Մ. Պարսամյանի, Վահրամ Թաթուլի և այլոց բանաստեղծությունները, Մ. Բարթիկյանի, Ա. Կազելի, Ս. Ճիզմեճյանի և ուրիշների բանասիրական ու գրաքննադատական հոդվածները հայ և արտասահմանյան գրականության ու գրական դեմքերի մասին:

Կրոնական բովանդակություն ուներ Զմյուռնիայի «Դավիթ» կիսամսյա հանդեսը, որ լույս է տեսել 1921–1922 թթ.: Արտոնատեր-պատասխանատու տնօրենն էր Հ. Ջիվանշիրը: Կրոնաթերթը հրատարակվում էր Զմյուռնիայի առաջնորդ Ղ. Դուրյանի ձեռնարկությամբ: Տպագրում էր կրոնաբարոյական, խրատական, քրիստոնեական հոգևոր արժեքներին վերաբերող նյութեր, քարոզներ, կրոնադավանական ուղղվածության հրապարակումներ և այլն: Հենվում էր համապատասխան գրականության սյուժեներին և պատվիրաններին: «Դավիթն» իր մի շարք հրապարակումներում բացատրում էր հայ եկեղեցու արարողությունների ու ծեսերի իմաստը, մեկնաբանում պատարագի, հոգեհանգստի, աղոթքի խորհուրդներն ու նշանակությունը հայ եկեղեցու ընկալումներում: Հայ ազգային, վարչա-

յին և կրոնական գործերում անկարգությունների ու անկման պատճառները «Դափնին» որոնում էր «չարայոյզ նախանձի և թունալից մախանքի» մեջ (1921, թիվ 1, էջ 8–9): Բավական կտրուկ առաջադրում էր հայ եկեղեցու բարեփոխման հիմնահարցը՝ ցուցաբերելով փոփոխությունների հարցում իր ազատամիտ հակումները: Առաջադրել է քահանաների ձեռնադրության և նրանց կրկնամուսնության կանոնների հետ կապվող բարեփոխումների խնդիրը: Նույն ոգով «Դափնու» էջերում Ղ. Դուրյանը պաշտպանում էր «Ազատ եկեղեցի ազատ պետության մեջ» սկզբունքը, հիմնավորելով քաղաքացիական իշխանությունից եկեղեցու անկախության թեզը, որ դեռևս 1860-ական թթ., ի դեպ, նույն Զմյուռնիայի «Ծաղիկ» էջերում առաջ էր քաշել նրա խմբագիր Գր. Չիլինկիրյանը:

«Դափնին» անդրադարձել է ցեղասպանության իրողություններին և կրոնական մտայնությանը համապատասխան հիմնավորումներով դատապարտել է դրա հեղինակներին: Զմյուռնահայ համայնքի ներքին կյանքը և առհասարակ ազգային գործերը «Դափնու» էջերում արտացոլվել են հպանցիկ և ոչ հետևողական:

«Դափնին» տպագրել է Տ. եպ. Պալյանի, Ե. արք. Դուրյանի, Ն. Ներսեսյանի, Ղ. Դուրյանի, Հ. Մրմըրյանի, Գր. Գալեմքյարյանի, Գ. Խաչատրյանի և այլոց հոդվածներն ու հրապարակումները:

Ցեղասպանությունից հետո ընկած շրջանում ազգային արվեստի և մտավոր արժեքների շուրջ պոլսահայությանը համախմբելու նպատակ ուներ **«Բարձրավանք»** ամսագիրը, որ խմբագրում և հրատարակում էին Գ. Գավաֆյանը, Կ. Զարյանը, Վ. Թեքեյանը, Շ. Պերպերյանը և Հ. Օշականը: Ամսագիրը լույս էր տեսնում Կ. Պոլսում, 1922 թ.: Այս հրատարակությունը լուսաբանել է Կ. Պոլսի հայության մշակութային կյանքի իրողությունները, հոդվածներ է նվիրել նորակազմ գեղարվեստական խմբին, ժամանակի ճանաչված նկարիչներ Վ. Մախոխյանի, Փ. Թերլեմեզյանի, Ս. Խաչատուրյանի, Ս. Քյուրքճյանի, Ե. Թադևոսյանի և այլոց արվեստին: «Բարձրավանքը» ավանդարդխտական քամահրանքով է գնահատել դարասկզբի հայ իրապաշտական գրականությունը՝ սկսած Տ. Արփիարյանի գրական «Մասիսից» և վերջացրած իրապաշտական թատրոնով ու Շիրվանզադեի դրամատուրգիայով: «Բարձրավանքը» նույն կերպ տեղ էր տալիս նույն կեցվածքը որդեգրած Գ. Ցեներճյանին, որը ժխտում էր ոչ վաղ անց-

յալի խրապաշտներին ու նրանց ստեղծագործությունը (1922, թիվ Գ, էջ 82–87): Փոխարենը «Բարձրավանքը» շատ ավելի լայնախոհ էր ազգային երաժշտության գնահատումներում և ուշադրավ դիտարկումներ էր անում հայ ու եվրոպական երաժշտական արվեստի արժեքավորման տեսակետից: Ամսագիրն ընդհանուր առմամբ արտահայտել է 1910-ական թթ. արևմտահայ մտավորականության գրական ու գեղագիտական ըմբռնումները: Տպագրել է Մ. Մեծարենցի, Վ. Թեքեյանի, Հ. Օշականի, Հ. Մնձուրու, Կ. Զարյանի և այլ գրողների ստեղծագործություններից:

Առավելապես հասարակական-քաղաքական բովանդակություն ուներ «Երկիր» երեկոյան օրաթերթը (1920–1922): Պատասխանատու տնօրենն էր Է. Զոպուրյանը: Օրաթերթն ուներ հնչակյան ուղղվածություն և հայ իրականության մեջ միայն հնչակներին էր համարում «հեղափոխական, սթափեցնող կուսակցություն»: 1915 թ. կախաղան հանված քսան հնչակյան գործիչներին (Փարամազ, Ա. Աչըքպաշյան, Թ. Կարապետյան, Գ. Վանիկյան և այլք) թերթը բնութագրել է որպես «ազատ ու ինքնավար Հայաստանի նախակարապետների» և տպագրել նրանց լուսանկարներն ու հակիրճ դիմանկարային ակնարկները (1921, 18 հնս.): «Երկիրը» համակրական վերաբերմունք ուներ Խորհրդային Հայաստանի նկատմամբ, որ սակավ բացառություններից մեկն էր ժամանակի պոլսահայ մամուլում: Ողջունում էր այնտեղ իրականացվող տնտեսական, քաղաքական ու մշակութային փոփոխությունները: Խորհրդային Հայաստանի կայության և զարգացման հեռանկարների շուրջ «Երկիրն» առարկում էր ՀՅԴ կուսակցությանը, մասնավորապես Ս. Վրացյանին: Թերթը Կարսի խորհրդաժողովը (1921 թ. սեպտեմբեր 26 — հոկտեմբեր 13) որակել է իբրև «խաղաղության ակտ»՝ հայերի և թուրքերի միջև: «Երկիրը» դրվատում էր հայկական պատվիրակության «խաղաղասիրական ու չափավոր» գործելակերպը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրից անմիջապես առաջ՝ անդրադառնալով հայկական կողմի վրա գործադրված ճնշումները խորհրդային ղեկավարության կողմից: «Երկիրը» նկատում էր, սակայն, որ Կարսի խորհրդաժողովը ոչ մի օգուտ չտվեց հայերին և ելնելով կուսակցական ուղղվածությունից՝ դրա պատճառներից մեկն էր համարում 1921 թ. փետրվարյան խռովությունը, որ կազմակերպել էին դաշնակցական-

ները և որը, իբր, առիթ էր տվել թուրքերին՝ պահանջելու, որ հայկական պատվիրակությունը չմասնակցի Մոսկվայի խորհրդաժողովին (1921, 16 նոյ.): «Հայաստան» խորագրի ներքո տպագրված իր հրապարակումներում «Երկիրը» տպագրել է լրատվական նյութեր Խորհրդային Հայաստանի իրականությունից, հարցազրույցներ նրա ղեկավարության հետ և այլն: Թերթը կոչ էր անում Կ. Պոլսի հայ համայնքին և գաղթօջախների ազգակիցներին՝ սատարել Խորհրդային Հայաստանի մշակութային ու տնտեսական զարգացմանը: Սրան է առնչվում այն, որ «Երկիրը» լուսաբանում էր ՀՕՄ-ի գործունեությունը, Հովհ. Թումանյանի և Ե. Թաղիանոսյանի այցը Կ.Պոլիս, դրա նշանակությունը Կ. Պոլսի և Հայաստանի հայության կապերի զարգացման ասպարեզում: Թերթը տպագրեց ՀՕԿ-ի հայտարարությունը, մասնավորապես նշելով, որ նրա Կանոնադրությունը հաստատել է Խորհրդային Հայաստանի կառավարությունը, և որ նրա նպատակն է Հայաստանին նյութական աջակցություն ցուցաբերելն ու նպաստելը նրա տնտեսական վերածնությանը: Միաժամանակ, «Երկիրը» հույսեր էր կապում Սևրի դաշնագրի միջազգային նշանակության հետ, ակնկալելով, որ այն հիմք պետք է դառնա Արևելյան հարցի լուծման համար՝ «արդի պահանջումներին համապատասխան փոփոխություններով» (1921, 27 սպտ.): Հենց արևմուտքից էր սպասում «Երկիրը» թուրք-հելլենական պատերազմին միջամտելը, որ, նրա կարծիքով, կհասցներ Արևելյան հարցի վերարծարծմանը միջազգային քաղաքականության օրակարգում: Մյուս կողմից, խորհրդա-թուրքական հարաբերությունների կտրվածքով «Երկիրը» հույս ուներ, որ դրանց զարգացումը կհասցնի Արևելյան հարցի, ուրեմն և Հայկական հարցի վերակենդանացմանը և ի վերջո, թուրքական ներքին ու արտաքին քաղաքականության վերանայմանը: Քողարկված, բայց և նկատելիորեն տուրք տալով համաշխարհային հեղափոխության բոլշևիկյան տեսլականին, «Երկիրը» հնարավոր էր համարում, որ թուրքական պետությունը կենթարկվի հեղաշրջումների՝ «իր երկրի բացարձակ մեծամասնությունը կազմող գյուղացիական զանգվածներու դասակարգային շահերուն համապատասխան կարգուսարքով», կհրաժարվի իր ազգայնական նվաճողական քաղաքականությունից և հարևան ժողովուրդներին կամովին կվերադարձնի իրենց ազգային պատմական իրավունքները (1921, 17 նոյ.):

Հետաքրքիր են ժամանակի պոլսահայ կյանքին վերաբերող «Երկրի» հրապարակումները, երբ քեմալականությունն ապրում էր իր կայունացման շրջանը՝ քաղաքագիտական նորահնար միջոցներով, Թուրքիայի պարտության դառը հետևանքների և Արևմուտքի ու Ռուսաստանի քաղաքական հակամարտությունների պայմաններում՝ ձգտելով իր օգտին ծառայեցնել նույն այդ հակասությունները: Պոլսահայ ողջ հանրությունն այս շրջանում ապրում էր սպասողական վիճակում՝ կապված վերը նշված հակասությունների այս կամ այն լուծման հեռանկարների հետ, որ և չէր կարող չհամակել «Երկրի» խմբագիրներին: Թերթն այս ոգով էլ արձանագրում է ազգային կյանքի տարընթացությունները Կ.Պոլսում, հորդորում է բարեկարգել ազգային հիվանդանոցի, դպրոցների գործունեությունն ու վիճակը, կանոնավորել ազգային վարչության աշխատանքները: Ընդսմին, «Երկիրն» ակնկալում էր, որ ազգային հաստատությունների ընթացքը կարելի է ուղղորդել այն հունով, որ դրանք «կարող ըլլան ոչ միայն օգտակար ըլլալ... համայնքին, այլ նաև մայր երկրին» (1921, 27 սպտ.):

«Երկիրը» քննադատական գիրք ուներ Կ.Պոլսի երեսփոխանական ժողովի անդամ հարուստ առևտրական ներկայացուցիչների հանդեպ, որոնք այդ ժողովում ապահովել են «անգոյն և համակերպող մեծամասնութիւն՝ միշտ պատրաստ մատները բարձրացնելու ի նպաստ վարչութեան» (1921, 10 նոյ.):

«Երկիրն» անդրադարձել է նաև Կ.Պոլսի հոգևոր ու մտավոր կյանքի խնդիրներին, համայնքի կյանքի ընթացքից ակնկալել է նրա պատրաստվելն առաջիկա փոփոխություններին, որպիսիք այդ հրատարակչությունն առնչում էր միջազգային քաղաքականության զարգացումներին: Թերթը հետևում էր Կիլիկիայի հայության առօրյային, «Կիլիկիա» խորագրով նյութերում շոշափում Ադանայի հայության, այնտեղ գաղթած հայերի կացությանը կապվող խնդիրները: Թերթը ոչ մի դրական հետևանք չէր սպասում ֆրանսիական բանակի՝ Կիլիկիան պարպելուց և այն Թուրքերի վերահսկողությանը հանձնելու խղողությունից: «Թուրք մամուլ» խորագրի տակ «Երկիրը» քաղվածաբար տպագրել է «Բեյան-Սաքաճ», «Թեվհիդը էֆքյար» և Կ. Պոլսի այլ թուրքական թերթերի նյութերը. հայ-թուրքական

հարաբերությունների, դրանցում հայերի վարքագծի և Թուրքիայի հանդեպ նրանց վերաբերմունքի մեկնաբանություններով: «Երկիրը» քննադատեց «Իքդամ» թերթի արտոնատեր Ահմեդ Ջևդեթին՝ հայերի դեմ սպառնալի ու ամբարտավան լեզու բանեցնելու առթիվ, հատկապես չեշտելով այն, որ այս գործիչը չի մոռացել իր երբեմնի ազգայնամոլ ձգտումները (1921, 8 նոյ.): Թուրքական մամուլի և քաղաքականության անհանդուրժելի դարձող դիրքը ցուցադրելու համար «Երկիրը» «Իքդամից» արտատպել է հոդված, որտեղ հայտնվում է, թե թուրքերը «պէտք է տրամադրուեն մոռնալ այն դաւաճանութիւնները, որ կատարեցին այս երկրի կրօնական և ազգային փոքրամասնութիւնները ընդհ. պատերազմին և թէ Անատոլուի վերջին կռիւներու ժամանակ» (1921, 25 նոյ.): «Երկիրն» առաջ էր քաշում դրան տրամագծորեն տարբեր մոտեցում՝ թուրքերն իրենք պետք է գիտակցեն, որ փոքրամասնությունների հետ իրենց հարաբերությունները բարելավելու անհրաժեշտ հիմքը այն կլինի, որ թուրք ազգայնականությունը խոստովանի իր կործանարար մոլեռանդությունը, որ պոռթկաց ոչ վաղ անցյալում և ապահովի փոքրամասնությունների «գէթ նուազագոյն իրաւունքները» (1921, 8 նոյ.): Թուրք-հունական պատերազմին անդրադառնալիս «Երկիրը» պահպանում է զգուշավորություն, թեև չի թաքցնում իր համակրանքը հունական բանակի հաջողությունների նկատմամբ: Պատերազմի սկզբում թուրքերի անհաջողությունները կոծկող և ապատեղեկատվություն տարածող թուրքական մամուլի քննադատությունը այդ վերաբերմունքի դրսևորումներից էր: Այս վերաբերմունքը, սակայն, տեղի տվեց թերթի սոցիալ-դեմոկրատական մտայնության այն իմաստով, որ 1921 թ. աշնանը նա արդեն դատապարտում էր երկուստեք կռվող կողմերին՝ «աւատապետական Թուրքիային» և «պուրժուազական Յունաստանին», որոնցից առաջինը եթե «մահամերձի ջղաձգութեամբ որոշած է մինչեւ վերջ պատնէշին վրայ մնալ», ապա վերջինը կռվում է նոր շուկաների և իր տնտեսության զարգացման համար: Թերթը նկատում էր, որ այդ չի խրախուսվում շահատենչ արևմտյան կապիտալի երկրների կողմից, որոնք կարող են արգելակել Հունաստանի ռազմաքաղաքական զարգացումները (1921, 3 նոյ.): «Թուրքական ազգայնականութեան» հուսահատ ջղաձգումները «Երկիրը» տեսնում էր

նաև Էնվեր փաշայի վերջին շրջանի գործունեության մեջ: Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից և իթթիհատական կառավարության կրախից հետո Էնվերը ոճրագործի կարոտախտը միացրել էր քաղաքական բախտախնդրի դյուրաթեք կեցվածքին՝ ստեղծելով «Միություն և առաջադիմություն ժողովրդական խորհուրդների կուսակցությունը» և դիմել էր Անկարայի քեմալական կառավարությանը, որ այն ճանաչվի Թուրքիայի Ազգային ժողովի կողմից: Էնվերը մերժում էր ստացել, սակայն, ինչպես գրում է «Երկիրը», սովետներն ընդառաջել էին նախկին իթթիհատականին՝ համաձայնելով, որ Ռուսաստանում գտնվող թուրք գերիները մտնեն նրա կազմակերպության մեջ: Այդ, ակնհայտորեն ռազմական բնույթի կազմակերպության ձևավորմանն էլ ձեռնամուխ էր եղել Էնվերը Կովկասում, որ և տագնապ էր պատճառել Անկարայի կառավարությանը: Քեմալական կառավարությունը ծանուցագիր էր հղել Կարսի խորհրդաժողովին մասնակցող Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին՝ նախազգուշացնելով, որ իր հետ կնքած նրանց դաշնագրերը չեղյալ կհայտարարվեն, եթե մեկ ամսվա ընթացքում վերջ չտան Էնվերի գործունեությանը Կովկասում (1921, 14 նոյ.): Մի հոդվածում «Երկիրը» ներկայացնում էր Էնվերին՝ ոճրագործի իր կերպարանքը քողարկելու իբրև «իթթիհատի ժողովրդային խորհրդային կուսակցութեան» առաջնորդի և համաձայնելով թուրքական «Վաքըթ»-ին, որ իթթիհատը գոյության իրավունք չունի (1921, 2 նոյ.): Ինչ վերաբերում է իրենց՝ քեմալականների ազգայնական քաղաքականության բնութագրին, ապա «Երկիրը» լիովին կողմնակից էր եվրոպական կոմունիստների՝ Քեմալի հանդեպ խորհրդային ղեկավարների անհեռատես և օրախնդիր քաղաքականությունից տարբերվող տեսակետին: Թարգմանված մի հոդվածում («Քեմալականութեան բնոյթը, իր արտաքին երեւոյթը և պատճառները»), որի հեղինակը ֆրանսիական կոմունիստ Մ. Մարքսն էր, նշվում է, որ Քեմալը ազգայնական է և ռազմական բախտախնդիր: Նա ընդդիմանում է Սևրի դաշնագրին, ձգտում է Թուրքիան ազատել կապիտուլյացիաներից և այլ հակակշիռներից ու ստեղծել իսլամական կայսրություն: Քեմալը, շարունակում է հոդվածագիրը, ընդունել է սովետների գաղափարը, որովհետև չէր

կարող կռվել առանց նրանց զենք ու զինամթերքի, թեև, միաժամանակ, մերժել էր Կարմիր բանակի ուղղակի օգնությունը: Կոմունիզմը, ասվում է հոդվածում, Քեմալի համար ոչ նպատակ է, և ոչ էլ տեսլական, այլ մի պարզ միջոց, որի նպատակն է ազգն իր շուրջ համախմբելը: Սովետների գաղափարախոսությունը Քեմալը կարող է սահմանափակել կամ փոփոխել իր քաղաքականության մեջ, բայց անփոփոխ է մնալու նրա ազգայնականությունը (1921, 30 նոյ.): Հոդվածն ուշագրավ է Քեմալի և Խորհրդային Ռուսաստանի քաղաքական հարաբերությունները մի հայտնի չափով բնութագրելու տեսակետից, և ոչ պակաս ուշագրավ՝ «Երկրի» սոցիալ-դեմոկրատական հայացքներում խնդրո առարկա փոխհարաբերություններն ընկալելու իմաստով:

«Երկիրը» տպագրել է գեղարվեստական արձակ ու չափածո ստեղծագործություններ, ընթերցողին ներկայացրել Գր. Զոհրապի, Բ. Քեչյանի, Կ. Ություճյանի, Ս. Պարթևյանի և այլոց դիմանկարները՝ Լ. Էսաճանյանի հեղինակությամբ: Թերթը հետևում էր ռուս գրականությանը, ուշադրություն է դարձրել հատկապես Ա. Բլոկի ստեղծագործությանը, և հեղափոխական շնչով համակված նրա «Տասներկուսը» պոեմին: Անդրադարձել է ժամանակի ռուս գրական երևույթներին ու տեղաշարժերին, բարձր է գնահատել Վ. Բրյուսովին, Ֆ. Սոլոգուբին, Պ. Զայցևին, Վ. Մայակովսկուն և ուրիշների: Դրականորեն է գնահատել ռուս ֆուտուրիստներին և «Պրոլետկուլտի» գրական ուղղվածությունը՝ հատկապես նշելով դրանց պայքարն անհատապաշտության դեմ: Թարգմանական երկերից հետաքրքիր է Մ. Կրաֆորդի «Փրակայի կախարդուհին կամ հայ բժշկի մը սխրագործութիւնը» վիպակը, որ տպագրվեց «Երկրի» թերթոնի բաժնում՝ Մ. Խաչիկյանի թարգմանությամբ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՄՈՒԼԸ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ
(1865–1920)

XIX դ. II կեսին զարգացող արտադրահարաբերությունները մեծ աշխուժացում առաջացրեցին երկրի տնտեսական կյանքում: Եգիպտոս գաղթած հայությունը, ունենալով ազատ ապրելու և գործելու հնարավորություններ, իր գործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը: Այստեղ մեծահարուստ հայերը հիմնում են գործարաններ, մանուֆակտուրաններ, կազմակերպում են գյուղատնտեսական գործիքների արտադրություն, զարգացնում արհեստագործությունը, ներքին և արտաքին առևտուրը:

Հայերը Եգիպտոսում գրավում են բարձր դիրքեր պետական հիմնարկներում, կառավարման համակարգում: 1866–1876, 1878–1879, 1884–1888 թվականներին Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի պաշտոնը վարում է հայազգի Նուպար փաշա Նուպարյանը, կառավարությունում ղեկավար աթոռներ են զբաղեցնում Ստեփան Դեմիրճյանը, Տիգրան Բագրատունին, Յակուբ Արթին փաշան, Ջրաքյանը և ուրիշներ:

1879 թ. Եգիպտոսում հայ ազգաբնակչության թիվը հասնում է 8000-ի[1]: Այդ թիվը տարեցտարի մեծանում է Արևմտյան Հայաստանից՝ Կիլիկիայից և Թուրքիայի շրջաններից, հատկապես ցեղասպանությունից հետո՝ 1915 թ. մի կերպ փրկված հայ գաղթականների հաշվին: 1917 թ. Եգիպտոսում հաշվվում է արդեն 17.220 հայ[2]:

19-րդ դարի վերջից սկսած Եգիպտոսում աշխուժանում է հայ մշակութային կյանքը, ավելանում է դպրոցների թիվը, երևան են

---

[1] Տես Թոփուզյան Հ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Ե., 1978, էջ 40:
[2] Նույն տեղում, էջ 124:

գալիս մշակութային, կրթական նոր միություններ, կազմակերպություններ:

1914 թ. Եգիպտոսում գործում էր տասնմեկ հայկական դպրոց: Բարեկարգ շենքով ու հարմարություններով և ուսման մակարդակով աչքի են ընկնում Կահիրեի Գալուստյան երկսեռ վարժարանը, Ալեքսանդրիայի Պողոսյան դպրոցը և այլ համայնքային ու մասնավոր դպրոցներ:

Եգիպտահայ գաղութի մշակութային և բարեգործական ընկերությունների շարքում իր առանձնակի կարևոր տեղն է գրավում մեծ բարերար, գիտնական, գործարար, քաղաքական ու հասարակական գործիչ Պողոս փաշա Նուպարյանի[1] նախաձեռնությամբ և եգիպտահայ համայնքի ինն ականավոր գործիչների (Յագուպ Արթին փաշա, Երվանդ Աղաթոն, Առաքել Նուպար, Նազարեթ Տաղավարյան, Մկրտիչ Անդրանիկյան, Գրիգոր Եղիայան, Մկրտիչ Մարկոսոֆ, Հովհաննես Հակոբյան, Կարապետ Շերիտճյան) մասնակցությամբ 1906 թ., Կահիրեում ստեղծված Հայկական բարեգործական ընդհանուր միությունը[2]: Այն մեծ ծառայություններ է մատուցել և այսօր էլ մատուցում է հայ ժողովրդի և հայրենիքի տնտեսական, մտավոր և հոգևոր կյանքի զարգացման գործին:

Եգիպտահայ համայնքի կրթա-մշակութային կյանքում ժամանակին աչքի ընկնող դեր են կատարել Կահիրեում հիմնադրված Ընթերցասիրաց ընկերությունը, Հայ առաջադիմասեր ընկերությունը, Տիգրան Երկաթ ժողովրդային միությունը, Զեյթունի բարեսիրաց ընկերությունը, Հայ կաթողիկե բարեգործական ընկերությունը, պատանեկան ու մարմնամարզական մի շարք ընկերություններ:

1900-ական թվականներին եգիպտահայ գաղութը համարվում է հայության մշակութային ամենախոշոր օջախներից մեկը: Այստեղ են համախմբվել արևմտահայ նշանավոր մտավորականներ, գրողներ, հրապարակախոսներ Արփիար Արփիարյանը, Վահան Մալեզյանը, Երվանդ Օտյանը, Վահան Թեքեյանը, Սմբատ Բյուրատը, Միքայել

---

[1] Պողոս փաշա Նուպարյանի կյանքի և գործունեության մասին տե՛ս Ս. Պողոսյան, Պողոս Նուպար փաշա ազգային գործիչը, Ե., 2004:

[2] Պողոս փաշա Նուպարյանի հիմնադրած Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեության մանրամասն պատմությունը տե՛ս Է. Լ. Մելքոնյան, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն Ե., 2005, աշխատությունը:

Կյուրճյանը, Երվանդ Սրմաքեշխանլյանը (Երուխան), Միհրան Ասքանազը, Գրիգոր Սարաֆյանը, Վահան Քյուրքճյանը, Եղիշե Թորոսյանը, Սուրեն Պարթևյանը, Մարի Պեյլերյանը, Հովհաննես Սեթյանը, Գրիգոր Համբիկյանը, Լևոն Մկրտիչյանը և շատ ուրիշներ:

Եգիպտահայության հասարակական քաղաքական, մշակութային կյանքում իր արժանավոր և մնայուն գործն է կատարել հայ պարբերական մամուլը, որի անդրանիկ օրգանը՝ «Արմաւենի» կիսամսյա լրագիրը լույս է տեսել 1865 թ., Կահիրեում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

«ԱՐՄԱՒԵՆԻ» (1865)

Եգիպտահայ առաջին պարբերականը՝ «Արմաւենի» ազգային, քաղաքական և բանասիրական կիսամսյա լրագիրը հիմնադրվել է համայնքի մեծատունների և Կահիրեի փոխառաջնորդ Մկրտիչ Քեֆսիզյանի ջանքերով: Լրագրի արտոնատերն էր Խորենյան դպրոցի հոգաբարձության ատենապետ Հովսեփ Մանուկյանը:

«Արմաւենի» լրագիրը լույս է տեսել ընդամենը չորս համար (մարտ, ապրիլ, մայիս ամիսներին):

Պարբերականը Խորենյան դպրոցի հոգաբարձության հանձնարարությամբ խմբագրել է հրապարակախոսական աշխատանքի լուրջ փորձ ունեցող Աբրահամ Մուրադյանը: Այս մասին լրագրի առաջին համարում գրված է. «Հոգաբարձութիւն...լրագրոյս... խմբագրութիւնը հանձնեց պ. Ա. Մուրատյանին, որոյ ուղիղ եւ ազատական սկզբունքը, ճշմարիտ ազգային ոգին եւ յառաջդիմութեան ունեցած սէրը յայտնի ստուգութիւններ են» (1865, 16 մրտ.):

Ա. Մուրադյանը ծնվել է 1833 թ. Թուրքիայի Արմաշ քաղաքում: Կրթությունն ստացել է Նիկոմեդիայի հայկական դպրոցում: 17-ամյա պատանի Մուրադյանը Նիկոմեդիայում 1850–1853 թթ. հրատարակել է «Հայրենասէր» քաղաքական, ազգային, բանասիրական երկշաբաթաթերթը, իսկ 1860–1863 թթ., Փարիզում՝ «Փարիզ» շաբաթական, ապա՝ կիսամսյա թերթը:

1863 թ. տեղափոխվել է Կ. Պոլիս և կարճ ժամանակով խմբագրել է Հարություն Սվաճյանի «Մեղու» պարբերականը:

1865 թ., Կահիրեում ձեռնարկելով եգիպտահայ անդրանիկ պարբերականի՝ «Արմաւենի» կիսամսյա լրագրի խմբագրական գործը՝ նա նպատակ է ունեցել թերթի միջոցով աջակցել եգիպտահայ մշակութային կյանքի զարգացմանը:

Թերթը փակվելուց հետո նա մեկնել է Կ. Պոլիս: Ապա, 1868 թ. նորից վերադարձել է Կահիրե: 1870 թ. դարձյալ տեղափոխվել է Կ. Պոլիս, ուր վարել է մանկավարժական գործունեություն և թղթակցել մամուլին:

Կ. Պոլսում Ա. Մուրատյանը հրատարակել է իր կազմած «Այբբենարանը» (Ա.մասը՝ 1889, Բ. մասը՝ 1890):

Մահացել է Կ. Պոլսում, 1903 թվականին:

«Արմաւենի» լրագրում քննարկվել են եգիպտահայությանը հուզող կենսական հարցերը՝ առևտրական հարաբերություններ, Ազգային սահմանադրության գործադրություն, եկեղեցի, կրոն, կրթություն, դաստիարակություն:

Հայտնի է, որ առևտրի կազմակերպման եվրոպական ձևերի արմատավորման հետևանքով ոչ քիչ թվով հայ վաճառականներ սնանկացել և ասպարեզից դուրս են մնացել: Այդ մասին թերթը գրել է. «Այս օրուայ օրս, Եգիպտոսի մէջ աչուընիս դարձնելու ըլլանք հայ վաճառական համրելու համար, մէկ հատ գտանք նէ, երկրորդին համար բաւական ժամանակ կմտածենք գտնելու: ...Հայերը, որ ամենէն յառաջ կրնային երթալ, ամենէն յետ յետ մնացեր են» (1865, ապրիլի 16):

Զափավոր հայացքների տեր գործիչը հայ վաճառականությանը համարել է ազգային կյանքի առաջադիմության շարժիչ ուժը և մեծ հույսեր է կապել նրա հետ: Նա խուսափել է հայ մեծատունների և ամիրաների հասցեին քննադատական խոսք ասելուց:

Աբրահամ Մուրատյանը, լինելով հավատացյալ, չի հանդուրժել խռովարարությունը: Սահմանադրական պայքարը համարել է «պայքար յանուն նորաձեւ լկտի ազատութեան մը, որ ոսկեղեն դարու քաղաքականութեան դիմակով ուրուականի մը պես կը թափառի չորս կողմերնիս...» (1865, 16 ապր.):

Թերթը հանդես է եկել ազգային միաբանության քարոզով, համոզված լինելով, որ «Ամէն մարդ պարտաւորութիւն ունի նախ Աստուծոյ, ապա անձին եւ ապա ազգութեան» առջև (1865, 16 մրտ.):

Թերթի էջերում արձանագրվել են եգիպտահայ մեծատունների պատվերով Ազգային սահմանադրության դեմ Մկրտիչ Քեֆսիզյանի կատարած անհաջող փորձերը: Համայնքի բնակչության մեծ մասի բողոքի պատճառով Մկրտիչ Քեֆսիզյանը հեռացվել է Եգիպտոսից:

«Արմաւենիի» դադարելուց հետո, մոտ 25 տարի Եգիպտոսում հայերեն թերթ կամ ամսագիր լույս չի տեսնում: Փակման պատճառներից մեկն էլ եղել է թերթի արտոնատեր Մկրտիչ Քեֆսիզյանի վտարումը Եգիպտոսից:

«ՆԵՂՈՍ» (1889)

Եգիպտահայ առաջին պարբերականի լույս ընծայումից ավելի քան քառորդ դար անց, 1889 թ., Ալեքսանդրիայում ժամանակի դեմոկրատ հրապարակախոսներ Ղևոնդ քահ. Փափազյանի և Անտոն Ռշտունու խմբագրությամբ լույս է տեսնում «Նեղոս» ազգային, քաղաքական և բանասիրական շաբաթաթերթը:

Ա. Ռշտունին ծնվել է Կ.Պոլսում: Սկզբում եղել է թատերական գործիչ, ապա, 1879 թ. թողել է բեմական ասպարեզը և նվիրվել հրապարակախոսությանը: 1891 թ. նա Աթենքում հրատարակել է «Աստղիկ» կիսամյա հանդեսը:

Ա. Ռշտունին 1889 թ. Կահիրեի եկեղեցում կազմակերպված հակախրիմյանական ցույցին մասնակցելու համար ձերբակալվել է: Բանտից դուրս գալուց հետո շարունակել է պայքարը սահմանադրության գործադրման համար:

Ղևոնդ քահ. Փափազյանը[1] ծնվել է 1847 թ., Ադրիանուպոլսում: Թերթը համարձակորեն քննադատում էր Կ. Պոլսի Ազգային

---

[1] Ղևոնդ քահ. Փափազյանը մամուլում հանդես է եկել Ռ-շտունի Ա. (Անտոն) ծածկանունով, որը և սխալմամբ մեջ է գցել Գարեգին Լևոնյանին: Նա Ղևոնդ քահ. Փափազյանին ու Անտոն Ռ-շտունուն իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» գրքում (Ե., 1946, էջ 242) և «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտական ցանկում (Ե., 1934, էջ 29) համարել է միևնույն անձնավորություն: Այս սխալը

ժողովի իշխանամետ քաղաքականությունը, հայ մեծատունների անօրինական արարքները: Նման ելույթների համար Կ. Պոլսի թեմակալ առաջնորդ Մ. Իզմիրլյանը Ղևոնդ քահանա Փափազյանին պատժում է: Նա արտաքսվում է Եգիպտոսից, սակայն ճանապարհին Հունաստանում հաջողում է դուրս գալ նավից և ուղևորվել Ռումինիա: Գալաց քաղաքում նա շարունակում է հրապարակախոսական գործունեությունը: 1895–1899 թթ. այստեղ հրատարակել է «Հայկական տարեցույց» պարբերականը (հայերեն-ռումիներեն):

Ղևոնդ քահ. Փափազյանը մահացել է 1930 թ., Կոստանցայում:

«Նեղոս» թերթում քննարկվել են հասարակական, քաղաքական և տնտեսական ու կենցաղային հարցեր: Այսպես, թերթը արձագանքել է այն դժվարություններին, որ ունեցել են հայազգի արդյունաբերողները եվրոպական ապրանքների ներմուծման ժամանակ: Թերթը հաղորդել է այն մասին, թե գործարարները ինչպիսի խոչընդոտների են հանդիպել տեղական հումքը մշակելու համար գործարաններ կառուցելու ժամանակ:

Թերթի հրատարակման առաջին իսկ օրից խմբագիրները համագործակցել են Ալեքսանդրիայում գործող Յառաջդիմասէր հայրենասիրական կազմակերպության[1] հետ, պայքարել նրա նախընտրած նպատակների իրագործման համար:

«Նեղոս» շաբաթաթերթը եղել է այդ ընկերության ձայնափողը: Այստեղ քննադատվել են եգիպտահայ մեծատունները, ազգային ջոջերը, Կ. Պոլսի ազգային ժողովի թուրքամետ քաղաքականությունը: Նման համարձակ ելույթների համար շաբաթաթերթը կարճ ժամանակում ձեռք է բերել եգիպտահայ մեծահարուստների թշնամանքը: «Նեղոսը» անգամ համարվել է «յեղափոխական քարոզչութեա-

---

ճշտել են Հ. Խ. Թոփուզյանը իր «Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն» գրքում (Ե., 1978, էջ 319) և Մ. Ա. Բաբլոյանը «Հայ պարբերական մամուլը» մատենագիտական համահավաք ցուցակում (Ե., 1986, էջ 49):

[1] Յառաջդիմասէր ընկերության հիմնադիր ժողովը գումարվել է 1886 թ. ապրիլի 4-ին, Կահիրեում: Նրա շուրջ համախմբված երիտասարդները ոգեշնչված են եղել Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի և ազգային-դեմոկրատ մյուս գործիչների գաղափարներով: Ընկերությունը ոստիկանական ճնշման ներքո (1890 թ. հետո) պառակտվել և կազմալուծվել է:

նը նուիրուած... անխորհուրդ ձեռնարկ»[1]: Թերթը ձախողելու նպատակով հակառակորդները առաջին հերթին կազմակերպել են խմբագիրների Ղ. քահ. Փափազյանի և Ա. Ոչտունու բանտարկությունը, որի հետևանքով էլ խափանվել է թերթի հրատարակությունը:

«ՓԻՒՆԻԿ»
(1899, ԿԱՀԻՐԵ, 1901–1903, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ)

«Փիւնիկ» ազգային, գրական և քաղաքական երկշաբաթաթերթը պատկանում է ազգային-դեմոկրատական ուղղություն ունեցող այն պարբերականների թվին, որոնց արծարծած կարևորագույն խնդիրներից մեկը՝ Թուրքական լծից Հայրենիքի ազատագրումն է: Պարբերականը խմբագրում էր ազատագրական շարժման գաղափարների ջատագով, աչքի ընկած հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ Սմբատ Բյուրատը (Տեր-Ղազարյանց):

Սմբատ Բյուրատը ծնվել է 1862 թ., Զեյթունում: 1880 թ. Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանն ավարտելուց հետո Սորբոնի համալսարանում հետևում է մանկավարժական դասընթացներին, ապա վերադառնում է ծննդավայր և դասավանդում Սսի, ապա Սամսունի վարժարաններում:

1896 թ. նա հայկական կոտորածներից մի կերպ փրկվում է և ընտանիքի հետ ապաստան գտնում Եգիպտոսում: Կահիրեում հրատարակում է 1899 թ. «Փիւնիկ», 1900-ին՝ «Նոր օր» եռօրյա լրագիրը, 1905 թ.՝ «Սիսուան» ամսագիրը:

1907 թ. Սմբատ Բյուրատը մեկնում է Ռումինիա և Օսմանյան սահմանադրության հաստատումից հետո վերադառնում Կ. Պոլիս, որտեղ Արամ Անտոնյանի հետ խմբագրում է «Մանզումէի էֆքեար» հայերեն օրաթերթը:

---

[1] Տե՛ս Թոփուզյան Հ. Խ., նշվ. աշխ., էջ 196:

Սմբատ Բյուրատի գրչին են պատկանում մի շարք վեպեր: Մամուլում նա հանդես է եկել Հայկ-Լևոն, Ապտակ, Թաթ, Մորակ, Խայթոց ծածկանուններով:

1915 թ. ապրիլի 11-ին (24-ին) Սմբատ Բյուրատը Կ. Պոլսի հայ մտավորականների հետ (թվով 800 հոգի) կալանավորվում է և Թուրքիայի խորքերում բարբարոսաբար սպանվում:

Սմբատ Բյուրատի թերթի անվանումը և ճակատին պատկերված փյունիկ թռչունի պատկերը խորհրդանշում են թերթի հիմնական նպատակը, որն էր՝ հայրենիքի վերականգնումը: Առաջին տարվա առաջին համարի խմբագրականում պարզելով թերթի ուղղությունն ու նպատակը՝ Սմբատ Բյուրատը գրում է «... վառ պահել Մայր Հայրենիքի վերականգնման յոյսը, ցրուած, վհատ ու ջախջախ բեկորները մօտեցնել, նոր ոյժ կազմել... ահա այս է մեր նպատակը»:

Շաբաթաթերթի նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. Տեղական լուրեր, Ազգային քրոնիկ, Քննադատական, Արտաքին, Մամլոյ բաժին, Քաղաքական, Զբօսական ժամանց, Մարգարիտներ և այլն:

«Փիւնիկին» աշխատակցում են Երվանդ Օտյանը, Միհրան Տամատյանը, Միհրան Գալֆայանը, Շավարշ Հովվյանը, Մարի Պեյլերյանը և ուրիշներ:

Թերթի խմբագրական և հրապարակախոսական հոդվածների մի մասը պատկանում է Սմբատ Բյուրատի գրչին: Առաջին տարվա համարներում (1–14) պարբերաբար տպագրվում է խմբագրի «Լեռնականի մը ծոցատետրը» հուշագրությունը Հայկ-Լևոն ծածկանունով: Այն հայրենիքին ու հարազատ ժողովրդին օտարի լծից ազատագրված տեսնելու հույսով ապրող աքսորականի հոգեկան ծանր ապրումների նկարագրությունն է:

XX դարի սկզբում Թուրքիայում շարունակվում են ոտնահարվել հայ ժողովրդի իրավունքներն ու արժանապատվությունը: Եգիպտահայությունը բարձրացնում է իր բողոքի ձայնը, դիմումաղերսագրեր է ուղարկում եվրոպական երկրների մարդասիրական ընկերություններին, առաջադեմ գործիչներին, հանրահավաքներ է հրավիրում՝ պահանջելով իրականացնել Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածի բարենորոգումների ծրագիրը: Այս ամենն իր արտացոլումն է գտնում թերթի էջերում: Թերթը լուսաբանում է

նաև եվրոպական երկրներում գումարված խաղաղության վեհաժողովների աշխատանքները, տպագրում անվանի գործիչների՝ Ժ. Ժորեսի, Ֆ. Պրեսանսեի, Ա. Ֆրանսի, Պ. Քիյարի և մյուսների հայանպաստ ելույթները:

«Փյունիկը» տարբերկրյա մամուլի էջերից թարգմանաբար արտատպում է թուրք ոճրագործներին դատապարտող հոդվածներ: Դրանցից մի քանիսում հնչում են հայությանը զենքի դիմելու կոչեր: Այսպես, ֆրանսիական «Լ՛Օրոր» թերթից արտատպված «Հայաստանը» հոդվածում գրված է. «Հայերը լոկ դիւանագիտութեան վրայ դրած են իրենց յոյսը: Դիւանագիտութիւնը իրենց թշնամին է: Պէտք է աղբիւր գտնել ինքնապաշտպանութիւնը ուխտող հայ ազգին բեկորները շինելու համար, մարտիրոսներուն թոյլ տալու համար, որ չիյնան առանց վրիժառութեան, ընծայելու համար քաջարիներուն՝ իրենց ժողովուրդին և բոլոր ժողովուրդներուն դատին ծառայելու միջոցը» (1901, թիվ 23, էջ 243): Եվ այդ միջոցը համարվում է զենքի ուժը:

Ազատատենչ խմբագիրը օգտագործում էր նաև հայ առաջադեմ, գեղարվեստ գրողների, հրապարակախոսների՝ զենքի ուժով պայքարի ոգեկոչող մտքերն ու գաղափարները: Այսպես, «Մարգարիտներ» խորագրի տակ տպագրվում է Միքայել Նալբանդյանի «Նկատողութիւնք» հոդվածի այն հատվածը, ուր ասված է. «Օրհնեալ է պայքարը, թող լինի նա հզօր, անխնայ, ազնիւ և բարեխիղճ» (1901, թիվ 26, էջ 294):

Ուշադրության է արժանի և պատմական աղբյուր կարող է հանդիսանալ ազատագրական շարժման գործիչ, բանաստեղծ, հրապարակախոս, քաղաքագետ Տիգրան Երկաթի[1] կյանքի և գործունեության մասին շարունակաբար տպագրված Սմբատ Բյուրատի հոդվածաշարը (1901, թիվ 22–30, 1902, թիվ 31–51):

[1] Տիգրան Երկաթը (Կարապետ Պիլեզիքճի, Պիլեզիքճյան) ծնվել է 1870 թ. Կ. Պոլսում: Կրթությունը ստացել է Փարիզում, ավարտել է Սորբոնի համալսարանը: Աշխատակցել է ֆրանսիական «Նուվել ռևյու», «Ինտերնասիոնալ», «Ֆիգարո» և այլ պարբերականներին: Նրա մտերիմներն եղել են Ժան Ժորեսը, Է. Զոլան, Միլվարը, Մ. Բարեսը և ուրիշներ: 1895 թ. հայկական ջարդերից հետո նա հեռանում է Կ. Պոլսից: Լրտեսներից խուսափելու նպատակով և ծպտյալ՝ ֆրանսիական նավով փախչում է Հունաստան: 1898 թ. Տիգրան Երկաթը հաստատվում է Եգիպտոսում, որտեղ էլ 1899 թ. մահանում է 29 տարեկան հասակում:

Տիգրան Երկաթի գործունեության նշանաբանն էր՝ «... Ի զեն»: Սմբատ Բյուրատը նրան բնութագրել է այսպես. «... սավառնող հանճար, թափանցիկ հոգի, դատող միտք, կորովի կամք, տոկուն մարտիրոս, սիրող սիրտ, համոզված Առաքեալ ազատութեան անխոնջ մարտիկ» (1901, թիվ 22, էջ 226):

«Փիւնիկի» դեմոկրատական ուղղության մասին են վկայում ինչպես Սմբատ Բյուրատի, այնպես էլ Մարի Պեյլերյանի, Միհրան Տամատյանի, Երվանդ Օտյանի և մյուսների հրապարակախոսական հոդվածները՝ նվիրված հայրենիքի ազատագրման, քաղաքի և գյուղի աշխատավորության մարդկային արժանիքների փառաբանման ու նրա շահերի և իրավունքների պաշտպանության հարցերին: Դրանցում այն կարծիքն է հայտնվում, թե ռամիկ մարդն է վերջիվերջո փրկելու հայրենիքը, նրա արյունով է ներկված հայրենի հողը, նա է տնքում թուրք բարբարոսի կրնկի տակ, նա էլ պետք է լինի «վերջին յաւիտենական յաղթողը»: Մարի Պեյլերյանը իր հոդվածում գրում է. «Նա է կեանքի վերափոխիչ ույժը, համբերութեամբ կը կրի հալածողի լուծը, բայց հենց որ համբերութիւնը հատնի, նա մոլեգնօրէն կը յարձակուի եւ կը խորտակի բոլոր պատնէշները» (1901, թիվ 20, էջ 206):

«Փիւնիկի» քննարկած մյուս կարևոր խնդիրներից է սահմանադրության գործադրման հարցը: Բարձրացվում են օրենքների կիրառման, կարգ ու կանոնի հաստատման պահանջները:

Շաբաթաթերթը սխալ է համարում այն արմատացած կարծիքը, թե ազգի վարչական գործերը պետք է վստահել բարձր դիրք ունեցող, տիտղոսավոր ու հարուստ մարդկանց և առաջարկում է վերջ տալ «տիտղոսաւորներու տիրապետութիւնը»: Այս և նման գաղափարները դուր չեն գալիս հայ մեծահարուստ իշխանավորներին և սկսվում է հալածանքների շարան Սմբատ Բյուրատի նկատմամբ: Նախ փորձ է արվում նրան զրկել նյութական միջոցներից և կեղծ փաստաթղթերի հիման վրա նրան ազատում են Կահիրեի Գալուստեան վարժարանի ուսուցչի պաշտոնից: Սմբատ Բյուրատը ստիպված է լինում դադարեցնել թերթը և գնալ Ալեքսանդրիա: Այստեղ շարունակում է պայքարը սահմանադրության գործադրման համար:

Ալեքսանդրիայում թաղային խորհրդի ընտրությունների ժամանակ սրվում է սահմանադրական պայքարը: Թերթը հանդես է գալիս սահմանադրական խորհրդարան ընտրելու պահանջով:

1902 թ. մարտի 23-ին Ալեքսանդրիայում թաղային խորհրդի ընտրություններն ավարտվում են սահմանադրականների հաղթանակով: Սակայն այդ խորհուրդը կարճ կյանք է ունենում, քանի որ ատենապետ ընտրված Պողոս Նուպար փաշան լուծարում է և փոխարենը կազմում է նոր անդամներից բաղկացած մարմին՝ խնամակալություն, որին դեմ էր ժողովուրդը: «Անկցի խնամակալութիւնը, կեցցէ՛ սահմանադրութիւնը» կարգախոսով թերթը տպագրում է մի շարք հոդվածներ, որոնցում քննադատվում է հակասահմանադրական խորհրդարանը: Սահմանադրության գործադրման պահանջով Ալեքսանդրիայում կազմակերպվում են հանրահավաքներ, բողոքի ցույցեր: Հայտնի է 1902 թ. հունիսի 23-ին Պիրամիդ թատրոնում հրավիրված համահավաքը, որտեղ ելույթներով հանդես են գալիս Երվանդ Օտյանը, Միհրան Տամատյանը, Սմբատ Բյուրատը: Այդ ելույթները տպագրվում են թերթում: Բարձր գնահատելով Օտյանի ելույթը՝ թերթը գրում է. «Օտեանի ամէն մի բառը սլաքի պէս կըցցուէր խնամակալութեան կուշտին և անոր ապուշ փաստաբաններուն գանկին» (1902, Գ. տարի, թիվ 2, էջ 10):

«Փիւնիկը» տպագրում է նաև հանրահավաքի ընդունած բանաձևը, որով պահանջվում էր արդեն ընտրված թաղային խորհրդի վերահաստատումը: Պողոս փաշան ստիպված է լինում հրաժարական տալ և թաղային ժողովի ատենապետ է նշանակվում Աբրահամ Բարթողը: Վերջինիս օրոք խնամակալությունը շարունակում է գործել՝ տեղի տալով նոր բողոքների: «Փիւնիկը» դարձյալ շարունակում է պայքարը սահմանադրական խորհրդարանի ընտրության և սահմանադրության գործադրման համար: Հայտնի է, որ միայն Օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո, 1908 թ. Ալեքսանդրիայում խորհրդարանի ընտրություններն ավարտվում են սահմանադրության կողմնակիցների հաղթանակով:

«Փիւնիկ» երկշաբաթաթերթի արձակ և չափածո ստեղծագործություններում նույնպես բարձրացվում են ազատագրական պայքարի գաղափարները: Ուշագրավ են հատկապես Սմբատ Բյուրատի բանաստեղծությունները («Յիշէ զիս», «Գարունը», «Որբերուն աղա-

ղակը», «Մանկան արցունքը», «Հայուն ճիչը» և այլն): Սմբատ Բյուրատի պոեզիային հատուկ են լավատեսական տրամադրությունները:

«Փյունիկը» բարձրացնելով եգիպտահայության ժամանակին հուզող կենսական խնդիրներն ու պահանջները՝ կարողացել է այս կամ այն չափով իր ներդրումն ունենալ եգիպտահայ գաղթօջախի հասարակական, քաղաքական կյանքի առաջընթացի գործում:

«ԱՐՇԱԼՈՅՍ» (1899–1905, 1908–1914)

«Փյունիկ» պարբերականի հետ միաժամանակ 1899 թ. Կահիրեում լույս է տեսնում «Արշալոյս» ազգային, գրական և քաղաքական եռօրյա պարբերականը: Թերթի խմբագիրն էր Եղիշե Թորոսյանը: «Արշալոյսը» 1899–1904 թթ. լույս է տեսնում շաբաթը երկու անգամ: 1905–1907 թթ. լույս չի տեսնում[1]: Վերահրատարակվում է 1908–1914 թթ.:

«Արշալոյսը» անկախ թերթ էր և չէր պատկանում հայ քաղաքական որևէ կուսակցության: Թերթի հիմնական նպատակն էր՝ ծառայել ազգի քաղաքական, տնտեսական, հասարակական ու հոգևոր կյանքի բարեփոխմանը:

Պարբերականին աշխատակցում էին Առանձարը (Միսաք Գույումճյան), Հ. Շաթրյանը, Հ. Շամլյանը, Ավոն (Ա. Գասպարյան), Ղ. եպ. Շիշմանյանը «Ազատական մը» ծածկանունով, Տ. Հովհաննեսյանը, արևելահայ մտավորականներից Գ. Բալասանյանը և ուրիշներ:

Թերթը ուներ հետևյալ բաժինները. Ազգային, Տեղական լուրեր, Արտաքին լուրեր, Եվրոպական թղթաբեր, Հանրային բեմ, Կանանց աշխարհէն, Վերջին ժամ, Նամականի և այլն:

Ինչպես «Փյունիկում», այնպես էլ «Արշալոյսում» քննարկված հիմնահարցերից է՝ Հայաստանի ազատագրումը: Սակայն հարցի

---

[1] Բանաստեղծ, հրապարակախոս Ղևոնդ եպ. Շիշմանյանի՝ արտասահմանում գրած «Ձայնք հայրենեաց» բանաստեղծությունների ժողովածուն տպագրելու համար Եղիշե Թորոսյանը 1905 թ. 14 ամսով բանտարկվում է և թերթը 1905–1907 թթ. դադարում է լույս տեսնելուց:

յուծման միջոցներն առաջադրելիս թերթը չէր կիսում «Փյունիկի» տեսակետները:

«Արշալույսը» նույնպես խստորեն քննադատում էր, մեղադրում օսմանյան բռնապետությանը, մերկացնում սուլթան Աբդուլ Համիդի բռնակալությունը, եվրոպական թերթերից արտատպում էր նրա հանցագործությունները դատապարտող հոդվածները:

Այսպես, «Լ՚Օրոր» թերթի խմբագիր Պ. Քիյարի «Իրավունք» թերթից արտատպված նամակում առաջարկվում է Ֆրանսիայի հանրապետության նախագահին՝ չընդունել Աբդուլ Համիդի շնորհած Իմթիյազի պատվանշանը, քանի որ այն «արիւնով շաղախուած է»:

«Գիտե՞ք,- գրված է այնտեղ,- որ միայն Հայաստանի մէջ 300.000 մարդկային արարածներ ինք կախել, սպանել, այրել, բզքտել, մորթազերծ ընել և կորտել տուել: Գիտե՞ք, որ Կարմիր Սուլթանը ինքն էր ուղղակի կամաւոր հեղինակը եւ պատասխանատուն կոտորածներուն եւ ընդհանուր ջարդերուն» (1900, թիվ 65, էջ 2):

Հայտնի է, որ 1909 թ. երիտթուրքերի կազմակերպած Ադանայի կոտորածից հետո առաջադեմ մի շարք մտավորականներ (Լևոն Մկրտիչյան, Վ. Թեքեյան և ուրիշներ) կանխատեսելով ամբողջ Կիլիկիայի բնաջնջումը և էլի անակնունելի վայրագ գործողություններ՝ հանդես եկան զինված ինքնապաշտպանության ծրագրի մշակման առաջարկով: «Արշալույսը» դեմ լինելով նման ծրագրին՝ գրում է. «Բուռական չէ ինչքան հայը արիւն թափեց: Ազգի ճակատագրին հետ այս առաջնամնի անդթութեամբ խաղ խաղալը ներելի չէ» (1909, թիվ 75, էջ 2):

Թերթի հոդվածներում զինված ինքնապաշտպանությունը, եթե ընդհանրապես չէր ժխտվում, ապա համարվում էր ամենավերջին միջոցը: Եվ զարգացվում էր այն տեսակետը, թե նախքան զինված ինքնապաշտպանության վտանգավոր քայլին դիմելը, անհրաժեշտ էր օգտագործել խաղաղ միջոցները:

Թերթում քննադատվում էր հայ ազգային կուսակցությունների գործելակերպը: Դաշնակցությունը պախարակվում էր եկեղեցուն հանդեպ անվայելուչ վերաբերմունք ցուցաբերելու և սոցիալիստական հորջորջվելու, Սահմանադրական-ռամկավար կուսակցությունը՝ համակերպողական դիրքի, Թուրքիայում ապրող բոլոր հպատակ ազգերին, նրանց թվում և հայերին օսմանցի համարելու համար:

«Արշալույսը» միաժամանակ լինելով գրական պարբերական՝ տեղ էր տալիս գեղարվեստական ստեղծագործությունների, որոնց հիմնական թեման նույնպես Հայրենիքի ազատագրումն էր: Առանձնապես աչքի էին ընկնում Ղևոնդ Ալիշանյանի բանտում գրված «Ցաւերգք հայրենեաց» ժողովածուից վերցված բանաստեղծությունները («Աքսորականը», «Որքան լացի ես», «Սրտի ցաւեր առ Արեւ» և այլ հատվածներ), Ավոյի «Երգեր-վէրքեր» ոտանավորների շարքը, Մ. Զոլագյանի «Օտար հովեր» և այլ չափածո գործեր:

Պարբերականը եգիպտահայ ընթերցողին ծանոթացրել է արևելահայ մշակութային կյանքին, տպագրել Մուրացանի, Վ. Միրաքյանի, Լ. Մանվելյանի, Գ. Բալասանյանի և մյուսների կյանքին ու գործունեությանը նվիրված հոդվածներ: «Նամակ Կովկասէն» խորագրի տակ զետեղվել են Գ. Բալասանյանի թղթակցությունները ու բանաստեղծությունները («Իմ անտիպ պատմուածքներից», «Երգիր, ախպէր ջան, զուլումի երգեր», «Գրողի վիճակը» և այլն):

Թերթը եգիպտահայությանը առաջինը ծանոթացրել է աշուղ Ջիվանու (Սերոբ Լևոնյան) երգերին («Հոգի որսացողներ», «Մեր դարը» և այլն):

Պետք է նշել, որ թերթի խմբագիրը՝ Ե. Թորոսյանը, ունեցել է գաղափարական հակառակորդներ, որոնք հետապնդել են նրան, անգամ հաջողել բանտարկել տալ: 1913 թ. թերթը չի հրատարակվել: 1914 թ. Ե. Թորոսյանին հաջողվել է վերահրատարակել այն: Այս անգամ նա վարել է զգուշավոր քաղաքականություն: Համաշխարհային առաջին պատերազմի օրերին նա դիմել է իր թղթակիցներին «քաղաքական շփոթ վիճակին մէջ միտքերը գրգռող և մանաւանդ շփոթեցնող յօդուածներ» չուղարկել խմբագրություն:

1914 թ. մի քանի համար լույս տեսնելուց հետո թերթը փակվել է:

«ՆՈՐ ՕՐ» (1900–1901)

«Նոր օր» ազգային, բանասիրական ու քաղաքական լրագիրը հրատարակվել է Կահիրեի «Ընթերցասիրաց ընկերութեան» (1891) հիմնադրած «Լսարան-ընթերցարանի» (1896) նախաձեռնությամբ: Արտոնատերն է եղել ֆրանսիացի հայասեր գործիչ Ժ. Մյունիեն, խմբագիրը՝ Սմբատ Բյուրատը:

«Նոր օր» թերթի առաջին համարը լույս է տեսել 1900 թ. հունիսի 7-ին: Եռօրյա այս թերթին աշխատակցել են Հ. Ալփիարը (Ալփիարյան), բանաստեղծ Հ. Սեթյանը, հասարակական գործիչ, գրող Ա. քահ. Սամուելյանը և ուրիշներ:

«Նոր օրի» նյութերը զետեղվել են Ազգային, Տեղական, Բանասիրական, Մեր բարքերէն, Ազգերու կեանքէն, Քաղաքական աշխարհէն բաժիններում: Խմբագրական հոդվածները հիմնականում գրել են Ս. Բյուրատը և Հ. Ալփիարը:

Սմբատ Բյուրատը իր հոդվածներում անդրադարձել է արևմտահայությանը, ինչպես և Եգիպտոսում և այլուր ապաստան գտած գաղթականությանը հուզող հարցերին: Դիմելով եգիպտահայ մեծահարուստներին, նա գրել է. «Ի մի բան, ի սէր մարդութեան, ի սէր ազգութեան ողորմինք այն խեղճ որբերուն, որոնք մեր մարմինն են, մեր արիւնն են, մահամերձ ազգի մը ապագայ սերունդն են» (1900, թիվ 11, էջ 1):

Հ. Ալփիարը թերթի էջերում միաժամանակ փորձել է միջոցներ առաջադրել եգիպտահայության տնտեսական կյանքի բարեփոխման վերաբերյալ: Այսպես, իր մի «Մտերմական խօսքեր» խմբագրականում նա առաջարկել է վանքապատկան հողերից ստացված եկամուտները ծառայեցնել աղքատ ընտանիքների ու որբ երեխաների կարիքների բավարարմանը:

«Նոր օր» թերթը տպագրել է բարոյախրատական նյութեր, որոնցում ստորագծել է քրիստոնեական բարոյախոսության՝ չարին չհակադրվելու, թշնամու հանդեպ ներողամիտ լինելու և նման այլ պատգամները: Այսպես, գրել է «...յիմարութիւն է զչարիլ՝ դրացինիդ վրայ տեսնելով թերութիւն մը զոր դու չունիս, եւ որու փոխարէն դու ուրիշ մը ունիս, զոր դրացինդ չունի» (1900, թիվ 11, էջ 3):

Թերթը քննարկել է նաև մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցերը: Հայրենասիրության, ազգասիրության գաղափարներն են բարձրացվել գեղարվեստական գործերում: Բանաստեղծ Հ. Սեթյանը Յ. Ս. ծածկանունով տպագրած իր «Ու՞ր գային» (1900, թիվ 11) բանաստեղծության մեջ ողբակցել է հայրենիքի կորստի և նրա քաջարի որդիների մահվան առթիվ:

«Նոր օր» թերթում տպագրվել է գրող, հրապարակախոս Ռ. Զարդարյանի «Կասկածս» բանաստեղծությունը (1901, թիվ 72), ուր

հեղինակը ցանկություն է հայտնել հայրենիքի ցավը և իր հոգու տառապանքը հաղորդել կարեկից աշխարհին:

«Նոր օրը» ընթերցողին ծանոթացրել է նաև Թուրքիայի իրավավարչական կառուցվածքին, Ազգային սահմանադրության հիմնական սկզբունքներին, ինչպես և Հայոց պատրիարքարանի գործունեությանը:

Թերթը արձագանքել է Ռուսաստանում և արևմտաեվրոպական երկրներում տեղի ունեցած քաղաքական կարևոր իրադարձություններին: «Քաղաքական աշխարհէն» խորագրի տակ տպագրված նյութերը տեղեկացրել են Մակեդոնիայում թուրքական կառավարության դեմ սկսված ապստամբական շարժումների, Ռուսաստանում, հատկապես Պետերբուրգում կազմակերպված ուսանողական բողոքի ցույցերի մասին: «Ազգերու կեանքէն» խորագրով տպագրված նյութերը ծանոթացրել են այլ ազգերի տնտեսական ու մշակութային կյանքին:

Թերթն իր գոյության երկու տարվա ընթացքում կարողացել է ինչ-որ չափով վերհանել եգիպտահայ կյանքում տեղ գտած բացասական երևույթները և միջոցներ առաջադրել դրանց վերացման ուղղությամբ, ինչպես և նպաստել եգիպտահայության հոգևոր կյանքի հարստացմանը:

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» (1906)

«Նոր ժամանակներ» քաղաքական և գրական շաբաթաթերթը հրատարակվել է 1906 թ., Կահիրեում (երեք համար): Այն խմբագրել են գրող, հրապարակախոս Վահան Թեքեյանը (Սկայորդի, Ասուպ), Արփիար Արփիարյանը (Սկեպտիկ), Տիրան Քելեկյանը (Գ.) և ուրիշներ:

Թերթի հիմնական նպատակն է եղել օժանդակել արտերկրում ապրող հայության ազգային դիմագծի պահպանմանը, ստեղծել արտասահմանի հայ մտավորական ուժերի միություն, որը հայ ժողովրդի մեջ կտարածեր «ազատ մարդու և քաղաքացիի առաքինութիւններ» և «կը յիշեցնէր ու կը պաշտպանէր հայ դատը ժողովուրդներու եւ կառավարութեանց դատաստանին առջեւ» (1906, թիվ 1, էջ 1):

Թերթը կարողացել է վերհանել հայ ժողովրդի սոցիալական, տնտեսական իրավիճակի ճշմարիտ պատկերը: Վ. Թեքեյանը («Գրչի հարուածներ. ծեծ եւ մածուն», 1906, թիվ 1), Ա. Արփիարյանը («Արձագանգ», 1906, թիվ 1), Տ. Քելեկյանը («Պոլիս, նամակի հատուած մը», 1906, թիվ 2) և ուրիշներ իրենց փոքրածավալ պատկերներում անդրադարձել են սոցիալական անհավասարությանը, հասարակական, քաղաքական գործիչների անմխիթար վարվելակերպին, հայրենակարոտ օտարական հայի հոգեկան ծանր ապրումներին:

Վ. Թեքեյանը, ինչպես իր նախորդ պարբերականներում, այս թերթում ևս բացում է «Արեւանկար» բաժինը և ընթերցողներին ծանոթացնում հայ գրողների, հասարակական գործիչների օրինակելի դիմանկարներին: Այսպես, նա «Ասուպ» ծածկանունով տպագրած դիմանկարում (1906, թիվ 2) ներկայացնում է հրապարակախոս, հասարակական գործիչ Լ. Մկրտիչյանի բարոյական բարձր կերպարը, ընդգծելով հատկապես նրա անդավաճան գործունեությունը: «Նա,- գրում է հեղինակը,- կաշխատակցի նաև ֆրանսերէն թերթի մը, ուր իր յօդուածները, նուիրուած միշտ Հայկական հարցին և հայերուն պաշտպանութեան, պատուոյ տեղը կը գրաւեն միշտ եւ պատիւ կը բերեն իրեն...» (1906, թիվ 2, էջ 5):

«Նոր ժամանակներ» թերթը բարձր է գնահատել Հայկական բարեգործական ընդհանուր միության դերն ու նշանակությունը և պահանջել հայ հասարակությունից «...հետաքրքրութեամբն ու համակրութեամբը զայն շարունակ զօրացնէ ու յառաջ մղէ» (1906, թիվ 2, էջ 3):

«ԱԶԱՏ ԲԵՄ»
(1903–1905, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ, 1906–1907, ԿԱՀԻՐԵ)

XX դարի սկզբին եգիպտահայ կյանքում և Արևմտյան Հայաստանում, ինչպես և արևելահայ իրականությունում տեղի ունեցած հասարակական, քաղաքական նոր ու կարևոր իրադարձությունները լայնորեն լուսաբանելու նպատակներով Երվանդ Օտյանը, 1903 թ. Ալեքսանդրիայում լույս է ընծայում «Ազատ բեմ» գրական, ազգային և քաղաքական շաբաթաթերթը: Թերթը ուներ վարչություն,

որի անդամներն էին Միք. Կյուրճյանը, Վ. Թեքեյանը, Բ. Օհանյանը, Լ. Լարենցը (Լևոն Քիրիշճյան), Ավ. Պեյլերյանը (Ավօ), Մ. Պեյլերյանը: 1906 թ. վարչության անդամները տեղափոխվում են Կահիրե և թերթը հրատարակվում է Կահիրեում:

1904 թ. փետրվար-դեկտեմբեր ամիսներին Ե. Օտյանը իր եղբոր հրավերով գտնվում էր Հնդկաստանում: Այդ ամիսներին թերթը խմբագրում էր Միք. Կյուրճյանը:

«Ազատ բեմը» ունեցել է ազգային դեմոկրատական ուղղություն, հետամուտ է եղել հայ ազգի սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական, մշակութային կյանքի առաջընթացին: Թերթի էջերում անողոք քննադատության են ենթարկվել մեծահարուստները, իշխանավորները՝ անօրինական գործողությունների համար, դատապարտվել է Օսմանյան Թուրքիայի հայահալած քաղաքականությունը, մեղադրական խոսքեր են տպագրվել արևմտաեվրոպական երկրների դիվանագիտական խաղերի հասցեին: Թերթում մեկնաբանվել են ռուս-ճապոնական պատերազմի հետևանքները, ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ընթացքը, կրթական, մշակութային և այլ հարցեր:

«Ազատ բեմի» մշտական բաժիններն էին Ազգային, Քաղաքական, Անցքեր դարձքեր, Քրոնիկ, Արեւնկար և այլն:

Թերթն ուշադրության կենտրոնում էր պահում տեղական կյանքի խնդիրները: Ինչպես եգիպտահայ նախորդ թերթերում («Փիւնիկ», «Արշալոյս», «Լուսաբեր») այստեղ ևս քննադատվում էին տեղական կառավարման մարմինները, ղեկավար գործիչները իրենց պարտականությունները չկատարելու, ժողովրդի շահերն ու իրավունքները չպաշտպանելու համար:

1904 թ. թիվ 25-ից թերթում ավելանում է Տեղական ազգային գործեր բաժինը, որտեղ զետեղված նյութերի մեծ մասը վերաբերում է Ալեքսանդրիայի թաղական խորհրդի գործունեության լուսաբանմանը, հատկապես խորհրդի ատենապետ Աբրահամ Բարթող փաշայի անօրեն գործելակերպին: Այդ նյութերում առաջադրվում են սահմանադրության գործադրման և Բարթող փաշայի հեռացման պահանջները: Թերթը գտնում է, որ Եգիպտոսի նման ազատ երկրում անհանդուրժելի է Բարթող փաշայի «բռնապետութիւնը»:

Առաջնորդարանի գործունեության դեմ էին ուղղված Ե. Օտյանի «Երոս» ստորագրությամբ տպագրված քրոնիկները, որոնցում առաջնորդարանը ներկայացված էր որպես կաշառակերության, խաբեբայության, երեսպաշտության, շաղակրատության և այլ քսու գործերի կազմակերպման համար ստեղծված մի մարմին: Նման սուր նյութերի պատճառով Ե. Օտյանը հետապնդվում է Բարթող փաշայի կողմից: Սակայն Օտյանը չի լռում, նա շարունակում է գրել ու անխնա դատապարտել փաշայի ու իշխանավորների անօրինական արարքները: Դրանով նա ձգտում էր հասնել իր նպատակին, որն էր «ժողովուրդին աչքերը բանալ իր իրաւունքներուն ու իր շահերուն վրայ» (1905, թիվ 50, էջ 1):

Օրինապահ հասարակարգի ստեղծման գաղափարը քարոզվել է ինչպես Ե. Օտյանի, այնպես էլ Վ. Թեքեյանի և մյուսների թերթում տպագրված հրապարակախոսական հոդվածներում: Վ. Թեքեյանը «Եղբայր եղբօր» առաջնորդող հոդվածում (1904, թիվ 10) բարձրացնում է հայ ազգային քաղաքական կուսակցությունների համերաշխության և համագործակցության գաղափարը: Ազգի փրկությունը նա տեսնում է իրար ձեռք մեկնելու, միասնաբար գործելու մեջ: «...իրար հաղորդակից ըլլալու,- գրում է նա,- իրենց խորհուրդներուն եւ ներշնչումներուն եւ իրար գրկած խոյանալու դէպի նոյն նպատակը, այսինքն դէպի միեւնոյն կեդրոն ու միեւնոյն յաղթութիւնը...» (1904, թիվ 10, էջ 1):

«Ազատ բեմ» շաբաթաթերթը իր վերաբերմունքն է ցուցաբերել ռուս-ճապոնական պատերազմի և ռուսական հեղափոխության նկատմամբ: Իրավացիորեն թերթը ցարական Ռուսաստանը դիտել է որպես գաղութատիրական ձգտումներ ունեցող երկիր, որը, ըստ թերթի, պատերազմում ի հայտ բերեց իր «ռազմական պատրաստութեանց խղճուկութիւնը, անբաւականութիւնը, սաղմնային վիճակը» (1904, թիվ 5, էջ 3): Ե. Օտյանը ցարիզմի պարտությամբ կանխատեսում է Ռուսաստանում հեղափոխական իրադարձությունների աշխուժացումը և հպատակ ժողովուրդների, նրանց թվում և հայության ազատագրումը: «Կովկասի հայութիւնը,- գրում է նա,- զինքը մինչեւ հիմակ պրկող շղթաներէն գերծ ազատութեան կենսանորոգ ունչովը առլցուած, պիտի բարգաւաճի և ուռճանայ, ապագայ ազգային անկախութեան համար զօրաւոր ու անդիմադրելի զանգուած

մը կազմելով» (1905, թիվ 48, էջ 1): Եվ ռուս ժողովրդի հաղթանակի հետ կապելով հայ ժողովրդի ազատագրումը՝ գրում է. «Այն օրն, երբ ռուս ժողովուրդը խորտակէ իր շղթաները, հայութիւնն ալ նոր վերածնութեամբ մը պիտի ոգեւորուի» (1905, թիվ 39, էջ 1):

«Ազատ բեմը» էջեր է նվիրել նաև գեղարվեստական գրականությանը: Առանձնապես աչքի են ընկնում ազատաշունչ ոգով գրված Միք. Կյուրճյանի (Մէն-Կէն), Ա. Գասպարյանի (Ավօ), Ա. Մարլյանի և մյուսների չափածո գործերը: Ա. Գասպարյանի «Կարմիր տաղեր» պոեմը (1906, թիվ 27, էջ 2–3) նվիրված է Կովկասում հեղափոխության օրերին զոհվածների հիշատակին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ» (1903–1904)

«Ժողովուրդը» համարվել է ազգային դեմոկրատական ուղղություն ունեցող պարբերական, որի շուրջ համախմբված են եղել ժամանակի դեմոկրատ մտածողներ, մանկավարժ բանասեր Ն. Աղազարյանը, բանաստեղծ Հ. Սեթյանը, հրապարակախոսներ Ս. Օտապաշյանը, Ավ. Շաղոյանը և ուրիշներ: Խմբագրել է Ավետիս Պալյանը[1]:

Ամսագիրը հրատարակվել է Կահիրեում, ունեցել է Ազգային, Քաղաքական, Մատենագրական, Կովկասեան լուրեր, Այլ եւ այլք բաժինները:

Խմբագրական հոդվածների մեծ մասը գրել է խմբագիրը՝ Ավ. Պալյանը՝ «Խ» և «Ա. Պ.» ծածկանուններով: Նա անդրադարձել է հայ ժողովրդի սոցիալական, տնտեսական, քաղաքական անմխիթար իրավիճակին և փորձել միջոցներ առաջադրել այդ վիճակից նրան դուրս բերելու ուղղությամբ: Նրա համոզմամբ օտար ափերում ցիր ու ցան եղած հայության պահպանման ու գոյատևման կարևոր նախապայմանը կայանում է աշխատանք ունենալու և «ինքնօգնութեամբ» ապրելու մեջ: «Ապրիլ գիտնանք» (1903, թիվ 7), «Կեանքի պայքարը» (1903, թիվ 11) և այլ հոդվածներում Ա. Պալյանը կոչ է արել հայությանը ապրել սեփական աշխատանքով, առանց օտարի

[1] Ավետիս Պալյանը կազմել է «Եգիպտահայ լրագրության» մատենագրական ցանկը («Եգիպտահայ տարեցույց», Գահիրէ, 1914, էջ 148–155):

միջամտության ու օգնության, սեփական ուժերով բարելավել կյանքը: «Քաջայանդգնօրէն մտնենք ինքնօգնութեան երջանկաւէտ արահետին մէջ,- գրել է նա,- ոչ ոքէն ոչինչ չակնկալենք» (1903, թիվ 11, էջ 173):

Ամսագրում տպագրված «Կոչ մը մեր գեղեցիկ սեռին» (1903, թիվ 3), «Հայ կիներու գործատուն մը» (1903, թիվ 4), «Աշխատութեան տունը» (1903, թիվ 5) և այլ հոդվածներում խորհուրդ է տրվել եգիպտահայությանը՝ հիմնել լվացքատներ, կարի արհեստանոցներ, կազմատներ և այլ աշխատանոցներ, որոնցում ներգրավված կլինեն նաև կանայք: Կանանց մասնակից դարձնելով հանրօգուտ աշխատանքին՝ ամսագիրը ձգտել է նրանց ազատագրված տեսնել նախկին ավատական կապանքներից: Բարձր է գնահատվել կնոջ դերն ու նշանակությունը հասարակության զարգացման, ազգի առաջադիմության գործում: «Կինը,- գրել է ամսագիրը,- ըլլալով մեր ընական դաստիարակուհին, եթէ անկեղծ չպահենք անոր արժանապատւութիւնը, ի զուր կը ճգնինք՝ իբր ազգ պատուաւոր դիրք մը գրաւել մարդկային ընկերութեան մէջ» (1903, թիվ 5, էջ 68):

Ամսագրում կարևորություն է տրվել դպրոցի, դաստիարակության հարցերին: Դպրոցը համարվել է «Հայոց կենդանութեան վառարանը»: Պարբերականը իր ձայնն է միացրել համայն հայության բողոքի ձայնին՝ ուղղված Հայ եկեղեցապատկան գույքի և կալվածքների բռնագրավման ու պետականացման մասին ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ին ընդունած օրենքի դեմ: Այդ օրենքի հեռավոր նպատակն է համարել «... նախ հայոց եկեղեցին ջնջել ու յետոյ հայոց ազգը լուծել եւ ձուլել ռուսականին մէջ» (1903, թիվ 10, էջ 160):

Անհրաժեշտ է նշել նաև, որ ամսագիրը իր երկու համարներում (1903, թիվ 11–12) տպագրել է օրենքի տեքստը և իր ընթերցողներին ծանոթացրել դրա բովանդակությանը: Միաժամանակ ամսագիրը մի շարք էջեր է նվիրել Կահիրեում և Ալեքսանդրիայում օրենքի դեմ ուղղված բողոքի ցույցերին ու միտինգներին, մեկնաբանել Նազարեթ Աղազարմի, Միհրան Տամադյանի և մյուսների ելույթները, որոնցում դատապարտվել է օրենքը և հորդորվել հայությանը՝ ամեն ջանք գործադրել օրենքի կիրառումը խափանելու համար:

Մարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթից արտատպվել են կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի՝ ռուսաց ցարին հղած խնդրագրերն ու հեռագրերը (1903, թիվ 11–12): Վեհափառ հայրապետը խնդրանքով դիմել է թագավորին՝ չիրականացնել օրենքի գործադրությունը: Արձագանքելով այդ տարիներին Ռուսաստանում խմորվող հեղափոխական շարժումներին, ամսագիրը իր վերաբերմունքն է ցուցաբերել համաժողովրդական այդ ելույթների նկատմամբ, գնահատելով դրանք ոչ թե որպես «ամբոխային անգիտակից ելույթներ», այլ կազմակերպված շարժումներ, որոնց «գլուխ են կանգնած պետական ու զինուորական ծառայողներ, որոնք որդեգրել են ազատական քաղաքականութիւնը»:

1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ Ռուսաստանում հայության ծավալած շարժումը թերթը համարել է ցարիզմի դեմ ուղղված ազատագրական շարժման արտահայտություն, շարժում, որից և ակնկալվել է հայ ժողովրդի փրկության հետ կապված հնարավորությունը: «Հայութիւնը,- գրել է ամսագիրը,- քիչ ատենէն՝ դարձեալ իր գլուխը պիտի բարձրացնէ աւելի գեղապանծ, աւելի երկնամբարձ քան երբէք, բռնապետական պալատներու աւերակներու վերայ հոյակապօրէն կառուցուած իր լուսափիւռ համալսարաններով, իր անպարտելի ամենայաղթ եկեղեցիով» (1903, թիվ 11, էջ 172):

Իր դեմոկրատական ուղղությամբ ամսագիրը լրացրել ու հարստացրել է եգիպտահայ դեմոկրատական մամուլի ցանկը:

«ՕՐԷՆՔ» (1905)

Հայտնի է, որ 1904 թ. սահմանադրության կողմնակիցները Եգիպտոսում կազմել են «Միացյալ ճակատ», որը սահմանադրության գործադրման համար պայքարը առաջ տանելու նպատակով գրող, հրապարակախոս, մեծ երգիծաբան Երվանդ Օտյանի խմբագրությամբ Ալեքսանդրիայում հրատարակվել է «Օրէնք» շաբաթաթերթը: Թերթի երկրորդ համարի խմբագրականում գրված է. «Օրէնքին տիրապետութիւնը, ժողովուրդի կամքին գերակշռութիւնը՝ օրէնքի ուժով և օրէնքով գծուած սահմանին մէջ, ամիրայական յաւակնութիւններու վերջնական ջախջախումը, Ալեքսանդրիոյ մէջ

Սահմանադրութեան իրական գործադրութիւնը...ահա մեր նպատակը» (1905, թիվ 2, էջ 3):

«Օրէնք» օրենսդրական շաբաթաթերթին աշխատակցել են Վ. Թեքեյանը, Մ. Տամատյանը (Վ. Տ., Վ. Տիրանեան ծածկանուններով) և ուրիշներ:

Թերթը իր քննադատական խոսքն ուղղել է Առաջնորդարանին, Խնամակալությանը, Աղքատախնամ ընկերությանը՝ լույս աշխարհ հանելով դրանց շուրջ համախմբված անձանց նենգ ու կեղծ արարքները: Առաջին իսկ համարից թերթը թշնամական ընդունելություն է գտել հակասահմանադրական խնամակալության կողմից: «Օրէնքի» առաջին թիվը կարծես ճահիճին մէջ նետուած քարը եղաւ,- գրել է թերթը,- ...Խնամակալութեան շուրջը դեգերող հացկատակներն ու պնակալեզներն իրար անցան» (1905, թիվ 3, էջ 2):

«Օրէնքում» միաժամանակ առաջադրվել են միջոցներ Առաջնորդարանը անիշխանական իրավիճակից դուրս բերելու, Աղքատախնամ ընկերության գործունեությունը բարելավելու ուղղությամբ: «Պաշտպանենք օրէնքը» (1905, թիվ 9), «Ժողովուրդին համերաշխութիւնը» (1905, թիվ 4) և այլ հոդվածներում օրինապահ հասարակության ստեղծման առաջին նախապայմանը համարվել է ազգի սովորություններին, զգացումներին, ձգտումներին պատշաճ օրենքների գործադրումը: Ըստ թերթի, օրենքը չպահպանող ու չգործադրող ժողովուրդը չի կարող համարվել ազգ, այն վաղ, թե ուշ կարող է ենթարկվել կործանման:

Լինելով դեմոկրատական, առաջադիմական ուժերի ձայնափողը՝ «Օրէնքը» բազմիցս հանդես է եկել թաղական խորհրդի օրինական ընտրությունների անցկացման պահանջով: Հարկ է համարել նաև իր ընթերցողներին ծանոթացնել Ազգային սահմանադրությանը՝ այնտեղից տպագրելով առանձին հատվածներ:

Թերթը էջեր է նվիրել սահմանադրության գործադրման պահանջով Ալեքսանդրիայում կազմակերպված ցույցերի լուսաբանմանը, մեջբերումներ է տպագրել Ե. Օտյանի, Մ. Տամատյանի ելույթներից: Երվանդ Օտյանը հայտարարել է. «Ժողովուրդը իր պայքարը չպիտի դադարեցնէ մինչեւ որ Սահմանադրութիւնը լիովին չգործադրուի» (1905, թիվ 11, էջ 2):

Հակասահմանադրականները թերթի ձայնը լռեցնելու համար դիմել են բիրտ միջոցների: Խուժել են թերթի տպարան, ցիր ու ցան արել տպագրական տառերը, ծեծել խմբագրին՝ Ե. Օտյանին: Նման բռնության դեմ թերթում հանդես են եկել Վ. Թեքեյանը («Գիրերուն դէմ» 1905, թիվ 3), Մ. Տամատյանը («Դիւային ծրագիրը», 1905, թիվ 3), Ե. Օտյանը («Ամօթ իրենց», 1905, թիվ 3):

Դատապարտելով ծայրահեղությունները՝ թերթը համարձակ գրել է. «Օրէնքը» անսայթաք և անխափան իր դատին արդարութեանը կռթնած՝ չդադրիր բարձրացնելէ իր ձայնը, որ ժողովուրդին ձայնն է, բռնաբարուած իրաւունքին ձայնը» (1905, թիվ 3, էջ1):

Ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ, սահմանադրության գործադրման պահանջով հանդես եկած «Օրէնք» թերթը իր գոյությունը պահպանել է ընդամենը մեկ տարի: Այդ կարճ ժամանակամիջոցում կարողացել է սովորեցնել իր ընթերցողին՝ ձայն բարձրացնել իր մարդկային իրավունքների պաշտպանության համար:

«ԼՈՒՍԱԲԵՐ» (1904–1908)

Պատմաբան, բանասեր, հրապարակախոս, հասարակական գործիչ Վահան Քյուրքճյանը 1904 թ. Կահիրեում Պողոս Նուբար փաշայի նյութական օժանդակությամբ լույս է ընծայում «Լուսաբեր» ազգային, քաղաքական, տնտեսական և գրական երկօրյա թերթը:

Վ. Քյուրքճյանը ծնվել է 1863 թ., Հալեպում: Սկզբնական կրթությունն ստացել է Այնթապի Ներսեսեան և Գիշերօթիկ վարժարաններում: 1884–1886 թթ. Այնթապում հրատարակել է «Մենտոր» երկշաբաթաթերթը: 1888 թ.տեղափոխվել է Կ. Պոլիս, ապա՝ Լոնդոն, ուր 1893–1895 թթ. զբաղվել է հայագիտական հարցերի ուսումնասիրությամբ:

1904 թ Վ. Քյուրքճյանը ժամանել է Եգիպտոս և Կահիրեում հիմնադրել ու խմբագրել է «Լուսաբեր» երկօրյա թերթը: 1905 թ. հոկտեմբերից նա ստանձնել է Կահիրեի Գալուստեան վարժարանի տնօրենի պաշտոնը, և «Լուսաբերի» խմբագրական աշխատանքները ղեկավարելու համար հրավիրել է Վենետիկից նոր վերադարձած Արփիար Արփիարյանին:

Երկու տարի Գալուստեան վարժարանում պաշտոնավարելուց հետո Քյուրքճյանը 1907 թ. նոյեմբերի 22-ին մեկնել է Ամերիկա, մասնակցել Բոստոնի համալսարանի օրենսդրական դասընթացներին և ստացել փաստաբանի արտոնագիր: Նա նշանակվել է Բոստոնի օսմանյան հյուպատոսարանի թարգմանչի պաշտոնում: 1914 թ. Վ. Քյուրքճյանը տեղափոխվել է Նյու-Յորք և զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով: Նա գրել է «Արեւելեան հին ազգաց պատմութիւնը», «Կիլիկիոյ տեղագրութիւնը», «Մի տեսութիւն հայկական Կիլիկիոյ իշխանութեան վերայ», «Կիպրոսի կղզի» և այլ աշխատություններ: Նա գրել է նաև անգլերեն լեզվով «Հայոց պատմութիւն» մեծածավալ աշխատությունը, որը լույս է տեսել 1958 թ.:

Վ. Քյուրքճյանը վախճանվել 1961 թ., Նյու-Յորքում:

«Լուսաբեր» քաղաքական, տնտեսական և գրական երկօրյա թերթը ուներ վարչություն, որի անդամներն էին Քեչեճյանը և Ճեպեճյանը: Խմբագրի և վարչության անդամների հիմնական նպատակն էր ծառայել հայ ժողովրդի նյութական և հոգևոր կյանքի բարեփոխման գործին:

Պարբերականին աշխատակցել են առաջադեմ գործիչներ Ն. Տաղավարյանը, Հ. Շամլյանը, Տ. Քելեկյանը, Մ. Նաթանյանը, Ն. Այպայարը և ուրիշներ: 1905 թ. հոկտեմբերից Քյուրքճյանի հեռանալուց հետո թերթի գլխավոր աշխատակցի պաշտոնը ստանձնել է Ա. Արփիարյանը: Վերջինիս սպանությունից հետո թերթի խմբագրական աշխատանքները ղեկավարել են Վ. Թեքեյանը, Ե. Երուխանը, վերջում Վ. Մալեզյանը:

«Լուսաբեր» թերթի հիմնական բաժիններն էին. Ազգային լուրեր, Տնտեսական խնդիրներ, Քաղաքական, Հանրային կարծիք, Մեր անցեալ փառքերէն և այլն:

«Լուսաբերը» պատկանում էր անկախ պարբերականների թվին: «Լուսաբերը»,- գրված է խմբագրական հոդվածում,- բացարձակապէս անմասն պիտի մնայ մասնավոր նկատումներու, անհատական հաշիվներու, նոյնպէս անկախ պիտի լինի իր վարչութեան անդամներուն և ուրիշ օժանդակներուն անձնական խնդիրներէն» (1904, թիվ 1, էջ 1):

Թերթի 1904–1905 թթ. առաջնորդող հոդվածների մեծ մասը պատկանում է Վահան Քյուրքճյանի գրչին: Դրանք հիմնականում

վերաբերում էին հայ ազգի սոցիալական, տնտեսական, մշակութային կյանքի հարցերին: «Բարոյական խնդիրներ» (1904, թիվ 3), «Ինքնազարգացում» (1905, թիվ 24), «Դպրոց կուզենք» (1905, թիվ 28), «Դպրոցի մասին» (1905, թիվ 52) և այլ խմբագրականներում բարձրացվում էր աշխատավոր, ընչազուրկ դասակարգի կրթության ու դաստիարակության գործի կազմակերպման հարցը: «... Բայց պէտք չէ մոռնալ,- գրում է թերթը,- որ ազգին զօրութեան ջիղը եւ ազգային աւանդութեանց գլխաւոր պահպանը ժողովուրդն է, հասարակ եւ աղքատ դասակարգը, եւ անոնց զավակներն են, որ առհասարակ ազգին կընծայեն ապագայ մշակները եւ գործիչները» (1905, թիվ 52, էջ 1):

Մտահոգված ազգի ճակատագրով՝ Վ. Քյուրքճյանը հորդորում է հայրենիքից հեռացողներին՝ գաղթել Եգիպտոս, ուր «ազատական ու արդարասէր կառավարութեան մը ներքոյ» կան բարենպաստ պայմաններ տնտեսական ու հոգևոր կյանքի զարգացման համար:

«Լուսաբեր» թերթը անհանգստություն էր հայտնում հատկապես հայերի զանգվածային արտագաղթի համար: «Հայաստան առանց հայու» (1905, թիվ 54), «Ամերիկա գաղթողներուն» (1905, թիվ 52) և այլ հոդվածներում ներկայացվում էր Ամերիկայում և այլ վայրերում գաղթած հայերի անփառունակ կյանքը: Թերթը արտագաղթը համարում էր մեծ աղետ հայ ազգի համար: «Թուրքին, յոյնին, հրէային, Սիրիային, Գերմանիային, Ֆրանսային ձեռք պիտի անցնեն, ինչ որ հայը կը լքանէ, եւ այն ատենն է, որ մենք ազգովին պիտի մնանք հայրենազուրկ, թափառաշրջիկ ժողովուրդ մը, այն ատենն է, որ Հայաստան սոսկ աշխարհագրական անուն մը պիտի մնայ » (1905, թիվ 54, էջ 1):

Հայկական հարցը այն հուզող խնդիրներից էր, որ քննարկվում էր ինչպես բոլոր հայկական պարբերականներում, այնպես էլ «Լուսաբերում»: Թերթը տպագրում է «Ազգին ձայնը» (1905, թիվ 60) խմբագրական հոդվածը, որտեղ ժխտվում է նույն թերթում տպագրված օտար հայասերներից Ճ. Ս. Ռեյնոլդսի «Հայկական խնդրոյ մի քանի երեւոյթներուն վրայ» (1905, թիվ 55–58) հոդվածաշարում արտահայտված այն կարծիքը, թե թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունը հետևանք էր հայ մտավորականության Հայաստանում սկսած հեղափոխական գործունեության: Թերթը ի

պատասխան դրա, բացատրում է, թե ընդհակառակը, տարիներ շարունակ Հայաստանի խուլ անկյուններում սկսված գաղտնի, անշշուկ կոտորածները ծնունդ տվեցին հեղափոխության: Եվ հայության պարտքն է համարում ընդունել հեղափոխությունը: «Մեր պարտքն է,- գրում է Թերթը,- փարիլ յեղափոխութեան, գրկել զայն ազգովին, հաստատ համոզուած ըլլալով, որ հլու հպատակութիւնը, քարոզուած խոհեմութիւնը երբէք չպիտի կարենան փրկել զմեզ» (1905, թիվ 92, էջ 1):

Ինչպես վերը նշվեց, Վ. Քյուրքճյանը 1905 թ. հոկտեմբերից թողնում է խմբագրի պարտականությունները և աշխատանքի անցնում Գալուստեան վարժարանում: «Լուսաբերում» աշխատանքի է հրավիրվում գրող, հրապարակախոս Ա. Արփիարյանը: Նրա օրոք թերթում ավելանում են «Տուրիկ» և «Օրը օրին» բաժինները: «Տուրիկ» բաժնում տպագրվում են խառը լուրեր, իսկ «Օրը օրին» բաժնում հայրենիքում և արտերկրում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած նոր ու կարևոր իրադարձությունների մասին համառոտ տեղեկություններ:

Ռուսական 1905–1907 թթ. հեղափոխության օրերին Ա. Արփիարյանը հեռու-հեռվից քարոզում էր, որ հեղափոխությունը պայքար էր շահագործող ու շահագործվող դասակարգերի միջև, որ այն «ցեղային չէր, այլ ընկերային, դասակարգային էր»: «Թէեւ թնդանօթը,- գրում է նա,- բիւրաւոր բանուորներ ջարդ ու փշուր կընէ, բայց ընկերուարական գաղափարը գործնականապէս կը յաղթանակէ, ու տիեզերքի բոլոր կալուածատէրները, դրամատէրները կը սարսափահարէ» (1906, թիվ 69, էջ 1): Նա հույս է հայտնում, թե վերջնական հաղթանակը հեղափոխությանն է: Հատկապես ընդգծում է այն հանգամանքը, որ ապստամբության մասնակիցները ոչ թե բարձրաստիճան զինվորականներն էին, այլ բանվորներն ու գյուղացիները, որոնց էլ պատկանում է ապագան: Արփիարյանը հավատում էր իր հնչակյանությունը, որքան էլ որ «վերակազմյալ» լիներ:

Արփիարյանը Արևմտյան Հայաստանի ազատագրումը կապում էր Ռուսաստանի հետ: «Ինչ կըսեն, թող ըսեն,- գրում է նա,- Թիւրքիոյ հպատակ Հայաստանին ապագան Ռուսիոյ կեանքէն կախում ունի» (1906, թիվ 307, էջ 1):

«Լուսաբերում» Ա. Արփիարյանը տպագրել է 200-ից ավելի խմբագրական և հրապարակախոսական հոդվածներ: Դրանցում նա

տարփողել է սոցիալիստական չափավոր մտայնությամբ հագեցած հայ ազատագրական պայքարի գաղափարը, այն կապելով Ռուսաստանում ընթացող հեղափոխական շարժումների հետ և շարունակել պայքարը ազգային քաղաքական կուսակցությունների գործելակերպի դեմ: Թերթում մեղադրական խոսքեր են տպագրվում Հնչակյան և դաշնակցական այն գործիչների հասցեին, որոնք փորձում էին ազգի անունից դրամ կորզել այս կամ այն մեծահարուստից և չստանալու դեպքում ֆիզիկապես ոչնչացնում էին նրան: Նման մեղադրական ու քննադատական հոդվածների հետևանքը լինում է այն, որ Հնչակյան կուսակցության անդամները ատելությամբ են լցվում թերթի վարչության անդամներ Քեչենյանի, Ճեպեճյանի և գլխավոր աշխատակից Ա. Արփիարյանի նկատմամբ: Նրանք փորձում են վարկաբեկել, հեղինակազրկել նրանց: Այդ ամենին հետևում է Ա. Արփիարյանի չարանենգ սպանությունը:

«Լուսաբերի» համար Ա. Արփիարյանի գրած վերջին խմբագրականը «Պատերազմի պարագային» վերնագրով տպագրվել է թերթի 1908 թ. թիվ 485-ում: Առաջնորդողում հրապարակախոսը այն կարծիքն է հայտնում, թե պատերազմական գործողությունների ժամանակ հայ ազգային կուսակցությունները պետք է հանդես գան միասնաբար: Այս խմբագրականը թերթի վարչությունը համարել է հրապարակախոսի թողած կտակը: «Կտակ մը յեղափոխականին,- գրված է թերթում,- թէ ևթէ հաւատարիմ գործադրողն ես յեղափոխական սուրբ սկզբունքներու, մեկդի ձգէ կուսակցական հաշիւներդ, անձնական հակառակութիւններդ, ու նուիրէ ինքզինքդ ազգիդ շահերուն պաշտպանութեան» (1908, թիվ 485, էջ 1):

Արփիար Արփիարյանի մահից հետո Վ. Թեքեյանը ղեկավարելով թերթի խմբագրական աշխատանքը՝ շարունակել է պահպանել գաղափարական նույն ուղղությունը՝ վերակազմյալ Հնչակների ուղեգիծը: Քննարկման են դրվել համիդյան վարչակարգի դեմ սկսված պայքարի շուրջ հայ մտավորականների արտահայտած տարաբնույթ տեսակետները: Ե. Սրմաքեշխանլյանը (Երուխան) իր «Հայ-թուրքական համերաշխութեան շուրջը» (1908, թիվ 485–498) հոդվածաշարում գտնում էր, որ Թուրքիայում առանց հայ, թուրք, քուրդ ազգերի դաշնակցության անհնարին է հեղափոխության իրականացումը, ուստի և տեղին էր համարում Հայ հեղափոխական դաշնակցության մասնակցությու-

նը 1907 թ. Փարիզում կայանալիք ընդդիմադիր կուսակցությունների համագումարին: Իսկ Վ. Թեքեյանը լավատեսորեն չէր տրամադրված երիտթուրքերի նկատմամբ: Նա այն կարծիքին էր, թե երիտթուրքերի հեղափոխությունից հետո «Երկրի դժբախտ հայ ժողովուրդին վրայ կը հրաւիրուին հաւանական աւելի մեծ դժբախտութիւններ» (1908, թիվ 500, էջ 1): Եվ իրոք, նրա կանխատեսումները իրականություն դարձան: Հեղաշրջումից մեկ տարի չանցած երիտթուրքերը 1909 թ. գարնանը կազմակերպեցին Ադանայի հայերի կոտորածը:

Արևմտահայության անապատ և անապահով կյանքը իր արտացոլումն է գտել «Լուսաբերի» գեղարվեստական գործերում: 1904–1905 թթ. համարներում շարունակաբար տպագրվել է Վ. Քյուրքճյանի «Ջեյլխայի դաղտնիքը» պատմական վիպակը, ուր ներկայացված է համիդյան ջարդերի ժամանակ գերի վերցված հայ աղջկա տառապալից կյանքի պատմությունը: Նույն թեմայի շուրջ են գրված Վ. Թեքեյանի «Մնտուկին հաշիւը» վիպակը (1907, թիվ 334–335) տպագրված Աստղ ծածկանունով (անավարտ), Հ. Սեթյանի, Վ. Մալեզյանի և մյուսների բանաստեղծությունները:

«Լուսաբեր» թերթը իր նյութական սուղ միջոցներով կարողացավ գոյատևել հինգ տարի: 1908 թ. վերջին թերթի վարչությունը դադարեցրեց պարբերականի հրատարակությունը, բայց ոչ ընդմիշտ: 1909 թ. այն միացվեց 1908 թ. Ալեքսանդրիայում Ե. Օտյանի լույս ընծայած «Արեւ» ամենօրյա լրագրին և հրատարակվեց «Լուսաբեր - Արեւ» անունով:

«ԱՐԵՒ» (1908)

1908 թ. Ալեքսանդրիայում հաստատված մի խումբ հայ մտավորականներ հիմնում են «Եգիպտոսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը»[1], որը նույն թվականի մայիս ամսից հրատարակում է «Արեւ» ազգային, գրական և քաղաքական օրաթերթը: «Արեւ»

[1] «Արևւ» թերթի 1908 թ. թիվ 40-ի էջ 3-ում հաղորդում է տպագրված այն մասին, թե թերթը պատկանում է «Եգիպտոսի Հայոց հրատարակչական ընկերությանը» և Երվանդ Օտյանը պատասխանատու չէ այնտեղ տպագրված հոդվածների համար, բացառությամբ իր ստորագրությամբ և իր գրական ծածկանուններով տպագրված հոդվածների:

օրաթերթի խմբագիրն էր գրող, երգիծաբան, հրապարակախոս Երվանդ Օտյանը:

«Արեւ» ազգային, գրական և քաղաքական օրաթերթի նպատակն էր՝ անկողմնակալ դիրքերից իր ընթերցողներին ծանոթացնել ազգային կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին:

«Առաջին օրէն պարտք կը զգանք,- գրված է այնտեղ,- յայտարարելու, թէ «Արեւ» հեռու պիտի մնայ կուսակցական բանակռիւներէ և պիտի խուսափի անձնական վէճերու ասպարեզ ըլլալէ: Հոն չպիտի երեւան երբեք «յանուն անկողմնակալութեան» հյուրընկալուած գիրար հրացանի բռնող յոդուածներ, ոչ ալ անձնական հաշիւներ մաքրելու սահմանուած ճղճիմ ու ձանձրացուցիչ գրութիւններ» (1908, թիվ 1, էջ 1):

«Արեւը» ուներ իր մշտական բաժինները. Տեղական, Ազգային, Քաղաքական, Արձագանգ, Վերջին ժամ, Այլ և այլք: Իսկ 1908 թ. երիտթուրքերի հեղափոխությունից հետո, օգոստոս ամսից թերթում պարբերաբար տպագրվում են «Թուրքիա ազատ», «Օսմանեան սահմանադրութիւնը» խորագրերով նյութերը: Ի տարբերություն նախորդ եգիպտահայ պարբերականների, թերթը որպես նորություն ուներ «Առտուան սուրճի տեղ» բաժինը, որտեղ տպագրված երգիծական բնույթի հոդվածների նպատակն էր՝ նախապատրաստել ընթերցողին թերթում տպագրված նյութերը, ինչպես այնտեղ է գրված, «լաւ մը մարսելու համար»: Այս բաժնի նյութերը պատկանում էին Երվանդ Օտյանի գրչին և տպագրվում էին Սրճեփ Օ. ստորագրությամբ:

Օրաթերթին աշխատակցում էին Լ. Մկրտիչյանը, Վ. Մալեզյանը, Բարսեղ Շահպազը, Բ. Օհանյանը, Տ. Քելեկյանը, Մ. Պեյլերյանը, Ա. Ճիզմեճյանը և ուրիշներ: Ինչպես եգիպտահայ մյուս թերթերի, այնպես էլ «Արեւի» ուշադրության կենտրոնում էին Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի բարեփոխման հարցերը:

1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումը, սահմանադրության վերահաստատումը տարբեր մոտեցումներով ընդունվեցին եգիպտահայության կողմից: Եթե նրա մի մասը դիմավորեց ցնծությամբ, ապա մյուս մասը հեղաշրջումը ընդունեց թերահավատությամբ: «Արեւ» թերթը «Օսմանեան սահմանադրութիւնը» խորագրի տակ

տպագրված հոդվածներում քննարկման է ենթարկում այդ երկու մոտեցումները և ապա արտահայտում իր կարծիքը:

Երվանդ Օտյանը իր «Կեցցէ՛ ժողովուրդը, անկցի՛ բռնավորը» խմբագրականում ողջունում է սահմանադրության վերահաստատումը և միաժամանակ նշում, որ չպետք է մոռանալ, թե «արդի սուլթանը է և կը մնայ մեր հասարակաց թշնամին, նենգ ու չարաշուք բռնաւորը» (1908, թիվ 69, էջ 1):

Լևոն Մկրտիչյանը նույնպես այն կարծիքն է հայտնում, թե չպետք է հափշտակվել սուլթանի խոստումներով, քանի որ նա ամեն ջանք կգործադրի «իր սաղմին մէջ խեղդելու որևէ ընդվզում, և այն ժամանակ միայն տեղի կուտայ, երբ այլեւս իր ույժերը չեն բաւեր ժողովրդային դիմադրութեան յաղթելու» (1908, թիվ 67, էջ 1): Նա այդ հեղաշրջումը համարում է լոկ մի խաղ՝ կազմակերպված սուլթանի և երիտթուրքերի կողմից: Նույն կարծիքն են արտահայտում Բ. Օհանյանը, Ա. Ռշտունին և ուրիշներ: Բ. Օհանյանը իր «Ու՞ր կերթանք» հոդվածում (1908, թիվ 72) երկմտորեն է վերաբերվում հարցին, չի հավատում, թե սահմանադրությունը կարող էր արդարացնել հայության հույսերը: Մինչդեռ մտավորականներից Բաբկեն Շահպազը, Վ. Մալեզյանը, Ա. Ճիզմեճյանը և ուրիշներ լավատեսական տրամադրություններով համակված՝ հայրենիքի ազատագրումն ակնկալում էին սահմանադրական կարգերից և ոգևորված կոչ էին անում եգիպտահայությանը՝ վերադառնալ հայրենիք: «Օն ուրեմն, հիմա բոլորս դէպի երկիր,- գրում է Բաբկեն Շահպազը,- Ազգի ազատութիւնը, մանաւանդ ապրեցինք ազատութիւնը. մենք մեր տառապանքովը գնեցինք զայն, երթանք դէպի երկիր զայն պահպանելու համար... Հայեր, բոլորս դէպի երկիր» (1908 թիվ 77, էջ 1):

«Արեւ» թերթը բաղդատելով հայ մտավորականության արտահայտած տարբեր տեսակետները՝ փորձում է իր կարծիքն արտահայտել սահմանադրության վերաբերյալ: Թերթը այն կարծիքին էր, թե չպետք է ընկնել ծայրահեղությունների մեջ, այսինքն ոչ անչափ ոգևորվել, ոչ էլ վհատվել, այլ խելացիորեն, հօգուտ ազգի շահերի օգտագործել սահմանադրության ընձեռած հնարավորությունները: Եվ հրավիրում է հայ մտավորականության կարող ուժերին՝ հանձնախումբ կազմել սահմանադրական կարգերում հայ ազգի խնդիրները «ի նպաստ և ի շինութեան դժբաղդ հայ ժողովուրդին» քննարկելու համար:

Մինչ հայ ազգասեր մտավորականները ծրագրեր էին մշակում սահմանադրության ընձեռած հնարավորություններից օգտվելու, հայոց երկիրը շենացնելու, հայության գոյությունն ու նրա ապագան Թուրքիայում ապահովելու համար, հայկական գավառներում թուրք և քուրդ հրոսախմբերը հայերի վրա հարձակման նոր փորձեր էին անում: Թերթում նամակներ էին տպագրվում ուղարկված Իզմիրից, Բաղեշից, Երզնկայից, Տիգրանակերտից և այլ տեղերից: Երզնկայից գրում են համատարած սովի մասին: Ե. Օտյանը հանդես է գալիս «Սովը» խմբագրական հոդվածով (1908, թիվ 177) և հորդորում է եգիպտահայությանը՝ անտարբեր չմնալ Հայաստանին սպառնացող աղետի նկատմամբ, կազմակերպել հանգանակություն և օգնել սովյալներին: Թերթը անդրադառնում է նաև արտագաղթին, որը նույնչափ մեծ աղետ էր հայության համար: Լ. Մկրտիչյանն իր «Գաղթականներու հարցը» հոդվածաշարում (1908, թիվ 180–181) փորձում է ներկայացնել գաղթի կանխման միջոցները:

1908 թ. հոկտեմբերին Ալեքսանդրիայում «Վերակազմյալ Հնչակյան կուսակցության» և «Գաղափարական միության» ղեկավարները միավորվում և կազմում են «Հայ սահմանադրական-ռամկավար կուսակցությունը»: «Արևը» իր համակրանքն է արտահայտում կուսակցության դավանած հայացքների նկատմամբ, ընթերցողներին մանրամասն ծանոթացնում է կուսակցության ծրագրին, նպատակներին, գործելակերպին: Կուսակցության նշանաբանն էր՝ «Հայութիւնը օսմանցիութեան հետ»: 1908 թ. իր վերջին համարներում թերթը նույնպես քարոզում էր հայ-թուրք համերաշխության գաղափարը: Տ. Քելեկյանը իր «Հայը իբր օսմանցի» հոդվածում (1908, թիվ 146) զարգացնում է այն միտքը թե Թուրքիայում հայը պիտի ապրի ու գործի թուրքի հետ հաշտ, եղբայրաբար, իհարկե, պահպանելով իր ազգային, ավանդական արժեքներն ու հավատքը: Այսինքն, խաղաղ, հաշտ ճանապարհով հայը պետք է հասնի կյանքի բարեփոխմանը:

«Արեւ» թերթը գոյատևել է ընդամենը ութ ամիս: 1908 թ. դեկտեմբերին այն դադարել է լույս տեսնելուց: Թերթի հրատարակությունը շարունակվել է «Լուսաբերի» հետ միասին՝ «Լուսաբեր-Արեւ» անունով:

«ԼՈՒՍԱԲԵՐ-ԱՐԵՒ» (1909–1912)

Կահիրեի «Լուսաբեր-Արեւ» ազգային և քաղաքական եռօրյա թերթը խմբագրում էր «Արեւ» օրաթերթի գլխավոր աշխատակից Լևոն Մկրտիչյանը[1]*:*

Հրապարակախոս, հասարակական գործիչ Լ. Մկրտիչյանը ծնվել է 1865 թ., Կ. Պոլսում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի Ռոբերտ քոլեջում: Աշխատել է որպես ուսուցիչ և միաժամանակ թղթակցել հայ պարբերականներին («Մասիս», «Ծաղիկ», «Հնչակ», «Մշակ» և այլն): 1895 թ. տեղափոխվել է Աթենք, ապա Եգիպտոս, ուր ապրել ու գործել է մինչև կյանքի վերջը (1932 թ):

Լևոն Մկրտիչյանը իր կուսակցական պատկանելության և քաղաքական հայացքների մասին գրել է «... պարտք կը համարիմ յայտնել, թէ նախկին Հնչակեան, 1900 թ. դեկտեմբերի վերջը դադրեցայ գործօն դեր մը ունենալէ Հնչակեան կուսակցութեան մէջ եւ մնացի պարզ անդամ, իսկ 1901 թ. վերջերը բոլորովին հրաժարեցայ Հնչակեան կուսակցութենէ՝ ինծի յատուկ հիմնաւոր պատճառներով և այդ թուականէն ի վեր, թէեւ համոզումով յեղափոխական, այլ չի կրնալով հաշտուիլ կուսակցութեան գործելակերպին հետ, բոլորովին քաշուած կապրիմ ու յեղափոխական կազմակերպութեան հետ մօտէն կամ հեռուէն որեւէ կապ չունիմ, թէեւ ամէն կուսակցութեան մէջ ալ կրնամ ունենալ յարգելի բարեկամներ»[2]*:*

Թերթի աշխատակիցների կազմում էին Վ. Թեքեյանը, Տ. Քելեկյանը, Մ. Տամատյանը, Միք. Նաթանյանը և ուրիշներ: Նրանցից շատերը նախկինում եղել էին «Վերակազմյալ Հնչակյան կուսակցության» անդամներ և Եգիպտոսում համախմբվել էին նորաստեղծ «Հայ սահմանադրական– ռամկավար կուսակցության» շուրջ:

---

[1] Գ. Լեւոնյանի Հայոց պարբերական մամուլը մատենագիտական ցուցակում (Ե., 1934, էջ 55) և Մ. Բարթյանի Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակում (Ե., 1986, էջ 77) սխալմամբ խմբագիր է նշված Վահան Քյուրքճյանը: Փաստ է, որ Վահան Քյուրքճյանը 1905 թ. հոկտեմբերից թողել է «Լուսաբեր» թերթի խմբագրի պաշտոնը և նշանակվել Կահիրեի Գալուստեան վարժարանի տնօրեն, պաշտոնը, իսկ 1907 թ. փոխադրվել է Ամերիկա: (Տե՛ս, «Զարթօնք» բացառիկ, 1962, էջ 236–238):

[2] «Արեւ», Ալեքսանդրիա, 1908, թիվ 46, էջ 1:

Թերթը թեև հայտարարվում էր անկախ պարբերական, այնուհանդերձ, ինչպես հաստատում են նյութերը, պաշտպանում էր «Հայ սահմանադրական – ռամկավար կուսակցության» դավանած գաղափարական սկզբունքներն ու քաղաքական հայացքները: Դրա հիմնական նշանաբանն էր. «Ճշմարտութիւնը ամէն բանէ առաջ և ազգին շահը ամէն բանէ վեր» (1909, թիվ 759, էջ 1):

Նյութերը զետեղված էին հետևյալ բաժիններում. Ազգային, Թուրքիոյ շուրջ, Եգիպտահայ կեանք, Թրքահայ կեանք, Ներքին, Արտաքին, Հեռագիր և այլն:

Եգիպտահայ նախորդ թերթերի նման, այստեղ էլ գերակշռում էին Հայկական հարցին, հայրենիքի ազատագրմանը նվիրված նյութերը:

«Լուսաբեր-Արև» թերթի՝ հայությանը տված հիմնական պատգամներն էին՝ ժամանակավորապես վարել համակերպվողական, հաշտվողական քաղաքականություն երիտթուրքերի հետ, սահմանադրությամբ տրված կեղծ, թե անկեղծ հնարավորությունները ծառայեցնել ազգի տնտեսական և հոգևոր կյանքի վերաշինման գործին:

Միք. Կյուրճյանի («Ներկային ցավերը», 1910, թիվ 786–801), Հ. Սեքսենյանի («Օսմանեան համերաշխութիւնը և ընկերաբանութիւնը», 1910, թիվ 799), Մ. Ագնիսի («Երկրաշինութեան պէտքը», 1910, թիվ 812–819) և մյուսների հոդվածներում բարձրացվում էր Թուրքիայում բնակվող բոլոր ազգերի համերաշխության և համագործակցության գաղափարը: «Երկրաշինութեան պէտքը» հոդվածում հեղինակը դատապարտելով Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականությունը, մեղադրում է կառավարությանը նաև այն բանում, որ նա չկարողացավ ըմբռնել, թե պետության ուժը կայանում է ոչ թե «երկրաքանդ բարբարոսութեան, այլ երկրաշինութեան մէջ»: Ապա ցանկություն է հայտնում, որ մուսուլման պաշտոնյաները արդար գործեին, բարենպաստ պայմաններ ստեղծեին հայ, թուրք և այլազգի ժողովուրդների կենսամակարդակի բարձրացման, խաղաղ ու հաշտ գոյակցության համար:

Թերթը հանդես էր գալիս քննադատական ելույթներով՝ ուղղված ընկերվարական գաղափարախոսության դեմ: Լ. Մկրտիչյանի «Ո՞ր կուսակցութեան հետեւենք» (1910, թիվ 793), Մուշեղ եպ. «Կրօնքն ու ընկերւարութիւնը» (1910, թիվ 836) և այլ հոդվածնե-

րում կշտամբական խոսքերով են բնութագրվում ընկերվարական գաղափարախոսության սկզբունքները:

«Լուսաբեր-Արև» թերթը Հայ սահմանադրական-ռամկավարներին համարելով «ազգային-քաղաքական կեանքի նոր պայմաններուն վրայ ձեւուած» կուսակցություն, եգիպտահայության ծանոթացնում էր կուսակցության սկզբունքներին, նպատակներին, գործելակերպին և բարձր գնահատում նրա դերն ու նշանակությունը: «Մեր ազգը,- գրում է թերթը,- իր աւանդոյթներով արդէն ռամկավար ժողովուրդ է, և իր դաստիարակութեամբ ազատական գաղափարներու տէր, պիտի տեսնէ Սահմանադրական-ռամկավար կուսակցութեան մէջ խտացումը իր ամենէն սիրելի սկզբունքներուն և անհրաժեշտագոյն պահանջներուն» (1910, թիվ 873, էջ 2):

«Լուսաբեր - Արև» թերթը, ինչպես վերը նշվեց, ժամանակի պահանջներից ելնելով քարոզում էր հայ և թուրք ժողովուրդների խաղաղ գործակցությունը, սակայն այդ չէր նշանակում, թե մոռանում էր անցյալը, թուրք պաշտոնյաների ոճրագործությունները: Թերթի 1910 թ. թիվ 814-ը ամբողջովին նվիրված է Ադանայի կոտորածի տարելիցին: Առաջին էջում զետեղված է ադանացի կնոջ այրված մարմինը պատկերող լուսանկարը: Իսկ Ադանայի առաջնորդ Մուշեղ եպ. «Գերեզմանները կը խօսին», Սուրեն Պարթևյանի «Վերապրողները» հոդվածներում, Ավ. Ահարոնյանի «Դատաստանը» գեղարվեստական պատկերում, ֆրանսիացի բանաստեղծուհի հայասեր Մ. Ֆյուրեի «Ոճրագործ է Եւրոպան» և այլ նյութերում մեղադրական խոսքեր են ասված թուրքական կառավարության և եվրոպական երկրների հասցեին: «Ոճրագործ է Եւրոպան,- գրում է ֆրանսիացի բանաստեղծուհին,- եւ մեղսակից մը այս բոլոր սոսկումներուն այս երկարատեւ տանջանքին մէջ» (1910, թիվ 814, էջ 4):

«Լուսաբեր-Արև» թերթում քննարկվել են նաև կրթության, դաստիարակության, գրականության և արվեստի հարցերը: Լ. Մկրտիչյանի, Միք. Կյուրճյանի, Մուշեղ եպ. և մյուսների հոդվածներում կարևորությունը տրվում էր բարոյականության, հոգևոր կյանքի հարստացման, մարդկային արժանիքների և վեհ ու բարձր զգացումների գնահատման հարցերին:

Լևոն Մկրտիչյանը իր «Կրթական հարցը մեր մէջ» հոդվածաշարում (1910, թիվ 881–883) դպրոցի պարտքն է համարում պատ-

բաստել մարդ-քաղաքացի հասարակության համար: «Դպրոցին գլխավոր կոչումը պիտի ըլլայ,- գրում է նա,- մարդկային սեռին նախնական բարքերը ազնուացնելը» (1910, թիվ 881, էջ 1):

Ինչպես վկայում են թերթում տպագրված նամակները, «Լուսաբեր-Արեւ» թերթը ցանկություն են ունեցել ստանալու և կարդալու Արևմտյան Հայաստանի գավառների բնակիչները նույնպես: Թերթը 1912 թ. վերջին փակվում է և 1913 թ. հրատարակվում է «Ցուսաբեր» անունով:

«ՄԻՈՒԹԻՒՆ» (1912–1928)

Հայ բարեգործական ընդհանուր միությունը Կահիրեում 1912–1928 թթ. հրատարակում է իր պաշտոնական պարբերականը՝ «Միութիւն» ամսագիրը, որը 1928–1940 թթ. շարունակում է լույս տեսնել Փարիզում, իսկ 1947–1962 թթ.՝ Նյու-Յորքում:

«Միութիւն» ամսագրի խմբագիրն էր ՀԲԸՄ ատենադպիր, գրող, թարգմանիչ, հասարակական գործիչ Վահան Մալեզյանը:

Վ. Մալեզյանը ծնվել է 1871 թ. Ռումինիայի Սուլինա քաղաքում: Նույն թվականին ծնողների հետ տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ 1887 թ. ավարտել է Հայկական կրթարանը:

1895 թ. ավարտել է Կ. Պոլսի իրավաբանական վարժարանը: Ապա հեռացել է Կ. Պոլսից և մի քանի տարի Կիլիկիայում բնակվելուց հետո, 1902 թ. տեղափոխվել է Եգիպտոս, ուր մինչև 1923 թ. ծավալել է գրական և հրապարակախոսական լայն գործունեություն: Մամուլում տպագրել է արձակ և չափածո բազմաթիվ գեղարվեստական գործեր:

1923 թ. հետո մի քանի տարի բնակվել է Բրյուսելում, ապա տեղափոխվել Փարիզ: Վերջին տարիներին ապրել է Նիցցայում, որտեղ էլ 1966 թ. մահացել է: Ամսագրի շապկաթերթին, ենթավերնագրի տակ, որպես նշանաբան, ասվում է. «Միութիւնը զօրութիւն է», «Եղբայր եմք մեք»: Խմբագրի և խմբագրության անդամների ցանկությամբ ամսագրի առաջին տարվա առաջին համարի առաջնորդողը գրել է Պողոս Նուբար փաշան: Նա ընթերցողներին ծանոթացրել է ամսագրի առջև դրված խնդիրներին, որոնք բխում էին ՀԲԸՄ

նպատակներից: «.... ամսագիրը,- գրում է նա,- պիտի հրապարակէ այնպիսի գրութիւններ, որ ըլլան համապատասխան այն ձեռնարկին, որուն օրգանը ըլլալ կոչուած է, եւ աւելի մասնավորապէս բնոյթը ունենան օգնելու կրթութեան ծաւալումին, հողագործութեան եւ այլն, եւ այս բանին համար անիկա պիտի դիմէ բոլոր տաղանդներուն, որ, փառք Աստուծոյ, մեր ազգին մէջ չեն պակսիր» (1912, թիվ 1, էջ 1–2):

«Միութիւն» ամսագրին աշխատակցել են Դ. Սերովբյանը, Մ. Ժամկոչյանը, Հովհ. Սեթյանը, Միք. Կյուրճյանը, Երվ. Աղաթոնը, Լ. Մկրտիչյանը, Միք. Նաթանյանը, Ս. Քուչուքյանը և ուրիշներ: Նյութերը տեղաբաշխված են հետևյալ բաժիններում. Մանկավարժական սյունակ, Առողջապահիկ նոթեր, Գիւղատնտեսական, Տանտիրոջ ձեռագիրքը, Բարոյական եւ նկարագիր, Մանկական գրականութիւն և այլն: Ամսագրի գրեթե բոլոր խմբագրական հոդվածներում, որոնց մեծ մասը պատկանում է խմբագիր Վահան Մալեզյանի գրչին, ընդգծվում է միասնության, համախմբման գաղափարը, որի իրականացման համար էլ գործունեություն էր ծավալում ՀԲԸՄ-ը: Պարբերականում «Հայկ. բարեգ. ընդհանուր միության կյանքն ու գործը» խորագրի տակ տպագրված հոդվածները ընթերցողներին ծանոթացնում են միության ձեռնարկած ազգանվեր գործերին (համայնքների գործածություն, գյուղատնտեսական պիտույքների հայթայթում և հատկացում, կարիքավորներին աջակցություն, նրանց նյութական իրավիճակի բարելավում, արտագաղթը կանխելու ուղղությամբ ձեռնարկած միջոցներ և այլն):

ՀԲԸՄ գործունեությունը ամսագրում համարվում է «Գերագույն բարիք» աշխարհով մեկ սփռված հայության համար: Ամսագիրը իր հերթին, նույնպես հանդես էր գալիս մայր հայրենիքում ժողովրդի սոցիալ-տնտեսական իրավիճակը բարեփոխելու ուղղությամբ գործնական միջոցների առաջարկմամբ: «Գավառի ցավերէն», «Հողագործին բաժինը» և այլ խորագրերով տպագրված հոդվածներում օգտակար խորհուրդներ էին տրվում հողագործներին, այգեգործներին, անասնապահներին: Ինչպես ՀԲԸՄ, այնպես էլ ամսագրին առանձնապես մտահոգում էր հայության արտագաղթը: Այդ ազգակործան երևույթի դեմն առնելու համար ամսագիրը դիմում է հայրենասիրության ազդեցիկ ձևերին և գեղարվեստական

խոսքի այլազան միջոցներին: Բանաստեղծ Հովհ. Սեթյանը տպագրում է մի նամակ, որտեղ մոր անունից հայրենիքը դիմում է իր զավակներին և հորդորում նրանց. «Մի՛, զաւակներս, մի՛ հեռանաք իմ ծոցէս: Արտագաղթը ցեղին հիւծախտն է .... ո՞ր օտար գիրկը, ո՞ր ծոցը այնչափ քնքոյշ ու կենսապարգեւ շունչ մը կրնայ ներշնչել ձեզի՝ որչափ ձեր մորը կուրծքը» (1913, թիվ 20, էջ 121): Ամսագրում բարձրացված գրեթե բոլոր հարցերն էլ այսօր հնչում են և նույնակի հուզում ու մտահոգում են հայ ժողովրդին: Այսպես, պարբերականը շատ է անդրադարձել ժողովրդի հոգևոր աշխարհին վերաբերող հարցերին, հատկապես բարեկրթությանը: «Մանկավարժական սենյակ» բաժնի հոդվածներում բարեկրթությունը համարվում էր կենսական առաքինություն, որն այնքան անհրաժեշտ էր հայ ժողովրդին: Ամսագրի համոզմամբ բարեկիրթ մարդը գիտի հարգել իր գաղափարական հակառակորդին, մինչդեռ հայ մարդկանց մեջ նկատվում է հակառակը: Ուստի և ազգի առաջնորդների, մանկավարժների, ծնողների պարտքն է համարվում՝ մատաղ սերնդին և հայ երիտասարդությանը «վարժեցնել կենցաղագիտութեան և բարեկրթութեան»: 1914 թ., երբ սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, ամսագիրը դիմում-կոչեր էր տպագրում հորդորելով եգիպտահայ մեծահարուստներին՝ օգնել ռազմաճակատին, ապրել ու գործել մեկ նշանաբանով. «Դէպի միութիւն ու դէպի յաղթանակ»: Պատերազմական գործողությունների ընթացքին հետևելով՝ աշխարհի բոլոր հայերը նրանց թվում և եգիպտահայերը Արևմտյան Հայաստանի ազատագրության հույսերն էին փայփայում:

Ստեղծված իրավիճակի թելադրանքով Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ և Գևորգ 5-րդ կաթողիկոսի հովանավորությամբ Ամերիկայում հիմնվում է «Ազգային շահերու պաշտպանութեան միությունը»: Այս միությունը պետք է միջոցներ հայթայթեր, գումարներ հանգանակեր՝ փախստական հայերին, անապաստան որբերին օգնելու համար: Ամսագիրը պարբերաբար դիմում-կոչեր էր տպագրում հորդորելով եգիպտահայությանը՝ դրամական միջոցներ տրամադրել նորաստեղծ հիմնադրամին: Պարբերականը տպագրում է ՀԲԸՄ շրջաբերականը, ուր ասված է. «Ուխտաւորներ ըլլանք մենք ամէնքս ալ, մեծ թէ պզտիկ, այր եւ կին, ու մեր մէջէն դուրս

թող գան գթութեան քոյրեր, անձնուիրութեան հերոսներ, բարեգործութեան տիտաններ» (1915, թիվ 49, էջ 5):

Այսպիսով, ՀԲԸՄ պաշտոնական օրգան «Միութիւն» պարբերականը ժամանակին կարողացել է կատարել քարոզչական իր առաքելությունը՝ նվիրված հայրենի ժողովրդի նյութական ու բարոյական կյանքի վերաշինմանը:

«Միութիւն» ամսագիրը իր էջերում պարունակած հարուստ նյութերով այսօր կարող է վստահելի սկզբնաղբյուր հանդիսանալ ինչպես եգիպտահայ գաղթօջախի, այնպես էլ ՀԲԸՄ պատմությունն ուսումնասիրողների համար:

«ԱՐԵՒ»
(1915–1924, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ, 1924 – ԱՌ ԱՅՍՕՐ, ԿԱՀԻՐԵ)

Առաջին համաշխարհային պատերազմի (1914–1918) և հատկապես արևմտահայության զանգվածային ջարդերի ու տեղահանության տարիներին հայ գաղթավայրերում, այդ թվում նաև Եգիպտոսում, ավելի քան երբեք, կարևորվել է հասարակական, քաղաքական մամուլի դերը:

Պատերազմական իրադարձությունները լուսաբանելու, ռազմաճակատներում հայ կամավորական ջոկատների հաջողություններին արձագանքելու, հայության հայրենիքի ազատագրման պայքարի շուրջ համախմբելու նպատակով Վահան Թեքեյանը և Լևոն Մկրտիչյանը Ալեքսանդրիայում 1915 թ. ձեռնամուխ են եղել «Արեւ» հասարակական, քաղաքական եռօրյա, ապա ամենօրյա թերթի հրատարակմանը: Թերթը լույս է տեսել «Ազգային շահերու օրգան» ենթավերնագրով[1]:

Թերթի շուրջ համախմբվել են գրող, հրապարակախոս Վ. Մալեզյանը, հասարակական քաղաքական գործիչ Մ. Տամատյանը,

---

[1] «Արեւ» թերթը 1922 թվականից համարվել է Ռամկավար ազատական կուսակցության Եգիպտոսի շրջանակի օրգանը:

գրող՝ Մ. Կյուրճյանը, հասարակական գործիչ Ս. Սապահ-Գուլյանը և ուրիշներ:

«Արեւ» թերթի հիմնական խնդիրն է եղել՝ եգիպտահայությանը ցույց տալ «աղէտին մեծութիւնը» և նրա մեջ արթնացնել «վրէժխնդրութեան» այն ոգին, որով նա կարողանա պատերազմում իր մասնակցության «մեծագոյն» բաժինն ունենալ: Փայփայելով ինքնավար Հայաստանի ձեռքբերման գաղափարը, թերթը հաջողության գրավականը տեսել է հայության բոլոր ուժերի միասնաբար գործելու մեջ: «Այսօր,- գրում է թերթը,- հայ ազգը իր ամբողջական ոյժը երեւան պիտի բերէ, բոլոր դասակարգերը, բոլոր հոսանքները, բոլոր կուսակցութիւնները, պահպանողական, կղերական, ազատական, յառաջդիմական, սօցիալիստ, արմատական, ինչ գոյնի եւ ձեւի մտածողներ որ կան, նրանք բոլորը գործի պիտի մղուին» (1916, թիվ 110, էջ 1): Եվ ազգի մեջ «հաւաքական կամք», «բարոյական միասնական ոյժ» ներշնչելու լավագույն միջոցը համարվել է հայությանը քաղաքացիական դաստիարակությամբ զինելը: Լ. Մկրտիչյանի «Ի՞նչ կերպով զօրանալու ենք» (1916, թիվ 64–67), Վ. Թեքեյանի «Եգիպտահայ ճիգը» (1916, թիվ 37), Վ. Մալեզյանի «Տարագրեալներուն համար» (1916, թիվ 66), Ս. Սապահ-Գյուլյանի «Երեկ եւ այսօր» (1916, թիվ 110) և մյուսների հոդվածներում պատերազմական ճգնաժամային օրերին պահանջվել է եվրոպական երկրների օրինակով, անկախ կուսակցական և այլ պատկանելությունից, միավորվել և կազմել մեկ ամբողջական «Սրբազան միութիւն»: Թերթը միաժամանակ կոչ է արել մեծահարուստներին՝ «բավարար գումար նուիրել ազգային գործի օգտին»: «Հայ հարուստներ,- գրում է թերթը,- հրապարակ եկէ՛ք, պատմութիւնը Ձեզ է կանչում: Հայաստանը, հայ ազատագրութիւնը Ձեզ է դիմում» (1916, թիվ 110, էջ 1):

«Արեւ» թերթի էջերը լի են հայ ժողովրդի տառապանքի, հալածանքի, կոտորածի սարսափելի պատկերները ներկայացնող հոդվածներով:

Թերթը անդրադարձել է Վանում, Զեյթունում, Շապին-Գարահիսարում և այլուր տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվներին, հայ զինվորական մարմինների ղեկավարների (Ա. Եկարյան, Ա.

Մանուկյան, Փ. Թերլեմեզյան, Գ. Սեմերճյան և ուրիշների) քաջագործություններին:

«Արև» թերթը ունեցել է իր սեփական ռազմաճակատային թղթակիցը, որը տեղեկություններ է հաղորդել հայ զինվորների և կամավորական ջոկատների տարած հաղթանակների մասին.

Ժողովրդական հերոս Անդրանիկի մասին թերթում գրված է. «Անդրանիկն իր հերոսական գործերով պահանջում է քաղաքակիրթ աշխարհից ուշադրութեան առնել արիւնաքամ եղած Հայաստանը» (1916, թիվ 65, էջ 2):

«Արև» թերթը բազմաթիվ անգամ իր մեղադրական խոսքն է ուղղել Գերմանական կայսրությանը՝ գերմանացիներին համարելով «Եվրոպայի թուրքեր»: Իսկ Տերվիշյանի «Հայ ազգին բնաջնջումը» հոդվածում (արտատպված «Near East» թերթից), գրված է. «Գերմանացիները ճիգ եւ աշխատանք չխնայեցին իրենց տեւտոնեան արիական մէթոդները միախառնելու արիւնածարաւ թուրք ցեղերուն ասիական բարբարոսութեանը հետ» (1916, թիվ 66, էջ 2):

Մեծ թիվ են կազմում օտարազգի թերթերից արտատպված հոդվածները: «Իտէա նացիոնալէ» իտալական թերթից թարգմանաբար տպագրված «Մոռցուած խնդիր մը. Հայաստան» վերնագրով հոդվածում (1916, թիվ 5) Հայկական հարցը համարվել է «Միջերկրական խնդիր մըն ալ եւ հետեւաբար իտալական»: Հոդվածագրի համոզմամբ Իտալիան չէր կարող անտարբեր մնալ Հայկական խնդրի հանդեպ:

Հայկական դատին անդրադառնալիս թերթը համակրանքով է խոսել Ռուսաստանի և ռուս ժողովրդի մասին: Հայաստանի փրկության հույսը կապել է Ռուսաստանի հետ: «Թիւրքահայերը,- գրում է Միհրան Տամատյանը իր «Թիւրքաց Հայաստանի ապագան» հոդվածում,- դէպի Ռուսաստան ունեցել են դարեւոր անայլայլ համակրանք և այսօր, նրանք իրենց ակնկալութիւնները իրականացած տեսնելու հաւանականութիւնը փնտրում են ամենից առաջ Ռուսաստանի մօտ» (1916, թիվ 68, էջ 2):

Պատերազմի օրերին «Արևը» իր հոդվածներով փորձել է ոգևորել ռազմաճակատներում կռվող հայ զինվորներին:

«Արեւը» պարբերաբար, առանձին խորագրերով տեղեկություններ է հաղորդել ռուսական զորքերի և հայ կամավորական ջոկատների հաջողությունների մասին:

Պատերազմական տարիներին հայ ժողովրդին բաժին ընկած ողբերգությունն իր արտացոլումն է գտել թերթի գեղարվեստական գործերում: Մ. Աժտերյանի «Փոքրիկ աղջկան մը մահը» (1916, թիվ 66, էջ 1), «Մօր մը ողբը» (1916, թիվ 68, էջ 1) և մյուսների բանաստեղծական քերթվածներում ներկայացված են ավերումների ու կոտորածների քստմնելի պատկերները:

Ինչպես նկատվում է, ժամանակին «Արեւը» այս կամ այն չափով կատարել է իր դերը ռազմաճակատներում կռվող հայ զինվորներին նյութական, ինչպես և բարոյական օգնություն կազմակերպելու գործում:

«Արեւ» թերթը շարունակում է իր գործունեությունը և այսօր, նպաստելով եգիպտահայ գաղութի մշակութային, հասարակական և քաղաքական կյանքի զարգացմանը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

20-րդ դարի սկզբում եգիպտահայ մամուլը հարստանում է կրթության և դաստիարակության հարցերին նվիրված առանձին պարբերականներով («Պարտէզ» գրական, գիտական, մանկավարժական շաբաթաթերթը, «Արտեմիս» ընտանեկան և գրական ամսագիրը և այլն): Եգիպտոսում համախմբված գրողներ Արփիար Արփիարյանը, Երվանդ Օտյանը, Վահան Թեքեյանը, Երուխանը, Վահան Մալեզյանը, Սուրեն Պարթևյանը և ուրիշներ հիմնադրում են գրական պարբերականներ («Շիրակ» գրական և ընկերական ամսագիրը, «Սիսուան» ազգային, գրական և բանասիրական ամսագիրը, «Հուսանք» գրական, հասարակական շաբաթաթերթը, «Զարթօնքը» և այլն):

«ԱՐՏԷՄԻՍ» (1902–1903)

Եթե «Պարտէզ» շաբաթաթերթը հասցեագրված էր մանուկներին, պատանիներին, ինչպես և մանկավարժներին ու ծնողներին, ապա Կահիրեում լույս տեսած «Արտէմիս» պարբերականը նվիրված էր հատկապես հայ կանանց ընտանիքում և հասարակական կյանքում ունեցած դերի և նշանակության հարցերի քննարկմանը: Ինչպես «Պարտէզը», այնպես էլ «Արտէմիսը» ունենալով դաստիարակչական ուղղվածություն կարող են դասվել մանկավարժական թեքում ունեցող պարբերականների շարքը :

«Արտէմիսը» լույս էր տեսնում «Օրգան քսաներորդ դարու հայ կանանց» ենթավերնագրով :

Ամսագրի հիմնադիրն ու խմբագիրն էր Մարի Պեյլերյանը: Գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Մարի Պեյլերյանը (օրիորդական ազգանունը՝ Նագշճյան) ծնվել է 1877 թ., Կ. Պոլսում: Նախնական կրթությունը ստացել է Կ. Պոլսի Բերա թաղամասի Նարեկյան վարժարանում: Աշակերտական տարիներից Կալիպսո ծածկանունով Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթում հանդես է եկել կանանց ազատագրության հարցին նվիրված հոդվածներով: 1890 թ. ընդունվել է հնչակյան կուսակցության շարքերը: Նա թղթակցել է «Հնչակ» թերթին և գործուն մասնակցություն ցուցաբերել հեղափոխական շարժումներին: 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում կազմակերպված Բաբը Ալիի հայտնի ցույցում հանդես է եկել հուզիչ ճառով և ցուցարարների հետ դիմել դեպի սուլթան Աբդուլ Համիդի պալատը: Ցույցին հաջորդած ձերբակալություններից խուսափելով՝ մեկ տարի ապրել է ընդհատակում, ապա ապաստան գտել Եգիպտոսում:

Օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո, 1909 թ. վերադարձել է Թուրքիա: Որպես տեսուչ պաշտոնավարել է Եվդոկիայի դպրոցում և թղթակցել հայկական թերթերին: 1915 թ. ապրիլի 11-ին Մարի Պեյլերյանը ձերբակալվել է և հայ մտավորականներ Գր. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Երուխանի, Ամբ. Բյուրատի և մյուսների հետ խոշտանգվել ու սպանվել:

Առաջնորդող հոդվածները գրում էին Մարի Պեյլերյանը և նրա ամուսին Ավետիք Պեյլերյանը (Ավո): Մ. Պեյլերյանը դեռ դպրոցական տարիներից երազել էր «Հայ իգական սեռի համար սեփական,

անկախ թերթ հրատարակելու մասին»: Նրա ամսագրի հիմնական խնդիրն էր՝ օգնել վերացնելու հայ կանանց վարք ու բարքում, կենցաղում տեղ գտած բացասական երևույթները, որոնք առերես սովորական ու հասարակ են թվում, սակայն «.... կրնան նետել օր մը կինը կորստեան խորխորատը»: «Արտէմիսի» նպատակը պիտի ըլլա,- գրված է ամսագրում,- պատրաստել օրիորդներ, ամուսիններ, մայրեր, որպէսզի օր մը հպարտութեամբ կարենայ ըսել, ահա ձեզ մայրեր, տուեք ազգը (1902, թիվ 1, էջ 2):

Ամսագրում նյութերը տեղաբաշխված են ոչ թե առանձին բաժիններում, այլ առանձին խորագրերի («Տարեգլխու քրոնիկ», «Ազգ», «Կանանց աշխարհէն», «Մեր առօրեայ ցաւերից», «Կենսագրական» և այլն) տակ:

Մ. Պեյլերյանի ամսագրի հիմնահարցը հայ կնոջ ազատագրության խնդիրն էր: Ամսագիրը գտնում էր, որ հարցի լուծման ուղիները մշակելիս չպետք է կուրորեն հետևել քաղաքակիրթ երկրների «կնոջական ազատագրութեան» մասին եղած տեսակետներին: Տարբեր ազգերի, տարբեր ժողովուրդների մեջ ժառանգական դարձած սովորությունները, դաստիարակությունը տարբեր են, ուստի և հնարավոր չէ կանանց հարցը քննել «միևնոյն ուղղութիւնով»: «Ինչ որ ֆրանսիացի կնոջ ազատասիրութիւնը կը պահանջէ,- գրված է այնտեղ,- եւ կեանքը կը ձգտէ, նոյնը չէ կարող պահանջել իհարկէ Հրէաստանի կամ Պարսկաստանի մեջ ապրող կնոջ կեանքը» (1902, թիվ 1, էջ 5):

Ամսագրի կարծիքով հայ կինը փոխվել է, նա անցյալի նահապետական կապանքներից ազատվել է և ձգտում է պաշտպան կանգնել իր արդար դատին: ««Արտէմիս» ահա,- գրում է ամսագիրը,- անոր դատով պիտի զբաղի. ուստի հայ կնոջ առաջադիմութեան նվիրուած անոր երեւումը ոչ անընական երեւոյթ մ՚է, ոչ ալ աւելորդ զարդ, այլ չեշտուող պետք մ՚է, որուն համար քիչ մ՚ալ յապաղած ըլլանք թերեւս» (1902, թիվ 1, էջ 6):

Կին թղթակիցները իրենց շնորհակալական նամակներն էին ուղարկում ամսագրի խմբագրությանը: Ազավնի Վարդը Թիֆլիսից ուղարկած իր նամակում գրում է. «Զարթեցնել ցաւերով թմրած սեռը, զգացնել անոր իր վսեմ պարտքն ու իրաւունքը, այդ կը նշանա-

կէ սովորեցնել. այդ մի մեծ գործ է, որը կվերստեղծէ ամբողջ կին սեռի արժանիքը և կբարելավէ մեր աշխարհը» (1902, թիվ 2, էջ 43):

Մ. Պեյլերյանը իր հոդվածներում առաջադրում է գործնական միջոցներ կնոջ դրության բարելավման ուղղությամբ: Նա առաջարկում է կնոջը ձեռք բերել գորգագործի, կամ դերձակուհու արհեստը, սեփական ուժերով վաստակել իր ապրուստը, դրանով իսկ ազատագրվել ամուսնուց կախվածությունից, պաշտպանել իր մարդկային իրավունքներն ու արժանիքները:

«Արտեմիս» եգիպտահայ մտավորականության ուշադրությունը հրավիրում է իգական դպրոցների բարեփոխման հարցի վրա, պահանջում է դպրոցը դարձնել իգական սեռի արժանապատվության ու ինքնագիտակցության թմրած զգացումները արթնացնող հզոր ուժ:

Մ. Պեյլերյանն անհրաժեշտ է գտնում եգիպտահայ ընթերցողին ծանոթացնել քաղաքակիրթ ընդունված կրթական համակարգին (1903, թիվ 4–5, էջ 6–7):

Ամսագրում տեղ է տրվել և գեղարվեստական գրականությանը: Այստեղ է տպագրվել Ալ. Պեյլերյանի «Մագթաղինէ» վեպը (1902, թիվ 1–6), որտեղ հերոսուհին կուրորեն չի ենթարկվում ճակատագրին:

«Արտեմիս» լինելով հայ կանանց եգիպտահայ առաջին պարբերականը ժամանակին կարևոր դեր է կատարել կնոջը նվաստացնող իրավիճակից ազատագրելու և նրան դեպի նոր, ազատ կյանքի ուղին առաջնորդելու գործում:

«ՊԱՐՏԷԶ» (1903–1904)

Մանկավարժ, հրապարակախոս Միհրան Ասքանազը (Ասքանազյան) 1903 թ. Ալեքսանդրիայում լույս է ընծայում «Պարտէզ» գրական, մանկավարժական շաբաթաթերթը՝ նվիրված մատաղ սերնդի բարոյական, ֆիզիկական դաստիարակության հարցերին:

Մ. Ասքանազը ծնվել է 1854 թ., Կ. Պոլսում: Սովորել է տեղի Պերպերյան վարժարանում: Որպես մանկավարժ, աշխատել է Կ. Պոլսի վարժարաններում: 1891–1893 թթ. Կ. Պոլսում հրատարակել է

«Ծաղիկ մանկանց» կրթության ու դաստիարակության հարցերին նվիրված շաբաթաթերթը:

Մ. Ասքանազը 1896 թ. տեղափոխվել է Եգիպտոս, ուր և մինչև իր կյանքի վերջը՝ 1904 թ. աշխատել է որպես ուսուցիչ: Միաժամանակ նա աշխատակցել է «Փեթակ» ազգային, գրական, քաղաքական, զավեշտական շաբաթաթերթին (1903, Ալեքսանդրիա) «Մեղրամած» ծածկանունով: Նա կազմել և լույս է ընծայել «Գրագիտութիւն տեսական և գործնական» դասագիրքը: Մահացել է 1904 թ., Ալեքսանդրիայում: «Ազատ բեմը» նրա հիշատակի առթիվ գրել է. « ... Այս մեծ ուսուցչի կեանքը կարող է ծառայել իբրեւ սքանչելի դաս մը կամքի, աշխատութեան, գործօն և պայքարող լաւատեսութեան» (1904, թիվ 36, էջ 1):

Մ. Ասքանազը լրագրության ասպարեզ է մտնում նպատակ ունենալով, ինչպես ինքն է գրում, «քաշելու համար ազգային վերածնութեան վիթխարի արօրը, և գծելու, պատռելու, պատրաստելու համար ապագա Մեծ հունձքին ակոսները» (1903, թիվ 1, էջ 1):

«Պարտէզը» լույս էր տեսնում շաբաթը մեկ անգամ և բաղկացած էր 16 էջից: Պարբերականին աշխատակցում էին Վ. Թեքեյանը, Միք. Կյուրճյանը, Տ. Զրաքյանը, Բ. Շահպազը, Ռ. Պերպերյանը, Հովհ. Սեթյանը, բժիշկներ Կ. Փաշայանը և Կ. Ուզունյանը: 1904 թ. թիվ 16-ից ամսագրին կից հրատարակվում էր «Սուրհանդակ պարտէզի» հավելվածը, որը բաղկացած էր չորս էջից: Հավելվածում տպագրվում էին քաղաքական լուրեր, ռուսական հեղափոխության, ռուս-ճապոնական պատերազմի մասին տեղեկություններ:

«Պարտէզի» նյութերի մեծ մասը գրված էր մանկավարժական թեմաներով: Նյութերը տեղաբաշխված էին հետևյալ բաժիններում. Մանկավարժական, Գիտական արձագանք, Լեզուաբանական արձագանք, Մանկապարտէզ, Ծաղկեփունջ, Մտամարզական, Խաղեր, Բժիշկին ծանօթատետրը, Քաղաքակրթութիւն և այլն:

Շաբաթաթերթի դաստիարակչական ուղղվածությունը քրիստոնեական բարոյախոսությունն էր: Թերթի էջերը ընթերցողների մեջ սերմանում էին մարդկային բարձր ու վեհ հատկանիշներ. բարություն, ազնվություն, անկեղծություն, հավատարմություն, ճշմարտասիրություն և այլն: Սերը համարվում էր «բարոյական աշխարհի առանցքը, երջանկութեան անկիւնաքարը»:

Շաբաթաթերթը ժողովրդի, յուրաքանչյուր ազգի գոյության ու կայունության գրավականը տեսնում էր անհատի բնավորության կատարելագործման մեջ: Ս. Սմայլսի «Բնավորութիւն» աշխատությունից թարգմանաբար արտատպված «Ազգային բնավորութեան հաստատութիւնը» հատվածում (1903, թիվ 6), Լ. Տոլստոյի «Մեր թշվառութեան պատճառները և մեր երջանկութեան պայմանները» (1904, թիվ 11–13) և այլ հոդվածներում այն միտքն է զարգացվում, թե որևէ ազգի ամրությունը կախված է նրա անդամների բարոյականությունից: «Ազգ մը,- գրված է Սմայլսից մեջբերված հատվածում,- որուն անդամները միայն իրենց համար ապրող եւ լոկ անձնական վայելք սիրող մարդիկ են, եւ ատոնց չնչին եսերն մէկ մէկ կուռք, այն ազգը թշուառ մահուան վիճակուած է» (1903, թիվ 6, էջ 85):

Պարբերականը բարոյախոսությունը տեղ էր հասցնում հասկանալի լեզվով և արտահայտչական մատչելի ձևերով (հարց ու պատասխան, զրույց, նամակ, խաղ, ճանապարհորդական ակնարկ, թատերական գործողություն և այլն): Բարոյախրատական բնույթի այդ նյութերը զետեղված են «Մանկապարտէզ եւ ծաղկոց», «Ծաղկեփունջ» և այլ բաժիններում:

Նյութերը ընտրելիս շաբաթաթերթը առաջնորդվել է նորագույն մանկավարժության այն ճշմարիտ սկզբունքով, թե «.... առանց բարոյական կրթութեան տրված ուսումը ոչ միայն անօգուտ, այլեւ շատ վնասակար է» (1904, թիվ 16, էջ 244):

Մանկավարժական հոդվածներում քննարկվում էին ազգային դպրոցների բացման, գյուղական վայրերում դպրոցների և նախադպրոցական հաստատությունների հիմնադրման, ֆիզիկական դաստիարակության, կարգապահության, դպրոցական առողջապահության հարցերը: Ընդգծելու համար գյուղական վայրերում նախակրթարանների գոյության կարևորությունը, վկայաբերվում է Ֆրանսիայի օրինակը: «Չենք գիտէր,- գրում է թերթը,- Գաղիա այն ատեն մանկավարժական երկիր մը ու ազգ մը եղաւ, երբ Փարիզի համալսարաններէն աչքը եւ մտածութիւնը իր գիւղերուն տարրական նախակրթարաններուն վրայ դարձուց» (1904, թիվ 11, էջ 163):

«Պարտէզը», որպես պարբերական հրատարակություն, անդրադառնում էր նաև օրվա քաղաքական և հասարակական կարևոր իրադարձություններին: Ազգային կեանք, Քաղաքական լուրեր բա-

ժիններում զետեղված նյութերը լուրեր էին հաղորդում Արևմտյան Հայաստանում թուրք բարբարոսների ոճրագործությունների, արտագաղթի, ռուս-ճապոնական պատերազմի, Ռուսաստանում բռնկված հեղափոխական շարժումների, անգամ «Իսկրա» թերթի լույս ընծայման մասին:

Շաբաթաթերթի էջերը հարուստ են նաև գեղարվեստական ստեղծագործություններով (ինքնուրույն և թարգմանական):

«Պարտէզում» իրենց գրական գործերն են տպագրել Միք. Կյուրճյանը, Վ. Թեքեյանը, Տ. Զրաքյանը և ուրիշներ: Պարբերականը իր ընթերցողներին ծանոթացրել է արևմտաեվրոպական գրողների՝ Շեքսպիրի («Կորիոլանոս»), Ա. Դոդեի («Տարասկոնցի Տարտարէնը»), Մոպասանի («Մուրացկանը»), Շ. Բոդլերի («Լուսնին բարիքները»), Վ. Հյուգոյի (« Թէ ինչ է Յիսուսեանց նպատակը») և մյուսների գործերին:

«Պարտէզն» իր կարճատև գոյության ընթացքում կարողացել է նպաստել հայ պատանիների ու աղջիկների բարոյական դաստիարակության ճիշտ կազմակերպմանը, ուղեցույց հանդիսացել եգիպտահայ մանկավարժների և ծնողների համար դպրոցում և տանը:

«ՍԻՍՈՒԱՆ» (1905)

«Սիսուան» ազգային, գրական, բանասիրական ամսագիրն Ալեքսանդրիայում հրատարակել և խմբագրել են գրող, հրապարակախոս Սմբատ Բյուրատը (Սմբատ Տեր-Ղազարյան) և Երվանդ Սրմաքեշխանլյանը (Երուխան):

Գրող Ե. Սրմաքեշխանլյանը ծնվել է 1870 թ., Կ. Պոլսում: Սովորել է Կ. Պոլսի Ներսեսյան, ապա Կեդրոնական վարժարաններում: 1889 թ. սկսած գրել է նորավեպեր, պատմվածքներ, քրոնիկներ և տպագրել «Ծաղիկ», «Արեւելք», «Մասիս» և այլ պարբերականներում: 1896 թ. նա տեղափոխվել է Վառնա և այնտեղ խմբագրել «Շարժում» լրագիրը (1898), «Շաւիղ» կիսամսյա հանդեսը (1900–1901):

1904 թ. Ե. Սրմաքեշխանլյանը մեկնել է Եգիպտոս: Ալեքսանդրիայում Սմբատ Բյուրատի հետ 1905 թ. հրատարակել է «Սիսուան» ազգային, գրական, բանասիրական ամսագիրը: 1908 թ. Ա. Արփիար-

յանի ազատությունից հետո Կահիրեում խմբագրել է «Լուսաբեր» լրագիրը:

1908 թ. Ե. Սրմաքեշխանլյանը վերադարձել է Կ. Պոլիս և ստանձնել «Արևելք» թերթի խմբագրությունը: 1913 թ. ընտանիքով տեղափոխվել է Խարբերդ և աշխատել Մեզրեի վարժարանում, որպես տեսուչ: 1915 թ. ձերբակալվել է և հայ այլ մտավորականների հետ դաժանաբար սպանվել աքսորի ճանապարհին:

«Սիսուան» ամսագրի հիմնական նպատակն է եղել գեղարվեստական խոսքի միջոցով եվրոպահայությանը ծանոթացնել բռնակալական Թուրքիայում տիրող իրականությանը, որն իր հետամնացությամբ, անօրինականություններով հյուծել էր հայ շինականին հոգեպես և ֆիզիկապես :

Ամսագրում տպագրված նորավեպերի, պատմվածքների, պատկերների հերոսները աշխատավոր մարդիկ էին (ձկնորսներ, նավավարներ, լվացարարուհիներ), որոնք բոլորն էլ օժտված էին բարոյական բարձր հատկանիշներով, սակայն իրական կյանքի ծանր պայմանները զրկել էին նրանց դիմելու դաժան քայլերի: Այսպես, Երուխանի «Նաւակայքին մէջ» («Ձկնորսին աչքը») նորավեպում (1905, թիվ 1) մաքուր ու անմեղ սիրով տարված ազնիվ ձկնորսը թույլ է տալիս անսպասելի կոպիտ արարք, որի համար էլ մերժվում է սիրած աղջկա կողմից:

Հայկ - Լևոն ծածկանունով տպագրված Սմբատ Բյուրատի «Այրնկութք մը» (1905, թիվ 1), Բարսեղ Շահպազի «Ատրինէն» (1905, թիվ 1, էջ 2) պատմվածքները նվիրված են աշխատանքի, սիրո գեղեցկության, բարոյական բարձր ու վեհ հատկանիշների փառաբանմանը:

Ամսագրի էջերում ռուս և արևմտաեվրոպական գրականությունից ընտրված և թարգմանաբար տպագրված գործերում ևս հերոսները աշխատավոր խավի մարդիկ են, որոնք ձգտում են դեպի լույսը, գեղեցիկը, բարձրն ու վեհը, սակայն իրականությունն ու դաժան պայմանները խորտակում են նրանց հույսերը:

«Սիսուանում» Երուխանի թարգմանությամբ տպագրվել է ռուս գրող Մաքսիմ Գորկու «Պօլճար» պատմվածքը (1905, թիվ 2, էջ 62): Հեղինակն այստեղ կերտել է լեհ լվացարարուհու՝ ազնիվ ու մաքուր աղջկա կերպարը, որը ձգտում էր փոխադարձ սիրո երջան-

կությանը: Այս պատմվածքին կցված է առաջաբան, որտեղ Լև Տոլստոյից հետո մեծ վիպասան է համարվում Մաքսիմ Գորկին: «Կրնայ ըսուիլ,- գրված է այնտեղ,- որ հիմա ամէնէն ժողովրդական եւ ամէնէն աչքառու գրողն է, որ իր դաւանած ընկերվարական թուխտ եւ ցնցող գաղափարներովը յաջողած է վիթխարի հոսանք մը ստեղծել այդ դաւանանքներուն յաջողութեանը համար» (1905, թիվ 2, էջ 62):

Երուխանը արևմտաեվրոպական գրողներից ընտրել ու թարգմանել է ֆրանսիացի վիպասան Պոլ Բուրժեի (1852–1935) «Երկուութիւն» վեպը (1905, թիվ 1, էջ 2): Այստեղ հերոսները բարձր խավի ներկայացուցիչներն են, որոնց հատուկ անհոգությանն ու անամոթությանը հակադրվում են աշխատավոր խավի բարոյական արժեքները:

Սմբատ Բյուրատը հոգեհարազատ համարելով ֆրանսիացի ռոմանտիկ բանաստեղծ Լամարթինի պոեզիան, թարգմանում է նրա «Հայրենի տան երդիքը» բանաստեղծությունը և տպագրում ամսագրում (1905, թիվ 21): Հեղինակը կարոտով է հիշում իր ծննդավայրը, ավերակի վերածված հարազատ տունն ու այգին:

Ամսագրում քննարկվում են նաև գրական ուղղություններին վերաբերող հարցեր: «Երեք փուլերը» հոդվածում (1905, թիվ 1) այն միտքն է զարգացվում, թե արևմտահայ գրականությունը թևակոխել է զարգացման մի նոր շրջան: «ռոմանթիք դէմքեր երեւցան,- գրված է ամսագրում,- դասականութեան մշուշներուն մէջէն ... » (1905, թիվ 1, էջ 26):

«Սիսուանը» բացի գեղարվեստական գործերից, իր էջերում զետեղել է նաև հայ ժողովրդի անցյալի պատմությունից վերցված պատմական ակնարկներ: Զէյթունցի ստորագրությամբ տպագրված «Դրուագներ Զէյթունի կեանքէն» հոդվածաշարը (1905, թիվ 1, էջ 2) պարունակում է հետաքրքիր փաստեր Զեյթունի ու զեյթունցիների մասին: Հոդվածին կցված է առաջաբան, ուր հաղորդվում է այն մասին, թե հոդվածը «անտիպ ձեռագիր է» և խմբագրությանն է տրամադրել «Զէյթունի անցեալէն եւ ներկայէն» պատմության հեղինակը` պատմական Զէյթունցին[1]:

---

[1] Զէյթունցին հասարակական, քաղաքական գործիչ, Զեյթունի ապստամբության մասնակից Մնացական Սեմերճյանն է (1840–1914), որը գրել է «Զէյթունի անցեալէն և ներկայէն» երկհատոր աշխատությունը:

«Միուսան» ամսագիրը թեև կարճ կյանք է ունեցել (ընդամենը երկու համար), այնուհանդերձ, Երուխանի, Սմբատ Բյուրատի, Բարսեղ Շահպազի գրական գործերով ու հրապարակախոսական հոդվածներով իր համեստ նպաստն է բերել արևմտահայ գրականության զարգացմանն ու եգիպտահայության հոգևոր կյանքի հարստացմանը:

«ՇԻՐԱԿ»
(1905, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ, 1906–1907, ԿԱՀԻՐԵ)

1905 թ., երբ Ռուսաստանում հեղափոխական շարժումները խարխլում են միապետության հիմքերը, իսկ Արևմտյան Հայաստանում մոլեգնում էր համիդյան բռնապետությունը, հայ մտավորականության ուշադրության կենտրոնում շարունակում էր մնալ ժողովրդի ճակատագիրը: «Հայրենիքի մշտահեծ ցավերին» դարման գտնելու, «ազգային վերածնունդի գործին» ծառայելու նպատակներով Եգիպտոսում հաստատված հայ մտավորականներից Վահան Թեքեյանն ու Միքայել Կյուրճյանը 1905 թ. Ալեքսանդրիայում հիմնադրում և խմբագրում են «Շիրակ» գրական և ընկերական, ինչպես իրենք են գրում, «ոչ կուսակցական» ամսագիրը: 1906 թ. այն տեղափոխվում է Կահիրե և մինչև 1907 թ. լույս է տեսնում Ա. Արփիարյանի խմբագրությամբ: 1909 թ. սահմանադրության հաստատումից հետո Վ. Թեքեյանը վերադառնում է Կ. Պոլիս և այնտեղ շարունակում հրատարակել ու խմբագրել «Շիրակ» ամսագիրը:

Վ. Թեքեյանը ծնվել է 1878 թ., Կ. Պոլսում: Սովորել է Կ. Պոլսի Ներսիսյան, ապա Պերպերյան, հետո Կեդրոնական վարժարաններում:

1902 թ. Եգիպտոսում եղած ժամանակ Վահան Թեքեյանը ընդունվել է Վերակազմյալ հնչակյան կուսակցության շարքերը: Իսկ երբ կուսակցությունը ձուլվել է «Հայ սահմանադրական-ռամկավար» կուսակցության հետ, նա դարձել է ռամկավար: 1921 թ. Վ. Թեքեյանը ընտրվում է Հայ ռամկավար կուսակցության կենտրոնական վարչության անդամ: 1921–1922 թթ. Կ. Պոլսում խմբագրում է կուսակցության կենտրոնական խորհրդի օրգան «Ժողովուրդի ձայն» օրաթերթը:

1926 թ. Վ. Թեքեյանը վերադառնում է Եգիպտոս, ուր և մնում է մինչև իր կյանքի վերջը (1945 թ.): Թեքեյանի մահից հետո Կահիրեում կազմակերպվում է «Թեքեյան» հանձնախումբը, որի ջանքերով լույս է ընծայվում 14 հատորից բաղկացած նրա երկերի լրիվ ժողովածուն:

Վահան Թեքեյանը մամուլում հանդես է եկել Վահան Տիրանեան, Համշիրակ Բ., Ասպատակ, Ասուպ, Սկայորդի, Իսկուհի Հովհան, Խորէն Որոտում, Բիկմալիոն, Նշան Հարցական, Յովհաննէս-Կարապետ, Վէյթօ, Գիսաստղ, Հայր Վարդան, Տաթեւ և այլ ծածկանուններով:

«Շիրակի» աշխատակիցներից Միքայել Կյուրճյանը ծնվել է Կ. Պոլսում, 1878 թ.: 1895 թ. ընտանիքով տեղափոխվել է Եգիպտոս, ուր և ծավալել է իր գրական-հրապարակախոսական գործունեությունը: Աշխատակցել է Ա. Չոպանյանի «Անահիտ» (Փարիզ), Ն. Ադոնցի «Բանբեր գրականութեան եւ արուեստի» (Պետերբուրգ) և այլ պարբերականներին: Ե. Օտյանի հետ գրել է «Զարշըլը Արթին աղա կամ ֆրանքո-թրքական պատերազմը» կատակերգությունը, որը բեմադրվել է Եգիպտոսում, Երևանում և այլ քաղաքներում: Մ. Կյուրճյանը մահացել է 1965 թվականին: Նա մամուլում տպագրվել է Արսեն-Մոլար, Դիտակ, Զավեն, Զարմայր, Կյուրօտ, Ե. Մ., Համշիրակ Ա., Մէն-Կէն, Պարոյր, Պօնդ և այլ ծածկանուններով:

«Շիրակ» ամսագրի հիմնական նպատակն էր՝ ստեղծել գեղարվեստական գրականություն, որը կծառայեր ազգային կյանքի առաջադիմությանը, ժողովրդի հոգևոր ուժերի համախմբմանն ու ամրապնդմանը: ««Շիրակի» ուղղութիւնը,- գրված է այնտեղ,- պիտի ըլլայ, ուրեմն, գրագէտներու ընտրելախումբի մը օգնութեամբ աշխատիլ հայ դպրութեանց վերականգնումին արտասահմանի մէջ: Անկարելի ըլլալով, որ ներկա ժամուն հայ գրողը չանդրադառնայ հայրենիքին մշտահեծ ցաւերուն, անոնցմէ իր յուզումին արիւնը եւ մտածմանց հիւթը չծծէ՝ «Շիրակ» պիտի ընէ ազգային գրականութիւն մը, առանց մտնելու կուսակցական նկատումներու եւ մասնաւորութեանց մէջ. լայն պիտի բանայ իր էջերը բոլոր ճշմարիտ ու վաւերական գրագէտներուն առջեւ. ընծայելով այսպէս անոնց գեղագանց միջոցը կատարելու իրենց վրայ ծանրացող պարտքն հանդէպ հայ դպրութեանց եւ անով՝ հանդէպ ազգային վերածնումին գործին» (1905, թիվ 1):

Այս նպատակի իրագործման համար ամսագիրն իր շուրջն է համախմբում գրականության և հրապարակախոսության ասպարեզներում ճանաչում գտած գործիչներ Ե. Օտյանին, Ա. Արփիարյանին, Ռ. Զարդարյանին, Մ. Նաթանյանին, Տ. Զրաքյանին, Հ. Սեթյանին և ուրիշների:

Հարուստ է «Շիրակի» բովանդակությունը: Այն ամփոփված է հետևյալ բաժիններում. Խոհեր եւ խորքեր, Ծանոթ դեմքեր, Արեւնկար, Կովկասէն, Հայաստանի կեանքէն, Ամսեակը, Գիրքեր, Հանդէս հանդէսներու, Միջազգային և այլն:

Ամսագիրը լինելով գրական, քննարկման է ենթարկել միաժամանակ նաև հասարակական, քաղաքական կյանքին, հատկապես Հայրենիքի ազատագրմանը վերաբերող խնդիրները, գաղափարական հենակետ ընդունելով Մ. Փորթուգալյանի «Արմենիա» թերթի պաշտպանած այն տեսակետը, թե հայ ժողովուրդը «իր ներքին ույժերու եւ գիտակից զոհողութիւններու մեջ պետք է փնտրի» իր փրկությունը:

Վ. Թեքեյանը փորձում է ընթերցողներին ծանոթացնել ազատագրման ուղիների վերաբերյալ հայ մտավորականության տեսակետներին: Առաջինը ինքը հանդես է գալիս «Հայկական քաղաքականութիւնը» հոդվածով (1905, թիվ 5), որտեղ առաջարկում է ստեղծել համազգային այնպիսի կազմակերպություն, որը կմշակեր ազգային քաղաքականություն և կկարողանար այն գործադրել կյանքում: Ապա հաջորդ հոդվածներում (1905, թիվ 6, 7) ողջունում է Սմբատ Գաբրիելյանի[1] «Հայկական ճգնաժամն եւ վերածնութիւն» գրքի (Բոստոն, 1905) լույս ընծայումը և պարզաբանում հեղինակի տեսակետները հեղափոխության երկարատև նախապատրաստման, ազգային համաժողովի հրավիրման, ազգային քաղաքականության մշակման մասին: Ամսագրի խմբագրությունը միաժամանակ հրավիրում է մտավորականությանը՝ մասնակցելու հարցի հրապարակային քննարկմանը: Հարցի շուրջ մտքեր են արտահայտում Ա. Արփիարյանը, Մ. Նաթանյանը, Ռ. Զարդարյանը, Շ. Շիշմանյանը և

---

[1] Խմբագիր, հրապարակախոս Ս. Գաբրիելյանը Նյու-Յորքում հրատարակել է «Հայք» հանդեսը (1891–1898), լույս է ընծայել «Արուեստ ատենախօսութեան ի պէտս ազգային վարժարանաց» (1891), «Խրիմեան Հայրիկ» (1892), «Հայկական կերպարանքին» (1894) և այլ աշխատություններ:

ուրիշներ: Ա. Արփիարյանը տեղին և ժամանակին է համարում գրքի լույս ընծայումը և պաշտպանում է Ազգային համաժողովի հրավիրման գաղափարը: «Որպէսզի խաղաղասէրն ու յեղափոխը իրարու խօսք հասկնան, խորհուրդ յղացուեցաւ Ազգային համաժողով մը գումարել. այդ խորհուրդը այս էջերուն մէջ ալ ջերմապէս պաշտպանուած է» (1906, թիվ 1, էջ 8):

Ռուսական հեղափոխության օրերին Ա. Արփիարյանը ընթերցողի ուշադրությունը դարձնում է քաղաքական այդ նոր իրադարձությունների վրա և հորդորում երես թեքել եվրոպական դիվանագիտությունից և հույսը կապել Ռուսաստանի հետ: «Որքան էլ որ,- գրում է նա,- մահմէդականները քրիստոնեայ հպատակներին Ռուսիայի դէմ գրգռեն, բայց եւ այնպէս, Թիւրքիոյ հայերը միշտ ռուսասէր մնացած են: ...Ռուսը մեր «ամուճա»-ն է: Արեւելքցիներուն համար «ամուճա»-ն հօրմէն աւելի բան մըն է, գուրգուրացող, ներողամիտ խնամատար մը» (1906, թիվ 3, էջ 170):

Վահան Թեքեյանը դրականորեն է արձագանքում ռուսական հեղափոխությանը: Համշիրակ Բ. ծածկանունով տպագրված իր «Կովկաս» հոդվածում Բաքվում, Երևանում, Նախիջևանում կազմակերպված ազգամիջյան արյունալի ընդհարումների մասին նա գրում է. «Միակ մխիթարութիւնը, որ աղէտքին մէջէն իսկ կը ծնի, ան է, որ արեան կարմիրը շուտով թերեւս Կովկասի վերայ արշալոյսին կարմիրը ըլլա...» (1905, թիվ 6, էջ 459):

Ոչ թե հնազանդության, այլ ըմբոստության կոչերն են հնչեցվում Մ. Նաթանյանի («Անեծքը», 1905, թիվ 10–11, «Հայաստանի տնտեսական կացութիւնը», 1907, թիվ 6), Ռ. Զարդարյանի («Եկեղեցիին աւիւծը», 1905, թիվ 3–5), Շ. Շիշմանյանի («Կիլիկեան Սուէտիա եւ յեղափոխութիւն», 1906, թիվ 2–5) և մյուսների հրապարակախոսական հոդվածներում: «Բայց թող մեր թշնամիք գիտնան,- գրում է Միքայել Նաթանյանը,- որ հայութիւնը խաղաղութեան ցանկալով հանդերձ, չպիտի թոյլատրէ սակայն, որ անցեալին նման ոչխարներու պէս լռիկ, անձայն մորթոտեն զինք, թէ հարկ եղած ատեն պիտի կրնայ ինքզինքը մարդու պէս պաշտպանել» (1907, թիվ 6, էջ 330): Ամսագիրը հանգում է այն եզրակացության, որ ազատությունը կարող է ձեռք բերվել ոչ թե մեծ տերությունների միջամտությամբ, այլ երկար ու լավ նախապատրաստված համաժո-

ղովրդական հեղափոխությամբ: Իսկ հեղափոխությունը կատարելու համար, ըստ ամսագրի, «պետք են անկեղծ հայրենասերներ, ձեռնհաս և փորձառու առաջնորդներ ու մանաւանդ հսկայ գումարներ» (1907, թիվ 9, էջ 504): «Շիրակը» միաժամանակ լինելով գրական ամսագիր՝ իր էջերում մեծ տեղ է հատկացնում և՛ ճանաչում գտած, և՛ սկսնակ գրողների ստեղծագործություններին:

Ազգային ու քաղաքական հալածանք, սոցիալական թշվառություն, կոտորած, վիշտ, տառապանք, պանդխտություն, հայրենաբաղձություն, ազատագրական պայքար: Այս թեմաների շուրջ են գրված ամսագրի արձակ և չափածո գործերը:

«Շիրակում» տպագրված Ա. Արփիարյանի «Հողվորտիքը» գրական դիմանկարների շարքը (1905, թիվ 1, 5, 1906, թիվ 1, 1907, թիվ 6, 7, 9), «Ոսկի ապարանջան» (1906, թիվ 2–4), «Մինչև ե՞րբ» (1906, թիվ 5) պատմվածքները աչքի են ընկնում բարձր գաղափարայնությամբ և գեղարվեստական արժանիքներով:

Ե. Օտյանի սոցիալական թեմաներով գրված «Ազգային բարեբարը» երգիծավիպակում (1905, թիվ 1–4), «Ոսկեմոլը» (1905, թիվ 10–11) և այլ պատմվածքներում սուր քննադատության, ծաղրի է ենթարկվում պաշտոնի ու հարստության հասած հայ էֆենդիների անմարդկային վարքը:

Գաղթի, կոտորածի սահմռկելի տեսարաններն են պատկերված Վ. Թեքեյանի «Ճահիլը» (1905, թիվ 3, 4), Մ. Նաթանյանի «Հեղնար» (1906, թիվ 2), «Բէօսան» (1907, թիվ 8), Ռ. Զարդարյանի «Մարն զմանուկը մոռցաւ» (1905, թիվ 1) և մյուսների գործերում:

«Շիրակը» եգիպտահայ ընթերցողին ծանոթացնում է տառապանքի ու մաքառման երգիչներ Ատոմ Յարճանյանի (Սիամանթո) («Հոգեւարքին ջահերը» 1905, թիվ 1, 2, «Հայորդիները», 1905, թիվ 4, «Տարփանքի և հրաժեշտի խոսքեր», 1905, թիվ 6, 7), Դանիել Վարուժանի («Կռուի երթը», 1906, թիվ 1, «Հայկական օրօցքը», 1906, թիվ 1, «Արծիւներու կարաւանը», 1906, թիվ 2), Տիրան Չրաքյանի (Ինտրա) («Մենութեան տեսիլներ», 1905, թիվ 2, «Նոճաստան», 1905, թիվ 3, 8, «Անմահութիւն», 1905, թիվ 8, «Անոնք եւ երկինքը», 1905, թիվ 9) և մյուսների բանաստեղծական քերթվածներին:

Վ. Թեքեյան բանաստեղծը ամսագրում տպագրում է իր փիլիսոփայական, խոհական և հայրենասիրական ստանավորները («Կը

սիրէլի» 1905, թիվ 1, «Անցեալի կաթիլներ», 1905, թիվ 4, «Առաւօտ» 1905, թիվ 8, «Եղերերգ», 1905, թիվ 9, «Վարազդատ», «Արտաւազդ», 1905, թիվ 10–11 և այլն): Ազատության ձգտումներն համարձակ արտահայտելու համար նա դիմում է անցյալի ժողովրդական զրույցներին, Արտավազդի, Վարազդատի շուրջ հյուսված ավանդությանը: Եվ ընդհանրապես, «Շիրակի» չափածո գործերը ողբի, ավերումի երգեր լինելով հանդերձ, գրված են լավատեսական շնչով և ապրելու, ազատության, փրկության հասնելու տենչով են համակում հայորդիներին: Դանիել Վարուժանը իր «Կռուի երթը» բանաստեղծության մեջ հորդորում է ընկերուհուն իր հետ միասին կռվի դաշտ գնալ:

«Շիրակ» ամսագրի «Գիրքեր» և «Հանդէս հանդէսներու» բաժիններում տպագրվում է գրախոսական հոդվածների մի ամբողջ շարք, ուր գնահատվում է այս կամ այն գրողը, կարևորվում է գրաքննադատության դերը գրականության զարգացման գործում: Գրաքննադատությունը համարվում է գիտություն արվեստի մասին:

Վահան Թեքեյանը պաշտպանում է ռեալիստական գրականության սկզբունքը: Նրա համոզմամբ գրողը ստեղծելով կյանքի իրական պատկերներ, միաժամանակ ընթերցողին պետք է առաջնորդի դեպի գեղեցիկ իդեալների աշխարհը: «Անկարելի եւ ամօթ է,- գրում է նա,- որ գրականութիւնը միայն, եւ ան ալ ազատ երկիրներու մէջ ծլող գրականութիւնը- ո՛վ հեգնութիւն-յամառի արեան ճապաղիքի մը մէջ թաթխուած մնայ ու չկրնայ թօթուել վերերը, դէպի բարձունքները՝ ծագիլք նոր արշալոյսներուն ընդառաջ» (1905, թիվ 3, էջ 221):

Միք. Կյուրճյանն իր «Քննադատութեան կարեւորութիւնը եւ անոր պակասը մեր մէջ» հոդվածում նշում է, թե գրաքննադատությունը ոչ միայն պետք է դրական ներգործություն ունենա ժամանակի գրականության վրա, այլ նաև պետք է ուղիներ մատնանշի նրա հետագա զարգացման համար: «... Ճշմարիտ քննադատութիւնը,- գրում է նա,- պիտի բանար շատերուն աչքերը իրենց գրական ճշմարիտ էութեան վերայ ու պիտի ցուցներ հետեւելի ուղին» (1905, թիվ 6, էջ 451):

«Շիրակի» գրախոսական հոդվածներում բարձր են գնահատվում Ատոմ Յարճանյանը, Ա. Ահարոնյանը, Լ. Շանթը, Տ. Չրաքյանը

և ուրիշներ: Ա. Ահարոնյանը համարվել է «...մեր արդի ամէնէն հզօր եւ խիզախ գրագէտներէն մէկը» (1905, թիվ 1, էջ 67): Տ. Զրաքյանի մասին գրված է. «Ինտրան բանաստեղծ չէ միայն. դրանից վեր բան մը..., մեծ տեսանող մը, անցեալին, ներկային ու ապագային խորութեանց մէջ թափանցող մարգարէ մը...» (1906, թիվ 3, էջ 173):

Ամսագիրը ուրախությամբ է ընդունել սկսնակ գրողների գրական առաջին քայլերը, միաժամանակ խրախուսել և ոգևորել է նրանց: Դ. Վարուժանի «Բազմավէպում» առաջին անգամ տպագրված «Եւկիդ Տօնէլ» գյուղացնավեպի մասին ամսագիրը գրել է. «Դանիել Չպուգքեար (Դանիել Վարուժան) մինչեւ այսօր անծանօթ մը գոնէ մեզի համար «Եւկիդ Տօնէլ» տիտղոսով ընդարձակ քերթուածի մը մէջ ճշմարիտ բանաստեղծի յայտնութեան մը հազուադէպ ուրախալի անակնկալը կընծայէ» (1905, թիվ 1, էջ 68): Ինչպես գրում է գրականագետ Վ. Գաբրիելյանը, Վարուժանի մասին «առաջին տպագիր, հրապարակային խոսքն էր, վարուժանագիտության վավերական սկիզբը»[1]:

«Շիրակ» ամսագրի էջերը ծանոթացնում են ոչ միայն գրականության, այլ նաև արվեստի նվաճումներին: «Թրքահայ բեմի գործիչներ» խորագրի տակ Շարասանը (Սարգիս Թյությունճյան) պարբերաբար տպագրել է գերասաններ Գարեգին Ռշտունու, Դավիթ Թրյանցի, Տիգրան Թոսպատյանի, Միքայել-Երանոս Զափրասրի և մյուսների կյանքը և գործունեությունը ներկայացնող հոդվածներ, որոնցում ըստ արժանվույն են գնահատվում հայ բեմարվեստի նվիրյալ գործիչները:

«Շիրակ» գրական և ընկերական ամսագիրը թե՛ հրապարակախոսական հոդվածներով, և թե՛ գեղարվեստական ստեղծագործություններով ժամանակին իր գրական դերն է կատարել հայ հասարակական, քաղաքական և հոգևոր կյանքի առաջընթացի գործում:

[1] Տե՛ս Վազգեն Գաբրիելյան, Դանիել Վարուժան, կյանքը և գործը, Ե., 1978, էջ 3:

«ՀՈՍԱՆՔ» (1912)

«Հոսանք» գրական, հասարակական շաբաթաթերթը Կահիրեում հիմնադրել և խմբագրել է 20-րդ դարի արևմտահայ ճանաչված գրական–հասարակական գործիչ Սուրեն Պարթևյանը (Սիսակ Պարտիզպանյան):

Շաբաթաթերթի հիմնական նպատակն էր՝ «... առանց յաւակնութեան եւ առանց պատրանքի» հրապարակ հանել եգիպտահայ գաղութում ապաստան գտած ահմտահայ գրողների, արվեստագետների և հրապարակախոսների գործերը, մտավոր և հոգևոր կապ ստեղծել «հայրենի մեծ կեդրոններուն և եգիպտահայ գաղութին միջեւ», նպաստել գաղութի ներքին կյանքի առաջընթաց զարգացմանը և ամենակարևորը՝ «սատար լինել ազգապահպանման գործին»: ««Հոսանքը»,- գրված է այնտեղ,- գրական այսպիսի թանկագին աջակցութիւններով, անձնական ու կուսակցական ամէն նկատումներէ զերծ եւ ազգային իրականութեան ներկայ վայրկեանին խորապէս գիտակից ուղղութեամբ մը, եգիպտահայ հասարակութեան կը ներկայանայ անոր ծոցին մէջ կարեւոր պակաս մը լրացնելու վստահութեամբը, բայց նաեւ կը կրկնենք, իբրեւ մեր նշանաբանը - առանց պատրանքի ու առանց յաւակնութեան...» (1912, թիվ 1, էջ 4):

Շաբաթաթերթի խմբագիր Ս. Պարթևյանը ծնվել է 1876 թ., Կ. Պոլսում: Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Պերպերյան և Կեդրոնական վարժարաններում: Նա 1895 թ. մեկնել է Ֆրանսիա, Սորբոնի համալսարանում հետևել գրականության դասընթացներին: Խմբագրել է «Վաղուան ձայնը» (1898, Մանչեստր), «Ձայն հայրենեաց», (1900, Ռուսը), «Նոր կեանք» (1901, Լոնդոն), «Ազգ» (1907, Բոստոն), «Դաշինք», (1909–1911, Զմյուռնիա), «Լուսաբեր-Արեւ» (1912, Կահիրե), «Յուսաբեր» (1913, Կահիրե) պարբերականները:

Կիլիկիայում կազմակերպված կոտորածներից հետո Սուրեն Պարթևյանը շրջագայել է Ադանայում և իր ստացած տպավորությունների մասին հոդվածներ տպագրել մամուլում, ինչպես և հրատարակել «Կիլիկեան արհավիրքը» (1909, Կ. Պոլիս), «Հայուհին» (1911, Կ. Պոլիս), «Արիւնին մատեանը» (1915, Կահիրե) պատմվածքների ժողովածուները:

Սուրեն Պարթևյանը մահացել է 1921 թ., Ալեքսանդրիայում:

«Հուսանք»-ին աշխատակցել են գրողներ Տ. Կամսարականը, Վ. Թեքեյանը, Հ. Սեթյանը, Վ. Մալեզյանը, Լ. Մկրտիչյանը, Տ. Քելեկյանը, Օ. Զիֆթե-Սարաֆը, Մ. Կյուրճյանը, Ա. Հարությունյանը և ուրիշներ:

«Հուսանք» շաբաթաթերթը թեև հայտարարվում էր անկուսակցական, սակայն նյութերի ուսումնասիրությունը համոզում է, որ այն պաշտպանում էր Սահմանադրական-ռամկավար կուսակցության գաղափարները: Թերթում այն կուսակցությունն է համարվել ժամանակի առաջադեմ և ուղղամիտ կուսակցություն, որը «...կառաջադրէր ազգային բարոյական ինքնավարութիւնը ամրապնդել, քաղաքական ու քաղաքացիական գիտակցութիւնը մեր ժողովուրդին մէջ զարգացնել, ներքին հաւասարակշռութեան, համերաշխութեան ու համակրութեան ծաւալ մը յառաջընել...» (1912, թիվ 13, էջ 196):

Շաբաթաթերթում բաժինները սահմանագծված չեն: Նյութերը խմբավորված են հետևյալ խորագրերի տակ. Ազգային հորիզոնը, Եգիպտահայ կյանքը, Օսմանեան ճգնաժամ, Ժողովուրդին սիւնակը, Սկսնակի սիւնակը, Նամակատուփ, Գիրքեր եւ թերթեր:

«Հուսանք»-ի գրական գործերի (չափածո և արձակ) հիմնական թեմաներն էին. կոտորած, գաղթ, պանդխտություն, սով, աղքատություն, հայրենիքի կարոտ, քաղաքական անապատ կյանք և այլն:

Թերթը միաժամանակ իր գնահատանքի խոսքն է ասել հեղինակների հասցեին: Այսպես, Վ. Թեքեյանի «Մասիս» բանաստեղծության մասին տպագրված ծանոթագրության մեջ թերթը գրում է. «Այս գեղեցիկ հնչեակը առաջինն է հայրենաշունչ տաղաշարքի մը, որ ներշնչուած է նրբարուեստ բանաստեղծին՝ Վահան Թեքեյանի, իբրեւ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ դէպի Կովկաս կատարած իր վերջին ճամբորդութեան մէջ: Հայրենի հողին հետ իր առաջին հպման խօսքն է, որ կը թրթռայ հոն, ոգեկոչել տալով իրեն փառքի ու փլուզման անցեալի մը անդրաշխարհեան հեռապատկերը» (1912, թիվ 5, էջ 71):

Վ. Թեքեյանի ռոմանտիկական շնչով գրված «Ներկան անապատն է» բանաստեղծական քերթվածում (1912, թիվ 16) անհոգ անցյալին հակադրված է տխուր ներկան: Ըստ բանաստեղծի, «ներկան անապատն է լուռ, ամայի»: Տխուր մտքեր արթնացնող ժամա-

նակի կյանքի մռայլ պատկերները բանաստեղծորեն պատկերված են նաև Հ. Սեթյանի չափածո գործերում, որոնց մեծ մասը տպագրված են հայերեն և ֆրանսերեն լեզուներով: Բանաստեղծը թերթում հանդես է եկել Y. V., Եոսեյ Վանանթնսեհ, Յ. Ս., Ե. Վ., Josey Vanante ծածկանուններով: Հ. Սեթյանը ողբում է քաղաքական բանտարկյալի մահը («Բանտարկեալի վախճանը», (1912, թիվ 2), հավատում է, որ թշնամուն չի հաջողվի «սպաննել ու անճիտել հայ հոգին»: Նա նկարագրում է պանդուխտ հայի հոգեկան ծանր ապրումները («Կարապի երգը», 1912 թիվ 7): Նրան հանգիստ չեն տալիս ավերված հայրենիքի տխուր պատկերները[1]:

Հ. Սեթյանը հավատում է, որ հայի ապագան պայծառ ու երջանիկ է լինելու, որ զուր չի կորչելու հայի թափած արյունը: Դիմելով զոհված եղբայրներին, նա գրում է. «Օրհնեալ եղէ՛ք, դիւցազներ, երջանկացէ՛ք ո՛վ զոհեր. վասնզի ձեր անարգ դահիճներուն կատաղութեանը դէմ կեցաք անզէն, հարիւրի դեմ տասը, միայն ձեր արիութեանը ապաւինած: Անոնք եղան նահանջողները, ու դուք յաղթողները եղաք» (1912, թիվ 17, էջ 266):

Հ. Սեթյանը բարձր է գնահատել շաբաթաթերթի էջերում: «Յովհաննէս Սէթեան,- գրված է այնտեղ,- տուած է եւ կուտայ մեզի քնարերգական ուժեղ շունչի մը, գրական հմայքոտ տաղանդի մը խորունկ սարսուռը...» (1912, թիվ 17, էջ 259):

Հ. Սեթյանը «Հոսանք»-ում հանդես է եկել նաև հրապարակախոսական հոդվածներով: «Առ Ֆրանսա» հոդվածում (1912, թիվ 12) նա բարձր է գնահատել ֆրանսիական մեծ հեղափոխության դերը այլ ազգերի, այդ թվում և հայ ազգի կյանքում: Նրա համոզմամբ այն «ուղենիշ եղաւ հայ ազգի համար» և «զէնք մը դրեց հայի ձեռքին մէջ»:

Գրական բարձր ճաշակով են գրված բանաստեղծի գրախոսական հոդվածները: Այսպես, գնահատելով Վ. Մալեզյանի «Կերոններ» բանաստեղծությունների ժողովածուն (Կ. Պոլիս, 1912), նա

[1] Հ. Սեթյանի ֆրանսերեն բանաստեղծությունների մասին թերթը գրել է. «Սիրելի բանաստեղծին այս քերթուածաշարքը, զոր տեսակ մը յուզուած խանդով կը կարդանք - աղէտի օրերուն ֆրանսերէն գրուած է և քաղաքակիրթ Եւրոպայի մէջ նահատակ Հայաստանին ի նպաստ կարեկցութեան շարժում մը ստեղծել սահմանուած» (1912, թիվ 9, էջ 135):

գտնում է, որ գեղագետ բանաստեղծը ընթերցողին զգացնել է տալիս արվեստի ու սիրո ամենազոր լինելը, որ ընթերցողը համոզվում է, թե «... այս վաղանցուկ մեր գոյութեան մէջ, արդարեւ չկա միտքին ու սիրտին համար մեծագոյն ու աւելի մխիթարական բան, քան գեղարուեստն ու սէրը» (1912, թիվ 16, էջ 247):

Վ. Մալեզյանը ժամանակի ճանաչված բանաստեղծներից էր: «Հոսանք» շաբաթաթերթի գրեթե բոլոր համարներում տպագրվել են նրա արձակ ու չափածո գործերը «Տարագրի մը յուշատետրը» խորագրի տակ: Դրանք վերաբերում են հայ ժողովրդի ողբերգությանը («Ազատեցէք զիս», 1912, թիվ 1, «Տարագրին տրտունջը», 1912, թիվ 3), եղբայրասիրությանն ու համերաշխությանը («Կաղանդի ծառին շուրջը» 1912, թիվ 2), երազանքներով լի անցած տարիների ծանր կյանքից վաղաժամ ծերացած աղջիկներին («Ծեր աղջիկներ», 1912, թիվ 19 և այլն):

«Հոսանք»-ում տեղ են գտել Ա. Հարությունյանի, («Օրս», «Աշնան ծաղիկներ», «Երկրախոս», «Արևնոտ իրիկուն», «Իրիկունը» և այլն), Հ. Գրանյանի («Բռնութեան երգեր», «Կը սպասեմ», «Սիրտս անապատ է»), Հ. Թանդամուրյանի (Հուսիկ), «Այսօր ծնունդ է: Բայց ինչ ծնունդ», «Աղօթքին պատասխանը» և այլն), Օ. Զիֆթե-Սարաֆի («Առաջին սեր» և այլն) և ուրիշների ստեղծագործությունները:

Թերթում բարձր են գնահատված բանաստեղծ Ա. Հարությունյանի «Նոր քնար» բանաստեղծությունների ժողովածուն (Կ. Պոլիս, 1912): «Նոր քնարը»,- գրել է Ս. Պարթևյանը իր գրախոսականում,- անկեղծութեան կազդուրիչ շունչ մը կը բերէ մեզի, նոր ակօսուած հողի հոգեպարար հոտ մը: Բանաստեղծը հոն կ'երգէ կեանքը, այնպէս, ինչպէս կը տեսնայ ու կապրի զայն՝ երազանքի ու խոկմունքի իր մենաւոր գիրկէն» (1912, թիվ 28, էջ 444):

Շաբաթաթերթը իր էջերում պարբերաբար «ՀԲԸՄ սիւնակը» խորագրի տակ լուսաբանում էր «Միության» գործունեությունը: Բարձր էր գնահատում նրա դերն ու նշանակությունը հատկապես ազգապահպանման գործում: «ՀԲԸ Միութիւնը,- գրված է այնտեղ,- իր հիմնարկութեան առաջին օրէն քաղաքական, ազգային-պաշտոնական ու նիւթական շահախնդրութիւններէ վեր մնացած է եւ զուտ բարեգործական գետնի վրայ աշխատած եւ իր ազգաշէն օգտակարութեան փայլուն ապացոյցներն ալ տուած է» (1912, թիվ 18, էջ

282): Թերթը ՀԲԸ Միության ապագան տեսնում էր «Հայութեան բովանդակ կեանքին հետ ապրելու մէջ» և համարում էր այն «...աշխարհի ամենէն իմաստնօրէն կազմակերպուած հաստատութիւններէն մինը ...» (1912, թիվ 22, էջ 343):

Իրոք, առ այսօր ՀԲԸ Միությունը ապրում է աշխարհի համայն հայության հետ և իր առաքելությունը տեսնում ազգի նյութական ու հոգևոր կարիքները հոգալու մեջ:

Շաբաթաթերթում արևմտահայության ազատագրման ու քաղաքական այլ հարցերի շուրջ հրապարակախոսական հոդվածներով հանդես են եկել Ս. Պարթևյանը, Լ. Մկրտիչյանը, Օ. Զիֆթե-Սարաֆը և ուրիշներ: Ս. Պարթևյանը իր «Իթթիհատին ճգնաժամը» հոդվածում (1912, թիվ 28), երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեն համարձակ և բացեիբաց համարել է «արյունոտ կոմիտէ», որը «...չորս տարիէ ի վեր իր ունեցած տիրապետող գործունէութեամբը, կուսակցական անկուշտ շահագործումի, չիլ սակարկութիւններու, օրինապապ կողմնակալութեան, աղտոտ հանկացողութիւններու, կաշառումի ու մատնութեան երկրաքանդ քաղաքականութիւն մը հետապնդեց» (1912, թիվ 28, էջ 433–434):

«Հուսանք» շաբաթաթերթը տեղյակ է պահել եգիպտահայության հայ ժողովրդի մեծ բարեկամ, հայկական դատի պաշտպան Պ. Քիյարի գործունեության մասին: Նրա մահվան առթիվ տպագրված հոդվածում փառաբանվել է ազնիվ հայասերը: «...Հայի համար,- գրել է թերթը,- նա պայքարել է հայու մը պէս, հայէ մը աւելի խանդավառութեամբ» (1912, թիվ 5, էջ 72):

Բալկանյան պատերազմի նախօրերին շաբաթաթերթը տեղին և ժամանակին է համարել երիտթուրքերի դեմ բողոքի ցույցերի կազմակերպումը: 1912 թ. սեպտեմբերի 22-ին Կահիրեի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ կազմակերպված ցույցում ոգևորիչ ճառով հանդես է եկել թերթի խմբագիր Ս. Պարթևյանը: Նա բողոքել է երիտթուրքերի գաղափարական առաջնորդ Ահմեդ Ռիզա բեյի այն սպառնալից հայտարարության դեմ, թե «Եթէ հայերը հանդարտ չի կենան, գիտցած եղեք, որ նորէն պիտի ջարդուին» (1912, թիվ 32, էջ 499): Ս. Պարթևյանը դատապարտել է «Միություն և առաջադիմություն» կազմակերպությանը, որը, հրավարարվելով «Ադանայի անմեղ հայերի կոտորածներով», դեռ շարունակում է իր արյունոտ քաղաքա-

կանութիւնը: «Սահմանադրութիւնը,- հայտարարել է նա,- դաւ մը, ծուղակ մը եղաւ հայութեան ջիղերէն քամելու համար իր կորովին մինչեւ վերջին կաթիլները եւ զայն մարդկային քուրջի վիճակի մը վերածելու» (1912, թիվ 32, էջ 499):

Հայությանը ազատագրական պայքարի ոգեկոչելու նպատակներով Թերթը էջեր է հատկացրել բուլղար ժողովրդի ազատագրական շարժման դրվագներին, ծանոթացրել նաև շարժման անցյալի պատմությանը: Ուշագրավ է բուլղար ժողովրդի ազգային հերոս, հեղափոխական-դեմոկրատ Ք. Բոտևի 19-րդ դարի 70-ական թվականներին Թուրք զավթիչների դեմ մղած պայքարի մասին պատմող Ա. Գալեմճյանի հոդվածաշարը (1912, թիվ 24, 25): Գունեղ պատկերներով հեղինակը ներկայացնում է հերոսի կերպարը: Մարտում, անելանելի վիճակում նա դիմում է իր զինվորներին. «Քաջալերուեցէ՛ք, եղբայրնե՛րս, չըլլայ թէ ընկրկեք: Մեռնինք ամենքս ալ, բայց ազատնելով մեռնինք» (1912, թիվ 25, էջ 396): Հեղինակը եզրափակում է իր հոդվածը այսպես. «Անոնք մեռան, բայց այսօր ազատ է Պուլկարիոյ արդաւանդ հողը» (1912, թիվ 25, էջ 396):

1912 թ. հոկտեմբերի 9-ին սկսվում է Բալկանյան պատերազմը: Շարաթաթերթը հոկտեմբերի 27-ի համարում տպագրած «Արեւը կը հասի», «Պալքանները կրակի մէջ» հոդվածներում ոգևորված բուլղար ապստամբների մարտական հաջողություններով, դիմում է հայ հիմնապաշտությանը. «...երբ մեր պատույն ու մեր կեանքին ոտանոտ, չի դնդուինք ալ հոն, մեր արդէն հոսելու վրայ եղող արեան յետին կաթիլը չի խնայենք փրկելու համար զանոնք: Իյնանք մենք, աուեծի սէս պաշտպանելով այն ամէն, ինչ որ նուիրական է մեզ համար...: Վասն զի այդ մեր պարտականութիւն է, ...» (1912, թիվ 32, էջ 510):

Շաբաթաթերթը կոչ էր անում հայությանը «... հետեւիլ պատմական այդ հսկայ եղելութիւններուն, որոնք անհունութիւն մը կընծային մեզի խոկալու» (1912, թիվ 32, էջ 511): Այս խոսքերը հնչում են այն օրերին, երբ մի խումբ եգիպտահայեր նախկին հնչակյան գործիչ Մ. Տամատյանի նախաձեռնությամբ Կիլիկիայում զինված ապստամբություն կազմակերպելու ծրագրեր էին մշակում:

Այն տարիներին, երբ հայությունը ամբողջովին համակված էր հայրենիքը Թուրք բարբարոսներից ազատագրելու ձգտումներով,

անկասկած, մեծ կարող էր լինել Թերթի ազատաշունչ ոգով գրված հրապարակախոսական հոդվածների ազդեցությունը:

Ս. Պարթևյանի «Հուսանք» շաբաթաթերթը ժամանակի բարդ ու հակասական իրադարձությունների մթնոլորտում կարողացել է ճիշտ կողմնորոշվել հասարակական ու քաղաքական հարցերում՝ հավատարիմ մնալով առաջադեմ, դեմոկրատական մամուլի գաղափարական սկզբունքներին:

«ԶԱՐԹՕՆՔ» (1919)

«Զարթօնքը» լույս է տեսել Կահիրեում՝ «Գրական, գիտական, հասարակական հավաքածոյ» ենթավերնագրով և պրակներով (ընդամենը հինգ պրակ): Լինելով գրական ստեղծագործությունների հավաքածու, հանդեսը նպատակ է ունեցել ցույց տալ գրական գեղարվեստական ստեղծագործության մեծ դերն ու նշանակությունը ժողովուրդների կյանքում, հատկապես հայ ժողովրդին ապրելու, արարելու ուժ ու եռանդ ներշնչելու գործում: Հայ ժողովրդի հոգեկան և ֆիզիկական տագնապների ու չարչարանքների պահերին, գրականությունը, ինչպես հանդեսում է գրված. «... դրած է անոնց չարչարանքին մէջ նոր կամքի, նոր արիութեան մը քաղցրութիւնները...» (1919, պրակ 1, էջ 1):

«Զարթօնքը» խմբագրել են Մարտիրոս Պալայանը, գրող, մանկավարժ Մանուել Պեյլերյանը, Լևոն Սեֆերյանը: Աշխատակցել են բանաստեղծ Ա. Շամլյանը (Արսեն Երկաթ), լրագրող Վ. Սեմերջյանը (Մարտունի), հրապարակախոս Հ. Սամուելյանը (Հրանտ Սամուել) և ուրիշներ:

Ինչպես եգիպտահայ բոլոր պարբերականներում, այնպես էլ «Զարթօնքում» քննարկված հարցերի հարցը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր: Հանդեսի էջերում տպագրված գրական գործերը արևմտահայ ժողովրդի հալածական իրավիճակի, հոգեկան ծանր տագնապների, ֆիզիկական խոշտանգումների քստմնելի տեսարանների նկարագրություններ էին: Արսեն Երկաթի («Թուչունների կարաւաններ», «Գողգոթա»), Ա. Պետրոսյան-Արամ Ասպետի («Ցեղի զարթօնքին»), Հ. Սամուելյանի («Մեռնող մօր անեծքը»), Հ. Իսկենտերյա-

նի («Դագաղի մը խուհէն»), Ա. Խախամյանի («Մեռնող տարին», «Գոյամարտ») և մյուսների ստեղծագործությունները իրական կյանքից վերցված պատկերներ էին, ուր բացահայտվում էին թուրք զինվորների ոճրագործությունները, նկարագրվում բռնագաղթի, կոտորածի ահասարսուռ տեսարանները: Այդ պատմվածքները ոչ թե հուսալքում, այլ վրեժի ցասումով, պայքարի ոգով էին համակում ընթերցողին: Այսպես, Արսեն Երկաթի «Գողգոթա» պատմվածքի (1919, պրակ 2, 3–4) հերոս հայ շինականի զավակ Ռուբենը, թուրք բարբարոսի երկաթյա ձողի հարվածից և անպատիվ խոսքերից վիրավորված, վերջնականապես համոզվում է, որ փրկության միակ ելքը զինված պայքարի ու անձնազոհության մեջ է:

«Զարթօնքը» հայրենիքի վերականգնման հույսերը կապում էր համաշխարհային պատերազմի ավարտի հետ: Հրապարակախոսական հոդվածներում քննադատվում է Գերմանիայի արտաքին քաղաքականությունը, պատերազմը համարվում է «որբ ու այրիներ արտադրող», «զայլի փորձաքարը պետութեան ոյժերուն»: Լրագրող Անդրանիկ Կարապետյանը իր «Նոր օրեր» հոդվածում (1919, պրակ 1) հայրենիքը վերաշինելու մարտակոչ է ուղղում հայորդիներին, հորդորում նրանց գործել միաբան, ուղեցույց ընդունելով մեծ բանաստեղծի «Եղբայր եմք մեք» նշանաբանը: Նա հոգով, սրտով և գործով համերաշխ ապրելու մեջ էր գտնում տարաբախտ ու հյուծված ազգի երջանկության երաշխիքը: Հայրենիքի երջանիկ ապագան «Զարթօնքը» կապում էր հայ երիտասարդության, նոր սերնդի, ուսանողության, ինչպես և մանկավարժական առաջադեմ մեթոդներով ղեկավարվող դպրոցի ու հատկապես աղջիկների ու կանանց կրթության ու դաստիարակության հետ: «Եթէ կուզեք ունենալ հայրենիք մը՝ լուսաւոր ու բարգաւաճ,- գրված է այնտեղ,- լուսաւորենք հայ կինը: Եթե կը փափաքինք ունենալ երիտասարդութիւն մը լուրջ ու գործունեայ, դաստիարակենք հայ կինը» (1919, պրակ 3–4, էջ 51):

Ուշագրավ է «Զարթօնքում» Մարտունի[1] ծածկանունով ստորագրված «Պարտադրուած խուճապի մը չգոյութիւնը» (1919, պրակ 1, 2) հոդվածաշարը, որտեղ հեղինակն իրավացիորեն գտնում է, որ ազգը

[1] Մարտունի ծածկանունով մամուլում հանդես է եկել լրագրող, խմբագիր, Վահրամ Սեմերջյանը (1900–1987): Տե՛ս Հովակիմյան Բ. Մ., Հայոց ծածկանունների բառարան, Ե., 2005, էջ 718:

իբրև հասարակական ամբողջություն միատարր մարմին չէ, այլ կազմված է տարբեր դասակարգերից, որոնցից յուրաքանչյուրը (խոշոր բուրժուազիա, մանր բուրժուազիա, սեփականազուրկ պրոլետարիատ) ունի իր գաղափարախոսությունը: Այնուհետև գտնում է, որ ազգային կուսակցությունները «կը խոսեն ազգի մասին, բայց իրականութեան մէջ այնքան են ազգային, որքան իրենց դասակարգային խտէալը կը թոյլատրէ» (1919, պրակ 2, էջ 25):

Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության գաղափարների պաշտպան «Զարթօնք» հանդեսը ընդունում էր հեղափոխական պայքարը որպես ազատության ձեռք բերման լավագույն միջոց և պատահական չէր, որ 1919 թվականին պրակ 5-ը ամբողջովին նվիրված էր 1915 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսի Բայազիդի հրապարակում կախաղան բարձրացված 20 հեղափոխական ղեկավար մարտիկների (Մատթեոս Սարգիսյան-Փարամազ, Գեղամ Վանիկյան-Վանիկ, Երվանդ Թոփուզյան (բանվոր), Երեմիա Մանուկյան, Արմենակ Համբարձումյան, Մկրտիչ Երեցյան և ուրիշներ) հիշատակին: Տպագրված են նրանց բոլորի լուսանկարները կենսագրականներով: Փարամազի մասին գրված է., «...նայեցէ՛ք, հայ յեղափոխութեան հոյակապ մեծ տէրվիշն է, Փարամազը առասպելական...» (1919, պրակ 5, էջ 69): Նրանց անձնազոհ կյանքի փառաբանմանն են նվիրված Արսեն Երկաթի «Կախաղանները», Լեռենցի «Սարասփ եւ երազ», Մ. Պեյլերյանի «Անմահ քաղնին», Մ. Պոյաճյանի «Զարթի՛ք քաջեր» և մյուսների չափածո ու արձակ քերթվածները: Իսկ Յ. Գայայան ստորագրությամբ տպագրված «Կախաղան-կոթողներ» հրապարակախոսական հոդվածը պայքարի էր հրավիրում ապրողներին, դիմելով նրանց. «Յառաջ, նոր քաններ, նոր հալիւրներ, նոր հազարներ, յառաջ դէպի փառքին դաշտը, յառաջ աւելի խտացած շարքերով, յառաջ բիւրեղացած հաւատքով...» (1919, պրակ 5, էջ 77):

«Զարթօնքը» թեև գոյատևել է ընդամենը մեկ տարի, սակայն իր գեղարվեստական գործերով և հրապարակախոսական հոդվածներով գալիք պայծառ օրերի, հայ ժողովրդի զարթոնքի հույս ու հավատով է համակել իր ընթերցողներին:

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

«ԱԶԱՏ ԽՕՍՔ» (1902–1903, 1906–1908)

*Մեծ երգիծաբան, գրող, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ Երվանդ Օտյանը 1896 թ. հարկադրաբար թողնում է Կ. Պոլիսը և հանգրվանում տարբեր երկրներում: 1902 թ. նա հաստատվում է Եգիպտոսում, և Ալեքսանդրիայում շարունակում է հրատարակել 1901 թ. Փարիզում հիմնադրած իր **«Ազատ խօսք»** ամսագիրը: Այս պարբերականով սկիզբ է դրվում եգիպտահայ երգիծական մամուլի պատմությանը: Ե. Օտյանը քաջ գիտակցում էր, որ իր կծու խոսքերով, հայ իշխանավորներին ծաղրուծանակի ենթարկելով «անհաճոյ է ըլլալու» ազգի երևելիների, ջոջերի, տգետ հոգևորականների համար: «Ազատ խօսքը» նա համարում էր անկախ պարբերական այն իսկ պատճառով, ինչպես ինքն է գրում, որ «... կարող ըլլանք իրերն ու մարդիկը անկաշկանդօրէն դատել եւ եթէ հարկ տեսնենք դատափետել»: Ապա շարունակում է. «Այս տետրակը օրգան չեղաւ ու չպիտի ըլլայ որեւէ կուսակցութեան մը, որեւէ խմբակի մը, որեւէ անձի մը» (1906, տետր 1, էջ 1):*

Ամսագիրը կոչված էր ոչ թե ժողովուրդը «խնդացնել կարգ մը խեղկատակութիւններով», այլ ընդհակառակը, խնդալով վեր հանել կյանքում տեղ գտած արատավոր երևույթները:

«Պիտի խնդանք,- գրում է նա,- առանց քէն կամ ոխ, ատելութիւն կամ նախանձ խառնելու մեր ծիծաղին, որովհետեւ ծիծաղը սուրբ, աստուածային է. գուցէ միակ ձիրքն է, որ մեզ կը բաժնէ միւս բոլոր կենդանիներէն, որոնք չեն գիտեր խնդալ» (1906, տետր 1, էջ 1):

Ե. Օտյանը «Ազատ խօսքում» հանդես է եկել Պոնդ, Ե. Օ., Սկեպտիկ ծածկանուններով: Ամսագրին աշխատակցել են Միք. Կյուրճյանը (Մ. Է. Ն. – Կ. Է. Ն), Վ. Թեքեյանը (Աստղ, Վ. Թ.) և ուրիշներ:

Իր աշխատակիցների կյանքը չվտանգելու համար նա հայտարարել է. ««Ազատ խօսքը» կհրատարակուի միմիայն Երուանդ Օտեանի ձեռքով: Եւ որեւէ թշնամական հոդված միայն իրեն պէտք է ուղղել» (1902, տետր 5, էջ 80): Հաճախ նա կրկնում էր, թե համա-

ությամբ պիտի հասնի իր նպատակին, որն էր «... քանդիչ դերով օգտակար բան մը չինել Եգիպտոսի մէջ»:

Ամսագրի յուրաքանչյուր տետրում նյութերը տեղաբաշխված են ոչ թե ըստ բաժինների, այլ ըստ խորագրերի («Անդրաշխարհեան պատմութիւն», «Վերջնաշխարհ», «Սակահեղափոխարանական», «Այլաբանական տեսակցութիւն» և այլն):

Ամսագրում օգտագործվել են հրապարակախոսության արտահայտչական ձևերը (հարց ու պատասխան, բանավեճ երկխոսություն և այլն): Այսպես, հարց ու պատասխանի միջոցով ներկայացվում է ժամանակի կրոնական գործչի բարոյական կերպարը: Հարց. «Ի՞նչ պետք է քահանայութեան համար»: Պատասխան. «Փառաւոր մօրուք մը, պիտի ըսեն չատերը»: Կամ, հարց. «Ուսումնական ըլլալու՞ է»: Պատասխան. «Ի՞նչ կըսես պէ, ուսումնական ըլլայ նէ՝ անհաւատ կըլլայ. տգէտ ըլլալու է, որ ճշմարիտ հաւատացեալ ըլլայ» (1902, տետր 7, էջ 108): Իսկ մեծահարուստների և իշխանավորների բարոյազուրկ էությունը վեր հանելու համար գրում է, «... ես հասկցա, սովորեցի, թէ անբարոյականութիւնը հարուստներուն համար ծիրանազարդ պատմուճան մըն է, կաւատութիւնը՝ պատուանչաններով վարձատրուելիք արժանիք մը, չողոքորթութիւն ու պնակալեզութիւն, պատվավոր միջոցներ՝ դիրք չինելու համար» (1906, տետր 11, էջ 161): Մեծ երգիծաբանը հաճախ էլ իր հակառակորդների, «տուգանքից ու ծեծից» խուսափելու համար դիմում է այլաբանությանը, կամ նկարագրվող իրերն ու երևույթները և անձնավորություններին տեղափոխում է օտար վայրեր, օտար երկրներ: Այս տեսակետից աչքի է ընկնում «Զանզիպարեան նամականի» հոդվածաշարը (1906, տետր 11–13) տպագրված Բոլ-Թրօն ստորագրությամբ: Այստեղ ներկայացված է Զանզիպար կղզում ապօրինի ընտրված ազգային առաջնորդի անբարո կերպարը:

Ինչպես եգիպտահայ մյուս պարբերականներում, այնպես էլ «Ազատ խօսքում» քննարկման նյութ է դառնում սահմանադրության գործադրման հարցը: Ծաղրուծանակի են ենթարկվում եգիպտահայ իշխանավորները, երեսփոխանական ժողովում աթոռներ գրաղեցրած չար ու դաժան անձնավորությունները, որոնք դեմ էին սահմանադրության գործադրմանը:

Հայտնի է, որ սահմանադրության կողմնակիցների կողմից 1906 թ. մայիսի 6-ին Ալեքսանդրիայի Ալհամբրա թատրոնում հրավիրված միտինգից հետո խմբագրությունը լուծարվում է: Այդ առթիվ Թերթը գրում է. «Կիրակի օրը Միհրան Տամատյան Ալհամպրայի բեմից վերջապես խմբագրութեան դիմակը պատռեց և պտուղը տրուեց հազարաւոր մարդկանց» (1906, տետր 3, էջ 42): Ամսագրի պայքարը սահմանադրության գործադրման, եգիպտահայ կյանքում կարգ ու կանոնի հաստատման համար նպաստում էր դեմոկրատական շարժման աշխուժացմանը, ժողովրդական լայն զանգվածների ինքնագիտակցության բարձրացմանը:

Երվանդ Օտյանի «Ազատ խօսքը» հանդես էր գալիս նաև մի շարք գործնական առաջարկություններով: Այսպես, առաջադրվում էր Եգիպտոսի ազգային իշխանությունները Էջմիածնի կաթողիկոսության հովանավորության ներքո դնելու պահանջը: «Ազգային արժանապատուութեան տեսակէտով ևս,- գրված է այնտեղ,- անշուշտ մեզի համար շատ պատուաբեր է վեհափառ կաթողիկոսին սիրեցեալ հովանաւորութիւնը, քան թէ դաւաճան եւ ատեցեալ պատրիարքի մը և տարուկ ու ապօրէն կեդրոնական վարչութեան մը նենգ ու ապառու հովանաւորութիւնը» (1906, տետր 8, էջ 115):

«Ազատ խօսքում» ուշագրավ են նաև ծաղրանկարները, որոնք գլխավորապես վերաբերում են սահմանադրական պայքարին, մերկացնում են հակասահմանադրականների գործունեությունը: Ամսագիրը հետաքրքիր են դարձնում «Ծիծաղ» և «Բառք» ենթավերնագրերի տակ տպագրված փոքրածավալ պատմությունները:

Ե. Օտյանի պարբերականում Վ. Թեքեյանը տպագրել է մի քանի բանաստեղծություններ («Գեղօն հայ տասերուն», «Եգիպտական թուրիսթները» և այլն): «Ազատ խօսքի» 1908 թ. ապրիլյան համարը նվիրված է Ա. Արփիարյանի հիշատակին: Այստեղ բարձր է գնահատվել ազնիվ մարդու, գրողի, հրապարակախոսի, հասարակական գործչի վեհ կերպարը: «Հանրային մարդ Արփիարեանը,- գրում է Միք. Կյուրճյանը,- տուժեց անշուշտ ճիշտ այն գերազանց ձիրքերուն երեսէն, որոնք գրագէտ Արփիարեանին արտադրել տուին երգիծական այնքան սքանչելիքներ և մտերմական Արփիարը կընէին այնքան համով հաճով խօսակից մը» (1908, տետր 3, էջ 5):

«Ազատ խօսքը» վերջին տարում, 1908 թ. լույս տեսավ ընդամենը երեք տետր ու դադարեց :

Այն, որպես եգիպտահայ առաջին երգիծական պարբերական, իր մնայուն տեղն ունի հայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ:

«ԱՒԵԼ» (1908–1910)

Երգիծական հաջորդ պարբերականը «Աւել» զավեշտաթերթն է, որը լույս է տեսել երեք տարի (1908–1910)[1] Կահիրեում: Ընտրելով նման վերնագիր՝ խմբագիր Վրթանես Քյուչուքյանը նպատակ է ունեցել «Աւել»-ով մաքրել, վերացնել եգիպտահայության կյանքում տեղ գտած բոլոր տեսակի ախտերը, նպաստել առաջադեմ հասարակության մտավոր և հոգևոր կյանքի զարգացմանը: «Ընտանի աւելէն շատ աւելի,- գրել է նա,- կարեւոր, շատ աւելի աչքառու դեր մը ունի կատարելիք «հանրային աւելը», որ հանրութեան մաքուր ծոցէն փոշիի մէջ թաքնուած միքրոպներէն աւելի վտանգաւոր տարրերը դուրս վռնտելու մեծ, բայց արհամարհուած պաշտօնը ունի և որուն դիմելու հարկեցուցիչ պէտքը զգացինք մենք հիմայ» (1908, թիվ 1, էջ 2):

Վ. Քյուչուքյանը (1876, Կ. Պոլիս – 1919, Կ. Պոլիս) թերթում հանդես է եկել Թօփալ Շէյթան, Վրոյր և այլ ծածկանուններով: Թղթակցել են Հ. Ալփիարը, Հ. Ալյանը, Ս. Օտապաշյանը (Ս.Օ.) և ուրիշներ:

Նյութերը զետեղված են Խմբագրականի տեղ, Գիտական նորութիւն, Զուարճալիք, Ջայնաւոր հեռագիր, Ազատ սիւն, Կրթական բաժիններում:

Օգտագործելով երգիծական հնարները, խմբագիրը ծաղրուծանակի է ենթարկել անբան մարդկանց, կուսակցական կեղծ գործիչներին,

---

[1] Հ. Թոփուզյանը իր «Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805–1952)» գրքում նշել է, թե թերթը դադարել է 1909 թ. փետրվարի առաջին շաբաթը (էջ 327): Մինչդեռ թերթը լույս է տեսել՝ 1908 թ. օգոստոս-դեկտեմբեր (1–8 համար), 1909 հունվար-դեկտեմբեր (9–28 համար), 1910 հոկտեմբեր (29-րդ համար): Բոլոր համարները (1–29) պահպանվում են ՀՀ Ազգային գրադարանում:

կրթական գործի ոգևոր ղեկավարներին, վաչխառուներին: Ներկայացրել է յուրաքանչյուրի իրական պատկերը, ողորմելի էությունը:

Պարբերականը երբեմն էլ օգտագործել է ծաղրանկարը: Այսպես, գրեթե յուրաքանչյուր համարում տպագրվել է Յառաչ[1] ծածկանվամբ անձի պատկերը, որը գողերին, պարտազանցներին, անբարո կանանց մի տոպրակի մեջ հավաքած տանում էր Նեղոս գետը թափելու:

Իրականության հոռի երևույթները Թերթը բացատրել է կրթության ու դաստիարակության պակասով: Ուստի և ուշադրության կենտրոնում է պահել կրթական գործի ճիշտ կազմակերպման հարցերը: Թերթը շատ է գրել Կահիրեի Գալուստեան վարժարանի մասին, որը ղեկավար այրերի կողմից բարձիթողի էր արվել: 1908–1909 թթ. տպագրած «Վա՜յ քեզ», «Ինչու՞ չենք յաջողիր», «Գալուստեան վարժարան», «Ինչու՞ս պէտք» և այլ հոդվածներում Թերթը փորձել է գործնական միջոցներ առաջադրել ուսումնարանում կրթա-դաստիարակչական աշխատանքները և կարգապահությունը բարելավելու ուղղությամբ:

«Աւել» երգիծաթերթի լույս ընծայման տարիներին հայկական գաղթօջախներում դեռ տիրում էր մահի սարսափը: Կիլիկիայում երիտթուրքերի կազմակերպած ջարդի օրերին Թերթը չի լռել: Ներկայացրել է եղելությունը, ինչպես որ կա ու անարդարանքի սյունին է գամել ոճրագործներին: Միաժամանակ այդ օրերին ծիծաղաշարժ պատկերներով Թերթը ձգտել է սփոփել հայ մարդուն, ինչ-որ չափով թեթևացնել նրա կսկիծը:

«Նոր ըժիժ եւ Կիլիկիա» հոդվածում (1909, թիվ 15) Թանձրացած գույներով պատկերվել է ողբերգությունը: «Տասնչորս օր շարունակ,- գրել է Թերթը,- Կիլիկիոյ արեւը արիւնով ներկուեցաւ, տասնչորս օր շարունակ Սիհուն գետը, Իսկէնտերունի ծոցը հայ դիակներով լեցուեցան և հիմա բուերն են, որ աւերակուած գեղեցիկ քաղաքին ածխացած ծառերուն վրայէն իրենց լալկան վայնասունը կը յանկերգէն» (1909, թիվ 15, էջ 232): Ապա հարց է բարձրացել, թե ինչու՞ նման ոճիրը քաղաքակիրթ երկրների դիվանագետները լռությամբ են մատնում: Եվ պատասխանել. «Կերեւայ թէ չեն ուզեր հասկընալ, որ

[1] Յառաչը նախանձարար կինը՝ խառագիլն է:

աւելի վտանգաւոր բռնակալութիւն մը յաջորդած է նախկինին» (1909, թիվ 15, էջ 234):

«Աւելը» անդրադարձել է նաև Օսմանյան սահմանադրությանը, այն համարել է «Նոր խաբէութիւն»:

Թերթի դեմոկրատական հայացքները առավել ցայտուն դրսևորվել են սոցիալական թեմաներով գրված պատկերներում: Դրանցում հակադրվել են հարուստ և աղքատ ընտանիքների երեխաների անցկացրած նոր տարվան օրերը («Կաղանդի պատրաստութիւն», «Կաղանդի գիշերը», «Դագաղի մը շուրջը» և այլն):

«Աւելը» տպագրել է նաև դրամատիկական գործեր՝ գրված թուրքերեն: Այսպես, թերթոնային բաժնում շարունակաբար տպագրվել է Արթին ամիրայի «Սուլթան Մահմուդ Բ» հինգ գործողությունից բաղկացած պիեսը:

«Աւելը» հրապարակախոսական հոդվածներով, ծիծաղաշարժ պատկերներով կարողացել է եգիպտահայությանը ճանաչել տալ իրական կյանքը, միաժամանակ խնդացնել նրան ու տեղյակ պահել Եգիպտոսում և հարևան երկրներում կատարված նոր ու կարևոր իրադարձություններին:

«ՆՇՏՐԱԿ» (1908)

1908 թվականին գրող Հրանդ Պերպերյանը (Հ. Ալատին, Հ. Վեհակրոն, Հրանդ) Կահիրեում 1908 թ. լույս է ընծայել «Նշտրակ» երգիծական շաբաթաթերթը: Թերթի նպատակն է եղել «ճշմարտութիւնը իբր վահան ու անկեղծութիւն և ուղղամտութիւնը իբր առաքինութիւն» հիմք ընդունելով քննարկել ազգային կյանքին վերաբերող խնդիրները: Թերթի «Ազգային», «Մանր լուրեր», «Զուարճալիք», «Պոլսական», «Անթել հեռագիր» բաժիններում զետեղված նյութերը այս կամ այն չափով տեղյակ են պահել եգիպտահայության և աշխարհի տարբեր ծագերում ապրող հայության կյանքին: Թերթը հաղորդել է Ամերիկայում ապրող հայության մեծ մասի անապահով իրավիճակի մասին:

«Անթել հեռագիր» բաժնում տպագրված նյութերից մեկում ծաղրի են ենթարկվել մամուլի գործակալները իրենց պարտակա-

նութիւնները չկատարելու, ժամանակին լուրերը տեղ չհասցնելու համար:

«Հնոց նորոց» վերնագրով հոդվածում լուր է հաղորդվել Կահիրեի լսարան-ընթերցարանի հիման վրա Հայկական ակադեմիայի կազմման մասին: Անգամ տպագրվել են անդամների անունները (Հ. Ալփիար, Տ. Բելեկյան, Հ. Սեթյան, Մ. Նաթանյան, Վ. Թեքեյան) (1908, թիվ 1):

Հետաքրքրական նորություններ են պարունակել «Մանր լուրեր» բաժնի նյութերը:

Ինչպես բոլոր երգիծական պարբերականները, այնպես էլ «Նշդրակը» օգտագործել է ծածկանունները (Բացբերանեան, Շառաել-Արապօղ և այլն):

Այս թերթը լույս է տեսել ընդամենը երեք համար:

«ՄԱԼԷՇ» (1911–1912)

Եգիպտոսում ապաստան գտած երգիծաբան, բանաստեղծ Գրիգոր Համբիկյանը (Ռաուլ-Բոնչոն) 1911–1912 թթ. Կահիրեում հրատարակում է «Մալէշ» անունով զավեշտական շաբաթաթերթը: Այն, ինչպես խմբագիրն է խոստովանում, կոչված էր ազգային կյանքում տեղ գտած արատավոր երևույթները ծաղրելու, ղեկավար մարմինների ու անձանց թույլ տված անիրավ արարքները պարսավելու, միաժամանակ ուրախ ու ծիծաղաշարժ զրույցներով պանդուխտ հայության տառապալից կյանքը թեթևացնելու համար: «Ես այն դամոկլեան սուրն եմ,- գրված է թերթում,- որ խրկուած եմ Եգիպտոս կախուելու համար այն ամէն մարդոց գլխէն՝ որոնք Ազգին փարան կուտեն, խըվըռըգըվըռ կըլլեն, մատիկ կը խաղան, Ազգին գլխուն պէլա[1] են, Ազգին պատիւը մէկ փարայի կընեն, գլուխ կը բռնեն» (4 փետր., 1912, էջ 2):

Բանաստեղծ, երգիծաբան, խմբագիր Գ. Համբիկյանը ծնվել է 1886 թվականին, Ադրիանուպոլիս քաղաքում: Գրական-հրապարակախոսական գործունեություն է ծավալել սկզբում Կ. Պոլսում, ապա

[1] Պէլա – փորձանք, չարիք:

1911 թվականից՝ Եգիպտոսում: Կ. Պոլսում 1906–1909 թթ. նա խմբագրել է «Մաղիկ» ազգային, քաղաքական գրական հանդեսը, 1911 թվականին՝ «Լէպլէպիճի» երգիծական շաբաթաթերթը: Եգիպտոս տեղափոխվելուց հետո, 1911–1912 թթ. Կահիրեում հրատարակել է «Մալէշ»-ը, 1914 թ.՝ «Խառաչօ» երգիծաթերթը, աշխատակցել է Եգիպտոսում լույս տեսնող «Արշալոյս», «Արեւ», «Լուսաբեր-Արեւ», «Սաւառնակ», «Փունջ» և այլ պարբերականների: Նա հանդես է եկել Ադոնիս, Պոնչոն, Գ. Հ., Գիմ-Հօ, Կադմոս, Համբիկ, Մալէշ, Ռաուլ-Բոնշոն և այլ ծածկանուններով:

Գրիգոր Համբիկյանը գրել է Օսմանյան խորհրդարանի երեսփոխանների գործունեությանը նվիրված «Ջանղըրը մէպուսու քըրքյալըր» թատերախաղը, որը բեմադրվել է Եգիպտոսում: Նա հրատարակել է նաև որպես «Մալէշ»-ի մատենաշարի Ա. գիրք «Գահիրէն, Գահիրէցին, Գահիրէցուհին» երգիծական, բանաստեղծական նյութերի ժողովածուն:

Գ. Համբիկյանը մահացել է 1953 թ., Կահիրեում:

«Մալէշ»-ին աշխատակցել են Վ. Մալեզյանը, Լ. Շիշմանյանը և ուրիշներ:

Շաբաթաթերթի նյութերը տպագրված են «Անթել հեռագրի լուրեր», «Նմոյշներ», «Եգիպտական նշխարներ», «Եգիպտահայ դիմաստուերներ», «Գուշակութիւններ», «Տեղական քրոնիկ», «Եգիպտահայ բառարանը» և այլ խորագրերով:

«Մալէշ» գավեշտաթերթի խարազանի սուր ծայրը ուղղված էր ազգային կյանքի բոլոր բնագավառներում տեղ գտած անիրավություններին դեմ: Թերթը չէր խնայում ղեկավար այրերին, կրոնական գործիչներին, հատկապես ծաղրի էր ենթարկում անգամ երեսփոխաններին, անգործության մատնված Առաջնորդարանի գործելակերպը: ««Մալէշը»,- գրված է թերթում,- պիտի ձաղկէ, պիտի մտրակէ, պիտի հարուածէ անխնայ դատաւորի մը անաչառութեամբ, ուսուցչի մը խղճմտութեամբ և զինուորի մը կարգապահութեամբ, տարուած ճշմարտութեան, արդարութեան և անաչառութեան միակ զգացումէ» (19 մյս., 1912, էջ 4):

«Աղաւնի տուտուն» (28 ապր., 1912), «Կոյուլի առաջնորդի մը պէտքը Եգիպտոսի համար» (26 մյս., 1912), «Մտերմիկ խօսքեր Աղաւնունի սրբազանին» (16 հնս., 1912) և այլ հոդվածներում թեր-

թը երգիծական կերպար էր դարձնում Ալեքսանդրիայի առաջնորդ Միրտիչ Աղավնունուն՝ պատկերելով նրան արհամարհված, ողորմելի իրավիճակներում: Առաջնորդի անհոգի, անտարբեր վերաբերմունքը անպտղություն էր մատնել Առաջնորդարանը, երեսփոխանական ժողովը, ազգային ժողովը: Հանձին Աղավնունու, Թերթը ներկայացնում էր ղեկավար գործչի հավաքական բացասական կերպարը:

Թերթի համոզմամբ, աշխատավոր մարդու շահերը չէին պաշտպանվում ոչ Առաջնորդարանում, ոչ ազգային ու քաղաքական ժողովներում, ոչ էլ Օսմանյան խորհրդարանում: Ընտրված պատգամավորները (մեպուսները) լռում էին ազգի ցավերի մասին և հարմարվողական դիրք գրավում: Նրանք պատահական մարդիկ էին, որոնց ազգը ընտրել էր առանց լավ ճանաչելու: Ուստի, դիմելով ընտրողներին Թերթը կոչ էր անում «նախ աղէկ ուշադրութիւն ըրէ, որ գէշ կընտրես կոր» (4 փետ., 1912, էջ 9):

«Մայէշը» անարգանքի սյունին էր գամում եգիպտահայ այն մեծահարուստներին, որոնք զլանում էին գումար տրամադրել կրթական հիմնարկներին, մշակութային օջախներին, աղքատ ու անօթևան մարդկանց:

Թերթն իր քննադատական խոսքը տեղ հասցնելու նպատակով օգտագործում էր երգիծանքի տարբեր արտահայտամիջոցներ (այլաբանություն, նամակ, երգիծական դիմանկարներ, պարոդիա, պարսավ և այլն):

«Եգիպտահայ սիլուէդներ», «Եգիպտահայ դիմաստուերներ» խորագրերի տակ տպագրված նյութերը ներկայացնում էին անտաղանդ բանաստեղծների, անձնապաշտ պաշտոնյաների, խավարամիտ կղերականների երգիծական դիմանկարները: Տպագրելով այս պատկերները, խմբագիրը միաժամանակ նպատակ է ունեցել խնդացնելու, ուրախացնելու, ինչ-որ չափով թեթևացնելու հոգսերի բեռի տակ կքված եգիպտահայությանը: Նա ինքը խոստովանել է. «Հայ ազգը շատ լացած է, թող քիչ մը խնդայ ասկէ ետքը, ... ես իմ գաւեշտագիր ընկերներուս սփռուած հայութեան մէջ, այդ ուրախութեան, խինդի, մխիթարարի դերն է, որ կը կատարեմ» (4 փետ. 1912, էջ 2):

Գ. Համբիկյանը հետևելով մեծ երգիծաբան Ե. Օտյանին, երգիծանքը միաժամանակ համարում էր չարին դիմակայելու լավագույն միջոց: «Անձնականութեան հետ գործ չունիմ,- գրում է նա,- բայց

երբ անձը քիթը կը խոթէ հանրութեան մէջ, հոն իմ քիթս ալ կայ անպատճառ»:

«Մալէշը» հետապնդում էր նաև դաստիարակչական նպատակներ: Եգիպտահայ երիտասարդության մեջ ու գրականության, ազգային մշակույթի հանդեպ սեր արթնացնելու համար թերթը տպագրում էր դպրոցի ու թատրոնի դաստիարակչական մեծարժեք դերը ներկայացնող հոդվածներ («Հուսկ բանք Գալուստեան շրջանավարտներուն», «Կեդրոնականը եւ Կեդրոնականցիները» և այլն): Դրանցում բարձր են գնահատված հատկապես Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի դերն ու նրա շրջանավարտների ազգօգուտ գործունեությունը: «Կեդրոնականցիին ճակատը,- գրված է այնտեղ,- դէպ ի Արեւն է, և իր գիրկը՝ դէպ ի իր Ազգը» (14 հլս., 1912, էջ 2):

Թատրոնի ու դերասանի ժողովրդին մատուցած մեծարժեք ծառայությունների մասին էր գրում արքեպիսկոպոս Մ. Օրմանյանը իր «Կղերականն ու դերասանը» հոդվածում (26 մյս., 1912): *Շնորհավորելով դերասան Մարտիրոս Մնակյանին՝ հոբելյանի առթիվ, նա նշում է. «... իղձերդ դիմեցին բարութեան համար. ազգասէր եւ հայրենասէր զգացումներ ներշնչեցիր: Ջանացիր զուարճացնել, որ խրատես, կերպարանել, որ ազդես, աշխատիլ, որ տպաւորես, յօդնիլ, որ միտքեր ուղղես»* (26 մյս., 1912, էջ 13):

Եգիպտահայության ցավն ու հոգսը, տառապանքն ու վիշտը ներկայացնելու համար թերթը դիմում էր չափածո խոսքի օգնությանը, խոսք, որը ոչ թե ինքնուրույն էր, այլ արտահայտված էր ճանաչում գտած բանաստեղծների օգտագործած հանգերով, չափով և եղանակով: Այսպես «Աւերումի րոպէներ» բանաստեղծությունը (14 հլս., 1912, էջ 13–14), *ուր տրված է կոտորածի նկարագիրը, հորինված է Ատոմ Յարճանյանի ստեղծած բանաստեղծական պատկերներով: Վերնագրի տակ գրված է. «Եարճանեանօրէն՝ գրուած»: Նման եղանակով են գրված նաև «Երգ պանդխտին»* (7 հլս., 1912, էջ 12), *«Իմ մահը»* (30 հնս., 1912, էջ 5) *և այլ բանաստեղծություններ:*

Հայկական ջարդերի մասին է պատմում Պուլաքի Մենակեացը ծածկանունով տպագրված «Վերջին վիշտեր, վերջին ժպիտներ» պատկերների շարքը (21 հլս. – 15 սպտ., 1912): *Հեղինակը նախատինքի խոսքեր է ուղղում եվրոպական երկրներին, որոնց մարտա-*

նավերի ներկայությամբ 20-րդ դարի արշալույսին ծովը նետվեցին, խեղդամահ արվեցին հարյուրավոր հայեր և որոնց ղեկավարները օգնության փոխարեն «փութացին լուսանկարել հայ դիակները»: Հոդվածաշարի տողատակում, ծանոթագրության մեջ նշված է «Պուլարի Մենակեացը» անունին տակ ծածկուած է եգիպտահայ այժմու գրողներու էն սրամիտը...» (21 հլս., 1912, էջ 7): Ուշագրավ են «Եգիպտահայ բառարան» խորագրի տակ տպագրված հայերեն բառերի բացատրությունները, որոնք ներկայացված են ժամանակի կյանքի պայմանների ազդեցությամբ այլափոխված իմաստներով: Այսպես. «Ազգային... Ազգայինը, երբ կեանք բառին իբր ածական տալու ըլլաք, մեռած կը նշանակէ...» (10 մրտ., 1912, էջ 9), կամ «Աբաղաղ-Ազգային պաշտօնի մը գլուխ անցնողներու կը տրուի իբր բացահայտիչ» (24 մրտ., 1912, էջ 11):

Գ. Համբիկյանը իր հրատարակած «Մալէչ» զավեշտաթերթով փորձել է ինչ-որ չափով նպաստել եգիպտահայության ազգային կյանքի բարեփոխմանը: Նրա թերթը իր ստեղծած երգիծական խորիմաստ պատկերներով, բազմազան արտահայտամիջոցներով կարողացել է իր համար մնայուն տեղ ապահովել հայ երգիծական պարբերականների շարքում:

«ՊՐԻՍՄԱԿ» (1917)

Եգիպտահայ հաջորդ երգիծական շաբաթաթերթը «Պրիսմակը», հրատարակվել է Ալեքսանդրիայում: Այս թերթը նպատակ է ունեցել ծաղրուծանակի ենթարկել եգիպտահայության վարք ու բարքում և հասարակական կյանքում տեղ գտած անարդարությունները ու արատավոր երևույթները: Թերթը իրականությունը ներկայացրել է առանց գունազարդման, այլ այնպես, ինչպես որ կա: Թերթի նշանաբանն էր. «Կը ցոլացնէ, բայց չի փայլացնէր»:

Զավեշտաթերթին հետաքրքրել են ազգի գոյատևման, բարգավաճման խնդիրները: «Շարական ամուսնապաշտպան եւ ծննդաբար որբոցան ընկերութեան» (1917, թիվ 4). «Ամուսնապաշտպան ընկերութեան շուրջ շահերուն տեսակցութիւն մը» (1917, թիվ 14) և այլ հոդվածներում ծաղրվել են շահագիտական նպատակներով Ազգա-

յին առաջնորդարան մուտք գործած այն անձինք, որոնց հետաքրքրել են ոչ թե ազգին հուզող խնդիրները, այլ սեփական շահերն ու անձնական կարիքները:

Թերթում քննադատվել է Ազգային առաջնորդարանի գործունեությունը, առաջնորդարան, ուր ժողովները անց էին կացվում դռնփակ և ուր ընդունվում էին ոչ ժողովրդական որոշումներ:

«Պրիսմակ» երգիծաթերթը անդրադարձել է նաև կուսակցական գործիչներին: Հայտնի է, որ 1913 թվականի մայիսին Եգիպտոսում գործող դաշնակցական ենթակոմիտեները, հնչակյան կուսակցության մասնաճյուղերը համախմբվել են կազմելով «Միջկուսակցական խառն մարմին»: Այդ մարմնի նպատակն է եղել հայկական դատի պաշտպանության համար համերաշխություն, համագործակցություն հաստատել հայ ժողովրդի մեջ: Իհարկե, այդ մարմինը երկար չի գոյատևել: Նրա գործունեությունը սահմանափակվել է մի քանի միտինգներով և հայտարարություններով: Երգիծաթերթը հեգնանքով է դիմել համերաշխություն քարոզողներին: Այն երգիծել է նաև այն անձանց, որոնք այս կամ այն չափով փորձել են խախտել կեղծ համերաշխությունը: Դիմելով նրանցից մեկին՝ հեգնանքով գրել է «Պարոն... չե՞ս գիտեր, որ յանուն համերաշխութեան ամէն քննադատութիւն արգելուած է» (1917, թիվ 4, էջ 21):

Այս զավեշտաթերթը թեև երկար կյանք չի ունեցել, ընդամենը մեկ տարի, այնուհանդերձ ծիծաղաշարժ նյութերով ձգտել է ընթերցողին սովորեցնել ժպիտով ու հումորով ընդունել կյանքի տխուր ու մռայլ կողմերը: Եվ իր կարճատև գոյությամբ այս կամ այն չափով հարստացրել է եգիպտահայ մամուլը:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

«ԱՆԱՀԻՏ» (1898–1911, 1929–1949)

«Անահիտ» հանդեսի բովանդակության մի շարք ուղղությունները նախնական մշակման փուլ անցան նրա խմբագրապետի՝ հայ մշակույթի մեծ երախտավորներից մեկի՝ Արշակ Չոպանյանի 1890-ական թվականների բեղուն գործունեության, մասնավորապես, նրա

խմբագրությամբ լույս տեսած «Ծաղիկ» հանդեսի ժամանակներում: Ուստի, «Անահիտի» կատարածը ավելի դյուրին և ամբողջական ընկալելու համար, հարկ է, գեթ հակիրճ ակնարկով, անդրադառնալ նրա նախորդի վաստակին:

«Ծաղիկը» կիսամյա հանդես էր: Չոպանյանի խմբագրությամբ նրա առաջին համարը լույս տեսավ Պոլսում 1895 թ. մարտին, իսկ վերջինը՝ 17-րդը, նույն թվականի հոկտեմբերին, երբ քաղաքական հետապնդումներից խույս տալով, Ա. Չոպանյանը ընդմիշտ հեռացավ Կ. Պոլսից և մշտական բնակություն հաստատեց Փարիզում:

Հանդեսի ծրագիրը լուսավորական ու քաղաքակրթական էր, որը միանգամայն համահունչ էր ժամանակի հայ դեմոկրատական մտքի առաջադրած պահանջներին. ժողովրդի համախմբմանն ու միավորմանը հասնել նրա բոլոր խավերի լայն լուսավորության, աշխարհաբարի հաստատման ճանապարհով, և այդ հիման վրա ազգային ինքնաճանաչման նպատակը հետապնդել: Պատահական չէ, որ ինքը՝ Չոպանյանը հետագայում նշել է, թե «Ծաղիկը» կոչված էր շարունակելու «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» պարբերականների բացած հիմնուղին («Անահիտ», նոր շրջան, հնվ.-հնս., 1934, էջ 5–6, 98–99):

Երիտասարդ խմբագրապետը համոզված էր, թե ազգի հոգևոր դաստիարակությունը միայն գրականությունն է կատարում, ուստի լայն ընդգրկումով ընթերցողին էր մատուցում հայ գրականության հետ մեկտեղ, եվրոպական գրականության հռչակավոր հեղինակներին, նրանց մասին հրատարակված խոսքով, թե նրանց ստեղծագործություններից արված թարգմանություններով: «Ծաղիկի» էջերում երևում են Դանթեն, Շեքսպիրը, Բայրոնը, Վեռլենը, Հաուպտմանը, Միցկևիչը, Գյոթեն, Անդերսենը և շատ ուրիշներ: Մի ծավալուն ուսումնասիրությամբ ներկայացվում է Հակոբ Պարոնյանը: Հրատարակվում են նաև Չոպանյանի գեղարվեստական ստեղծագործությունները:

Հենց «Ծաղիկի» մեջ Չոպանյանը հանդես է բերում իր հոգատարությունը երիտասարդ գրական ուժերի հայտնաբերման ու զարգացման նկատմամբ, մի գիծ, որը շռայլորեն դրսևորվելու է նաև «Անահիտի» էջերում: Այստեղ իր առաջին հեքիաթներն է տպագրում Ռուբեն Զարդարյանը, Հ. Մրմրյանը հրատարակվում է «Ակումիտ» ծածկանունով, լույս է տեսնում Վահան Թեքեյանի

առաջնեկը՝ «Ծովեզերքին վրայ»: Զապել Եսայանը իր գրական սկզբնավորումը կապում է «Ծաղիկի» հետ[1]:

Թեպետ ամենօրյա լրագիր չէր «Ծաղիկը», բայց հետաքրքրական փորձեր է կատարում ընթերցողների հետ մշտական կապ, այդ թվում հետադարձ կապ հաստատելու ուղղությամբ, որը մեծապես նպաստում է գավառի կյանքը արտացոլելու գործին: Հանդեսը ներմուծում է «Մեր հարցարանը» բաժինը, որի շնորհիվ հանրամատչելի զրույցի է նստում ընթերցողների հետ, պատասխանելով նրանց հարցերին: Երբեմն էլ խմբագրությունն է հարցեր առաջադրում, օրինակ՝ «Ի՞նչ է կնոջ դերը կեանքին մէջ», և ստացված լավագույն պատասխանները հրատարակում: Կապի յուրատեսակ միջոցներից է իմացական մրցույթի կազմակերպումը: Խմբագրությունը հրատարակում է որևէ հայտնի մտածողի գրչին պատկանող մի կտոր, օրինակ՝ Գյոթեի «Բնութիւն» խորագրով փիլիսոփայական էջը, և առաջարկում ընթերցողներին, հատկապես ուսանողությանը, մեկնաբանել առաջարկված նյութը:

Հանդեսի էջերում տպագրվում են փայլուն ակնարկներ, որոնք աչքի են ընկնում ազգային հաստատությունների գործունեության իրապաշտ արտացոլումով, թերությունների սուր և բանիմաց քննադատությամբ: Իսկ «Քանի մը օր Պարտիզակի մէջ» ակնարկը մեր լրագրության պատմության մեջ այդ ժանրի հաստատման լավագույն նմուշներից մեկն է, որի մեջ հաջողությամբ լուծված է ժանրային հիմնական հանգույցը՝ տվյալ նյութի հեղինակի «Եսի» և առարկայական բովանդակության առավելագույն հարաբերակցությունը:

Խիստ կարևոր է ազգային բանահյուսության հավաքման նպատակով կատարված գործը, որը հետագայում լայն հունի մեջ դրվեց «Անահիտում»: Հանդեսը կոչով դիմում է գավառի մտավորականությանը՝ հավաքել, գրի առնել ժողովրդական ստեղծագործության նմուշները և առաքել «Ծաղիկին»: Դրա շնորհիվ մի շարք արժեքավոր բանահյուսական կտորներ են տեղ գտնում նրա էջերում:

Դարձյալ «Ծաղիկն» էր, որ սկսեց, և «Անահիտը» շարունակեց ու խորացրեց հայ միջնադարյան բանաստեղծության վերահայտնագործման կարևորագույն ազգաշեն աշխատանքը: Մի գործ, որը մեծապես նպաստելով մեր ժողովրդի ինքնաճանաչողությանը և ազգային հպարտության զորացմանը, կատարում էր վիթխարի քաղա-

[1] ԳԱԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, ց. 6, թ. 386:

քական առաքելություն, ազատագրական պայքարի տվյալ փուլում օժանդակելով ազգի միավորմանը:

Եթե «Ծաղիկը» ուրիշ ոչինչ արած չլիներ, միայն Գրիգոր Նարեկացու մասին Ա. Չոպանյանի փայլուն ուսումնասիրության հրատարակումը երկու հաջորդական համարներում (1895, թիվ 4–5) բավական պիտի լիներ, որպեսզի հանդեսը իր փառավոր տեղը գրավեր մեր լրագրության և առհասարակ մշակույթի պատմության մեջ: Եկեղեցու սրբերի շարքը դասված և ժողովրդի մեջ որպես այդպիսին իրավամբ հռչակ ձեռք բերած Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը Չոպանյանը առաջինը լայնորեն ու խորությամբ վերլուծեց որպես բանաստեղծություն: Նարեկացու մեջ նա վերհանեց «Գերագոյն կատարը հայ դասական բանաստեղծութեան»: «Հանենք զԱնիկա աղօթք գրողի կրօնական գոյնէն, ուր սահմանափակուած էր,– գրում էր Չոպանյանը,– եւ դնենք իր տեղը, գրական մեծ հանճարներուն օդակարկառ բարձունքին մէջ: Ալ չըսենք, որ մեր բանաստեղծութիւնը հսկայ չունի» (1895, թիվ 5, էջ 85):

«Ծաղիկի» կարճատև կյանքը պայմանավորված էր Թուրքիայում ծայր առած և պետական մակարդակով իրականացվող հայաջինջ քաղաքականությամբ: 1895-ի վերջին Ա. Չոպանյանին պարզ է դառնում, որ այլևս հնարավոր չէ սահմանափակվել մշակութաբանական թեմաներով: Անհրաժեշտ էր ազատագրական պայքարի խնդիրները ավելի անմիջական ու կտրուկ արտահայտել, իսկ Կ.Պոլսի պայմաններում դա բացառված էր: Այդ առաքելությունը բաժին ընկավ Չոպանյանի հետագա գործունեությանը Եվրոպայում, որտեղ նա ստանձնեց քաղաքական ու մշակութային քարոզչի աննախընթաց ծավալի մի գործ: «Անահիտ» հանդեսն էլ հենց այդ առաքելության մի ծանրակշիռ մասն է կազմում:

«Անահիտը» հրատարակվեց երկու ժամանակահատվածներում: 1898-ից մինչև 1911 թվականը այն հրատարակվում էր իբրև Ա. Չոպանյանի անձնական ձեռնարկում և դադարեց միջոցների ծայր աստիճան անբավարարության պատճառով: 1929 թվականին, երբ Չոպանյանը ձեռնարկեց «Անահիտի» նոր շրջանի հրատարակությունը, սկզբում ծրագրվում էր հանդեսը լույս ընծայել իբրև Ռամկավար ազատական կուսակցության, որի ղեկավար գործիչներից էր Չոպանյանը այդ ժամանակ, պաշտոնական հրատարակություն: Բայց որոշ հանգամանքների բերումով, կուսակցությունը հանձն առավ միայն սատարել բարոյապես ու դրամական գործում, և

«Անահիտը» դարձյալ հրատարակվեց իբրև Չոպանյանի անձնական ձեռնարկում: Հանդեսը լույս էր տեսնում խոշոր ընդմիջումներով և դադարեց 1949 թվականին, երբ ծերունազարդ Չոպանյանը այլևս ի վիճակի չէր շարունակել գործը: Հանդեսի հրատարակության այդ զույգ ժամանակահատվածները էապես տարբերվում են միմյանցից՝ հանդեսում տպագրված բովանդակության տեսակետից:

Հայ ժողովրդի պատմության մեջ այդ երկու ժամանակահատվածներն ունեին տարբեր բովանդակություններ, որ կապված էին քաղաքական ուրույն պայմանների հարուցած առաջադրանքների հետ: Երկրորդ շրջանում հայ ժողովուրդը ուներ իր պետականությունը՝ Խորհրդային Հայաստանը, որը ազգի գոյատևության ու բազմակողմանի զարգացման հիմնական հոգսը, բնականաբար, վերցրել էր իր վրա: Առաջին շրջանը ազգի ֆիզիկական իսկ գոյության համար մաքառումների ամենալարված ժամանակահատվածներից մեկն էր, երբ հայ ժողովրդի ճակատագրի խնդիրները քննարկվում էին դեգերող քաղաքական մտքի կածաններում, որոնք հաճախ միմյանց խոտոր էին ընթանում, իսկ գործնական վճիռները իրականացվում էին տարանջատ, հաճախ փոխադարձաբար անհաշտ քաղաքական ուժերի ջանքերով: Առարկայական իրականությամբ ստեղծված այս կացությունների բերումով էլ առաջին շրջանի «Անահիտին» վիճակվեց շատ ավելի խոր և համապարփակ գործունեության դաշտ:

Առաջին իսկ համարներից մեկում Չոպանյանը անթաքույց բացահայտում է իր կետ նպատակը: «Այնպիսի ատեն մը, երբ մեր ազգային գոյութիւնը վտանգի մէջ է,- գրում է նա,- բնական է, որ մտաւորական, գեղեցկագիտական բոլոր ճիգերէն ու ձեռնարկներէն առաջ, ամեն հայու ամենակենսական մտահոգութիւնը պէտք է ըլլայ այն խնդիրը, որ հայ ազգին մահու եւ կեանքի խնդիրն է, եւ շատ բնական է, որ այդ խնդրոյն քննութիւնը ամենամեծ և ամենակարեւոր տեղ մը բռնէր ուսումնասիրութեանցը մէջ «Անահիտի» պէս ամսաթերթի մը, որուն նպատակն է իր ուժերուն չափովը հայ ցեղին զօրացմանն ու զարգացմանը նպաստել» (1899, թիվ 12, էջ 390):

Հանդեսի բնութագրական հատկանիշն էր լավատեսական ոգին, որն արտահայտվում էր նրա բազմաճյուղ բովանդակության բոլոր ուղղություններում: Հենց խմբագիրը ինքը մի նամակում նշում է. «Անշուշտ, իրաւունք ունէք մտածելու, թէ հայ ազգը այսօր ողբալի վիճակի մէջ է եւ կարելի չէ իրապէս լաւատես հայեցուածք մը ունենալ անոր կացութեան մասին: Բայց, որովհետեւ այդպէս է, մի՞թէ

պէտք է թողուել մնալ վհատեցուցիչ, կործանարար յուսահատութեան մը մէջ,- ամսաթերթ մը մանաւանդ, ինչպէս «Անահիտը», որ կը ուղղուի ամէն կողմ օտարութեան մէջ բուսած Հայերու, պարտք ունի սիրտ տալ, յոյս ներշնչել,- չեմ ըսեր, որ պէտք է ստել, թէ պէտք է ծածկել իսկութիւնը, ո՛չ, այդ վտանգաւոր կըլլար, պէտք է յայտնել կացութիւնը իր բոլոր դառնութեամբ, և այդ ըրած եմ, կընեմ, բայց նոյն ատեն պէտք է ի վեր հանել և շեշտել այն բոլոր կենդանութեան, կորովի նշանները, զոր մեր ժողովուրդը ցոյց կուտայ այս միջոցիս, քաջալերել զինքը իր անվհատ, յամառ կենսականութեան ու հաւատքին մէջ...»[1]:

Հանդեսի ծրագրի հիմնախարիսխը հայ ժողովրդի ազատագրության գաղափարախոսությունն էր, որի ատաղձը հայ միտքը զարգացնելու ճանապարհով ժողովրդի ինքնաճանաչությունը զարգացնելու գաղափարն էր: Հենց ինքնաճանաչության վրա, ըստ Չոպանյանի, պետք է կառուցվեր համախմբման շենքը, որովհետև ազգային միասնությունն էր ազգային-ազատագրական պայքարի հաջողության թե՛ հողը և թե՛ զինանոցը:

Պատահական չէ, որ նույնիսկ ժամանակագրական առումով, առաջինը հանդեսի էջերում տեղ են գրավում մեր քաղաքական միտքը սնող նյութերը[2]*: Խոսքը, անշուշտ, վերաբերում է XIX դարի երկրորդ կեսին տիրապետող ուղղություններին և հայացքներին: Հանդեսի էջերում հստակ և փաստարար պաշտպանվում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը: Ի տարբերություն, սակայն, ժամանակի որոշ պարբերականների, այստեղ լուրջ տեղ է գրավում վերլուծական-քննադատական խոսքը: Քննադատությունն ուղղված է ոչ թե շարժման էության, այլ նրա իրականացման և ղեկավարման մարտավարության, տեղ գտած սխալների դեմ:*

«Իր թերութիւնները տեսնելը առաքինութիւն մըն է, անշուշտ, ազգի մը համար,- կարդում ենք հանդեսի առաջին իսկ համարում իբրև ծրագրային ուղենիշ,- բայց իր թերութիւնները պարզելու գործողութեան մէջ ուշանալն ու անկէց ախորժիլը վտանգաւոր հիւանդութիւն մըն է» (1898, թիվ 1, էջ 3):

---

[1] ԳԱԹ, Խաչատուր Հովհաննիսյանի ֆոնդ, № 64:

[2] Բացահայտ քաղաքական դիրքորոշման պատճառով «Անահիտի» մուտքը Թուրքիա և Ռուսաստան արգելվեց, իսկ Թուրքիան էլ ֆրանսիական դեսպանից պահանջեց երկրից վտարել Ա. Չոպանյանին:

Ա. Ջոպանյանի գրչին է պատկանում 1878 թվականի Բեռլինի վեհաժողովի հետ կապվող իրադարձությունների խոր ու մանրակրկիտ քննարկումը, որը նա կատարեց դեպքերից քսան տարի անց, ինքն իսկ զարմանք հայտնելով, որ մինչ այդ ոչ ոքի մտքով չէր անցել նման կարգի քննություն անել: Ինչո՞ւ, այնուամենայնիվ, անհրաժեշտություն ծագեց անդրադառնալու քսան տարի առաջ եղած իրադարձություններին:

Վերջին հարյուրամյակի ընթացքում մեր պատմությունը մի օրինաչափություն է ստեղծել, որ յուրաքանչյուր հանգուցային պահին հայ հասարակական միտքը միշտ դարձել է նույն խնդրին. արդյոք ճի՞շտ էր հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը երեք հարյուր տարիներից ի վեր: Մեր մեծերը Աբովյանից մինչև Թումանյան առանց վարանելու դրական են պատասխանել այդ հարցին: Բայց ահա XX դարի քսանական թվականներին «Հայրենիք» ամսագիրը հրապարակ տվեց Ռուբեն Դարբինյանի ժխտողական տեսակետին: Նա արմատից սխալ էր համարում ռուսական կողմնորոշումը, այդ կողմնորոշման ջատագովներին կոչում էր «ռուսական սայլին կապված ստրկամիտներ», պահանջում էր հրաժարվել դրանից և լեզու գտնել Թուրքիայի հետ: Նույն կուսակցության ուրիշ գործիչներ, սակայն, կտրականապես մերժում էին Ռ. Դարբինյանի հայացքները: Հովհաննես Քաջազնունին ուղղակի դրեց հարցը. «Ռուսաստա՞ն, թե Թուրքիա» և միանշանակ շեշտը դրեց առաջինի վրա:

Ա. Ջոպանյանի ժամանակահատվածն էլ հանգուցային էր, և Ջոպանյանն էլ պատասխան էր փնտրում «ո՞րն է ելքը» հարցին: Եվ այդ հարցի հստակ ու մեկին պատասխանը նա տալիս էր հենց իր վերլուծությամբ: Ընդսմին, վերլուծությունը տանում էր մի հունով, որով XIX դարի 90-ական թվականներին հայ ազգային-ազատագրական պայքարի սխալները բացատրում էր 70-ական թվականների վերջերին թույլ տված սխալներով, առաջինը դիտարկում էր իբրև վերջինի հետևանք: Եվ այդ սխալների հիմնական բովանդակությունը նա կապում էր ժողովրդի ու շարժման ղեկավարների քաղաքական կողմնորոշման հետ:

Ըստ «Անահիտում» հրապարակված վերլուծության, Սան-Ստեֆանոյի ժամանակահատվածի էական հատկանիշը դեպի Ռուսաստան արևմտահայության կտրուկ շրջադարձն էր: Սան-Ստեֆանոյի դաշնագրին նախորդող իր գործելակերպով Ներսես Վարժապետյան պատրիարքը իր «փառքի տիտղոսը» ստեղծեց, կարդում ենք հան-

գնում, «Նոր թուական մը բացաւ հայ ժողովուրդին, կրօնական գոյութիւն ունեցող ազգը քաղաքական կռուանի մը վրայ դրաւ, հայուն շահերուն եւրոպական հզօր պաշտպան մը գտաւ՝ Ռուսը» (1898, թիվ 3, էջ 80):

Բայց ահա, երբ Ներսես պատրիարքը լիազորություններից զրկում է Պետերբուրգ մեկնած պատվիրակությանը, դրանով իսկ ձախողում է ռուսական կառավարության հովանավորությունը ստանալու «աքանչելի գաղափարը», սկսվում է ճակատագրական սխալների մի ամբողջ շարան, որոնք տեղ էին գտել Թուրք կառավարության դրդումով: «Եւ ահա առաջին ոճիրը,- շարունակում ենք կարդալ հանդեսում,- հայ ազգին դեմ գործուած» (1898, թիվ 3, էջ 80): Այդ քայլով հնարավորություն է ընձեռվել Անգլիային «Ռուսին առջև պատնեշ կանգնելու համար» և մերժվել էր «այն զօրութիւնը, որ հայոց պաշտպանութիւնը ստանձնած էր գրաւոր հոդուածով մը, և այն զօրութիւնը, առանց որուն կամքին անհնար է, որ հայոց բախտը վճռուի» (1898, թիվ 3, էջ 80):

Հանդեսը համոզված էր, որ անգլիական դիվանագիտությունը իր հակառուսականության բերումով «թշնամի էր Հայոց ներքին ամենէն սուրբ բաղձանքներուն, մինչ Ռուսը իր շահերուն բերմամբ՝ դաշնակից էր հայուն»: Եվ անվարան դատապարտում էր «հայ պոլիտիկաններին», որոնք «Կը նախընտրէին Թուրքը Ռուսէն», որը արդեն Արևելյան Հայաստանի մի կարևոր մասում հաստատել էր «Ապահովութիւն պատուոյ, կենաց և ընչից»: «Ազգակոյ» ռուսէն ափրայուական վախն է միշտ, որ այդ զգացման խորը կը թաքչի,- շարունակում է հոդվածագիրը,- և ծայրայեղ օգային, անհիմ յոյս Անգլիոյ վրայ դրուած է, որու համեմատ այդ պոլիտիկոսները կերազէին ունենալ ինքնավարութիւն մը շնորհիւ Անգլիոյ և մինչև իսկ հաւանութեամբ Թուրքին» (1907, թիվ 10–12, էջ 162, 165):

Շատ տարողունակ իմաստ է պարունակում վերը ընդգծված «իր շահերու բերմամբ» բանաձևը: Վերլուծության հեղինակ Զոպանյանը միանշանակ մերժում է որևէ այլ կարգի հարաբերակցության և ընդունում է միայն շահերի համապատասխանության սկզբունքը:

Կարևոր է շեշտել նաև հանդեսում հրապարակված այն միտքը, թե հայ ժողովրդի բնաջնջման գաղափարը Օսմանյան Թուրքիայում ծնվել է ոչ թե հայերի անհնազանդության կամ «դրսից թելադրուած» այս կամ այն գործողությունները դատելու նպատակով, այլ որ

դա բխում էր թուրքականության իսկ ազգային իդեալի ոգուց: Դեռևս դարասկզբին Ա. Չոպանյանը պարզաբանել է խնդիրը՝ «Անահիտում» հրապարակելով «Բաց նամակ դ-ր Բէլքին» հոդվածը: Նա համոզիչ ցույց տվեց, որ ջարդերի հիմնական պատճառը «հայ խռովարարներու մէկ քանի ապստամբական շարժումները» կամ նույնիսկ քրդական համիդիե զորագնդերը չէին, ինչպես կարծում էր Բելքը: «Այդ երկու իրողութիւնները ուրիշ բան չեն բայց եթէ ճակատագրական արդիւնքը սկզբնական պատճառներու, որոնք նոյն ինքն մահմեդական բռնապետութեան վրայ հիմնուած թուրք ռէժիմին իսկութեանը մէջ կը կայանայ. ատոնք բիրտ արտայայտութիւններ են հիւանդութեան մը, որուն արմատները կը կայանան ոչ հայ տարրին, ոչ իսկ քուրդ տարրին, այլ թուրք կառավարական դրութեան մէջ» (1900, թիվ 3, էջ 88):

Դարասկզբին, երբ ռուսական կառավարությունը վարում էր հակահայ քաղաքական արշավ, բռնագրավում էր եկեղեցապատկան ինչքը, հալածանքների դիմում կրթական գործի մեջ և այլն, շատերը գայթակղություն ունեցան մեղադրականներ կարդալու ռուս ժողովրդին՝ նույնացնելով նրան իշխանության հետ: «Անահիտի» խմբագիրը այդ օրերին գրեց իր փայլուն ուսումնասիրություններից մեկը «Ռուսիա եւ հայերը» խորագրով:

«Ապուշութիւն է «ռուս» ըսելով չինովնիկները, կնուտը, Սիպէրիան, կախաղանը և բանտերը միայն տեսնել,- կարդում ենք հանդեսում,- ատոնք բոլորը ռուս ռէժիմին բացասական կողմն են…: «Ռուս» ըսելով ես կը հասկնամ ամէն ինչ, որ ռուս է - Գոկոլը, Տաաթաեւսկին, Թուրկենեւը, Թոլսթոյը, Կորքին, որոնք մտաւորական բարերարներ են ամբողջ մարդկութեան համար… կը հասկնամ ռուս ժողովուրդին խանդոտ, գաղափարապաշտ, մարդասէր հոգին, կը հասկնամ ռուս զօրութեան կատարած անուրանալիօրէն գեղեցիկ ու մարդկօգուտ դերը՝ մահմեդականութիւնը զսպելու և Թուրքիոյ գերի ազգութեանց ազատման նպաստելու, կը հասկնամ ռուս գիտութիւնը, գեղարուեստը, կը հասկնամ ռուս ազատագրական շարժման բոլոր յանդուգն ու հոյակապ ճիգերը, բոլոր այն անբաղդատելի հերոսները, զոր տուած է ռուս տարրը ազատութեան դատին համար ու, վերջապէս, «ռուս» ըսելով ես միշտ կը յիշեմ բարիքը, զոր Մեծն Պետրոսի ցեղը ըրած է անցեալի մէջ՝ հայութեան և կը տեսնեմ օգուտը, զոր իմ ազգս կարող է ապագայի մէջ քաղել ռուս զօրութենէն» (1906, թիվ 3–5, էջ 70):

Ռուսական կողմնորոշումը մնաց իբրև ստրատեգիական մայրուղի «Անահիտ» ամսագրի համար նաև նրա գոյության երկրորդ շրջանում: Բնականաբար, նման կողմնորոշումն արտահայտվում էր Խորհրդային Միության և նրան մաս կազմող Խորհրդային Հայաստանի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևով: Իսկ այդ վերաբերմունքի հիմքում ընկած էր Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային զարգացման ճշմարտացի գնահատությունը: «Այս բոլորի մէջ արդար չէ տեսնել միմիայն արժանիքը մեր ժողովուրդին աշխատասէր ու շինարար ոգւոյն,- գրում է հանդեսի խմբագիրը,- ատոր մէջ մեծ դեր ունին Խորհ. Միութեան բարոյական ու նիւթական աջակցութիւնը, պաշտպանութիւնն ու խաղաղութիւնը, զոր Միութեան անդամակցութիւնը տուած է մեր երկրին, այդ բոլոր շինարարական գործերուն մերթ թելադրութիւնը ու միշտ խրախոյսն ու օժանդակութիւնը, զոր մեր ժողովուրդը գտած է Միութեան Կեդրոնական կառավարութեան մօտ: Կուրութիւն ու ապերախտութիւն է ասիկա չըմբռնելն ու չգնահատելը»[1]:

Հետաքրքիր է ներկայացնում Զապոնյանի պատասխանը քաղաքական հակառակորդներին, որոնք պնդում էին, թե Խորհրդային Հայաստանը կորցնում է իր ազգային դիմագիծը: Հայաստան կատարած իր այցելությունից հետո նա գրում է. «Տիրող կարգերը և մեծամասնականներու քաղաքականութիւնն է, որ ոչ թէ կը թոյլատրեն, այլ կը պահանջեն, կը մղեն ու կօգնեն (ընդգծումն իմն է՝ Կ. Դ.), որ Միութեան մաս կազմող Խորհ. Հանրապետութեանց իւրաքանչիւրին մէջ տեղական ժողովուրդէն բխած ուժերէն կազմուի այդ ազգային հանրապետութեանց կառավարութիւնը, որ տեղական լեզուն տիրապետէ իբրև պաշտօնական լեզու, բնիկ ժողովուրդին տոհմայնաշունչ գրականութիւնն ու արուեստը զարգանան»[2]:

Ժողովրդի բազմակողմանի լուսավորման գործը «Անահիտի» ծրագրի հիմնական խնդիրներից մեկն էր: Ըստ խմբագրի, դա ազգային միասնության հասնելու գլխավոր ուղին էր, այսինքն՝ ազատագրական պայքարի հիմնական գործոններից մեկը: Ինչպես և մտահղացված էր, հանդեսը եղավ աշխարհով մեկ ցրիվ հայ մտավորական ուժերի ժամադրավայրը: Հենց մտավոր ներուժի մեկտեղու-

[1] «Անահիտ», 1933, թիվ 28:
[2] Նույն տեղում, թիվ 29:

մով, արևելահայ և արևմտահայ հատվածների մշակութային մերձեցման միջոցով պիտի գլուխ գար բաղձալի համախմբումը:

«Զարգացնել ինքնաճանաչութիւնը,- կարդում ենք հանդեսում,- ցուցնել թէ մեր բոլոր թերութիւնները կուգան գիտակցութեան չգոյութենէն, զգացնել, թէ փրկութեան մեծագոյն լծակը բարոյական կրթութիւնն է՝ զոր լուրջ հիմերու վրա հաստատուած Դպրոցը և անկեղծութեամբ, ուսումնասիրութեամբ ու խանդով չինուած Գրականութիւնը միայն կրնան տալ մեզի, հարստացնելով հայ միտքը մաքուր, կենսալիր, գեղեցիկ տարրերով, աշխատիլ մանաւանդ, որ մեր գրականութիւնը՝ բարձրագոյն արտայայտութիւնը հայ ցեղին հոգւոյն, հետզհետէ ճոխանայ, պայծառանայ, ձևացնէ տաճար մը վեհութեան ու շնորհի, որ կարենայ պատուոյ տեղ մը ունենալ Մարդկային Ոստանին մէջ և որմով հպարտանան մեր վաղուան սերունդները, ջանալ վերջապէս, որ ամբողջ ազգը, հակառակ ամեն պատուարի և անջրպետի, ամուր կապերով եղբայրանայ և ներդաշնակուի մեծ ազնիւ գաղափարի մը շուրջ՝ կամք մարդկութեան մէջ գեղեցկութիւն և կեանք ծնուցանող տարր մը ըլլալու. ահաւասիկ, ինչ որ կը նկատենք նուիրական պարտքը մեր այսօրուան մտաւորական դասին և այդ պիտի ըլլայ գործը, որուն «Անահիտ» պիտի ձգտի նպաստել» (1898, թիվ 1, էջ 5–6):

Ծրագրային այս կետը «Անահիտը» կատարեց ավելիով թե՛ առաջին շրջանում և թե՛ երկրորդում, երբ հրատարակվում էր իբրև զուտ «հանդէս մտածման և արուեստի»: Հանդեսի առաջին իսկ համարից սկսվում է համաշխարհային մշակույթի արժեքավոր էջերը թարգմանաբար հայությանը ներկայացնելու գործը: Բազմիցս հրատարակվում են ռուսական, եվրոպական և արևելյան նշանավոր հեղինակների գործերը, գրականագիտական-վերլուծական հոդվածներ են տպագրվում օտար գրականությունների վերաբերյալ: Խոսելով ռուսական մշակույթը հայության մեջ տարածելու անհրաժեշտության վերաբերյալ, հանդեսը նշում է. «Ռուս քաղաքակրթութիւնը Ասիոյ վրայ տարածուող մտաւոր ոխրական զօրութիւնն ըլլալու սահմանուած է, և ռուս մտածումն ու ռուս արուեստը պէտք է ծանօթ դառնան հայերու ամբողջութեանը» (1899, թիվ 5–6, էջ 179):

Մեծ տեղ են գրավում եվրոպական մշակույթին, մասնավորապես գրականությանը, հատկացված էջերը: Հանդեսը հատուկ ուշադրություն է նվիրաբերում ռեալիստական ուղղության գործերի քարոզչությանը, հատկապես այն գործերի, որոնցում մերկաց-

վում է տիրող իրականության սոցիալական պատկերը: Մի առիթով, օրինակ, գիտվում է, թե «Զոլան, շատ աւելի յառաջ երթալով Պալզաքէն, որ արդէն սկսած էր իր հսկայական վէպերուն մէջ արդի ընկերութեան արիւնոտ տիղմը քրքրել, արտադրեց գործ մը անգութ գիտողութեան» (1898, թիվ 2, էջ 63–64):

«Անահիտի» ծրագրի կարևոր մասն է կազմում արևելյան, հատկապես պարսկական գրականության ընտիր էջերը հայությանը մատուցելու գործը, լինի դա թարգմանությունների, թե մեկնաբանող հոդվածների տեսքով: Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում Գ. Փառնակի (Գառնիկ Ֆնտգլյան) ուսումնասիրությունը Օմար Խայամի մասին: Եվ, ինչպես հանդեսի հիմնական ուղղությունն է պահանջում, Փառնակն էլ, Խայամի արվեստի այլևայլ բարեմասնությունների կողքին, ընդգծում է դրա սոցիալական շեշտվածությունը: «Արդարև,- գրում է նա,- Օմարի պէս արեւելքի և ոչ մեկ բանաստեղծ թափած է սաստկայոյզ բողոք և սուր երգիծանք չարամիտ, անողոք և անխիղճ երկնքի «Ֆելեքի» դէմ»: Հեղինակը բարձր է գնահատում, որ Խայամը շատ սակավ դեպքերում, «թերեւս հալածանքի սուր տագնապի մը առենը» համակերպություն է ցույց տալիս տիրող իշխանությանն ու կրոնին ու միշտ «աղքատ դէրվիշութեան կապերտը սուլթանական շքեղութիւնէ... վեր կը դասէ» (Զ տարի, թիվ 2, էջ 39):

Ա. Չոպանյանը իր ամբողջ գործունեությամբ և, մասնավորապես «Անահիտով» կատարեց մի վիթխարի պատմական գործ, պեղելով, վեր հանելով և սփռելով Արևմուտքի և մեր իսկ զարմացած հայացքի առջև մի ամբողջ հայկական միջնադարյան քաղաքակրթություն: «Բաւական է որքան մութի ու մոռացութեան մէջ ենք ձգած մեր նախնեաց քնարին ցարդ անարդարօրէն արհամարհուած, քիչ կարեւոր նկատուած այդ արտայայտութիւնները, որոնք, ընդհակառակն, ըստ իս, ամենէն ինքնատիպ, հայադրոշմ էջերն են մեր հին բանաստեղծութեան,- գրում է նա: - Այն պահուն, ուր փրոֆեսոր Մառի և պ. Թորամանեանի սքանչելի ջանքերուն շնորհիւ, երեւան կուգան Անիի թաքուն մնացած հրաշալիքները, զոր մեր ոճրագործ անտարբերութիւնն ու տգիտութիւնը ցարդ խաւարի մէջ էր թողած, թող լոյս արեւուն ելլեն նաև մեր հին բանաստեղծութեան բոլոր անծանօթ մնացած գանձերը: Վերջապէս, ատեն է, որ ճանչնանք ամէն ինչ, որ մեր հայրերը եղած են և ըրած են, ատեն է, որ մենք մեզ ճանչնանք, որովհետև մենք, որ օտարներուն կը մեղադ-

րենք մեր մասին ունեցած տգիտութիւննին, անոնցմէ շատ վար չենք մնա մեր տգիտութեան մէջ» (1905, թիվ 9, էջ 189):

Այդ ամբողջ գործը զուտ մշակութայինից ավելի քաղաքական նպատակ էր հետապնդում: Դա կոչված էր զորացնելու ազգային զգացումն ու ազգային հպարտությունը, հետևաբար սատարելու ազգային ինքնապահպանության, ավելին՝ ազգային միասնության գործը: Այդ խնդիրը օրակարգի հարց էր դարձել XIX դարավերջին և XX-ի սկզբներին մեր ժողովրդի քաղաքական զարգացման բերումով: Չոպանյանի արժանիքը հենց այն է, որ նա ճիշտ ժամանակին ըմբռնեց օբյեկտիվորեն առաջացած այդ պահանջը և «Անահիտի» էջերը տրամադրեց առաջադիմական այդ շարքընթացի ոչ միայն արտացոլմանը, այլև կազմակերպմանը:

1901 թվականից սկսած հանդեսում հայտնվում է «Հայ էջեր» խորագիրը, որի տակ հրատարակվում են միջնադարյան բազմաթիվ հայ բանաստեղծների գործերը: Զուգահեռաբար հանդեսը տպագրում է քննական փայլուն ուսումնասիրությունների մի ամբողջ շարք, որոնցում հեղինակները մեկնաբանում, գիտականորեն բացատրում ու բացահայտում են և ժողովրդին մատուցում մեր միջնադարյան գրականության գանձերը:

Առաջինը հրատարակվում է Նահապետ Քուչակի մասին: Հետաքրքրական է, որ ամեն առիթով հանդեսը կամուրջ է նետում արդիականությանը:

Քուչակին հետևում են Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու, Նաղաշ Հովնաթանի, Հովնաթան Հովնաթանյան նկարչի վերհանումն ու տարածումը: Երզնկացու առիթով էլ Չոպանյանը չի թաքցնում իր քաղաքական միտումը: Հրատարակելով բանաստեղծի «Ի մէջս ծովու ծփինք, ո՛չ նաւ ունինք, ո՛չ նաւավար» տողը, նա նկատում է. «Ու խորհիլ, որ այսօր իսկ, դեռ նոյն խաւարին մէջ է, որ կը խարխափինք, նոյն լոյծը գլուխնուս վրայ ծանրացած, շատ աւելի դժբախտ ու հալածուած, նոյնքան աւելի պառակտուած ներքնապէս, ու այսօր ալ կրնանք, աւաղ, կրկնել Երզնկացիին տրտում աղաղակը. ո՛չ նաւ ունինք, ո՛չ նաւավար» (1906, թիվ 6–7, էջ 106):

Երկու շրջանների «Անահիտում» էլ բավական մեծ տեղ է գրավում ժամանակակից հայ գրականությունը: Հանդեսի ծրագիրն էր առավելագույնս մերձեցնել հայության զույգ հատվածները՝ միմյանց գրականությունը մատուցելու ճանապարհով: Դա վերաբերում է արևելահայ և արևմտահայ գրականություններին, հավասարապես

նաև Սփյուռքի ու Խորհրդային Հայաստանի գրականություններին: Չափազանցություն չի լինի հաստատել, որ «Անահիտի» հատորները մի իսկական գրականագիտական հանրագիտարանի դեր են տանում: Նրանցում հյուրընկալվում են բոլոր հայ գրողները Աբովյանից մինչև Շիրազ, Ալիշանից ու Պարոնյանից մինչև Համաստեղ:

Եվ որ առավել զարմանալի է, բոլոր այդ նյութերի մեջ գրականագիտական բարձր մակարդակին և խոր վերլուծություններին զուգահեռ միշտ ընթանում է ազգային միասնությունը, ազգային հրամայականներն ապահովելու միտումը, որը և հենց խմբագրական ծրագիրն էր:

Խ. Աբովյանի առիթով, օրինակ, շեշտելով նրա ռուսասիրությունը, խմբագրապետը գրում է. «Պահպանում ու զարգացում հայ ցեղին, հայ լեզուին, հայ գրականութեան, մուտք հայ տարրին եւրոպական քաղաքակրթութեան մէջ, ահա ճամբան զոր Աբովեան կը ցուցնէր.... և Աբովեան անգին արժանիքն ունի այդ ճամբան առաջին ու դժնդակ ճիգով մը բացած ըլլալու... Եւ եթէ ռուսահայ գրականութիւնն աւելի հայ գոյն, աւելի բնիկ շեշտ ունի, աւելի զերծ է հնաոճութենէ և դասական ազդեցութենէ, ատի կը պարտի Աբովեանին» (1948, թիվ 2, էջ 56):

Ա. Չոպանյանը բարձր է գնահատում նաև Վենետիկի Մխիթարյանների կատարած՝ իր ժամանակի համար մեծ աշխատանքը հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության, հայ լեզվի բառարանների ստեղծման, հին ձեռագրերի հրատարակության, մեծաթիվ թարգմանությունների, մտավորական կադրերի պատրաստման և ուրիշ բնագավառներում: Այդ ամենը յուրովի ազգակերտիչ բնույթի էր, գտնում է նա:

«Անահիտի» էջերում հաճախակի տպագրվում են Սիամանթոն, Վարուժանը, Թեքեյանը, Զ. Եսայանը և շատ ուրիշ ժամանակակից գրողներ: Հանդեսը գրական տաղանդի կատարելագործման մի տեսակ դպրոցի դեր էր տանում: Իսկ խմբագրապետն էլ ուսուցչի իր դերը երբեմն լրացնում էր անձնական նամակներով: Հետաքրքրական է, օրինակ, թե ինչ խորհուրդներ էր նա տալիս Վարուժանին: «Կարդացա՞ծ եք արդեօք Բարբիեի «Աստուածային յամբերը» և Հիւգոյի «Հատուցումները»: Կարդացեք: Ձեր հոգիին մէջ անոնց քնարին պղպջակը կայ ի բնէ, բայց այդ ազնիւ տրամութեան մեծ երգերուն ընթերցումը կրնայ ձեր ներշնչումը խրախուսել և ճոխաց-

նել»[1]: Այսպիսի հանձնարարականը ինքնին հետաքրքրական է: Զոպանյանը հրավիրում է Վարուժանին ներշնչվել 1830 թ. հուլիսյան հեղափոխության ազատության և ըմբոստության ոգով շնչող «Յամբերով», հավասարապես նաև 1848 թ. հեղափոխությանը նվիրված «Հատուցումներ» ժողովածուով:

Երկրորդ շրջանի «Անահիտում» էլ շարունակվում են արդեն մշակված ավանդույթները: Հանդեսը չի դադարում հայ գրողների ժամադրավայրը լինելուց, նրա էջերում հրատարակվում են (ինքնուրույն ստեղծագործությամբ կամ այդ հեղինակների մասին ասված խոսքով) Համաստեղն ու Վահե Հայկը, Շահնուրն ու Որբունին, Մանուշյանն ու Սեման, Զարենցն ու Մահարին, Մ. Արմենն ու Նորենցը, Գ. Սարյանն ու Ն. Զարյանը: Իսկ երբ Զոպանյանը կարդում է Շիրազի «Գարնանամուտը», «Սիամանթոն ու Խջեզարեն», գրում է, թե ինքը ունեցել է «Հայ նոր ու զմայլելի բանաստեղծի բերկրալից յայտնութիւնը», որը, ըստ իրեն, «Երևանի և ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մէջ ինքնուրոյն տեղ մը գրաւելու արժանի ներշնչեալ հմայիչ քնարերգակ մըն է» (1936, թիվ 5, էջ 30):

«Անահիտում» Ե. Չարենցին նվիրված հատուկ ուսումնասիրություն չկա, թեպետ հաճախ է տրվում մեծ բանաստեղծի անունը, խորին գնահատանքով ու գոհունակությամբ: Մինչ երկրորդ շրջանի «Անահիտի» երևումը արդեն իսկ Զոպանյանը հանդես էր եկել գրականագիտական հմուտ մի ակնարկով, որը առաջիններից մեկն էր Սփյուռքում և որի պարունակած գնահատականներն էլ երևում էին ավելի ուշ լույս տեսնող հանդեսում: Չարենցի երևումը Զոպանյանը անվարան կապում է Հոկտեմբերյան հեղափոխության հետ: Բանաստեղծի գործերը, ըստ նրա, «ամենէն զօրեղ ու անձնադրոշմ արտայայտութիւններն են Չարենցի, էջեր՝ ուր ամեն ինչ, մտածում ու ձեւ, ստեղծագործութիւնն է հեղինակին, մարդկային պատմութեան արտասովոր շրջանի մը ուղղակի ներգործութեան տակ երկնուած՝ այդ մեծ շրջանին հոգին արտայայտելու համար հարկ եղած ոյժն ու շունչն ունեցող քերթողի մը կողմէ, որ խառնուածքի հազուագիւտ բարդութեամբ մը հայնէի մը քնարական սրամտութիւնը կը միացնէ Վերհարնի մը դիւցազներգական ամեհի աւիւնին»[2]:

---

[1] Դանիել Վարուժան, Նամականի, Ե., 1965, էջ 232:

[2] «Ապագայ», 1923, թիվ 21:

«Անահիտի» զույգ շրջաններում էլ մեծաթիվ էջեր են տրամադրվել արվեստի հարցերին, մասնավորապես գեղանկարչությանը և երաժշտությանը: Ընդգրկվել են իտալական վերածննդի գործիչներից մինչև ժամանակակից ֆրանսիական գեղանկարչության առաջնակարգ հեղինակները, մատուցվել են մեծ թվով ցուցահանդեսներ: Ուշադրության կենտրոնում պահվել է հայ գեղանկարչությունը, և հատկապես Էդգար Շահինը:

Այս բնագավառում «Անահիտի» ամենամեծ ծառայությունը Կոմիտասի յուրատեսակ «Հայտնագործությունն» էր: 1901 թվականին «Անահիտում» տպագրված «Կոմիտաս վարդապետը» հոդվածը հայ մամուլում հրատարակված առաջին լուրջ ու խոր վերլուծականն էր մեծ արվեստագետի մասին: Չոպանյանի տված գնահատականները դարձան դասական և բազմիցս կրկնվեցին ու հիմնավորվեցին հետագայում երևացած գրեթե բոլոր հրատարակություններում: «Ինձի կը թուի, որ ինքն այն մարդն է, որ անհրաժեշտ էր, որպէսզի հայ երաժշտութիւնը արմատապէս վերանորոգուի իր աղաւաղումէն և անկումէն, և որպէսզի ան ծանօթանայ Եւրոպայի երաժշտագէտներուն և համաշխարհային երաժշտութեան մէջ սկսի գրաւել այն տեղը, որուն արժանի է եւ զոր չունի դեռ» (1901, թիվ 6–7, էջ 142):

Գեղանկարչության, քանդակագործության, ճարտարապետության, երաժշտության ու նաև գիտության մի շարք ուրիշ բնագավառների անդրադառնալիս, հանդեսն իր զույգ շրջաններում էլ առավելապես դիմում է «քրոնիկի» ժանրին, որը նրա էջերում հասնում է կատարելության և կարող է հանդեսի համար կատարել ժանրային յուրատեսակ անձնագրի դեր:

Մեր մամուլի պատմության մեջ «Անահիտի» գրաված եզակի տեղը պայմանավորված է նրա հանրագիտարանային ընդգրկումով, բովանդակության խորությամբ, մատուցման ծայր աստիճան մատչելիությամբ, իր ժամանակի հետ քայլ բռնելու նախանձելի կարողությամբ, համեմատաբար ընդարձակ լսարանով և այս ամենի կուռ միասնությամբ, որը ապահովվում էր նրա խմբագրի՝ Արշակ Չոպանյանի հմուտ ձեռքով և հեռուն նայող հայացքով:

«ԱԶԱՏ ԽՕՍՔ» (1901)

*Ֆրանսիայում լույս տեսած հայ պարբերականների թվում իր ուրույն տեղն ունի 1901 թ. Երվանդ Օտյանի կողմից Փարիզում հրատարակվող **«Ազատ խոսք»** երգիծական պարբերականը: Ֆրանսիայում այն հրատարակվեց ընդամենը մեկ տարի, որից հետո պարբերականի հրատարակությունը շարունակվեց Եգիպտոսում: Փարիզում «Ազատ խոսքը» լույս էր տեսնում «Imprimerie Armenienne» (D. Dikran) հայոց տպարանում: Նախատեսված էր հրատարակել մեկամսյա պարբերականությամբ: «Ազատ խոսքի» էջերում տպագրված բոլոր հոդվածները անստորագիր են, հետևապես ասել, թե բացի Ե. Օտյանից էլ ովքեր են աշխատակցել հանդեսին, չենք կարող: Թեև Փարիզում լույս է տեսել պարբերականի ընդամենը երկու համար, որոնք կոչվում են **տետրեր**, սակայն դրանք էլ բավարար են Օտյան-հրապարակախոսի ու երգիծաբանի ողջ հմտությունը ցուցադրելու համար: Նրանցում զետեղված նյութերը խոսում են Օտյան-խմբագրի հասարակական լուրջ դիրքորոշման, ժողովրդի ճակատագրով մտահոգված լինելու մասին[1]:*

Հիմնավորելով իր երևան գալը, «Ազատ խոսքը» գրում է. «Փրկիչի հովեր մի սպասեք մենէ... Մենք մեր գոհացումը պիտի փնտրենք ծաղրելով կամ ձաղկելով ամէն մի կեղծ բան»: Անցնելով գործի, հանդեսը կյանքի ու մահու կռիվ է հայտարարում մուրացկանությանը, փորձում է կրկին հայ ժողովրդի մեջ արթնացնել հպարտության, տոկունության և ազգային արժանապատվության զգացումը: «Ազատ խոսքն» այն կարծիքին է, որ Մանթաշևի նման բարերարները, որոնք «au fond (իրենց խորքում) բարի մարդիկ են», գումարներ բաժանելով «մի բուռ ժողովրդի մեջ արմատացնում են մուրացկանության զգացումը» (1901, տետր 1): Քննության առնե-

[1] Ե. Օտյանը Փարիզ էր եկել դեռևս 1899 թ.: Այստեղ նա հանդիպում է իր վաղեմի բարեկամ Ա. Արփիարյանին, ինչպես նաև բարեկամական կապեր է հաստատում թե՛ Ա. Չոպանյանի, թե՛ Մ. Չերազի հետ: Համոզված լինելով, որ Արփիարյանը շեղվել է ճիշտ ճանապարհից, նա դաշինք է կազմում վերջին երկուսի հետ, որոնք էլ այդ «ազնիվ դավաճանությունը» նրա կարծիքով, ի չարն են գործադրում: Դրանից հետո ամենուրեք պաշտպանելով Արփիարյանին, Օտյանը նախաձեռնում է «Ազատ խոսք» երգիծաթերթի հրատարակումը, որի էջերում ծաղրում է ու քննադատում Արփիարյանի հակառակորդներ՝ Մ. Չերազին և Ա. Չոպանյանին:

յով այս ցավոտ խնդիրը, Հանդեսը Հաստատակամորեն շեշտում է, որ մեր ժողովրդի մտավոր կարողությունների զարգացման Համար այդչափ անՀրաժեշտ և երախտագիտության արժանի բարեգործությունը չպետք է ստանա բաշխող կենտրոնի կերպարանք: ԸնդՀակառակը, այն պետք է նմանվի «մի մրցարշավի, որին կարող են մասնակցել թատերագիրներ, նկարիչներ, իշխաններ, ուսանողներ» և որտեղ, ինչպես յուրաքանչյուր մրցույթում, կլինի երեք մրցանակ:

ՖրանսաՀայ Համայնքի Հասարակական ու Հոգևոր կյանքի Հոռի կողմերը խարազանվում են Համայնքի աչքի ընկնող գործիչներ՝ Մ. Չերազի, Ա. Չոպանյանի, Ս. Հախումյանի փոխՀարաբերությունների միջոցով: Այն, որ Հայ Հասարակական ու մշակութային որոշ գործիչներ երբեք Հաշտ ու Համերաշխ չեն գործել, երևում է «Ազատ խոսքի» մի շարք Հաղորդումներից՝ «Պատուոյ ատեան», «Գաղթականային ժողով», «Գտանք պատճառը»: Դրանցից տեղեկանում ենք, որ Ա. Չոպանյանը և ոմն պ. Իսկենդեր ամբաստանվել են և նրանց Հարցը քննության է առնվել Պատվո ատյանի ու Գաղթականային ժողովի նիստերում, որին մասնակցել է շուրջ 150 Հայ:

Բնավ չցանկանալով նսեմացնել թե Ա. Չոպանյանի, թե Մ. Չերազի դերը Ֆրանսիայի Հայ Համայնքի, ինչպես նաև ամբողջ Հայության կյանքում, պարբերականը Համոզված է, որ ժողովրդի Հաջողությունն ու Հաղթանակը մեծապես պայմանավորված է ազգային արժանապատվությամբ, ազգային ինքնագիտակցությամբ և միասնությամբ: «Ազատ խոսքը» Համոզված է, որ Հասարակական գործիչներից շատերի եսասիրությունը, մեծամտությունն ու թշնամանքը պատճառում են առանց այդ էլ ծանր վիճակում գտնվող Հայ ժողովրդին: Միտքը Հաստատելու Համար բերվում են Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար պ. Դելկասեի Հետ «Հայ ազգին մեջ Հայրենասէր և խոՀուն երկու քաղաքագէտների»՝ Ա. Չոպանյանի և Մ. Չերազի Հանդիպման մանրամասները (վերջիններս Հրավիրվել էին Հայկական Հարցի Հետագա ընթացքը քննարկելու Համար): Ֆրանսիայի արտգործնախարարը ընդունում է, որ «դժբախտ Հայ ազգը մինչև Հիմայ դիւանագիտութեան նկատառումներուն զոՀը եղաւ» (1901 թ. մարտ 2), սակայն այժմ, նրա Հավաստմամբ, Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը այլ դիրքորոշում ունեն:

Փարիզում երկու տետրակով մեկ տարի հրատարակվելուց հետո, ինչպես նշեցինք, «Ազատ խոսքը» սկսում է տպագրվել Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայում[1]: Հավանաբար դա պայմանավորված էր առաջին հերթին Օտյանի Եգիպտոս փոխադրվելով, սակայն չեն բացառվում նաև այլ պատճառներ:

«Ազատ խոսքը» ֆրանսահայ առաջին երգիծական հանդեսն էր:

«ԺԱՄԱՆԱԿ» (1901–1902)

Հայ պարբերական մամուլի անբաժանելի մասն են կազմում մեր ժողովրդի հասարակական, քաղաքական կյանքի պատմական զարգացման օրինաչափություններին շաղկապված գրական հրատարակությունները: Ունենալով իր ներգործության ոլորտները և թափանցելով ազգի ու հատկապես երիտասարդ սերնդի հոգևոր և մտավոր աշխարհը, գրական մամուլը կարևոր դեր է խաղացել ապագա քաղաքացիների պատրաստման, ազգային ինքնագիտակցության ձևավորման ու պահպանման գործում: Գործունեության հիմք ընդունելով «ազգն ինքը պէտք է կրթի իր զաւակներին» նշանաբանը, այդ պարբերականները ուշադրության կենտրոնում են պահել ազգային կյանքի ինքնազարգացման խնդիրները: Անկասկած՝ դրանով է բացատրվում գրական-գեղարվեստական պարբերականների առատությունը XIX դարի վերջին – XX դարի սկզբին, հատկապես գաղթօջախներում: Գրական պարբերականների հիմնադիրները կարծում էին, որ եվրոպական քաղաքակրթությանը անմիջապես շփվող մարդիկ (խոսքը եվրոպական երկրների հայկական գաղթօջախների մասին է) ավելի դյուրին և ճիշտ կկազմակերպեն այդ գործը: Ահա թե ինչու XIX դ. վերջից մինչև 1920 թ. ֆրանսահայ գաղթօջախում լույս տեսնող 19 անուն թերթերի և ամսագրերի մեծ մասը գրական էին[2]:

Այդ պարբերականներից առաջինը Սիմեոն Հախումյանի «Ժամանակն» էր: Գրական, գեղարվեստական, գիտական և քաղաքական

---

[1] Ալեքսանդրիայում «Ազատ խոսքը» ընդմիջումներով հրատարակվել է 1902–1903 և 1906, 1908 թթ.:

[2] Ըստ Մ. Բարլոյանի՝ 1900–1920 թթ. Ֆրանսիայում լույս է տեսել 34 պարբերական:

այս հանդեսը լույս է տեսել ընդամենը վեց ամիս (1901–1902 թթ.), սակայն նրա խմբագիր-հրատարակիչը աշխատանքային հարուստ փորձ ուներ:

Ս. Հախումյանը ծնվել է 1859 թ. Շուշիում: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ապա վերադարձել Շուշի և զբաղվել մանկավարժությամբ ու հրապարակախոսությամբ: 1882 թ. հիմնադրել է «Դարձ» գրական-քաղաքական հանդեսը, որը հրատարակել է մինչև 1884 թ.: Ս. Հախումյանը աշխատակցել է նաև «Մշակ», «Արձագանք», «Աղբյուր», «Տարազ», «Նոր-Դար» պարբերականներին: Կյանքի վերջին տարիներին ապրել է Փարիզում, որտեղ էլ 1901 թ. հիմնել է «Ժամանակ» հանդեսը, սակայն շուտով, հիվանդության պատճառով ընդհատել է նրա հրատարակությունը: Մահացել է 1905 թ., Փարիզում:

«Ժամանակի» երևան գալը տարբեր արձագանքներ է առաջացրել: Այսպես, Ա. Չոպանյանի «Անահիտը» անբարենպաստ կարծիք է հայտնում հանդեսի մասին, իսկ Թիֆլիսում քաջ հայտնի և մեծ հարգանք վայելող բժշկապետ Բ. Նավասարդյանը 1901 թ. հունիսին ուղարկված իր նամակով բարեմաղթանքներ է հղում «Ժամանակին»: Նամակում մասնավորապես ասված է. «Թող «Ժամանակը» թափի դա Հայաստան նոր ոգով ու նոր կեանքով, զինուած սիրով, գիտութեամբ, ճշմարտութեամբ, անաչառութեամբ, համերաշխութեամբ եւ այսպիսով բերէ մեզ մեղմաշունչ, զով եւ առողջարար սնունդ»:

«Ժամանակի» առաջին համարը բացվում է «Նոր հանդէսի գոյութեան իրաւունքը» խմբագրական հոդվածով, ուր վերլուծության են առնվում մամուլի և գրականության մասին երկու կարծիքները.

«Մամուլը եւ գրականութիւնը են կամ պիտի լինին արտահայտիչ միջավայրի կամ հասարակական կեանքի:

Գրականութիւնը եւ մամուլը ղեկավարիչ եւ դաստիարակիչ են կամ պիտի լինեն միջավայրի կամ հասարակական կեանքի»:

Բազմաթիվ փաստարկներից հետո խմբագրականի հեղինակը եզրակացնում է. «Մեզ թւում է, որ մամուլի եւ գրականութեան երկու դերերն այս դէպքում նշանաւոր են եւ նրանցից ոչ մէկին չի կարելի արհամարհել»: Համոզված լինելով, որ չնայած իր փոքրաքանակությանը, հայ ժողովուրդը կենսական բազմաթիվ ապացույց-

ներով ցույց է տվել իր ձգտումը «մասն ունենալ ընդհանուր քաղաքակրթութեան եւ մարդկային ընդհանուր երջանկութեան մէջ», «Ժամանակը» հայտարարում է, որ հանդեսը գալիս է օգնելու հայ ազգին «իրապէս, գիտակցօրէն մասնակից լինի եւրոպական մտաւոր շարժման», սակայն այնպես, որ նա «սիրէ իր մայրենի լեզուն իբրեւ միակ բնական ճշմարիտ եւ ուժեղ գործիք գիտութիւն եւ քաղաքակրթութիւն իւրացնելու»:

Հախումյանի «Ժամանակը» նպատակ ունի փրկել մայրենի լեզուն և գրական կյանքը «մահուան վտանգից»: Կուսակցական պայքարն ու անմիաբանությունը համարելով դրա հիմնական պատճառը, հանդեսը հայտարարում է. «Ժամանակը» գալիս է, որպէսզի հայ հեղինակներին ասպարէզ հրաւիրէ նոր պայմաններու մէջ, ազատ թողնելով նրանց տաղանդները եւ մտքի թռիչքը կուսակցական անմիտ բռնութիւնից»:

Պարբերականի ուղղությունը հետևյալն էր. «Ճշմարտութիւն, գիտութիւն, գեղարուեստ», որն էլ իր հերթին, «Ժամանակի» համոզմամբ, հայ ազգին իրավունք կտա մտնել քաղաքակրթված ազգերի ընտանիքի մեջ, «իսկական ազատութիւն կտա, որովհետև առանց գիտութեան չկա ազատութիւն»:

Հախումյանի «Ժամանակը» կազմված էր չորս հիմնական բաժիններից՝ Գրական, Ճաշակ եւրոպական գրականութեան, Գիտական, Մամուլ: «Ժամանակի» էջերում տպագրվել են Վ. Փափազյանի, Պ. Պռոշյանի, Ս. Մանդինյանի, Սիամանթոյի, Շ. Կուրղինյանի, Վ. Թեքեյանի գործերը: Պարբերականը մեծ ուշադրություն էր դարձնում ռուսական և եվրոպական գրականության ժողովրդականացմանը՝ համոզված լինելով, որ «մեր մանուկ եւ աղքատ գրականութիւնը դրանից միայն օգուտներ կը քաղէ»: Շարունակելով դեռևս «Գործում» սկսած իր նախաձեռնությունը, Հախումյանի «Ժամանակը» տպագրում է Հ. Իբսենի, Ա. Կամյուսի, Ա. Սիլվեստրի, Գ. Մոպասանի, Լ. Տոլստոյի ստեղծագործությունները:

Գիտական բաժինը վարում էր ֆրանսահայ մեկ այլ պարբերականի՝ «Համալսարանի» խմբագիր Մ. Պաղտասարյանը: Վերջինիս և Հախումյանի հայացքների համերաշխությունը անմիջապես երևում է «Ժամանակի» ընտրած նշանաբանից: Երկու խմբագիրներն էլ համոզված էին, որ գիտությանը հաղորդակից լինելով, հայ ժողովուր-

դը կկարողանա իր արժանի տեղը զբաղեցնել աշխարհի ժողովուրդների շարքում: Բաժինը սկսվում է «Գիտութեան արժէքը» վերլուծական հոդվածով: Հեղինակը բարձր է գնահատում գիտության դերը, որի «ժամանակակից ոգին մարդկային մտքին տուաւ իր ազատ թափչքը», իսկ «անոր արտադրիչ ոյժին՝ իր յարաբերական անկախ իրաւունքները»: Մ. Պապատասարյանը համոզված է գիտության դաստիարակչական բնույթի մեջ և քաղաքակրթության ներկան ու ապագան սերտորեն կապում է գիտության հետ: Նրա կարծիքով գիտությունը «մարդկութեան կատարելագործումի ու ազնուացումի միակ սատարն ու փորձաքարն է»:

Գիտական բաժնում քննության են առնվում նաև փիլիսոփայական ու բժշկական խնդիրներ: Այսպես՝ Ս. Մանդինյանի «Երազների ուսումնական մեկնութիւնը» հոդվածը, հիմնվելով Ֆրոյդի ուսմունքի վրա, պարզաբանում է երազների մեկնության սկզբունքը: Փիլիսոփայական և հոգեբանական հարցեր են վերհանում նաև Հ. Հինդլյանի «Մանուկի հոգեբանութիւնը», «Յայտնութիւն անդրաշխարհէն» և Շ. Պերպերյանի «Արդի իմաստասիրութեան գլխաւոր հոսանքները» հոդվածները, ընդ որում, հարցերի լուսաբանումը կատարվում է եվրոպական գիտության նոր նվաճումների հիման վրա: Գիտական բաժնում Ս. Հախումյանի «Ժամանակը» ծրագրել էր անդրադառնալ նաև հայագիտության խնդիրներին: Հանդեսը տպագրում է Հ. Աճառյանի «Հայ լեզուաբանութեան անցեալն ու ներկան» և Կ. Բասմաճյանի «Անիի դրացի Կարմիր վանքը» հոդվածները: Եվ եթե երկրորդը ուներ զուտ պատմանկարագրական բնույթ, ապա առաջինը վերաբերում էր հայոց լեզվի ծագումնաբանության խնդիրներին:

Իր ժամանակի մյուս պարբերականների նման Հախումյանի հանդեսը անդրադառնում է հայ մամուլի խնդիրներին, վերլուծում նրանում ստեղծված կացությունը: «Ժամանակի» բաժիններից մեկը այդպես էլ կոչվում է «Մամուլ»: Բաժնում զետեղված նյութերից ուշադրության է գրավում Ահրիմանի «Հայկական մամուլը» հոդվածը: Հեղինակը արձանագրում է հետևյալ իրողությունը՝ վերջին տարիներին հայ մամուլը ապրել է քանակական աճ, սակայն դա բոլորովին չի ազդել նրա որակի վրա: Ահրիմանը տեղին է նկատել, որ հայ պարբերականների թիվն ավելացել է «բուն հայաբնակ կենտ-

րոններից դուրս. այն է Եւրոպայում, Ամերիկայում եւ Եգիպտոսում», մինչդեռ, այդ երկրներում ապրող հայության ընդհանուր թիվը չի անցնում 60.000-ից: Ահրիմանի այս դիտողությունը, հասկանալի է, ուներ իր բացատրությունը և կապված էր այն աղետների հետ, որոնք տեղի էին ունենում Հայաստանում (Աբդուլ Համիդի կողմից սկսված արևմտահայության կոտորածները, ինչպես նաև հայ-թաթարական բախումները Արևելյան Հայաստանում, հայոց եկեղեցու հողերի և ունեցվածքի բռնագրավումը և այլն):

Շարունակելով վերլուծությունը, Ահրիմանը ավելացնում է. «Ստացվում է..., որ շուրջ 60.000 հայեր ունեն շուրջ 20 պարբերական, մինչդեռ 3 մլն. հայեր նրանցից չեն օգտվում», քանզի այս պարբերականներից շատ քչերն են հասնում «Ռուսիա, Կովկաս եւ Պարսկաստան, եւ ոչ մեկը Թիւրքիա»: Հեղինակը պատրաստ է հասկանալ օբյեկտիվ պատճառների հետևանքով ծանր վիճակում հայտնված հայ մամուլի զարգացմանը խոչընդոտող հանգամանքները. «Թիւրքիայի հայկական մամուլը քաղաքական ներքին իրավիճակից ելնելով՝ բարոյապէս սպանուած է բառի բուն նշանակութեամբ, արեւելահայ մամուլը, քիչ թէ շատ, կպած է ժողովրդի կեանքին եւ աշխատում է նմանուել եւրոպական մամուլին», իսկ գաղթօջախների, ինչպես ինքն է գրում «արեւմտեան հայ մամուլի» թուլությունը Ահրիմանը բացատրում է նրանով, որ վերջինս «գրական և մտաւոր զբաղման նիւթ շատ քիչ է մատակարարում»:

Այս վերջին եզրահանգումը հակասում էր Հախումյանի կարծիքին: Նա համոզված էր, որ գաղթօջախի մամուլն ունի իր մասնավոր առաքելությունը՝ պահպանել հայոց լեզուն և միասնությունը: Անշուշտ, գաղթօջախների մամուլը պետք է ունենա իր առանձնահատկությունը, սակայն իսկապես շատ հաճախ պարբերականների փակման պատճառ են եղել ոչ թե նյութական դժվարությունները, այլ թղթակիցների կազմի բացակայությունը, քննարկվող հարցերի նեղ շրջանակը և ներկայացվող նյութերի՝ հանրությանը հասու չլինելը:

Ինչպես դարասկզբի ֆրանսահայ պարբերականներից շատերը, «Ժամանակը» արժանացավ վաղաժամ դադարելու ճակատագրին: Հանդեսի փակման պատճառը ոչ միայն վերը նշված հանգաման-

ներն էին, այլև տպագրական ծախքերը հոգալու համար անհրաժեշտ գումարի բացակայությունն ու խմբագրի հիվանդությունը[1]:

Իբրև գրական-գեղարվեստական պարբերական, Ս. Հախումյանի «Ժամանակը» «Գործի» նման չկարողացավ լիարժեք դրսևորել իրեն: Սակայն այն իր տեղն ունի ժամանակի ֆրանսահայ գրական պարբերականների շարքում, իբրև մամուլի օրգան, որը փորձեց վեր կանգնել կուսակցական հակամարտություններից:

«ՀԱՅ ԲԱՐԻԶ» (1907–1908)

Իրենց ինքնատիպությամբ ֆրանսահայ մամուլի մեջ առանձնանում են «Հայ Բարիզ» և «Հայ կեանք» պարբերականները, որոնք ամբողջությամբ նվիրված են Հայկական հարցի լուսաբանմանը: Ֆրանսահայ մյուս պարբերականների նման, սրանք էլ կարճ ժամանակ լույս տեսան, սակայն պահպանված համարներում ընդգրկված նյութերը թույլ են տալիս պնդելու, որ «Հայ Բարիզն» ու «Հայ կեանքը» ամբողջ խորությամբ ու լրջությամբ հետամուտ էին եղել իրենց առջև դրված գլխավոր խնդրի՝ ֆրանսահայ գաղթօջախի պահպանմանը, որը պարբերականների խոր համոզմամբ, մնացել էր «առանց նաւի և լաստափայտի» և «խեղդուելու վտանգի առաջ» է, իսկ փրկության միակ բանալին «տոհմային լեզուն» է:

«Հայ Բարիզը» լույս է տեսել 1907–1908 թթ. Ծառուրյանի տպարանում: Պարբերականի խմբագիրը Ս. Ասատուրյանն էր, արտոնատերը՝ Լ. Գալոյանը: Աշխատակցում էին Հ. Ասատուրյանը, Արմեն Հարազատ, Յովսար, Անուշ-լեզու Վաչանիկը: Ցավոք Հայաստանում պահպանվել են պարբերականի եզակի նմուշներ[2]:

Չնայած իր կարճատև գոյությանը, պարբերականը քննության է առնում հայ ժողովրդի և մասնավորապես արևմտահայության համար խիստ կարևոր հարցեր: «Հայ Բարիզ»-ին հավասարապես մտա-

---

[1] Ըստ «Հայ կեանքի»՝ Ս. Հախումյանը մտային խանգարում է ստացել, որից հետո թերթը փակվել է, իսկ մեկ տարի անց՝ 1905 թ., Ս. Հախումյանը մահացել է: Նույն պարբերականը գրում էր, որ «տաղանդաւոր գրագէտ Միքէլ Հախումեանի ամսաթերթը... բաւական հետաքրքիր բովանդակութիւն ունէր»:

[2] 1907 թ. նյութերը պահպանվել են Վիեննայի մատենադարանում:

հոգում են թե ֆիզիկական բնաջնջման առջև կանգնած աշխարհասփյուռ հայության, և թե ձուլվելու վտանգի առջև կանգնած հայության ճակատագրերը: Քննարկելով այդ խնդիրները, «Հայ Բարիզը» առաջ է քաշում համարձակ, սակայն անիրագործելի առաջարկություններ, ընդհուպ մինչև արևմտահայոց պատրիարքարանը Եգիպտոս տեղափոխելու հարցը: Հ. Ասատուրյանի «Արտասահմանի ընդհանուր առաջնորդութիւնը» հոդվածը նվիրված է հենց այս հարցին: Հեղինակը ոչ միայն «գաղափարը միայն կը յայտնէ», այլև հիմնավորում է իր միտքը: Փաստարկներն հետևյալն են՝

1. Եգիպտոսը, Անգլիայի նման կառավարական «եզական ձեւ մը կը ներկայացնէ»:

2. Հայերն այնտեղ «ամենաբարձր դիրքերու հասած ըլլալով» արժանացել են ընդհանուր և արդար համակրանքի:

3. Այնտեղ է հաստատվել ծաղկող հայ վաճառականությունը:

4. Այստեղ և՛ հայոց եկեղեցին, և՛ հայկական վարժարանը բավարար միջոցներ ունեն «ազգային գործերը վարելու» համար:

Նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները, հեղինակը եզրակացնում է, որ «Եգիպտոսը Թիւրքիա մ՚է, պարզապէս մաքրուած, զտուած եւ բարեկարգուած»: Համեմատությունը բնավ պատահական չէր: Նկատի ունենալով նշված ժամանակահատվածում Եգիպտոսում հայերի համար ստեղծված նպաստավոր պայմանները, Հ. Ասատուրյանը հանգում է այն եզրակացության, որ Եգիպտոսը կարող է փոխարինել Թուրքիային և ստանձնել «առաջնորդողի դեր մը»: Այս ուղղության կողմնակիցները այն կարծիքին էին, որ Եգիպտոսում ստեղծվող ընդհանուր «Առաջնորդությունը» պետք է գործի Երեսփոխանական ժողովի միջոցով, որն էլ, իր հերթին, պետք է ընտրվի Աֆրիկայի, Եվրոպայի և Ամերիկայի «գաղթականութեան մասնակցութեամբ»: Հետևաբար XX դարի սկզբին, երբ արևմտահայության վիճակն անչափ ծանրացել էր, հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ նրա առաջադեմ ուժերը շարունակում են որոնել ազատագրության ու փրկության ճանապարհները, որի դրսևորումներից մեկը հենց «Հայ Բարիզ»-ի առաջ քաշած ծրագիրն էր:

«Թիւրքիոյ շուրջ» կոչվող հետագա լրատվական հաղորդագրությունները, հիմնվելով պատրիարք Մ. Օրմանյանի և Ռուսաստանի հյուպատոսական տեղեկագրության վրա, վեր են հանում հա-

յունթյան ծանր իրավիճակը, որ ստեղծվել էր Արևմտյան Հայաստանում վանական կալվածքների հափշտակում, գյուղացիների ապօրինի հողազրկում, մարդկանց խոշտանգում բանտերում, զանգվածային գաղթ Արևելյան Հայաստան: Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի նահանգների հայերի զանգվածային տեղաշարժերը լարվածություն էին ստեղծում ռուս-թուրքական սահմաններում, ինչն էլ պարբերականի համաձայն, ստիպում է կառավարություններին «մշտ արթուն և զգուշաւոր վիճակի մէջ» լինել:

«Հայ Բարիզը» քննության է առնում նաև քրդերի հարցը: Վերջիններս դիտարկվում են իբրև «թիւրք գործակալներ», որոնք ավերում և թալանում են հայկական գյուղերը:

«Ազգային լուրեր» բաժինը ներկայացնում է Փարիզի հայկական միության գործունեությունը (Արմեն Հարազատի հոդվածը), ինչպես նաև հաշվետվության կարգով անդրադառնում է այս կամ այն վարժարանին արված նվիրատվություններին: Քննության առնելով Փարիզի հայկական միության ծրագիրն ու նրա կատարած աշխատանքը, հեղինակը կանգ է առնում երկու կարևոր խնդրի վրա: Դրանցից առաջինը վերաբերում էր Միության կողմից «Փարիզի մէջ հայկական թանգարան մը եւ հայկական մեծ մատենադարան մը» հիմնելուն, որտեղ պետք է հավաքվեին հայերենով լույս տեսնող բոլոր աչքի ընկնող հրատարակությունները, հին ձեռագրերը, ինչպես նաև օտար լեզուներով հայերի մասին լույս տեսած բոլոր հրատարակությունները: Երկրորդ կարևոր խնդիրը Փարիզում «գիշերօթիկ միջնակարգ քոլեջ-վարժարանի» հիմնումն էր:

Հարազատը նաև այն կարծիքին է, որ հայկական միության նպատակը պետք է լինի «Հայերէն լեզուի մշակութեան պէտքերը»: Միայն այս դեպքում Միությունը կարող է գոյատևել և օգտավետ աշխատանք իրականացնել: Սակայն նախատեսված ծրագրերից ոչ մեկը չի իրագործվել: Հոդվածագիրը վեր է հանում նաև Միության նմանօրինակ վարքագծի պատճառները: Դրանցից ամենազլխավորն այն է, որ Միությունը գտնվում է «կիսամեռ պահպանողականութեան» վիճակում, մինչդեռ գործելու և օգուտ բերելու համար այն պետք է գտնէ «քիչ մը աւելի յանդուգն, երիտասարդ ու խիզախող»: Միայն այս դեպքում Միությունը կարող է լինել Փարիզի հայության ուղեցույցն ու պարծանքը:

Անշուշտ, «Հայ Բարիզը» իր ունեցած և խաղացած դերով չի կարող համեմատվել «Անահիտ» կամ «Բանասեր» պարբերականների հետ, սակայն, հիմնականում հանդիսանալով հայ երիտասարդության ազնիվ մղումների արդյունք՝ նմանօրինակ հրատարակությունները արտահայտել են նրա ձգտումներն ու մտահոգությունները:

«ՀԱՅ ԿՅԱՆՔ» (1913–1914)

1913 թ. հոկտեմբերի 25-ից Փարիզում սկսում է լույս տեսնել նոր պարբերական՝ «Հայ կեանք» թերթը, որը մինչև 1914 թ. հունվար հրատարակվել է ամիսը երկու անգամ, ապա վերածվել շաբաթաթերթի: Պարբերականի խմբագիրն էր Մ. Գափամաճյանը, հիմնադիր տնօրենը՝ Կ. Հ. Ներսեսը: Ցավոք, նրանց մասին որևէ տեղեկություն մեզ հայտնի չէ, սակայն շաբաթաթերթում տպագրված նյութերի բովանդակությունից կարելի է մակաբերել, որ հրատարակիչները մտահոգված էին ոչ միայն ֆրանսահայ հասարակության, այլև ամբողջ հայ ժողովրդի ճակատագրով և ջանում էին տեսնել նրան միաբանված՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Պարբերականն իր բնույթով անկախ ազատական էր: Իր հրապարակ գալու մասին «Հայ կեանքը» տալիս է հետևյալ պարզաբանումը. ցավալի է տեսնել, թե Փարիզի նման միջավայրում, որտեղ ապրում և գործում են Ա. Չոպանյանը, Մ. Չերազը, Կ. Բասմաջյանը և որտեղ կա «նիւթապէս բարգաւաճ հայ գաղութ մը», որը կարող է «ծնունդ ու սնունդ» դառնալ բազմաթիվ հանդեսներու համար, հայերը նույնիսկ մէկ թերթ չունեն»: Ուստի, «թերթին նպատակը պակաս մը լեցնել, պահանջի մը գոհացում տալն» է (1913, հկտ. 25):

«Հայ կեանքին» աշխատակցել են Մելիքսեթ Դավիթ-Բեկը (Մ. Ս. Դ. - Բ.), Հ. Սուրենյանը, Թ. Էմիրճյանը, դոկտ. Լ. Ռոպենսոնը, Նաղաշ Լճեցին, Հայկակը, Հայրենասեր Պերճը, Ատոմը, Տեովլեթը, Վանմիրը, Հայկ-Արամը, Շարլ Ռիվերը և ուրիշներ:

Պարբերականի բաժիններն էին՝ 1. Ավանդական առաջնորդող հոդված, որը նվիրված էր փարիզահայ կյանքին: 2. Հայկական հարցի խնդիրը լուսաբանող տեղեկատվություն կամ պաշտոնական ան-

ձանց հայտարարություններ ու փաստաթղթեր: 3. Բանասիրական: 4. Բժշկական: 5. Հայտարարություններ:

Բանասիրական բաժինը վարում էր Մ. Ս. Դավիթ-Բեկը: Հայրենասիրություն, քաջություն, ազնվություն քարոզող գրական-գեղարվեստական նյութերի կողքին («Քոսովոյի ճակատամարտը», Հ. Սուրենյանի «Անահիտ քրմուհին», «Զեյթունի փառքը») տպագրված հրապարակումները պատմում են գեղարվեստի զարգացման մասին: Հրատարակիչները տեղին են նկատում, որ հայ արվեստի մի մասը կազմող նկարչությունը, քանդակագործությունը, փորագրությունը գրեթե անտեսված են մնացնում, մինչդեռ մենք ունենք այդ արվեստների նշանավոր ներկայացուցիչներ: Հայ արվեստը սատարելու նպատակով «Հայ կեանքը» առաջարկում է ստեղծել մի հիմնադրամ՝ «պզտիկ ֆոնտ մը» Մինաս Չերազի, Արշակ Չոպանյանի, Միքայել Վարանդյանի և Տիգրան Եսայանի մասնակցությամբ:

Պարբերականի էջերում տեղ են գտել նաև հայրենասիրական, դաստիարակչական բովանդակությամբ հոդվածներ, որոնց հեղինակներն են Թ. Էմիրճիզանը, Էմիլ Քոռան: Հոդվածներում հաստատվում է այն միտքը, թե հայրենիքը մեր ամենաթանկ հարստությունն է, քանզի այն է, որ «մեզ կը ծնի, նիւթական և մտաւոր էութեան անհրաժեշտ եղող սննդական, մտաւորական եւ բարոյական պէտքերը կը հոգայ, կը սորվեցնէ մեր լեզուն, մեր բարքերը, մեր ցեղային յատկանիշները»: Եվ ուրախալի է, գրում էր թերթը, որ այժմ մենք ունենք գիտակից երիտասարդություն, որը դաստիարակված է ազգային առողջ գաղափարներով (1914, հնվ. 21):

Բժշկական բաժինն անդրադառնում էր այդ ասպարեզում կատարված նորություններին: Բժշկական և բանասիրական բաժինները շատ փոքրածավալ էին, ինչը ոչ թե հետևանք էր թերթի հրատարակիչների կամ խմբագրի անտեղյակության, այլ նպատակ ուներ, այն է՝ օգնել ֆրանսահայ բավական մեծաքանակ գաղութին միաբանվելու (1914, մրտ., 12): Ընդհանրապես փարիզահայ ներքին կյանքը, նրա առօրյան, բոլոր անցուդարձերը՝ իր գրական և քաղաքական կողմերով հանդերձ, մշտապես մտահոգում էր «Հայ կեանքին», ուստի, գրեթե բոլոր առաջնորդող հոդվածներով պարբերականն անդրադառնում է այդ խնդրին: Այդ նյութերից տեղեկանում ենք, որ Փարիզում արդեն իսկ 1913 թ. գործում էր «նիւթապէս բար-

գաւած գաղութ մը»՝ իր սոցիալական բազմաշերտ կազմով: Այստեղ կողք կողքի ապրում ու գործում էին և՛ ուսանողներ, և՛ վաճառականներ, և՛ մտավորականներ: Սակայն «ֆրանսական ոստանին մէջ» նրանք ապրում և գործում են «ցիր ու ցան արուած, մէյ մէկ անկիւն մտած», որի հետևանքով ճշգրիտ հայտնի չէ նույնիսկ Փարիզի հայ համայնքի թվաքանակը (1914, մրտ. 12): «Հայ կեանքը» ցանկանում է տեսնել միասնական հզոր գաղթօջախ և պատրաստ է իր ուժերի ներածին չափով նպաստել այդ միասնության կայացմանը: Պարբերականը պատրաստ է «ցրուած գաղութի հայութեան մէջ ամրացնել իրենց ծագման կապը եւ խաղաղեցնել իրար դէմ պայքարող հայ կուսակցութիւններուն»: Զարգացնելով իր ընտրած այս գիծը, «Փարիզի հայ գաղութը» հոդվածի մեջ «Հայ կյանքի» հրատարակիչները վրդովմունք են հայտնում, որ ֆրանսահայ գաղութը վարկաբեկել է իրեն՝ իր նկատմամբ «անարգանք և զզուանք առաջացնելով» ֆրանսիացիների մեջ: «Եվ եթէ մեր բոլոր մեղքերուն վրայ՝ զզուելի ազգ մ՚ալ դառնանք, ալ ինչ պիտի ըլլայ մեր վիճակը. մենք, որ բոլոր մարդոց համակրանքին պէտք ունինք, քանի որ հայրենիք չունինք, և նոյնիսկ ազգային միութիւն մը չունինք» (1913, նոյ. 16): Պարբերականն ունի իր հստակ դիրքորոշումն այս հարցում՝ հետևել բուլղարացիների օրինակին և համախմբվել ազգային եկեղեցու շուրջ:

«Հայ կեանքը» անդրադառնում է նաև ֆրանսահայ մշակութային առօրյային, որին նվիրված շարքը բացվում է Հայոց գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակին նվիրված՝ 1913 թ. Փարիզում կազմակերպված տոնախմբության լուսաբանմամբ: Տոնակատարության նախաձեռնողը Փարիզի հայ ուսանողների միությունն էր: Հանդիսությունը տեղի ունեցավ Սորբոնի համալսարանի Ռիշելյե սրահում, պ. Լյարդի պատվավոր նախագահությամբ: Տոնակատարությանը իրենց մասնակցությունն էին բերել ոչ միայն մեծ թվով հայեր (շուրջ 400 մարդ), այլև բավական թվով ֆրանսիացիներ: Ներկաների թվում էին Պողոս Նուբար փաշան իր որդու հետ, բանախոս Դավիթ-Բեկը, Ա. Չոպանյանը, Բարսեղ Շահպազը և ուրիշներ: Մեկնաբանելով հանդիսությունը, պարբերականը գրում է, որ կուսակցական և դասակարգային անհամերաշխությունը կրկին անգամ խարխլեցին գաղթօջախի անդորրն ու միասնակա-

նությունը, մինչդեռ սա այն տոներից մեկն էր, որ պետք է տոնվեր «Համախորհուրդ»:

Շաբաթաթերթն առանձնակի ուշադրությամբ ներկայացնում և քննարկում է 1912–1914 թթ. հայկական բարենորոգումների խնդիրը: Դա պայմանավորված էր ինչպես արևմտահայության վիճակի ծանրացումով և ուղեկցվող կոտորածներով, այնպես էլ 1912 թ. Հայկական հարցի վերաբացումով: Հարցի լուսաբանումը թերթում կատարված է տարբեր տեսանկյուններից: Դրա վկայությունն են բազմաթիվ հոդվածներն ու հոդվածաշարերը, որոնց թվում էին Մելիքսեթ Դավիթ-Բեկի «Հայուն աստղը կը պլպլայ», «Արձագանգ», «Հայկական հարցի շուրջ», Թ. Էմիրճիհանի «Հայկական հարցը», «Հայկական հարցը, ինչ կ՚ըսէ խոհականութիւնը», ինչպես նաև «Հայկական բարենորոգմանց շուրջ» (Comite de l'Asie francaise-ի վերջին բանաձևն ու Հայաստանի բարենորոգումների ծրագիրը):

Մելիքսեթ Դավիթ-Բեկի հոդվածների շարքը շոշափում է խնդրի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կողմը: Այսպես՝ «Հայուն աստղը կը պլպլայ» հոդվածում հեղինակը փորձում է համոզել, որ երկրի տնտեսական զարգացումը, որը տվյալ պարագայում կապված է երկաթուղու անցկացմանը, ոչ միայն կնպաստի Արևմտյան Հայաստանի տնտեսական զարգացմանը, այլև իր հերթին կհանգեցնի ապահովության, խաղաղության, կարգ ու կանոնի հաստատմանը՝ «երկիրը նոր ձեւ, նոր կերպարանք կը ստանայ»: Հետևաբար, եզրակացնում է հեղինակը, «երկաթուղին հայուն փրկիչը պիտի ըլլայ»:

Անդրադառնալով խնդրի քաղաքական կողմին, Մելիքսեթ Դավիթ-Բեկը քննում է «Le Temps»-ի խմբագրին Ռուսաստանի արտաքին գործնախարար Սազոնովի տված հայտարարությունը: Վերջինս հայտարարել էր, որ ռուսական կողմի անշահախնդրությունը ու Թուրքերի շահը պահանջում են, որ «Ասիական Թուրքիայ մէջ տիրէ բարուոք վարչութիւն մը»: Զարգացնելով այս թեման «Հայկական հարցի շուրջ» հոդվածում, հեղինակը շեշտադրում է, որ մեծ պետությունները արդեն համաձայնության են եկել «Հայաստանի մէջ եւրոպական պետութիւններէն երաշխաւորուած բարենորոգումներու ներմուծման անհրաժեշտութեան մասին»: Ուշագրավն այն է, որ «Հայ կեանքի» հրատարակիչները ոչ միայն փորձում են կանխատե-

սումներ անել բարեփոխումների հիմնական դրույթների վերաբերյալ (բարեփոխումները կաղապարված կլինեն կամ «1895 թ. մայիսյան ծրագրին, կամ 1905–1906 թթ. մակեդոնական բարենորոգչական ծրագիրներու վրայ»), այլև առաջարկում են Եվրոպայում ստեղծել «զօրաւոր օւկան մը», որի հիմնական նպատակը պետք է դառնա «Թուրքական մեքենայութիւններ» մերկացումը: Նրանց կարծիքով այդ դերը ստանձնել է Փարիզում գործող «Pour les peuples d'Orient» կազմակերպությունը, որը սկսել է նաև «Pro Armenia» թերթի հրատարակությունը:

«Հայ կեանքի» աշխատակիցները համոզված չէին, որ բարենորոգումների գործը կհասնի իր ավարտին, ուստի կոչ են անում եվրոպական համերաշխություն կազմող պետություններին՝ լինել ավելի վճռական և ցույց տալ, որ «երբեմն ձեր ուզածն ընելու կարող եք»: Միաժամանակ պարբերականը իրավացիորեն նշում է, որ Բ. Դուռը հոժարակամ նման բարեփոխումների չի դիմի. «100 տարուայ դառը փորձը ապացուցած է, որ Բ. Դռնէն բարենորոգումներ սպասելը նոյնքան հիմարութիւն է, որքան գետի մը հոսանքը կասեցնել փորձելը» (1913, հոկտ. 25): Պարբերականը փորձում է բացահայտել մեծ պետությունների շահերը: Շարքի մի ենթավերնագիր ամբողջությամբ վերաբերում է Գերմանիայի դիրքորոշմանը («Գերմանացիք Հայաստանի մէջ»): Հեղինակը վերլուծում է Գերմանիայի քաղաքականությունը այս հարցում: Նա համոզված է, որ վերջինիս կողմից հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ նրա փոփոխվող վերաբերմունքը պարզապես բխում է իր շահերից:

«Հայ կեանքը» հատուկ վերաբերմունք ուներ նաև Ռուսաստանի հանդեպ: Պարբերականը ծանոթ է ինչպես այդ տարիներին հայերի անհավատարմության և անջատողական ումերի մասին Ռուսաստանի ազգայնականների կողմից տարածված մտայնությանը, այնպես էլ՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի՝ ցարին ուղղված զեկուցագրի բովանդակությանը, որի վերլուծությունը ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Հայերն անջատողական ոգի չունին», հետևաբար նրանք հուսալի դաշնակիցներ են: Կովկասի փոխարքան շեշտադրում է, որ «Հայկական խնդիրը» ստեղծվել է իրենց իսկ ռուսների կողմից, և որ հայերի կողմից Արևելյան Հայաստանում առաջացած ազգային շարժման հիմնական պատճառը

ցարական իշխանությունների անհեռատես քաղաքականությունն է, որն արտահայտվել է նաև «ազգային եկեղեցու կալուածքներու» գրավումով: Եվ չնայած այս ամենին, Վորոնցով-Դաշկովը համոզված է, որ Կովկասի հայերը «փափաք չունին» Ռուսաստանից ազատուելու, և դեռ ընդհակառակը՝ «Թուրքիոյ հայերն իսկ ռուսական պաշտպանութիւնը կը փնտրեն»:

«Հայ կեանքի» կարծիքով, բոլոր պետություններից միայն Ռուսաստանն է, որ իսկապես շահագրգռված է հայկական բարենորոգումների իրականացմամբ: Նա ուշի-ուշով հետևում է բարենորոգումների խնդրի ընթացքին. ոչ միայն մանրամասն ներկայացնում է իրողությունները, այլև հանգամանորեն քննարկում դրանք: Նշելով, որ չնայած գոյություն ունեցող որոշ տարաձայնությունների, համաձայնությունը Բ. Դռան ու Ռուսաստանի միջև «արդէն գոյացած է», նա կոչ է անում չխանդավառվել: Կարծես շարունակելով այդ միտքը, նրա աշխատակիցներից մեկը՝ Թ. Էմիրճիհանը իր «Հայկական հարցը» վերլուծական հոդվածում ավելացնում է. «Հայկական բարենորոգումները ոտքի են հանել հայրենասէր Թուրքերին»: Ճիշտ է, շարունակում է նա, Կոկովցեը Պողոս Նուպար փաշային հավաստել է Ռուսաստանի որոշումը հայկական բարենորոգումների առթիվ, բայց որքանո՞վ է լուրջ և ամուր եվրոպական համերաշխությունը: Միևնույն ժամանակ պարբերականը համոզված է, որ ամեն ինչ չէ, որ հնարավոր է կարգավորել Ռուսաստանի և Եվրոպայի միջոցով, քանզի այժմ Թուրքիան «նման է ծովն ընկած մարդու», որը ցանկանում է իր հետ խեղդել նաև հայերին: Կհաջողի դա իրեն, թե ոչ, կախված է մեծ տերությունների կամքից: Սակայն «Հայ կեանքը» կրկին մնում է իր ճշմարտացի դիտարկմանը հավատարիմ. «աղմուկը ոչ թէ մեկ համար է, այլ ամէն մարդ իր ջրաղացը կը դարձնէ»:

Հայկական բարենորոգումների խնդրի լուսաբանման շուրջ բերվում են ևս մի քանի բանաձևեր, որոնցից մեկը ընդունվել էր Comite de l'Asie francaise-ում 1913 թ. նոյեմբերին Փարիզում կայացած նիստում: Բանաձևում ոչ միայն շեշտվում էր բարենորոգումների անհրաժեշտությունը, այլև «հաշվի առնելով անցյալի դառը փորձը» առաջարկվում էր, որ մեծ պետությունները «չօգնեն Թուրքիային, եթե վերջինս չընդունի բարենորոգումների ծրագիրը»: Բա-

նաձևի տակ ստորագրել էին դր. Լեփսիուսը, Ռորբախը, Կոնները, Անտոն Ջերմանը և ուրիշներ:

Հաջորդ բանաձևը ընդունվել էր Եվրոպայի դաշնակցական ուսանողական միության համաժողովում, որը նույնպես գումարվել էր Փարիզում: Ի տարբերություն առաջին բանաձևի, այս երկրորդը ավելի չոր և մեղադրալից էր խոսում Եվրոպայի մասին: Ընդունելով բարեփոխումների անհրաժեշտությունը, շեշտվում էր, որ Եվրոպան «պարտաւոր է զբաղիլ հայկական ճակատագրով և վերջնական լուծում մը տալ հայ դատին», այլապես հայերի նոր կոտորածների դեպքում պատասխանատվությունը կկրի ոչ միայն Թուրքիան, այլև Եվրոպան: Վերոնշյալ կազմակերպությունները, ինչպես նաև ինքը՝ շաբաթաթերթը, զգուշացնում էին ավելորդ խանդավառությունից (1913, դեկտ. 8):

Անհրաժեշտ է նշել, որ Հայկական հարցի լուսաբանումը զբաղեցնում է «Հայ կեանքի» հրատարակիչների, խմբագրի և աշխատակիցների ողջ ուշադրությունը, ինչից իրավացիորեն կարելի է նկատել, որ նրանք լրջորեն մտահոգված էին հարցի կարգավորման խնդրով: Միևնույն ժամանակ դա ևս մեկ անգամ վկայում է, որ արևմտահայության վիճակը գնալով էլ ավելի էր ծանրանում, և որ ահազանգվող վտանգը հեռու չէր:

Հայկական հարցի թեմատիկային է առնչվում «Առօրեայ կեանք» բաժինը, որտեղ զետեղված հոդվածները նպատակ ունեն էլ ավելի պարզաբանելու ստեղծված կացությունը: Այսպես, Հայրենասեր Պերճի «Հայ և Թուրք հարաբերութիւնները» հոդվածում ներկայացվում է հայերի և թուրքական իշխանությունների դիրքորոշումը: Ըստ հեղինակի՝ հարաբերությունների լարման հիմնական պատճառը հետևյալն է. հայերը, ընդամենը, պահանջում են գործադրել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը և 1895 թ. բարեփոխումների ծրագիրը, իսկ թուրքական կողմը, ինչպես միշտ, խոստումներից այն կողմ չի գնում:

Ճ. Ռիվերի «Հայաստանի բարենորոգումների շուրջ» հոդվածում այդ մոտեցումը ավելի է ընդգծվում: Ռիվերը նույնպես արձանագրում է, որ հայ ժողովրդի ազատագրական ձգտումների նոր զարթոնքը առաջին հերթին պայմանավորված էր իշխանություննե-

րի կազմակերպած կոտորածներով, քանզի «Հայ ազգը՝ Թուրքիայի ամենախաղաղ հպատակներն էին»:

«Հայ կեանքը» իր ուշադրության կենտրոնում է պահում նաև բարենորոգումների ծրագրի վերաբերյալ ողջ բանակցային ընթացքը: Նա ոչ միայն հանդես է գալիս իբրև դեպքերի ժամանակագիր, այլև փորձում է իր ունեցած հնարավորությունների սահմանում տալ ընդունված որոշումների մեկնաբանությունը, որը շատ դեպքերում համապատասխանում է իրականությանը:

Այսպես, դեկտեմբերի 29-ի և 30-ի Կ. Պոլսից և Բեռլինից ստացված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ Թուրքական իշխանությունները, որոշակի վերապահումներով, սակայն սկզբունքորեն ընդունել են ռուսական և գերմանական դեսպանների ներկայացրած ծրագիրը (1914 թ. հունվարի 20-ի՝ Կ. Պոլսից եկած նոր տեղեկատվությունը հաստատում է, որ Բ. Դուռը վերջնականապես ընդունել է առաջարկված ծրագիրը): «Հայ կեանքի» կարծիքով հայկական դատը վերածվել է ռուսական դատի, որին, ի տարբերություն Ֆրանսիայի և Անգլիայի, «մեծ փութկոտութիւն մը ցոյց տուաւ աջակցելու» Գերմանիան: Ինչ վերաբերում է Բ. Դռանը, ապա, պարբերականի պնդմամբ, Բ. Դռան զիջողականությունն ունի իր հեռուն գնացող նպատակները՝ Արևմտահայաստանը երկու մասի բաժանելու պարագայում մեծ մասը դնել Գերմանիայի հովանու տակ և, ընդգրկելով Տրապիզոնը, ավելացնել մահմեդական բնակչության թիվը: Սակայն «Հայ կեանքը» հույս ուներ, որ վերջապես կտեսնի բարենորոգված Հայաստանը, «որ հայուն փրկութիւնը պիտի ըլլայ և ռուս դիվանագիտութեան յաղթանակը»:

Ժամանակագրության տեսքով ներկայացնելով հայկական բարենորոգումների ողջ ընթացքը, պարբերականը անդրադառնում է նաև 1914 թ. փետրվարի 8-ին ընդունված Ռուս-թուրքական համաձայնագրի դրույթներին:

«Հայ կեանքի» ենթաբաժիններից մեկ ուրիշը ևս գրավում է հետազոտողի ուշադրությունը: «Յետադարձ ակնարկ մը» խորագրի տակ, անշուշտ «Հայ կեանքի» տեսանկյունից, վերլուծության են ենթարկվում 1896-ից մինչև 1908 թ. Փարիզում հրատարակված Հայ թերթերը: Պարբերականներին տրված գնահատականներից հատուկ երևում է «Հայ կեանքի» կողմնորոշումը, թեև վերջինս հանդես է

գալիս որպես անկախ, ազատ պարբերական: Թերթը բարձր է գնահատում «Նոր Հանդէսը» (նախաձեռնել էին Փարիզի ՀՅԴ ուսանողները), «Բանասէրը» և «Համալսարանը», և ափսոսանք հայտնում, որ վերջիններս փակվեցին նյութական պատճառներով: «Ժողովուրդին Համարը» ներկայացվում է որպես պահպանողական օրգան, որը «նոյնիսկ հայ ազգայիններու կողմէ չընդունուեց»:

Ինչպես իր ժամանակի մյուս պարբերականները, «Հայ կեանքին» երկար կյանք չէր վիճակված, և չնայած դրան, նա կարող է համարվել իր ժամանակի իրողությունները արտացոլող սկզբնաղբյուրներից մեկը 1912–1914 թթ. Հայկական Հարցի լուսաբանման առումով: Պարբերականը Ֆրանսիայի հայ ուսանողության և երիտասարդության ազգանվեր ու հայրենասիրական պոռթկումն էր, սակայն, այն նյութական պատճառներով դատապարտված էր վաղօրոք փակվելու:

«ՋԷՅԹՈՒՆ» (1920)

Առաջին աշխարհամարտի տարիներին, և ընդհուպ մինչև 1919 թ., բացառությամբ մեկ-երկու պարբերականների, Ֆրանսիայում հայ թերթեր կամ հանդեսներ լույս չեն տեսնում: Դրա պատճառները անկասկած ոչ միայն պատերազմական գործողություններն էին և քաղաքական կացությունը, այլև 1915 թ. արևմտահայության կոտորածը: Երիտթուրքերի կողմից իրականացված Մեծ եղեռնը և դրան հետևող ջարդերի շարունակությունը խլեց հայ ժողովրդից նրա մտավորականության փայլուն շատ դեմքերի: 1919 թ. սկսած, ոգեշնչվելով Հայաստանի Հանրապետության գոյության փաստով, մեկը մյուսի հետևից երևան են գալիս բազմաթիվ պարբերականներ: Ու թեև նրանց մի մասը, ինչպես և դարասկզբին, զուտ գրական-գիտական ուղղվածություն ուներ, այնուամենայնիվ բոլորը միաբերան քարոզում էին հայրենասիրություն, միասնություն, Արևմտյան Հայաստանի ազատագրում ու Միասնական Հայաստանի ստեղծում:

Այդ պարբերականներից մեկն էլ «Զէյթուն» գրական հանդեսն էր, որ լույս է տեսել 1920 թ. Փարիզի Արևելյան լեզուների վարժարանի ուսուցիչ, նախկինում «Հայ կեանք» պարբերականի աշխա-

ակից՝ Գ. Տեովլեթի (Գ. Տ. Գեորգյան) խմբագրությամբ: Արտոնատերը Գուստավ Դումանն էր: Հրատարակիչների մտահղացմամբ պարբերականը պետք է լույս տեսներ տարեկան տասը համար՝ 8 էջ ծավալով:

Հանդեսի պատկերազարդ շապիկը ներկայացնում էր Զեյթունի մի գեղեցիկ տեսարան: Նկարի առջևի ձախ անկյունում պատկերված էր զեյթունցին իր տարազով: Շապկի նկարազարդումը կատարել էր Ռ. Շիշմանյանը: Վերջինս հետագայում աշխատակցել է «Օշականին» և վարել պարբերականի գեղարվեստական բաժինը:

Հանդեսի առաջին և երկրորդ համարները լույս են տեսել միասնական 1920 թ. հունվարի 1-ին: Ցավոք, հնարավոր չեղավ պարզել, թե բացի Տեովլեթից ովքեր են աշխատակցել հանդեսին, սակայն մենք գիտենք, որ «Զեյթունը» իր գործակալներն է ունեցել Ադանայում (Մարկոս Քեշիշյան) և Ամերիկայում (Երվանդ Տ. Մկրտչյան):

Ինչպես այլ գրական պարբերականներ, «Զեյթունը» սկսվում էր հայ գրականությանը նվիրված վերլուծական հոդվածով, որին հաջորդում են գրական բաժնում տեղ գտած նյութերը՝ նկարագրություններ, հուշեր, վիպակներ, բանաստեղծություններ (դրանց մի մասը թարգմանություններ էին ռուսերենից, ֆրանսերենից և այլն), և ավարտվում առաջին աշխարհամարտին առնչվող որևէ հիշատակությամբ:

Տեովլեթը այն կարծիքին էր, որ ժամանակի պահանջները փոխվել են, և այսօր կյանքի հրամայականն է քաղաքակրթվելը: «Այսօր ազգի մը արժեքը, մինչև իսկ իր գոյութեան իրաւունքը կը չափուի, պէտք է չափուի, իր քաղաքակրթուելու ընդունակութեամբ»: Հանդեսը համոզված է, որ նույնիսկ օտար ազգերի լծի տակ գտնվող ժողովուրդները, ինչպիսին նաև մեր «փոքրիկ ազգն է», իր արժանավոր տեղն ունի «ապագային յիշատակ ձգելու» համար: Մեր գլխավոր «արժանիքներն են լեզու, կրօն, երաժշտութիւն, և այս ամէնի գմբեթը կազմող հայ գրականութիւն»:

Տեովլեթն համոզված է, որ հելլենական մշակույթից և քրիստոնեական ավանդույթներից սնված հայ գրականությունը ստեղծել է այնպիսի գլուխգործություններ, որոնք բոլորովին չեն զի-

ջում հունա-հռոմեականին: Իր միտքը հաստատելու համար նա վկայակոչում է Մ. Խորենացուն:

Տեովլեթը համաձայն չէ այն տեսակետին, թե մեր գրականությունն աղքատ ու աղքատիմաստ է: Նրա համոզմամբ, մինչ այժմ ոչ ոք չի ուսումնասիրել հայ գրողների գրելաոճը, նրանց դավանած գաղափարները: Նման անտարբերության պատճառները երկուսն են՝ մենք, հայերս, դրա համար չենք ունեցել հարկ եղած միջոցներն ու ժամանակը, իսկ օտարները «չահեկան չեն նկատած անշուք ազգի մը անցեալ ու ներկա մեծութիւնները պրպտել եռանդալից»:

Հանդեսի նյութերի մյուս շարքը վերաբերում է հայոց արծվաբույն Զեյթունին: Շարքը սկսվում է «Զէյթուն» պատմանկարագրական հոդվածով, ուր քննության են առնվում Զեյթունի անկման պատճառները: «Դաւաճան եւրոպացիք» մեղադրվում են Զեյթունը զինաթափելու և կործանելու մեջ: Զրույցն ավարտվում է չհուսահատվելու և հարազատ Զեյթունը չմոռանալու կոչով. «Նրա մազապուրծ բեկորները թող յիշեն, որ երբ մի օր նրանք յետ վերադառնան, այն ատեն կը մերկանայ մայր Զէյթունը իր սուգի քողը և կը պայծառանայ իր նախկին փառքովը»:

Հաջորդ նյութը՝ «Ինչպես կռուեցան հայորդիները», մի նամակ է, որը նկարագրում է հայորդիների կռիվները այդ լմբոստ գավառակում: Զեյթունին վերաբերող վերջին նյութը գեղեցիկ հեքիաթ է՝ «Յավերժահարսը» թեմայով:

Հանդեսում թարգմանաբար տպագրվել են Տուրգենևի «Մանիկ» փոքրիկ պատմվածքը, Պուշկինի «Ձմեռային երեկոն», ինչպես նաև հայ հեղինակներից Պարույրի «Մայրամուտ» և Երվանդի «Գրագրիչ աղջիկը» բանաստեղծությունները: Համարը ավարտվում է «Քաղուածքներ 1916 թ. գարնանը Ֆրանսայի պատերազմական նախարարութեան մատուցած ընդարձակ տեղեկագրից» նյութի վերլուծությամբ:

Հաղորդագրությունը պատմում է առաջին աշխարհամարտի տարիներին եվրոպական տերությունների վարած քաղաքականության մասին: Ասվում է այն մասին, թե դաշնակիցների հայությունը դիմել էր դաշնակիցներին, հայկական կամավորական խմբեր կազմելու խնդրանքով: Նպատակն էր՝ «արշավել Թուրքիայի վրայ, մանաւանդ Կիլիկիոյ կողմը»: Խնդրանքը մերժվել էր, քանզի դաշնա-

կիցները շարունակում էին վարել «Թուրքիոյ հանդէպ հնացած քաղաքականութիւն»: Արդյունքում տեղի ունեցան կոտորածներ ու ջարդեր, մինչդեռ, հեղինակի կարծիքով, եթե ընդունվեին հայերի առաջարկությունները «պատերազմի աղէտներուն մեծ մասը յապաղուած պիտի ըլլար»: Նյութը պատմում է հայերի կողմից Ֆրանսիայի ռազմական նախարարությանը ուղղած դիմումի (1916 թ. հունիսի 1) մասին, որի արդյունքում ծնվեց «70 մեծադիր էջից և 31 յօդուածներից» բաղկացած տեղեկագիրը, որը կոչվում էր «Թուրքիոյ դերը ներկայ պատերազմին մէջ»: Դիմումի մեջ փորձ է արվում հաստատել, որ Աբդուլ Համիդը, չնայած իր դաժանությանը (խոսքը հայերի կոտորածների մասին է), բոլորովին էլ շահագրգռված չէր մտնելու պատերազմի մեջ: Նա իրեն լիովին ապահով էր զգում, քանզի ուներ և՛ ապահովություն, և՛ համապատասխան լծակներ, և՛ անհրաժեշտ գումար: Այլ է պատկերը երիտթուրքերի համար: Նրանք իրենց բոլորովին էլ հաստատուն չէին զգում, հետևաբար, նրանց պետք էր հուսալի դաշնակից, որի դերում էլ հանդես եկավ Գերմանիան: Անշուշտ, վերջինս տվյալ պարագայում առաջին հերթին առաջնորդվում էր իր սեփական շահերով:

Տեղեկագիրը տալիս է նաև թուրքերի բնութագիրը, ըստ որի, «Թուրքը, ինչպես որ տեսած ենք մենք Արևելքի մէջ և զգացած ենք մեր մորթին վրայ, ծանր և բթամիտ արարած մ՛ է երբ խնդիրը կը կայանայ պարկեշտ և քաղաքակրթական աշխատութիւն մը կատարելու մէջ, ընդհակառակն երևան կուգայ իբրև խելացի, խորամանկ և ծայրայեղօրէն անգութ երբ խնդիրը կը կայանայ ուրիշին առաջնորդ ծառայել իր գործունէութեան,... Պատրաստ է միշտ գործելու որևէ ոճիր՝ երբ անոր մէջ կը տեսնէ գործնական և անմիջական օգտակարութիւն մը...»:

Տեղեկագրի հեղինակները զարմանք են հայտնում, որ այդչափ առաջադեմ Ֆրանսիան չի տեսնում, կամ էլ չի ցանկանում տեսնել այս ամենը: Նրանց կարծիքով դրանում մեղավոր են նաև մի շարք թուրքամետ ֆրանսիացի գրողներ և պատմաբաններ: Ուստի կոչ է արվում ավելի լավ ուսումնասիրել արևելյան պատմությունը և համոզվել, որ քրիստոնյա ժողովուրդները, որոնք այդքան բան են արել թուրքական պետության զարգացման համար, գտնվում են շատ ծանր վիճակում:

Ի տարբերություն մյուս գրական պարբերականների, «Ջէյթուն» հանդեսը այդպես էլ չկարողացավ հարատևել իր կոչման մեջ: Ընթերցողների պակասը, մշտական աշխատակիցների բացակայությունը, ինչպես նաև նյութական միջոցների սղությունը պատճառ դարձան նրա փակմանը:

«ՕՇԱԿԱՆ» (1920–1921)

1920 թ. սեպտեմբերի 1-ից Փարիզում սկսում է լույս տեսնել գրական նոր պարբերական՝ «Օշական» կիսամսյա թերթը: Թերթի հիմնադիր-տնօրենն էր Արտաշես Հովհաննիսյանը, արտոնատերը՝ տիկին Ժաննա Շասենգը: Հիմնավորելով իր երևան գալու անհրաժեշտությունը, պարբերականը հայտարարում է. «Գրականութիւնը վճռական դեր մը կը կատարէ ազգերու քաղաքակրթութեան պատմութեան մէջ, և մեծ եղեռնէն վերապրողներուս նուիրական պարտականութիւնն է գիրի և գրականութեան սերը ներշնչել հասնող նոր սերունդին»:

Խմբագրական կազմը գտնում էր, որ «Օշականը» պետք է իր շուրջը հավաքի հայ գրականության «կարկառուն դէմքերը», անկախ կուսակցական պատկանելությունից և զբաղվի հայ գրականության, պատմության, գեղարվեստի, հայոց լեզվի անցյալի ու ներկայի ուսումնասիրությամբ: Հավատարիմ իր հայտարարությանը, պարբերականն իր էջերում տպագրում է Մինաս Չերազի, Ռաֆայել Զարդարյանի, Վահրամ Թաթուլի, Արսեն Երկաթի, Կարապետ Բասմաջյանի, Արշակ Չոպանյանի գործերը:

«Օշականն» առաջինն է, որ հայ ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում դեռևս 1905 թ. «La France Litteraire»-ում ֆրանսերենով ամբողջությամբ հրատարակված, սակայն հայերեն թարգմանությունը չունեցող Մինաս Չերազի «Շահնէնէ» վիպակը, որի հիմքում ընկած էր թուրքի հետ ամուսնացած երիտասարդ չերքեզուհու և հայ երիտասարդի սիրո պատմությունը: Հասկանալով, որ չերքեզուհին փորձում է գայթակղել իր որդուն, մայրը կարողանում է փրկել տղային ոչ խելամիտ քայլից, որը հղի էր ողբերգական հետևանքներով: Ուսուցանող այս վիպակը հետապնդում է հեռուն

գնացող դաստիարակչական նպատակներ: Նրանցից առաջինը որդիական սերն է, իսկ երկրորդը՝ խելամտությունը:

Ուշադրության են արժանի նաև Ռ. Զարդարյանի «Հայրիկիս» (չափածո) և Վ. Պեքեարյանի «Արարատ» բանաստեղծությունները: Երկու ստեղծագործություններն էլ շնչում են սիրով դեպի Հայրենիքը: Թե Հայրը, թե Արարատը Հայտարարվում են «մոլար սրտի միակ Հանգրվան, միակ խոչալ, կեանքի իմաստ ու սեր անսահման», ինչպես նաև «Հայութեան յոյսերուն, երազներուն օրրան, սիրոյ խորան, փառքի բարձունք»:

«Օշականի» 1-ին Համարում տպագրվել են նաև Արսեն Երկաթի «Մանկալ Համբոյրին», Ա. Աճեմյանի «Իրիկնային», ՎաՀրամ Թաթուլի «Աշնան տաղոտ» բանաստեղծությունները, Խ. Գավալչյանի «Լուռ Հիվանդը», Ա. Օհանյանի «Շամախի պարուհին» պատմվածքները: Ա. Օհանյանի գրվածքները մեծ արձագանք են գտել նաև ֆրանսիական մամուլում: Այսպես «La vie» Հանդեսը գրում է. «այս տաղանդաւոր Հեղինակի (տիկին Արմէն Օհանեանի) գրուածքները կեանքից առնուած արեւելյան պատկերներ էին և ծանօթութիւնը դրանց Հետ կօգնի ըմբռնել արեւելյան Հոգեբանութիւնն ու նկարագիրը»: «La Vie»-ն Ա. Օհանյանին սերտորեն կապում է Սաադիի, Ֆիրդուսու, Հաֆիզի Հետ: «Օշականում» տպագրվել են նրա գործերից երեքը՝ «Դիւթական պարտէզներուն մէջ», «Տարփուհին», «Վարդերու նուագումը»:

«Օշականը» չի անտեսում նաև Համաշխարհային գրականությունը: Պարբերականի առաջին Համարում տպագրվում են Հատվածներ Ռ. Թագորի «Պարտիզպան» ժողովածուից: Ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում վեց բանաստեղծություն, որոնցից առաջինը թարգմանել էր Շեքսպիրի անզուգական թարգմանիչ ՀովՀ. ՄասեՀյանը: Վերջինս Թագորի թարգմանությամբ Հանդես էր եկել նաև 1914 թ.՝ Բեռլինի «Մեհյան» Հանդեսում:

Հանդեսի էջերում կարելի է գտնել նաև ֆրանսերեն բանաստեղծություններ, որոնք պատկանում են թե Հայ, թե ֆրանսիացի բանաստեղծների գրչին: Վերջիններիս գործերը ժողովրդականացնելու Համար Հանդեսը Հայտարարում է նրանց Հայերեն թարգմանությունների մրցույթ:

Համարն ավարտվում է հայ արվեստագետների մասին ակնարկներով: Ներկայացվում են հայ երիտասարդ դերասաններ Մ. Ջանանյանի, Լ. Հարությունյանի հաջող ելույթների մասին ֆրանսիական մամուլում տեղ գտած արձագանքները, ինչպես նաև նկարիչ Արշակ Ֆեթվաճյանը (նկարչի լուսանկարը տպագրվում է «Օշականի» երկրորդ համարում): Նյութի հեղինակներ Կ. Բասմաջյանն ու Ա. Չոպանյանը քաջատեղյակ են մեծ նկարչի կյանքին և գործունեությանը: Հաղորդումներից տեղեկանում ենք, որ 1896–1904 թթ. Ա. Ֆեթվաճյանը բնակվել է Պետերբուրգում, ապա ցուցահանդես է ունեցել Վենետիկում, Հռոմում և այլուր: Նրա գործերը ցուցադրվել են Palazzo d'Arte-Moderna, Art Tegoratif սրահներում: Արշակ Ֆեթվաճյանը հեղինակել է նաև հսկայական ալբոմ, ուր հավաքված են Արևելյան Հայաստանի վանքերի, քաղաքների, եկեղեցիների գեղեցիկ ճակատազարդերը, քանդակները և այլն:

Պակաս հետաքրքիր չէ «Օշականի» 2-րդ համարը, ուր տեղ են գտել Արշակ Չոպանյանի «Առաքել Սիւնեցի» վերլուծական հոդվածը, Ավետիք Իսահակյանի «Քերթուածներ» բանաստեղծական շարքից հատընտիր, Արսեն Երկաթի, Ա. Գեղամի, ինչպես նաև հանդեսի գեղարվեստական բաժնի աշխատակից Ռ. Շիշմանյանի գործերը:

Եվրոպական գրականությունը ներկայացված է Ս. Լագերլոֆի «Հարսանեկան քայլերգ»-ով, որի թարգմանությունը կատարել էր Արմենակ Սալմասլյանը: Ինքը՝ հեղինակը, 1909 թ. արժանացել էր Նոբելյան մրցանակի:

Արշակ Չոպանյանի վերլուծական հոդվածը վերաբերում էր Առաքել Սյունեցու «Ադամգիրք»-ին, որի հիմքում սկզբնական մեղքի և մարդու անկման աստվածաշնչական ավանդավեպն է: Չոպանյանն այն կարծիքին է, որ Սյունեցին Կոստանդին Երզնկացու նման բնազդական բանաստեղծ չէ: Նա հմուտ, իր ժամանակի կարդացած և գիտուն մարդկանցից է: Սակայն «Ինչ որ Առաքելի քերթուածներուն արժէքը կ'ավելցնէ, այն է, որ Աստուածաշունչէն և եկեղեցւոյ հայրերուն գործերէն առած է իր «Ադամգիրք»-ին և անդէնի տեսիլներուն գլխաւոր նիւթեղէնները, ոչ միայն զանոնք իր ուզած ձեւով կերպարանափոխած, ընդլայնած, ոգեւորած է, այլև իր երկրին ու ժամանակին աւանդոյթներէն ու զրոյցներէն քաղուած տարրերով ճոխացուցած է»,- գրում է Ա. Չոպանյանը: Չոպանյանը զարմանք է

հայտնում, որ այդ ծանր ժամանակներում, Տաթևի վանքը կարողացել է «իր մտավոր և ազգային կենդանությունը պահպանել»:

Համարում տպագրվել է նաև «Օշականի» խմբագիր Ա. Հովհաննիսյանի 1919 թ. Փարիզում գրված «Եղսի քույրիկ» վիպակը, որի հիմքում ընկած է գյուղապետի դուստր Եղսիի և նրա նշանածի կտրիճ Ակոբի սիրո պատմությունը. Հայրենասեր երիտասարդը լքում է իր սիրեցյալին թուրքերի դեմ կռվելու համար և մի օր սպանվում չերքեզների ձեռքով:

«Օշականի» համարն ավարտվում է 1917 թ. Փարիզում հրատարակված նշանավոր հայագետ Ֆ. Մակլերի «France et Armenie a travers l'art et l'histoire» աշխատությանը նվիրված գրախոսականով, որի հեղինակը Ա. Գեղամն է:

«Օշականի» 5–6-րդ համարները լույս են տեսնում միասին: Միացյալ համարի էջերից մեկը նվիրված է «Հայկական ուսումնասիրությունների ընկերության» հիմնադրման խնդրին, որի նպատակը պետք է դառնար «... մղում մը տալու այդ տեսակ ուսումնասիրություններու և անոնց արդյունքը տեղեկացնելու համար»: Բացատրվում են ընկերության դերն ու առավելությունները լեզվաբանների, պատմաբանների, արվեստագետների և գրականագետների համար: Այն պետք է գործեր «հավաքույթներու միջոցով, և մանավանդ հրատարակութեամբ» և իր միջոցներով հրատարակեր տարեկան մեկ հատոր: Հատորը պետք է բաղկացած լիներ երեք բաժիններից և ունենար հետևյալ բովանդակային կառուցվածքը.

«ա) Բնագիրներ ու յուշագրութիւններ հայ լեզվի, գրականութեան, պատմութեան, գեղարուեստի և հնագիտութեան վերաբերեալ.

բ) Գրախոսականներ տարուայ մէջ Հայաստանի մասին եղած հրատարակութիւններու և գրադատական տեղեկութիւններ գլխաւոր երկասիրութիւններու մասին.

գ) Ժամանակագրութիւն մը հայկական ուսումնասիրութիւնները չհրատարակուող երեւոյթներու մասին»:

Ընկերությունն իր աշխատանքները ծավալում էր Ֆրանսիական վարժարանի և Բարձր արվեստների դպրոցի պրոֆ. Ա. Մեյեի և Արևելյան լեզուների դպրոցի պրոֆ. Ֆ. Մակլերի ու Հ. Լակրուայի միջոցով:

Գրական բաժնում տեղ գտած նյութերից, ուր տպագրվել են Մինաս Ջերազի, Արմեն Օհանյանի, Արսեն Երկաթի, Ա. Հովհաննիսյանի ստեղծագործությունները, առանձնանում է Մինաս Ջերազի «Արեւելեան պատմուածքներ» շարքից վերցված «Արմենաքի» պատմվածքը: Սա երջանիկ ավարտով սիրո մի պատմություն է: Արմենակ անունով մի հայ երիտասարդ փախչում է ծեր փաշայի կանանցից մեկի հետ: Հույների օգնությամբ նրանք հաստատվում են Սիրիայի կողմերում: Շուտով երիտասարդ թրքուհին քրիստոնեություն է ընդունում, պարգևելով իր սիրելի ամուսնուն 8 զավակ:

Հավատարիմ մնալով իր ծրագրին, «Օշականը» շարունակում էր ներկայացնել եվրոպական գրականության ընտրանին: Այս անգամ «Օտար էջեր» խորագրի տակ, տպագրվում են Անտոն Չեխովի «Քուն ունի» և Օսկար Ուայլդի «Բարերարը» պատմվածքները:

Համարի գիտական բաժնի նյութը վերաբերում է Լեոնարդո դա Վինչիին և նրա առնչություններին Փոքր Ասիայի հետ: Հայտնի է, որ 1482–1484 թթ. Լեոնարդո դա Վինչին, իբրև երկրաբան, քարտեզագետ, ճանապարհաշինարար Քայիդ բեյի հրավերով աշխատել է նրա մոտ: Պահպանվել են նրա նոթերը, ուր դա Վինչին տալիս է Սև ծովի, Տավրոսյան և Կովկասյան լեռների, Հայաստանի ու Կիլիկիայի մեջ իր անցկացրած օրերի նկարագրությունը: Հոդվածի հեղինակի կարծիքով, Լեոնարդո դա Վինչին «աւելի մեծ շահագրգռութեամբ մը աշխատած է Հայաստանի քարտէսին վրայ, նշանակելով Վանայ լիճը, Բարշարի լեռը և այլն», ու թեև «այս թանկագին վաւերագիրները անկատար են», դա բոլորովին չի նսեմացնում նրանց նշանակությունը:

«Օշականը» չէր կարող չարձագանքել հայ մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխություններին և տեղաշարժերին: Այս խնդիրներն են շոշափվում «Անհետացող դէմքեր», «Գիրքեր և դէմքեր» ու «Նոթեր» խորագրով բաժիններում:

«Անհետացող դէմքեր» շարքը ընթերցողին է ներկայացնում արևմտահայ գրականության գիտակ, Մ. Մատենճյանին և պոլսահայ տաղանդավոր բուսաբան Գեորգ Ազնավուրին: Վերջինս մեծ ճանաչում էր վայելում Եվրոպայում: Նա մենագրությունների, գրպանի բուսաբանական բառարանի հեղինակ էր: 1918 թ. Գ. Ազնավուրը հրատարակել էր Զիթունու Վանա բույսերի հավաքածուն,

ուր նկարագրել էր ավելի քան 300 նոր տեսակի բույսեր, դրոշմելով դրանք իր անվանմամբ Aznavour: Մեր հայրենակիցը կազմակերպել էր նաև 20.000 տեսակի բույսերի թանգարան, ինչպես նաև ֆրանսերենով հրատարակել «Cataloge general de l'Herbier Aznavour» (Ազնավուրի ծառատեսակների հիմնական կատալոգ), և «Aide-memoire de la Flore de Constantinople» (Կոստանդնուպոլսի բուսաշխարհի բառարան-տեղեկագիր) աշխատանքները:

Մշակութային կյանքի մյուս էջը նվիրված էր երգչուհիներ Բաբայան քույրերին, ինչպես նաև նույն տարիներին Ֆրանսիայում ցուցահանդեսներով հանդես եկած նկարիչներ Շ. Ադամյանին ու Փ. Թերլեմեզյանին:

«Օշականի» հավաստմամբ, 1920–1921 թթ. Բաբայան քույրերի գեղեցիկ ձայնը գերել էր ոչ միայն հայ, այլև ֆրանսիացի հանդիսատեսին, ինչը միաբերան հավաստում են ֆրանսիական «Comedie», «Figaro», «L'Avenir», «Gaulois», «Ere Nouvelle», «Le monde Musical», «Le Menestrel» պարբերականները: «Օր. Մ. Բաբայեան կը շարունակէ ծափեր խլել մասնաւորաբար ներկայացնելով հայ ժողովրդական երգերը եւրոպական գեղարուեստագէտ հասարակութեան»...

Ըստ պարբերականի, Շարլ Ադամյանի նկարների ցուցահանդեսը (շուրջ 78 կտավ) կազմակերպվել էր Galerie Alliard-ում, իսկ Փ. Թերլեմեզյանն իր կտավները ցուցադրել էր Սուֆլեի սրահում, որի վերնահարկում մարտի 26-ին կազմակերպվել էր նաև թեյասեղան: Ներկաների թվում էին Շիրվանզադեն, դոկտ. Լորիս-Մելիքովը, զորավար Անդրանիկը, Շահան Նաթալին, Մ. Ջանանը, Ռ. Շիշմանյանը, Ա. Սարմազյանը և այլք: Ցուցահանդեսները բարձր էր գնահատել ֆրանսիական կառավարությունը, որն Ադամյանից գնել էր «L'Ombrelle Rouge» կտավը:

Ինչպես ֆրանսահայ մյուս պարբերականները, «Օշականն» էլ երկար կյանք չունեցավ և դադարեց 1921 թ.:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ 1884–1920 ԹԹ.

Բուլղարահայ գաղթօջախում մամուլի և մշակույթի զարգացմանը մեծապես նպաստել են ինչպես Թուրքական լծից ազատագր-

ված բուլղարական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը, այնպես էլ հայ ազգային-ազատագրական շարժմանը նվիրված մտավորականների ու քաղաքական գործիչների ջանքերը: Նրանք, ապաստանելով Բուլղարիայում, հնարավորություն են ունեցել հրատարակել բազմաթիվ պարբերականներ՝ պատմական, գրական, քաղաքական ու մշակութային բովանդակությամբ:

Առաջին բուլղարահայ պարբերականը լույս է տեսել 1884–1885 թթ.: Դա Վառնայում Անդրանիկ Յոհաննեսկուի նախաձեռնությամբ ստեղծված "Huis" («Հույս») քաղաքական, ազգային, կրոնական և ուսումնական շաբաթաթերթն է: Այն հայ գաղթականության օրգանն էր և հրատարակվում էր լատինատառ հայերենով ու ֆրանսերեն: Թերթի պատասխանատու խմբագիրն էր Գ. Գասպարյանը: Սակայն այն անհասկանալի էր հայ համայնքների մեծամասնությանը: Հետևաբար 1885 թվականի մայիսին դադարեց լույս տեսնելուց: Հետագայում նույն տպարանում լույս տեսավ առաջին հայատառ «Իրաւունք» թերթը:

1885 թվականից մինչև 1920 թվականը բուլղարահայ գաղթօջախում լույս են տեսել 22-ից ավելի հայկական թերթեր, իսկ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը՝ 75 պարբերականներ:

Բուլղարահայ մամուլը զգալի զարգացում ապրեց դրսից՝ Կոստանդնուպոլսից, Մոսկվայից, Թիֆլիսից, Փարիզից, Մարսելից, Ժնևից և ԱՄՆ-ից ստացվող թերթերի և գրականության բարերար ազդեցության ներքո:

1903 թ. ընդլայնվեց Կովկասում հրատարակվող հայկական թերթերի մուտքը բուլղարահայ գաղթօջախ: Համայնքի հայերը այդ թերթերի միջոցով հաղորդակից էին լինում Արևելյան Հայաստանում և Ռուսաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի իրադարձություններին, իսկ հայրենասիրական ոգով դաստիարակվող աճող սերունդը՝ ազգային-ազատագրական գաղափարներին ու պայքարին:

XIX դարի վերջին բուլղարահայ համայնքն աշխույժ կապեր էր ստեղծել Արևմտյան Եվրոպայի, Կոստանդնուպոլսի, Անդրկովկասի, Ռուսաստանի և այլ վայրերի հայկական գաղթօջախների մշակութային ու քաղաքական առանձին գործիչների և թերթերի խմբագրությունների հետ: Բուլղարահայ գաղթօջախում մեծ աշխուժութ-

յուն առաջացրից Մարսելում լույս տեսնող Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիա» ամսաթերթը (1885–1923 թթ.): 1898 թ. Վառնայում հնչակյան գործիչ Ս. Սապահ-Գյուլյանի խմբագրությամբ լույս է տեսնում հնչակյանների «Աշխարհ» շաբաթաթերթը:

XX դարի սկզբին Տիգրան Ճգնավորյանը Ռուսեում հրատարակում է «Հայաթերթ» լրագիրը: 1898 թ. Վառնայում լույս է տեսնում «Տարոս» շաբաթաթերթը, որի խմբագիրն էր Զեյթունի գործիչներից Հարություն Չաքըրյանը: 1898 թ. նույն քաղաքում լույս է տեսնում ՀՅԴ բուլղարահայ կենտրոնական կոմիտեի օրգան «Շարժումը»՝ Տիգրան Աճեմյանի խմբագրությամբ: Բուլղարիայում գործող հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը 1920 թ. Վառնայում հրատարակում է «Լուսարձակ» օրգանը՝ Սիմոն Պենյանի խմբագրությամբ (29-րդ համարից՝ Տիգրան Մարտիրոսյան): 1920 թ. հուլիսի 15-ին Պլովդիվում լույս է տեսնում սփյուռքահայ անդրանիկ հայ կոմունիստական պարբերականը՝ «Կարմիր լուրեր»: Գաղթօջախում հրատարակվող թերթերն ու ամսագրերը հիմնականում քաղաքական երանգ ունեին, հանդիսանում էին հայ քաղաքական կուսակցությունների (արմենական, հնչակյան, դաշնակցության, ռամկավարների և հայ կոմունիստների) օրգանները: Մամուլի էջերում հրապարակվում էին հայրենասիրական, ազգային-պատմագրական և սոցիալական հարցերին նվիրված հոդվածներ: Ներշնչման աղբյուրը հայրենիքի ազատագրման ու կարոտի զգացմունքներն էին:

Բուլղարահայ գաղթօջախում առաջին հայատառ հայկական թերթը հասարակական-քաղաքական եռօրյա «Իրաւունք» պարբերականն էր ֆրանսերեն հավելվածով: Այն լույս տեսավ 1885 թ. Վառնայում չորեքշաբթի և շաբաթ օրերին, Հակոբ Մավիյանի և Թագվոր Փափազյանի խմբագրությամբ: Թերթը հրատարակում էր «Իրաւունք» լրագրոյ հայրենասիրաց ընկերութիւնը»: Թերթի էջերում հիմնականում քարոզվում էին հայրենասիրական գաղափարներ և պայքար օսմանյան բռնության դեմ: Որպես ազատության ուղի, մատնանշվում էր Բուլղարիայի օրինակը: «Իրաւունքը» մերկացնում էր օտար դիվանագիտության վարքագիծը, նրա երկերեսանի ու սին խոստումները Հայկական հարցի լուծման վերաբերյալ: Թերթը ապացուցում էր ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատ-

մուլթյան, անցյալի փառապանծ էջերից՝ որպես օրինակ անկախության ու գոյատևման համար: «Իրավունքը» հանդես է եկել հոդվածաշարերով՝ ցարական իշխանությունների կողմից հայկական դպրոցների փակման առթիվ: Լայն տեղ է հատկացրել միջազգային քաղաքականության ու հայկական գաղթօջախների հասարակական-մշակութային կյանքին առանձին երկրներում: Թերթը գոյատևեց մեկ տարի և լույս տեսավ ընդամենը 24 համար: Նրա գլխավոր խմբագիր Հ. Մավիյանը 1918–1924 թթ. եղել է Հայաստանի առաջին Հանրապետության դեսպանը Բուլղարիայում: Այդ ժամանակաշրջանում նա հսկայական աշխատանք ծավալեց բուլղարահայ համայնքի ղեկավար մարմինների հետ քեմալական սվիններից մազապուրծ եղած և բռնագաղթած հայ տարագիրներին Բուլղարիայում ընդունելու և տեղավորելու գործում:

1896–1911 թթ. Վառնայում լույս է տեսնում նույնանուն «Իրավունք» թերթը, որի խմբագիրներն են եղել Հ. Կուրպեթյանը, Հ. Պոնճուգյանը, Հ. Խոշպուլյանը, Ս. Բվինը: Հակոբ Կուրպեթյանը միաժամանակ թերթի հրատարակողն ու տնօրենն էր: «Իրավունքը» սկզբնական շրջանում կիսաշաբաթաթերթ էր, իսկ 1909 թվականից՝ շաբաթաթերթ: Թերթը ունեցել է հայատառ թուրքերեն բաժին, նույն թվականին 6 համարներ լույս տեսան նաև առանձին՝ բուլղարերեն:

«Իրավունքը» շարունակեց իր նախկինի ավանդույթները, լույս ընծայեց հոդվածներ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության և հայ ազատագրական շարժումների միավորման և համագործակցման օգտին: Թերթը մերկացնում էր եվրոպական դիվանագիտության ու մամուլի դիրքորոշումը հայ դատի վերաբերյալ: Բազմաթիվ հոդվածներ էր տպագրում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման օգտին՝ շեշտելով նրա նշանակությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հաջողության գործում: Թերթի բազմաթիվ հոդվածներ ու առանձին բաժիններ նվիրվել են Կոստանդնուպոլսի հայ մամուլին ու համայնքին, Բուլղարիայի և Ռումինիայի հայկական գաղթօջախների առօրյային: Տպագրվել են պատմական, գրական-մշակութային հոդվածներ: Առանձնահատուկ տեղ է հատկացվել Հ. Լինչի «Հայաստան» աշխատությանը: Լայն բաժին է հատկացվել հայ թատերական կյանքին և մշակույթին ընդհանրապես:

«Խուզակ» երկշաբաթաթերթը 1897–1898 թթ. լույս է տեսել Վառնայում: Թերթն ունեցել է սոցիալ-դեմոկրատական ուղղություն: 5-րդ համարից հրատարակվել է Ռուսեում և հիմնականում տպագրել է թարգմանություններ, ֆրանսիական հեղինակների աշխատություններ: Լայնածավալ հոդվածներ են հրապարակվել նախ հեղինակների մասին, ապա առանձին բաժիններ՝ նրանց աշխատություններից: Տպագրվել են Լուի Բերտրանի, Ժան-Ժակ Ռուսոյի, Պիեռ Դենիի և այլ հեղինակների աշխատություններից: Ռուսեում 5-րդ համարը լույս տեսնելուց հետո, այն դադարեց ֆինանսական պատճառով:

«Շարժում» եռօրյա թերթը, դաշնակցության բալկանյան կենտրոնական կոմիտեի օրգանը, լույս տեսավ 1898 թ. փետրվարի 4-ին Վառնայում: Մինչև XIX դարի վերջը բուլղարահայ համայնքում հայ քաղաքական կուսակցություններից ոչ մեկը չուներ իր օրգանը: Նրանք ստանում էին իրենց կենտրոնական օրգաններ «Դրոշակը», «Հնչակը», «Արմենիան» և այլ պարբերականներ Կոստանդնուպոլսից, Ժնևից, Մոսկվայից և այլ հայկական գաղթօջախներից: Հետևաբար «Շարժումը» առաջին կուսակցական օրգանն էր, որ լույս տեսավ բուլղարահայ գաղթօջախում: Այս քաղաքական-հասարակական թերթի սկզբնական շրջանի խմբագիրներն էին Գամեր Արշավիրը (Վարդան Մեշտուճյան) և Երվանդ Շավարշը (Երվանդ Սրմաքեշխանլյան): Պատասխանատու խմբագիրն էր Խ. Թահմիզյանը: Թերթը տպագրվում էր Ն. Պետրովի տպարանում և լույս էր տեսնում չորեքշաբթի և շաբաթ օրերին:

«Շարժումի» 95-րդ համարից խմբագիրն էր Վարդան (Վարդ Պատրիկյան)՝ դաշնակցության բալկանյան կոմիտեի պատասխանատու անձը, որ լիազորված էր Արևմտյան բյուրոյի կողմից: Նրա ժամանակ պատասխանատու խմբագիրներն էին Տիգրան Աճեմյանը, Արմեն Սուքիասյանը, Մկրտիչ Վարդանը, Մուրադ Երանոսյանը, Ստեփան Կանարյանը և ուրիշներ: Որոշ աղբյուրների տվյալներով՝ «Շարժումը» 1907 թվականին, մինչև Վարդայի ահաբեկումը դաշնակցության կողմից, մի քանի համարներով լույս է տեսել Ռուսեում: Թերթը ունեցել է հավելված հայատառ թուրքերենով, թրքախոս հայերի համար: Այն տպագրվել է «Օրիենտալ» տպարանում: Հավելվածի պատասխանատու խմբագիրն էր Մկրտիչ Վարդանը:

1900 թվականին Պլովդիվում ակտիվ գործունեություն են ծավալում դաշնակցության հիմնադիրներ Ք. Միքայելյանը, Ռ. Զորյանը, ապա նաև Վ. Շահրիմանյանը, Կ. Պլոնյանը և Վ. Մանուելյանը: Նրանք բազմաթիվ հոդվածներով «Շարժումի» էջերում հրապարակում էին դաշնակցության գաղափարներն ու հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի կազմակերպման ձևերը: Հսկայական կազմակերպական աշխատանքին զուգահեռ բազմաթիվ հոդվածներ էին տպագրում հայ-բուլղարական և հայ-մակեդոնական համագործակցության և միասնական պայքարի մասին՝ ուղղված սուլթանական Թուրքիայի դեմ Մակեդոնիայի և հայ ժողովրդի ազատագրման համար: Ռոստոմ Զորյանի նախաձեռնությամբ թերթի էջերում թարգմանաբար տպագրվեցին Բուլղարիայում գործող մակեդոնական կազմակերպության (ՎՄՕՌՕ) ղեկավարներ Բ. Սարաֆովի, Դ. Գրուևի, Գ. Դելչևի և ուրիշների ելույթները առանձին հոդվածներով: Ամրապնդվող համագործակցությունը, որի արդյունքում հիմնվեց առաջին հայկական ռազմական դպրոցը Ռիլսկի վանքում, նրա սաներից Գարեգին Նժդեհը, Լիպարիտ Նազարյանը, Թորգոմը, Ռաշիդը ընդունվեցին Բուլղարական բարձրագույն ռազմական դպրոցը և ավարտեցին կրտսեր լեյտենանտի աստիճանով:

«Շարժումի» էջերում տպագրվում էին բազմաթիվ հոդվածներ համիդյան ջարդերից խուսափած և բուլղարական հողի վրա ապաստանած հայ գաղթականների տնտեսական ծանր վիճակի մասին: Երախտագիտության բազմաթիվ հոդվածներ են լույս տեսել հազարավոր հայերի նկատմամբ բուլղարական կառավարության ցուցաբերած հոգատարության մասին:

1907 թվականին «Շարժումը» դադարեց լույս տեսնելուց: Դրա փոխարեն Ռուբեն Զարդարյանը 1905 թվականին Պլովդիվում լույս ընծայեց դաշնակցության բուլղարահայ կազմակերպության հաջորդ օրգանը՝ «Ռազմիկը»:

Սասունի ապստամբության պարտությունից, Բաբը Ալիի անհաջող ցույցից, 1896 թ. Կարինի, Վանի, Տրապիզոնի հայկական կոտորածներից հետո 20000-ից ավելի հայեր ապաստանել էին Բուլղարիայում: Այստեղ հնչակյանները ծավալում են ակտիվ գործունեություն: Նրանք, չունենալով իրենց օրգանը բուլղարահայ գաղթօջախում, սկզբնական շրջանում իրենց հոդվածները Արևմտյան

Հայաստանի ազատագրման գաղափարներով տպագրում էին Հակոբ Կուրղինյանի «Իրաւունք» թերթում: 1898 թվականին, երբ հնչակյան գործիչ Ս. Սապահ-Գյուլյանը եկել էր Վառնա, նրա խմբագրությամբ լույս տեսավ առաջին հնչակյան օրգան «Աշխարհը» բուլղարահայ գաղթօջախում: Այս քաղաքական-հասարակական թերթը շատ կարճ կյանք ունեցավ: Շաբաթաթերթը մի քանի համարներից հետո դադարեց լույս տեսնելուց: Նրա էջերում հրատարակվում էին սոցիալիստական ուղղվածության հոդվածներ: Սակայն հիմնականում հոդվածների մեծ մասը քննադատական բովանդակությամբ, ուղղված էր դաշնակցության դեմ: Նախքան «Աշխարհի» հրատարակումը պայքարը դաշնակցության և հնչակյանների միջև սուր կերպով դրսևորվել էր «Իրաւունքի» և դաշնակցության օրգան «Շարժումի» էջերում, որը բացասաբար անդրադարձավ բուլղարահայ գաղութի կազմակերպական, կրթական-մշակութային կյանքի վրա:

1897 թ. Վառնայում Հակոբ Զաքրյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Կատակ» անկախ երգիծական եռօրյա թերթը, հինգշաբթի և կիրակի օրերին: Այն հրատարակվել է 20 համար և դադարել: Հետագայում Հակոբ Զաքրյանը, տեղափոխվելով Ռուսե, այստեղ 1898 թ. հրատարակում է «Տուրոս» շաբաթաթերթը: Այս թերթը սկզբում չեզոք դիրքորոշում ուներ, սակայն հետագայում պայքար ծավալեց դաշնակցության դեմ: Թերթը 19 համար լույս տեսնելուց հետո դադարեց ֆինանսական պատճառով:

1897–1902 թթ. Վառնայում լույս է տեսնում երկրորդ երգիծական շաբաթաթերթը, Տիգրան Փափազյանի խմբագրությամբ «Հայկին»: Թերթը ծաղրում էր հայ ընտանիքների քաղքենիական կենցաղը, բուլղարահայ քաղաքական կուսակցությունների բանավեճերն ու գործելակերպը: Տպագրում էր աֆորիզմներ ու անեկդոտներ: Թերթում լույս էին տեսնում Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններից: Բուլղարահայ գաղթօջախում այն լույս տեսավ 260 համար: Խմբագիր Տ. Փափազյանի Եգիպտոս տեղափոխվելուց հետո, Ալեքսանդրիայում շարունակել տպագրվել մոտավորապես մեկ տարի, 1903–1904 թթ. 261–304 համարներով:

«Դանուբ» հասարակական-գրական-քաղաքական երկշաբաթաթերթը Մկրտիչ Թյությունճյանի խմբագրությամբ լույս է տեսել

1891–1892 թթ. Ռուսեում: Թերթը քարոզում էր ազգային-ազատագրական գաղափարներ; օրինակներ բերելով բուլղարական և մակեդոնական ազատագրական պայքարից: Տպագրում էր Գոցե Դելչևի և Դամյան Գրուևի ելույթներից ու ճառերից Մակեդոնիայի ազատագրման մասին: Քարոզում էր համատեղ պայքարի ձևեր ու ռազմական գործողությունների օրինակներ՝ ուղղված թուրքական իշխանությունների դեմ: Թերթը լույս է տեսել ընդամենը 15 համար:

1903–1904 թթ. Հնչակյան կուսակցության ԿԿ մի քանի անդամներ՝ Ավետիս Նազարբեկյանի գլխավորությամբ տեղափոխվում են Բուլղարիա և Ռուսեում նախաձեռնում են «Վերածնութիւն» շաբաթաթերթի հրատարակումը՝ որպես Հնչակյան կուսակցության բուլղարահայ հատվածի օրգան: Թերթը Պ. Գալֆայանի, Մ. Տերտերյանի, Շ. Սուքիասյանի, Գ. Գափամաճյանի խմբագրությամբ լույս տեսավ Վառնայում: Սոցիալիստական գաղափարներով տոգորված շաբաթաթերթը համագործակցում էր բուլղարական Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար անդամների հետ և հոդվածներ տպագրում համերաշխության ու համագործակցության ոգով: Թերթում հոդվածներ էին հրապարակվում հայ և բուլղար սոցիալիստական կուսակցությունների ղեկավարների ու գործիչների՝ Դ. Բլագոևի, Վ. Կոլարովի, Ավ. Նազարբեկյանի, Մ. Վարդանյանի, Ռ. Խանազատյանի և ուրիշների մասին: Ընթերցողներին ծանոթացնում էին միջազգային սոցիալիստական շարժման առանձին կազմակերպությունների, Մարքսի, Էնգելսի կյանքին ու գործունեությանը:

«Վերածնութեան» լույս ընծայման առիթով Ս. Կասյանը Բեռլինից գրում էր. «Ձեր թերթի առաջին համարը կարդալուց հետո ստիպուեցի հրապարակօրէն շնորհաւորել Ձեր այդ փառաբանութեան արժանի ձեռնարկը...»: Նա կոչ է անում համախմբվել «Վերածնութեան» շուրջ և չլինել դիտողի դերում, այլ մասնակցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական և սոցիալական պայքարին:

Այդ թերթի մասին Ստեփան Շահումյանը գրել է. «Հնչակի կուսակցական լրագրերից մեկը՝ Բուլղարիայում հրատարակվող «Վերածնութիւնը», արդեն վաղուց իր առաջնորդողներում կոչ է անում նրանց դեպի համագործակցության՝ սոցիալ-դեմոկրատների հետ, թողնելով շովինիստական-նացիոնալիստական տրամադրությունները»: Թերթը լույս տեսավ ընդամենը 52 համար:

«Ռազմիկ» հասարակական, քաղաքական, եռօրյա թերթը դաշնակցության բալկանյան ԿԿ օրգանն էր, լույս է տեսել 1906–1909 թթ. Պլովդիվում, Ռ. Զարդարյանի խմբագրությամբ: Թերթը շարունակեց «Շարժումի» ավանդական քարոզչությունը, ազգային-ազատագրական պայքարի տարբեր փուլերի մասին: Անդրադարձավ ՀՅԴ գործունեությանը բուլղարահայ համայնքում և համագործակցությանը բուլղարամակեդոնական քաղաքական կազմակերպությունների հետ: Թերթում ընդարձակ հոդվածներ տպագրվեցին 1901 թ. հայ-մակեդոնական զինված խմբերի համատեղ մարտերի մասին թուրքական զինված ուժերի դեմ Արևելյան Թրակիայում, այդ մարտերում հերոսաբար զոհված Պ. Տերճյանի, Օ. Թորոսյանի, Ս. Մերջանովի, Հ. Հաջիկյանի մասին: Ծավալուն հոդվածներ տպագրվեցին 1905 թ. Վիթոշ լեռան վրա ռումբերի փորձարկման ժամանակ եղերական մահով նահատակված Ք. Միքայելյանի և Վ. Քենդրյանի մասին: Թերթը անդրադարձավ 1903 թ. Իլինդենյան և Պրեոբրաժենյան մակեդոնական ապստամբություններին և 1904–1905 թթ. Սասունի և Զեյթունի հերոսամարտերին, որոնք դիտում էր որպես խթան հայերի և մակեդոնացիների ազգային-ազատագրական պայքարի հետագա զարգացման համար: Հրապարակվեցին հոդվածներ հայ ժողովրդի պատմության, բուլղարահայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքի, ներքին ղեկավար մարմինների կազմակերպման և այլ հարցերի մասին: Առանձին հեղինակների և օտար հասարակական գործիչների հոդվածներ լույս տեսան համիդյան ջարդերի ու Ադանայի կոտորածների մասին:

«Հայաթերթ» անկախ հասարակական-մշակութային պարբերականը տպագրվում էր Տ. Ճանավարյանի խմբագրությամբ: Այս եռօրյա թերթի պատասխանատու խմբագիրն էր Մարտիկ Հովհաննիսյանը և լույս էր տեսնում 1903 թվականից Վառնայում: Մեկ տարի անց, 1904 թվականին այն հրատարակվում է Ռուսեում Ստեփան Մելքոնյանի, Տ. Ճգնավորյանի, Ա. Ալաճյանի խմբագրությամբ: Հիմնականում հրապարակվում էին հոդվածներ բուլղարահայ հասարակական-մշակութային կյանքից, բուլղարահայ դպրոց-վարժարաններում ուսուցիչների տնտեսական-սոցիալական վիճակի, տարեվերջի աշակերտական հանդեսների կազմակերպման և թատերական ներկայացումների մասին: Քաջալերանքի և գովեստի հոդ-

վածներ են տպագրվում բեմադրված լավագույն ներկայացումների և դերակատարների վերաբերյալ:

«Ձիթենի» մանկական նկարազարդ շաբաթաթերթը Հակոբ Շահվերդյանի խմբագրությամբ լույս է տեսել 1903–1904 թթ., Ռուսեում: Որոշ ժամանակ այն հրատարակվել է Բազելում, իսկ 11–13-րդ համարները՝ Սոֆիայում:

«Վիպաթերթ» ամսաթերթը հրատարակվել է Պ. Բեյլիքյանի խմբագրությամբ 1904–1906 թթ. Վառնայում: Այստեղ տպագրվել են օտարազգի և հայ հեղինակների վեպեր և պատմվածքներ:

«Ռահվիրայ» բուլղարահայ դպրոց-վարժարանների Ուսուցիչների միության օրգանը լույս է տեսել 1906–1907 թթ., նախ Շումլայում, իսկ 7-րդ համարից՝ Պլովդիվում: Ամսաթերթը ունեցել է խմբագրական կոմիտե, որի կազմում էին Ա. Ապազյանը, հայտնի փաստաբան և հասարակական գործիչ Ստ. Հինդլյանը, Մ. Քուլաքօղլյանը, Կ. Պիոնյանը և ուրիշներ: Թերթի պատասխանատու խմբագիրներն էին Ա. Իշխանյանը, իսկ Պլովդիվում՝ Գ. Վարդազարյանը, Ա. Պետելյանը: «Ռահվիրայում» լույս էին տեսնում մանկավարժական, գրական-պատմական բովանդակությամբ հոդվածներ: Առանձին հոդվածներում շոշափվում էին բուլղարահայ դպրոց-վարժարանների ուսուցիչների նյութական դժվարությունների հարցը, գրքերի և գրենական պիտույքների բացակայության, դասարանների կահավորման և առողջապահիկ պայմանների վիճակը: Բազմաթիվ հոդվածներով դպրոցական հոգաբարձության առանձին անդամներ քննարկում էին բուլղարահայ համայնքում կուսակցական պառակտումների, աղայական դասի վեճերի ու անտարբերության պատճառով դպրոց-վարժարաններում ստեղծված անբարեկարգ վիճակը: Թերթը մանրամասնորեն անդրադառնում էր համայնքի ներքին ղեկավարման մարմինների ընտրական արշավներին, թեմական և թաղական խորհուրդների գործունեությանը: «Ռահվիրան» գոյատևեց մինչև 1908 թվականը:

«Շաւիղ» գրական-գիտական երկշաբաթաթերթը լույս է տեսել Երվանդ Սրմաքեշխանլյանի խմբագրությամբ, 1900–1901 թթ. Վառնայում: Թերթը հրատարակվել է ընդամենը 20 համար:

«Հայաստան» հասարակական, գրական, քաղաքական եռօրյա թերթ, ՀՅԴ օրգանը, լույս է տեսել 1915 թ. Սոֆիայում: Առաջին

համաշխարհային պատերազմի ժամանակ հրատարակվեց ընդամենը 6 ամիս: Այն դադարեց բուլղարական կառավարության արգելքով: Թերթի պատասխանատու խմբագիրն էր Գրիգոր Վասիլևը, տնօրենը՝ Ղուկաս Մինասյանը, խմբագիրը՝ Արգումանը (Տիգրան Խաչիկյան): Թերթը տպագրվում էր Պետր Գլուշկովի տպարանում: Չորս տարի անց, 1919 թվականին «Հայաստանը» վերահրատարակվեց Օննիկ Վարդանյանի խմբագրությամբ՝ նույն տպարանում: Թերթը Սոֆիայում հրատարակվեց մինչև 1920 թվականի հունիսի 20-ը, այնուհետև փոխադրվեց Պլովդիվ և գոյատևեց մինչև 1925 թվականը, որպես օրաթերթ: Խմբագիրներ հաջորդաբար եղել են Լևոն Նազարյանը, Հովհաննես Տեվենյանը, Գրիգոր Փիլիպոսյանը: Կուսակցական ներքին կյանքը արտացոլող հոդվածներից զատ՝ «Հայաստանում» բազմաթիվ նյութեր են հրապարակվել բուլղարահայ հասարակական-մշակութային ու կրթական-դպրոցական բնագավառների, համայնքի ներքին ղեկավարման մարմինների կազմակերպման ու կատարելագործման մասին: Թերթը լուսաբանել է համայնքում գործող հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը, անդրադարձել Խորհրդային Հայաստանի ներքին կյանքի առանձին բնագավառների:

1920–1921 թթ. Հայաստանի Հանրապետության նախկին նախարարներն ու դաշնակցության ղեկավարները՝ Գարեգին Նժդեհը, Հովհաննես Տեվենյանը, Ռուբեն Դարբինյանը, Սիմոն Վրացյանը, Ալեքսանդր Խատիսյանը, Ամատունին և ուրիշներ ապաստանել էին Բուլղարիայում: Նրանք հայաշատ քաղաքներում բազմաթիվ ելույթներ էին ունենում ուղղված Խորհրդային Հայաստանի դեմ: Այդ ելույթները մեծածավալ հոդվածներով լույս էին տեսնում «Հայաստանի» էջերում: Հոդվածները խորացրեցին բուլղարահայ համայնքի պառակտումը և պայքարի սրումը ներքին ղեկավար մարմիններում: Թերթը այդ հոդվածներով կորցրեց իր հեղինակությունը գաղթօջախում, և 1926 թ. «Հայաստանին» փոխարինեց «Արաքսը»:

«Ապառաժ» ազգային, գրական, երգիծական շաբաթաթերթը լույս է տեսել Սոֆիայում, 1925 թվականին Արամ Գուրպեթյանի խմբագրությամբ: Թերթը հրատարակվել է ընդամենը չորս համար, Արարատ տպարանում:

«Պալքանեան մամուլ» հասարակական-քաղաքական եռօրյա թերթ, ՍԴ հնչակյան կուսակցության բուլղարահայ հատվածի օրգանը: Լույս է տեսել 1915–1922 թվականներին Ռուսեում, Էդուարդ Զոփուրյանի և Ա. Բալախյանի խմբագրությամբ: Թերթի հրատարակումը 1922 թ. Սոֆիա տեղափոխվելուց հետո շարունակվել է Հարություն Պողոսյանի խմբագրությամբ: Հրապարակում էր հոդվածներ սոցիալիստական ուղղվածությամբ: Արտատպում էր բուլղարական մամուլից, մասնավորապես ԲԲՍԴ կուսակցության, առանձին հոդվածներ Դիմիտր Բլագոևի, Վասիլ Կոլարովի և ուրիշների խմբագրականներից: Ներքին կուսակցական կյանքը լուսաբանող հոդվածներում հաճախ հանդիպող խիստ քննադատական արտահայտությունները վերաբերում էին առանձին կազմակերպություններին, որոնք պառակտողական գործունեություն էին ծավալում: Թերթը սուր լեզվով բանավիճում էր դաշնակցության դեմ, իսկ վիճահարույց հիմնական թեման վերաբերմունքն էր Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Սուր սլաքներն ուղղված էին հատկապես ՀՅԴ կուսակցության առանձին ղեկավարների՝ Հ. Տեվեճյանի, Գարեգին Նժդեհի և ուրիշների հակաբոլշևիկյան քարոզչության դեմ: «Պալքանեան մամուլը» լույս տեսավ մինչև 1943 թ.: Այն արգելվեց բուլղարական ֆաշիստական կառավարության կողմից: Նրա խմբագիր Հարություն Պողոսյանը 1949 թ. մահացավ դանուբյան համակենտրոնացման ճամբարում:

«Գարուն» հասարակական-գրական, մշակութային շաբաթաթերթ, բուլղարահայ երիտասարդական «Ինքնազարգացում» միության օրգանը: 1919 թ. հրատարակվել է Վառնայում, Պետրոս Աստարճյանի խմբագրությամբ: Թերթի էջերում լույս են տեսել սփյուռքահայ երիտասարդության մշակութային-կրթական և մարզական կյանքի մասին՝ տարբեր երկրներում, մասնավորապես բալկանյան՝ ռումինահայ, հունահայ, բուլղարահայ և լիբանանահայ գաղթօջախների առանձին կազմակերպությունների մասին: Լայնածավալ հոդվածներ էին տպագրվում ՀՄԸՄ մարմնամարզական միության տարբեր մասնաճյուղերի և հայորդի մարզիկների մասին, որոնք մասնակցում էին բուլղարական, ռումինական, հունական ազգային հավաքականներում, տարբեր մարզաձևերում: Թերթը լույս է տեսել ընդամենը 15 համար:

«Ապագայ» թերթը լույս է տեսել 1905 թ. Ռուսեում, Ս. Սապահ-Գյուլյանի խմբագրությամբ, որպես տեղի Հնչակյան կուսակցության օրգան: Ընդամենը 7 համար հրատարակվելուց հետո, հունվարի 1-ից 28-ը, դադարել է ֆինանսական պատճառով:

«Լուսարձակ» շաբաթաթերթը հրատարակվել է Վառնայում, 1920–1921 թթ. որպես Հայ ռամկավար կուսակցության օրգան: Հետագայում այն դարձավ կիսամսյա, ապա ամսաթերթ, պատասխանատու տնօրեն Սիմոն Պենյան, խմբագիր Տիգրան Մարտիրոսյան: Որոշ ընդհատումներով լույս է տեսել 1920-ից մինչև 1924 թվականը: Այս թերթի խմբագիր Տիգրան Մարտիրոսյանը, հետագայում նույն կուսակցության «Փարոս» թերթի գլխավոր խմբագիրը, միաժամանակ հասարակական-քաղաքական գործիչ և Պլովդիվի հայկական «Վարդանանց-Վարվառյան» դպրոցի մանկավարժներից էր: 1930-ական թվականներին բուլղարահայ ռամկավարները ՀԲԸՄ մասնաճյուղերի միջոցով աշխույժ գործունեություն ծավալեցին հայ երիտասարդների շրջանում, որը նախաձեռնեցին Տիգրան Մարտիրոսյանը և «Մեսրոպյան» ճեմարանի տնօրեն Գևորգ Մեսրոպը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Տիգրան Մարտիրոսյանը, ընդառաջելով բուլղարահայ կոմունիստներին, որոնք չունեին իրենց օրգանը, «Փարոս» թերթի էջերում տպագրում էր առանձին կոմունիստների կողմից ներկայացված հոդվածները, որոնք վերաբերում էին հակաֆաշիստական պայքարին, ինչպես նաև Խորհրդային Միությանը և Կարմիր բանակին աջակցելու գործին նվիրված անձնազոհ մարտիկներին: Բուլղարահայ ռամկավարները համագործակցում էին հնչակյանների և բուլղարահայ կոմունիստների հետ: Նրանք միասնական ճակատով հանդես են եկել գաղութի թաղական խորհուրդների, հոգաբարձությունների և թեմական խորհրդի ընտրությունների ժամանակ: «Լուսարձակի» էջերում լույս էին տեսնում հոդվածներ դաշնակցության «Ազգային միություն»-ի դեմ: 1929 թվականից ռամկավար կուսակցության օրգան «Փարոսը» Սոֆիայից տեղափոխվեց Պլովդիվ և շարունակեց հրատարակվել «Լուսարձակի» ավանդույթներով Տիգրան Մարտիրոսյանի խմբագրությամբ:

1919 թ. ԲԿԿ նախաձեռնությամբ Պլովդիվում կազմակերպվում է «Հայ բանվորական կոմունիստական ինքնազարգացման միություն»:

Նույն թվականին ԲԿԿ Կենտկոմի և, հատկապես, Վ. Կոլարովի հանձնարարությամբ Պլովդիվում ստեղծվում է «Մամուլի կոմիտե»: Կոմիտեն 1920 թ. հուլիսի 15-ին լույս է ընծայում սփյուռքում անդրանիկ հայ կոմունիստական պարբերականը՝ «Կարմիր լուրերը»:

Բուլղարիայի հայահոծ քաղաքներում հայ կոմունիստական խմբակների, ապա նաև «Մամուլի կոմիտեի» հիմնումը և «Կարմիր լուրերի» լույս ընծայումը բուլղարահայ բանվորների ու արհեստավորների համար մեծ նշանակություն ունեցան: 1922 թ. «Կարմիր լուրեր» թերթը վերանվանվեց «Նոր աշխարհի»: 1923 թ. հունիսի 9-ին բուլղարական ֆաշիստները զինված ջոկատներով պետական հեղաշրջում կատարեցին: Ձերբակալվեցին կոմունիստական կուսակցության անդամները, այդ թվում՝ հայ կոմունիստների խմբակների անդամներ: Փակվեցին դեմոկրատական թերթերը, նաև հայ առաջադեմ պարբերականները՝ «Նոր աշխարհը», «Պալքանեան մամուլը», «Լուսարձակը»:

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Իրանահայ անդրանիկ պարբերական «Շաւիղ» շաբաթաթերթը հրատարակվել է Թեհրանում, 1894–1897 թթ.՝ շոշափելով ազգային, գրական, քաղաքական թեմաներ: Արտոնատերն էր Անդրեաս Բեկնազարյանը: Գլխավոր խմբագրի պաշտոնը զբաղեցրել է վաստակավոր թարգմանիչ, գրականագետ և ազգային-հասարակական գործիչ Հովհաննես Մասեհյանը՝ 1894 թ., իսկ նույն թվականից մինչև 1896 թ. հունվար՝ անվանի գրող Վրթանես Փափազյանը:

Վրթ. Փափազյանը կարևորում էր քննադատական և տեղեկատու նյութերը: Թերթը կարևորությամբ առաջին տեղն է դասել իրանահայ գյուղաբնակ տարբեր համայնքներին՝ Ղարաղան, Ղարադաղ, Սոլդուզ-Սավուջբուլաղ և այլն որտեղ ժամանակին կենտրոնացած էին իրանահայ բնակչության հոծ զանգվածները: Թերթն ունեցել է զանազան բաժիններ: Մամուլի տեսության բաժնում, հայկական մամուլից կատարված քաղվածքների կողքին արվում էին նաև ամփոփումներ՝ թարգմանված անգլիական, ռուսական, ֆրանսիական և գերմանական մամուլից: Ունեցել է գրական տեսություն,

հայկական տեսություն, Հայկական հարցի բաժին և այլն: 1895 թ. «Շաւիղը» ունենում է նաև իր սեփական հեռագիրը:

«Շաւիղը» կապ էր պահում նաև հայկական այլ գաղթավայրերի հետ: Ուներ աշխատակիցներ, որոնք թղթակցություններ էին ուղարկում թերթին տարբեր երկրներից: 1890-ական թթ. կոտորածների դեպքերին թերթն անդրադառնում էր կանոնավորաբար՝ արտատպելով պարսկական, թուրքական և եվրոպական մամուլից լուրեր, հաղորդագրություններ:

Իրանահայ երկրորդ «Աստղ արևելեան» թերթը տպագրվել է Թեհրանում, 1896 թ.: Թերթի խմբագիրն է եղել Մակար Մակարյանը (ըստ որոշ աղբյուրների Սոկրատ Գելոֆյանցը):

Թերթը բովանդակում էր ազգային, գրական ու քաղաքական թեմաներ: Առաջին համարի 2-րդ էջում «Մեր ուղղութիւն» հոդվածում ասվում է, որ առաջնությունը տրվելու է առաջնորդող հոդվածներին, որոնց մեջ կարևորվելու են «հասարակութեան կենսական առօրյա խնդիրները և ամենայն դեպքում ինչ որ նրան շահավետ է»: Ներքին տեսութեան մեջ թղթակցություններ էին տպվելու պարսկահայ գաղթականության վերաբերյալ և ներքին լուրեր: Արտաքին տեսության և քաղաքական բաժիններում՝ արտաքին և քաղաքական լուրեր ու հոդվածներ:

Թերթն ընդարձակ ծանոթություններ էր տալիս նաև բանասիրական, առողջապահական հիմնահարցերի վերաբերյալ: Այս ծրագրին հետևեց «Աստղ արևելեանը» իր հրատարակության ամբողջ ժամանակաշրջանում՝ հետամտելով իրանահայության հոգևոր ու բարոյական, տնտեսական, անհատական ու հավաքական զարգացման:

Իրանահայ մամուլի առաջնեկը քսաներորդ դարասկզբում, փաստորեն, եղել է Թավրիզում հրատարակվող «Գործ» շաբաթաթերթը (1903): Նշված տարվա օգոստոսի 10-ի հրատարակվածը լոկ միակն է, որն էլ տպագրվել է Ատրպետի (Սարգիս Մուբայաջյան) տնօրինությամբ՝ Ատրպատականի հայոց թեմական տպարանում, որն այսօր էլ գոյություն ունի և կոչվում է նույն անվամբ: Խմբագիրն էր թեմակալ Եղիշե ծ. վարդապետ Մուրադյանը: Գրական, գիտական և առևտրական ուղղվածություն որդեգրած այս շաբաթա-

թերթը՝ լույս ընծայված իր միակ համարում զետեղել է նաև հայտարարություններ ու գովազդներ:

20-րդ դարասկզբի իրանահայ 2-րդ պարբերականը՝ «Ազգարար առաջնորդարանի»-ն, լույս է տեսել Թավրիզում, 1904–1905 թթ.: Շաբաթաթերթի խմբագիրն էր առաջնորդական տեղապահ Մաշտոց վարդ. Փափազյանը: Տպագրել է իրանահայությանը հուզող հասարակական, կրթական, տնտեսական և այլ բնույթի նյութեր, արտացոլել առաջնորդարանի անցուդարձը և այլն:

20-րդ դարասկզբին Նոր Ջուղայում տպագրված առաջին պարբերականը «Նոր Ջուղայի լրաբեր» ամսաթերթն էր (1904–1908): Խմբագիրն էր Պարսկա-Հնդկաստանի թեմի (այժմ Սպահանի հայոց թեմ) առաջնորդական տեղապահ Բագրատ վարդ. Վարդազարյանը: Տպագրվել է Նոր Ջուղայի Ս.Ամենափրկիչ վանքի տպարանում:

Թեհրանից ու Թավրիզից հետո երրորդ վայրը, ուր հայերեն պարբերական է հրատարակվել, դա Նոր Ջուղան է, թեև Նոր Ջուղան տպագրության ասպարեզում առաջնություն ունի ամբողջ Իրանում ու Միջին Արևելքում, բայց հայերեն մամուլի տպագրության խնդրում զիջել է Թեհրանին ու Թավրիզին:

Վաստակաշատ բանասեր Լ. Գ. Մինասյանի «Իրանահայ պարբերական մամուլը» աշխատության մեջ հիշատակված են Նոր Ջուղայում լույս տեսած եւս երկու պարբերականներ՝ «Բրիտանական և արտաքին Աստվածաշնչի ընկերության շաբաթաթերթը», որը տպագրվել է վանքի տպարանում՝ 1908–1911 թվականներին, իսկ մյուսն էլ՝ «Ընկեր» ամսագիրն էր, որ լույս է տեսել 1920-ին՝ որպես օրգան Հայ սկաուտական կազմակերպության՝ խմբագրությամբ սկաուտապետ Հովսեփ Աբգարյանի:

Թավրիզում հրատարակվող իրանահայ առաջին կուսակցական թերթը ՀՅԴ «Առաւօտն» է (1909–1911): Թավրիզն այդ ժամանակահատվածում կիզակետն էր իրանական սահմանադրական շարժման, որին ակտիվորեն մասնակից էին հայ ազատախոհները՝ ՀՅԴ-ի և Եփրեմ խանի (Դավթյան) գլխավորությամբ:

Թերթի խմբագիրը սկզբնական շրջանում Հովսեփ Հովհաննիսյանն էր (Յ. Էլմար), որը նույնպես եղել է Եփրեմի զինակիցը և մասնակցել Իրանի սահմանադրական շարժմանը:

«Առաւօտի» խմբագիր և հիմնադիր Հ. Հովհաննիսյանի «Յուշեր» գրքի առաջին հատորում կան խիստ շահեկան գրառումներ, որոնք նաև լույս են սփռում տվյալ հասարակական-քաղաքական պայմաններում «Առաւօտի» աշխատանքն առաջ տանելու գործընթացի, ինչպես և թողած ազդեցությանը՝ գաղութահայության և մասնավորապես իրանահայ մամուլի հետագա ուղու վրա:

«Առաւօտը», կանոնավոր հրատարակվելով, մոտ տարի ու կես մեծ դեր կատարեց մի կողմից ՀՅԴ գաղափարներն ու սկզբունքները ժողովրդականացնելու, մյուս կողմից՝ սահմանադրությունն ու ժողովրդավարական տեսակետները տարածելու և մեր ժողովրդին լրագրի հետ կապելու գործում: Առաջին պարսկահայ դաշնակցական այս օրգանը[1] հանդիսացավ պարսկահայ քաղաքական մամուլի նախակարապետը:

«Առաւօտը» դադարեց 1911 թ.-ի դեկտեմբերի 10-ին՝ ռուսական պատժիչ զորքերի Թավրիզ ներխուժումից հետո:

«Զանգ» շաբաթաթերթը ևս հրատարակվել է Թավրիզում (1910–1922)՝ որպես պաշտոնաթերթ Հնչակյան կուսակցության, որն էլ սկզբնական շրջաններում ներգրավված է եղել իրանական սահմանադրական շարժման մեջ: «Զանգը» քաղաքական, տնտեսական, հասարակական և գրական թերթ էր, տպագրվել է «Փարոս» տպարանում: Հնչակյան կուսակցության պատմությանը նվիրված մի հրատարակության մեջ նշվում է, որ «Զանգի» հրատարակութիւնը մեծ ընդունելութիւն կգտնէ և լայն տարածում կունենայ ամբողջ Պարսկաստանի մէջ՝ որպէս առաջին սոցիալիստական, յառաջդիմական թերթ: Թերթը կունենայ իր խմբագրական կազմը՝ գլխավորութեամբ Ալ. Տեր-Վարդանյանի: Քանի մը տարիներով թերթը հրատարակուած է ուրիշ ընկերներու խմբագրութեամբ՝ Լուդվիկ Տասեան, Առաքել Պատմագրեան, Սեդրակ Աւագեան»[2]: «Զանգը» հայտնի է դաշնակցության դեմ իր բանավեճերով:

«Ազատան» թերթը լույս է տեսել Թավրիզում՝ 1912–1914 թթ., ընդամենը 4 թիվ: Խմբագիրն էր Վաղինակ Սարգսյանը՝ «Իրանեան» գրչանունով: «Ազատանը» հետագայում փոխանվանվել է

---

[1] Հովհաննիսյան Յ., «Յուշեր», Ե., 1995, էջ 217:

[2] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 403–404:

«Ղարադաղի», որն էլ շարունակվել է մինչև 1914 թ.՝ լինելով նախ ամսաթերթ, ապա՝ երկշաբաթաթերթ:

«Այգ» (1914–1922), «Աղաղանի» շարունակությունը և Ատրպատականի կոմիտեի օրգանը: Սկզբում հրատարակվել է որպես շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: Խմբագիրներն էին Մկրտում Սահակյանը և ապա՝ Գասպար Հակոբյանը: Ուշագրավ նյութեր է տպագրել հայերի ցեղասպանության, արհավիրքների պատճառով Սալմաստ և այլուր ապաստանած հայ գաղթականության մասին: Կոչ է արել ազգովին դիմագրավել սպառնացող աղետներին:

«Արշալույս» (1912) շաբաթաթերթը ՀՅ Դաշնակցության հրատարակությունն էր Թեհրանում (1912): Այն ուներ խմբագրական մարմին՝ Զորա Սագինյանի և Հովսեփ Հովհաննիսյանի (Յ. Էլմար) գլխավորությամբ: Թերթի արտոնատերն էր Արսեն խան Միքայելյանը: Տպագրում էր ազգային-քաղաքական, դպրոցական, գրական նյութեր, Թեհրանի և գավառների իրականությանը նվիրված հոդվածներ ու թղթակցություններ:

1919 թ. և 1920-ական թթ. սկզբներին Իրանում լույս են տեսել ևս մի քանի նոր թերթեր, որոնց մեջ իրենց հասարակական ազդեցությամբ աչքի էին ընկնում ՀՅԴ «Առաւօտը» (1919, Թեհրան, խմբագիր՝ Հովսեփ Հովհաննիսյան), «Մինարէթ» գրական շաբաթաթերթը (Թավրիզ, 1919–1921, խմբագիր՝ Առաքել Հարությունյան) և «Նոր կեանքը» (1922–1927, Թեհրան, խմբագիր՝ Օննիկ Մխիթարյան):

Թեհրանի Հայկական «Ձախ հոսանք» խմբակցությունը այս շրջանում հրատարակել է «Իրանի աշխատաւոր» (1920–1921), «Հորիզոն» (1920) և «Ռանջբար Իրանի» (1921–1923) թերթերը: Նոր Ջուղայում է հրատարակվել «Բոյսկաուտ» միության օրգան «Ընկեր» թերթը (1920): Երգիծական բովանդակություն ուներ «Բոբոխ» երկշաբաթաթերթը (ապա շաբաթաթերթ, Թեհրան, 1920), որ հրատարակվում էր Հայկ Գարագաշի խմբագրությամբ:

1930 թ. փետրվարից «Բոբոխի» հետ լույս է տեսել «Վերածնունդ» քաղաքական-հասարակական և գրական անկախ շաբաթաթերթը (հետագայում՝ երկօրյա, վերջում՝ օրաթերթ): Այն հրատարակվել է մինչև 1953 թ. (արտոնատեր և խմբագիր՝ Հայկ Գարագաշ): Թերթը Երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում քաջալերել է կապը հայրենիքի հետ և բազմաթիվ հոդ-

վածներ է հրատարակել Խորհրդային Հայաստանի, նրա մշակութային նվաճումների մասին: Ունեցել է մանկական և պատանեկան բաժիններ: Տպագրվել է «Վերածնունդ» տպարանում:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Ամերիկահայ անդրանիկ պարբերականների խմբագիր-հրատարակիչը Հայկ Էկինյանն է, որը և իրավամբ ժամանակակիցների կողմից անվանվել է «ամերիկահայ մամուլի հայր»:

Հայկ Էկինյանը (Հայկակ, Հովհաննես) ծնվել է Տիգրանակերտում (Թուրքիա) 1865 թ., բարեկեցիկ ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայրի Հայրենասիրաց ընկերության դպրոցում: Հետագայում իր գիտելիքների պակասը լրացրել է ինքնակրթությամբ և համառ աշխատասիրությամբ: ԱՄՆ է մեկնել 1883 թ.՝ առանց դրամի, առանց ծանոթի և լեզվի իմացության: Չորս տարի աշխատել է մետաքսի գործարանում՝ գիշերները անգլերեն սովորելով: Աշխատակցել է «Արևելքին», «Մշակին», «Մասիսին», «Արմենիային» և այլ պարբերականների: Հ. Էկինյանը խմբագրում և հրատարակում է մի շարք պարբերականներ՝ իր սեփական տպարանում: 1899 թ. տեղափոխվել է Ֆրեզնո՝ շարունակելով իր խմբագրական-հրատարակչական գործունեությունը: Իր հասարակական-քաղաքական հայացքներով Հ. Էկինյանը սկզբնական շրջանում հարել է հնչակյաններին, կուսակցության պառակտումից հետո՝ վերակազմյալ հնչակյաններին, ապա՝ սահմանադիր ռամկավարներին:

Հ. Էկինյանը վախճանվել է 1919 թ. մարտի 25-ին:

Ամերիկահայ պարբերական մամուլի առաջնեկ «Արեգակ» ազգային, քաղաքական շաբաթաթերթը լույս է տեսել 1888 թ. Ուեստ Հոբոքեն (Յունիոն Սիթի) քաղաքում, Հայկ Էկինյանի խմբագրությամբ և անձնական միջոցներով: Փոքրածավալ թերթ էր, փոքրաթիվ ընթերցողներ է ունեցել և կարճ կյանք (ընդամենը՝ 13 համար, մայիսից սեպտեմբեր):

«Արեգակը» տպագրել է Արևմտյան Հայաստանի, հայ ազատագրական պայքարի, հայ կյանքի վերաբերյալ ազգային և քաղաքական հոդվածներ և լուրեր, ամերիկահայ գաղթօջախի ազգային,

հասարակական կյանքը ներկայացնող նյութեր և թղթակցություններ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ խմբագիր-հրատարակիչը թերթում լուսաբանում է Արևմտյան Հայաստանից հայերի արտագաղթի կործանարար նշանակությունը հայ ժողովրդի համար: «Ամերիկյան հայք և Մայր հայրենիք» հոդվածում թերթն արտահայտվում է հայերի Ամերիկա գաղթելու դեմ և խորհուրդ տալիս հայերին մնալ հայրենիքում: Հակառակ դրան, ժամանակակիցների վկայությամբ, թերթի էջերն էին սպրդում այնպիսի թղթակցություններ (օրինակ՝ Կալիֆորնիայի հայերի երջանիկ և բարեկեցիկ կյանքի մասին), որոնք ակամա հրապուրում էին հայերին ներգաղթելու ԱՄՆ: «Արեգակը» տպագրում էր նաև զվարճալի նյութեր:

«Արեգակի» դադարելուց 4 ամիս անց, 1889 թ. սկզբներին, Հ. Էկինյանը Նյու Յորքում լույս է ընծայում «Սուրհանդակ», լրագիր ազգային ենթավերնագրով, ամսաթերթը, որը համարվում է «Արեգակի» շարունակությունը: Փոքր ծավալի թերթ էր, հրատարակվել է 1889–1890 թթ., ընդամենը՝ 25 համար: Տպագրել է խմբագրական հոդվածներ ամերիկահայ գաղթօջախի և Արևմտյան Հայաստանի մասին, թղթակցություններ առհասարակ ազգային և գաղթօջախի կյանքի վերաբերյալ, քաղաքական և զանազան այլ լուրեր: Ի տարբերություն «Արեգակի», «Սուրհանդակը» տպագրում էր նյութեր, որտեղ ցույց էր տալիս, որ Ամերիկա գաղթող հայերը կարող են հաջողության հասնել և հարստանալ:

1890–1892 թթ. Նյու Յորքում հրատարակվում է ամերիկահայ երրորդ պարբերականը «Ազատութիւն» վերնագրով (լրագիր ազգային), նախ՝ որպես շաբաթաթերթ, ապա՝ ամսաթերթ, վերջում՝ կիսամսյա: Շարունակությունն էր «Սուրհանդակի»: Խմբագիր-հրատարակիչն էր սկզբում Խաչատուր Օսկանյանը, ապա՝ Հ. Էկինյանը:

«Ազատութիւնը» իր համար բնաբան էր ընտրել «Ազատութեան գինը արիւն է միայն», իսկ իր հրատարակության նպատակը պարզաբանելով՝ գրում էր. «Ազատութիւնը» շահու համար չէ, որ կը հրատարակուի:

Հայ ժողովուրդի յառաջդիմութիւնը մեր շահն է, իսկ Հայոց ազատութիւնը «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»-ի նպատակն է...»[1]:

[1] «Պայքար» օրաթերթ, Բոստոն, 1953, հունվար 9:

«Ազատութիւնը» լայն տեղ է տվել արևմտահայության ազատագրական պայքարի հարցերին, տպագրել է նյութեր և լուրեր Արևմտյան Հայաստանի և ամերիկահայ գաղթօջախի կյանքից, հանրամատչելի գիտական և այլ բնույթի հոդվածներ, ազգային և քաղաքական լուրեր: Տպագրել է նաև անգլերեն հոդվածներ: Մի քանի համար հրատարակվելուց հետո, հավանաբար իր բովանդակության պատճառով, «Ազատութեան» մուտքը Թուրքիա արգելվել է:

Ֆրեզնո տեղափոխվելուց հետո Հ. Էկինյանը մեկը մյուսի հետևից լույս է ընծայում **«Քաղաքացի»** (1902–1909), ապա սրա շարունակությունը կազմող **«Նոր սերունդ»** (1909) շաբաթաթերթերը: Նույն թվականին, այս երկու թերթերը միացած, Հ. Էկինյանի տնօրինությամբ և խմբագրությամբ հրատարակվում են **«Նոր սերունդ-Քաղաքացի»** անվամբ՝ պահպանելով «Քաղաքացի» շաբաթաթերթի համարակալությունը: Իր վերջին պարբերաթերթը Հ. Էկինյանը հրատարակում է 1915 թ.: Դա **«Նոր կեանք»** ազգային, քաղաքական, գրական և բարոյական շաբաթաթերթն էր՝ որպես շարունակություն «Նոր սերունդ-Քաղաքացի» թերթի: Որոշ ժամանակ անց, խմբագրությունը վարում են ռամկավար հայացքներ դավանող Մ. Մինասյանը, Գ. Սարաֆյանը, Հ. Պողոսյանը և Ա. Ամիրխանյանը: 1919 թ. շաբաթաթերթը դառնում է Սահմանադիր ռամկավար կուսակցության Կալիֆորնիայի շրջանակի պաշտոնաթերթ, իսկ 1920 թ. մայիսից միանալով «Միութեանին»՝ հրատարակվում է «Նոր կեանք-Միութեան» միացյալ անունով:

«Արարատը» ամերիկահայ չորրորդ պարբերականն է, որը լույս տեսավ Նյու Յորքում 1891 թ. հունվարի 1-ից՝ սկզբում որպես երկշաբաթաթերթ, ապա՝ հոկտեմբերի 8-ից՝ որպես շաբաթաթերթ: 1892 թ. «Արարատը» դարձավ ամսօրյա թերթ: Խմբագիրն էր Փառնակ Մատթեոս Այվազյանը՝ արևմտահայ հայտնի հրապարակախոս, խմբագիր Մատթեոս Այվազյանի որդին, որը ցանկանում էր Կ. Պոլսում իր հոր հրատարակած «Արարատը» (1869–1872, 1876) վերածնել և շարունակել Նյու Յորքում:

Փառնակ Այվազյանը ծնվել է Կ. Պոլսում 1860 թ.: Կրթությունը ստացել է Պոլսի Ռոբերտ քոլեջում: 1880-ական թվականների կեսերին ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ և հաստատվել Նյու Յորքում: Երկար տարիներ պաշտոնավարել է «Նյու Յորք Թայմզ» թեր-

թի արտասահմանյան բաժանորդագրության գրասենյակում, ապա զբաղվել է առևտրական գործերով: Աշխատակցել է նաև ամերիկահայ մամուլին: Մահացել է 1940 թ.[1]:

«Արարատը» միայն առաջին տարին համեմատաբար կանոնավոր լույս տեսավ, իսկ 1892-ից դատապարտվեց երկարատև դադարի: 1892 թ. մայիսի 15-ին լույս տեսած «Հայք» հանդեսի թիվ 10-ում Ս. Գաբրիելյանը «Արարատի» մասին գրում է, որպես արդեն դադարած պարբերականի: Հիմնավորված է նաև «Արարատի» դադարման պատճառների վերաբերյալ բերված փաստարկը: «Նիւ Եորքի մէջ 1891-ին հրատարակուած «Արարատ» թերթն ևս յայտնի պատճառօք չէր կրնար եւ չկրցաւ շարունակուիլ: Երբ երեք թերթ երեւլին անդ, ուր մէկ թերթ հազիւ կրնայ սնունդ գտնել, ի հարկէ, երկուքն կը դատապարտուին մեռնելու»[2]: Սակայն նույն տարվա օգոստոս-սեպտեմբերին լույս են տեսնում պարբերականի երկու համարները, որպես ամսօրյա թերթ: Եվս երկու համար հրատարակվում է տասնամյա ընդմիջումից հետո՝ 1902 թ., որից հետո «Արարատը» ընդմիշտ դադարում է: 1891 թ. «Արարատը» ազգային, քաղաքական, ուսումնական պարբերաթերթ էր, իսկ 1892-ից կոչվում էր «Հայ-ամերիկեան օրագիր ազգային եւ ընթերցասիրական»: Լույս էր տեսնում հայերեն և անգլերեն, առանձին էջակալությամբ: Մեր ձեռքի տակ եղած 1892 թ. երկու համարները թեև պատկերացում են տալիս պարբերականի ուղղության, սկզբունքների, հայացքների մասին, սակայն հնարավորություն չեն ընձեռում վերլուծել նրա գործունեությունը իր ամբողջության մեջ: Պարբերաթերթի առաջին տարվա համարների բովանդակության մասին ստիպված ենք մեջբերել Արսեն Տիրանի խոսքերը. «Արարատ կը պարունակէր առաջնորդող յօդուածներ ազգային նշանաւոր խնդիրներու մասին, լուրեր եւ այլ տեղեկութիւններ հայ կեանքէն, Թուրքիոյ եւ մասամբ Ռուսիոյ հայաբնակ կեդրոններէ, քաղուածքներ հայ լրագիրներէ: Ուսումնական մասը կը կազմէին աշխարհագրական, բանաստեղծական, գրական, ազգագրական, տեղագրական եւ

---

[1] Տես Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, Ե., 1973, էջ 90:
[2] «Հայք», Նյու Յորք, 1892, թիվ 10, էջ 73:

պատմական գրութիւններ, նաև խրատագիտութիւն, մատենագրութիւն, բժշկութիւն եւյլն»[1]:

Ուսումնասիրված ժամանակաշրջանի համարներից կարելի է եզրահանգել, որ «Արարատին» բնութագրող ուղղությունը ազգային պահպանողականությունն է, որը դրսևորվեց հատկապես Հայկական հարցի լուծման ուղիների մասին նրա արտահայտած տեսակետներում: Լավագույն նմուշ կարող է ծառայել թիվ 2-ում տպագրված Հ. Արշակունու «Հայաստան եւ ազատութիւն» վերնագրով ատենախոսությունը, որտեղ հեղինակը մանրամասն քննության է ենթարկում Հայկական հարցը ապստամբությամբ լուծելու հնարավորությունը: Միջազգային քաղաքական իրադրության և Հայկական հարցի պատմության հանգամանալից վերլուծությունները, հայ ժողովրդի նյութական, ֆիզիկական և հոգեկան ներուժի ու կարողությունների, Հայաստանի աշխարհաքաղաքական պայմանների սթափ գնահատումները և այս ամենի զուգադրումները Բոսնիա-Հերցեգովինայի և Բուլղարիայի ազատագրությանը նպաստող գործոններին, ըստ էության, հանգեցնում են Արևմտյան Հայաստանում զինված ապստամբության անհնարինության մտքին: Հ. Արշակունու հետ միանգամայն համակարծիք է խմբագիր Փ. Այվազյանը. երկուսի համակրանքն էլ Ներսես Վարժապետյանի՝ «Իբր ճշմարիտ հայրենասէրի» և նրա կողմնակիցների քաղաքականության կողմն է: Դեռ ավելին՝ այդ քաղաքականությունը համարվում է միակ ճիշտը, ուղիղը, ընդունելին և ցավով փաստարկվում, որ «Ներսէսի յաջորդներուն նոյն ուղիղ և գովելի քաղաքականութենէն շեղիլն ազգին խնդիրը որ բաւ օրէ տկարացուցած է և նորա այնչափ ճգով առ Հայկական խնդիրն կեդրոնացուցած միջազգային շահեկանութիւնը հետզհետէ կորսնելու վրայ կը գտնուի: Փորձուած քաղաքականութիւն մը վերստին փորձելն ազգին ապագայն յետաձգել է, իսկ ընտրուած քաղաքականութեան մը հաստատակամօրէն հետեւիլն՝ որոշեալ տեսակէտի մերձենալ:

Արդեօք մեր ազգին անհաջողութեան պատճառներէն մին ալ մինչեւ ցարդ որոշ քաղաքականութեան մը յետեւած չըլլալն չէ՞» (1892, թիվ 1, էջ 5–6):

[1] Արսէն Տիրան, Ամերիկահայ մամուլը, անոր Մաշեղ եայլ., «Ամերիկահայ տարեցոյցը», Ա տարի, Պոստոն, 1912, էջ 129–130:

Փ. Այվատյանի դիրքորոշումն ակնհայտ է Կ. Պոլսի Աշըգյան պատրիարքի կոնդակի կապակցությամբ տրված լուսաբանություններում: Կոնդակը, որ 1895 թ. հուլիսի 15-ի Գում-Գափուի չհաշողված ցույցից դաս առնելու և ողջամտության քարոզ էր՝ ուղղված հայ ժողովրդին և կարդացվել էր Թուրքիայի բոլոր հայկական եկեղեցիներում, ամբողջությամբ տպագրվեց ամսաթերթում: Փ. Այվատյանի մեկնությունները հիմնավորում էին տվյալ իրադրության մեջ հայ ժողովրդի շահերի տեսակետից պատրիարքի քաղաքականության նպատակահարմարությունը և իրավացիությունը: Իսկական դիվանագետի նրա իդեալը Գլադստոնն էր («Մեծն Ծերունին, դիւանագէտն դիւանագիտաց և ազատասէրն ազատասիրաց», 1892, թիվ 2, էջ 13), տիպար ազգային հայ գործիչը՝ Մինաս Չերազը («ճիշդ անձն խնդրոյն ճիշդ կեդրոնին մէջ», նույն տեղում, էջ 14): Եվ խորհուրդ էր տալիս ամեն կերպ օժանդակել, «դիւրութիւններ ընծայել», «նիւթապէս զօրացնել» Բեռլինի վեհաժողովի նախկին պատվիրակին և Լոնդոնի ներկայացուցչին: «Եթէ պտուղ կ'ուզեմք, պէտք է, որ ցանեմք. եւ եթէ ամեն ոք կ'ուզէ այդ պտուղը վայելել՝ պարտի նորա հասնելուն կցեալ հոգատարութեան մասնակից ըլլալ»,- գրում էր «Արարատը» (նույն տեղում):

Պարբերականում թղթակցությունների և հոդվածների միջոցով ներկայացվում է Արևմտյան Հայաստանի իրականությունը, «Ազգային» խորագրի ներքո՝ հայ ազգային և ամերիկահայ ընթացիկ կյանքը, լուսաբանվում են հայոց պատմության խնդիրներ, տրվում են պատմական փաստեր, հայ եկեղեցու մասին տեղեկություններ և այլն: Տպագրվել են նաև գրական-գեղարվեստական ստեղծագործություններ, հետաքրքրաշարժ տեղեկություններ, փաստեր, դեպքեր: Ուներ «Զուարճալիք», «Ընտիր խօսքեր», «Այլեւայլք» բաժինները, որոնք կարդացվում են հետաքրքրությամբ:

«Արարատի» անգլերեն բաժնում տպագրվել են Հայկական հարցին նվիրված և Արևմտյան Հայաստանի կյանքը պատկերող նյութեր, ամերիկացի, անգլիացի և հայ հեղինակների կարծիքներ Հայկական հարցի մասին, պատմական հոդվածներ և քարտեզներ:

1897 թ. հոկտեմբերի 2-ից Ուստրում, Սարգիս Շաղալյանի խմբագրությամբ հրատարակվում է **«Եփրատ»** ազգային, քաղաքական շաբաթաթերթը: Փոքրածավալ էր, լույս է տեսել 48 համար և

դադարել 1898-ին նյութական միջոցների սղության և խմբագրի խիստ զբաղվածության պատճառով: Թերթի նպատակն էր ամերիկահայությանը ծանոթացնել Հայրենիքում կատարվող իրադարձություններին և ամերիկահայ գաղթօջախի կյանքը ներկայացնել երկրի ժողովրդին, միության կապ ստեղծել ԱՄՆ-ի զանազան վայրերում ցրված հայության միջև: Մեծ ուշադրություն էր դարձնում գաղթօջախի ներքին ազգային կյանքին և քննադատական վերաբերմունք դրսևորում այնտեղ տեղ գտած թերությունների և արատների նկատմամբ:

«Տիգրիս» ազգային, գրական և քաղաքական շաբաթաթերթը հրատարակվել Նյու Յորքում 1897–1899 թթ.: Շարունակությունն էր «Ազատութիւն» լրագրի: Լույս է տեսել 22 համար: Խմբագիրները էին Հ. Էկինյանը և Թ. Զարուաֆճյանը, ապա՝ Գ. Չիթճյանը: Թերթի ուղղության մասին Կ. Գեորգյանը գրում է. «Թ. Զարուաֆճեանի ներկայութեամբ եւ դաշնակցականներու կողմէ գրուած յօդուածներով, Տիգրիս կը ձգէր դաշնակցական թերթի մը տպաւորութիւն, մինչդեռ Հ. Էկինյան լայն բացած է թերթին էջերը նաեւ հնչակեաններուն առջեւ եւ տուած էր անոր հակադաշնակցական ուղղութիւն»[1]: Գաղափարական այս տարաձայնությունները պատճառ են դառնում պառակտման և մեկ տարվա համագործակցությունից հետո թերթը վաճառվում է Հ. Էկինյանին, որը մի քանի ամիս խմբագրությունը վարելուց հետո այն փոխանցում է վերակազմյալ հնչակյան Գ. Չիթճյանին: Վերջինս էլ որոշ ժամանակ անց այն հրատարակում է «Ձայն հայրենեաց» անունով:

«Տիգրիսի» միակ պահպանված համարը 1899 թ. հունիս 3-ի 81 համարանիշը կրող բացառիկն է, որի ամբողջ հասույթը պետք է հանգանակվեր Վանի սովատանջ հայերին, նույնիսկ թերթի բաժանորդներին առաջարկվում էր այն գնել: Պատկերազարդ էր: Տպագրել է Վանի սովյալ բնակչության վիճակը պատկերող լուսանկարներ՝ «Աստուած սիրէք, բրդուճ մը հաց» մակագրությամբ, տեսարաններ՝ Վանա բերդը, Վանի Այգեստան թաղամասը, Մեծ Մասիսը, Վանա ծովը և Սիփան սարը, Զեյթունը և այլն, նշանավոր ազգայինների և գրողների լուսանկարներ (Խրիմյան Հայրիկ, Խորեն

[1] Գէորգեան Կ., Ամերիկահայ մամուլը: Հին թուականներէն մինչեւ մեր օրերը, տես «Ամենուն տարեգիրքը», Պէյրութ, 1963, Ժ տարի, էջ 430:

արքեպս. Լուսինյան (Նար-Դեյ), Ներսես արքեպս. Վարժապետյան, Ղևոնդ Ալիշան, Րաֆֆի, Գամառ-Քաթիպա և ուրիշներ): Թերթը լայն տեղ է տվել գրական ստեղծագործություններին. բանաստեղծություններ՝ Ջիվանու «Արև», Րաֆֆու «Ջայն տուր, ո՜վ ծովակ», Նար Դեյի երեք ոտանավորները և այլն, ինչպես նաև Վ. Շահենու «Խա՜ց... խա՜ց... (Պատկեր մը Վանի սովէն)» պատմվածքը:

«Ազգային ինքնադարմանումին դիմենք» խմբագրական հոդվածում (հեղ. Գ. Չիթճյան) անդրադառնալով վերջին տարիներին հայ ժողովրդի գլխին թափված աղետներին, «նորանոր վէրքեր»-ին (կոտորածներ, սով), շաբաթաթերթն առաջնահերթ կարևորություն է տալիս «ազգային ինքնօգնությանը», գրելով՝ «Արտաքին դարմանները կօժանդակեն միայն կեանքին, որ իւր գործը աւելի փութով և ուժգնութեամբ կատարէ. իսկ փրկարար դերը միշտ ինքնադարմանումին՝ ներքին կեանքինն է»: Թերթը հուսալքության կամ ազգային ցավերին համակերպվելու քարոզ չի անում, այլ, ընդհակառակը, դրանց մեջ տեսնում է ազգային վերածնության երկունքը և կոչ անում հանդես բերել արիություն, անձնվիրություն, «անյողդողդ կամք, աննկուն ոգի և անսպառ կորով», խնամել որբերին, հաց տալ սովատանջ եղբայրներին, «անոնք հայ աշխարհին պահապան հրեշտակներն են. թող ապրին անոնք, որ անոնցմով ապրի ազգը, կանգուն մնայ հայրենիքը. անոնցմով է, որ վառ պիտի մնան մեր ազգային յոյսերը»: Հոդվածագիրը ազգային կյանքի ցավերից ծնված ներկա կռվի մեջ էր տեսնում հայ ազգի ապագա վերածնությունը:

«Բանասիրական» խորագրի տակ «Տիգրիսը» տպագրել է Ու. Ջ. Սթիլմենի «Գերմանիա եւ հայերը» ընդարձակ հոդվածը՝ նվիրված միջազգային քաղաքական իրադրությանը:

«Թղթակցութիւններ» բաժնում տպագրվել է երկու նամակ՝ ստացված Վանից և Խարբերդից, որտեղ զանազան տեղական լուրերի հետ միաժամանակ, ներկայացվում է նաև հայերի թշվառ վիճակը: Թերթն ուներ նաև «Ազգային քրոնիկ» և «Քաղաքական» բաժինները:

Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը լուսաբանող առաջին պարբերականը ԱՄՆ-ում «Հայ» (Բոստոն, 1909–1910) տնտեսական, քաղաքական, հասարակական և գի-

տական ամսաթերթն է, որի առաջին համարը լույս տեսավ 1909 թ. հոկտեմբերի 15-ին: Խմբագիրն էր Գարեգին Մանուկյանը:

«Հայի» վեցամսյա շրջանը բոլորվելու առիթով թերթը հատուկ ընդգծում է, որ այն «հիմնուած է մասնաւորապէս Հայկական Բ. Ը. Միութեան գաղափարը Ամերիկայի մէջ ծաւալելու համար, բայց անոր ծախքը չի հոգացուիր Միութեան սնտուկէն» (1910, թիվ 7, էջ 1): Ամսաթերթի առաջին համարի խմբագրականը՝ «Նպատակ» վերնագրով, ծանուցում էր, որ «Հայը» «թերթ մը չէ բառին սովորական առումով: Աւելի՝ յիշատակարան մ՚է, ուր պիտի արձանագրուին Հայ ընկերութեան մէջ ծնունդ առնող բարեգործական շարժումները եւ, մասնաւորապէս, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան գործունէութիւնը» (1909, թիվ 1, էջ 1): Իսկ բարեգործություն ասելով թերթը հասկանում էր ազգի կողմից կատարվող այն բոլոր գործողությունները, որոնք միտված են ազգի մեջ կրթություն տարածելուն, նրա բարոյական նկարագիրը ազնվացնելուն և տնտեսական վիճակը բարելավելուն: Չժխտելով և բոլորովին չնսեմացնելով այլ պարբերականների կատարած գործն այդ ուղղությամբ, խմբագրությունն անհրաժեշտություն էր համարում միմիայն այդ նպատակին նվիրված՝ ոչ քաղաքական, անկուսակցական և ոչ հարանվանական հրատարակության գոյությունը: Բարեգործության նպատակին նվիրված թերթի առաքելությունը, ըստ «Հայի», պետք է լինի ազգի մեջ «մշակել այլասիրական առաքինութիւնը, արծարծել անձնուիրութեան ոգին, քարոզել ազգաշինութեան մեծութիւնը» (1909, թիվ 1, էջ 2):

Ձգտելով հայ ժողովրդի բոլոր խավերի մեջ սերմանել բարու ձգտումը, կարեկցելու, փոխօգնության և մարդասիրության ոգին, պարբերաթերթը հուսալից էր, որ մարդկային բարոյական աշխարհը ևս բնական աշխարհի նման ենթակա է «բարեշրջումի օրէնքին և անոր պէս կանցնի յաջորդական շրջաններէ դէպի լուսաւորը, դէպի ազնուագոյնը» (1910, թիվ 4, էջ 2): Թերթն անկեղծորեն հավատում էր, որ բարին է այն սրբազան նպատակակետը, որին ձգտում է մարդկությունը՝ մշտանջենական պայքար մղելով չար ուժերի դեմ:

XX դարի էական հատկանիշը, դարաշրջանի ոգին «Հայը» տեսնում էր ոչ թե գիտության և տեխնիկայի բնագավառում ձեռք բերված աննախընթաց նվաճումների մեջ, այլ այն բանի, որ այդ նվա-

ճումները ծառայեցվեն ողջ մարդկության բարօրությանն ու երջանկությանը:

Հայ ժողովրդի համար օրվա հրամայականը, ըստ թերթի, ամփոփվում է մի քանի բառի մեջ. «Ինչ որ ըլլայ ազգին վիճակը՝ սիրել անիկա ու գործել անոր համար, այս է օրուան պահանջը» (1910, թիվ 8, էջ 1): Բարեգործությունը, փոխօգնության ոգին, սրտացավությունը, կարեկցությունը մեկը մյուսի հանդեպ թերթը համարում է տվյալ պայմաններում ազգի գոյատևման երաշխիքներից մեկը:

Ամսաթերթն առաջարկում էր բարեգործության երկու ձև՝ կանոնավոր անդամակցություն Հայ բարեգործական ընդհանուր միությանը և միանվագ նվիրատվություն որոշակի նպատակի համար: «Հայը» նաև կոչ էր անում արմատախիլ անել հայ ժողովրդի մեջ արմատացած՝ ամեն ինչ, ամեն գործ քննադատելու, ամեն ինչի մեջ թերություններ փնտրելու վատ սովորությունը, որը խանգարում է ազգի միասնությանը:

Կոչ անելով անդամակցել Հայ բարեգործական ընդհանուր միությանը՝ «Հայը» ծանոթացնում էր միության նպատակներին, ներկայացնում նրա գործունեության տարբեր բնագավառներն իրենց յուրահատկություններով և հոգսերով հանդերձ: Ուներ «Հ. Բ. Ը. Միութիւն» խորագրով բաժինը, որտեղ համարից համար լուսաբանվում էր բարեգործականի կենտրոնական վարչության և նրա, մասնավորապես ԱՄՆ-ի, մասնաճյուղերի գործունեությունը: Պարբերաբար անդրադառնում էր հայ և օտարազգի բարեգործներին (Ալ. Մանթաշյան, Հ. Բլեքուել և ուրիշներ), հայ իրականության մեջ կատարված բարեգործական աշխատանքներին («Որբախնամ գործը Խարբերդի մէջ», «Բարեգործութիւնը ռուսահայոց մէջ», «Կիլիկեան նոր որբանոցը» և այլն): Ուշադրությունից դուրս չի թողել նաև օտար ազգերի մեջ կատարվող բարեգործությունները ներկայացնելու գործը՝ նպատակ ունենալով ծանոթացնել այլ երկրներում բարեգործության դրվածքին: Զուգահեռաբար լուսաբանում է հայ իրականության մեջ գործող բարենպատակ կազմակերպությունների գործունեությունը («Ամերիկահայ ուսանողական միութիւն», «Հայ առաջադիմական ընկերակցութիւն», «Armenian Relief Association» և այլն):

Թերթն ուներ «Լրաքաղ» բաժինը, որի լուրերը հիմնականում Հայ բարեգործականի ու բարեգործների աշխատանքի և բարեգոր-

ծություն ակնկալող ոլորտներն էին ընդգրկում, ներկայացնում հայ որբերի, որբևայրիների, կարոտյալ գաղթականների ճակատագիրը, սոցիալական վիճակը և այլն:

Ամսաթերթում տպագրված հոդվածների գերակշռող մասը պատկանում է Վահան Քյուրքճյանի (Վ. Ք.) գրչին: Աշխատակցել են նաև Ա. Այվազյանը, Կ. Գարակյուլյանը, Վահրամը և ուրիշներ:

Հայ բարեգործական ընդհանուր միությունը 1914 թ. Բոստոնում սկսում է հրատարակել իր պաշտոնաթերթ «Յուշարարը» (Բոստոն, 1914–1925, Նյու Յորք, 1925–1962): 1963-ից «Յուշարարը» միանալով ՀԲԸՄ կենտրոնական վարչության պաշտոնաթերթ «Միություն» ամսաթերթին (Կահիրե, 1912–1928, Փարիզ, 1928–1940, Նյու Յորք, 1947–1962), հրատարակվում է «Յուշարար-Միություն» անվամբ: «Յուշարարը» սկզբում քառամսյա էր, ապա՝ ամսաթերթ, շաբաթաթերթ, կիսամսյա, 1926-ից՝ ամսաթերթ: Խմբագիրներ են եղել Անդրանիկ Փոլատյանը, Վահան Քյուրքճյանը և ուրիշներ:

1910 թ. մայիս ամսից Բոստոնում սկսեց հրատարակվել «Շանթ» գրական, հասարակական ամսահանդեսը՝ Շահան Նաթալիի խմբագրությամբ:

Շահան Նաթալին (Հակոբ Տեր-Հակոբյան), սփյուռքահայ հայտնի գրող և հասարակական գործիչ, ծնվել է Արևմտյան Հայաստանի Խարբերդի շրջանի Հուսեյնիկ գյուղաքաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Կ. Պոլսի Պերպերյան միջնակարգ դպրոցում: Կարճ ժամանակ իր ծննդավայրում որպես ուսուցիչ աշխատելուց հետո, 1904 թ. մեկնել է ԱՄՆ, որտեղ և 1910 թ. հրատարակել է «Շանթ» ամսահանդեսը: 1910–1914 թթ. ապրել է Կ. Պոլսում, աշխատել է «Շանթ» շաբաթաթերթի խմբագրությունում, աշխատակցել պոլսահայ մի շարք թերթերի: Առաջին համաշխարհային պատերազմից հետո կրկին անցել է արտասահման, ապա մեկնել է Ամերիկա, որտեղ 1928 թ. հրատարակել է «Ազատամարտ» շաբաթաթերթը, որը կարճ կյանք է ունեցել: Հրատարակել է նաև «Ամրոց» շաբաթաթերթը՝ ընդամենը մի քանի համար: Եղել է դաշնակցական, ապա 1929 թ. հեռացել դաշնակցությունից: 1919 թ. եղել է հայերի ցեղասպանության խրախուսած երիտթուրքական հանցագործներին պատժելու նպատակով ստեղծված «Հատուկ հանձնաժողովի» անդամ, «Նեմեսիս» գործողության կազմակերպիչ և ղեկավար: Ծավալել է հասա-

րական լայն գործունեություն, դարձել է Հայկական բարեգործական ընդհանուր միության գործուն անդամներից մեկը: Այցելել է Խորհրդային Հայաստան և վերադարձին արտահայտվել մեծ հիացմունքով: Իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն լույս է ընծայել 1904 թ.: Գրել է նաև պատմվածքներ ու պիեսներ:

«Շանթը», ինչպես ինքն էր նշում, անհատական նախաձեռնություն էր և կարիք էր զգում իր ընթերցողների նյութական և բարոյական աջակցությանը: Հրատարակությունն ուղղված էր երիտասարդներին և պատահական չէ, որ պարբերականի վերնագրից ներքև մշտապես, որպես բնաբան, իրենց հաստատուն տեղն էին գրավել Կրոպոտկինի հետևյալ խոսքերը. «Խոսքս երիտասարդներին, ոչ թէ մտքով ծերերին»:

Ամսաթերթի հենց առաջին տողերից աչքի է զարնում նրա ընդգծված սոցիալական ուղղվածությունը, սոցիալիստական գաղափարների քարոզչությունը: «Մեր նպատակը» ծրագրային հոդվածը սկսվում է հենց «Ազատութիւն և Հաւասարութիւն» բառերով, որոնք, ըստ պարբերականի, համազոր ու համանիշ են և առանց մեկը մյուսին գոյություն ունենալ չեն կարող: Օրենքներն ու կրոնները առաջացել են ոչնչացնելու ազատությունը և հավասարությունը՝ ստեղծելով դասակարգեր, անհավասարություն, բռնակալություն: Խմբագրությունը հայտարարում էր, որ «Շանթը» հրապարակ է իջնում պայքարելու տիրող անարդարությունների դէմ, պաշտպանելու մարդու անհատական ու հավաքական իրավունքները (1910, № 1, էջ 1): Թերթը նպատակ էր դնում քանդել հինը՝ նորը շինելու, նոր հասարակության, նոր մարդկության համար ազատության ու հավասարության հիմնաքարը դնելու (նույն տեղում, էջ 2): Թերթը խոստանում էր հենվել նաև գիտության նորագույն տվյալների վրա և հայտարարում էր, որ «Կղերականն ու պուրժուան եւ բոլոր կեղեքողները մեր ոխերիմ հակառակորդները պիտի ըլլան...» (նույն տեղում):

Առաջին համարի հենց առաջին հեղինակային հոդվածը նվիրված է մայիսի 1-ին՝ աշխատավորների տոնին: «Մայիսի մէկը» հոդվածում, որը ստորագրված է Արամ կեղծանվամբ, հակիրճ ծանոթություն տալով մայիսի 1-ը, որպես աշխատավորների համերաշխության տոն ընդունելու 1889 թ. գումարված միջազգային բանվորական համաժողովի որոշման, այդ օրվա նշանակության մասին, թերթը արձա-

նագրում է այն ինքնավստահությունը, որ ձեռք է բերել աշխատավորությունը անցած քսան տարիների ընթացքում: Ավելի առաջ գնալով հեղինակը մայիսմեկյան տոնը գնահատում է որպես ապագա «համամարդկային եղբայրութեան գրկումներու և ցնծութեան թռուկանը, նախատօնուած ու փառաբանուած համայն մարդկութենէն, առանց ցեղի և ազգի խտրութեան» (1910, № 1, էջ 4):

«Համառուսական» խորագրի տակ զետեղված «Մայիս մէկի առիթով» հոդվածում Գ. Ռստիկյանը քննադատական խոսք է ասում նաև ԱՄՆ-ի արհեստակցական միությունների հասցեին, նրանց անվանելով «կեղծաւորութեան և դիմակաւորութեան հանդրուան» (նույն տեղում, էջ 9): Հեղինակը կոչ է անում արմատական վերափոխումների, նշելով, որ նման կեղծ բարեկարգիչներ առավելապես Միացյալ Նահանգներում են պատահում, բարեկարգիչներ, որոնք սին խոստումներ տալով շիտակ ճամփից շեղում են աշխատավորությանը և արհեստակցական միություններին: Բարեբախտաբար, աշխատավոր դասը քիչ-քիչ սկսում է հասկանալ, որ «քաղաքական ազատութիւնը շատ բարիքներ չի տար անօթի ստամոքսին» (նույն տեղում, էջ 10), թե բոյկոտները, կազմակերպված գործադուլները, գործարանների վրա հարձակումները, գործատերերի սպանությունները էական արդյունք չեն կարող տալ: Հոդվածագիրը փաստորեն հեղափոխության կոչ էր անում:

«Աշխատաւորութեան օրը» խմբագրականում, որը նվիրված էր Միացյալ Նահանգներում սեպտեմբերի առաջին երկուշաբթին աշխատավորության օր հռչակելուն, ամսաթերթը համարում է «մեծագոյն յաղթանակի տօն» աշխատավորության դատին նվիրյալների համար: Կրկին անդրադառնալով աշխատավորության կյանքին և դասակարգային պայքարի հարցերին՝ «Շանթը» կարծում էր, որ այդ օրվա նշանակությունը ավելի է մեծանում մանավանդ այն պատճառով, որ «այդ օրը կատարուող բոլոր խրախութիւնները, հսկայ գործարաններու մեռելական լռութիւնը, գործաւորներու խանդավառ թափորները գերագոյն պրոպականտներ են», քանի որ վարակիչ են և «ազատութեան բանակը» կստվարացնեն ու նոր կազմակերպութիւններ կստեղծեն (1910, № 5, էջ 2):

Մեկ այլ խմբագրականում՝ վերնագրված «Ազատութիւններու ամիսը», խոսելով հուլիս ամսվա և նրա բերած ազատությունների

մասին (հուլիսի 4-ը՝ ԱՄՆ-ի ազատագրության օրը, հուլիսի 14-ը՝ Ֆրանսիայի հեղափոխության և հուլիսի 24-ը՝ սուլթան Համիդի տապալման և օսմանյան սահմանադրության հռչակման օրը), «Շանթը» կարծում է, որ այդ ազատությունները թեև ժողովրդի զավակների արյունով են գնված, ժողովրդի դրամներով են տոնվում և ժողովուրդն է, որ տոնում է, այնուամենայնիվ այն ժողովրդինը չէ, քանի որ այն իրական ազատություն չի բերում աշխատավոր դասակարգին: Թերթը իր ափսոսանքն է հայտնում այդ տոնակատարությունների ժամանակ անօգուտ վատնվող գումարների համար, որոնք կարող էին հազարավոր աղքատների կերակրել: Հոդվածի եզրակացությունն այն է, որ «... մինչև այսօր պատմութեան էջերը զարդարող ազատութիւնները եղած են կիսատ ու մասնակի. անոնք չեն եղած Ընդհանուր Ազատութիւնը, հետևաբար բնա՛ւ ճշմարիտը»: Ըստ թերթի, միայն «Մայիսեան Ազատութիւնը ժողովրդային, Համաշխարհային պիտի ըլլայ» (1910, № 3, էջ 3):

Պարբերականում տպագրված գրեթե բոլոր հոդվածները օգտագործվում են սոցիալիստական գաղափարների քարոզչության համար՝ ներկայացնելով դասակարգային պայքարի վիճակն ու ապագայի հեռանկարները: Բնականաբար, «Շանթը» չէր կարող շրջանցել հայերին և Հայաստանին առնչվող այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսին էր Թուրքիայում սոցիալիստական գաղափարների տարածման հարցը: Նախ պետք էր պարզաբանել մի բան. Օսմանյան կայսրությունում կա՞ բավարար հող բանվորական կազմակերպություններով և խորհրդարանական միջոցներով սոցիալիստական պայքար կազմակերպելու համար: Ահա այս խնդիրն էր առաջ քաշում Արամի «Ընկերվարութիւնը Թուրքիայի մէջ» հոդվածը, նպատակ ունենալով ներկայացնել Թուրքիայում գործող, հիմնականում օտարերկրյա կապիտալի շնորհիվ, արդյունաբերական ձեռնարկությունները, երկաթուղիները, այնտեղ աշխատող հարյուր հազարավոր բանվորների վիճակը և նրանց անխնա շահագործումը: Խոսելով պարզ թվերով՝ հոդվածագիրը եզրակացնում է, որ «Թուրքիայի մէջ ընկերվարական գործունէութիւնը ոչ թէ կանխահաս է ներկայիս, ինչպէս կ'ուզեն հաւատացնել կարգ մը հակաընկերվարականներ, այլ ուշ իսկ է մնացած: «Օտարամուտ վարդապետութիւնը» պէտք էր արդէն մտած ըլլար մեր երկիրը օտարամուտ շոգեշարժներուն և

դրամագլուխին հետ կէս դար առաջ» (1910, № 3, էջ 6): Արամը շարունակում է փաստեր և թվեր բերել Թուրքիայի արդյունաբերական ձեռնարկությունների մասին՝ հաստատելու համար Թուրքիայում մեծ թվով բանվորության առկայությունը, հետևաբար նաև նրա կազմակերպման անհրաժեշտությունը և կարելիությունը: Հեղինակը կարծում է, որ Թուրքիայի խորհրդարանում «Ընկերվարական ուժեղ հոսանք մը..., ամէն ազգի ներկայացուցիչներով, բացառապէս օգտակար և արդիւնաւոր կրնար ըլլալ» (1910, № 3, էջ 7):

Ամսաթերթի բաժիններն էին՝ «Հասարակական», «Ընկերային», «Սոցիալական լուրեր», «Սոցիալիստական լուրեր», «Սոցիալիստական հարցարան», «Թերթեր», «Պզտիկ նոթեր», «Ռուս գրականութիւն» և այլն: Գրական ստեղծագործությունները (հիմնականում բանաստեղծություններ), չնայած բոլոր համարներում նրանց առկայությանը, չէին ամփոփվում որևէ խորագրի տակ: Տպագրվել են հիմնականում ամերիկահայ ստեղծագործողների բանաստեղծություններից:

1918–1920 թթ. Ֆրեզնոյում Միք. Մինասյանի խմբագրությամբ և «Միտում» հրատարակչական ընկերության կողմից հրատարակվում է «Միտում» գրական, հասարակական շաբաթաթերթը: Պարբերականը մեծադիր էր, 16–20 էջ ծավալով, պատկերազարդ: Ուներ ռամկավարական ուղղություն: «Համաշխարհային քրոնիկ», «Վերջին լուրեր», «Տեղական լուրեր» բաժիններում մեծ տեղ է հատկացրել միջազգային քաղաքական իրադարձությունների, հայ ազգային կյանքի խնդիրների լուսաբանմանը, ընթացիկ տեղեկատվությանը: Տպագրել է հակասոցիալիստական, հակաբոլշևիկյան հոդվածներ, դեմ է արտահայտվել ընդհանրապես ամեն կարգի հեղափոխական շարժումներին: «Ընդհանուր տեսութիւն» խորագրի տակ և առանձին հոդվածներով անդրադարձել է Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձություններին, հատկապես ուշադրության կենտրոնում պահելով Կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողությունները: Բազմաթիվ նյութեր է նվիրել ամերիկահայ գաղթօջախի ազգային կյանքին, Ամերիկայի հայ ազգային միության, Ամերիկահայ որբախնամ և այրիախնամ կազմակերպության, Հայ բարեգործական ընդհանուր միության գործունեությանը: «Միտումը» 1920 թ. միանալով Ֆրեզնոյի «Նոր կեանք»

(1915–1920) շաբաթաթերթին՝ հրատարակվում է «Նոր կեանք-Միուան» անվամբ 1920–1921 թթ.:

Գաղթօջախում լույս տեսած գիտամշակութային պարբերականների շարքում ուրույն տեղ է գրավում «Լոյս» (Քեմբրիջ, 1901–1907, Բոստոն, 1907–1908) կիսամսյա, ապա՝ միամսյա գիտական, բարոյական և իմաստասիրական հանդեսը: Խմբագիրը Միք. Մինասյանն էր, մասնագիտությամբ՝ մանկավարժ:

Հանդեսը նպատակ էր դնում իր ընթերցողների «զգացումները ազնուացնել եւ խորհուրդները լայնցնել» (1901, թիվ 1, էջ 1): Այն չէր սահմանափակվում միայն քաղաքակրթության և գիտության նվաճումները, գիտական աշխարհի նորությունները ժողովրդականացնելու գործով: Հանդեսում կարևոր և մշտական տեղ ունեին և՛ կրթական, և՛ խոհափիլիսոփայական, և՛ հոգեբանական, և՛ հասարակագիտական, և՛ բարոյախոսական, և՛ կրոնական, և՛ այլ բնույթի խնդիրներ լուսաբանող հոդվածները, որոնք բոլորն էլ նպատակամղված էին ընթերցողների գիտելիքները, մտահորիզոնը լայնացնելուն և բարոյական հատկանիշները բարձրացնելուն, միաժամանակ դուրս չգալով հանրամատչելիության և դյուրըմբռնելիության շրջանակներից: Հանդեսի մարդասիրական ուղղվածությունը բնութագրող տիպական հոդված է հենց առաջին՝ «Զգացում եւ խորհուրդ» վերնագրով հոդվածը, որտեղ քննարկվում է մարդկային հասարակության կյանքում, ազգերի և պետությունների ճակատագրում զգացմունքների և գիտակցության հարաբերակցության հարցը: Պատմական բոլոր իրադարձությունների, հասարակության առաջընթացի շարժիչ ուժը համարելով զգացմունքները, հանդեսը ամենևին չի թերագնահատում բանականության նշանակությունը, դրան վերապահելով զգացմունքները անհրաժեշտ հունով ուղղորդելու կարևոր դերը: Մարդկային քաղաքակրթության զարգացման վերջնական նպատակը մարդու բնության այս երկու կողմերը զարգացնելն է, քանի որ ազատության, արդարության և սիրո երջանիկ թագավորությունը այն չափով կհաստատվի երկրի վրա, ինչ չափով, որ «Մարդկութիւնը տիրանայ լայն խորհուրդներէ առաջնորդուող ազնիւ զգացումներու, այսինքն՝ ունենայ մեծ սիրտ մը մեծ միտքի մը միացած» (Նույն տեղում, թիվ 1, էջ 2): «Լոյս» հանդեսի նյութերի գերակշիռ մասը ուղղակիորեն կամ անուղղակիորեն

առնչվում են մարդուն, նրա բնույթին, հոգեբանությանը, մարդկային հասարակությանը, կամ դրանց հարակից թեմաների («Ինչո՞ւ փախկոտ ենք», «Երկու հակապատկեր», «Կեանքի տեւողութիւնը կենդանիներուն մէջ» և այլն):

«Լոյսը» ազատ մուտք է ունեցել Թուրքիա և լայն ընդունելություն գտել այնտեղ:

«ՀԱՅՔ» (1891–1898)

XIX դարի վերջի ամերիկահայ իրականության մեջ ամենանշանավոր պարբերականը՝ «Հայք» կիսամսյա հանդեսը, լույս է տեսել Նյու Յորքում 1891 թ. հունվարի 1-ից: Հրատարակիչ-խմբագիրն էր Մ. Սմբատ Գաբրիելյանը՝ բազմակողմանի կրթություն ստացած մի մտավորական, լայնախոհ ու ազգասեր հասարակական-քաղաքական գործիչ:

Սմբատ Գաբրիելյանը ծնվել է 1856 թ. դեկտեմբերի 15-ին Ակնում[1]: Սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում, ապա՝ Խարբերդում, որից հետո երկու տարի հայերեն է դասավանդել Այնթապի Կեդրոնական Թուրքիա քոլեջում, որտեղ և 1878–1881 թթ. ուսանել է բժշկություն: Մի քանի տարի հայրենի Ակնում որպես բժիշկ աշխատելուց հետո՝ Ս. Գաբրիելյանը մեկնում է Փարիզ ուսումը շարունակելու: 1884–1885 թթ. ուսանելով Փարիզի համալսարանում և բժշկի վկայական ստանալով՝ նա վերադառնում է Այնթապ՝ այս անգամ արդեն բժշկություն դասավանդելու[2]: 1885–1886 թթ. Ս. Գաբրիելյանը Այնթապի նշված քոլեջում դասախոսական աշխատանքը համատեղում է Ազարիա-Սմիթ հիվանդանոցում բժշկի աշխատանքի հետ, ապա որոշում է հաստատվել Կ.Պոլսում: Սակայն հանգամանքներն այլ կերպ են դասավորում նրա կյանքը: Թուրքական իշխանությունների կողմից արգելվում է Ս. Գաբրիելյանի դեռևս 1879 թ. լույս տեսած «Վերականգնումն Հայոց» աշխատությունը, և հեղինակը, հետապնդումներից խույս տալով, Կ. Պոլսից անցնում է

[1] Տե՛ս Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույցը. Ա. տարի, Պոստոն, 1912, էջ 262:
[2] Տե՛ս Փափազյան Մ. Կ., Մ. Սմբատ Գաբրիէլեան, Լոս Անջելես, 1939, էջ 38–39:

Վառնա[1] և այնտեղից էլ 1886 թ. աշնանը՝ ԱՄՆ: 1894–1897 թթ. նա Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում ուսումնասիրում է պատմություն, սոցիոլոգիա, քաղաքատնտեսություն[2]:

Ս. Գաբրիելյանը կարևոր դեր է կատարել ամերիկահայ գաղթօջախի հասարակական կյանքում: Տարբեր ժամանակներում նա եղել է Նյու Յորքի Հայ հայրենասիրաց միության, Հայ հառաջադիմական ընդհանուր ընկերակցության, Ամերիկահայ գաղթային խորհրդի նախագահը, դասախոսություններ է կարդացել ազգային, պատմական, քաղաքական, մշակութային և այլ թեմաներով: Նա հավասարապես տիրապետում էր անգլերենին և ֆրանսերենին, գերազանց գիտեր ժամանակակից հայերենը, գրաբար և թուրքերեն: Նրա առաջին գրական ստեղծագործությունները հրատարակվել են Ակնում լույս տեսնող խմորատիպ «Ծաղիկ» պարբերականում[3]: Աշխատակցել է բազմաթիվ հայ (Կ. Պոլսի «Արևելք», Վիեննայի «Հանդէս ամսօրեայ», ԱՄՆ-ի «Կոչնակ» և այլն) և ամերիկյան պարբերականների: Տասնյակից ավելի նրա աշխատությունները՝ հայերեն և անգլերեն, նվիրված են հասարակական-քաղաքական, ազգային, պատմական և բանասիրական հարցերի: Սակայն նրա թերևս ամենամեծ երախտիքը «Հայք» հանդեսի ավելի քան յոթ տարվա ստվար հատորներն են, որոնք խմբագրի հասարակական-քաղաքական հայացքների արգասիքը լինելուց բացի, ուշագրավ դիրք են ունեն հայ պարբերականների շարքում:

Ս. Գաբրիելյանը մահացել է 1919 թ. հունիսի 3-ին:

Ձեռնարկելով «Հայք» հանդեսի հրատարակությանը, Ս. Գաբրիելյանը նշում է հրատարակության դրդող երկու գլխավոր շարժառիթ. «...նախ՝ մեր ազգային գոյութեան տագնապալից վիճակն, որ ազգի բոլոր ույժերն կը հրաւիրէ ի գործակցութիւն եւ երկրորդ՝ զի Հայ գաղթականութիւնք արագապէս ստուարանալով ի Միացեալ Նահանգս՝ պէտք ունին ազգային հաղորդակցութեան կանոնաւոր գործիքի մի» (1891, թիվ 1, էջ 1): Այս դրդապատճառներն էլ հենց իրենց գործուն դերն են ունենում «Հայքի» նպատակադրումների և ծրագրի կազմավորման մեջ, որոնք շատ հստակ և որոշակիորեն

---

[1] Տես նույն տեղում, էջ 10:
[2] Տես Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 262, Փափազյան Մ. Կ., նշվ. աշխ., էջ 15:
[3] Տես Ակն եւ ակնցիք, նախ. եւ խմբ. Ա. Քէչեան, Փարիզ, 1952, էջ 678:

ձևակերպված են առաջին համարում: Հանդեսը նպատակ էր դնում սատարել ազգային փրկությանը, օժանդակել գաղթականության նյութական և բարոյական առաջադիմությանը և նպաստել ազգի ֆիզիկական զարգացմանը, ուստի և «իւր էջեր պիտի նուիրուին Հայկական խնդրոյ, Հայոց պատմութեան եւ լեզուին քննութեան եւ առողջապահական յօդուածոց» (նույն տեղում): Այն ներկայանում է որպես «Ազգային, քաղաքական և առողջապահական» հրատարակություն:

«Հայքը» զուտ անհատական ձեռնարկ էր և կրում էր իր խմբագիր-հրատարակչի քաղաքական հայացքների խոր կնիքը: Լինելով անկուսակցական պարբերական, այն իր որոշակի դիմագիծը, ծրագիրը և ուղղությունը ուներ, որոնք այն տարբերում էին իր ժամանակի շատ պարբերականներից և, շնորհիվ իր խմբագրի հասարակական-քաղաքական հայացքների, ուներ որոշակի գաղափարական ուղղվածություն:

Հայ ազգային-ազատագրական պայքարի մասին Ս. Գաբրիելյանի դիրքորոշումը երևան է գալիս «Հայքի» հենց առաջին համարներից: Հանդեսի առաջին էջերը զբաղեցնող հոդվածը կրում է «Հայկական իրաց վիճակն եւ կեդրոնական յանձնախմբի մը պէտքը» խորագիրը, որտեղ խմբագիրն առաջ է քաշում կենտրոնական հանձնախումբ ստեղծելու և ազատագրական պայքարը մի միասնական կենտրոնից ղեկավարելու խնդիրը: Քննության առնելով Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակը և կացությունը Թուրքիայում, սուլթանի քաղաքականությունն իր հպատակ ազգերի, մասնավորապես հայերի նկատմամբ, հեղինակը եզրակացնում է, որ հայերի ազատամբական շարժումները, ցույցերը բնական և օրինաչափ հետևանք են այդ քաղաքականության: Հայ ժողովրդի ազգային և քաղաքական կազմակերպվածությանն անդրադառնալով՝ իրավացիորեն նկատում է, որ «Տաճկաստանի Հայ ժողովուրդն այսօր մարմին մը չկրնար համարուիլ եւ իբր մարմին գործելու անզօր է» (1891, թիվ 1, էջ 2): Նա բանական ելք էր տեսնում արտասահմանի հայրենասիրական միությունների միավորման և գործակցության մեջ, որոնք պետք է կազմավորեին «ազգային տիեզերական կեդրոն» Թուրքիայից և Ռուսաստանից դուրս, «եւրոպեան ազատ հողոյ վերայ»: Այս կենտրոնական մար-

մինը կամ հանձնախումբը «Հայ գաղթական աշխարհին ներկայացուցիչն եւ գլուխն պիտի ճանչուի եւ պաշտօն պիտի ունենայ ազգային ոյժերն եւ հայրենասիրական ջանքերն կազմակերպել եւ վարել, ինչպէս նաեւ օտար տէրութեան առջեւ պաշտօնական ներկայացուցիչն լինիլ» (նույն տեղում, էջ 3):

«Հայքը» հաջորդաբար քննարկման է դնում ստեղծվելիք կենտրոնական հանձնախմբի կազմակերպական և ֆինանսական հարցեր պարունակող ծրագրի զույգ տարբերակները, հրապարակում ընթերցողների նկատառումները: Ս. Գաբրիելյանը նաև իր նպատակի իրագործման նախաքայլերն է անում. Նյու Յորքում նրա նախաձեռնությամբ 1891 թ. ապրիլին ստեղծվում է Հայ հայրենասիրաց հանձնախումբը, որը նպատակ ուներ աշխատել Եվրոպայում Կենտրոնական հանձնախմբի կազմակերպման ուղղությամբ:

1893 թ. «Հայքն» առաջարկում է Փարիզում կամ Լոնդոնում համահայկական ժողով հրավիրել «ազգային քաղաքականութիւն որոշելու համար»: Հանդեսի էջերը տրամադրվում էին բանախոսելու, բանավիճելու, կարծիքներ փոխանակելու, տեսակետներ հայտնելու և ուղեգիծ մշակելու համար: «Հայքն» առաջինն սկսում է Ներսես պատրիարքի՝ Հայկական հարցի մասին ունեցած տեսակետների տպագրումով: Սակայն այս առաջարկն էլ ցանկալի արդյունք չի տալիս, և Կենտրոնական հանձնախմբի ստեղծման գաղափարը հետզհետե մարում է հանդեսի էջերում:

Պարբերականը, որի ստեղծման նպատակներից մեկն էլ Հայկական հարցի լուծման ուղիների մշակման և Հայաստանի անկախության հարցի պարզաբանումն էր, հենց առաջին համարներից է ցուցահանում իր քաղաքական դիմագիծը: Հայ ազգային-ազատագրական մտքի ձևավորման և պայքարի զարթոնքի այդ շրջադարձային տարիների պատմական պահի լրջությունը ըմբռնելով էր, որ «Հայքը» գրում էր. «Հայը գոյութեան վճռական մրցանքի բռնուած է, որոյ ելքն պիտի լինի կեանք կամ մահ» (1891, թիվ 1, էջ 1): Այս պատմական բախտորոշ պահին «Հայքն» առաջ չէր քաշում Հայաստանի ազատագրության և անկախության հարցը, այլ պահանջում էր միայն ինքնօրինություն սամանյան տիրապետության տակ, Բեռլինյան դաշնագրի 61-րդ հոդվածի գործադրությունը և բարեկարգումների իրագործում՝ եվրոպացի կառավարչի հսկողությամբ: Եվ քանի

որ Հայոց պահանջն այս ձևով իսկ անընդունելի էր Բ. դռան համար. Ս. Գաբրիելյանն առաջարկում էր հող նախապատրաստել՝ ֆրանսալեզու «Լ'Արմենի» և «Հայաստան» թերթերի միջոցով «յեղյեղել զայն Եւրոպայի ականջին», իսկ «Հայքի», «Հնչակի» և «Արմենիայի» «պաշտօնն է լուրջ սկզբանց քարոզութեամբ կրթել Հայ գաղթականութիւնները, ներշնչել ի նոսա ինքնապաշտպանութեան եւ անձնուիրութեան զգացումներ, յորդորել զնոսա ի միաբանութիւն եւ ի միութիւն...» (1891, թիվ 6, էջ 42): Այս նույն հոդվածում հենց, որը կոչվում է «Սուր երկսայրի», Ս. Գաբրիելյանը բացահայտում է իր ծրագրի դիվանագիտական կողմը ևս, ամենևին էլ ոչ երկրորդական դեր վերապահելով նրան: Մի կողմից դիվանագիտական բոլոր հնարավոր միջոցների օգտագործում, մյուս կողմից՝ ազգի կազմակերպում և ինքնապաշտպանական ուժերի համախմբում:

Այսպիսով, «Հայքը» պայքարի խաղաղ ձևերով չէր սահմանափակվում: Խմբագիրն ինքն էլ գիտակցում էր, որ միայն դիվանագիտական միջոցներով ազատագրության հասնել հնարավոր չէ: Ս. Գաբրիելյանը դրան է միացնում «զինու զօրութիւնը», որ, ըստ նրա, հաղթանակի հնարավորություն է ընձեռում: Եվ այստեղից էլ բանաձևվում է հանդեսի հավատամքը. «Հայքի» քաղաքականութիւնն է «Երկսայրի սրոյ» քաղաքականութիւնն» (նույն տեղում):

Ներկայացնելով հայ ժողովրդի իմացական, նյութական և ֆիզիկական չօգտագործված հնարավորությունները՝ Ս. Գաբրիելյանը նշում է այդ ամենով հանդերձ ազգի ակարության երկու գլխավոր պատճառ. ժողովրդի իմացական և նյութական ուժերի անկազմակերպ, ցրված լինելը և ֆիզիկական ուժի անմշակ ու վայրենի վիճակի մեջ գտնվելը: Հեղինակը հիշատակում է շատ կարևոր և հայերին պակասող մի գործոն ևս՝ ազգի հոգևորապես վերածնության պետքը: Հայը «զարնել պիտի գիտնայ, զինուորի նման զարնել» (նույն տեղում): «Հայքը» մեկ անգամ ևս մանրամասնում է իր քաղաքականությունը, ավելի ճիշտ՝ իր գործունեության նպատակն ու կոչումը: Մեկ այլ առիթով նա գրում է. «Ուրեմն պէտք է, որ մէկ ձեռքով բարձր բռնեմք մեր բողոքն ի տես համօրէն քաղաքակիրթ աշխարհի, մանաւանդ Պէռլինյան դաշնագիրն ստորագրողաց ...

Իսկ միւս ձեռքով պարտիմք բռնել ՍՈՒՐՆ» (1891, թիվ 14, էջ 106):

Հանդեսի էջերում մշակվում է նաև ազգային քաղաքականության մի որոշակի ուղղություն, որն ամբողջանում է «Հայքի» 1893 թ. մի քանի համարներում «Ազգային քաղաքականութիւն» վերնագրով: Ս. Գաբրիելյանն իր ազգային քաղաքականության ուրվագիծը մշակելիս ելնում է ազգի լինել-չլինելու, որպես ազգ գոյատևելու և վերածնվելու այն հիմնախնդիրներից, որ դրել էր ժողովուրդների առջև պատմական ժամանակաշրջանը: Հարկ է նշել, որ «Ազգային քաղաքականութիւնը» շարադրվել էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ դեռ չէին սկսվել հայերի զանգվածային կոտորածները, և թեև այն չի կրել այդ արհավիրքների սթափեցնող ազդեցությունը, սակայն հեղինակը միանգամայն իրատեսորեն էր գնահատում վտանգի մեծությունը:

Հատկանշական է, որ Ս. Գաբրիելյանն այժմ արդեն ազգի փրկության գործում հույս չի դնում դաշնագրերի գործադրության վրա: 61-րդ հոդվածի կիրառումը համիդյան վարչակարգի պայմաններում անիրականանալի էր համարվում, իսկ հայկական գավառների բարեկարգումը՝ անհնարին: Այս եզրակացությանը հանդեսը հանգել էր նաև իր նախորդ հոդվածներում: «Հայկական խնդիրն,- գրում էր նա,- հայ ազգի գոյութեան եւ չգոյութեան, Հայաստանի վերածնման կամ վերջնական կորստեան խնդիրն է» (1893, թիվ 8, էջ 119): Հայկական հարցի այսպիսի լայն ըմբռնումից ելնելով՝ հեղինակը հայտնում էր իր մասնավոր տեսակետը հայ ազգային քաղաքականության ուղղվածության մասին և խորհրդակցության հրավիրում:

Բարձր գնահատելով Ներսես Վարժապետյանին, որպես ազգային, քաղաքական գործչի՝ Ս. Գաբրիելյանը բացահայտում էր նրա քաղաքականության թերի կողմերը, ավելի ճիշտ՝ այդ քաղաքականության և հայ ժողովրդի վիճակի, քաղաքական հասունության մակարդակի միջև եղած հակասությունը: Ժողովրդի տառապանքը դեռևս նախապայման չէր ազատություն ստանալու: Այսպիսի ժողովրդի համար միայն գթություն կարելի էր հայցել, իսկ «Ազատութիւնն չպահանջուիր բանիւ, այլ կառնուի բռնութեամբ, կը ստացուի կռուով եւ կը պահպանուի զօրութեամբ» (Նույն տեղում, էջ 121): Ս. Գաբրիելյանը չէր մեղադրում պատրիարքին իր դիվանագիտական, թեկուզև ապարդյուն, ճիգերի համար, գտնելով, որ դա էր լավագույնը տվյալ պարագայում, սակայն նշում էր անցյալի քաղա-

քականության կարևորագույն սխալները՝ եվրոպական դիվանագիտության մասին թյուր պատկերացումը և հայերին ոչ ճիշտ ձևով Եվրոպային ներկայացնելը. մինչ այդ ներկայացվել էր որպես քրիստոնյա, կրոնական ազգ, ոչ որպես «ազգային զգացմամբ տոգորված ցեղ՝ պատրաստ ազգային քաղաքական կեանքի» (1893, թիվ 9, էջ 136)։ Ս. Գաբրիելյանն իրավացիորեն կարծում էր, որ ոչ մի տերություն չի պատերազմի հանուն հայերի, իսկ այդպիսին գտնվելու դեպքում էլ՝ կպահանջի հայերի մարտնչող գործակցությունը և ոչ մի տերություն ի վիճակի չէ տալու ճշմարիտ ազատություն, քանզի «ազատութիւնն վիճակ մ'է, որում ժողովուրդն ինքն պարտի կրթութեամբ, արդեամբ, ճգամբ հասնիլ» (1893, թիվ 10, էջ 151)։

Ելակետ ընդունելով այս սկզբունքները՝ հեղինակը պարզաբանում է մի քանի կարևոր գործնական հարցեր՝ արդյոք կարո՞ղ են հայերը մարտնչել, հնարավո՞ր է զինել և զինվորական կրթության տալ երիտասարդությանը, կարելի՞ է արտասահմանի հայ երիտասարդությանը օգտագործել թուրքերի դեմ պատերազմելիս, օտար պետությունների հանդեպ հայերի վերաբերմունքը, դիվանագիտական գործունեության դերը և այլն։

Առավել խրատական է Ս. Գաբրիելյանի դիրքորոշումը դիվանագիտական գործունեության և օտար պետությունների օգնության վերաբերյալ։ Հայ դիվանագիտություն որպես այդպիսին, չկա և չի կարող լինել, քանի որ գոյություն չունի և հայկական պետություն։ Դիվանագիտական բոլոր դիմումները խնդրագրի բնույթ ունեն և օրինականությունից ու ազդեցությունից զուրկ են։ Հայերի «ոչ-օրինական դիւանագիտութիւնն» այն ժամանակ միայն ազդեցիկ կդառնա, մանրամասնում է հեղինակը, երբ մեծ տերությունները համոզվեն, որ հայերը ուժ ունեն և այդ ուժը գործածելու պատրաստ են, դրանով իսկ գոնե վրդովելով միջազգային խաղաղությունը և օտարի միջամտության տեղիք տալով։ Հայերի դիվանագիտական գործունեությունը պետք է սահմանափակվի զանազան հրատարակություններով Եվրոպայի «հանրային կարծիքն ի նպաստ մեզ շինելու մէջ» (1893, թիվ 10, էջ 152)։ Եզրակացությունը, որ հայ ժողովուրդն իրոք պետք ունի ուրիշ տերության իրական աջակցության, սակայն այն ստանալու առաջնագույն պայմանն է հայ զինված ուժի առկայությունը, «Հայքի» համոզմունքն է. «Որպէսզի

Հայ ազգն ու հայրենիքն փրկուին, վերածնին, պէտք է, որ Հայք ոչ տիրացու, այլ աշխարհական, ոչ լոկ խօսող, այլ մարտնչող եւ բուռն ժողովուրդ մի լինին» (նույն տեղում, էջ 153):

Հայոց արտաքին քաղաքականությունը ուղենշելիս խմբագիրը ելնում էր ժամանակի միջազգային քաղաքական իրադրությունից և, իրատեսորեն գնահատելով այն, Հայաստանի բախտն ու ապագան կախված էր համարում եվրոպական մեծ տերությունների Թուրքիայում ունեցած քաղաքական և տնտեսական հակամարտ շահերից ու ձգտումներից: Այս տերությունների շարքում նա առանձնացնում էր ժամանակի երկու գերհզորներին՝ Անգլիային և Ռուսաստանին, կարևորելով թե՛ մեկի և թե՛ մյուսի համակրանքը շահելը: Մանավանդ վերջինիս կատարելիք դերը Արևելյան խնդրի լուծման գործում՝ կասկածի տեղիք չէր տալիս: Հայկական հարցի լուծման տեսակետից հայերի համար վտանգավոր և կործանիչ էր նկատվում ինչպես ռուս, այնպես էլ հայ սոցիալիստների գործունեությունը:

«Հայքի» ռուսական կողմնորոշումը դրսևորվում է նրա հրատարակության առաջին տարվանից: Դեռևս 1891 թ. հանդեսը պատկերավոր գրում էր «... Ռուսիա է այն պետութիւն, որ կրնայ առաւել քան զայլ ամենայն օգնել կամ վնասել մեզ: Նա ճիշդ մեզ կից է. կրնայ մեզ քարին զարնել, կրնայ մեզ վեր բռնել իւր հզօր բազկաւ և ի հեճուկս ամէնուն...» (1891, թիվ 18, էջ 138):

Հայկական հարցի լուծման գործում եվրոպական պետությունների, մասնավորապես Ռուսաստանի գործուն մասնակցությանը և դերին «Հայքն» առավելապես շատ է անդրադառնում 1894–1896 թթ. հայկական կոտորածներից հետո: Այս իրադարձությունները թեև որոշակի ազդեցություն գործեցին Ս. Գաբրիելյանի քաղաքական հայացքների ողջ համակարգի վրա, ստիպելով նրան վերագնահատել երևույթները, սակայն ամենևին էլ բեկումնային չդարձան: Խոր հիասթափություն և հուսախաբություն են արտահայտում արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի, արևելյան քաղաքականությանը նվիրված հոդվածները: Նրանց վարած քաղաքականությանը Ս. Գաբրիելյանի տված գնահատականը ճշգրիտ բնորոշումն էր Հայաստանում ստեղծված իրադրության. «...աւելի ճշմարիտ կը լինէր ասել. շնորհիւ եւրոպական պաշտպանութեան եւ

համակրանաց կը կործանի Հայաստան» (1897, թիվ 4, էջ 59): Չարդարացնելով նաև Ռուսաստանի բռնած դիրքը Հայկական զանգվածային ջարդերի նկատմամբ՝ նա, այնուամենայնիվ, ռուսական քաղաքականությունն ավելի նպաստավոր է համարում: Եվ թեև հայերի և Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշումը փորձ է արվում մեկնաբանել և բացատրել նրանց տնտեսական ու քաղաքական հակամարտ շահերի բախման տեսանկյունից, մեղադրվում են նաև հայերը իրենց դիվանագիտական սխալ գործունեության, քաղաքական իրադրությունը ճիշտ գնահատելու անկարողության, անհեռատեսության և անխելամտության համար:

Հայ ազգային-ազատագրական պայքարի վերջնական նպատակը Հայկական վարչական ինքնօրինության ձեռք բերումն էր օսմանյան գերիշխանության տակ, ընդ որում, Ս. Գաբրիելյանը հարմար էր գտնում ունենալ ոչ թրքահպատակ, այլ օտարազգի և օտարահպատակ քրիստոնյա կառավարիչ: 1894–1896 թթ. հայկական կոտորածները որոշ սրբագրումներ մտցրեցին Ս. Գաբրիելյանի այս տեսակետների մեջ ևս: Դրանք առնչվում են հենց հայ դատի լուծման գործում Ռուսաստանի դերի բարձրացման մասին նրա արտահայտած համոզմունքներին և բխում դրանցից: Արդեն 1896 թ. և ավելի որոշակի՝ 1897–1898-ին երևում են հոդվածներ, որտեղ ընդգծվում են ռուսական տիրապետության ցանկալիությունը և ինչ-որ իմաստով՝ նաև անխուսափելիությունը: Ասենք, որ կոտորածներից հետո հայերի անպաշտպան և անպատրաստ վիճակին ի տես, Ս. Գաբրիելյանն այլևս չէր փայփայում Հայաստանի անկախության կամ ինքնօրինության երազները: «Հայքը» հոդվածներ է նվիրում Ռուսաստանի քաղաքակրթիչ, ինչպես և Արևելյան հարցի լուծման գործում նրա գերակշիռ դերին՝ մասնավորապես ընդգծելով ռուսների կողմից Արևմտյան Հայաստանի գրավման դրական կողմերը հայ ազգի գոյապահպանության, համախմբման, լեզվի, ազգային մշակույթի, դիմագծի պահպանման տեսակետից: Ձուլման վտանգը իրական չէր համարում, բացի այդ լավատեսորեն հավատում էր, որ այդ հսկա կայսրության ազգային միավորումները հետագայում ինքնօրեն նահանգներ պետք է դառնան, և Հայաստանն էլ դրանց թվում, «բայց քաղաքական եւ միջազգային տեսակէտով բոլորովին եւ սրտագին միացած լինելով Ռուսիոյ» (1897, թիվ 23, էջ 234):

Ս. Գաբրիելյանն ավելի առաջ է գնում իր քաղաքական կանխատեսումների մեջ: Առաջին համաշխարհային պատերազմից դեռևս 17 տարի առաջ, կարծես կանխագուշակելով պատերազմի պարագային հայ ժողովրդին սպասվող նոր աղետները, նա մարգարեանում է. «Սարսափելի բաներ պիտի պատահին, հայութիւնն իրօք կոտորուելով, սպառելու վտանգին մէջ պիտի իյնայ: Միայն մէկ բան կրնայ այդ վտանգէն փրկել զինքը. այն է՝ ռուսական գրաւում պատերազմի հրատարակութենէն անմիջապէս վերջը: Զիսաբուինք ուրիշ խօսքով, մեր ժողովուրդը զէնք չունի եւ ինքնապաշտպանութեան անզօր է բոլորովին» (1897, թիվ 5, էջ 73–74):

Քաղաքական ցույցերի նկատմամբ «Հայքի» առաջին տարվա մոտեցումները զգալիորեն տարբերվում են վերջին տարիների տեսակետից: Սկզբնական «Հայքը», հեռու լինելով ցույցը դատապարտելուց, քանի որ այն, ըստ նրա, ազգի արթնացման նշան էր, պարզապես հավանություն չի տալիս պայքարի նման ձևին: Վերլուծելով 1890 թ. հուլիսի 15-ի Գում-Գափուի ցույցի քաղաքական նշանակությունը և պատմական դասերը՝ նա ամենևին էլ չէր գերագնահատում այն, այլ սառը և սթափ դատողությամբ նշելով դրա չարաղետ հետևանքները, գրում էր, որ թուրքական կառավարության շահերից է բխում «գրգռել զհայս ի տկար ապստամբական խլրտմունս եւ ջախջախել ու հոգնեցունել զնոսա» (1893, թիվ 13, էջ 357):

Բաբը Ալիի և Օտոմանյան բանկի ցույցերից և դրանց հաջորդած ջարդերից հետո ավելի է որոշակիանում Ս. Գաբրիելյանի դիրքորոշումը: Այսպես, եթե 1895 թ. Բաբը Ալիի ցույցի առիթով «Նյու Յորք թայմզ» թերթում տպագրած իր բացատրության մեջ նա գրում է, թե «... Պոլսոյ այդ հայկական ցոյցն բովանդակ հայ ցեղին ամենատխուր յուսավրիպութեան արտայայտութիւնն էր», ապա 1896 թ. «Հայքում» տպագրված «Ի՞նչ կը խորհիք Պանքայի ցոյցին վրայ» հոդվածում արդեն խստորեն դատապարտում է դաշնակցականների՝ նման մեթոդներով գործելը, որ միշտ էլ անպայմանորեն նոր կոտորածի առիթ էր ստեղծում:

Ս. Գաբրիելյանի դիրքորոշումը շատ ավելի պարզորոշ է ձևակերպված հետևյալ տողերում, որոնք բացահայտում են նրա քաղաքական սկզբունքները և մարտավարությունն ավելի լայն ընդգրկումով: «Մեր քաղաքականութիւնը,- գրում է «Հայքը» նույն հոդվա-

ծում,- պէտք է լինէր «Հանդարտ կենալ», ցոյցէ զգուշանալ, զօրութիւն պատրաստել ապագային համար, կերակրել մեր անօթիները, նոր կոտորածոյ վտանգը ամենայն խոհեմութեամբ հեռացնել, որքան հնար է եւ սպասել, որ ժամանակը մեզի օգնութեան ժամանէր...» (նույն տեղում, էջ 147):

Ուշադրության արժանի են Ս. Գաբրիելյանի խորհրդածությունները հեղափոխության, հեղափոխական իրադրության, հատկապես հայկական հեղափոխության և «ճշմարիտ» հեղափոխականների մասին: «Հայկական յեղափոխութիւնք» հոդվածաշարում նա, ելնելով «Յառաջդիմութիւնն օրէնք է, պայքարն ալ անոր պայմանն» սկզբունքից, լուսաբանում է, թե ինչ է հեղափոխությունը՝ ապագայի պայքարը՝ անցյալի դեմ, ավանդականի դեմ՝ առաջադիմության պայքարը, «ներքին յառաջդիմութեան» և «արտաքին վիճակի» աններդաշնակության վերացումը: Հանդեսը վերլուծում է Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական իրավիճակը և ապացուցում, որ այնտեղ ստեղծվել է հեղափոխական իրադրություն: Եվ չնայած, որ հեղափոխությունը «պիտի գայ ինքնին, դէպքերու տրամաբանական ընթացքին յետեւութեամբ» (1892, թիվ 9, էջ 66), լինի տարերային և համաժողովրդական, խմբագիրն այն ընդունում է որպես վերջին, ծայրահեղ միջոց՝ չկորցնելով խաղաղ ճանապարհով ինքնորինության ստանալու հույսը:

Բնութագրական է, որ Ս. Գաբրիելյանը երբեք չէր դնում օսմանյան բռնապետության տապալման հարցը ոչ թե այն պատճառով, որ անհնարին էր համարում, այլ ոչ ձեռնտու Հայաստանի ազատագրության համար: «Բարեկամ, մտածեցէ՛ք,- գրում է նա,- եթէ այսօր Թուրքիա կործանի, այդ չպիտի նշանակէ Հայաստանի վերականգնում, պիտի նշանակէ աւելի քաղաքակիրթ եւ աւելի հզօր տէրութեան մը ենթարկուիլ» (1894, թիվ 7, էջ 9): «Հայքի» խմբագրի քաղաքական հայացքները շատ ավելի բացահայտ և որոշակի են բանավիճային այն հոդվածներում, որոնք վերաբերում են Հնչակյան կուսակցության ծրագրին և գործունեությանը: Նշենք, որ Ս. Գաբրիելյանի քաղաքական դավանանքում ազգի շահերը և ազգայինը գերադաս էին ընկերվարական ամեն տեսակի ուսմունքներից, և հենց այս դիրքերից էլ քննադատվում էր Հնչակյան կուսակցությունը: «Հայքը» հեռու էր սոցիալիստական հայացքների համար հնչակյաններին

դատապարտելուց, սակայն մեղադրելի էր համարում նրանց՝ հայ ժողովրդի իրական վիճակին և դրությանը չհարմարվելու հանգամանքը: Գնահատելի է ծրագրի մոտակա նպատակը՝ ազգային անկախության ձեռք բերումը և կուսակցության գործունեությունն այդ ուղղությամբ, իսկ թերի կողմ է նկատվում պայքարի միջոցների և ձևերի ընտրության գործում դիվանագիտության և օտար պետությունների հնարավոր աջակցության անտեսումը: Վստահ, որ հայերը միայն դիվանագիտությամբ կամ միայն զենքով ինքնորինություն ձեռք չեն բերի, հանդեսն առաջարկում է հնչակյաններին միանալ դիվանագիտական գործիչների հետ, «որպէս զի սուր եւ գրիչ միանգամայն եւ ներդաշնակ կերպիւ գործածուին ի լուծումն Հայկական խնդրոյն» (1891, թիվ 18, էջ 138):

Հնչակյան կուսակցության ծրագրի քննադատությունն աննկատ չի մնում: Շուտով ստացվում է կուսակցության ներկայացուցիչ, տնտեսագետ Նշան Կարապետյանի (Ռ. Խան-Ազատ) պատասխանը Աթենքից, որի տպագրումով էլ սկսվում է բանավեճը: Այն թեև սուր բնույթ չի ստանում, քանի որ խմբագիրն ինքն էլ դեմ էր պարբերականի էջերն անպտուղ բանավեճի ծառայեցնելուն, այնուամենայնիվ օգնում է ամբողջությամբ բացահայտելու Ս. Գաբրիելյանի հայացքները հատկապես այդ հարցի վերաբերյալ: Հենց նույն համարում տպագրվում է նրա պատասխանը «Ընկերվարականութիւնը եւ Հայկական խնդիրն» խորագրով, որտեղ ավելի հանգամանորեն են քննարկվում ծրագրի սոցիալական որոշ դրույթներ՝ տնտեսական հավասարություն, հողի, մասնավոր սեփականության հանրայնացում, հայ իրականության մեջ սոցիալիզմի կիրառման հնարավորություն և այլն: Ս. Գաբրիելյանն ապացուցում է, որ Հայաստանում տնտեսական և քաղաքական նախադրյալներ չկան սոցիալիզմի տարածման համար, և հայ ժողովուրդն «ընկերվարութիւնն հասկնալու անգամ անկարող է»: Նա գրել է տալիս, թե «պէտք է այժմ խօսիլ Հայոց անմիջական պիտոյից եւ ներկայ վիճակի մասին, այն է՝ քաղաքական եւ վարչական բարեփոխութեանց մասին, վասն զի մինչեւ որ կառավարական բարեփոխութիւն չլինի, անհնար է, թէ ընկերական բարեքումներ իրագործուին» (1891, թիվ 22, էջ 173):

1892 թ. թիվ 1-ում «Հայքը» տպագրում է Աթենքից ստացված մեկ նամակ ևս՝ Գ. Գալֆայանի «Սոսիալիզմը հայ ժողովրդի մէջ» վերնագրով, որն առիթ է դառնում թիվ 2-ում «Թէ ինչպիսի՞ ինքնօրինութիւն պէտք է Օսմանեան Հայաստանի: Հնչակեան պահանջմանց անտեղիութիւնն» խորագրով ընդարձակ հոդվածում Ս. Գաբրիելյանն ավելի հանգամանալից է անդրադառնում արդեն իսկ արծարծված հարցերին՝ այս անգամ արդեն Հայաստանում հաստատվելիք պետական վարչաձևի առնչությամբ: Մերժելով Հնչակյան կուսակցության ծրագրի այն դրույթները ևս, որոնք վերաբերում են ապագա ազատ Հայաստանի պետական կարգին, նա այն համարում է ծրագրի «քան զամենայն տկար կէտն»: Հիմնական փաստարկներից մեկն այն է, որ «բաւական չէ, որ կառավարական դրութիւն մի ինքնին լաւ լինի, պէտք է, որ այն յարմարի կառավարելի ժողովրդեան» (1892, թիվ 2, էջ 12): Հեղինակը կարծում է, որ հայ ժողովուրդն իր զարգացման, կրթության, քաղաքակրթության մակարդակով կարիք ունի կառավարվելու, ոչ թե կառավարելու: Իշխանության ղեկը ռամիկներին հանձնելը կնշանակեր ժողովրդին անիշխանության մատնել: Հայ ժողովուրդը պետք է ունենա վարչություն իր ազգային, կրոնական և տնտեսական պահանջմունքներին համեմատ:

Հենց այս գլխավոր նպատակի՝ «ինքնօրէն» և «քրիստոնեայ Հայաստանի» պահանջն է, որ մղում է Ս. Գաբրիելյանին ազատագրական պայքարի ձևերի ու միջոցների ընտրության հարցում հակադրվել ժամանակի (մասնավորապես Հնչակյան) կուսակցությունների տեսակետին: Ավելին, նպատակին հասնելու ճանապարհին խանգարիչ հանգամանք է նկատվում սոցիալիստական գաղափարախոսությունը: Առարկությունը հիմնականում վերաբերում է սոցիալիզմը գործունեության հիմքում դնելու վաղաժամությանը և կուսակցության անդամակցության պայման դարձնելուն: Եթե երկրորդ կետը կուսակցության մեջ մտնելը արգելում է բոլոր անկեղծ հայրենասերներին, ովքեր չեն ընդունում սոցիալիզմը, ապա առաջինը զրկում է կուսակցությանը, նաև ժողովրդին, թե՛ նյութական, թե՛ քաղաքական, դիվանագիտական օգնությունից: Այս տեսակետից Ս. Գաբրիելյանը շատ վտանգավոր և անխոհեմ քայլ է համարում Հայաստանը «սօսիալիստներու գործունէութեան ասպարէզ եւ

բոյն երեւցունել» (1893, թիվ 18, էջ 284): *Առարկություններից մեկը սոցիալ-դեմոկրատների գործունեության ասպարեզի չափ լայն ընդգրկումն էր. նրանք խնդիր էին դնում բարեկարգել Թուրքիան մի ծայրից մյուսը, որի ո՛չ կոչումը և ո՛չ էլ ուժը ունեին, որով և վտանգում էին Հայ դատը և անվանարկում այն Եվրոպայի աչքին:*

Սակայն այս հիմնավոր քննադատություններն ամենևին էլ չէին խանգարում, որ Ս. Գաբրիելյանը գնահատի ազատագրության գործին հնչակյանների բերած նպաստը և նվիրումը: Ներկայացնելով նրանց որպես կազմակերպելու ունակ անկեղծ գործիչներ՝ խիզախ, հայրենասեր, ժողովրդասեր, հիանալով նրանց գործունեության և «անխոնջ եռանդին վերայ, նոցա արութեան եւ ժրութեան վերայ»՝ հանդեսը նաև իր քննադատական խիստ խոսքն է ասում. «առանց նախապատրաստութիւններն կատարելագործելու կ՚ածապարեն ի գործ…

Չգործել յանցանք է, յախուռն գործել աւելի մեծ յանցանք է: Հայաստանի ժողովրդական մեծ զանգուածին հետ խաղալ՝ հայ ցեղին մահու կամ կենաց վճիռն պատրաստել է…» (1892, թիվ 19, էջ 146):

Բանավեճը շարունակվեց մինչև 1894 *թ.: Կուսակցություններին քննադատելուց և բանավեճից հրաժարումը պատճառաբանվում էր հակառակորդ կողմից սխալ ընկալվելու հանգամանքով և կուսակցությունների ու ժողովրդի այն ժամանակվա վիճակով: Այն ամենևին էլ խմբագրի՝ իր հայացքներից և սկզբունքային դիրքերից նահանջելու հետևանք չէր:* 1896 *թ. հանդեսը գրում էր, թե «անիրաւութիւն կը լինէր քննադատութեամբը այն տպաւորութիւնն յառաջ բերել, իբր թէ հայկական վերջին արհաւիրք լոկ հնչակեանց կամ մանաւանդ Հնչակի մոլոր ընթացքին պտուղն էին»* (1896, թիվ 4, էջ 50): *Սակայն ընդամենը մեկ տարի անց տպագրված հոդվածներում Արևմտյան Հայաստանում ստեղծված իրադրության համար կուսակցություններին ուղղված մեղադրանքները խիստ և կտրուկ են դառնում:*

1894–1896 *թթ. կոտորածներից հետո «Հայքը» խոհեմաբար խորհուրդ էր տալիս. «… մեզ կը մնայ զգուշաւոր քաղաքականութեան հետեւիլ եւ մեր ջանքերը առ այժմ ուղղել դիւանագիտական միջոցներու»* (1897, թիվ 18, էջ 193), *որը ամենևին չէր նշանակում «երկաթյի սրոյ» քաղաքականությունից հրաժարում:*

Մեծագույն սխալ համարելով Հայաստանի ազատագրության և ազգի փրկության վստահումը որևէ կուսակցության, առավել ևս մի քանի, թեկուզև ամենատաղանդավոր անհատների՝ խմբագիրն իր համոզումների հաստատումն էր գտնում հայկական ջարդերի օրինակով: «Հայքը» ներկայացնում էր հայ ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչներին (Մինաս Չերազ, Միհրան Սվազլյան, Կարապետ Հակոբյան և ուրիշներ) և նրանց տեսակետները հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ: Մեծ դրվատանքի են արժանանում հատկապես Մ. Չերազի ազգանվեր գործունեությունը և նրա խմբագրած «L'Armenie» պարբերականը այնքանով, որքանով Ա. Գաբրիելյանի ազատագրական պայքարի տեսության մեջ կարևորագույն տեղ էր վերապահվում հայ ազգը և հայ դատը եվրոպային ներկայացնելու գործին: Չերազի դիվանագիտական գործունեության նկատմամբ իր ողջ համակրանքով հանդերձ՝ Ա. Գաբրիելյանը քննադատելի է գտնում նրա չափազանց պահպանողականությունը, խաղաղ միջոցներին առավելություն տալը և այլն: Իսկ Չերազի և հայ սոցիալ-դեմոկրատների գաղափարախոսությունն ու գործելակերպը համեմատելով՝ նրանց դնում է հակառակ ծայրաբևեռներում, երկուսն էլ, ըստ Գաբրիելյանի, խիստ վնասակար:

Ա. Գաբրիելյանի հասարակական-քաղաքական դիմագիծը ամբողջացնելու տեսակետից կարևոր է մի հանգամանք ևս. «Հայքի» սոցիալ-տնտեսական խնդիրների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը: Սոցիալական հարցերի լուծման ուղին Ա. Գաբրիելյանը համարում է աստիճանական տնտեսական բարեփոխումները:

Հանդեսի մնացած նյութերի շարքում գերակշռում են Հայաստանի պատմական անցյալն ու ներկան լուսաբանող հոդվածները: Եթե Հայաստանի պատմության փառապանծ դրվագները և ազգային հերոսներին գովաբանելու նպատակը հայի մեջ ազգային ինքնաճանաչողություն արթնացնելը, ազգասիրություն և հայրենասիրություն դաստիարակելն էր, ապա արևմտահայության դժնդակ կացությունը պատկերող հոդվածներն ու թղթակցությունները ոչ միայն մայր երկրի կյանքին ծանոթացնելու, այլև ազատասիրության և պայքարի ոգի արթնացնելու նպատակն էին հետապնդում: Մեծ տեղ է տրվել Սասունի, Վանի, Ակնի և այլ վայրերի հայկական

կոտորածները և հատկապես Զեյթունի 1895 թ. ապստամբությունը լուսաբանող նյութերին: Կ. Պոլսից, Զեյթունից, Սասունից, Վանից, Կեսարիայից, Արաբկիրից, Երզնկայից, Խարբերդից, Ակնից և այլ վայրերից ստացված թղթակցությունները, որոնց ձեռք բերումը թղթակիցների սակավության պատճառով անասելի դժվարությունների հետ էր կապված, ընտրվում էին որոշակի սկզբունքով: Այս տեսակի լավ օրինակ է համարվում «Հայաստանն ինչպես որ է. Զարսանճագ» թղթակցությունը՝ Արբունի հեղինակությամբ: Առաջադրված պահանջները բխում էին «Հայքի» կիսամսյա լինելու հանգամանքից, որը զգալի չափով սահմանափակում էր նրա լրատվական-տեղեկատվական դերը՝ ստիպելով կենտրոնանալ ավելի խոր, ճանաչողական և ընդհանրացնող բնույթի այնպիսի նյութերի վրա, որոնք որոշակի եզրահանգումների հնարավորություն են տալիս:

«Հայքը» մշտապես արձագանքել է հայերի, Հայաստանի և Հայկական հարցի վերաբերյալ ամերիկյան, երբեմն նաև եվրոպական մամուլի բոլոր դրական և բացասական հրապարակումներին, արտատպելով, քննարկելով, քննադատելով և երբեմն էլ պատասխաններ հղելով տվյալ պարբերականին: Ուշադրության արժանի է Հ. Լինչի «Հայկական խնդիրը» հոդվածի համառոտությունը խմբագրի դիտողություններով, որտեղ այն շատ բարձր է գնահատվում («գեր ի վերոյ, քան գլաւագոյններն»): Սակայն Ս. Գաբրիելյանը Լինչի ոչ բոլոր տեսակետներին էր համամիտ: Օրինակ, նա Լինչի սխալն էր համարում Արևմտյան Հայաստանում թուրք կառավարիչ կարգելու միտքը և բացատրում, որ բոլոր թուրք պաշտոնյաները կաշառակեր են: Ինչպես հայտնի է, Ս. Գաբրիելյանը հարմար էր գտնում ունենալ ոչ թե թուրքահպատակ, այլ օտարազգի և օտարահպատակ քրիստոնյա կառավարիչ:

Իսկ 1895 թ. արդեն, անդրադառնալով «Մանչեստր գարդիան» թերթի՝ Հայկական հարցի լուծման ուղիների մասին խմբագրականին, Ս. Գաբրիելյանը մերժում է վարչական բարենորոգումների ուղին և պնդում միայն Հայաստանի ինքնօրինության վրա, ծայրահեղ դեպքում՝ միայն տուրքի վճարումով: 61-րդ հոդվածի գործադրության պահանջը «Հայքն» առաջադրել է միայն իր առաջին տարիներին, որից հիմնովին հրաժարվում է մեկ-երկու տարի անց:

Ամերիկահայ ազգային-հասարակական կյանքը արտացոլվել է հիմնականում ազգային, հասարակական-քաղաքական կազմակերպությունների և միությունների գործունեությունը ներկայացնող նյութերում և, հատկապես, շատ շահեկան «Հայք յԱմերիկա», ապա՝ «Ամերիկայի հայերը» խորագրերը կրող մի շարքում, որը կարևոր վիճակագրական և պատմական փաստեր ու տեղեկություններ է պարունակում գաղթօջախի բնակչության թվաքանակի, զբաղվածության, սոցիալ-տնտեսական վիճակի, կրթական և մշակութային կյանքի մասին: Տեղեկությունների հարստությամբ հատկապես աչքի է ընկնում Ս. Գաբրիելյանի «Պատմութիւն Ամերիկայի հայ գաղթականութեան» հոդվածաշարը (1892, թվերում, 4–7, 9, 14): 1897 թ. «Հայքն» սկսում է տպագրել «Վիճակագրութիւն Ամերիկայի հայոց» շարքը և ակնկալում ամերիկահայերի օժանդակությունը փաստական տվյալներ հավաքելու գործում: Իսկ խորհուրդները աշխատանքի բնույթի, արհեստների օգտակարության և ուսանելու մասին, ամերիկյան վարք ու բարքին, քաղաքավարության ձևերին ծանոթացումը գործնական և անհրաժեշտ աջակցություն էին հայ գաղթականին օտար ամերիկյան միջավայրին հարմարվելու գործում: 1897 թ. հանդեսի էջերում բացվում է նաև անգլերենի ուսուցման դասընթացը:

1890-ական թվականներին ամերիկահայ դեռևս նոր կազմավորվող գաղթօջախի համար ազգապահպանման և ուծացման հարցերը մշտապես քննարկվող թեմաներ չէին, և «Հայքն» էլ, բնականաբար, քիչ է անդրադարձել դրանց: Գաղթօջախը, որի մի զգալի մասը պանդուխտ երիտասարդությունն էր, որը փայփայում էր դրամ վաստակելու և հայրենիք վերադառնալու հույսը, դեռևս չէր կանգնել այդ հիմնախնդրի առջև: Սակայն հանդեսը քննարկել է դրանց առնչվող մի հարց՝ Ամերիկայում մնա՞լ, թե՞ վերադառնալ հայրենիք: Նշելով Ամերիկա գաղթելու վնասները, մանավանդ, երբ այդ գաղթականները 15–40 տարեկան ամուրի երիտասարդներ են, Ս. Գաբրիելյանը ընդգծում է նաև այն դրականը, որ տալիս է Ամերիկան: Ամերիկայից ուղարկվող դրամը Հայաստանում մնացած ընտանիքներին, ապա՝ կրթված և արհեստներ սովորած երիտասարդների վերադարձը ապահովում էին հայերի տնտեսական գերիշխանությունը Թուրքիայում (1892, թիվ 18, էջ 139–140):

Հայ ժողովրդի համար չարիք դարձած պանդխտության «լաւ և յոռի» կողմերի մասին խոսելով, հանդեսը գրում է. «Հայաստանէն պանդխտութեան հոսանքն աճեցունել դէպի Պոլիս եւ դէպ օտար երկիրս, ըստ մեզ, ահաւոր սխալ է. մեր դատին յոյժ վնասակար կը լինի անմիջապէս եւ վերջապէս» (1893, թիվ 18, էջ 289): 50–70 հազարի հասած ամերիկահայ գաղթօջախի գոյությունը համարվում է լավագույնը, պայմանով, որ 5–10 տարվա ընթացքում գաղթականները, դրամ շահելով, վերադառնան հայրենիք: Ամերիկայում մնալու 5 տարին վերջնական սահմանն է, քանզի ավելին արդեն սպառնում է գաղթականի առողջությանը, բարոյականին, հայությանը:

Բուն երկրում՝ Հայաստանում, հայության պահպանման կարևորության մասին «Հայքը» գրում է. «Հայութիւնն աշխարհի ամեն կողմ արձակած է իւր ճիւղեր, բայց արմատն բուն Հայաստանի մէջ է. եթէ արմատն չորնայ, հայութիւն ամենուրեք շուտով կը չքանայ: Այն հայրենասէր, որ բուն արմատին հիւթ եւ կեանք տալ աշխատած է, հայութեան մեծագոյն բարեկամն է եղած, եւ այն, որ այդ արմատին դրած է կացինն, է հայութեան ժանտագոյն թշնամին» (1892, թիվ 15, էջ 117):

«Հայ ազգութեան պահպանիչ հայ լեզուն» հոդվածում ևս անդրադառնալով ազգապահպանության հարցին և ցույց տալով, որ հարանվանական պառակտումների և այլ պատճառներով հայ եկեղեցին կորցրել է հայապահպան իր դերը, «Հայքը» հարկ էր համարում ուժ տալ ազգապահպանության մյուս կարևոր գործոնին՝ «հայ լեզուին, որ աւելի իսկ հին, նուիրական ու հայկական է, քան զհայկական եկեղեցին» (1897, թիվ 18, էջ 195): Հայոց լեզվի ազգապահպան դերն ավելի է մեծանում օրեցօր ստվարացող գաղթականության օտարացումից փրկելու գործում: Այս նպատակով Ս. Գաբրիելյանը առաջարկում է ավելացնել «Հայոց լեզուի գործածութեան աշխարհական եւ ազգային առիթները» (նույն տեղում, էջ 196) և բարձրացնում է գաղթօջախներում լույս տեսնող հայ պարբերական մամուլի դերը: Հեղինակն առաջ է քաշում նաև հայերենը օտարամուտ տարրերից, «սխալ եւ կամայական» ուղղագրությունից և քերականական ձևերից, «սխալ եւ խժալուր» բառերից զերծ պահելու խնդիրը:

Հայերենի նկատմամբ մասնահատուկ ուշադրությունը դրսևորվել է «Հայքի» հրատարակման հենց առաջին տարվանից: Տպագրվում էին քերականական, բառակազմական, ուղղագրական, ոճաբանական և այլ հարցեր քննարկող հանրամատչելի հոդվածներ: «Հայքը» առաջ էր քաշում արևելահայ և արևմտահայ գրական լեզուների մերձեցման և ի մի ձուլման հարցը, քանի որ, ըստ հանդեսի, նրանց զուգահեռ գոյությունը ազգային առաջադիմությանը արգելք էր հանդիսանում: Սակայն ձուլումը չպետք է կատարվեր մեկի կամ մյուսի հաշվին, այլ «փոխադարձ զիջողութեամբ» և «ընդհանուր քերականական եւ բուն հայերէն լեզուի սկզբանց վրայ» (1892, թիվ 24, էջ 188):

Թեև քիչ, «Հայքն» անդրադարձել է նաև գրական հարցերի՝ տպագրելով մի քանի ուսումնասիրություններ և գրախոսություններ («Րաֆֆիի երկասիրութիւնները», «Պապիկ եւ Թոռնիկ-Խրիմյան Հայրիկ», «Պատկեր աշխարհիկ գրականութեան արեւմտեան Հայոց» և այլն): Այս առիթով տեղին է նշել ոչ գեղարվեստական երկերի գրախոսականները՝ կոմս դը Շոլեի «Հայաստան, Քրդստան եւ Միջագետք» և Ժյուլ դը Բլեռքի «Ուղեւորութիւն ի լեառն Արարատ» երկասիրությունների մասին: Տպագրվել են նաև նշանավոր (Գամառ-Քաթիպա, Մկրտիչ Պեշիկթաշլյան, Միքայել Նալբանդյան, Հ. Պարոնյան և ուրիշներ) և անհայտ գրողների ստեղծագործություններից, ժողովրդական երգեր և հայ բանահյուսական պատառիկներ: «Հայքում» են տպագրվել նաև խմբագիր Ս. Գաբրիելյանի բանաստեղծությունները:

Հրատարակության առաջին տարում լինելով նաև «առողջաբանական» պարբերական՝ «Հայքը» գրեթե յուրաքանչյուր համարում տպագրել է բժշկական հոդվածներ՝ Ս. Գաբրիելյանի հեղինակությամբ: Դրանք աչքի են ընկնում ձևի, մատուցման և լեզվի հանրամատչելիությամբ, շոշափում են առողջապահական խնդիրներ: Հետագայում հասարակական-քաղաքական, ազգային հրատապ խնդիրները, կլանելով հանդեսի սուղ էջերը, տեղ չեն թողնում գրական և առողջապահական հոդվածների համար և դրանք սկսում են երևան գալ դեպքից դեպք:

Սկզբնական շրջանում հանդեսը հրատարակվում էր միայն հայերեն: Սակայն վերջին տարիներին Ս. Գաբրիելյանը «Հայքի» մի

քանի համար լույս է ընծայում հայերեն և անգլերեն, Ճական էջ ծավալով, միմյանցից տարբեր բովանդակությամբ: 7-րդ համարից անգլերեն «Հայքը» բաժանվում է հայերենից և հրատարակվում որպես ամսաթերթ: Նյութական դժվարությունները, սակայն, ստիպում են 9 համար հրատարակելուց հետո դադարեցնել այդ ազգօգուտ գործը:

Հրատարակության առաջին տարվանից «Հայքը» բաժանորդներ ունեցավ Անգլիայում, Ֆրանսիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ռուսաստանում, Թուրքիայում (որտեղ հանդեսի մուտքը հետագայում արգելվեց) և նույնիսկ հեռավոր Ճավայում, որտեղից և հասնում էին պարբերականի մասին դրական արձագանքներ: Այդ տարի հանդեսն ունեցավ 300 բաժանորդ: Հետագա տարիներին «Հայքի» բաժանորդների թիվը մե՛րթ ավելանում, մե՛րթ պակասում էր: և հանդեսը, չկարողանալով ծածկել իր հրատարակության ծախսերը, կլանում էր նաև իր բժիշկ-խմբագրի անձնական միջոցները: Նյութական այս դժվարությունները էին պատճառը, որ 1896 թ. «Հայքը» դառնում է ամսաթերթ և միայն 1897-ին կարողանում վերականգնել նախկին պարբերականությունը: 1898 թ. «Հայքի» բաժանորդների թիվը հասնում է նվազագույնին՝ 81-ի: Իսկ հանդեսի վերջին համարի «Խմբագրական նշմարքը» հայտնում է. «Հայքի» հրատարակութիւնը աւելի ճոխ եւ օգտակար գործելու նպատակաւ ընկերութիւն մը կազմուելու վրայ է: Այս պատճառով հաջորդ թիւը, որ նոր շրջան մը պիտի սկսի, պիտի հրատարակուի մայիսի մէջ կամ գուցե քիչ մ'աւելի ուշ...» (1898, թիվ 6, էջ 41): Սակայն «Հայքը» փրկելու ջանքերը զուր են անցնում և 1898 թ. ապրիլին այն դադարում է:

«ԱՐԾԻՒ» (1905–1906, 1908)

XX դարի սկզբի ամերիկահայ պարբերական մամուլի պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն լրագրող, խմբագիր, հրապարակախոս և հասարակական գործիչ Արշակ Տեր-Մահտեսյանի հրատարակած հայերեն և անգլերեն պարբերականները:

Արշակ Տեր-Մահտեսյանը ծնվել է 1873 թ. Արևմտյան Հայաստանի Բալու քաղաքում: 1896-ին ավարտել է Խարբերդի Եփրատ

քոլեջը, որտեղ և դասավանդել է մինչև 1900 թ.՝ ԱՄՆ մեկնելը, ապա ուսանել է Նյու Յորքի և Եելի համալսարաններում: Դեռևս աշակերտական տարիներից Ա. Տեր-Մահտեսյանն աշխատակցել է «Բյուրակնին»՝ Արցունք և Ատիլ, «Արևելյան մամուլին»՝ Արցունք, «Սուրհանդակին», «Բյուզանդիոնին» և «Մասիսին»՝ Ատիլ, Արեա, Ամիր, Ա., Արշակ և այլ ծածկանուններով: Ամերիկահայ մամուլում և իր խմբագրած «Արծիւ», «Ազատ», անգլիալեզու "Armenia" և "The New Armenia" պարբերականներում տպագրվել է Արշակ Տ. Մահտեսյան, Տ. Մ. Արշակ, Ա. Ամպրոսյան, Արմեն Կայծկլտուկյան, D. M. A. և այլ անուններով («Արծիւ», 1905, թիվ 5, էջ 76), իսկ «Ձայն հայրենեացում»՝ նաև Հատրիան (նույն տեղում, 1908, թիվ 5, էջ 11): Գ. Ստեփանյանը նշում է, որ նրա բուն ազգանունը եղել է Տիրոյան[1]: Նա աշխատակցել է նաև ամերիկյան թերթերին՝ տպագրելով հայերի, հայոց պատմության, Հայկական հարցի վերաբերյալ հոդվածներ: 1922 թ. Նյու Յորքում հրատարակել է նաև «Ազատ կարծիք» պարբերականը: Մենագրություններից ուշագրավ է անգլերեն լույս տեսած «Հայաստանը, նրա մշակույթն ու ձգտումը» աշխատությունը: Ա. Տեր-Մահտեսյանը մահացել է 1950 թ:

«Արծիւ» հանդեսը՝ կիսամսյա պարբերականությամբ, հրատարակվել 1905 թ. հուլիսի 1-ից, Բոստոնում: Ծանուցելով պարբերականի լույս ընծայման մասին՝ «Քանի մը խօսք» խմբագրականում Ա. Տեր-Մահտեսյանը հավակնում էր «Արծիւը» դարձնել «հանրային թերթ մը», պատճառաբանելով, որ ամերիկահայ գաղթօջախում հրատարակվող թերթերը «որքան ալ խնամքով ու ձեռնհասօրէն խմբագրուած, դասակարգի մը պատկանելու ոչ-մեղադրելի անպատեհութիւնովը կաշկանդուած են ու ժողովրդեան այս կամ այն մասին միայն կը խօսին» (1905, թիվ 1, էջ 2): Հրատարակության նպատակը համարելով «հանրային կարծիք և եղբայրակցութիւն» ստեղծելը՝ խմբագիրը վստահություն էր հայտնում, որ հանդեսը կբավարարի նաև այս պահանջը:

«Արծիւը» ներկայանում էր որպես «ազգային, գրական և քաղաքական» պարբերական: 1905–1906 թթ. այն հրատարակվում է ընդամենը 17 համար, որից հետո խափանվում է: Հանդեսի վերահրատա-

[1] Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, Ե., 1981, էջ 274:

րակությունը սկսվում է մեկ տարի անց՝ 1908 թ. հունվարի 1-ից, նույն ծավալով և պարբերականությամբ: Առաջին իսկ խմբագրականից՝ «Վերսկսում» խորագրով, տեղեկանում ենք հանդեսի խափանման պատճառների մասին. նյութականի հետ միասին նաև խմբագրի խիստ զբաղվածությունը միաժամանակ չորս՝ «Կոչնակ», «Ձայն հայրենեաց», "Armenia" և «Արծիւ» պարբերականներում, իսկ վերսկսման պատճառ էր համարվում գաղթօջախում տիրող «զրպարտութեան», «կասկածի», «չարախտաւորութեան», «մոլեդնածութեան» (1908, թիվ 1, էջ 2) մթնոլորտը, որի դեմ պայքարելու կոչումն էր զգում խմբագիրը: Սակայն պարբերականը նոր շրջանում խոստանում էր ավելի շատ ազգային և անհատական բարեմասնությունները դրվատել, քան թե պակասությունները նշավակել:

Հենց առաջին համարներից գրական-գեղարվեստական նյութերի գերակշռությունը մեզ իրավունք է տալիս «Արծիւը» համարելու առավելապես գրական պարբերական, և սա ավելի հատկանշական է 1905–1906 թթ. «Արծիւի» համար, քան՝ 1908-ի: Տպագրվել են չափածո և արձակ բանաստեղծություններ, վիպակներ, պատմվածքներ, նորավեպեր, ավանդավեպեր, հեքիաթներ, երգիծական մանրապատումներ և այլ ժանրերի ստեղծագործություններ, որոնց մեջ առանձնանում են հատկապես սիրո, գեղեցկության, հայրենասիրության, և կարոտի թեմաները: Գեղարվեստական երկերի մեծ մասը թարգմանություն է եվրոպական և ամերիկյան հեղինակներից, որոնցից ընտրվել են Մաքսիմ Գորկին, Հենրիկ Սենկևիչը, Ֆրանսուա Գոբբեն, Մոպասանը, Էդգար Պոն, Թեոֆիլ Գոթիեն և ուրիշներ: Առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերվել Մաքսիմ Գորկու նկատմամբ, որից հանդեսը տպագրել է երեք ստեղծագործություն՝ «Մարդուն յառաջացումը», «Մաքար Ջուտրա» և «Կեանքին առջեւ» (թարգմ. Արշակ): Հայ գրականությունը ներկայացված է գրեթե միայն տեղական գրական ստեղծագործությունների միջոցով (Ա. Տեր-Մահտեսյան, Փոսուռա, Խ. Անդրեասյան, Երվանդունի և ուրիշներ): «Թրքահայ գրականութիւն» խորագրի տակ տպագրվել է Հ. Ալփիարի «Նինի» արձակ բանաստեղծությունը:

1908 թ. հրատարակված ամենաուշագրավ ծավալուն գրական երկը արևմտահայ ազգային-քաղաքական կյանքը և Ամիդի 1896 թ. կոտորածները պատկերող «Եսթեր» վիպակն է, որը հանդեսում

տպագրված գրական ստեղծագործություններից առանձնանում է իր որոշակի հատկանիշներով: Մինչ առաջինները խմբագրի գրական նախասիրությունների, ճաշակի և գեղագիտական ընկալումների արտահայտություն են, այս վիպակը նաև նրա քաղաքական համոզմունքների հայելին է: Այն 1901 թ. լույս էր տեսել անգլերեն՝ Անգլիայում: Հեղինակը՝ Վարդենի ծածկանունով, հայի և անգլուհու զավակ, ականատեսն էր 1896 թ. հայկական կոտորածին, որը և նկարագրում էր: Վիպակի տպագրությունը 1909 թ. Հանդեսի խափանման պատճառով չի ավարտվում, սակայն վիպակի արդեն իսկ հրատարակված մասը որոշակիորեն ուրվագծում է գործողությունների հետագա ընթացքը: Այստեղ առանցքային դիրք են գրավում հայ ազգային-ազատագրական պայքարի, ազատագրության ուղիների և միջոցների մասին իրարից արմատապես տարբեր տեսակետների գործնական կիրառությունն ու բախումը: «Եսթեր» վիպակը քաղաքական որոշակի դավանանք և ուղղություն է քարոզում:

Գրական նպատակադրումներ ունեցող պարբերականի համար զարմանալիորեն քիչ են գրաքննադատական հոդվածները: Այդ քչերից են են «Միսաք Մեծարենց» (հեղ. Փասուա) հոդվածը՝ գրված բանաստեղծի մահվան առիթով, որտեղ բավական հաջող գնահատված է և՛ Մեծարենցի ստեղծագործությունը, և՛ բանաստեղծը՝ որպես բնարերգու, և «Արշակ Չոպանեան և իր քերթուածները» գրախոսականը (հեղ. Երվանդ-Արծիվ), որը Ա. Չոպանյանի «Քերթուածներ» բանաստեղծությունների ժողովածուի առաջին արձագանքն է մամուլում: Հեղինակը, անդրադառնալով Ա. Չոպանյանի նախորդ գրական և ազգային-քաղաքական գործունեությանը, արժևորում է նրան որպես սիրերգակ և զգացական բանաստեղծի: Ուշադրության ավելի արժանի են համարվում Չոպանյանի սակավաթիվ խոհական բանաստեղծությունները, որոնք գնահատվում են որպես բանաստեղծի վերջին տարիների գրական հասունության վկայություններ: «Արծիվը» գրախոսություններ է տպագրում նաև ոչ գեղարվեստական երկերի մասին, ինչպիսին Վ. Գարատաշյանի «Օսմանեան կայսրութիւնը 20-րդ դարուն» աշխատության գրախոսականն է:

Ուշագրավ մի ուսումնասիրություն է Հանդեսի մի քանի համարներում լույս տեսած Ս. Գ. Ալթունյանի «Նիրատ գոլճի գրակա-

նուԹիւնը» հոդվածը, որը պատմում է քոլեջում սկզբնավորված գրական շարժման և նրա տաղանդավոր ներկայացուցիչների մասին:

1905–1906 թթ. ամերիկահայ ազգային կյանքը ներկայացվել է հատկապես Ամերիկայի հայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպ. Սարաճյանի դեմ մղված պայքարի օրինակներով: 1906 թ. այդ պայքարը համաձուլվում է ԱՄՆ-ի վերակազմյալ հնչակյանների և որոշ խմբավորումների՝ Սարաճյանին պաշտոնանկ անելու նպատակով սկսված շարժումին: 1908 թ. հանդեսը ավելի քիչ է զբաղվում գրական խնդիրներով և ավելի շատ՝ տեղական կուսակցական պայքարով, ազգային կյանքով ու գաղթօջախի հիմնախնդիրներով: Ամերիկահայ ազգային-հասարակական կյանքի արատները քննադատվում, ծաղրվում են «Կայծկլտուն նոթեր», «Նշդրագրական», «Այժմեականք» և այլ խորագրերով բաժիններում, որոնք ստորագրվում են Ա. Ամպրոպյան (Ա. Տեր-Մահտեսյան) կեղծանվամբ:

«Արծիւը» հոդվածներ է նվիրել ամերիկահայերի վարք ու բարքին, ուշադրություն դարձրել հայ ընտանիքի հիմնախնդիրներին: Մատնանշելով հայ ընտանիքի ամրության և ամուսնալուծությունների պատճառները՝ Ա. Մ. Իգնատիոսյանը «Հայ ընտանիքն յԱմերիկա» հոդվածում առաջին անգամ բարձրացնում է նաև ազգապահպանության հարցը: «Հայ զաւակաց հայերէն մոռնալը կամ չուսանիլը» համարելով ուծացման գլխավոր պատճառ՝ հեղինակը կարծում է, որ դրան նպաստում է «Հայ ընտանիքին հարմար թերթեր չունենալը» (1908, թիվ 4, էջ 12): Այս նպատակով է, որ հանդեսում տպագրվում են հանելուկներ, թվաբանական խնդիրներ, «գիտական հարցեր» և այլն:

Հանդեսը լուսաբանում է ամերիկյան տնտեսական կյանքը, իրավական-քաղաքական կյանքը, ԱՄՆ-ում ընտրությունների կարևորությունը և կոչ է անում հայերին ոչ միայն ամերիկյան կենցաղավարության մեջ ներգրավվելու, գիտակցելու իրենց տեղն ու դերը, այլև ապացուցելու, որ իրենք էլ քաղաքակիրթ ազգ են: «Արծիւը» պատրաստվում էր գործնական քայլեր ձեռնարկել հավանական ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ամերիկաբնակ հայերի Թուրքիայում մնացած ընտանիքների պաշտպանությունը կազմակերպելու կամ Ամերիկա տեղափոխելու դյուրություններ ստեղծելու ուղղությամբ:

Թուրքիայի կացության և հայերի վիճակին հաճախ է անդրադառնում հանդեսն իր «Ընդհանուր տեսութիւն» և «Քաղաքական կացութիւններ» խորագրերով բաժիններում, նաև առանձին հոդվածներով հանգամանալից քննության առնելով Թուրքիայի միջազգային քաղաքական կացությունը: Դրանք կապելով Հայկական հարցի հետ՝ «Արծիվն» առաջարկում էր օգտվել առիթից՝ հայկական շահերը պաշտպանելու և Թուրքիայում հայերի սոցիալ-տնտեսական կյանքը բարելավելու քայլեր ձեռնարկել:

Ա. Տեր-Մահտեսյանն ազատությունը համարում էր ազգի կրթության, զարգացման և բարգավաճման անհրաժեշտ նախապայման և որպես ամենակենսական, անհրաժեշտ, օրվա պահանջ՝ ազգի կրթության և ազատության առաջնահերթության հարցն էր դնում: «Արծիվը» ոգևորությամբ և միամիտ հույսերով ընդունեց 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման և սահմանադրության հռչակման լուրը, տպագրեց ողջույնի և լավատեսական հոդվածներ: Գ. Բագեշյանի «Սահմանադրութիւն Թուրքիոյ մէջ» հոդվածը սահմանադրությանը նվիրված տողերից հետո, անդրադառնում է նոր իրադրության պայմաններում հայերի բանելիք դերին: Հոդվածագրի միամիտ լավատեսությամբ լի տողերը հատկանշական են ոչ միայն «Արծիվի», այլև հայ քաղաքական կազմակերպությունների և ժողովրդական լայն զանգվածների մի որոշ մասի պատրանքները արտացոլելու տեսակետից:

1909 թ. դադարելու պատճառով «Արծիվը» չհասցրեց լիովին հիասթափվել երիտթուրքական հեղափոխությունից, սակայն մեկ-երկու ամիս անց արդեն նրա էջերում երևում են հոդվածներ, որոնք մտահոգություն և կասկած են հայտնում, թե որքան պիտի օգտվեն կամ պիտի օգտվե՞ն երբևէ հայերը սահմանադրության ընձեռած ազատություններից: Խմբագիրը ցավ է հայտնում, որ հակառակ «պերճաշունչ հրապարակախօսութիւններուն», հակառակ «Եղբայրութիւն, Հաւասարութիւն, Ազատութիւն» «երկնագորդ աղաղակներուն» հայերը դեռևս ոչ մի իրավունք և կառավարական պաշտոն չստացան: Եվ թեև հանդեսը ոչ թե թուրքական սահմանադրությանն է մեղադրում կամ գործող օրենքները, այլ հայերին՝ անգործունակության, միավորվելու անկարողության, համերաշխության պակասի, և նաև այս ամենից բխող թուլության և ուժի պակասի համար,

այնուամենայնիվ, ավելի քան բնութագրական կարելի է համարել հետևյալ տողերը. «Աշխարհը, Արդարութիւնը, Իրաւունքը, Ազատութիւնն ու Երջանկութիւնը զօրաւորինն են ու զօրաւորինը պիտի մնան հիմա և յաւիտեան» (նույն տեղում, թիվ 20–21, էջ 3):

1903 թ. Նյու Հեյվընում Ա. Տեր-Մահտեսյանը մտնում է Վերակազմյալ Հնչակյան կուսակցության շարքերը, որին անդամակցեց մինչև 1904 թ. դեկտեմբեր՝ կուսակցությունից իր հրաժարումը: Եվ քանի որ այդ հրաժարումը գաղափական հողի վրա չէր, այլ ավելի շուտ կուսակցության մեջ տեղ գտած արատավոր երևույթները չհանդուրժելու հետևանք, ապա, բնականաբար, նրա գաղափարական-քաղաքական հայացքները, ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ նրա հայեցակետն առանձնակի տարբերություններ չէին դրսևորում վերակազմյալների սկզբունքներից: Հեղափոխությունն, ըստ նրա, «աստիճանաւոր ու բարեշրջական յանդերձաւորում մը կը նշանակէ, ազգովին դաստիարակութեան, վաճառականութեան, արհեստներու, գիտութեան, գրականութեան և զինուորական միջոցով դէպի իրագործելի և պահպանելի Ազատութիւն մը» (թիվ 1, էջ 4–5), ուստի և հանդեսում երբեք չէր շոշափվում զինված պայքարի հարցը, իսկ Հայ դատի լուծումը տեսնում էր միջազգային դիվանագիտության և բարեփոխումների միջոցով: Հայկական հարցի վերաբերյալ հանդեսի սակավաթիվ հոդվածներից է 1906 թ. թիվ 4-ում զետեղված «Պատեհութիւն մը» խորագրով հոդվածը, որտեղ խմբագիրը պարզապես իր տեսակետն է հայտնում Լա Հեյի խաղաղության համաժողովը որպես «ազգային դատին համար» պատեհություն օգտագործելու մասին: Ընդգծվում է նաև ԱՄՆ-ի կարևոր դերը Հայկական հարցի լուծման և նրա միջոցով այդ դատը Լա Հեյի համաժողովին ներկայացնելու գործում:

1907 թ. դեկտեմբերի 27-ին Փարիզում կայացած համաժողովի նշանակությունը Հայ դատի լուծման տեսակետից լուսաբանվում է Գ. Արզումանի համանուն հոդվածում: Հեղինակը, խոսելով համաժողովի, նրա որոշումների և հայ մամուլում նրա մասին տպագրված երկու ծայրահեղությունների մասին, որոշ կրառեսական եզրահանգումներ էր կատարում: Վտանգավոր քայլ չհամարելով հայ-թուրքական մերձեցումը՝ նա միաժամանակ մեծ օգուտ էլ չէր ակնկալում դրանից, «զի դժգոհներու համերաշխութեան այս նախաքայլը ար-

տասահմանի մէջ արտասահմանեան գործիչներով է, որ կառնուի, որք երբէք երկիրը պիտի չմտնեն» (նոյն տեղում, թիվ 6, էջ 6): «Արծիւ» հանդեսի գիրքորոշմանը բնորոշ մի դիտողություն էլ է արվում. Թուրքիայում ներկա վարչակարգի փոփոխության համար այնտեղ ապրող ժողովուրդների համերաշխ գործունեությունը անհրաժեշտություն համարելով նշվում է, որ փարիզյան համաժողովը կարող է իր դրական ազդեցությունը գործել բուն երկրում «տոհմային ատելութիւններ մեղմացնելով եւ նոցա մտքին վրա տպաւորելով, թէ հայերը անջատման չեն ձգտեր եւ ոչ ալ ուրիշ պետութիւնների ի նպաստ դաւադրողներ են եւ այլ միմիայն իրենց բնակավայրին մէջ հաւասար իրաւունքների յառաջդիմութեան ցանկացողներ...» (նոյն տեղում):

Եթե 1905–1906 թթ. «Արծիւը» ավելի շատ զբաղվում էր ամերիկահայ ազգային կյանքով, ապա 1908 թ. նրա հետաքրքրությունների կիզակետում էր տեղական միջկուսակցական պայքարը և կուսակցությունների գործունեությունը, որոնց քննադատությանն էլ նվիրել է բազմաթիվ էջեր: Հանդեսն իր մեծ պարտականութիւնն էր համարում կուսակցական անիրավություններն ու կեղծիքները երեւան հանելը, նպատակ դնելով աջակցել պարկեշտության և անկեղծության հաղթանակի համար պայքարողներին: Վերակազմյալ հնչակյանների հետ կապերը խզելուց հետո Ա. Տեր-Մահտեսյանը հանդես է գալիս մի շարք քաղաքական մերկացումներով և մեղադրանքներով, որոնք վերաբերում էին հատկապես կուսակցության Ամերիկայի մասնաճյուղի գործունեությանը: «Թուք մըն ալ ինձմէ» հոդվածաշարը (1908, թիվ 1–8) բացատրում է խմբագրի այդ կուսակցությունից հեռանալու պատճառները և բացահայտում վերջինիս ներսում կատարված բազմաթիվ զեղծումներ, բարքերի անկման, դրամաշորթության և այլ վարկաբեկիչ փաստեր: «Արծիւը» բարձրացրեց նաև կուսակցությունների ամբողջական մաքրագործման անհրաժեշտության հարցը՝ միայն դրա հետ կապելով այդ տարիներին հաճախակի արծարծվող կուսակցությունների համերաշխության գոյացման հաջողությունը: Կուսակցությունների պառակտումներն ու վերապառակտումները վերագրվում են ոչ թե գաղափարա-քաղաքական հայացքների և գործելակերպի տարբերություններին, այլ կուսակցական վարիչների, հեղափոխական գործիչ-

ների երկրի վիճակից անտեղյակ լինելուն, իրենց ապրուստը հոգալու մտահոգությանը, ինչպես նաև դրամական զեղծումների փաստերը պարտակելուն ուղղված ջանքերին: Քննադատվում են հայ կուսակցությունները նաև եղբայրասպանության և անհաբեկչության համար: Խստորեն դատապարտվում են Վարդոյի, Ժամհարյանի, Թավշանճյանի, Ունճյանի, Պալեոզյանի և ուրիշների սպանությունների կազմակերպիչները: Հանդեսն ընդհանրացնող եզրահանգումներ է կատարում. այդ սպանությունները ուղղված են ոչ թե Թուրք բռնակալության, այլ հայ գիտակից դասակարգի, հայ քննադատների, ազատ խոսքի և մամուլի դեմ: Արփիարյանի սպանությունը համարվում է «բռնութիւն ազատ խօսքին եւ քննադատութեան դէմ, յեղ. կազմակերպութեանց անուղղելիութիւն, եղբայրասպանութիւն» (նույն տեղում, թիվ 7, էջ 3):

«Արծիւը» քիչ է անդրադարձել թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում կատարված դեպքերին, որոնցով այնքան հարուստ էին 1905–1906 թվականները: Ուշադրության արժանի է Մ. Վ. ստորագրությամբ «Նամակ Թիֆլիսէն» թղթակցությունը՝ թվագրված 1905 թ. սեպտեմբերի 2-ով, որտեղ նկարագրվում են ցարական կառավարության կողմից բռնագրավված հայ եկեղեցական կալվածքների վերադարձը, հայ-թաթարական ընդհարումները, Կովկասի ընդհանուր դրությունը (1905, թիվ 4, էջ 60–61): Արևմտյան Հայաստանի ծանր և հուսահատական վիճակն են նկարագրում 1908 թ. տպագրված «Կացութիւնը Հայաստանի մէջ», «Նամակ Վանէն» և այլ թղթակցություններ:

Հանդեսն անդրադարձել է միջազգային քաղաքական դրությանը, տպագրել ազգային լուրեր և նորություններ: Մասնավոր ուշադրության են արժանացել ռուս-ճապոնական հարաբերությունները, Թուրքիայի և Մակեդոնիայի քաղաքական վիճակը:

1908 թ. ընթացքում «Արծիւը» լույս է տեսնում անխափան, 24 համար: Վերջին համարում խմբագրի ստորագրությամբ տպագրված «Գալ տարի» վերնագրով հոդվածը պարզում էր հանդեսի ծրագրերն ու մտահղացումները նոր տարեշրջանի համար և հանրագումարի բերում «Արծիւի» անցած գործունեությունը: Ոչինչ չէր կանխագուշակում հանդեսի մոտալուտ խափանումը և, այնուամենայնիվ, 1909 թ. այն լույս չտեսավ:

«ԱՐԱՔՍ» (1905–1907)

1905 թ. հոկտեմբերի 28-ին Բաստոնում լույս տեսավ «Արաքս» ազգային, գրական, քաղաքական շաբաթաթերթի առաջին համարը: Խմբագիրն էր հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս պրոֆեսոր Հովհաննես Հակոբյանը (Վարդ Շահեն):

Հովհ. Հակոբյանը ծնվել է 1876 թ. օգոստոսի 16-ին Վանում[1]: Տարրական կրթությունը ստացել է տեղի Հայնկույսների դպրոցում, ապա սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որը ավարտելուց հետո, որպես ուսուցիչ, աշխատել է Թավրիզում: 1899 թ. մեկնել է ԱՄՆ, սովորել Վիսկոնսինի (Նյու Յորք) համալսարանի պատմության ֆակուլտետում, որը գերազանց գնահատականներով ավարտել է 1904 թ.: 1905 թ. պաշտպանել է «Հայերի եւ Ֆրանկների հարաբերութիւնները Լեւոն 2-րդի իշխանութեան օրոք 1186–1219 թթ.» թեմայով ատենախոսություն և ստացել գիտական աստիճան ու պրոֆեսորի կոչում: Զբաղվել է խմբագրական և հասարակական ակտիվ գործունեությամբ: 1899 թ. Բոստոնում խմբագրել է «Ձայն հայրենյաց» թերթը, ապա 1905–1907 թթ. հրատարակել է «Արաքսը»: 1906 թ. ընտրվել է Հայ բարեգործական ընդհանուր միության վարչության անդամ: 1908 թ. նաև Արմենական կուսակցության անդամ էր: 1908 թ. օսմանյան սահմանադրության հռչակումից հետո վերադառնում է Կ. Պոլիս, աշխատում է որպես ուսուցիչ: 1911–1912 թթ. Էրզրումի Սանասարյան վարժարանի տեսուչն էր: 1915 թ. Հ. Հակոբյանն անցնում է Ռումինիա, այնտեղից էլ Ռուսաստան և Հյուսիսային Կովկասում զբաղվում հայ գաղթականների տեղավորման և խնամքի գործերով: Լինում է նաև Թիֆլիսում: 1918 թ. վերադառնում է Կ. Պոլիս, աշխատակցում «Բիւզանդիոն» և այլ թերթերի, ապա 1921-ին մեկնում Եգիպտոս, որտեղ խմբագրում է «Արեւ» օրաթերթը: 1927 թ. խորհրդային կառավարության հրավերով գա-

---

[1] Հովհ. Հակոբյանի մասին կենսագրական հիմնական տվյալները վերցված են Ա. Համբարյանի «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին. XIX դարի վերջ – XX դարի սկիզբ», Ե., 1990, էջ 168, Գ. Ստեփանյանի «Կենսագրական բառարան», հ. Բ., Ե., 1981, էջ 146, Ա. Ղարիբջանյանի «Վավերագրեր պրոֆեսոր Հովհաննես Հակոբյանի մասին» («Հանդես Երևանի համալսարանի», 1997, № 1, էջ 57–58) աշխատություններից:

լիս է Հայաստան և դասախոսում է Երևանի պետական համալսարանում: Աշխատել է որպես Մելքոնյան ֆոնդի լիազոր ներկայացուցիչ: Այդ ֆոնդի միջոցներով էլ Հ. Հակոբյանը կառուցում է Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի շենքը, համալսարանի աստղադիտարանը, տպարանը, հրատարակչությունը, հրատարակում հայ գիտնականների քսանից ավելի աշխատություններ և այլն: Շատ ավելի մեծ կլիներ ազգօգուտ այս ձեռնարկների թիվը, եթե 1937 թ. հունիսին Հ. Հակոբյանը մի շարք ծանր մեղադրանքներով չձերբակալվեր և 1938 թ. հուլիսի 18-ին չդատապարտվեր գնդակահարության:

Հովհ. Հակոբյանը գրել է պատմագիտական մի շարք աշխատություններ՝ «Հայերի ու ֆրանկների հարաբերութիւնները Լեւոն II-ի իշխանութեան օրոք 1186–1219 թթ.» (1905), «Ազգերի պատմութիւն» երեք հատորով (1912), «Գերման դաւը Կովկասի մէջ» (1917), «Թուրքիան գերման ճանկերուն մէջ» (1918), «Ուղեգրութիւններ» փաստաթղթերի ժողովածուի երկու հատորը և այլն:

Հրատարակվելով մինչև 1906 թ. սեպտեմբերի 22-ը (թիվ 46), «Արաքսը տեղափոխվում է Նյու Յորք և 1907 թ. հունվարից շարունակվում է արդեն որպես հասարակական, պատմական, քաղաքական ամսագիր: Թիվ 46-ում տպագրված խմբագրական ազդը նման փոփոխությունները պատճառաբանում էր նյութական դժվարություններով: Թերևս միջոցների սղությունը և տեղափոխման հետ կապված որոշ հանգամանքներն էին պատճառը, որ «Արաքսը» 1906 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին լույս չի տեսնում, իսկ 1907-ին, երեք համար որպես ամսագիր հրատարակվելուց հետո, դադարում է: Շաբաթաթերթի հրատարակության կազմակերպման աշխատանքներին մեծ աջակցություն է ցույց ավել ամերիկահայ թեմի առաջնորդ Հովսեփ արք. Սարաճյանը: Առաջնորդի նյութական և բարոյական հովանավորությունն էր վայելում «Արաքսը» նաև իր գոյության ողջ ընթացքում: Սակայն 1906–1907 թթ. գաղթօջախում որոշ խմբավորումների կողմից առաջնորդի դեմ ծայր առած պայքարը, որը հանգեցրեց արքեպիսկոպոս Սարաճյանի հրաժարականին և ԱՄՆ-ից հեռանալուն, ըստ էության, բացասաբար անդրադարձավ նաև «Արաքսի» հրատարակության վրա:

«Արաքսին» աշխատակցել են Վ. Շահենին (Յ. Յ.), Միքայել Նաթանյանը, Արփիար Արփիարյանը, Հովհաննես Արշակունին, Ալիս Սթոուն Բլեքուելը, Գարմանը, Լևոն, Երոսը և ուրիշներ:

Շաբաթաթերթի ստեղծման նպատակներն ու ուղղությունը մի քանի խոսքով ներկայացված են «Մեր ուղղութիւնը» ծրագրային հոդվածում, որտեղ խմբագիրը գրում էր. «Ձեռնարկելով «Արաքս» շաբաթաթերթի հրատարակութեան, մեր նպատակն է նուիրուիլ մանաւորապէս Ամերիկայի հայ գաղթականութեան մտաւոր ու բարոյական զարգացման գործին: Սորվիլ ու սորվեցնել այն, ինչ որ ճշմարիտ է, այն, ինչ որ իրական է, այն, ինչ որ միտքը կը կրթէ ու սիրտը կազնուացնէ և այն, ինչ որ գիտակցութիւնն կուտայ Մայր Հայրենիքի ներկայ իրական վիճակին վրայ ու օտարութեան մէջ մաշող հայը կը կապէ իր հայրենի տան հետ և անոր կը ներշնչէ հայրենասիրութեան ու հայրենիքի նուիրագործման իտէալը» (1905, թիվ 1, էջ 1): Խմբագրությունը խոստանում էր պարբերաբար անդրադառնալ հայ ազգային կազմակերպությունների (եկեղեցական, կրթական, հեղափոխական և այլն) գործունեությանը, «մատնանիշ ընելու անոնց պահանջները ու ցուցնելու անոնց առաւելութիւններն ու թերութիւնները» (նույն տեղում), քանի որ համարում էր, որ «Հայ ազգին միջավայրը, հայուն կեանքն ու յոյսը անոր կազմակերպութեանց մէջ կ՚ապրին» (նույն տեղում): «Արաքսը» ժխտում էր նաև իր՝ որևէ կուսակցության պատկանելը, ինչպես նաև որևէ կազմակերպության անունից խոսելու հնարավոր մեղադրանքները: «Մեր ուրոյն գաղափարներն ու տեսութիւններն ունենալով հանդերձ, այս թերթը չի պատկանիր որև է կուսակցութեան: ... Մենք մեր տեսութեան մէջ պիտի ըլլանք անկախ ու անկողմնակալ: Պիտի գնահատենք ու քաջալերենք այն, ինչ որ օգտակար է ու ճշմարիտ և չպիտի վարանինք քննադատել այն, ինչ որ սխալ է...» (նույն տեղում, էջ 2),- խոստանում էր խմբագրությունը:

«Արաքսի» բարձրացրած հիմնական թեման Հայկական Հարցին և Հայ դատի լուծման ուղիներին նվիրված խնդիրների քննարկումն էր: Դրանց և դրանց առնչվող շատ այլ հարցերի շաբաթաթերթը նվիրել է բազմաթիվ հոդվածներ և արտահայտել իր ուրույն տեսակետը: 1905–1906 թթ. «Արաքսը» տպագրեց Վ. Շահենիի «Երէկ, այսօր, վաղը» հոդվածաշարը (թիվ 6–11), որը հանգամանորեն վերլու-

ծում է Հայկական Հարցի ծագման (սկսած Բեռլինի վեհաժողովից) և զարգացման պատմությունը, ժամանակի քաղաքական իրադրությունը և հայ ժողովրդի սպասելիքները ապագայից: Այս հոդվածաշարը արժեքավոր է նաև այն տեսակետից, որ սպառիչ կերպով լուսաբանում է խմբագրի և շաբաթաթերթի հայացքները և ըմբռնումները Հայկական Հարցի և նրա լուծման ուղիների վերաբերյալ: Հայ ազատագրական շարժման պատմության սկզբնավորությանն անդրադառնալով՝ հեղինակը խոսում է նաև «մտաւորական յեղափոխութեան» մասին, և, կարծես, զգացվում է նրա բացորոշ ափսոսանքը այդ հեղափոխության չշարունակվելու, չծավալվելու համար: Նշելով այդ երևույթի օբյեկտիվ պատճառները՝ շաբաթաթերթը գրում էր. «Եթէ 1877-ին Ռուս-Թրքական պատերազմն ու Պալքանեան ազգերու ազատութիւնը տեղի չունենար, մեր ազգային գործնական յեղափոխութիւնը, ճիշտ է, պիտի գար անհրաժեշտօրէն բայց ան պիտի ըլլար աւելի խոհուն, չափուած, գործնական ու ժողովրդական» (1905, թիվ 6, էջ 41): Հեղինակի համոզմունքն է, որ Հայաստանում հայ ազատագրական շարժումը պարզ ոգևորության արդյունք էր, իսկ «այդ ոգեւորութիւնը ծնած չէր իրական ու աճող գիտակցութենէ մը, այլ, ինչպէս ըսինք, պատահմունքի հետեւանք էր» (նույն տեղում, էջ 42): Այդ շարժումը համեմատելով ֆրանսիական հեղափոխության հետ՝ Վ. Շահենին այն կարծիքն էր հայտնում, որ Ֆրանսիայում պատահմունքը չէր, որ գործեց, այլ գիտակցության ոգին և նշում էր Մոնտեսքյոյին, Վոլտերին, Ժան-Ժակ Ռուսոյին և ուրիշների, որոնք իրենց ազատասիրական գաղափարներով կրթել, նախապատրաստել էին ժողովրդի գիտակցությունն ապագա հեղափոխության համար: Հեղինակը, ընդունելով, որ «պատմութիւնն ամբողջ տնտեսական շարժումներու արձանագրութիւն մըն է», նկատում էր, որ մտավոր զարգացման շնորհիվ միայն ժողովուրդը կարող է գիտակցել իր ստրկական վիճակը և պայքարել՝ մահը գերադասելով գերությունից:

«Արաքսը» Հայաստանի ազատագրության ուղիները մատնանշելիս՝ անցյալի համար շատ ավելի գերադասելի էր համարում խաղաղ միջոցների կիրառումը, դիվանագիտական ջանքերը, 61-րդ հոդվածի իրագործմանն ուղղված ճիգերը (61-րդ հոդվածը համարում էր Հայկական Հարցի իրավաբանական իրավունքը) և զուգա-

հետաքար նաև ժողովրդի մեջ իր վիճակի և ազատագրության գիտակցության արթնացնելը, իսկ արտասահմանում Հայանպաստ շարժում առաջ բերելը և Հայկական Հարցը եվրոպական խորհրդաժողովներում արծարծելը:

«Արաքսը» դատապարտում է Հեղափոխականների անիշխանական ու ընկերվարական Հայտարարությունները և անխոհեմ գործունեությունը, որը իրավունք էր տալիս Թուրքերին Եվրոպայի աչքում Հային անիշխանական ներկայացնել և Հակահայ կարծիք ստեղծել, իսկ երկրի ներսում կոտորածներ սանձազերծել: Ժողովուրդն անպատրաստ էր, իսկ «Կարմիր Հնչակը յեղափոխութիւն, կռիւ ու յաղթանակ կը յայտարարէր», մինչ նստած արտասահմանում (1905, թիվ 7, էջ 49): Շաբաթաթերթը մեղադրում էր կուսակցություններին Հայկական կոտորածների Համար: «Ո՞ւր էին այն ատեն աս յեղափոխական ղեկավարները,- գրում էր Վ. Շահենին,- ինչո՞ւ ժողովուրդի մէջ չի մտան, ժողովուրդի գլուխը չանցան, ինչո՞ւ չգացին անոր մէջ ինքնապաշտպանութեան ոգին ամրացնելու: Ինչո՞ւ նստան արտասահման՝ մեր գլխին յեղափոխական պօռեր ըլլալու, փոխանակ Հայաստան երթալու եւ ինքնապաշտպանութեան զինուոր դառնալու» (Նոյն տեղում, էջ 50): «1895–96-ի կոտորածը մեզի Համար մեծ դաս մըն էր,- շարունակում է իր միտքը Հեղինակը: - Ալ վերջապէս որոշ կերպով կը յայտնուէր, թէ թիւրքն որոշած է Հայ ազգը ջնջել: Կը Համոզուէինք, թէ միայն արիւն թափելով Եւրոպան չի միջամտեր բարեկարգութիւն Հաստատելու Համար: ... Վերջապէս ռուսական քաղաքականութիւնը կը պարզուէր մեզի Համար...: Պէտք է, որ մենք այն որոշ եզրակացութեան գայինք, թէ անհրաժեշտ է ազգային գիտակցութիւն տարածելու գործը շարունակել, մասնաւորապէս, Մեծ Հայաստանի մէջ եւ առանց ցոյցերու, առանց խլրտումի պէտք էր, որ միջոց ու ոյժ տայինք Հայաստանի ժողովուրդին ինքնապաշտպանութեան պատրաստուելու» (Նոյն տեղում): Շաբաթաթերթը պաՀանջում էր «վերջ դնել արտասաՀմանեան անիմաստ ու սխալ ղեկավարութեան սիստեմին» (1905, թիվ 8, էջ 57):

Վ. Շահենիի այս Հայացքները, որոնք ընդհանուր շատ եզրեր ունեն վերակազմյալ Հնչակյանների տեսակետների Հետ, նպաստում են, որ Հեղինակը Հենց այս Հոդվածում բարձր գնահատի այդ կուսակցության և նրա օրգան «Նոր կյանք» Հանդեսի գործունեութ-

յունը, հատկապես մինչև Ա. Արփիարյանի կուսակցությունից հեռանալը: «Արաքսն» այդ կուսակցության որոշ տեսակետներ ազգային հարցի և ազատագրական պայքարի ձևերի և միջոցների վերաբերյալ համարում էր ճիշտ և արդարացի: Ինչ վերաբերում է ժամանակին լայնորեն քննարկվող այն երկու խնդիրներին, ըստ որոնց պետք էր դադարեցնել Մեծ Հայքում հեղափոխական գործունեությունը նրա՝ Ռուսաստանի կողմից գրավման ենթակա լինելու պատճառով և սահմանափակվել միայն Փոքր Հայքով և հեղափոխական գործունեությունը ղեկավարել միայն թրքահայերով, ապա Վ. Շահենին առարկում է առաջին տեսակետին՝ համամիտ լինելով Ա. Արփիարյանի ուղեգծին, որը ձգտում էր իր կուսակցության մեջ ներգրավել ավելի շատ գավառացի երիտասարդների:

«Արաքսը» խիստ քննադատության էր ենթարկում արտասահմանի հայ կուսակցությունների գործունեությունը և մեղադրում նրանց, որոնց արտասահմանյան աղմուկները խանգարում են Հայաստանի ժողովրդին ինքնապաշտպանության պատրաստվել, մեղադրում բուն երկրի ներքին ուժը թերագնահատելու, դրամաշորթության համար, ձաղկում, խարազանում նրանց արատները, բռնի դրամ հավաքելը, մարդասպանությունները, խոսքի և գործի անհամապատասխանությունը: Շաբաթաթերթը կոչ էր անում կուսակցությունների մեջ մտած անկեղծ և հայրենասեր երիտասարդներին պատռել վարագույրը և մտնել ժողովրդական հոսանքի մեջ:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայտնի դեպքերից, բազմաթիվ կորուստներից և գործված սխալներից հետո «Արաքսը» եզրակացնում է, թե «պէտք է, որ մեր ազգային գործելակերպը ճշդուի ու նոր ոգիի մէջ դրուի գաղափարակիցներու համերաշխութեամբ» (1905, թիվ 10, էջ 73), իսկ անցյալ գործելակերպի ամենախոշոր սխալը համարում է արտասահմանյան աղմուկը: Կովկասն էլ համարելով արտասահման՝ Վ. Շահենին, այնուամենայնիվ տարբերակում է Կովկասի և արտասահմանի գործունեությունը իրարից: Անդրկովկասյան հայ գործիչները գնահատվում են իրենց գաղափարականության և անձնվիրության համար, հատկապես Արծրունին, Րաֆֆին և Գամառ-Քաթիպան, որոնց ստեղծագործությունը տասնյակ տարիներով առաջ մղեց հայ ժողովրդի վերածնության գործը: Շաբաթաթերթը խորհուրդ էր տալիս օրինակ վերցնել կովկասահայե-

րից, որոնք, խաղաղ և աստիճանական մտավորական զարգացում ապրելով, երբ հարկը պահանջեց, կարողացան կազմակերպվել և հակահարված տալ թշնամուն (եկեղեցական կալվածքների գրավման և հայ-թաթարական ընդհարումների ժամանակ): «Արաքսն» առաջարկում էր բոլոր գաղափարակից ուժերի համերաշխ գործակցություն: Թերթը բազմիցս ընդգծում էր, որ «մեր միակ պարտականութիւն, մեր միակ գործն է պատրաստուիլ ինքնապաշտպանութեան ու գործել ինքնապաշտպանութիւն» (1906, թիվ 11, էջ 82), իսկ արտասահմանի հայությանը վերապահում էր երկու կարևոր գործ. «Ա. Երկրի մէջ ապրող հայ ժողովուրդին օժանդակել, Բ. Հայը ծանօթացնել օտարին եւ մշակուած յարաբերութիւն մը ստեղծելով օտար դիւանագիտական շրջաններու մէջ՝ օտարէն յոյս մը ակնկալել» (Նույն տեղում): Շաբաթաթերթը կարծում էր, որ այս երկու կետում կուսակցությունները կարող են համերաշխ գործակցել:

Ի դեպ, օտար պետություններից օգնություն ակնկալելու համար «Արաքսը» իրավացիորեն կարծում է, որ նախ պետք է Արևմտյան Հայաստանում օտարին հրապուրող տնտեսական շահ ստեղծել (1906, թիվ 18, էջ 137):

«Արաքսի» մշտական աշխատակիցներից Մ. Նաթանյանը ևս իր «Ձրի ազատութիւն» հոդվածում շեշտը դնում է մայր երկրի ժողովրդի ինքնագիտակցության գալու և քաղաքականապես հասունանալու վրա, (1906, թիվ 27, էջ 214): «Հայաստանի փրկութեան ճշմարիտ եւ մեծագոյն յոյսը... Հայաստանի ծոցը ծնած, ապրող, մաքառող ժողովուրդին քովն է»,- շարունակում է հեղինակը՝ կարևորելով երկրի հայության նյութական և մտավորական օգնության գործը: Մ. Նաթանյանը ևս քննադատում է արտասահմանյան հայ կուսակցությունների սխալ գործունեությունը:

Վ. Շահենին, իր հերթին, «Ինչո՞ւ չեն երթար» հոդվածում քննադատում է բարձրագույն կրթութիւն ստացած այն երիտասարդներին, որոնք ունակ են ժողովրդի կրթության գործը իրենց ձեռքն առնելու, սակայն վախենալով հալածանքներից և դժվար պայմաններից, հայրենիք չեն գնում, ասպարեզը թողնելով միջնակարգ կրթություն ունեցող մի քանի վարժապետների: Առաջարկում է արտասահմանի միջոցներով երկրում պահել ժողովրդին իրապես կրթելու ունակ երիտասարդների:

Բազմաթիվ առիթներով նա շաբաթաթերթը նշում է, որ «Երկրի հայութիւնը այժմ կուսակցական բրոբականտայի պէտք չունի» (1906, թիվ 14, էջ 105), այլ օգնության, որը խոսքից ավելի է պետք երկրի հայությանը և որը արտասահմանը կարող է և պետք է անի:

«Արաքսը» մեծ քանակությամբ հոդվածներ և թղթակցություններ է տպագրել արևմտահայության քաղաքական կացության և սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Շաբաթաթերթն առաջարկում էր «գիտակցօրէն պաշտպանել հայու գոյութիւնը հայ երկրին մէջ, հայու սեփական ույժերով» (1906, թիվ 25, էջ 193): «Վասպուրականի կացութիւնը» հոդվածում անդրադառնալով Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության վարած նոր տնտեսական քաղաքականությանը՝ Վ. Շահենին զգուշացնում է հայերին սպառնացող ահավոր վտանգի մասին. «Ու թիւրք կառավարութիւնը աստիճանաբար ու սիստէմաթիքօրէն կը ջանայ հայութիւնը նուազեցնել, եթէ ոչ բնաջնջել, հետեւեալ միջոցներով՝ Ա. հողերը խլելով հայ երկրագործէն, Բ. արուեստական սով ստեղծելով եւ Գ. արտագաղթը քաջալերելով» (1906, թիվ 26, էջ 202): Բնութագրելով օսմանյան կառավարության տնտեսական քաղաքականությունը, որպես նրա հայաջինջ քաղաքականության մեկ մասը՝ շաբաթաթերթն այն անվանում է «անարիւն կոտորած» (1906, թիվ 27, էջ 213): «Արաքսը» ցավով է արձագանքում Վասպուրականից արդեն իսկ ծայր առած արտագաղթի մասին լուրերին: Վ. Շահենին այն վտանգավոր է համարում հայ ազգի գոյության համար և ամենամեծ հարվածը ապագա Հայաստանի վերականգնումի հույսին, քանի որ Հայաստանը կմնա առանց հայի:

Քննադատելով արտասահմանյան հայ կուսակցությունների գործունեությունը՝ Վ. Շահենին դեմ չէր նրանց գոյությանը, քանի որ կարծում էր, որ «գաղափարի ու մտածումի միօրինակութիւնն անկարելի է», սակայն «երբ մտածումի տարբերութիւնը կը դադրի ու կուսակցութիւն մը սկզբունքի ու գաղափարի վրայ հիմնուած չէ, ան ատեն կուսակցութեան անունով կազմակերպված շրջանները կը դառնան... չարիք մը այն ժողովուրդին մէջ, ուր անոնք կապրին...» (1905, թիվ 4, էջ 25): Հեղինակի եզրակացությունն այն է, որ սկզբունքի բացակայությունն է, որ բերում է ուղղամտության պակասին, դրան հատուկ բոլոր բացասական երևույթներով:

Մի ընդհանուր գաղափարի շուրջ համախմբվելու և միանալու կոչ անելով Վ. Շահենին հայ իրականության մեջ կուսակցական բազմաթիվ պառակտումները վերագրում է քաղաքակրթության պակասին: Որքան քաղաքակրթության բարձր մակարդակի վրա է ազգը, այնքան այդ ազգի քաղաքական կուսակցությունների թիվը կնվազի և համերաշխությունը կարելի կդառնա: Շաբաթաթերթը ցավով ընդգծում էր, որ, դժբախտաբար, արևմտահայությունը զրկված է «ազատ քաղաքացիութեան իրաւունքէն, անոր խորհուրդները բանտարկուած ու անոր լեզուն կապուած» (1906, թիվ 17, էջ 130): Վ. Շահենին առաջարկում էր գաղափարի միության, համերաշխության փորձերը սկսել հենց ազգի ներսում՝ առօրյա հարաբերությունները ազնվացնելով, իրար օգնելով, մխիթարելով և իրար բարձրացնելով:

Ազգային քաղաքականության ուղեգիծ մշակելու համար ընդգծելով համերաշխության, համախմբված գործունեության և համազգային համաժողով հրավիրելու պետքը, «Արաքսը» կարծում էր, որ նման նախաձեռնությունը պետք է սկսվի Անդրկովկասի հայության կողմից, որը մտավորապես ավելի զարգացած, կազմակերպված և հեղափոխական տարր է:

Շաբաթաթերթին առաջին իսկ համարներից մեծ կարևորություն է ընծայել 1905–1907 թթ. Ռուսաստանում և հատկապես Անդրկովկասում կատարվող իրադարձություններին՝ ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնելով արևելահայերի քաղաքական և տնտեսական դրությանը, հայ-թաթարական ընդհարումներին և դրանց ծնող պատճառներին: «Արաքսը» ցարական կառավարությանն է մեղադրում հայ-թաթարական ընդհարումներ հրահրելու մեջ: Ցարական կառավարությունը մեղադրվում է նաև 1890-ական թթ. Թուրքիայում հայկական կոտորածների թողտվության և նույնիսկ դրանք հրահրելու համար: Ռուսաստանի ծավալապաշտական նկրտումներին խոչընդոտ էր Թուրքիայի տարածքում բարեկարգված Հայաստանի գոյությունը: «Ռուսական սահմանադրութիւնն ու հայերը» հոդվածում եկեղեցական գրավված կալվածքների վերադարձը և հայկական դպրոցների բացման թույլտվությունը վերագրվում է ոչ թե ցարի բարի տրամադրությանը կամ ժողովրդասիրությանը, այլ ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությանը, որը

սրեց Ռուսաստանի ներքին կացությունը և քաղաքական բարդություններ ստեղծեց (1905, թիվ 4, էջ 27):

«Առաջսի» մշտական ուշադրության կենտրոնում էին նաև Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձությունները, որոնց նա անդրադառնում է ըստ հարկին: Վ. Շահենին մեծ ոգևորությամբ է ընդունում ռուսական սահմանադրության հռչակման լուրը, հոդվածներ է նվիրել ռուսական հեղափոխությանը, ողջունել է Պետական դումայի բացվելը, քննարկել է այս իրադարձությունների հնարավոր ազդեցությունը հայ ժողովրդի ճակատագրի վրա:

«Առաջսն» ուներ իր սեփական թղթակիցները Ռուսաստանում և Անդրկովկասում, որոնցից ստանում և տպագրում էր երկարաշունչ թղթակցություններ: Շահեկան և հետաքրքրական թղթակցություններ էր ուղարկում Լիոն («Նամակներ Ռուսիայէն» շարքը): Կովկասյան իրադարձությունները հանգամանալից լուսաբանելու նպատակով շաբաթաթերթում բացվում են «Կովկասի սիւնակ», «Կովկասեան դէպքեր» խորագրերով բաժինները:

Գաղթօջախի կյանքը լուսաբանող նյութերի շարքում ևս գերակշռում են թղթակցությունները ԱՄՆ-ի տարբեր քաղաքներից: Դրանք հիմնականում ազգային զանազան կազմակերպությունների, կրթական, մշակութային միությունների, կուսակցությունների գործունեությունը ներկայացնող նամակներ են, հոդվածներ և տեղեկություններ: 1906 թ սեպտեմբերին «Առաջսը» բացում է «Ամերիկահայ գաղութը» բաժինը, որտեղ պարբերաբար պետք է հրատարակվեին տեղական թղթակիցների պատրաստած պատմական և վիճակագրական նյութերը՝ նպատակ ունենալով ճշգրիտ տեղեկություններ տալ ամերիկահայերի մասին և նյութ մատակարարել ապագա պատմաբանին: Առաջինը տպագրվում է Հակոբ Գասապյանի «Ուստրի հայ գաղութը» պատմական ակնարկը (1906, թիվ 46, էջ 362–363 և այլ համարներ):

Մեծ քանակությամբ ընդարձակածավալ թղթակցություններ էին տպագրվում նաև Արևմտյան Հայաստանից, Պարսկաստանից, Եգիպտոսից, Ռուսաստանից և այլ գաղթօջախներից:

«ԱԶԱՏ» (1918–1919)

«Արծիվ» հանդեսի փակվելուց տասը տարի հետո միայն Նյու Յորքում Արշակ Մահտեսյանը ձեռնարկեց հայերեն իր երկրորդ պարբերականի՝ «Ազատ» (1918–1919 թթ.) ազգային, գրական, քաղաքական, երգիծական կիսամսյա հանդեսի հրատարակությանը: Առաջին համարը լույս տեսավ 1918 թ. հունվարի 1-ին:

Ակնառու է Ա. Մահտեսյանի պարբերականների թե՛ հրատարակման շարժառիթների և թե՛ նպատակադրումների համանմանությունը: Ինչպես և մեկ տասնամյակ առաջ, ազատ և անկախ մամուլի բացակայության փաստն էր դրդում խմբագրին լրացնել այդ պակասը իր նոր պարբերականով: Ամերիկահայ գաղթօջախի ազգային, հասարակական-քաղաքական կյանքում մեծ դեր ու կշիռ ունեցող քաղաքական կազմակերպությունների պարբերական մամուլը ներկայանում է Մահտեսյանին որպես միակողմանի, միտումնավոր, աչառու, «հատուածական» և կողմնապաշտ: Խմբագիրը ծրագրային հոդվածում խիստ խոսքերով քննադատում է այդ մամուլը, դրանց մրցակցական ծայրահեղ ուղղվածությունը: Անկողմնակալ և ազատ մամուլի, նրա դերի և նշանակության մասին Ա. Մահտեսյանի պատկերացումները նրա հասարակական-քաղաքական աշխարհընկալման, ազատության, ազգի մասին ունեցած ըմբռնումների արգասիքն են, մի բան, որը հստակ դրսևորվեց նաև «Արծիվ» հանդեսի էջերում, ապա՝ այնտեղ տպագրված 1908 թ. Ա. Մահտեսյանի ստեղծած «Անկախ միութեան» ծրագրում: Պարբերականը հավակնում էր նաև նոր էջ բացել ամերիկահայ մամուլի պատմության մեջ («անկախութեան թուական») և դառնալ ամեն ինչից առավել ճշմարտության, ազատության և արդարության սիրողների թերթը:

Ճշմարտության, ազատության, ազատ մտքի և խոսքի կարևորությունը քաղաքակիրթ հասարակության մեջ բավական հանգամանորեն քննարկվում է և հիմնավորվում է «Ազատ կարծիք» հոդվածում (հեղ. Երվանդունի), որը թեև չէր հավակնում ծրագրային հոդված դառնալու (լույս է տեսել 1918 թ. նոյեմբերի 1-ի թիվ 17-ում), սակայն կատարելապես բնորոշում էր «Ազատի» գործունեության հասարակական միտվածությունը և գաղափարական ուղղվածությունը: Հեղինակը կարևորում էր ազատ կարծիքի դերը ազգի զար-

գացման, նկարագրի բարձրացման, հոգեկան ու բարոյական վսեմ հատկանիշների ձևավորման գործում: Մասնավորելով իր խոսքը հրապարակախոսության վրա՝ նա ընդգծում էր, որ քաղաքական և հատվածական նեղ շահերով առաջնորդվող հրապարակախոսությունը չի կարող հասարակության գաղափարական, մտավոր զարգացման գործում արդյունավետ դեր կատարել: Առավել քան կարևոր էր ժամանակի հետ ընթացող և ժամանակի հոգեբանությունը արտացոլող մամուլի առկայությունը, որպեսզի նախնիների ասպետական քաջակորով ոգին վառ պահվեր նոր սերնդի մեջ և վերարծարծվեր ժողովրդի ըմբոստացումը՝ ոգին ընդդեմ բռնապետության: Դասալքություն քարոզող հրատարակությունները պետք է արհամարհվեն և չքաջալերվեն, որով և նման քարոզները անպտուղ մնալու կդատապարտվեն: Այս մտքերը, ինչպես երևում է, առնչակցության շատ եզրեր ունեն «Ազատի» գաղափարական ուղղության հետ: Իսկ հանդեսն ինքն իր ուղեգիծը և գործելակերպը բնութագրում էր այսպես. «Ազատը» ներկայացնում է ամբողջ հայությունը, անկողմնակալորեն է գնահատում լավ արարքները և քննադատում վատերը, գործածելով «մէկ չափ ու կշիռ թէ՛ դպիրին եւ թէ՛ փարիսեցիին հանդէպ» (Նույն տեղում, թիվ 3, էջ 47), բաց է պահում իր սյունակները տարբեր կարծիքների առջև և այլն:

Հենց առաջին հայացքից պարբերականում աչքի է զարնում թեմաների որոշակի ուղղվածությունը՝ հիմնականը գաղթօջախի ազգային-քաղաքական կյանքն է, որը Մահտեսյանի սուր և երգիծող գրչով շատ հաճախ ներկայանում է չափազանց անմխիթարական, գորշ գույներով, երբեմն նույնիսկ՝ զավեշտական: Այս անգամ արդեն Մահտեսյանի անխնա քննադատությունների թիրախը Ամերիկահայ ազգային միությունն էր: Այն ստեղծվել էր 1917 թ. մարտին, Բոստոնում՝ քաղաքական չորս կուսակցությունների (Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն և Սահմանադիր ռամկավար), Հայ բարեգործական ընդհանուր միության, Առաքելական և Ավետարանական եկեղեցիների փոխհամաձայնության և համագործակցության շնորհիվ, ներկայացուցչական սկզբունքով: Միությունը համազգային

նպատակներ էր հետապնդում[1]: Միանգամայն ազգօգուտ և բարենպատակ հավակնություններով այդ կազմակերպության գործունեության թերի և սխալ կողմերը, սակայն, չեն վրիպում Ա. Մաշտեսյանի սրատես աչքից և առիթ են դառնում «Ազատի» մշտատև քննադատության: Քննադատվում էին դրա կազմակերպման սկզբունքները, գործունեության կերպը, ձեռնարկված պակասավոր կամ ոչ ճիշտ քայլերը: Ազգային միության կենտրոնական մարմնի կազմության սկզբունքը՝ նշված կազմակերպությունների համասար թվով ներկայացուցիչներից ընտրության միջոցով, ըստ հանդեսի, արատավոր էր ի սկզբանե: Պարբերականը վրդովմունք էր հայտնում գաղթօջախի ազգասեր, փորձառու և գիտակ, սակայն ոչ մի կազմակերպության չպատկանող գործիչների անտեսման համար և պահանջում էր ժողովրդի ազատ ընտրությամբ և քվեով ստեղծված «իրական» Ազգային միություն՝ «իրական մարդերով», քանի որ «ամէն կազմակերպութիւն կը դառնայ իր անդամներէն եւ ոչ թէ անունէն կամ ծրագրէն» (1918, թիվ 4, էջ 50): Խմբագիրն ամենևին էլ դեմ չէր Ազգային միության գաղափարին, քանի որ հավատում էր, թե «հայեր միութեան եւ գործակցութեան շնորհիւ միայն պիտի յաջողին ազատութեան տիրանալ» (1918, թիվ 6, էջ 85): Հանդեսը տպագրում է նաև Մ. Գ. Յերահյանի, Հ. Ամպրուկյանի, Մ. Պ. Տերունյանի և ուրիշների քննադատական ծավալուն հոդվածները Ազգային միության մասին:

Հանդեսի քննադատության թիրախներից էր նաև Ազգային միության կողմից հայանպաստ քարոզչություն իրականացնելու նպատակով Բոստոնում հրատարակվող «The Armenian Herald» (1917–1919) ամսաթերթը՝ Միհրան Սվազլըի խմբագրությամբ: Մինչ այդ նույն նպատակով 1904–1913 թթ. Ա. Մաշտեսյանի խմբագրությամբ հրատարակվել էր անգլերեն «Armenia» ամսօրյա հանդեսը, որը լավ ընդունելության էր գտել օտարազգի հայասերների շրջանում, իսկ նրա դադարից երկու տարի հետո Նյու Յորքում՝ «The New Armenia» (1915–1929) պարբերականը: Հրատարակվելով նույն նպատակներով «The Armenian Herald»-ը մրցակցության ելավ «The New Armenia»-ի դեմ՝ ձգտելով նրան դուրս մղել ասպարե-

[1] Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Ե., 2000, էջ 116:

զից: «Ազատի» մեզ հասած համարները լի են այդ պայքարի բազմաթիվ օրինակներով, որոնք մի կողմից բարձրացնում, ընդգծում էին «The New Armenia»-ի դերն ու նշանակությունը, արժանիքները, առավելությունները, մյուս կողմից՝ բացահայտում իր հակառակորդի սխալներն ու թերությունները: Ի դեպ, «Ազատի» էջերում Ազգային միության գործունեությանը, նրա պարբերաթերթին և «The New Armenia»-ի դերին և նշանակությանը այդքան մեծ տեղ հատկացնելը ժողովրդի նյութական և բարոյական աջակցությունը փնտրելու միտումը ևս ուներ:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը ևս դուրս չէր մնում հանդեսի տեսադաշտից: Կրկին հավաստվում էր «Ազատի» անկողմնակալությունն ու անաչառությունը: Մահտեսյանը մաքրագործման էր կոչում Հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի մասնաճյուղին՝ խուսափելու համար վերստին անդամահատություններից և պառակտումից: Հայ որոշ «քաղաքագետներ», պարբերականի էջերում հաճախ սարկաստիկ բնութագրումների էին արժանանում: Ի դեպ, նա համոզված էր, որ կուսակցականների շարքում կան շատ «անկեղծ յեղափոխականներ», որոնք պատասխանատու չեն իրենց պետերի արարքների համար (1918, թիվ 18, էջ 280): Ինչպես «Արծիւ» հանդեսում, այստեղ ևս Ա. Մահտեսյանը դատապարտում էր քաղաքական սպանությունները, նրանց կազմակերպիչներին և դահիճներին: Համբարձում Առաքելյանի, Նյուպենկյան եղբայրների սպանությունները ամոթի խարան են ոչ այնքան դահիճների, որքան նրանց հանդուրժողների ճակատին, որոնք ենթարկվել էին «բարոյական խաւարումի» (1918, թիվ 12, էջ 178): Գաղթօջախի ազգային կյանքում արմատացած «տխուր երևույթների» մասին է խոսում Գ. Նալբանտը՝ հասարակական արատներ ծնող պատճառ համարելով «հանրային առողջ գիտակցութեան» (1918, թիվ 18, էջ 281) բացակայությունը:

Գաղթօջախի կյանքը լուսաբանող նյութերի կարգին պետք է դասել նաև «Ազատի» այն հոդվածները, որոնք միտում էին կարգավորել ամերիկահայերի և ամերիկյան կառավարության փոխհարաբերությունները: Հարցն ավելի շատ առնչվում է քաղաքական, իրավական, ազգային և քաղաքացիական հարաբերությունների բնագավառին: ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելուց հետո (1917) ամերիկյան քա-

զաքացիություն ստանալու, Հայերի ամերիկյան կյանքին Հարմարվելու խնդիրն ավելի շատ է մտաՀոգում խմբագրին, քանի որ պատերազմի շրջանում տարաՀպատակ ամերիկացիների նկատմամբ ամերիկյան կառավարության անվստաՀությունը տարածվում էր նաև Հայերի վրա: Ամերիկյան կառավարության և Հայ գաղթականների իրավական Հարաբերությունների կարգավորմանն էր նպատակաուղղված նաև Հայ զինվորներին Հասցեագրված Հոդվածների շարքը, որտեղ մեկնաբանվում էին զինվորական ծառայության մասին ամերիկյան օրենքները, ծանոթություն էր տրվում զինվորների պարտականությունների և իրավունքների մասին, զինվորական և իրավաբանական գիտելիքներ Հաղորդվում: Այս նյութերը ոչ միայն ճանաչողական, այլև գործնական նշանակություն ունեին: Հոդվածները Հիմնականում Հրատարակվել են Օրենսգետ և Գ. Ս. Ք. (Գ. Ս. Քեպապյան) ստորագրություններով:

ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելուց Հետո Հանդեսն առավել ուշադրություն էր դարձնում ամերիկաՀայության մասնակցությանը պատերազմին՝ և՛ ռազմաճակատում Հաղթանակի Հասնելու Համար, և՛ թիկունքում: Երկու ճակատներում էլ պաՀանջվում էր Հավատարիմ ծառայություն և սեփական նպաստի ներդրում: «Ազատը» դույզն-ինչ կասկած չուներ, որ մեծ ազգերի կողմից պատերազմը մղվում էր փոքր և ճնշված ժողովուրդների պաշտպանության և ազատագրության Համար, իսկ ամերիկյան զորքերի կազմում Հայերի մասնակցությունը պատերազմին դիտվում էր որպես Հայաստանի ազատագրությանն ու անկախությանը բերվող նպաստ: Բանակում ծառայող Հայերին խորՀուրդ էր տրվում օգտվել պատեՀ առիթից և ստանալ ամերիկյան քաղաքացիություն: ՊատաՀական գիրքարոզում չէր սա. Հայ գաղթականության ամերիկյան իրականությանը Հարմարվելը, ապրելակերպը և սովորությունները յուրացնելը, և, վերջապես, ամերիկյան քաղաքացի և իսկական ամերիկացի դառնալը խրախուսվում էր Հանդեսի էջերում այնպես, կարծես բացառվում էր Հայրենիք վերադառնալու Հնարավորությունը: Չնայած այն Հանգամանքին, որ Ա. ՄաՀտեսյանը իսկապես Հավատում էր Հայաստանի ազատագրությանը, զարմանալիորեն, ոչ մի անգամ չշոշափեց Հայրենադարձության թեման:

Գաղթօջախի սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային կյանքը ամբողջությամբ դուրս է մնացել հանդեսի տեսադաշտից: Մշակութային կյանքն արտացոլող ընդամենը մի քանի հաղորդում է տպագրվել, իսկ կրթական խնդիրների մասին թերևս միակ նյութը Մ. Անանիկյանի «Ամերիկահայ դպրոցները ու դասագրքերը» հոդվածն է՝ գրված ամերիկահայ Ուսանողական միության պատվերով հայ մամուլում ամերիկահայ կրթական, դպրոցական կյանքի լուծման կարոտ հիմնախնդիրները բարձրացնելու նպատակով: Հեղինակը, գնահատելով այդ միության հայրենասիրական նկրտումները, ուսուցման, կրթական գործում կարևորում էր «երեք գլխաւոր բան՝ հայերէն, կրօնագիտութիւն եւ ազգային պատմութիւն» (1918, թիվ 8, էջ 122):

Հրատարակվելով հայ ժողովրդի համար դժվարին և բախտորոշ ժամանակաշրջանում, «Ազատը», սակայն, քիչ է անդրադարձել համազգային քաղաքական խնդիրներին: Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում կատարվող արյունալի իրադարձությունները, Հայաստանի Հանրապետության ստեղծումը, դրանց անմիջականորեն առնչվող և լուծման կարոտ ազգային բոլոր հիմնախնդիրները, որ, թվում է, յուրաքանչյուր հայ պարբերականի քննարկման հիմնական թեման պետք է լինեին, հաճախ հպանցիկ ուշադրության են արժանանում հանդեսի էջերում: Խոսքը վերաբերում է և՛ խմբագրական, և՛ հեղինակային հոդվածների նկատելի պակասին: «Ազատի» առաջին համարի «Համաշխարհային քրոնիկը» անդրադառնում է միջազգային քաղաքական անցուդարձերին և պատերազմի ընթացքին: Հասարակական-քաղաքական միտքը հուզող այնպիսի մի իրադարձություն, ինչպիսին էր Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, հանդեսի դիրքորոշումից ելնող անհրաժեշտ գնահատական չի ստանում պարբերականի էջերում: Ա. Մահտեսյանի դատողությունները շատ զգուշավոր են: Նա չի շտապում սեփական տեսակետը հայտնել, գնահատական տալ, այն թողնելով պատմության վճռին, սակայն ընդունում է այդ հեղափոխության կարևորությունը: Զգիտես միտումնավոր, թե անգիտաբար՝ Ա. Մահտեսյանը շրջանցում էր այնպիսի մի կարևոր հիմնահարց, ինչպիսին է հեղափոխության հնարավոր ազդեցությունը հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագրի վրա, իսկ Անդրկովկասի հետագա իրադարձությունները ներկայացվում էին սոսկ որպես ար-

դեն կատարված իրողություն՝ առանց համապատասխան մեկնաբանությունների: Մ. Յերահյանն առաջինն էր, որ իր «Ազգային միութիւնը» հոդվածում ահազանգ էր բարձրացնում Կովկասի, մասնավորապես Հայաստանի գլխին կուտակվող և փոթորիկ գուժող սև ամպերի առիթով: «Հայը ռուսական բանակներու պաշտպանութենէն կը զրկուի եւ իբրեւ ընկեցիկ մի մանուկ իր բաղդին կը յանձնուի» (1918, թիվ 11, էջ 166),- ազդարարում էր հեղինակը դեռևս 1918 թ. փետրվարի 12-ին գրված հոդվածում (տպագրվել է հունիսի 15-ի համարում, երբ իրադրությունը Անդրկովկասում վաղուց արդեն փոխվել էր): Առաջ քաշված հարցադրումները միանգամայն կենսական ու հրատապ էին այդ ժամանակաշրջանում և իրենց տրամաբանական պատասխաններն են գտնում հոդվածի հետագա տողերում, որտեղ համախմբվելու, հանգանակության ձեռնարկելու և օգնության կոչ էր արվում:

Ամսագրի դիրքորոշումը Հայաստանի ազատագրության հարցի նկատմամբ բացահայտ է դառնում հենց առաջին համարի «Համաշխարհային քրոնիկից». «Ազատ» կը հաւատայ, թէ Միացեալ եւ Անկախ Հայաստան մը միայն պիտի կրնայ հայերուն անվրդով պատեհութիւն ընձեռել զարգանալու և յառաջդիմելու համար» (1918, թիվ 1, էջ 15): Սակայն դրան հասնելու ուղիների հարցն ընդհանրապես քննարկման չէր դրվում, պարզապես հաստատագրվում էր հեղինակի անփոփոխ տեսակետը. «Ու բոլոր անոնք, որ նուիրուած են հայ ազատագրութեան գործին, Միացեալ Հայաստանի մը վերականգնումը պարտին պահանջել թէ՛ ամերիկեան կառավարութենէն և թէ՛ դաշնակից պետութիւններէն» (նույն տեղում):

Ա. Մահտեսյանի զգուշավորությունն ու շրջահայեցությունը դրսևորվում էր նաև հայ-թուրքական խաղաղության պայմանագրի և Հայաստանի Հանրապետության ստեղծման մասին իր դիրքորոշումը արտահայտելիս: Սկզբնական շրջանում այն թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ, ինչպես հանդեսն էր նշում, «Ականաւոր եւրոպացիներ ու ամերիկացիներ, որոնք կը շահագրգռուին Անկախ ու Միացեալ Հայաստանի մը հարցով, կը թելադրեն բաւ կարելույն քիչ խօսիլ Կովկասի նորակազմ Հայ Հանրապետութեան մասին» (1918, թիվ 13, էջ 195): Սակայն դեպքերի զարգացմանը զուգընթաց, դիվանագիտական զգուշավորությունը թուլա-

լով Ա. Մահտեսյանն ավելի իրատեսորեն է գնահատում իրադրությունը և հայ-թուրքական պայմանագրի նշանակությունը Անդրկովկասի հայության համար: Նա կարծիք էր հայտնում, «թէ հայ-թրքական խաղաղութիւնը, որուն շնորհիւ Կովկասի հայութիւնը փրկուեցաւ անճիտումի վերահաս վտանգէն եւ որուն շնորհիւ հայը իբրեւ ռազմիկ ազգ արժանացաւ դաշինք կռելու իրաւասութեան, պիտի կրնայ օգտագործուիլ» (նույն տեղում): Հայաստանի Հանրապետության ճանաչումը, հայերի «անկախօրէն իրենց քաղաքական բախտը տնօրինելու» իրավունքը հնարավորություն կտան Հայաստանի կառավարությանը պատերազմի ավարտից հետո իր ներկայացուցիչներն ունենալ խաղաղության միջազգային վեհաժողովում:

Իր էջերում տեղ տալով որոշ քննադատական հոդվածների՝ հանդեսը հարկ էր համարում նշել, որ պարբերականում իրենց կարծիքները կարող են արտահայտել հնչակյանները, ռամկավարները, դաշնակցականները և ուրիշներ, իսկ որևէ հոդվածի հրատարակությունը չի նշանակում, թե «Ազատը» համամիտ է բոլոր տեսակետներին: Այսպիսի ծանոթագրությամբ քննադատական հոդվածներից մեկը՝ Մ. Պ. Ծերոնյանի հեղինակությամբ, «Թշնամին ներսէն է» վերնագրով, գրեթե ամբողջությամբ հայ ազգային կուսակցությունների գործունեության, մասնավորապես դաշնակցության քննադատությունն է: Ռուսական զորքերի Կովկասյան ռազմաճակատը լքելուց, Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը կնքելուց հետո Անդրկովկասում և Հայաստանում ստեղծված անելանելի իրավիճակի միակ պատասխանատուն համարվում են ռուս բոլշևիկները և դաշնակցական ու հնչակյան գործիչները՝ «հայ բոլշևիկները», արտաքին թշնամու և վտանգների հետ միասին դամոկլյան սրի պես հայ ժողովրդի գլխին կախված «ներքին չարիքը» (1918, թիվ 14, էջ 219): Ըստ հեղինակի, կուսակցությունները օգտակար դեր են կատարում քաղաքականապես ազատ երկրներում, իսկ «մեզ համար միակ կենսական խնդիրը մեր գոյութիւնը յաւերժացնել, մեր անկախութիւնը ձեռք բերել, մեր հայրենիքին տիրանալ եւ զայն վերաշինելն է» (նույն տեղում, էջ 222): Նրա կարծիքով, հայ ժողովրդի փրկության միակ միջոցը մեկ ընդհանուր ազգայնական ողջամիտ և լուրջ ուղղություն, ազգաշեն քաղաքականություն և սկզբունք ունեցող կազմակերպության ստեղծումն է: Մեկ հանգամանք ևս. Ծերոնյանը, կար-

ծես, անդրադառնում է Հայաստանի Հանրապետության գոյությունը, չնայած հոդվածը գրված է օգոստոսի 23-ին: Հայաստանի Հանրապետության միտումնավոր անտեսումը մյուս կուսակցություններից հատուկ առանձնացված դաշնակցության անխնա քննադատության հենքի վրա՝ ակնհայտորեն բացահայտում է հոդվածի միտվածությունը՝ ժխտելու այդ հանրապետության ազգային նշանակությունը: Բարեբախտաբար, պարբերականն աշխատում էր աստիճանաբար, Անդրկովկասի հայության շահերի տեսանկյունից ևս գնահատել իրադրությունը: Հանդեսը տպագրում է մի հոդված՝ Դետ ստորագրությամբ, որը Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու հարցն է քննարկում, ընդգծելով, որ «կովկասահայութեան համար դրամէն աւելի կարեւոր ազդակը կռուող երիտասարդութիւնն է» (նույն տեղում, էջ 224):

Ա. Մահտեսյանը հայ դատը վարելու և Հայաստանը միջազգային ատյաններում ներկայացնելու իրավասությունը վերապահում էր հայ ազգային պատվիրակությանը: Խմբագիրը ջանում էր անաչառորեն գնահատել իրադրությունը և Ազգային պատվիրակության ու Պողոս Նուբար փաշայի գործունեությունը: «Ազատը» մասնակցում է այն բանավեճին, որ բացվում է Փարիզի «Վերածնունդ» կիսամսյա հանդեսում տպագրված Ա. Չոպանյանի «Գերագոյն պայքարը» հոդվածով, որը հայ ազգային պատվիրակության գործունեության թերի և սխալ կողմերի քննադատությունն էր: Իրազեկելու համար հարցի էությանը, արտատպվում են Ա. Չոպանյանի հոդվածը և ապա՝ Մ. Տամատյանի պատասխանը՝ «Տեսակցութիւն մը Պողոս փաշայի հետ» վերնագրով Փարիզի «Արձագանգ Փարիզի» շաբաթաթերթից: Ա. Մահտեսյանը հանդես է գալիս Ա. Չոպանյանի պաշտպանությամբ, արդարացի համարելով նրա մեղադրանքները հատկապես դիվանագիտական պայքարին և Հայկական հարցի քարոզչության անբավարարությանը և թերարժեքությանը վերաբերող հարցերում: Ա. Չոպանյանն առաջ էր քաշում մի կազմակերպված մարմնի՝ Հայկական պրոպագանդի բյուրոյի ստեղծման հարցը, որը հնարավորություն կընձեռեր օտարազգի մամուլի համար հայթայթել կարևոր փաստաթղթեր, փաստեր, տեղեկություններ և այլ նյութեր, որով և կարելի կլիներ խուսափել այդ մամուլում երևացող սխալ և երբեմն հայավնաս կամ թերի հոդվածներից: Ա. Մահտեսյա-

նը համամիտ էր Ա. Ջոպանյանի կարծիքին: Դեռ ավելին. Պողոս Նուբար փաշան մեղադրվում էր Հայաստանի անկախության գաղափարից հրաժարվելու և միայն Թուրքիայի տարածքում ապրող հայերի համար այլ պետության հովանավորության ներքո ինքնօրինություն խնդրելու մեջ: Նման վարքագիծը որակվում էր որպես ազգային դատին սպառնացող վտանգ, Ա. Ջոպանյանի քննադատությունը՝ «մեծագոյն ծառայութիւն Հայաստանի», անտարբերությունը՝ ջայլամություն (նույն տեղում, թիվ 17, էջ 261):

Նշելով, որ Թուրքիայի հետ կնքված զինադադարի պայմանները «նպաստաւոր չեն թուիր նոր Հայաստանի մը յառնումին», Մահտեսյանը առաջ էր քաշում Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ ներկայացուցչական համաժողով հրավիրելու հարցը, որտեղ «պիտի դարմանուին, ըստ կարելւոյն, անցեալին սխալները եւ ուր պիտի բանաձեւուի որոշ քաղաքականութիւն մը՝ պահանջելու ու ի հարկին՝ խլելու Հայաստանի ազատագրութիւնը» (նույն տեղում): Ազատությունը «ի հարկին խլելու» պահանջն ամենևին օսմանյան կառավարության դեմ զինված պայքարի խնդիր չէր դնում: Անսահման հավատը և վստահությունը դաշնակիցների խոստումների նկատմամբ՝ բացառում էին անկախությունը վերստանալու այլ ուղիների որոնումը: Հայկական հարցի լուծումը նա կապում էր դաշնակից պետությունների հաղթանակի հետ և միայն նրանց շարքերում ընդունում հայերի զինված պայքարը թուրքերի դեմ: Անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով հայերը «պիտի պահանջեն ու, հետեւելով կեանքի գերագոյն փիլիսոփայութեան, պիտի խլեն Հայաստանի անկախութեան իրաւունքը» (նույն տեղում): Ազատագրությանը նպաստող միակ կարևոր գործոնը «հայկական բրոքականտան» էր, բազմակողմանի և լայնածավալ այն աշխատանքը, որը խնդիր էր դնում Եվրոպայի և Ամերիկայի առաջադեմ հասարակայնությանը ծանոթացնել Հայկական հարցի էությանը, հայ ժողովրդի պատմությանը և բազմադարյա մշակույթին, բնավորությանը, սովորույթներին, տառապանքին և հույսերին: Ի դեպ, «Ազատի» էջերում չենք հանդիպում նման հոդվածների: Խմբագիրն այդ հոգսը թողնելով օտարալեզու հայ մամուլին, բավարարվում էր իր խմբագրած "The New Armenia"-ում և ամերիկյան մամուլում հայանպաստ հոդվածների տպագրումով:

Տպագրվել են նաև հոդվածներ, որոնք նպատակն էր ցույց տալ հայերի մասնակցության չափը համաշխարհային պատերազմին, նրանց բերած նպաստը դաշնակից պետությունների հաղթանակին, բնականաբար, և ակնկալիքները հաղթանակի արդյունքներից: Պարբերականը Հայաստանի ողբերգությունը տեսնում էր այն բանում, որ «ըստ արժանւոյն գնահատուած չեն դարաւոր ծառայութիւնները, զորս Հայաստան մատուցեր է քաղաքակրթութեան» (Նույն տեղում, թիվ 16, էջ 243): Խմբագիրը նշում էր հայերի քաղաքակրթիչ դերը աշխարհին ներկայացնելու գործում թափված ջանքերի ոչ արդյունավետությունը, պատճառները և մեծ վտանգ էր տեսնում հայերի՝ իրենց դատին հետամուտ չլինելու մեջ: Պատերազմը վերջին փորձն էր, ըստ նրա, որ նախախնամությունը ձեռնարկել է անիրավված ազգերը փրկելու նպատակով, և կոչ էր անում օգտվել այդ պատեհությունից:

Չնայած «Ազատը» հանդես էր գալիս նաև որպես գրական պարբերական, նրա գրական բաժինն ամենևին էլ աչքի չի ընկնում հարստությամբ և ժանրային բազմազանությամբ: Գրական ժանրերից գերակշռում է չափածոն: Թե՛ արձակում և թե՛ չափածոյում տիրապետողը երգիծանքն է, «որպէսզի հայերը խնդալ սորվին եւ չըլլան փանդղուր, ինչպէս անժպիտները» (Նույն տեղում, թիվ 3, էջ 47), հիմնական թեման՝ գաղթաշխարհի ազգային, հասարակական-քաղաքական կյանքը, հայրենասիրությունը, կարոտը, սերը: Ներկայացված են նաև տեղական գրական ուժերը: Հիշատակության արժանի են Արշակ Մահտեսյանի սեփական անվամբ և կեղծանուններով (Խիկար Իմաստուն, Ընկեր Մխօս, Զավեշտասեր Խիկար, Արփեն Մալթեսյան) հրատարակված երգիծական չափածո և արձակ գործերը, որոնք սարկաստիկ ծաղրի էին ենթարկում գաղթօջախի հասարակական կյանքի արատները, ազգային և կուսակցական գործիչներին, նմանողաբար և ինքնուրույն գրված բանաստեղծությունները, Կարապետ Սիտալի, Արամ Բրուտյանի, Գ. Ս. Քեպայյանի, Հ. Թիրյաքյանի ստեղծագործությունները և այլն: Օտարազգի գրողներից տպագրվել են Բեռնարդ Շոուն, Մյուրիել Թարնդայքը, Գրիգորիս Քսենոփուլոսը, Վ. Թարասևիչը, Մարկ Տվենը, Ֆրենկ Քրեյնը և ուրիշներ, հայ գրողներից՝ Հ. Պարոնյանը («Ծիծաղ և Կերբերոս»), Հ. Ալֆիերը («Նինի»):

Հանդեսը մշտական բաժիններ չուներ: Պատմական, բանասիրական, գիտահանրամատչելի և այլ նյութերը ևս որևէ խորագրի տակ չէին ամփոփվում:

«Ազատի» շուրջն էր համախմբվել գաղթօջախի ազգային կյանքից դժգոհ և խմբագրի դիրքորոշումը պաշտպանող ամերիկահայ մտավորականների ոչ մեծ մի խումբ՝ Հ. Թիրյաքյան, Մ. Ֆերահյան, Գ. Ս. Քեպապյան, Տիգրան Մկունդ, Հ. Ամպրուկյան, Մ. Պ. Ծերոնյան, Մարտիրոս Հ. Դավիթյան, Մ. Հ. Անանիկյան, Հ. Ն. Շեքերճյան, Հ. Մ. Տիրանյան և ուրիշներ: Ա. Ամպրոսյան, Արիել Մոգպետյան, Աճուրա Մազդա, իսկ երգիծական նյութերի տակ նաև Խիկար Իմաստուն, Զավեշտասեր Խիկար, Ընկեր Միմոս կեղծանուններով հանդես էր գալիս Արշակ Մահտեսյանը:

«Ազատի» փակման մանրամասները անհայտ են: Ամենայն հավանականությամբ, դադարման հիմնական պատճառը նյութական էր: Պարբերականը հրատարակվում էր խմբագրի միջոցներով, որոնք անսպառ չէին, ուներ բաժանորդների փոքր թիվ, և թեև աշխատակիցները առանց վարձատրության սատարում էին «Ազատին», այն, ըստ երևույթին, չկարողացավ դիմակայել գաղթօջախում այդ տարիներին անվճար բաժանվող կուսակցական թերթերի հետ մշտապես մղվող անհավասար մրցակցական պայքարին:

«ՏԱՒՐՈՍ» (1918–1919)

1918 թ. հունվարի 3-ից Բոստոնում սկսեց լույս տեսնել «Տաւրոս» շաբաթաթերթը, (ապա՝ ամսաթերթ): Խմբագիրներն էին Արմենակ Նազարյանը և Բաբկեն եպս. Կյուլեսերյանը (1868–1936)՝ խմբագիր, պատմաբան, բանասեր, ձեռագրագետ, մշակութային գործիչ, հետագայում՝ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

«Տաւրոսը» կոչվում էր «Ազատ հայաթերթ» և հավակնություն ուներ դառնալու «ամէնուն թերթը՝ հայութեան օրկանը» (1918, թիվ 1, էջ 1): Շաբաթաթերթը հրապարակ էր իջնում լայն առաջադրություններով: Պետք է ասել, որ ժամանակի միջազգային և հայ հասարակական-քաղաքական, ազգային կյանքը հուզող քիչ թե շատ կարևոր ոչ մի հարց չի վրիպել պարբերականի ուշադրությունից:

«Տաւրոսի հիմնաքարերը» խմբագրական հոդվածը բացահայտում էր շաբաթաթերթի հրատարակության նպատակներն ու ծրագրերը: Խմբագրությունը խոստանում էր զերծ մնալ կուսակցական և ամեն կարգի նկատումներից, ունենալ ազգային ազատ ոգի և անաչառ ուղղություն, գնահատել ազգային ամեն շինարար ձեռնարկ և քննադատել ազգի շահերի և նպատակների տեսակետից ամեն վնասակար ու վտանգավոր գործ, լինել հանրապետական սկզբունքների և առաջադիմական ուղղության հետևորդ, հավատարիմ մնալ հայ ազգային, եկեղեցական և ընտանեկան ավանդույթներին ու հաստատություններին, նրանց անարատ և անեղծ պահպանելուն և բարեկարգելուն, ներշնչել հայության մեջ ազգային առողջ գիտակցություն և ոգի, ամրապնդել հայ ժողովրդի հավատը իր ազգային գոյության և ապագայի նկատմամբ, աջակցել և քաջալերել ազգի պատմագրությանը, վերաշինությանը, կրթությանը և բարեգործությանը ուղղված բոլոր ձեռնարկները և այլն: Խմբագրությունը կարևոր էր համարում նաև «Անգլեւսաքսոն միտքն եւ ոգին ծանօթացնել եւ ժողովրդականացնել Հայոց մէջ» (նույն տեղում, էջ 2):

Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները, միջազգային դիվանագիտական կյանքը, Ռուսաստանում, Թուրքիայում, Անդրկովկասում տիրող կացությունը և հատկապես Հայաստանին, հայերին և Հայկական հարցին առնչվող, թեկուզ և չնչին թվացող խնդիրները իրենց համապատասխան լուսաբանությունն են գտել շաբաթաթերթի էջերում: Պետք է ասել, որ պարբերականը բազմակողմանիորեն է քննարկել մատուցվող նյութը՝ ներկայացնելով այն տարբեր տեսանկյուններից:

«Տաւրոսում» պարբերաբար և հանգամանալից քննարկվող հիմնական թեմաներից էին Հայկական հարցի լուծումը և դրան առնչվող միջազգային և հայ ազգային կյանքի բոլոր խնդիրները: Ինչպես ժամանակի ամերիկահայ շատ պարբերականներ, «Տաւրոսը» ևս համոզված էր, և միջազգային քաղաքական իրողությունն էլ, կարծես, տեղ չէր թողնում այլ դիրքորոշում ունենալու, որ պատերազմի հաղթական ավարտից հետո փոքր ազգերի անկախության մասին դաշնակից պետությունների խոստումները կիրագործվեն: «Հայկական դատը եւ Ամերիկա» խմբագրականում (1918, թիվ 4, էջ 49–52) անդրադառնալով Հայկական հարցի՝ պատերազմին նախոր-

դող շրջանի պատմությանը, դիտել է տալիս, որ Եվրոպայի համար Հայկական հարցը Արևելյան խնդրի մեկ մասն է, և որին նա երբեմն դիպչում էր Արևելյան հարցի գոյությունը զգացնել տալու համար սուլթան Համիդին և ոչ թե այն լուծելու նպատակով: Հակիրճ վերլուծելով 1908 թ. երիտթուրքական սահմանադրությունից հետո ռուսական հեղափոխությունից և հատկապես ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելուց հետո ստեղծված իրադրությունը, «Տարոսը» նշում էր, որ Հայկական հարցը այս դեպքում էլ առանձին հարց չէ, այլ փոքր ժողովուրդների ազատագրության հարցի մեկ մասը, ընդգծում էր, որ միայն դաշնակից պետությունների որոշումով պետք է ճշգրտվի հայ ազգի քաղաքական կյանքի «ձևն ու դրութիւնը» (նույն տեղում, էջ 51): Պարբերականը լավագույն տարբերակ էր համարում պատերազմից հետո ազատագրված Հայաստանի խնամակալությունը 25–30 տարով Ամերիկային հանձնելը, ժամանակամիջոց, որը հնարավորություն կտար հայ ժողովրդին Ամերիկայի նման տնտեսապես հզոր և առաջադիմական գաղափարներով զինված երկրի հովանավորության տակ հզորանալու և ընդունակ դառնալու ինքնուրույն պետական կյանքի:

Մի այլ հոդվածում՝ «Հայկական դատը եւ ամերիկյան միսիոնարութիւնը» վերնագրով, «Տարոսը» հավաստում էր. «Փոքրիկ և փոքրագոյն ազգերու շարքին մէջ, Հայ Ազգին ազատագրութիւնը իւրացուցած են Դաշնակից կառավարութիւններ: Հայկական Դատը այս իմաստով մերը չէ՛ հիմայ, այլ Եւրոպայի դատն է, Ամերիկայի դատն է» (1918, թիվ 6, էջ 82–83):

Շաբաթաթերթը Հայկական դատը վտանգված է համարում ամերիկաբնակ այն հայ երիտասարդների պատճառով, որոնք հազար ու մի սուտ ու կեղծ պատճառաբանություններով խուսափում էին ամերիկյան բանակում ծառայելուց, դրանով իսկ բացասական կարծիք ձևավորելով ամերիկացիների մեջ:

Պատերազմող կողմերի երբեմն լսվող հայտարարությունները Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու մասին «Տավրոսը» ընկալում է որպես վտանգ Հայ դատի դրական լուծման համար («Թուրքիոյ ամբողջութիւնը վտանգ մեր դատին համար» 1918, թիվ 5, էջ 67–68): Դաշնակից պետությունների խոստումները, որ իրենք պետք է պաշտպանեն Թուրքիայի հպատակ ազգերի իրավունքները,

ապահովեն նրանց ազգային գոյությունը և ինքնուրույն զարգացումը Թուրքիայի տարածքում, ամենևին էլ չէին հուսադրում պարբերականին: Պատմության նախորդ շրջանների ձախողված փորձը աչքի առաջ ունենալով «Տաւրոսն» առաջարկում էր տվյալ քաղաքական իրադրության մեջ միակ հնարավոր տարբերակը՝ անհապաղ միահամուռ ջանքերով պատրաստել ամերիկյան հասարակական կարծիքը ի նպաստ Հայ դատի և հասկացնել կառավարությանը հայությանը սպառնացող վտանգը:

Արդեն պատերազմի ավարտից հետո, կրկին անդրադառնալով այս հարցին, «Տաւրոսը» տագնապի ձայն է բարձրացնում: «Հայկական դատն ու զինադադարը» խմբագրականում (1918, թիվ 46, էջ 731–732) վերլուծելով ստեղծված քաղաքական իրադրությունը և նշելով, որ Հայ դատը «մտած է իր ամէնէն վճռական ու վտանգաւոր շրջանին մէջ» (նույն տեղում, էջ 731), շաբաթաթերթը կոչ է անում անհապաղ գործել: Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու և հպատակ ազգերի ինչքի, անձի ապահովության, ազատ զարգանալու և միայն ապագայում ինքնավարություն ստանալու մասին քաղաքական շրջանակներում շրջանառվող տեսակետները «Տաւրոսը» համարում էր ոչ միայն Հայ ժողովրդի իղձերի իրականացմանը, այլև նրա ֆիզիկական գոյությանը սպառնացող իրական վտանգ: Շաբաթաթերթը փաստարկներ էր բերում, թե ինչու է Հայ ժողովուրդը արժանի անկախության և կրկին կոչ էր անում լայն քարոզչական աշխատանք ծավալել «ինչ միջոցով, որ կրնանք եւ ուր որ կը հասնի մեր ձայնը» (նույն տեղում, էջ 732) հասարակական կարծիք ստեղծելու, մեծ տերություններին փոքր ազգերի մասին իրենց իսկ հռչակած սկզբունքներին համեմատ գործել ստիպելու և հասկացնելու համար, «թէ արդար կառավարութեան տակ Թուրքիոյ միութիւնը պահելու գաղափարը քաղաքական ցնորք մըն է, որովհետեւ անբնական, անբանաւոր եւ հետեւաբար անհնար է միեւնոյն կառավարութեան ենթարկել՝ ցեղով, կրօնքով, քաղաքական կրթութեամբ, լեզուով եւ ձգտումներով իրարմէ բոլորովին տարբեր, իրարու հակառակ եւ անհաշտ ժողովուրդներ, ինչպէս որ են հայն ու թուրքը...» (նույն տեղում):

«Տաւրոսը» մշտապես կարևորում էր Հայկական հարցի քարոզչությունը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում, թեև անբավարար

էր համարում այդ ուղղությամբ կատարված ջանքերն ու զոհողությունները, սակայն նշում էր նաև այդ «բրոբականտի» մինչ այդ անտեսված բացը՝ քարոզչությունը հայերին «բախտակից ու շահակից» ժողովուրդների մեջ և համագործակցությունը նրանց հետ:

1918–1919 թթ. Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունները մշտապես գտնվում էին «Տաւրոսի» ուշադրության կենտրոնում, իսկ «Կովկասի կացութիւնը» խորագրով խմբագրականները իրենց մշտական տեղն ունեն պարբերականի գրեթե յուրաքանչյուր համարում: Ռուսական զորքերի՝ Կովկասյան ռազմաճակատը լքելու և կովկասահայերին սպառնացող վտանգների մասին լուրերը տագնապով էին արձագանքվում շաբաթաթերթի էջերում: «Տաւրոսը» իրավիճակի վտանգավորությունը լուսաբանելով հանդերձ, հուսահատության չէր մղում, այլ ողջամտությամբ կոչ էր անում: «Պահենք մեր պաղարիւնն եւ հաւասարակշռութիւնը» խմբագրականում շաբաթաթերթը գրում էր. «Ազգի մը համար, որ վճռած է ապրիլ եւ կը հաւատայ, որ ապագայ մը ունի, ներելի չեն երբեք ինչպէս յաջողութեան մէջ խոլ խանդավառութիւնը, նոյնպէս սեւ յուսահատութիւնը վտանգի պահուն» (1918, թիվ 11, էջ 163): Իսկ «Կովկասեան ճգնաժամը» խմբագրականում (1918, թիվ 10, էջ 145–146) վերլուծելով ստեղծված իրադրությունը, Թուրքիայի ձգտումները՝ Կովկասի հայությանն էլ ոչնչացնելով, փակել Հայկական հարցը և համաթուրքական կայսրություն ստեղծել և Ռուսաստանի դեպքերից ու հաջողություններից լկտիացած թուրքերի հնարավոր գործողությունները, պարբերականն իմաստության, զգուշության, նաև չհուսահատվելու կոչ էր անում: Ի դեպ, լավատեսությամբ և հայ ժողովրդի ապագայի նկատմամբ անխախտ հավատով են ներծծված «Տաւրոսի» գրեթե բոլոր հոդվածները:

Անդրադառնալով Անդրկովկասում ստեղծված ծանր իրավիճակին և հայ ժողովրդի գոյությանը սպառնացող վտանգը գիտակցելով՝ «Տաւրոսը» օգնության փութալու կոչ էր հղում ամերիկահայերին, ընդգծելով, սակայն, որ ամերիկահայերը չպետք է դուրս գան իրենց իրավասության սահմաններից և հրահանգներ տան կովկասահայերին, թե ինչպես վարվեն, այլ նրանց թողնեն որոշումներ կայացնելու իրավունքը: Շաբաթաթերթը համոզված էր, որ «Արտասահմանէն ծրագրեր շինելու եւ երկրի գործերը վարելու փորձերը

միշտ աղետալի արդիւնքներու յանգած են եւ այսուհետեւ ալ տարբեր հետեւանք չեն կրնար ունենալ» (1918, թիվ 16, էջ 251): Խմբագրությունն առաջարկում էր միայն առատ նյութական օգնություն տրամադրել և լավագույն դեպքում՝ խորհուրդներ տալ: Ամերիկահայերի՝ իրենց ազգի հանդեպ ունեցած պարտականությունները լավագույնս և արդյունավետ կերպով կատարելուն ուղղված առաջարկություններ անելով «Տաւրոսն» անդրադառնում է նաև գոյություն ունեցող երկու կարծիքներին՝ ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել կարոտյալներին նյութական օգնություն ցուցաբերելու վրա և զոհողությունները հատկացնել միայն ազգի ինքնապաշտպանության համար կռվող զինվորներին: Խմբագրությունն այս երկու տեսակետներն էլ ծայրահեղ է համարում՝ նկատելով, որ օգնությունը հնարավորին չափ պետք է տրամադրվի բոլորին, քանի որ այն նյութականից բացի, նաև բարոյական արժեք ունի: Ինչ վերաբերում է ռազմական գործողությունների բնույթին, շաբաթաթերթը կարծում էր, որ այն ոչ մի նմանություն չունի ծրագրված ապստամբական շարժումներին, այլ պարտադրված էր Բրեստ-Լիտովսկի ամոթապարտ դաշնագրությամբ, բոլորովին անկախ հայերի կամքից: Կովկասի հայերը և գաղթականները ստիպված են զենքի դիմել՝ բնաջնջում չլինելու համար: Նրանց հաղթանակը կամ պարտությունը ամբողջ հայությանը վերաբերող խնդիր է և չի կարելի նրանց օգնելու պարտականությունը դաշնակիցներին թողնել (1918, թիվ 24, էջ 377–378): Այս և նման նկատառումներից ելնելով էլ «Տաւրոսը» սատար էր կանգնում Ամերիկահայ ազգային միության ձեռնարկած մեկ միլիոն դոլարի հանգանակության գործին, ինչպես նաև հայրենիքի վերականգնմանը նպաստող բոլոր ազգօգուտ ձեռնարկումներին:

Հայաստանի Հանրապետության («Արարատեան Հանրապետութիւն») ստեղծման լուրը վերապահությամբ ընդունվեց պարբերականի կողմից: «Տաւրոսն» այն ընկալում էր որպես Թուրքիայի և Գերմանիայի հովանությամբ և նույնիսկ պարտադրանքով կազմված պետություն և զգուշացնում էր Անդրկովկասի հայերին՝ չընկնել նրանց պատրաստած բաց ծուղակը: Շաբաթաթերթը հույս էր հայտնում, որ Հայաստանի Հանրապետության վարիչներն այնքան իմաստուն կլինեն, որ առաջիկա հայ-թուրքական բանակցութ-

յունների ժամանակ չեն խոսի ամբողջ հայության անունից և հանրապետության գործերին չեն խառնի Հայկական հարցը: Գոհացուցիչ էր համարվում այն փաստը, որ «առայժմ ջարդի վտանգ չկայ Կովկասի հայութեան համար» (1918, թիվ 27, էջ 434):

Հայաստանի Հանրապետության գոյությունն ամենևին չէր խանգարում, որ «Տաւրոսը» Հայկական հարցով զբաղվելուն կոչված միակ միակ իրավասու մարմինը համարի Հայ Ազգային պատվիրակությանը: Դեռ ավելին, չաքաթաթերթը նույնիսկ վտանգավոր էր համարում ժխտել դաշնակից պետությունների կողմից ճանաչված Ազգային պատվիրակության հեղինակությունը և նրան ստորադասել Հայաստանի կառավարությանը, որի նկատմամբ մեծ պետությունների դիրքն ու վերաբերմունքը դեռևս ճշտված չէ: Մյուս կողմից՝ Հայ դատը վեհաժողովին պետք է ներկայանա որպես բացարձակապես Թուրքայի հայերի դատ, որը չի կարող նույնանալ ռուսահայերի խնդրի հետ: Մեկը մյուսից անկախ լուծվելուց հետո, ըստ «Տաւրոսի», հետագայում երկու անկախ հայկական պետությունները առանց որևէ արգելքի կարող են միավորվել:

Հենց առաջին համարներից «Տաւրոսը» ձգտում էր ազգի ողջ ուժերը, ճիգերը, միջոցները ուղղորդել հայրենիքի վերաշինության ծրագրի իրականացման գործին, իսկ վերաշինությունը չաբաթաթերթն ընկալում էր իր ամբողջական լայն իմաստով: «Հ. Բ. Ը. Միութիւն» խորագիրը կրող բաժնում տպագրված «Վերաշինութիւն» հոդվածում խմբագրությունը լուսաբանում էր իր տեսակետը. «Վերաշինութիւնը հակառակ իր զուտ նիւթական նշանակութեան, ամէնէն աւելի Հայոց ազգային, ցեղային կեանքին վերահաստատութիւնն է՝ իր նիւթական և բարոյական բոլոր հանգամանքներով ու պայմաններով, միանգամայն իր յառաջդիմական նկարագրով ու ապահովութեամբ» (1918, թիվ 1, էջ 11): Այս նպատակի իրագործմանն էին միտված պարբերականի ազգային, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր, մշակութային, կրթական կյանքին նվիրված հոդվածները:

Գաղթօջախի հիմնախնդիրներին «Տաւրոսը» անդրադարձել է թե՛ խմբագրականներով և թե՛ առանձին հոդվածներով: Քննարկվող թեմաների շարքում առաջնային տեղ է գրավում ամերիկահայերի ազգային անեղծ դիմագծի և ավանդույթների շարունակական պահ-

պանման հարցը: Այն միայն ուծացման դեմ պայքարի խնդիր չէր, այլ ավելի կարևոր, քանի որ անմիջական կապ ուներ Հայրենիքի վերաշինության գործի հետ: «Տարօնը» մեծ կարևորություն էր ընծայում ամերիկահայ գաղթօջախի կատարելիք դերին. «Որովհետև, ինչ որ Ամերիկայի վերապահուած է Հայոց վաղուան քաղաքական կեանքին կազմակերպութեան մէջ, նոյնչափ գործ և պարտաւորութիւն վերապահուած է Ամերիկայի հայ գաղութին ալ» (1918, թիվ 4, էջ 51): Նշելով, որ ամերիկահայ գաղթօջախը, այլ գաղթօջախների հետ համեմատած, ավելի ապահով և ավելի բարվոք տնտեսական վիճակի մեջ է գտնվում, շաբաթաթերթը կարծում էր, որ Հայրենիքի վերաշինության և Հայության իղձերի իրականացման գործում մեծ են նաև նրա վրա դրված հույսերը և պարտականությունները: Հարցը միայն նյութական օգնությանը չի վերաբերում: Սա, ըստ «Տարոնի», փոքրագույնն է վերածնության ծրագրի մեջ: Ամերիկայի հայը, երկիր վերադառնալով, պարտավոր է իր հետ տանել ժամանակակից գործնական գիտելիքներ՝ ի սպաս դնելու իր ժողովրդին, ամերիկյան ոգի և միտք, այսինքն՝ կազմակերպելու, խորհելու, գործելու մեթոդներ, առողջ մարմին, ազգային նկարագիր: Ցավոք, հայ ամուրի երիտասարդությունը և որոշ հայ ընտանիքներ սկսում են կորցնել կամ կորցրել են արդեն Հայրենի մաքուր բարքերը և դարավոր ավանդույթները՝ ի վիճակի չլինելով ազգային դաստիարակություն տալ մատաղ սերնդին: Սրանք են գաղթօջախի բուժման կարոտ «ներքին վերքերը», «փափուկ եւ կենսական» խնդիրներ, որոնց վրա բոլորի, մասնավորապես եկեղեցական և ազգային մարմինների ուշադրությունն է հրավիրում պարբերականը (1918, թիվ 25, էջ 394–395):

Հայ ընտանեկան կյանքի մաքրությանն է անդրադառնում նաև Գ. Հ. Գարակյուլյանն իր «Հայ ընտանիքը եւ իր խորանը» հոդվածում, որտեղ հայ ընտանեկան բարքերի անկման պատճառ է համարում այն, որ ամերիկահայ գաղթօջախում «Հայ Տունը Հայ վերնատունէ զուրկ է» (1918, թիվ 1, էջ 9), այսինքն՝ հայ ընտանիքներում բացակայում է հայ հոգևոր կյանքը:

Հայ հոգևոր կյանքի անհրաժեշտությունը գաղթօջախն այլասերումից և ուծացումից փրկելու գործում կարևորվում է շաբաթաթերթի գործունեության ողջ ընթացքում: Այս խնդրի իրագործմանն

են միտված եկեղեցական և կրոնական խնդիրներին նվիրված բազմաթիվ խմբագրականներն ու հոդվածները, որոնք վերաբերում էին այդ ոլորտում տեղ գտած բազմաթիվ թերությունները վերացնելուն, հոգևորականների պատրաստմանը, նրանց դերի բարձրացմանը, եկեղեցական հաստատությունների բարեկարգմանը, գործերի կազմակերպմանը և այլ ընթացիկ հարցերի: «Տաւրոսն» ամերիկահայ եկեղեցական խնդիրներին այդքան մեծ տեղ տալը պատճառաբանում էր ազգային վերածնության մեջ գաղթօջախի կատարելիք մեծ և պատասխանատու դերով, իսկ «այս գաղութին բարոյական շինութեան, իբրև հարազատ հայ պահպանութեան և զարգացման մեծագոյն ազդակը Հայց. եկեղեցին է» (1918, թիվ 13, էջ 202):

Նշված նպատակներով առաջին իսկ համարներից «Տաւրոսում» իր մշտական տեղն է զբաղեցնում «Եկեղեցի Հայաստանեայց» խորագիրը կրող բաժինը, որը վարում էր Տեր Աթիկ Բջնեցին: Այս խորագրի տակ հրատարակվող «Դասեր Աւետարանէն» և «Ազգային տօնք» շարքերը՝ աստվածաշնչյան կերպարների, եկեղեցական տոների, հայ սրբերի ու նահատակների, ազգային հերոսների մասին, դեպքերն ու դեմքերը քննարկելով իրենց պատմական ժամանակաշրջանի մեջ, վերհանելով նրանց բարոյական արժեքն ու նկարագիրը, մարդկային բնավորության ուժն ու թուլությունները, միշտ առնչում էին դրանք ժամանակակից կյանքին, վարք ու բարքին:

Գաղթօջախն ուծացումից պահպանելու խնդրի մեջ շաբաթաթերթը կարևոր տեղ էր հատկացնում հայոց լեզվին: Նա ոչ միայն հայերենի գործածության շրջանակների ընդլայնման, նրանով խոսելու և գրելու հարցն էր առաջադրում, այլև այն անաղարտ և մաքուր, օտարամուտ տարրերից զերծ պահելու, քանի որ «Հայոց բոլոր հին գաղութները իրենց մայրենի լեզուն նախ խաթարած, այլանդակած են և ետքը՝ մոռցած» (1918, թիվ 13, էջ 202),- գրում էր «Տաւրոսը» «Ամերիկայի հայոց հայերէնի խնդիրը» խմբագրականում: Մայրենի լեզվի մոռացման լուրջ պատճառ էր համարվում այն, որ «Ամերիկայի Հայերը զուրկ են մատենագրական լուրջ, առաջնորդող գրականութենէն» (նույն տեղում), որը, լինելով ավելի հայացի և խնամված, ուղղություն կտար ամերիկահայի խորհելու կերպին և հայոց լեզվին, իսկ ամերիկահայ գրական լեզվում տիրող Կ.Պոլսի հայերենի, գավառաբարբառների, կովկասյան հայերենի և ամերիկ-

յան անգլերենի տարբեր հարաբերակցությամբ խառնուրդները անհարիր են հայոց լեզվի կանոններին: Հայերենի անաղարտ պահպանության, այն զարգացման և բարգավաճման ընդունակ դարձնելու հարցը պարբերականը համարում էր նաև «ազգասիրական պարտք», նվիրական պարտք ամեն հայի համար:

Դրան անմիջապես հաջորդող «Նորագույն սերունդի վիճակը ցավալի է» խմբագրականում, անդրադառնալով մանուկ հասակում Ամերիկա եկած կամ Ամերիկայում ծնված հայ երեխաների հայեցի դաստիարակության հարցերին, նրանց ամերիկյան ձուլող, կաղապարող միջավայրից հեռու պահելուն, շաբաթաթերթը ծանր պարտականություն էր դնում ընտանիքի և ծնողների ուսերին: «Տարոնը» կարծում էր, որ հակառակ բնական դժվարություններին, վիճակը շտկելի է և իր պայմաններն էր առաջ քաշում: Հատկանշական է, որ պարբերականն առաջին տեղում էր դնում այն գաղափարը, որ պետք է «Տղոց ներշնչել սա զգացումը, թէ իրենք հայ են, և հայ ըլլալ պարծանք է իրենց համար» (1918, թիվ 13, էջ 203): «Տարոնը» կոչ էր անում ընտանիքներում խոսել մաքուր, անգլերենից զերծ հայերենով՝ գրական կամ բարբառային, քանի որ գավառաբարբառները ևս արժեքավոր և թանկագին են մեզ համար և հաճախ ավելի հարուստ, քան գրական լեզուն, և նրանց պահպանության հարցը ևս կարևոր է: Հայեցի դաստիարակության կարևորագույն ազդակ են նաև հայկական դպրոցները, որոնց պետք է զարկ տալ, հարստացնել ուսուցման նորագույն մեթոդներով, հետաքրքրական դարձնել աշակերտի համար, ստեղծել գրադարաններ՝ «ողջմիտ, հայաշէն գրականությամբ»: Նորագույն սերնդին կապել հայ եկեղեցու պաշտամունքին, բարեկարգել եկեղեցական ծիսակարգը և երգեցողությունը և վերջապես՝ հայը հայի հետ պետք է խոսի միայն հայերեն, որը պետք է վերածվի ավանդույթի և սովորույթի նորագույն սերնդի մեջ:

Որբանոցների և հայ որբերի խնամքի և դաստիարակության խնդիրը ևս «Տարոն» առնչում է հայրենիքի վերաշինության գործին: Բազմաթիվ հոդվածներում «Հ. Բ. Ը. Միության որբանոցները» (1918, թիվ. 26, էջ 409–410), «Մեր որբերը» (1919, թիվ 18, էջ 275–276) և այլն, գովելի և քաջալերական համարելով հայ որբերին ցուցաբերած հոգածությունը, նշվում է, որ այն «զուտ մարդասիրական

բնույթ մը չունի, այլ ուղղակի եւ սերտիւ ազգային վերաշինութեան հետ կապ ունեցող խնդիր մըն է» (1918, թիվ 26, էջ 410), քանի որ ազգը նյութապես և բարոյապես վերականգնելու դժվարին գործը պիտի ծանրանա այսօրվա մատաղ սերնդի վրա: Այս նկատառումներից ելնելով էլ, շաբաթաթերթը մեծ կարևորություն էր ընծայում բազմահազար որբերի ոչ միայն ֆիզիկական գոյությունը ապահովելուն, այլև նրանց «իբրեւ իր նախնեաց հաւատքին, իր ազգային պատմութեան եւ աւանդութեանց հաւատարիմ հայ» դաստիարակելուն (նույն տեղում): «Մեր որբերը» խմբագրական հոդվածում ևս անդրադառնալով այս նույն հարցերին, համարելով «որբերու հոգատարութիւնը ամէնէն փափուկ, բազմապահանջ եւ կենսական խնդիր» (1919, թիվ 18, էջ 275), նշվում է, որ, գեթ կարևոր չափով, նրանց խնամքից ու դաստիարակությունից կախում ունի վաղվա հայության թիվն ու որակը: Գործը հսկա և համբերատար աշխատանք է պահանջում, մեծ ջանքեր և զոհողություններ, որոնք, սակայն, լիուլի պետք է վարձատրվեն ապագայում: Պարբերականն առաջարկում էր այս նպատակի իրագործման համար՝ կենտրոնացնել ողջ որբախնամ գործը մեկ ուղղության և հսկողության տակ:

Հայրենիքի վերաշինության գաղափարին նվիրվածությունն արդեն իսկ դրդում էր պարբերականին հաճախակի անդրադառնալ հայրենադարձության խնդրին, որը հատկապես պատերազմի ավարտից և դաշնակից պետությունների հաղթանակից հետո ամենաշատ քննարկվող թեմաներից մեկն էր Հայաստանի վերականգնման հույսերով լեցուն ամերիկահայ գաղթօջախում: Քննարկելով հայրենադարձության հետ առնչվող որոշ հարցեր՝ «Ամերիկայի հայեր պիտի վերադառնա՞ն երկիր» խմբագրականում (1918, թիվ 46, էջ 732–733): Հայաստանի վերաշինությունն ընդունելով որպես գերագույն նպատակ՝ շաբաթաթերթը նշում էր, որ յուրաքանչյուր հայի նվիրական պարտականությունն է պատասխանատու զգալ Մայր Հայրենիքի վերաշինության համար, Հայրենիքի, որ տեղ-տեղ թափուր է, տեղ-տեղ՝ նոսր: «Վերադարձող մէն մի հայու տեսակէտին մէջ ազգային շահը պէտք է, որ կեդրոն ըլլայ: Մեր ցեղին թուական աճումն և առաւելութիւնը,- գրում էր պարբերականը,- վերադարձողներուն համար պիտի ըլլայ վերաշինութեան սկզբունքներէն մին» (նույն տեղում, էջ 733): «Տարօն» առաջարկում էր ունենալ

հայրենադարձության լավ մշակված ծրագիր, որը հնարավորություն կտար նաև ազգային վերաշինության գործը հաջողությամբ գլուխ բերել և կետ առ կետ շարադրում էր իր նկատառումները:

Շաբաթաթերթի էջերում լայնորեն լուսաբանվում է նաև գաղթօջախի ազգային, հասարակական-քաղաքական կյանքը իր բոլոր դրսևորումներով: Առանձին հոդվածներով, խմբագրականներով և հաղորդումներով մշտապես ուշադրության է արժանացվում ամերիկահայ ազգային, հասարակական և քաղաքական կազմակերպությունների գործունեությունը: «Տարօնի» համար բնութագրական կարելի է համարել այն, որ բացահայտելով և քննադատելով նրանց գործունեության մեջ տեղ գտած թերությունները, միաժամանակ տեսնում, գնահատում և արժեվորում էր այն լավը, դրականը և օգտակարը, որ բնորոշ էր տվյալ միությանը: Պարբերականը հաճախ հանդես էր գալիս առաջարկություններով կամ համազգային և գաղթօջախի լուծման կարոտ այս կամ այն խնդրի վրա հրավիրում նրանց ուշադրությունը:

«Տարօնի» հենց առաջին համարներից իր մշտական տեղն է զբաղեցնում «Հ. Բ. Ը. Միութիւն» խորագիրը կրող բաժինը: Բազմաթիվ հոդվածներում գովատելով միության մարդասիրական և բարեգործական ձեռնարկները, նաև բացահայտելով որոշ թերություններ, լուսաբանելով հատկապես ամերիկահայ մասնաճյուղերի գործունեությունը՝ պարբերականը կարևորում էր այն նաև մեկ այլ տեսանկյունից: Դիտել տալով, որ Հայ բարեգործական ընդհանուր միությունը միայն պարզ մարդասիրական կազմակերպություն չէ, «Տարօնը» բացահայտում էր միության հայրենասիրական և առավելապես քաղաքական բնույթը՝ «Անոր հիմնական նպատակն է օգնել հայրենի հողին հաստատիլ մնացող հայութեան...» (1918, թիվ 45, էջ 716): Շաբաթաթերթը միաժամանակ նշում էր, որ Հայ բարեգործականը «ոեւէ քաղաքական գոյն եւ հանգամանք չկրեր» (նույն տեղում):

Ի տարբերություն «Ազատի», որն առանց վերապահումների քննադատում էր Ամերիկահայ ազգային միությանը, «Տարօնը», գերծ չմնալով միության գործունեությանը քննադատորեն մոտենալու սկզբունքից, համարում էր այն օգտակար և անհրաժեշտ կազմակերպություն: Շաբաթաթերթն ընդունում էր միայն առաջ

քննադատությունը և կարծում, որ միությունը պետք է նկատի առնի բոլոր իրավացի և լուրջ դիտողությունները («Ծուռը նստինք, շիտակ խօսինք», 1918, թիվ 8, էջ 113–116): «Արեւմուտքը եւ Հայ ազգային միութիւնը» խմբագրականում «Տաւրոսը» նշում էր, որ Ազգային միության կարևորությունը ոչ իր կազմով, ոչ էլ գործունեությամբ պետք է չափել, սխալները կարելի է շտկել, այլ այն գաղափարով, որի իրագործման համար ստեղծվել է այն, «անիկա կը ձգտի անխտիր ազգին բոլոր մտաւորական և նիւթական ոյժերը կենդրոնացնել և ներդաշնակել այնպիսի եղանակաւ մը, որ ոչ ոք իր համոզման հակառակ գործել ստիպուի, բայց ամէնքն ալ գիրար լրացնեն: ... Ազգային միութիւնը առաջին ամբողջական փորձն է այդ ուղղութեամբ, հետևաբար, պէտք է գուրգուրալ անոր վրայ և ջանալ, որ անիկա աճի, զօրանայ և կատարելագործուի»,- գրում էր պարբերականը (1918, թիվ 6, էջ 83):

Անդրադառնալով հայ քաղաքական կուսակցություններին՝ «Տաւրոսը» կարևորում էր հայ իրականության մեջ նրանց գոյության անհրաժեշտությունը այնպես, ինչպես անհրաժեշտ են կրթական, բարեգործական և այլ միությունները: Քաղաքական կազմակերպությունները պետք են ժողովրդին «քաղաքացիական դաստիարակութիւն եւ ազգին քաղաքական կեանքին ընթացք եւ ուղղութիւն տալու համար» (1918, թիվ 9, էջ 131), սակայն հայ կյանքում իսկական իմաստով քաղաքական կազմակերպություններ գոյություն չունեն, քանի որ ազգն էլ անկախ և ինքնօրեն չէ, և նրանց ծրագրերը գործադրելու համար ասպարեզ չկա: Հայ ազգի ազատագրության նպատակը նվիրական համարելով յուրաքանչյուր հայի համար՝ շաբաթաթերթը նաև անհրաժեշտ էր գտնում կուսակցությունների սխալները և սայթաքումները քննադատել, միաժամանակ ցավ հայտնելով, որ հաճախ քննադատությունները սխալ են ընկալվում կուսակցական ղեկավարների կողմից: «Տաւրոսը» կարծում էր, որ ամեն հայի պարտքը և իրավունքն է հսկել, որ քաղաքական կազմակերպությունները իրապես ծառայեն իրենց նպատակին և ունենան «ճշմարտապէս ազգասէր, երկիւղած եւ խղճամիտ» ղեկավարներ, քանզի կուսակցություններն են ստեղծված ծառայելու ժողովրդին և ոչ՝ հակառակը:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը, մանավանդ նրանց մրցակցությունը քաղաքական և ազգային կյանքում առաջնության համար, «Տարոսը» վտանգավոր է համարում հատկապես կովկասահայ իրականության մեջ՝ ազգային ուժերն ու կորովը ջլատելու և ազգային նկարագիրը եղծելու տեսակետից: Նման նկրտումները նա «տղայական» է համարում մի ազգի մեջ, որի գոյությունը վտանգված է:

«Տարոսը» մշտապես արձագանքել է միջազգային, քաղաքական, ազգային կյանքին առնչվող բոլոր լուրերին և դեպքերին՝ տեղ տալով նրանց իր համապատասխան բաժիններում: Տպագրել է նաև մեծ քանակությամբ պատմական, կրոնական, գիտահանրամատչելի նյութեր և գրական ստեղծագործություններ:

«ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ» (ԲՈՍՏՈՆ, 1918–1920)

Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան ուղղության այս հանդեսը լույս է տեսել Բոստոնում 1918 թ. հունվարի 1-ից: Հասարակական, գրական և գիտական ամսաթերթ է, պատկերազարդ, 32 մեծադիր էջերով: «Վերածնութեան» հրատարակիչ-խմբագիրներն էին Եղիա Սիրվարդը (Գրիգորյան) և Հակոբ Բարեջանյանը՝ երկուսն էլ Հնչակյան հայտնի գործիչներ:

Եղիա Սիրվարդը ծնվել է 1890 թ. Խարբերդի վիլայեթի Մորենիկ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Մեզրեի Կեդրոնական վարժարանում: 1907 թ. մեկնել է ԱՄՆ: Սկզբնական շրջանում աշխատել է որպես բանվոր և միաժամանակ սովորել: 1910 թ. Հնչակյան կուսակցության անդամ է: Եղել է «Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագիրներից: Հակոբ Բարեջանյանի հետ միասին խմբագրել և հրատարակել է «Վերածնութիւն» (1918–1920) և «Արդարութեան ձայն» (1919–1920) պարբերականները: 1935–1940 թթ. վարել է «Հնչակ» ամսաթերթի խմբագրությունը: Եղիա Սիրվարդը հոդվածներով և գրական ստեղծագործություններով աշխատակցել է սփյուռքահայ բազմաթիվ պարբերականների: Առանձին գրքերով հրատարակվել են «Ջախջախուած գանկեր» թատերգությունը, «Հայրենիքին համար» վեպը, «Ընկերային գոհեր»,

«Ըմբոստ հոգիներ», «Ուխտաւորի մը նամակները» (1934 թ. Խորհրդային Հայաստանից ստացած իր տպավորությունները) գրքերը, կազմել և հրատարակել է «Հնչակեան տարեգրքի» Ա և Բ հատորները (1931–1932), «1903–1953. Ցիսնամեակ «Երիտասարդ Հայաստանի» (1953) գիրքը: Եղիա Սիրվարդը մահացել է 1985 թ. Փրննսթընում (Ռոդ Այլենդ):

Հակոբ Բարեջանյանը ծնվել է 1874 թ. Խարբերդում: Ավարտել է Թլկատինցու դպրոցը 1891 թ. և որպես ուսուցիչ, դասավանդել Խարբերդում: 1897 թ. մեկնել է ԱՄՆ: Մասնակցել է ամերիկահայ հասարակական-քաղաքական, մշակութային կյանքին, աշխատակցել բազմաթիվ պարբերականների: Ե. Սիրվարդի հետ միասին խմբագրել է Բոստոնի «Վերածնութիւն» և «Արդարութեան ձայն» պարբերականները: 1938 թ. այցելել է Խորհրդային Հայաստան, իսկ 1947 թ.՝ հայրենադարձվել: Մահացել է 1953 թ.:

«Վերածնութիւնը» հրատարակվում էր դժվարին, նաև նյութական, անբարենպաստ պայմաններում, հենվելով «ափ մը գաղափարական ընկերներու» ֆիզիկական և նյութական զոհողությունների վրա: Չէին վարձատրվում ո՛չ խմբագիրները, ո՛չ աշխատակիցները և ո՛չ նույնիսկ գրաշարներն ու տեխնիկական աշխատողները: Վճարվում էին միայն տպագրության, թղթի և փոստի ծախսերը: Խմբագրությունը, հրաժարվելով հայտարարությունների և ծանուցումների տպագրումից, եկամտի այդ աղբյուրն էլ էր մերժել: «Ոչ դրամագլուխ, ոչ ֆոնտ եւ ոչ ալ կազմակերպական չարքեր ունէր իր ետևը իր կեանքը ապրեցնելու համար. գոնէ նիւթապէս» (1919, թիվ 1–2, էջ 5),- գրում էր պարբերականը: Ամսաթերթը ընթերցողների լայն շրջանակ ևս չուներ և ինքն էլ գիտակցում էր, որ «գաղափարական թերթերու եւ հանդէսներու շրջանակը նեղ և սուղ է ամենէն քաղաքակիրթ ազգերու մէջ իսկ, հայ կեանքի մէջ այդպիսի թերթերու լայն տարածումը անմտութիւն պիտի ըլլար սպասել» (նույն տեղում): Միայն 1920 թ. է ամսաթերթը դառնում Ս. Դ. Հնչակյան կուսակցության բողոքող հոսանքի օրգանը, որը, սակայն, չի փրկում այն վերահաս դադարից:

Հանդեսի մշտական աշխատակիցների թվում էին ժամանակի հայտնի շատ Հնչակյան գործիչներ: Պարբերաբար տպագրվում էին Ավետիս Նազարբեկը, Սոկրատ Մ. Գեյոֆյանը, Հարություն Շե-

բերճյանը, Արշավիր Շամլյանը, Վահան Մոլլյանը, տիկ. Վ. Կենճյանը, Ատոմ Կյուլյանը, Վեհմ Շահինյանը, Վահան Վարդանյանը, Տիգրան Ե. Սիրամարգը, Արթիխթը, Վահե Արածանին, Արա-Ոսկյանը, Գեղամ Վարդյանը, Կարապը և ուրիշներ: Կահիրեից թղթակցում էին Անդրանիկ Կարապետյանը, Դիտողը, Փարիզից՝ Գ. Գալայճյանը, Բ. Թուրենը, Գուրգեն Թահմազյանը: Ժան Վալժան և Նուրհան Լուսինյան կեղծանուններով տպագրվում էր Եղիա Սիրվարդը:

1918 թ. թիվ 1-ում տպագրված «Վերածնութեան» նպատակը» խմբագրական հոդվածը հանգամանորեն է ներկայացնում պարբերականի դիրքորոշումները, սահմանագծելով նրա գործունեության շրջանակները, մանրամասնելով սկզբունքային գլխավոր ուղղությունը: Հնչակյան գաղափարախոսության սկզբունքները ընդունելով որպես գործունեության ուղենիշ, հանդեսը հենց սկզբից հայտարարում է «դատերուն ամենէն արդարը եւ իրաւունքներուն ամենէն նուիրականը» պաշտպանելու իր վճռականության մասին: Դա բոլոր զրկվածների, շահագործվողների և անիրավվածների դատն ու իրավունքն էր: Ամսաթերթը նպատակ էր դնում, իր կարծիքով, «ներկայ քաղաքակրթութեան հոսանքներու ամենէն ժամանակակիցը, ամենէն ցայտունը արտայայտել եւ անոր սկզբունքները մարմնացնել հայ կեանքին մէջ» (1918, թիվ 1, էջ 4–5): «Վերածնութիւնը» հաստատագրում էր իր նվիրվածությունը և՛ սոցիալիստական գաղափարախոսությանը, և՛ հայ ազատագրական պայքարին, «Հայաստանի ինքնավարութեան դատին»: Պայքարի առաջին գծի վրա մնալու և «Դաշնակից պետութեանց դատին, իրաւունքին եւ մեծութեան» պաշտպան կանգնելու կամավորի իր վճռականությանը հանդեսը միացնում էր նաև «Հայ մարտական ոյժերու նորաբողբոջ համախմբումին, Հայ ազգային միութեան» սատարելու իր խոստումը: Իսկ թերթի հրատարակման համար էականն ու կարևորը սկզբունք ունենալն է:

Որպես գաղափարական պարբերական, «Վերածնութիւնը» առաջնային տեղ էր հատկացնում սոցիալիստական գաղափարախոսության քարոզին և տարածմանը, մարքսիստական ուսմունքի լուսաբանմանը: Այս բացատրական աշխատանքը հանդեսը կարևորում էր այն պատճառով նաև, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո բոլշևիկյան կառավարության ներքին և արտաքին քա-

ղաքականությունը, հատկապես ծայրահեղությունները ազգային, տնտեսական բնագավառներում, վարկաբեկել էին սոցիալիզմի գաղափարը հայ ազգայնականների շրջանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում քննադատության ալիք էին բարձրացրել թե՛ մարքսիզմի և թե՛ նրա գործնական կիրառման դեմ: Այս նպատակով տպագրված հոդվածները, որոնց մի մասը ընթերցողների հարցերի կամ մամուլում տպագրված քննադատությունների պատասխանն էր, յուրովի պաշտպանականներ են այդ գաղափարախոսության այս կամ այն թեզի և աշխատում էին գիտականորեն, հենվելով մարքսիզմի դասականների աշխատությունների վրա, հիմնավորել և ապացուցել սոցիալիստական ուսմունքի գիտական, հակամարտ հասարակության զարգացման օրինաչափ արդյունք լինելը:

«Բանասիրական» խորագրի ներքո տպագրված Գ. Վարդյանի «Հին աշխարհ եւ նոր աշխարհ» հոդվածաշարը պատմագիտական մի ուսումնասիրություն է, որը հարցը դիտարկում է հենց այդ տեսանկյունից: «Ընկերվարական սկզբունքը, շարժումը», ըստ հեղինակի, ծնունդն է արդի կապիտալիստական աշխարհի տնտեսական աննախանձելի պայմանների, ոչ թէ «քմահաճոյքի կամ մարդկային կամեցողութեան» (1918, թիվ 1, էջ 9): Տարի ու կես տպագրվող այս հոդվածաշարը հանգամանորեն ծանոթացնում է մարդկային հասարակության զարգացման ողջ պատմությանը՝ սկսած նախնադարյան համայնական կարգերից, դասակարգերի ծագմանն ու զարգացմանը, դասակարգային պայքարին և այն ծնող պատճառներին, ընդարձակ ներկայացնում գիտական սոցիալիզմի հիմնական սկզբունքներն ու պատմությունը, ուտոպիստ սոցիալիստներին և գիտական սոցիալիզմի հիմնադիրներին:

Հանդեսի սակավաթիվ բանավիճային հոդվածներից է Հ. Բարսեղյանի «Ինչո՞ւ կը հակառակին» հոդվածաշարը՝ ուղղված ամերիկահայ «Ազգ» թերթում տպագրված նույն թերթի խմբագիր Մինասյանի հոդվածաշարի դեմ: Ռամկավարության դիրքերից ելնելով Մինասյանն աշխատում էր փաստերով ապացուցել սոցիալիզմի վտանգավորությունը ապագա անկախ հայկական պետականության համար, հայ իրականության մեջ տարածվելու պարարտ հող չունենալը, սոցիալիստական գաղափարախոսության որոշ հիմնադրույթների ոչ գիտական լինելը, հատկապես անդրադառնում էր հակա-

մարտ դասակարգերի միջև հակասությունների սրման, մասնավոր և հանրային սեփականության, դասակարգային պայքարի, դասակարգային և ազգային շահերի, ազգայնականության, պատմական մատերիալիզմի, կրոնի և ընտանիքի հարցերին: Հեղինակը ջանում էր գիտականորեն հիմնավորել և հնարավորինս ամբողջականորեն ներկայացնել հնչակյանության վերաբերմունքն այդ հարցերին:

Գաղափարախոսության խնդիրները հանդեսում լուսաբանվում են նաև առանձին հոդվածներով և «Ընկերվարական նամականի» շարքով (հեղ. Կարապ): Վերջինս ընթերցողներին հուզող հարցերի պատասխանն է և շատ ավելի կենսական ու առօրեական ոլորտներ է ընդգրկում («Հարստութեան բաժանումը», «Մարդկային բնութիւնը», «Գիւտեր եւ հնարիչներ», «Կրօն եւ ընկերվարութիւն», «Ընկերվարութիւն եւ յառաջդիմութիւն», «Անիշխանութիւն եւ ընկերվարութիւն», «Ընկերվարութիւն եւ հաւասարութիւն» և այլն): Առանձնակի ուշադրության արժանի են Ժան Վալժանի «Անհատական սեփականութիւնը եւ սոցիալ-դեմոկրատիան», «Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութիւն եւ հայ յեղափոխական դաշնակցութիւն», Գ. Գալայճյանի «Փիլիսոփայութիւն եւ սոցիալիզմ», Ս. Գելոֆյանցի «Դասակարգային անելութեան պատասխանատուները» և այլ հոդվածներ: Զուգահեռաբար տպագրվել են նաև Վ. Լիբկնեխտի, Ժ. Տերկինի, Պ. Լաֆարգի, Ժ. Ժորեսի, և ուրիշների աշխատություններից, Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Կ. Լիբկնեխտի, Ավ. Նազարբեկի և ուրիշների կենսագրությունները: Իսկ անգլերենից թարգմանված Պենկի «Մարքսի եւ Էնգելսի քառասուն տարուայ թղթակցութիւնները» աշխատության տպագրումը թերևս այս երկի հայերեն առաջին հրապարակումն է:

Գաղափարախոսական այս պայքարը և քարոզչությունը խմբագրության կողմից կարևորվում էին առաջին իսկ համարներից և հստակ դրսևորվում ամսաթերթի գրեթե բոլոր, հաճախ տարաբնույթ նյութերում: Պարբերականում նմանատիպ նյութերի գերակշռությունն էլ հենց մեզ իրավունք է տալիս այն բնութագրել շատ ավելի որպես սոցիալիզմի գաղափարախոսության հիմնադրույթները գիտականորեն լուսաբանող և քարոզող, սոցիալական, աշխատավորական խնդիրներ բարձրացնող տեսական մի հանդես, քան ազգային, ժամանակակից և առօրեական հարցերով զբաղվող, առավել ևս լրատվութ-

յուն իրականացնող ամսաթերթ: Խմբագրությունն ինքը ոչ միայն կարևորում էր հանդեսի գործելակերպը, այլև այն համարում «խիզախ քայլ, յանդգնութիւն», (1919, թիվ 1–2, էջ 4):

Ամսաթերթի խմբագրականները նվիրված են ազգային, ընթացիկ հրատապ հարցերի: Հիմնական թեման Հայաստանն է, հայ կյանքը, հայ դատը: Զնայած Հայաստանից ստացվող լուրերի խիստ սակավությանը և կցկտուր բնույթին, պարբերականը օգտագործում էր բոլոր առիթները անդրադառնալու այդ թեմային:

«Վերածնութիւնը» նշում էր հայ ազգային անկախության դեմ միջազգային ատյաններում առկա երկու ազդեցիկ գործոն, վտանգ՝ արտաքին և ներքին: Արտաքինը թուրք կառավարությունն էր իր նենգությամբ ու կեղծավորությամբ և օտար «բարեկամները»՝ «Հայերն անընդունակ են իրենք զիրենք կառավարել» կարգախոսով: Ներքինը որոշ անհատների և մամուլի մի մասի կողմից բարձրացված Հայաստանի խնամակալության կամ հովանավորության պահանջն է, որը, ըստ ամսաթերթի, վտանգավոր էր Հայկական հարցի դրական լուծման համար: Բարձր գնահատելով Ազգային պատվիրակության հայտարարությունը, որով, թեև ուշ, «Հայաստանի միութիւնն ու անկախութիւնը» հռչակվեց, հանդեսն ընդգծում էր, որ «Հայկական հարցի կարգախօսը-հայութեան պահանջը՝ միացեալ, անկախ Հայաստանը» պետք է լինի: Նրա կոչը, հորդորը՝ համագործակցելու, միավորվելու, համարձակություն, վճռականություն ձեռք բերելու և մեկ մարդու պես հետամուտ լինելու արյամբ նվիրագործված հայ դատի իրականացմանը, ուղղված էր ողջ հայ ժողովրդին (1918, թիվ 12, էջ 357):

1918 թ. պատմական բարդ ժամանակաշրջանը գնահատելիս «Վերածնութիւնը» ելնում էր հայ ժողովրդի և նրա ապագայի, հայ դատի լուծման համար ստեղծված իրական, առկա պայմաններից, և թեև չի կարելի ասել, թե նրա եզրահանգումները միշտ ճիշտ և օբյեկտիվ են, այնուամենայնիվ, 1918 թ. սկզբի հոդվածները առանձնանում են հայ ժողովրդի ապագայի նկատմամբ լավատեսությամբ և հավատով: Այս շրջանում ամսաթերթը դեռևս միամտաբար հույսեր էր կապում դաշնակից պետությունների, հատկապես ԱՄՆ-ի և նրա կողմից առաջ քաշված «ազգերի ինքնորոշման իրավունքի» սկզբունքի գործադրության հետ:

Պարբերաթերթը կարծում էր, որ 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի հաշտությամբ պարտադրված պայմանագիրը կասկածի տակ էր դնում Հայկական հարցի լուծման հնարավորությունը և ստեղծված պայմաններում արտասահմանի հայությունը և Ազգային պատվիրակությունը համարում էր Հայ դատի միակ իրավատերը, քանի որ այդ հաշտությունը տեղական և տեղային բնույթ ուներ և չէր կարող «համահայկական հարցին կապուիլ» (1918, թիվ 9, էջ 261):

Արդեն անխախտ հավատք դարձած համոզմունքը, որ Հայկական հարցի լուծումը անառարկելիորեն կախված է դաշնակից պետությունների բարի կամքից և նրանց դաշնակցությանը հայերի բերած զինակցության փաստից, երբեմն խանգարում էր հանդեսին ճիշտ կողմնորոշվելու ժամանակի խճճված իրադրության մեջ: Եվ նույնիսկ մի քանի ամիս անց, Վերսալյի խաղաղության վեհաժողովի օրերին, «Վերածնութիւնն», արդեն որոշակի հիասթափություն ապրելով դաշնակից պետությունների վերաբերմունքից, դեռևս, սակայն, հույսեր էր կապում նրանց հետ: Հետագայում արդեն անդրադառնալով ազգերի ինքնորոշման իրավունքի գործադրության պայմաններին՝ պարբերականը համոզված հայտարարում է, թե հաղթական պետությունների դասակարգային և ազգայնական նեղ շահերն արգելք կհանդիսանան դրա իրականացմանը: Մի քանի ամիս անց «Վերածնութիւնը» արդեն «բարեկամ» կարծեցյալ, «ազատական» պետությունների վարքագիծը քննարկելով՝ ահազանգում է. «Մեր դատը վերջնական անկումի վտանգին ենթակայ է...» և կոչ էր անում «մէկ ճակատի վրայ» կանգնել Հայաստանի և Ազգ. պատվիրակության ներկայացուցիչների կողքին (1919, թիվ 10, էջ 386):

Այսպիսով, եթե 1918 թ. «Վերածնութիւնը» Հայկական հարցի լուծման գործում հույս էր դնում մեծ տերությունների խոստումների վրա, ապա մեկ տարի անց արդեն կասկածում էր՝ «Արդարութիւնը պիտի գործադրուի՞», իսկ 1920 թ., ի տես Վերսալյի խորհրդաժողովում կատարված անիրավությունների, հայերի իրավունքների արհամարհական անտեսման, ձերբազատվում էր պատրանքներից: Դաշնակից պետությունների վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ համարվում էր «պատմական ոճիր» (1920, թիվ 5–6, էջ 199–201), իսկ Ազգերի լիգան կոչվում էր «Գայլերու Դաշնակցութիւն ընդդէմ գառնուկներու»: «Մենք դաշնակիցներու հանդէպ այս ա-

տիճան դառնացած չպիտի ըլլայինք,- գրում է Հանդեսը,- եթէ անոնք երկու չափ, երկու կշիռ ի գործ չդնէին, այսինքն՝ բոլոր փոքր ազգերու ազատագրութեան հանդէպ նոյն վարմունքը ցոյց տային: Բայց անոնք ճանչցան միւս ազգերու պատմական իրաւունքները, նոյն իսկ նոր «անկախ» ազգեր ստեղծեցին եւ սակայն անտեսեցին Հայուն պատմական իրաւունքը - Հայաստանի ազատագրութիւնը» (1920, թիվ 5–6, էջ 201):

Պարբերաթերթը երբեմն Հայ դատը սատարելու իր ուղիներն էր առաջարկում, բարձրացնելով այնպիսի հարցեր, որոնք արդեն իսկ հասունացած և անհրաժեշտ էր համարում: Այսպես, «Թիւրքիոյ ճնշուած ազգերու միութիւնը» հոդվածի հեղինակ Գ. Թահմազյանը շատ ավելի հրամայական պահանջ և օրվա խնդիր էր համարում Թուրքիայում ապրող ճնշված ազգերի համագործակցության և միջազգային ատյաններում միասնական պահանջներով հանդես գալու հարցը:

Ռուսաստանում իշխանությունը գրաված բոլշևիկների կառավարության հանդեպ հանդեսը իր ազգային և քաղաքական համոզմունքներից բխող որոշակի վերաբերմունք է երևան բերում: Մերթ այն դրսևորվում է «պոլշևիկեան խելագար գործունէութիւն» (1918, թիվ 2, էջ 63), «պոլշևիկներու ապիկարութիւնը» (1918, թիվ 4, էջ 101) և նման արտահայտչաձևերով, մերթ ավելի զուսպ է, թեև՝ խիստ: Ի դեպ, բոլշևիկների ներքին և հատկապես արտաքին քաղաքականությունը գնահատելիս հանդեսը միշտ ելնում էր Հայկական հարցի լուծման, հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքական և տնտեսական շահերից, այլ հարց է, թե նա ինչքանով էր ճշմարտացի և իրական պատկերացնում այդ շահերը: «Նոր ուղին» խմբագրականը այս հարցերի վերաբերյալ պարբերականի ամենաամփոփ բացատրությունն է: Գնահատելով Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության գործունեությունը՝ «Վերածնութիւնը» գրում էր. «Պոլշևիկ առաջնորդները որչափ որ իրենց տիրապետութիւնը պահելու համար ամբարիշտ միջոցներ ալ գործածեցին, եւ սակայն, պէտք է ընդունիլ, որ ազատ ճամբայ տուին բաղկացուցիչ ազգերուն՝ իրենց անկախ եւ ինքնուրոյն գործունէութեան: Ոչ միայն Հայաստանի ինքնավարութեան իրաւունքը ճանչցան եւ հռչակեցին, այլ նաև ծածուկ լեզուով մը հասկցուցին, թէ հայերը իրենք զիրենք

պատրաստ պահին ազգային համար» (1918, թիվ 3, էջ 67): Նշելով անկախություն հանելու համար ստեղծված նպաստավոր այս իրադրությունը՝ հոդվածում մտահոգություն էր հայտնվում Ռուսաստանի՝ պատերազմը չշարունակելու և Անդրկովկասից զորքերը հետ քաշելու որոշման առնչությամբ: Առանձնապես մտահոգիչ երևույթներ էին Արևմտյան Հայաստանի գրավված տարածքների վիճակը ռուսական զորքերի լքումից հետո, ապագա հավանական վտանգներին դիմագրավելու հարցը, անկախության և ազատության ազգային իղձերը մարմնավորելու համար ձեռնարկվող քայլերը: Մի բան հաստատապես պարզ և որոշակի է. «... մենք ստեղծուած պայմաններու համեմատ միայն կրնանք գծել մեր ուղին, մենք ճակատագրականօրէն կապուած ենք Ռուսիոյ և անոր անբաժան մէկ մասն ենք, անոր դրօշի յաղթական ծալքերուն տակ է, որ այսօր Հայաստանի աւերակ երկիրը և ... հայութիւնը կապրի» (1918, թիվ 3, էջ 68): Չնայած ամսաթերթն ընդգծում էր «ցարական դրութեան» կառավարության կողմից հայերի ռուսական զենքի հաղթանակին բերած նպաստի չգնահատվելու փաստը, այնուամենայնիվ նշում էր, որ «... կամայ ակամայ մենք որպէս մէկ օղակը ռուս հսկայ շղթային, անխուսափելիօրէն պիտի յառեինք անոր քայլերուն» (նույն տեղում): Այս շրջանում խմբագրությունը թեև դեռևս հավատում էր դաշնակից պետությունների՝ իբր արդարության և ազգային իրավունքի համար մղած պայքարին, բայց և այնպես նկատում էր, որ «Կովկասեան ճակատին վրայ մենք մեր գործունէութեան ուղին պէտք է յարմարցնենք ռուսական գործողութիւններուն» (նույն տեղում): Հայ ժողովրդի գոյությունը պաշտպանելու, հայության վերապրած բեկորները փրկելու, ավերակ օջախները վերականգնելու, Հայ դատի պայքարը շարունակելու առաջադրություններով հանդերձ, ամսաթերթն առաջարկում էր անմիջապես ձեռնամուխ լինել հայկական անկախ կառավարության, վարչական մարմինների սաղմնավորման գործին՝ խաղաղության բանակցությունների ժամանակ հայկական կառավարության նախագիծը պատրաստ ներկայացնելու համար:

1918 թ. ստեղծված միջազգային քաղաքական իրադրության վտանգավորությունը հայ ժողովրդի գոյատևման տեսակետից «Վերածնութիւնը» բնորոշում է որպես «մեծ երկունք», «որ կամ մեր

մահը պիտի ըլլայ և կամ յարութիւնը, կեանքը» (1918, թիվ 4, էջ 102): Հատկանշական է, որ այս դժվարին պահին անգամ պարբերականը օտարից օգնություն հայցելու միտքն անգամ համարում է հայ ժողովրդի համար ինքնասպանություն և կոչ անում ապավինել սեփական ուժին և բազուկին (1918, թիվ 4, էջ 102): Խմբագրության դիմումը՝ կացության լրջությունը գիտակցելու, համապատասխան գոհողության և աշխատանքի լծվելու, նպատակամղված էր «դժնդակ և ճակատագրական» այս պայքարում հայության գոյությունը ապահովելու խնդրի իրագործմանը:

Այս նույն՝ հայության գոյատևման, լինել-չլինելու հարցն էր նաև Ս. Մ. Գելոֆյանցի տագնապների և մտահոգության առարկան: «Աշխարհը ջուրն է տանում, իսկ մեզ քունն է տանում» ընդարձակ հոդվածաշարում ներկայացնելով երեք տարիների ընթացքում Կովկասից, Պարսկաստանից և Ռուսաստանից ստացած իր անձնական տպավորությունները, հեղինակը համակողմանիորեն անդրադառնում է հայ իրականության մեջ կատարված քաղաքական դեպքերին, վերլուծում Ռուսաստանի (և՛ ցարական, և՛ բոլշևիկյան), Թուրքիայի, Արևմտյան Եվրոպայի երկրների քաղաքականությունը Հայաստանի և հայերի նկատմամբ, բացահայտում նրանց Մերձավոր Արևելքում ունեցած տնտեսական և քաղաքական շահերը: Պատմաքաղաքական բարդ իրադարձությունների հենքի վրա վերագնահատելով Հայաստանի և հայերի գոյությանն ու ապագային սպառնացող իրական վերահաս վտանգը՝ հոդվածագիրը մեղադրում է ամերիկահայությանը, քաղաքական կուսակցություններին բախտորոշ ու տագնապալից այս ժամանակաշրջանում Հայկական հարցը մոռացության մատնելու համար: Կծու ծաղրի են ենթարկվում նաև ամերիկահայ «պոլիտիկոսները»:

Ամսաթերթը խմբագրականներ է նվիրում կովկասահայության մղած հերոսամարտերին՝ կոչ անելով գաղութահայությանը մասնակցել մեկ միլիոն դոլարի հանգանակությանը, սատարել Հայաստանի հայությանը իր օրհասական պայքարում: Նշելով ժամանակաշրջանի բախտորոշ լինելը հայ ժողովրդի համար՝ պարբերականը միաժամանակ գաղութահայությանը խորհուրդ էր տալիս սահմանափակվել բացառապես միայն նյութական օգնությամբ, չմիջամտել Հայաստանի քաղաքական կյանքին, քանի որ «սարսափը և

սարսուռը ապրողները, առանք միայն իրենց բաղդը վճռելու իրաւունք ունին» (1918, թիվ 9, էջ 260):

«Վերածնութիւնը» խանդավառությամբ ողջունեց Հայաստանի քաղաքական ազատագրությունը (այն իր կուսակցության ծրագրի «մոտակա» նպատակի իրագործումը նկատելով) և կոչ արեց անմիջապես ձեռնարկել Հայրենիքի վերաշինության գործին: Քաղաքական ազատագրությունը, ըստ հանդեսի, նպատակ չէ բնաւ, այլ միջոց է Հայաստանի տնտեսական ու մտավորական վերաշինությանը և բարգավաճմանը հասնելու համար:

Որպես հնչակյան պարբերական, «Վերածնութիւնը», բնականաբար, չէր կարող անտարբեր անցնել այնպիսի մի էական հարցի կողքով, ինչպիսին Հայաստանի պետական կարգն էր: Տպագրվում են Ս. Գևորգյանցի «Վերածնուող Հայաստան եւ ընկերվարութիւն» և Կ. Մարտիկյանի «Բացատրութիւն մը» հոդվածները: Երկու հեղինակներն էլ կարծում են, որ սոցիալիստական կարգերի հաստատումը Հայաստանում գնալու վաղաժամ է երկրի տնտեսության չափազանց ցածր մակարդակի, քաղաքական, հասարակական, ազգային կյանքի անկազմակերպվածության, դասակարգերի և դասակարգային շահերի, այսինքն՝ զարգացած կապիտալիստական հարաբերությունների բացակայության պատճառով (1920, թիվ 8–10, էջ 283): Իսկ ընդամենը երկու ամիս առաջ տպագրված իր «Բաց նամակում» Ավ. Նազարբեկը հայ ժողովրդի «կատարեալ և ամբողջական ազատագրութիւնը», Հայաստանում սոցիալիզմի հաղթանակը՝ Հնչակյան կուսակցության հեռավոր և վերջնական նպատակի իրագործումը, կապում է միջազգային պրոլետարիատի, համաշխարհային հեղափոխության հաղթանակի հետ (1920, թիվ 5–6, էջ 141):

Հայաստանի վերաշինության հարցը դիտարկելով շատ ավելի լայն առումով, «Վերածնութիւնը» կոչ էր անում համագործակցության, համազգային արտակարգ ջոհողությունների և առաջարկում արտասահմանում ստեղծել Հայաստանի վերաշինության ղեկն ստանձնող համազգային կենտրոնական մարմին (1919, թիվ 7, էջ 290–291): Իսկ Ավ. Նազարբեկը «Վերածնութեան բովէ» հոդվածում, ելնելով «սոցիալիստ-հայրենասէրի» իր դիրքորոշումից, գրում էր, որ յուրաքանչյուր հոսանք «իր քաղաքական ձգտումներում ու պահանջներում պէտք է առաջադրէ միմիայն այն, ինչ միացնում է

բոլոր հոսանքները և ոչ այն, ինչ զատում է նրանց միմեանցից» (1919, թիվ 5, էջ 228): Հայ ազգային հավաքական կյանքի հրամայական պահանջը, կազմակերպության համազգային բնույթի անհրաժեշտությունը Հայաստանի վերաշինության և որպես ազգ-պետության կայացման գործում, ընդգծում է նաև Գ. Գալայճյանը իր «Կազմակերպութիւն եւ Հայաստան» հոդվածում:

Հանդեսը պարբերաբար բարձրացնում էր կանանց սոցիալական և իրավական ազատագրության, նրանց կրթության և հասարակական կյանքում լայնորեն ներգրավելու հարցերը, ընդ որում, ինչպես և մարքսիզմի տեսաբանները, կանանց ազատագրությունը կապում էր մարդկության ընդհանուր սոցիալական ազատագրության հետ: «Վերածնութիւնը» առաջին համարներից բացել էր «Կանանց բաժին», որտեղ քննարկվում էին կանանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ազատագրության հարցերը (Վ. Կեճեյան՝ «Կանանց իրաւունքի շուրջ», Ս. Մ. Գելոֆյանց՝ «Կանանց շարժումը պարսիկների մէջ» և այլն), տպագրում էր նշանավոր կանանց մասին հոդվածներ («Տիկին Մարի Պոչքարովա», «Ռուսական «Ժան տ՚Արգը»՝ Մարի Պոչկարեւա», «Ընկերուհի Հայկանուշ Պոյաճեան» և այլն): Իսկ Ս. Հ. Պետրոսյանի «Հայ կինը Ամերիկայի մէջ» հոդվածը առաջ քաշելով կանանց ազատագրության և կրթության անհրաժեշտության հարցը, կարևորում էր առաջին հերթին հայ կնոջ դերը ընտանիքում (մասնավորապես որպես կրթված և ազգասեր մայր), հասարակական կյանքում, ազգի առաջընթացի, զարգացման, քաղաքակրթման գործում, «որովհետեւ կիներն են, որ իրենց ազգին ճակատագիրը կերտելու է՛ն կարեւոր ազդակը պիտի հանդիսանան» (1918, թիվ 1, էջ 23): Այս հարցի առնչությամբ տպագրվում են նաև Վ. Լիբկնեխտի 1871 թ. «Կինը եւ ընկերվարութիւնը» թեմայով կարդացած ճառի մի մասը և Ա. Բեբելի «Կին» հոդվածը:

Բացառապես գաղափարա-քաղաքական գործունեությամբ տարված, պարբերականի տեսադաշտից գրեթե դուրս է մնացել ամերիկահայ գաղթօջախի սոցիալ-տնտեսական, ազգային, քաղաքական կյանքը: Ամերիկահայ իրականությանը նվիրված մի քանի նյութերը՝ Արա-Ոսկյանց ստորագրությամբ, ամփոփված են «Ազգային քրոնիկ» խորագրի տակ և չափազանց հեռու են գաղթօջախի կյանքի մասին լիարժեք և բազմակողմանի պատկերացում տալուց:

Թղթակցությունների. նամակների բաժինը ևս աչքի չի ընկնում իր արծարծած թեմաների բովանդակային բազմազանությամբ: Դրանք գրեթե առանց բացառության գաղափարական, կուսակցական խնդիրների վերաբերյալ խմբագրությանն ուղղված նամակներ են, որոնք պատասխան էին ակնկալում և հաճախ ստանում խմբագրության պարզաբանումները:

Առաջին իսկ հայացքից ակնառու է ամսաթերթում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների առանձնահատուկ առատությունը, որոնց մեջ ակնհայտորեն նախապատվությունը տրվում էր չափածոյին: Նշանավոր հայ (Սիամանթո, Վարուժան) և օտարազգի (Լ. Անդրեև, Ռ. Թագոր, Ժ. Պեգրո, Ռ. Վագներ և ուրիշներ) գրողների կողքին արժանի տեղ է զբաղեցնում ամերիկահայ ստեղծագործողների մի ստվար խումբ (Տ. Ե. Սիրամարգ, Արթիսթ, Ս. Հակոբյան, Կ. Սիտալ, Հ. Թիրյաքյան, Ե. Սիրվարդ, Վ. Շահինյան, Ա. Կյուլյան, Ա. Շամլյան և շատ ուրիշներ), որի մեջ քիչ չեն նաև արդեն հայտնի անունները:

Արձակ ստեղծագործությունների շարքում ուշագրություն են գրավում Ե. Սիրվարդի (Նուրհան Լուսինյան) «Ջախջախուած գանկեր» թատերգությունը, որը Խարբերդի Մորենիկ գյուղի երիտասարդների՝ ջարդարարների դեմ մղած հերոսական դիմադրության իրական պատմությունն է և հայ ազգային-ազատագրական շարժումներին նվիրված լիարժեք ստեղծագործություն:

Արտերկրում ապրող հայ ստեղծագործողներից հանդեսը տպագրել է Գ. Սիմոնյանին, Հ. Իսկենդերյանին, Ս. Միխայելյանին, Մ. Պեյլերյանին, Բարեյին և ուրիշների: Այս շարքում առանձնանում են Արամ Ասպետի և Լեռնցի (Ա. Նազարբեկ) բանաստեղծությունները և պոեմները:

«Հատընտիր մտքեր» և «Խորհուրդի կայլակներ» խորագրերով ներկայացվել են մեծ մարդկանց (Շեքսպիր, Բայրոն, Վոլտեր, Լոնգֆելլո, Էմերսոն, Ա. Ֆրանս, Ֆ. Բեկոն, Գյոթե, Հյուգո, Մաձձինի, Էլիոթ, Լինկոլն և ուրիշներ) ասույթներից, թևավոր խոսքերից, ասացվածքներից՝ ազատության, հայրենասիրության, ճշմարտության, արդարության մասին:

Գեղարվեստական երկերի տպագրությունը ծառայեցվում էր ընթերցողների ազատասիրական, հայրենասիրական զգացումներն

առաջացնելու, դաստիարակելու և գաղափարախոսական որոշակի քարոզչության նպատակին, որով էլ պայմանավորված էր չափածոյի, որպես հուզականորեն ավելի ներգործուն միջոցի, գերակայությունը հանդեսի էջերում: Գրականագիտությանը առնչվող միակ հոդվածը՝ Հ. Իսկենդերյանի «Սխալներ հայ գրականութեան մէջ» վերնագրով, անդրադառնում էր հենց գրականության դաստիարակիչ, վերափոխիչ մեծ դերին և վերհանում, քննադատում հայ գրականության թերացումներն ու բացերը այդ ասպարեզում:

Պարբերականն իր սուղ էջերն էր տրամադրում նաև պատմական բնույթի ծավալուն ուսումնասիրություններին: Շարունակաբար տպագրվել է Տիգրան Ե. Սիրամարգի «Հայաստանը իր պատմական սահմաններուն մէջ» հետազոտությունը, որին կցված էր «Հայաստանի պատմական սահմանները» մակագրությամբ քարտեզը: Հրատարակվել են նաև Գ. Թահմազյանի երկու պատմական ուսումնասիրությունները հայ ժողովրդի վերջին տարիների պատմության մի քանի առանցքային խնդիրների մասին: «Հայաստան եւ գաղտնի դաշնագրութիւններ» հոդվածը անդրադառնում է դաշնակիցների շարքում հայ ժողովրդի մղած պայքարի պատմությանը, Հայկական Հարցին, դաշնակիցների խոստումներին և եվրոպական պետությունների վարած գաղտնի և բացահայտ քաղաքականությանը: Հայկական Հարցը ուսումնասիրելիս չափազանց կարևորություն էր ընծայվում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի դաշնագրերին, որոնք, անտեսելով հայերին արդեն տրված խոստումները, միմյանց միջև բաժանում էին Թուրքիայի տարածքները: Ներկայացված են այդ դաշնագրերի հայերեն թարգմանությունները և քարտեզ՝ «Թուրքիոյ բաժանումը գաղտնի դաշնագրութիւններու համաձայն» մակագրությամբ: Հայկական Հարցի, նրա իրագործման հնարավորությունների և ուղիների, Հայաստանի միջազգային քաղաքական դրության և մեծ տերությունների արտաքին քաղաքականության պատմական համակողմանի վերլուծությունն է «Հայաստանը հաշտութեան կնքումի նախօրեակին» ուսումնասիրությունը: Ծանրանալով մասնավորապես Իտալիայի, իսկ առանձին գլխով նաև Ֆրանսիայի՝ Կիլիկիայի Հարցում վարած քաղաքականության վրա, վերլուծելով այդ քաղաքականության օբյեկտիվ պատճառները, հեղինակը նկատում էր, որ դրանում փոքր

չէ նաև հայերի մեղքը, որոնք այդ դեպքերից առաջ արդեն ամերիկյան դերիշխանություն էին պահանջում ողջ Հայաստանի համար՝ ներառյալ Կիլիկիան: Սանձված պատմա-քաղաքական իրադրության, մեծ տերությունների քաղաքական շահերի մանրակրկիտ հետազոտությունը ևս հանգեցնում է հայ դիվանագիտության անկարողության և ակնհայտ ձախողման անխուսափելիության մտքին: Ամսաթերթում տպագրված այս երեք աշխատություններն էլ մեծ հետաքրքրություն և պատմական, գիտական արժեք էին ներկայացնում ոչ միայն ժամանակին, այլև այսօր և կարող են փաստական հարուստ բազմաբովանդակ նյութ մատակարարել այդ շրջանի հայոց պատմությունը ուսումնասիրողին:

Հարուստ և բազմազան չէին պարբերականի բաժինները, մի բան, որը պայմանավորված էր նրա գաղափարա-քաղաքական հանդես գալու հանգամանքով: Արդեն նշվածների վրա կարելի է ավելացնել նաև «Գիտական» խորագրով բաժինը, որտեղ տպագրվում էին հանրամատչելի, ճանաչողական բնույթի հոդվածներ գիտական նոր տեսությունների և վարկածների, գիտության և տեխնիկայի այս կամ այն բնագավառում կատարված նոր գյուտերի և այլնի մասին:

«Վերածնություն» լույս ընծայեց երկու ընդարձակածավալ բացառիկ համարներ (1919, թիվ 1–2 և 1920, թիվ 5–6)՝ նկարազարդումներով, հարուստ ու բազմազան բովանդակությամբ: Տեսական, գաղափարախոսական, քարոզչական հոդվածների կողքին («Փիլիսոփայութիւն եւ սոցիալիզմ», «Նոր շարժումը», «Գիտական ընկերվարութիւն», «Ընկերվարութեան նպատակը» և այլն) տեղ են գտել ազգային, քաղաքական («Արդարութիւնը պիտի գործադրվի՞», «Մայիս 28: Հայկական հանրապետութեան տարեդարձը», «Պատմական անիրին հանդէպ», «Բրիտանական նոր քաղաքականութիւնը Արեւելքում եւ Պարսկաստանի ապագան»), պատմագիտական («Հայաստան եւ գաղտնի դաշնագրութիւններ», «Հայաստանը հաշտութեան կնքումի նախօրեակին»), գիտական և տարաբնույթ այլ հոդվածներ, ինչպես նաև Հայկական հարցին, հայ ժողովրդի պատմությանը առնչվող արտատպություններ՝ հայ և օտար մամուլից: Երկու համարներն էլ աչքի են ընկնում նշանավոր, հայտնի և անհայտ անձնավորությունների կենսագրությունների և լուսանկարների տպագրության առատությամբ: Ընդգրկումը լայն է. մարքսիզմի հիմնա-

դիրներ ու դասականներ, հայ մարքսիստներ, Հնչակյան կուսակցության հայտնի անդամներ, հայ ազգային հերոսներ, նշանավոր մտավորական և քաղաքական գործիչներ, գրողներ և մշակույթի նվիրյալներ: Ի դեպ, նմանատիպ նյութերի պակաս չի զգացվում նաև ամսաթերթի մյուս համարներում: Ակնառու է նաև գրական նյութերի առատությունը: Կարելի է ասել, որ այս երկու բացառիկները պարունակում են հանդեսում տպագրված գրական ստեղծագործությունների մեծ մասը՝ ներկայացնելով թե՛ տեղական, թե՛ հայ և թե՛ օտար գրականությունը՝ ժանրային հնարավոր բազմազանությամբ:

«Վերածնություն» հանդեսը մոտ երեք տարվա կյանք ունեցավ և փակվեց մեզ անհայտ (թերևս նյութական) պատճառներով: Վերջինը 1920 թ. լույս տեսած 8–10 համարանիշը կրող միացյալ թիվն է, որտեղ դույզն-ինչ ակնարկ չկա պարբերականի դադարման մասին, սակայն միացյալ համարի հրատարակման փաստն իսկ վկայում է խմբագրության առջև ծառացած նյութական դժվարությունների մասին:

Թեև գաղթօջախի ազգային և առօրյա կյանքից ու հոգսերից, օրվա խնդիրներից կտրվածությունը և լրատվության պակասը մեկուսացրեցին նրան ժողովրդական լայն զանգվածներից, այնուամենայնիվ, իր գոյության ընթացքում «Վերածնությունը», որպես հնչակյան, սոցիալիստական գաղափարախոսության նվիրյալ, իր տեսական-գաղափարական հրապարակումներով և համազգային քաղաքական խնդիրների լուսաբանությամբ լիուլի իրագործեց իր առջև դրված նպատակները՝ արժանի հետք թողնելով հնչակյան մամուլի պատմության մեջ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԸ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՈՒԼՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ՀՅ Դաշնակցությունը դեռևս իր ձևավորման շրջանում Անդրկովկասում ուներ սեփական տպարան, որը նա ժառանգություն էր ստացել Մոսկվայի «Հայրենասերների միությունից»: Դա հնարավորություն տվեց հենց 1890 թվականից սկսել «Դրոշակի» թռուցիկ-թերթերի, իսկ 1891-ից՝ «Դրոշակ» պաշտոնաթերթի տպագրությունը: Այն կազմակերպվեց Թիֆլիսի Հավլաբար թաղամասում, «Նաղուբայ» ռեստորանի նկուղում, սակայն քիչ անց ցարական ժանդարմների հետապնդումների պատճառով տեղափոխվեց Ռումինիա, իսկ այնտեղից էլ Շվեյցարիա՝ Ժնև: 1890-ական թվականների կեսերից ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակը» Ժնևից կանոնավորապես առաքվում էր Անդրկովկաս:

Սակայն, 20-րդ դարի սկզբներին, երբ ՀՅԴ-ն գլխավորեց Հայաստանյայց առաքելական եկեղեցու կալվածքների բռնագրավման և հայկական դպրոցների փակման դեմ պայքարը, նման քարոզչական հնարավորությունները այլևս բավարար չէին: Այդ պատճառով, 1903 թ. հունիսի 12-ի օրենքի և դրա իրականացման նպատակը հետապնդող՝ ներքին գործերի մինիստր Պլեվեի հունիսի 30-ի հրամանագրի դեմ ուղղված բողոքի գործողությունների կազմակերպմանը զուգահեռ, «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե» անունը կրող բազմակուսակցական մարմնի ցուցանակի տակ գործող ՀՅԴ-ն հրապարակեց մի շարք թռուցիկ-թերթեր: Ուստի «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի» անունից հրապարակվող և արտաքուստ՝ նրա քարոզչությունն ապահովող «Ազդ»-երը սկսեցին լույս տեսնել հենց 1903 թ. օգոստոսից[1]*:*

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 12, թ. 1:

1904 թ. փետրվար-մարտ ամիսներին կայացած ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովը հաշվի առնելով ցարիզմի ոտնձգությունների դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը, ստեղծեց Կովկասի Պատասխանատու մարմին, որը Թիֆլիսում գտնվող ՀՅԴ Արևելյան բյուրոյի հետ միասին, հատկապես՝ ռուսական առաջին հեղափոխության շրջանում զգացում էր Անդրկովկասում ծավալվող ամենօրյա իրադարձությունները արտացոլող օրաթերթի կարիքը: Թեև Ժնևում տպագրվող «Դրոշակը» պարբերաբար հրապարակում էր մանրամասն տեղեկություններ հայ-թաթարական կռիվների և երկրամասում տեղի ունեցող այլ դեպքերի մասին, բայց նոր իրավիճակում նման քարոզչությունն այլևս բավարար չէր: Մի կողմից՝ դեպքերի ընթացքն էր դարձել արագ ու հարափոփոխ և մյուս կողմից՝ հեղափոխության հաջողություններն էին հնարավորություն տալիս ՀՅԴ-ին մտածել Անդրկովկասում իր ամենօրյա քարոզչամիջոցն ունենալու մասին: ՀՅԴ-ը դարձել էր երկրամասի հայության քաղաքական սրամադրությունները արտացոլող հիմնական ուժը և Անդրկովկասում ուներ մտավորականների մի ամբողջ համաստեղություն:

Այդ պատճառով համառուսաստանյան ընդհանուր քաղաքական գործադուլին հաջորդած Դեկտեմբերյան ապստամբության օրերին՝ 1905 թ. դեկտեմբերի 13-ից սկսած, ՀՅԴ-ն Թիֆլիսում լույս է ընծայում իր պաշտոնաթերթ «Յառաջ»-ի «Լրատու»-ն: Այն այդպես էլ վերնագրված էր՝ «Յառաջ. հասարակական, քաղաքական, գրական օրաթերթի Լրատու»: Նրա հենց առաջին համարը հաղորդում էր, որ թեև արդեն ընթերցողները տեղեկացվել են դեկտեմբերի վերջերից «Յառաջ» օրաթերթի լույս ընծայման մասին, բայց քանի որ հայտարարվել է համառուսաստանյան ընդհանուր քաղաքական գործադուլ, «ուստի խմբագրութիւնը որոշեց բաց թողնել «Լրատու թերթիկներ»: 1905 թ. դեկտեմբերի 13-ից մինչև 17-ը լույս տեսան 5 «Լրատու» կամ «Լրատու թերթիկներ», որոնք էլ դարձան Անդրկովկասում ՀՅԴ պաշտոնաթերթի՝ «Յառաջի» տպագրության սկիզբը: Օրաթերթի խմբագիրն էր ՀՅԴ հիմնադիր գործիչներից մեկը՝ Ավ. Սահակյանը, նույն ինքը՝ Հայր Աբրահամը, որը հետագայում գլխավորեց Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը, հրատարակիչը՝ Մ. Նալբանդյանը, իսկ տպագրության վայրը՝ Թիֆլիսի «Հերմես» ընկերության տպարանը: «Յառաջ»-ի «Լրատուն»

մանրամասն տեղեկություններ էր հաղորդում հայ-թաթարական կռիվների և Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժման մասին:

Այնուհետև՝ 1906 թ. ապրիլից, Քութաթելաձեի տպարանում սկսվում է նույն թերթի «Յառաջի» կանոնավոր հրատարակությունը, բայց արդեն՝ «Ալիք» խորագրով, որը շուտով փոխարինվեց այլ անվանումներով (ընդհանուր թվով 14): 1906–1909 թթ. բացի իր «Ալիք» խորագրից, «Յառաջը» հրատարակվեց նաև «Երկիր», «Զանգ», «Ժամանակ», «Փայլակ», «Ճայռ», «Խարիսխ», «Առօր», «Կովկասի առաւօտ», «Նոր ալիք», «Վտակ», «Զանգակ» և «Գործ» անվանափոխումներով: Դա պայմանավորված էր նրանով, որ «...ցարական գրաքննութիւնը, իբրեւ քերծէ, միշտ պատրաստ է սանձելու անոր թռիչքները»[2]*:*

«Յառաջ»[3] *անունը և նրա անվանափոխումները հետագայում կրկնեցին նաև ՀՅԴ կողմից տարբեր երկրներում հրապարակված մամուլի օրգանները:*

«Յառաջը» ՀՅԴ Արևելյան բյուրոյի պաշտոնաթերթն էր, ուստի ինչպես նրա, այնպես էլ իր զանազան անվանափոխումները հանդիսացող մյուս թերթերի շուրջ համախմբվել էր ժամանակի դաշնակցական մտավորականության ընտրանին: Նրա հիմնադիրներն էին Ավ. Ահարոնյանը, Ե. Թոփչյանը և Գ. Խաժակը, արտոնատերը՝ Ավ. Սահակյանը: Իբրև զանազան անվանումների տակ թաքնվող «Յառաջի» խմբագիրներ են աշխատել նաև ՀՅԴ նշանավոր գործիչներ ու տեսա-

---

[2] Հ.Յ. Դաշնակցութեան 100-ամեայ մամուլը (1890–1990), պատրաստեց՝ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Պէյրութ, հրատարակութիւն Հ.Յ. Դաշնակցութեան Լիբանանի կեդրոնական կոմիտէի, 1990, էջ 8:

[3] «Յառաջ» անունը կրող խմբագրական շաբաթաթերթերի մեկ համար է լույս տեսել 1908 թ. մարտի 8-ին՝ Կարինում, որը դարձավ նույն քաղաքում 1909–1914 թթ. հրատարակված Կարնո հայ երիտասարդական միության օրգան «Յառաջ» եռօրյայի, և ապա՝ երկօրյայի նախապատրաստական աշխատանքների սկիզբը: 1917-ին ՀՅԴ-ն «Յառաջ» շաբաթաթերթի 5 համարներ է լույս ընծայել Բաքվում, իսկ 1919–1920 թթ. նույն անունով ՀՅԴ պաշտոնաթերթը է տպագրվել և՝ Թիֆլիսում, և Երևանում: 1925-ից Փարիզում իբրև երկօրյա, իսկ 1927-ից՝ որպես օրաթերթ տպագրվեց Շավարշ Միսաքյանի խմբագրած նշանավոր «Յառաջը», որի տպագրությունը նրա դստեր՝ Արփիկ Միսաքյանը շարունակեց մինչև 1970-ական թվականների սկզբները ՀՅԴ հովանու տակ, սակայն նույն շրջանում նա հեռացվեց կուսակցությունից և Փարիզի «Յառաջը» դուրս եկավ ՀՅԴ վերահսկողությունից:

բաններ Հ. Դավթյանը, Հ. Յուսուֆյանը (Վահանյան), Մ. Վարանդյանը (Հովհաննիսյան) և ուրիշներ: Թերթին աշխատակցում էին բանաստեղծ Հովհ. Թումանյանը, գրականագետ Ն. Աղբալյանը և հայ գրականության ու մշակույթի բազմաթիվ այլ ականավոր դեմքեր:

1906 թ. ապրիլի 27-ից մինչև նույն թվականի հունիսի 30-ը թերթը հրապարակվել է «Ալիք» խորագրով: Այդ շրջանում իբրև խմբագիր-հրատարակիչ թերթի վրա նշված էր բժիշկ Տիգրան Թադևոսյանի անունը:

«Ալիքում» տպագրվել են Ե. Թոփչյանի վերլուծությունները, Մ. Վարանդյանի հրապարակումները և բազմաթիվ այլ արժեքավոր հրապարակախոսական ու գրական գործեր: Դրանցից հետաքրքրական է ՀՅԴ ն առաջին «Կենտրոնական վարչության» անդամ, իսկ հետագայում՝ լիբերալ հրապարակախոս Լ. Սարգսյանի (Անկախ)՝ «Մուրճում» տպագրած քննադատական հոդվածներին Մ. Վարանդյանի գրած ընդարձակ պատասխանը: Լ. Սարգսյանը ՀՅԴ-ից հեռանալուց հետո հանդես էր գալիս սուր հրապարակումներով, ուստի «Հայ ազատագրական շարժումը «անկախ» դատախազի առջև» հոդվածաշարի միջոցով Ego-ն (Մ. Վարանդյան) պաշտպանում էր կուսակցության քաղաքական ուղեգիծը, դիմակայում պոզիտիվիստական փիլիսոփայության դիտանկյունով հայ ազատագրական շարժումը քննադատելու՝ Լևոն Սարգսյանի փորձերին:

Իր հրապարակած նյութերի ու վերլուծական հոդվածների առատությամբ առանձնապես աչքի ընկավ «Յառաջի» մյուս անվանափոխումը՝ «Երկիրը», որը սկսեց լույս տեսնել 1906 թ. հոկտեմբերի 1-ից, որպես ՀՅԴ «անպաշտոն պաշտոնաթերթ»: Որպես խմբագիր, պաշտոնապես հանդես էր գալիս բժիշկ Մինաս Մուրադյանը, որը հին դաշնակցական էր և դեռևս 1890-ական թվականներին Մոսկվայում մասնակցություն էր ունեցել Անդրկովկաս զենք ու զինամթերք տեղափոխելու գործին: Պաշտոնաթերթի փոխարեն՝ հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային օրաթերթի ցուցանակի տակ թաքնվող և բժիշկ «խմբագիր» ունեցող «Երկիրը» ազգային-քաղաքական օրաթերթի տպավորություն էր թողնում:

1906 թ. հոկտեմբերի 6-ին «Յառաջի» խմբագրատան վրա, ուր այդ շրջանում տպագրվում էր «Երկիրը», հարձակում կազմակերպեցին «Կովկասյան նախագծի» հրապարակումից հետո ՀՅԴ-ի ընկա-

վարության դեմ պայքար սկսած խմբապետ Միհրան Քեչիշյանը և նրա մերձավորներից Կոմեցի Խեչոն՝ իրենց կողմնակիցներով: Թիֆլիսի հենց կենտրոնում սկսված այդ սադրիչ գործողությանը գաղտնաբար հետևում էին նաև ցարական ոստիկանները: «Երկիրն» այդ առիթով 1906 թ. հոկտեմբերի 7-ին հաղորդում էր, որ «Մեր խմբագրատուն ներս խուժեցին երկու հայտնի արկածներ՝ մի խումբ տղաներով» (1906, 7 հկտ.): Այս միջադեպի նկարագրությունը հետագայում տեղ է գտել «Երկիր» օրաթերթի ակտիվ աշխատակից, իսկ ավելի ուշ շրջանում ՀՅԴ պատմագիր Մ. Վարանդյանի երկհատոր աշխատության մեջ, որը տարինների հեռավորության պատճառով, շփոթել է միայն հարձակման ամիսը (սեպտեմբեր՝ հոկտեմբերի փոխարեն): «Խմբագրատուն ներխուժած Միհրանը,- գրում է Մ. Վարանդյանը՝ դիմելով Բյուրոյի ներկայացուցչին,- պահանջեց Հ.Յ. Դաշնակցութեան կնիքն ու այլ վաւերագրերը: Մերժում ստանալով, սկսաւ սպառնալ»[5]: Ապա շարունակում է. «Անխուսափելի էր թվում բախումը՝ ՀՅԴ զինվորների ու միհրանականների միջև, սակայն այդ վայրկյանին հայտնվեց Ավետիս Ահարոնյանը, որ յանկարծ վրա հասաւ իր աշխատանոցէն և առանց անդրադառնալու վտանգի մեծութեան, սակ իր անուան հմայքին ապաւինած, մերկ կուրծքով նետուեցաւ սպառազինուած հրոսախումբին վրա, քաշեց Միհրանի թեւէն և դո՛ւրս գոռաց... Սաստը նոյնքան անակնկալ էր, որքան ազդու: Հրոսակապետը՝ հեղինակաւոր ձայնէն շշմած, դիմադրութեան փորձ մ՚իսկ չըրաւ և փախաւ իր շքախումբով» (նույն տեղում):

«Երկիրը» ներկայացնում էր 1906 թ. աշնանը շարունակվող հայ-թաթարական կռիվների առանձին դրվագները, վերհիշում նահատակված գործիչների կատարած սխրագործությունները: 1906 թ. հոկտեմբերի 5-ին թերթում տպագրվեց Շուշիի ինքնապաշտպանության ժամանակ, 1905 թ. օգոստոսին նահատակված ՀՅԴ գործիչ Մարգար Ժամհարյանի (Մոավ) հիշատակին նվիրված մի հուշիչ հոդված (1906, 5 հկտ.):

Թերթում տպագրվում էին նաև ՀՅԴ Արևելյան Բյուրոյի թռուցիկները, հիմնավորվում էին քաղաքական տարբեր գործընթացների

---

[5] Վարանդեան Միքայէլ, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 404:

հանդեպ ՀՅԴ դիրքորոշումները: 1906 թ. նոյեմբերի 3-ին լույս տեսած «Ինչո՞ւ մասնակցել» (թիվ 29, էջ 1) առաջնորդողը հիմնավորում էր երկրորդ Պետական դումայի ընտրություններին կուսակցության մասնակցության անհրաժեշտությունը: ՀՅԴ-ն բոյկոտել էր առաջին Պետական դումայի ընտրությունները, սակայն քաղաքական նոր իրավիճակի թելադրանքով անհրաժեշտ էր համարում վերանայել իր նախորդ դիրքորոշումը:

«Երկիրը» իր էջերը լայնորեն տրամադրում էր «Կովկասյան նախագծի» հրապարակումից հետո կուսակցության ներսում ծավալված քննարկումներին: 1906 թ. հոկտեմբերի 28-ից սկսած այդ թեմայով հրապարակվեց Գարեգին Խաժակի «Կուսակցութեան բիւրեղացում» (նույն տեղում, թիվ 22) հոդվածաշարը: Նույն նպատակն էր հետապնդում նաև 1906 թ. նոյեմբերի 3-ից տպագրված՝ Մ. Հովհաննիսյանի «Նախագիծը» հոդվածաշարը, ինչպես նաև նոյեմբերի 18-ի «Զտում» առաջնորդողը:

Չնայած այն հանգամանքին, որ լինելով օրաթերթ, «Երկիրը» հնարավորություն չուներ ամբողջական ձևով անդրադառնալ տեսական-գաղափարախոսական հարցերին, այնուամենայնիվ, այստեղ նույնպես տպագրվում էին նման բնույթի հոդվածաշարեր՝ թերթոնների տեսքով: Այս առումով ուշագրավ էին 1906 թ. ընթացքում տպագրված՝ Միքայել Հովհաննիսյանի «Ինքնապաշտպանութիւնը», «Ո՞վ է Դոնքիշոտը» և այլ հոդվածաշարերը: Դրանցից վերջինը բանավիճային բնույթ ուներ և կրկին անդրադառնում էր «Մուրճ» ամսագրի էջերում ՀՅԴ-ի դեմ քարոզչություն ծավալած նախկին դաշնակցական Լևոն Սարգսյանի (Անկախ) հրապարակումներին:

Բացի քաղաքական բնույթի տեղեկատվությունից և վերլուծություններից, թերթում մեծ տեղ էր հատկացվում նաև գրական ու մշակութային կյանքին: «Երկիրը» 1906 թ. հոկտեմբերից մաս-մաս տպագրեց Ա. Ահարոնյանի «Մարդիկ» ստեղծագործությունը, տեղ տվեց «Մշակից» հրաժարված ականավոր պատմաբան ու հրապարակախոս Լեոյին (Առաքել Բաբախանյան), քննադատելով ՀՅԴ դեմ քարոզչություն ծավալած՝ Հ. Առաքելյանի «Մշակում» տիրող բարքերը: Տպագրվեցին նաև հոդվածներ Խ. Աբովյանի ստեղծագործության, գրախոսականներ Հ. Թումանյանի կատարած թարգմանությունների մասին: Մասնավորապես, այստեղ մեծ բանաստեղծը

տպագրեց Մաքսիմ Գորկու «Վալախական լեգենդ»-ի թարգմանությունը: Կարճատև գոյության ընթացքում, շնորհիվ իր բավական հարուստ բովանդակության, «Յառաջի» անվանափոխումներից հենց «Երկիրն» էր, որ կարողացավ դառնալ դաշնակցական մամուլի ամենահաջողված ու միաժամանակ ամենահետաքրքիր օրաթերթերից մեկը: Դա կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ «Երկիրն» վիճակվեց տպագրվել 1906-ի համեմատաբար ազատ ու բարենպաստ պայմաններում:

«Յառաջի» հաջորդ անվանափոխումները լույս տեսան իրար հետևից և համեմատաբար կարճ կյանք ունեցան: Դրանցից հատկանշական էր ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի պատգամավոր Եվգինե (Ժենյա) Մելիք-Բալանթարյանի խմբագրությամբ 1906-ին հրատարակված **«Զանգը»**, որը լույս տեսավ Մ. Վարդանյանի տպարանում (21 համար): «Զանգը» նույնպես կրում էր հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ անվանումը:

1906–1907 թթ. սահմանագծին լույս տեսավ «Յառաջի» հաջորդ անվանափոխումը՝ **«Ժամանակը»**, սկզբում «Բրատստվո», ապա՝ «Հերմես» տպարանում, 1906-ին՝ 4, իսկ 1907-ին՝ 71 համարներ: Խմբագիր-հրատարակիչը սկզբում Հովհ. Տեր-Միքայելյանն էր, իսկ քիչ անց՝ ՀՅԴ նշանավոր գործիչ Սարգիս Մանասյանը:

«Յառաջի» 1907-ին տպագրված անվանափոխումներից էր նաև **«Փայլակը»**, որի խմբագիր-հրատարակիչն էր Մ. Գևորգյանը: Այն տպագրվում էր Թիֆլիսի «Բրատստվո» տպարանում որպես հասարակական, քաղաքական, տնտեսական օրաթերթ (26 համար):

«Փայլակի» տպագրության խափանումից հետո Թիֆլիսի «Սորոպյան» տպարանում 1907-ի հուլիսի 1-ից Արշակ Մեհրաբյանի խմբագրությամբ հնարավոր եղավ տպագրել նաև «Յառաջի» **«Խարիսխ»** անվանափոխումը (44 համար):

1907-ին տպագրված «Խարիսխին» հաջորդեց **«Ժայռը»**՝ սկզբում Ս. Ղալաչյանի, և ապա՝ Ա. Ղազարյանի խմբագրությամբ: 1907-ին լույս տեսան ընդամենը 23 համարներ, սակայն 1908-ին «Ժայռի» տպագրությունը հաջողվեց շարունակել:

1907-ին լույս տեսան նաև **«Արօր»**-ի 13 համարները՝ Լ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ, որի արագ խափանումից հետո նույն 1907-ին հրատարակվեց **«Կովկասի առաւօտը»**՝ Տ. Նազարյանի

և ապա՝ Բ. Շահինյանի խմբագրությամբ: Դրան հաջորդեց «Նոր ալիքը»՝ տիկին Զ. Մեհրաբյանի խմբագրությամբ, «Հերմես» տպարանում (6 համար):

«Վտակը» լույս տեսավ 1907-ի նոյեմբերից, նույն տպարանում, Մ. Խուդադյանի խմբագրությամբ: Չնայած ոստիկանական աչալուրջ հետապնդումներին, ՀՅԴ-ն զանազան անվանափոխումների միջոցով տպագրելով «Յառաջը» կարողանում էր իր խոսքը հասցնել ընթերցողներին: Հատկանշական էին հատկապես «Վտակի» համարներում տպագրված բազմաթիվ հետաքրքրական հոդվածներն ու վերլուծականները: Այս թերթը հրատարակվում էր ռուսական առաջին հեղափոխության պարտությանը հաջորդած ամիսներին: 1907 նոյեմբերյան այդ օրերին հետաքրքրական իրադարձություններ էին ծավալվում հարևան Իրանում, ուր 1905 թվականին բռնկված հեղափոխության արդյունքում ՀՅԴ-ն կանգնել էր դժվարին երկընտրանքի առջև: Չնայած Իրանի դաշնակցականների դիմադրությանը, կուսակցության 4-րդ ընդհանուր ժողովը որոշել էր մասնակցել իրանական հեղափոխությանը, ուստի դաշնակցական մամուլը խիստ ուշադիր էր հարևան երկրում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ: Նույն շրջանում Իրանի՝ Օսմանյան կայսրության սահմաններին հարող շրջաններն էին ներխուժել նաև թուրքական զորքերը: Ստեղծվել էր որոշակի վտանգ նաև տեղի հայության համար: Այդ պատճառով, ամենևին էլ պատահական չէր, որ Արևելյան բյուրոյի պաշտոնաթերթ «Յառաջին» փոխարինող «Վտակը» պարբերաբար հոդվածներ ու հաղորդագրություններ էր տպագրում իրանա-թուրքական սահմանագլխին տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Դրանցից հատկապես հետաքրքրական էր 1907 թ. դեկտեմբերի 5-ից Ա. Նազարյանց ստորագրությամբ տպագրված «Մի չարաթ թիւրք-պարսկական սահմանագլխի վիճելի շրջաններում» հոդվածաշարը, որն ավելի շուտ «թեժ կետից» հաղորդվող տեղեկությունների շարք էր հիշեցնում: Հոդվածաշարի վերջին մասը իր «Պարսկական քաոսը» վերտառությամբ, լույս տեսավ 1907 թ. դեկտեմբերի 8-ին: Նրա վերնագիրն արդեն ինքնին բնորոշում էր հարևան երկրում ստեղծված քաղաքական կացության հիմնական առանձնահատկությունը:

1907 թվականի վերջին օրերին կարևոր իրադարձություններ էին տեղի ունենում Բուլղարիայում: Բալկանյան թերակղզում ՀՅԴ-ի գլխավոր հենակետը դարձած Պլովդիվ քաղաքում սպանվել էր բուլղար-մակեդոնական շարժման ճանաչված առաջնորդ Բորիս Սարաֆովը, մարդ, որը շուրջ մեկ տասնամյակ ակտիվորեն գործակցել էր ոչ միայն ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեության, այլև անձամբ Քր. Միքայելյանի ու Ռոստոմի հետ: 1907 թվականի դեկտեմբերի 1-ին և 8-ին տպագրված իր հաղորդագրություններով ու հոդվածներով «Վտակը» ընթերցողին էր ներկայացնում Մակեդոնիայի ազատագրության ու Բուլղարիային միավորելու համար «Ներքին Մակեդոնական հեղափոխական կազմակերպության» և Բորիս Սարաֆովի մղած հեղափոխական պայքարի դրվագները:

«Վտակը» «Յառաջ»-ին փոխարինած մյուս պարբերականների նման կարճատև կյանք ունեցավ: Սկզբում տպագրվելով երկօրյա պարբերականությամբ, այն 1907 թ. դեկտեմբերի վերջերին սկսեց հրատարակվել որպես օրաթերթ, սակայն տպագրելով իր 35-րդ համարը 1907 թ. դեկտեմբերի 30-ին հեռացավ ասպարեզից:

«Վտակի» արգելումից հետո ՀՅԴ-ն 1908 թ. ընթացքում կարողացավ հրատարակել իր հաջորդ՝ «Զանգակ» թերթը (50 համար): Խմբագիր-հրատարակիչը Գ. Տեր-Առաքելյանն էր:

Եվ վերջապես՝ 1908–1909 թթ. լույս տեսավ «Յառաջի» վերջին անվանափոխումը՝ «Գործը», որի խմբագիր-հրատարակիչն էր Ա. Դոչոյանը:

ՀՅԴ-ն ու ցարական իշխանությունները, կարծես, մրցում էին իրար հետ, առաջինը՝ դանադան անվանափոխումների ցուցանակի տակ Անդրկովկասում իր պարբերականն ունենալու, իսկ երկրորդը՝ դրանք մեկը մյուսի հետևից փակելու գործում: Սակայն վրա էին հասել ՀՅ Դաշնակցության Մեծ դատավարության օրերը: Այլևս ՀՅԴ Արևելյան բյուրոյի պաշտոնաթերթ տպագրելն անհնար ու անիմաստ էր դարձել, քանի որ նրա անդամներից շատերն արդեն բանտերում էին:

1909 թվականից Թիֆլիսում տպագրվող «Հորիզոն» գրական, հասարակական, տնտեսական և քաղաքական օրաթերթը ստանձնեց ՀՅ Դաշնակցության «անպաշտոն պաշտոնաթերթի» դերակատարությունը: Առաջին տարում տպագրվեցին ընդամենը 58 համար-

ներ, սակայն հետագայում «Հորիզոնը» դարձավ այնքան ճանաչված օրաթերթ, որ ՀՅԴ գաղափարների նման անուղղակի մատուցումն, անկասկած, արդարացրեց իրեն: «Հորիզոնը» տպագրվում էր սկզբում «Կալանձե», իսկ հետո՝ «Աշխատավոր» տպարանում: Խմբագիր-հրատարակիչն էր Բ. Նուրալյանը, սակայն հետագայում այս թերթի իրական կորիզը դարձան և իբրև խմբագիր աշխատեցին, կամ էլ՝ խմբագրակազմի մեջ մտան անվանի գրականագետներ, բանաստեղծներ, մտավորականներ Ն. Աղբալյանը, Հ. Թումանյանը, Տ. Փիրումյանը, Լ. Նազարյանցը, Նար-Դոսը և ուրիշներ: Մտավորականության այս փաղանգի կողքին թերթի խմբագրման աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին դաշնակցական հայտնի գործիչներ Ս. Վրացյանը, Ա. Շահխաթունյանը, Վ. Նավասարդյանը, Մ. Վարանդյանը և ուրիշներ:

«Հորիզոնը» դարձավ հեղինակավոր ազգային-քաղաքական օրաթերթ արևելահայ մամուլի առաջատար պարբերականներից մեկը: 1918-ին հաջողվեց հրատարակել նաև նրա անվանափոխված՝ «Նոր հորիզոն» շարունակությունը:

Դրան զուգահեռ՝ 1913–1915 թթ. այդ թերթի խմբագիր-հրատարակիչներ Ն. Աղբալյանի և Ա. Ղազարյանի ջանքերով հրատարակվեց նաև **«Նոր հոսանք»** գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիրը, որը կոչված էր լրացնելու արևելահայ իրականության մեջ զգացվող լուրջ, տեսական-գաղափարական ամսագրի կարիքը:

XX դարի սկզբներին ու մանավանդ՝ դաշնակցական մամուլի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծված 1905–1907 թթ. Ռուսական առաջին հեղափոխության և Առաջին աշխարհամարտի ընթացքում ՀՅԴ տեղական կառույցներին նույնպես հաջողվում է հրատարակել թերթեր՝ մասնավորապես Բաքվում, 1906–1909 թթ. տպագրվեցին **«Թռուցիկը»** և **«Գրոհը»**:

«Թռուցիկը» Բաքվի ՀՅԴ աշակերտական կազմակերպության օրգանն էր, տպագրվում էր «Արծվաբերդ» տպարանում՝ 1906 թ.: «Գրոհը» ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի երկշաբաթաթերթն էր, որը հրատարակվեց 1906–1907 թթ.:

Ալեքսանդրապոլում 1907–1911 թթ. տպագրվում էր «Ժայռը», որի նպատակը տեղի դաշնակցական կազմակերպության գաղափարների տարածումն էր հայության շրջանում:

Բաքվում 1914–1917 թթ. հրատարակվեց «Պայքարը», որին 1917–1918 թթ. փոխարինեցին «Յառաջը» և «Գործը»:

Երևանում 1917 թ. Ս. Վրացյանի և Ա. Ղազարյանի խմբագրությամբ սկսեց հրատարակվել «Զանգ» եռօրյա քաղաքական, հասարակական և գրական թերթը՝ «Կուլտուրա» տպարանում: Նրա տպագրությունը շարունակվեց նաև Հայաստանի առաջին Հանրապետության գոյության շրջանում 1918–1919 թթ.:

Այս տարիներին Անդրկովկասում ՀՅ Դաշնակցության հրատարակությունների մեջ հատկապես ուշագրավ էր Շուշիում 1917–1919-ին հրատարակված «Ապառաժ» քաղաքական, հասարակական և գրական թերթը: «Ապառաժ» անունը տեղի դաշնակցական կազմակերպության կեղծանունն էր, ուստի այն հանդես էր գալիս որպես ՀՅԴ Շուշիի կոմիտեի պաշտոնաթերթ: Թերթը լույս էր տեսնում Մ. Բաբաջանյանի տպարանում՝ սկզբում շաբաթական պարբերականությամբ, իսկ հետագայում ավելի հաճախակի: Խմբագիրն էր հայտնի մանկավարժական և հասարակական գործիչ Հ. Մուսայելյանը: Պահպանվել են թերթի 1917 թ. համարները:

1917-ից սկսած «Ապառաժի» և ՀՅԴ տեղական կառույցների մյուս հրատարակությունների հայտնությունը պայմանավորված էր 1917 թ. Փետրվարյան հեղափոխության ընձեռած հնարավորություններով: ՀՅ Դաշնակցությունն առաջին անգամ Ռուսաստանյան կայսրության տարածքում ազատվել էր ոստիկանության ու գրաքննության հետապնդումներից ու բազում արգելքներից: Կուսակցությունը պատրաստվում էր Ռուսաստանի Սահմանադիր ժողովի ընտրություններին, ուստի «Ապառաժը» նույնպես իր էջերում լայն տեղ էր հատկացնում ՀՅԴ նախընտրական քարոզչության տարածմանը: Այդ նպատակի իրականացմանն էր նվիրված թերթի հունիսի 4-ի համարում լույս տեսած «Սահմանադիր ժողովը» խմբագրականը:

Նույն շրջանում տեղի ունեցած Արևելահայ (Ռուսահայերի) համագումարի նախապատրաստությունները, ինչպես նաև Անդրկովկասյան գյուղացիական համագումարի ընթացքն ու առանձին

նիստերը լայնորեն լուսաբանվել են «Ապառաժի» 1917 թ. հուլիս-օգոստոսյան համարներում:

1917 թ. հեղափոխական իրադարձությունների ծնունդը հանդիսացող ՀՅ Դաշնակցության տեղական կազմակերպությունների բազմաթիվ թերթերը, Երևանի «Զանգը», Բաքվի «Գործն» ու «Ցառաջը», Շուշիի «Ապառաժը», ինչպես նաև Վանի «Աշխատանքի» շարունակությունը դարձած Երևանի «Աշխատանքը» և այլն, իրենց տպագրությունը շարունակեցին նաև Հայաստանի առաջին Հանրապետության գոյության շրջանում: Սրանց մի մասը հետագայում փակվեց Բաքվում և ապա Շուշիում հայությանը բաժին ընկած ցեղասպանության ու հետագա հալածանքների արդյունքում: Մյուս մասը շարունակեց իր գոյությունը ընդհուպ մինչև Հայաստանի Հանրապետության անկումն ու ՀՅ Դաշնակցության հարկադիր տարագրությունը:

XX դարի սկզբներին Անդրկովկասի տարբեր քաղաքներում տպագրված դաշնակցական հրատարակությունները, լինելով հայ իրականության մեջ ամենաազդեցիկ ուժի տեսակետների ու գաղափարների արտահայտիչը, կարևոր դեր խաղացին ոչ միայն հայ մամուլի պատմության մեջ, այլև նպաստեցին հայ քաղաքական մտքի, գրականության ու հրապարակախոսության զարգացմանը: Նրանց էջերում տպագրվեցին հայ մտավորականության ականավոր ներկայացուցիչները՝ գրողներ, բանաստեղծներ, գրականագետներ, պատմաբաններ և այլն: Դաշնակցական մամուլի էջերից է, որ հետագայում վերջիններիս բազմահատորանոց երկերի ժողովածուներում գետեղվեցին Հ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի, Ն. Աղբալյանի ու Լեոյի և այլոց բանաստեղծությունները, պատմվածքները, հոդվածները և գիտական պրպտումների արդյունքները:

Չնայած ռուսական կայսրության մեջ XX դարի սկզբներին հայ մամուլի զարգացման համար ստեղծված ծանր պայմաններին, ՀՅ Դաշնակցությունն Անդրկովկասում կարողացավ հրատարակել մի քանի տասնյակ պաշտոնաթերթեր, որոնց մի մասը Արևելյան բյուրոյի, իսկ մյուս մասը տեղական կազմակերպությունների՝ կենտրոնական կոմիտեների և անգամ՝ աշակերտական միությունների հրատարակություններն էին, և դրանց միջոցով իր ձայնը հասու դարձրեց երկրամասի հայությանը:

«ՆՈՐ ՀՈՍԱՆՔ» (1913–1915)

«Նոր հոսանք» ամսագիրը լույս է տեսել Թիֆլիսում 1913–1915 թթ.: Ամսագրի պատասխանատու խմբագիրն անվանի գրականագետ Նիկոլ Աղբալյանն էր, իսկ հրատարակիչ-խմբագիրը՝ Արշակ Ղազարյանը: Գրական, գիտական, հասարակական-քաղաքական «Նոր հոսանք» ամսագրի հրատարակության իրավունքն ստացվել էր 1912 թ. դեկտեմբերի 31-ին: Ամսագիրը հրատարակության պատրաստելու, արևելահայ և արևմտահայ հեղինակներից բաղկացած խմբագրակազմը ձևավորելու ընթացքը տևել է մոտ երկու ամիս: Ամսագրի առաջին համարը լույս է ընծայվել 1913 թ. մարտի 6-ին (1913, թիվ 1, էջ 233, 234): Ինչպես նշվում էր խմբագրականում՝ «Նոր հոսանք»-ը փորձելու էր լցնել այն բացն արևելահայ հասարակական-մշակութային ուղղվածություն ունեցող պարբերական մամուլի աշխարհում, որն առաջացել էր «Մուրճ» ամսագրի դադարից հետո: «Ռուսահայ գրականութիւնը չունէր մի օրգան, որ ժամադրավայրը լինէր լուրջ պատրաստութիւն ունեցող գրական և հրապարակախոսական ուժերի: «Լումա» և «Արօրը», որ հրատարակւում էին «Մուրճ»-ից յետոյ, աւելի ժողովածուներ էին, քան ամսագրեր»,- գրում էր Ն. Աղբալյանը (նույն տեղում, էջ 3):

«Նոր հոսանքն» իր նպատակներին հասնելու համար ջանալու էր պահպանել քննադատական ոգին ու նյութերի ընտրության և ուսումնասիրության գիտահետազոտական մեթոդը: «Նոր հոսանք»-ն ելնում էր ծրագրային հետևյալ մեկնակետերից.

- *ղեկավարել հասարակական միտքը,*
- *վերլուծել հասարակական կյանքում նկատվող արատավոր երևույթներն իրենց պատճառահետևանքային կապերի հոլովույթում,*
- *արտահայտել ամսագրի շուրջ համախմբված մտավորականների տեսակետները հանրությանը մտահոգող և հասարակական հնչեղություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ,*
- *ստեղծել «տիպար ամսագիր մեզանում, որքան կը ներեն մեր մտավորական դասի պատրաստութիւնն ու կարողութիւնը» (նույն տեղում, էջ 5):*

Հայությունն ասելով՝ ամսագրի խմբագրակազմը հասկանում էր ազգային միություն, որը հիմնականում ապրում էր երեք պետությունների (Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան) սահմաններում: Թեև ամսագրում հայելու պես արտացոլվում էր հայության այդ երեք հատվածների, նաև՝ հայկական այլ գաղթօջախների առօրյան, կենցաղն ու գործունեությունը, բայց առաջնային տեղը գրավում էին ռուսական կյանքի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում ընթացող գործընթացներն ու տեղաշարժերը: Ամսագրի այս դիրքորոշումը պայմանավորված էր պարզ և օբյեկտիվ պատճառով. «Նոր հոսանքն» արևելահայ մամուլի օրգան էր և հենց այդ իրականության պահանջով ու թելադրանքով էր ծնունդ առել. «Ամսագրի կարիքը մեր գրականութեան մէջ վաղուց զգացուած է: Հայութեան դեմոկրատիք միտքն այսօր չունի մի բերան, որով պարբերաբար խօսել կարողանար մեր կեանքի և գրականութեան հիմնական խնդիրների մասին այն լրջութեամբ և հիմնաւորութեամբ, որոնց նրանք արժանի են... Ընդառաջ գնալով հասարակութեան մէջ վաղուց նկատւող պահանջին՝ որոշեցինք ինքներս ձեռնարկել այդ կարևոր գործին՝ ապաւինած համակիր մարդկանց աջակցութեան» (Նույն տեղում, էջ 235):

«Նոր հոսանքը» հրատարակության տարիներին հիմնականում կարողացել է իրականացնել իր կողմից իսկ առաջադրված առաջնահերթ խնդիրները: Այնուհանդերձ, խանգարող հանգամանքներն, ի թիվս որոնց՝ ֆինանսական անձուկ կացությունը, պարբերաբար ստիպել են ամսագրի աշխատակիցներին նախատեսվածից ուշ հանրությանը հրամցնել պարբերականի հերթական համարը: Դրա վկայությունն են ամսագրում խմբագրության կողմից մերթ ընդ մերթ տպագրված բացատրագրերը: Դրանք ընթերցողներին տեղեկացնում էին, որ թեև ուշացումով, բայց տարվա ընթացքում միացյալ համարների միջոցով նրանք կստանան կամ կգնեն «Նոր հոսանքի» 12 համար: Օրինակ՝ ամսագրի անդրանիկ համարի վերջին էջերում զետեղված բացատրության մեջ պարզաբանվում էր, թե ինչո՞ւ էր «Նոր հոսանքի» առաջին համարը լույս տեսել հայտարարված ժամկետից 10 օր ուշ. «Մենք խոստացել ենք մեր բաժանորդներին տարեկան 12 գիրք, իւրաքանչիւրը 160 մեծադիր էջով: Յունուարն ու փետրուարը կորցրած լինելով, մենք ընդամենը 10 ամիս ունէինք մեր

տպագրութեան տակ: Խմբագրութիւնս մտածեց հետեւյալ ձեւով կատարել իր խոստումը և դուրս գալ դժւարութիւնից: 1, 2, և 3 համարներում մենք որոշեցինք գրել յունուարի №-ի 160 էջը, որով այդ համարները փոխանակ 160 էջի, կը լինեն 200-ից աւելի: Նոյն կերպ կը վարւենք և աչնան համարների հետ, որով մեր բաժանորդները 10 համարով 12 գրքի նիւթ կստանան: Ծաւալի այս մեծացումը, բնական է, որ դժւարացրեց համարն իր ժամանակին լոյս ընծայելը» (Նոյն տեղում, էջ 233):

«Նոր հոսանքի» հիմնական բաժիններն էին «Գեղարուեստական», «Գրական-քննական», «Գրախօսութիւն», «Դէմքեր», «Տեղագրական», «Պատմական-փիլիսոփայական», «Հասարակագիտական», «Գիտական», «Գիտական քրոնիկոն», «Պատմական նիւթեր», «Հայոց հարց», «Հայ կեանք», «Տաճկահայ կեանք», «Պարսկահայ կեանք», «Ռուս կեանք» և այլն:

«Նոր հոսանքն» ունեցել է նաև 16 էջանոց հավելված: Օրինակ 1914 թ. թիվ 4-ը և 1914 թ. թիվ 5-ն ունեցել են հավելված: Տվյալների բացակայությունը թույլ չի տալիս պատկերացում կազմել դրանցում ընդգրկված նյութերի և ամսագրի հավելվածի բուն նպատակների և ուղղվածության մասին:

«Նոր հոսանքի» խմբագրությունն ամսագրի հավելվածից բացի, հատվածաբար տպագրված հասարակագիտական ուսումնասիրությունները, վիպակներն ու պատմվածքները լույս է ընծայել ««Նոր հոսանքի» գրադարան» մատենաշարի ներքո: Այդ շարքի առաջին գրքույկը Լ. Շանթի «Կինը» նովելն էր՝ հրատարակված 1913 թ. ապրիլի վերջին:

«Նոր հոսանք» ամսագրի խմբագրակազմում ընդգրկված էին Ա. Ղազարյանը, Ա. Ջամալյանը, Ե. Ֆրանկյանը, Դ. Անանունը, Ա.-Դօ-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Լ. Շանթը: Ամսագրի էջերում կայուն խորագրերի ներքո հոդվածաշարերով հանդես են եկել Ա. Տերտերյանը, Հ. Սուրխաթյանը, Յ. Խանզադյանը, Ա. Վանցյանը, Վ. Խորենին, Ռ. Տեր-Մինասյանը (Ռուբեն):

«Նոր հոսանքի» էջերում ամփոփված են ժամանակի արևելահայ և արևմտահայ անվանի մտավորականների հոդվածներն ու գրողների արձակ և չափածո ստեղծագործությունները: Ամսագրում

տպագրվել են Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Մ. Մանվելյանը, Ա. Տիգրանյանը և այլք:

«Նոր հոսանքը» տպագրել է Ջորջ Բայրոնի, Օմար Խայամի, Ջեկ Լոնդոնի և այլոց ստեղծագործությունները՝ Հովսեփ Միրզոյանի, Հ. Բ.-ի և Սարգիս Երկանյանի թարգմանությամբ:

«Նոր հոսանքն» իրավամբ կարելի է համարել հայ և համաշխարհային գրականության լավագույն երկերն ընթերցող հասարակությանը նորովի, մինչ այդ չկիրառված սկզբունքներով և չափանիշներով ներկայացնող ամսագիր արևելահայ պարբերական մամուլի աշխարհում: Սա մի ամսագիր էր, որտեղ ժամանակի ոգուն համապատասխանող գրականագիտական ուսումնասիրություններով և գրաքննադատական վերլուծականներով գրասեր հանրությանը փորձում էին ուղղորդել դեպի ազգային, բայց միաժամանակ համամարդկային գրական արժեքներ: Հարուստ և բազմազան է «Նոր հոսանքի» «Գրախոսություն» բաժինը, որտեղ մշտապես արձագանքում էին թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ գրական նոր ստեղծագործություններին: Այստեղ տպագրված են գիտական մեծ արժեք ունեցող ուսումնասիրություններ Ն. Աղբալյանի, Ա. Տերտերյանի, Հ. Սուրխաթյանի կողմից: Բաժնի պատասխանատուն Ն. Աղբալյանն էր իր բեղուն գրչով: «Նոր հոսանքում» տպագրված նրա գրախոսություններն ու գրաքննադատական հոդվածները հետագայում լույս են տեսել առանձին գրքերով: Իր առաջին գրախոսականներից մեկում, օրինակ՝ Ն. Աղբալյանն արձանագրում էր վերջին տասնամյակում գրաքննադատական հոդվածների նկատմամբ եղած հետաքրքրության աճը և դրանց նախապատվություն տալու միտումը: Նա դա պատճառաբանում էր հետևյալ հանգամանքներով. «Սա մի կողմից նշան է, որ հայ գրականութիւնն արդէն բաւական բան ունի գնահատելու, միւս կողմից սա նշանակում է, որ հրապարակ է իջել մի նոր սերունդ, տարբեր ճաշակի և գրական ըմբռնումների տէր, տարբեր հայեացք ունեցող աշխարհի վրայ» (1913, թիվ 3, էջ 620): Ն.Աղբալյանի կարծիքով՝ այդ սերունդը, գնահատելով անցյալի գրական գործիչներին, անուղղակիորեն կրելու է վերջինների ազդեցությունը, ինչի հետևանքով գտնելու է ազգային քաղաքակրթության շավիղը և ինքն էլ ընթանալու է այդ ճանապարհով: «Քննադատութիւնն այսպիսով պէտք է կցէ նոր սերունդի աշխա-

տանքը հնին և գանէ այն շղթան, որ օղակներն են կազմում հները, և պիտի կազմեն նորերը»,- այս եզրակացությանն էր հանգում Ն. Աղբալյանը (նույն տեղում, էջ 621): Նա համոզված էր, որ ամենախիստ և միակողմանի քննադատությունն անգամ ունենալու էր իր բարերար արդյունքը. գրական նոր սերունդը լծվելու էր «հայի պատմութեան անիւին: Գրական այս շարժումը մենք համարում ենք վերածնութեան սկիզբն և բեկման կէտը հայ մտքի և զգացումի պատմութեան մէջ» (նույն տեղում):

«Նոր հոսանքը», գրական-մշակութային կյանքի վերածնության հարցադրումները բարձրացնելուն զուգահեռ, ուշադրության կենտրոնում էր պահում Հայկական հարցը և արևմտահայ իրականության առաջնահերթ լուծման կարիք ունեցող խնդիրները: Այս թեմային արևելահայ պարբերականը մոտեցել է սրտացավորեն և ամենայն պատասխանատվությամբ: Հիշյալ հիմնահարցերի վերաբերյալ հրապարակումները գրվել են հիմնվելով լուրջ ուսումնասիրությունների ու տեղում ճշգրտված փաստերի վրա: Տպագրվել են նաև ամսագրի արևմտահայ աշխատակիցների և թղթակիցների կողմից ուղարկված հոդվածներ և վերլուծականներ: Հիշատակության է արժանի ամսագրի 1913–1914 թթ. գրեթե բոլոր համարների «Հայկական հարց» բաժնում տպագրված «Յուշեր Տաճկահայաստանի ճանապարհորդութիւնից» վերնագրով հոդվածաշարը (հեղինակ՝ Ա.-Դօ): Հոդվածագիրը 1908 թ. Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջումից մեկ տարի անց 1909 թ. ամռանն արևմտահայերի իրական վիճակին ծանոթանալու և ձեռք բերած վիճակագրական ու այլ կարգի հետազոտությունների արդյունքների մասին արևելահայ հասարակությանն իրազեկելու նպատակով եղել էր Թուրքիայի հայաբնակ 3 վիլայեթներում (Վան, Բիթլիս, Էրզրում): Նա շրջել էր գյուղեգյուղ և տեղի հոգևորականների, գյուղապետերի հետ ունեցած զրույցների ընթացքում գրի էր առել մարդահամարի, հայ գյուղացիների ունեցվածքի, ապրուստի միջոցների, նրանց նկատմամբ կիրառվող անարդարությունների մասին տվյալներ: Մեծ է այդ կարգի օբյեկտիվ տեղեկատվության պատմագիտական արժեքը, այդ մեկ տարվա ընթացքում (1908–1909 թթ.) «սահմանադրական» հռչակված Թուրքիայում հայ ժողովրդի ապրելակերպի, իրավունքների, կյանքի և գույքի ապահովության վերաբերյալ պատկերացում կազմելու առումով: Օրինակ՝ Ա.-Դօ-ն հայտ-

նում էր, որ 17-րդ դարում Բայազետ քաղաքում ապրում էին 2000 տուն հայեր, 1822 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ 1735 տուն, իսկ 1909 թ.՝ 350 տուն (1913, թիվ 2, էջ 356): 1909 թ. Բայազետի գավառում կային 110 գյուղեր, որոնցից հայաբնակ էին 3-ը՝ Արծափը, Քոռունը և Մուսունը(նույն տեղում): Հայերի թվաքանակի նվազեցումն իրենց հայրենիքում Ա.-ԴՕ-ն պայմանավորում էր թուրքական պետության հատուկ մշակած հայաջինջ ծրագրով, որն իր մեջ ներառում էր ալան-թալան, ջարդ, բռնի արտագաղթ, իրավազուրկ վիճակ, հայերի ունեզրկմանը նպաստող հարկային և հողային նպատակադրված քաղաքականություն: Օրինակ՝ հոդվածաշարում այդ ամենի մասին պատմում են Հայկական Ուչքիլիսե գյուղի բնակիչները: Գյուղը գտնվում էր Ուչքիլիսե (նախկինում՝ Սուրբ Հովհաննես) վանքի մոտ, Դիադինից հյուսիս-արևմուտք: Ուչքիլիսեում ապրում էին 27 տուն հայեր: Ա.-ԴՕ-յի հետ զրույցի ժամանակ գյուղացիներից մեկն այսպես էր ներկայացնում իրենց դրությունը. «Վերջին 15 տարիների ընթացքում մենք զուլումի տարիներ ապրեցինք, չտեսանք մէկ ուրախ օր, հարուած հարուածի յետևից թափւեց մեր գլխին. շատերը չդիմացան ու կտոր-կտոր 15 ընտանիքից աւելի գաղթեցին Ռուսաստան, իսկ նրանց տեղը Մօկսէն եկան բնակւեցին (1913, թիվ 4–5, էջ 793)»:

Մեկ այլ՝ Միրզաջան գյուղի համար Ա.-ԴՕ-ն նշում էր, որ այն նախկինում եղել էր զուտ հայաբնակ գյուղ, իսկ արդեն 1909 թ. այնտեղ ապրում էին 7 տուն հայեր, 30 տուն քրդեր ու եզդիներ: Ընդ որում, հայերից 4 տուն և քրդերից 6 տուն մարաբաներ էին, ինչը հավասարազոր էր ստրուկի կարգավիճակին(1913, թիվ 6, էջ 1040):

Արճեշ կամ պատմական Բաջբերունիք գավառի հայաբնակ Ականց քաղաքում 1909 թ. հաշվվում էր 1000 տուն իրենց բնակիչներով, որոնցից 250 տունը հայեր էին, մնացածը՝ թուրքեր և քրդեր: Առևտուրն ու արհեստները գտնվում էին գլխավորապես հայերի ձեռքում: Գործում էին արական (տղայոց) և իգական (օրիորդաց) դպրոցներ և մեկ գրադարան-ընթերցարան: Ա.-ԴՕ-յի կողմից բերվում են Արճեշի հայաբնակ գյուղերում 1896 թ. կոտորածից հետո հայ բնակչության ժողովրդագրության վերաբերյալ վիճակագրական տվյալներ (1914, թիվ 1, էջ 80–81): Ականցի բնակիչները փաստում էին, որ թուրքական քաղաքականությունը 1908 թ. հեղաշրջումից հետո ոչնչով չէր փոխվել: Այսպես, բնակության հա-

մար Ականց տեղափոխված Գանձակ գյուղի բնակիչ, նախկին մեծահարուստ Առաքել աղան Ա.-ԴՕ-յին պատմում է, որ 1896 թ. կոտորածի ժամանակ իր ունեցվածքը (ոսկեղրամներ, ոսկուց և արծաթից պատրաստված զարդեր) ժամանակավորապես պահ էր տվել իրենց տան բարեկամ համարվող քուրդ Ալիբեկին, իսկ ինքն ընտանիքի մյուս անդամների հետ ապաստանել էր Կովկասում: Առաքելն երկու ամիս առաջ էր վերադարձել հայրենիք և պարզել էր, որ Ալիբեկը ոչ միայն այդ հարստությունն էր յուրացրել, այլև իր հողերը. «Ինչ Սահմանադրութիւն, ինչ արդարութիւն. ո՞վ մեզի հող կը վերադարձնի, ո՞ր պաշտօնեան քրդից հողը կը խլի, նորից հային կը տայ»,- արցասրալիորեն բողոքում էր Առաքելը (նույն տեղում, էջ 82):

Հոդվածաշարում փաստերն ընդհանրացնելով՝ Ա.-ԴՕ-ն գալիս էր այն եզրակացության, որ իրավիճակը նմանատիպ էր ոչ միայն իր ուսումնասիրած հայարնակ 3 նահանգներում, այլև՝ ողջ Արևմտյան Հայաստանում: Ա.-ԴՕ-յի հետ համակարծիք էր նաև «Նոր հոսանքի» խմբագրակազմը: Դա են հավաստում ամսագրում 1913–1915 թթ. «Հայոց հարց» և «Տաճկահայ կեանք» բաժիններում զետեղված գրեթե բոլոր նյութերը: Դրանց շարքում հիշատակենք «Պատրիարքի յուշագիրը» վերլուծականը»: Այդ հոդվածում նշվում էր, որ Սահմանադրության հռչակումից հետո, «մանաւանդ վերջին երկու տարին», Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Բ. Դռանն ուղարկած բողոքագիր-դիմումներն անսովոր չափերի էին հասել: Հայերը մատնանշում էին Թուրքիայում իրենց հանդեպ իրագործված ապօրինություններ, հասցնում էին հալածանքի, բռնագրավման, բռնի իսլամացման և առևանդությունների: Բայց թուրքական կառավարությունը մնում էր անտարբեր այդ դիմումների նկատմամբ՝ շարունակելով իր քաղաքականությունը, այն է՝ «անտանելի դարձնել հայոց կացութիւնը և ստիպել նրանց գաղթելու» (1913, թիվ 2, էջ 465): «Նոր հոսանքը» տպագրել է մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշային Կ. Պոլսի Հայ համայնքի Խառը ժողովի կողմից ուղարկված հուշագիրը: Այնտեղ մատնանշվում էին «գնալով աւելի արագ ընթացք առացած» հակահայ անօրինությունների բազմաթիվ վկայություններ, որոնց ենթարկվել էր արևմտահայությունը 1908–1913 թթ. ընթացքում (նույն տեղում): Հուշագրում այն մտահոգությունն էր հայտնվում, որ մահմեդական բնակչության շրջա-

նում այն կարծիքն էր ձևավորվել, թե օսմանյան մասնատվող պետությունն եվրոպական միջամտություններից և ոտնձգություններից հնարավոր էր պահպանել մեկ ճանապարհով՝ հայ տարրը ոչնչացնելով. «Ատանայի, Վանի, Տիգրանակերտի և Բիթլիսի նահանգներում երևացին անհանգիստ անող նշաններ, որ նախորդում են մի կոտորածի, մի աղէտի, որ իր սարսափներով կարող է մոռացնել տալ անցեալի ամենից ահաւոր ողբերգութիւնները» (Նույն տեղում, էջ 466):

«Հայոց հարց» բաժնում մշտապես անդրադառնում էին արևմտահայերին մտահոգող քաղաքական խնդիրներին և մասնավորապես՝ Հայկական հարցին: «Նոր հոսանքը» գտնում էր, որ 2 կարևոր հարցեր էին զբաղեցնում հայերին և օտարներին. հայերի թվաքանակը Թուրքիայում և նրանց մտավոր ներուժը: Հայերն ու նրանց կողմնակիցներն աշխատում էին ցույց տալ, որ «հայութիւնը մի թւական պատկառելի մեծութիւն է Հայաստանում, ունի ինքնուրոյն կուլտուրական կեանքով ապրելու մեծ տենչանք և ընդունակութիւն», հետևաբար նրա կացությունն անհրաժեշտ է բարելավել՝ առանց «Հայաստանի բարենորոգութեանց խնդիրը կապելու համայն Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան հետ» (1913, թիվ 3, էջ 621): Թուրքիան և Հայկական հարցի հակառակորդներն, ընդհակառակը, ջանում էին համոզել չահագրգիռ կողմերին, որ խնդրո առարկա նահանգներում հայերն աննշան թվաքանակ ունեին, և այդ պատճառով ավելորդ էր միայն հայաբնակ նահանգների բարենորոգության հարցը բարձրացնել: Նրանք պնդում էին, որ հարկավոր էր «բարենորոգել ամբողջ Թիւրքիան, դրա հետ կը բարւոքւի և հայոց դրութիւնը» (Նույն տեղում):

«Նոր հոսանքն» իր վերլուծությունները կատարելիս մշտապես հավատարիմ էր մնում նախնական տեսակետին՝ գրելով. «Մենք չենք անգիտանում, անշուշտ, միջազգային քաղաքական հանգամանքների նշանակութիւնը Հայոց հարցի այս կամ այն լուծման համար» (Նույն տեղում, էջ 624): Միևնույն ժամանակ, ամսագրի խմբագրակազմը համոզված էր, որ «մեծ պետութիւններից իւրաքանչիւրն աշխատում է հաստատ մնալ իր գրաված դիրքի վրայ և մեծապոյն չափով օգտուել ստեղծուած խառն դրութիւնից» (1913, թիվ 3, էջ 658): «Նոր հոսանքը» նաև չէր հավատում, որ ընդհանուր բարեփոխումները, եթե անգամ դրանք անցկացվեին, լինելու էին հօ-

գուտ հայերի: Այս տեսանկյունից բնորոշ է Ռուբենի՝ «Տաճկական ռեֆորմները» վերնագրով հոդվածաշարը (1914, թիվ 1, էջ 149–157, 1914, թիվ 2, էջ 312–317, 1914, թիվ 4, էջ 656–662, 1914, թիվ 6, էջ 1007–1013): Ռուբենն այն տեսակետն էր զարգացնում, որ Թուրքիան բարեփոխումներ անցկացնելու խոստումներ էր տվել ամեն անգամ, երբ «վտանգ էր սպառնացել Տաճկաստանի գոյութեանը, երբ «հիւանդ մարդու» վրայ անդամահատութիւն կատարելու հարց է բարձրացել եւրոպական մեծ պետութիւնների մէջ» (1914, թիվ 1, էջ 149): Թուրքիայի պատմությանը բնորոշ էր այն, որ ցանկացած ռեֆորմի հաջորդում էր կոտորածը (1914, թիվ 2, էջ 316): Նույնն եղավ նաև հայկական բարենորոգումների խնդրում, միայն թե «Նոր հոսանք»-ն անկարող էր պատկերացնել, որ այս անգամ արևմտահայերի ջարդերը վերածվելու էին ցեղասպանության, որին հաջորդելու էին հայրենազրկումն ու հայրենիքի կորուստը:

Հայաստանի գրադարաններում պահպանվել են «Նոր հոսանքի» ոչ բոլոր համարները, մասնավորապես՝ ամսագրի 1915 թ. համարներից չնչին մասն է պահպանվել: Մեզանում դեռևս գրեթե չկան ամսագրի գործունեությանն ու խաղացած դերին նվիրված գիտական ուսումնասիրություններ, հոդվածներ: Այս օբյեկտիվ պատճառներով նույնիսկ այսօր դժվար է հասկանալ, թե ինչպիսի՞ն էին «Նոր հոսանքի» մոտեցումները թեկուզ հրատարակության վերջին շրջանում հայ ժողովրդի ճակատագրի և Հայկական հարցի զարգացումների հետ կապված, թեև ամսագրի խմբագրակազմի անդամների հետագա տարիների անհատական կամ կուսակցական տեսակետներով կարելի է ընդհանուր դատողություններ անել: Կարելի է նաև ենթադրել, որ ինչպես արևմտահայ ու արևելահայ շատ պարբերականների, այնպես էլ «Նոր հոսանքի» հրատարակությունը դադարել է Մեծ եղեռնի և դրան հաջորդած պատմաքաղաքական հանգամանքների պատճառով: Մեր ձեռքի տակ եղած «Նոր հոսանքի» համարները, սակայն, թույլ են տալիս պնդել, որ ամսագիրը 1913–1915 թթ. պահպանել ու զարգացրել է հայ մամուլի ավանդույթները: «Նոր հոսանքը» թեև եղել է գրական, գիտական, հասարակական-քաղաքական ուղղվածություն ունեցող ամսագիր, բայց այս պարբերականի գրեթե բոլոր հետաքրքրություններն ու վերլուծություններն առանցքվել են հիմնական մեկնակետից՝ Հայկական

հարցից և դրանից ճյուղավորված կամ սկզբնավորված տարաբնույթ խնդիրներից:

Ամսագիրն անդրադարձել է արևելահայ ու արևմտահայ իրականությունների մեջ եղած և այն օրերի համար սոցիալ-տնտեսական էական հիմնահարցերին: Սոցիալ-տնտեսական վերլուծությունների հիմքում ընկած էր խմբագրության դեմոկրատական կողմնորոշումը, նաև՝ այն, որ ցանկացած հարց ամսագիրը քննարկում էր՝ ելնելով հայ ժողովրդի սոցիալական դրությունից և տնտեսական վիճակից: Օրինակ՝ նավթարդյունաբերող բանվորներին կամ գյուղացիությանը մտահոգող խնդիրներն ամսագրում վերհանվում էին՝ տեղայնացվելով և ազգային միջավայրն ու մտածողությունը հաշվի առնելով: Շարքի պատասխանատուն Դ. Անանունն էր: Նրա հոդվածներն աչքի էին ընկնում նյութի բազմակողմանի վերլուծությամբ և թեմային հեղինակի քաջատեղյակությամբ: Դ. Անանունը մշտապես օգտվում էր սոցիոլոգիական և վիճակագրական հարցումների տվյալներից: Նա հոդվածները կառուցում էր համեմատական վերլուծության մեթոդի սկզբունքներով: Նրա կարծիքով՝ հայ հասարակական մտքի կամ ազգային կուսակցությունների ներկայացուցիչները բավարար չափով ծանոթ չէին ժողովրդի սոցիալական կարիքներին և լուծման կարոտ հիմնահարցերին: Քանի որ «հայ բանւորութեան մի խոշորագոյն հատւածը զբաղւած է նաւթարդիւնաբերութեան մէջ, իսկ հայ բանւորը ժողովրդական առաջաւոր տարրն է», ուստի անհրաժեշտ էր տեղյակ լինել հայ բանվորի խնդիրների մասին (1913, թիվ 4–5, էջ 842): Ծանոթանալով բանվորների նկարագրին՝ կարելի էր ճանաչել նաև հայ գյուղացիությանը, որովհետև «մեր բանւորութիւնը գերազանցապէս գիւղացիական ծագում ունի» (նույն տեղում): Ընդ որում, ինչպես պարզվում էր հեղինակի ներկայացրած վիճակագրական աղյուսակից, հայն Անդրկովկասի բոլոր անկյուններից (հիմնականում՝ Գանձակի նահանգից), անգամ Պարսկաստանից և Թուրքիայից, աշխատանք էր փնտրում նավթարդյունաբերության մեջ, ավելի կոնկրետ՝ Բաքու քաղաքում: «Աւելի շատ բանւորութիւն ելնում էր այն գաւառներից, որտեղ հայ տարրն աննպաստ հողային պայմանների մէջ էր գտնւում»,- գրում էր Դ. Անանունը «Նավթարդիւնաբերական հայ

բանուորի նկարագրի մասին» վերլուծական հոդվածում (նույն տեղում, էջ 849):

Ռուսաստանի վարած հողային քաղաքականությունը ևս «Նոր հոսանքում» արժանացել է սուր և օբյեկտիվ քննադատության: Օրինակ՝ «Կովկասը իբրև գաղթավայր» հոդվածում Դ. Անանունը նշում էր, որ Ռուսաստանի 3-րդ Դումայի բոլոր նստաշրջաններում բուռն քննարկումների և վիճաբանությունների առարկա էր դարձել հողային կամ «գաղութային» քաղաքականությունը: Մասնավորապես Դումայում Անդրկովկասը ներկայացնող պատգամավորները փորձել էին «հաստատել այն իրողութիւնը, որ մեր երկրի գիւղացիութիւնը հողի խիստ կարիք է զգում, և եղած ազատ հողերը պիտի տրուին տեղական բնակչութեանը: Նրանք շեշտել են այն հանգամանքը, որ գաղութային քաղաքականութիւնը իր ներկայ կերպարանքով հրահրում է ազգային թշնամութիւն» (1914, թիվ 1, էջ 107): Բերելով կոնկրետ օրինակներ և խոսուն փաստեր ու դրանց հիման վրա ամփոփելով իր վերլուծությունը՝ Դ. Անանունը դեմ է արտահայտվում առկա պետական քաղաքականությանը. «Մեր վերաբերմունքը ժխտական է դէպի այդ քաղաքականութիւնը: Ժխտական է այն պատճառով, որ Կովկասի արդիւնաբերութիւնը չի կարողանում իր մէջ ամփոփել մեր երկրի աւելցուկ ձեռքերը, ուստի և հողը դառնում է կարևորագոյն պահանջ, այն ինչ սակաւահողութիւնն ու հողազրկութիւնը տեղացիներին նետում է օտար հորիզոններ: Գաղութային ներկայ քաղաքականութիւնը չի բղխում առողջ պետականութիւնից» (նույն տեղում, էջ 114): Հանձինս Դ. Անանունի «Նոր հոսանքի» խմբագրությունն արմատական փոփոխություն էր պահանջում այդ հարցի լուծման համար: Ամսագիրն հանդես էր գալիս կոնկրետ առաջարկներով. «Պետական հողերը օրէնքով պիտի ճանաչուեն գիւղացիների ազատ սեփականութիւն, և դրա դիմաց նրանք ոչինչ չպիտի վճարեն գանձարանին: Հողակարգաւորման մէջ անմիջական մասնակցութիւն պիտի ունենան նաև գիւղացիները: Համայնքին է վերապահւում տնօրինելու իր ներքին հողակարգաւորումը» (1913, թիվ 7–8, էջ 1307): Այս և այլ առաջարկները ներկայացված են Դ. Անանունի «Կովկասի գյուղացիության վերաբերյալ նոր օրինագիծը» հոդվածում (նույն տեղում, էջ 1297–1308): Այդտեղ պարզորոշ արտահայտված է նաև «Նոր հոսանք»-ի մոտե-

ցումը: Ամսագիրը հանցավոր էր համարում այն, որ հայ դեմոկրատական միտքը խուսափում էր քննադատել Ռուսաստանի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը և չէր փորձում միջամտել այդ ոլորտի խնդիրների լուծմանը. «Հայ քաղաքական դեմոկրատական միտքը թերացաւ իր կոչման մէջ» (նույն տեղում, էջ 1297): «Նոր հոսանքն» առաջարկում էր գործել և չնահանջել հայ գյուղացիության շահերի պաշտպանության ուղեգծից:

Ամսագիրը կրթադաստիարակչական հիմնահարցերը դիտարկում էր որպես հայապահպանության հզոր լծակներ: Մասնավորապես արևմտահայ դպրոցներում տիրող իրավիճակին և մտահոգող խնդիրներին ընթերցող հասարակայնությանը տեղեկացնելու նպատակով «Տաճկահայ կեանք» բաժնում «Նոր հոսանքը» պարբերաբար ներկայացնում էր այդ դպրոցները բնութագրող վիճակագրական տվյալներ: Համաձայն ամսագրի տրամադրած տվյալների, ասենք, Արաբկիրի 14 գյուղերից յուրաքանչյուրում կար մեկական վարժարան: Աշակերտների նվազագույն թիվը 20 էր, առավելագույնը՝ 100: Յուրաքանչյուր վարժարանում դասավանդում էր մեկ ուսուցիչ, բացի Անջրդի գյուղի վարժարանից, որն ուներ 3 ուսուցիչ: Անջրդիի վարժարանների վիճակն, ի տարբերութիւն միւս 13 գյուղերի վարժարանի, բավարար էր: Նշված վարժարանների անմխիթար վիճակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դրանք մատակարարվում էին առավելապես պատահական եկամուտների վրա հիմնված «ամենանիհար պիւտժէներով: Շէնքերը անյարմար և հակառողջապահիկ, ուսուցման մեթոդը գրեթէ նախնական և հակամանկավարժական, ուսուցիչները կրթութեան և դաստիարակութեան հասկացողութեան տեսակէտով ոչ պատրաստուածներ,- ահա ամփոփ պատկերը մեր գիւղական վարժարաններուն»,- այսպես է իր վերլուծությունն ավարտում ամսագիրը (1913, թիվ 9–10, էջ 1533):

«Հայ կեանք» բաժնի հրապարակումների միջոցով «Նոր հոսանքն» անդրադառնում էր հիմնականում դպրոցաշինության խնդիրներին՝ զուգահեռներ անցկացնելով Ռուսաստանի դպրոցների զարգացման ծրագրերի միջև: Ամսագրի այս միտումը պայմանավորված էր խմբագրության կարծիքով՝ «Հայ դպրոցը իր ճակատագրով, լավ և վատ կողմերով մեծապէս կապւած է ռուս դպրոցի հետ, ուստի մենք դիմում ենք ռուս ժողովրդական դպրոցի անցեալ և

ներկայ վիճակի վերլուծութեամբ (նոյն տեղում, էջ 1369): «Նոր Հոսանքը», սակայն, հաշվի առնելով ազգային դպրոցի առանձնահատկութիւնները և այն օրերի վարչական բաժանման գործող համակարգը, գտնում էր, որ եթե զեմստվոները Ռուսաստանում նպաստել են ժողովրդական դպրոցի զարգացմանը, ապա հայ ժողովրդի համար այդ կարգի ուսուցումը վնասակար էր լինելու: Ընդհակառակը, դրանք մի կողմից կազմալուծելու էին հայկական դպրոցները, մյուս կողմից ծանրաբեռնելու էին ժողովրդական տուրքերը: «Զեմստվոներն այդ տեսակէտից օգտակար կարող են լինել այն ցեղերի համար, որոնք դեռ չունեն ազգային դպրոցներ և ընդհանրապէս ցեղային կուլտուրան նրանց համար մահու ու կենաց խնդիր չէ» (նոյն տեղում, էջ 444): Ազգային դպրոցը «Նոր Հոսանքը» համարում էր հայ ժողովրդի ինքնութեան պահպանման «հիմունքների հիմունքը» (1913, թիվ 1, էջ 194), որի «զարգացումից ու բարգաւաճումից էր կախուած ցեղի ապագան» (նոյն տեղում): Նրա էջերում հայ մշակույթի և հատկապես դպրոցների առաջընթացի գործում անվերապահօրէն անհրաժեշտութիւն էր համարում դպրոցական ֆոնդը (1913, թիվ 1, էջ 197):

Ամսագրի ուշադրությունից չէին վրիպում գիտական կյանքի նորությունները ու գյուտերը, իսկ փիլիսոփայական և հասարակագիտական ուսմունքներն ու նորագույն մոտեցումները «Նոր Հոսանքին» հետաքրքրում էին այնքանով, որքանով դրանք կծառայէին հայության ինքնագիտակցության բարձրացմանը և աշխարհընկալման զարգացմանը: «Կեանք և փիլիսոփայութիւն» բաժնի պատասխանատուն Ե. Ֆրանկյանն էր: Առավել ուշագրավ են նրա «Վերջին փիլիսոփայական ուղղութիւնը. պրագմատիզմ» (նույն տեղում, էջ 159–161), «Հունական փիլիսոփայութիւն», «Քննադատական փիլիսոփայութիւն» (1913–1914 թթ. համարներում) վերլուծական հոդվածաշարերը: Հետաքրքիր են նաև Ռ. Գաբրիելյանի և Վ. Սարենիի նույն բնույթի հոդվածաշարերը:

Հայ գաղթօջախների, հատկապես ռուսահայ, պարսկահայ, վրացահայ համայնքների խնդիրների վերաբերյալ գրված հոդվածներն ու վերլուծականներն ամսագրում հետապնդում էին հայապահպանության և գաղթական հայերին հայրենիք վերադարձնելու նպատակներ: Իսկ տարածաշրջանի ու եվրոպական զարգացած երկրների

սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին նվիրված տեսություններ միջոցով «Նոր հոսանքը» փորձում էր դարասկզբի աշխարհաքաղաքական բարդ և վտանգավոր հանգամանքներում հայտնված հայ ժողովրդին հուշել կամ առաջարկել խնդիրների լուծման այնպիսի տարբերակներ, որոնք կհամապատասխանեին դարաշրջանի քաղաքական իրականությանը:

ՀՅԴ Կ. ՊՈԼՍԻ ՄԱՄՈՒԼԸ (1909–1924)

ՀՅԴ-ն մշտապես գիտակցել է ազատագրական պայքարում քաղաքականորեն ազդեցիկ պարբերական մամուլի կարևորությունը: Արդեն 1891 թ. հիմնադրվել է կուսակցության ամսաթերթ «Դրոշակը»: Նույն տասնամյակում Ֆրեզնոյում տպագրվել է «Ասպարէզ» թերթը, Վառնայում՝ «Նարժումը», Բոստոնում՝ «Հայրենիքը»: Դաշնակցական մամուլը ծաղկում է ապրել 1900-ական թվականներին: Իրար են հաջորդել մեկ տասնյակից ավելի թերթեր, ամսագրեր, ընդ որում՝ հաճախ միևնույն լրագիրը տպագրվել է տարբեր անուններով, քանի որ իշխանությունները արգելել են դրանցից շատերի հրապարակումը[1]: Կ. Պոլսի ՀՅԴ պաշտոնական և ոչ պաշտոնական պարբերական մամուլի օրգանները 1909–1920 թթ. երկու փուլով են հրատարակվել. 1909–1915 թթ. և 1918–1920 թթ.: 1909–1915 թթ. հրատարակվել են՝ «Ազատամարտ» օրաթերթը (1909–1915 թթ.), «Ուսանող» (1909–1914 թթ.) և «Երկունք» (1909–1914 թթ.) ամսաթերթերը, «Շանթ» (1911–1915 թթ.) հանդեսը, իսկ 1918–1920 թթ.՝ «Շանթ» հանդեսը, «Ճակատամարտ» օրաթերթը, «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա և «Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հավելվածները, «Հայ սկաուտ» հանդեսը: Այդ տարիներին ՀՅԴ-ն Կ. Պոլսում ունեցել է նաև ոչ պաշտոնական պարբերական մամուլի օրգաններ: Դրանք հրատարակվել են ՀՅԴ անդամների ու համակիրների ջանքերով՝ հիմնականում ունենալով գրական-հասարակագիտական ուղղվածություն: Այդպիսի պարբերականներից էին «Ազ-

---

[1] Վարանդյան Մ., ՀՅԴ պատմություն, Ե., 1992, էջ 389, 396–397, Յուշամատեան ՀՅԴ, Բոստոն, 1950, էջ 562–579:

դակ» շաբաթաթերթը (1908–1909 թթ.), «Նաւասարդ» տարեգիրքը (1914 թ.), «Ամէնուն տարեցոյցը» (1909–1914 թթ.), «Մեհեան» հանդէսը (1914 թ.): Այս պարբերականների հրատարակության ընդհատման պատճառները Մեծ եղեռնը և Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում կատարված իրադարձություններն էին: Հրատարակության առաջին փուլում ՀՅԴ Կ.Պոլսի պարբերականների առաջնահերթ նպատակները կուսակցության ծրագիրն ու գաղափարները, հասարակական-քաղաքական տարաբնույթ հիմնահարցերի նկատմամբ ունեցած տեսակետները և մոտեցումներն արևմտահայերին ներկայացնելն էին՝ օգտվելով 1908 թ. հուլիսի 10-ին Թուրքիայում կատարված հեղաշրջման ընձեռած խոսքի, մամուլի «ազատություններից»: Երկրորդ փուլում դրանց ուշադրության կենտրոնում կուսակցական և քաղաքական խնդիրները չէին, այլ՝ հայապահպանությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման համար սկսված գործընթացը, Հայաստանի առաջին Հանրապետության հետ կապերի հաստատումը և հնարավորության սահմաններում հայրենիքին օժանդակելը: Հատկանշական է նաև այն, որ 1909–1915 թթ. ՀՅԴ-ն համագործակցել է «Միություն և առաջադիմություն» կամ «Իթթիհատ վե թերաքքը» կուսակցության հետ՝ հաշվի չառնելով նրա վարած հայակործան քաղաքականությունը, թեև դրա համար, կարծում ենք, ՀՅԴ գործելակերպը միանշանակ քննադատելը ճիշտ չի լինի: Մեծ եղեռնին ընդհուպ նախորդող ժամանակահատվածում ՀՅԴ դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ փոխվել է: Բնականաբար, այս ամենն արտացոլվել է 1909–1915 թթ. և 1918–1924 թթ. Կ. Պոլսում ՀՅԴ կողմից հրատարակված պարբերականներում:

«Ազատամարտը» ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթն էր: Օրաթերթի արտոնատերը, պատասխանատու տնօրենը և խմբագիրը արևմտահայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, արձակագիր Ռուբեն Զարդարյանն էր: Այդ տարիներին ՀՅԴ Արևմտյան բյուրոն, արդարև, խոհեմաբար է վարվել «Ազատամարտի» խմբագիր ընտրելով Ռ. Զարդարյանին, քանզի հիմնականում նրա շնորհիվ այն չի վերածվել նեղ կուսակցական թերթի: «Թերթը իր շնորհիւ կուսակցութեան մը օրկանը չեղաւ միայն, այլ՝ հայ ժողովուրդի առողջ բնազդներուն ամբողջական արտայայտութիւնը,

հայ մտքին ճիգերուն ապարէզը»,- կարդում ենք «Հայրենիք» ամսագրում (1925, թիվ 3, էջ 28–44):

Ռ. Զարդարյանը ծնվել է 1874 թ. Խարբերդում: Ավարտել է տեղի Ազգային վարժարանը: 1892–1903 թթ. աշխատել է Խարբերդի Կեդրոնական վարժարանում, որպես ավագ ուսուցիչ՝ դասավանդելով հայոց լեզու, հայ գրականություն և հայ ժողովրդի պատմություն: 1904 թ. տեղափոխվել է Մանիսա, որտեղ շուրջ մեկ տարի եղել է Ազգային վարժարանի տեսուչը: Բազմակողմանիորեն կրթված, մի քանի լեզվի տիրապետող, 17 տարեկանից գրասեր հասարակությանը հայտնի Ռ. Զարդարյանը գրել է դպրոցական դասագրքեր, զբաղվել թարգմանությամբ: Նրա հրապարակախոսական հոդվածները և գրական ստեղծագործությունները (հեքիաթներ, նովելներ, արձակ բանաստեղծություններ) 1890 թվականից տպագրվել են արևմտահայ մամուլում: 1910 թ. Կ. Պոլսում հրատարակվել է նրա անդրանիկ և միակ ժողովածուն՝ «Ցայգալոյսը», որը 1912 թ. լույս է տեսել նաև Փարիզում Ա. Չոպանյանի, Է. Գոլանճյանի, Զ. Եսայանի կողմից արված ֆրանսերեն թարգմանությամբ: Ռ. Զարդարյանը բազմիցս ենթարկվել է ոստիկանության հետապնդումներին, բանտարկվել է և ազատ արձակվելով՝ մեկ այլ ձերբակալությունից խուսափելու նպատակով 1905 թ. Զմյուռնիայից անցել է Բուլղարիա: Նա Պլովդիվ քաղաքում 1905–1908 թթ. հրատարակել ու հայրենիքում տարածել է «Ռազմիկ» թերթը: Ռ. Զարդարյանը հմուտ խմբագիր էր և քաղաքական պայքարի բովով անցած գործիչ, տեսական լայն պատրաստակամություն ունեցող անհատ: Հիշյալ արժանիքները նպաստել են այն բանին, որ 1908 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ նա ստանձնել է «Ազատամարտի» խմբագրի պաշտոնը: Ռ. Զարդարյանը երբեմն տպագրվել է «Աչք Եհովայի» և «Էժտահար» ծածկանուններով: 1909–1915 թթ. նա «Ազատամարտում» հրատարակվելու հնարավորություն է ստեղծել ոչ միայն հայ մտավորականության հանրաճանաչ ներկայացուցիչների, այլև շնորհալի երիտասարդ ստեղծագործողների համար:

ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը «Ազատամարտ» է անվանվել Է. Ակնունու առաջարկով: «Ի՞նչ կը նշանակէ ան, եթէ ոչ՝ ազատ կռիւ, շատ-շատ՝ ազատի, ազնուականի կռիւ, բայց՝ ոչ երբէք ազատութեան կռիւ, ազատության համար կռիւ»,- կարդում

ենք «Հայրենիք» ամսագրում հրատարակված Հ. Սիրունու հուշերում (1924, թիվ 9, էջ 112–120): Այստեղ թերևս ինքնատիպ մեկնաբանություն է տրվում բառի նշանակությանը:

«Ազատամարտը» տպագրվել է Բերայի Ենի Չարշը փողոցում, թիվ 32 հասցեում այդ նպատակով կառուցված Ատոմ Շահենի տպարանում: Նույն շենքում է եղել ՀՅԴ պաշտոնատեղին: Հետագայում 1910 թ., երբ կուսակցությունը բացել է սեփական տպարանը (տնօրեն Հայկ Թիրյաքյան) Համալ Պաշը փողոցի թիվ 74 շենքում, այնտեղ են փոխադրվել ՀՅԴ Արևմտյան բյուրոյի դրասենյակը, «Ազատամարտի» խմբագրությունը և տպարանը (խմբագրության գետնահարկ նկուղում): Խմբագրության շենքից են 1915 թ. ապրիլի 24-ի կեսգիշերին ձերբակալել և բանտարկել «Ազատամարտի» վերջին (թիվ 1815) այդպես էլ լույս չտեսած համարի վրա աշխատող հերթապահ խմբագրին, գրաշարին, մեքենավարին, բեռնակրին ու դռնապանին: Թերթի մնացած աշխատակիցներին (գրեթե բոլորին) ձերբակալել են իրենց բնակարաններում: Նրանց ճակատագիրն արդեն կանխորոշված էր. նահատակություն մնացյալի հետ: Իսկ խմբագրության շենքը բռնագրավել ու թալանել են հենց կեսգիշերին, այդ թվում դրամարկղում գտնվող 400 ոսկին, «Ազատության մատենադարանի» գրքերի պահեստը: Ապրիլի 24-ին ձերբակալվածների ու նահատակվածների թվում էր նաև Ռ. Զարդարյանը: Դեռևս 1915 թ. մարտ ամսին նա հրաժարվել էր հեռանալ Կ. Պոլսից արտերկիր փրկելու իր կյանքը: «Հայրենիք» ամսագրում տպագրված է Ռ. Զարդարյանի պատասխանը Թուրքիայից հեռանալու առաջարկով իրեն դիմած գործընկերոջը. «Հրաչն ու ես չենք կրնար Պոլիսը թողուլ: Հրաչը պէտք է մնայ իրեն վստահուած պարտականութեան գլուխը, իսկ ես «Ազատամարտի» գլուխը պէտք է ըլլամ մինչև իր վերջին օրը» (1925, թիվ 3, էջ 28–44):

«Ազատամարտի» վարչական հոգսերով զբաղվել են Կ. Փաշայանը (Թափառիկ), Ս. Օհանջանյանը (Յարհատ) և Հ. Թիրյաքյանը (Հրաչ):

Վերջինը թերթի մատակարարությանը վարել է մինչև նրա փակման օրը՝ 1915 թ. ապրիլի 24-ը[1]: Խմբագրական քարտուղարութ-

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 12, էջ 115–137:

յունը փոխնիփոխ ստանձնել են Գեղամ Բարսեղյանը, Շավարշ Միսաքյանը, Հակոբ Սիրունին (Ճոլոլյանը): Օրաթերթի աշխատակիցների (հաստիքային և արտահաստիքային) թիվը բավական մեծ է եղել ու պարբերաբար փոփոխվել է[1]: «Ազատամարտի» հիմնական աշխատակազմում ընդգրկված էին Խ. Մալումյանը (Է. Ակնունի), Հ. Շահրիկյանը (Ատոմ), Գ. Բարսեղյանը, Գ. Իփեքյանը, Ն. Փափազյանը: Թերթի աշխատանքներին մասնակցել են Ս. Զավարյանը, Հ. Համբարձումյանը, Ռ. Դարբինյանը, Ռ. Լեռնյանը, Ա. Խաչատրյանը, Ս. Մինասյանը, Հ. Մանուկյանը, Լ. Մոզյանը, Ս. Սրենցը և հայ մտավորականության սերուցքն ընդհանրապես: Թերթն ունեցել է 6 անդամից բաղկացած խմբագրական մարմին: Նրանք և «Ազատամարտի» վարչությունից 3 անդամ ղեկավարել են օրաթերթը: «Ազատամարտն» ունեցել է թարգմանիչներ, լրաբերներ ու թղթակիցներ Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի և աշխարհի տարբեր մասերում: «Ազատամարտն» իբրև ՀՅԴ պաշտոնաթերթ արտահայտել է իր կուսակցության ծրագրային դրույթները, ՀՅԴ դիրքորոշումն օսմանյան կայսրությունում և աշխարհում կատարվող իրողությունների նկատմամբ: Այն ունեցել է հետևյալ առաքելությունը. նպաստել արդարության, ժողովրդավարության և սահմանադրական կարգերի հաստատմանը Թուրքիայում (1909, թիվ 7): Թերթը ղեկավարվել է «Ամեն ինչ ժողովուրդին համար և ժողովուրդին միջոցով» նշանաբանով (1909, թիվ 1): «Ազատամարտը» հրատարակման տարիներին վերլուծել և լուսաբանել է օսմանյան խորհրդարանի և կառավարության, հայոց ազգային մարմինների ու հայ պատգամավորների գործունեությունը, քննադատել է Թուրքիայում իրականացվող հայաջինջ քաղաքականությունը, հայկական ջարդերն Ադանայում և այլուր՝ մեղադրելով պետական պաշտոնյաներին: 1909 թ. (նախապես տուրք տալով կուսակցական նախասիրություններին) գրեթե բոլոր համարներում «Ազատամարտն» անդրադարձել է Ադանայում հայերի կոտորածին և քննիչ հանձնաժողովի աշխատանքներին: Ընդհանրապես, իր անաչառ վերլուծությունների համար թերթը պարբերաբար ներգրավվել է դատական գործընթացների մեջ և հալածանքի է ենթարկվել գրաքննիչների կող-

---

[1] Նույն տեղում, 1924, թիվ 9, էջ 112–120, 1925, թիվ 3, էջ 28–44:

մից ՀՅԴ նկատմամբ երիտթուրքերի փոփոխվող քաղաքականության համեմատ: Սակայն պետք է նաև հետևյալ հանգամանքը նկատի ունենալ: 1909–1914 թթ. ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը, հանդուրժող քաղաքականություն վարելով օսմանյան պետության նկատմամբ, չի դրել անկախության պահանջ և կողմ է եղել «Իթթիհատ վե Թերաքքը» կուսակցության հետ ՀՅԴ-ի համագործակցությանը՝ չխզելով կապերը նրա հետ:

«Ազատամարտը» գրաքննական հալածանքների պատճառով խուսափելու նպատակով հրատարակվել է նաև այլ անուններով՝ «Առաջամարտ» (1912 թ.), «Բիւթանիա» (1912–1913 թթ.), «Ազդակ» (1912–1913 թթ.), «Բագին» (1912 թ.), «Մեղու» (1913 թ.), «Շանթ» (1913–1914 թթ.) և «Ճակատամարտ» (1914 թ.)[1]:

«Ազատամարտն» ունեցել է կայուն խորագրեր ու բաժիններ՝ Հայկական հարց, Բռնապետական արարք, Գաւառական կեանք, Տեղեկութիւններ Կիլիկիայէն, Այսօր, Վերջին ժամ, Հայկական կեանք, «Բաց ու գոց» խնդիրը, Գաղթը սպանիչ է, Հողային հարց, Կրթական գործ և այլն: Հրատարակվող նյութերի միջոցով «Ազատամարտը» համապարփակ պատկերացում է տվել ժամանակաշրջանի ազգային և համաշխարհային հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի մասին, արտացոլել է թուրքական իրականությունը, զարկ է տվել հայրենի գրականության զարգացմանը՝ երբեմն որպես դասագիրք օգտագործվելով հեռավոր գյուղերում[2]: Թուրքական կառավարական շրջանները հաշվի են առել «Ազատամարտի» կարծիքը պետական կարևոր հիմնահարցերով զբաղվելիս[3], իսկ թուրքական թերթերը հաճախ են թարգմանաբար արտատպել «Ազատամարտի» խմբագրականները[4]: «Ազատամարտը» եղել է սիրված և գնահատված թերթ ընթերցողների շրջանում: Դրան նպաստել են թերթի հրապարակումները ազգային էական խնդիրների վերաբերյալ (Հողային հարց, կրթական խնդիրներ, Ադանայի կոտորածն ու դրա մեղավորներին պատժելու վերաբերյալ սկսված գործընթացը, Հայկա-

---

[1] Լեոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, Ե., 1934, էջ 57, Կիրակոսյան Ա., Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, Ե., 1970, էջ 84:
[2] «Հայրենիք», 1924, թիվ 9, էջ 118:
[3] Վարանդյան Մ., ՀՅԴ պատմություն, Կահիրե, 1950, հ. 2, էջ 22:
[4] «Հայրենիք», 1924, թիվ 12, էջ 116–121:

կան գավառում կատարվող անօրինությունններն ու բռնությունները, օսմանյան խորհրդարանի և հայ պատգամավորների, Պատրիարքարանի և ազգային մարմինների գործունեությունը և այլն): Արժեքավոր են թվարկված խնդիրներին նվիրված, օրինակ՝ Վահրամ Փափազյանի «Օսմանեան բարլամէնթը», նույն թեմայի վերաբերյալ Գրիգոր Զոհրապի «Զանգակի մը տպաւորութիւնները», Հարություն Շահրիկյանի «Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը» հոդվածաշարերը և այլն:

«Ուսանողը» ՀՅԴ Եվրոպայի ուսանողական միության ամսաթերթն էր: Այն հրատարակվել է 1909–1914 թթ. Փարիզում, Ժնևում և Կ. Պոլսում (1912, թիվ 7): Սկզբում տպագրվել է որպես ոչ պարբերական (թիվ 1, 2), իսկ միության 2-րդ համագումարից (1909 թ.) հետո՝ որպես պարբերական հանդես: «Ուսանողի» և «Երկունքի» աշխատակազմերի մասին սկզբնաղբյուրների բացակայության կամ գրեթե բացակայության պատճառով, կարելի է ասել, որ դրանք ունեցել են խմբագրական մարմին և աշխատակիցների փոքրաթիվ շրջանակ (հիմնականում երիտասարդ մտավորականներ և ուսանողներ[1]): Նրանք հանդես են եկել կամ կեղծանվամբ, կամ անուն-ազգանվան սկզբնատառերով: «Ուսանողի» խմբագրական մարմինը ունեցել է 3–5 հիմնական և 2 փոխարինող անդամ: 1912 թ. «Ուսանողի» խմբագրական մարմինն ունեցել է հետևյալ կազմը. Մ. Ղ., Լ. Բ., Ե. Տ., Դ. Խ., Մ. Թ., փոխարինողներն էին՝ Ե.-ն ու Շ-ն: «Ուսանողին» աշխատակցել են Ե. Ֆրանկյանը, Վ. Խորենին, Ա. Շիրակունին, Մ. Վաքուրը, Վանիկը, Արմենը, Տրդատը, Արմանը, Մեմելը, Ֆելիքսը և այլք: Ամսագրի նպատակներն էին՝ լուսաբանել ՀՅԴ ծրագիրը, նպաստել հայրենակ երկրների հասարակական-քաղաքական խնդիրների լուծմանը, ընթերցողներին ծանոթացնել եվրոպական ընկերվարական տարբեր ուղղությունններին, համախմբել Եվրոպայում սովորող դաշնակցական ուսանողներին և աջակցել նրանց կրթությանը: «Ուսանողն» իր գործունեությամբ երեք հիմնական խնդիր պետք է լուծեր.

[1] «Ուսանող», Փարիզ, 1909, թիվ 1, էջ 1–3, 45–48, «Երկունք», Կ. Պոլիս, 1912, թիվ 1, էջ 30–31:

ա) գրչով ու խոսքով լուսաբանել ու տարածել ՀՅԴ ծրագիրն իբրև ՀՅԴ Եվրոպայի ուսանողական միության ոչ պաշտոնական օրգան,

բ) նպաստել հայ ժողովրդով բնակված տարածաշրջանների և երկրների (Կովկաս, Տաճկաստան, Պարսկաստան) հասարակական-քաղաքական, տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրությանը և լուծմանը,

գ) ծանոթացնել և ընթերցողին իրազեկել եվրոպական ընկերվարական տարբեր ուղղությունների, դրանց սկզբունքներին, ընտրած գործելակերպին, հաղթանակներին ու պարտություններին՝ դրանով ավելացնելով ՀՅԴ-ի ընկերվարական փորձը (1909, թիվ 1, էջ 1–3): Այս սկզբունքներից ելնելով է «Ուսանողն» ընտրել և հրատարակել իր հոդվածները տարբեր բաժինների ու խորագրերի ներքո. Ազգությունների հարցը Տաճկաստանում, Պալքաններու շուրջ, Մամուլ, Ընկերվարական հարցեր, Կրթական գործ, Ազգային-կուլտուրական կյանք, Հողային հարց, Օսմանեան բարլամէնթը, Մեր գիրքը, Գրական կյանք, Քաղաքական տեսություն և այլն:

«Երկունքը» ՀՅԴ Կ. Պոլսի ուսանողական միության ամսաթերթն էր: Հրատարակվել է 1909–1914 թթ.: Արտոնատերն ու պատասխանատու տնօրենը Գալուստ Էյնաթյանն էր: «Երկունք» նախնական խմբատից ամսագրի հրատարակմանը մասնակցել են Վանի Երամյան ու Կենտրոնական վարժարանների շրջանավարտներ Գալուստ Էյնաթյանը, Մանվել և Բարունակ Կապուտիկյանները, Արամ Սաֆրաստյանը, Խորեն Խանջյանը, Պարգև Պանիրյանը, Մանուկ Ասլանյանը, Տիգրան Զրբաշյանը և ուրիշներ[1]: Ամսագրի էջերում իրենց նյութերն են տպագրել Ա. Վասակյանը, Խ. Աստուրյանը, Կ. Թանտրջյանը, Գ. Մխիթարյանը, Մ. Զիլյանը, Ռիվարեցը, Ասլանը, Ասաֆը, Նիլյան, Շահրիմանը և այլք: «Երկունքը» հետապնդել է գրեթե նույն նպատակները, ինչ «Ուսանողը»՝ միայն փոքր-ինչ նեղացնելով գործունեության շրջանակները, սահմանափակվելով Կ. Պոլսի դաշնակցական երիտասարդության և ուսանողների հիմնահարցերով: ՀՅԴ Կ. Պոլսի ուսանողական միության ամսաթերթը

---

[1] Հայ մամուլի մատենագիտություն, Ե., 1981, էջ 486: Տե՛ս նաև Հովսեփյան Մ., Կ. Պոլսի ՀՅԴ մամուլը ազգային-ազատագրության ջահակիր (1909–1915 թթ.), Ե., 2003, էջ 47–56, 91–100:

հրապարակ էր իջել, որ հնչեցներ Դաշնակցության կողմից իրենց կարծիքով երկրորդական համարված ընկերվարական սկզբունքները, որպես երիտասարդ ու թարմ մարմին օժանդակեր կուսակցության կազմակերպական, քարոզչական աշխատանքներին, կապ պահպաներ Կ. Պոլսի և Արևմտահայաստանի դաշնակցական ուսանողների միջև՝ ձգտելով թե՛ նրանց, թե՛ կուսակցության անդամներին տանել ընկերվարական ճանապարհով (1912, թիվ 1, էջ 30–31): «Երկունքի» հիմնադրման գլխավոր պատճառը երիտասարդության ձայնը լսելի դարձնելու խնդիրն էր: Ըստ ամսաթերթի՝ երիտասարդ սերնդի ձայնը և պահանջներն ընկերվարական են: Քանի որ իբրև այդպիսին դրանք հարկ ու պատշաճ ձևով չեն երևացել դաշնակցական նախընթաց մամուլում, ուստի դրանց հնչեցման համար է ասպարեզ գալիս «Երկունքը» (1912, թիվ 2, էջ 56): Ամսաթերթի հոգածության կենտրոնում ուսանողությունն ու երիտասարդությունն էին: «Երկունքի» հրապարակումները պիտի նպաստեին նրանց հասարակական-քաղաքական համոզմունքների ձևավորմանը և ազգի ապագան հղացող ուսանողության երկունքին (1912, թիվ 1, էջ 1–2, 1913, թիվ 10–11, էջ 281–284): Իսկ ուսանողությունը բարձրագույն կրթություն ստանալուց հետո պետք է անպայման վերադառնար գավառ, որպեսզի կուտակած գիտելիքների պաշարով նպաստեր Արևմտյան Հայաստանի վերածննդին (1912, թիվ 2, էջ 33–34): «Երկունքի» էջերում, բացի վերը նշված թեմատիկ ուղղություններով նյութերից, հրատարակվել են իմաստասիրական, գրական-գեղարվեստական, հասարակագիտական աշխատություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ: Դրանք զետեղվել են համապատասխան բաժիններում:

1918–1924 թթ. Կ. Պոլսում, որպես «Ազատամարտի» իրավահաջորդ, բայց ոչ որպես ՀՅԴ պաշտոնաթերթ, հրատարակվել է «Ճակատամարտ» օրաթերթը: Խմբագիրը Հակոբ Ճոլոլյանն էր: Պատասխանատու տնօրեններն էին Մանուկ Ասլանյանը և Շավարշ Միսաքյանը, իսկ արտոնատերը՝ Վրթանես Մարտիկյանը: «Ճակատամարտն» ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918, թիվ 2–12), «Արիամարտ» (1918, թիվ 13–32), «Ճակատամարտ» (1918, թիվ 33-ից մինչև 1920 թ.): Աշխատակիցները Մեծ եղեռնից մազապուրծ եղած արևմտահայ ճանաչված և հայտնի գրողները, հրապարակախոսները և մտավորա-

կաններն էին: Օրաթերթի էջերում հանդես են եկել Շավարշ Միսաքյանը, Երվանդ Օտյանը, Թեոդիկը (Թեոդորոս Լաբճինճյան), Արամ Զարգը (Վասպուրանցի), Սարգիս Գասրճյանը (Տերուկ), Մկրտիչ Պարսամյանը, Գևորգ Մեսրոպը, Ենովք Արմենը, Վահան Շահրիմանը և ուրիշներ: «Ճակատամարտում» պահպանվել են «Ազատամարտի» ավանդույթներն ու բաժինները: Վերջիններին ավելացել են նորերը «Մեր խոսքը» խորագրով ամենօրյա խմբագրականները, Առտուան տամար, Եղեռնապատում, Վերապրողները, Հայաջինջ սարսափներ, Հայկական դատը գաղութներու մէջ, Շարժումը հայ գաղութներու մէջ, Մեր գաղութները և անոնց կեանքը, Կփնտրուին, Կեանքը Հայաստանի մէջ, Հայաստանի խորհրդարանի նիստերը և այլն: Ազգային-մշակութային կյանքի խաթարման պատճառով օրաթերթում մինչև 1919 թ. նոյեմբեր ամիսը չկան մշակութային ուղղվածության նյութեր: «Ճակատամարտի» համար առաջնահերթ էին հայ դատի պաշտպանության, հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրագործողներին միջազգային դատարանի կողմից պատժի ենթարկելու, հայ ժողովրդի կրած մարդկային, նյութական և բարոյական կորուստների փոխհատուցման, հայ տարագիրների ներգաղթի կազմակերպման, անկախ և միացյալ Հայաստան հիմնելու նպատակները: «Ճակատամարտ» օրաթերթում մեծ տեղ են գրավում Հայաստանի 1-ին Հանրապետության կյանքի գրեթե բոլոր ոլորտների լուսաբանումները: Հիշատակենք Հ. Ամատունու «Հայաստանի Հանրապետութիւնը եւ իր մէկ տարուայ կեանքն ու գործը» և «Մեր պարտքը հայ բանակին» հոդվածաշարերը (1920, թիվ 345–350, 357, 372, 383), Ա. Ստեփանյանի «Հայաստան տնտեսական տեսակէտով» շարքը (նույն տեղում, 1920, թիվ 357, 366), Հ. Բագրատունու «Մտաւորական շարժումը Հայաստանի մէջ» հոդվածը (1920, թիվ 360), «Հայաստանի գրական ընկերութիւնները» և «Հայ թատրոնը մեր մէջ» խմբագրականները (1919, թիվ 299, 300) և այլն: «Հայաստանը կազմելու համար» խմբագրականում «Ճակատամարտը» պարզաբանում է իր բռնած ուղեգիծը. «Ցնորք մը չէ այլեւս Անկախ Հայաստանը: Բայց՝ զգոյշ, արբենալու ժամը չէ այս: Երբ որ մեզ հրաւիրեն Հայաստանը կազմելու, կարենանք առնել առանց չիկնելու.

– Ահա մեր բաժինը Հայաստանի համար,- պահեցինք ինչ որ մնացած էր. ահա որբեր-վաղուան ցլքերը, ահա տարագիրները՝

անդրանիկ ուխտաւորները, և ահա մենք՝ բախտաւորներս, որ կուզենք մեր Հայրենիքին հիմերը դնել» (1918, թիվ 28): «Ծակատամարտը» գրեթե բոլոր համարներում դատապարտել է Հայոց ցեղասպանությունը և պահանջել պատժի ենթարկել կազմակերպիչներին ու մեղավորներին: Թերթի էջերում Եղեռնը վերապրողները պատմել են տեսած սարսափները: «Ծակատամարտը» համոզված էր, որ Թուրքական կառավարությունը Հայկական հարցը «ջնջելու համար» ցանկացել է ոչնչացնել հայ ժողովրդին, ինչը նրան չի հաջողվել: Թերթը իր նյութերում նաև փաստել է, որ «հայակեր» քաղաքականությունը շարունակվում է 1918–1920 թթ. նույնպես (1918, թիվ 2, 1919, թիվ 108):

1919–1920 թթ. Կ. Պոլսում հրատարակվել են «Ծակատամարտ» օրաթերթի համանուն գյուղատնտեսական և մանկավարժական ամսօրյա հավելվածները: «Ծակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածը եղել է Հայ գյուղատնտեսական միության (ՀԳՄ) օրգանը: Խմբագրական մարմինը և աշխատակիցները հիմնականում հիշյալ միության անդամներն էին, որոնք իրենց գործին քաջատեղյակ և փորձառու մասնագետներ էին: Խմբագրական մարմնում ընդգրկված էին Գեղամ Գավաֆյանը, Պողոս Գևորգյանը, Հովհաննես Հինդլյանը, Շահան Բերբերյանը, Գևորգ Մեսրոպը: Հոդվածաշարերով և վերլուծություններով հանդես են եկել միության վարչական խորհրդի անդամներ Կարապետ Նուրյանը, Հայկ Սերենկյուլյանը, Սեպուհ Ստեփանյանը, Նշան Անդրեասյանը: Նրանք և ողջ աշխատակազմը ձգտել են նպաստել Թուրքիայի հայաբնակ վայրերում հողագործության և գյուղատնտեսության զարգացմանը, հայ ժողովրդի կենսակերպի բարելավմանը: Նրանց նշանաբանն էր՝ «Միութիւն, համերաշխութիւն եւ գիտութիւն» (1919, թիվ 1, էջ 3–4, 1919, թիվ 2, էջ 24): Հայրենիքի վերածնունդը ՀԳՄ-ն կապում էր երկրագործության զարգացման հետ՝ գտնելով, թե «Հայաստանը եղած է և պիտի մնայ գերազանցօրէն երկրագործական երկիր մը» (1919, թիվ 2, էջ 3–4): Այդ նպատակի իրագործմանն էին նպաստելու «Ծակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածում տպագրվող ծրագրային հոդվածաշարերը, օրինակ՝ Հրանտ Գարագյոզյանի «Հայաստանի ջրաբաշխութիւնը», Կարապետ Նուրյանի «Հայաստանը եւ իր երկրագործական հարցերը», Հայկ Սերենկյու-

յանի «Կաթնատնտեսութիւնը Հայաստանի մէջ» շարքերը: Հանդեսի հիմնական բաժիններն էին՝ Տնտեսական-ընկերային, Տեղեկատուական-գիտական, Գիւղական կեանք, Օգտակար բույսեր, Բնութեան գիրկին մէջ, Անասունների համաճարակներ, Նամականի և այլն:

«Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հավելվածը Հայ ուսուցչական միութեան (ՀՈՒՄ) օրգանն էր: Խմբագրական մարմնում ընդգրկված էին Գեղամ Գափաֆյանը, Պողոս Գևորգյանը, Հովհաննես Հինգլյանը, Գևորգ Մեսրոպը, Շահան Բերբերյանը: Նրանք և աշխատակիցների մեծ մասը ՀՈՒՄ-ի անդամներ էին և հարկ եղած դեպքում աշխատանքը համատեղում էին «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածում: ՀՈՒՄ-ը և նրա պաշտոնաթերթը հետապնդել են մի շարք նպատակներ՝ ՀՈՒՄ-ի Կ. Պոլսի մասնաճյուղերի վերաբացում, մանկավարժական եռամյա դասընթացների կազմակերպում, ուսուցիչների նյութական վիճակի բարվոքում, չափահաս որբերի հայեցի դաստիարակություն և այլն: «Առաջին խոսք» խմբագրականում հայ ժողովրդի վերածնության և Հայաստանի վերաշինության գործում հայ ուսուցչին է վերապահվել ամենակարևոր դերը. «Վաղուան Հայաստանը ամէն բանէ աւելի պէտք ունի Հայ Ոգիով եւ Առաքինութեամբ սնած քաղաքացիին: Ուսուցչութիւնն է որ պիտի կազմէ այդ սերունդը՝ զայն դուրս բերելով Թշուառութենէ, տգիտութենէ մասամբ փտած և մասամբ այլասերած այն 100.000-աւոր խեղճ որբութենէն որ կմնայ մեզի: Հայ Ուսուցչութեան գերագոյն գործն է՝ անոնցմէ յառաջ բերել վաղուան Ազատ Հայաստանին Ազատ Հայ Տիպարը» (1919, թիվ 1, էջ 1–2, 14–22): ՀՈՒՄ-ի պաշտոնաթերթը համապատասխան բաժիններում տպագրել է իրեն հուզող հիմնահարցերին նվիրված հոդվածներ, վերլուծություններ և առաջարկներ: Հավելվածն ունեցել է Էական հարցեր, Կրթական վիճակագրություն, Հարցումներ և Պատասխաններ աշակերտների դաստիարակության վերաբերյալ, Կրթական քրոնիկ, Հայ դաստիարակներ, Տեղեկատվութիւն ՀՈՒՄ գործունէութեան, ՀՈՒՄ քրոնիկ, Նոր գրքեր բաժինները: Հիշատակության են արժանի հայկական դպրոցների ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդների վերլուծությանը և հայեցի դաստիարակությանն առնչվող հոդվածները, ի թիվս որոնց «Վիճակագրութիւն» խորագրի տակ տպագրված Գևորգ Մեսրոպի հոդվածաշարե-

րը Կ. Պոլսի և գավառի վարժարանների և որբանոցների անցյալ ու ներկա վիճակների մասին:

«Շանթ» հանդեսը լույս է տեսել 1911–1915 թթ. և 1918–1919 թթ.: Այն ունեցել է գրական-գեղարվեստական, քաղաքական և գիտական ուղղվածություն: Խմբագրապետը Մերուժան Պարսամյանն էր: Աշխատակազմում ընդգրկված էին ժամանակի անվանի արվեստագետները, գրողներն ու հրապարակախոսները՝ Երվանդ Օտյան, Օննիկ Չիֆթե Սարաֆ, Զարուհի Գալեմքյարյան, Մկրտիչ Պարսամյան (Կայծակ), Երուխան (Երվանդ Սրմաքեշխանլյան), Ենովք Արմեն, Զոհրապ Կարո, Արամ Զարգ, Հակոբ Անպանյան, Միքայել Շամտանճյան, Ժակ Սայապալյան (Փայլակ) և այլք: «Շանթը» թղթակիցներ է ունեցել Արևմտյան Եվրոպայի երկրներում, Կովկասում, Ռուսաստանում: Նրանց նյութերը հանդեսին պիտի հաղորդեին «տեղի գրական եւ գեղարուեստական շարժումը՝ մասնաւորապէս հայէն բղխող և հայութիւնը շահագրգռող: «Շանթի» գրական և գեղարուեստական շարժումին մէջ պիտի խօսուի ամէն հրատարակութիւններու վրայ ընդհանրապէս՝ տարուան գրականութեան եւ գեղարուեստին ամփոփ ու ճշգրիտ պատմութիւնը տուած ըլլալու համար: «Շանթ» պիտի ցոլացնէ հայ արուեստը եւ միտքը» (1911, թիվ 1, էջ 1): Հանդեսի հիմնական բաժիններն ու խորագրերն էին՝ Գրական-գեղարուեստական շարժում և մոտեցումներ, Նոր գրքեր, Թրքահայ գրականութիւն, Մամուլ, Նամականի, Լրափունջ, Հայ հորիզոնեն, Թարգմանութիւններ, Հայ աշխարհ: Հրատարակության երկրորդ շրջանում այս բաժինները հարստացել են նորերով: 1918–1919 թթ. «Շանթը» դարձել է գրական-քաղաքական և առավելապես հայապահպանության և ազգի վերածնության խնդիրներ արծարծող հանդես: Դա պատահական չէր և թելադրված էր Թուրքիայի հասարակական-քաղաքական իրականությամբ: Դեռևս 1911 թ. «Հանդրվանը» խորագրով իր անդրանիկ խմբագրականում «Շանթը» գրել է. «Ո՛չ մէկ երկրի քաղաքական կեանք ա՛յնքան զօրաւոր կերպով ազդած է գրականութեան եւ արուեստի վրայ, որքան մեր մէջ ... ժամանակն հասած է, որ դիմենք գեղարուեստի հանդրուանին ... Հոն կուսակցական ոգին տեղի պիտի տայ զուտ գեղարուեստական մակընթացութեան, ամէն գրագէտ այդ նոր գետնին վրայ ձեռք պիտի երկարէ իր սկզբունքի ախոյեանին՝ գործակցելու համար գրակա-

նութեան պանծացումին: Ահաւասիկ այդ նպատակին համար կը հիմնենք «Շանթ» հանդէսը»: Իսկ 1918 թ. հրատարակության նոր շրջանի առաջին խմբագրականում «Շանթը» նշել է, թե հանդեսի արժեքավոր աշխատակիցների մեծ մասը նահատակվել է և «մեր ազգին ապրած զարհուրելի օրերէն վերջը, պարզապէս ծիծաղելի պիտի երեւար, գէթ հիմա, զուտ գրական-գեղարուեստական օրկանի մը գոյութիւնը, ինչպէս էր այն առաջուան «Շանթը»» (1918, թիվ 1, էջ 2–3): Պահպանելով գրական-գեղարվեստական ուղղվածությունը «Շանթը» հետապնդելու էր Մեծ եղեռնը վերապրողների կողմից «մեր արիւնոտ պատմութիւնը գրելու, ապրելով մահուանը յաղթելու և քանդուած երկիրը վերանորոգելու» նպատակները: «Շանթը» առաջնորդվել է նշված սկզբունքներով և կարողացել է «վճիտ ու հպարտ ցոլացումը ըլլալ հայ արուեստին եւ հայ գրականութեան» հիշելով, թե իրենք զավակներն են այն սերնդի, որ «մեռաւ մեզի ապրեցնելու համար, որ կռուեցաւ ու յաղթանակեց» (1919, թիվ 13, էջ 148):

«Հայ սկաուտ» հանդեսը հրատարակվել է 1919–1922 թթ.: Այն եղել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) օրգանը: Ամսագրի խմբագիրը Կարո Գ. Ուչադըյանն էր, պատասխանատու տնօրենը՝ Հրաչյա Տեր-Ներսիսյանը, արտոնատերը՝ Գասպար Շահինյանը: Աշխատակազմում ընդգրկված էին ՀՄԸՄ-ի անդամներ, անվանի մարզիկներ, մարզական վերլուծաբաններ՝ Հակոբ Քրիսյան, Վահրամ Ս. Փափազյան, Միսակ Նալբանդյան և այլք: Հանդեսի և ՀՄԸՄ-ի նպատակներն արտացոլված են «Մեր գաղափարականը» խմբագրականում: ՀՄԸՄ-ն, ինչպես նշված է այս հոդվածում, կազմակերպելով մարմնակրթական և սկաուտական խմբեր, ցանկանում է պատրաստել օրինապահ, ազատ և առողջ անհատներ, «առողջ սերունդ մը նոր Հայրենիքին համար» (1919, թիվ 1, էջ 1–3): Հայ սկաուտը պիտի լինի լավատես, վստահելի և կարգապահ, «որուն կարենան յանձնել Հայրենիքի շահերն իբրեւ ամենակարողի քաղաքացիին»: Հայ սկաուտի նշանաբանն է «բարձրացի՛ր, բարձրացուր», իսկ կյանքի նպատակը «բարձրանալ հոգիով, միտքով եւ մարմնով», քաջալերել հուսահատվածներին, օգնել կարիքավորներին ու բարձրացնել ընկածներին (1919, թիվ 4, էջ 51–52): Հանդեսն ունեցել է Սկաուտական կյանք, Սկաուտական և մարզական շար-

ժումը Հայաստանի մեջ, Սկաուտական գիտելիք, Սկաուտական խաղեր, Սկաուտի նամակներ, Սկաուտական լուրեր, Մարզական կյանք, Թղթակցություններ գավառներից, Խորհուրդներ սկաուտներին, ինչպես նաև Նախնական և Անմիջական ծանոթությունների և ՀՄԸՄ գործունեության լուսաբանմանը նվիրված բաժիններ: Առավել արժեքավոր են հանդեսում տպագրված՝ նշված ոլորտին վերաբերող լուրերը և ուսուցողական բնույթի հոդվածները: Վերջիններից հիշատակության են արժանի Ս. Ուզունյանի «Մարմնակրթութեան բնախօսութիւնը», Վ. Փափազյանի «Ատլէտիզմ» և Ս. Նալբանդյանի «Անցեալ յուշերէս» հոդվածաշարերը:

Ամփոփելով՝ փաստենք, որ 1909–1920 թթ. Կ. Պոլսում հրատարակված ՀՅԴ պաշտոնական և ոչ պաշտոնական պարբերականները չեն եղել նեղ կուսակցական ամբիոններ: Նրանց արծարծած հիմնախնդիրներն այնքան բազմազան ու բազմաբնույթ են, որ ընդգրկում են հրատարակման ժամանակաշրջանում հայ ժողովրդին հետաքրքրող հարցադրումներ, երևույթներ, իրադարձություններ գրեթե բոլոր բնագավառներում՝ քաղաքականությունից մինչև մշակույթ:

«ԱՇԽԱՏԱՆՔ» (1910–1915)

1910–1915 թթ. Վանում լույս է տեսել «Աշխատանք» գրական, քաղաքական և տնտեսական շաբաթաթերթը: Խմբագիրը ՀՅԴ անվանի դեմքերից մեկն էր՝ Իշխան Միքայելյանը: Թեև շաբաթաթերթը ՀՅԴ պարբերականի մամուլի տեղական օրգանն էր, չուներ խիստ ընդգծված կուսակցական դիմագիծ: Այն ոչ թե ՀՅԴ պաշտոնաթերթ էր, այլ՝ կուսակցական հրատարակություն, որը լուսաբանում էր Վանի վիլայեթի հիմնախնդիրները, ներքին կյանքն ու առօրյան, նաև փորձում էր համախմբել ընթերցողներին՝ հանուն հայապահպանության և ազգային նպատակների իրականացման: Սկզբնական շրջանում, ինչպես բնորոշ էր Թուրքիայում այդ ժամանակաշրջանում հրատարակվող հայկական թերթերին ու ամսագրերին, «Աշխատանքը» տարված էր ընդհանուր բարեփոխումների և արևմտահայերի իրավահավասարության հույսերով: 1913 թ. սկսած՝

շաբաթաթերթի խմբագրակազմն հասկանում է, որ երիտթուրքական կառավարությունը շարունակում էր Աբդուլ Համիդի հայասպան ու հակահայկական քաղաքականությունը: Տեղային խնդիրներ շոշափող հրատարակությունից «Աշխատանքն» աստիճանաբար վերածվում է համահայկական մտահոգություններով ապրող և շնչող շաբաթաթերթի՝ քաղաքականապես հասունանալով և բացահայտելով թուրքական իշխանությունների երկդիմի վերաբերմունքը հայերի հանդեպ:

Հրատարակության վերջին ամիսներին «Աշխատանքը» դարձել է 1915 թ. Վանում տեղի ունեցած պատմաքաղաքական դեպքերի վավերագիրը: Շաբաթաթերթի էջերում «Օրը օրին» խորագրի ներքո արձանագրված են Վանի հերոսական ինքնապաշտպանությունը, վանեցիների հաղթանակը, քաղաքի ինքնավարությունը, նրա վերջին օրերը և այլն:

«Աշխատանքը» պաշտպանել է ազգերի իրավահավասարության սկզբունքը, որը հատկապես 1908–1909 թթ. տարփողվում էր Թուրքիայում: Յուրաքանչյուր ազգ Թուրքիայում ունէր ազգային իմացիքը պահպանելու սահմանադրական իրավունք, որն այդպես էլ մնում էր միայն թղթի վրա: «Մեր նպատակը» խմբագրականում շաբաթաթերթը գրում էր, որ կողմնակից էր «լայն ազգայնական իրաւունքի տեսակէտին», բայց միանգամայն հակառակ էր «նեղ ազգայնական ու կրօնական ձգտումներին, որոնք կը հասնին շօվէնութեան: Թերթը հնարաւորութեան ոյժերի ու պայմանների թոյլատրութեան չափով պիտի արձագանգ տայ հասարակական բոլոր խնդիրներին՝ միշտ առաջադիմական, լայն-ազատական տեսակէտից առաջնորդուելով» (1910, թիվ 1, էջ 6): «Աշխատանքը», սակայն, հավակնոտ չէր և համոզված էր, որ չէր կարող նպաստել իր հրապարակումներում բարձրացված խնդիրների լիարժեք լուծմանը, քանի որ «գաւառական թերթից այդքան պահանջելն աւելորդ էր» (նույն տեղում): «Աշխատանքը» գրում է, որ իբրև գավառական պարբերական ինքն անկարող է խորությամբ ներկայացնել Բալկանյան կնճիռն ու Հայկական հարցի զարգացումները: Այսինքն՝ «Աշխատանքը» զգուշավոր քաղաքականություն էր որդեգրել Հայկական հարցի լուսաբանման առումով: «Վերջին ժամանակներս Բալկաններից ապստամբութիւնների լուրեր ենք ստանում: 100 տարուց աւել

է այդ ճզմւած ու հարստահարւած ազգերն ու ժողովուրդները զէնքի ու ապստամբութեան միջոցին են դիմում, յանուն իրենց խլւած ու բռնաբարւած իրաւունքի... Եւ այդ բոլորը մի այնպիսի ժամանակ, երբ մենք կարօտ ենք խաղաղութեան, նւիրւելու ստեղծագործիչ աշխատանքի և շինիչ գործի»,- գրում էր «Բալկանյան կնճիռներ» հոդվածի հեղինակ Անցորդը՝ նկատի ունենալով, որ կայսրության հպատակ հարստահարվող ազգերը հարկադրված են եղել զենքի դիմելու (1910, թիվ 3, էջ 14): Այս մոտեցումն ընկած էր «Աշխատանքի» քաղաքական վերլուծությունների և ներքին ու արտաքին տեսությունների հիմքում: Այն բխում էր ՀՅԴ մարտավարությունից և Արևմտյան Հայաստանի համար կուսակցության որդեգրած ծրագրային դիրքորոշումից: Մինչև իր հրատարակության վերջն «Աշխատանքը» շարունակում էր չշեղվել կուսակցական պատգամներին և դրանով թելադրվող սեփական տեսակետներից:

Սկսած 1913 թվականից, երբ երիտթուրքական կառավարությունն ավելի պարզորոշ է դարձնում իր հավատարմությունը նախկին վարչակարգերի քաղաքականությանը մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ, «Աշխատանքն» ավելի հաճախ է սկսում քննադատական հոդվածներով հանդես գալ ի շահ և ի պաշտպանություն սպանվող, թալանվող, հողազուրկ դարձող իր ազգակիցների: Շաբաթաթերթին վրդովում էր պետական այն քաղաքականությունը, որն ընտրական օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով թույլ չէր տալիս արևմտահայերին իրենց թվաքանակի համեմատ պատգամավորներ ունենալ: «Աշխատանքը» գրում էր, որ Թուրքիայի նահանգային նոր օրենքը բացառում է ազգային փոքրամասնությունների քաղաքացիական իրավունքները (1913, թիվ 30, էջ 1): Բացի այդ՝ շաբաթաթերթը նշում էր, որ Թուրքիայի ազգային փոքրամասնությունները թեև պայքարում են իրենց ազգային դիմագծի պահպանման համար, նրանց ցանկանում են ձուլել մեկ «ազգության»՝ օսմանացիության մեջ (1913, թիվ 29, էջ 1–2):

«Աշխատանքը» գրում էր, որ հայ ժողովուրդը ոչ թե ուզում էր անջատվել Թուրքիայից, այլ ցանկանում էր իր «բնակած հայրենիքին մէջ քաղաքական ազատ կարգեր ստեղծել, ո՛եէ պայմանով չկաշկանդւած անկախ զգացում մը իրենց ազգային մշակոյթին և տնտեսական կեանքին» (1913, թիվ 33, էջ 1):

1913–1914 թթ. «Աշխատանքը» քննարկման առանձին նյութ էր դարձրել հայկական վեց նահանգների հանդեպ եվրոպական վերահսկողության հաստատման հարցը: Շաբաթաթերթը վերլուծում էր հայկական հարցին առնչվող բոլոր իրադարձությունները՝ ներկայացնելով Թուրքիայում այդ կապակցությամբ ծավալված քննարկումներն ու հայ և թուրք հասարակության մտահոգող խնդիրները: Այդ ամենի արդյունքում «Աշխատանքն» այն տեսակետն էր առաջ քաշում, որ Թուրքիան մերժողական ու խիստ լեզու «կը բանեցնէ Եւրոպայի առաջարկած ծրագիրի ու քոնթրոլի սկզբունքին դէմ: Օսմանեան կառավարութիւնը որոշած է բացարձակապէս մերժել ամէն ծրագիր կամ առաջարկ, որ կը ձգտի իրական քոնթրոլ հաստատել իր բարենորոգչական գործառնութեանց վրայ և դպչիլ իր անկախութեան» (1913, թիվ 4, էջ 2):

Անկախ պատմաքաղաքական հանգամանքների թելադրանքով կանխորոշված մոտեցումից, «Աշխատանքը» «Պետական կեանք» խորագրի ներքո հիմնադրման օրվանից մինչև մեզ հասած վերջին համարները հանդես է եկել պետական կառավարման համակարգում եղած բացերի, թերությունների և սխալների, որևէ հարցի կամ որևէ ազգի նկատմամբ դրսևորվող կանխակալ կամ ծրագրված անարդար քաղաքականության դեմ: Վերլուծականներին բնորոշ էր այն, որ եզրահանգումներն արվում էին տեղային (Վանի և Վանի վիլայեթի) բնույթի խնդիրների ածանցմամբ, համադրմամբ և ընդհանրացմամբ: Վերահիշյալ շարքի պատասխանատու Միրապոն հոդվածներից մեկում թեև անդրադառնում էր թուրքերի տեղական դատարանների գործունեությանը, բայց ընդհանրացնելով դրանցում առկա հիմնահարցերը, պահանջում էր կառավարությունից գտնել ընդհանրական լուծում: Կենտրոնական կառավարությունն էր չարիքների արմատը. սա էր շաբաթաթերթի հիմնական եզրակացությունը: Եթե Թուրքիայի վիլայեթների պաշտոնատար անձինք (օրինակ՝ Վանի բոլոր կազաներում և նահիեներում գայմագամները, մյուդուրները և մյուռները) չէին վայելում կառավարության վստահությունը, եթե նրանք «անկարող էին ու ապիկար, ինչու՞ համար կեդրոնական կառավարութիւնը չէ՛ր բռնում նրանց թեւից, չէ՛ր շպրտում դուրս կառավարական օղակից, որպէսզի ո՛չ վարկաբեկէին կառավարութեանը, ո՛չ խաբէին իրանք իրանց և թէ ժողովուրդին»

(1910, թիվ 3, էջ 3): «Ավազակությունները» կոչվող խմբագրական-հոդվածներից մեկում բերվում էին նաև ասվածն ապացուցող թվական տվյալներ: Պարզվում էր, որ 1910 թ. դրությամբ միայն Վանի նահանգը ժանդարմներին պահելու համար հատկացնում էր 80.000 լիրա, բայց, միևնույնն է, թե՛ վիլայեթում, թե՛ Թուրքիայում ընդհանրապես շարունակվում էին անօրինությունները: «Աշխատանքը» հարց էր ուղղում կառավարությանը. «Եթե 80.000-անոց ժանդարմերիան անկարող է մի քանի տասնեակ աւազակները ոչնչացնելու, ապա ուրեմն ի՞նչն է արդարացնում նրանց գոյութիւնը» (նույն տեղում): Շաբաթաթերթը նման գործելակերպը որակում էր որպես պետական հանցանք: Պարբերականի կարծիքով՝ իրավիճակից դուրս գալու ելքը ավազակների շահույթից իրենց բաժինն ունեցող և կաշառակեր պաշտոնյաների փոխարեն պետական մտածողության տեր մարդկանց պաշտոններ տալն էր: Իհարկե, սա խոցելի տեսակետ է, քանի որ որոշ չափով անտեսվում էր հայերի հանդեպ պետական գրեթե բոլոր կառույցների և օղակների կողմից իրագործվող հայահալած ծրագիրը: «Պետական կեանք» խորագրի մեկ այլ հրապարակման մեջ «Աշխատանքը» հայտնում էր, որ կամուրջների և ճանապարհների շինարարության համար պետությունը Վանի վիլայեթին 1910 թվականին հատկացրել էր 15.000 ղուրուշ: Գումարը փոխանցվել էր տեղական գանձարանին: 9 ամիս անց պարզվել էր, որ կառուցվել էր ընդամենը հողե նավահանգիստ, որը մեկ տարուց ավելի չէր ծառայելու իր նպատակին: Այդ ձեռնարկի վրա ծախսվել էր 1200 ղուրուշ: Ստացված բողոքներով զբաղվելու համար կազմված վերաքննիչ մարմնի աշխատանքները լրացուցիչ պահանջել էին 768 ղուրուշ, որը նույնպես շաբաթաթերթը համարում էր «ջուր ձգուած ոսկի», իսկ Թուրքիայի հանրօգուտ շինությունների հաստատության, ինչպես և կառավարական մյուս հաստատությունների գործունեությունը՝ հանցավոր և դատապարտման արժանի (նույն տեղում, էջ 5):

«Աշխատանքի» քննադատությունները կառուցողական էին իրենց բնույթով: Թեև շաբաթաթերթը գնահատում էր Վանի վիլայեթի մի շարք պաշտոնյաների կատարած լավ գործերը, բայց գրում էր, որ նրանց բացասական գործերի մասին լռելը կնշանակեր՝ թշնամություն երկրի նկատմամբ: Թերթն անբարոյական էր համարում

այն երևույթը, որ Թուրքիայում պետական բարձր պաշտոններ էին շնորհվում բոլորի կողմից իբրև հանցագործ ճանաչված մարդկանց: «Ներկայիս կառավարութիւնը դարձեալ ընդունում է ժողովրդին ինչպէս մի անկամ զէրոյի հասարակ դանդաղածի...Ինչու՞ չէ. դափն էլ ձերն է, զուռնան էլ, չալէ՛ք ու խաղացէ՛ք: Աստված սիրէ՛ք, ու՞ր են տանում մեր պաշտօնեաները. դէպի լեռնե՞ր»,- այս եզրահանգմանն էր գալիս շաբաթաթերթը (1910, թիվ 4, էջ 9): «Աշխատանքը» Թուրքական կառավարությանը կոչ էր անում ժողովրդին չհասցնել այն վիճակին, որ նա ապստամբի: Հակառակ դեպքում կառավարությունն ուժային կառույցներ պիտի ներգրավեր այդ գործընթացում. «Իթթիհատականները սովորած են նրանց հետ խօսել թնդանօթների լեզուով» (1911, թիվ 7, էջ 15): Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար «Աշխատանքն» առաջարկում էր լուծել Թուրքիայի առջև ծառացած երեք առաջնահերթ հիմնախնդիր.

- կյանքի և ունեցվածքի ապահովագրության հարցը,
- հողային հարցը,
- ճանապարհային և այլ կարգի հաղորդակցության հարցը:

«Մեր երկրի բարեկարգման ու առաջադիմութեան իրական պայմանները նախ՝ սոքա են»,- գրում էր «Աշխատանքը» «Դրական պայման» խմբագրականում (1911, թիվ 21, էջ 4): Չկա շաբաթաթերթի որևէ համար, որում չլինեն հրապարակումներ մասնավորապես վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ: Այս առումով առանձնահատուկ էր «Աշխատանքի» մոտեցումը հողային հարցին: Այն շաբաթաթերթը ներկայացնում էր որպես ոչ միայն արևմտահայերին մտահոգող կենսական նշանակություն ունեցող ազգապահպան կարևոր հիմնախնդիր, այլև որպես մի հարց, որի լուծմամբ շահագրգիռ էին Թուրքիայում բնակվող բոլոր ազգերի հողի աշխատավորները: Թերթը համոզված էր նաև, որ Թուրքիայում հողային հարցի լուծմանը սպասում էին առաջին հերթին հայ և քուրդ ժողովուրդները (1910, թիվ 1, էջ 13): Բնորոշ է «Երգերը» վերնագրով վերլուծականը: Այս հոդվածում այն միտքն է արտահայտված, որ ժողովուրդը ցանկանում է ունենալ իր սեփական հողը և դրա վրա ստեղծված տնտեսությունը, հող, որի վրա կատարած իր աշխատանքի արդյունքը կարողանար վայելել (նույն տեղում): «Աշխատանքը» կառավարությունից պահանջում էր հիմնովին և արդարության

սկզբունքով վերջնականապես լուծել այս հարցը: Շաբաթաթերթը հետագա տարիների ընթացքում հողային հարցի հետ կապված մանրամասներ է տպագրել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում տիրող իրավիճակների մասին: «Աշխատանքը» նույնիսկ կոչով դիմել է ընթերցողներին, որ նրանք տեղեկություններ ուղարկեն խմբագրություն՝ իրենց բնակավայրերում հողի հետ կապված խնդրահարույց իրավիճակների գնահատմամբ: Եվ թղթակցությունների հոսք է սկսվում: Դրանք հիմնականում զետեղվում էին «Հողային վեճ» կամ «Հողային հարց» խորագրերի ներքո:

«Աշխատանքը» բարձրաձայնում էր նաև կրթամշակութային խնդիրների լուծման անհրաժեշտության մասին: Կրթական թեմաներով հոդվածներում անդրադառնում էր Վանի վիլայեթի գյուղական դպրոցների խնդիրներին և հանդես էր գալիս դրանց լուծման առաջարկներով: Այդ հոդվածները զետեղվում էին «Կրթական գործը գաւառներու մէջ» շարքում: Շաբաթաթերթին հատկապես մտահոգում էր Վանի Կեդրոնական վարժարանի ճակատագիրը, որը չունենալով համայնքի ֆինանսական աջակցությունը, կանգնած էր փակվելու առջև: «Աշխատանքն» առաջարկում էր հետևել եվրոպական զարգացած երկրների փորձին, որոնցում կային ազգային երկրորդական դպրոցներ, և հարց էր բարձրացնում՝ ստեղծել երկու ընկերություն, որոնք գումար կներդնեին Վանի Սանդխտյան և Կեդրոնական վարժարանների կարիքները հոգալու համար: «Ժամանակն է, որ հաւաքական ձեռնարկներով ամրապնդենք հայ կրթութիւնը, ազգային դաստիարակութեան գործը: Ահա գործունէութեան ասպարէզ մը, ուր կրնան մեծ գործ կատարել հասարակութեան բոլոր խաւերը հաւասարապէս»,- գրում էր շաբաթաթերթը (1913, թիվ 7, էջ 1): Կրթական հարցին նվիրված հոդվածներում «Աշխատանքը» մատնաշում էր առկա թերությունները, բացերն ու սխալները: Ասենք՝ այն, որ կոնկրետ Վանի վիլայեթի դպրոցներում կրթական գործը լիովին և ըստ հարկին չէր վերահսկվում ուսումնական խորհրդի, թաղական մարմինների, հոգաբարձուների և խնամակալների կողմից (1913, թիվ 33, էջ 4):

Ազգային դպրոցների բարեփոխման և բարենորոգման ծրագրերի քննարկումներից բացի, «Աշխատանքը» փորձում էր նպաստել աճող սերնդի հոգևոր-մշակութային մակարդակի բարձրացմանը:

Այդ նպատակով շաբաթաթերթը տպագրում էր և՛ ճանաչողական ու գիտահանրամատչելի հոդվածներ, և՛ զրույցներ արվեստի ու գրականության տարբեր խնդիրների վերաբերյալ: «Աշխատանքը» տպագրում էր ոչ միայն արևմտահայ և արևելահայ, այլև օտարազգի գրողների լավագույն ստեղծագործությունները: «Գրական ակնարկներ» շարքում շաբաթաթերթը բանավեճի հնարավորություն էր տալիս ժամանակի գրողներին՝ նրանց հուզող այն հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում էին մշակույթի ու գրականության զարգացման ուղիներին: «Աշխատանքը» համոզված էր, որ աշխարհաքաղաքական հանգամանքների բերումով երկու հատվածի բաժանված հայ ժողովրդին միայն գրական-մշակութային վերածնունդը հնարավորություն կտար, որ արևելահայն ու արևմտահայն ապրեին հոգևոր նույն ձգտումներով: «Մենք հաւատում ենք, որ մի գեղեցիկ օր հեռու ապագայում նոր սկսած կեանքը, նոր գրական վերածնունդը մեզ պիտի միացնէ, խորտակելով և լցնելով բոլոր բաժանող անջրպետները»,- գրում էր Օրիոնը (1910, թիվ 2, էջ 14): Հոդվածագիրը, սակայն, ծայրահեղության էր հասնում, երբ գրում էր, թե Կ.Պոլսում ստեղծված գրական ստեղծագործությունները չեն արտացոլել ժողովրդի կյանքը, նրա իղձերն ու ձգտումները, թե դրանք կտրված են մայր գրականության ակունքներից (նույն տեղում, էջ 15):

«Աշխատանքը» գտնում էր, որ արևմտահայությանը մտահոգող հողային, կրթական և այլ կարգի հիմնահարցերը լուծելու համար հարկավոր է ուժեղացնել հայ համայնքը, կապել գավառը Կ.Պոլսին, համախմբել արևմտահայության ուժերը և Թուրքիայում իրենց ընձեռված հնարավորությունների սահմաններում փորձել նախ՝ փնտրել, գտնել չարիքներից ձերբազատվելու միջոցները, ապա՝ աշխատել գործնական լուծում տալ դրանց: Ազգային կառույցների և գործիչների հասցեին «Աշխատանքի» էջերում հնչող մեղադրանքներն անհիմն չէին, թեև հաճախ ունեին անհարկի խստություն և պահանջկոտություն: Թերթը մի կողմից՝ ներկայացնում էր ազգային կյանքը կառավարող մարմինների աշխատանքներն իրենց գրական ու քաղաքական կողմերով, մյուս կողմից պարզաբանում դրանց հակասությունները և բախումները Թուրքիայի համապատասխան պետական օղակների հետ, ինչի արդյունքում

ձախողվում էին նրանց գրեթե բոլոր կարևոր ձեռնարկները և ազգի հոգևոր առաջընթացն ապահովող ծրագրերը: Շաբաթաթերթը լուսաբանում էր թե՛ օսմանյան խորհրդարանի (Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթից կատարված արտատպումներով), թե՛ Վանի Ազգային Գավառական ժողովի, թե՛ ազգային կյանքը կառավարող մնացած կառույցների աշխատանքները: 1913 թ. 29-րդ համարից (հունիսի մեկից) սկսած՝ շաբաթաթերթը խմբագրականները տպագրում էր զուգահեռաբար թուրքերենով՝ թուրք ընթերցողների համար: Բացվում են նաև նոր խորագրեր՝ «Հողագրաւումներ», «Գաւառի և Վանի կեանքը», «Եւրոպա և հայկական հարցը», «Վիճակագրական», «Երեսփոխանական ժողով» և այլն: Ուշագրավ են Ազգային գավառական ժողովի աշխատանքների վերլուծությունները, որոնք ոչ միայն պատկերացում էին տալիս 1910–1915 թթ. Վանի վիլայեթի ազգային ներքին խնդիրների մասին, այլև հնարավորություն էին ընձեռում ընթերցողներին ծանոթանալ «Աշխատանքի» տեսակետներին ու առաջարկներին: Ըստ այդմ՝ 1913–1914 թթ. այդ ժողովում քննարկվող հասարակական ամենամեծ հնչեղություն ունեցող հարցը ժողովրդի արտագաղթն էր իր բնօրրանից: «Արտագաղթը» վերնագրով հոդվածաշարի հեղինակ Ի. Միքայելյանը ներկայացնում էր արտագաղթի հիմնական պատճառները.

- աշխատանքի բացակայությունը,
- քաղաքական անորոշ կացությունը և անապահովությունը,
- հաղորդակցական միջոցների պակասը,
- առաջացած տնտեսական տագնապը (1913, թիվ 36, էջ 13):

1913 թ. վերջերին և 1914 թ. սկզբներին, գիտակցելով, որ եվրոպական դիվանագիտությունն իր շահն էր հետապնդում, «Աշխատանք»-ը կարծում էր, որ ամեն դեպքում պիտի շարունակվեր պայքարը՝ հայկական նահանգների բարենորոգման ծրագրի իրականացման համար, իսկ հայ ժողովուրդն անցյալի դառն ու արյունոտ փորձերից հետո իրավունք ուներ չհավատալու թուրքական իշխանությունների անկեղծությանը: Ցավալի փաստ է այն, որ 1915 թ. փետրվարին Վանի երեսփոխան Օ. Դերձակյանը (Արշակ Վռամյան) Թուրքիայի ներքին գործերի նախարարություն ուղարկած նամակում դեռևս չէր կորցրել հույսը, թե հնարավոր էր համերաշխություն հաստատել և վստահության ոգի ներարկել հայ ժողովրդի մեջ՝

կյանքի ապահովության համար: Նա գրում էր. «Ոչ մէկ կողմը բան մը կրնայ շահիլ, եթէ ծածկուի սա իրողութիւնը, թէ հայ զինուորներու զինաթափումը, հայ ամելէներու ստրուկի նման աշխատցուիլը, տեղական իշխանութեանց անհարկի խստութիւնները եւ տեղի ունեցած ջարդերն ու թալանները ակամայ կուգան նորոգել յուշերը 1895–1896-ի համիտեան սեւ օրերուն: Ատանայի ջարդը, հողային և այլ կարգ մը խնդիրներու առկախ մնալը այն կասկածը ներշնչեցին հայերու մէջ, թէ դժոխային նպատակ մը կը սնուցուի հայ ժողովուրդի բուն իսկ գոյութեան դէմ» (1915, թիվ 23, էջ 2):

1915 թ. ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը թուրքերը ծուղակ են լարում ու ավազակաբար սպանում են իրենց իսկ խնդրանքով ապստամբած այգեստանցիների հետ հաշտության բանակցությունների գնացած Իշխան Միքայելյանին: Նրա նահատակությունից հետո «Աշխատանքի» խմբագիր-հրատարակիչն է դառնում ՀՅԴ հայտնի գործիչ Հմայակ Մանուկյանը, իսկ շաբաթաթերթը հրատարակվում է շաբաթական երկու անգամ՝ չորեքշաբթի և շաբաթ օրերին: «Աշխատանքն» այս շրջանում հիմնականում անդրադառնում էր հայ ժողովրդի ցեղասպանությանը՝ նորաբաց «Կացութիւնը գաւառներու մէջ» խորագրի ներքո: Օրագրային հրապարակումների ձևով ներկայացնելով Վանի 30-օրյա ինքնապաշտպանությունը՝ շաբաթաթերթը ձգտում էր ազատագրական պայքարի ոգի ներարկել ընթերցողների մեջ:

ՀՆՉԱԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

(«ՄԱՐՏ», «ՆՈՐ ԿԵԱՆՔ» 1898–1902)

1887 թ. Ժնևում ստեղծված Հնչակյան կուսակցությունը 90-ական թվականների կոտորածներից հետո ուղղակի ճգնաժամ էր ապրում: Ստեղծված կացությունը փրկելու և ճգնաժամից դուրս գալու նպատակով, հնչակյանները 1896 թ. հունվարին Լոնդոնում հավաքեցին համագումար: Այն ընթացավ սուր վիճաբանություններով: Պատգամավորների մի մասը (Միհրան Տամատյան, Արփիար Արփիարյան, Անտոն Ռշտունի, Միհրան Սվազլյան, Հրաչյա Մարում, Վահան Թերզյան, Վահե Արդույան, Լևոն Մկրտիչյան և ուրիշներ)

կարծում էր, որ այսուհետև պետք է հրաժարվել մասնակի կռիվներից ու ցույցերից, քանի որ դրանք չեն կարող «օգտակար ըլլալ ապստամբական գործին»[1], որ ցուցարարական կռիվները միայն վնասում են ժողովրդին, անհրաժեշտ է դադարեցնել դրանք և պատրաստվել ընդհանուր ապստամբության: Նրանք պահանջում էին նաև ծրագրից հանել «սոցիալիզմ» արտահայտությունը, Հնչակը կոչել «Հայկական ազգայնական կուսակցություն», պատճառաբանելով, որ նախ՝ եվրոպական կառավարությունները թշնամաբար վերաբերվելով սոցիալիստական կուսակցություններին, չեն օգնի հայերին, և երկրորդ՝ Հնչակն իր բախտը կապելով սոցիալիզմի հետ, լիովին վերացնում է Հայկական հարցը: Այս պատգամավորների կարծիքով, պետք է հրաժարվել հայ հասարակությունը դասակարգերի բաժանելու գաղափարից, քանի որ այն ջլատում է ազգային ուժերը և խանգարում ազատագրական պայքարին:

Պատգամավորների մյուս մասը՝ Ավետիս և Մարո Նազարբեկյանների ղեկավարությամբ, պնդում էր պահպանել կուսակցության նախկին ծրագիրը, չհրաժարվել «սոցիալիզմ» արտահայտությունից, ընդունել հայ հասարակության՝ դասակարգերի բաժանման փաստը, արևմտահայությանը չհակադրել հայության մյուս հատվածներին, վերջապես, կուսակցությունից վտարել Արփիար Արփիարյանին:

Տարաձայնություններն այն աստիճան սրվեցին, որ Մ. Տամատյանը, Ա. Արփիարյանը, Լ. Մկրտիչյանն ու նրանց կողմնակիցներն անջատվեցին հին Հնչակյաններից և 1897 թ. ստեղծեցին իրենց կուսակցությունը՝ այն անվանելով Վերակազմյալ Հնչակյան: Հնչակյանների այս թևն ընտրեց իր կենտրոնը, որի մեջ մտան Ա. Արփիարյանը, Վ. Թեքեյանը, Վ. Արզումանյանը, Լ. Մկրտիչյանը, Մ. Տամատյանը, Մ. Սվաջյանը և ուրիշներ: Նրանք իրենց կազմակերպությունները ստեղծեցին Փոքր Հայքում, Կիլիկիայում, Կ. Պոլսում և հրատարակեցին «Նոր կեանք», «Մարտ», «Ձայն հայրենեաց», «Ազգ», «Ազատամարտ», «Պահակ», և այլ պարբերականներ:

Առավել հայտնի էին «Նոր կեանք» հանդեսը և «Մարտ» ամսագիրը, որոնք լույս էին տեսնում Խմբագրական կոլեգիա ստորագ-

---

[1] Պատմութիւն սոցիալ-դեմոկրատական հնչակեան կուսակցութեան, հ. Ա., Պէյրութ, 1962, էջ 268–269:

րությամբ, Լոնդոնում, սակայն դրանց հրատարակման գործում մեծ դեր էր խաղում արևմտահայ նշանավոր գործիչ Ա. Արփիարյանը:

Ա. Արփիարյանը ծնվել է 1851 թ. դեկտեմբերի 21-ին, Սամսուն քաղաքում: Սովորել է Կ. Պոլսի Թարգմանչաց և Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարաններում (այստեղ աշակերտել է Ղ. Ալիշանին): 1876-ին մի խումբ երիտասարդների հետ հիմնել է «Արարատյան ընկերություն հայոցը»: 1878-ից թղթակցել է «Մշակին» մոտ 30 տարի՝ «Հայկակ» ծածկանունով: Հանդես է եկել նաև «Հրացան», «Սկէպտիկ», «Հրդեհ» և այլ կեղծանուններով: Իր բազմաթիվ հոդվածներում արծարծել է արևմտահայության հուզող տնտեսական, քաղաքական և մշակութային կենսական հարցեր, պատկերել թուրքական բռնակալության լծի տակ հեծող հայ ժողովրդի կյանքը, գոյապայքարը: Արփիարյանը քննադատել է եվրոպական դիվանագիտության երեսպաշտությունը հայկական դատի վերաբերյալ, հարել ռուսական կողմնորոշմանը: 80-ական թթ. սկզբներին տպագրել է առաջին գեղարվեստական երկերը: 1884-ին մասնակցել է «Արևելք» օրաթերթի հիմնադրմանը, 1887–1889 թթ. խմբագրել «Մասիս» պարբերականը, 1891–1895 թթ.՝ «Հայրենիք» թերթը: Իր շուրջն է համախմբել տաղանդավոր գրողների (Գ. Զոհրապ, Տ. Կամսարական, Լ. Բաշալյան, Հրանտ Ասատուր, Մելքոն Կյուրճյան և ուրիշներ): Խուսափելով թուրքական կառավարության հետապնդումներից՝ 1896-ին անցել է արտասահման, եղել է Լոնդոնում, Կահիրեում: 1895-ին մտել է Հնչակյան կուսակցության շարքերը: 1898–1902-ին խմբագրել է «Նոր կյանքը», 1897–1901-ին՝ «Մարտը» (Լոնդոն): 1902-ին հրատարակել է «Հայ հանդեսը» (Վենետիկ), 1905-ից խմբագրել է «Շիրակը» (Կահիրե): Սպանվել է 1908 թ. փետրվարի 12-ին, Կահիրեում, ահաբեկչի ձեռքով[1]:

Այն բանից հետո, երբ Ավ. Նազարբեկյանը Լոնդոնի դատարանի միջոցով կարողացավ պահպանել իր իրավունքը «Հնչակ» թերթի նկատմամբ, վերակազմյալները 1897 թ. ապրիլի 15-ից Լոնդոնում սկսեցին հրատարակել «Մարտը», հայտարարելով, որ «Հնչակ» թերթը դատական վճռի մը համեմատ անձի մը անհատական սեփակա-

[1] Հակոբյան Ա., Արփիար Արփիարյան, Վիեննա, 1922, Սահակյան Գ., Արփիար Արփիարյան Ե., 1955, Սարգսյան Գ., Նոր լրագրությունը Կ. Պոլսում 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 2009:

նութիւնը նկատուելով կուսակցութեանս պաշտօնական թերթը ասկէ ետքը պիտի հրատարակուի «Մարտ» անունով» («Մարտ», 1897, թիվ 1): Ա. Արփիարյանը «Մարտում» տպագրում էր ոչ միայն ծավալուն ու բովանդակալից, իրենց կուսակցության հավատամքն արտահայտող խմբագրականներ, այլև զանազան հոդվածներ, ակնարկներ, հրապարակումներ: Այլ խոսքով, նա թերթի ոգին էր, հենասյունն ու անփոփոխ քարոզիչը:

Թերթը ծավալով մեծ չէր, ընդամենը 4 էջ, սակայն գրեթե բոլոր համարներում մեծ տեղ էր հատկացվում նախորդ հնչակյանների (կամ ինչպես վերակազմյալներն էին անվանում՝ ժնեւցի-կովկասցիների) գործունեության մանրամասն վերլուծությանն ու, իհարկե, սուր քննադատությանը, ինչպես նաև արտահայտում սեփական տեսակետները արևմտահայոց փրկության ուղիների մասին:

Իրենց համարելով իսկական կուսակցականներ, իսկ «Մարտ» թերթը՝ կուսակցության իսկական օրգան, վերակազմյալները նույնիսկ չէին նշել թերթի լույս ընծայման նպատակը, խնդիրները, միայն չեշտել էին, որ «Հնչակի» համեմատությամբ կլինեն որոշ փոփոխություններ: Այսպես, նրանք այլևս իրենց դրոշակի վրա չէին ուզում տեսնել «Մահ կամ ազատություն» պատվիրանի «Մահ» բառը. «Ազգային ազատութիւնը կբավէ մեզի, աւելորդ է ազգային մահը»: «Պէտք չի մահը նպատակակետ ընտրել,- գրում էին նրանք,- հարկաւոր է խելքով գործել նպատակին հասնելու համար, խելքը ուժանակ մըն է, որ կփշրէ ամէն ժայռ» (1897, թիվ 1):

Քննադատելով հնչակյաններին՝ թերթը զայրացած գրում է. «Հայի ու Թուրքի մէջ պատերազմ է մղուում... բաւական եղաւ Թուրքը կը գործէ, հայը կը խօսի», հիշեցնելով մոտ անցյալում նրանց այն սխալ տակտիկայի մասին, երբ դեռ ոչինչ չարած՝ հոխորտանքներ էին թափում թուրքական իշխանությունների հասցեին, դրանով իսկ նրանց զգուշացնելով մոտակա վտանգի մասին (ինչպես եղավ Սասունում, Վանում, Բաղեշում): «Հեշտ է Լոնդոն-ժնեւներից սպառնալիքներ տեղալ, այլ հարկաւոր է ուրիշ ժողովուրդների նման թաքուն նախապատրաստել և յանկարծակի յարձակուել»: Ավելորդ շատախոսությունը «կրնայ մատնութիւն մը համարուել անցեալին մէջ և դաւադրութիւն ներկայիս համար»: Ըստ «Մարտի», հայ ժողովուրդն իր ազատության հարցը կարող է լուծել միայն նախա-

պատրաստված համազգային հեղափոխության միջոցով: Հայ ժողովուրդը «պէտք չէ իրարու չփոթէ «իրարանցումը» և «յեղափոխութիւնը»: «Հոն, ուր որ ժողովուրդը զէնքը ձեռքը ինք չի կռուիր, հոն յեղափոխութիւն չկայ: Անհատական քաջագործութիւնները, տակաւին խումբերու ձեռնարկները յեղափոխութիւն չեն» (1897, թիվ 6):

«Մարտի» տեսաբանները, փնտրելով ազատագրության ուղիներ, երբեմն անդրադառնում էին այլ ժողովուրդների պատմությանը, փորձում վերջիններիս օրինակով առավելեցնել պայքարել, լավագույն արդյունքի հասնելու համար օգտագործել նրանց փորձն ու զերծ մնալ սխալներից: «Լաւագոյն դրօշակը» խորհրդանշական վերնագրով խմբագրականում (1897, թիվ 2) զուգահեռներ է անցկացվում Իտալիայի և Հայոց ազատագրության ուղիների ու միջոցների միջև: «Իտալիոյ ազատութեան ամբողջ պատմութիւնը,- գրում է պարբերականը,- կը մարմնացնեն Կարիպալտին, Քաւուր և Վիքթոր Էմմանուէլ»: Գարիբալդին մարմնավորում է ամեն ինչ փշրող և միայն ավերակներ թողնող հեղափոխության: Իսկ Քաւուրը՝ «խորհող հանդարտ միտք» քաղաքագետը, պատրաստեց այն բոլոր հանգամանքները, որոնք նախապես ապահովեցին հեղափոխության հաղթանակը: Բայց սա էլ ամբողջը չէր լինի, եթե չլիներ Վիկտոր Էմմանուել թագավորը՝ «ներկայացուցիչ իտալական ազգին բարոյական և նիւթական ուժերու»: Ոչ պակաս կարևոր գործոն էր համարվում այն, որ իտալացիները սպասեցին հարմար պահի: «Արդ մենք ալ ապահովինք սա պայմանները և սպասենք»,- ընդգծվում է խմբագրականում: Չմոռանալով քննադատել իրենց նախորդներին այդ երեք անհրաժեշտ պայմաններից և ոչ մեկը չապահովելու և Լոնդոնից միայն հոխորտանքներ տեղալու, իսկ պարտությունից հետո հուսահատ ու մառամոլոր կեցվածքի համար, թերթը եզրակացնում է. «Դրամի, խելքի, անձնուիրութեան երեք միացած ուժերու Լաւագոյն դրօշակին առաջնորդուելով, Հայ ազգը դեռ կրնայ լաւագոյն ապագայ մը յուսալ» (1899, թիվ 18):

Պատմական մտքի անցյալի դեպքերին անդրադառնալով, պարբերականը նշում էր, որ դիվանագիտությունը, որքան էլ լինի խելացի ու խորաթափանց, չի կարող պահպանել ու փրկել ժողովրդին: Անհրաժեշտ է նաև նյութական ուժ. «Անկախ ազգերու համար այդ ուժը բանակ մը կը կոչուի, գերութեան մէջ տառապողներուն

համար՝ յեղափոխութիւն»: Ուստի, անհրաժեշտ է «սիրել այդ բանակը, զօրացնել զայն և անոր կրթնիլ, անոր աջակցութեամբը Եւրոպան մեզի համար նպաստաւորել, ահա ինչ որ ազգին մեծութեանը գլխաւոր նպատակները պէտք է ըլլան» (1899, թիվ 18):

Պարզելով իր հայացքները հեղափոխության, նրա շարժիչ ու ղեկավար ուժերի մասին, թերթը գրում է. «Մեր յեղափոխութիւնը ոչ թէ պետական, այլ ազգային է: Ամենքս ալ, որովհետև հայ ենք, հաւասարապէս կը հալածուինք՝ առանց որևէ խտրութեան: Կուսակալներն ու խուժանը հաւասարապէս կը կողոպտեն հարուստ հայը, ինչպէս հարկահանները հազիւ հացի մը ստակ ունեցող հայը» (1899, թիվ 19):

Ապա նշվում է, որ կուսակցությունը բարեփոխել է իր ծրագիրը, հրաժարվել դասակարգերի մասին դրույթից, «ընկերվարական դաւանանքը» և թողել զուտ «ազգային ազատութեան դատը»: «Յեղափոխութիւնն ամեն հայու բարեկամ, ամեն հայ յեղափոխութեան բարեկամ: Այս է Ազգային յեղափոխութեան նշանաբանը» (1901, թիվ 28):

«Մարտի» կարծիքով, կուսակցության ծրագրերից պետք է հանել այն ամենը, ինչ կարող է մասնատել ազգը. «Մեր ձգտումն է մեր հայրենիքի համար իր բոլոր զաւակներէն մէկ բանակ կազմել մեր դրօշակով, որուն վրա արիւնազարդ տառերով գրուած ըլլայ «Թշնամին Թուրք վարչութիւնն է»: Ու ամեն հայ՝ հարուստ թէ աղքատ, գործաւոր թէ վաճառական, տգէտ թէ զարգացեալ, աշխարհական թէ հոգեւոր, բարի թէ չար, ամեն հայ այդ թշնամիին դէմ կռուելու կոչուի» (1900, թիվ 26): Հայ ազգն ունի ամեն ինչ՝ թե՛ խելք, թե՛ ուժ, թե՛ զգացում, թե՛ դրամ, թե՛ հայրենասիրություն և թե՛ այլ կարողություններ, հայտարարում էր պարբերականը: Անհրաժեշտ է միայն ունենալ մի կենտրոն, որ ղեկավարի դրանք, համախմբի, գրոհի տանի թշնամու դեմ ու հասնի հաղթանակի: Նորաստեղծ կենտրոնը կամ համազգային իշխանությունը «հզօրապէս պիտի կազմակերպէ ազգին բոլոր ոյժերը, ու թէ՛ կռուի դաշտին վրա, թէ՛ դիւանագիտութեան առաջ պիտի պաշտպանէ հայ ազգը եւ անոր ազատագրութիւնը պիտի ապահովէ»:

Պատմությունը դժար է դրել հարցը, գտնում է թերթը, «ո՛չ հայ յեղափոխականին սուրը այլեւս իր պատեանը կը դառնայ, ո՛չ

ալ Թուրք իշխանութեանը: Պատերազմը անդուլ, անդադար յարատեւութեամբ պիտի շարունակուի, մինչեւ որ կռուողներէն մէկը տեղի տալու պարտաւորուի: Եթէ մենք տեղի տանք, այդ օրը Հայութեան «բնաջնջումին ղողանջը պիտի լսուի» (1900, թիվ 26):

Քարոզելով ազգային ուժերի համախմբման գաղափարը, թերթը նկատի ունէր բացառապէս արևմտահայութեանը, իսկ արևելահայերի միջամտութիւնը համարում էր վնասակար. «Եթէ Թուրքիոյ հայերը ընդունակ չեն իրենց մէջ ոյժ գոյացնելով ղեկավարել իրենց գործերը, անօգուտ է, եւ մինչեւ իսկ վնասակար, բնական ճամբէն դուրս գործելու մղել զիրենք Ռուսիոյ հայերուն միջոցով: Իսկ եթէ Թուրքիոյ հայերը հասած են այն զգացումին, որով կարող են խորհիլ ինչ որ իրենց պէտք է եւ գործել անոր համեմատ, ան ատեն միտք չունին Թուրքահայերու վերին տեսչութեանը» (1897, № 3):

Պատմական անդրադարձ կատարելով թերթը նշում է, որ Գր. Արծրունին անցյալում աջակցում էր արևմտահայերին (հոգևոր առումով իր «Մշակով» և նյութապես՝ հավաքելով և արևմտահայերին որպես օգնություն փոխանցելով ավելի քան 100.000 ռուբլի գումար), բայց առանց միջամտելու նրանց գործերին, գտնելով, որ եթե նրանք ի զորու չեն ազատագրվելու, դրսից ոչինչ անել հնարավոր չէ, որ արևմտահայերն իրենք ավելի լավ գիտեն, ավելի պարզ են պատկերացնում իրենց անելիքները: Այդպես չեն վարվում ժնևցի կովկասահայերը: Նրանք ոչ միայն միջամտում են արևմտահայերի գործերին, այլև ձգտում են ղեկավարել նրանց շարժումները, առանց ճանաչելու Արևմտյան Հայաստանը, նրա վզին փաթաթում սոցիալիզմի վարդապետությունը: Նրանք կամենում են մոռացության տալ հայրենասիրությունը և այն փոխարինել ընկերվարությամբ, ձգտում են ոչ թե համախմբել ազգը, այլ պառակտել: «Հնչակը» «մոռցնել էր տալիս հայրենասիրութիւնը, անոր տեղը կը դնէր «սոցիալիզմը», ժողովուրդին համախմբելու փոխարէն «անոր դասակարգերու կը բաժանէր»: Նրանց գործունեությունը աղետաբեր եղավ շատ արևմտահայերի, հատկապես վասպուրականցիների համար: Արևմտահայերի «բոլոր դժբազդութիւնները Կովկասի Հայոց ձեռներեցութեան հետեւանք են» (1898, թիվ 14):

«Մարտը» գտնում է, որ եվրոպական տերությունների օգնությունն անհրաժեշտ է արևմտահայության ազատագրության համար,

բայց միայն այդ հույսով չպետք է ապրել. հարկավոր է ծավալել նաև ազգային ակտիվ գործունեություն: «Հայկական դատը կորսուած պէտք է համարենք, եթէ հայ ազգը իր ամբողջ գործունէութիւնը դիւանագիտական և օրագրական աշխատութեանց նուիրէ» (1901, թիվ 28): Թերթը պատմական փաստերով ցույց է տալիս, որ Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդները իրենք են ձեռնարկել իրենց ազատագրության գործը, իսկ Եվրոպան օգնության է հասել «միշտ վերջին պահուն» (1899, թիվ 16): Պատասխանելով այն առարկումներին, թե Թուրքիան օգտվում է տերությունների հակասություններից և պահպանում իր ամբողջականությունը, և, հետևաբար, արևմտահայության ազատագրումը անհնարին է, թերթը նշում է. «Եւրոպացիները ատեն մը իրարու հետ կ՚իյնան, բայց օր մըն ալ համաձայնութեան մը կը հանգին Թուրքիոյ մորթին վրա»: «Մարտը» հավատացած էր, որ Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան վերջին հաշվով պետք է Թուրքիան մասնատեն կամ այնտեղ անցկացնեն վարչական բարելավումներ: Ուստի, «մեզի՝ հայերուս կը մնայ բաւական արթուն ու խելացի գտնուիլ, որպէսզի ոչ միայն վատթար վարչութեան լուծէն ազատինք, այլև օտարազգի դրամատէրերուն ստրուկներն ալ չդառնանք» (1899, թիվ 17):

«Հայկական խնդիրը և Ռուսիոյ քաղաքականութիւնը» խմբագրական ծավալուն հոդվածաշարով անդրադառնալով Ռուսաստանին, պարբերականը գրում է, որ նրա քաղաքականությունը հայերի համար եղել է «շատ փոփոխական՝ մերթ նպաստաւոր, մերթ աննպաստ» (1898, թիվ 9), որ ունենալով վարպետ դիվանագիտություն, Ռուսաստանը մասնակցում էր թե՛ Բալկաններում և թե՛ Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին (1897, թիվ 7): Թերթի կարծիքով, Ռուսաստանը ուզում է գավթել Թուրքիան, իսկ վերջինս իր պաշտպանության համար պետք է բարելավի արևմտահայերի կացությունը, դարձնի նրանց իր բարեկամները և այդպիսով իր ու Ռուսաստանի միջև ամուր պատնեշ ստեղծի:

«Թուրքիոյ կործանումը Ռուսիոյ նպատակն է եղած, է՛ և պիտի ըլլայ, այդ նպատակը անփոփոխելի է, սակայն անոր հասնելու միջոցները՝ փոփոխական, ուստի կրնայ պատահիլ որ այդ «միջոցները» նպաստաւորեն մեր ազգային շահերն ալ, բայց կրնան անոնց ալ հակառակիլ: Մեզի կը մնար, և դեռ կը մնայ, մեր ազգային շա-

հերը չստրկացնել պետութեան մը, որքան ալ մեծ ըլլայ ան քաղաքական չահերուն» (1898, թիվ 9): Իսկ եթե Թուրքիան շարունակի հակահայկական քաղաքականությունը, «տարակոյս չի կայ, թէ ամբողջ հայութիւնը գիտակցօրէն գործող գործիք մը պիտի ըլլայ Ռուսիոյ ձեռքերուն մէջ Թուրքիոյ քայքայման նպատակին վաղընդփոյթ յաջողման համար» (1900, թիվ 23):

Այս է հիմնական բովանդակությունը «Մարտ» թերթի, որը հրատարակվեց ընդամենը չորս տարի, սակայն ունի իր նշանակալից դերը հայ մամուլի պատմության ընդհանուր կտավի վրա: Իսկ այն ամբողջական կլիներ, եթե պահպանված և մեզ հասած լինեին հրատարակված բոլոր համարները:

«Նոր կեանք» ամսագիրը (1898–1902 թթ., Լոնդոն) եա Վերակազմյալ հնչակյան կուսակցության օրգանն էր: Ուներ խմբագրական մարմին, սակայն, ըստ էության, գլխավոր խմբագիրն ու հիմնական գաղափարախոսը դարձյալ Արփիար Արփիարյանն էր: Այս պարբերականը լույս էր տեսնում ամիսը երկու անգամ՝ յուրաքանչյուր ամսվա 1-ին և 15-ին: «Մարտ» թերթը և «Նոր կյանքը» կանգնած լինելով միևնույն «գաղափարական դետինին վրա», ըստ էության լրացնում էին միմյանց: Կար մի չնչին տարբերություն՝ «Նոր կեանքը» «Մարտի» նման լինելով ազգային, քաղաքական հրատարակություն, նաև գրական հանդես էր և միշտ հավատարիմ էր մնում իր այդ կոչմանը՝ մեծ տեղ տալով գեղարվեստական ստեղծագործություններին: Ճանաչողական մեծ արժեք ունեն հայկական հարցի վերաբերյալ տեսությունները և ազգային կյանքին նվիրված նյութերը:

Իր առաջին համարներից մեկում «Նոր կեանքը» արևմտահայերի պատապրությունը տեսնում էր Թուրքիայի կազմում հայկական ինքնավարության ստեղծման մեջ:

Վերակազմյալները խոսելով համազգային հեղափոխության կամ ապստամբության մասին, հանդես էին գալիս որպես բարենորոգումների քարոզիչներ, որովհետև պահանջում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի սահմաններում՝ եվրոպական վերահսկումով: Նրանք չունեին ազգային ծրագիր, չէին խոսում Արևմտյան Հայաստանում հողային բարդ ու կնճռոտ հարցի լուծման մասին: Իրենց կարծիքով, այդ նպատակին հասնելու համար հայերը

պետք է համախմբվեն, միավորվեն՝ առանց դասակարգային տարբերության կամ խտրականության: Ազգի փրկությունը «ազգային մէկ ծրագրէ և միասիրտ աշխատութենէ կախում ունի» (1899, թիվ 1, էջ 2): Նկարագրելով կոտորածներից հետո հայերի դժնդակ կացությունը, ամսագիրը գրում է. «Ամենքս ալ ըմբռնած ենք, թէ կրթութեամբ չէ միայն, որ ազգութիւննիս պիտի պահպանենք, բարոյացմամբ չէ միայն, որ ապագանիս պիտի ապահովենք, քաղաքականութեամբ չէ միայն, որ մեր իրաւունքներուն պիտի տիրանանք, նիւթական զօրութեամբ չէ միայն, որ պիտի յաղթանակենք:

Փրկութեան գրաւականը ազգային ամէն ոյժերուն միաբան գործավարութեամբ պիտի ապահովուի» (1901, թիվ 5, էջ 50):

Այնուհետև ամսագիրը շարունակում է. հայը պետք է իմանա, որ «իր փրկութիւնը իրմէն միայն կախում ունի», որ նա «ամէն բանէ առաջ, ամէն բանէ աւելի... պէտք է ինքն իր վրայ վստահէր, իր սեփական ոյժին կռթնէր»: Հոգևորականները չպետք է քարոզեն հնազանդություն, հարուստները պարտավոր են բացել իրենց քսակը ազատության գործի համար: Ընդհանուր գործի համար չպետք է լինեն անտարբերներ ու չեզոքներ, փախուստի բոլոր դռները անհրաժեշտ է փակել, չպետք է ճանաչել դասակարգային խտրականություն, քանզի մենք բոլորս ստրուկներ ենք. «Պանքիր Մկրտիչը այնքան ստրուկ է, որքան բեռնակիր Մրտոն» (1901, թիվ 18, էջ 243):

Եթե հայը ներկա օրերում ևս շարունակի «իրարախոյս, իրարաւեր» վարքագիծը, ուրեմն արժանի է ոչնչացման: Պատմությունը թող նրա շիրմի վրա գրի. «Հոս կը հանգչի ստրուկ հայութիւնը... ջարդուելու արժանի ցեղ մըն էր» (1901, թիվ 19, էջ 276): Ազատությունը միշտ և ամենուր ձեռք է բերվել արյան գնով, «Հայ յեղափոխութիւնը բացառութիւն մը չի պիտի կրնար անշուշտ ստեղծել պատմութեան մէջ» (1901, թիվ 18, էջ 276): «Նոր կեանքը» գտնում է, որ հայ-թուրքական պատերազմը միայն այն ժամանակ կվերջանա, երբ սուլթանական իշխանությունները հրաժարվեն հայության բնաջնջման իրենց քաղաքականությունից և նրա համար կհաստատեն նպաստավոր վարչակարգ, այլապես «մեր ազգային կռիւը կը շարունակուի, ու պէտք չէ տարակուսել, թէ վերջնական յաղթանակը Թուրքիոյ իշխանութեան չի մնայ»: Արևմտահայության ազատագրման համար եվրոպական տերությունների օգնությունը անհ-

բաժնված է, բայց դրա համար հայերը պետք է իրենց ազգային պահանջները հարմարեցնեն եվրոպացիների շահերին: Վերլուծելով անցյալի դեպքերը, «Նոր կեանքը» սխալ չէր համարում Եվրոպայից օգնություն ստանալու գաղափարը. սխալ էր այն, որ հայերը, հույսը դնելով Արեւմուտքում «նստող» հայ «յեղափոխական վարիչներու վրա... և անոնց ապաւինելով պէտք չտեսան գոնէ առժամեայ ընդդիմադրութեան մը նախապատրաստութիւններ ընել» (1898, թիվ 14, էջ 212):

«Նոր կեանքը» անդրադառնում էր նաև կրոնի հարցերին և գրում, որ հայերը «իրենց ազգային կրօնքի մէջ կը փնտռեն իրենց ինքնապաշտպանութեան ապահովութիւններէն մէկը, և թերեւս գլխաւորը» (1899, թիվ 20, էջ 310): Արձանագրելով, որ հայության մեջ լուսավորչականների կողքին երևան են եկել կաթոլիկներ, ուղղափառներ և ուրիշ աղանդավորներ, հանդեսը նշում էր, որ դրա հետևանքով ներազգային հակասությունները ավելի են սրվում: Ամսագիրը հայության համախմբման գլխավոր պայման էր համարում համազգային գիտակցության արթնացումը: Համենայն դեպս, նրա վճռակն այնպիսին է, որ չի կարելի գրավվել կրոնական բզկտոցներով:

Պարբերականը արևմտահայության ազատագրության գործում կանգ էր առնում Ռուսաստանի դերի վրա և այն կարծիքն էր հայտնում, որ եթե Ռուսաստանը նվաճի Արևմտյան Հայաստանը, արևմտահայերը կորուստ չեն ունենա: Բայց Թուրքիան կարող է շատ բան կորցնել: Եվ որպեսզի նա անկորուստ մնա, պետք է բարեփոխի՝ ապակենտրոնացնելով բոլոր ժողովուրդներին, յուրաքանչյուրին ինքնավարության տալով (1898, թիվ 4, էջ 50):

Իհարկե, սրանով չեն սահմանափակվում ամսագրի ընդգրկած հարցերն ու քննարկած խնդիրները: Ավելացնենք նաև, որ վերակազմյալ հնչակյանները, անջատվելով հնչակյաններից, ուզեցին իրենց ձեռքը վերցնել հայկական գործը: Այդ նպատակով համախմբվեցին Արփիարյանի շուրջ, որը չպաշտպանեց ու առաջ չտարավ վերակազմյալների ձեռնարկումը: Հակառակորդները Արփիարյանին մեղադրում էին, որ նա հեղափոխական գործը վերածել է հրատարակչական ընկերության: Համենայն դեպս, նա իրենից վանեց կուսակցության կարող ուժերին և մնաց մենակ: 1901 թ. Ա. Արփիարյանը հեռացավ վերակազմյալ հնչակյանների շարքերից: Այս

հանգամանքն էլ դարձավ այն հիմնական պատճառը, որ իրար հետևից դադարեցին լույս տեսնել թե՛ «Մարտը» և թե՛ «Նոր կեանքը»:

«ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ» (1899–1911)

«Ձայն հայրենեացը» վերակազմյալ հնչակյանների հրատարակությունն էր: Այն լույս էր տեսնում 1899–1900 թթ. Նյու Յորքում, 1900 թ.՝ Ուստրում, 1900–1908 թթ.՝ Բոստոնում, իսկ 1908–1911 թթ.՝ Կ. Պոլսում: Նրա խմբագիր տնօրենն էր Գարեգին Ջիթչյանը, իսկ խմբագիրները՝ Սուրեն Պարթևյանը, Միսաք Սուրենյանը և Լևոն Լարենցը (Քիրիչճյան):

Թերթն իր էջերում հատուկ տեղ էր հատկացնում Արևմտյան Հայաստանից ստացված թղթակցություններին, որոնցում նկարագրվում էր թուրքահայերի անելանելի վիճակը, շեշտվում, որ հայ գյուղացին իր ոչինչի տերը չէր. ոչ ունեցվածքի, ոչ իր պատվի և ոչ էլ նույնիսկ՝ կյանքի: «Ձայն հայրենեացի» առաջնորդողներից մեկը, նկարագրելով արևմտահայության այդ անտանելի դրությունը, նշում էր, թե նրա փրկությունը կարող է կատարվել միայն հեղափոխության կամ ապստամբության միջոցով. «Համերաշխ ըմբոստացումին մէջ է, որ կը տեսնենք մեր դատին յաղթանակը» (նույն տեղում, 1902, թիվ 119): Բայց դրա համար պետք է նախապատրաստվել: Այդ ապստամբությունը հաջողությամբ չի պսակվի, եթե «չդիտենք պատրաստուել կռուէն առաջ» (նույն տեղում, թիվ 125):

Ավելի հստակ ու պարզորոշ նույն միտքն էր առաջ քաշվում թերթի նաև մի այլ առաջնորդողում. «Մենք մեզմէ պէտք է սպասենք մեր ազատութիւնը» (նույն տեղում, 1903, թիվ 229): Անհրաժեշտ է նախապատրաստել, զինել և ոտքի հանել ամբողջ ազգը, նրա բոլոր ուժերը: «Հաւաքական ճիգն է, որ վերջ պիտի դնէ «ազգային դժոխքին»: Մինչև «ժողովուրդը զէնքի չդիմէ, անկարելի է որևէ արդիւնաւոր վախճանի մը հանգիլ» (Նույն տեղում):

Օրաթերթը համախմբության կոչով դիմում էր հայ հասարակության բոլոր խավերին: Այն երիտասարդությանը հարցնում էր, թե նա «ե՞րբ պիտի սկսէ սարսռալ ազգային ցաւէն ու գրկանքէն, ե՞րբ պիտի իր լանջքն ու հոգին պարզէ ազգային խռովքին, ցայն

ընդունելու, ընդգրկելու, անոր ուխտելու համար» (1904, թիվ 260): Իսկ այնուհետև չժխտելով ազատագրության պայքարի բովում տապակվող շատ ու շատ երիտասարդ մարտիկների ինքնազոհությունը, կոչ է անում համայն հայոց երիտասարդությանը համախմբվել ազատության «սուրբ դրոշին ներքոյ», չխնայել ոչինչ, որ կարելի դառնա վերջապես իր ինչքին ու պատվին տեր դառնալ:

Շեշտելով հայ հասարակության մեջ եկեղեցու դերը, «Ձայն Հայրենեացի» «Շիկահեր» թղթակիցը պատմական էքսկուրս կատարելով և ցույց տալով, որ դարեր շարունակ եկեղեցին փոխարինել է պետությանը, գաղափարական հենք հանդիսացել ազգային ազատագրական պայքարի բազմաթիվ դրվագներում, հարց է բարձրացնում, թե ինչո՞ւ «այսօր ձայն կը լռէ» (1903, թիվ 232): Թերթը քննադատում է եկեղեցականներին այն բանի համար, որ նրանք քիչ են մասնակցել հայ «ազգային ազատագրութեան ճիգին», չեզոքութիւմբ «ինքզինքն հեռու պահած են անկէ...», ազատագրական շարժման վերելքի օրերին աշխուժացել են, իսկ վայրէջքի ժամանակ՝ հուսալքվել, թշնամու կողմն են անցել: Իրավ է, «եղած են հայ եկեղեցականներ, որոնք խաչի հետ սուրը բռնած կամ քարոզած են, ու կան ալ այսօր այդպիսիններ... Բայց ասոնք մատի վրա հաշւուող բացառութիւններ են: Հայ եկեղեցականութիւնը՝ գրեթէ իր ամբողջութեամբ՝ դեռ անշարժ ու անվրդով մը ունի հայ յեղափոխութեան յանդէպ» (1903, թիվ 232): Պարբերականը երազում էր, որ կգա մի երջանիկ օր, երբ հայ եկեղեցականները ժողովրդի մեջ հեղափոխության կքարոզեն, կդաշնակցեն հայ յեղափոխականների հետ, իսկ Երիմեան Հայրիկը կկանգնի «հայ յեղափոխութեան գլուխ» (1903, թիվ 233): Թերթի կարծիքով, հայ հասարակությունը պետք չէր բաժանել տարարնույթ դասակարգերի, որ ազատագրական պայքարում բոլոր խավերն էլ «միակամ են», մոռանալով, սակայն, որ իրականում այդպես չէր: Հասարակական-քաղաքական տեղաշարժերի ժամանակ էլ հասարակության յուրաքանչյուր խավ ունի իր որոշակի շահը, որով էլ թելադրվում է այդ խավի վարքագիծը: Այնպես, որ, չնչին բացառություններով հանդերձ, եկեղեցականները հազիվ թե կարողանային հեղափոխականներ դառնալ:

«Ձայն Հայրենեացը» համարից համար անդրադառնալով արևմտահայոց ճակատագրին ու նրա ազատագրության հարցին, կոչ էր

անում համախմբվել ազգային պայքարի դրոշի ներքո ոչ միայն հասարակության բոլոր խավերին, այլ նաև հայության բոլոր հատվածներին: Թերթը գտնում էր, որ արևմտահայ ազատագրական պայքարին պիտի մասնակցեն նաև արևելահայերը: Նրանք կարող են, եզրակացնում է թերթը, այդ պայքարում «վճռական դեր ու արգասանդ բաժին» ունենալ (1903, թիվ 218): Իսկ հայության մյուս հատվածները չպետք է լուռ ու մունջ հետևեն այդ պայքարին, այլ պիտի զորավիգ կանգնեն «կռուի դաշտում տառապողին»՝ ինչով կկարողանան: Կոնկրետացնելով խոսքը գաղութահայության և մասնավորապես ամերիկահայության մասին, պարբերականը գրում է, որ ազատագրական պայքարին զինվոր-մարտիկ պիտի տան բոլորը, անկախ որտեղ «կը բնակի հայը», իսկ «զինվորացու» չտվող ընտանիքները պայքարին պիտի սատար կանգնեն նյութական և մյուս բոլոր հնարավոր միջոցներով: «Երկրէն հեռանալը ազգէն հեռանալ չպիտի նշանակէ»,- եզրակացնում է պարբերականը (1903, թիվ 221): Թերթի կարծիքով, պետք էլ չէ մյուս ծայրահեղության մեջ ընկնել: Հայոց մյուս հատվածները պիտի օգնեն, զորավիգ լինեն արևմտահայոց ազատագրական պայքարին և «անհարկի միջամտութիւն-ղեկավարումներով» չխանգարեն «անոնց սրբազան գործին»:

Անդրադառնալով զինատար խմբերին կամ Այսրկովկասից օգնության հասնող ուժերին, թերթը նշում էր. «Դուրսէն գացող խումբեր միայն այն ատէն կրնան օգտակար ըլլալ, երբ արդէն երկրի մէջ կռուի ամէն պատրաստութիւններ եղած են ու կռիւն սկսուած է»: «Այս է ահա մեր հաւատամքը: Ատկէ դուրս որևէ յոյս, որևէ ճամբայ չկայ հայուն ազատութեան համար» (1903, թիվ 229):

Քարոզելով ազգային ուժերի համախմբման և համազգային ապստամբության գաղափարները, պարբերականը դատապարտում էր հին հնչակյանների դրույթը ընկերվարության կամ համայնավարության վերաբերյալ, նշելով, որ այն խանգարում է ժողովրդի միավորմանը և ազատագրական պայքարի հաղթանակին: Թերթի կարծիքով, մի քանի փոքրաթիվ դաշնակիցներ շահելով Եվրոպայում (նկատի ունի արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատական շարժումը) ընկերվարության գաղափարին հետևելով, հին հնչակյանները «շահում են» նաև բազմաթիվ ու բազմաքանակ թշնամիներ՝ հանձին եվրոպական իշխանությունների ու կառավարող բոլոր խավերի:

Սոցիալիզմի ուրվականը այնպես է վախեցրել Եվրոպայի հզորներին, որ նրանք միասին, մի կուռ բռունցք են դառնում անմիջապես, երբ «դէպքերը կը հասուննան»: Պարբերականը ի վերջո կոչ էր անում «Հայութեան բոլոր ույժերը համախմբել աշխատել՝ առանց կրօնական, հարանուանական ու դասակարգային խտրութեան...» (1904, թիվ 309):

Թերթը, մտածելով արևմտահայոց ազատագրության մասին, ուղիներ փնտրելով այն իրականացնելու համար և կոչ անելով հայության բոլոր հատվածների համախմբմանը, չէր մոռանում նաև հայության մյուս հատվածների ազատության խնդիրը: «Ձայն Հայրենեացը» գտնում էր, որ նախապես պետք է լուծել արևմտահայության հարցը և ապա մտածել պարսկահայության ու ռուսահայության մասին, քանի որ հայ ժողովուրդն ի վիճակի չէ միաժամանակ հանդես գալու երեք բռնապետությունների դեմ: Նախ պիտի պայքարել արևմտահայոց «որ առաջ» փրկության համար, քանի որ այնտեղ դրված է հենց հայի լինել-չլինելու խնդիրը, որի լուծմամբ արդեն հնարավոր կդառնա ռուսահայոց ու պարսկահայոց սոցիալական հարցերը կարգավորելու խնդիրը:

Թերթը չէր դնում Հայաստանը Թուրքիայից անջատելու խնդիրը: Արևմտահայության հարցի լուծումը տեսնում էր այն բանում, որ նա կարողանա «ինքնավար իշխանութիւն մը ձեռք բերել» (1903, թիվ 229):

1905 թ. «Ձայն Հայրենեացի» թղթակիցը Իշխան Սաբահէդդինի հետ զրուցելիս, շարադրելով վերակազմյալ Հնչակյանների տեսակետը Հայկական հարցի լուծման մասին, ասում էր. «Հայ յեղափոխական գործունեութիւնը երբէք ձգտած չէ անկախ Հայաստանի մը հաստատման: Հայ յեղափոխական կոմիտէները միշտ իրենց նպատակ ունեցած են համեստ ու հնարաւոր ծրագրի մը իրագործումը, Թուրքահայաստանի համար եւրոպական պետութիւններու քոնթրոլին տակ վարչական ինքնավարութեան մը ստանձնումը» (1905, թիվ 369): Իսկ հայերը անկախության չեն ձգտում ոչ թե նրա համար, որ չեն սիրում այն, այլ նրա համար, որ դա ներկա պայմաններում անհնարին են համարում,- շարունակում է թղթակիցը:

1908 թ. հեղաշրջումից հետո Վերակազմյալ Հնչակյանների մեծ մասը միացավ արմենականներին, որի արդյունքում ձևավորվեց

«Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը»: Բայց նրա փոքր մասը շարունակեց իր ինքնուրույն գոյությունը: Սահմանադրության հռչակումից համարյա անմիջապես հետո արտասահմանից Կ. Պոլիս ժամանեցին այս հնչակյանների ղեկավարներ Ալեքսան Արզումյանը (Վահե), Լևոն Լարենցը և ուրիշներ, բերելով իրենց հետ նաև իրենց օրգանը՝ «Ձայն հայրենեաց» շաբաթաթերթը: Սկզբնական շրջանում այն հրատարակվում էր Ներվանդ Զավուշյանի, ապա նաև՝ Աղեքսանդր Փանոսյանի (Ալփասլան) և այլոց խմբագրությամբ ու աշխատակցությամբ:

«Ձայն հայրենեացի» շուրջ համախմբված վերակազմյալ հնչակյանները փոքրաթիվ էին. 1912 թ. «Մշակի» Կ. Պոլսի Շռայլ ծածկանունով թղթակիցը նշում էր, որ նրանք հաշվվում են 50–100 մարդ («Մշակ», 1912, մրտ. 23):

Այնուամենայնիվ, արևմտահայ հասարակական-քաղաքական ասպարեզում նրանք ճանաչված էին իրենց գործունեությամբ: Թերթը ողջունեց սահմանադրության հռչակումը և հայտարարեց, որ կպաշտպանի Թուրքիայի խաղաղ վարգացումը: 1908-ի սեպտեմբերի 12-ին «ձայնականները» ազդարարում էին՝ իրենք կկանգնեն այն ընդդիմադիր տարրերի կողմը, որոնք «փոթորկոտ օրերուն մէջ արդարութեան աննկուն նախակարապետները եղան ու բարեշրջման այս շրջանին խաղաղութեան ու փրկութեան աներկիւղ և հաւատարիմ դրօշակակիրները պիտի ըլլան անտարակոյս» (ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 162, թ. 1):

«Ձայն հայրենեացի» գաղափարակիրները շարունակում էին, որ դադարեցնում են «զինեալ պստամբութեան ծրագիրը», նվիրվում են «խաղաղութեան պահպանումին և ազատութեան ընդհանրացումին», կողմնակից են Օսմանյան կայսրության «ամբողջական պահպանումին», չունեն «որևէ անջատողական ձգտում և նպատակ...»: Բայց միաժամանակ ավելացնում էին, որ իրենք, համարելով արևմտահայությանը օսմանյան միության անբաժան տարրը, չեն կամենում, որ այն լուծվի «այլ հոսանքներու մէջ», թեկուզ և նրա համար, որպեսզի ապրի հայությունը, որպեսզի «կարող ըլլայ ան իր պատմական դերը կատարել Թուրքիոյ ընդհանուր քաղաքականութեան առաջ և կենսական գործին մէջ...» (Նույն տեղում):

Ապա պարբերականը նշում էր, որ իրենք «բուռն ու անհաշտօրէն պայքարող ոյժ մը պիտի ըլլան ընդդէմ ներքին ու արտաքին բոլոր ոտնձգութեանց, որոնք պիտի վրդովեն ընդհանուր խաղաղութիւնը, պիտի ջնջեն ազատական ռէժիմը և պիտի ձգտին վերահաստատել նախկին տարապաղադրիչ և անհանդուրժելի բռնակալութիւնը» (Նույն տեղում):

Վերակազմյալ հնչակյաններն իրենց քաղաքական գիծն ավելի հստակեցրին «Ձայն հայրենեացի» հետագա համարներում: Նրանք ազդարարում էին, որ իրենք ուզում են ամրապնդել երկրի ձեռք բերած ազատությունը, աջակցել նրա ընդհանուր զարգացմանը, հեռու մնալով քաղաքական ամեն զավերից: Անցյալը թողել է տնտեսական ու մտավոր քայքայում, հեղաշրջումը օսմանյան ժողովուրդներին կարող է տանել գերությունից դեպի ազատություն: Այժմ նրանց պարտականությունն է համախմբվել ու առաջադիմել: Գործի պիտի լծվեն հասարակական ու քաղաքական բոլոր ուժերը՝ գեն ցնելով ներքին հակասություններն ու գզվռտոցները: «Ձայնականները» խոստանում էին, որ իրենք կլինեն համընդհանուր գործը կազմակերպողներ և այն դեպի նպատակը տանողների առաջին շարքերում:

Բայց թերթը միաժամանակ հայտարարում էր, որ եթե հարձակում կատարվի հայ ժողովրդի գոյության ու մշակութային արժեքների վրա, ապա կդիմեն ինքնապաշտպանության: Մատնանշելով այն փաստը, որ իթթիհատը քամահրում է Բեռլինի 61-րդ հոդվածը, թերթի խմբագիրները նշում էին, որ իրենք կդիմադրավեն դրան, քանի որ այդ հոդվածը նախատեսում է հայերի դրության բարելավում, իսկ նրա վերացման դեպքում «Հայաբնակ գաւառներու խղճալի կացութիւնը նոյնը կը մնայ» (1908, թիվ 3): Բայց, եթե,- շարունակում էին պարբերականի հեղինակները,- իթթիհատական կառավարությունը կատարի հօգուտ հայերի գոնէ այնքան բարելավում, ինչքան խոստանում է 61-րդ հոդվածը, «այն ատեն խնդիրը կը փոխուի, որովհետև սահմանադրութեան լայնօրէն գործադրումովը արդէն հարկ չպիտի մնայ, որ մենք պետութեանց դիմենք» (Նույն տեղում): Այլ կերպ ասած, «Ձայն հայրենեացի» շուրջ համախմբված վերակազմյալներն ուզում էին, որ թուրքական կառա-

վարությունը լուծեր Հայկական հարցը, եթե ոչ՝ կդիմեին մեծ տերություններին:

1909 թ. հունվարին վերակազմյալների ղեկավարներից մեկը՝ Վ. Արզումյանը հրապարակեց «Թուրք կոմիտէին» կոչը, որի մեջ նշում էր, որ Իթթիհատը մի կողմից քարոզում է եղբայրություն, հավասարություն և ազատություն, իսկ մյուս կողմից՝ կազմակերպում ու թույլատրում է հայերի հալածանքները, կեղեքումները, բռնաբարումներն ու առևանգումները, չի օգնում աղքատներին ու սովահարներին: Հայերը, «Հակառակ Թուրք կասկածոտ վերաբերմունքին, որևէ գաղափար չեն սնուցաներ, ոչ ալ Օսմանեան կայսրութեան քաղաքական միութիւնը խանգարելու դիտում ունին: Անոնք կը փափաքին տեսնել օսմանեան ազգերու սահմանադրական հզօր հայրենիքը յարգուած՝ օտարներէ և երջանիկ՝ ներքնապէս» (1909, թիվ 11–12):

Վերակազմյալների ղեկավարը մի այլ առիթով անդրադառնում էր նաև ազգային հարցի լուծման երիտթուրքական երկու ծրագրերին՝ Ահմեդ Ռիզա բեյի կենտրոնացված և Սաբահէդդինի ապակենտրոնացված տեսակետներին և պաշտպանում Սաբահէդդինի նահանգների ու համայնքների ինքնավարությունների հաստատման առաջարկությունը, գտնելով, որ դա համապատասխանում է արևմտահայության շահերին:

«Ձայն Հայրենեացը» նշում էր, որ բարենորոգումների ու բարելավումների կարիք զգում են ոչ միայն հայերը, այլև Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդները: Բայց մենք, երբ պահանջում ենք սկսել դրանք հայերից, ելնում ենք այն իրական փաստից, որ նրանց «կացութիւնը ամենէն աւելի անտանելի է» (1909, թիվ 16): Բռնապետության տարիներին, շարունակում է թերթը, ոչ մի ժողովուրդ այնպես չի տառապել, ինչպես հայերը, և այդ իրավիճակը շարունակվում է նաև հիմա: Ապա ավելացնում էր. «... Հայկական նահանգներու կամ Թրքաբնակ հայերու վիճակին բարելաւում ըսելով՝ ուրիշ բան և ուրիշ միտք չհասկցուի, այլ միմիայն սա կենսական բարենորոգութիւնք, որ այլևս միանգամ ընդմիշտ վերջ կդնեն իրենց կենաց, ընչից ու պատուոյ դէմ յարձակումները և արդար հատուցում ըլլայ իրենց վնասներուն» (նույն տեղում):

Թերթը գտնում էր, որ այն բանին հասնելու ամենաառաջնային միջոցառումներից մեկն այն է, որ կառավարությունը պատժի քուրդ ավազակ-թալանչիներին, հողեր ու գույքեր բռնագրավողներին: Եթե նա արտաքսի գոնե 10–15 նշանավոր ու ազդեցիկ այդպիսի անձանց, կխաղաղեցնի Հայաստանը, զգալիորեն կբարելավի նրա բնակչության վիճակը: Պարբերականը նշում էր, որ իթթիհատը կարող է այդ անել, բայց չի կամենում:

Վերակազմյալ հնչակյանների «Զայն հայրենեացը» ծառացավ իթթիհատի դեմ, երբ տեսավ, որ նա, հակառակ իր սպասածի, ոչ միայն չի դադարեցնում հայկական հալածանքները, այլև նոր ջարդեր է կազմակերպում: Նրանք Ադանայի կոտորածների համար աներկբայորեն մեղադրեցին երիտթուրքերին և «Զայն հայրենեացում» սուր քննադատեցին, որի պատճառով կանչվեցին դատական պատասխանատվության («Մշակ», 1912, մրտ 23): Իսկ երբ 1909 թ. հուլիսի 11-ին երիտթուրքերը հեղաշրջման տարեդարձի առթիվ ճաշկերույթի հրավիրեցին երկրի բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին, վերակազմյալները չներկայացան, իրենց գլխավոր պաշտոնաթերթում «Զայն հայրենեացում» հայտարարելով. «Ադանայի դէպքերուն առթիւ մեր զգացած ցաւը մեզի թոյլ չի տար ընդունիլ այն հրաւէրը, զոր հաճած էիք ուղղել մեզ, մասնակցելու համար այս գիշերուան հացկերոյթին» («Բիւզանդիոն», 1909, հուլիս 26):

1908 թ. հեղաշրջումից հետո վերակազմյալ հնչակյանները «Զայն հայրենեացում» շարադրեցին իրենց տեսակետը նաև հողային հարցի մասին: Թերթը կարծում էր, որ բռնակալության տարիներին հայերից հափշտակված հողերը անհրաժեշտ է վերադարձնել նրանց տերերին: Դա թեև բարդ ու կնճռոտ խնդիր է, բայց կառավարության կողմից «հեռագրական մէյ մէկ հրամանի միայն կարօտ է միանգամ ընդմիշտ լուծելու համար» («Զայն հայրենեաց» 1909, թիվ 35–36):

Հետագայում թերթն ավելի հանգամանորեն էր անդրադառնում հողային հարցին և նշում նրա լուծման ուղին. իշխանությունները դեռ շատ տարիներ առաջ են բռնագրավել հայերի հողերը և այդ քաղաքականությունն ավելի սաստկացրել 1878 թ. հետո: Թուրքերից զատ, նրանց հողերը հափշտակել են նաև քրդերը, Կովկասից եկած չեչեններն ու չերքեզները, Ղրիմից տեղափոխված թաթարնե-

ըը և ուրիշներ: Ապա նա շարունակում էր, որ թեև այժմ Թուրքիայում կան շատ լուծելի հարցեր, բայց ամենակարևորը հողային խնդիրն է: Այն «Հրատապ աստիճանի մը հասած է» և «իր անմիջական ու արդար լուծումը կը սպասէ արդի սահմանադրական կառավարութենէն» (նույնը, 1910, թիվ 28): Հոդվածագիրն իրավացի էր համարում օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխանների այն ելույթները, որոնք պահանջում էին վերադարձնել հայերից «գողացած կալուածները»: Նա մերժում էր այն առաջարկը, ըստ որի հայերին հողերի դիմաց կարելի է փող տալ կամ որոշ տարածք երկրի այլ շրջաններում: Թղթակցի կարծիքով, նման սակարկումները «այլևս աններելի են»: Իշխանություններն այդպիսի առաջարկություններ թող անեն հափշտակիչներին, իսկ հայերից բռնագրաված հողերը վերադարձնեն տերերին: Հայերը պահանջում են իրենց հողերը, շարունակում էր նա, «պէտք է գոհացնել զանոնք անպատճառ, եթէ իրօք հայրենիքին ապագան փրկող ցեղային համերաշխութիւնը մը կը փափաքուի անոր ճակատագիրը վարող իշխանաւորներուն կողմէն» (1910, թիվ 28):

«Ջայն հայրենեացն» անդրադարձավ նաև սոցիալիզմի հարցին: Թերթի խմբագիրներից Լ. Լարենցը նշում էր, որ սոցիալիզմը լավ գաղափար է, բայց Արևմուտքի զարգացած երկրների համար, իսկ Թուրքիայի նման մի երկրում, ուր ամենուրեք թագավորում են բռնություններն ու կոտորածները, աղքատությունն ու խեղճությունը, սոցիալիզմը «չի կրնար աճիլ ու արմատաւորուիլ...» (1909, թիվ 31–32): Արևմտահայության համար, շարունակում էր նա, նույնիսկ աղետաբեր են սոցիալիզմի քարոզները: Մտահոգված բախտի քմահաճույքին, կոտորածների ու ջարդերի սպառնալիքներին, այդ ժողովուրդը անգամ չգիտի՝ վաղը ինքը կմնա՞, թե ոչ: «... Անգործութիւն է, սոփեստութիւն է այդպիսի ժողովուրդ մը թմնեցուրել արևմտեան արտակենտրոն մտքերուն վերացականութիւններով և հողային հարցերով, բանուորական խնդիրներով, եկեղեցու և պետութեան բաժանման կնճռոտութիւններով, արձակունակ բարոյականի վարդապետութիւններով կամ նմանօրինակ նորաբանութիւններով զբաղեցնելը» (1909, թիվ 31–32):

Լ. Լարենցը քննադատում էր նրանց, ովքեր արևմտահայությանը բաժանում էին դասակարգերի և հակադրում իրար: Նա

գտնում էր, որ ներկա պայմաններում նման մոտեցումը ոչ միայն սխալ է, այլև վնասակար: «Այսօր մեր ազգը այնպիսի դժնդակ կացութեան մը մէջ կը գտնուի, որ ուղղակի ազգադաւութիւն պիտի ըլլար ժողովուրդը կղերին դէմ, կղերը ժողովուրդին դէմ, գործաւորը գործատէրերին դէմ, հողատէրը մշակին դէմ, աղքատը հարուստին դէմ, ամուսինը իր կնոջ դէմ գրգռելը, զինելը, բարոյական, կրօնական կամ տնտեսական որևէ հարցի համար» (1903, թիվ 23):

«Ձայն հայրենեացը» գրում էր, որ արտաքին հալածանքները հարվածում են հայության մարմնին, «իսկ ընկերվարականութեան անունով գործուած չարիքները մեզի պէս ազգի մը հոգին իսկ կը սպաննեն, ազգն իր էութեամբ կը մեռցնեն» (1903, թիվ 47):

Վերակազմյալները մեծ համակրանք ունեին հայ հոգևորականության նկատմամբ: Նրանք գտնում էին, որ այն կարևոր դեր է խաղում ազգի համախմբման և ղեկավարման գործում: Ուշագրավ է, որ երբ Մատթեոս Իզմիրլյանն ընտրվեց Կ. Պոլսի հայոց պատրիարք, «Ձայն հայրենեացի» խմբագիր Երվանդ Զավուշյանը վերակազմյալների մայրաքաղաքի վարչության կողմից ներկայացավ նրան և շնորհավորելով, հայտարարեց. «Մեր կուսակցութիւնը իր գործունէութեան բաժինը ուրախութեամբ պիտի բերէ ձեզի» (1908, թիվ 2):

Լ. Լարենցը նշում էր, որ հայ ժողովուրդը գտնվում է բացառիկ վիճակում, ուստի չի կարելի պահանջել, որ նրա հոգևորականությունը հեռանա քաղաքական ասպարեզից, ինչպես Արևմուտքում է: Ընդհակառակը՝ հայերը պետք է նպաստեն կղերականության ազդեցությանը ազգային կյանքում, որովհետև նրանց եկեղեցին ավելի դեմոկրատական է, քան այլ քրիստոնյաներինը: «Բոլոր այն հայերը,- գրում էր նա,- որոնք եկեղեցւոյ և պետութեան բաժանման պահանջքն ունին իրենց ծրագրին մէջ, ահաւոր կերպով սխալ ու անիրաւ գործ մը կընեն...», քանզի հայ կղերը չունի այն միապետական վարչական դերը, ինչ Ֆրանսիայինը՝ այդ երկրի պատմության մեջ: «Հայ կղերը պաշտօնէութիւնն է գերազանցօրէն ժողովրդավար եկեղեցի մը, որ իր պաշտօնատէրները ժողովուրդը հաւանութեամբ կընտրէ և սահմանադրական դրութեամբ՝ քուէարկութեամբ կուտայ անոնց իւրաքանչիւրին պաշտօնը» (1910, թիվ 11):

Թերթի կողմնակիցները մերժում էին տերությունների օգնության գաղափարը արևմտահայության ազատագրության գործում:

«Ջայն հայրենեացը» հայտարարում էր, թե այն ազգը, որը «օտարներէ և միայն օտարներէ ու այն էլ ոչ անձնապաշտ ու չահախնդիր օտարներէ օգուտ կը սպասէ, յուսախաբութիւն մը կը գտնէ» (1909, թիվ 3): Նրանք արևմտահայության փրկությունը տեսնում էին ոչ թե Թուրքիայի մասնատման, այլ նրա վերակառուցման ու բարելավման մեջ, նրա կազմում գտնվող ժողովուրդների համընդհանուր կյանքի զարգացման մեջ: Նրանք գտնում էին, որ հայերը պետք է այնպես վարվեն, որ թուրք կառավարիչները երբեք չմտածեն, թե անջատողականներ են: Երվանդ Ջավուշյանը նշում էր, որ Թուրքիայի ոչ հայանպաստ պայմաններում հայերը չպետք է վհատվեն և արտագաղթեն, ընդհակառակը՝ պետք է մնան հայրենիքում ու գոյատևեն, հասնեն տնտեսական ու մտավոր զարգացման և համոզեն իրենց թուրք հայրենակիցներին, թե «մենք իրենց կարծածի պէս հայրենիքին դաւաճանող չենք, այլ անոր յառաջդիմութեանը, լուսաւորութեանը և ապագայ մեծութեանը նպաստող անհրաժեշտ ու կարևոր տարրը կը կազմենք» (1909, թիվ 39): Դրա հետ միասին նա խնդիր էր դնում՝ հայերը, հատկապես երիտասարդները, կրթությունից զատ պետք է հմտանան նաև զինավարժության մեջ: Միայն այդ եղանակով նրանք կարող են «կարևոր և պատկառելի դիրք մը գրաւել Օսմանեան կայսրութիւնը կազմող միւս ցեղերուն մէջ» (նույն տեղում):

Ջգտելով համոզել թուրք կառավարիչներին, որ հայերը կամենում են ապրել ու առաջադիմել օսմանյան բոլոր ժողովուրդների հետ միասին, վերակազմյալների «Ջայն հայրենեացը» իր «Ո՞րն է մեր ազգայնականութիւնը» առաջնորդողում գրում էր, որ հայերը անջատողական ձգտում, ուրիշ ազգերին գերիշխելու փափագ չունեն, ինչպես անգլիացիները, ռուսները, գերմանացիները, թուրքերը: Նրանց «ազգայնական վարդապետութեան հիմնական սկզբունքն է հայութեան բարոյական, նիւթական և պատմական շահերուն և իրաւանց պաշտպանութիւնը, առանց վնասելու ուրիշ ազգերու շահուն և առանց յարձակողական կամ արհամարհական դիրք բռնելու» (1910, թիվ 32):

Բայց վերակազմյալները, իրենց թերթում հայտարարելով արևմտահայերի օսմանյան Թուրքիայի կազմում ինքնավարության մասին, մյուս կողմից պահանջում էին, որ թուրքերն էլ պետք է հար-

գեն ու պաշտպանեն իրենց հայրենակից ժողովուրդների, այդ թվում նաև հայերի իրավունքներն ու շահերը: Միայն «փոխադարձ համահաւասար և համերաշխ գործակցութեամբ կրնանք մեր երկրին ներքին ուժերը կազդուրել, կանոնաւորել և նախապէս յիշուած արտաքին վտանգներուն դիմադրաւել» (1910, թիվ 32):

«Ձայն հայրենեացը» փոփոխվող պարբերականությամբ լույս տեսավ տասներկու տարի: Այն Վերակազմյալ հնչակյան կուսակցության օրգանն էր, նրա շահերի արտահայտիչն ու գաղափարախոսը: Եվ կուսակցությունն ամեն ինչ անում էր ապահովելու թերթի մշտական հրատարակությունը: Սակայն լինելով փոքրաթիվ, կուսակցությունը մշտապես գործում էր նյութական սուղ պայմաններում: Իսկ Ադանայի դեպքերից հետո աստիճանաբար խորացող հակահայկական մոլուցքը, մոտեցող պատերազմի շունչն ավելի ու ավելի էին հիասթափեցնում հայ գործիչներին, և նրանցից շատերը հեռանում էին Թուրքիայից: Հենց այս, ինչպես և մի շարք այլ պատճառների հետևանքով շուտով թերթը դադարեց լույս տեսնելուց:

Սակայն «Ձայն հայրենեացը» ունեցավ կարևոր նշանակություն: Հայ պարբերական մամուլի պատմության մեջ այն ունի իր տեղն ու դերը, և նրանում բարձրացված հարցերից շատերն այսօր էլ արդիականության շունչ ունեն և արժանի են ուսումնասիրության:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ ՄԱՄՈՒԼ

«ԱԶԳ» (1907–1921)

«Ազգ» շաբաթաթերթն սկսեց լույս տեսնել 1907 թ. ապրիլի 20-ից ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում: 1906–1907 թթ. Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը պառակտվել էր և նրա անդամների մեծ մասը՝ Սուրեն Պարթևյանի, Պետրոս Գաբրիելյանի, Սարգիս Մալեմեզյանի, Վահրամ Գրիգորյանի և շուտով սրանց միացած Միհրան Տամատյանի ու Վահան Թեքեյանի համատեղ ջանքերով ու ղեկավարությամբ իրականացրեց «Ազգի» հրատարակությունը: Վերակազմյալների այս հատվածը, որի մեծ մասն, ի դեպ, արևմտահայ

էր. Թերթի հենց առաջին առաջնորդողում հայտարարում է, որ իրենց թերթը «պիտի ըլլայ ազգի թերթը», քանզի արտահայտելու է ոչ թե հայ հասարակության առանձին խմբերի շահերը, այլ «ազգային բոլոր կարիքներն ու տենչանքները»: Պարբերականի նպատակն է «ստեղծել ազգային աւելի կուռ, աւելի խորունկ ու աւելի բազմնաւոր միութիւն մը և աշխատելու է ազգային հաւաքական քաղաքականութեան մը որդեգրումին ու բիւրեղացումին» («Ազգ», 1907, ապր. 20): Ընդգծվում էր նաև, որ իր դավանանքը հայ հեղափոխական ուժերի համախմբումն է, հայ համերաշխության ստեղծումը, «համերաշխութիւն՝ ոչ թէ լոկ փոխադարձ յարգանքի և բարեացակամ վերաբերութեան քաղաքականութեան իմաստով, այլ ազգային յեղափոխական որոշ ու մշակուած ծրագրի մը կամ ձեռնարկներու շուրջ ու մէջ համերաշխ գործակցութեան սուրբ ու անդրժելի դաշինքով» (նույն տեղում):

«Ազգը» հայ հեղափոխություն ասելով հասկանում է «տաճկահայ դատը և անոր լուծումին համար մղուած կռիւը» (1907, հլս. 6): Այն խպառ բացառում էր արևելահայ խնդիրը: Թերթը նշում էր, որ հայ հեղափոխությունը ծնվեց «տաճկահայ տառապանքին մէջէն... ռուսահայ մտաւորականութեան հզօր ու ստեղծագործ ազդեցութեան տակ»: Արևմտահայը սկզբից ևեթ «ապիկար ու անընդունակ հանդիսացաւ իր ճակատագիրը» տնօրինելու գործում: Նրա բախտն իր ձեռքը վերցրեց ռուսահայը, որը որքան օգուտ տվեց, այնքան էլ վնաս: Կովկասահայը չկարողացավ կատարել «այն էական դերը, որուն պատասխանատուութիւնն ու պարտականութիւնը կառնէր իր վրայ» (1908, մյս. 25):

«Ազգը» չցանկանալով հակադրել արևելահայը արևմտահային, այնուամենայնիվ գտնում է, որ արևմտահայը ինքը կարող է որոշել «իր դատն ու ճակատագիրը»: Նա իր հարցը կարող է լուծել միայն այն ժամանակ, երբ «կը թօթափէ կովկասահայ յեղափոխական կուսակցական խափանիչ ու անդամալուծող խնամակալութիւնը» (նույն տեղում): Արևմտահայ դատի էության և լուծման եղանակին անդրադառնալով, պարբերականը գրում էր. «Հայ յեղափոխական շարժումը՝ մեր հասկացողութեամբ՝ ուրիշ նպատակի չի ձգտիր այսօր, բայց եթէ մարդկային տարրական իրաւունքներու պահանջին վրայ հիմնուած նուազագոյն ծրագրի մը իրականացման կամ

սովորական բացառութեամբ Թուրքահայ կեանքի, ինչքի, պատուի ու խաղաղ զարգացումի ապահովման: Իսկ այս մօտաւոր նպատակին հասնելու համար, ազգային յեղափոխական շարժումը, ուրիշ միջոց չի տեսներ Թուրքիոյ ներկայ իրականութեան մէջ՝ բայց եթէ հարստահարուող հայութեան ատրկազերծումը, ժողովրդային ինքնապաշտպանութեան կազմակերպումը և քաղաքական ձեռնտու հանգամանքներէ օգտուիլ գիտցող ընդհանուր ապստամբական պոռթկումը, որ առաջ բերելով արտաքին միջամտութիւն մը՝ պիտի ապահովէր Հայկական բարեկարգութեանց գործադրումը, համաձայն 1895 թ. Մայիսի 11-ի մեմորանտումին կամ անոր այս կամ այն վարիանտին» (1908, մյս. 25):

Ակներև է, որ ամերիկահայ վերակազմյալների ու նրանց խոսափող «Ազգի» երազանքը մայիսյան խղճուկ բարենորոգումների կենսագործումն էր՝ «այս կամ այն վարիանտով»: Մի փոքր անց, նրանք պահանջում էին Հայկական ինքնավարություն Օսմանյան կայսրության սահմաններում եվրոպական հսկողության ներքո, ազդարարելով, թե իրենց նպատակն է «Հայկական նահանգներու բարեկարգութիւնը: Մենք այժմէն չենք կրնար գիտնալ, թէ այդ բարեկարգութիւնը ինչ մասնաւոր ձեւի ու ծրագրի վրայ պիտի իրականանայ: Բայց կրնանք սա չափ միայն ստոյգ նկատել, թէ եւրոպական քոնթրոլի տակ, աւելի կամ պակաս սահմանափակ, ինքնավարութիւն մը պիտի ըլլայ ան» (1908, հյս. 4):

Վերակազմյալների ամերիկահայ հատվածն ու իրենց գաղափարախոս «Ազգը» դեմ չէին անկախ Հայաստանի ստեղծմանը. «Մեր անմիջական նպատակը չի կրնար ըլլալ, ուրեմն, Անկախ Հայաստանի երազը: Բայց եթէ Հայութիւնը ապագային, իր պատմական իրաւունքներու վրայ կրթնած, ուզէ և յաջողի այդ ազգային անկախութիւնը ձեռք բերել, մենք պիտի այժմէն մերժած ըլլայինք զայն, որովհետև մեր ծրագրին մէջ ինքնավարութիւն գրուած պիտի ըլլայ եղեր, փոխանակ անկախութեան: Ատիկա մեր այսօրուայ մտածելու բանը չէ» (նույն տեղում):

Զինված ապստամբության նախապատրաստմանը առաջնային կարևորություն տալով, «Ազգը» արևմտահայության ազատագրման, կամ ավելի ճիշտ՝ ինքնավարության հաստատման համար այդպիսի նշանակություն էր տալիս նաև արտաքին միջամտությանը

կամ տէրութիւնների օգնությանը: Թերթը գրում էր. «Արտաքին միջամտութենէն հրաժարումը Թուրքահայ ազատագրական շարժումին գերեզմանաքարը դնել կը նշանակէ, ազգային ինքնասպանութիւն մը պարզապէս... Առանց արտաքին միջամտութեան բան մը չի կայ արեւուն տակ՝ որ կարենայ բարեփոխել Հայերուն անտանելի վիճակը Թուրքիոյ մէջ... Եթէ երբեք Թուրքիոյ հայերը սահմանուած են օր մը հանգիստ շունչ առնելու՝ ատիկա անպատճառ ու անպայման, պիտի ըլլայ որեւէ ձեւի տակ՝ արտաքին միջամտութեան մը հետեւանքով» (1907, օգոստոսի 10): Թերթը դա բացատրում է նրանով, որ արևմտահայությունն իր սեփական ուժերով չի կարող ազատագրվել կամ հասնել վերևից տրվող բարեփոխումներին: Շատ ազգեր այդ ամենը ձեռք են բերել արտաքին միջամտության շնորհիվ, հայերը ևս չեն կարող բացառություն կազմել, մանավանդ, երբ նրանց ազատագրման հարցն ավելի բարդ է:

Բնականորեն հարց է առաջանում. իսկ երբ պետք է լինի այդ արտաքին միջամտությունը: «Ազգը» գտնում էր, որ այն դեպքում, երբ կլինի ազգային կուռ, մտածված ու հետևողական ներքին ու արտաքին քաղաքականություն (նույն տեղում, հմ. 6):

Այն միտքը, թե ռուսական հաղթական հեղափոխությունը կարող է ազատություն բերել նաև արևմտահայությանը, այնքան էլ սրտամոտ չէր «Ազգ»-ականներին, նրանք, պարզապես, համաձայն չէին դրան: Թերթը գրում էր. «Ռուսիա կրնայ աշխարհիս ամենէ ազատական ռամկավարական պետութիւնը դառնալ, առանց անպայմանօրէն ճանապարհ բացելու Տաճկահայաստանի ազատագրութեանը» (1907, օգ. 10): Ցարիզմը կարող է գոյատևել դեռ կես դար, գուցե և ավելի: Բայց այդ ժամանակամիջոցում «տաճկահայութիւնը կրնայ յիշատակ մը մնացած ըլլալ լոկ պատմութեան էջերուն մէջ: Ուստի առնուազն տարօրինակ պիտի ըլլայ, որ մենք աստնկ հեռաւոր ու խնդրական յոյսերով, մեր բախտը կապենք ռուս յեղափոխական արկածին, և մեր այնքան սուղ ոյժերուն լաւագոյն ու մեծագոյն մասը տրամադրենք այդ ուղղութեամբ» (նույն տեղում):

Անդրադառնալով սոցիալիզմին, «Ազգը» մերժում էր այն, գտնելով, որ «1. Սօսիալիզմը որևէ բնական կապ ու առնչութիւն չունի տաճկահայ դատին և գայն շրջապատող ներկայ իրականու-

թեան հետ, և, հետևաբար, անկորդ, անիմաստ և անհարկի է անոր մէջ իր մխումը:

2. Սօսիալիզմը տաճկահայ դատին խառնելով անոր անմիջական օգուտ մը չի բերելով դատ՝ կրնայ մեծապէս վնասակար ալ ըլլալ անոր», քանզի արեւմտահայ իրականութեան մէջ «սօսիալիստ գործունէութեան համար հող չի կայ տակաւին, և, հետևաբար, առնուազն անտեղի ու վաղաժամ է տաճկահայ դատը այժմէն խճողել սօսիալիզմով» (1908, հնս. 27):

«Ազգն» անդրադառնում է նաև իր կնքահօր՝ Վերակազմյալ Հնչակյան կուսակցության պառակտությանը և նշում, որ անջատվելով հներից, նրա գործիչներն ուզեցին իրենց ձեռքը վերցնել հայկական դատը: Այդ նպատակով համախմբվեցին Ա. Արփիարյանի շուրջը: Բայց սա ոչ միայն չպաշտպանեց ու առաջ չտարավ վերակազմյալների ձեռնարկումը, այլև վիժեցրեց այն: Եվ դա պատահական չէ. «Արփիարեան ինքը չէր հաւատար յեղափոխութեանը» (1907, հլս. 6): Նա հեղափոխական գործը վերածել է հրատարակչական ընկերության: Դրանով նա իրենից վանեց կուսակցության կարող ուժերին և մնաց մենակ: Սկիզբ առան խմբակցական կռիվներ: 1901 թ. Արփիարյանը հեռացավ վերակազմյալ Հնչակյանների շարքերից, նրան հետևեցին նաև ուրիշներ: «Ազգը» դա համարում է ոչ թե կուսակցության պառակտում, այլ «հնչակեանութեան մաքրագործում», որը ոչ թե թուլացնում, կազմալուծում է, այլ «կը սրտապնդէ մեզ... անսահման հաւատք մը կը ներշնչէ մեզի վաղուան վերակազմեալ ճիգին ապահովութեան ու արդիւնաւէտութեան մասին» (նույն տեղում, հլս. 17):

«Ազգը» ողջունեց 1908 թ. Օսմանյան սահմանադրության հռչակումը և հույս հայտնեց, որ այն հնարավորություն կտա հայերին ազատ շունչ քաշելու ու զարգանալու, ազատագրական պայքարի և մարդկային տարրական իրավունքների համար ձերբակալվածներին կազատի թուրքական զնդաններից, կնպաստի տարագիրներին վերադառնալու հայրենիք և վերջ կդնի արտագաղթին: Նրանք ենթադրում էին, որ սահմանադրությունը օսմանյան քաղաքացիներին, այդ թվում նաև հայերին, կտա խոսքի, խղճի, կրոնի և մամուլի ազատություն:

«Ազգ»-ականները միևնույն ժամանակ չէին ուզում կորցնել աչալրջությունը, նշելով, որ հայերը չպետք է այնքան խանդավառվեն սահմանադրությամբ, որ թուլացնեն իրենց հեղափոխական «լարուած, պրկուած ջիղերը»: Նրանք պետք է շարունակեն իրենց կռիվը, «մինչև որ բռնապետը և իր քամարիլեան վերջնականապէս ջախջախուեն և մինչև որ նոր րէժիմին տակ ազգերու ինքնուրոյնութիւնը տևականօրէն ապահովուի» (1908, օգ. 8):

«Ազգը» գտնում էր, որ հայ քաղաքական կուսակցությունները, հասարակական-քաղաքական ուժերը պետք է համախմբվեն և մշակեն միասնական ազգային քաղաքականություն, որպեսզի «մեր ազգային ճակատագիրը օսմանեան սահմանադրական կառքին անիւներուն կապուած՝ պատահականութիւններու զառիթափին ի վար չքաշկռտուի խեղճուկրակօրէն» (նույն տեղում, օգ. 29): Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հրավիրել կուսակցությունների խորհրդակցություն և մշակել ընդհանուր մարտավարություն «ներկայ բախտորոշ վայրկենին»:

Առանց հեղափոխական-քաղաքական կազմակերպվածության, ինչպես գտնում էր «Ազգը», ոչ մի ժողովուրդ չի կարող պաշտպանել իր շահերը՝ նույնիսկ սահմանադրական վարչակարգում: Արևմտահայությունը չի կարող կռթնել սահմանադրությանը և ջուրը գցել տասնամյակներ շարունակ իր ներկայացրած պահանջները: «Չէ,- հայտարարում էր պարբերականը,- հայ յեղափոխականութիւնն այնքան թեթևամիտ ու ողորմելի չի կրնար ըլլալ, որ ներկայ խանդավառութեան մէջ իր պատասխանատու դերին գիտակցութիւնը կորսնէ ու այսօրուայ փայլուն իրականութեան մէջ՝ այնքան տաժանքների գնով առաջ տարած իր պահանջներուն ամբողջական գոհացումը իսկոյն գտնէ» (նույն տեղում):

1908 թ. հոկտեմբերին, շարունակելով բանակցությունները, վերակազմյալները Արմենական և միութենական կազմակերպությունները միավորող «Գաղափարակցական միության» հետ հիմնեցին «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունը»: Սկսած 1908 թ. հոկտեմբերից «Ազգը» սկսեց լույս տեսնել որպես ՀՍՌ կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթ և շարունակեց պաշտպանել հայոց ազատագրական պայքարն իր կուսակցության դավանած տեսանկյունից: Պարբերականն անընդհատ ազատագր-

ման ուղիների փնտրտուքի մեջ էր՝ արձանագրելով հայ ժողովրդի հուզումներն ու մղումները այդ ժամանակահատվածում:

Հայկական հարցի վերարծարծման օրերին «Ազդը» թեև դժգոհ էր իթթիհատից, բայց շարունակում էր հուսալ, որ երբևէ կբարելավվի օսմանյան կայսրությունում ապրող ժողովուրդների, այդ թվում հայերի վիճակը: Պարբերականն սկզբում դրականորեն արտահայտվեց 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումների մասին, բնութագրելով տերությունների ընդունած ծրագիրը որպես «հաջող վերջաւորութիւն»: «Ազդը» գրում էր, թե հայ ժողովուրդը «այսօր ուրեմն կրնայ քիչ մը աւելի յոյսով ու վստահութեամբ նայիլ ապագային...» (1914, մարտի 4): Բայց հետո թերահավատությամբ լցվեց այդ ծրագրի հանդեպ, նշելով, որ Թուրքիան անցյալում շատ է խոստացել բարելավել հայերի վիճակը և չի կատարել: «Միգուցէ խոշոր յուսախաբութիւն մ՛ալ ներկայ ծրագիրն ըլլայ և օգուտ մը չտալէ զատ մինչև իսկ նոր փորձանքներ բանայ մեր գլխուն» (նույն տեղում, մարտի 18): Այս կանգնելով չեզոք դիրքում «Ազդը» չուզեց հոռետես լինել. մարտի 18-ի համարի առաջնորդողում գրեց. «Չենք կրնար գուշակել, թէ ինչ ապագայ պիտի ունենայ, որչափ տեւուն և տեւական պիտի ըլլայ ծրագիրը, բայց պէտք է, որ առանց յոռետեսութեան, քիչ մը յոյսով նայինք անոր վրայ և մեր կողմէ աշխատինք դիւրացնելու անոր գործադրութիւնը» (նույն տեղում): «Ազդի» այս անորոշ ու հեղհեղուկ գնահատականը պայմանավորված էր նրանով, որ Հայկական հարցի լուծումը կամ հայաբնակ նահանգներում բարենորոգումների անցկացումը կապում էր թե՛ մեծ տերությունների, թե՛ իթթիհատական կառավարության և թե՛ արևմտահայ հասարակական քաղաքական ուժերի հետ:

1914 թ. սկսված համաշխարհային պատերազմի և, հատկապես, «մեծ զուլումի» տարիներին «Ազդը» շարունակաբար տեղեկություններ էր հաղորդում թուրքերի կատարած վայրագությունների մասին և կոչ անում աշխարհի առաջադեմ մարդկությանը՝ ձայնը բարձրացնել կոտորվող հայ ժողովրդին պաշտպանելու համար: Իսկ երբ ավարտվեց պատերազմը, «Ազդը» շատերի նման փայփայում էր այն սին հույսը, թե աշխարհի հզորները գոնե այս անգամ արդարացի կլուծեն Հայկական հարցը:

«Ազգը» ողջունեց Հայաստանի առաջին Հանրապետության ծնունդը և հայտարարեց, որ այն պիտի դառնա Հայոց Մեծ երազանքի խարիսխը և անում էր ամեն ինչ նորաստեղծ Հանրապետությանն օգնելու համար: Իսկ երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, թերթը համարեց այն ողջ հայության միակ հայրենիքը:

1921 թ. ռամկավար և ազատական բոլոր ուժերի ու քաղաքական կառույցների համախմբման արդյունքում ստեղծվեց Ռամկավար ազատական կուսակցությունը, ինչի հետևանքով մեկտեղվեցին նաև նախկին այդ կառույցների պարբերականները: «Ազգն» էլ 1921 թ. հոկտեմբերին միանալով Վերակազմյալ Հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթ «Պահակին», սկսեց լույս տեսնել սկզբում «Ազգ-Պահակ», իսկ հետագայում որպես «Պայքար»:

«Ազգը» տարբեր տարիներին խմբագրել են Ս. Պարթևյանը, Ե. Ճյուհերյանը, Գ. Սարաֆյանը, Գ. Փափազյանը և Ա. Նազարեթյանը:

«ՎԱՆ-ՏՈՍՊ» 1911–1918

«Վան-Տոսպը» որպես կիսամսյա հանդես, սկսել է լույս տեսնել 1911 թ. Վանում Հովհաննես Ավագյանի խմբագրապետությամբ: 1912 թ. արդեն այն գրական, գիտական, կրոնական շաբաթաթերթ էր, սակայն շուտով նույն թվականին դարձավ Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության Վասպուրականի շրջանակի պաշտոնաթերթը: Խմբագիրն էր արևմտահայ մտավորական Նշան Հակոբյանը: Այս թվականից էլ սկսվում է պարբերականի պատմության նոր շրջանը:

Հայկական հարցի քննարկման օրերին «Վան-Տոսպը» հանդես եկավ չափավոր պահանջներով: Ընդհանրապես ռամկավարները դեմ էին հեղափոխական կամ ապստամբական ելույթներին և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ հայ բնակչության զարգացման գաղափարը: Նրանք գտնում էին, որ իրենց պահանջները օգտակար են ոչ միայն հայերին, այլև նրանց հարևաններին: 1913 թ. հունվարին ռամկավարների պաշտոնաթերթը հայտարարում էր.

«Մենք ապստամբներ չենք և Հայկական Հարցը անջատողական շարժում մը չէ երբէք, մեր պահանջները տարրական արդարութեան պահանջներ են, որոնց իրագործումով հաւասարապէս պիտի օգտուին նաև քուրդ ու թիւրք ժողովուրդները և ի վերջոյ ամբողջ պետութիւնը» (1913, թիվ 1, էջ 3): Մի փոքր ավելի ուշ ռամկավարները ավելի կոնկրետ էին ներկայացնում Հայկական Հարցի լուծման իրենց տեսակետը. «Տուեք հայ ազգին իր քաղաքացիական տարրական իրաւունքները, տուեք մեզ մեր կեանքի, գոյքի և պատուի անձեռնմխելիութեան սրբազան իրաւունքը, տուեք գոհացում մեր այդքան արդար պահանջին... Ապահովեցեք մեզ այս անգամ գործնական երաշխիքներով» (1913, թիվ 3, էջ 27): Նրանց կարծիքով Հայկական Հարցի լուծման ամենազորեղ ազդակները եթե գտնվում են դրսում՝ օսմանյան կառավարության և եվրոպական դիվանագիտության մեջ, ապա դրանցից մեկն էլ «պէտք է փնտրենք մեր մէջ՝ հայութեան ոգիի մէջ» (1913, թիվ 4, էջ 40): Ուստի կոչ էին անում հայ ուժերին՝ առժամանակ մոռանալ իրենց ներքին տարաձայնութիւնները և համախմբվել «այն Հարցի շուրջը, որ կը կոչուի տաճկահայկական հարց» (Նույն տեղում, էջ 3):

Թերթը կողմնակից էր հասարակության աստիճանական զարգացմանը, «դէմ գնալով ամէն տեսակ ծայրահեղութիւններու, որոնք աջէն կուգան, թե ձախէն միևնոյնն է» (1913, թիվ 15, էջ 1): Քննադատում էին բոլոր նրանց, ովքեր Արևմտյան Հայաստանում սոցիալիզմ էին քարոզում և գտնում էին, որ այնտեղ առայժմ պետք է պրոպագանդել կապիտալիզմ:

Թերթն ամբողջովին զգում էր արևմտահայության զարկերակը, տպագրում նյութեր հայության գլխին օր օրի խտացող վտանգավոր զարգացումների մասին: Զգոնության և սին ու պատիր խոստումներին տուրք չտալու կոչերն ու հորդորները շարունակվում էին համարից համար: Պարբերականին այս շրջանում հատուկ էին իրականության ռեալ զգացողությունը, երիտթուրքերի կեղծ խոստումներին չհավատալը և, ամենակարևորը, հայության գոյության սպառնացող վտանգին դիմագրավելու համար ինքնապաշտպանության գործին պատրաստ լինելու զգացողությունը:

1914 թ. բռնկված առաջին համաշխարհային պատերազմի ու հայության մեծագույն դժբախտության՝ Մեծ եղեռնի հետևանքով «Վան-Տոսպն» առժամանակ դադարեց լույս տեսնելուց:

1915 թ. աշնանը ռամկավարները Թիֆլիսում ձեռնամուխ են լինում իրենց «Վան-Տոսպ» պաշտոնաթերթի վերահրատարակմանը, սակայն նյութական սուղ վիճակը թույլ չի տալիս անմիջապես կազմակերպել հրատարակությունը: Դիմում են կուսակցության Ամերիկայի շրջանակին, որտեղից պատասխան են ստանում միայն 2 ամիս անց: Մինչ Ամերիկայից ուղարկված դրամը տեղ կհասներ, Ռոստովից նյութապես օգնում են ռամկավար Տիգրան Թյությունճյանը և տեղի ռամկավարները: 1915 թ. նոյեմբերին ՀՍՌ կուսակցության պաշտոնաթերթ «Վան-Տոսպը», որ պատերազմի պատճառով դադարել էր լույս տեսնելուց, իբրև հասարակական-քաղաքական-գրական շաբաթաթերթ սկսեց վերահրատարակվել Թիֆլիսում[1]:

Թերթի գլխավոր խմբագիրն էր Տիգրան Նազարյանը, իսկ պատասխանատուն՝ Արտակ Դարբինյանը, ով առաջին համարի առաջնորդողում նշելով, որ «տաճկահայության ողջակիզման ողջ պատասխանատվությունն ընկնում է երիտթուրքերի վրա» (1915, նոյ. 29), ճշտում է պարբերականի նպատակները.

1. «Հրդեհվող» հայրենիքի մոխիրների տակից լսվող տառապանքի ճիչն ու բողոքը հասցնել աշխարհի հայությանը և նրա բոլոր բարեկամների ու թշնամիների «մտքին ու սրտին»: «Վան-Տոսպը» պիտի լինի թուրքահայութեան տառապանքների հայելին, նրա տանջանքների արձագանքը, իսկ նրա մտասևեռման կենտրոնը, նպատակադրում էին թերթի հրատարակիչները, ընդհանրապես մեր ազգային կյանքը և «մասնավորապէս տաճկահայ հարցը պիտի լինի» (նույն տեղում):

2. «Կովկասահայութեան առջև պարզել տաճկահայերի ազատագրութեան գործում ռուսահայ բոլոր կուսակցութիւններու և խաւերու ունեցած բացասական դերը (հնչակեաններ, դաշնակցականներ, մշակականներ...)» (նույն տեղում): Դարբինյանն ընդգծում է, որ պատասխանատվությունից զերծ էին մնալու «փոքրաթիւ ընկերվարականները (սոցիալ-դեմոկրատները և սոցիալ-հեղափոխա-

[1] ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 43, էջ 1:

կանները), որոնք սկզբից դեմ էին ռուսահայերու միջամտութեանը թրքահայ շարժման մէջ»[1]:

Սա հետևանք էր այն բանի, որ դառնացած և հուսահատված, որոշ արևմտահայ ռամկավար գործիչներ, տվյալ պահին դեպքերի թարմ տպավորությունների ազդեցության ներքո երբեմն հիմնավոր, սակայն հաճախ էլ անապացույց մեղադրանքներ էին նետում քաղաքական մյուս ուժերի և կուսակցությունների հասցեին:

3. Մասնավորապես պարզել ՀՅԴ պատասխանատվությունը «Կամաւորական շարժման՝ Թուրքահայութեան գլխուն պայթած աննախընթաց աղէտին մէջ»[2]: Նրանք կարծես մոռանում էին, որ կամավորական շարժումն ունեցավ նաև դրական նշանակություն. Վասպուրականի հայությանը փրկեց բնաջնջումից և շատ անգամներ պաշտպանեց արևմտահայ գաղթական զանգվածներին քրդական հարձակումներից:

4. «Կովկասում ապաստանած մոտ 250 հազար թիւրքահայ գաղթականների ցավերուն արձագանգ դառնալ և դարման փնտրել»[3]: Այսինքն՝ ռամկավարները նպատակ ունեին մամուլի միջոցով կովկասահայության լայն զանգվածներին ներգրավել գաղթականության օգնության գործում:

Պետք է նշել, որ կամավորական շարժման նկատմամբ Դարբինյանն ու նրա խմբագրած պարբերականը սուբյեկտիվ տեսակետ էին արտահայտում, որը կարծիքների բազմազանության մեջ եզակի դեպք ու նորություն չէ, հատկապես մեծ թվով արևմտահայ գործիչներ նույն համոզմունքն ունեին:

Անշուշտ կամավորական շարժումը չէր կարող լրիվ անհետևանք անցնել հայերի համար և էլ ավելի չբորբոքել թուրքերի կասկածամտությունն ու մոլեռանդությունը: Այս կապակցությամբ, որպես թուրքական պաշտոնական մտայնության դրսևորում, հատկանշական են Վանի կուսակալ (վալի) Ջևդեթ բեյի հետևյալ խոսքերն ուղղված ամերիկյան միսիոներ Աշրին և Վանի իտալական հյուպատոս Սպորտոնիին. «Ըսէք հայերուն, թող չկարծէն թէ չենք գիտեր Թիւրքիոյ հանդեպ իրենց թշնամական դիրքը ...: Զինուած

[1] Դարբինյան Ա., նշվ. աշխ., էջ 336:
[2] Նույն տեղում, էջ 337:
[3] Նույն տեղում:

խմբեր կը պատցնեն, զինավարժութիւններ կը կատարեն: Մեր զօրքերը Հայերու դէմ է, որ կը կռուին աւելի, քան ռուսերու. Հայ կամաւորներու գնդակներէն է, որ կը սպաննուին մեր զօրքերուն մեծ մասը: Ռուսին գնդակը մեր ոտքը կծակէ, իսկ Հայոց գնդակները մեր սիրտը: Թող լաւ գիտնան Հայերը, երբ ջարդ սկսվի Հայերու՝ նախորդի նման չպիտի ըլլայ բնավ: Այս անգամ կիներուն ու երեխաներուն ալ չպիտի խնայենք: Այս երկիրը կամ մուսուլմաններուն պիտի ըլլա բոլորովին կամ քրիստոնեաներուն»:

Անդրադառնալով այս խնդրին՝ «Վան-Տոսպը» տպագրել է պրոֆ. Մ. Մինասյանի «Անարդար դատողութիւններ» հոդվածաշարը: Հեղինակը քննարկում է կոտորածների շարժառիթները և որոշակիորեն մեղադրում ազգային մյուս կուսակցություններին (ՀՅԴ-ին և ՍԴՀԿ-ին – Ս. Ս.) «Թիւրքին շարժառիթներ տալու» համար, բայց Հայության կոտորածները չի պայմանավորում դրանցով: Հեղինակի մտայնությունը կայանում է նրանում, որ նմանատիպ ցուցադրական ելույթները նպաստել են սոսկ Թուրքերի ավելի գրգռվելուն: Այստեղ խոսքը վերաբերում է նաև կամավորական շարժմանը. նկարագրում է, թե ինչպես Սարիղամիշի ճակատում պարտված և նահանջող Թուրքերը Կարինում կեղծ լուրեր են տարածում, որ իրենց դեմ կռվել են միայն Թրքահպատակ Հայերը՝ Թուրքական խորհրդարանի պատգամավոր Գ. Փաստրմաճյանի (Արմեն Գարո) հրամանատարությամբ, որոնք կոտորել են նաև խաղաղ Թուրք ու քուրդ բնակչությանը և սրանով արյան վրեժի հրահրել բոլոր Թուրքերին» (1916, Թիվ 16, էջ 4, 5, 12): Վերջիններս էլ օգտագործում են առիթը և սպանում ոչ միայն Ս. Փաստրմաճյանին (Արմեն Գարոյի եղբորը – Ս. Ս.), այլև շատ ու շատ անմեղ Հայերի:

Այնուհանդերձ Հայկական կոտորածները բացատրել Հայ քաղաքական ուժերի տված առիթներով կամ կամավորական շարժմամբ, սխալ է: Այն Թուրքական իշխանությունների կողմից պետականորեն ու նախօրոք ծրագրված և իրականացված քաղաքականություն էր:

1915 Թ. սեպտեմբերին ռուսական զորքերը կրկին գրավեցին Վանը: Կուսակալ նշանակված գնդապետ Տերմենը որոշում է իր հետ տանել Հայկական երկրապահ գունդը, որը պետք է տեղում ապահովեր կարգ ու կանոնը: Նախապես ծանոթանալով Համբարձում

Առաքելյանի հետ, նա ցանկություն է հայտնում, որ գնդի հրամանատարը լինի տեղացի, փառահեղի ու փորձառու մարդ: Առաքելյանն առաջարկում է Եկարյանի թեկնածությունը: Եկարյանը Վանի երիտասարդությունից հավաքում է մի քանի հարյուր մարդուց բաղկացած ջոկատ: Սակայն զենքի հարցում առաջանում է դժվարություն: Չնայած ռուսական իշխանությունները խոստացել էին զենք տալ, սակայն այս ձեռնարկը հաջողություն չի ունենում: Ստեղծված խումբն արձակվում է և հավաքվում նորը, որի մեջ կարող էին մտնել միայն սեփական զենք ունեցողները: Պետք է նշել, որ Տերմենը գոհունակությամբ է արտահայտվում երկրապահ գնդի մասին: 1916 թ. հունվարի 5-ին «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանին ուղղված նամակում Տերմենը գրում է. «Ահագին օգուտ են բերում ինձ երկրապահ կամաւորները, որոնք փոխարինում են պակասորդ վարչութեան: Նրանց խելացի և նպատակայարմար աշխատութիւնը ինձ տալիս է լիակատար յոյս՝ նպաստաւոր հետեւանքի հասնելու» (նույն տեղում):

Հայկական կոտորածների սկսվելուն զուգընթաց Սահմանադրական ռամկավարները փոխեցին իրենց վերաբերմունքը և որոշեցին սատարել կամավորական շարժմանը ու ձեռնարկեցին գործնական քայլեր: 1915 թ. հունիսին ՀՍՌԿ Ամերիկայի նահանգային վարչությունը կովկասահայության կամավորական շարժմանն աջակցելու նպատակով նամակ-շրջաբերականով դիմում է իր ակումբներին: Այստեղ կոչ է արվում դրամական և այլ հնարավոր միջոցներ հանգանակել, ինչպես նաև հավաքագրել մարտական խումբ և ուղարկել Վասպուրական: Նահանգային վարչությունը սկզբունքորեն որոշեց «խումբ մը ղրկել Վան» Անուշավան Տեր-Մկրտչյանի ղեկավարությամբ: 1915 թ. օգոստոսի վերջին կամավորների խումբը Նյու-Յորքից ռուսական ռազմանավով հասնում է Արխանգելսկ, որտեղից էլ՝ Թիֆլիս[1]:

Վանի վերագրավումը նոր հույսեր է արթնացնում ռամկավարների մեջ: Նրանց և մշակականների նախաձեռնությամբ 1915 թ. սեպտեմբերի վերջին Թիֆլիսում տեղի է ունենում խորհրդակցություն, որին մասնակցում են «Մշակի» կողմից Հ. Առաքելյանը, պրոֆեսորներ Ստ. Մալխասյանը, Եղիկյանը, Պետական դումայի ան-

[1] «Պայքար», Բոստոն, 1958 թ., դեկտեմբերի 23:

դամ Մ. Պապաջանյանը, ուսմկավարներից՝ Ա. Եկարյանը, Հ. Գուլումջյանը, պրոֆեսոր Մինասյանը, Հ. Կաքավյանը, Ռ. Հովնանյանը և ուրիշներ: Այստեղ որոշվում է կազմել վերագրավված Վանի վարչական և պաշտոնական հատուկ մարմին, որի հսկողությանը պիտի ենթարկվեին նաև արևմտահայ մյուս գրավված տարածքները: Այն ստանում է «Հայաստանի վերաշինաց յանձնաժողով» անունը[1]:

«Վերաշինաց յանձնաժողովի» նպատակն է,- գրում է «Վան-Տոսպը»,- աջակցել վասպուրականցի և թիւրքահայ մտավորականներին՝ հայրենիքի վերաշինութեան սուրբ գործին» (1915, դկտ. 6), իսկ սկզբնական շրջանում հանձնաժողովը հայթայթում է «երկրացիներից կազմված երկրապահ գունդի պահպանման բոլոր անհրաժեշտ միջոցները, մինչև որ կառավարութիւնը յուր վրայ վերցնէ այդ հոգսը»: Իսկ ապագայում,- շեշտում է թերթը,- Վերաշինաց հանձնաժողովի այդ ձեռնարկը հանդիսանալու է սաղմն ավագա այն մեծ գործի, որ «պիտի պահանջէ մեր աւերակ դարձած հայրենիքը կովկասեան հայ գանգուածից և արտասահմանեան գաղութներից» (Նույն տեղում):

Հայաստանի վերաշինաց հանձնաժողովը (այսուհետև՝ ՀՎՀ) ընտրում է գործադիր մարմին հետևյալ կազմով. ատենապետ՝ պրոֆ. Մ. Մինասյան (Վանի տեղահանությունից առաջ Վանի կենտրոնական վարժարանի տեսուչն էր), քարտուղար՝ պրոֆ. Մալխասյան, խորհրդականներ՝ պրոֆ. Եղիկյան, Ա. Տեր-Մկրտչյան (ռամկավար) և վերակազմյալների ներկայացուցիչ Պ. Տեփոյան:

Գործադիր մարմինը վավերացվում է փոխարքայի կողմից: Օրակարգի գլխավոր հարցերն էին Վանի և մյուս գրավված տարածքների վարչական-տնտեսական գործերի վարումը, գաղթականության տեղավորումը և օգնության կազմակերպումը: Կազմվում է միլիցիայի ջոկատ՝ հրամանատարը Ա.Եկարյան, տեղակալ Ջիմ Ջանգալյան (վերակազմյալ): Շուտով Եկարյանը 50 ձիավորներով և Ջանգալյանը 45 հոգուց բաղկացած հետևակով մեկնեցին Վան[2]: Ինչպես արդեն նշվեց, նրանց գործունեությունը բարձր է գնահատվել ռուսական իշխանությունների կողմից:

---

[1] Նույն տեղում, 1958 թ., դեկտեմբերի 23: Տես նաև Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 342:
[2] «Պայքար», Բոստոն, 1958 թ., դեկտեմբերի 24:

Պետք է նշել այն հանգամանքը, որ ՀՎՀ-ն և Թիֆլիսի Ազգային բյուրոն սկզբից ևեթ հակասությունների մեջ են մտնում: Ըստ Ա. Տեր-Մկրտչյանի, Թիֆլիսի բյուրոն պահանջում է, որ ՀՎՀ-ն մտնի իր ենթակայության տակ, որը մերժվում է և դրանով այդ երկու մարմինների միության շուրջը տածած հույսերը չեն իրականանում:

Այդ օրերին ռամկավարներն ակտիվ շփումների մեջ էին մտել կովկասահայության տարբեր շրջանակների և գործիչների հետ, որի գլխավոր նպատակն էր «Թրքահայ փախստականութեան համար օգնութեան միջոցներ փնտրելը»[1]: «Մեր անելիքը և ապագան» վերլուծական առաջնորդողում «Վան-Տոսպը» գրում է, որ ստեղծված պայմաններում հայության բոլոր խավերը պետք է անդուլ աշխատանքով սպիացնեն վերքերը: «Աշխատանք» ասելով, հոդվածագիրը պատկերացնում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին օրինակ՝ օժանդակել գյուղացիությանը տնտեսության վերականգնման գործում, բացել դպրոցներ և մատաղ սերնդին դաստիարակել հայրենասիրության ոգով, զարգացնել մամուլն ու գրականությունը, վսեմություն և սրբություն ներարկել եկեղեցուն, արծարծել հզոր հայրենիքի, այսինքն՝ հայ ժողովրդականության գաղափարը,- ահա մեր անելիքն ու ապագան,- եզրափակում է հեղինակը (1915, դկտ. 6):

«Վան-Տոսպը» մշտապես իր էջերում բարձրացնում է նաև գաղթականների վիճակի հարցը Արևելյան Հայաստանում, Ռուսաստանի տարբեր վայրերում և ցույց տալիս, որ կատարվում են որոշակի քայլեր. բացվում են դպրոցներ, որբանոցներ, շեշտվում է ամերիկահայության ֆինանսական մեծաքանակ օգնությունը և, ընդհանրապես, բոլոր նպաստամատույց մարմինների գործունեությունը: Բավական մանրակրկիտ լուսաբանվում է Վանի և շրջակա գյուղերի կյանքը. վերադարձած հայության դրությունը, նրանց կարիքները և այլ հարցեր:

Շնորհակալությամբ ցույց է տրվում ամերիկյան միսիոներների կատարած հիրավի մարդասիրական աշխատանքը՝ հատկապես որբախնամ գործում: Ընդգծվում է հատկապես ամերիկյան նշանավոր դոկտորներ Ռեյնոլդսի, Ուիլսոնի և Մեքքալմի գործունեությունը, նրանց խանդավառությունը հայերի յուրաքանչյուր հաջողության

[1] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 340:

դեպքում, իսկ ժողովրդի օրհասական րոպեներին նրանց սիրալիր, հոգատար վերաբերմունքը: «Երբ տաճկահայ գաղթականութիւնը Կովկաս թափուեցաւ, Ամերիկայի մարդասէրները չմոռացան գալ իր թշուառութեան մէջ,- գրում է «Վան-Տոսպը»,- իսկոյն հանգանակեցին խոշոր գումարներ և հատուկ պատվիրակութեան մը յանձնելով Կովկաս խրկեցին» (1916, հմ. 12): Իսկ երբ սկսվեց գաղթականների վերադարձը հայրենիք, վերոհիշյալ միսիոներները անմիջապես «Պարսկաստանէն եզներ գնելով երկիրը մտցուցին և սկսան բաժնել գյուղացիութեան, կապելու համար հայ ազգի արմատը իր կենսատու հողի հետ»(նույն տեղում):

Իհարկե միսիոներների գերխնդիրը բոլորովին այլ էր և այն դուրս է մեր հետաքրքրության շրջանակներից: Բայց որ նրանք հայանպաստ զգալի քայլեր արեցին, անվիճելի է և միանգամայն արժանի դրվատանքի:

1915 թ. մայիսի 20-ին, երբ ընդլայնվում էին աշխարհամարտի սահմանները և շարունակվում արևմտահայության տեղահանությունն ու կոտորածները, պահի լրջության գիտակցությամբ Սահմանադրական ռամկավար և Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունների Եգիպտոսի մասնաճյուղերը Ալեքսանդրիայում կնքեցին համաձայնագիր, որն արդյունք էր դեռևս մինչ պատերազմը սկսված միավորման շարժման:

1915 թ. սեպտեմբերին Թիֆլիսում ևս գումարվում է միջկուսակցական խորհրդաժողով, որին մասնակցում են ՍԴ Հնչակյաններից Ս. Հովյանը (Տաշիր), Մնացականյանը, Լազոն, վերակազմյալներից՝ Պ. Տեփոյանը, Ն. Դշխոյանը, ռամկավարներից՝ Ա. Տեր-Մկրտչյանը, Ա. Եկարյանը, Ռ. Հովնանյանը: Այստեղ ժողովի ժամանակ ՍԴ Հնչակյանները մերժում են ընդունել Վանի ներկայացուցիչներին գործադիր մարմնի մեջ հավասար ձայնի իրավունքով: Հնչակյանները համաձայնվում են միայն Ամերիկայի ռամկավարներից Ա. Տեր-Մկրտչյանի և վերակազմյալ Պ. Տեփոյանի թեկնածություններին: Սակայն գործադիր մարմնում հավասար թվով ներկայացուցիչներ ունենալու ռամկավարների ու վերակազմյալների

առաջարկը հնչակյանները մերժում են և դրանից հետո միջկուսակցական խորհրդաժողովն ավարտվում է[1]:

Չնայած այդ անհաջող ձեռնարկին, ռամկավարները երբեք համագործակցության հույսը չէին կորցնում: Ավելին, «Վան-Տոսպը» գրում էր, որ թուրքահայ գաղթականներն իրավունք ունեն կովկասահայ պատգամավորներից ակնկալել, որ վերջիններս իրենց հարցը պատշաճ կերպով կբարձրացնեն Ռուսաստանի Պետական դումայում (1916, հմ. 31): Դա մասնավորապես վերաբերում էր Մ. Պապաջանյանին, որի հետ ռամկավար գործիչների մեծ մասը մոտ հարաբերությունների մեջ էր:

Երբ «Վան-Տոսպը» սկսեց հրատարակվել Թիֆլիսում, իր խնդիրներից մեկը համարեց բողոքել այնպիսի խնամակալության դեմ, որ ռուսահայ մտավորականության մեծ մասը դարից ի վեր տարածել է արևմտահայերի վրա, պահելով իր ձեռքում նրանց ազատագրական շարժման ղեկավարության մենատիրությունը (1916, սպտ. 4):

Պարբերականը գրում է, որ երբեմն արևմտահայերի ճակատագիրը տնօրինել են կովկասահայ այնպիսի գործիչներ, որոնք չեն իմացել հայոց պատմությունը, նույնիսկ հայերեն խոսել, գրել ու կարդալ: Եվ բնական է, որ այդպիսիները չպիտի կարողանային հասկանալ օրվա պահանջները և ըմբռնել պատմական հանգամանքները:

«Վան-Տոսպի» քննադատությունը ուղղված էր ՀՅ Դաշնակցության դեմ: Միջկուսակցական անհանդուրժողականությունը ինչպես մյուս կուսակցությունների, այնպես էլ ռամկավարների, ուժեղանում է հատկապես պատերազմի դժվար տարիներին, երբ միմյանց հասցեին անհարգալից պիտակների պակաս չէր զգացվում: Պետք է ընդգծել այն հանգամանքը, որ ռամկավարները քննադատության թիրախ էին դարձրել ոչ թե Դաշնակցությանն ընդհանրապես, այլ նրա գործելակերպի մի շարք դրսևորումներ (1916, հմ. 31): Մասնավորապես, քննադատության են ենթարկվում այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են ցուցամոլությունը, փառասիրությունը, ամեն ինչ իրեն վերագրելու մոլուցքը, եկեղեցու նկատմամբ

[1] ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 46, թ. 4:

անհարգալից վերաբերմունքը, անհանդուրժողականությունը մյուս կուսակցությունների նկատմամբ և այլն: «Դուրս եկեք կախարդական շրջանից» հոդվածում Վարդան Պապիկյանը հայության կրած անդուլ տառապանքների համար մեղքի բաժին է հատկացնում նաև հայ կուսակցություններին ու նրանց գործունեությանը: Հեղինակը գտնում է, որ հարկավոր է «օգտվել անցեալի փորձառութիւններից և ձեռք քաշել հին սխալներից՝ ցուցադրական ելոյթներ և անհանդուրժողականութիւն, բայց ոչ գործունեութեան միջոցից» (1915, նոյ. 29): Այսինքն՝ հեղինակը կողմնակից է ակտիվ պայքարի կուսակցական մարտավարությանը և դեմ է ցուցամոլությանը: Գտնելով, որ հայ ժողովրդի ճակատագիրը պիտի վարեն կազմակերպված մարմինները, հեղինակը ցույց է տալիս, որ նման կազմակերպությունը պիտի լինի դեմոկրատական, ազատական բնույթի, որի նպատակը չպիտի լինի հասարակության արդի կառուցվածքի փոփոխությունը, ինչպես այդ արել են հայոց մեջ գործող մի քանի կուսակցություններ, որոնք հավակնություն են ունեցել և դեռ ունեն հայ ժողովրդի ազգային իրավունքները «ձեռք ձգելուց վատ հեղաշրջել նրա սոցիալական կարգերը» (նույն տեղում): Այսինքն, հեղինակի կարծիքով հայ ժողովրդի անելանելի վիճակում հարկավոր է օգտագործել բոլոր խավերի հնարավորությունները՝ նախ ազգի գոյությունն ապահովելու համար, որ սոցիալական վերափոխությունների կոչերը (որոնցով հանդես էին գալիս ՍԴՀ և ՀՅԴ կուսակցությունները) ժամանակավրեպ են և ապագայի խնդիր: Հոդվածագիրը դատապարտում է նաև նրանց, ովքեր ազգային խնդիրներում որդեգրում են չեզոք դիրքորոշում: Այդպիսիները «արժանի են խորին արհամարհանքի», քանի որ փակում են իրենց աչքերը չարիքի դեմ կռվելու փոխարեն, և «բաւականանում են միայն քննադատելով»:

Ինչևէ, անկախ ամեն ինչից, ՀՍՌ կուսակցությունն առաջ է մղում համերաշխության և համագործակցության խնդիրը: «Վան-Տոսպը» հրապարակում է Ա. Ջոպանյանի նամակը: Ջոպանյանը կոչ է անում բոլոր կուսակցություններին «առժամանակ մոռանալ վէճ ու կռիւ և համերաշխուել դարմանելու վէրքերը» (1916, փետ. 7):

Ռամկավարները գտնում էին նաև, որ բացի կուսակցություններից, իրենց ուժերը պետք է միավորեն նաև բարեգործական մարմինները: Այս առումով «Վան-Տոսպը» գրում էր. «Ունենք բազմա-

թիվ գաղթական մարմիններ: Եղբայրական օգնութիւնը, Բաքուի կոմիտէները և Կանանց, Օրիորդաց և այլ բազմապիսի միութիւններ, աւելացած դէռ օտար մարմիններ, որոնք բոլորն էլ նոյն նպատակի կը ծառայեն» (1916, փետ. 21): Կոչ է անում միավորվել և համախմբել իրենց աշխատանքը:

Նմանատիպ վերլուծականով «Վան-Տոսպում» էլ հանդես է գալիս ՀՍԴԿ-ի հնարնակ Վարդան Պապիկյանը. «Հայկական հարցին շուրջ» հոդվածում հեղինակը հետադարձ հայացք է գցում հայկական հարցի անցած ուղու վրա և փորձում վերաիմաստավորել այն: Արտահայտելով ռամկավարների տեսակետներն այդ հարցում, հոդվածագիրը միանշանակ չի դիտում եվրոպական դիվանագիտության դերը հայկական խնդրում. բացարձակորեն չի արդարացնում և չի դատապարտում նրա միջամտությունը այդ հարցում, այլ փորձում է ամեն ինչ տեսնել իր տեղի ու ժամանակի համատեքստում: «Կարելի՞ է քննադատել օտար դիվանագիտութեանը դիմելու հայերի քայլը»,- հարցնում է Պապիկյանը, և ինքն էլ պատասխանում, որ այսօր կարելի է, բայց այն ժամանակ (մինչ եղեռնը – Ս. Ս.) չէր կարող հայ ժողովուրդը ունենալ ավելի քաղաքական իմաստություն և գուշակել հեռավոր ապագան, «չէ՞ որ ժողովուրդներն էլ ունեն իրենց անփորձութեան շրջանները, որոնց մէջ նրանց գործած սխալները կարելի չէ չափել յետագայ տարիների չափով» (1916, հնվ. 24),- գրում է հեղինակը:

Հոդվածագիրը ցույց է տալիս նաև, որ հետագա տարիներին հայերն արդեն համոզվեցին, որ Եվրոպան չի փրկելու իրենց, բայց ընդգծում է նաև, որ «նրա (Եվրոպայի – Ս. Ս.) սարսափն էր միայն, որ արգելում էր Թուրքին մահացու վերջին հարվածը հասցնելու հայ ժողովրդի գլխին»:

Պապիկյանը չի մեղադրում Պողոս Նուբարին եվրոպական երկրներին բարենորոգումների համար դիմելուն,դառնալով, որ «այն չէր կարող վճռական հետևանք ունենալ և կարող էր նույնիսկ որոշ օգուտ բերել, եթէ չլինէր պատերազմը»: Սակայն հեղինակի այն հռետորական հարցին, թե «որ հանճարեղը կարող էր գուշակել, թե իտալական ու բալկանեան պատերազմներից յետոյ հաջորդ տարին պիտի բռնկէր ցնորք դարձած ընդհանուր պատերազմը և Թուրքիան իր ձեռքերը պիտի գտնէր բոլորովին ազատ», կարելի է վստահաբար

պատասխանել, որ հենց Օսմանյան սահմանադրության շրջանում, հատկապես Ադանայի կոտորածից հետո արևմտահայ հասարակության մեջ արմատավորվում էր այն մտայնությունը, որ հետագա աղետներից փրկվելու համար նախ անհրաժեշտ է զարկ տալ ինքնապաշտպանությանը և ապավինել սեփական ուժերին ու միջոցներին: Հենց ռամկավարների շրջանում (հատկապես վասպուրականցի — Ս. Ս.) միայն զգալի թվով գործիչներ արդեն հանգել էին այդ մտքին և ձեռնամուխ եղել ինքնապաշտպանության գործին: Շարունակելով թեման, հեղինակը ցավով է նշում, որ դիվանագիտական գործունեությամբ տարվելով և «կառավարություններին ռոմանտիկ առաքելութիւններ վերագրելով», մենք մոռացանք «ուժերի իրական հարաբերութիւնը», և փոխանակ ողջամիտ հաշվարկին ապավինելու և վտանգավոր արկածախնդրությունների մեջ չմտնելու, տուրք տվեցինք զգացմունքներին. կազմակերպեցինք կամավորական խմբեր և փորձեցինք ապստամբություն բարձրացնել:

Ամփոփելով՝ Պապիկյանը եզրակացնում է. ա) Արևմտյան Հայաստանում ապստամբական շարժումներ հայերի կողմից ամենևին գոյություն չեն ունեցել. դա թուրքական կողմի, նրա դիվանագիտության ստեղծածն էր. հայերը ջանացել են դիմել միայն ինքնապաշտպանության թուրքական հալածանքների ու հարստահարումների դեմ, բ) իսկ ինչ վերաբերում է կամավորական շարժմանն ու հայկական կոտորածներին, ապա հեղինակն իրավացիորեն գտնում է, որ «մեր պարտքն էր խուսափել թշնամուն որևէ առիթ ներկայանալուց և գործել ծայրայեղ աչալրջութեամբ, բայց այդպէս չստացվեց: Աղմուկով, ցոյցով, սահմանից այն կողմի վիճակը հաշուի չառնելով, լայն խորհրդակցութեան չենթարկած գործ ձեռնարկուեց և հանգեցրեց կատարուած իրողութեանը»:

Սակայն, միևնույն ժամանակ հեղինակը չեշտում է, որ կոտորածները տեղի էին ունենալու նաև անկախ վերոհիշյալ հանգամանքներից, պարզապես «մեր պարտքն էր առաւել զգօն լինել, որը չեղաւ»: Այստեղ պետք է նկատել, որ ռամկավարներն իրենց քննադատության մեջ մոռանում էին, որ հայության ճակատագիրը ոչ թե հայերն ու նրանց կուսակցություններն էին տնօրինում, այլ մեծ տերություններն իրենց քաղաքական շահախնդրություններով: Տե-

բություններ, որոնց խղճին է ընկնում մեր ժողովրդին հասած մեծագույն դժբախտությունը:

Վերջում Պապիկյանը, որպես հետագա գործունեության ձև, առաջարկում է արևմտահայերին ու արևելահայերին գործել տարբեր ուղղություններով, այսինքն, «Երկրի» գործերի մեջ առաջնությունը թողնել արևմտահայերին, իսկ Կովկասում արևելահայերին «տեղացին աւելի լաւ կիմանար տեղանքը»: Եվ սա ամբողջ ՀՍՌ կուսակցության տեսակետն էր այդ ժամանակ:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Թիֆլիսից աստիճանաբար նորաստեղծ Հանրապետության մայրաքաղաք Երևան տեղափոխվեցին ոչ միայն բարձրագույն իշխանության ու գործադիր մարմինները, այլև հայ կուսակցություններն ու նրանց պաշտոնական հրատարակությունները: 1919 թ. Երևան տեղափոխվեց նաև ՀՍՌ կուսակցությունն ու նրա պաշտոնաթերթ «Վան-Տոսպը», որն անվանափոխվեց և սկսեց լույս տեսնել 1919 թ. սեպտեմբերի 24-ից «Հայաստանի ձայն» անվամբ: Խմբագիրն էր Արտակ Դարբինյանը, թղթակցում էին արևմտահայ նշանավոր շատ գործիչներ: Թերթի գերակա խնդիրներն էին Արևմտահայաստանը և արևմտահայ գաղթականության հիմնահարցերը, առաքելությունը՝ ներկայացնել Եղեռնի ժամանակ երիտթուրքերի գործած գազանությունները, պաշտպանել Հայաստանը Թուրքիայից անջատելու գաղափարը, վեր հանել ՀՅԴ գործած սխալները արևմտահայերի խնդրում և հոգալ նրանց բեկորների գոյության մասին: Թերթի իղձն էր հայրենիքի երկու հատվածները տեսնել «ազատ և ամբողջացած», որտեղ կհաստատվի «ռամկավար ժողովրդապետական իրավակարգ»: Հայկական հարցում թերթը անվերապահորեն պաշտպանում էր Պողոս Նուբար փաշայի մոտեցումները և ուներ արևմտյան քաղաքական կողմնորոշում: Աշխատակցել են արևմտահայ ճանաչված գործիչներ Մ. Մալոյանը, Ն. Հակոբյանը, Ա. Մարտապետյանը, Ռ. Շատվարյանը և ուրիշներ:

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

Արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը հայկական բուրժուազիայի առաջացմանը զուգընթաց ձևավորեց հայ պրոլետարիատին: Հայաստանի այն ժամանակվա տնտեսական հետամնացությունը, երկաթուղային ճանապարհների բացակայությունը և երկրամասի ինքնատիպ առանձնահատկություններն էին պատճառը, որ հայ բուրժուազիան կազմավորվեց նախ Անդրկովկասի արդյունաբերական գլխավոր օջախներում, ապա՝ Հայաստանում: Մամուլն էլ դարձավ երկրամասի սոցիալ-տնտեսական, քաղաքական-հասարակական և մշակութային կյանքի և՛ արգասիքը, և՛ խթանը:

1900 թ. Թիֆլիսի հայ բանվորների անդրանիկ սոցիալ-դեմոկրատական խումբը՝ Բանվորական միությունը, որ արդեն գործում էր շուրջ երկու տարի, սկսում է հրատարակել «Բանւոր» թերթը: Միության ակտիվիստները՝ Մելիք Մելիքյանը (Դեդուշկա), Աստուր Կախոյանը (Բանվոր Խեչո), Հայկ Փիլոսյանը, Խ. Քեչիշյանը, Դ. Մկրտումյանը, Գարեգին Կուզիկյանը, Արտյոմ Տեր-Հարությունյանը, ձեռք էին բերել հայերեն և ռուսերեն տառեր, որը հնարավորություն էր տալիս 60–100 օրինակ ամսագրի չափերով թերթ հրատարակել և տարածել Անդրկովկասի բանվորական կենտրոններում: Թերթն իր ճակատին կրում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» կարգախոսը, իսկ վերնագրի տակ գրված էր՝ «Հայկական սոցիալիստական բանւորական օրգան»: Մեկ տարվա ընթացքում՝ 1900-ին հրատարակվել է թերթի 12, իսկ 1901-ի հունվարին՝ մեկ համար:

«Բանւորը» հրատարակվող հայերեն թերթերի ու հանդեսների մեջ առանձնանում էր իր հավատամքով. նա իր առջև խնդիր էր դրել՝ օգնել հայ բանվորներին և աշխատավորներին սոցիալիստական գիտակցության գալու, լրատվություն հաղորդելու Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական շարժումների և քաղաքական ցույցերի մասին: Թերթի 20-րդ համարում հրապարակված «Նամակ հայ բանւորներին», «Բարեգործութեան դիմակի տակ», «Խորհուրդներ» և այլ նյութերում պարզաբանված են բանվորների սոցիալական գրության հարցերը, համերաշխության անհրաժեշտությունը և պայքարի մեթոդներն ու միջոցները: «1900 թուականը մեզանում»

խորագրով հոդվածը նվիրված է Կովկասի քաղաքական իրադարձություններին, բանվորական ցույցերին, հատկապես Թիֆլիսի բանվորների մայիսմեկյան ցույցին:

«Բանւորի» 1901 թ. հունվարյան համարի առաջնորդողը խորագրված է «20-րդ դարը»: Կովկասի պրոլետարիատի մերձավորագույն խնդիրն է համարվում միապետության տապալումը և մամուլի, ժողովների ու ընտրելու ազատություն ձեռք բերելը:

1901 թ. փետրվարի 23-ին խուզարկություններ կատարվեցին, որի ընթացքում հայտնաբերվեցին «Բանւորի» օրինակներից և հեղափոխական գրականություն: Այդպիսով թերթի հրատարակությունն ընդհատվեց, սակայն այն մեկընդմիշտ պահպանեց Անդրկովկասում սոցիալիստական մամուլի առաջնեկի դերը:

1901–1903 թթ. Անդրկովկասի «Իսկրայականները» իրականացնում են ՌՍԴԲԿ կենտրոնական մարմինների, առաջին հերթին հին «Իսկրայի» հանձնարարությունները ընդհատակյա կուսակցական տպարաններ կազմակերպելու, հեղափոխական գրականություն՝ կոչեր, թռուցիկներ, գրքույկներ հրատարակելու վերաբերյալ: Դրվում են Բաքվի «Նինա» (1900) և Թիֆլիսի Հավլաբարի տպարանների հիմքերը: Այս գործում աչքի ընկնող դեր են խաղում Բ. Կնունյանցը, Մ. Մելիքյանը, Լ. Կեցխովելին, Ստ. Շահումյանը, Ա. Խումարյանը, Ա. Կախոյանը և ուրիշներ:

1895–1900 թվականներին Թիֆլիսում գործում էր աշակերտական ընդհատակյա «Ծիածան» խմբակը, որը խմորատիպ հրատարակում և տարածում էր համանուն վերնագրով թերթը: Այն խմբագրում էին ռեալական ուսումնարանի աշակերտներ Ստ. Շահումյանը, Գ. Երիցյանը, Դ. Շահվերդյանը, Ռ. Ղևոնդյանը, Ա. Տեր-Գրիգորյանը, Մ. Արապին և Ռ. Դաշտոյանը: «Ծիածանը» իր շուրջ համախմբեց Անդրկովկասի այն ժամանակվա մշակութային կենտրոնի՝ Թիֆլիսի դպրոցների հայազգի պատանիներին: «Ծիածանն» ուներ ղեկավար կենտրոն, որը կոչվում էր մայր-խումբ: Խմբակն ու թերթը նպաստում էին հայոց լեզվի, հայոց պատմության ու սոցիալիստական գաղափարների ուսումնասիրմանը, ծանոթացնում «Կոմունիստական մանիֆեստին», Փարիզի Կոմունային և դեկաբրիստների շարժմանը նվիրված գրականությանը: Թերթն ուներ հեղափոխական տրամադրություն: «Զեյթունի ապստամբությունը» հոդվածում

(1896) Ստ. Շահումյանը նկարագրում է դրվագներ հայկական ինքնապաշտպանական կռիվներից, մերկացնում սուլթանական հայահալած քաղաքականությունը:

1903 թ. ամռանը Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի և այլոց նախաձեռնությամբ Թիֆլիսում ձևավորվում է իսկբայական ուղղության հայ սոցիալ-դեմոկրատների միությունը: Նրա ղեկավարության մեջ բացի նախաձեռնողներից, մտնում էին Մ. Մելիքյանը, Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը, Ռ. Դաշտոյանը, Դ. Շահվերդյանը և Ա. Երզնկյանը: Նրանք էլ ձեռնարկում են մայրենի լեզվով քաղաքական նոր ուղղության թերթի՝ «Պրոլետարիատի» հրատարակությունը:

1902 թ. ապրիլին Ա. Խումարյանը Ստ. Շահումյանի հանձնարարությամբ մեկնում է Բաքու, այնտեղ ընդհատակում աշխատող Բ. Կնունյանցի մոտ՝ տպագրական սարքավորում ձեռք բերելու: «Բաքվում Կնունյանցը լիովին հավանություն տվեց մեր միջոցառմանը և օգնեց տպագրական պարագաներ գտնելու»,- պատմում է Խումարյանը և վկայում, որ Կնունյանցը առաջարկեց թերթը կոչել «Պրոլետարիատ» (տե՛ս «Մարտակոչ», 1924, 4 հնվ.):

1902 թ. մայիսին Թիֆլիսում նշվեց հայ ականավոր գրող Ղազարոս Աղայանի գրական-հասարակական և մանկավարժական գործունեության 40-ամյակը, որին ներկա էր և ճառով հանդես եկավ Ստ. Շահումյանը: Սակայն ճառը ընդհատվում է՝ քաղաքական բնույթի պատճառով և հունիսին խմորատիպով 100 օրինակ տպագրվում է Ջալալօղլում և տարածվում Կովկասում: Այն փաստորեն Ռուսաստանի զանազան քաղաքներում ցրված, բայց միևնույն հայացքներով միացած, մարքսիստական ավազանում մկրտված հայ երիտասարդության հրապարակային առաջին ելույթն էր: Ջերմորեն արտահայտվելով ռուս հեղափոխական-դեմոկրատների՝ Ա. Գերցենի, Վ. Բելինսկու, Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի պատմական ծառայությունների մասին, Շահումյանը նշում է, որ հայ պարբերական մամուլում դատարկություն է տիրում, որ այն երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ տիրում է անօրինությունն ու բռնությունը, չի կարող լինել բնականոն մշակութային գործունեություն: Բարձր է գնահատված Մ.

Նալբանդյանի և Գր. Արծրունու հրապարակախոսական գործունեությունը:

1902 թ. հոկտեմբերին լույս տեսավ «Պրոլետարիատի» առաջին և միակ համարը: Այն բաղկացած էր 24 փոքրածավալ էջերից: Ճակատին «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք» կարգախոսն է և «Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն» մակագրությունը: Նրա վրա ակնհայտ զգացվում է «Իսկրա» թերթի գաղափարական ազդեցությունը: Թերթը պարզաբանում է, որ սոցիալիզմը ներկայացնում է բանվոր դասակարգի իդեալների մարմնացումը, որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան կոչված է գլխավորելու բանվորական շարժումները, որոնք ուղղված են ցարիզմի դեմ: Դեմոկրատական ցենտրալիզմը պաշտպանվում է որպես կուսակցության կազմակերպական ղեկավար սկզբունք, իսկ ինտերնացիոնալիզմը հռչակվում է որպես գաղափարական աշխատանքի ծրագրային դրույթ: «Սոցիալ-դեմոկրատիա և իրականություն» ծավալուն հոդվածում ցույց է տրված Ռուսաստանի և Կովկասի հասարակական զարգացման համայնապատկերը, դասակարգային շերտավորումը, պրոլետարիատի ձևավորումը և սոցիալ-դեմոկրատիայի դերը: «Պրոլետարիատն» անդրադարձել է Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրին, գտնելով, որ նրա հիմնական բովանդակությունը բուրժուական պահանջներն ու գաղափարախոսությունն է, իսկ նրա մեջ «սոցիալիզմը մտնելով դռնից, վռնդվեց պատուհանից»:

«Ներքին տեսություն» նվիրված է Անդրկովկասի արդյունագործական կենտրոններում թափ առնող բանվորական շարժումների վերլուծությանը, շարժումներ, որոնց առաջը, թերթի կարծիքով, չի կարող առնել կովկասյան իշխանությունների հակաժողովրդական քաղաքականությունը: Տեսությունը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում ցույցերի, գործադուլների վերաբերյալ:

Թերթը «Իսկրայի» 23-րդ համարից թարգմանել և «Շարժումից» խորագրով հրապարակել է Բաթումի բանվորների դիմումը ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեին՝ քաղաքական ցույցերին մտավորականության մասնակցության վերաբերյալ և Պետերբուրգի կոմիտեի պատասխանը այդ դիմումին: Պարզաբանվում է, որ հասարակական այդ երկու շերտերի միջև չի կարող լինել խզում, որովհետև սոցիալ-դեմոկրատիան, իբրև քաղաքական կուսակցություն, ի մի է համախմբում և

ղեկավարում հանուն բանվոր դասակարգի գաղափարների հաղթանակի բոլոր կռվողներին՝ անկախ նրանց դասակարգային ծագումից:

«Պրոլետարիատը» նամակներ է հրապարակել Բաքվից, Թիֆլիսից, Գուրիայից, որոնք ողջունում են թերթի լույս ընծայումը, հաջողություն մաղթում նրան: Բանվորական շարժման լուսաբանման գործում զգալի դեր խաղացին «Պրոլետարիատի» թերթիկները»: Պահպանվել են 1903 թ. առաջին երկու համարները, որոնք հետաքրքիր նյութ են պարունակում բանվորական և գյուղական զանգվածների դրության վերաբերյալ:

«Պրոլետարիատի» հրատարակությամբ սկիզբ էր առնում սոցիալ-դեմոկրատական-բոլշևիկյան հայ պարբերական մամուլը:

1900–1903 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը է՛լ ավելի սրեց հակասությունները և շիկացրեց քաղաքական մթնոլորտը ռուսական կայսրության ամբողջ տարածքում: Տնտեսական-քաղաքական գործադուլները և ցույցերը բանվորական շարժման վերելքի նախագուշակն էին, որն իր ոլորտն առավ նաև Արևմտյան Հայաստանը: Բանվորական ելույթներին հետևեցին գյուղացիական ընդվզումները, որոնց մեջ աչքի ընկան Հաղպատի գյուղացիների ելույթները: Իսկ 1902 թ. հունիսի 12-ի հայոց եկեղեցիների ունեցվածքը և գույքը բռնագրավելու մասին կառավարական օրենքը առաջացրեց հակացարական հուզումներ:

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն ակտիվացրեցին իրենց գործունեությունը: 1903 թ. մարտին վրացական «Բրձոլա» («Պայքար») և հայկական «Պրոլետարիատ» թերթերի նախաձեռնությամբ գումարված Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին հիմնադիր համագումարի որոշմամբ այդ երկու պարբերականները միավորվում են և հրատարակվում **«Պրոլետարիատի կռիվը»** խորագրով՝ հայերեն և վրացերեն, իսկ 1905 թվականից նաև ռուսերեն: Թերթի հայերեն թողարկումը խմբագրել է Ստ. Շահումյանը: Զուգահեռաբար լույս են տեսել նաև «Պրոլետարիատի կռիվ» թերթիկները, (14 համար): Թերթի հիմնական նպատակն էր սոցիալիստական գիտակցության սերմանումը աշխատավորական զանգվածների մեջ: Թերթը անդրադարձել է նաև Հաղպատի գյուղացիական ելույթներին և հակացարական շարժումներին: Գաղափարական քարոզչությունը չի անցել առանց բանվո-

վենի: «Մեր պատասխանը» հոդվածը բանավիճային ելույթ է ընդդեմ դաշնակցության: Հեղինակը՝ Բ. Կնունյանցը, ներկայացնում է բոլշևիկների մոտեցումը արևմտահայության դատին, պնդելով, որ հայ մարքսիստները ոչ թե հակակրանքով են նայում «բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատության համար մղվող կռվին», այլ սկզբից ևեթ մտահոգվել են արևմտահայերի բախտով, միայն թե ոչ ազգայնական կուսակցությունների գործելաձևով, այլ իրատեսական քաղաքականությամբ:

«Հայ իրականությունից» անստորագիր հոդվածը, որը տպագրվել է «Պրոլետարիատի կռիվ» թերթիկի 1904 թ. հոկտեմբերի 1-ի համարում և որի հեղինակը Ստ. Շահումյանն է, «Իսկրան» արտատպում է իր 1904 թ. նոյեմբերի 28-ի համարում: Այնտեղ կոնկրետ փաստերով ցույց է տրված հայ իրականության քաղաքական զարթոնքը, հակացարական շարժումների նշանակությունը: Շահումյանը նշում է, որ հայ ազգային կուսակցությունները ռուսականացման քաղաքականության դեմ պայքարելու պատրվակով ջանում են հայ բնակչությանը հեռու պահել համառուսական շարժումների իրազեկումից, սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից, մինչդեռ քաղաքական իրատեսությունը պահանջում է ցարական ինքնակալության դեմ պայքարելու համախմբում: 1905–1907 թթ. ռուսաստանյան հեղափոխական շարժումները ճանապարհ հարթեցին ազատ խոսքի և պարբերական մամուլի աննախադեպ զարգացման համար, որն իր արտահայտությունը գտավ նաև կայսրության ծայրամասային շրջաններում: Հանդես են գալիս լեգալ թերթեր ու հանդեսներ, որոնք դառնում են հեղափոխական իրադարձությունների լուսավորության միջոցներ և գաղափարական ամբիոններ:

Արդ, բոլշևիկյան հայ լեգալ պարբերական մամուլի պատմությունը բացվում է «Կայծ» թերթով, որի առաջին համարը լույս է տեսել 1906 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսում: Այն ՌՍԴԲԿ երկու թևերի՝ բոլշևիկների և մենշևիկների համատեղ տպագիր օրգանն էր: Թերթը խմբագրել են Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Գ. Ղարաջյանը (Արկոմեդ), Ս. Կասյանը: Ակտիվորեն աշխատակցել են Ս. Խանոյանը, Ա. Մռավյանը (Հրանտ), Ռ. Դաշտոյանը, Մ. Միրաքյանը, Ա. Կարինյանը, Մ. Մելիքյանը. Հակոբ Հակոբյանը, Ա. Խումարյանը, Բ. Կնունյանցը, Ս. Բանվորյանը, Խ. Նարիմանյանը (Մուշեղ Բագրատունի), Գ.

Մնացականյանը, Ա. Երզնկյանը, Ի. Դանիելյանը և ուրիշներ: Հրատարակվել է «Կայծի» 47 համար, որը 1906 թ. օգոստոսի 6-ին փակվել է «վտանգավոր ուղղության» պատճառով: Օգոստոսի 18-ին այն լույս է տեսել «Նոր խոսք» անունով, որը սեպտեմբերի 21-ին փակվել է նույն պատճառով: Իր գոյությամբ «պարտական լինելով» հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ազատական մթնոլորտին, «Կայծը», ի տարբերություն բոլշևիկյան գաղտնի թերթերի ու հանդեսների, լույս էր տեսնում մեծ տպաքանակով: Հայ սոցիալ-դեմոկրատները, այդպիսով, հնարավորություն ստացան հաղորդակցվելու բանվորների, գյուղացիների, մտավորականների հետ, քարոզելու իրենց գաղափարները: Ընդարձակ էր նաև նրա տարածման աշխարհագրությունը՝ Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, Պետերբուրգ, Հայաստանի քաղաքներ ու գյուղեր, Ռուսաստանի հայկական համայնքներ, արտասահմանյան հայ գաղթօջախներ: «Մեր օրգանը» խորագրով առաջնորդող հոդվածը, որը գրել է Ստ. Շահումյանը, պարզում է թերթի հավատամքը Կովկասի սոցիալ-քաղաքական նոր իրավիճակում: Շահումյանն ընդգծում է, որ հայ ժողովուրդն էլ դուրս եկավ ազգային կյանքի նեղ շրջանակներից և կապվեց լայն, լուսավոր քաղաքակիրթ աշխարհի հետ: Հայ իրականության մեջ ևս բեկում է կատարվել. երևան է եկել նոր աշխարհայացք՝ սոցիալիզմը, որի կրողն է պրոլետարիատը: «Կայծում» հրապարակվել են Շահումյանի ավելի քան 60 հոդված և թղթակցություն, մամուլի տեսություն և լրատվություն, այդ թվում՝ «Մեր օրգանը», «ՌՍԴԲԿ վերջին համագումարը», «Կառավարութիւնը և Դուման», «Պլեխանովի նամակի առիթով», «Կովկասեան պատգամաւորները Դումայում», «Գիւղացիական շարժումը», «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», «Պետական Դումայի արձակումը», «Հայ-թաթարական պրովոկացիան», «Զօրքը չէզոք պէտք է լինի» և այլն:

Հայտնի է, որ Ստ. Շահումյանը ազգային հարցի տեսաբան էր: «Կայծ» թերթի 1906 թ. հուլիսյան համարներում (թիվ 34–40) թերթոնի ձևով լույս տեսավ նրա «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատությունը, ուր հարուստ գրականության վերլուծության հիման վրա տրված է ազգային հարցի հիմնավոր մեկնաբանությունը՝ ըստ սոցիալ-դեմոկրատական աշխարհայացքի: Նա այդ հարցի արդար լուծումը տեսնում է «ժողովրդապետութեան սկզբ-

բունքի կատարեալ հաղթութեան, դեմոկրատական քաղաքական կարգերի լիակատար իրականացման» մեջ, երբ Ռուսաստանի նման բազմազգ պետության մեջ կհաստատվի քաղաքացիական հավասարություն պետության բոլոր հպատակների համար՝ անկախ ազգից ու ցեղից, կապահովվի ազգային մշակույթի զարգացում և քաղաքական ինքնորոշման իրավունք՝ պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի համար: Մեկնաբանելով այս պահանջները, նա շեշտում է. «Ամեն մի քաղաքացի հաւասարազօր տէր է իր պետութեան սահմաններում և ոչ ոք իրաւունք չունի բռնանալու նրա վրա, ճնշելու նրան իր ազգային ծագումի համար: Երկրորդ. լեզուների վրա ճնշումը պէտք է վերացվի: Ամէն ոք կարող է խօսել և կրթուել այն լեզուով, որով նա կարող է, որով նա աւելի լավ և աւելի ազատ կարող է զարգանալ: Ազգային կուլտուրան պէտք է ազատ և անձեռնմխելի լինի... Նոյնպես ոչ ոք իրաւունք չպետք է ունենա բռնանալու այս կամ այն ժողովրդի կրոնական հայացքների, սովորութիւնների վրա և այլն»: Դառնալով ազգերի ինքնորոշման իրավունքին, Շահումյանը մեկնաբանում է. «Մենք աբսօլյուտ և կատեգորիկ կերպով չենք ժխտում սեպարատիզմը կամ ֆեդերալիզմը, ինչպես աբսօլիւտ և կատեգորիկ կերպով նացիոնալիստները պնդում են նրա վրա: Հնարավոր են դրութիւններ, երբ այս կամ այն ազգի վերաբերմամբ մենք կգտնենք աւելի ցանկալի և անհրաժեշտ ֆէդերացիան կամ նոյնիսկ կատարեալ անջատումը: Այդպիսի դէպքերի համար երկրի սահմանադրութիւնը պէտք է ապահովի քաղաքական ինքնորոշման իրաւունք»:

Աշխատության երկրորդ մասում «Ազգային հարցը Ռուսաստանում», Շահումյանը ընդհանուր տեսական հիմնավորումներից անցնում է ապագա Ռուսաստանի պետական ցանկալի կառուցվածքին: Ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացումը պայմանավորելով նպատակահարմարության գործոնով, Շահումյանը Անդրկովկասի ժողովուրդների համար ավելի ձեռնտու է գտնում Ռուսաստանի կազմում մնալը, քանի որ նրանց գլխին միշտ կախված կլինի այն դժոխքի ուրվականը, որի նմանը դժվար է երևակայել, մինչև իսկ մեր առաջ ունենալով ներկա Թուրք-հայկական արյունոտ դրաման:

Պետական Դումային նվիրված հոդվածներում Շահումյանը քննադատում է ցարիզմի հակաժողովրդական քաղաքականությունը, դեմոկրատիայի ճնշումը: «Պետական Դումայի արձակումը» հոդվածում (1906, թիվ 37) ասված է, որ ցարը գրչի մի շարժումով ցրեց Պետական Դուման, ժողովրդական ներկայացուցիչներին, որոնց կյանք էր տվել՝ իր կյանքը փրկելու համար: 1906 թ. մայիսից «Կայծի» խմբագրական կազմի մեջ էր Սուրեն Սպանդարյանը (Տիմոֆեյ), որը Մոսկվայում հեղափոխական ցույցերին մասնակցելու համար հեռացվել էր համալսարանից և արտաքսվել Կովկաս: Հենց այդ օրերին էլ Շահումյանը մեկնում է արտասահման՝ ՌՍԴԲԿ չորրորդ համագումարին մասնակցելու համար: Խմբագրության մենշևիկյան թևը (Ղարաջյան, Երզնկյան) փորձում է փոխել թերթի ուղղությունը, սակայն «մոլեգին Տիմոֆեյը» խափանում է նրանց նկրտումները, շարունակելով «Կայծի» շահումյանական ընդունված ոգին: Շահումյանի վերադարձից հետո մենշևիկ խմբագիրները հեռանում են և հրատարակում իրենց թերթը՝ «Հոսանք» անունով:

Ս. Սպանդարյանի հոդվածներում զգացվում են համարձակ հարցադրումներ, հրապարակախոսական կրքոտ չեշտադրություն: Նա գերազանցապես գրել է քաղաքական ընթացիկ կյանքի, մշակույթի, դպրոցական, գրականության և ազգային լուսավորական հարցերի մասին: «Կայծում» լույս են տեսել նրա «Բուրժուական մամուլը և սոցիալ-դեմոկրատիայի հաղթանակը», «Բանուորական արհեստակցական միութիւնների մասին», «Յեղափոխութեան ալիքը բարձրանում է», «Պետական Դումայի ընտրութեան մասին», «Ինքնակալութիւնը և գյուղացիութիւնը», «Յեղափոխութիւն մի թասս ջրում» և այլ օրախնդիր հոդվածներ: Սպանդարյանը սուր բանավեճ է մղել դաշնակցության դեմ, քննադատել նրանց ազգայնական գաղափարախոսությունը:

«Կայծում» ելույթ են ունեցել նաև Ս. Կասյանը, Գ. Ղարաջյանը (Արկոմեդ), Պ. Մնացականյանը, Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Մ. Մելիքյանը, Ա. Կախոյանը և ուրիշներ:

1906 թ. օգոստոսին հրատարակվեց **«Նոր խոսք»** թերթը: Լույս տեսավ «Նոր խոսքի» ընդամենը 14 համար, որից հետո սեպտեմբերի 21-ին այն ևս փակվեց՝ իր համարձակ քաղաքական հարցադրումների համար: Հիշատակության արժանի են «Օրը, թէ՞ սպառնալիք», «Ազ-

րարային հարցը և կառավարությունը», «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան», «Քաղաքականությունը և ժողովը», «Կոնստիտուցիոնալիզմ, թե՞ պառլամենտարիզմ», «Հեղափոխության անդրադարձումները», «Մեր գործը կազմակերպվում է» և այլ հոդվածներ:

Բոլշևիկյան հաջորդ լեգալ թերթը **«Օրերն»** է, որը լույս տեսավ 1906 թ. փետրվարի 2-ին Բաքվում, Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և Ս. Կասյանի խմբագրությամբ: Ութ համար լույս տեսնելուց հետո «Օրերը» Բաքվի գեներալ-նահանգապետի կարգադրությամբ փակվում է:

1906 թ. մարտի 19-ին Բաքվում Ս. Կասյանի խմբագրությամբ լույս է տեսնում ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության օրգանը՝ «Բանվորի ձայնը»: Հրատարակվել է ընդամենը երկու համար: Նրա էջերում ներկայացվել է ցարի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որը բնութագրվել է որպես «Թակարդ ժողովրդի համար»: «Խմբագրությունից», «Երկու ազգ», «ՌՍԴԲԿ երկու տակտիկան Պետական Դումայի վերաբերյալ», «Հեղափոխությունը ունի իր տրամաբանությունը», «Հայ-թուրքական ընդհարումները և հաշտությունը»,- ահա այն հոդվածների վերնագրերը, որոնք զբաղեցնում են «Բանվորի ձայնի» էջերը: Պարզաբանելով ՌՍԴԲԿ ծրագրի հիմնադրույթները, թերթը հայ բանվորներին կոչ է անում համախմբվել սոցիալ-դեմոկրատների դրոշի ներքո:

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի հայկական սեկցիան 1906 թ. մայիսի 1-ից մինչև հուլիսի 27-ը Բաքվում հրատարակում է **«Կոչ-Դավեթ»** թերթը՝ հայերեն և թուրքերեն: 16 համար լույս տեսնելուց հետո Բաքվի գեներալ-նահանգապետի կարգադրությամբ, «վնասակար ուղղություն» հերթապահ պատրվակով թերթը փակվում է: Պետք է ասել, որ այն ակտիվ դեր խաղաց հայ-թաթարական ընդհարումները զսպելու և ցարիզմի հրահրած ազգամիջյան կոտորածները կանխելու գործում: «Նոր կեանքի արշալույսին», «Ու՞ր է ելքը», «Երևանի դէպքը», «Վերջին հայ-թուրքական դէպքերի առթիւ», «Ինչու համար է ժողովրդին սահմանադրութիւն հարկաւոր», «Բաւական է՝ որքան հոսեց արիւնը», «Ազգային հարցը և հայերի ավտոնոմիան» և այլ հոդվածներ մեկնաբանում են սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական դիրքորոշումները, դատապարտում ցարիզմի՝ փոքր ազգերին ճնշելու քաղաքականությունը:

Ստ. Շահումյանի և նրա զինակիցների ջանքերով 1911 թ. նոյեմբերից մինչև 1912 թ. հունվար Բաքվում լույս տեսավ կոմունիստական հայերեն առաջին հանդեսը՝ **«Նոր խոսքը»**. հրատարակվել է վեց համար, երեք գրքով: «Նոր խոսքին» ակտիվորեն աշխատակցել են Վահան Տերյանը, Ռուբեն Դաշտոյանը, Հովսեփ Կարախանյանը, Արտաշես Կարինյանը, Ալեքսանդր Վարդանյանը, Ալեքսանդր Ստոպանին, Մարտին Սահակյանը, Մելիք Մելիքյանցը և ուրիշներ:

Ստ. Շահումյանը մեծ կարևորություն էր տալիս մարքսիստական տեսական պարբերականի ստեղծմանը, որի շնորհիվ կարելի էր ամրացնել մարքսիզմի ազդեցությունը երիտասարդության և բանվոր դասակարգի վրա, մարքսիզմի տեսանկյունով լուսաբանել հայ իրականության հարցերը: Շահումյանը պնդում էր, որ հարկավոր է հայ ժողովրդի ընթացիկ կյանքը և պատմության հարցերը լուսաբանել նորովի: «Տիեզերական թութակը» վերնագրով հոդվածը նվիրված է դաշնակցության տեսաբան Միքայել Վարանդյանի (Հովհաննիսյան) մարքսիստական տեսության թյուրըմբռնման մերկացմանը: «Իրականութիւն և հեռանկարներ» հոդվածը արձանագրում է այն քաղաքական զիջումները, որ կատարում էին տիրողները բարձրացող հեղափոխական ալիքի ազդեցության տակ, երբ Պետական Դումայի ամբիոնից արդեն ազատ հնչում է բանվորական և գյուղացիական դեմոկրատիայի ներկայացուցիչների մտրակող խոսքը: Խմբագրական ազդից երևում է, որ Շահումյանը «Նոր խոսքի» համար պետք է գրեր նաև իր մի շարք աշխատությունները, սակայն գտնվելով աստրախանյան աքսորավայրում, հնարավորություն չի ունեցել դրանք հրատարակել:

Ալեքսանդր Ստոպանին իր «Հայ բանուորի բիւջէն», «Նաւթարտադրութիւնը», «Ներկա դրութիւնը», «Ինչպէս են հաշմանդամւում նաւթարդյունաբերութեան բանւորները», ինչպես և Աշ. Խումարյանը իր «Գործադուլները 1911 թւականին», Գ. Գրիգորյանը «Արդյունաբերական կրիզիսները» հոդվածներում քննարկել են բանվորների սոցիալ-տնտեսական դրության հարցերը, կապիտալիզմի զարգացման առաջացրած տեղաշարժերը:

Ուշագրավ են «Նոր խոսքի» գեղարվեստական նյութերը: Հանդեսի անդրանիկ համարը բացվում է Հ. Հակոբյանի «Մուրճը ձեռքներիդ, մաքառման ժամին» բանաստեղծությամբ, իսկ ապա տպագր-

վում են նաև այլ բանաստեղծություններ: Վ. Տերյանը հանդես է եկել «Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին» և «Արշալույս» բանաստեղծություններով, որոնք նոր շրջադարձ են հատկանշում պոետի կյանքում:

«Նոր խոսքում» կարևոր դեր է խաղացել Ա. Կարինյանը, որը Շահումյանի ձերբակալությունից հետո խմբագրել է հանդեսի նյութերը, հանդես եկել հետաքրքրական գրականագիտական հոդվածներով:

1914 թ. հունվարի 26-ին Թիֆլիսում Ս. Կասյանի խմբագրությամբ լույս է տեսնում **«Մեր խոսքը»** թերթի առաջին և միակ համարը, որն իր «վտանգավոր ուղղության համար» անմիջապես բռնագրավվում է ցարական գործակալների կողմից, իսկ պաշտոնական խմբագիրը դատի է տրվում:

«Մեր խոսքը» կոչ է անում հայ բանվորությանը համախմբվել սոցիալ-դեմոկրատիայի դրոշի շուրջ:

Թերթում տպագրվել են Ստ. Շահումյանի «Չորրորդ Պետական Դուման», Ս. Կասյանի «Հասարակական կարծիքը և մամուլը», «Հայկական հարցը և հայ դեմոկրատիան» և այլ հոդվածներ ու լուրեր: Ուշագրավ է, որ թերթում հրապարակվում է Մ. Գորկու «Ամեն տեղ է» պատմվածքի առաջին մասը:

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլը նոր բովանդակություն ստացավ համաշխարհային առաջին պատերազմի և ռուսական երկրորդ հեղափոխության շրջանում (1914–1917 թթ.):

Անդրկովկասի հայ բոլշևիկները 1915–1917 թթ. Թիֆլիսում հրատարակեցին «Պայքար» գրական, հասարակական, քաղաքական և տնտեսական շաբաթաթերթը: Թերթի խմբագրական կազմի մեջ էին մտնում Ա. Մռավյանը, Ս. Խանոյանը: Մինչև 1917 թ. հունիս «Պայքարի» աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեին Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Ա. Ամիրյանը, Ա. Կարինյանը, Մ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, Հ. Կամարին, Ա. Վշտունին, Սիմակը և ուրիշներ: Թերթի խմբագիր-հրատարակիչը «Պայքարի» միակ գրաշար Հ. Սարգսյանն էր: Նախահեղափոխական բոլշևիկյան հայ պարբերական մամուլի մեջ «Պայքարը» համեմատաբար երկար կյանք ունեցավ:

Թերթի առաջին համարը բացվում է «Հայերը և հարևան ազգերը» առաջնորդող հոդվածով: Նույն համարում հրապարակված են

Մաքսիմ Գորկու «Մրրկահավի երգը», Հ. Հակոբյանի՝ «Պահակ», Գ. Հայկունու «Արշալույսի երգ», Ա. Վշտունու «Աշնան երգեր» բանաստեղծությունները, Մ. Արազու «Կարմիր համբույրը» պատմվածքը:

«Պայքարը» գրաքննական ավերածության էր ենթարկվում, և թերթի բազմաթիվ սյունակներ լույս էին տեսնում ուղղակի սպիտակ: Այսուհանդերձ, թերթը ձգտում էր հակապատերազմական տրամադրություններ սերմանել իր ընթերցողների շրջանում և քարոզել ինտերնացիոնալիզմի սկզբունքները: Ստ. Շահումյանի «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը», Ա. Միկոյանի «Պ. Ահարոնեանը իր լուութեան մասին», «Վրաց նացիոնալիստները և դեմոկրատիան», «Ժամանակաւոր կառավարութիւնը և դեմոկրատիան», Ա. Ամիրյանի «Մեր մարքսիստանմանները» և այլ հոդվածներ ուղղված են իրենց գաղափարական հակառակորդներին, որոնք որակվում են որպես բուրժուա-ազգայնական գաղափարախոսներ: Շահումյանը գտնում է, որ նացիոնալիզմը և լիբերալիզմը անբաժանելի կերպով կապված են միմյանց, ընդսմին իմպերիալիզմի շրջանում նացիոնալիզմը հասնում է իր գագաթնակետին: Նա ապարդյուն է համարում նացիոնալիզմի և ինտերնացիոնալիզմի հաշտեցման փորձերը: Ա. Ամիրյանի հոդվածներն ուղղված են «Մշակի» շուրջ համախմբված «սպեցիֆիկներ» Բ. Իշխանյանի և Դ. Անանունի դեմ: «Պայքարը» բանավիճել է նաև «Հորիզոն», «Արև» և այլ թերթերի հետ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո մարտի 20-ից (68-րդ համարից) «Պայքարը» դարձավ ամենօրյա ազատ թերթ: Այժմ նա հարձակման թիրախ դարձրեց մենշևիկների ու էսեռների գաղափարական դիրքորոշումները, պաշտպանելով բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականին անցնելու բոլշևիկյան կարգախոսը: «Ժամանակավոր կառավարությունը և հեղափոխական դեմոկրատիան» հոդվածում Ա. Միկոյանը տալիս է երկիշխանության գնահատականը և բանվորական ու զինվորական սովետները հռչակում հեղափոխության շարժիչ ուժեր, որոնց և պետք է պատկանի իշխանությունը: «Պայքարը» ժամանակավոր կառավարությունը համարել է հետադիմական և կոչ արել համախմբվել սովետների շուրջ և հեղափոխությունը հասցնել իր հաղթական վախճանին: Ա. Մռավյանը «Մինիստր Կերենսկին» հոդվա-

ծում ժամանակավոր կառավարությունը որակում է իբրև դավաճանական ու հակաժողովրդական իշխանություն:

«Պայքարը» մեծ տեղ է տալիս արվեստի և գրականության հարցերին, գովաստական գրախոսություններ հրապարակում Հ. Հակոբյանի նախաձեռնած «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմ» ժողովածուների մասին, պաշտպանում պրոլետարական գրականությունը զարգացնելու գաղափարը: Գրականագիտական հոդվածներով հանդես են գալիս Ստ. Շահումյանը, Ա. Կարինյանը, Ա. Մռավյանը, իրենց գաղափարախոսության դիրքերից գնահատում Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Սունդուկյանի, Րաֆֆու, Ալ. Շիրվանզադեի, Գ. Զոհրապի, Հովհ. Թումանյանի, Վահան Տերյանի, Ավ. Իսահակյանի, Շ. Կուրղինյանի և շատ ուրիշ հայ գրողների գրական վաստակը: «Պայքարում» լույս են տեսել Հ. Հակոբյանի, Մ. Արազու և Հ. Կամարու ստեղծագործությունները: «Պայքարում» հրատարակվել են «Ինտերնացիոնալը», հեղափոխական երգեր:

«Պայքարի» խմբագրական կազմը միատարր չէր, նրան մասնակցում էին նաև մենշևիկները: Բոլշևիկների և մենշևիկների հիմնական տարաձայնությունը իր արտահայտությունը գտավ նաև «Պայքարի» խմբագրությունում, ընդամին, 1917 թ. հունիսից մենշևիկյան ազդեցությունը այնքան ուժեղացավ, որ նրանք գրավեցին խմբագրական ղեկավար դիրքերը: Բոլշևիկները հարմար գտնեցին հեռանալ թերթից:

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո ավելի է խորանում հասարակական ուժերի բևեռացումը: Հայ բոլշևիկները ձեռնամուխ են լինում Լենինի Ապրիլյան թեզիսների գաղափարների քարոզչությանը, սոցիալիստական հեղափոխության գաղափարական նախապատրաստության գործին: Ալեքսանդրապոլում կազմակերպված զինվորների դեպուտատների խորհուրդը 1917 թ. հրատարակում է իր պաշտոնական օրգանը՝ “Солдат” թերթը, իսկ երբ ստեղծվում է բանվորների դեպուտատների խորհուրդ և միանում զինվորական խորհրդին, թերթը վերանվանվում է “Солдат и рабочий”: Խմբագիրն էր Պ. Արվելաձեն, ակտիվ աշխատակիցներից՝ Բ. Ղարիբջանյանը: Սակայն շուտով Ալեքսանդրապոլի խորհրդի ղեկավարությունը անցնում է էսեռների, մենշևիկների ու դաշնակ-

ցականների ձեռքը. "Солдат и рабочий" թերթը՝ նույնպես: Արվելաձեն հրաժարվում է խմբագրի պարտականությունից, և 1917 թ. հուլիսի 14-ից թերթը դադարում է բոլշևիկյան լինելուց:

1917 թ. օգոստոսին ՌՍԴԲԿ(բ) Ալեքսանդրապոլի կոմիտեն սկսում է հրատարակել "Правда жизни" շաբաթաթերթը, որը խմբագրում էին Պ. Արվելաձեն և Բ. Ղարիբջանյանը:

Քննադատում էր մենշևիկներին, էսեռներին ու դաշնակցականներին, նրանց վարքագիծը որակելով հակահեղափոխական:

1917 թ. մայիսի 1-ից մինչև օգոստոսի 16-ը Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսնում ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի օրգան **«Սոցիալ-դէմօկրատը»**, որտեղ բացի խմբագրից, ընդարձակ հոդվածներով հանդես է գալիս Ա. Միկոյանը: Նրանք իրենց հրապարակախոսական ելույթների հիմնական թիրախ են դարձնում ժամանակավոր կառավարությանը, կոչ անելով ոչ մի աջակցություն ցույց չտալ այդ «ռեակցիոն իշխանությանը» և օրվա նշանաբան են հռչակում «Ամբողջ իշխանությունը բանվորական և գյուղացիական սովետներին» կարգախոսը: Ռազմավարական առաջնակարգ խնդիր է դիտում թերթը էսեռների ու մենշևիկների մերկացումն ու չեզոքացումը, որոնք, ըստ բոլշևիկների, բուրժուազիայի սոցիալական հենարանի դերում էին:

«Սոցիալ-դեմոկրատին», բացի Ստ. Շահումյանից և Ա. Միկոյանից, ակտիվորեն աշխատակցել են Ալ. Մյասնիկյանը, Մ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, Ա. Կարինյանը, Ս. Կասյանը, Ս. Վարդանյանը, Գ. Ղազարյանը, Հ. Կամարին և ուրիշներ: «Պրոլետարիատն ու բուրժուազիան արդի հեղափոխության մեջ» հոդվածը 1917 թ. հուլիս-օգոստոս ամիսներին կայացած բոլշևիկյան կուսակցության 6-րդ համագումարի պատգամավոր Ալ. Մյասնիկյանի ելույթն է՝ կուսակցական որոշումների ոգով: Ալ. Մյասնիկյանը այդ ժամանակ Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարն էր և միաժամանակ ղեկավարում էր Բելոռուսիայի կոմկուսի Կենտկոմի, Ռևկոմի և Մինսկի սովետի աշխատանքները:

«Սոցիալ-դեմոկրատում» զետեղված են Հ. Հակոբյանի, Հ. Կամարու, Գ. Ղազարյանի բանաստեղծությունները: Թերթը հրապարակել է «Ինտերնացիոնալը»՝ Կամարու թարգմանությամբ:

Ալեքսանդրապոլում հրատարակված բոլշևիկյան առաջին հայերեն թերթը «Նոր կեանքն» է, որը լույս տեսավ 1917 թ. հունիսին: Այն նաև բուն Հայաստանի տարածքում առաջին բոլշևիկյան հայերեն թերթն է: Բ. Ղարիբջանյանը, Գ. Աթարբեկյանը, Ս. Ալավերդյանը ղեկավարելով Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը՝ հիմնադրեցին իրենց օրգանը: Թերթը խոստանում է «ուղեցույց աստղ» լինել աշխատավորության՝ իր իրավունքների համար մղած պայքարում: Բ. Ղարիբջանյանն իր «Նոր լրագիրը» հոդվածում հավաստիացնում է, որ լրագիրը պիտի ասի բոլոր ճշմարտությունները, բաց անի ընթերցողի առջև այն բոլոր անարդարությունները, որոնք միասնական ուժերով պիտի հարթվեն և վերացվեն: Թերթը իր երկրորդ համարի առաջնորդողում կոչ է անում բանվորներին, զինվորներին, գյուղացիներին կանգնել ռուսական հեղափոխության դրոշի տակ:

1917 թ. բոլշևիկյան ապրիլյան կոնֆերանսը կուսակցությունը զինեց մոտալուտ գաղափարական կարգախոսներով՝ վերջ երկիշխանությանը, ամբողջ իշխանությունը սովետներին, իսկ հուլիսին կայացած 6-րդ համագումարը առաջադրեց զինված ապստամբության, սոցիալիստական հեղափոխության իրագործման ծրագիր: Բոլշևիկյան մամուլը, այդ թվում նաև հայկականը, մտավ նոր փուլ, ծնվեցին նոր պարբերականներ՝ սովետական իշխանության առաջին հայերեն թերթը՝ Բաքվի Կոմունայի «Տեղեկատուն», Հայկական գործերի Կոմիսարիատի մամուլը՝ «Կոմունիստ» շաբաթաթերթը (Վ. Ավանեսովի և Վ. Տերյանի խմբագրությամբ) և կոմիսարիատի տեղական բաժանմունքների թերթերը (Պյատիգորսկում «Կարմիր օրերը», Արմավիրում «Բանվորի ձայնը», Աստրախանում «Կարմիր բանվորը», Կրասնոդարում «Կարմիր աստղը», Դոնի Ռոստովում «Բանվորի կռիվը»):

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ («ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐ») ՄԱՄՈՒԼ (1900–1920)

«Սպեցիֆիկյան» պարբերական մամուլի էությունը և առանձնահատկությունները լավ հասկանալու համար նախ անհրաժեշտ է հակիրճ անդրադառնալ սույն կազմակերպության ձևավորման, գա-

ղափարախոսության, ծրագրային և մարտավարության հարցերի լուսաբանությանը:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ) հիմնվել է 1903 թ. հոկտեմբերին բանվորաշատ Բաքվում: Կազմակերպության գաղափարական ձևավորման գործում զգալի է եղել նախկին հնչակյան Երվանդ Պալյանի կողմից 1900 թ. Ժնևում հրատարակվող «Հանդէս» ամսագրի խաղացած դերը: Այս կազմակերպության հիմնադիր-գաղափարախոսներն էին Ալեքսանդր Մատուրյանը (Ռուբենի), Ղազար և Նարիման Տեր-Ղազարյանները, Բախշի Իշխանյանը, Գարեգին Կոզիկյանը (Եսալեմ), Տիգրան Իսախանյանը, Երվանդ Պալյանը, Դավիթ Տեր-Դանիելյանը (Անանուն) և ուրիշներ: Նրանք պատմության մեջ հայտնի են նաև «սպեցիֆիկներ» անունով: Նման անվանման համար հիմք է ծառայել այն, որ կազմակերպության գաղափարախոսները, որպես կանխադրույթ, հաճախակի էին մատնանշում հայ բանվորների սոցիալ-դասակարգային պայքարի, հայ իրականության և կյանքի յուրահատուկ (ռուսերեն՝ «սպեցիֆիկ») պայմանները: ՍԴԲՀԿ-ը ռուսահայ մտավորականների կողմից ստեղծված սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական ուղղության բանվորական կազմակերպություն էր: Սոցիալ-դասակարգային կազմի տեսակետից «սպեցիֆիկները» հայ բանվորական կազմակերպություն էին, որի ոչ այնքան ստվար շարքերում, բացի բանվորներից, որոշակի քանակ էին կազմում նաև տարբեր զբաղմունքի մտավորականները:

«Սպեցիֆիկները» գաղափարախոսական, ծրագրային հարցերում գրեթե լիովին կանգնած էին մենշևիկյան դիրքորոշման վրա, իսկ կազմակերպական կառուցվածքի տեսակետից խիստ նմանվում ու գրեթե նույնանում էին հրեական սոցիալ-դեմոկրատական բանվորական միությանը՝ Բունդին: Հայտնի է, որ ամբողջ Ռուսաստանով մեկ ցրված հրեաներն իրենց բանվորական կազմակերպությունները հիմնել էին զուտ ազգային հատկանիշով: Հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը ևս գտնում էր, որ հայերն ու հայ բանվորությունը, ինչպես որևէ ազգի բանվոր, ունեն իրենց կյանքի, պայքարի ու նպատակների առանձնահատկությունները: Օրինակ, նրանք ցույց էին տալիս, որ հայ բանվորությունը ցրված է ամբողջ Կովկասով մեկ, որ հայ ժողովուրդն ունի հայկական հարց և գտն-

վում է աշխարհագրական և ազգային-մշակութային յուրահատուկ պայմաններում և այլն: Դրանից էլ ելնելով նրանք գտնում էին, որ հայ բանվորին չպետք է նույնացնել մյուս ազգերի բանվորների հետ, քանզի յուրահատուկ են նրա կարիքները, պահանջներն ու ձգտումները, անգամ հոգեբանությունը: Բացի այդ. «Ամեն մի ազգության պրոլետարիատի կռիվը,- գրում էր «սպեցիֆիկների» հայտնի տեսաբան Ավ. Ռուբենին,- այդ տեսակետից տարբեր է մյուս ազգության բանվորության կռվից այնքան, որքան նացիոնալիզմի արտահայտությունները տարբեր ազգությունների մեջ, տարբեր են»[1]: Այստեղից էլ կազմակերպության հիմնադիրները գտնում էին, որ ՍԴԲՀԿ-ը պետք է կազմավորվի ազգային սկզբունքով և ՌՍԴԲԿ հետ կապվի ֆեդերատիվ (դաշնային) հիմունքներով:

Այսպիսով, «սպեցիֆիկները» մերժում էին բոլշևիկների հռչակած «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» և կուսակցության կազմակերպական «ցենտրալիզմի» սկզբունքները: Պետք է ասել, որ մոտեցումների ու գործելակերպի նման պարագայում նրանք, մեծամասնական-լենինյանների համեմատությամբ, ավելի ճիշտ էին վարվում, երբ ձգտում էին հայ բանվորին հեռու պահել ինտերնացիոնալիզմի կեղծ ու անորոշ կարգախոսներից և նրան դնել գործնական ընկերային-դասակարգային պայքարի ուղու վրա:

Հարկ է նշել, որ «սպեցիֆիկները» հակադիր էին բոլշևիկներին ոչ միայն կազմակերպական, այլև գաղափարական, ծրագրային ու մարտավարական հարցերում: Ինչպես մյուս սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունները, «սպեցիֆիկներն» էլ խոսում էին պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության, տնտեսական և սոցիալ-քաղաքական շահերի, ընկերվարական հասարակարգի հաստատման անհրաժեշտության մասին: «Սպեցիֆիկները» որոշակի նշանակություն էին տալիս նաև ազգային գործոնին: «Հայը,- գրում էր «սպեցիֆիկների» գաղափարախոս Դ. Անանունը,- այս կամ այն դասակարգի անդամ լինելուց բացի, նաև ազգության անդամ է»[2]:

Այս խնդրում «սպեցիֆիկները» դեմ արտահայտվելով բոլշևիկ-լենինյանների առաջ քաշած ազգերի ինքնորոշման ծրագրային պա-

---

[1] Տե՛ս «Կյանք», Թիֆլիս, 1 հուլիսի, 1906 թ.:
[2] Տե՛ս «Բանվոր», 24 ապրիլի, 1917 թ.:

հանջին, պաշտպանում էին ավստրիական սոցիալիստների մշակած ազգային-մշակութային ինքնավարության ծրագիրը: Դ. Անանունը գտնում էր, որ հայերի ազգային շահը պահանջում է, որ հանդես գան ազգային-մշակութային ինքնավարության կարգախոսով: Նա պարզաբանում էր, որ եթե ինքնորոշման իրավունքի տակ «հասկացվում է անջատում Ռուսաստանից, ապա հայ կազմակերպությունը հրաժարվում է նման արտոնությունից»[1]: Դ. Անանունը, Բ. Իշխանյանը և մյուսները տվյալ փուլում իրավացիորեն ձեռնտու չէին համարում Հայաստանի քաղաքական անկախությունը:

Այդուհանդերձ, «սպեցիֆիկները», որպես սոցիալ-դեմոկրատ մարքսիստներ, առաջնայինը համարում էին դասակարգային շահը, բանվոր դասակարգի ձգտումների և շահերի պաշտպանությունը: Այստեղից էլ նրանք դասվում են պրոլետարական, սոցիալ-դեմոկրատական ձախակողմյան կուսակցությունների շարքը: Արդեն 1905 թ. հոկտեմբերին հրավիրված ՍԴԲՀԿ խորհրդաժողովում ամբողջական ձևակերպում ստացան կազմակերպության ծրագրային հիմնադրույթները և կազմակերպական կառուցվածքի հարցերը:

ՍԴԲՀԿ գաղափարախոսության, ծրագրի, կազմակերպական կառուցվածքի, ռազմավարության ու մարտավարության խնդիրները համակողմանիորեն արտացոլված են նրա բավական հարուստ պարբերականների էջերում: Միաժամանակ «սպեցիֆիկյան» մամուլը ավելի կամ պակաս չափով XX դարի առաջին երկու տասնամյակների արևելահայ հասարակական-քաղաքական մտքի ու կյանքի ուրույն արտահայտիչն էր:

1900–1920 թթ. ընթացքում լույս են տեսել ՍԴԲՀԿ («սպեցիֆիկյան») շուրջ ավելի քան քսան անուն թերթ և հանդես: Դրանք են. **«Հանդէս»** (ամսագիր, Ժնև, 1900 թ., խմբ. Ե. Պալյան), **«Բանւոր»** (ամսագիր, Ժնև, 1904, խմբ. Ե. Պալյան), **«Սոցիալիստ»** (երկշաբաթաթերթ, Բաքու, 1904, Ժնև, 1905–1906, խմբ. Ղ. Տեր-Ղազարյան, Ալ. Ծատուրյան, 1906 թ.՝ ամսագիր), **«Նոր խօսք»** (ամսաթերթ, Նոր Նախիջևան, 1905, խմբ. Ս. Լուկաշին), **«Երկրի ձայն»** (շաբաթաթերթ, Թիֆլիս, 1906–1908, խմբ. Վ. Վարդանյան, Տ. Զավեն), **«Ձայն»** (շաբաթաթերթ, Թիֆլիս, 1906–1907, խմբ. Տ. Խա-

[1] Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 95:

խանյան), **«Կեանք»** (շաբաթաթերթ, Թիֆլիս, 1906, խմբ. Ա. Աթանասյան, Բ. Իշխանյան), **«Բանւոր»** (եռօրյա թերթ, Բաքու, 1907, խմբ. Հ. Յուզբաշյան), **«Գործ»** (երկշաբաթաթերթ, Թիֆլիս, 1908, խմբ. Մ. Ստամբոլցյան, փաստացի՝ Բ. Իշխանյան), **«Ուղի»** (երկշաբաթաթերթ, Բաքու, 1909, խմբ. Ն. Քարհանյան և Դ. Անանուն), **«Մեր կյանքը»** (թերթ, Աստրախան, 1910–1912, խմբ. Ա. Ապրեսյան), **«Կոչ»** (երկշաբաթաթերթ, Բաքու, 1911, խմբ. Ի. Միքայելյան, փաստորեն՝ Դ. Անանուն), **«Նոր կեանք»** (երկշաբաթաթերթ, Բաքու, 1911–1912, խմբ. Դ. Անանուն), **«Կովկասի լրաբեր»** (օրաթերթ, Թիֆլիս, 1912–1914, խմբ. Բ. Հարությունյան), **«Մեր ուղին»** (հանդես-ժողովածու, Բաքու, 1912, խմբ. Դ. Անանուն), **«Նոր ուժ»** (օրաթերթ, Թիֆլիս, 1914, խմբ. Տ. Տրդատյան), **«Բանւոր»** (շաբաթաթերթ, Բաքու, 1917–1918, խմբ. Գ. Պեճիկյան), **«Մեր օրեր»** (երկօրյա թերթ, Բաքու, 1918, խմբ. Բ. Իշխանյան): Բացի այդ, կիսասպեցիֆիկյան և կիսապաշտոնական պարբերականների թվին կարելի է դասել Դ. Անանունի խմբագրությամբ լույս տեսնող **«Վերածնունդ»** (Բաքու, 1917–1918) և **«Հայաստանի կոոպերացիա»** (Երևան, 1919–1920) կոոպերատիվների միության երկշաբաթաթերթերը:

Սպեցիֆիկյան պարբերական մամուլի համար բնորոշն ու ընդհանրականն այն էր, որ ունենալով մարքսիստական և սոցիալիստական ուղղվածություն՝ նրա ուշադրության կենտրոնում է եղել բանվոր դասակարգի ու ընդհանրապես աշխատավորական զանգվածների կյանքի, պայքարի և ազատագրության խնդիրների արծարծումը: Սակայն ի տարբերություն ինտերնացիոնալիստ մարքսիստների՝ սպեցիֆիկյան հրատարակություններին հատկանշական էին ազգային երանգավորումները՝ հայ բանվորի, գյուղացու և արհեստավորի ազգային խնդիրների ու կյանքի արտացոլումը:

«Սպեցիֆիկների» մարտավարության բնորոշ կողմերից մեկն այն էր, որ նրանք իրենց գործունեության հիմքում ավելի մեծ տեղ էին հատկացնում քարոզչական, հրապարակախոսական աշխատանքին, այստեղից էլ՝ նրանց պարբերականների առատությունը: Սակայն վերը բերված թերթերի և հանդեսների հրատարակության տարեթվերից դժվար չէ տեսնել, որ դրանք սովորաբար ունեցել են կարճատև կյանք. չանցած մեկ-երկու տարի՝ փակվում էին կամ նյութական միջոցների սղության, կամ հրատարակչական այլ դժվարութ-

յունների, պատճառով կամ էլ՝ իշխանություններն էին արգելում: Հրատարակության կենտրոնավայրերն են եղել հիմնականում Բաքուն և Թիֆլիսը:

«Սպեցիֆիկյան» պարբերական մամուլի առաջնեկը կարելի է համարել Երվանդ Պալյանի խմբագրությամբ 1900 թ. Ժնևում լույս տեսած «Հանդէս» ամսագիրը: «Հանդէսի» խմբագրակազմը իրեն կոչում էր «Հայ սոցիալ-դեմոկրատիա»: Կարելի է ասել, որ զգալի էր «Հանդէսի» դերը ՍԴԲՀԿ գաղափարական ու կազմակերպական ձևավորման գործում: Դրա տպագրած կարևոր նյութերից են «Ծրագիր հայ սոցիալ-դեմոկրատ կուսակցության», «Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը», «Հնչակյան կուսակցությունը և հայ սոցիալ-դեմոկրատիան» և այլ հոդվածներ:

Առանձնապես անհաշտ գաղափարական պայքար էր ընթանում նախկին հնչակյան Ե. Պալյանի և բուն Հնչակ կուսակցության միջև: Նկատի ունենալով Հնչակյան կուսակցության խայտաբղետ սոցիալական կազմը և գաղափարական երկվությունը (ազգային և սոցիալ-դասակարգային ուղղվածությունը)՝ Ե. Պալյանը իրավացիորեն կարծում էր, որ այն, ըստ էության, դասակարգային կազմակերպություն չէ: Բացի այդ, հանդեսականները համաձայն չէին Հնչակի ծրագրային այն հիմնադրույթին, որ Թուրքահայաստանի ազատագրումն ու անկախությունը համարվում է մերձակա խնդիր, իսկ սոցիալիզմի հաստատումը՝ հեռավոր:

Ե. Պալյանը և իր հետևորդ հանդեսականները ընդգծված սոցիալիստներ էին: Նրանք հայ ժողովրդի ազգային-քաղաքական խնդիրների լուծումը դիտարկում էին միայն դասակարգային շահերի տեսանկյունից:

«Հանդէսի» լույս ընծայումից երկու տարի անց, երևան եկավ մի նոր հայ սոցիալիստական պարբերական «Պրոլետարիատ» անունով: Այն հայտարարեց իրեն «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» օրգան և տպագրեց իր «մանիֆեստը»: Լենինյան-իսկրայական ուղղության այս «Միությունը», ի տարբերություն հանդեսականների, կողմնակից էր Կովկասի բոլոր ազգությունների բանվորների միաձուլմանը մեկ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ: Պրոլետարիատի կազմակերպման կենտրոնաձիգ ինտերնացիոնալիստական սկզբունքը ողջունեց Վ. Ի. Լենինը: Դրան

հակառակ, Պալյանը կարծում էր, որ Կովկասի յուրաքանչյուր ազգության բանվոր դասակարգը պիտի ունենա իր առանձին կազմակերպությունը, որը ինքնավար սկզբունքով կմտնի Ռուսական ընդհանուր սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: «Հանդէսի» և դրա հիման վրա հետագայում ձևավորված «սպեցիֆիկների» կազմակերպության ամենաբնորոշ կողմը դարձավ պրոլետարիատի ազգային հատկանիշով կազմակերպումը:

Հայ պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպության անհրաժեշտությունը Ե. Պալյանը մասնավորապես բացատրում էր այն հանգամանքով, որ հայ կազմակերպությունը պետք է իր ձեռքը վերցներ մայրենի լեզվով սոցիալիստական գրականության թարգմանությունը և հրատարակությունը[1]:

«Հանդէսից» հետո 1904 թ. Ե. Պալյանի և Գ. Կոզիկյանի խմբագրությամբ նույն Ժնևում ձեռնարկվեց «Բանւոր» անունով հանդեսի հրատարակությունը, որից, սակայն, լույս է տեսել ընդամենը երկու համար: Այստեղ խմբագիր-հրատարակիչներ Ե. Պալյանի և Գ. Կոզիկյանի ուշադրության կենտրոնում են եղել դարձյալ տեսական-գաղափարախոսական բնույթի հարցեր: Օրինակ, Ե. Պալյանը իր «Հնչակի սոցիալիստական դափնիները» հոդվածում քննադատում էր հնչակյաններին ոչ հետևողական սոցիալիստականության համար (1904, թիվ 1–2, էջ 38–62), իսկ Գ. Կոզիկյանը «Հայ բուրժուական իդեոլոգիան և հայ սոցիալ-դեմոկրատիան» հոդվածում հայ ազգային կուսակցությունները համարում էր բուրժուական (նույն տեղում, էջ 21–34):

«Բանւորը» հայ ազգային քաղաքական կուսակցությունների գարտակղքի մամուլը՝ «Դրօշակը», «Հնչակը», «Հայրենիքը», «Երիտասարդ Հայաստանը», «Ձայն հայրենյացը», «Վերածնությունը» և այլն, որակում էր որպես «բուրժուական ազգայնական և ապստամբական անիմաստ ֆրազների կրկնության» մամուլ (նույն տեղում, էջ 3–4):

«Հայ սոցիալ-դեմոկրատիայի հիմքերն ու դերը հայ իրականության մեջ» հոդվածում Վ. Վահունին (Ե. Պալյան) հայ ավանդական երեք կուսակցությունները դիտում էր որպես դասակարգային

[1] Տե՛ս Պալյան Ե., Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը, Ռոստով, 1903, էջ 17–19:

հիմքից զուրկ ազգայնական կուսակցություններ: Նորակազմ «սպեցիֆիկները» հավակնում էին հայ իրականության մեջ առաջին մարքսիստական դասակարգային կազմակերպությունը լինելու: Բայց, ըստ երևույթին, անտեղի և անհիմն է հայ ազգային կուսակցություններին հասցեագրված քննադատությունը: Իրականում հայ իրականության մեջ առաջին սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կուսակցությունը կարելի է համարել Հնչակին: Մյուս կողմից, ճիշտ էին վարվում հայ ազգային կուսակցությունները, երբ հայ ժողովրդի ու առաջին հերթին արևմտահայության ազատագրման խնդրում հանդես էին գալիս ոչ թե դասակարգային, հատվածական դիտակետից, այլ օսմանյան բռնակալ լուծը թոթափելու համար՝ համայն հայության միասնական ազգային-ազատագրական պայքարի կարգախոսով: Հիրավի, հայ քաղաքական մտքի ու կազմակերպությունների առաջ ծառացած գերխնդիրը նախ կոտորվող ժողովրդին ազատագրելն էր, ապա սոցիալ-տնտեսական շահագործման վերացման խնդիրը: «Բանւորի» գաղափարական հավատամքը Կոմունիստական կուսակցության մանիֆեստն էր: Նա, հակադրվելով ազգային կուսակցությունների գաղափարախոսությանը, լուսաբանում էր դասակարգերի ու դասակարգային պայքարի մասին գաղափարները «Մանիֆեստի» մարքսյան հիմնադրույթների տեսանկյունից և դրանք փորձում տարածել հայ իրականության վրա:

Եթե «Հանդէս» ամսագրում այնքան էլ չէր մասնավորեցվում հայ պրոլետարիատի կազմակերպության կազմակերպական կառուցվածքի ձևը, ապա «Բանւորում» ավելի էր զգացվում հայ բանվորների կազմակերպության ազգային սկզբունքը: Ըստ որում, ամսագրի պատկերացմամբ, կովկասահայ պրոլետարիատը պետք է ունենար իր առանձին կազմակերպությունը, տաճկահայը՝ առանձին, ամերիկահայը՝ առանձին, բուլղարահայը՝ առանձին և այլն: Այսինքն, հայ պրոլետարիատը իր դասակարգային կազմակերպությունը պետք է ունենար բոլոր հայաբնակ երկրներում: «Պետք է, որ նրանցից յուրաքանչյուրը,- շարունակում էր «Հանդեսը»,- կազմակերպվի և ներկայանա իբրև սոցիալիստ կուսակցություն, իբրև պրոլետարիատի դասակարգային բանակ» (նույն տեղում, էջ 15):

Գ. Կոզիկյանը, զարգացնելով Վ. Վահունու միտքը հայ պրոլետարիատի՝ ըստ իր բնակության երկրի առանձին կազմակերպություն

ունենալու մասին՝ հիմնավորում էր նրանով, որ իբր հայ ժողովրդի շահերը, ըստ իր բնակության երկրների՝ Ռուսաստան, Թուրքիա, Իրան, Ամերիկա և այլն, խիստ տարբերվում են (նույն տեղում, էջ 25):

Զուտ դասակարգային շահերով առաջնորդվող սոցիալիստ Կողիկյանը չէր տեսնում հայ ժողովրդի միավորող համընդհանուր ազգային-քաղաքական շահերն ու գերխնդիրները և սահմանափակվում էր սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների կարևորությունը ընդգծելով: Այսպես, օրինակ, նա գտնում էր, որ հարկերի բարձրացումը Ռուսաստանում կամ զորակոչի երկարացումը ամենևին կարևոր և հետաքրքիր չէ տաճկահայերի համար (նույն տեղում): Ակներև է, որ նա տնտեսական շահը գերադասում էր համազգային, քաղաքական շահից: Կողիկյանի համար տաճկահայ դատը ընդհանուր տնտեսական խնդրի ածանցյալն էր: Նրա թյուր պատկերացմամբ՝ ուրիշ երկրներում ապրող հայությունը Արևմտյան Հայաստանի անկախությունից ոչ մի օգուտ չունի: Եթե այդ բանից ինչ-որ մի խումբ շահ ունի, օգուտներ կարող է ակնկալել, ապա դա կարող է լինել հայ բուրժուազիան, որը արտասահմանից Երկիր կփոխադրի իր կապիտալը և կդառնա անկախ Տաճկահայաստանի թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական տերը (նույն տեղում, էջ 29 և 32): Վերը շարադրված կողիկյանական մտքերը ոչ այլ ինչ էին, եթե ոչ՝ մարքսիզմի դասակարգային գաղափարախոսությամբ ներծծված ապազգային քարոզ:

«Բանվորը» զգալի տեղ է հատկացրել նաև սոցիալիստական գրականության թարգմանությանը: Օրինակ, համառոտաբար տպագրված են ֆրանսիացի սոցիալիստներ Պ. Լաֆարգի, Ժ. Գեդի և այլոց աշխատություններից (նույն տեղում, էջ 15–18, 19–21, 34–37):

«Սպեցիֆիկների» և նրանց մամուլի գործունեության ամենաբեղուն ժամանակաշրջանը կարելի է համարել Ռուսական առաջին հեղափոխության (1905–1907) տարիները: Հեղափոխության և դրան հաջորդող տարիներին ՍԴԲՀԿ Բաքվի և Թիֆլիսի կոմիտեները լույս էին ընծայում մարքսիստական ուղղության «Սոցիալիստ», «Սոցիալ-դեմոկրատ», «Երկրի ձայն», «Կյանք», «Ձայն», «Բանվոր», «Գործ», «Ուղի», «Կոչ», «Նոր կյանք», «Կովկասի լրաբեր», «Նոր ույժ» և այլ պարբերականներ: Դրանցում կարելի է հանդիպել մարքսիզմի գաղափարախոսության, ռուսական հեղափոխության, գոր-

ծադուլային պայքարի, արհեստակցական միությունների, հայ-թաթարական ընդհարումների, ագրարային և տաճկահայ խնդիրների, Ռուսաստանում և Անդրկովկասում հետհեղափոխական ժամանակաշրջանում ծավալվող քաղաքական դեպքերի ու իրադարձությունների, միջազգային սոցիալ-դեմոկրատիայի և բանվորական շարժման խնդիրներին առնչվող ամենատարբեր ու ամենաբազմազան խմբագրականների, հոդվածների և հրապարակումների:

ՍԴԲՀԿ պաշտոնական օրգան էր «Սոցիալիստ» երկշաբաթաթերթը, որը սկսել էր լույս տեսնել 1904 թ. մայիսից: Թերթի առաջին հինգ համարները ընդհատակյա պայմաններում լույս են տեսել Բաքվում: Սակայն ցարական իշխանությունների հետապնդումների և հալածանքների պատճառով 1905 թ. այն վերսկսվում է արտասահմանում՝ Ժնևում: Նրա համարները մեծ դժվարությամբ էին հասնում Կովկաս: Թերթը (բնաբանն էր՝ «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք») արծարծել է տեսական-գաղափարական-քաղաքական բնույթի հիմնահարցեր՝ բանավեճի մեջ մտնելով Հնչակյան, Դաշնակցություն և այլ կուսակցությունների հետ: «Սոցիալիստի» քննադատության թիրախ էին համարվում հայ հեղափոխական ազգային կուսակցությունները, որոնք որակվում էին որպես հայ բանվորության դասակարգային գիտակցությունը թունավորողներ: Թերթի ուշագրավ նյութերից է «Ջարդերն Անդրկովկասում» հոդվածաշարը: 1905–1906 թթ. հայ-թաթարական արյունալի ընդհարումների կապակցությամբ թերթի առաջնորդողներից մեկում կարդում ենք «Ինքնապաշտպանությունը» վերտառությամբ կոչ-հայտարարությունը: «Սոցիալիստը» կոչ էր անում հայ պրոլետարիատին «պաշտպանել ամենակտրական միջոցներով» (1905, հն. 25): Բայց մյուս կողմից թերթը, ցուցաբերելով զգուշավորություն, հորդորում էր զերծ մնալ վրեժխնդրությունից և ծայրահեղ գործողություններից: «Սպեցիֆիկների» մամուլը ևս այդ արյունալի ընդհարումների գլխավոր սադրիչը համարում էր ցարական կառավարությանը. «Նիկոլայ II-ի կառավարութիւնը բարձրացրել է մեր դեմ մահմեդական հասարակության անգիտակից բազմությունները: Նա զինել է սրանց, հրահանգում և ուղղում է հայերի դեմ» (նույն տեղում): Դրանց դեմն առնելու համար կոչ էր արվում հայ պրոլետարիատին զինվել ու հակահարված տալ թուրք մոլեռանդ ելուզակներին: «Սո-

ցիալիստի» ուշադրության կենտրոնում են եղել հայ բանվորի խնդիրները, հոգսերը, պայքարի պայմանները և այլն: Թերթում կան նյութեր նաև միջազգային սոցիալիստական շարժման, ռուս-ճապոնական պատերազմի, Համառուսաստանյան հեղափոխության անցքերի և այլնի վերաբերյալ:

Ռուսական հեղափոխության առաջին տարում Բաքվում լույս ընծայված «Սոցիալ-դեմոկրատ» ամսաթերթի քննության ամենաուշագրավ թեմաներից է եղել ՌՍԴԲԿ կազմակերպական կառուցվածքի հարցը: Խմբագիր Ե. Պալյանը, պաշտպանելով ու զարգացնելով կուսակցության ֆեդերալիստական-բունդական կազմակերպական սկզբունքը, գտնում էր, որ Ռուսաստանի յուրաքանչյուր ազգության պրոլետարիատ պետք է ունենա իր առանձին դասակարգային կազմակերպությունը, ինչպիսիք որ ունեին ֆինները, լեհերը, լատիշները, հրեաները, հայերը (1905, թիվ 2, էջ 6–9): Պետք է ասել, որ այս ուղղությամբ «սպեցիֆիկների» մամուլը որոշակի դեր խաղաց 1906 թ. ՌՍԴԲԿ շարքերի (մեծամասնական, փոքրամասնական և ազգային սոց.-դեմ. կազմակերպությունների) միավորման գործում, թեև իրենք դուրս մնացին միացյալ կուսակցությունից:

Ամսաթերթում զգալի անդրադարձ կա ռուսական հեղափոխության ընթացքի մասին: Կարո ծածկանունով հեղինակը, 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի կապակցությամբ քննադատում էր ռուսական լիբերալների զգուշավորության, չնչին ռեֆորմներով բավարարվելու համար, իսկ ինքնակալության դեմ վճռական պայքարի առաջնությունը բոլշևիկների պես վերագրում էր բանվոր դասակարգին ու ճնշված բոլոր խավերին ՌՍԴԲԿ ղեկավարությամբ: Պարբերականում կան արտաքին և ներքին կյանքի տեսության բաժիններ: Հրապարակումներ կան գործադուլային պայքարի, «Պոտյոմկին» զրահանավի ապստամբության, երկրի տարբեր վայրերում բռնկված հուզումների ու ընդհարումների մասին և այլն:

Անդրկովկասում, Բաքվից հետո, ՍԴԲՀԿ երկրորդ ազդեցիկ կազմակերպությունը Թիֆլիսում էր, որտեղ էլ 1906 թ. գարնանից սկսում է լույս տեսնել «Կեանք» շաբաթաթերթը: Թերթի առաջին և չորրորդ համարների խմբագիրը Աշ. Աթանասյանն էր, իսկ մյուսներինը՝ Բ. Իշխանյանը: Այս պարբերականը ներկայանում էր իբրև բանվոր դասակարգի «իսկական բերանն ու պաշտպանը» (1906, թիվ

1, էջ 2)։ Եվ պատահական չպետք է համարել այն, որ Թերթի թղթակիցների մի զգալի մասը եղել է բանվոր, ինչպիսին էր, օրինակ, Կռան-Սալին կամ բանվոր Թաթոսը, որը նույն ինքը Բաթումի նավթարդյունաբերական բանվոր Տ. Մեսյանն էր։ Հավելենք, որ «սպեցիֆիկների» անլեգալ կամ կիսալեգալ պարբերականների հոդվածագիր հեղինակները, հետապնդումներից խույս տալու նպատակով, որպես կանոն, հանդես են եկել կեղծանուններով կամ իրենց ազգանվան առաջին տառով։

Թերթը խնդիր էր դնում հայ պրոլետարիատին կրթել և դաստիարակել սոցիալիզմի դպրոցի մեջ, նրան հասցնել իր դասակարգային տնտեսական, սոցիալական և քաղաքական շահերի խոր ու բարձր գիտակցության՝ ընկերվարական-ռամկավարական հողի վրա, նրան լայն չափերով և ամուր հիմքերով կազմակերպել իր միջավայրում։

Սոցիալ-դեմոկրատական բանվորական ազգային հատկանիշով ստեղծված կազմակերպությունները, հիրավի, ազգային էին սոսկ կազմակերպական կառուցվածքի տեսակետից, իսկ գաղափարական բովանդակության ու նպատակների տեսակետից՝ ինտերնացիոնալիստական։ Այսպես, օրինակ, «Սոցիալիստական հայրենասիրությունը» հոդվածում հեղինակ Տ. Իսախանյանը հայրենասիրության մեջ դնում էր դասակարգային բովանդակություն՝ բուրժուական հայրենասիրությանը հակադրելով պրոլետարական հայրենասիրությունը (1906, թիվ 4, էջ 56–57)։ Այս տեսակետից «սպեցիֆիկները» մոտենում էին սոցիալ-դեմոկրատիայի արմատական թևին՝ բոլշևիկներին, որոնց համար, ինչպես հայտնի է, գոյություն ուներ միմիայն երկու ազգ՝ ճնշվողների և ճնշողների։ Իր ապազգային դատողություններով Իսախանյանից ավելի հեռուն գնաց Եսալեմը։ Թերթի համարներում նա անդրադարձել է արևմտահայ ազատագրության հիմնահարցերին։ Ինչպես մյուս հայ ոչ ազգային սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական ուղղվածության կազմակերպությունները, այնպես էլ «սպեցիֆիկները» ռուսահայ և տաճկահայ խնդիրները տարանջատում էին իրարից՝ վերջինս համարելով զուտ տաճկահայերի գործը։ Ավելին՝ Եսալեմը գտնում էր, որ, եթե թեկուզ հնարավոր լիներ երեք Հայաստանները ազատագրելը և Մեծ Հայաստան ստեղծելը, ապա միևնույն է, դրանով չէին փրկվի հայ բանվորը և չքավոր գյուղացին, որովհետև այս անգամ նրանք կշահագործվեին ու

կենչվերին հայկական բուրժուազիայի և նրա կառավարության կող-մից (1906, թիվ 5, էջ 72):

Բանվոր դասակարգի, չքավոր գյուղացիության և առհասարակ բոլոր ճնշվածների իսկական ազատագրումը նա հնարավոր էր հա-մարում սոցիալիստական կարգերի հաստատմամբ: Դրա համար նա բոլորովին էլ անհրաժեշտ ու առաջնահերթ չէր համարում ՀՅԴ և հնչակյանների հետապնդած նախ սեփական հայրենիքի ազատագ-րումը, հետո նոր բուրժուական կարգերի տապալումը: Ետալեմը միամտություն ուներ Թուրքահայաստանի ազատագրությունը կա-պել համաթուրքական տեղական բազմազգ տարրերի ընդհանուր հեղափոխական պայքարի հետ (նույն տեղում, էջ 73–75):

«Սոցիալիզմի» մեկ այլ «Երկրի ձայնը» շաբաթաթերթը ևս ընդունում էր հայ, թուրք, քուրդ, ասորի, հույն, հրեա, արաբ և մյուս ճնշված ժողովուրդների համատեղ պայքարի գաղափարը սո-ւլթանական բռնակալության դեմ: «Մենք ընդունում ենք,- գրում էր թերթի տնօրեն Տ. Զավենը,- միմիայն մի դասի, Թուրքիայում ընդ-հանուր յեղափոխութեան դասը: Մենք վճռապէս դէմ ենք ազգային առանձին յեղափոխութեան, առանձին շարժումների» (1906, թիվ 1, էջ 2):

Տ. Զավենը, Ետալեմը և մյուսները կարծում էին, թե Թուրքիա-յում ապրող քաղաքականապես հետամնաց, մոլեռանդ ու անհան-դուրժող թուրք, քուրդ և այլ մուսուլման զանգվածները կդաշնակ-ցեն հայերի ու մյուս քրիստոնյաների հետ և համատեղ կռապաշտն գոյություն ունեցող բռնավարչակարգը ու երկրում կհաստատեն ազատություն, ազգերի համերաշխություն և արդարություն: Այս համոզմունքով էլ «սոցիալիստները» հակադրվում էին հայ ազգային կուսակցությունների համազգային պայքարի գաղափարներին ու ռազմավարությանը:

«Նոր» շաբաթաթերթում առաջին անգամ հատվածաբար տպագրվել է Բ. Իշխանյանի «Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան» աշխատությունը: Բ. Իշխանյանը, անդրադառնալով հայկական հարցում միջազգային դիվանագիտության լարած խար-դավանքներին, ոչ պակաս սրությամբ դատապարտում էր ռուսական իմպերիալիզմի նվաճողական նկրտումները: Ըստ Իշխանյանի, «Ռու-

սաստանը հայկական հարցի վերաբերմամբ դավաճիր է և ննեղամիտ, բացարձակ հակառակորդ է» (1906, թիվ 17, էջ 258):

«Սպեցիֆիկները» համակնություն ունեին իրենց համարելու հայ պրոլետարիատի միակ կազմակերպությունը, այստեղից էլ, բնականաբար, իրենց պարբերականներում զգալի տեղ են հատկացրել բանվորական շարժման՝ տնտեսական և քաղաքական պայքարի խնդիրներին, արհեստակցական միությունների դերին և այլն: Վերջինիս մասին հոդվածներ է տպագրել Տ. Իսախանյանը: Ի տարբերություն դաշնակցության, «սպեցիֆիկները» դեմ էին արհմիությունների կուսակցական կամ ազգային սկզբունքով ձևավորմանը՝ դրա մեջ տեսնելով ազգայնականության ահ: Մինչդեռ Դաշնակցությունը նախընտրում էր այդ ձևը՝ զուտ ինքնապաշտպանական նպատակներով (1906, թիվ 14, էջ 222):

«Կեանք» շաբաթաթերթի ուշագրավ նյութերից է Ալ. Ռուբենու «Սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպչական սիստեմը» հոդվածաշարը: Այստեղ արտահայտված նորույթն այն էր, որ նա ոչ միայն սկզբունքորեն դեմ էր մեծամասնականների կենտրոնաձիգ կազմակերպական համակարգին, այլև գտնում էր, որ Ռուսաստանի նման բազմացեղ ու բազմալեզու երկրում սոցիալ-դեմոկրատիան իր քարոզչության առաջին շրջանում անգամ չպետք է զբաղվի կազմակերպական խնդիրներով, այլ պարզապես՝ սոցիալիստական գաղափարների տարածմամբ: Ըստ նրա, պրոլետարիատի կազմակերպության խնդիրը անհրաժեշտ կդառնա այն ժամանակ, երբ սոցիալիզմի գաղափարները բավարար հող կգտնեն պրոլետարիատի մեջ (1906, թիվ 16, էջ 247):

«Կեանք» թերթի քննության հրատապ թեմաներից է նաև ագրարային խնդիրը: Քայքայվող գյուղն ու գյուղացիությունը դիտարկվում էին քաղաքային պրոլետարիատի շարքերի համալրման տեսանկյունից: Ագրարային հարցի մասնագետներ էին համարվում Դ. Անանունը և Գ. Պիճիկյանը:

1906 թ. հուլիսի կեսերին ընդհատվում է «Կեանքի» լույս ընծայումը և մի քանի ամիս անց՝ հոկտեմբերի 1-ից, նույն Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Ձայն» շաբաթաթերթը Տ. Իսախանյանի խմբագրությամբ: «Ձայն» պարբերականը դարձավ «Կեանքի» օրգանական շարունակությունը: Սրա համարներում արծարծվող հիմնա-

կան թեման դարձյալ բանվորական խնդիրն էր: Թերթում զետեղված նյութերից իմանում ենք, որ 1905 թ. կեսերին, գործադուլային պայքարի վերելքի շրջանում, ՍԴԲՀԿ Բաքվի կոմիտեն հիմնել է «Հայ բանվորական բյուրո»: Բյուրոն բանակցությունների մեջ է մտել նավթարդյունաբերողների հետ և զգալի ջանքերի գնով կարողացել է հայ բանվորների համար կորզել 600 հազար ռուբլի գումար և հարյուրավոր բանվորների աշխատանքի տեղավորել նավթահանքերում (1906, թիվ 6, էջ 90): Դժվար է համաձայնվել «Ձայնի» հայտնած այն մտքին, թե հայ ազգային կուսակցությունները երեսի վրա էին թողել Բաքվի հայ բանվորությանը: Թերթն անդրադարձել է հայ կազմակերպության մարտավարությանը Պետական դումայի ընտրությունների կապակցությամբ: ՍԴԲՀԿ և բոլշևիկների տակտիկան փաստորեն եղել է նույնը. բոյկոտել են առաջին դումայի ընտրությունները, իսկ երկրորդի ժամանակ սոցիալ-դեմոկրատների մասնակցությունը ընտրություններին համարել են անհրաժեշտություն: «Պետ. Դումային մասնակցելը,- կարդում ենք «Ձայնի» առաջնորդողներից մեկում,- օգտավետ է լայն զանգվածների քաղաքական գիտակցութեան հասունացման, յետադիմութեան դէմ պայքարի և նրա տապալման արագացնելու տեսակէտից» (1906, թիվ 8, էջ 113):

Հայ կազմակերպության ղեկավար մարմինը կոչ էր անում զանգվածներին՝ ձայն չտալ Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչներին՝ «Սևացրեք դաշնակցականներին» կարգախոսով: ՍԴԲՀԿ անհանգստացած էր այն բանից, որ Բաքվի և Անդրկովկասի արդյունաբերական հայ բանվորության մեծամասնությունը ընթանում էր ՀՅԴ հետևից:

Ինչ վերաբերում է թերթի հեղինակային կազմին, ապա, պետք է ասել, որ դրան թղթակցել են հայ կազմակերպության գրեթե բոլոր երևելի գործիչները՝ Ալ. Ռուբենին, Եսայեմը, Տ. Խախանյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ: Թերթի բազում համարներում տպագրված են Ռուբենու «Դաշնակցութիւնը և նրա հասարակական արժէքը» հոդվածաշարը: Թերթը բանակռիվ էր մղում մի կողմից ՀՅԴ օրգաններ «Դրօշակի», «Յառաջի», «Ալիքի», «Զանգի», «Երկրի» դեմ, իսկ մյուս կողմից՝ ՌՍԴԲԿ պարբերականներ «Պրոլետարիատի կռիւ», «Սոցիալ-դէմոկրատ», «Կայծ», «Նոր խօսք» թերթերի:

1907 թ. փետրվարի վերջերին Բաքվում լույս է տեսնում «սպեցիֆիկյան» մեկ այլ պարբերական՝ «Բանւոր» անվանումով: Թերթն ազդարարում էր, որ ինքը շարունակելու է «Սոցիալիստի», «Կյանքի» և «Ձայնի» բարի ավանդները: Սակայն հրատարակվել է ընդամենը մեկ համար: Այդ եզակի համարում տեղեկատվություն կա Բաքվի մի շարք նավթահանքերում՝ «Միլով-Թայիրովի», «Մանթաշևի», «Արամազդի», «Ռունոյի», «Միրզոևի», «Նոբելի», «Ռոտշիլդի» և այլնի, բանվորների տևական գործադուլների մասին, որոնք ավարտվել էին գործադուլավորների պահանջների մասնակի բավարարումով: Բացի այդ, թերթում տեղ է գտել Ալ. Մարտունու «Մեր իրականությունը» հոդվածը: Հայտնի է, որ այդ շրջանում Մյասնիկյանը հարել է «սպեցիֆիկներին»: Նա քննադատում էր հայ մանր բուրժուազիային, որին համարում էր հետադիմական ուժ և նացիոնալիզմի գաղափարակիր (25 փետ., 1907):

1909 թ. ընդամենը երկու համարով լույս է տեսնում «Ուղի» երկշաբաթաթերթը: Այս պարբերականի ամենաուշագրավ նյութը, թերևս, Դ. Անանունի հոդվածաշարն է Բաքվի նավթարդյունաբերության վերաբերյալ: Նա հետաքրքիր վիճակագրական տվյալներ է բերում 1905–1908 թթ. ընթացքում նավթի արդյունահանության անկման, գործազրկության աճի, աշխատանքի շահագործման ավելի գիշատիչ ձևերի մասին (1909, թիվ 1, էջ 7–11):

Արդեն 1910-ական թվականներին «սպեցիֆիկյան» մամուլի համար առաջնային են դառնում ոչ այնքան քաղաքական հրապարակախոսությունը, բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայքարի թեմաները, որքան գրական-գեղարվեստական, տեսական-փիլիսոփայական հիմնահարցերը: Նման ուղղվածության պարբերականներից էին «Կոչ», «Նոր կեանք» երկշաբաթաթերթերը: Օրինակ, Ալ. Ռուբենին իր «Գրական նկատողութիւններ» ստվարածավալ հոդվածաշարում քննության է առնում ռուսական ու համաշխարհային գեղարվեստի խնդիրները և փորձում դրանք տեղայնացնել ու կապել հայ իրականության ու գեղարվեստի ներկայացուցիչների հետ («Նոր կեանք», Բաքու, 1911, թիվ 1–2, էջ 9–38):

Փիլիսոփայության հարցերում «սպեցիֆիկ» տեսաբանները հիմնականում կանգնած էին դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերում: Իր «Հայկական իմաստասիրութեան ազդարարները» հոդ-

վածաշարում Գ. Պինիկյանը քննադատում էր XX դարի սկզբի «նոր» փիլիսոփայական ուղղությունը՝ Է. Մախի և Ռ. Ավենարիուսի սուբյեկտիվ իդեալիստական էմպիրիոկրիտիցիզմը և դրա փոխարեն պաշտպանում Մարքսի և Էնգելսի աշխարհը վերափոխող մատերիալիստական աշխարհայացքը («Կոչ», Բաքու, 1911, թիվ 1, էջ 7):

«Կոչ» պարբերականում տեղ է գտել Ա. Կարինյանի գրականագիտական հոդվածը Ալ. Շիրվանզադեի գրական վաստակի մասին: Գրաքննադատը Շիրվանզադեի երկերը, կյանքի ռեալիստական արտացոլման տեսակետից, համեմատում ու նմանեցնում էր Օ. Բալզակի և Է. Զոլայի ստեղծագործություններին (նույն տեղում, էջ 18–30):

Հարկ է նշել Շ. Կուրղինյանի՝ բանվորական ու աշխատանքային թեմաներով գրված ոտանավորները, որոնք ամենուրեք սփռված են «սպեցիֆիկյան» մամուլի էջերում: Հասկանալի է, որ բանվորական թեմաների նախասիրությունը բխում էր այդ կազմակերպության դասակարգային գաղափարախոսությունից:

Կ. Մարքսի տնտեսագիտական ուսմունքի անկյունաքարը համարվող հավելյալ արժեքի տեսության շուրջ վերլուծական հոդվածաշար է տպագրել Ս. Վարդանյանը (նույն տեղում, 1911, թիվ 2, էջ 30–35 և թիվ 3, էջ 44–49):

Ալ. Մարտունին «Հասարակական դասակարգի մասին» հոդվածաշարում քննության է ենթարկել մարքսիզմի դասականներ Մարքսի և Էնգելսի, սոցիալիստներ Պրուդոնի և Կաուցկու, ինչպես նաև ռուս նարոդնիկների աշխարհայացքային և տնտեսագիտական ուսմունքները («Նոր կյանք», Բաքու, 1911, թիվ 1–2, էջ 53–68): Խմբագիր-հրատարակիչ Դ. Անանունը վիճակագրական տվյալներ է բերել նավթարդյունաբերական հայ բանվորների համալրման աղբյուրների, գրագիտության աստիճանի, հաշմանդամության դինամիկայի և համանման խնդիրների վերաբերյալ (նույն տեղում, էջ 68–72):

«Նոր կյանքում» արծարծվել է նաև ազգային-կուլտուրական ինքնավարության խնդիրը: Հետաքրքիր է իմանալ, որ ի տարբերություն Դ. Անանունի և մյուս «սպեցիֆիկների», Ալ. Ռուբենին չէր պաշտպանում ազգային-կուլտուրական ինքնավարության ծրագիրը, այլ բոլշևիկների նման կողմնակից էր ազգերի ինքնորոշման պահանջին:

1910-ական թվականների «կիսասպեցիֆիկյան» չափավոր ամենօրյա լրագիր էր **«Կովկասեան լրաբերը»**: Թերթի խմբագրակազմի կարծիքով, իրենց համար նախ առաջնային է եղել խոսքի ազատությունը և անկախությունը, ապա հետո՝ գաղափարական ուղղվածությունն ու դավանանքը: Իրոք, այս թերթի նյութերին ծանոթանալուց հետո դժվար չէ համոզվել, որ նա այնքան էլ կառչած չի եղել ՍԴԲՀԿ գաղափարական կաղապարներին:

Ժամանակային առումով թերթի լույս ընծայումը համընկել է Բալկանյան պատերազմին և Հայկական Հարցի վերաբացմանը: Այստեղից էլ դրանք հանդիսացել են լրագրի քաղաքական բաժնի քննության մշտահաստատ թեմաները: «Կովկասեան լրաբերը», հենվելով ռուսական «Նովոյե վրեմյա» պարբերականի «Ինքնավարութիւ՞ն, թէ բարենորոգումներ» առաջնորդողում առաջ քաշված տեսակետին, պաշտպանում էր ոչ թե Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու, այլ սոսկ բարենորոգումներ անցկացնելու գաղափարը («Կովկասեան լրաբեր», 1912, 30 դկտ.): Թերթից տեղեկություններ ենք ստանում 1913 թ. հունվարին երիտթուրքերի նոր հեղաշրջման մասին, երբ սուլթանի համաձայնությամբ անգլիասեր իթիլաֆականներին փոխարինելու եկան գերմանոֆիլ իթթիհատականները:

Քաղաքականից զատ լրագիրն ունեցել է մշակույթի, բանասիրության, ֆելիետոնի, գովազդային և այլ բաժիններ: Թերթում բերված են օտարերկրյա պարբերականներից տարաբնույթ խնդիրների շուրջ հարուստ ծաղկաքաղեր, հաղորդագրություններ: Մշակութային բաժնում առանձնապես ուշադրություն է գրավում այն փաստը, որ հասարակության կողմից արտասովոր ընդունելություն է գտել Լ. Շանթի «Հին աստվածներ» դրաման: Ներկայացման արձագանքները այնքան մեծ են եղել, որ Թիֆլիսի ռուս թատերական խմբի կողմից (բեմադրիչ Պ. Զարեչնի) 1913 թ. դեկտեմբերին այն բեմադրվել է ռուսերեն: Ասվում է, որ Գ. Սունդուկյանի «Պեպոյից» հետո սա Թիֆլիսում հայ ստեղծագործողի ռուսերեն խաղացված երկրորդ ներկայացումն էր:

Առաջին աշխարհամարտին նախորդող ամիսներին կարճ տևողությամբ Թիֆլիսում լույս տեսավ **«Նոր ոյժ»** շաբաթաթերթը: Միջազգային լարվածության ուժեղացման հետևանքով թերթը շատ

ավելի մեծ տեղ է հատկացրել արտաքին քաղաքականության խնդիրներին և, մասնավորապես, Հայկական հարցին: Այնտեղ կարելի է ծանոթանալ «Թուրքահայ դատը և Դուման», «Հայկական հարցը Պետական դումայում» և այլ ծավալուն հոդվածների (1914, թիվ 41): Հայկական հարցի լուծման և հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման խնդրում թերթը միանշանակ նախապատվություն է տվել Ռուսաստանին: «Նոր օրերում» հրապարակումներ կան ազգային, հողային, բանվորական խնդիրների մասին:

1917 թ. փետրվարյան հեղափոխության հաղթանակով ինքնակալության տապալումից հետո ազատ գործունեության ասպարեզ իջավ նաև ՍԴԲՀԿ: Նրա գործունեության կիզակետում դարձյալ բանվորաշատ Բաքուն էր: Այստեղ հիմնվեց կազմակերպության «Բանւոր» պաշտոնաթերթը Գարիկ Պեճիկյանի խմբագրությամբ: Թերթը հիմնականում պաշտպանում էր ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, նպաստում ժողովրդավարական գործընթացների խորացմանը: Պատերազմի և խաղաղության խնդրում «Բանվորը» կանգնած էր միջազգային հաշտության տեսակետի վրա, իսկ հողային հարցում խնդրի լուծումը թողնում էր Սահմանադիր ժողովի իրավասությանը: «Բանւորն» ուներ փոքրամասնական ուղղվածություն և համակիր չէր բոլշևիկյան թևին: Թերթը դեմ էր բոլշևիկների «անպատասխանատու» գործելակերպին և իրավացի կերպով անթույլատրելի և կործանարար էր համարում քաղաքացիական կռվի բռնկումը երկրի մեջ (1917, 4 հնս.):

«Բանւորը» անհաշտ բանակռիվ էր մղում Թիֆլիսի բոլշևիկյան «Պայքար» և Բաքվի «Սոցիալ-դեմոկրատ» թերթերի դեմ:

«Բանւորը» անդրադարձումներ ունի գավառների դրության մասին, արևմտահայոց համագումարի նախապատրաստության և անցկացման, «Ազգային տերիտորիա» խորագրով Անդրկովկասի վարչական բաժանման խնդիրներին վերաբերող հոդվածաշարերում: Հիմնական հոդվածագիրը Դ. Անանունն էր: Չկա որևէ հարց կամ թեմա, որին նա չանդրադառնար իր հրապարակումներում սկսած մեծ քաղաքականությունից, վերջացրած գյուղացական-կրթական ու մշակութային խնդիրներով: Ազգային խնդրում Անանունը պաշտպանում էր «Անբաժան ու հզոր Ռուսաստանի» գաղափարը: «Բանւորը» անդրադարձել է Բրեստ-Լիտովսկի բանակցություններին և

այն որակել որպես բոլշևիկների կողմից սեփական երկրի անուրջի կազմակերպում (1918, 11 փետ.): Թերթում նյութեր կան նաև Բաքվի 1918 թ. մարտյան արյունալի դեպքերի մասին: Սրտառուչ մահախոսական կա հայ չոչեների ղեկավար, դեպքերի նահատակ Լ. Աթաբեկյանի հիշատակին և այլն:

1918 թ. Հայաստանի անկախության հռչակումից հետո «սպեցիֆիկները» իրենց գործունեության ծանրության կենտրոնը փոխադրեցին Հայաստանի նորանկախ Հանրապետություն: Նրանք կանգնելով ազգային-պետական հողի վրա՝ պաշտպանեցին հայոց անկախ պետականության գաղափարը, իսկ 1920 թ. հունվարին հիմնեցին Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն (ՀՍԴԲԿ)[1]: Ավելին, ՀՍԴԲԿ հայ իրականության մեջ եղած այն եզակի ձախակողմյան սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական տիպի կուսակցությունն էր, որ պաշտպանեց միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը: «ՀՍԴԲԿ,- կարդում ենք 1920 թ. մայիսին Ալեքսանդրապոլում գումարված կուսակցության համագումարում ընդունված ծրագրում,- նեցուկ է կանգնում Միացյալ Հայաստանի քաղաքական անկախութեան, պաշտպանում է նրա քաղաքական ինքնուրոյնութիւնը՝ իբրև ռամկավար հանրապետութիւն»[2]:

Այս կուսակցության և առհասարակ «սպեցիֆիկյան» գաղափարայնության մեջ ազգային դիմագծի ու երանգավորումների արմատավորման գործում, անշուշտ, նշանակալի են նրա ամենակարկառուն գաղափարախոսներ, հասարակական-քաղաքական գործիչներ Դավիթ Անանունի և Բախշի Իշխանյանի խաղացած դերը: «Սպեցիֆիկյան» այս երկու գործիչներն էլ ծնունդով Արցախից էին: Նրանք եղել են խոսքի և գրչի վարպետներ, մեզ են թողել հարուստ գիտական, քաղաքական ու գրական ժառանգություն: Բ. Իշխանյանը գրել է նաև գերմաներեն լեզվով աշխատություններ, բնագրից հայերեն թարգմանել Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» երկը և այլն: Բ. Իշխանյանը «սպեցիֆիկների» կազմակերպության 1903 թ. հիմնադիր ղեկավարներից էր, իսկ Դ. Անանունը՝ սկսած 1905 թվականից: Բացի կուսակցական, գաղափարախոսական աշխատանքից՝ նրանք զբաղվել են հրապարակախոսական,

---

[1] Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1022, ց. 7, գ. 68, թ. 1:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 12, թ. 5:

գրականագիտական գործունեությամբ, խմբագրել թերթեր և հանդեսներ, հրատարակել զգալի թվով աշխատություններ: Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության ուշագրավ ուսումնասիրություն է Դ. Անանունի եռահատոր կապիտալ երկը («Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում», հհ. 1–3)՝ նվիրված ռուսահայերի հասարակական զարգացման հիմնահարցերի լուսաբանությանը: Թեև այնտեղ կան վիճելի ու անընդունելի առանձին դրույթներ ու դատողություններ, բայց և կան ճշմարիտ ու ուսանելի մտքեր ու հետևություններ, որոնք նոր խոսք են հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

Բայց չի կարելի համաձայնել Դ. Անանունի այն մեկնաբանությանը, որով նա հայոց ցեղասպանության պատճառը փորձում է բացատրել հայկական կամավորական շարժումով, թուրքահայերի երկդիմի դիրքորոշումով, Ազգային Բյուրոյի և հայ ազգային կուսակցությունների «անզգույշ ու անպատասխանատու» գործողություններով ու համանման այլ հանգամանքներով[1]: Սակայն իրականում պատմական ճշմարտությունն այն էր, որ ցեղասպանությունը եղել է երիտթուրքերի ծրագրած և կայզերական Գերմանիայի կողմից խրախուսված քաղաքականություն, իսկ Դ. Անանունի մատնանշած պատճառները սոսկ պատրվակ էին այդ քաղաքականությունը կենսագործելու ճանապարհին:

Թե՛ Դ. Անանունը և թե՛ Բ. Իշխանյանը իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի առաջին Հանրապետության կայացման գործին: Դ. Անանունը տեղափոխվելով Հայաստան, 1919 թ. կեսերից աշխատանքի է անցնում ՀՀ ներգաղթի և վերաշինության վարչությունում: Այնուհետև նա նշանակվում է Հայկոոպի հրատարակչական բաժնի վարիչ և մասնակցում «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթի հրատարակությանը: Դ. Անանունի ջանքերով թերթը ավելի հետաքրքիր բովանդակություն է ստանում, ստեղծվում է գրական բաժին, որին ակտիվորեն աշխատակցում են Ե. Չարենցը, Ատ. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցը և ուրիշներ: Նրա էջերում 1919–1920 թթ. ընթացքում լույս են տեսնում Դ. Անանունի «Տնտեսական հետանկարներ», «Լեոն Աթարբեկեան-կեան-

[1] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 540–561:

քը և հասարակական-գրական գործունեությունը», «Մեր քաղաքական դեգերումները» հոդվածաշարերը:

Դ. Անանունը իր բազմաթիվ հոդվածներում, աշխատություններում և հրապարակային դասախոսություններում ամեն կերպ սատարում էր Հայաստանի անկախության ամրակայմանը: Նա, անկեղծորեն պաշտպանելով հայոց անկախ պետականության գաղափարը, առանձնապես սուր քննադատության էր ենթարկում հայ հայրենախույս բուրժուազիային, որը «փոխանակ իր կապիտալը ի սպաս դնելու սեփական ժողովրդի անկախութեան հիմքերն հաստատուն դարձնելու համար... բլօկադի է ենթարկել հայ հայրենիքը և դավեր է լարում նրա դէմ»[1]:

ՀՀ-ում ավելի պատասխանատու պաշտոն էր վարում Բախշի Իշխանյանը: 1919 թ. հուլիսից նա գլխավորում էր հանրապետության գյուղատնտեսության և պետական գույքի գլխավոր վարչության երկրագործության բաժանմունքին կից Կենտրոնական վիճակագրական բյուրոյի աշխատանքները: Արդեն 1920 թ. վիճակագրական այդ գիտահետազոտական հիմնարկը կոչվում էր Պետական ընդհանուր վիճակագրության գլխավոր բաժանմունք: Բ. Իշխանյանը փաստորեն համարվում էր հանրապետության գլխավոր վիճակագիրը: Այդ ընթացքում նրա ղեկավարած բաժանմունքը գիտահետազոտական ու գործնական զգալի աշխատանք կատարեց և արդյունքում հրատարակվեցին մի շարք վիճակագրական ուսումնասիրություններ ու տեղեկատու ժողովածուներ՝ բյուլետեններ ու տեղեկագրեր:

«Սպեցիֆիկյան» ուղղվածության կիսապաշտոնաթերթ կարելի է համարել «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը: Այնտեղ արծարծվում էին տնտեսական, հողային, սոցիալական բնույթի խնդիրներ: Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցում թերթի խմբագիր Դ. Անանունը իր «Ամերիկայի բազուկը» խորագրով հոդվածում նախապատվությունը տալիս էր արևմտյան կողմնորոշմանը (1919, 31 օգ.): Բ. Իշխանյանը նույնպես ԱՄՆ-ի հովանավորությունը գերադասելի էր համարում հայ ժողովրդի համար և դա հիմնավորում էր ԱՄՆ-ի տնտեսական հզո-

---

[1] «Նոր սերունդ», 1920, 17 մարտի:

րությամբ և քաղաքական բարձր կշռով[1]: Դ. Անանունը և Բ. Իշխանյանը ՀՅԴ կուսակցությանը ընդդիմադիր լինելով հանդերձ, պաշտպանում էին Հայաստանի նորանկախ պետականության գաղափարը: 1920 թ. նոյեմբերին, երբ Հայաստանի անկախ գոյությանը հաշված օրեր էին մնում, առաջարկվեց ՀՍԴԲԿ գործիչներ Դ. Անանունին և Բ. Իշխանյանին մտնել Ս. Վրացյանի «ձախ» կոալիցիոն կառավարության մեջ, սակայն նրանք հրաժարվեցին:

Արդեն 1920 թ. դեկտեմբերին՝ Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերից, «սպեցիֆիկները» պատրաստակամություն հայտնեցին համագործակցել ու աջակցել Հայաստանի խորհրդային իշխանությանը: Սակայն դա չփրկեց ՀՍԴԲԿ շատ գործիչների ու շարքային անդամների բոլշևիկների հաշվեհարդարից: Դեկտեմբերի 2-ին ձերբակալվեց և բանտարկվեց բոլշևիզմի անհաշտ հակառակորդ Բախշի Իշխանյանը: Նա Երևանի քաղաքային բանտի մասին թողել է սահմռկեցուցիչ դեպքերով հարուստ հիշողություններ[2]: Ի դեպ, ժամանակին Բ. Իշխանյանին վիճակվել է ճաշակել նաև ցարական բանտի դառնությունները:

Կոմունիստական կուսակցության և նախկին «սպեցիֆիկների» միջև հաշտեցում չէր կարող լինել: Այդ պայքարը սաստկացավ սոցիալիզմի կառուցմանը զուգընթաց՝ 20–30-ական թվականներին: Փաստենք, որ Ս. Կասյանի, Ա. Մռավյանի, Ա. Երզնկյանի և մյուսների հակասպեցիֆիկյան աշխատությունները գաղափարաքաղաքական զգալի հող նախապատրաստեցին նախկին «սպեցիֆիկների» քաղաքական բռնաճնշումների համար: Այդ զոհերի թվին պետք է դասել նաև Դ. Անանունին: Հայաստանի խորհրդայնացումից հետո նա զբաղվեց կուլտուր-լուսավորական աշխատանքով, 1923 թ. անգամ նշանակվեց Խ. Հայաստանի հեղափոխական թանգարանի վարիչ: Սակայն 1927 թ. անհիմն մեղադրանքներով Դ. Անանունը բանտարկվում է, ապա աքսորվում և 1943 թ. մահանում Աստրախանում՝ մենակության և անհայտության մեջ:

«Սպեցիֆիկների» մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում նրանց պարբերականները գաղափարաքաղաքական որոշակի զարգացում են ապրել՝ ստանալով ավելի

---

[1] Տես «Ժողովուրդ», 1919, 15 նոյեմբերի:

[2] Տես Իշխանեան Բ., Երկու ամիս բոլշեւիկեան բանտում, Գահիրէ, 1924, էջ 147–172:

ու ավելի ազգային երանգավորումներ: Այսպիսով, «սպեցիֆիկյան» մամուլը կազմում է XX դարի առաջին երկու տասնամյակների հայ պարբերական մամուլի անօտարելի և ուրույն մասը: Այդ մամուլը, ինչ խոսք, իր նպաստը բերեց հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացմանը: Առանց «սպեցիֆիկյան» պարբերականների ուսումնասիրության՝ անհնար է ամբողջական ու սպառիչ պատկերացում ունենալ XX դարի սկզբների հայոց պատմության այնքան բարդ ու հակասական ժամանակաշրջանի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՈՒԼ (1918–1920)

1918 թ. մայիսի 28-ին՝ շուրջ վեցդարյա ընդմիջումից հետո, Հայաստանի անկախության վերականգնումը հայ ժողովրդի կյանքում ունեցավ ոչ միայն քաղաքական, այլև պատմամշակութային խոշոր նշանակություն: Այն թևակոխեց զարգացման որակապես մի նոր ժամանակաշրջան: Հայոց անկախ պետականության ստեղծումով հայ ժողովրդի մշակութային կյանքի ծանրության կենտրոնը բազմադարյա գերկրումներից հետո աշխարհացրիվ գաղթօջախներից աստիճանաբար տեղափոխվեց մայր Հայրենիք՝ նորանկախ Հայաստանի Հանրապետություն: Երբեմնի հետամնաց նահանգական քաղաք Երևանը մեկ-երկու տարում դարձավ հայ հասարակական և քաղաքական և հոգևոր մշակութային կյանքի կենտրոն՝ դրա առաջնության դափնին խլելով Թիֆլիսից և Կոստանդնուպոլսից:

ՀՀ փոխադրվեցին պետական իշխանության, նաև հայ քաղաքական կուսակցությունների և այլ հասարակական կազմակերպությունների ղեկավար մարմիններն իրենց կառույցներով: Այս ամենի հետևանքով բնականաբար աշխուժացավ հասարակական-քաղաքական կյանքը, բուռն ծաղկում ապրեց պարբերական մամուլը, գրական ու ստեղծագործական կյանքը: Եթե մինչև անկախությունը Երևանում և նահանգի գավառային կենտրոններում լույս տեսնող պարբերականները կարելի էր մատների վրա հաշվել, ապա անկախության հռչակումից հետո, ՀՀ կարճատև՝ ընդամենը 2.5 տարվա ընթացքում, տարբեր հաճախականությամբ այնտեղ լույս են տեսել մոտ 60 անուն պարբերականներ, որոնց ճնշող մեծամասնությունը հրատարակվում էր մայրաքաղաք Երևանում:

Ըստ բնագավառի և նշանակության ՀՀ պարբերական մամուլը կարելի է բաժանել 3 կարգի՝ 1) պաշտոնական, 2) կուսակցական և 3) անկախ (անկուսակցական) մամուլ: Պաշտոնական (կառավարական) պարբերականների ընդհանուր թիվը կազմում էր 14 անուն

թերթ, կուսակցականը՝ 38, իսկ անկախ մամուլինը՝ 8 անուն թերթ և հանդես:

Ինչպես նկատում ենք, այս երեք խումբ պարբերականներից ամենաստվարը կուսակցական մամուլն էր: ՀՀ-ում գործող չուրջ տասը կուսակցություններից իրենց սեփական պարբերականներն ունեին՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ)՝ 13 անուն, Սոց.-դեմոկրատ. բոլշևիկյան և բոլշևիկամետ՝ 14, Սոց.-դեմոկրատ. մենշևիկյան՝ 3, Սոցիալիստ-հեղափոխական (էսէռ)՝ 3, Հայ սահմանադրական ռամկավար (ՀՍՌԿ)՝ 3, և Հայ ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ)՝ 2:

ՀՀ կուսակցական մամուլը, ըստ գաղափարա-քաղաքական ուղղվածության և քաղաքական դաշտում զբաղեցրած տեղի, կարելի է բաժանել երեք թևերի՝ «աջակողմյան», «ձախակողմյան» և «ձախ կենտրոնամետ» (ձախակենտրոն): Աջակողմյանի թվին դասվում է ՀԺԿ և Հայ Ռամկավարների մամուլը, ձախակենտրոնին՝ ՀՅԴ, իսկ ձախակողմյանին՝ բոլշևիկներինը, մենշևիկներինը և էսէռներինը:

Փաստենք, որ կուսակցական մամուլի այս երեք թևերից պաշտոնական տեսակետը պաշտպանում էր միայն ձախակենտրոն ուղղվածություն ունեցող ՀՅԴ մամուլը, քանզի Հանրապետության գոյության ողջ ընթացքում Դաշնակցությունը եղել է հիմնական կառավարող կուսակցությունը: Մյուս երկու թևերի կուսակցությունները դրավում էին կառավարության նկատմամբ չափավոր կամ խիստ ընդդիմադիր դիրք: Ակներև է, որ Հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի մասին իրական ու ճշմարտացի պատկերացում կարելի է կազմել միմիայն ընդդիմադիր և իշխանամետ մամուլի նյութերի համադրման միջոցով: Թեև ընդդիմադիր կուսակցությունների (հատկապես բոլշևիկյան) մամուլը հաճախ ծայրահեղական դիրքերից խտացնում էր գույները կամ ժխտում ցանկացած փոքր իսկ ձեռքբերում, այնուամենայնիվ դրանց գոյությունը նույնպես պետք է դիտել որպես հասարակական անհրաժեշտություն:

Հարկ է նշել, որ չնայած այն ժամանակ չկար մամուլի մասին օրենք, սակայն բոլոր կուսակցությունները հիմնականում օգտվում էին ազատ խոսքի ու գործունեության հնարավորությունից: Հան-

րապետությունում փաստորեն չկար գրաքննություն: Միայն, թերևս, ծայրահեղ ձախ բոլշևիկների բացահայտ հակադաշնակցական ու հակապետական քարոզչության և գործունեության պատճառով ժամանակ առ ժամանակ փակվում էին նրանց մամուլի օրգանները և առգրավվում իշխանությունների տեսակետից վնասակար նյութեր պարունակող թերթերի խմբաքանակը:

Հանրապետական մամուլն արտացոլել է կառավարության և կուսակցությունների տեսակետների ու մոտեցումների զանազանությունը, ներքին պայքարը և այլն: Մյուս կողմից Հանրապետության մամուլի ուսումնասիրության միջոցով կարելի է բավականաչափ պատկերացում կազմել առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի ու առհասարակ այդ ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման մակարդակի մասին: Հիրավի, ՀՀ պարբերական մամուլը Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի հայելին է: Առանց այդ մամուլի իմացության (ուսումնասիրության) անհնարին է վերհանել առաջին Հանրապետության պատմությունը: Հիշեցնենք նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում հասկանալի պատճառներով պատմաբաններն ու բանասերները հիմնականում ուշադրություն են դարձրել բոլշևիկյան մամուլին, իսկ Հանրապետության մնացած պարբերականները առանձին ուսումնասիրության ու համակարգման չեն ենթարկվել:

Պետական-պաշտոնական մամուլի թվին դասվում են կառավարության, խորհրդարանի, նախարարությունների ու գերատեսչությունների պարբերական հրատարակությունները: Սրանց նպատակը կառավարության և խորհրդարանի ընդունած օրենքների, օրենսդրական ակտերի, որոշումների ու հրամանների հրապարակումն ու տարածումն էր: Պաշտոնական մամուլը խնդիր ուներ արտահայտել ու պաշտպանել կառավարության դիրքորոշումն ու մոտեցումները երկրի ներքին ու արտաքին քաղաքականության ամենատարբեր խնդիրների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության գլխավոր պաշտոնաթերթը «Կառավարութեան լրաբեր» եռօրյան էր, որը սկսել է լույս տեսնել 1918 թ. սեպտեմբերի 1-ից և տևել մինչև 1920 թ. հուլիսի 20-ը: Այն կարելի է համարել 1918 թ. հուլիս ամսից Երևանում լույս տեսնող

տեղի «Հայոց Ազգային խորհրդի լրատու» եռօրյայի անմիջական իրավահաջորդը: «Լրատուն» համարվում էր Երևանի Ազգային խորհրդի պաշտոնաթերթը: Լույս է տեսել «Լրատուի» ընդամենը վեց համար: Լրագիրն ուներ ռուսերեն հավելված: Նրա էջերում տեղ են գտել նյութեր Բաթումի հաշտության պայմանագրի, Քաջազնունու կաբինետի ձևավորման, Հայոց կենտրոնական Ազգային խորհրդի Երևան ժամանելու, Հայաստանի առաջին գումարման խորհրդարանի ձևավորման մասին և այլն: Իբրև պաշտոնաթերթ՝ հրապարակում էր Հայոց Ազգային խորհրդի վարչության որոշումները, հրահանգները, Երևանի զորաբանակի ընդհանուր հրամանատար զորավար Մ. Սիլիկյանի հայտնի կոչը՝ ուղղված «Հայ ժողովրդին» և այլն (1918, 9 և 12 հլս.): Թերթի տպագրությունը ընդհատվեց հուլիսի 23-ին, որին հաջորդեց արդեն վերջնականորեն ձևավորված ՀՀ կառավարության և խորհրդարանի պաշտոնաթերթ «Կառավարութեան լրաբերը»:

«Կառավարութեան լրաբերը» կատարում էր խորհրդարանի, կառավարության և զանազան գերատեսչությունների պաշտոնական տեղեկատուի դեր, տպագրում էր հաղորդագրություններ, որոշումներ, գետեղում խորհրդարանի և կառավարության նիստերի արձանագրությունները, հրապարակում ընդունված օրենքները, ֆինանսական նախահաշիվները, կառավարության շրջաբերականները, կարգադրությունները, հրամանները, հայտարարությունները և այլն: Թերթն ուներ նաև գովազդի բաժին:

Թերթի չորրորդ էջը ռուսերեն էր, որը նախատեսված էր ռուսախոս ընթերցողի համար: Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հանրապետության պետծառայողների մի մասը, այդ թվում՝ ազգությամբ հայեր, գրեթե չէր տիրապետում հայերեն լեզվին, ուստի թերթի ռուսերեն հավելվածը նախատեսված էր նաև ընթերցող այդ հատվածի համար:

Թերթի գլխավոր բաժինը պաշտոնական մասն էր, ուր ընթերցող հասարակությանը տրվում էր լայն տեղեկատվություն: Հատատուն տեղ էին գրավում խորհրդարանի նիստերի արձանագրությունները, խորհրդարանի և կառավարության ընդունած օրենքները և որոշումները: Հրատարակվում էին նաև պաշտոնական շրջաբերականներ՝ կառավարությունների հրաժարականների, նոր կառավա-

րության կազմի, նրա հայտագրի, խորհրդարանի և քաղաքային դումաների ընտրությունների վերաբերյալ և այլն:

Թերթը տեղեկություններ էր տպագրում Հանրապետության ներքին ու արտաքին կյանքին առնչվող ամենատարբեր ոլորտների մասին: Անդրադարձներ կան գաղթականության, կառավարության և որբախնամ բարեգործական հասարակական կազմակերպությունների նպաստամատույց աշխատանքների, ներգաղթի, կրթության, պարենավորման, բռնագրավումների, մենավաճառի (մենաշնորհի), հողի վարձակալության, տեղական ինքնավարությունների, բանակի, արդարադատության, Հայաստանում մարդահամարի անցկացման և համանման բազում խնդիրների մասին: Ընդսմին, «Կառավարութեան լրաբերում» տեղ են գտել հետաքրքիր վիճակագրական տվյալներ ազգաբնակչության և գաղթականության թվաքանակի շարժի, կրթության, առողջապահության և այլ ոլորտների վերաբերյալ: Օրինակ, թերթի հրապարակած տվյալներով, 1918 թ. սեպտեմբերի դրությամբ, ՀՀ չորս գավառամասերում կային 522 գյուղեր՝ 524 հազ. բնակչությամբ, իսկ գաղթականության թիվը անցնում էր 300 հազ.-ից (1918, 6 սպտ.): Սակայն թերթի պարունակած նյութերից ամենաարժեքավորը խորհրդարանի և կառավարության ընդունած օրենքներն էին:

Նշանավոր հրապարակություն էր ռազմական նախարարության «Ռազմիկ» շաբաթաթերթը: Այն սկսել է լույս տեսնել 1920 թ. օգոստոսից, Երևանում, Հանրապետության համար ռազմա-քաղաքական բարդ ժամանակաշրջանում: Սակայն «Ռազմիկ» պաշտոնաթերթին վիճակված չէր տևական գոյություն: Նրա առաջին համարի լույս ընծայումից շատ չանցած՝ սկսվեց Թուրք-հայկական պատերազմը, որն աղետաբեր եղավ ՀՀ և հայ ժողովրդի համար: Սեպտեմբերի 30-ին «Ռազմիկի» խմբագրությունը դիմեց հայ զինվորներին՝ թուրքական մահաբեր վտանգին դիմակայելու կոչով: «Հայ զինուորներ,- ասված է կոչում,-Հայրենիքը նորից վտանգի մէջ է: Թուրքական զօրքերը դահիճ փաշաների ղեկավարութեամբ մտել են մեր երկրի ներսը և սպառնում են Հայաստանի Հանրապետութեանը»: Այնուհետև, շարունակվում է. «Արթնցէ՛ք, հա՛յ զինուորներ, սեղմ ու կուռ շղթաներով դիմեցէք դէպի ռազմաճակատ...Հա՛յ զինուոր, եղիր քաջ ու հաղթող, Քեզ հետ ենք ամենքս: Դէպի՛ կռիվ,

դժվար հաղթանակ»[1]: «Ռազմիկի» համարները նախատեսված էին առաջին հերթին հայկական 40 հազարանոց բանակի ներքին սպառման համար:

«Ռազմիկից» զատ, 1920 թ. հոկտեմբերին թուրք-հայկական պատերազմի եռուն շրջանում, Կարսում լույս տեսավ ռազմաճակատային «Դիրքերում» թերթը: Նրանում նույնպես տեղ են գտել ռազմաքաղաքական բնույթի նյութեր, տեղեկություններ Կարսի ճակատի ռազմական գործողությունների մասին: Մասնավորապես թերթն իր համարներից մեկում զետեղել է հայ քաղաքական գրեթե բոլոր (բացի բոլշևիկներից) կուսակցությունների՝ Միջկուսակցական խորհրդի միացյալ կոչը՝ ուղղված հայ ժողովրդին՝ հայրենիքը թուրքական մահաբեր ներխուժումից պաշտպանելու համար: (1920, 17 հկտ.): Թերթն ընդգծում էր նաև թիկունքի դերը.«Ճակատի չափ կարևոր դեր ունի կատարելու և թիկունքը, բոլոր նրանք, ովքեր մնացել են գյուղերում և քաղաքներում» (1920, 14 հկտ.): Նրա էջերում տեղ են գտել տաղանդավոր զինվորական Սեպուհի, մեծ հայրենասեր, եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանի և ուրիշների գոտեպնդիչ կոչերը՝ ուղղված զինվորներին: Լույս տեսավ «Դիրքերումի» ընդամենը հինգ համար և ընդհատվեց Կարսի անկման նախաշեմին՝ հոկտեմբերի 22-ին:

Հանրապետության կիսապաշտոնական պարբերականների թվին կարելի է դասել գերատեսչական՝ Հայկոոպի վարչության օրգան «Հայաստանի կոոպերացիա» (Երևան, 1919–1920 թթ.) երկշաբաթաթերթը: Խմբագիրը սկզբում ՀՅԴ գործիչ, հրապարակախոս Ս. Վրացյանն էր, իսկ 1919 թ. կեսերից նրան փոխարինեց «սպեցիֆիկյան» հայտնի գործիչ Դ. Անանունը: Այս երկշաբաթաթերթի գլխավոր ուղղվածությունը տնտեսական էր: Այնտեղ բերված են վիճակագրական տվյալներ Հայաստանում տնտեսական տեղաշարժերի, կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացման վերաբերյալ: Թերթն անդրադարձել է կառավարության ռազմական կոմունիզմի քաղաքականություն հիշեցնող մենաշնորհի ու բռնագրավումների քաղաքականությանը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 37, թ. 1:

Թերթի էջերում ամենից ավելի հաճախակի տպագրվում էին գլխավոր խմբագիր Դ. Անանունի հոդվածները և նյութերը ամենատարբեր խնդիրների վերաբերյալ՝ սկսած հողային խնդրից ու կոոպերատիվներից, վերջացրած հայկական հարցով ու միջազգային քաղաքականության հիմնախնդիրներով: Երկշաբաթաթերթը, բացի տնտեսական, կոոպերատիվ շարժման հիմնախնդիրներից, անդրադարձել է նաև հասարակական-քաղաքական բնույթի բազում հարցերի: Ավելին, դրա գրական բաժնում, ուր հատվածաբար տպագրվում էին հայ և օտար հայտնի գրողների գործերից, մասնավորապես, Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Ե. Չարենցի, Վ. Թոթովենցի, Վեսպերի և այլոց ստեղծագործությունները: «Հայաստանի կոոպերացիան» այն եզակի պարբերականներից էր, որի հրատարակությունը շարունակվեց նաև Խորհրդային Հայաստանում:

Կիսապաշտոնական պարբերականների թվին կարելի է դասել Կարսի կոոպերատիվների միության օրգան «Աշխատավորի ձայն» (Կարս 1920 թ.) բանվորագյուղացիական երկօրյա թերթը: Իբրև Վանանդի աշխատավորության շահերի արտահայտիչ՝ թերթն իր առջև խնդիր էր դնում արծարծել արհեստակցական միությունների, կոոպերատիվ շարժման, տնտեսական և հողային այլազան խնդիրներ և վերլուծությունների ու պարզաբանումների միջոցով դրանք դարձնել լայն զանգվածների սեփականություն: Իշխանամետ այս թերթը պաշտպանում էր Հայաստանի անկախ պետականության գաղափարը: Դատապարտել է բոլշևիկների Մայիսյան ապստամբությունը: Հաշվի առնելով Կարսի նահանգի սահմանամերձ ռազմավարական դիրքը՝ «Աշխատավորի ձայնը» կարևոր նշանակություն էր տալիս բանակի և պաշտպանության խնդիրներին: «Ազատ և անկախ Հայաստան ենք ստեղծում: Բայց ո՞վ պիտի պահպանի նրան, եթե ոչ մենք, ամենքս: Բանվորը իր ուժեղ աշխատանքով, զինվորը իր վրա դրած հայրենիքի պաշտպանութեան կռուով» (1920, 20 հնս.): Թերթը տպագրում էր զինվորական ամփոփագրեր հայ-թուրքական սահմանային ընդհարումների վերաբերյալ: 1920 թ. օգոստոսի 15-ին ընդհատվեց թերթի տպագրությունը:

Եվ վերջապես, պաշտոնական կամ կիսապաշտոնական լրագրերից էին Լեռնային Ղարաբաղում լույս տեսնող «Ղարաբաղի սուրհանդակ» (Շուշի, 1918 թ.) և «Արցախ» (Շուշի, 1919 թ.) թերթերը:

նկատենք, որ Լեռնային Ղարաբաղը սկզբում պահպանում էր կիսաանկախ վիճակ և ղեկավարվում էր Արցախի Հայոց Ազգային խորհրդի ու նրա ձևավորած գործադիր իշխանության՝ կառավարության կողմից:

1918 թ. օգոստոսի 29-ին հրատարակվեց երկրամասի կառավարության պաշտոնաթերթ «Ղարաբաղի սուրհանդակը»: Սակայն պարզվում է, որ սուրհանդակն ունեցել է ընդամենը մեկ համար, որի բնօրինակն էլ չի պահպանվել: Կան միայն դրանից քաղված նյութեր:

1919 թ. Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը հիմնում է «Արցախ» պաշտոնաթերթը: Այն ունեցել է տպագիր 7 համար, որոնցում նույնպես հիմնականում տեղ են գտել պաշտոնական նյութեր, կոչեր, շրջաբերականներ: Պարբերականում հարուստ նյութեր կան արցախյան գոյամարտի մասին:«Արցախը» համակիր էր ՀՅԴ գաղափարներին և արտատպում էր Բաքվի «Արևի» և դաշնակցական այլ պարբերականների նյութերը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության և նրա մասը կազմող Արցախի պաշտոնական և կիսապաշտոնական մամուլը ունեցել է իշխանությունների կողմից ուղղորդվող պետական-քաղաքական գործունեության որոշակի ոլորտ: Այն հիմնականում արտահայտել է կառավարության և իշխանությունների պաշտոնական քաղաքականությունը, նրանց մոտեցումներն ու դիրքորոշումները ներքին և արտաքին բազմաբնույթ խնդիրների վերաբերյալ:

ՀՀ պարբերականներից ամենաստվարաթիվն ու ամենահարուստը կուսակցական մամուլն է: Դրա էությունը լավ հասկանալու և ճիշտ բնութագրելու նպատակով այն բաժանել ենք երեք ուղղության՝ «աջ» (աջակողմյան), ձախակենտրոն և «ձախ» (ձախակողմյան): Նման բաժանման համար նկատի են առնվում այդ կուսակցությունների գաղափարախոսությունը, ծրագրային հիմնադրույթները, դասակարգային էությունը, գործելակերպը և հետապնդած քաղաքական նպատակները:

Այս տեսակետից աջակողմյան թևին պատկանում էին Հայ ժողովրդական և Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունները: Այս կուսակցությունները ՀՀ-ում լույս են ընծայել 5 անուն թերթ, 2-ը՝ ՀԺԿ և 3-ը՝ Հայ ռամկավարները: Հայտնի է, որ քաղաքական դաշտում աջ դիրք կրաղեցնող կուսակցություններին բնո-

րոշ է հողի և արտադրության միջոցների մասնավոր սեփականության ճանաչումը, տնտեսավարման ազատական-շուկայական հարաբերությունների, ազատ ձեռներեցության և մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն: Հայ իրականության մեջ այդ ազատական արժեքներ պաշտպանող կուսակցությունը 1917 թ. ապրիլին Թիֆլիսում հիմնված Հայ ժողովրդական կուսակցությունն (ՀԺԿ) էր, որը փաստորեն իրենից ներկայացնում էր Ռուսաստանի Կոնստիտուցիոն-դեմոկրատների (կադետների) կուսակցության հայկական հատվածը:

Հայաստանի անկախության հռչակումից հետո ՀԺԿ ղեկավար մի շարք գործիչներ և կուսակցության առանձին կառույցներ փոխադրվեցին Հայաստան: Հենց այդ ժամանակ էլ Հայ ժողովրդականների գործունեության ծանրության կենտրոնը դարձավ Հայաստանը: Եվ 1918 թ. օգոստոսի 14-ից Երևանում սկսեց լույս տեսնել ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ի և Երևանի քաղաքային կոմիտեի օրգան «Ժողովուրդ» լրագիրը, որն ուներ իր խմբագրական մարմինը: Թերթի խմբագրական խորհուրդը ներկայացնում էին ՀԺԿ ճանաչված գործիչներ Ե. Հարությունյանը, Հովհ. Ստեփանյանը և Տ. Հախումյանը:

Թեև Թիֆլիսում շարունակում էր լույս տեսնել ՀԺԿ օրգան «Մշակը», իսկ 1918 թ. սեպտեմբերի 1-ից՝ նաև «Ժողովրդի ձայնը», սակայն այս շրջանում «Մշակը» կորցրել էր իր երբեմնի փայլը, և կուսակցության գաղափարա-քաղաքական գլխավոր խոսափողը դարձավ Երևանի «Ժողովուրդը», որովհետև այն լույս էր ընծայվում մայրաքաղաքում, այնտեղ էին կենտրոնացել ՀԺԿ լավագույն ուժերը և անմիջապես մասնակից էին ՀՀ հասարակական-քաղաքական և տնտեսական ու մշակութային կյանքին: ՀԺԿ և նրա պաշտոնաթերթի քաղաքական կշիռն ավելի մեծացավ, երբ 1918 թ. նոյեմբերին, ՀԺԿ-ն ՀՅԴ-ի հետ համաձայնության գալով կազմեց խառը (կոալիցիոն) կառավարություն: Եվ այդ շրջանից մինչև կոալիցիոն կառավարության լուծարումը 1919 թ. հունիսի կեսերը, «Ժողովուրդ» պաշտոնաթերթը դադարել էր ընդդիմադիր լինելուց և ներկայանում էր իբրև ոչ ընդդիմադիր, կառավարող կուսակցություններից մեկի օրգանը:

Բնականաբար, կոալիցիան չէր կարող դառնալ մեկ միասնական ամբողջություն: ՀԺԿ-ն և նրա պաշտոնաթերթ «Ժողովուրդը» դա-

վանում էին «աջ», ազատական արժեքներ, չէին ընդունում ՀՅԴ որդեգրած «ձախ» սոցիալիստական տեսլականը: Սակայն մյուս կողմից, չի կարելի համաձայնել մի շարք տեսաբանների այն պնդման, թե ՀԺԿ-ն և նրա մամուլը հետադիմական են: Օրինակ, ՀՅԴ «Զանգ» պաշտոնաթերթում 1918 թ. հայ մամուլի պատմության քննությանը նվիրված հրապարակման մեջ հոդվածագիր Գ. Շահինյանը «Ժողովուրդ» թերթը դասել է «բուրժուա-կղերականների օրգանների թվին» (1919, 10 հնվ.): Այս նույն հայացքը ավելի հաճախ պաշտպանվել է նաև խորհրդային պատմաքաղաքական գրականության մեջ:

Գաղափարախոսական տեսակետից «Ժողովրդի» էջերում ու հատկապես առաջնորդողներում արտահայտվում էին ՀԺԿ ազգային և ազատական գաղափարները, նրա մոտեցումները հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականությանը, հայկական հարցին և այլն: Թերթը Հայաստանի անկախության գաղափարի ջերմ պաշտպանն էր: Լինելով «աջ», ազգային տիպի կուսակցություն՝ «Ժողովուրդ» պաշտոնաթերթը ընդունում էր ազգային շահերի գերակայությունը դասակարգայինի նկատմամբ: Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում նա չէր առաջնորդվում գաղափարաքաղաքական կաղապարներով ու միակողմանիորեն չէր ջատագովում ռուսական կողմնորոշումը. «Եթէ հայ ժողովրդի փրկութիւնը,- կարդում ենք «Ժողովուրդ» թերթում,- պահանջէ ընդունել մի այնպիսի օրիէնտացիա, որը կհակասի նոյնիսկ ներկա պայմաններում Ռուսաստանի շահերին, ՀԺ կուսակցութիւնը դա կանի առանց վարանման» (1918, 29 օգ.): «Մեզ համար,- կարդում ենք նույն թերթի մեկ այլ խմբագրականում,- այս կամ այն օրիէնտացիան միայն միջոց է հայ ժողովրդի իղձերը իրականացնելու գործում, և մի որևէ ուրիշ երկիր կամ ժողովուրդ չի կարող լինել մեզ համար իդէալ» (1919, 15 սպտ.): «Ժողովուրդն» ու ժողովրդականները հանգում էին այն հետևության, որ Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է ունենան միայն մեկ՝ հայկական կողմնորոշում:

Թերթը նյութեր էր տպագրում զորքի և տեղական իշխանությունների՝ գյուղերում կատարած ինքնագլուխ բռնագրավումների ու շահատակությունների մասին (1918, 12, 19, 26 սպտ.):

«Ժողովրդի» ուշադրության կենտրոնում են եղել քաղաքական և միջկուսակցական բնույթի խնդիրներ: 1919 թ. մայիսի վերջերին

Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրերին, առանց խորհրդարանի գիտության կառավարության ընդունած «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին» և «Արևմտահայ 12 դաշնակցականներ խորհրդարան մտցնելու մասին» օրենք-ակտերը ներքաղաքական ուժեղ պայքար առաջ բերեցին, որոնք իրենց արտացոլումն են գտել մամուլի էջերում: Հիմնական կառավարող Դաշնակցություն կուսակցությանը անհաշտ ընդդիմություն դարձած «Ժողովուրդ» պարբերականը տպագրում էր կառավարությանը այպանող հոդվածներ:

Թերթի 1919 թ. աշնանային համարների ուշադրության կենտրոնում են եղել ՀԺԿ 2-րդ համագումարին առնչվող նյութերը: Տպագրվել են ՀԺԿ առաջին ծրագիրը ընդունված 1917 թ. սեպտեմբերին և երկրորդ ծրագիրը ընդունված 1919 թ. սեպտեմբերին կուսակցության 2-րդ համագումարում: Թերթը հրապարակել է նաև քաղաքական ժամանակի մասին համագումարի ընդունած բանաձևը, որում Հայաստանի վիճակը բնութագրվում էր «սոսկալի», իսկ կառավարող կուսակցությունը «անճարակ»: Այդ բանաձևը լուրջ անհանգստություն առաջացրեց իշխանությունների թերթը շրջանում: Դրա հետևանքով սեպտեմբերի 19-ին ոստիկանությունը խուզարկություն կատարեց «Ժողովրդի» խմբագրատանը, և մի քանի օրով (մինչև սեպտեմբերի 22-ը) դադարեցվեց թերթի լույս ընծայումը: Ի պատասխան դրա Հայ ժողովրդականները իշխանություններին մեղադրեցին «մամուլի ազատությունը» սահմանափակելու մեջ: Սակայն մի փոքր ավելի ուշ զգաստացած ու «փշերը թափած» «Ժողովուրդն» արդեն տեղեկություններ էր տպագրում խորհրդարանի նիստերի և նրա ընդունած օրենքների ու որոշումների մասին: Իսկ 1920 թ. Մայիսյան ապստամբության և 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմի շրջանում լիովին կանգնում է հանրապետության ու նրա անկախության պաշտպանության դիրքերում:

«Ժողովուրդն» ուներ «Արտասահման», «Գավառական կյանք», «Վերջին լուրեր, «Խրոնիկոն», ֆելիետոնի, ազդերի ու հայտարարությունների բաժիններ: Դրանցում թղթակցություններ կան Արցախի, Նախիջևանի, Փարիզի հայկական պատվիրակությունների գործունեության, կրթամշակութային խնդիրների վերաբերյալ: Թերթի էջերում տպագրվել են հայ գրողների ստեղծագործություններ:

կրթամշակութային խնդիրների առնչությամբ առանձնապես ուշագրավ են լեզվաբան Գր. Ղափանցյանի «Մեր գիմնազիաները», «Դպրոցական ցավերից» և այլ հոդվածաշարերը (1919, 28 մրտ., 16 և 21 մյս.): Երկրագիտական որոշակի արժեք է ներկայացնում Գ. Մուրադյանի «Ինչպե՞ս է կազմուել Սևանա լիճը» հոդվածը (1919, 13 հլս.), որում շոշափված բնապահպանական խնդիրները արդիական են նաև մեր ժամանակներում:

Թերթն ուներ հարուստ գովազդային բաժին:

«Ժողովրդին» աշխատակցել են Գր. Ղափանցյանը, Գ. Մուրադյանը, Բ. Սալախյանը, Հ. Մանուկյանը, բժ. Ն. Տեր-Իսահակյանցը, Հ. Ստեփանյանը և այլք:

ՀՀ քաղաքական դաշտում աջակողմյան թևը ներկայացնող մյուս ազդեցիկ պարբերականներն էին Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության պաշտոնաթերթ «Վան-Տոսպը» և նրա իրավահաջորդ «Հայաստանի ձայնը»: Հարկ է նշել, որ եթե ՀԺԿ և նրա «Ժողովուրդ» պաշտոնաթերթը ներկայացնում էին արևելահայ և ռուսահայ ազգային աջ-ազատական հատվածը, ապա ՀՍԴԿ-ն և նրա «Հայաստանի ձայն» պաշտոնաթերթը՝ արևմտահայ հատվածը, ու մասնավորապես Կովկաս ապաստանած գաղթականությանը:

Հայոց Մեծ Եղեռնից հետո Անդրկովկաս ապաստանած արևմտահայ ռամկավար գաղթականության, հիմնականում Վան-Վասպուրականի հատվածը սկզբում՝ 1915 թ. նոյեմբերից, Թիֆլիսում վերահրատարակում է Վանում ընդհատված «Վան-Տոսպը»: Սակայն 1918 թ. աշնանը հայ-վրացական հարաբերությունների սրման պատճառով թերթի հրատարակությունը Թիֆլիսում ընդհատվում է, և արդեն 1919 թ. մարտի 24-ից այն սկսում է վերահրատարակվել ՀՀ մայրաքաղաք Երևանում: «Ութնամսեայ ակամա դադարեցումից յետոյ,- գրում էր թերթն իր առաջնորդողում,- այսօր ահա կը վերահրատարակենք «Վան-Տոսպը»: Յոյսի ու ոգևորութեան այս օրերուն, երբ մեր խարխափուն հայեացքներուն առջև կը գծագրուի մեր լուսաւոր վաղը, «Վան-Տոսպը», որպէս Թուրքահայ ճղակոտոր մասնաւորականութեան մէկ մասի արտայայտութիւն, կը գայ դարձեալ իր ձայնը հնչեցնելու» (1919, 24 մրտ.):

«Վան-Տոսպին» թղթակցել են Մ. Տամատյանը, Մ. Զրբախչյանը, Հ. Մալյանը, Վ. Գասպարյանը և ուրիշներ, թերթի խմբագիրն էր

Ա. Ավետիսյանը: 1919 թ. հունիսի վերջերին ընդհատվեց «Վան-Տոսպ» հրատարակությունը: Նրա փոխարեն նույն թվականի սեպտեմբերի 22-ից սկսեց լույս տեսնել Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի կենտրոնական խորհրդի օրգան «Հայաստանի ձայն» եռօրյան[1]: Ինչպես նշվում է թերթի առաջին համարի խմբագրականում, «Հայաստանի ձայնը» համարվում է «Վան-Տոսպի դավանանքի և ուղղության շարունակողը» (1919, 22 սպտ.): Թերթի պատասխանատու խմբագիրն էր Հայ ռամկավար ճանաչված գործիչ Արտակ Դարբինյանը:

Ինչպես «Վան-Տոսպի», այնպես էլ «Հայաստանի ձայնի» գերակա խնդիրներն էին Տաճկահայաստանի և տաճկահայ գաղթականության հիմնահարցերը: «Հայաստանի ձայնի» առաքելությունն էր. ա) ներկայացնել հայ և օտար ընթերցողներին երիտթուրքերի գործած գազանությունները, բ) պաշտպանել Հայաստանը Թուրքիայից անջատելու գաղափարը, գ) վերհանել ՀՅԴ գործած սխալները թուրքահայերի խնդրում և դ) հոգալ թուրքահայ գաղթական բեկորների գոյության մասին (նույն տեղում):

Ինչպես նկատում ենք, Հայ ռամկավարների մամուլի ուշադրությունը բևեռված է եղել Տաճկահայ խնդրին:Սակայն դրա հետ միասին «Հայաստանի ձայնը» անտարբեր չէր նաև ՀՀ ճակատագրին: Նրա իդեալն էր հայրենիքի երկու հատվածները տեսնել «ազատ և ամբողջացած», որտեղ կհաստատվի «ռամկավար ժողովրդապետական իրավակարգ» (նույն տեղում):

Թեև ռամկավարների մամուլը ևս տնտեսական և արտաքին քաղաքականության մի շարք հարցերում հակադիր էր Դաշնակցության մոտեցումներին ու դիրքորոշումներին, սակայն Հայաստանի անկախության, Միացյալ Հայաստանի, հայապահպանության խնդիրներում նրանք միասնական էին:

Հայկական հարցում թերթը անվերապահորեն պաշտպանում էր Պողոս Նուպար փաշայի մոտեցումները և ուներ արևմտյան քաղաքական կողմնորոշում: «Իրական պայմանների թելադրանքով Հայաստանը պէտք է կռթնի դաշնակից պետութիւնների աջակցութեան վրայ» (1920, 25 հնվ.): Հայկական հարցի պահանջատիրության

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 131:

խնդրում «Հայաստանի ձայնը» համահունչ գաղութահայ ռամկավարներին, Դաշնակցություն կուսակցությունից ավելի ծայրահեղ պահանջներ էր առաջադրում (1920, 29 փտր.):

1920 թ. բոլշևիկների մայիսյան խռովությունների առնչությամբ թերթը մայիսի 16-ին հրապարակեց Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդի կոչը ուղղված հայ ժողովրդին՝ ի պաշտպանություն Հայաստանի անկախության (1920, 16 մյս.):

«Հայաստանի ձայնը» խորը անհանգստությամբ արձագանքեց թուրքերի վտանգավոր հարձակմանը: Հոկտեմբերի 28-ի համարում տպագրվեց ռամկավարների խորհրդի՝ «Հայրենիքը վտանգի մեջ է» կոչը: ՀՀ անկմամբ դադարեցվեց նաև թերթի հրատարակումը: «Հայաստանի ձայնին» աշխատակցել են արևմտահայ ճանաչված գործիչներ Մ. Մալոյանը, Ն. Հակոբյանը, Ա. Մաքսապետյանը, Ռ. Շավորյանը և ուրիշներ:

Բացի վերը նշված պարբերականներից՝ աջակողմյան ընդդիմադիր մամուլից տեղական բնույթ ունեին 1919 թ. Տ. Հախումյանի խմբագրությամբ Ալեքսանդրապոլում լույս տեսնող «Նոր կեանք» հասարակական-քաղաքական և գրական օրաթերթը, որը ՀԺԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության օրգանն էր, ինչպես նաև 1919–1920 թթ. Երևանում լույս տեսնող Հայ ռամկավարների աշակերտական միության «Վերածնունդ» երկշաբաթաթերթը: Այս երկու պարբերականներն էլ ունեին ոչ ավելի քան հատվածական նշանակություն:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ՀՀ աջակողմյան մամուլը ընդհանուր առմամբ դավանել ու քարոզել է «աջ»-ազատական արժեքներ և բարեշրջումային զարգացման ուղի: Այն մի կողմից քննադատում էր Հայաստանի դաշնակցական կառավարության և տեղական իշխանությունների թույլ տված սխալները, մյուս կողմից՝ հայկական անկախ պետականությանը սպառնացող արտաքին ու ներքին վտանգի դեպքում պատրաստ էր մի կողմ դնել իր ընդդիմադիր կեցվածքը և համատեղ ուժերով պաշտպանել Հայոց անկախ պետականությունը և հայ ժողովրդի անվտանգությունը:

ՀՀ-ում «ձախ» կենտրոնամետ դիրք էր գրավում ՀՅ Դաշնակցության մամուլը: Հանրապետության գոյության 2,5 տարիներին Դաշնակցությունը հիմնական կառավարող կուսակցությունն էր:

թեև իր ծրագրային պահանջներով և հեղափոխական մարտավարությամբ նա նմանվում էր ձախակողմյան, սոցիալիստական կուսակցություններին (դասվում էր դրանց շարքը), սակայն գործնական քաղաքականության բնագավառում հետևողականորեն չէր պաշտպանում սոցիալիզմի իդեալները՝ իրավացիորեն գտնելով, որ տնտեսապես և քաղաքականապես հետամնաց Հայաստանը դեռևս չի հասունացել սոցիալիզմին անցման համար: Մյուս կողմից, ՀՅԴ-ին բնորոշ էր ազգային գաղափարախոսությունը, համազգային իդեալների՝ Հայ ժողովրդի ազատության ու անկախության, Միացյալ և Անկախ Հայաստանի, Հայության և Հայրենիքի պաշտպանության գաղափարների իրականացումը: Այդ իսկ պատճառով ՀՅ Դաշնակցությունը աջակողմյան և զուտ ձախակողմյան կուսակցությունների համեմատ գրավում էր միջանկյալ՝ կենտրոնամետ, ավելի ճիշտ՝ ձախակենտրոն դիրք:

Բնականաբար, Դաշնակցության մամուլը արտահայտում էր կուսակցության գլխավոր քաղաքական ուղեգիծը, նրա մոտեցումներն ու դիրքորոշումները երկրի ներքին ու արտաքին քաղաքականության ամենատարբեր խնդիրների վերաբերյալ: Եվ քանի որ Դաշնակցությունը համարվում էր հիմնական կառավարող կուսակցություն, ուստի և նրա մամուլը պետք է դառնար Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին հիմնական տոն տվողը, կառավարության տեսակետների արտահայտիչն ու տարածողը:

Հանրապետության տարածքում լույս են տեսել կենտրոնական և տեղական նշանակության ՀՅԴ 13 անուն պարբերականներ: Դրանցից առավել կարևորներն էին «Զանգ» (Երևան, 1917–1919 թթ.), «Հայաստանի աշխատավոր» (Երևան, 1917–1919 թթ.), «Յառաջ» (Երևան 1919–1920 թթ.) և «Աշխատանք», (Երևան, 1915–1919 թթ.) թերթերը: Մնացածը եղել են գավառային՝ տեղական շրջանակների և ՀՅԴ աշակերտական միության օրգաններ:

Հայաստանի անկախության հռչակումից հետո Հայ մտավորական լավագույն ուժերը Թիֆլիսից, Բաքվից և այլ քաղաքներից փոխադրվում են Երևան:Մինչ այդ լույս տեսնող ՀՅԴ Երևանի ԿԿ-ի և քաղաքային կոմիտեի օրգան «Զանգի» քաղաքական կշիռը սկսում է մեծանալ, և շուտով այն դառնում է կուսակցության Հայաստանի ԿԿ-ի և Երևանի քաղաքային կոմիտեի պաշտոնաթերթը: Նօրյա, ա-

պա երկօրյա դարձած թերթի խմբագրական մարմնի անդամներն էին Ս. Վրացյանը, Ս. Թորոսյանը, փոքր ուշ՝ Ա. Ղազարյանը և Ն. Աղբալյանը:

«Զանգն» իր խմբագրականներում արտահայտում էր Դաշնակցության ղեկավար մարմնի քաղաքական ուղեգիծը՝ անկախ պետականության կայացման, Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության բազմաբնույթ խնդիրների վերաբերյալ: Հայաստանի խորհրդարանի ձևավորումից հետո թերթի ուշադրության կենտրոնում է եղել նրա գործունեության լուսաբանումը: Թերթն ուներ «Հայաստանի խորհրդարան» բաժինը, ուր պարբերաբար ներկայացվում էին նիստերի արձանագրություններ և օրենսդիր մարմնի հետ առնչվող խնդիրներ:

«Զանգն» ուներ «Ներքին կյանք», «Գավառ», «Վերջին լուրեր», «Ֆելիետոն» և այլ բաժիններ ու սյունակներ: Ժամանակի մամուլում ֆելիետոնի ժանրի անզուգական վարպետ էր Լեռ Կամսարը՝ ավանդական և արդիական հայ երգիծանքը համադրող խոշոր վարպետը: Թերթի համարներում տեղ են գտել նրա «Ծամփորդական խոհեր», «Կայարանի մէջ», «Պառլամէնտ» և այլ երգիծական հոդվածաշարերը (1918, 12, 16 և 23 հկտ.): «Զանգի» առավել հաճախակի ընթերցվող հեղինակներից էր նաև Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյանը): Թերթն արձագանքում էր հանրապետությունում կատարվող գրեթե բոլոր աչքի ընկնող իրադարձություններին: Նրանում տեղ են գտել ՀՀ և ՀՅԴ ականավոր գործիչներ Կ. Համբարձումյանի, Բ. Կապուտիկյանի, Մ. Բերբերյանի, Արամի, Ռոստոմի և այլոց մահախոսականները, խմբագրականներ, հիշողություններ և այլն:

Թեև «Զանգը» կառավարող կուսակցության պաշտոնաթերթն էր, սակայն դա չէր խանգարում, որ քննադատական բնույթի նյութեր զետեղվեին նրա էջերում, նշավակվեին կառավարության և տեղական մարմինների թերացումները, դանդաղկոտությունը և անճարակությունը՝ երկիրն ու ժողովուրդը 1918–1919 թթ. ձմռան՝ սովի, ցրտի, համաճարակների և այլնի աղետալի վիճակից դուրս բերելու գործում:

Թերթի էջերում հարուստ նյութեր և տեղեկատվություններ կան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի, հայ-վրացական պինդ բախման, կառավարության ճգնաժամի, մենաշնորհի ու բռնագ-

բավումների քաղաքականության, խորհրդարանի գործունեության և արձակման, ընդունված օրենքների, պետական լեզվի, կրթա-մշակութային զանազան խնդիրների մասին: «Զանգը» հատուկ անդրադարձել է դպրոցների ազգայնացմանը և հայաշունչ դարձնելու խնդրին (1918, 13 դկտ.):

Արդեն 1919 թ. ապրիլի 6-ին ընդհատվում է «Զանգը», և ապրիլի 8-ից սկսում է լույս տեսնել նրա իրավահաջորդ «Հայաստանի աշխատավոր» եռօրյա թերթը: Նրա խմբագիրն էր ընդգծված սոցիալիստական հայացքներով հայտնի դաշնակցական գործիչ Վահան (Վ. Տեր-Գրիգորյան) Խորենին:

Քանի որ «Հայաստանի աշխատավորի» լույս ընծայումը համընկավ խորհրդարանի ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ժամանակաշրջանին, ապա նրա էջերում առաջնային և գերակշիռ տեղ էին գրավում ընտրացուցակների, ընտրարշավի, ընտրությունների ընթացքի և արդյունքների վերաբերյալ նյութերը: «Հայաստանի աշխատավորի» հուլիսի 3-ի պաշտոնական ամփոփիչ տեղեկանքում ենք, որ Հանրապետության 15 գավառի ու քաղաքի 223 հազար ընտրողներից 198 հազարը իր ձայնը տվել է ՀՅԴ կուսակցական ցուցակի օգտին (1919, 3 հլս.): Թերթում զետեղված են նյութեր խորհրդարանի մշտական հանձնաժողովների, Ալ. Խատիսյանի կառավարության կազմի ու հայտագրի, խորհրդարանի նիստերի արձանագրությունների մասին և այլն: Լրագրում կան Հայկական հարցին և Հայաստանի արտաքին քաղաքականության խնդիրներին վերաբերող հրապարակումներ:

«Հայաստանի աշխատավորին» զուգահեռ, 1919 թ. Երևանում իր գործունեությունն էր ծավալում ՀՅԴ «Երկրի» (արևմտահայ գաղթականական հատվածի) ԿԿ-ի օրգան «Աշխատանք» եռօրյա թերթը: Թերթի պատասխանատու խմբագիրն էր արևմտահայ դաշնակցական գործիչ Հմայակ Մանուկյանը, խմբագրակազմի մեջ էին մտնում Օ. Մխիթարյանը, հետո նաև Մ. Ավետիսյանը: Թերթին աշխատակցել են Լեռ Կամսարը, Հ. Աճեմյանը, Կորկոտյանը, Ա. Հացագործյանը, Մալխասը, Ա. Մաքսապետյանը, Տ. Շահպազը, Ա. Կիտուրը, Կ. Սասունին, Վ. Տերոյանը, Վան-Փուշը, Զ. Եսայանը և ուրիշներ:

Հայ Ս. Ռամկավարների օրգան «Հայաստանի ձայնի» պես «Աշխատանքի» ուշադրության կենտրոնում դարձյալ գտնվում էր

արևմտահայ գաղթականության վիճակը և տաճկահայոց դատը: Թերթին ամենից առաջ մտահոգում էին Կովկաս և այլուր սփռված արևմտահայ գաղթականության խնամատարության, կրթության, դեպի երկիր ներգաղթի, անվտանգության և համանման խնդիրները:

ՀՀ-ում հրատարակվող Դաշնակցություն կուսակցության պարբերականների շարքում իր նշանակությամբ և խաղացած դերով անգերազանցելի է մնում ՀՅԴ բյուրոյի օրգան «Յառաջ» ամենօրյա պաշտոնաթերթը: Մինչ այդ, երկար տարիներ, ՀՅԴ Արևելյան Բյուրոյի պաշտոնաթերթը Թիֆլիսի հանրահայտ «Հորիզոնն» էր: 1919 թ. սեպտեմբերի 20-ին, փոխարինելով «Հայաստանի աշխատավորին»՝ Երևանում հրապարակ իջավ «Յառաջը»՝ դառնալով ՀՅԴ բյուրոյի և ՀՀ ամենաազդեցիկ պարբերականը («Դրոշակի» հրատարակությունը աշխարհամարտից ի վեր ընդհատվել էր): «Յառաջի» գլխավոր խմբագիրը սկզբում Ս. Վրացյանն էր: Հետագայում նրան փոխարինեցին Արտաշես Ջիլինգարյանը (Ռ. Դարբինյանը) և Վահան Նավասարդյանը: ՀՀ համար այնքան բարդ ու բախտորոշ ժամանակաշրջանում քաղաքական հիմնական ուղեգծի ու հասարակական կարծիք մշակող ու ներկայացնող գլխավոր տեղեկատվական միջոցը անտարակույս համարվում է «Յառաջը»:

Քանի որ ՀՅԴ-ն կառավարող կուսակցություն էր, ուստի նրա մամուլը կարելի է համարել կիսակառավարական-կիսապաշտոնական: Առավել ևս ՀՅԴ բյուրոյի օրգանն էր հաճախ ձևավորում կառավարության քաղաքական ուղեգիծը: Թերթը առաջնային տեղ էր հատկացնում պետական և կուսակցական շինարարության հարցերին, ՀՀ արտաքին քաղաքականությանը, երկրի քաղաքական կողմնորոշմանը, Հայկական հարցին, հարևան երկրներում և Ռուսաստանում կատարվող իրադարձություններին:

«Յառաջն» ուներ «Պաշտոնական», «Հայաստանի պառլամենտ», լրատու՝ «Վերջին լուրեր», «Դատական», «Կուսակցական կեանք» բաժիններ, հայտարարությունների և գովազդի էջ: «Հայաստանի պառլամենտ» սյունակում պարբերաբար տպագրվում էին ոչ միայն խորհրդարանի նիստերի համառոտ արձանագրությունները, այլև վերլուծականներ խորհրդարանի գործունեության և իրավաօրենսդրական զանազան խնդիրների վերաբերյալ: «Յառաջը» ուներ նաև հրատապ և համառոտ լուրերի՝ «Լրատու», «Ներքին

կեանք», առողջապահական, գյուղացական, մշակութային և այլ բաժիններ: Այս պարբերականի ուշադրության կենտրոնում էր հայերենը պետական լեզու դարձնելու խնդիրը: «Յառաջը» չինովնիկներից պահանջում էր «խօսել ժողովրդի լեզուով` հայերէն, և ապրել նրա հոգեբանութեամբ» (1919, 11 նոյ.):

Արևմտահայ երիտասարդ սպա Գաբրիել Լազյանի հեղինակությամբ թերթը մեծ քանակությամբ նյութեր է տպագրել սկաուտական շարժման մասին: Հայտնի է, որ Առաջին Հանրապետության օրոք այդ շարժումը բավականին մեծ տարածում ստացավ, որի նպատակը երիտասարդ սերնդի դաստիարակումն էր ռազմա-հայրենասիրական ոգով:

Թերթի ամենաընթերցվող բաժիններից էր «Վերջին լուրեր» անկյունը, ուր տպագրվում էին տեղական և միջազգային նշանակության ամենաթարմ ու հրատապ լուրերը:

«Յառաջն» իր տեսադաշտում էր պահում պատմամշակութային նշանակության հուշարձանների խնդիրը: Տեղեկություններ կան 1918 թ. թուրքերի բարբարոսական արշավանքի ժամանակ Անիի այդ պատմամշակութային հնավայրում կատարված ավերածությունների մասին (1919, 26 դկտ.): «Յառաջի» հետագա համարներում «Հնագիտական ուսումնասիրություններ» խորագրով հնագիտական-ազգագրական ուշագրավ հրապարակումներ են կատարել Թ. Թորամանյանը, Գ. Հովսեփյանը, Ա. Քալանթարը և ուրիշներ Անիի, Տեկորի, Արագածի, Կոտայքի և այլ հնավայրերի վերաբերյալ:

«Յառաջին» աշխատակցել են կուսակցական ու պետական ճանաչված գործիչներ ու մտավորականներ Ա. Ղազարյանը, Ե. Ֆրանգյանը, Ս. Թորոսյանը, Հ. Տեր-Հակոբյանը (Իրազեկ), Գ. Ղազարյանը, Ա. Արեզյանը, Դ. Անանունը, Ա. Աստվածատրյանը, Ա. Արշակունին, Ա. Միքայելյանը, Վ. Ահարոնյանը, Լ. Կամսարը, Մ. Վերածինը և այլք:

Թերթի ուշագրավ հոդվածների թվին կարելի է դասել Ե. Ֆրանգյանի «Ոճրապատում» հոդվածաշար-աշխատությունը՝ նվիրված ցեղասպանությանը: Սա հայերի տեղահանության ու կոտորածների մասին փաստաթղթերի, տեղացի և օտար հեղինակների հիշողությունների հիման վրա արված գիտական առաջին շարադրանքներից մեկն է (տե՛ս «Յառաջ», 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարները):

Թերթում արծարծվել են նաև Հայաստանի արտաքին քաղաքականության հետ առնչվող բազմաբնույթ խնդիրներ: Հոդվածաշարեր են զետեղված հայ-վրացական, հայ-ադրբեջանական, հայ-իրանական, Հայաստան-Արևմուտք և այլ հարաբերությունների խնդիրների շուրջ:

Հայ պարբերականներից «Յառաջը»՝ առաջիններից մեկը, անդրադարձավ թուրք-բոլշևիկյան մերձեցման և նրանց հեռագնա ծրագրերին (1920, 30 հնվ.):

Բոլշևիկների Մայիսյան ապստամբության օրերին «Յառաջի» մայիսի 7-ի և 8-ի համարներում ազդարարվեց. «ՀՅԴ բոլոր ուժերի մոբիլիզացիա» կոչը: Զգալի է եղել «Յառաջի» քարոզչական դերը ապստամբության ճնշման գործում:

1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի շրջանում «Յառաջի» ճակատին ազդարարվող մեծադիր կարգախոսներն էին. «Հայրենիքը վտանգի մէջ է», «Բոլորդ դէպի ռազմաճակատ» և այլն:

ՀՅԴ բյուրոյի խոսնակը ընդգծում էր դասալքության դեմ պայքարի կարևորությունը: «Յառաջի» էջերում լուսաբանված է 1920 թ. աշնանը ՀՀ ռազմաքաղաքական խորը ճգնաժամի և Հայաստանի խորհրդայնացման նախապատրաստության հետ կապված քաղաքական դեպքերի ու իրադարձությունների ժամանակագրական ընթացքը: Անշուշտ, դատապարտելի է, որ հանրապետության ճգնաժամի այդ ծանր օրերին ՀՅԴ բյուրոյի օրգան «Յառաջի» նոյեմբերի 20-ի և 23-ի համարների առաջնորդող հոդվածներում, քաղաքական-դիվանագիտական նկատառումներով, զարգացվում էր հայ ժողովրդի համար անհարազատ մի գաղափար, թե հայ ժողովուրդը պետք է ունենա, ոչ ավել, ոչ պակաս, թուրքական կողմնորոշում (1920, 20 և 23 նոյ.):

«Յառաջի» վերջին համարը լույս տեսավ 1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ Հայաստանի խորհրդայնացման օրը:

ՀՅԴ կուսակցության մնացած 9 լրագրերն ունեին տեղական ու համայնքային նշանակություն: Դրանց մի մասը կուսակցության տեղական՝ քաղաքային ու գավառային կոմիտեների, իսկ մյուս մասը՝ աշակերտական միությունների օրգաններ էին: Այդ պարբերականներն էին՝ «Նոր կեանք»՝ Երևանի քաղաքային կոմիտեի օրգան, Երևան 1918 թ., «Շիրակի աշխատաւոր»՝ Շիրակի կենտրոնական և

Ալեքսանդրապոլի տեղական կոմիտեների օրգան 1919–1920 թթ., «Արարատյան աշխատավոր» Էջմիածնի շրջանային կոմիտեի օրգան, Էջմիածին, 1919 թ., «Քասախ» Արագածոտնի տեղական օրգան, Աշտարակ, 1919 թ., «Որոտան» Զանգեզուրի կոմիտեի օրգան, Գորիս, 1918–1919 թթ., «Սիւնիք» տեղական օրգան, Գորիս, 1920 թ., «Շանթ» աշակերտական միության օրգան, Երևան, 1918–1919 թթ., «Երկիր» աշակերտական միության օրգան, Երևան, 1919 թ. և «Յոյս» Ալեքսանդրապոլի աշակերտական միության օրգան, Ալեքսանդրապոլ, 1919 թ.: Սրանք, որպես կանոն, լուսաբանում էին իրենց տարածաշրջանին և ոլորտին առնչվող խնդիրներ, արտատպում կենտրոնական մամուլի կարևորություն ներկայացնող նյութերը և այլն:

ՀՀ-ի համար ռազմավարական կարևոր նշանակություն ուներ Զանգեզուրը, ուր սկզբում լույս էր տեսնում ՀՅԴ Սյունիքի կոմիտեի օրգան «Որոտանը»՝ «Հայ աշխատավոր գյուղացու իղձերի թարգմանը», իսկ 1920 թ. հունվարի 1-ից այն փոխարինվեց «Սիւնիք» շաբաթաթերթով: «Սիւնիքը» ինչպես «Որոտանը», իր հիմնական նպատակն էին համարում հայ աշխատավոր ժողովրդի՝ գյուղացիության, տնտեսական և կուլտուրական պահանջների ու բովանդակ շահերի պաշտպանությունը (1920, 1 հնվ.): Թերթի ուշադրության կենտրոնում են գտնվել թե՛ տնտեսական (պարենավորման, համաճարակի, կոոպերացիայի և այլն) և թե՛ ռազմաքաղաքական բնույթի խնդիրներ:

ՀՅԴ-ն՝ որպես կառավարող և ազդեցիկ կուսակցություն, հիմնել էր միություններ աշակերտության և սովորող երիտասարդության շրջանում, որոնք ունեին իրենց պարբերականները: Այդ պարբերականների առաջնային խնդիրներն էին՝ սատարել երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, աշխատանքային ու մասնագիտական կողմնորոշմանը, սկաուտական շարժման արմատավորմանը և այլն:

ՀՅԴ աշակերտական միության օրգաններից առանձնապես լայն ճանաչում ուներ «Շանթ» շաբաթաթերթը՝ Հ. Ասատրյանի խմբագրությամբ: Հավատարիմ դաշնակցական մամուլին բնորոշ՝ իշխանավորների չարաշահումները և սոցիալական անարդարությունները չթաքցնելու հետևողականությանը, դաշնակցական աշակերտական

միության պաշտոնաթերթը ևս համարձակորեն քննադատում էր իր իսկ կառավարության կողմից նշանակած «լիազորներին» ու պաշտոնյաների կատարած չարաշահումները («Նանթ», 1919, 11 մյս.):

Այսպիսով, թեև դաշնակցական պարբերականները համարվում էին հիմնական կառավարող կուսակցության մամուլը, սակայն դա չէր խանգարում, որպեսզի թերթերը ցուցաբերեին նաև ընդդիմադիր կեցվածք, բացահայտեին հանրապետության կյանքի առկա թերությունները ու բացերը և դրանով նպաստեին դրանց շտկմանը:

ՀՀ ձախակողմյան մամուլը ներկայացնում էին Սոցիալիստ-հեղափոխականները (էսէռներ), Սոցիալ-դեմոկրատ՝ մենշևիկները և բոլշևիկները: էսէռներն ունեցել են մամուլի 3 օրգան, մենշևիկները՝ ևս՝ 3-ը, իսկ բոլշևիկների և նրանց համակիր պարբերականների թիվը հասնում էր 14-ի: Սակայն այդ թերթերի կեսից ավելին քաղաքական հետապնդումների, նյութական պայմանների սղության և այլ պատճառներով լույս են տեսել ընդամենը մեկ կամ մի քանի համար:

Հայտնի է, որ ձախակողմյան կուսակցությունները կոչված են արտահայտելու տնտեսապես և իրավապես հարստահարվող ու սեփականազուրկ զանգվածների շահերն ու պահանջները: Հայաստանում զգալի տեսակարար կշիռ էին կազմում ընչազուրկ չքավորական զանգվածները, սակայն արդյունաբերության բացակայության հետևանքով Հայաստանում, ըստ էության, չկար էր մարքսիզմի հասկացությամբ արդյունաբերական պրոլետարիատ (բանվոր դասակարգ): «Հայաստանի աշխատավորի» վկայությամբ հանրապետությունում հաշվվում էր շուրջ 10 հազար բանվորություն (1919, 16 սպտ.): Կնշանակի, ձախակողմյան տիպի կուսակցությունները, լինելով ռուսական և արևմտաեվրոպական իրականության ծնունդ, Հայաստանում չունեին բավարար քանակությամբ սոցիալական հող և քաղաքական հենարան:

Ձախակողմյան կուսակցությունների և բնականաբար նրանց մամուլի մյուս բնորոշ կողմն այն էր, որ նրանք առաջնորդվում էին ոչ այնքան ազգային, որքան ժողովուրդների համերաշխության (ինտերնացիոնալիզմի) գաղափարներով: Օրինակ, եթե ՀԺԿ, ՀՍԴԿ և ՀՅԴ-ն լինելով ազգային տիպի կուսակցություններ, իրենց մամուլում կարմիր թելի պես անցկացնում էին ազգային ազատագրության, ազգապահպանության, պետական անկախության և

Միացյալ-Անկախ Հայաստանի գաղափարները, ապա ու ազգային համարվող սոց-դեմ. բոլշևիկ-մենշևիկների և էսէռների կուսակցական մամուլում ավելի կարևորվում էին դասակարգային պայքարի, ընկերային, տնտեսական և ազգերի համերաշխության խնդիրները: Բացի այդ, ձախակողմյան կուսակցությունների պարբերական մամուլը, դրսևորելով ընդգծված ռուսական քաղաքական կողմնորոշում, հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության հրաշխիքը տեսնում էր միայն ռուսական հեղափոխությունների հաղթանակի մեջ: Հայաստանի անկախության հռչակումից հետո ձախակողմյան ուղղության համառուսաստանյան կուսակցությունների էսէռական, սոցիալ-դեմոկրատ մենշևիկյան և բոլշևիկյան հայկական հատվածները իրենց գործունեության ծանրության կենտրոնը Թիֆլիսից ու Բաքվից տեղափոխեցին Հայաստան: 1919 թ. փետրվարին Երևանում հիմնվեց էսէռների կուսակցության Հայաստանի կոմիտե, որի պաշտոնական օրգանը դարձավ «Սոցիալիստ հեղափոխական» եռօրյան: Թերթը լույս է տեսել 1919 թ. մայիսից մինչև 1920 թ. ապրիլը: Պաշտոնաթերթի բնաբանն էր «Կռվով կխլես քո իրավունքը»:

Թերթի լույս ընծայումը համընկավ խորհրդարանական ընտրությունների: Այն ակտիվ քարոզչություն էր տանում ընտրողների շրջանում՝ քվեարկելու էսէռների թիվ 3 ընտրացուցակի օգտին: Սակայն, ինչպես հայտնի է, սոցիալական լայն հենարան չունեցող էսէռները ընտրությունների արդյունքով կարողացան անցկացնել ընդամենը 4 պատգամավոր:

«Սոցիալիստ հեղափոխականը» ուներ «Կուսակցական կյանք» բաժինը: Նյութեր կան տպագրված 1919 թ. օգոստոսին էսէռների կուսակցության Հայաստանյան կազմակերպությունների համագումարի և կոնֆերանսի վերաբերյալ («Սոցիալիստ հեղափոխական», 1919, 17 հս., 10-21 օգ.): Իբրև գյուղացիական կուսակցության մամուլ՝ թերթն անդրադարձել է հողային խնդրին՝ հողային կոմիտեների գործունեությանը, կոոպերացիային, տեղական ինքնակառավարման բարեփոխումներին և այլն (1919, 21 օգ.): Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում թերթը միանշանակ կանգնած էր ռուսամետ դիրքերում: «Հայաստանի դեմոկրատիան,- կարդում ենք խմբագրականներից մեկում,- միշտ պէտք է առաջնորդող ունենայ

իր համար այն մեծ աւանդները, որ կտակել է մեզ Ռուսաստանի յեղափոխութիւնը և ռուսական մեծ դեմոկրատիայի հետ համընթաց քաղաքական գծի մէջ պիտի փնտրի իր փրկութիւնը» (նույն տեղում):

Իբրև ձախակողմյան ընդդիմադիր կուսակցության պաշտոնաթերթ՝ «Սոցիալիստ յեղափոխականը» քննադատում էր կառավարության վարած ներքին և արտաքին քաղաքականությունը: Թերթը նյութեր և հաղորդագրություններ էր տպագրում երկրի սոցիալ-տնտեսական աղետալի վիճակի, խորհրդարանում «ձախ» ընդդիմության գործունեության, իշխանությունների անիրազեկության ու չահատակությունների, դաշնակցական կառավարության կողմից բոլշևիկների հետապնդումների ու ձերբակալությունների մասին:

Արդեն 1920 թ. գարնանը, երբ 11-րդ Կարմիր բանակը հայտնվեց Անդրկովկաս՝ հայ էսէռների պաշտոնաթերթը գտնում էր, որ Հայաստանում պետք է հաստատվի խորհրդային իշխանություն: Մայիսյան ապստամբության նախօրյակին հակապետական քարոզչության, բոլշևիկներին համակրելու և անսքող պաշտպանելու համար իշխանությունների կողմից փակվեց «Սոցիալիստ յեղափոխականը»: Նույն հիմնավորմամբ 1920 թ. մարտի 18-ին Ն.գ. նախարարի կարգադրությամբ լույս տեսնելուն պես փակվեց նաև էսէռների մեկ այլ օրգան "Знамя труда" (Աշխատանքի դրոշակ) թերթը, և բռնագրավվեց ամբողջ տպաքանակը: Հարկ է նշել, որ ձախակողմյան ընդդիմության համար սոցիալական ուժեղ հենարան էր Հանրապետության երկրորդ քաղաքը՝ Ալեքսանդրապոլը (Գյումրին), ուր և լույս էին տեսնում հայ էսէռների կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության օրգան «Լոյսը» (1918 թ.), իսկ հետո՝ «Աշխատանքի դրօշակը» (1920 թ.):

Ձախակողմյան հաջորդ կուսակցական մամուլը ՌՍԴԲԿ (մենշևիկների) Հայաստանյան կազմակերպության բյուրոյի և Երևանի քաղաքային կոմիտեի օրգան «Կայծ» (Երևան, 1918–1919 թթ.) ենթրյան էր հայտնի մարքսիստ տնտեսագետ Թ. Ավդալբեկյանի խմբագրությամբ: «Կայծի» բնաբանն էր՝ «Բոլոր երկրների բանվորնե՛ր, միացե՛ք»: Թերթին աշխատակցել են մենշևիկ գործիչներ Գ. Ղարաջյանը (Արկոմեդ), Մ. Ղարաբեկյանը, Գ. Գյանջեցյանը, Ար. Երզնկյանը,

Հ. Ազատյանը, ինչպես նաև Ա. Կիտուրը, Ս. Ծովյանը (Վ. Խերանյանը), Խ. Սամվելյանը և ուրիշներ:

Որպես ձախ մամուլ «Կայծը» նույնպես անխնա քննադատում էր դաշնակցական կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Առանձնապես դժգոհություն էր արտահայտում կառավարության ֆինանսատնտեսական գործունեության, պարենավորման, համաճարակի դեմ պայքարի, գաղթականության, կրթության և այլ խնդիրներում ցուցաբերվող անհետևողականության վերաբերյալ: «Կայծը» Քաջազնունու կաբինետը որակում էր որպես «խմբապետանոց» (1918, 8 դկտ.):

«Կայծը» քննադատում էր նաև կառավարության վարած արտաքին քաղաքականությունը: Մասնավորապես, 1918 թ. դեկտեմբերի հայ-վրացական պատերազմի հարցում հայ սոց.-դեմ. մենշևիկների պաշտոնաթերթը պացիֆիստական դիրքերից հավասարապես քննադատում էր հայ և վրաց ազգայնամոլներին (1918, 9 նոյ.):

1918–1919 թթ. Ալեքսանդրապոլում լույս էր տեսնում Ա. Զուրաբյանի ազդեցությամբ ստեղծված մենշևիկյան ուղղության «Անկախ սոցիալիստների կուսակցության» օրգան «Մարդկայնութիւն» հոսրյան կազմակերպության ղեկավար և Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Լևոն Սարգսյանի խմբագրությամբ: Անդրկովկասի ճանաչված սոց.-դեմ. Ա. Զուրաբյանի անունով հաճախ այս կազմակերպությունը անվանել են նաև «զուրաբական»: Հայաստանի կառավարության նկատմամբ թերթն ունէր ընդդիմադիր կեցվածք և «Զանգի» բնորոշմամբ «զբաղուած էր իշխանութիւնների վրայ յարձակումներով» (1919, 10 հնվ.):

«Մարդկայնութիւն» լրագրից կարելի է տարաբնույթ նյութեր քաղել քաղաքի ու գավառի սոցիալիստամետ ուժերի համագործակցության, Անգլիայի հայադավ քաղաքականության, Շիրակի գավառում կոոպերացիայի վիճակի, ցեմստվային ինքնավարությունների և համանման խնդիրների մասին (1919, 5, 27 ապր. և այլն): Թերթի ապագրությունը ընդհատվեց 1919 թ. ապրիլին: ՀՅԴ «Զանգ» պաշտոնաթերթի հոդվածագիր Գ. Շահինյանը, «Հայ մամուլը 1918 թ.» հոդվածաշարում տալով ձախակողմյան ու, մասնավորապես, սոց.-դեմ. մենշևիկների մամուլի գնահատականը, գտնում էր, որ այն

ավելի շատ զբաղված էր բամբասանքներով կամ էլ հարձակումներով, քան թե կառուցողական ստեղծագործ աշխատանքով:

Ձախակողմյան ուժերը նկատելի կշիռ ունեին նաև Լեռնային Ղարաբաղում: Հայտնի է, որ այս երկրամասը տվել է հայ մարքսիստ-սոցիալիստ գործիչների մի ստվար ջոկատ: 1919 թ. հունվարի 30-ին Շուշիում լույս տեսավ տեղի սոց.-դեմ. մենշևիկյան կազմակերպության օրգան «Նոր կեանք» շաբաթաթերթը: Անշուշտ, ճշտման կարիք ունի Գարեգին Լևոնյանի տվյալը, որով մատնանշում է «Նոր կեանքի» ընդամենը մեկ համար[1]: Իրականում թերթը ունեցել է հինգ համար, տպագրել է տեղի Հայոց Ազգային խորհրդի շրջաբերականները, զետեղել նյութեր պարենային դրության, ազգամիջյան ընդհարումների մասին: «Նոր կեանքը» հանդես էր գալիս աշխատավոր գյուղացիության շահերի պաշտպանությամբ: Նա թեև փոքր-ինչ լոյալ էր Հայաստանի կառավարության հանդեպ, սակայն ուներ ընդդիմադիր կեցվածք Արցախի Հայոց ազգային խորհրդի կառավարության նկատմամբ. քննադատում էր գավառներում և Շուշիում տեղական իշխանությունների թույլ տված շահատակությունները, նյութեր էր զետեղում առկա թալանի, սովի, տիֆի դեմ պայքարում Շուշիի քաղաքագլխի ու առողջապահական հիմնարկների անգործության մասին և այլն (1919, 30 հնվ.):

Ձախակողմյան կուսակցությունների ու նրանց մամուլի ամենաընդդիմադիր ու ամենաանհաշտ ծայրահեղ ձախ թևը ներկայացնում էին բոլշևիկները և նրանց՝ մեկ տասնյակից ավելիին հասնող պարբերականները: ՀՀ բոլշևիկյան պարբերականներից կենտրոնական տեղ է գրավում Երևանի կոմունիստական (բոլշևիկյան) կազմակերպության պաշտոնաթերթ «Խօսքը» (հրատարակվել է 1918 թ. սեպտեմբերի 22-ից մինչև 1919 թ. մարտի 22-ը՝ ընդամենը 22 համար):

Թերթի խմբագիրն էր հին բոլշևիկ Արշավիր Մելիքյանը: «Խօսքի» բնաբանն էր. «Բանվորնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք»: Թերթին աշխատակցել են Ստ. Ալավերդյանը, Ս. Մարտիկյանը, Ա. Խանջյանը, Ղ. Ղուկասյանը, Հ. Բատիկյանը, Ս. Ծովյանը (Վ. Խերանյանը), Վ. Բաբայանը, Ս. Պատրիկյանը և ուրիշներ:

---

[1] Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը (1794–1934), Ե., 1934, էջ 102:

«Զանգի» առաջին իսկ համարում տպագրվեց Հայաստանի խորհրդում (խորհրդարանում) կարդացված (ունեին ընդամենը մեկ պատգամավոր) հայտարարությունը: Հայաստանի մեծամասնականների հայտարարագրում մասնավորապես ասվում էր. «Մենք անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ հայ ժողովրդի ներկայ քաղաքական կացութիւնը երբէք չի կարելի համարել կայուն, բնական ու բաւարար... Մեր կուսակցութեան կողմից յանցանք կլինէր, եթե փորձէինք որևէ մէկին ներշնչել այն միտքը, թէ մեր տխուր իրականութեան հետ պէտք է հաշտուել և սկսել խաղաղ ստեղծագործական աշխատանք. այդ ոչ մի դէպքում» («Զանգ», 22 սեպտեմբերի, 1918 թ., թիվ 1): Եվ ահա այս ամենին վերջ տալու համար հայտարարագրում ընդգծվում էր՝ «չխնայել ոչ մի զոհաբերութիւն և ցոյց տալ ամենայն պատրաստակամութիւն՝ գոյութիւն ունեցող անարգ և խայտառակ լուծը դէն շպրտելու համար» (նույն տեղում):

«Զանգն» իր էջերում զգալի տեղ էր հատկացնում ազգաբնակչության շրջանում կոմունիստական քարոզչությանը, անդրադառնում էր երկրի սոցիալ-տնտեսական խնդիրներին՝ պարենավորման, խնամատարության, կրթամշակութային, նյութեր էր տպագրում ժողովրդի ծանր վիճակի մասին՝ դրա պատճառը միակողմանիորեն համարելով կառավարության վարած «հակաժողովրդական» քաղաքականությունը: Թերթի բաղձանքը օր առաջ Հայաստանը Խ. Ռուսաստանի հետ կապելն էր:

«Զանգը» անխնա քննադատում էր դաշնակցական կառավարության ու խորհրդարանի գործունեությունը, տեղական իշխանությունների չարաշահությունները, «մաուզերիզմը» և այլն: «Զանգում» տեղ են գտել լրագրային տարբեր ժանրեր՝ հոդվածներ, ֆելիետոններ, թղթակցություններ, ակնարկներ, գրախոսություններ: Թերթն ուներ «Կուսակցական կյանք», «Բանվորական կյանք», «Արտաքին տեսություն», «Վերջին լուր» և այլ բաժիններ:

Բոլշևիկյան պարբերականները սկզբում լույս էին տեսնում կիսալեգալ պայմաններում: Փաստենք, որ Հանրապետության առաջին փուլում առանց այն էլ թվաքանակով փոքրաթիվ բոլշևիկները ոչ միայն չէին հալածվում իշխանությունների կողմից, այլև նրանցից շատերը պետական պաշտոններ էին զբաղեցնում կրթության, պարենավորման, խնամատարության, փոստի և հաղորդակցության ոլորտ-

ներում: Ավելին, ինչպես ասվեց, նրանք ունեին անգամ իրենց ներկայացուցիչ-պատգամավորը Հայաստանի խորհրդարանում: Վիճակը կտրուկ փոխվեց 1920 թ. սկզբներից, երբ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն (Արմենկոմը) խնդիր դրեց իր առջև՝ տապալել դաշնակցական վարչակարգը և խորհրդայնացնել երկիրը:

1920 թ. հունվարին հայ բոլշևիկները հեղափոխական-դասակարգային պայքարի հարուստ ավանդներ ունեցող Ալեքսանդրապոլում փորձեցին հրատարակել ՌԿ(բ)Կ տեղի կազմակերպության օրգան «Ալիք» անունով շաբաթաթերթը: Սակայն ընդամենը մեկ համար լույս տեսնելուց հետո այն փակվեց, որպես «հակակառավարական, հակադաշնակցական ուղղության թերթ»: Գրեթե նույն ճակատագրին արժանացավ բոլշևիկյան «Բանվորը» (Ալեքսանդրապոլ, խմբ. Ս. Խանոյան): Իսկ «Լոռվա գյուղացու ձայն» երկշաբաթաթերթը լույս տեսավ ընդամենը հինգ անգամ (Հաղպատ, 1920 թ. հունվար-ապրիլ, խմբագիր Սուրեն Երզնկյան): Այն Լոռվա բոլշևիկյան կազմակերպության և գյուղացիական միության օրգանն էր: Այս լրագիրը նույնպես Հայաստանի ապագան կապում էր Խ. Ռուսաստանի հետ:

Հայաստանի իշխանությունների կողմից փակված ու, թերևս, քաղաքական ամենամեծ աղմուկ հանած պարբերականը Հայաստանի երիտասարդ կոմունիստների (ինտերնացիոնալիստների) «Սպարտակ» միության համանուն «Սպարտակ» թերթն էր: Լույս է տեսել «Սպարտակի» ընդամենը մեկ համար՝ 1919 թ. մայիսի 1-ին, խմբագիրներն էին Ղ. Ղուկասյանը, Ա. Խանջյանը և Վ. Խերանյանը (Ծովյան):

Թերթում զետեղվել էր «Սպարտակ» միության ծրագրի նախաբանը, ուր ընդգծվում էր պրոլետարիատի ղեկավար դերը: Այնտեղ տպագրվել էին խորհրդարանի ընտրությունները բոյկոտելու և Բեյուք Վեդիի կռիվների վերաբերյալ պարտվողական կոչեր: Արշ. Մելիքյանն իր հուշերում գրում է, որ «Սպարտակի» այս միակ համարը մեծ իրարանցում առաջացրեց հասարակության մեջ և անգլիացիների պահանջով թերթն իսկույն փակվեց:

Ձախակողմյան կոմունիստամետ ուղղվածություն ունեին Հայաստանի գյուղացիական և կոոպերատիվների միության տարածաշրջանային հետևյալ օրգանները՝ Շիրակի գյուղացիական միության

«Գյուղացիական միություն», (Ալեքսանդրապոլ, 1919 թ.) շաբաթաթերթը, Արագածոտնի աշխատավոր գյուղացիական միության օրգան «Գյուղացու ձայն», (Երևան, 1920 թ.) շաբաթաթերթը և այլն:

Վերջինս ուներ ընդգծված բոլշևիկյան ուղղվածություն: Այն հիմնվել էր ՌԿ/բ/Կ Հայաստանի կոմիտեի ցուցումով 1920 թ. ապրիլին, խմբագիրներն էին խորհրդարանի պատգամավոր Արտաշես Մելքոնյանը և բոլշևիկ Դ. Տեր-Սիմոնյանը: Լույս է տեսել «Գյուղացու ձայնի» երեք համար, իսկ մայիսի սկզբին հայտնի ապստամբության նախօրյակին, 4-րդ համարի տպաքանակը բռնագրավվեց, և թերթի հետագա հրատարակությունը արգելվեց:

Դարձյալ Մայիսյան ապստամբության նախօրյակին անլեգալ պայմաններում լույս տեսավ ՌԿ/բ/Կ Երևանի քաղաքային կոմիտեի օրգան «Կոմունիստ» թերթը, որում Հայաստանի բանվորներին և գյուղացիներին կոչ էր արվում տապալել դաշնակցական վարչակարգը և հաստատել խորհրդային իշխանություն: Բնականաբար, մայիսյան հակապետական ապստամբության ճնշման ուղղությամբ կառավարության ձեռնարկած արտակարգ միջոցառումների պայմաններում արգելվեց նաև բոլշևիկների այս թերթը:

1920 թ. ամռանը, երբ 11-րդ Կարմիր բանակի զորամասերը մուտք գործեցին Զանգեզուր, Գորիսում սկսեցին լույս տեսնել «Կարմիր Զանգեզուր» (խմբ. Հ. Սիլանյան, Հ. Կամարի) և «Զանգեզուրի կոմունիստ» (խմբ. Սեյրի (Ավ. Գուլոյան)) բոլշևիկյան լրագրերը: Իսկ ավելի ուշ 1920 թ. նոյեմբերին, երբ թուրք-հայկական պատերազմի արդյունքում Ալեքսանդրապոլի գավառը բռնազավթվել էր թուրքական զորքերի կողմից, Հայկոմկուսի տեղի Ալեքսանդրապոլի շրջանային կոմիտեն, սկսած նոյեմբերի 21-ից, հրատարակեց «Կոմունիստ» պաշտոնաթերթը Արշ. Արշարունու խմբագրությամբ:

Շատերին է հայտնի կոմկուսի Ալեքսանդրապոլի կոմիտեի ծայրահեղական, թուրքամետ կեցվածքը: Լույս տեսավ թերթի ընդամենը հինգ համար, որը ներծծված էր հակադաշնակցական և քեմալամետ գաղափարներով: Այս իմաստով առանձնապես բնորոշ են «Արևելքը, քեմալական շարժումը և նրա դերը Հայաստանի աշխատավոր դասակարգի կեանքում», «Կուսակցական մեծ միտինգ», «Դաշնակցութեան ժառանգները» և այլ վերտառությամբ հոդվածները:

Չնայած քաղաքական հետապնդումներին՝ Հայաստանի բոլշևիկներին հաջողվում է հիմնել նաև աշակերտական լրագրեր: Հայտնի է, որ բոլշևիկներից ոմանք քաղաքացիական պաշտոններ էին զբաղեցնում կրթական համակարգում կամ էլ զբաղվում էին ուսուցչությամբ՝ խորհրդամետ քարոզչական աշխատանք տանելով երիտասարդ սերնդի շրջանում: 1920 թ. մարտի 17-ին լույս ընծայվեց Հայաստանի ընդհանուր աշակերտական միության կենտրոնական խորհրդի օրգան «Նոր սերունդ» շաբաթաթերթը (Երևան, 1920 թ. մարտ-ապրիլ): Թերթի խմբագրակազմը ներկայացնում էին Ա. Խանջյանը, Վ. Խերանյանը և Ա. Ղազարյանը: Թերթին թղթակցել են նաև Մ. Մուրադյանը, Ա. Գյուզյանը և ուրիշներ: «Նոր սերունդը» պահանջ էր դնում երեխաներին կրթել Խ. Ռուսաստանի նոր ձևավորվող կրթական համակարգի ոգով՝ սոցիալիստական դաստիարակությամբ (1920, 26 մրտ.): Լույս տեսավ շաբաթաթերթի ընդամենը չորս համար և ձախ ծայրահեղական հայացքների համար փակվեց մայիսի 1-ին՝ ապստամբության նախաշեմին:

Այսպիսով, չնայած սոցիալական ոչ լայն հենարանի՝ ՀՀ քաղաքական դաշտում իր արժանի տեղն է գրավում ձախակողմյան մամուլն ընդհանրապես և բոլշևիկյանը՝ մասնավորապես:

Ի տարբերություն կուսակցական մամուլի՝ ՀՀ-ում շատ թույլ է արտահայտվել անկուսակցական (անկախ) և գիտական մամուլը: Մի կողմից՝ արտաքին ու ներքին ազդակների ներգործությամբ հանրապետության կյանքը խիստ քաղաքականացված էր, ուր գործում էին տասնից ավելի կուսակցություններ ու քաղաքական հոսանքներ, իսկ մյուս կողմից՝ օբյեկտիվորեն չկային բավարար նյութական պայմաններ և հասարակության մեջ լրագրողական ու քաղաքացիական բավականաչափ հասունություն՝ ազատ ու անկախ մամուլի զարգացման համար:

Եթե, այնուամենայնիվ, որոշ պարբերականներ նախապես անկախ էին, բայց կարճ ժամանակ անց, չունենալով բավարար ֆինանսական միջոցներ, կամ փակվում էին, կամ էլ հասկանալի պատճառներով ընկնում իշխանությունների կամ որևէ կուսակցության ու հովանավոր խմբի ազդեցության տակ և դառնում արտաքուստ անկախ, սակայն բովանդակությամբ՝ նրանցից հույժ կախյալ: Ինչ վերաբերում է գիտական ուղղվածության պարբերականներին, ապա

պետք է ասել, որ ՀՀ արտասովոր ծանր վիճակը և կարճատև կյանքը բնականաբար հնարավորություն չտվեցին գիտական բեղուն գործունեություն ծավալել, ուստի և ունենալ գիտական լուրջ բնույթի պարբերականներ:

Կարելի է թվարկել Հանրապետությունում լույս տեսնող շուրջ մեկ տասնյակի հասնող անկուսակցական կամ մասնագիտական(պրոֆեսիոնալ) նշանակության պարբերականներ: Օրինակ, Համապատասխան գրիֆով անկուսակցական էին ներկայանում «Ալեքսանդրապոլի լրաբեր», 1919 թ. օրաթերթը, «Իդէալ» 1919 թ., գրական աշակերտական կիսամսյան, «Թոթովանք», Երևան, 1919 թ., Երևանի ամերիկյան որբանոցների աշակերտական միության երկշաբաթաթերթը, «Նոր ուղի», Երևան, 1920 թ., Երևանի գիմնազիաների կոլեկտիվների շաբաթաթերթը և այլ պարբերականներ:

Այդ լրագրերը, ընդհանուր առմամբ ընդդիմադիր էին իշխանություններին և ավելի հաճախ ունեին ձախակողմյան հակվածություն: Այսպես օրինակ, ռուսալեզու «Դպրոցի դրօշակը» թեև չուներ կուսակցական պատկանելություն, սակայն դրա նյութերի բովանդակությունից դժվար չէ կռահել, որ պաշտպանվում էին խորհրդամետ հայացքներ: Չնայած օրենքով Հայաստանում գործող գիմնազիաները ազգայնացվել էին, սակայն ռուսալեզու այդ կրթօջախները շարունակում էին գործել ռուսական գիմնազիաների ուսումնա-կրթական ծրագրերով ու ավանդներով: «Դպրոցի դրօշակին» աշխատակցել են Եր. Մռավյանը, Ար. Ղարիբյանը, Հայկ Ասատրյանը և ուրիշներ: Անկախ լրագրի հայացքներից նրանում նպատակ էր հետապնդվում հասարակական քննարկումների ճանապարհով նպաստել ուսումնակրթական գործի բարելավմանը: Թերթի էջերում շոշափվել են մշակութային բնույթի խնդիրներ: Լույս է տեսել այդ թերթի ընդամենը յոթը համար (1919 թ. փետրվար-ապրիլ ամիսներին):

ՀՀ-ում շատ կարճատև ընթացքով լույս տեսան գերատեսչական, գիտաուսումնական բնույթի մի երկու ամսագիր: 1920 թ. ընդամենը մեկ համարով թողարկվեց գյուղատնտեսության և պետգույքերի նախարարության ենթակայության «Գիւղատնտեսական Հանդէս» գիտաուսումնական ամսագիրը:

Բժշկագիտական ուղղվածություն ուներ Երևանի բժշկական ընկերության «Առողջապահիկ», Երևան, 1920 թ. (փետրվար-մարտ) հանդեսը, որի գլխավոր խմբագիրն էր ճանաչված բժիշկ-գիտնական Վահան Արծրունին: Հիվանդություններով ու համաճարակներով այնքան հարուստ Հայաստանում անփոխարինելի քարոզչամիջոց էր նման ամսագրի լույս ընծայումը: Ամսագրի հոդվածների մեծ մասի հեղինակը Վ. Արծրունին էր:

Հանդեսը կարևորում էր ժողովրդական բժշկության դերը և առաջարկում բժիշկ-մասնագետներին նյութեր պատրաստել ժողովրդական բժշկության, բույսերի բուժիչ հատկությունների, սնոտիապաշտության և նախապաշարմունքների մասին:

Հոգևոր և գիտական ուղղվածություն ուներ Ս. Էջմիածնի Հայրապետական աթոռի «Արարատ» պաշտոնական ամսագիրը: Հանդեսը լույս էր տեսնում 1868 թվականից, և Հայաստանի անկախության հռչակման տարում լրանում էր «Արարատի» 50 տարին: Գաղափարաքաղաքական դավանանքի տեսակետից այն դասվում է պահպանողական թևին, սակայն նրա համարներում զգալի տեսակարար կշիռ են կազմում հայագիտական, բանասիրական, հնագիտարանային բովանդակության աշխատություններն ու հոդվածաշարերը: «Արարատն» ուներ պաշտոնական, կրոնական, ազգային և գիտական բաժիններ: Առանձնապես արժեքավոր է ամսագրի գիտական բաժինը:

Հայաստանի անկախության հռչակումից հետո լույս տեսավ «Արարատի» ընդամենը երկու համար՝ 1918 թ. ապրիլ-դեկտեմբեր և 1919 թ. հունվար-դեկտեմբեր ամսացույցերով՝ զուտ գիտական բովանդակության հոդվածներով ու գրախոսականներով: Հանդեսին աշխատակցել են Գյուտ ծ. վարդ.-ը, Գարեգին եպ. Հովսեփյանը, Մեսրոպ եպ.-ը, Արսեն ծ. վարդ.-ը և ուրիշներ՝ իրենց պատմա-բանասիրական ու իրավագիտական ուշագրավ ուսումնասիրություններով:

Արդեն 1920 թ. հունվարից ընդհատվեց «Արարատը», և նրա փոխարեն սկսեց հրատարակվել Մայր աթոռ Ս. Էջմիածնի օրգան «Էջմիածին» շաբաթաթերթը՝ Գյուտ ծ. վարդ. Ղազարյանի խմբագրությամբ: Շաբաթաթերթում տեղ են գտել հոգևոր-մշակութային բնույթի լուրեր, նյութեր, թղթակցություններ ու ակնարկներ: «Էջմիածինը» ուներ եկեղեցու քրոնիկոն բաժինը: Բայց այստեղ էլ

ամենաարժեքավորն ու գնահատելին գիտական, ստեղծագործական, կրթա-մշակութային բնույթի աշխատասիրություններն են: «Էջմիածինը» անդրադարձել է հանրային կրթության խնդիրներին: «ՀՀ դպրոցները» հոդվածում տվյալներ են բերված Հայաստանում կրթական գործի բարելավման ուղղությամբ: 1919 թ. Հանրապետության ութ գավառներում արդեն բացվել ու գործում էին 423 տարրական դպրոց` 939 ուսուցիչներով («Էջմիածին», թիվ 4, էջ 5): Իսկ կրթությանը վերաբերող մեկ այլ հոդվածում, խմբագիր Գյուտ վարդապետը հարց էր բարձրացնում «Հիմնովին բարեփոխել ներկա ժողովրդական դպրոցը» (թիվ 5, էջ 75): Պարբերականը լույս տեսավ մինչև 1920 թ. հոկտեմբերի 4-ը, և տևական ընդմիջումից հետո, 1944 թ., հրատարակվեց արդեն իբրև ամսագիր, և որը շարունակվում է մինչև մեր օրերը:

Այսպիսով, Հայաստանի անկախության հռչակումը հայ ժողովրդի կյանքում նշանակալի իրադարձություն եղավ ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր-մշակութային տեսակետից: Չնայած արտակարգ ծանր քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններին` այդուհանդերձ, զգալիորեն առաջադիմեց մշակութային կյանքը, այդ թվում` հասարակական միտքն ու պարբերական հրատարակությունները: Իր գոյության կարճատև (2,5 տարի) ժամանակահատվածում ՀՀ-ը դարձավ հայահավաքման կենտրոն: Աստիճանաբար հայ մամուլի ավանդական կենտրոնները` Թիֆլիսը, Կ. Պոլիսը, Վենետիկը, Մոսկվան, Բաքուն և այլն իրենց դիրքերը զիջեցին Երևանին: Վերջինս դարձավ հայ հասարակական-քաղաքական ու հոգևոր կյանքի կենտրոն, ուր լույս էին տեսնում շուրջ վեց տասնյակ պարբերականներ: Ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ գավառային կենտրոնների տարաբնույթ` պաշտոնական, կուսակցական, անկախ, հոգևոր և այլ թերթերն ու ամսագրերը, անշուշտ, հանդիսացել են տվյալ ժամանակաշրջանի բարդ իրականության և բազմաշերտ հասարակական-քաղաքական կյանքի հայելին:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ*

Ա

Ա.-ԴՕ (Տեր-Մարտիրոսյան Հովհ.) 9, 99, 583, 585–587
*Աբգարյան Հովսեփ 472
Աբդուլ Կադիրի 288
Աբդուլ Համիդ II 11, 53, 62, 63, 75, 100, 137, 175, 179, 213, 220, 224, 225, 238, 269, 278, 280, 284, 296, 349, 436, 451, 488, 542, 609
Աբելյան Հովհ. 18
Աբեղյան Ա. 717
Աբեղյան Մ. 18, 91, 116, 117, 187
Աբովյան Խ. 57, 63, 171, 204, 309, 420, 427, 574, 673
Ագաշ Ա. 107
Ագնիս Մ. 370
Ադամյան Շ. 457
Ադամյան Պ. 119, 135, 240
Ադամյան Ս. 132
*Ադոնց Ն. 100–102, 104–107, 199, 388
Ազատյան Հ. 723
Ազգունի Ն. (Ներսես Դշխոյան) 98
Ազնավուր 457
Ազնավուր Գ. 456
*Ազնավուր Հ. 315
Ազնավուրյան Մ. 294
Աթաբեկյան Լ. 103, 135, 694, 695
Աթաբեկյան Լ. 209, 210
*Աթանասյան Աշոտ (Ստորակետ, Ես-չեմ, Սալ-ման) 9, 32–34, 36–38, 50, 55, 56, 58, 84, 121, 134, 139, 140, 141, 160, 163, 189, 679, 685
Աթանասյան Ն. 33
*Աթանասյան Վ. 33, 35
Աթարբեկյան Գ. 675
Աթոս 86
Աժտերյան Մ. 378
*Ալաճաճյան Հ. 259
Ալաջալյան Մ. 107
Ալավերդյան Ս. 675, 724
Ալթունյան Սպ. 513
Ալի Րիզա 278
Ալիբեկ 587
Ալիշան Ղ. 167, 427, 482, 619
Ալյան Հ. 406
*Ալպոյաճյան Ա. 220, 223, 229, 230, 241, 257, 258, 259, 263, 264, 327
Ալփասլան (Ադ. Փանոսյան) 241, 315
Ալփիար Հ. (Քրիզանթեմ) 214, 228, 229, 237, 241, 250, 251, 253, 260, 262, 264, 265, 266, 268, 274, 305, 310, 312, 329, 351, 406, 409, 512, 539

* Խմբագիրներն առանձնանշված են աստղանիշերով:

Ալֆ 108
Ալֆիմով 158
Ակնունի Է. 598
Ակոփ 455
Ահարոնյան Ավ. 13, 19, 23, 29, 30, 103, 104, 109, 201, 277, 311, 322, 371, 393, 571, 573, 574
Ահարոնյան Գ. 672,
Ահարոնյան Վ. 717
Ահմեդ Շերիֆ 300
Ահմեդ Ջևդեթ 334
Ահմեդ Ռեսիմ 239
Ահմեդ Ռիզա բեյ 284, 298, 398, 634
Ահրիման 435, 436
Աղաբար Հ. 131, 161, 172
Աղաբա՛ր Հ. 170
Աղազարմ Ն. 357, 361
Աղաթոն Ե. 294
Աղայան Ղ. 34, 37, 38, 44, 48, 50, 69, 109, 112, 127, 168, 169, 193, 311, 329, 330, 662
Աղասարյան Ա. 145
Աղասարյան Բ. 140, 151
Աղավնի Վ. 380
Աղավնունի Մ. 411
*Աղբալյան Ն. 106, 572, 578, 580, 581, 584, 714
Աճառյան Հր. 18, 116, 435
Աճեմյան Ա. 453
Աճեմյան Հ. 96, 99, 277, 715
Աճեմյան Մ. 244
*Աճեմյան Տ. 459, 461
Ամատունի Հ. 467, 603
Ամիրենց Հ. 315
*Ամիրխանյան Ա. 477
*Ամիրյան Ա. 23, 293, 671
Ամպրուկյան Հ. 531, 540,
Ամրիկյան Մ. 132
Այվազյան Ա. 485
*Այվազյան Դ. 78, 79
Այվազյան Վ. (Վ. Վազյան, Վ. Այվազ) 87
Այվազովսկի Հ. 18, 244, 257, 305
Այվատյան Մ. 477
*Այվատյան Փ. 477, 479, 480
Անայիս 228, 328
Անանիկյան Մ. 534, 540
*Անանուն Դ. (Տեր-Դանիելյան Դ.) 18, 23, 204, 210, 211, 583, 590, 591, 676–679, 688, 690–691, 693–697, 704–705, 717
Անդերսեն 172, 326, 415
Անդրանիկ (Օզանյան Ա.) 95, 99, 320, 377
Անդրանիկյան Մ. 338
Անդրեասյան Ե. 246, 269, 272, 273
Անդրեասյան Խ. 512
Անդրեասյան Ն. 604
Անդրեև Լ. 255, 565
Անուշ-լեզու Վահանիկ 437
*Անոփյան Գ. 184
Անոփյան Օհ. 121, 184, 186
Անսայանյան Հ. 606

*Անտոնյան Ա. (Մերանդես) 214, 235, 240, 241, 259, 269, 272, 273, 277, 305, 343
Անցորդ 610
Աշըգյան Գ. 271
Աշըգյան պատրիարք (Աշըգյան Խ.) 480
Աշրի 649
Աչըքպաշյան Ա. 331
Ապազյան Ա. 466
Ապտակ 344
*Ապրեսյան Ա. 192, 679
Առանձար (Միսաք Գույումճյան) 29, 348
Առաքել Նուպար 338
Առաքել Սյունեցի 454
Առաքելյան Ա. 209, 210
*Առաքելյան Հ. 14–21, 133–135, 137–138, 207, 208, 532, 574, 651
*Առաքելյան Ս. 21
Առուստամյան Մ. 208
*Ասատրյան Հ. 719, 729
Ասատուր Հ. 257, 259, 269, 619
*Ասատուրյան Ա. 437
Ասատուրյան Հ. 437, 438
Ասաֆ 601
Ասլան 601
Ասլանյան Մ. 601, 602
Ասպետ Ա. 565
*Աստարճյան Պ. 468
Աստուրյան Խ. 601
Աստվածատրյան Ա. 717
Ասքանազ Մ. 381, 382
*Ավագյան Հ. 646
Ավագյան Ք. 531
*Ավանեսով Վ. 675
*Ավդալբեկյան Թ. 722
Ավենարիուս Ռ. 691
*Ավետիսյան Ա. 711
Ավետիսյան Մ. 715
Ավետյան Գր. 120, 132
Ավո (Ա. Գասպարյան) 282, 286, 288, 292, 348, 350
Ատոմ Շահենի 597
Ատրպետ (Մուսախանյան Ս.) 34, 37, 58–60, 96, 109, 111, 471
Արազի Մ. (Դիոնիս, Ալի բաբա) 160, 661, 671–673
Արածանի Վ. 555
Արամ 486, 488, 489, 714
*Արամ Վրույր (Արամ Մարտոսյան) 119–123
Արամյանց Միսակ 43
Արա-Ռսկյանց 555, 564
Արապյան Կ. 294
Արապյան Հր. 328
*Արասխանյան Ավետիք 24, 69, 108, 111, 122, 123
Արարս 67
Արբունի 506
Արզուման (Տիգրան Խաչիկյան) 467
Արզուման Գ. 516
Արզույան Վ. 617, 618, 632, 634
Արզույան Ա. (Վահե) 632, 634
Արթին ամիրա 408

Արքին Յ. 337, 338
Արքիար 555, 565
*Արծրունի Գր. 6, 7, 9, 10, 19, 2027, 90, 111, 163, 207, 311, 524, 623, 663
*Արծրունի Վ. 8, 19, 128, 144–149, 151, 730
Արմեն Մ. 428, 599
Արմեն Հայրապետ 437, 439
Արմենյան Ա. 121
Արշակ 512
Արշակունի Ա. 717
Արշակունի Հ. 479, 521
*Արշարունի Ա. 727
Արսեն Երկաթ 400–402, 452, 453, 456
Արսեն ծ. վարդ 730
Արսեն Տիրան 478–479
Արսեն 54
Արսեն Երկաթ 454
*Արվելաձե Պ. 673–674,
Արտավազդ 392
Արցախեցի 108
Արցիբաշև 18
Արփենիկ 53
*Արփիարյան Ա. (Սկեպտիկ) 48, 103–106, 135, 177, 189, 284, 310, 338, 352, 353, 360, 361, 363, 364, 378, 384, 389, 390, 391, 405, 430, 518, 521, 524, 617–620, 625, 627, 643
*Արփիարյան Տ. 214, 240–243, 246, 249, 257, 259, 273, 305, 330
Ափաջեան Մ. 473
*Աֆիֆյան Կ. 58

Բ

Բաբայան Ա. 64, 107, 145, 147
Բաբայան Լ. 115
Բաբայան Մ. 457
Բաբայան Վ. 724
Բաբայան քույրեր 457
Բաբաջանյան Մ. 209, 579
Բաբիյանց Ս. 103, 186, 184, 202
Բաբլոյան Մ. 4, 5, 39, 342, 369, 432
Բաբուրյան Գ. 159
*Բագրատունի Մ. (Փարանդուզ Մկր. Նարիմյան Խ., Խանեռ. Խ. – Նար. Սարխոշ, Մէ-բունի) 34, 37, 43, 64, 69, 71–74, 76, 80, 82, 83, 89, 160, 190
Բագրատունի Տ. 337
Բագրունի Հ. 603,
*Բալախյան Ա. 468
Բալասանյան Գ. 348, 350
Բալեստրիերի Լ. 107
Բալզակ Օ. 13, 255, 267, 273, 425, 691
Բալուղյան Զ. 69
Բահարբյան Առ. 63, 123
Բաղդասարյան Ե. 157
Բաղեշյան Գ. 515
Բալմոնտ 18
Բայրոն Ջ. 13, 30, 208, 255, 415, 565, 584
Բանվորյան Մ. 665

Բաշալյան Լ. 29
Բաշինջաղյան Գ. (Գ. Բ., Նաղըշ քար Գիգոլ, Գ. Բաշին) 19, 34, 121, 135, 160, 161, 170, 172
Բաշալյան Լ. 619
Բասև Գ. 237
*Բասմաջյան Կ. 328, 435, 440, 452, 454
Բատիկյան Հ. 724
Բարաթաշվիլի Ն. 111
Բարբիե 427
*Բարեջանյան Հ. 553, 554, 556,
Բարես Մ. 345
*Բարթիկյան Մ. 328, 329
Բարթող Ա. 347, 354
Բարխուդարյան Գ. 113, 115, 124, 157
Բարխուդարյան Մ. 189
Բարսեղյան Գ. 598
Բարունակ Ոսկի 318
Բացբերանեան 409
Բաքստ Լ. 107
Բեբել Ա. 564, 565
Բեդեյան Գր. 184
Բելինսկի Վ. 13, 110, 111, 662
Բելլ 422
Բեկնազարյան Ա. 470
Բեկնազարյան Մ. 112
Բեկոն Ֆ. 565
*Բեյլիբյան Պ. 466
Բենիկ վարդ 43
Բեջանյան Մ. 135
Բեռնշտայն Էդ. 26
Բերբերյան Մ. 95, 111, 115, 184, 185, 187, 188, 714
Բերբերյան Շ. 604, 605
Բերբերով Տ. (Տիգրան) 9
Բերնար Ս. 267
Բժշկյան Հ. (Բանվոր Հայկ) 190
Բլազոն Դ. 464, 468
Բլեքուել Ա. Ս. 521
Բլեքուել Հ. 484
Բլոկ Ա. 18, 336
Բլրցյան Ա. քահ. 87
Բոյլեր Շ. 111, 136, 384
Բոկաչչո 115
Բոյաձի 155
Բոն-Ամի 48
Բոնդարև Ա. 140
Բոռ 154
Բոտև Ք. 399
Բորքո Հ. 31
Բուդուղյան Արտաշես 34, 55, 87, 140, 145, 150, 151
Բջնեցի Ա. 548
*Բվլին Ս. 460
Բրայս Ջ. 320
Բրիչ 124
Բրյուսել 372
Բրյուսով Վ. 18, 164, 336
Բրուտյան Ա. 539
Բուրժե Պ. 225, 386

Գ

Գաբրիելյան Պ. 639

Գաբրիելյան Ռ. 172, 593
Գաբրիելյան Ռ. 593
*Գաբրիելյան Ս. 389, 478, 491–509
Գաբրիելյան Վ. 393
*Գազազյան Զ. 306, 307, 309, 312, 314
Գազանճյան Ա. 175
Գազանճյան Հ. 214, 241, 260, 267–269, 273
Գալայճյան Գ. 555, 557, 564.
Գալեմճյան Ս. 399
Գալեմքյարյան Գր. 330
Գալեմքյարյան Զ. 328, 606
Գալոյան Լ. 437
*Գալուստյան Գր. 315, 318, 324–327
Գալփակճյան Ա. 300
Գալճայան Գ. 503
Գալֆայան Ս. 344
*Գալֆայան Պ. 464
Գամառ-Քաթիպա 482, 509, 524
*Գամէր Արշավիր (Մեշտաճյան Վ.) 461
Գայայան Ց. 402
Գայլ Վահան 155, 156
Գայմերյան Հ. 269
Գասսույան Հ. 528
Գասպարյան Ավ. (Ափո) 354, 356
*Գասպարյան Գ. 458
Գասպարյան Ի. 293
Գասպարյան Վ. 710
Գասրճյան Ս. (Օերուկ) 603
Գավալյան Խ. 453
*Գավաճյան Գ. 330, 604, 605
*Գարագաշ Հ. 474
Գարագոզյան Հ. 604
Գարանկյուլյան Գ. Հ. 547
Գարանկյուլյան Կ. 485
Գարայան Ստ. 325
Գարասեֆիլյան Հ. 145
Գարեգին Նժդեհ 462, 467, 468
Գարիբալդի Ջ. 621
Գարման 521
Գարոն Ա. 12
Գարտաշյան Վ. 513
*Գափամաճյան Գ. 464
*Գափամաճյան Մ. 440
Գեղ Ժ. 683
*Գելոճյանց Ս. Մ. 471, 554, 557, 562–564
Գեղամ Ա. 454, 455
Գեղամ Արմեն (Գեղամ Նալբանդյան) 58
Գեղամ Վանիկյան-Վանիկ 402
Գեորգ Ազնավուր 456
Գերցեն Ա. 136, 662
Գևորգ 5-րդ կաթողիկոս 374
Գևորգ Մեսրոպ 469, 603–605
Գևորգյան Կ. 481
*Գևորգյան Ս. 575
Գևորգյան Պ. 604, 605
Գիսաստղ 388
Գլադստոն 480
Գլեբով 186

Գլուշկով Պ. 467
Գյանջեցյան Գ. 722
Գյոթե 115, 174, 208, 415, 416, 565
Գյուլնազ տատ 129
Գնունի Ա. 175
Գոբբե Ֆ. 512,
Գոգոլ Ն. 13, 60, 111, 422
Գոթիե Թ. 512
Գոլանճյան Ե. (Է.) 235, 255, 324, 328, 329, 596
Գոնկուր եղբայրներ 255
*Գոշունյան Մ. (Քասիմ) 214, 273, 245, 269, 297
*Գոշունյան Ս. 297
Գոշունյաններ 299
Գորկի Մ. 13, 18, 30, 67, 111, 135, 190, 255, 267, 385, 386, 422, 512, 575, 671–672,
Գրանյան Հ. 397
Գրիգոր Նարեկացի 167, 417
Գրիգորյան Գ. 670
Գրիգորյան Հ. 64
Գրիգորյան Վ. 639
Գրինևսկի Գ. 161, 162
Գրճեյան Գ. 140
Գրուն Դ. 462, 464
Գուլկևիչ 292
*Գուլոյան Ավ. /Սեյրի/ 34, 727
Գույումճյան Բ. 325
Գույումջյան Հ. 652
Գունիա Վ. 115
Գուրևիչ Հ. 42
Գուրու-Չեշմեի 181
*Գուրպերյան Ա. 467

Դ

Դանթե 115, 415
Դանիելյան Ի. 666
Դանիելյան Ս. (Սուր. Դան) 210, 212
Դ' Անունցիո Գ. 314
Դաշտոյան Ռ. 661, 665, 670
Դավթյան Եփրեմ խան 472
Դավթյան Հ. 572
Դավթյան Ս. 289
*Դավիդյանց Վ. 154
Դավիթ-Բեկ Մ. 442
Դավիթյան Մ. 540
Դավիթյան Ս. 316, 328
*Դարբինյան Ա. 96, 648, 649, 652, 653, 659, 711
Դարբինյան Հ. 324
Դարբինյան Մ. (Զընդանյան, Նեռ, Լևոն) 160
Դարբինյան Ռ. 420, 467, 598
Դարվին Չ. 27, 139, 168
Դավիթ-Բեկ Մ. Ս. 441
Դելկասե 431
Դելչև Գ. 462, 464
Դեմիրճյան Դ. 19, 91, 201, 584, 695, 705
Դեմիրճյան Ստ. 337
Դընի Պ. 461
Դըլանե Բ. 237
Դիկկենս Չ. 31
Դիմիտրով Գ. 50
Դիտող 555
Դշխոյան Ն. 654
Դորրոլյուբով Ն. 662

Դոդե Ա. 31, 384
Դովլաթյան Գ. 135
Դոն Քիշոտ 120
Դոն-Պեդրո 55
*Դուշոյան Ա. 577
Դոստոևսկի 422
Դուման Գ. 449
Դուրյան Ե. արք. 20, 328, 330
Դուրյան Ղ. արք. 330
Դուրյան Պ. 31, 244, 275

Ե

Եղիմոսով 7
Եզիկյան 651, 652
Եզյան Կ. 106, 192
Եզոպոս 157
Ելնիցկ Կ. 173
Ելբեկճյան Տ. 255, 256
Եկարյան Ա. 376, 651, 652, 654,
Եկմալյան Մ. 129
Եղբայրյան Մ. 323
*Եղիա Միրփարդ (Գրիգորյան) (Ժան Վալժան, Նարեկ Լուսինյան) 553–555, 565
Եղիայան Գր. 338
Եղիշե ծ. վարդ. 106
Ենգիբարյան Գ. 43, 187
Ենգիբարյան Մ. 47
Ենիճենյան Ն. 175
*Ենովք Արմեն 240–242, 247–249, 255, 603, 606
Եսայան Զ. 53, 54, 94, 97, 241, 245, 246, 249, 254, 255, 260, 264, 266, 305, 306, 312, 327, 416, 427, 596, 715
Եսայան Մ. 210
Եսայան Տ. 441
Եսթեր 512, 513
Եվդոկիմով 84
Երանոսյան Մ. 461
Երեցյան Մ. 402
Երզնկյան Ա. 666, 668, 697, 722
*Երզնկյան Գր. քահ. 42–43, 45–49, 69
*Երզնկյան Մ. 726
*Երիցյան (Ա. Կալատուզյանց Գ., Կալատուզով Գ. Կ., Բիոգրաֆ) 68, 71, 160–161
Երիցյան Ա. 33, 68, 160, 161
*Երիցյան Գ. 154, 161, 165,
Երկաթ Ա. 202
Երկանյան Մ. 584
Երոս 521
Երվանդ Աղաթոն 373, 338
Երվանդ Մ. 324
Երվանդ-Արծիվ 513
Երվանդունի 512, 529
Եփրեմ Բեյ 54
Եփրեմ խան 193

Զ

Զալյան Մ. 50, 145
Զայցև Պ. 336
Զապել Ասատուր 272
Զավարյան Մ. 598
Զավեն արքեպ. 20

Զարդարյան Ռ. 103, 104, 214, 229, 232, 241, 260, 264, 265, 275, 297, 298, 299, 305, 351, 389–391453, 465, 595-597
Զարդարյան Ռաֆ. 452
Զարդարյան Ռուբ. 415, 462
*Զարդարյան Ք. 462, 465, 595
Զարեչնի Պ. 692
*Զարյան Կ. 329–331
Զարյան Ն. 428
Զեյթունյան Վ. 325
Զոլա Է. 13, 111, 136, 237, 267, 268, 273, 277, 345, 691
Զոհրապ Գր. 18, 237, 240, 241, 245, 246, 250, 252, 253, 274, 280, 299, 305, 324, 328, 329, 336, 379, 599, 619, 673
Զոհրապ Կ. 606
Զոմմեր 155
Զորյան Ստ. 18
Զուդերման Հ. 111, 115
Զուրաբյան Ա. 110, 662, 723,
Զվարթախոհ Գր. 324

Է

Էբյուզիա Թեվֆիք 224, 302
Էդիլյան Գ. 94, 126, 132, 173
Էլիոր 565
*Էկինյան Հ. 440, 475, 476, 477, 481
Էմերսոն 565
Էմիրճիհան (Էմիրճյան) Թ. 440, 441, 443, 445
Էմմանուէլ Վ. 621
Էնաթյան Գ. 601
Էնգելս Ֆ. 27, 464, 557, 691
Էնվեր 286, 335
Էսաճանյան Լ. 324, 336
*Էփրիկյան Մ. 165
Էքշյան Ստ. 276
Էքսերճյան Ի. 271

Թ

Թագոր Ռ. 453, 565
Թադևոսյան Ե. 107
Թադևոսյան Ե. 330, 332
Թադևոսյան Տ. 572
Թադևոսյան Ք. 109
Թաթոս 686
Թալեաթ 218, 286, 288, 292
Թահմազյան Գ. 555, 560, 566
Թահմիզյան Խ. 461
Թանաքչյան Կ. 601
Թապազյան Ս. 239
*Թառայան Ս. 39, 41, 110
Թավշանճյան 237, 518
*Թարխանյան Ա. 113, 116, 119
Թեյմուրազյան Կ. 48
Թեն Ի. 256
Թենսո Լ. 255
Թեոդիկ (Լաբճինյան Թ.) 269, 273, 275, 603
Թեոդիկ Արշ. 249, 305, 328
Թեորին Ա. 255
Թեվֆիք Ֆիքրեթ 239
Թերզյան Թ. 244
Թերլեմեզյան Փ. 107, 330, 377, 457
*Թերեյան Վ. (Սկայորդի, Աստղ ,
Վ. Թ., Վահան Տիրանյան,

Համշիրյան Բ., Աստրախան,
Աստանգ, Իսկուհի Հովհան,
Խորեն Որոտան, Բերկրայան,
Նշան Խաչատրյան, Յովհաննէս-
Կարապետ, Վրթո, Գեղամաշ,
Հայր Վարդան, Տարոն) 18, 103,
224, 228, 301, 302, 305, 312,
327, 328, 330, 331, 338, 349,
353–355, 359–361, 364, 365,
369, 375, 376, 382, 384, 378,
387–392, 395, 403, 405, 409,
415, 427, 434, 617, 618, 639,
Թիրյաքյան Հ. /Թիրյաքյան Հ.,
Հրաչ/ 539, 540, 565, 597
Թլկատինցին (Հ. Հարությունյան) –
29, 235, 246, 254, 260, 264, 265
Թոլյան Մ. 240
*Թյուրյունճյան Ս. 463
Թյուրյունճյան Տ. 648,
*Թորովէնց Վ. 95, 96, 99, 695, 705
Թոլայան Ե. (Գավրոշ) 154, 229,
237, 269, 276
Թոսպատյան Տիգրան 393
Թորամանյան Թ. 19, 32, 60, 116,
121, 425, 717
Թորգոմ 462
Թորգոմյան Վ. 145, 257, 328
Թորնդայք Ս. 539
Թորոսնիչ Վ. 539
Թորոսյան Գր. 276, 277
*Թորոսյան Ե. 339, 348, 350
Թորոսյան Ս. 714, 717
Թորոսյան Օ. 465
*Թութունջյան Լ. 95, 96
Թումայան Վ. 226–228
*Թումանյան Արշ. (Կայծակի) 193,
195
Թումանյան Գ. 94
Թումանյան Համ. 172
Թումանյան Հայր. 157, 158
Թումանյան Հովհ. 19, 28, 91, 99,
103, 109, 165, 169, 170, 189,
198, 199, 204, 205, 311, 332,
420, 572, 574, 578, 580, 584,
673, 705
Թումանյան Ս. 170, 172
Թումանյան Վ. 159
Թոփալ Օսման 322
Թոփուզյան Ե. 402
Թոփուզյան Հ. 406
Թոփուզյան Հ. Խ. 337, 342, 343
Թոփչյան Ե. 571, 572
Թրյան (Թրյանց) Դ. 120, 276, 393
Թոփալ Շեյթան (Վրույր) 406

Ժ

Ժամկոչյան Թ. 175
Ժամկոչյան Ս. 373
Ժամհարյան Ս. (Մռավ) 518, 573
Ժան-Ժորես 20, 335, 345, 557
Ժուլ դը Քլեոր 509

Ի

Իբսեն Հ. 31, 115, 434
Իգնատ աղա 316
Իգնատոս 141
Իգնատիոսյան Ա. 514
Իզմիրլյան Մ. արք., կաթողիկոս –
20, 342, 637

Իզմիրյան Գր. 207
Ինայեթյան Արփինե 328
Ինկիլիզյան Հ. 270
*Իշխանյան Ա. 466
*Իշխանյան Բ. (Ռիխարդ) 27, 50, 210, 211, 676, 678-679, 685, 687, 694-697,
Իշխանյան Ս. Թ. 33, 160
*Իսախանյան Տ. 676, 678, 679, 686, 688, 689
Իսահակյան 311
Իսահակյան Ավ. 13, 19, 29, 67, 103, 106, 109, 165, 171, 201, 202, 205, 308, 311, 454, 580, 584
Իսկենդեր 431
Իսկենդերյան Հ. 400, 565, 566
Իփեկյան Գ. 121, 598

Լ

Լ. դը Լիլ 248
Լագերլոֆ Ս. 454
Լազարյան Հ. 140
Լազյան Գ. 717
Լազո 654
*Լալայան Ե. 116–119, 209
Լակրուա Հ. 455
Լամարթին 134, 386
Լանիձե Լ. 98
*Լաշքարյան Ս. 158
Լարենց Լ. (Քիրիշճյան Լ.) 354, 628, 632, 636, 637
Լաֆարգ Պ. 557, 683
Լեյլի (Սահակյան Փ.) 80
Լենին Վ. 23, 680
*Լեո(Առաքել Բաբախանյան) 9, 18, 22, 31, 55, 57, 91, 121, 192, 210, 211, 574, 580,
Լեոնարդո դա Վինչի 456
Լեոպոլդ ֆոն Ռանքե 124
Լեռ Կամսար 94, 99, 714, 715, 717
Լեռենց 402
Լեսինգ 159, 255
Լերմոնտով Մ. 13, 30, 111, 135, 208, 255
Լևոն 519, 520
Լևոն II 519, 560
Լևոնյան Գ. 4, 5, 19, 39, 69, 96, 117, 118, 151–152, 172, 318, 341, 369, 599, 724
Լևոնյան Ռ. 598
Լեփսիուս Յո. 446
Լըկոնտ դը Լիլ. 248, 250, 314
Լիբկնեխտ Կ. 557
Լիբկնեխտ Վ. 557, 564
Լինկոլն 565
Լինչ Հ. 460, 506
Լիսիցյան Դ. 108
Լիսիցյան Կ. 167, 168, 170
*Լիսիցյան Ստ. 108, 110, 112, 116, 117, 165, 167–172
Լոթի Պ. 255, 316
Լոնգֆելլո 256, 565
Լոնդոն Ջ. 584
Լորենց Խ. (Բոյան) 209, 211
Լորիս-Մելիքով 457
*Լուկաշին Ա. 678,
Լուսինյան Խ. (Նար-Դոս) 482

Խ

Խաժակ Գ. 571, 574.
Խալիֆ Չիլլի 239
Խախամովյան Ա. 401
Խայրամ Օ. 13, 584
Խանազատյան Ռ. (Խան - Ազատ, Կարապետյան Ն.) 135, 464, 502
Խանդամիրյան Հ. (Հասմիկ) 397
Խանզադյան Ս. 197, 199, 203, 205, 583
Խանճյան Գ. 244
*Խանոյան Ա. 161, 665, 671, 726,
*Խանջյան Ա. 724, 726–728
Խանջյան Խ. 601
Խաչատրյան Ա. 598
Խաչատրյան Գ. 140
Խաչատրյան Գ. 330
*Խաչատրյան Կ. 190, 192, 197
Խաչատրյան Հ. 87
Խաչատրյան Ղ. (Շիրվանի) 9
Խաչատրյան Մ. 96
Խաչատրյան Վ. 131
Խաչատուրյան Մ. 330
Խաչիկյան Մ. 336
Խառատյան Ա. 5
Խատիսյան Ա. 145, 467, 715
Խարազյան Ա. 67
Խարազյան Մ. 140
*Խերանյան Վ. 723–724, 726, 728
Խնկոյան Աթ. 34, 38, 131, 168, 169, 170
*Խոշպուլյան Հ. 460
*Խոջամիր Հ. 154
Խոջամիրյան Հ. 208
Խորեն արքեպ. 481
Խորենացի Մ. 450
*Խորենի Վ. 583, 593, 600
*Խուդադյան Մ. 576
Խումարյան Ա. (Զանգահար) 111, 190, 193, 661, 662, 665, 670
Խրիմյան Մ. (Խրիմյան Հայրիկ) 14, 27, 358, 389, 481, 509.

Ծ

*Ծատուրյան Ալ. /Ռուբէն/ 9, 13, 29, 30, 67, 109, 121, 164, 168, 191-192, 196-197, 202, 203, 212, 437, 676, 678
Ծերեթելի 111
Ծերունյան Մ. 531, 536, 540
Ծովյան Մ. տե՛ս Խերանյան Վ.

Կ

Կազել Ա. 329
Կազեսյան Հ. 107
Կալանթարյան? Կալատուզյան Գասպար (Քաղքի վուրթի Գասպար Կալատուզով. Գ. Կ., Բիռ-Գրաֆ) 160
Կալիպսո 379
Կախոյան Ա. /Բանվոր Խեչո/ 660, 661, 668,
Կաճկանյան Ն. 145
*Կամարի Հ. 671, 673, 674, 727,
Կամպյուս Ա. 434
Կամսարական Տ. 246, 395, 619
Կանայան Խ. 187
Կանարյան Մտ. 461
*Կանդուրալյան Պ. 61
Կառուցկի Կ. 691

Կապուտիկյան Բ. 601, 714
Կապուտիկյան Մ. 601
*Կապան Ս. 464, 665, 668, 669, 671, 674, 697
Կավուր 621
Կարախանյան Հ. 670
Կարա-Մուրզա Ք. 9, 32
Կարապ 555
Կարապետյան Ա. 401, 555
Կարապետյան Թ. 331
Կարինյան Ա. 665, 668, 670, 671, 673, 674, 689
Կարնեցի Է. 222
Կարիեր Է. 107
Կաքավյան Հ. 652
Կեձնյան Վ. 555, 564
Կեցխովելի Լ. 661
Կիլիկեցի 327
Կիտուր Ա. 715, 723
Կիրակոսյան Ա. 39, 326, 599
Կիրակոսյան Ջ. 315
Կլեմանսո Ժ. 93
*Կյուլեսերյան Բ. եպս. 228, 540
Կյուլյան Ա. 555, 565
Կյուլպենկյան եղբայրներ 532
*Կյուրճյան Միք. (Արսեն-Մոլար, Դիտակ, Զավեն, Զարմայր, Կյուրոտ, Ե. Մ., Համշիրակ Ա., Մէն-Կէն, Պարոյր, Պօլո) 103, 108, 239, 338, 339, 354, 356, 370, 371, 373, 376, 382, 384, 387, 388, 392, 395, 403, 619
Կնունյանց Բ. 661, 662, 665
Կոբե Ֆ. 255
*Կոզիկյան Գ. (Եսայեմ) 676, 681–683, 686, 687, 689
Կոլարով Վ. 464, 468, 470
Կոլցով 18
Կոծինյան Ա. 80, 81
Կոկովցև 158, 445
Կումենսկի 127
Կոմիսարժևսկայա Վ. 132
Կոմիտաս 18, 32, 130, 182, 429
Կոնան Դոյլ Ա. 237
Կոններ 446
Կոնտ Օ. 284
Կոնֆուցիոս 139
Կոստանդին Երզնկացի 426, 454
Կոստանդյան Գ. 263
Կոստալյան Հովհ. 130
Կոստալյան Ռ. 145
Կոստանցա 342
Կորկոտյան 715
Կուզիկյան Գ. 660
Կուսիկյան Կ. 31, 32, 196, 197, 204, 205
Կուրղինյան Շ. 53, 57, 109, 154, 156, 186, 189, 311, 434, 673, 691
Կուրոպատկին 158
Կուրպեթյան Հ. 460, 463
Կոփեցի Խ. 573,
Կռիլով 171
Կրասիլնիկյան Կ. 24, 200
Կրաֆորդ Մ. 336
Կրոպոտկին 486

Հ

*Հաբեթյան Ջ. 325
Հաբիբի Է. 317
*Հախումյան Ս. 6, 113–115, 208, 431–435, 437
*Հախումյան Տ. 707, 712,
Հակոբ Կամարի 212
Հակոբ Ունկյան 244
Հակոբյան Հ. 38
*Հակոբյան Գ. 474
Հակոբյան Կ. 505
Հակոբյան Հ. (Պրոլետար) 37
*Հակոբյան Հովհ. (*Վարդ Շահենի, Ց. Ց.) 34, 38, 72, 109, 121, 338, 519–528, 665, 670–674,
*Հակոբյան Նշ. 646, 659, 712
Հակոբյան Ս. 565, 619,
Հաճյան Հ. 257, 258
Համալյան Ս. 53, 140
Համաստեղ 427, 428
Համբարձումյան Ա. 402
Համբարձումյան Կ. 714
Համբարձումյան Հ. 69, 598
Համբարյան Ա. 519
*Համբիկյան Գ. (Արմեն, Պոնչոն, Գ. Հ., Գիմ-Հո, Կաղմոս, Համբիկ, Ռոստ-Բոնչոն) 409–411, 413
Համոյան Կ. 314
Հայզե 255
*Հայկ Գարագաշ 474
*Հայկանուշ Մառ 244, 327, 328
Հայկ-Արամ 440
Հայկ-Լեոն 344, 385
Հայկունի Ա. 257
Հայկունի Գ. 672
Հայկունի Ս. 116, 117
Հայնէ 111, 136, 208
Հայր Վարդյան 388
Հայրապետյան Հ. 168, 170
Հայրենասեր Դերձ 440
Հանսոն Օլ. 67
Հասոզ 317
Հաուպտման 31, 136, 415
Հաջիկին Հ. 465
*Հարությունյան Ար. 397, 474
Հարությունյան Արշ. 10
Հարությունյան Արտ. 214, 241, 247, 260, 263, 266, 267, 306, 307
*Հարությունյան Բ. 679
Հարությունյան Ե. 707
*Հարությունյան Իս. (Լորդ, Բրիչ, Ուստիցի) 43, 46, 63, 91, 94, 112, 116,123–125, 134, 168
Հարությունյան Լ. 454
*Հարությունյան Ս. 91
Հարությունյան Սար. (Թըլկատինցու դուստրը) 249
Հարությունյան Սամ. 90
Հարությունյան Վ. 327
Հարությունյան Ա. 395
Հացագործյան Ա. 715
Հաֆեզ 453
Հեքիմյան Ս. 240

Հինդլյան Հ. 179, 180, 327, 435, 604, 605
Հինդլյան Ստ. 466
Հյուգո Վ. 13, 172, 178, 384, 427, 565
Հյուսեին Հիլմի փաշա 281, 286
Հյուսեին Ռահմի 239
Հովակիմյան Բ. 401
Հովակիմյան Հ. 210
Հովհաննես Այթըն 305
Հովհաննես Ասպետ (Օ. Չիֆթե-Սարաֆ) 327
Հովհաննեսյան Տ. 348
*Հովհաննիսյան Աշ. (Ներիակ) 18, 113, 212
*Հովհաննիսյան Արտ. 115, 452, 455, 456
Հովհաննիսյան Խ. 419
Հովհաննիսյան Խ. (Քուչուկ) 43
*Հովհաննիսյան Հ. 473
Հովհաննիսյան Հ. 212,
Հովհաննիսյան Հովh. 13, 29, 47, 48, 103, 109, 164, 189, 193, 195, 203, 311
Հովհաննիսյան Հովս. (Յ. Էլմար) 472, 474
*Հովհաննիսյան Մ. 465, 574
Հովհաննիսյան Ռ. 319
Հովհաննիսյան Տ. 9
Հովյան Ս. (Տաշիր) 654
Հովնաթանյան Հ. 426
Հովնանյան Ռ. 652, 654
Հովսեփ Էմին 276
Հովսեփյան Գ. 116, 704, 717, 730
Հովսեփյան Մ. 601,
Հովվյան Շ. 344
Հրայր 240

Ղ

**Ղազարյան Ա. 151, 575, 578, 579, 581, 583, 714, 717, 728,
Ղազարյան Գ. 210, 211
Ղազարյան Գ. 674, 717
**Ղազարյան Գ. Ծ. վարդ 730
Ղազարյան Դ. 130
Ղազարյան Հ. 47
Ղազարյան Ս. 140
**Ղազարյան Վ. 76
**Ղալայան Ս. 575
Ղարաբեկյան Մ. 722
**Ղարագյոզյան Հ. 184
**Ղարաջյան Գ. (Արկոմեդ) 665, 668, 722
Ղարիբյան Ա. 729
**Ղարիբջանյան Բ. 673–675
Ղարիբջանյան Ս. 519
Ղափանցյան Գր. 710
Ղևոնդյան Ռ. 661
Ղլտոյան Ա. 118
**Ղուկասյան Ղ. 724, 726

Ճ

*Ճանավարյան Տ. 465
Ճավճավաձե Ա. 111
*Ճգնավորյան Տ. 459
Ճենապը Շեհաբյուդդի 54
Ճեպեճյան 361, 364

Ճապկեյան Բ. 154, 155
*Ճեմենջյան Հ. 467
Ճիզմեճյան Ա. 366, 367
Ճիզմեճյան Մ. 329
*Ճիվիլիկյան Տ. 228, 229, 258
*Ճյուհերյան Ե. 646
Ճուղուրյան Հ. 43

Մ

Մալաքյան Գ. 327
Մալարմե 248
*Մալեզյան Վ. 103, 247, 294, 338, 361, 365–367, 372, 375, 373, 376, 378, 395–397, 410
Մալեմեզյան Ա. 639
Մալխաս 715
Մալխաս Գր. 246
*Մալխասյան Հ. 186, 187
Մալխասյան Հովհ. 90, 186
Մալխասյան Ստ. 9, 14, 19, 21, 94, 117, 134, 138, 651, 652,
Մալյան Հ. 710
Մալոյան Ա. 659, 712
Մալումյան Խ. (Ակնունի) 9, 598
Մախ Է. 691
Մախոխյան Վ. 18, 330
*Մակարյան Ա. 471
*Մակինցյան Պ. 18, 195, 197, 200, 204, 205, 240, 276
Մակլեր Ֆ. 455
Մահարի 428
Մահմուդ Շեվքեթ փաշա 286, 303, 304, 587
Մահտեսի-Բաբայան Զ. 209
Մահտեսի-Հակոբյան Մ. 208
*Մահտեսյան Ա. 529–540
Մահտեսյան Է. 107
Մաձձինի 565
Մամին-Սիբիրյակ 255
*Մամուրյան Հ. (Լուսիան) 214, 261, 268, 282
*Մամուրյան Մ. 31, 244, 257–259, 263, 265, 267
Մայակովսկի Վ. 336
Մայիլյան Ա. 129–132
*Մանասյան Ա. 575
Մանդինյան Ա. 123
Մանդինյան Ա. 43, 46, 69, 187, 189, 434, 435
*Մանդինյան Ստ. 210
Մանթաշև Ալ. (Մանթաշյան) 430, 484
Մանուելյան Վ. 462
Մանուկյան Ա. 377
Մանուկյան Ա. 130
*Մանուկյան Գ. 483
Մանուկյան Ե. 402
Մանուկյան Կ. 96
*Մանուկյան Հ. 598, 617, 710, 715,
Մանուշյան Մ. 428
Մանվելյան Լ. 29, 109, 121, 135, 350
Մանվելյան Մ. 201, 584
Մառ Ն. 19, 99, 120, 199, 249, 425
Մառր Հ. 268, 306, 312
*Մասեհյան Հ. 31, 115, 453, 470

*Մավիյան Հ. 459–460
Մառեեմյան Մ. 456
Մարգարյան Ղ. (Մերմոնցան) 9
Մարիո Մ. 277
Մարկ Տվեն 136, 237
Մարկոսյան Ի. 76
Մարկոսոֆ Մ. 338
Մարով Հ. 617
Մարտիկյան Կ. 563
Մարտիկյան Ս. 724
Մարտիկյան Վ. 602
*Մարտիրոսյան Տ. 459, 469
Մարտունի Ալ. (Մյասնիկյան) 205, 691
Մարքս Կ. 27, 464, 557, 691, 694
Մարքս Մ. 335
Մաքսապետյան Ա. 659, 712, 715,
Մելիք-Աղամալյան Մ. 6
Մելիք-Բախտամյան Հ. 22
*Մելիք-Ղարագյոզով Շ. 210
*Մելիքյան Արշավիր 72, 74, 80, 87, 724, 726
Մելիքյան Է. 328
Մելիքյան Մ. (Դեդուշկա) 660–662, 665, 668, 670, 671, 674
Մելիքյան Ռ. 19, 128, 130
Մելիքյան Ս. 96
Մելիքյան Սպ. 128
Մելիք-Շահնազարյան Կ.(Տմբլաչի Խաչան) 147, 160, 161, 209
Մելիքսեթ Դավիթ-Բեկ (Մ. Ս. Դ. - Բ.) 440, 443
*Մելիք-Քալանթարյան Ե. /Ժենյա/ 575
*Մելիք-Օհանջանյան Լ. 575
Մելյան Մ. 69
*Մելքոնյան Ա. 727
Մելքոնյան Է. 338
*Մելքոնյան Ս. 465
Մեծատուրյան Թ. 325
Մեծարենց Մ. (Մ. Մեծատուրյան, Շ. Ծիածան) 99, 241, 244, 245, 246, 247, 249, 255, 268, 275, 331, 513
*Մեհրաբյան Ա. 575
*Մեհրաբյան Գր. 210
*Մեհրաբյան Ջ. 576
Մեհրաբյան Մ. 121
Մեյե Ա. 455
Մենավոր Ս. 193
Մեսյան Տ. 686
Մեսրոպ եպ. 730
Մետերլինկ Մ. 31, 195, 248
Մերջանով Ս. 465
Մերքալմ 326, 653
Միլվուա 314
Միլվուա 345
Միկոյան Ա. 671, 672, 674
*Միհրան Ասլանագ (Ասլանագյան) 339, 381
Մինաս Ցոլակ 18
Մինասյան 556
*Մինասյան Ե. 128, 151, 152
Մինասյան Ի. 249

Մինասյան Լ. 472
Մինասյան Ղ. 467
*Մինասյան Մ. 477, 489, 490
Մինասյան Մ. 650, 652
Մինասյան Ս. 598
Միսայելյան Մ. 565
Միսաքյան Ա. 571
Միսաքյան Շ. 237, 571, 598, 602, 603
Միրաքս 611
Միրաքյան Մ. 665
Միրաքյան Վ. 29, 350
Միրքո Օ. 237, 255, 267
*Միրզոյան Գ. 108
*Միրզոյան Հ. 83, 584
Միրզոյան Միք. 131
Միրզոյան Մ. (Ուսանող) 9
Միցկևիչ Ա. 415
Միքայելյան Ա. 717
Միքայելյան Արտ. խան 474
*Միքայելյան Ի. 608, 617, 679,
*Միքայելյան Կ. 195, 197, 198, 200, 201
Միքայելյան Շ. 571
Միքայելյան Ք. 462, 465
Մխիթարյան Գ. 601
*Մխիթարյան Օ. 474, 715
Մխիթարյաններ 427
*Մկրտիչ Վարդան 461
Մկրտիչ Տիգրան 223
*Մկրտիչյան Լ. 228, 282, 353, 366, 368, 370, 371, 373, 376, 395, 398, 617, 618
Մկրտումյան Գ. քահ. 47, 80, 82, 190, 191
Մկրտումյան Դ. 660
Մկրտումյան Պ. 151
Մկրտչյան 449
*Մկրտչյան Ն. 165
Մյասնիկյան Ալ. 184, 185, 203, 520, 674
Մյուհենդիսյան Հ. 223
Մյունիխ Ժ. 350
Մնակյան Մ. 240, 276, 412
Մնացականյան Պ. 654, 666, 668,
Մնձուրի Հ. 327, 331
Մոզյան Լ. 598
Մոլիեր 115, 255
Մոկլե Ք. 237
Մոմճյան Մ. 223
Մոյրյան Ջ. 315
Մոնե Հ. 277
Մոնտեսքյո 522
Մոպասսան Գ. 31, 111, 134, 136, 159, 190, 267, 277, 384, 434, 512
Մորեաս 248
Մորիեր Ջ. 31
Մորլյան Վ. 555
Մուշեղ եպ. 491, 492, 479
*Մուսայելյան Հ. 212, 579
Մուրադ Դ 305

Մուրադյան Գ. 710
*Մուրադյան Ե. վարդ. 471
*Մուրադյան Մ. 572, 728
*Մուրատյան Ա. 339–340
Մուրատյան Մ. 102
Մուրատյան Մ. եպ. 102
Մուրատյան Տ. 231
Մուրացան 48, 109, 113, 114, 350
Մռավյան Ա. (Հրանտ) 665, 668, 671, 673, 697
Մռավյան Ե. 109, 729
Մսրյան Ա. 356
Մրմռյան Հ. (Ակումիտ) 330, 415

Յ

Յարճանյան Ա. (Սիամանթո) 54, 103, 412, 391, 392
Յոհաննեսկու Ա. 458
Յովաս 437
*Յուզբաշյան Հ. 679
Յուժին-Սումբատով Ալ. 30
Յուսուֆյան Հ. (Վահանյան) 572
Յուսուֆյան Տ. 223

Ն

Նադոտն 186
Նազարբեկ (Նազարբեկյան) Ավ. 464, 554, 557, 563, 565, 619
Նազարբեկյան Թ. 22
*Նազարեթյան Ա. 50, 53, 138, 646
*Նազարյան Ա. 540
*Նազարյան Լ. 462, 467
Նազարյան Հր. 202, 255
Նազարյան Ստ. 31, 48, 106, 143, 193
*Նազարյան Տ. (Ռաղամես, Արցախեցի, Tigo) 19, 107–110, 191, 207, 575, 648,
Նազարյանց Ստ. 49, 311
Նազարյանց Ա. 576
Նազարյանց Էմ. քահ. 187
Նազարյանց Լ. 578
Նազարյանց Հ. 306
Նաքանյան Մ. 361, 369, 373, 389-391, 521, 525
Նալբանդյան Մ. 31, 32, 95, 106, 107, 127, 176, 185, 309, 311, 335, 342, 509, 570, 662, 673,
Նալբանդյան Մ. 607, 608
Նալբանդյան Վ. 9, 31
Նալբանտ Գ. 532
Նալպանտյան Մ. 273
Նահապետ Քուչակ 426
Նաղաշ Լձեցի 440
Նաղաշ Հովնաթան 254, 426
Նանսեն Ֆ. 136
Նավասարդ Կ. 282
Նավասարդյան Բ. 90, 145, 433
*Նավասարդյան Վ. 578, 716,
Նավարյան Ա. 267, 268
Նար-Պեյ 482
Նար-Դոս 57, 69, 91, 109, 187, 578
Նարիմանյան Խ. (Բագրատունի Մ.) 665
Նարիմյան Խ. 69, 74
Նելլա 601
Նեկրասով Ն. 30

Նեմիրովիչ-Դանչենկո Վլ. 135, 171
Ներսես Վ. Հ. 440
Ներսես, պատրիարք Կ.
Ներսեսյան Ն. 330
Ներսիսյան Գր. 209, 210, 211
Նիզամի 130
Նիկիտին 30
Նիկոլայ II 85, 163, 684
Նինոշվիլի 111
Նորդաու Մ. 253
Նորենց 428
Նորման Ժ. 255
Նորվենս Լ. 237
Նուպարյան Մ. 263, 282, 306, 312, 329
*Նուբարյան Բ. 578
Նուրյան Կ. 604

Շ

Շաղոյան Ավ. 356
Շաքրյան Լ. 235, 273, 277, 315
Շաքրյան Հ. 348
Շախովսկի 84
Շահազիզ Ե. 187
Շահազիզ Ս. 47, 48, 189
Շահամիրյան Շ. 167
*Շահան Նաթալի (Հակոբ Տեր-Հակոբյան) 457, 485
Շահեն 326
Շահենի Վ. 482
Շահին Է. 107, 429
*Շահինյան Բ. 576,
Շահինյան Գ. 263
Շահինյան Գ. 708, 723
Շահինյան Գուր. 607,
Շահինյան Մ. 195
Շահինյան Վ. 555, 565
Շահխաթունյան Ա. 578
Շահմուրադյան Արմ. 18
Շահնազարյան Ս. 46
Շահնազարյանց Ս. 48
Շահնուր 428
*Շահումյան Ստ. 21, 23, 27, 86, 168, 464, 661, 662, 664-674
Շահպազ Բ. 382
Շահպազ Բաբգեն 366, 367, 385, 387, 442
Շահպազ Տ. 715
Շահ-Պարոն 86
*Շահպարոնյան Վ. (Արտս, Էլի էն, Շահ-Պարոն, Վ. Շ.) 85–87
Շահվերդյան Դ. 661
*Շահվերդյան Հ. 466
Շահրիար 134
Շահրիկյան Հ. (Ատոմ) 440, 598, 599
*Շահրիման Վ. 318–320, 324, 601, 603
Շահրիմանյան Վ. 462
*Շաղալյան Ս. 480
Շաղզամյան Ն. (Հանդիսատես) 9
Շամյան Ա. (Արսեն Երկաթ) 440, 555, 565,
Շամյան Հ. 348, 361
Շամշինյան 155

Շամտանճյան Մ. 214, 606
Շանթ Լևոն 29, 48, 49, 103, 104, 109, 165, 201, 393, 583, 692,
Շապանյան Ա. 107
Շաւենց Ժ. 452
Շատմերճյան Պ. 175
Շատվորյան Ռ. 659, 712
Շարասան (Թյուքթյունճյան Ս.) 393
Շելլի 255
Շեյլոկ 52
Շևչենկո Տ. 172
Շերիտճյան Կ. 338
Շեքերճյան Հ. Ն. 540, 555
Շեքսպիր 13, 111, 115, 267, 384, 415, 453, 565
Շիլլեր 39, 111, 115, 186, 208
Շիրազ 274
Շիշմանյան Լ. 410
Շիշմանյան Ղ. եպ. (Ազատական մը) 348, 350
Շիշմանյան Շ. 389, 390
Շիշմանյան Ռ. 449, 454, 457
Շիրակունի Ա. 600
Շիրինյան 145
Շիրվանզադե Ալ. 13, 18, 19, 21, 29, 91, 109, 110, 113, 114, 121, 168, 171, 201, 330, 457, 673, 691
Շմերլինգ Օ. 161, 162
Շոլե դը 509
Շոու Բ. 539
Շվար 255
Շուշան 274
Շտուկ Ֆ. 107
Շրայնըր Օ. 237

Ո

Ոսկանյան Սա. 31, 244, 257, 258
Որբերյան Ռ. 260, 264, 265
Որբունի 428

Չ

Չալխուշյան Գր. 9
Չամուռճյան Հ. 257, 259
Չանգալյան Ջ. 652
Չավուշյան Ե. 632, 637-638,
Չարգ Ա. (Վտարանդի) 603
Չարենց Ե. 19, 428, 695, 705,
Չարշաֆճեան Թ. 481
*Չաքըլյան Ա. 324, 325
Չափրաստ (Չափրաստճյան) 240, 275, 276, 393
*Չաքրյան Հ. 459, 463
Չելեպյան Ա. 261
Չեխով Ա. 13, 30, 135, 171, 159, 255, 446, 456
*Չերազ Մ. 135, 284, 324, 430, 431, 440, 441, 452, 456, 480, 505
Չերնիշևսկի Ն. 13, 110, 662
Չերքեզյան Ս. 43
Չիթճյան Գ. 481, 482, 628
Չիթունի 456
*Չիլինգարյան Ա. (Դարբինյան Ռ.) 165, 716
Չիլինգարյան Աշ. (Ego) 9
Չիլինկիրյան Գր. 330
Չիլյան Մ. 601

*Ջիրձյան Գ. 628
*Ջիֆթե-Սարաֆ Օ. (Աշխատողական Հ.) 201, 208, 214, 226, 228, 229, 241, 245, 246, 253, 260, 264, 274, 306, 310, 311, 395, 397, 398, 605
Ջնձյան Գ. 113, 121, 130, 132
Ջոնկյուրյան Տ. 241, 247, 256
*Ջոբուրյան Է. 331
Ջոլազյան Մ. 350
*Ջոպանյան Ա. 9, 96, 98, 110, 199, 284, 327, 388, 414, 415, 417–420, 422, 423, 425–431, 433, 440–442, 452, 454, 513, 537, 538, 596, 656
Ջուեր 255
Ջորէքյան Գ. 187
Ջախուրյան Է. 468
Ջուբար Գ. 184, 187
Ջուբարյան Վ. 187
Ջրարյան Տ. (Խոսրա) 337, 382, 384, 389, 391, 393

Պ

*Պալայան Մ. 400
*Պալայան Մար. 400
Պալասանյան Ստ. 124
Պալդազարյան Ղ. 257, 258
Պալեոզյան 518
Պայյան 305
*Պայյան Ավ. 356
*Պայյան Ե. 676, 678, 680-681, 685,
Պայյան Տ. եպ. 330
Պաղտասարյան Մ. 434, 435
Պարազատ Ա. 154
Պանիջյան Դ. 601
Պապաջանյան Մ. 652, 655
Պապիկյան Վ. 656-659
Պառամաճյան 257
*Պատկանյան Գ. 107
Պատկանյան Ռ. 27, 63, 131, 189, 673,
*Պատմագրեան Առ. 473
Պատրիկյան Մ. 724,
*Պարթևյան Ս. (Պարտիզպանյան Ս.) 224, 228, 282, 284, 285, 288, 289, 290, 306, 307, 336, 339, 371, 378, 394, 397, 398, 400, 628, 639, 646
Պարոնյան Հ. 31, 114, 236, 244, 251, 257, 258, 274, 276, 309, 310
*Պարսամյան Հ. 95, 96
*Պարսամյան Մ. 201, 235, 241, 244, 247, 249, 255, 268, 329
Պարսամյան Մկ. /Կայծակ/ 178, 603, 605, 606,
*Պեյլերյան Ավ. (Ավօ) 379, 381
*Պեյլերյան Մ. 339, 344, 346, 354, 366, 379, 380, 400, 402, 565
*Պենյան Ս. 276, 459, 469
Պենկ 557
Պեշիկթաշլյան Մ. 31, 509
Պեշիկթաշլյան Ն. 324
Պեստալոցցի 127
*Պետեկյան Ա. 466
Պետեֆի Շ. 192

Պետյան Գ. 320
Պետրարկա 115
Պետրո Ժ. 565
Պետրոս Մեծ 422
Պետրոսյան Ա.(Արամ Ասպետ) 400
Պետրոսյան Գ. 121
Պետրոսյան Հ. 39, 154, 156
*Պետրոսյան Մ. 201, 211
Պետրոսյան Ս. 564
*Պետրոսյան Վ. 154
Պետրով Գ. Ս. 60
Պետրով Ն. 461
Պերպերյան Ա. 325
*Պերպերյան Հ. (Հ. Ալատին, Հ. Վեհակրոն, Հրանդ) 408
Պերպերյան Մ. 328
*Պերպերյան Շ. 330, 435
Պերպերյան Ռ. 241, 246, 252, 255, 273, 382
Պերյարյան Վ. 453
*Պինճիկյան Գ. 679, 688, 691, 693,
Պիննեմենճյան 240
Պիոնյան Կ. 462, 466
Պիչիկյան Հ. 34
Պլեխանով Վ. 26
Պլեշչեև 30, 171
Պլեվե 569
Պլուզյան Ա. 728
Պյորեբճյան Պ. 325
Պո Է. 256, 512
Պոբեդոնոսցև 163
Պոլ Բուրժե 386
Պողոս Նուբար (Պօղոս Նուպար) 92, 292, 317, 319, 321, 322, 327, 337, 338, 347, 360, 372, 374, 442, 445, 537, 538, 657, 659, 711
Պողոսյան Գ. 185
*Պողոսյան Հ. 324, 327, 468, 477
Պողոսյան Ս. 292, 338
Պոյաճյան Հ. 564
Պոյաճյան Խ. (Թաթուլ) 96
Պոյաճյան Մ. 402
*Պոնճուգյան Հ. 318, 460
Պոչքարովա Մ. (Պուչկարյովա) 564
Պոպով Հովհ. 131
Պուլաքի Մենակյաց 412
Պուպլի Գ. 241, 260, 261
Պռոշյան Պ. 57, 109, 113, 115, 171, 189, 434
Պրեսանսե Ֆ. 335
Պրևո Ա. 255
Պրյուդոմ Ս. 255, 314
Պրուդոն 691
Պուշկին Ա. 13, 111, 135, 208, 450

Ջ

Ջամալյան Ա. 583
Ջանան Մ. 457
Ջանյան Ա. 37, 64
Ջավադբեգ-Բալուղյան 189
Ջավախեցի (Տեր-Գրիգորյան Ղ.) 37, 57, 187, 189
Ջեվդեթ 649

Ջիվանի (Լևոնյան Ս.) 350, 482
Ջուղայեցի Հ. 167
*Ջվանշիր Հ. 329
Ջրբախչյան Ս. 710
Ջրբաշյան Տ. 601

Ռ

Ռասին Ժ. 255
Ռաշմաճյան Տ. 123, 126, 165, 168
Ռաուֆ բեյ 321
Ռեյնոլդս 653
Ռեյնոլդս Ճ. Ս. 362
Ռենյեր 237
Ռընան 256
Ռիբ Պ. 107
Ռիշպեն 255
Ռիշբուր 277
Ռիվարեց 601
Ռիվեր Շ. 440, 446
*Ռշտունի Ա. 341, 343, 367, 617
Ռշտունի Գ. 393
Ռշտունի Ս. 325
Ռոդեն Օ. 107
Ռոզեգր 255
Ռոլան Ռ. 195
Ռոլինս Ս. 255
Ռոմանովներ 16
Ռոպենսոն Լ. 440
Ռոսետտի Գ. 107
Ռոստոմ (Զորյան Ս.) 462, 577, 714,
Ռոստեր Գ. 161, 162
Ռորբախ 446
Ռուբենի Ալ. 203, 205, 677, 689–691
Ռուպեն Բ. 555
Ռուսինյան Ն. 257
Ռուսո Ժ.-Ժ. 461, 522
Ռստոմյան Գ. 487

Ս

Սաադի 453
Սաբահեդդին 277, 631, 634
*Սագինյան Զ. 474
Սազանդարյան Տ. 64
Սազի Լ. 277
Սազոնով 443
Սալախյան Բ. 710,
Սալմաստյան Արմենակ 454, 457
Սալտիկով-Շչեդրին 111
*Սահակյան Ավ. /Հայր Աբրահամ/ 570–571, 673
*Սահակյան Ս. 474, 670,
Սահակյան Ս. 37, 174
Սաղաթելյան Հ. 9
Սամիկյան Ռ. 249, 255, 310
Սամվելյան Խ. 34, 55, 56, 69, 111, 117, 118, 134, 135, 138, 210, 723
Սամուելյան Հ. (Հրանտ Սամուել) 400
Սամուելյան Մ. քահ. 351
Սայաթ-Նովա 118
Սայապալյան Ժ. (Փայլակ) 606,
Սայիդ Հալիմ 292
*Սապահ-Գյուլյան Ս. 376, 459, 463, 469
Սատունի Կ. 715,

Սարաձյան Հ. արք. 514, 520
*Սարաֆյան Գ. 339, 477, 646
Սարաֆով Բ. 462, 577
Սարգսյան Գ. 145
*Սարգսյան Լ. 25–28, 104, 572, 574, 723
*Սարգսյան Հ. 671
*Սարգսյան Վ. (Վարոս) 37
Սարգսյան Վաղ. (Իրանյան) 473
Սարդու Վ. 267
Սարիբեկյան Ս. 131
Սարյան Գ. 428
Սարյան Մ. 197
Սարուխանյան Ա. (Սարուխան) 135–137
Սափարյան Ս. 157
Սաֆարյան Ս. (Լիլիպուտի) 38, 154, 156
Սաֆրաստյան Ա. 96, 601
Սերյան Հովհ. (Յ. Վ., Եոսեֆ Վանանքեանի, Յ. Ս., Ե. Վ. Josey Vanante) 339, 351, 356, 365, 373, 374, 382, 389, 395, 396, 409
Սեմա 428
Սեմերճյան Գ. 377
Սեմերճյան Մ. 386
Սեմերջյան Վ. (Մարտունի) 400, 401
Սեյրի (Ա. Գույոյան) 37, 38
Սենկևիչ Հ. 111, 168, 512
Սենտ-Բյով 256
Սեպուհ 457
Սետեֆյան Ռ. 275
Սերաո Հ. 314
Սերենկյուլյան Հ. 604,
Սերովբյան Դ. 373
Սեսկ Ռ. (Չիլինկիրյան Ռ.) 18, 202, 241, 249, 250, 306, 312, 324
Սեյան Հ. 120
Սեքսենյան Հ. 370
*Սեֆերյան Լ. 400
Սթիվենս Ու. Ջ. 482
Սիամանթո (Յարճանյան Ա.) 18, 53, 54, 105, 106, 275, 277, 312, 324, 379, 427, 434, 565
*Սիլանյան Հ. 727
Սիլիկյան Մ. 22, 702
Սիլվեստր Ա. 434
Սիման (Սիմակ Սահակյան) 34, 37, 170, 671
Սիմեոն Բ. 202
Սիմեոնյանց Պետրոս 43, 44
Սիմոնյան Պ. 565
Սինանյանց Գ. 34
Սիպիլ 268
Սիտալ Կ. 539, 565
Սիրամարգ Տ. Ե. 555, 565, 566
Սիրանույշ 120, 275, 276, 240
*Սիրունի Հ. (Ճոլոլյան) 597, 598, 602
Սիրպալեյան Քր. 577
Սկանդար-Նովա Գ. 159
Սմալլս Ս. 383
*Սմբատ Բյուրատ (Տեր-Ղազարյանց Ս.) (Հայկ Լևոն, Ասպտակ, Թաթ,

Սարաֆ, Խաչօ) 277, 335, 338, 343-348, 350-351, 379, 384-385, 387
Սեֆաստյան Ա. 76
Սմիթ Ա. 231
Սյուլլի Ա. 267
Սոլագար Ց. 336
Սոլովյան Հ. (Վորդսեն) 69, 135, 190
Սողոմոնյան Գ. 619,
Սոս Վանի 326
Սունդուկյան Գ. 76, 83,90, 113, 114, 119, 193, 195, 311, 673, 692
Սուրեն 201
Սուրենյան Հ. 440
Սուրենյան Ա. 628
Սուրենյանց Վ. 107
Սուրխաթյան Հ. 18, 135, 136, 583, 584
Սուքիասյան Ա. 461
*Սուքիասյան Շ. 464
*Սպանդարյան Ս. (Տիմոֆեյ) 665, 668, 669
Սպարթալը Թ. 294
Սպարթալի 261
Սպարթալյան Ա. 233
Սպարթալյան Ա. 226
Սպենդիարյան Ալ. 19
Սպորտոնի 649
*Սվազլյան Ս. (Միհրան Սվազլը) 505, 531, 617, 618,
*Սվաճյան Ա. 465
Սվաճյան Հ. 153, 223, 251, 258, 274, 340, 342
Սվաճյան Ա. 108
Ստալին Ի. 23
*Ստամբոլցյան Ա. 679
*Ստեփանե Խ. (Խորեն եպ. Ստեփանե) 206, 207
Ստեփանյան Գ. 478, 511, 519, 619
Ստեփանյան Կ. 264
Ստեփանյան Հ. 707, 710,
Ստեփանյան Ա. 603, 604,
Ստիվենսոն Ռ. 237
Ստոպանի Ա. 670
Սրենց Ա. 598
*Սրմաքեշխանլյան Եր. (Երուխան) (Երվանդ Շավարշ) 50, 53, 339, 361, 364, 378, 379, 384, 385, 387, 461, 466

Վ

Վազներ Շ. 255
Վազներ Ռ. 565
Վահե-Հայկ 324, 428
Վահունի Վ. 681, 682
Վահրամ 485
Վահրամ Թաթուլ 329, 452, 453
Վաղինակ 263
Վանիկ 600
Վանիկյան Գ. 331
Վանցյան Ա. 583
Վան-փուշ 715
*Վասիլև Գր. 467
Վարազ 276
Վարազդատ 392

Վարանդյան Մ. (Հովհաննիսյան) 441, 573, 572, 578, 594, 599, 670
*Վարդազարյան Բ. վարդ. 472
*Վարդազարյան Գ. 466
Վարդան Մամիկոնյան 89
Վարդանյան Ա. 670
Վարդանյան Գ. 555
*Վարդանյան Հ. (Հովսեփ Վարդան փաշա) 258
*Վարդանյան Մ. 464
Վարդանյան Մ. 49
Վարդանյան Մ. 573
Վարդանյան Ս. 674, 691
*Վարդանյան Վ. 555, 678,
*Վարդանյան Օ. 467
*Վարդապետյան Լ. 210
Վարդենի 513
Վարդյան Գ. 556
*Վարդո (Վարդ Պատրիկյան) 461, 518
Վարդովյան Հ. 119
Վարդունի Լ. 210, 211
*Վարժապետյան Մ. 175, 177, 178
Վարուժան Դ. 18, 99, 309, 312, 323, 328, 379, 391, 392, 393, 427, 428, 565
Վարուր Մ. 600
Վեմյան Խ. 293
Վեղեն 248, 415
Վեռն Ժ. 255, 277
Վեսպեր 705
Վերածին Մ. 717
Վերնից Հ. 173
Վիլհելմ II 159
Վիտտե 163
Վշտունի Ա. 94, 211, 671, 672
Վոլտեր 31, 314, 522, 565
Վորոնցով-Դաշկով 444, 445
Վռամյան Ա. (Դերձակյան Օ.) 616
Վտակյան Ա. 601
Վտարանդի Ա. 329
*Վրացյան Ս. 331, 467, 578, 579, 697, 704, 714, 716
Վրույր Ա. 119

Տ

Տաղավարյան Ն. 145, 226, 338, 361
Տամատ Մ. 249
Տամատյան Մ. 344, 346, 347, 357, 359, 360, 369, 375, 377, 399, 405, 537, 617, 618, 639, 710
*Տատյան Լ. 473
Տեմիրճիպաշյան Ե. 241, 245, 250, 269, 277, 309, 310
*Տեովլեք Գ. (Պ. Տ. Գևորգյան) 440, 449, 450
Տեվեճյան Հ. 467, 468
Տեռնյան Տ. (Տիգրան Հարություն) 263, 294
*Տեր-Աբրահամյան Վ. 72
*Տեր-Անդրեասյան Ե. 277, 281, 299
*Տեր-Առաքելյան Գ. 577
Տեր-Ավետիքյան Գր. 210
Տեր-Ավետիքյան Ն. 208

*Տեր-Գրիգորյան Ա. 661
Տեր-Գրիգորյան Ա. բժիշկ 55, 74, 76
*Տեր-Գրիգորյան Գ. 108
Տեր-Գրիգորյան Գ. 34
Տեր-Գրիգորյան Է. 114, 119, 121
Տեր-Գրիգորյան Ղ. 34
Տեր-Գրիգորյան Ջ. 110
Տեր-Գրիգորյան Վ. (Վահան Խորենի) 715
Տեր-Ենոքյան Խ. 69
Տեր-Իսահակյան Իս. 82
Տեր-Իսահակյանց Ն. 710
Տեր-Խաչատուրեան Ա. 571
Տերկին Ժ. 557
*Տեր-Հակոբյան Ա. 61
*Տեր-Հակոբյան Հ. 275, 277
Տեր-Հակոբյան Հ. (Իրազեկ) 714, 717
Տեր-Հարությունյան Ա. 660
Տեր-Հարությունյան Հ. 96
*Տեր-Ղազարյան Ղ. 676, 678
Տեր-Ղազարյան Ն. 676
Տեր-Ղևոնդյան Գ. (Գեռ-Ղերո) 160
Տեր-Ղևոնդյան Ն. 165
Տերճյան Պ. 465
*Տեր-Մահտեսյան Ա. (Տիրյան) (Առիլ, Արցունք և Առիլ, Արես, Ամիր. Ա., Արշակ, Ամպրոպյան Ա., Կայծկլտուկյան Արտեն, Արշակ Տ. Մ., Д. М. А., Հատիրս, Խիկար Իմաստուն, Ընկեր Միմոս, Զավեշտասեր Խիկար, Արիել Մոզպեսյան, Ահուրա Մազդա) 510–512, 514–517, 539–540
*Տեր-Մանվելյան Հ. 184
Տեր-Մարտիրոսյան Հովh. (Հ. Տե-րենց) 58
Տեր-Մելիքյան Հովh. 575
Տեր-Մելքիսեդեկյան Ա. (Ղալաթի Մարգար) 161
Տերմեն գնդապետ 650–651,
Տեր-Մինասյան Ե. 58
Տեր-Մինասյան Ռ. (Ռուբեն) 583, 589
*Տեր-Մինասյան Ս. 209
Տեր-Մինասյան Սիմ. 64, 66
*Տեր-Միրաքյան Հ. 46, 63, 94, 112, 123, 124, 126, 168
Տեր-Միքայելյան Հ. 575
Տեր-Մկրտչյան Ա. 651–654
*Տերյան Վ. 13, 18, 19, 29, 54, 55, 91, 121, 186, 191, 195–200, 202, 206, 670, 671, 673, 675
Տեր-Ներսիսյան Հ. 607
Տերոյան Վ. 715
Տերոյենց Հ. 264
Տեր-Սահակյան Հ. 318
Տեր-Սարգսյան Մ. (Միտսար) 209
*Տեր-Սարգսյան Մ. (Փառնակես) 74, 154
Տեր-Սարգսյան Մ. 154
*Տեր-Սիմոնյան Դ. 727
*Տեր-Վարդանյան Ալ. 473
Տերվիշյան 377
Տերտերյան Ա. 74, 583–584
*Տերտերյան Մ. 464

Տեփոյան Պ. 652, 654
Տէր - Խաչատուրեան Ա. 571
Տիգրան Երկաթ (Կարապետ Պիլեզիքճի. Պիլեզիքճյան) – 335, 338, 345, 346
*Տիգրան Զավեն (Տիգրան Չուգասզյան) 49, 50, 53–55, 57, 678, 687
Տիգրան Մկունդ 540
Տիգրանյան Մ. վարդ. 223
Տիգրանյան Ա. 58, 584
Տիգրանյան Արմ. 80
Տիգրանյան Լ. 145, 147
Տիգրանյան Մ. 223
Տիգրանյան Նիկ. 128
Տիգրանյան Ս. 22
Տիրանյան Վ. 388
Տիրանյան Հ. 540
Տյուսաբ Ս. 31, 252
Տոլստոյ Լ. 13, 18, 45, 30, 72, 111, 127, 135, 136, 171, 190, 191, 267, 383, 386, 422, 434
Տոտոմյանց Վ. 55, 56, 94, 140, 141
Տուգան-Բարանովսկի 141
Տուրգենև Ի. 30, 111, 450
Տվեն Մ. 111, 136, 237, 539
Տրդատ 600
Տրդատ եպ. 288
*Տրդատյան Տ. 679
Տրեպով 163

Ր

Րաֆֆի 14, 27, 90, 109, 164, 192, 320, 482, 509, 524, 673,

Ց

Ցիլլեր 126

Ու

Ուայդ Ռ. Գ. 115
Ուայլդ Օ. 136, 255
Ուելս Հ. 237
Ուեստ Հոպըքըն (Յունիոն Միթի) 475
Ուզունյան Կ. 382
Ուզունյան Ս. 608
Ություճյան Ե. 325
*Ություճյան Կ. 240, 244, 257, 336
Ուիլսոն 653
Ուլանդ 255
Ողուզ Ջ. 322
Ուղուրլյան Մ. 229, 234
Ումիկյան Ն. 145
Ունճյան 518
*Ուշագլյան Կ. 607
Ուսուցիչ 124

Փ

Փանոսյան Աղ. (Ալփաալյան) 229, 244, 305, 632
Փանոսյան Ջ. 328
*Փանոսյան Կ. 257, 259, 268, 297
Փաշայան Կ. 382
Փաշայան Կ. (Թափառիկ) 597
Փաշայան Ռ. Ա. 119
Փաշայան-խան 145
Փառնակ Գ. (Ֆնտգլյան Գ.) 425
Փառնակես (Տեր-Սարգսյան Մ.) 154

Փաստրմաճյան Գ. (Արմեն Գարո) 650
Փաստրմաճյան Մ. (Մ. Մ.) 650
Փարամազ (Սարգիսյան Մ.) 331, 402
Փարսադանյան Ռ. 145
*Փափազյան Գ. 646
*Փափազյան Թ. 459
*Փափազյան Ղ. քահ. 341, 342, 343
Փափազյան Մ. 491, 492
*Փափազյան Մ. վարդ. 472
Փափազյան Ն. 598
Փափազյան Վ. 600
Փափազյան Վ. (դերասան.) 18, 119,
Փափազյան Վ. (մարզիկ) 181, 607-608
Փափազյան Վրթ. 9, 29, 34, 37, 57, 67, 103, 109, 168, 170, 198, 201, 209, 311, 434, 470
Փափազյան Տ. 463
*Փիլիպոսյան Գր. 467
Փիլոյան Հ. 660
Փիրումյան Պ.-Բ. 22
Փիրումյան Տ. 578
*Փոլատյան Ա. 485
Փոտսդամ 512–513
Փորթուգալյան Մ. 389, 459

Ք

*Քալանթար Ալ. 7-14, 19, 208, 717
*Քալանթար Լ. 21
Քալուշյան Գ. 64
Քամալյան Ա. 210
Քամալյան Ս. 94
Քաջիկ բեյ 456
Քաջազնունի Հ. 420, 723
Քաջունի Ե. 96
*Քարինյան Ն. 679
*Քելեկյան Տ. 324, 352, 353, 361, 366, 368, 369, 395, 409
Քեմալ Մ. 317, 321, 322, 335, 336
Քեմալ Բեյ 54
Քեսոյան Վ. 465
Քեշիշյան Խ. 660
Քեշիշյան Մ. 231
Քեշիշյան Մ. 573
Քեշիշյան Մարկ. 449
Քեչեճյան 361, 364
*Քեյան Ա. 492
*Քեյան Բ. 214, 220–226, 268, 336
*Քեյան Պ. 220
Քեպապյան Գ. Ս. 533, 539–540,
Քեֆսիզյան Մ. 339, 341
Քիթապճյան Ա. 234
*Քիյար Պ. 83, 137, 314, 335, 349, 398
Քիրիշճյան Լ. 228
Քյամիլ 279, 286
*Քյուչուքյան Վ. 406
Քյուրքճյան Ս. 330
*Քյուրքճյան Վ. 339, 360– 363, 369, 485
Քյուֆեճյան Հ. 201, 308, 309
Քոչան Է. 441
Քուլաքոզյան Ս. 466
Քուշակ 426
Քուչուքեզյան Հովհ. 207
Քուչուքյան Ս. 373

Քանոփուլոս Գ. 539,
Քրացյան Մ. (Արծիվյան) 96, 99
Քրեյան Ֆ. 539
Քրիսյան Հ. 607
*Քրիսյան Ճ. 179, 182
Քրիստոս 40

Օ

*Օզանյան Գ. 174, 176
Օհանյան Ա. 453–456
Օհանյան Բ. 354, 366, 367
Օհանջանյան Մ. (Ֆարհատ) 597
Օմար Խայամ 425
*Օշական Հ. 330, 331
Օուեն 84
*Օսկանյան Խ. 476
Օտապաշյան Մ. (Մ. Օ.) 356, 406
*Օտյան Ե. 99, 103–105, 317, 388, 389, 391, 432, 603
Օտյան Ե. (Պոնդ. Ե. Օ., Սկեպտիկ Սրմեփ Օ.) 305, 316–318, 327, 338, 344, 346, 347, 353–355, 358–360, 365-368, 403, 405, 411, 430
Օրբելի Հ. 199
Օրբելյան Ստ. 67
Օրի 192
Օրիոն 615
Օրմանյան Մ. պատրիարք 20, 48, 220, 225, 412, 438
*Օրբոյան Դ. 156, 157, 158

Ֆ

Ֆասուլյաճյան Թ. 276
Ֆարհատ Նորիս 268
Ֆեթվաճյան Ա. 454
Ֆելիքս 600
Ֆեներճյան Գ. 330
Ֆերահյան Մ. Գ. 531, 535, 540,
Ֆերիդին Օղլի 322
Ֆիրդուսի 453
Ֆլամարիոն Ք. 134
Ֆլոբեր 273, 425
Ֆյուրե Մ. 371
Ֆոս Ռ. 277
Ֆորժե Հ. 237
Ֆուրիե 84
Ֆրանգուլյան Ս. 41, 64
Ֆրանկյան Ե. 583, 593, 600, 717
Ֆրանս Ա. 31, 93, 136, 159, 195, 255, 266, 267, 362, 450, 565,
Ֆրեռբել 127
Ֆրիկ 426

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Ագուլիս 25
Ադանա 11, 12, 63, 217, 223, 224, 268, 280, 283, 288–290, 299, 300, 306, 307, 322, 333, 349, 365, 371, 394, 398, 449, 465, 588, 598, 599, 635, 639, 658
Ադրբեջան 22, 23, 130, 335
Ադրիանապոլիս (Էդիրնե) 232, 341, 409
Աթենք 175, 221, 341, 369, 502, 503
Ալաշկերտ 117
Ալավերդի 10, 81
Ալբանիա 78
Ալեքսանդրապոլ 10, 22, 25, 42, 58, 60, 61, 78, 86, 190, 123, 579, 673, 674, 675, 694, 712, 719, 722, 723, 726, 727
Ալեքսանդրիա 221, 338, 341, 342, 346, 347, 353, 354, 357–359, 365, 368, 369, 375, 381, 382, 384, 387, 394, 403, 405, 411, 413, 432, 463, 654
Ախալցխա 123, 186
Ախալքալաք 8, 85–87, 123, 186
Ականց 586
Ակն 491, 492, 505, 506
Ամասիա 322
Ամասիայի շրջան 321
Ամերիկա (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 96, 101, 221, 233, 265, 361, 362, 369, 374, 318, 320, 325, 327, 408, 436, 438, 449, 458, 475–477, 481–485, 487, 488–489, 492, 507–508, 511, 514, 516-517, 519–521, 528, 532–533, 538, 541–543, 547, 553, 554, 558, 639, 644, 646, 648, 651, 654, 683, 696
Այգեստան 481
Այդըն 232
Այնթապ 230, 360, 491
Այսրկովկաս 624, 630
Անատոլու 334
Անգլիա 7, 12, 15, 52, 92, 93, 165, 255, 327, 421, 431, 438, 447, 498, 510, 513, 566, 624, 723
Անդրկովկաս 6, 9, 13, 30, 33, 37, 58, 71, 76, 78, 79, 85, 87, 91, 94, 113, 123, 128, 141–143, 164, 212, 458, 524, 527, 528, 534–537, 541, 544, 545, 561, 569, 570, 572, 577, 579, 580, 590, 591, 660, 661, 663, 667, 671, 684, 685, 689, 693, 710, 722, 723
Անի 99, 120, 136, 425, 435, 717
Անկարա 335
Աշխաբադ 64
Աշտարակ 73, 75, 171, 719

Ասիա 211
Ասիական Թուրքիա 443
Աստապատ 154
Աստրախան 190–193, 675, 679, 697
Ավստրիա 78, 168, 233
Ատրպատական 16, 471, 474
Արաբկիր 221, 506, 592
Արագած 717
Արագածոտն 719, 727
Արարատ 312, 453, 509
Արարատյան դաշտավայր 161
Արևելյան Թրակիա 465
Արևելյան Հայաստան 319, 421, 436, 444, 454, 458, 518, 653
Արևմտյան Եվրոպա 458, 562, 606
Արևմտյան Հայաստան (Արևմտահայաստան, Տաճկահայաստան, Թուրքահայաստան) 12, 15, 17, 18, 28, 49, 96, 100, 135, 204, 213, 217, 218, 220–223, 226, 227, 231–233, 238, 248, 260, 268–271, 281, 287, 297, 304, 319–321, 337, 353, 363, 366, 372, 374, 384, 387, 400, 439, 443, 447, 448, 462, 463, 475–477, 479, 480, 485, 493, 499, 501, 504, 506, 510, 518, 525, 528, 534, 561, 587, 598, 602, 610, 614, 623, 625, 627, 628, 631, 642, 647, 658, 659, 664, 680, 683, 687, 692
Արխանգելսկ 651
Արծափ 586
Արճեշ 586
Արմաշ 233, 339
Արմավիր 120, 675
Արցախ 193, 206, 207, 209–212, 694, 706, 709, 724
Աֆրիկա 438

Բ

Բաբերդ 281
Բազել 466
Բաթում 9, 120, 559, 663, 686, 702
Բալկանյան երկրներ 77, 78, 82, 87, 301
Բալկանյան թերակղզի 577
Բալկաններ 286, 609, 624, 692
Բալու 300, 510
Բաղեշ 233, 368, 439, 620
Բայազետ (Բայազեդ Բայազիդ) 82, 98, 402, 586
Բայանդըր 295
Բաշ-Ապարան 22
Բաշ-Գյառնի 74
Բարշարի լեռ 456
Բաքու 7, 9, 10, 13, 14, 23, 41, 66, 74, 76, 115, 120, 122, 123, 129, 130, 133, 150, 193, 200, 206, 390, 571, 578–580, 590, 657, 661, 662, 664, 666, 669, 670, 674, 675, 676, 678, 679, 680, 683–685, 689–691, 693, 694, 706, 713, 721, 731
Բելոռուսիա 674
Բեյրութ 473, 481, 571, 618

Բեռլին 12, 51, 52, 226, 344, 420, 446, 447, 453, 464, 480, 494, 495, 522, 633
Բերա թաղամաս 379
Բիթլիս 15, 585, 588
Բոսնիա 301
Բոսնիա-Հերցեգովինա 479
Բոստոն 361, 389, 394, 476, 479, 482, 485, 490, 491, 511, 519, 530, 540, 553, 554, 594, 597, 628, 639, 651, 652
Բոսֆոր 50, 53
Բորչալու 116, 117
Բրեստ-Լիտովսկ 536, 545, 693
Բուդապեշտ 137
Բուլղարիա 50, 221, 458–460, 462, 464, 467, 470, 479, 510, 577, 596
Բուխարեստ 221
Բուրգաս 221

Գ

Գալաց 342
Գանձակ 117, 123, 206, 586, 590
Գանձակի գավառ 116
Գերմանիա 7, 33, 39, 78, 124, 159, 164, 168, 218, 287, 301, 320, 362, 401, 444, 451, 447, 545, 624, 695
Գյումրի 722
Գոշավանք 124
Գորիս 64, 66–68, 719, 727
Գում-Գափու 104, 480, 500

Դ

Դարդանել 130
Դանիա 7, 88
Դիադին 586
Դիարբեքիր (Տիգրանակերտ) 15, 233, 368, 439, 475, 588
Դիլիջան 81
Դոնի Ռոստով 675

Ե

Եգիպտոս 145, 221, 337, 338, 340–343, 345, 351, 354, 358, 360, 362, 365, 369, 372, 375, 378, 379, 382, 384, 387, 388, 403–406, 408–410, 414, 430, 432, 436, 438, 463, 519, 528, 654
Եդիկուլե 303
Եկատերինոդար 120
Ենա 124, 195
Եվդոկիա 379
Եվրոպա 30, 49, 52, 53, 89, 101, 124, 149, 181, 194, 221, 267, 302, 325, 371, 396, 417, 429, 438, 444–446, 456, 494–495, 497, 504, 505, 523, 538, 543, 541, 600, 611, 622, 624, 627, 630, 631, 657
Երևան 5, 33, 34, 58, 61, 72–74, 81, 86, 96, 97, 119, 121, 123, 138, 144, 145, 161, 168, 169, 321, 388, 390, 428, 520, 531, 579, 571, 573, 580, 594, 599, 601, 619, 659, 679, 697, 699, 701–

704, 707, 710, 712, 713, 715, 716, 718, 719, 721, 722, 724, 727–731
Երզնկա 368, 506
Երուսաղեմ 263, 315, 343
Եփրատ 510

Զ

Զանգեզուր 17, 64, 66–68, 719, 727
Զանգիբար 404
Զեյթուն 288, 305, 338, 343, 376, 386, 449, 450, 459, 465, 481, 506, 661
Զմյուռնիա (Իզմիր) 102, 284, 213, 216, 220, 229, 258, 260, 261, 263, 272, 282, 289, 290, 293–297, 306, 307, 314, 315, 325, 328–330, 368, 596

Է

Էջմիածին 33, 42–45, 47, 58, 64, 94, 100, 168, 186, 192, 405, 433, 519, 719, 730
Էրզրում (Կարին) 15, 17, 59, 93, 214, 233, 233, 322, 462, 519, 571, 585, 650

Թ

Թավրիզ 14, 133, 471–474, 519
Թեհրան 49, 137, 470, 471, 472, 474
Թիրե 232
Թիֆլիս 9, 14, 20, 25, 32, 33, 39, 41–43, 47, 49, 67, 68, 74, 85, 86, 90, 95, 98, 100, 110, 113, 114, 116, 119–124, 129, 132, 133, 134, 138, 140–142, 144, 148, 150–156, 158–160, 164, 165, 167, 168, 186, 187, 196–198, 206, 208, 380, 433, 458, 519, 569, 570, 571, 573, 575, 577, 581, 648, 651, 653–655, 659, 660–662, 664–666, 671, 677–680, 683, 685, 688, 692, 693, 699, 707, 710, 713, 716, 721, 731
Թուրքիա (Տաճկաստան) 8, 16, 51-53, 62, 75, 77, 104, 108, 159, 177, 187, 188, 213, 214, 216–218, 221–223, 225, 227, 230, 231, 238, 258, 269, 270, 276, 280, 281, 296–298, 300–302, 304, 305, 307, 315–317, 321, 323, 325, 328, 333–335, 337, 339, 344, 349, 352, 354, 363-364, 368, 370, 379, 385, 417, 419, 420, 421, 436, 438, 445, 446, 447, 450-451, 462, 477-478, 480, 488, 489, 491, 493, 498, 501, 504, 507, 510, 514, 515, 517, 518, 520, 527, 538, 541–545, 560, 562, 566, 582, 585, 587–590, 595, 597, 598, 601, 604, 606, 608-613, 615-616, 624, 625-627, 631, 632, 636, 638, 639, 645, 657, 659, 683, 687, 711

Ժ

Ժնև 108, 458, 461, 570, 600, 617, 620, 676, 678, 680, 681, 684

Ի

Իեյլ 511
Իզմիր-Կասաբա 222
Իսկենդերունի ծոց 407
Իտալիա 92, 93, 377, 566, 621
Իրան 472, 474, 576, 683

Լ

Լայպցիգ 33, 39, 124
Լենա 79, 194
Լենինական 58
Լեռնային Ղարաբաղ 705, 706, 724
Լիբանան 571
Լոնդոն 12, 93, 100, 108, 165, 166, 179, 360, 394, 480, 494, 617, 619–621, 625
Լոռի 155, 161, 726
Լոմխա գավառ 42
Լոս Անջելես 491

Խ

Խարբերդ 96, 221, 233, 385, 482, 484, 485, 491, 506, 510, 554, 565, 596
Խերսոն 129
Խորհրդային Հայաստան 17, 25, 50, 331, 332, 336, 418, 423, 427, 467, 468, 475, 486, 554, 705
Խորհրդային Միություն 469

Կ

Կ. Պոլիս (Կոստանդնուպոլիս, Պոլիս, Ստամբուլ) 19, 20, 48–50, 119, 137, 145, 165, 179, 181, 182, 213, 216, 218, 202, 220–222, 226, 228, 229, 235, 241, 244, 260, 263, 268, 269, 272, 276, 278, 290, 293, 294, 296, 297, 311, 314–316, 318, 322–327, 330, 332, 333, 340–345, 360, 369, 372, 379, 381, 384, 385, 387, 388, 394, 396, 397, 402, 403, 406, 409, 410, 412, 415, 417, 447, 457–458, 460–461, 477, 480, 485, 491, 492, 519, 548, 587, 594–597, 600–602, 604, 605, 606, 608, 615, 616, 618, 619, 628, 632, 637, 699, 731
Կադմոս 410
Կալիֆորնիա 476, 477
Կալուգա 85
Կահիրե (Գահիրե) 3, 338–343, 346, 348, 350, 353, 354, 356, 357, 360, 369, 372, 379, 385, 387, 388, 394, 398, 400, 406–410, 485, 555, 619, 697
Կարաբաշ 295
Կարբի 73
Կարմիր վանք 435
Կարս 17, 42, 115, 331, 335, 704, 705

Կեսարիա 214, 287, 506
Կիլիկիա 213, 214, 217, 223, 287–289, 299, 300, 321–323, 333, 337, 349, 361, 372, 394, 399, 407, 450, 456, 566, 567, 618
Կիպրոս 52, 288, 361
Կիրասոն 322
Կյուրին 230
Կոլումբիա 492
Կողբ 81
Կոնիա 317
Կովկաս 7, 33, 72, 90, 94, 96, 109, 122, 124, 133, 186, 191, 192, 227, 320, 335, 355, 356, 390, 395, 415, 436, 444, 445, 458, 500, 508, 518, 524, 528, 535, 536, 544–546, 562, 570, 587, 591, 601, 606, 623, 635, 648, 654, 659, 661–664, 666, 668, 676, 680, 681, 684, 710, 716
Կովկասյան լեռներ 456
Կոտայք 717
Կորֆու 312
Կրասնոդար 675
Կրետե 137

Հ

Հաագա 133
Հալեպ 360
Հայքի 276
Հաղպատ 42, 664, 726
Հաճըն 288
Հայաստան 7, 10, 12, 15, 17, 18, 22, 23, 34, 58, 74, 96, 134, 138, 168, 169, 196, 204, 206, 211, 290, 316, 318–321, 327, 331, 332, 335, 348, 349, 362, 363, 368, 376, 377, 423, 433, 436, 437, 443, 444, 446–448, 455, 456, 460, 467, 479, 488, 494, 496, 498, 499, 501, 503–509, 511, 520, 522–525, 533–539, 541, 542, 545, 546, 550, 558–564, 566, 567, 570, 579, 595, 580, 588, 589, 603–605, 631, 635, 641, 646, 652, 659, 660, 666, 675, 678, 686, 694–697, 699–716, 718–731
Հավլաբար 141, 569, 661
Հյուսիսային Կովկաս 519
Հնդկաստան 3, 354
Հռոմ 138, 314, 454
Հրեաստան 380
Հունաստան 218, 334, 342, 345
Հունգարիա 78
Հուսեյնիկ 485

Ղ

Ղալաթիա 303
Ղամարլու (Արտաշատ) 81
Ղարաբաղ 22, 23, 64, 161, 162, 209, 210, 212
Ղարադաղ 470
Ղարաքիլիսա 22
Ղափան 10

Ղզլար 190
Ղրիմ 25, 635

Մ

Մակեդոնիա 78, 352, 462, 464, 518, 577
Մայկոպ 98
Մանիսա 232, 596
Մանչեստր 394, 506
Մարաշ 288
Մարզվան 174, 177, 178, 214
Մարսել 221, 358, 458, 459
Մարտունի 401
Մեծ Հայաստան 523, 686
Մեծ Հայք 523
Մեծ Մասիս 481
Մենեմեն 295
Մետեխի բանտ 35
Մերձավոր Արևելք 317, 562
Մինսկ 674
Միջագետք 317, 509
Միջին Արևելք 472
Մյունխեն 100
Մոսկվա 7, 14, 25, 26, 48, 50, 61, 85, 133, 193, 195–197, 203, 207, 309, 331, 332, 458, 461, 569, 572, 666, 668, 731
Մորենիկ 565
Մուշ 15, 214, 279, 287, 300
Մուսա լեռ 93
Մուսուն 586

Ն

Նախիջևան 150, 154, 161, 189, 390, 709
Նեղոս 407
Նիկոմեդիա 339
Նիցցա 372
Նյու Յորք 361, 372, 389, 476–478, 481, 485, 491, 492, 494, 511, 520, 529, 531, 628, 651
Նոր Բայազետ 61, 144
Նոր Նախիջևան 120, 150, 155, 183–186, 189, 190, 193, 678
Նոր Ջուղա 472, 474

Շ

Շամախի 39, 73, 453
Շապին-Գարահիսար 174, 376
Շատախ 214
Շումլա 221, 466
Շուշի 6, 14, 116, 123, 133, 206–212, 433, 573, 579, 580, 705, 724
Շվեդիա 7
Շվեյցարիա 7, 11, 88, 168, 569

Ու

Ուկրաինա 172
Ուստր 394, 480
Ուրֆա 244

Չ

Չարսանճագ 300
Չոր Մարզվան 224

Պ

Պարսկաստան 14, 19, 25, 51, 74, 143, 320, 380, 436, 473, 528, 562, 582, 590, 601
Պեպեք (թաղամաս Կ. Պոլսում) 276
Պետերբուրգ 39, 42, 80, 95, 100, 105, 107, 110, 141, 145, 150, 156–158, 160, 199, 200, 352, 388, 421, 454, 663, 666
Պլովդիվ (Ֆիլիպե) 50, 221, 459, 462, 465–467, 469, 470, 577, 596
Պյատիգորսկ 675
Պրուսիա 221

Ռ

Ռոստով 120, 648
Ռումինիա 221, 233, 342, 343, 372, 460, 510, 519, 569
Ռուսաստան (Ռուսիա) 7, 12, 15, 16, 23, 25, 26, 30, 34, 36, 46, 51, 60, 64, 76, 78–80, 85, 91, 92, 94, 95, 97, 101, 113, 139, 141, 143, 145, 147, 162, 184, 186, 187, 190, 193, 194, 211, 218, 221, 287, 292, 333, 335, 352, 355, 358, 363, 364, 377, 384, 387, 390, 419, 420, 431, 436, 438, 443, 444, 445, 458, 478, 493, 498, 499, 510, 519, 523, 527, 528, 541, 544, 560–562, 566, 571, 579, 582, 586, 591– 593, 606, 624, 627, 653, 655, 660, 663, 666, 667, 676, 678, 683–685, 688, 693, 707, 708, 716, 722
Ռուսէ 459, 461, 463–466, 468, 469

Ս

Սալոնիկ 224, 227
Սամսուն 619
Սանահին 124
Սան-Ստեֆանո 420
Սասուն 8, 11, 137, 178, 462, 465, 505, 506, 620
Սարդարապատ 22
Սարիղամիշ 17, 650
Սեբաստիա 49, 174, 214, 233
Սիմֆերոպոլ 120
Սիպերիա 422
Սիս 343
Սիրիա 317, 362, 456
Սիփան սար 481
Սկյուպ (Սկոպյե) 276
Սկյուտար 119
Սյունիք 67, 719
Սյորէ 295
Սորբոն 343, 345, 394, 442
Սուղդա 186
Սուլինա 372
Սոֆիա 466–469
Սպահան 472
Սև ծով 456
Սևանա լիճ 710
Սևր 332

Վ

Վաղարշապատ 43
Վան 19, 54, 93, 214, 221, 233, 278, 287, 376, 439, 456, 462, 481, 482, 505, 506, 519, 580, 585, 588, 601, 608, 609, 611, 612, 614, 616, 617, 620, 646, 650–654, 710
Վանա 221, 384, 458, 459, 460, 461, 463–466, 468, 469, 492, 594
Վասպուրական 54, 99, 285, 525, 646, 648, 651, 710
Վարանդա 116
Վենետիկ 100, 360, 427, 454, 619, 678, 695, 731
Վերին Ագուլիս 7
Վերին Աղդան 91
Վերալ 559
Վիեննա 145, 437, 492, 619
Վիկտորինի 96, 519
Վրաստան 23, 24, 30, 110, 120, 168, 335

Տ

Տաթեւ 67, 388
Տավրոսյան լեռներ 456
Տարոն 285
Տեկոր 717
Տիգրիս 481
Տրապիզոն 174, 447, 462

Ց

Ցեյլոն 25

Փ

Փարիզ 23, 50, 54, 100, 105, 108, 137, 144, 145, 179, 284, 318, 319, 320, 321, 327, 339, 345, 365, 372, 383, 388, 403, 415, 430, 432, 433, 439, 440–448, 452, 455, 458, 485, 491, 492, 494, 516, 537, 571, 596, 600, 661, 709
Փոքր Ասիա 456
Փոքր Հայք 618, 523

Ք

Քաջբերունիք 586
Քեմբրիջ 490
Քրքքաղաճ 295
Քոռուն 586
Քուրդիստան 223

Օ

Օդեսա 157

Ֆ

Ֆեներ (թաղամաս Կ. Պոլսում) 276
Ֆլորենցիա 254
Ֆրանսիա (Գաղիա) 7, 92, 93, 144, 168, 218, 221, 305, 349, 383, 394, 430–432, 447, 448, 451, 457, 488, 510, 522, 566, 624
Ֆրեզնո 475, 477, 489, 594

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Ա

«Ազատ բեմ» 353–356, 618,
«Ազատ խօսք» 403–406, 430–432
«Ազատ կարծիք» 511
«Ազատ» 511, 529–534, 536–540
«Ազատամարտ» 485, 594–599, 602, 603, 616
«Ազատութիւն» 476, 477, 481
«Ազգ» 394, 556, 618, 639, 640–646
«Ազգագրական հանդէս» 117, 119, 207, 209
«Ազգ-Պահակ» 646
«Ազդակ» 595, 599
«Ազդարար» 3
«Ազդարար առաջնորդարանի» 472
«Ալեքսանդրապոլի լրաբեր» 729
«Ալիք» 571, 572, 689, 726
«Ախուրյան» 58–61
«Աղաղան» 473, 474
«Աղբիւր» 39, 107, 109, 191, 433
«Ամէնուն տարեցոյցը» 595
«Ամրոց» 485
«Այգ» 474
«Անահիտ» 110, 111, 388, 414–420, 422–429, 433, 440
«Անաստված» 74
«Անկախ մամուլ» 38, 55–58
«Աննամուս» 153
«Աշակերտ» 210
«Աշխատանք» Երևան 580, 713, 715
«Աշխատանք» Զմյուռնիա 213, 217
«Աշխատանք» Թիֆլիս 28, 32–38, 56
«Աշխատանք» Վան 608–615, 617
«Աշխատանքի դրօշակ» 722
«Աշխատավոր» 578
«Աշխատաւորի ձայն» 705
«Աշխարհ» 459, 463
«Ապագայ» 423, 428, 469
«Ապառաժ» 208, 212, 579, 580
«Ապտակ» 467
«Առաւօտ», Թավրիզ 472–473
«Առաւօտ», Կ. Պոլիս 213
«Առաւօտ», Թեհրան 474
«Առաւօտ նորահարսներու» 326
«Առողջապահ» 107
«Առողջապահական թերթ» 143
«Առողջապահիկ» 730
«Առողջապահիկ թերթ» 144–146, 148–150
«Ասպարէզ», Աթէնք 341
«Ասպարէզ», Ֆրեզնո 594
«Աստղ արևելեան» 471
«Աստղ Բեթլեհեմի» 215

«Առաջ չան» 328–329
«Արագած», Ալեքսանդրապոլ 78–80
«Արագած», Կ. Պոլիս 318–324
«Արարատ», Կ. Պոլիս 477
«Արարատ», Նյու Յորք 477–480,
«Արարատ», Ս. Էջմիածին
(«Վաղարշապատ») 43, 730
«Արարատեան աշխատաւոր» 719
«Արաքս», Բաքու 519–525, 527, 528
«Արաքս», Սոֆիա 467
«Արդարամարտ» 315, 602
«Արդարութեան ձայն» 553, 554
«Արեգակ» 475, 476
«Արեւ», Ալեքսանդրիա 365–369, 375–378, 410, 519
«Արեւ», Բաքու 672, 706
«Արեւելեան ծանուցմունք» 190
«Արեւելեան մամուլ» 124, 146, 213, 217, 259, 260–268, 282, 297, 306, 328, 511
«Արեւելք» 214, 229, 244, 248, 379, 384, 385, 415, 475, 492, 619
«Արիամարտ» 315, 602
«Արծիւ» 511–515, 517, 518, 529, 532
«Արձագանք Փարիզի» 537
«Արձագանք» 124, 213, 353, 433
«Արմաւենի» 339, 340, 341
«Արմենիա» 358, 389, 459, 461, 475, 495
«Արշալոյս Արարատեան» 258
«Արշալոյս» 213, 348, 349 350, 354, 410, 474
«Արտեմիս» 378–381
«Արցախ» 212, 705, 706
«Արփի Արարատեան» 306
«Արօր» 14, 133, 134, 137–140, 575, 581
«Աւէլ» 406–408
«Աւետաբեր» 215

Բ

«Բագին» 599
«Բազմավէպ» 257, 393
«Բակինսկի ռաբոչի» 23
«Բանասէր» 440
«Բանասէր» 448
«Բանբեր» 100, 101, 103–106
«Բանբեր գրականութեան և արուեստի» 100, 107, 388
«Բանւոր», Ալեքսանդրապոլ 726
«Բանւոր», Բաքու 679, 690, 693
«Բանւոր», Թիֆլիս 660, 661, 677, 683
«Բանւոր», Ժնև 678, 681-683
«Բանւորի կռիվ» 675
«Բանւորի ձայն» 669, 675
«Բարձրավանք» 330, 331
«Բեյան-Սարահ» («Առավոտյան հաղորդումներ») 333
«Բիզանդիոն» 214, 217, 219–228, 511, 519, 635
«Բիւթանիա» 599

«Բիւրակն» 511
«Բոքոխ» 474
«Բողբոջ» 165, 177, 178

Գ

«Գաղութ» 183
«Գարուն», Մոսկվա 195–205, 309
«Գարուն», Վառնա 468
«Գաւառ» 64, 65, 67, 68
«Գաւառի ձայն» 83–85
«Գեղափնջիկ» 107
«Գիւղատնտես» 33, 140–143, 151
«Գիւղացու ձայն» 727
«Գյուղացիական միություն» 727
«Գործ» Շուշի 6, 207, 208, 433, 434, 437
«Գործ» Թիֆլիս 571, 577, 679, 683
«Գործ» Բաքու 200, 579–580
«Գործ» Թավրիզ 471
«Գրիչ» 183, 190
«Գրոհ» 578

Դ

«Դանուբ» 463
«Դաշինք» 268, 282, 283, 285, 287, 289, 306–308, 213, 217, 286–288, 290, 292–295
«Դափնի» 329, 330
«Դիրքերում» 704
«Դպրոցի դրօշակ» 729
«Դրօշակ» 277, 279, 461, 569–570, 594, 681, 689, 714, 716

Ե

«Եռանդ» 76–78, 210
«Երեւակ» 264
«Երիտասարդ Հայաստան» 553, 681
«Երկիր» 331, 332–336, 571–575, 689, 715, 719
«Երկունք» 594, 600–602
«Երկրի ձայն» Թիֆլիս 49–51, 53-54, 678, 683, 687
«Երկրի ձայն», Կ. Պոլիս 213
«Եփրատ» 480

Զ

«Զանգ», Երևան 579, 580, 708, 713–715, 723
«Զանգ», Թավրիզ 473
«Զանգ», Թիֆլիս 571, 575, 689,
«Զանգակ» 571, 577
«Զանգեզուրի կոմունիստ» 727
«Զարթօնք» 369, 378, 400–402
«Զեյթուն» 448–450, 452
«Զիկ-զակ» 216
«Զուռնա» 153, 216

Է

«Էջմիածին» 730, 731

Ը

«Ընկեր» 39–41, 472, 474

Թ

«Թան» 23
«Թանին» («Գիտակ») 290, 300

«Թաւշիքի էջեր» («Մտքերի արտացոլում») 224, 290, 323
«Թատրոն և երաժշտություն» 107, 129-132
«Թատրոն» 112–116, 119, 274
«Թեքիրը էջեր» («Միասնական կարծիքներ») 333
«Թերձնանք էջեր» («Մտքերի բարգման») 228-229, 258.
«Թորոսեան» 729
«Թռուցիկ» 578

Ժ

«Ժամանակ», Թիֆլիս 571
«Ժամանակ», Կ. Պոլիս 213, 217, 296–299, 300–305.
«Ժամանակ», Փարիզ 432–433, 437, 571, 575
«Ժայռ» 571, 575, 579
«Ժեռ թուղթ» («Երիտասարդ թուղթ») 285
«Ժողովուրդ», Երևան 697, 707–710
«Ժողովուրդ», Կահիրե 356
«Ժողովուրդ», Կ. Պոլիս 50, 315
«Ժողովրդի ձայնը» 387
«Ժողովրդին համար» 448

Ի

«Իգնատ աղա» 316, 317, 318
«Իդեալ» 729
«Իլյուստրասիոն» 107
«Ինտերնացիոնալ» 345
«Իսկրա» 384, 661, 663, 665
«Իմես լուսինայե» 377
«Իրանի ազատատար» 474
«Իրավունք», Կ. Պոլիս 324
«Իրավունք», Վառնա 458–460, 463
«Իրավունք», Փարիզ 349
«Իշխան» («Համատեղություն») 323-324

Լ

«Լ՛Արմենի» 495
«Լ՚ Օրոր» 345, 349
«Լա ֆամի» 262
«Լեպլեպիճի» 410
«Լիյա» 216
«Լույս» 190, 213, 215, 490, 491, 722
«Լոռվա գյուղացու ձայն» 726
«Լումայ» 581
«Լույս» 183, 257
«Լրաբեր» 190–192
«Լրատու» 570–571, 702
«Լրատու թերթիկներ» 570
«Լուսաբեր» 354, 360, 361, 362, 363, 364, 365, 368, 369, 385
«Լուսաբեր-Արեւ» 365, 368–372, 394, 410
«Լուսարձակ» 459, 469, 470

Խ

«Խաբարդա» 156
«Խաթաբալա» 153, 160, 161, 163, 164
«Խառնաշօ» 410

«Խարազան» 216
«Խարիսխ» 571, 575
«Խելօք Դաւիթ» 315, 316
«Խօսք» 87, 724–725
«Խորհրդային Հայաստան» 74
«Խուզակ» 461

Ծ

«Ծաղիկ», Ակն 492
«Ծաղիկ», Զմյուռնիա 330, 369
«Ծաղիկ», Կ. Պոլիս 213, 216, 384, 410, 415–417
«Ծաղիկ մանկանց» 382
«Ծիածան» 207, 211

Կ

«Կաթողիկէ արձագանգ» 215
«Կաղ դեւ» 153
«Կայծ» 28, 74, 665, 666, 668, 689, 722, 723
«Կառավարության լրաբեր» 701–702
«Կառափնատ» 213, 216
«Կավռօշ» 213, 216
«Կատակ» 216, 463
«Կարմիր աստղ» 675
«Կարմիր աքլոր» 120
«Կարմիր բանվոր» 675
«Կարմիր Զանգեզուր» 727
«Կարմիր լուրեր» 459, 470
«Կարմիր օրեր» 675
«Կեանք» 28, 675, 679, 683, 685, 687, 688, 690
«Կիկօ» 213
«Կոհակ» 213
«Կոմունիստ» 675, 727
«Կոչ» 196, 679, 683, 690, 691
«Կոչ-Դեվեր» 669
«Կոչնակ» 492, 512
«Կովկասի առաւօտ» 571, 575
«Կովկասի լրաբեր» 679, 683, 692
«Կովկասեան նախագիծ» 572, 574
«Կռան» 73–76, 80, 83
«Կռունկ հայոց աշխարհին» 206

Հ

«Համալսարան» 434, 448
«Համբաւաբեր» 90–95
«Հայ» 482, 483, 484
«Հայ Բարիզ» 437–440
«Հայ գրականութիւն» 213, 306–312, 314
«Հայ կեանք» 437, 440–442, 444–448
«Հայ կին» 327, 328
«Հայ հանդէս» 619
«Հայ միտք» 327
«Հայ պատանի» 326, 327
«Հայ սկաուտ» 325, 594, 607
«Հայաթերթ» 459, 465
«Հայապատում» 174
«Հայաստան», Թիֆլիս 96–99, 320
«Հայաստան», Սոֆիա 345, 466, 467, 495

«Հայաստանի աշխատավոր» 713, 715, 716
«Հայաստանի կոոպերացիա» 679, 695, 696, 704, 705
«Հայաստանի ձայն» 659, 710–712
«Հայելի» 153–156, 463
«Հայկական աշխարհ» 206, 207
«Հայկական տարեցոյց» 342
«Հայկունի» 165, 174, 176, 178
«Հայոց Ազգային խորհրդի լրատու» 702
«Հայոց աշխարհ» 207
«Հայրենասէրների միութիւն» 569
«Հայրենասէր» 339
«Հայրենիք», Բոստոն 420, 594, 596, 597, 681
«Հայրենիք», Կ. Պոլիս 229, 297, 310, 415, 619
«Հայր» 389, 478, 491–501, 503–510
«Հանդէս» 676, 678, 680–682
«Հանդէս ամսօրեայ» 492
«Հանրագիտակ» 213
«Հասկեր» 165, 167–174
«Հեռաձայն» 303
«Հիգիենա» 107
«Հիւսիսափայլ» 31, 111, 309
«Հնչակ» 369, 379, 461, 495, 553, 619, 623, 681
«Հոսանք» 378, 394, 395, 397, 398, 400, 668
«Հովիտ» 41–43, 46, 47
«Հովիւ» 28, 41–43, 46, 47
«Հորիզոն» 200, 202, 474, 577, 578, 672, 716
«Հրազդան» 61–63
«Հօպ-հօպ» 156

Ձ

«Ձախ հոսանք» 474
«Ձայն» 678, 683, 688–690
«Ձայն հայրենեաց» 394, 481, 511, 519, 512, 618, 628, 629, 631–639, 681
«Ձիթենի» 466

Ղ

«Ղարաբաղ» 64, 207, 209
«Ղարաբաղի սուրհանդակ» 208, 212, 705, 706

Ճ

«Ճակատամարտ» 315, 599
«Ճակատամարտ», գյուղատնտեսական ամսօրեայ 320, 594, 602–604
«Ճակատամարտ», մանկավարժական ամսօրեայ 594
«Ճէրիտէի շարգիյէ» («Արևելյան հանդես») 228, 229, 236, 259, 274

Մ

«Մայէշ» 409, 410–413
«Մախլաս» 153, 158, 159
«Մաճկալ» 74
«Մամուլ» 274
«Մանզումէի էֆքեար» («Կարծիքների շարք») 214, 217, 236, 246, 268–279,

280, 281, 297, 343
«Մասիս» 177, 213, 214, 240–259, 273, 310, 330, 369, 384, 415, 475, 511, 619
«Մարդկայնութիւն» 723
«Մարմնամարզ» 165, 179, 181–182, 213
«Մարտ» 193–195, 617–625, 628
«Մարտակոչ» 662
«Մեհեան» 213, 595
«Մեղու» 340, 599
«Մեծմուպը հաաստիս» («Լուրերի ծաղկաքաղ») 258
«Մենտոր» 360
«Մեշվերեր» («Քննարկում») 284
«Մեսրոպ» 453
«Մեր խոսք» 603, 671, 679
«Մեր կեանքը» 192, 193
«Մեր ձայնը» 183, 186, 187, 189, 190
«Մեր ուղին» 679
«Մեր օրեր» 679
«Միմոս» 258
«Մինարէթ» 474
«Միրաժ» 210
«Միութիւն» 372, 373, 375, 485
«Միութիւն» (խմորատիպ) 210
«Մշակ» 6–24, 28, 39, 86, 229, 111, 133, 146, 163, 187, 200, 369, 433, 475, 574, 619, 632, 635, 651, 672, 707
«Մոծակ» 107, 153, 154, 216
«Մուրճ» 24–32, 39, 49, 111, 120, 134, 144, 572, 574, 581
Յ
«Յառաջ» 178, 570–572, 575–577, 579–580, 689, 713, 716–718
«Յիշատակարան» 185
«Յոյս» 264, 719
«Յումանիտէ» 20
«Յուշարար» 119–123, 485
«Յուշարար-Միութիւն» 485
«Յուսաբեր» 372, 394
Ն
«Նաւասարդ» 595
«Ներսու» 341, 342
«Նեցուկ» 208, 212
«Նշտրակ» 408, 409
«Նոր ալիք» 571, 576
«Նոր աշխատանք» 32–34, 36–38, 56
«Նոր աշխարհ» 50, 470
«Նոր առողջապահիկ» 151, 152
«Նոր դար» 187, 297, 433
«Նոր դպրոց» 123–125, 127–129
«Նոր ժամանակներ» 352
«Նոր խօսք», Թիֆլիս 28, 74, 666, 668, 670-671, 689
«Նոր խօսք», Նոր Նախիջևան 678
«Նոր կեանք», Ալեքսանդրապոլ 675, 712
«Նոր կեանք», Բաքու 679, 683, 690-691
«Նոր կեանք», Երևան 718

«Նոր կեանք», Թէհրան 474
«Նոր կեանք», Լոնդոն 394, 523, 617–618, 625-628
«Նոր կեանք», Նոր Նախիջեւան 183–184, 186
«Նոր կեանք», Շուշի 208, 724
«Նոր կեանք», Ֆրեզնո 477, 489
«Նոր կեանք-Միսուան» 477, 490
«Նոր հանդէս» 448
«Նոր հոսանք» 578, 581–585, 587–589, 591–594
«Նոր հորիզոն» 578
«Նոր ձայն» 72, 73
«Նոր մամուլ» 76, 80–83
«Նոր ոյժ» (1914) 679, 692- 693
«Նոր Ջուղայի լրաբեր» 472
«Նոր սերունդ» 477, 696, 728
«Նոր սերունդ-Քաղաքացի» 477
«Նոր տաղեր» 249
«Նոր ուղի» 729
«Նոր օր» 343, 350–352
«Նպատակ» 483

Շ

«Շանթ», Բոստոն 485–488
«Շանթ», Երեւան 719–720
«Շանթ», Կ. Պոլիս 213, 309, 594, 599, 606, 607
«Շարժում» 384, 459, 461–463, 465, 594
«Շաւիղ» 318, 384,466, 470, 471
«Շաւիղ-Իգնատ աղա» 318
«Շիրակ» 58, 378, 387–389, 391–393, 619
«Շիրակի աշխատաւոր» 718

Ո

«Ոստան» 213, 719

Պ

«Պայքարեան մամուլ» 468, 470
«Պահակ» 618, 646
«Պայքար», Բաքու 579
«Պայքար», Բոստոն 476, 651–652
«Պայքար», Թիֆլիս 74, 579, 646, 664, 671–673, 693
«Պայքար», Շուշի 208
«Պատանի» 165–167
«Պատրաստ» 325
«Պարտէզ» 378, 379, 381–384
«Պրիսմակ» 413, 414
«Պրոլետարիատ» 662–664, 680, 681
«Պրոլետարիատի կռիւը» 664–665, 689

Ջ

«Ջաւախք» 85–87, 89, 90

Ռ

«Ռազմիկ» 462, 465, 596, 703, 704
«Ռահվիրայ» 466
«Ռանչպար Իրանի» 474

Ս

«Սատանա» 156
«Սասունակ» 410
«Սափրիչ» 153, 156–158

«Սերվեթ-ի ֆյունուն» («Գիտելիք-ների շտեմարան») 239
«Միտում» 343, 378, 384-387, 477, 489
«Միւնիք» 719
«Միօն» 264
«Մլովո» 24
«Սոլդատ ի ռաբոչի» 673, 674
«Սոլդատ» 673
«Սոցիալ-դէմօկրատ» 674, 683, 685, 689
«Սոցիալիստ» 678, 683–685, 690
«Սպարտակ» 726
«Սուրհանդակ», Թիֆլիս 68, 69, 71, 160
«Սուրհանդակ», Կ. Պոլիս 213, 228–240, 511
«Սուրհանդակ», Նյու Յորք 476
«Սրինգ» 210
«Սօցիալիստ յեղափոխական» 721, 722

Վ

«Վաղուան ձայն» 394
«Վան-Տոսպ» 646, 648, 650, 652–657, 659, 710, 711
«Վարքը» («Ժամանակ») 335
«Վերածնութիւն» 464, 553–555, 558–561, 563, 564, 567, 568, 681
«Վերածնունդ» 474, 537, 679, 712
«Վիպաթերթ» 466
«Վտակ» 571, 576, 577

Տ

«Տավրոս» 459, 463, 540-553
«Տարազ» 39, 86, 107–112, 433
«Տեղեկատու» 675
«Տիգրիս» 481, 482

Ու

«Ուղի» 679, 683
«Ուսանող» 594, 600, 601, 571, 575

Փ

«Փայլակ», Թիֆլիս 571, 575
«Փայլակ», Շուշի 207, 212
«Փարիզ» 339
«Փարոս» 469
«Փեթակ» 382
«Փիւնիկ» 343–347, 348, 349, 354
«Փեչիկ» 165
«Փորձ» 134
«Փունջ» 410

Ք

«Քաղաքացի» 477
«Քասախ» 719
«Քյոյլյու» («Գյուղացի») 290
«Քնար խոսնակ» 207, 208

Օ

«Օշական» 449, 452–457
«Օրէնք» 358, 359
«Օրեր» 669

Ֆ

«Ֆեյզը հյուրրիէթ» («Ազատութ-յան բարիք») 279
«Ֆրու-ֆրու» 216

Օտարալեզու մամուլ

А

"Александропольские объявления" 58

К

"Кавказская жизнь" 51

Ш

"Шушинская жизнь" 207, 210

"Шушинский листок" 207, 210

A

«Armenia» 511–512, 531

C

«Comedie» 457

H

"Huis" («Յոյս») 458

E

«Ere Nouvelle» 457

F

«Figaro» 345, 457

G

«Gaulois» 457

L

«L'Armenie» 505

«L'Avenir» 457

«La France Litteraire» 452

«La vie» 453

«Le Menestrel» 457

«Le monde Musical» 457

«Le Temps» 443

P

«Pro Armenia» թերթ 444

T

«The Armenian Herald» 531

«The New Armenia» 511, 531, 538, 532

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Արևելահայ մամուլ

Հասարակական քաղաքական պարբերականներ

«Մշակ» (1892–1921) (Ալոյան Լ.) 6

«Մուրճ» (1901–1907) (Գևորգյան Լ.) 24

«Աշխատանք» (1906–1907) և «Նոր աշխատանք» (1907) (Նազարյան Ս.) 32

«Ընկեր» (1906–1914) ,,____,, ... 39

«Հովիւ» (1906–1909), «Հովիտ» (1910–1917) ,,____,, ... 41

«Երկրի ձայնը» (1906–1908) ,,____,, ... 49

«Անկախ մամուլ» (1907–1908) ,,____,, ... 55

«Ախուրեան» (1907–1914) ,,____,, ... 58

«Հրազդան» (1908–1909) ,,____,, ... 61

«Գաւառ» (1909–1910) ,,____,, ... 64

«Սուրհանդակ» (1909–1912) ,,____,, ... 68

«Նոր ձայն» (1911–1912) ,,____,, ... 72

«Կռան» (1911–1912) ,,____,, ... 73

«Եռանդ» (1912) ,,____,, ... 76

«Արագած» (1912) ,,____,, ... 78

«Նոր մամուլ» (1913–1915) ,,____,, ... 80

«Գաւառի ձայն » (1913–1916) ,,____,, ... 83

«Ջաւախք» (1913–1916) ,,____,, ... 85

«Համբաւաբեր» (1915–1917) ,,____,, ... 90

«Հայաստան» (1917–1918) ,,____,, ... 95

Արևելահայ գիտամշակութային մամուլ

«Բանբեր գրականութեան և արուեստի» (1903–1904) (Մխիթարյան Մ.) 100

«Տարազ» (1890–1919) ,,____,, ... 107

«Թատրոն» (1893–1905) ,,____,, ... 112

«Ազգագրական հանդես» (1896–1916) 116
«Ծուչապար» (1907–1913) 119
«Գեղարուեստ» (1906–1909, 1911, 1913, 1917, 1921)
«Նոր դպրոց» (1908–1913) (Գալստյան Թ.) 123
«Թատրոն և երաժշտություն» (1910–1917) 129
«Արոր» (1910–1912) 133
«Գիւղատնտես» (1909–1917) 140
«Առողջապահիկ թերթ» (1903–1905) 143
«Նոր առողջապահիկ» (1912–1914) 151
Արևելահայ երգիծական մամուլ (1906–1920) (Նազարյան Ս.) 153
Մանկապատանեկան մամուլ 165
«Պատանի» (1902–1907) 166
«Հասկեր» (1905–1917) 167
«Հայկունի» (1910–1912) 174
«Բողբոջ» (1911–1914) 177
«Մարմնամարզ» (1911–1914) 179
Հայ մամուլը Ռուսաստանում
«Նոր կեանք» (1906–1907) 183
«Մեր ձայնը» (1907–1909) 186
«Լրաբեր» (1908–1909) 190
«Մեր կեանքը» (1910–1912) 192
«Մարտ» (1911–1916) 193
«Գարուն (1910–1912) (Մխիթարյան Մ.) 195
Արցախի հայ մամուլը (Աբրահամյան Հ.) 206

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Արևմտահայ մամուլ (1900–1914) (Խառատյան Ա.) 213
«Բիւզանդիոն» (1896–1914) 219
«Սուրհանդակ» (1899–1908) 228
«Մասիս» (1900–1908) 240
«Արեւելեան մամուլ» (1900–1909) 259
«Մանզումէի էֆքեար» (1901–1909) 268

«Դաշինք» (1909–1910-ական թթ.) 282
«Ժամանակ» (1908–1914) 296
«Հայ գրականություն» (1911–1914) 306
Արևմտահայ մամուլը (1918–1922) 314

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հայ գաղթավայրերի մամուլ
Եգիպտահայ մամուլը (1865–1920) (Նազարյան Ս.) 337
Հասարակական-քաղաքական պարբերականներ
«Արմաւենի» (1865) ,,____,, ... 339
«Նեղոս» (1889) ,,____,, ... 341
«Փիւնիկ» (1899, Կահիրե, 1901–1903, Ալեքսանդրիա) ,,____,, ... 343
«Արշալոյս» (1899–1905, 1908–1914) ,,____,, ... 348
«Նոր օր» (1900–1901) ,,____,, ... 350
«Նոր ժամանակներ» (1906) ,,____,, ... 352
«Ազատ բեմ» (1903–1905, Ալեքսանդրիա, 1906–1907, Կահիրե) ,,____,, ... 353
«Ժողովուրդ» (1903–1904) ,,____,, ... 356
«Օրէնք» (1905) ,,____,, ... 358
«Լուսաբեր» (1904–1908) ,,____,, ... 360
«Արեւ» (1908) ,,____,, ... 365
«Լուսաբեր-Արեւ» (1909–1912) ,,____,, ... 369
«Միութիւն» (1912–1928) ,,____,, ... 372
«Արեւ» (1915–1924, Ալեքսանդրիա, 1924-ից այսօր, Կահիրե) ,,____,, ... 375
Մանկավարժական և գրական պարբերականներ ,,____,, ... 378
«Արտէմիս» (1902–1903) ,,____,, ... 379
«Պարտեզ» (1903–1904) ,,____,, ... 381
«Սիսուան» (1905) ,,____,, ... 384
«Շիրակ» (1905, Ալեքսանդրիա, 1906–1907, Կահիրե) ,,____,, ... 387
«Հուսանք» (1912) ,,____,, ... 394
«Զարթօնք» (1919) ,,____,, ... 400

Երգիծական պարբերականներ
«Ազատ խոսք» (1902–1903, 1906–1908) 403
«Աւել» (1908–1910) 406
«Նշտարակ» (1908) 408
«Մաղէզ» (1911–1912) 409
«Պրիսմակ» (1917) 413
Ֆրանսահայ մամուլ (Սահակյան Ս.)
«Անահիտ» (1898–1911, 1929–1949) (Դալլաքյան Կ.) 414
«Ազատ խոսք» (1901) (Սահակյան Ս.) 430
«Ժամանակ» (1901–1902) 432
«Հայ Բարիզ» (1907–1908) 437
«Հայ կեանք» (1913–1914) 440
«Զէյթուն» (1920) 448
«Օշական» (1920–1921) 452
Բուլղարահայ մամուլ (Ղազարյան Զ.) 457
Իրանահայ մամուլ (Մելիքյան Գ., Փահլևանյան Օ.) 470
Ամերիկահայ մամուլ (Ստեփանյան Է.) 475
«Հայք» (1891–1898) 491
«Արծիւ» (1905–1906, 1908) 510
«Արաքս» (1905–1907) 519
«Ազատ» (1918–1919) 529
«Տաւրոս» (1918–1919) 540
«Վերածնութիւն» (Բաթում, 1918–1920) 553

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Կուսակցությունների մամուլը
ՀՅ Դաշնակցության մամուլն Անդրկովկասում (Խուդինյան Գ.)
.... 569
ՀՅԴ Կ. Պոլսի մամուլը (1909–1924) (Մ. Հովսեփյան) 594
«Նոր Հոսանք» (1913–1915) 581
«Աշխատանք» (1910–1915) 608

Հնչակյան մամուլ («Մարտ», «Նոր կեանք») (1898–1902) (Սարգսյան Ս.) ... 617
«Ձայն Հայրենեաց» (1899–1911) ... 628
Սահմանադրական - ռամկավար մամուլ
«Ազգ» (1907–1921) ... 639
«Վան-Տոսպ» (1911–1918) ... 646
Սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան մամուլ (Բարսեղյան Խ.) ... 660
«Սոցիալ-դեմոկրատական բանվորական Հայ կազմակերպության («Սպեցիֆիկներ» մամուլ (1900–1920)) (Հակոբյան Ա.) ... 675

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հայաստանի առաջին Հանրապետության մամուլ (1918–1920) ... 699

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ

Անձնանուններ ... 732
Տեղանուններ ... 763
Պարբերական մամուլ ... 772

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1900–1922

Հատոր 2

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

1900–1922

Том 2

THE HISTORY OF THE ARMENIAN PERIODICAL PRESS

1900–1922

Vol. II

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Համակարգչային շարվածքը՝ Ն. Երանոսյանի և Ա. Մարանգոզյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 30.01.2017 թ.
Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[7000 դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0450040

A II
1024154